ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ԽԱՉԱՏՈՒՐ
ԱԲՈՎՅԱՆ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ — 1984

ԳՄԴ 84Հ1
Ա 155

Կազմեց՝ Հ. Հ. Ֆելեքյան
Առաջաբանը՝ Գ. Հ. Հակոբյանի

Աբովյան Խ.
Ա 155 *Երկեր (Կազմեց՝ Հ. Հ. Ֆելեքյան: Առաջաբանը և ծանոթագրությունները Գ. Հ. Հակոբյանի.— Եր.: Սովետ. գրող, 1984.—720 էջ.— (Հայ դասականի գրադարան):*
Ժողովածուն ամփոփում է հայ մեծ լուսավորիչ-գրող Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, պատմվածքներ, բանաստեղծություններ, առակներ և մանկավարժական երկեր, ազգագրական ուսումնասիրություններ և ուղեգրություններ:

Ա $\frac{4702080100\ (197)}{705\ (01)\ 84}$ 73 «Տ» ԳՄԴ 84Հ1

© *«Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, առաջաբանի, ծանոթագրության և ձևավորման համար, 1984*

ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՁՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

1

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի բազմադարյան պատմության մեջ Խաչատուր Աբովյանն այն եզակի, մեծ ու անմահ անհատականություններից է, որոնք առանձնանում են իրենց ստեղծագործական անսպառ կարողություններով, վառվռուն երևակայությամբ, անբասիր ու բարձր մարդկային նկարագրով, անսովոր ճակատագրով ու ողբերգական վախճանով, ապա և՝ ազգային մշակույթի փառքերը դարձած գլուխգործոց, անմահ երկերով, որոնցից յուրաքանչյուրը նշանավորում է հայոց գեղարվեստական մտածողության տարբեր կողմեր և նոր ու բարձր շրջափուլ:

Աբովյանը հայոց նոր գրականության ու քերթության, նոր դպրոցի իրական հայտնագործողն ու հիմնադիրն է, համազգային ձգտումների ու տվայտանքների վառ արտահայտիչը, հանրային մտածողության ու գրական կյանքի մեծ վերանորոգողը, բոլորանվեր ու անօրինակ հայրենասեր: Նրա անձն ու գործն այսօր ընկալվում են որպես մտքի ու գաղափարի անձնուրաց մարտիկի ու խանդավառ հայրենասերի տիպար-օրինակ:

«Հայրենիքի, ազգի անունը,— կարդում ենք Աբովյանի գրական ինքնախոստովանությունների մեջ,— բոլորի համար չէ, որ սուրբ է. թախիծն ու հրճվանքը, որ ծնվում են դրանք հիշելիս, բոլորին չէ, որ հասկանալի են: Ես գուցե թե անարժան-աննշանի մեկն եմ, բայց բնությունն ինքն է պարգևել ինձ այդ զգացմունքները»:

Հանուն հայ հայրենիքի ու ժողովրդի քաղաքական ու հոգևոր վերածննդի, հանուն ազգային համախմբման ու ինքնաճանաչման՝ Աբովյանն անմնացորդ նվիրաբերեց իր մարմնական ու մտավոր ողջ ուժերն ու կարողությունները, միտքն ու հոգին, և տակավին պատանեկան տարիներից կյանքի ու գործունեության ողջ իմաստը տեսավ միմիայն դրա մեջ, իր անդրժելի ուխտն ու նպատակը հռչակեց հանուն դրանց ապրելն ու մեռնելը:

«Չի՛ք իմ այլ նպատակ առաջի, բայց եթէ՝ ի Հայրենիս մեռանիլ, վասն Հայրենեաց մեռանիլ և ծխել զնուազ շունչ, իբրև խունկ, առաջի ոսկերաց նախահարց իմոց...»:

Անվերջանալի էին Աբովյանի առջև, գիտակցական կյանքի առաջին օրերից, այլևայլ պատճառներով՝ հառնող, և հասարակական-քաղաքական անբարենպաստ հանգամանքներով ու դարաշրջանի մտավոր թշվառությամբ պայմանավորված արգելքներն ու դժվարությունները, միմյանց հաջորդող տառապալից որոնումներն ու խոր հիասթափությունները, տպավորվող մանկան, իսկ ապա՝ երիտասարդ բանաստեղծի երևակայության մեջ մշտապես ուրվագծվող գալիքի պայծառ հեռանկարները, որոնց հասնելու համար պետք էր խորտակել օտար զավթիչների բռնապետական լուծը և պատռել Հայաստան աշխարհին պատած հոգևոր ստրկության ու մտավոր թշվառության թանձր խավարը:

Որքան էլ անբանական ու դաժան լիներ իրականությունը, Աբովյանն, այնուամենայնիվ, չէր կորցնում հավատը հայության երջանիկ ապագայի նկատմամբ, տոկում էր ու տքնում, հույսը դրած հոգևոր հրաշքի և հրաշապատում հեքիաթների մեջ հայտնվող բարի ուժերի և արդարադատ թագավորների օգնության ու հովանավորության, ազգության դիմադրողական ուժի և ստեղծագործ ոգու վրա: Վաղ թե ուշ, պետք է խորտակվեր բռնության լուծը, կործանվեին հայությանը կույր հնազանդության դատապարտող, բռնակալ ուժերը, քանդվեին ազգային լեզվի կապանքները, ցրվեին ու ցնդեին խավարն ու մշուշը:

Շատ բան դեռ անհասկանալի էին պատանի Աբովյանին. ինքն էլ էր զգում, որ նախ` պետք էր կրթել ու դաստիարակել սեփական անձն ու հոգին, և ա՛պա նոր` գիտության ու կրթության ջահը ձեռքին և գեղեցիկ արվեստների հրաշագործ զորությամբ պայծառացած` մտներ գործունեության ու կռվի ասպարեզ, հայ հայրենիքի ու հայրենի քերթության վերածննդյան համար:

Ահա ա՛յս որոնումների ժամանակ էլ Աբովյանն իր հայացքն ուղղում է դեպի Հյուսիս, Հյուսիսային հողմերից ակնկալելով իր և իր ժողովրդի փրկությունը:

«Տեսեալ զգիտութիւն և զգծրախտութիւն ազգակցաց իմոց և լսեալ զհամբաւ բարեբախտութեան և ծաղկեալ վիճակի եւրոպացւոց` յամենայն ազգս կենաց, զի՞րդ ծանր թուէր ինձ ապաբախտութիւն իմ` անկեալ գոլով յայնպիսի երկիր, ուր և ո՛չ մի ինչ ի գիտաւորութեանց ֆմաց կարէր յառաջ գալ... Լերինք Կովկասեան թուէին ծածկել ի թիկն իւրեանց զայն ամենայն, զոր երիտասարդական իղձեալ իմ խոստանայր ինձ... Հոգաց և թառաչ հանելով` հայէի ի տարածից, երկնամբարձ շղթայս Կովկասեան, և հոգի կենաց իմոց յուսայր միմիայն ի Հիւսիսային հողմոյ ստանալ, այն զի Հարաւն ինձ միմիայն բարբարոսութիւն և տգիտութիւն ջնջէր»,— կարդում ենք Աբովյանի Դորպատյան օրագրերում, նրա գրական ու լուսավորական որոնումների մասին պատմող այդ անկեղծ ու մարդկային վավերագրերում:

Ի վերջո, Հյուսիսից եկավ հայ ժողովրդի փրկությունը, Հյուսիսային երկնքի տակ ծընվեցին Աբովյանի` սիրո ու կարոտի լավագույն երգերը, այնտեղ նա հագուրդ տվեց իր անհագ ու հարցասեր մտքին, շարունակեց գոյի և հավերժի գաղտնիքների ըմբռնումը, փորձեց պարզել երկրային դժոխքի ու կորուսյալ դրախտի` կորուսյալ երջանկության խորհուրդը, և հոգեպես վերածնված` վերադարձավ հայրենիք, իբրև ուսուցիչ ու դաստիարակ ի պետս հայ ժողովրդի, որպեսզի հենց սկզբից սկսելով` այնուհետև աստիճանաբար վերափոխեր ու վերածներ ազգության ներքին կյանքն ու մտածողությունը, դպրոցն ու գրականությունը, բացաներ ազգության աչքերն ու գոսացած միտքը, որ՛պեսզի զգար ու հասկանար ազատ մտածողության ու ազատ կյանքի հանույքն ու իրավունքը:

Դեռ ուսումնառության տարիներին Աբովյանը մշակել էր հայրենի գրականության ու դպրոցի վերակառուցման, հայոց նոր երիտասարդության համակողմանի դաստիարակության հստակ ծրագիր, որը հանգամանորեն քննել էր իր ուսուցիչների ու բարեկամների հետ, իսկ վերադարձից հետո մեծ զոհողությունների գնով բաց անելով իր մասնավոր դըպրոցը` արդեն 1838-ից ջանում էր մարմին տալ այդ գեղեցիկ իղձերին:

Հայաստանը համընդհանուր գրագիտության երկիր դարձնելու, հայրենի մուսաների ընդհատված երգը նոր ուժով հնչեցնելու համար պետք էին շատերի ինքնակամ նվիրումը, կարող ու պատրաստակամ ուժեր, բնությունից օժտված և միևնույն, սուրբ նպատակի իրագործման համար այրվող ու տոչորվող մարդիկ: Անձամբ Աբովյանն, առաջին հերթին, կարիք ուներ գաղափարակիցների և օգնականների, որպեսզի սովորեցնելով նրանց ազգության դարավոր *վերքերը* բուժելու միջոցները և տալով անհրաժեշտ *դեղերը*` ուղարկեր Հայաստանի գյուղերն ու քաղաքները, «որ գնան, իրանց բարի սերմը մեր բարի ազգի բարի երեխանցը

սրտումը ցանեն, նրանց էրված սիրտը հովացնեն, բերաններումը լեզու դնեն, ոտներումը` ղվաթ, որ հասնողը նրանց գլխին չտա, ինչպես մինչև էսօր տվել են...»:

Այսպիսի առաքելությունն ու վերելքը հնարավոր ու արդյունավետ կլիներ միմիայն խաղաղության պայմաններում, մշտապես Ռուսաստանի հովանավորությունը վայելելու, ռուս ու անդրկովկասյան ժողովուրդների հետ սիրո և բարեկամության մեջ ապրելու դեպքում: Հետևաբար, դպրոցում ու հանրային շրջաններում, Աբովյանը շարունակ խրատում ու պատգամում էր հայրենակիցներին` օրհնաբեր համարել ռուսների մուտքը «Հայոց լիս աշխարհը», ջանալ և ոչինչ չխնայել, որպեսզի նրանց «բարի ոտը մեր աշխարհիցը չկտրի, որ բալքի մեր Հայրենիքը նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ էս իր առաջին փառքին հասնի...»:

Ինչպես հաստատեցին հայոց պատմության հետագա ընթացքն ու դեպքերը` Աբովյանը ճիշտ էր կանխագուշակել հայ հայրենիքի փրկության ու վերածննդի, գրականության, մշակույթի ու դպրոցի վերանորոգման ուղին և անձամբ ու մեն-մենակ, մինչև անգամ խրախուսանքի չարժանացած, մշտապես չարակամության ու թշնամանքի որոգայթների մեջ` ազգի հոգևոր գործունեության բնագավառներում կատարեց այնպիսի աննախադեպ սխրանքներ, ցանեց այնպիսի արգասավոր սերմեր, որոնցից ծլեցին ու ծաղկեցին XIX դարի երկրորդ կեսի հայոց գրական ու մշակութային կյանքը, և նոր լիցք ստացավ ազգային ազատագրական պայքարը: Ահա իր ա՛յս ծառայությունների, իր ստեղծած անմահ գրականության համար Աբովյանի անունը դարձավ համազգային սրբություն, և արտասանվում է նույնպիսի երկյուղածությամբ ու երախտագիտությամբ, ինչպես Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Մխիթար Սեբաստացու անունները:

«Աբովյանը մեր նոր պատմության ամենամեծ նահատակն է` անթառամ լուսապսակով զարդարված, նա մեր նոր առասպելն է, ազգային նոր միֆը` հավիտյան առինքնող, բազմախորհուրդ»,— գրել է Ավետիք Իսահակյանը:

2

Խաչատուր Աբովյանը ծնունդով Քանաքեռի գեղջուկներից էր, աշխարհ եկած 1809 թվականի հոկտեմբեր ամսի շուրջ 15-ին: Նախնիները Այրարատյան աշխարհի երևելիներից էին, մարդկային բարձր առաքինությունների տեր ու պատկառելի այրեր, որոնց հետ հաշվի էին նստում ժամանակի հայոց հոգևոր ու աշխարհիկ պետերը և, անգամ, օտար տիրողները: Աբովյանի անմիջական պապը` պարոն Աբովը, համակիրն ու փայփայողն էր օտար լծից հայության փրկության և Ռուսաստանի աջակցությամբ հայոց պետականությունը վերականգնելու գաղափարի, իսկական մարդասեր ու բարեգործ, որի արդարադատությանն ու օգնությանն էին ապավինում շատերը. և նրա տան դուռն ու սիրտը բաց էր բոլորի համար հավասարապես, ինչ ազգի ու կրոնի էլ պատկանեին:

Հայրենի հարկն, այսպիսով, վաղ մանկության տարիներից Խաչատուրի համար դարձավ բարոյական կատարելագործման իսկական դպրոց, իսկ պապի ու մյուսների զրույցներն ու խոսքերը` ոգևորության աղբյուր և գրական ստեղծագործության անսպառ նյութ, որոնք հետագայում իմաստավորվեցին Աբովյանի շատ երկերի մեջ:

Բայց պարսից տիրապետության ժամանակներում ապահովություն չկար, և կարիքն ու չարիքը հետապնդում էին նրանց էլ: Աբովյանի պապը դառնում է դավադրության զոհ, ամենայն հավանականությամբ` Երևանի խանի թելադրանքով ու քաղաքական համոզումների պատճառով: Գերդաստանի ու ազգակիցների հանդեպ Տիրոջ աչքը քաղցրացնելու և զուր հայ-

ցելու նպատակով՝ ծնողներն ուխտում են իրենց առաջնեկին նվիրաբերել էջմիածնի վանքին: Ինը (թե՞ տասը) տարեկանից Խաչատուրը փոխադրվում է վանք, այժմ էլ զգալով հոգևոր ստրկության և աբեղայական կենցաղի սարսափները և տանջվելով մանկական խաղերի, հայրենի հարկի ու հարազատների կարոտից:

1822-ին պատանի Խաչատուրը դառնում է վանքի ազդեցիկ ու ուղղամիտ հոգևորականներից մեկի՝ Անտոն եպիսկոպոս Մուղնեցու սպասավոր-աշակերտը (մանք) և էջմիածնից փոխադրվում Հաղբատի վանք, իսկ այնտեղից էլ՝ Տփղիսի Ներսիսյան նորաբաց դպրոցը, ուր ուսանում է շուրջ չորս տարի, ժամանակի հայտնի մանկավարժներ Պողոս վարդապետ Ղարադաղցու և Հարություն Ալամդարյանի ձեռքի տակ, աչքի ընկնելով հատկապես իր «շատ զորավոր հիշողությամբ» ու արտակարգ ընդունակություններով և շատ շուտով հռչակվելով որպես *պարագլուխ* դպրոցի հայ աշակերտության:

Խաչատուրն արագորեն հասունանում է մտքով ու հոգով, փնտրում ազգային թշվառության և քաղաքական բռնության վերացման ուղիներ ու միջոցներ, կարդում հայոց մատենագրության գրչագիր հիշատակարանները և հայրենանվեր գործիչների վարքագրությունները՝ Մեսրոպ Մաշտոցից ու Վարդան Մամիկոնյանից մինչև Ղուկաս Վանանդեցի ու Մխիթար Սեբաստացի, մինչև Սիմեոն Երևանցի և Պետրոս Բերդումյան, դառնում առաքյալն ու զինվորը լուսավորության ու կրթության ամենազորության գաղափարի, մեկընդմիշտ վճռում՝ նախ, ինչպես հարկն է, Մոսկվայի ու Պետերբուրգի համալսարաններում և կամ Վենետիկի Մխիթարյան վարժարանում կրթել ու լուսավորել իր անձը, իսկ հետո նոր նվիրվել հայրենիքի վերածնությանը: Ու դեռ ավելին, եթե հնարավոր դառնար, դիմել Ռուսիայի ու Արևմուտքի երկրների միապետներին և, ինչպես երբեմն խաչակրաց ժամանակներում, շարժել նրանց զորքերը դեպի բիբլիական Արարատ ու Հայաստան՝ թուրք ու պարսից լծից մարդկային ցեղի բնօրրանն ազատագրելու համար:

Աբովյանի ռոմանտիկ երազանքներից ծնված այս ծրագրերը քաջալերեցին ժամանակի լուսամիտ գործիչները՝ Ներսես Աշտարակեցին, Հովհաննես Շահխաթունյանը, Հարություն Ալամդարյանը, Գևորգ Սմբատյանը, իսկ բարոյական ու նյութական գլխավոր աջակիցն եղավ խնամակալը՝ Անտոն Մուղնեցին:

Բայց Աբովյանը չէր ծնվել երանությունների համար: Ռուսիայում ուսումն առնելու հույսն ու ծրագիրը ցնդեցին գեթ առժամանակ, իսկ ահա՛ Վենետիկի հարցը կարծես լուծվում էր. Սակայն, դեռ ճանապարհ չընկած, կամ դեռ կես ճանապարհին, 1826 թ. հուլիսին, անսպասելիորեն փակվեցին ելքի դռները: Աբովյանին քշեց, տարավ ռուս-պարսկական պատերազմի հեղեղը: Շուրջ երկու տարի նա դեգերում էր տարագիր հայության բեկորների մեջ, Լոռվա ձորերում, ականատես ու մասնակից իր ժողովրդի տառապանքներին: Մի քանի անգամ հազիվ-հազ փրկվեց մահից, իսկ հետո՝ նվիրական իղձերի իրականացման հույսը նախախնամության կամքին թողնելով, կրկին վերադարձավ էջմիածնի վանք: 1829 թ. գարնանը Աբովյանը ծանր հիվանդացավ: Ժանտախտի վարակը, ուրիշ հազարավորների հետ, նրան էլ կարող էր գերեզման տանել, բայց նա լարեց վերջին ուժերն ու ապրեց. իղձերի իրականացման անկոտրում կամքը այս անգամ էլ փրկեց նրան մահից: Հազիվ ապաքինված՝ Աբովյանը հանդիպեց Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտին, և ամեն ինչ միանգամից կարծես փոխվեց:

Հաղթահարելով բնության արհավիրքներն ու սնոտիապաշտական հավատքի կաշկանդումները՝ Պարրոտն ու Աբովյանը 1829 թ. սեպտեմբերի 27-ին, առաջինները լեռնագնացության պատմության մեջ, բարձրացան բիբլիական Արարատի գագաթը: Լույսի ու բանակա-

նության ամենակարող ուժին հավատացող, ուսումնածարավ հայ դպրի անունը հռչակվեց ողջ Եվրոպայում: Բացվեց Աբովյանի հոգևոր փրկության առավոտը:

Հինգ ու կես տարի, 1830 թ. սեպտեմբերից մինչև 1836 թ. հունվար, Աբովյանը կրթվեց Մերձբալթյան համալսարանական քաղաքում, հայ ժողովրդի անկաշառ բարեկամ և մարդասեր գիտնական Ֆ. Պարրոտի ղեկավարությամբ յուրացնելով ժամանակի գիտության ու կրթության հիմունքները և հաղորդակից դառնալով համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին. նա գրական վարպետության դպրոց անցավ լուսավորության դարաշրջանի անմահ ստեղծագործողների երկերի վրա, մտքով ու հոգով հավասարվեց եվրոպական լուսավորիչներին և որպես կազմակերպված գրող, մանկավարժ ու լուսավորիչ՝ վերադարձավ հայրենիք, վերածնելու համար հայության հոգևոր ու տնտեսական կյանքը՝ ազգի համրացած լեզուն բաց անելու և ինքնավստահություն ներշնչելու, հայությանը միավորելու և ինքնաճանաչման բերելու, կորած ազգային պետականությունը վերականգնելու հարցը վերստին արծարծելու համար:

Աբովյանի կյանքի վերջին տասներկու տարիները՝ 1836 թ. կեսերից մինչև 1848-ի գարունը, անցան հոգեկան բուռն պայքարի ու հանմպազորյա զբաղվածության մեջ, ընտանեկան ու հասարակական պարտականությունների ծանր ու քաղցր լծի տակ՝ Տփղիսի և Երևանի գավառական ուսումնարաններում, անձամբ բաց արած մասնավոր դպրոցում, կրթական ծրագրերն ու գրական հղացումները մարմին տալու համար ազգային հետադիմության ու ցարական պաշտոնեության հետ մշտական ու անվերջանալի գոտեմարտերի մեջ, վերջապես՝ շարունակ դեգերումների մեջ էջմիածնից դեպի Տփղիս և Տփղիսից դեպի Երևան, ու ընդհակառակը:

Այն բոլոր օտարերկրացիները՝ գրողներ, ճանապարհորդներ և բնախույզ-գիտնականներ, որոնց բախտն այդ ընթացքում հանդիպադրում էր Աբովյանին կամ վայելում էին վերջինիս աջակցությունը և օգտվում գործնական խորհուրդներից, խոստովանում էին նրա անժխտելի մեծությունը. «Արտասովոր հոգու» տեր «հազվագյուտ մարդ», «յուրօրինակ հանճար», «որն արտակարգ հարգանք է տածում դեպի շիտակն ու ճշմարիտը»,— այսպես է Աբովյանին բնութագրել հայտնի գիտնական Հերման Աբիխը:— «Մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել մի այսպիսի ուսուցիչ»,— հայտարարել է նշանավոր բնագետ Կարլ Կոխը: Անգամ ցարական մանրախնդիր պաշտոնյաները հարկադրված էին խոստովանել, որ Աբովյանը «Գերազանց բարոյականության տեր» անձնավորություն է և «հույժ ջանասեր՝ հատկապես իր ուսուցչական պարտականությունների մեջ...»:

Որքան էլ ցավալի, այնուամենայնիվ՝ հանուն նոր դպրոցի ու գրականության՝ ընդդեմ հետադիմության մղած իր պայքարում Աբովյանը չէր ստանում գեթ բարոյական աջակցություն իր ազգակիցներից: Սեփական գրվածքները հրատարակելու, ժողովրդական բանահյուսության գոհարները հավաքելու համար նա կարիք էր զգում նյութական օժանդակության, որպիսին ո՛չ ոք և երբեք ցույց չտվեց: Չըմբռնելով նրա գիտական խիզախման արժեքը, նրա կրթական փորձի էությունը, հայրենակից-ազգակիցները բամբասում էին, թե Աբովյանը «Մեր Մասիսի անունը խայտառակեց», թե «Մեր որդիքը ոչինչ չեն սովորում, միայն վարժապետի հետ խաղում են...»: Ռուսսոյի հայ հետևորդը հայրենի իրականության մեջ արժանանում էր անուշադրության ու արհամարհանքի... Գրեթե խորտակվում էին նրա պատրանքները:

Բաց աչքով տեսնելով սեփական անզորությունը և նվիրական ծրագրերի խորտակումը, Աբովյանն արդեն 1846-ին ավարտված էր համարում իր կյանքի նպատակը և մինչև անգամ որոշում թողնել պետական ծառայությունը, քաշվել գյուղ և պապերի նման հողագործությամբ

հոգալ իր ապրուստը: Այս վերջին հուսահատության պահերին էլ նրան իր մոտ է կանչում և Ներսիսյան դպրոցի ղեկավարությունը վստահում Ներսես Աշտարակեցին:

Աբովյանն ապրում է նոր ոգևորություն ու մի նոր հիասթափություն, կարծես հասել էր բաղձանքին, հիմա կարող էր տարիների կիսակատար ծրագրերին մարմին տալ: Եվ նա փութով սկսում է հանձնել Երևանի դպրոցն ու իր տեսչական պաշտոնը՝ արքունի գույքն ու գումարները, որ առաջ Տփղիս մեկնելու և իր նոր պարտականություններին անցնելու համար: Այս մասին գիտեին և Տփղիս էին փոխադրվելու նաև Ստ. Նազարյանցը և Մ. Էմինը... Բայց տեղի է ունենում աներևակայելին, 1848 թ. ապրիլի 1 լույս 2-ի գիշերը անհայտանում է Աբովյանը՝ խորհրդավոր հանգամանքներում: Ինչպե՞ս և ո՞ւր վերջացավ նրա կյանքը. ինքնասպա՞ն եղավ, ծպտված փախավ հայրենիքից ու հարազատներից և անցավ Եվրոպա՞ կամ լեռնականների մոտ, սպանվե՞ց այլազգիներից, իբր խանդի հողի վրա, թե՞ գաղտնի աքսորվեց Սիբիր... Այս վարկածները երկար ժամանակ պտտվում էին ժողովրդի մեջ, բորբոքելով շատերի երևակայությունը:

3

Աբովյանի ստեղծագործությունները նրա անսովոր անհատականության և հոգու, ձըգտումների ու երազանքների վառ ու հարազատ դրսևորումներն են, ինքնաարտահայտման զարմանահրաշ օրինակներ, որոնց էջերից մեզ են հասնում հեղինակի սրտի խորքերից բխած ձայնն ու բարբառը՝ մերթ բոցով ու հուզալից, մերթ խռովախռովուրդ ու բարձրաբոմբիչ, երբեմն գեղջուկ ոճով ու տրամաբանությամբ, իսկ ավելի շատ՝ նարեկյան հառաչանքների բարձունքներից արտաբերվող աղերսանք ու սրտագին պատգամ՝ մայրենի լեզվի, հայրենի երկրի և ազգային մշակույթի ավանդների պաշտպանության ու զարգացման մասին, մտահոգ ու խանդավառ:

Ընտանեկան ավանդությունների համաձայն՝ Աբովյանի բանաստեղծական տաղանդը վաղ է փթթել: Տասներկու տարեկանից նա ոտանավորներ է հորինել, չնայած այդ առաջին քերթվածներից և ո՛չ մի տող մեզ չի հասել:

Աբովյանի առ այսօր հայտնի ամենավաղ ստեղծագործությունները գրված են 1824 թվականին, Տփղիսի Ներսիսյան դպրոցում ուսանելու տարիներին, երբ նա սկսում է լրջորեն խորհել օտար տերությունների միջև ծվատված հայրենիքի և շնչահեղձ դարձած հայրենակիցների դժխեմ բախտի մասին՝ փափագելով յուրովսանն «կարողութեամբ պիտանի լինել ազգին իմում սիրելի...»: Առաջին քերթվածներից մեկը հենց վերնագրված է *«Կարօտութիւն նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց»*: Հնության բեկված կոթողները, ամայի ու ավեր բնակավայրերը, բերդերն ու տաճարները, ապա և՝ ժամանակակիցների անզորությունն ու անտարբերությունը, ավելի էին խորացնում Աբովյանի ողբերգությունը՝ պարտադրելով ելք գտնել անցյալ, հերոսական ու հաղթական ժամանակները հարություն տալու համար.

Հայեցեալ ի շուրջս՝ միայն աւերակք
Ինձ յառաջ բերեն զնախնեաց յիշատակ.
Պայթեն զգայարանքս, այլ ո՜հ, ես անզօր
Կարօտիւ միայն լամ անօժանդակ:

Ե՞րբ առ արձանօք նախահարց մերոց
Զոհեսցեն աշխոյժ պատանեակք Հայոց

Ջերմ իւրեանց զարիւն՝ պատարագ անոյշ
Ի սէր Հայրենեաց, մաշելոյ անյոյս...

Կրկնեսցի՞ շրջան այնց ժամանակաց,
Զի և մենք վառեսցուք ի նախանձ փառաց.
Ժառանգել զանուն մտերիմ որդւոց,
Տալ զկեանս ի զոհ սիրոյ Հայրենեաց:

Գրական ուսումնառության և նոր ու վառ տպավորությունների շնորհիվ աստիճանաբար ընդարձակվում են Աբովյանի հետաքրքրությունների շրջանակները, բազմապատկվում՝ նախասիրությունները: Մայրենի քերթողների (Մխիթարյան բանաստեղծների) երկերից բացի, նա գրաբար թարգմանություններով և ռուսերեն բնագրերով կարդում է կլասիցիզմի դարաշրջանի գրականության արգասիքները, իսկ շատ չանցած՝ ինքնաբերաբար հակվում դեպի ժամանակակից գրական դպրոցների՝ սենտիմենտալիզմի ու ռոմանտիզմի գեղագիտությանը, ի դեմս Ն. Մ. Կարամզինի և Վ. Ա. Ժուկովսկու ստեղծագործությունների: Հայրենիքի ճակատագրի թեման այժմ արդեն ձեռք է բերում նոր երանգ ու հնչեղություն: Հայոց պատմության լրջամիտ ուսումնասիրությունն ևս իր հերթին Աբովյանին հնարավորություն է տալիս արդիականության համար ուսանելի դասեր քաղել անցյալից՝ հայության քաղաքական փրկության, միավորման և տնտեսական ու հոգևոր վերածնության վերջնական հույսը կապելով Ռուսիայի հետ: Թավալգլոր արագությամբ ընթացող դեպքերը՝ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հաղթական ավարտը, Այրարատյան աշխարհի ազատագրումն ու միացումը Ռուսաստանին դառնում են հենքն ու ազդակը այդ անցքերի թարմ տպավորության տակ հյուսված՝ «Նոր ի՞նչ են այս ցոյցք մերս Հայաստանի...», «Խնդամիտ զգացմունք երախտագէտ Հայկազին յազատութիւն Հայրենեաց իւրոց», «Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ», «Մուտ Հայկայ ի Հայաստան...» քաղաքական ներբողների, որոնց մեջ հայոց պատմության վերջին, բախտորոշ ու շրջադարձային անցքերն ընկալվում են որպես հայոց գոյատևման ու «փրկության առավոտ», որպես «չքնաղ գարուն» և «դար երջանիկ», պարտադրելով երիտասարդ բանաստեղծին իր ու հայրենակիցների անունից տալու երախտագիտության խոսքեր.

Սո՛ւրբ եղիցին մեզ կաթիլք ձեր արեան և արդար քրտանց,
Որք զոհք մատուցան և պատանք եղեն, անկեալ Հայրենեաց.
Ուխտադի՛ր լիցի պահել Հայաստան ի ծոց իւր անդարձ
Զայն անգին հատուսս, որք որբոցս եղեն, անդ գինք փրկանաց...

Դորպատյան տարիներին Աբովյանը թևակոխեց ստեղծագործության նոր ոլորտներ. արմատապես փոխվեցին նրա գրական նախասիրությունները: Հոմերոսի ու Պետրարկայի, Վ. Գյոթեի ու Ֆ. Շիլլերի, Ռ. Բյորնսի ու Թ. Մուրի ստեղծագործական փորձի յուրացումը, ապա և անձնական ծանոթությունը ռուսական ռոմանտիզմի հայր Վ. Ժուկովսկու հետ, Աբովյանի հայացքն ուղղեցին մարդկային հույզերի ու տառապանքների ծովածավալ աշխարհը՝ հայրենի վայրերի ու հարազատների կարոտից տոչորվող, անծանոթ մարդկանց մեջ և օտար հորիզոնների տակ տվայտող մենավոր անհատի՝ փոխադարձ սիրո ձգտող և ճակատագրի կամքով կյանքն ու աշխարհը վայելելու հաճույքից զրկված երիտասարդ վանականի անփարատ վիշտն ու ողբերգությունը, նրա խոհերն ու խորհրդածությունները մարդկանց հոգում վառ-

ված գեհենի, առմիշտ կորցրած դրախտի և երկրային սիրո ու երջանկության մասին, որոնց վայելքն արդեն իր համար չէր: Աբովյանի նախասիրած ժանրերն են դառնում եղերերգությունները ու տաղերը, միայն թե հյուսելով վերջինները ո՛չ ըստ հայ միջնադարի բանաստեղծների հանրահայտ կաղապարների, այլ ըստ գերմանական ժողովրդական և ուսանողական երգերի: Վերջապես՝ Դորպատում Աբովյանն առաջին, վեհերոտ փորձերն է անում գրաբար քերթվածներին զուգահեռ հորինելու նաև աշխարհաբար բանաստեղծություններ, առատորեն օգտվելով ժողովրդական կենդանի լեզվի ոճերից ու պատկերներից:

Աբովյանի հիշյալ ստեղծագործություններից շատերը կարծես հիմներ լինեն սիրո ամենահաղթ ուժի, ամենակարողության, որ վերածնում, շունչ ու կերպարանք է պարգևում վաղուց մեռած ու փոշի դառած սրտերին անգամ.

Թե հողն էլ ես մտնեմ, էս քո կսկիծով՝
Իմ գերեզմանիցն էլ ցանկամ կարոտով,
Որ գաս և շրջես դու, ա՜խ, քո սուրբ ոտով
Իմ երեսի վրա և տաս ինձ բարով:

Էն ժամանակն էլ հոգիս անբաժան
Քեզ հետ միացյալ՝ մնա հավիտյան.
Մեկ միտքդ բերես քո բարեկամ,
Մեռյալ ոսկերքն իմ էլ զգան ու խնդան...

Բնավ չափազանցրած չենք լինի, եթե խոստովանենք, որ Աբովյանի դորպատյան ստեղծագործություններից է սկիզբ առնում անձնական քնարերգությունը հայոց նոր գրականության պատմության մեջ: Աբովյանի «Զգացմունք ցավալից սրտիս», «Օրիորդ ֆոն Շվեբս ի վերայ երգեհոնի», «Երեկոյ», «Առ Մ. Ա.», «Առ Էմ. Կ.», «Հեռացեալ յինէն ամպովք տարածիգ», «Առ Ն. Ն.» և այլ ոտանավորները կարծես բանաստեղծական օրագրեր լինեն, որոնց մեջ հեղինակը անկեղծորեն պատմում է արդարության ու ազատության ապարդյուն որոնումների, սիրուց տանջահար դարձած իր անհանգիստ հոգու տառապանքների և սիրած էակների մարդկային առաքինությունների ու անձնական հմայքի մասին: Դժբախտաբար, առ այսօր, Աբովյանի այդ ստեղծագործությունները վատ են ուսումնասիրված, և ապագա բանասերները դեռ շատ անելիքներ ունեն:

Աբովյանի ետդորպատյան քերթվածների ոճն ու ոգին, մանավանդ գրաբար բանաստեղծությունների մեջ, քիչ է փոխվում, բայց առավել բազմազան են դառնում նրան զբաղեցնող թեմաները ու մոտիվները: Կարոտի ու բաժանման մորմոքները՝ կապված ընդմիշտ կորցրած դորպատյան շրջանների և մեռած ու հեռացած ընկերների հետ, այժմ էլ են հաճախ հնչում («Կարոտություն ծնողաց առ հեռավոր որդիս», «Զարթնուք ի միտս իմ կրկին կենդանի...», «Ողբ ի վերայ Միրզաջանի...», «Տխուր զանգատ բարեկամի մոտ», «Խաղ բաժանվելու վրա», «Առաջի պատկերի բազմերախտ իմ բարերարի՝ Ֆրիդրիխայ Պարրոտի» ևն), բայց Աբովյանին խորթ չեն նաև առողջ ծիծաղն ու սրամիտ խոսքը. 40-ական թթ. սկզբներին են հյուսված նրա երգիծական բանքերը, որոնք մերկացնում են հայ մեծահարուստների ապականված հոգին և կեղծ բարեգործության եսամոլական շարժառիթները:

Ինքնին վերցրած՝ նորություն են նաև Հայաստանի ճարտարապետական հուշարձանների ու հնօրյա բնակավայրերի բանաստեղծական ընկալումները, որոնց մեջ առատորեն օգտագործված են ազգային հին ու նոր ավանդությունները («Մենաստան սուրբ Գեղարդայ վա-

նից») և ազգագրական սովորույթները («Մուտ ի հայրենիս»), փորձ է արվում բացահայտելու ժողովրդական տոնախմբությունների բարոյագիտական խորհուրդը: Առանձին բանաստեղծությունների մեջ դժվար չի տեսնել, վերջապես, Աբովյանի հումանիստական աշխարհայեցության գծերը, երբ խոսքը դառնում է հարևան ազգերի կյանքին ու կենցաղին և, հատկապես, թրքուհու ողբերգական ճակատագրին («Սոնա»):

Ողբերգությունն ու մտահոգությունն են Աբովյանի ետդորպատյան քերթվածների գլխավոր հատկանիշները: Երգիծական բանաստեղծությունների մեջ հնչող ծիծաղն անգամ, ի վերջո, դառնացած, հիասթափված ու հալածված մարդու անուրախ առօրյայից ծնված հառաչանք է՝ ծիծաղ արցունքների միջից: Կորցրածը վերագտնելու և լավագույնին հասնելու ձըգտումը պարտադրում են հեղինակին, որքան կարելի է, թանձրացնել գույները, որպեսզի հասկանալի դառնան քաղաքական բռնության բարոյալքիչ ու ապականող էությունը և ազգային համախմբման ու հոգևոր վերածնության անհրաժեշտությունը:

Ետդորպատյան շատ քերթվածների մեջ Մուսայի հետ կիսելով իր ցավն ու կսկիծը՝ Աբովյանը ուղիներ է որոնում ազգի համրացած լեզուն բաց անելու, Այրարատյան աշխարհում հայությանը համախմբելու, ազգային կյանքի վերքերը բուժելու, հին հայրենիքը, նոր հայախոսությունն ու մշակույթը վերածնելու համար.

Դարուց անդ ի դարս, միշտ կարօտամաշ՝
Դիմեն այժմ ի ծոց չքնաղ Հայրենեաց.
Բայց խորդ, օտար ծնողն, խորդ և որդիք այս,
Ձայն տարահնչիւն, բարբառ խառնիմաց:

Ո՛չ ծնողն զիւր որդիս, ո՛չ որդիք զծնող
Ճանաչեն զմիմեանս յայս նորեկ ժողով.
Սիրտք նոցա խնդրեն փարիլ ողջախոհ,
Այլ դէմք, լեզու նորա՝ խրտնին խուսելով:

Քե՛զ է միայն հնար սիրով կրկնարծած՝
Անդրէն ի մի սիրտս, ի մի միտս, մի ձայն,
Ամոք ողորմամբ, քնքուշ խնամով
Ջօդել զնոսա պինդ, Մուսայդ գողտրական...

Սրանք արդեն այլ բան չեն, քան Աբովյանի բանաստեղծական մտահղացումների մեջ խմորվող և աստիճանաբար մարմին առնող ապագա ժողովրդական վեպի՝ «Վերք Հայաստանի» համանման գաղափարների ու տրամադրությունների նախնական գծերն ու հարասությունները:

Հետաքրքրական արդյունքներ են տալիս նաև հայ նոր քնարերգության ժանրերի բնագավառում Աբովյանի կատարած որոնումները, թեպետ քիչ չեն նաև ձախողումները: Չբավարարվելով չափածո խոսքի ավանդական տեսակներով (ներբող, տաղ, եղերերգ, սիրերգ, խորհրդածություն, ողբ, երևակայական պատկերներ և այլն), նույն 30-ական թթ. վերջերին Աբովյանը ձեռնամուխ է լինում հայկական ազգային բալլադի ստեղծմանը, որի առաջին, ավարտուն նմուշը՝ «Սեր, բարեկամություն» խորագրով, հյուսված է ըստ Շիլլերի «Երաշխիք» բալլադի: Հայացված են ինչպես վերջինիս հերոսների անունները, այնպես էլ գործողության ծավալման միջավայրն ու պատմաշրջանը: Պյութագորյան փիլիսոփաների հայ

երկվորյակները՝ Աղասին ու Մոսին բռնավորի լուծը խորտակելու նպատակով թշնամական բանակը թափանցած մենավոր հերոսներ են, բայց և միաժամանակ՝ պարսկական բռնությունից Հայաստանի ազատագրման համար պայքարի ելած առաջին հայդուկները, որոնց համոզումների վրա խոր կնիք են թողել հավատարմության ու հասարակական պարտականության վերաբերյալ ավանդական պատկերացումները: Գործը ձգձգված է և գեղարվեստորեն բավականաչափ թույլ, բայց Աբովյանն, այնուամենայնիվ, այն զետեղել է տպագիր «Նախաշավիղի» մեջ:

Շարունակելով ավանդույթները՝ Աբովյանը փորձել է բալլադի սյուժեի համար նյութ առնել տեղական պատմական զրույցներից՝ կապված Տփղիս քաղաքի 1795 թ. ավերման հետ, երբ պարսից ներքինի շահի զորքն ու խուժանը կատարեցին ահավոր չարագործություններ: Համոզված լինելով, որ առաքինությունը ամենակարող է և ունակ մինչև իսկ վերածնելու չարագործին, Աբովյանը բավական տրամաբանված ձևով առաջ է տարել իր պատումը և, որ զարմանալի է, կարծես հոգեբանական պատճառաբանությունների գաղտնիքը հայտնագործած՝ երկը թողել անավարտ ու անմշակ («Ձայն աղաղակի…»):

1840—41 թվականներին Աբովյանը հյուսում է նաև քնարական մանրաքանդակների մի ամբողջ շարք՝ *բայաթիներ*, որպեսզի հայ ժողովուրդը հնարավորություն ստանա ուրախության սեղանին, թուրքերեն խաղերի փոխարեն, մայրենի լեզվով երգել ու պատմել իր սիրո ու կարոտի մասին: Այս անգամ արդեն ստեղծագործական հաղթանակը անվիճելի է: Բայաթիները հասուն տաղանդի արգասիքներ են:

Հարկ է մի քանի խոսք էլ ասել «Յունայնութիւն աշխարհի» երկարաշունչ բանաստեղծության մասին (231 տող), որի առանձին դրվագների մեջ նկատելի են Շեքսպիրի Համլետի հայտնի մենախոսության տրամադրության արձագանքները: Տարիների դառը փորձը, տեսածն ու կրածը, անվերջանալի թափառումներն ու սրտակեղեք խորհրդածություններն այն գաղափարին էին հանգեցրել քերթվածի քնարական հերոսին, որ զուր ու անիմաստ բան էր և՛ այս, և՛ այն աշխարհներում երջանկություն և ներդաշնակություն ակնկալելն ու որոնելը: Ցավի ու տառապանքի բերանն ընկած մարդկությունն անկարող էր բարին ու գեղեցիկը տեսնել ու գնահատել և հանուն բարձր իդեալների մաքառել, որովհետև սոցիալական ու քաղաքական դարավոր բռնությունից աղավաղվել էին նրա միտքն ու հոգին: Վերջապես՝ մահվան սարսափն էլ խանգարում էր մտածել ամենքին և դարձրել ամեն լավ ու հանրօգուտ ձեռնարկման հանդեպ անտարբեր: Ողբալին այն էր, նկատում է Աբովյանը, որ մարդն աստիճանաբար կորցնում էր նաև սիրո ու կարեկցանքի զգացումը դեպի իր նմանակիցը և թույնով ու թշնամանքով պատասխանում.

Չար սոցա սիրտ, Թշուառ, Նողկալի,
Նոքա՝ Թշնամիք իւրեանց Թշնամեաց,
Թշնամիք ինքեանց և բարեկամաց…

Ոչինչ լավ բան չէր կարելի ակնկալել նաև անդրաշխարհային որոնումներից. այնտեղ էլ ունայն էր ու անորոշ, ավելի, քան այս աշխարհում: Այսպիսի պայմաններում, ճիշտ որ չէր կարող մարդը հասնել հոգու խաղաղության, առանց որի աներևակայելի էր ստեղծագործ աշխատանքն ու սխրանքը:

Տապանի հետ վերջանում էր ամեն ինչ, մանավանդ որ անհայտ ու անորոշ էր մնում նաև մյուս, հանդերձյալ կյանքի էությունը, որի գաղտնիքների մեջ թափանցելու բոլոր փորձերը ձախողվել էին.

Զի՞նչ մեզ տապանի յայնկոյս սպասէ,
Իմաստունն անգամ գիտել ե՞րբ կարէ…

Այս անորոշությամբ ու կասկածանքով էլ, ի վերջո, ավարտվում է քերթվածի առաջին մասը: Եզրափակիչ տների մեջ, հակառակ նախկին մռայլ տրամադրությունների, փողփողում են պայծառ գույները՝ ներբողվում է սերը, իբրև ամենազոր ու կարող ուժ. որպես պատգամ ու հավերժական ճշմարտություններ են հնչում բանաստեղծության շատ տողեր.

Սիրեա՛… բայց կա՛լ չափ դու յամենայնի…
Ի սիրելն իմա՛ վայելել զսէր…

Բարին ըստ ինքեան է գեղեցիկ միշտ…
Եւ սէրն ուսուցիչ է միշտ սրբազան…

Աբովյանի քնարերգական մենախոսությունների գաղափարական ավարտը «Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» եղերերգությունն է, որի բնույթից ելնելով՝ իրավամբ կարելի կլիներ կոչել հեղինակի կտակ: Աբովյանն այստեղ անկեղծորեն խոսում ու պատմում է իր նվիրական իղձերի ու հանապազօրյա խոհերի մասին, որոնց առանցքը հայրենիքի ցավերն ու հակատագիրն է, ի խորոց սրտի՝ բարձրյալին է ուղղում իր ամենօրյա աղոթքն ու պաղատանքը՝ սիրելի ազգի ու ազգակիցների տնտեսական վիճակի բարվոքման և հոգևոր վերածնության համար.

Ո՛չ երկար ապրիլն էր իմ ուզածը,
Ո՛չ լավ օր քաշիլն, ա՜խ, իմ խնդրածը.
Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աչքիս,
Երբ չէի կարում պետքը գալ ազգիս:

Իշխանություն թե կամ փառք ուզեցի,
Թագի, պսակի թե փափագեցի,
Էնդուր համար միայն, որ հազար մարդի
Աչքի արտասունքն սրբեմ, որ չցավի:

Այս քերթվածն հորինելիս՝ Աբովյանը ողջ էությամբ ձգտում էր հեռու վանել հայ մարդու բնավորությունից մանր ու չնչին կրքերը և անտարբերության սպանիչ թույնը, ապրեցնել լիարյուն կյանքով և հասարակական-քաղաքական շահախնդրություններով: Նա գիտեր, որ դա մի օրվա, մի տարվա բան չէր, և կպահանջվեր տևական ժամանակ, հետևաբար և պաղատագին խնդրում էր ազգակիցներին՝ մտածել հայրենիքի ցավերի և խեղճ ու թշվառ ժողովրդի մասին, վերացնել առաջինները և պաշտպան կանգնել վերջիններին.

Մարդի՛կ, ա՜խ, մարդիկ, դուք ե՞րբ կզարթնիք,
Որ սիրտ-սրտի տաք, միմյանց քոմակ ըլիք,
Իմանաք՝ մեր դրախտն ու կյանքն հենց էն ա,
Ով խղճի, ազգի ցավը կիմանա…

Աբովյանն իրեն լիուլի վարձատրված կզգար, եթե այս ուղղությամբ մեր ազգային կյանքում շարժում ծավալվեր, թեկուզ և առժամանակ այն աննշան էլ լիներ: Իսկ եթե իր

շարունակական հորդորներն անարձագանք մնային, ապա դա կլիներ մի այնպիսի ահավոր հարված, որը կանշարժացներ ամեն միտք, կայծակնահար կդարձներ ամեն զգացում, կխորտակեր ամեն հույս ու երազանք: Դրանք էլ իրենց հերթին ենթադրել էին տալիս այնպիսի ողբերգական ավարտ, որպիսին կարելի է տեսնել վերածնության դարաշրջանի հանճարեղ ողբերգակների պատերգություններում:

40-ական թթ. սկզբներին Աբովյանը գրում է չափածո մեծ կտավի մի պատառ ևս՝ «Հազարափեշեն» պոեմը, որի խորհուրդն էր փոխըմբռնում հաստատել անդրկովկասյան ժողովուրդների և պետական պաշտոնեության միջև, այլապես թյուրիմացություններն ու չարիքը կլինեին անվերջ ու անպակաս: Ինչպես հուշում են գործողությունների ծավալման ընթացքն ու վախճանը, դրան պիտի ձգտեին առաջին հերթին ռուսական իշխանությունները, այլապես հայը, վրացին և մյուսները բավականաչափ խելք, շրջահայեցություն, արժանապատվություն և ուժ ունեին, որպեսզի թույլ չտային, «որ ամեն հայվարա մարդ իրանց վրա բերան բաց անի»:

«Հազարափեշեն» պոեմի մեջ մի կարևոր բարոյագիտական դրույթ էլ է առաջադրված ու լուծված, որն ինքնին կարող է բանալի դառնալ հեղինակի հասարակագիտական հայեցողությունները մեկնաբանման համար. «Ամեն ազգ,— գրում է Աբովյանը,— լավության հետ վատություն էլ ունի, ինչպես մեկ ծառ, որ սաղ պտղի հետ չոռն էլ ա բերում:— Հետևաբար, նկատում է նա.— գիտուն մարդը նա է, որ պակասություն տեսնելիս՝ սիրտը ցավի, ձեռից եկածը չխնայի ու պակասավորին ուղղի, չէ թե վրեն ծիծաղի, գրով, լեզվով խայտառակ անի...»: Նշանակում է՝ ազգերի ու ժողովուրդների մասին խոսելիս՝ չի կարելի լոկ մասնավոր իրողություններից ելնելով դատողություններ անել նրանց վարք ու բարքի մասին, ինչպես վարվում են Անդրկովկասում պաշտոնավարող և նրա մասին գրող հեղինակներից ոմանք: Այդ ժողովուրդները, ինչպես և բնության արարածներն ու առարկաները, անխախտելի ամբողջություններ են և էությամբ բարի, ազնիվ ու կատարյալ: Հետևաբար, նրանց կյանքի թերությունների ու պակասությունների վերհանումն ու քննությունը լոկ մի նպատակ պիտի հետապնդի. առավել կատարյալ դարձնել նրանց: Ըստ էության հենց այս նպատակին են ծառայում Աբովյանի շատ երկեր ու ակնարկներ (օր.՝ «Մեկ-երկու խոսք էլ հայոց վրա», «Գյուղական տների կառուցվածքը» և այլն), որոնց նյութը հայոց և անդրկովկասյան ժողովուրդների կյանքի ու հոգեբանության ուշագրավ կողմերի բացահայտումներն ու կարիքներն են:

4

Պատմողական սեռի գրական տեսակներով Աբովյանն անհամեմատ ուշ հրապարակվեց, 20-ական թթ. վերջերին միայն (երբ որպես բանաստեղծ որոշակի հաջողությունների էր հասել), իրադարձությունների անսպասելի փոփոխությունների պարտադրանքով. վճռական դեր խաղաց Արարատյան վերելքը, որի վերաբերյալ հանրությանն ու գիտական աշխարհին ճշմարտությունը պատմելը նա համարում էր իր բարոյական պարտքն ու պարտականությունը: Այսպես ծնվեցին «Ճանապարհորդութիւն պարոն պրօֆեսոր Պարրոտի և Խաչատուր դպրի Աբովեան՝ համառօտ ստորագրութեամբ հանդերձ Արարատեան լերին» ուղեգրությունը՝ գրված 1829 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Սբ. Հակոբի վանքում ու Էջմիածնում, «Նոր վկայություն» հոդվածը՝ գրված Պետերբուրգում, 1835 թվականին և այլն: Իսկ երբ Ֆ. Պարրոտի բարի անունը և գիտական բարեխղճությունը արատավորելու և կասկածի տակ առնելու նպատակով ռուս և հայ խավարամոլները սկսեցին քարեր շպրտել նրա դեմ, Աբովյանը

ժամանակցեց սկսված բանավեճին և վերահիշյալ ուղեգրության համառոտ տարբերակը թարգմանելով ռուսերեն՝ հրատարակեց «Տիֆլիսկիե վեդոմոստի» շաբաթաթերթում (1831 թ. ապրիլ):

Աբովյանի գրական ժառանգության հրատարակման պատմությունն սկսվում է անա՛յդ երկով, ու այն էլ, ցավոք, ո՛չ մայրենի, այլ օտար լեզվով: Մեծ ողբերգություն էր ապրում Աբովյանը, որ բաղձանքներն ու լուսավորական պատգամները չէր կարողանում ազգակիցներին հասցնել նրանց հարազատ բարբառով, բայց ողջ կյանքում չկարողացավ ուղղել այդ սխալը և ազատվել ճակատագրի նմանօրինակ ու անարդարացի հետապնդումներից:

30—40-կան թվականներին Դորպատի, Պետերբուրգի և Տփղիսի ռուսական ու գերմանական պարբերականներում տպագրվեցին Աբովյանի մի քանի ուրիշ երկեր, իսկ շատերն էլ մնացին անտիպ: Ազգագրական հետազոտություններ ու հրապարակախոսական էջեր էին դրանք, որոնց գլխավոր նյութը Հայաստանի պատմությունն ու վիճակն էր, մասամբ և Արարատյան հին ու նոր վերելքների հետ կապված զանազան հարցեր:

Ճշմարտությունն ասելով Հայոց պատմության, հայրենակիցների առտնին կյանքի և քաղաքական ու սոցիալական անազատ վիճակի մասին, նաև ուշադրություն հրավիրելով ժողովրդի կենցաղի ու հոգեբանության մեջ արմատավորված մոլար սովորությունների, բարոյական արատների ու անբուժելի «վերքերի» վրա, Աբովյանը կարծում էր, որ պիտի կարողանար վերացման ու բուժման միջոցներ գտնել և դրականորեն տրամադրելով եվրոպական կրթված հասարակայնությանը հայոց նկատմամբ՝ ստանալ վերջինի բարոյական ու նյութական օգնությունն ու աջակցությունը, ինչն, ըստ էության, ռոմանտիկ երազ էր: Թերությունների վերհանումն ու վերացումը, սակայն, Աբովյանի միակ խնդիրը չէր: Աբովյանը մեծագույն սիրով էր նկարագրում նաև հայ կյանքի առավելությունները՝ կապված կենցաղի ու աշխատանքային գործունեության հետ, որպիսիք վաղուց արտաքսվել էին դրամի ուժով ու թելադրանքով կառավարվող՝ եվրոպական ժողովուրդների առօրյայից: Նա ազգերի կյանքի ու կենցաղի ակտիվ ներթափանցման սկզբունքի կողմնակիցներից էր և ջանք չէր խնայում, որպեսզի Հայոց ազգային առաքինությունների և ընտանեկան համակեցության լավագույն օրինակները դառնային բոլոր ազգերի ու ժողովուրդների սեփականությունը: Այս նպատակին են ծառայում «Համառոտ ակնարկ հայերի մասին» պայմանական վերնագրով երկը (1834) և «Գյուղական տների կառուցվածքը» ուսումնասիրությունը (1835):

Աբովյանի ուղեգրական երկերի և պատմա-ազգագրական տեսությունների արժեքը դրանցով չի սպառվում: Իրենց ոճական համակարգով և պատումի ընթացքով՝ դրանք հայ ստեղծագործ անհատի մտքի արգասիքներ են և հայրենասիրական ոգեշունչ էջեր, ապագա «Վերք Հայաստանիի» համապատասխան պատկերների ու տրամադրությունների նախնական փայլատակումներ, որոնց զուգահեռները կարելի է տեսնել վեպի քնարական շեղումների մեջ (հայոց լեզվի գովքը, Քանաքեռի հրապույրների, հեռավոր գետերի ու Արարատի նկարագրությունները և այլն):

Դորպատից վերադառնալուց հետո, հաջորդ մեկ-երկու տարիներին, Աբովյանն ավարտում է ուղեգրական և ազգագրական նոր երկեր. գրաբար լեզվով՝ «Առ բարեսնունդ և սիրելի աշակերտս իմ...», որ նվիրված է 1838 թ. մայիս-հունիսին Հայաստանում կատարած շրջագայություններին, և գերմաներենով՝ «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին»: Անկախ լեզվից, երկուսն էլ գրական արձակի ավելի բարձր տեսակների գաղափարական ու գեղարվեստական որոնումների արտահայտություններ են: Քանի վերջնականապես չէր որոշված նոր գրականության լեզվի խնդիրը, Աբովյանը ազատորեն օգտվում էր օտար լեզուների ընձեռած հնարավորություններից՝ ազ-

գային կյանքն ու մտածողությունը Եվրոպայի հասարակայնության ուշադրությանը հանձնելու նպատակով, որ նրանք էլ ճանաչեին մեր հոգին: Ուղեգրության շատ հատվածներ, համարյա նույնությամբ, հետագայում փոխանցվում են «Վերք Հայաստանի» վեպին (Անիի ավերակների և Երևանի բերդի սարափների նկարագրությունները, Լոռվա ձորերի հետ կապված պատանեկան վերհուշները): Իսկ գերմաներեն ակնարկի մեջ Աբովյանը ուրվագծում է ազգի ու ազգի հոգևորականի կերպարը հանձին Տփղիսի հայոց հոգևոր առաջնորդի, որի մասին հանվանե-հականե ասված խոսքերն ու արգահատելի գործերը բուն վեպում, արդեն հայերեն համարժեքներով՝ վերագրվում են Քանաքեռի ընչաքաղց ու անգրագետ ծխատեր քահանա Տեր Մարկոսին: Գերմաներեն մի առանձին հոդվածում էլ Աբովյանը քննում է հայոց եկեղեցական երաժշտությունը և ժողովրդական անանուն տաղասացների ու գուսանների արվեստը, ժողովրդական երգերն ու աշուղական խաղերը և հանգում նույն հետևությունների, ինչ հետագայում կարդում ենք «Վերքի» Հառաջաբանում:

30-ական թվականներին է, վերջապես, ստեղծվել Աբովյանի քնարական արձակի գլուխգործոցներից մեկը՝ Դորպատյան օրագրերը, որոնք անկեղծ խոստովանություններ են կրածի, տեսածի ու նախասիրությունների, նաև՝ նկարագրություններն այն իրական ու երևակայական դժվարությունների, որոնք գրեթե ամեն օր ծառանում էին նրա առջև անծանոթ մարդկանց շրջանում: Դորպատյան օրագրերի վստահելի վերծանումների շնորհիվ ո՛չ միայն տեսանելի ու հասկանալի է դառնում Աբովյան հոգևոր աշխարհի վերափոխման իրական ընթացքը, այլև երեկվա պատանի վանականի ու մոնքի մտավոր հասունացման և լուսավորական աշխարհայացքի ձևավորման անխարդախ պատկերը, նրա տվայտանքների ու կասկածների բուն պատճառը, նրա ազգափրկիչ ծրագրերի հոյակապ կերտվածքը: Պարզ տեսնում ու պատկերացնում ենք, թե նա ի՛նչ եղանակներով էր սովորում լեզուներ ու արհեստներ, յուրացնում գիտությունների հիմունքները, ջանում հայտնագործել ու կանխատեսել կեցության գաղտնիքները և հայոց գալիքի խորհուրդը, հայոց փրկության ճանապարհը, կամ էլ վերծանում բնության մեծ գիրքը՝ կատարելության հասնելու համար:

Առանց Դորպատյան օրագրերի համակողմանի հետազոտության՝ շատ կողմերով անըմբռնելի կմնան ինչպես Աբովյանն ինքը, որպես անհատականություն ու մտածող, այնպես էլ նրա դորպատյան քերթվածները՝ հայոց նոր բանաստեղծության և անձնական քնարերգության առաջին կատարյալ դրսևորումները:

Բայց Աբովյանի գեղարվեստական արձակի, նաև հայ արձակի բարձրագույն արտահայտությունը, հայոց նոր գրականության սկիզբն ու հիմքը դարձավ «Վերք Հայաստանի» պատմավեպը: Տասնամյակների խորքից եկող այդ անորոշ ու անխորագիր մտահղացումը տևական որոնումների ու վերակառուցումների շնորհիվ, ի վերջո, ստացավ ինքնատիպ ու փայլուն կերպարանք, վերախմբագրվեց ըստ պատմողական սեռի գլխավոր տեսակի սկզբունքների ու օրինաչափությունների, ներծծվեց հրաշունչ ոգով ու հայրենասիրական պաթոսով: Հստակվեցին նրա թեման, կերպարներն ու գաղափարները, և, ի վերջո, աշխարհ գալով 1841-ի փետրվարին՝ մկրտվեց խորհրդավոր ու անսովոր անունով՝ «Վերք Հայաստանի, ողբ Հայրենասերի»:

«Վերք Հայաստանին» հայության կյանքի, մտածողության ու ձգտումների հարազատ պատկերն է, պարսկական բռնապետական լծից արևելահայության ազատագրման և ռուսական հզոր տերության հովանու տակ անցնելու ժամանակների գրական տարեգրությունը՝ հյուսված որպես ժողովրդական վեպ, ուր առատ են ինչպես դիցաբանական ու կոսմիկական ընկալումներն ու պատկերները, այնպես էլ գեղջկական կյանքի ու մտածողության և ժողովրդական հարազատ բարքերի երանություններն ու սարսափները, շունչն ու թովչանքը:

ՎԷՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ,

ՈՂԲ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Շարադրեալ

Խաչատուր Աբովեանէ

ԹԻՖԼԻԶ.

Ի Տպարանի Ներսիսեան Դպրոցի Հայոց ընծայեցելոյ յազնուական Աղայ Գէորգայ Արծրունւոյ

1858

«Վերք Հայաստանիի» առաջին հրատարակության անվանաթերթը

Վահան Տերյանը, որը գնահատականներ տալիս՝ խիստ ու զգաստ էր, Աբովյանին անվանել է Հայաստանի ոգի: «Մի՞թե,— գրել է նա,— Արարատյան դաշտը Հայաստանը չէ, և նրա ոգին՝ Աբովյանը, այդ Հայաստանի ամենալուսեղեն մի բեկորը»:

Հայաստանի այս ամենալուսեղեն ոգին ամենայն կատարելությամբ շնչում ու ծավալվում է «Վերք Հայաստանիի» մեջ՝ անմահացնելով Այրարատյան դաշտի, հետևաբար և՝ ողջ հայության կյանքն ու մտածողությունը և թարգմանը դառնալով նրա տենչերի ու ձգտումների: Վիպական տարածության ու ժամանակի առումով՝ առաջին հայացքից կարծես որոշակի է ամեն ինչ. «Երանով կարելի է իմանալ են ժամանակվա (այսինքն՝ Այրարատյան աշխարհում ղզլբաշի տիրապետության կամ XVIII—XIX դդ.— Պ. Հ.) մեր աշխարհի հալը»,— ասում է Աբովյանը, ուրեմն՝ ո՛չ վաղ անցյալի անցուդարձերը: Բայց իրականում, հեռագնաց շեղումների, պատմական վերլուծումների և ժամանակագրական մեջբերումների շնորհիվ վեպում ընդգրկված է Հայոց պատմության ողջ ընթացքը: Աբովյանը զարմանալի խորաթափանցությամբ ընկալում ու բացատրում է մեր պատմության փիլիսոփայությունն ու ազգային հոգեբանությունը, դիմադրողական ուժի գաղտնիքները: Նա քննում ու վերլուծում է հայոց դարավոր վերքերի օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները, բուժման միջոցներ առաջադրում, որպեսզի գեթ այսուհետև անշեղ ընթանա նրա քաղաքական զարգացումը, բարվոքվի ու բարգավաճի տնտեսական ու հոգևոր կյանքը: «Վերքում» հանգամանորեն նկարագրված ու իմաստավորված են հայ ժողովրդի նոր պատմության մեծ շրջադարձի՝ Արևելյան Հայաստանի ազատագրման և Ռուսիայի հովանավորության տակ անցնելու տասնամյակների պայքարն ու անցուդարձերը, իբրև սկիզբ ազգային համախմբման, ինքնագիտակցության արթնացման ու վերածնության: Բնավ չափազանցրած չենք լինի, եթե նկատենք, որ Հայրենիք (վաթան) բառի էությունն ու ոգին, ըստ ամենայնի, առաջին անգամ Աբովյանն է մեկնում ու բացատրում հենց այս գրքի մեջ, ընկալելով որպես կենդանի պատմություն և անձայն ուսուցանող, ամենաքաղցրն ու նվիրականն այս աշխարհում, որ չի կարելի կորցնել կամ թողնել տարուկ...

Հայրենիք ու ազգ հասկացությունները Աբովյանի համար անբաժան են իրարից, հետևաբար՝ ներբողելով մեկը, չի մոռանում մյուսի փառքը, հոգսերն ու կարիքները. «... քո ջանին մեռնիմ, հայոց ազգ, քո հողին մատաղ, հայոց աշխարհ... Է՛ն ի՞նչ աչք պետք է ըլի, որ քոռանա, ձեզ չտեսնի, ձեր դարդը չիմանա. Է՛ն ի՞նչ բերան պետք է ըլի, որ կապվի, ձեր փառքը չգովի, ձեր անունը չպաշտի. Է՛ն ի՞նչ քարացած սիրտ պետք է ըլի, որ ձեզ չսիրի, ձեզ իր հոգին մատաղ չտա...»:

Աբովյանն այս վեպի մեջ անմահացրել է նախ և առաջ հիշյալ պատմաշրջանի հայ մարդուն՝ իրական կյանքով ու աշխատանքային առօրյայով, ընտանիքում և հասարակության մեջ, տարագրության սարսափների ու կռվի բովում, առտնին հոգսերով և ուրախության սեղանի շուրջ, մտածողության ձևերով ու բարոյագիտական ըմբռնումներով, տանջանքներով ու տենչանքներով, լավատեսությամբ ու աշխարհաշեն ոգով, իր պատմական հայրենիքում և հնության կոթողներից անբաժան, նրանց հետ ձուլված ու մերված, թշվառության ցնցոտիների մեջ և տգիտության խավարով պարուրված, բայց ոգով ազատ, արի ու բարի, հյուրասեր ու առատաձեռն, ատելությամբ լցված դեպի օտարի լուծը և փողի իշխանությունը, հարստահարությունն ու չարագործությունը, բռնությունն ու անարդարությունը: Նա ջանում ու ձգտում է ապրել խաղաղության և հավիտենական բարեկամության մեջ բոլոր ազգերի ու ժողովուրդների հետ, երախտագիտությամբ է լցված հատկապես ռուս ժողովրդի ու տերության նկատմամբ, որոնք նրան փրկեցին պարսից դժոխքից:

«Վերք Հայաստանիի» հայ գյուղացին փորձում է ըմբռնել ազգի գոյության խորհուրդը,

ընդառաջ է վազում կրթությանն ու լուսավորությանը, պահանջում, որ բացատրեն ու ասեն, «թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ընչի՞ համար ենք էկել աշխարհ... Երկրումը ի՞նչ պետք է անենք...», կարճ, իր միտքը չարչարում է նույն այն հոգսերով ու խոհերով, ինչ հեղաբեկման դարերի մարդկությունը՝ ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ւր ենք գնում: «Վերք Հայաստանիի» դրվագներից շատերը նաև այս հարցերի պատասխանն ու լուսաբանությունն են:

«Վերք Հայաստանիի» մեջ ընթերցողն առաջին անգամ տեսավ ու ճանաչեց նաև իր հայրենիքի իրական պատկերը, որը թեպետև ամբողջական չէ, սահմանափակվում է Այրարատյան աշխարհով ու հարակից մի քանի գավառներով (Շիրակ, Գուգարք, մասամբ՝ Սյունիք), բայց հարազատ է ու բնորոշ, ներառնում է իր մեջ գույներն ու թովչանքը, վեհությունն ու խստությունը պատմական Հայաստանի բնության՝ տարվա բոլոր եղանակներին: «Վերքի» բնապատկերներն անկրկնելի են և իսկական բանաստեղծական հայտնություններ, ազգային ոգու դրսևորման խորհրդանիշներ, որպիսի նպատակի և իրականում ծառայում են (Զանգի, Երասխ, Մասիս):

Ճիշտ է, Հայաստան աշխարհն, իբրև «երկիր դրախտավայր» և «մարդկային ցեղի բնօրրան», ներբողվել է Աբովյանից դեռ առաջ, մասնավորապես Մխիթարյան հայրերի պատմաաշխարհագրական ու տեղագրական աշխատությունների մեջ և Հովհաննես Միրզա Վանանդեցու հանգավոր վիպասանություններում, բայց կլասիցիստական ոճի և գրաբար լեզվի պատճառով դրանք քիչ սնունդ էին տալիս ընթերցողի մտքին ու երևակայությանը:

Հայաստանի բնությունն իր վեհ ու ռոմանտիկ հրաշքներով, երկրի ողջ տարածքով մեկ ցրված անցյալի շինարարական արվեստի կոթողներով՝ կանգուն ու ավերակ քաղաքներով, բերդերով ու տաճարներով, վերջիններիս անձայն խոսքով ու կանչերով ընթերցողին են հաղորդում դարի ու պատմության շունչը, օգնում հասկանալու վաղնջական-առասպելական ժամանակների հերոսների ժայռեղեն կերտվածքը, անվախ սիրտն ու նուրբ հոգին, կենցաղն ու հոգեբանության, հերոսության և քաջության մասին պատկերացումները (Թումանյան-Մեհրաբյան Հովակիմ, Մանուչարյան Գրիգոր եպիսկոպոս, Ջուլավերցի Սոսին և Մելիք Հոհանջան):

«Վերքի» բնապատկերներն, ի վերջո, ինքնատիպ անձնավորումներ են, զգացող ու կարեկցող էություններ, ժողովրդի ճակատագրով մշտապես մտահոգ. հաղթանակների ու հաջողությունների պահերին նրանք ծաղկում են ու հրճվում, կարծես ծափ տալիս ու ծիծաղում, կռվի սարսափների ժամանակ՝ մռայլվում ու մթագնում, անկարող լինելով վերջ դնել չարիքին ու չարագործությանը. դրանց խոսուն օրինակները տալիս են Խլղարաքիլիսայի հերոսական պաշտպանության դրվագները:

Աբովյանի հանճարի շնչով ջերմացած և ժողովրդական բառ ու բանով կենդանացած՝ թոթով լեզվով խոսեցին «Վերք Հայաստանիի» հերոսները՝ հաճախ մինչև անգամ մոռանալով խոսակցի ու շրջապատի առկայությունը, ծավալվելով ու թափելով սրտերի ողջ դառնությունը: Մտքի ու հույզի զարմանալի հարստություն է անթեղված դրանց մեջ: Աբովյանի իդեալ հերոսները այդ լեզվով քննում են բնության մեջ արարչության դրսևորման ձևերն ու գաղտնիքները, դատապարտում մարդկանց եսամոլությունն ու անտարբերությունը, ապազգային մարմաջը, իրենց պատգամն ուղղում գալիքին, իրենց տագնապալի կանչերով զգաստացնում հայրենակիցներին. «էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»:

Հզոր ու անկրկնելի են «Վերք Հայաստանիի» բնավորությունները: Այդ գրքի մեջ ընթերցողը տեսավ իր առասպելական ու ավանդական պատմության հերոսական ու նվիրական դեմքերին՝ նրանց ազգաշեն գործերն ու անօրինակ սխրանքները, Հայկ Նահապետից մինչև

Բագրատունյաց ու Կիլիկյան թագավորներն ու զորավարները, մինչև իր օրերի լեգենդար հերոսները՝ Ներսես Աշտարակեցին ու գեներալ Մադաթյանը, և նրանց կողքին՝ ժողովրդի ծոցից դուրս եկած իրական ու իդեալական հերոսներին, որոնցից ոմանց նախատիպերը ծանոթ էին շատերին ու դեռ ապրում էին, մյուսների գերեզմանները կորել էին ու մոռացվել: Աղասին, Մոսին, Կարոն, Արծաթեցի Մանուկը, Գրիգոր Մանուչարյանը հերոսության ու անձնուրացության օրինակներ դարձան ընդդեմ թուրքական բռնապետության պայքարի ելած հայդուկների և ժողովրդական վրիժառուների համար:

«Վերք Հայաստանի» դասերը՝ գալիք սերնդին ուղղված պատգամները, այսօր էլ զգաստացնող են և ուսանելի, ոգեշունչ և խորախորհուրդ:

Իր իմաստուն մատյանում քննելով հայոց ներքին կյանքն ու պատմությունը, Աբովյանն եկել էր այն անխախտ համոզման, որ ազգության գոյության գլխավոր գործոնները հանուրին հասկանալի լեզուն և հայրենի մշակույթի դարավոր ավանդներն են, որոնց պաշտպանությունն ու զարգացումը նա վստահում էր երիտասարդությանը. *«Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, Հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնի՛մ, ձեր արևին ղուրբա՛ն. տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայիմ բռնեցե՛ք...»*

Դարերի փորձն, այնուհետև, սովորեցրել էր Աբովյանին, որ հայ ժողովուրդն իսկական բարեկեցության ու երջանկության կարող է հասնել միմիայն մշտական խաղաղության ու ազատության պայմաններում և սեփական պետության մեջ, հետևաբար Հայաստանի գալիք դարբնող երիտասարդությունը պետք է կյանքով ու արյունով պաշտպաներ հայրենի աշխարհը. *«Շունչդ տո՛ւր, հոգի՛դ, բա՛յց քո հայրենիք մի՛ տար թշնամյաց...»*,— ահա՛ «Վերք Հայաստանի» երկրորդ դասը:

Բայց կարո՞ղ էր բռնության ու տգիտության ճիրաններում շնչահեղձ դարձած ու կոտորակված հայությունը, առանց արտաքին, անշահախնդիր օգնության, պաշտպանել իր անկախությունը, վերաշինել իր ավեր տունը: Աբովյանը գտնում է նաև այդ օգնությունն ու հովանավորությունը ի դեմս Ռուսաստանի, և երրորդ դասը տալիս ժամանակակիցներին ու հետնորդներին. *«Օրհնեցե՛ք ռուսի ոտը, ջան-ջանի տվե՛ք, իրար սիրեցե՛ք...»*

5

«Վերք Հայաստանի» ծնունդից և առաջին էջերի ջերմ ընդունելությունից հետո Աբովյանի միտքն ու երևակայությունն սկսեցին ազատորեն սավառնել և դյուրությամբ գտնել պատշաճ ձևեր՝ որպես պատմվածք ու մանրապատում, ինքնախոստովանություն ու ակնարկ, ազգագրական չափածո պատկեր ու բնության երգ, բոլորն էլ աշխարհաբար լեզվով: Հետագայում, «Վերքի» ստեղծման օրերի իր հոգեվիճակը նկարագրելիս, Աբովյանը վերհիշում էր. «Ինչ խուլ, կորած, մոլորած մտքեր ունեի, բոլոր բացվել, ետ էին եկել: Նոր էի իմանում, որ գրաբառ ու ուրիշ լեզվներ մինչև էն սհաթը միտքս փակել, բխովել էին: Ինչ որ ասում էի կամ գրում մինչև էն հաղաղը, գողացած կամ հնացած բաներ էին...»: Գրաբարով գրած հին ստեղծագործություններից մի քանիսը նա վերամշակում է աշխարհաբար լեզվով («Հունայնություն աշխարհի, այգին Ղորղանովի», «Թիֆլիզու հայոց հանգստարանը»), մյուսները՝ անավարտ ու սևագիր մնացած շատ մտահղացումներ, նաև որոշ թարգմանություններ, հենց այդպես կիսատ էլ թողնում է ու այլևս երբեք չի անդրադառնում: Ընդառաջ գնալով ժողովրդական խավերի նախասիրություններին ու ճաշակին, բայց և տակավին չունենալով սեփական հղացումներ, Աբովյանը կատարում է նաև փոխադրություններ ու թարգմանություններ՝ ամեն դեպքում հետապնդելով որոշակի նպատակ. ցուցադրելու համար որդիական սերը

անհաղթահարելի ուժը («Ֆեդորա»), խրախուսելու համար հայոց աղջիկներին՝ հրապարակ հանելու իրենց հայալեզու գեղարվեստական մտահղացումները և գրական ստեղծագործությունները («Ագնես»), հայ ծնողների ձեռքը տալու իրենց որդիների դաստիարակության համար օգտավետ հրահանգարան («Պատմություն Տիգրանի»):

1841 թվականին ու հետագա տարիներին կյանքի կոչված այդ ստեղծագործությունները գաղափարական ու գեղարվեստական առումով սերտ աղերսներ ունեն «Վերք Հայաստանի» հետ, իսկ երբեմն էլ վերջինիս թեմաների ու գաղափարների սոսկական վերարծարծումներ են: Խոսուն օրինակներից մեկը «Առաջին սերը» պատմվածքն է, որի մեջ ազգագրական հենքի վրա ուրվագծվում են պարսից տիրապետության ժամանակների հայության կենցաղն ու տառապանքները և անմուրազ սիրահարների ողբերգությունը, որի պատճառը նույն սարդարխաների հաստատած կարգն ու բռնություններն էին:

«Վերքից» անմիջապես հետո մարմին առած՝ Աբովյանի մյուս ինքնատիպ հղացումը «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն է, որի ստեղծագործական աշխատանքներն ավարտվել են 1841 թ. աշնանը: Եթե «Վերքի» մեջ Աբովյանի նպատակն էր ճանաչել տալ հայ ժողովրդին իր խաթարված պատմական կյանքի հանգամանքներն ու հերոսական անցյալը, բացատրել արդի ողբալի վիճակի պատճառները և հայտնագործել քաղաքական ու հոգևոր վերածնության ուղին, ապա «Պարապ վախտի խաղալիքի» մեջ փորձ է անում հաղորդակից դարձնել իր ազգակիցներին մարդու կոչմանն ու մարդկայինի էությանը և բաց անել նրանց առջև բարոյական մաքրագործման և հոգևոր ազնվացման ճանապարհը: Մի դեպքում Աբովյանին հուզողը համահայկական շահախնդրություններն են, մյուս դեպքում՝ համամարդկային սկզբունքները, այսինքն՝ առակներին ու չափածո հեքիաթներին յուրահատուկ բարոյախոսության միջոցով լուսավորել ու նախապատրաստել հային՝ ապրելու համար մարդկության հոգսերով ու ցավերով, չմոռանալով գութն ու կարեկցանքը, չաղարտելով գեղեցիկն ու կատարյալը: «Վերքի» մեջ Աբովյանն իր ողջ ցասումն ուղղում է հայության առաջընթացը կասեցնող խավար ուժերի դեմ, լինեն դրանք օտար կամ հայրենի, «Պարապ վախտի խաղալիքի» մեջ՝ մարդու կոչումը, բարոյական նկարագիրը և աստվածային կերպարանքը ոտնահարողների դեմ:

«Պարապ վախտի խաղալիքը» Աբովյանի՝ աշխարհաբարով ստեղծած ուսուցողական և քնարական էջերի ընտրանին է. բանահյուսական սյուժեներով գրած ինքնուրույն առակների կողքին գրքում լայն տեղ է տրված Ի. Կռիլովի, Ի. Խեմնիցերի և Ի. Դմիտրիևի համանման ստեղծագործություններին, որոնք հայացված են նախանձելի վարպետությամբ և իրավամբ պիտի դիտվեն որպես թարգմանական արվեստի գլուխգործոցներ:

Աբովյանի առակների հերոսները XIX դարի առաջին կեսի հայ իրականության մեջ իշխող ավատական կենսաձևի և նորաբողբոջ քաղքենիության վատերն ու վատթարներն են, այն օրերի մարդկանց թերություններն ու թուլությունները, վերջապես՝ գյուղի ու քաղաքի արգահատելի խավերը՝ իրենց անմարդկային գործերով ու դատապարտելի ընթացքով: Առակների այլաբանական կերպարների մեջ դժվար չի տեսնել բարի ու աշխատասեր շինականների, բնական օրենքով կառավարվող կամ բնատնտեսական կյանքով ապրող գյուղական համայնքների անդամների, մի կտոր հաց վաստակելու համար քաղաք թափված պարզամիտ պանդուխտների, խավարի թագավորության մեջ տրորվող գեղեցիկ հոգիների, ապա և՝ չար ու տգետ դաստիարակների, խորամանկ ու խարդախ գործերեցների, քաղաքակրթության միայն այլանդակությունները յուրացրած մոլեռանդների, իրենց մեծ կարևորություն տվող ոչընչությունների, փողի առջև սողացողների ու երեսպաշտների, ագահ կուտակողների, վերջապես՝

ճակատագրին գերի դարձած պարզամիտ լեռնականների, որոնց անհասկանալի են իրենց իսկ արարքների ողբերգական հետևանքները:

«Պարապ վախտի խաղալիքը» կոչված էր դառնալու ժողովրդական ընթերցանության համար կազմված առաջին գիրքը մեզանում, որը հագուրդ էր տալու հարյուր-հազարի գեղագիտական պահանջմունքներին և իր հոգեշահ պատումներով ու բարոյակրթիչ խրատներով աշխատավոր մարդու պարապ ժամանակը դարձնելու բովանդակալից: Այդ նույն նպատակին էին ծառայելու նաև գերմանական ժողովրդական գրքերից քաղված ու հայացված՝ զվարճալի ու կարճ պատմությունների և սրամիտ մանրապատումների շարքերը, որոնց վրա Աբովյանն աշխատել է երկար տարիներ, դեռ «Նախաշավղի» առաջին տարբերակը հորինելու օրերից:

Աբովյանի ետվերքյան ստեղծագործությունների մեջ ձևի ու գաղափարների մարմնավորման ինքնատիպությամբ ու կատարելությամբ աչքի է ընկնում հատկապես «Թուրքի աղջիկը» քնարական նովելը, որը բացառիկ երևույթ էր ո՛չ միայն հայրենի, այլև համընդհանուր գրականության մեջ: Արդարացի կլիներ այդ երկը կոչել փիլիսոփայական խոհ կամ ուտոպիա՝ ապագա մարդու բարոյական ու հոգեկան աշխարհի վերակառուցման, մարդկության համակեցության և հասարակության կառավարման ներքին ու տիեզերական ուժերի մասին: Որքան հստակ ու շոշափելի են նովելի հերոսները, գործողության ծավալման միջավայրն ու պատմաշրջանը, այնքան վեհ ու վերացական են հեղինակի միտքն ու էությունը պաշարած տագնապներն ու խոհերը:

Երկու դժոխք հալածում են մարդուն այս աշխարհում և լափելով նրա էությունը՝ ուղեկցում մինչև գերեզման: Մեկը բռնել է նրա չորս բոլորը, մյուսը՝ միտքն ու հոգին: Մեկի դրսևորումները հանրային կեցության ու ընտանեկան համակեցության քարացած ու դաժան օրենքներն են և ազգի ու մարդկության հանդեպ ունեցած պարտականությունների կատարման ճանապարհին այլևայլ առիթներով կրած հանիրավի հալածանքները, մյուսինը՝ մարդ անհատի չիրականացված տենչանքներն ու տվայտանքները, սերերն ու կարոտները: Երբեմն բնությունն ինքն էլ իր կատաղի տարերքով ավելի է բորբոքում այդ ահավոր խարույկները:

Եվ ահա ամառային տապին, երբ երկնքից թափվող կրակը խանձել ու չորացրել է ամեն ինչ, երբ լռել ու դադարել են ամեն ձայն ու շարժում, Աբովյանի՝ ճակատագրից հալածված քնարական հերոսին, մարդու նկատմամբ սիրո և կարեկցանքի զգացումը տանում է կարեկցանքի ու բարոյական աջակցության կարոտ մեկ ուրիշի դուռը, առանց իրեն հարցնելու, թե վերջինս ի՞նչ ազգի ու սեռի է պատկանում կամ ի՞նչ կրոնի դավանում: Մեկը եվրոպական կրթություն ստացած տղամարդ է, բայց գթասիրտ ու բարի, մյուսն արևելցի դեռատի օրիորդ՝ խեղճ ու անզոր: Եվ ճակատագրից ու բախտից հալածված այդ արարածները հասնում են փոխըմբռնման, թեթևացնում իրենց սրտերը, որպեսզի հետո դիմագրավեն նոր չարիքի, նոր ողբերգության: Այդ վերջին արարի մասին հեղինակը չի պատմում, բայց այն ծավալվում ու լուծվում է ընթերցողի երևակայության մեջ: Օտար տղամարդու առջև իր ցավը պատմող թուրք աղջիկը զոհ է գնում մոլեռանդ հոր վրեժխնդրությանը:

Սերն ու կարեկցանքը, փոխըմբռնումն ու դաշնությունը հալածվել են այս աշխարհից հենց այն ժամանակներից, երբ մարդկությունը մոռացավ բնական կրոնը. մեկն սկսեց պաշտել իր Ալլահին, մյուսը՝ Աստծուն, Բուդդային կամ Եհովային և վերջինների քարոզներով առաջնորդվելով՝ անհաշտ թշնամանքով ու ատելությամբ լցվեց իր նմանի դեմ, հալածեց, կոտորեց ու ոչնչացրեց մյուսին: Հետևաբար, պետք է ջանալ, որպեսզի մարդկությունը վերադառնա նախնական ժամանակների կարգ ու օրենքին, մոռանա քենն ու թշնամանքը, ձգտի հաշտության ու դաշնության: «Խանաորդին, որ խանաորդու սուգը տեսնի ու դարդ չանի,



«Վերք Հայաստանի» վեպի եզրափակիչ էջը

(Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում)

արտասուքը տեսնի ու ինքն էլ լաց ըլի, ձենը, էն ողբալի ձենը լսի ու ինքն էլ հետը չմղկտա. նա էլ ի՞նչ ասված կունենա, ի՞նչ հոգի, ի՞նչ հավատ»,— տարակուսված հարցնում է Աբովյանի հերոսը:

Եվ ինչպես «Վերք Հայաստանի» վեպում մարդուն մարդ պահողը մնում է սիրո անարատ զգացումը, այս պատմվածքում էլ փառաբանվում է սերը, իբր մարդուն մարդկայինին վերադարձնող, մարդու մեջ մարդկայինը վերածնող ամենահաղթ զորություն. «Բայց ա՜խ, ա՜խ, ե՞րբ էս մեր կույր աչքի կապը կարձակվի, ե՞րբ էս մեր կույր, խավար մտքի փարդեն կպատռվի... որ էլի իրար սիրենք, իրար ընդունինք ու ինչպես մեկ հոր որդի՝ երկրումն մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ միտք, մեկ տեղ, մեկ գերեզման ունենանք, ինչպես երկնքումը, ուր, ետ-առաջ, պիտի գանք, պիտի գանք, բայց վա՜յ մեզ, վա՜յ, թե պարզերես չըլինք ու լանք...»:

Գիտենք արդեն, որ «Վերքի» մեջ փառաբանելով *սուրբ սերը*, Աբովյանը նկատի ուներ նրա դրսևորման անհատնում ձևերը՝ բարձրյալի հանդեպ սիրուց սկսած մինչև սերն առ սիրեցյալ, առ ազգ ու հայրենիք, ծնող ու զավակ, տանջվող ու տառապող մարդկություն, որովհետև «Ի՞նչ կրակ կարա անսեր սիրտը տաքացնել... Սերին ի՞նչ կդիմանա, որ մահից վախենա...»:

6

Աբովյանը հիմնադիր ու սկզբնավորողն է արևելահայ նոր դպրոցի ու մանկավարժության, աշխարհիկ բովանդակությամբ կրթության և ուսուցման: Նրա մանկավարժական-լուսավորական առաջին ծրագրերը շարադրվել են տակավին դորպատյան տարիներին, առաջնորդ և ուսուցիչ ունենալով լուսավորության դարաշրջանի մտածողներին ու մանկավարժներին, ի դեմս Ռուսոյի, Հերդերի, Պեստալոցցիի, Ֆրանկեի: Սկզբներում հայության լուսավորության ջահը նա վերապահում էր Մխիթարյանների նմանությամբ՝ Հայաստանի ավերակ վանքերից մեկում հաստատվելիք միաբանությանը, որին անդամակցելու էին ինքն ու իր վանական ընկերները: Հետո Աբովյանը մտածում էր բաց անել քահանայացու-ուսուցիչներ պատրաստելու համար հատուկ դպրոց, իսկ 1837-ից գլխավոր ուշադրությունը բևեռում է ժողովրդական դպրոցների համար ղեկավարներ պատրաստելու խնդրին, որպիսիք պիտի դառնային իր մասնավոր դպրոցի աշակերտները:

Իր մասնավոր դպրոցի, նաև՝ Անդրկովկասի գավառական դպրոցների գործածության համար Աբովյանը կազմում է նորագույն մանկավարժական մեթոդների օգտագործմամբ՝ դասագրքեր՝ «Նախաշավիղ կրթության» (հայոց լեզվի այբբենարան և ընթերցարան), «Նոր տեսական և գործնական քերականություն ռուսաց լեզվի վասն հայոց» (երկու լեզուները համեմատական եղանակով ավանդելու համար), թվաբանության և քերականության ձեռնարկներ, զանազան մեթոդական հրահանգարաններ ու դիտողություններ, որոնք նորություն էին և անսովոր հայ իրականության համար. մանկավարժական առօրյայում: Աբովյանը հատուկ ուշադրություն էր դարձնում ո՛չ միայն անհրաժեշտ ու կայուն գիտելիքներ հաղորդելու խնդրին, այլև երեխաների բարոյական դաստիարակության հարցերին, որովհետև, ինչպես նկատում էր նա, գիտելիքներ ամեն տեղ կարելի է ձեռք բերել, բայց ո՛չ ամեն տեղ կհաջողի նախապատրաստել մանկանը իր ապագա կոչմանը՝ իբրև հասարակության օգտավետ անդամ, իբրև միայն ու միայն իր մերձավորների բարիքի համար ստեղծված մարդ:

Աբովյանն ամբողջ կյանքում մաքառեց, որպեսզի մայրենի լեզվի ուսուցումը տարվեր նոր հայերենով՝ աշխարհաբարով: Նրա համոզմամբ՝ հին և հանրությանն անհասկանալի գրաբարն էր միակ պատճառը, որ ժողովուրդը խարխափում էր տգիտության մեջ, որ լռել էր հայ մուսաների երգը, որ անմշակ էր մնացել աշխարհաբարը:

Լեզուն ազգության ուժերի համախմբման գլխավոր ուժն էր, ազգության գոյության հիմնաքարը: Համընդհանուր գրագիտության պայմաններում միայն հայությունը կարող էր հոգեպես, տնտեսական ու քաղաքական առումով վերածնվել, բարգավաճել և մտածել ազգային պետականության մասին, իսկ դրան խանգարում էր այն, որ հանուրին հասկանալի լեզվով՝ աշխարհաբարով չէր տարվում ուսումը:

Իր լուսավորական ծրագրերը կազմելիս՝ Աբովյանը աչքի առաջ ուներ ո՛չ միայն հայության, այլև անդրկովկասյան ժողովուրդների շահերը, որոնց հոգևոր վերածնման համար նույնպես նա չէր խնայում իր անձն ու կարողությունները:

«Մանուկների աշխարհը վաղուց ի վեր բոլոր երկրային հոգեպարար բախտավորություններից ինձ համար ամենաբարձրն է եղել: Նրանց կրթելն աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար ու դեռ ավելին, քանի որ նրանք մեծ մասամբ իմ ազգակիցներն են, իսկ մյուսները՝ վրացիներն ու թաթարները (իմա՛ ադրբեջանցիները — Պ. Հ.), իմ երկրացիները»,— գրել է Աբովյանը դեռ 1838-ին:

Աբովյանի կարապի երգը դարձավ «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» (ճամփորդական խորհրդածություններ), որը չհասցրեց հրատարակել, խիստ կարևոր մի երկ հեղինակի վերջին ամիսների հոգեվիճակն ու մտորումները հասկանալու համար: Պատումի նյութը Աբովյանի և ուրիշների իրական ճանապարհորդությունն է Երևանից դեպի պատմական քաղաքի ավերակները, բայց, ըստ էության, ինչպես Աբովյանի ուրիշ շատ ստեղծագործությունների մեջ, այստեղ ևս Անին հանդես է գալիս որպես խորհրդանիշ հայ ստեղծագործ հանճարի ու հայկական պետականության, դառնալով նաև հեղինակի քաղաքական համոզումների ու լուսավորական ծրագրերի վերարծարծման համար յուրօրինակ ազդակ:

Էջ առ էջ ծավալելով իր պատումը, նկարագրելով իր տեսածն ու լսածը, Աբովյանը հավաստում և ազդարարում էր, որ Անին հայոց աշխարհի հրաշքն է, վաղուց անցած լեգենդների կարգը, որպիսիք կարելի է գտնել Հազար ու մեկ գիշերների հեքիաթներում. միայն թե Անիի լեգենդը իրական է, տեսանելի ու շոշափելի: Բարբարոսության, իսլամիզմի և մասնատված քրիստոնեության դարերում Բագրատունյաց գոռոզ արքաները ստեղծեցին փառքի ու հզորության այդ մարմնացումը, որով կարող էր պարծենալ ո՛չ միայն Հայաստանը, այլև ողջ Արևելքը»: Լինելով նաև հզոր պատվար Կովկասի, Մոնղոլիայի և Թուրքեստանի վայրենի ու անսանձ տիրակալների արշավանքների դեմ, տևական մաքառումներից հետո, ի վերջո, Անին ընկավ, որի համար պակաս հանցավոր չեն նաև բյուզանդացիները և միջնադարյան Հայաստանի մյուս հարևանները: Անիի բնակիչները ցրվեցին աշխարհով մեկ՝ ամենուր զարմացնելով իրենց ճարտարագիտությամբ և ձեռներեցությամբ, իսկ քաղաքն ամայացավ ու վերածվեց ավերակների: Եվ ահա՛, հարյուրամյակներ հետո, այս ամայացած երկրին նոր կյանք են պարգևել ռուսները:

Սրանք են ահա՛ Աբովյանի պատմական անդրադարձումների գլխավոր բովանդակությունը՝ ճոխացված իր իսկ հեղինակի մանկապատանեկան հիշողություններով, հայոց պատմության հին ու նոր դրվագների վերապատումներով ու մեկնաբանություններով, ռուսների տիրապետությունից հետո Այրարատյան աշխարհում կատարվող շինարարական աշխատանքների ու վերափոխումների նկարագրություններով, երկրամասի և հայության կյանքում տակավին անլուծելի մնացած հարցերի առաջադրմամբ ու քննությամբ: Անկեղծորեն պատմելով անդրկովկասյան ժողովուրդների լուսավորության բնագավառում առ այսօր թափած ապարդյուն ջանքերի մասին, Աբովյանը հույս էր տածում, որ ի վերջո հնարավոր պիտի

դառնար կուրծքով հակոտնյաների դիմադրությանը, նոր սերնդի կրթությունն ու դաստիարակությունը ազատել մոլլաների, տերտերների և ցարական հետադեմ պաշտոնեության խնամակալությունից: Ռուսիայի նպատակները բարի են անդրկովկասյան ժողովուրդների գալիքի նկատմամբ, ուստի նա իր սրտաբուխ զգացումներն է առաքում բարձրյալին՝ «Ռուսաստանի և նրա բոլոր հավատարիմ որդիների հզորությունն ու փառքը պահպանելու համար»:

Անիի վերաշինման գաղափարը, որ Աբովյանն արծարծել է տակավին «Վերք Հայաստանի» էջերում, իր իդեալ հերոսի՝ Աղասու բերանով՝ «Միտքս էն էր, որ Անի քաղաքը շինեի», «Ոսկի ռահաթ դառնայի»,— բաղձանքն էր Հայաստանի արևելյան ու արևմտյան բնաշխարհների վերամիավորման և ռուսաց տերության հովանու տակ հայկական պետականության վերականգնման: Իր ու իր հերոսի այս չիրականացված իղձն ու կտակը Աբովյանը հանձնում էր գալիք սերունդներին, որոնց համար նրա անձն ու ստեղծագործությունը դարձան սիրելի ու սրբազան:

Դորպատյան ուսումնառության դեռ առաջին տարիներին ծանոթանալով Աբովյանի արտակարգ ունակություններին և վեհ նպատակներին՝ պրոֆ. Պարրոտը կանխատեսել էր. «Անմոռաց և յափտենական եղիցին երախտիք ձեր ի վերայ ազգի ձերոյ...», քանզի՝ «զազգ մի լուսաւորել նախանձելի է քան զամենայն և անմոռանալի դարուց ի դարս...»: Պատմությունը հաստատեց Պարրոտի գուշակությունը: Աբովյանը դարձավ անմեռ ու անմահ...

Գ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՈՂԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Պատմական վեպ

ԱԶՆՈՒԱՏՈՀՄ ԶՕՐԱՊԵՏԻ,
ՔԱՋԱՋԱՐՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ
ՎՍԵՄԱՄԻՏ ՀԱՅԿԱԶՆՈՅ ՍՄԲԱՏԱՅ
ԿԱՅՍԵՐԱԳՍԱԿ ԱՍՊԵՏԻ

Հոգենարազատ սիրոյ
Նորընծիւղ առհաւատչեայ

Ես ո՞ւմ զիմ ողբոց բացից սգարան,
Ես ո՞ւմ դառն վիրացս ցուցից զբերան.
Վաղուց գլխիկոր թախծեալ իմ քնար՝
Անկեալ ի խոնարհ, խզեալ զյուսոյն լար,
Բանայր ինձ զայն խոր զընդան հոգեսպառ,
Վայել զիմ կենաց վայրիկ այս թշուառ,
Գրկել զայն անսիրտ, սառն չքաղարան,
Մահուամբ զիւրանալ ի նախնեացն կայան.
Սուրբ փոշւոյն զէ՛ք իմ կոնդ ոսկերոտեաց
Նուիրել, մնալ զատ յայս արհաւրաց:

Դո՛ւ զիմ սպառեալ շաւնչ կրկին զարթուցեր,
Դո՛ւ նսեմ հոգւոյս նոր լո՛յս բաշխեցեր.
Ի Քո՛յդ հայեցեալ սէր առ Հայրենին,
Ի ջերմ Քո եռանդն սրտի վեհ-խորհին՝
Անկան կեղևանք յաչացս դառնակած,

Կենսաճառ իմ բեք զօրացան ի Քոց
Ձայնից երկնայնոց: Ո՛ն, զարթնում յանկարծ,
Մանաչունչ իմ քուն մեկնի ինքննայած:
Հայրենին իւրով չքնաղ մեծութեամբ,
Հայկազունք իւրեանց ընտիր վեհութեամբ
Նոր դրա՛խտ, նոր օ՛ր սուրբ բացան առաջի
Թխպեալ իմ հոգւոյ, ծիւրեալ իմ սրտի:
Որդին կարօտեալ ի ծունկս սիրավառ
Անկեալ՝ որոնէ զիւր աստղ ուղեվար:
Դու յայս երկնաղերս մաղթանաց պահու
Կանգնիս ի բարձունս Հայկազանց դասու.
Հոգեհրաշ տեսլեամբ անմահ Քոց նախնեաց,
Կիլիկեան վեհից Սմբատայ քաջաց
Զանուն, զօրինակ, զսիրտ և զեռանդն
Ի Քո՛յդ վեհ անձին բերեալ սիրամարտ՝
Բանաս զիմ լեզու, հանես զիմ բաղձանս
Ի բոյլս դիւցազանց մերոց ի կայանս,
Զորս բուռն ժամանակն թաղէր ի մոխիր.
Զորոց զին անկշիռ անգիտէր երկիր:
Թէ ո՛չ Բրաբիոն կապեսցեն Քեզ ձեռք,
Թէ ո՛չ խրոխտ կրկէսք կանգնեսցեն Քեզ մերք,
Միւսայն զՔո անուն՝ ընտիր, պաշտելի,
Հանցէ՛, վե՛հ սեպուհ, ի կամարս երկնի:
Անդ չոկք մեծազանց մերոց սուրբ նախնեաց,
Աստ սիրտք շնորհապարտք անմեղ մեր մանկանց
Դարուց խիզախեալ՝ զանմահ յիշատակ
Քո սուրբ պահեսցեն յամայր անքանդակ:

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Կրեսոս թագավորն Լիդացվոց, երբ Կյուրոս բոլոր աշխարքի տիրեց ու նրա երկիրն էլ առավ, կովումը ղոնշուն, սիրելի, բարեկամ, զորապետ՝ նրան թողեց, ու էն անգին մարգարտի ու ջավահրե ամարաթներում մեծացած Կրեսոսը, *որ իրանից բախտավոր աշխարքի երեսին էլ մարդ չէ՛ր համարում, ընկած մեկ պարսիկ զորականի առաջ, շունչը բերնին հասած՝ փախչում էր, որ իր գլուխն էլա պրծացնի, պարսիկը ետևիցը հասավ: Սուրը գլխին պսպղաց, աչքերը սևացավ, դեռ գլուխը չտված՝ հենց իմացավ, թե մահն, էն ա, հոգին առավ: Հենց ուզում էր, որ ի՛ր թուրը իր սիրտը կոխի, որ թշնամին իրան չսպանի, զորականը որ թուրը չի՛ բարձրացրեց, թագավորի միամոր որդին, որ հոր մահը չտեսավ առաջին, քսան տարվա փակ լեզուն իսկույն կապը կտրեց, բաց էլավ, ու քսան տարվա լուռ սիրտը իր առաջին ձենը տվեց.*

— Անօրե՛ն, էդ ո՞ւմ ես սպանում, քաշի՛ր թուրդ ետ, չե՞ս տեսնում, որ առաջիդ Կրեսոս *ա, աշխարքի տե՞րն ա:*

Զորականի ձեռները թուլացան. թագավորն իր գլուխն ազատեց, քսան տարեկան լալ (մունջ) որդին իր հորը պրծացրեց:

Էսքան տարի ողորմելի թագավորազն իր կյանքն անց էր կացրել, ո՛չ ծնողաց էնքան սերը, էնքան գութն ու փափագը, որ նրա ձենը մի լսեն, մի սիրտընները հովանա, ո՛չ էն փառքն ու մեծությունը, ո՛չ էն պատիվն ու իշխանությունը, ո՛չ էն գանձն ու հարստությունը, ո՛չ աշխարքիս սերն ու վայելչությունը, ո՛չ էնքան սիրելյաց ու բարեկամաց սերն ու քաղցր զրիցը, ո՛չ ամպի ձենը, ո՛չ գետի ու թռչնոց էն անուշ եղանակը էնքան վախտ նրա սրտին է՛ն ներգործությունը չէին տվել, որ մեկ ծպտա էլա, ու իր հոր, իր ազիզ հոր մահը որ առաջին տեսավ, սիրտն էլ իր խուփը ետ քցեց, պապանձած լեզուն էլ իր կապը կտրեց, փակ բերանը իր կսկիծը հայտնեց, կարոտ, վերջին թելն ընկած հերը իր որդու ձենը լսեց,

որ լսողի սիրտն էսօր էլ ա կրակ ընկնում, երբ մտածում ա, թե **ոգիական սերն** էր, որ բնության դրած գնչիլը էսպես ջարդեց ու փշրեց։

Ո՜չ քան, երեսուն տարուց ավելի ա, իմ ազիզ հե՜ր, իմ սիրելի ա՜զգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա. գիշեր-ցերեկ լացն ու սուգ իմ աչքիցս, ա՜խն ու ո՜խը իմ բերնիցս չի՜ պակասում, ա՜յ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի։ Ամեն օր գերեզմանս առաջիս տեսնում էի, ամեն սհաթ մահվան հրեղեն սուրը գլխիս պտտում էր, ամեն րոպեի ձեր սիրտն ու դարդը հոգիս էրում, մաշում էր. լսում էի ձեր քաղցր ձենը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ձեր ազնիվ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սերն ու բարեկամությունը, մտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծությունը, մեր առաջին, է՜ն հիանալի թագավորաց, իշխանաց գործքն ու կյանքը, մեր Հայրենյաց, մեր սուրբ աշխարքի առաջվան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի աննման բնությունը ու արած քաջությունները։ **Մասիս** առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս, թե ի՞նչ աշխարքի ծնունդ եմ ես. **դրախտը** մտքումս էր կենդանի, որ ինձ, երազում թե լուրջ, միշտ մեր երկրի անունն ու պատվականությունը իմ առաջս էր բերում. Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրա՜նց որդին եմ. Եվրոպա թե Ասիա՝ ինձ անդադար ձեն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, Նոյան՝ թոռը, էջմիածնա՝ որդին, դրախտի՝ բնակիչը. դաշտում թե ժամում, չոլում թե տան՝ էն քարերն էլ ուզում էին, որ սիրտս պոկեն, հանեն, ուրտեղ որ իմ ազգի ոտը կոխել ա ու էսօր էլ կոխում ա. շատ անգամ, մեկ հայ տեսնելիս, ուզում էի էլած շունչս էլ հանեմ, նրան տամ,— բայց, ա՜խ, լեզուս փա՜կ էր, աչքս՝ բա՜ց, բերանս՝ բռնա՜ծ, սիրտս՝ խո՜ր, ձեռս՝ պակա՜ս, լեզուս՝ կա՜րճ. գանձ չունեի, որ գործով ցույց տայի ուզածս. անունս մեծ չէր, որ ասածս տեղ հասնի. մեր գրքերն էլ՝ **գրաբառ**, մեր նոր լեզուն էլ՝ **անպատիվ**, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի. հրամայել չէ՜ի կարող, խնդրեի, աղաչեի էլ՝ լեզուս մարդ չէ՜ր իմանալ, չունքի ես էլ էի ուզում, որ ինձ վրա չծիծաղին, չասեն՝ կոպիտ ա, հիմար ա, որ քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն չգիտի, ես էլ էի ուզում, որ ասեն. «Օ՜հ, **էնպես խորը**, խրթին շարադրել գիտի, որ սատանեն էլ միջիցը մեկ բառ չի՜ կարող իմանալ, հասկանալ»։ Ես էլ էի ուզում, որ իմ գլուխս ցույց տամ, որ ինձ վրա զարմանան ու ինձ գովեն, թե հայերեն շատ խոր տեղակ եմ։ Ով մեկ լեզու գիտի, ես մեկ քանիսը գիտեմ. ի՞նչ գիրք ասես, որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ թողալ. ոտանավոր, շարադրություն հո՜, էնքան եմ գրաբառ գլխիցս դուս տվել, որ մեկ մեծ գիրք էլ է՜ն կդառնա։

էս միջոցումը աստված ինձ մեկ քանի երեխեք էլ հասցրեց, որ պետք է կարդացնեի։ Սիրտս ուզում էր պատռի, որ էս էրեխեքանց ձեռքն էլ ինչ հայի գիրք տալիս էի, չէին հասկանում։ Ռուսի, նեմեցի, ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին էնպես բաները դիր գալիս։ Ուզում էի, շատ անգամ, մազերս պոկեմ, որ էս օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը։ Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվըներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին է՜ն բաները, որ մարդի սիրտ կարող է գրավել, չունքի սրտի բաներ էին, ո՞վ չի՜ սիրիլ։ Ո՞վ չի՜ ուզիլ լսիլ, թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ի՞նչ զատ են, բայց մեր լեզվումը թե էսպես բաներ ըլին, թո՛ղ աչքս հանեն։ Էլ ընչո՞վ էրեխին քո լեզուն սիրիլ տաս։ Գեղըցու վրա ջավահիր ծախիր, հա՜, շատ լավ բան ա, ամա որ կարողություն չունի, մեկ կտոր ճաթի հետ էլ չի՜ փոխիլ քո տված անգին քարը։

Է՜ս հո էս. Եվրոպիումն էլ որ չէի կարդում բազի գրքերում, թե հայ ազգը պետք է որ սիրտ չի՜ ունեցած ըլի, որ էնքան բաները գլխովն անց են կացել, մեկ մարդ էլա չի՜ դուս էկել, որ մեկ սրտի բան գրի, ինչ կա՝ եկեղեցու վրա ա, աստծու ու սրբերի, բայց հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոֆոկլեսի գրքերը էրեխեքն էլ գլխատակներին ունեին, չունքի բոլոր աշխարհի բաներ են։ Թե ասեի՝ բոլոր եվրոպացիք են անխելք անհավատ, որ աստծու բանը թողած էսպես ծոտի-մոտի բաների հետ էին ընկել, հիմարություն կըլեր։ Թե չէ, մեր Նարեկը թողած՝ ախր ինչպե՞ս էին նրանք էն գրքերին հավանում։ Լավ գիտում էի, որ մեր ազգը էնպես չէ՜ր, ինչպես նրանք ասում էին, ամա ի՞նչ անես. անաղուն ջաղացի քարն էլ չի՜ պտիտ գալիս, ո՞ւմ ասես։

Միտք էի անում, որ թե կտրիճ մարդ ասես, մեր միջումը հազարավորն են էլել ու էսօր էլ կան. թե խելոք խոսք ասես, մեր պառավներն էլ հազարը գիտեն։ Թե աղ ու հաց ասես, սեր, բարեկամություն, քաջություն, երևելի անձինք ասես, մեր գեղըցոնց սիրտն էլ ա լիքը էսպես մտքերով։ Առակ, մասալա, սուր-սուր խոսքեր որ ուզենաս, հո էն հետին ռամիկ մարդը մեկի տեղակ հազարը կասի։ Ախր ի՞նչ պետք էր արած, որ մեր սիրտն էլ ուրիշ ազգեր իմանային, մեզ էլ գովեին, մեր լեզուն էլ սիրեին, մնացել էի տարակուսած։ Լավ գիտեի, որ թե օսմանցվի, թե ղզլբաշի երկրումը ինչքան էնպես երևելի, խելոք, հունարով մարդ են էլել, ինչքան խանի, շահի, սուլթանի դռներին սիրեկան աշըղ, լավ խաղ ասող, ոտանավոր շինող մարդ են էլել, շատը հայ ա էլել։ Մենակ Քեշիշ օղլին, Քյոռ օղլին բավական են, որ ասածս սուտ չի՜ դուս գա։ Թո՛ղ էսօր էլ մեկ մարդ Գրիգոր Թարխանո-

վի հետ խոսա, նրա ասած խոսքերն, նրա էն ճարտար լեզուն, նրա էն հիանալի բոյն ու պատկերը, նրա հենց մեկ հունարը տեսնի, որ հարիր տեսակ զանազան մարդի ու ազգի լեզուն, շարժմունքը, նստիլ վեր կենալը էնպես ցույց կտա, որ քոռանամ, թե Եվրոպիո էն ընտիր թեատրներումն էլ տեսած ըլիմ, ու վարժատան երես հո իր օրումը, կարելի ա, էն ժամանակն ըլի տեսած, որ այբբենը մեր միջումը զարով էին բռնում, գյուլլով վեր քցում, էն ժամանակը կիմանա, թե հայոց միջումը ի՞նչ հունար կա։

Էսպես բաները մտածելով՝ օրս ու ումբրս մաշվել էր։ Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ։ Չէի իմանում, թե սրա չարեն ի՞նչ կըլի։ Թո՛ղ լսողը չհավատա, ամա էս ցավն էնպես էր սիրտս առել, որ շատ անգամ գժվածի պես ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ ետ սիրտս լիքը տուն գալիս։ Հենց է՛ս էր պատճառը, որ մեկ օր էլ, ամառվան զատուրի ժամանակին, աշակերտներս որ առավոտը թողի, ճաշիցը ետ ընկա էլի սարեսար։ Ճարս կտրվեց, գնացի Նեմեցի Կոլոնիեն, մեկ նեմեց բարեկամի մոտ. նրանք էլ ինձ վրա ցավելով՝ իրեք օր չթողին գամ քաղաքը։ Բայց քաղաքումն իմ սիրելի աշակերտները ու ծանոթ-բարեկամք իմ կուգս վաղուց էին արել։ Հենց իմացել էին, թե Քուռն եմ ընկել, շունքի ամեն առավոտ, րիգուն գնում էի, լողանում։ Էլի իմ, ի՛մ ազիզ, ի՛մ սիրելի աշակերտներն էին ընկել ետևիցս, որ բալքի մեկ բան էլա իմանան։ Մեկ առավոտ փանջարումը նստած՝ էլի մտքիս հետ էի ընկել, որ նրանք առաջովս անց կացան։ Որ չտեսա նրանց, հոգիս տեղըհան էլավ։ Իմ ու նրանց էն օրվան իրար տեսնիլը ո՞վ կարա պատմիլ. ով սիրտ ունի, ինքը կիմանա։ Բալքի թե գերեզմանումը էս ձեր սերը մտքիցս գնա, ա՜յ իմ սիրելի՛, իմ ազի՛զ բարեկամք. թե չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շունչս՝ բերանումս, ձե՛զ, ձե՛զ սուրբ պետք է համարեմ ինձ համար, ձեր արևի՛ն մեռնիմ։

Բայց ա՜խ, ե՞րբ ա երկինքը մեկ կերպի մնացել, որ մարդի սիրտը մնա։ Հենց մի փոքր մտքիս արևը երևաց թե չէ, էլի սև-սև ամպերը գլխները բարձրացրին, էլի կայծակ ու որոտումն սրտումս մեյդան բաց արին։ Ջուրն ընկնիլ՝ էլ չէի կարող, շունքի աստուծո ահը մտքումս, անմեղ քոռփիս ձենը անկաջումս էր, սերն ու ծնողական գութը՝ ջիգյարումս. ես դինջանայի, էթըմին ո՞վ պահեր։

Բանը հենց էս էր, որ ասում էի մտքումս, թե նստիմ, ինչքան խելքս կբերի, մեր ազգին գովեմ, մեր երևելի մարդկանց արած քաջությունները պատմեմ, էլի մտածում էի, թե ո՞ւմ համար գրեմ, որ ազգը լեզուս չի՛ հասկանալ։ Թեկուզ ռուսերեն, նեմեցերեն յա ֆրանցուզերեն գրած, թեկուզ գրաբառ, տասը՝ կըլի որ հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թե-

կուզ իմ գրածը, թեկուզ մեկ քամու չաղաց։ Ախր որ ազգը էն լեզվովը չի՛ խոսում, էն լեզուն չի՛ հասկանում, սաքի հենց բերնիցդ էլ ոսկի վեր ածի՛ր, ո՞ւմ պետք է ասես։ Ամեն մարդ իր սրտի խարջ բան կուզի։ Քո ղաբլու փլավն ինձ ի՞նչ օգուտ, որ ես չե՛մ սիրում։

Ում հետ էլ որ խոսում էի, էն էին թանխա տալիս, թե մեր ազգը ուսումնասեր չի՛, կարդալը նրա համար գին չունի, բայց ես տեսնում էի, որ էս մեր կարդալ չսիրող ազգը Ռոպենսոնի պատմությունը, Պղնձե քաղաքի հիմար գիրքը ձեռնեձեռ էր ման ածում։ Էս էլ լավ գիտեի, որ ինչ երևելի ազգեր կան, բոլորն էլ երկու լեզու ունին՝ ճիճ ու ճոռ: Ախր թե լուսավորյալ լեզուն լավ ա, ու քարերն էլ պետք է տրաքին ու հասկանան, էլ տոնլուղ, նշան, պատիվ ո՞ւր են տալիս դիլբանդին։ Էն լեզվագետ իմաստունը թո՛ղ գնա, կանգնի, գոռա, ջանը դուս գա, լսողը թո՛ղ ինքը հասկանա, լուսավորյալ գլուխն ափսոս չի՞, որ ցավի։

Միտք էի անում, որ գիժն էլ էս չի՛ անիլ։ Էլի էսպես, մտքիս հետ ընկած՝ շատ անգամ որ ղոնաղ էի գնում յա քաղաքովն անց կենում, ուշ ու միտքս հավաքում էի, թե տեսնիմ՝ խալխը խոսալիս, քեֆ անելիս ի՞նչ բանից ա ավելի հազ անում։ Շատ անգամ տեսնում էի, որ մեյդանում, փողոցում մեկ քոռ աշըղի է՛նպես են հայիլ-մայիլ մնացել ու կանգնել, անկաջ դնում, փող բաշխում նրան, որ բերնըների ջուրը գնում էր։ Մեջլիս ու հարսանիք հո, առանց սազանդարի ե՞րբ հացը կուլ կերթար։ Ասածները թուրքերեն էր, շատը մեկ բառ էլա չէ՛ր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր դրախտը, ետ գալիս։ Միտք արի, միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ. արի՛, քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալի՛ր, դրաղ դի՛ր ու մեկ աշըղ էլ դու դա՛ռ, ինչ կըլի, կըլի, խանչալից քարը հո վեր չի՞ ընկնիլ, զառ վարաղդ հո չի՞ գնալ։ Մեկ օր էլ դու վեր կընկնիս, կմեռնիս, մեկ ողորմի ասող էլ չե՛ս ունենալ։

Մեկ բարիկենդանի, աշակերտներս որ բաց թողի, սկսեցի, ինչ որ երեխությունիցս լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ արի։ Վերջը իմ ջիվան Աղասին միտս ընկավ, նրա հետ հարիր քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին, ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ։ Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլա սաղ-սալամաթ, փառք աստուծո, Աղասին՝ աղքատ ու մեռած, նրա սո՛ւրբ գերեզմանին ղուրբան։ Ասեցի՝ կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի։ Սիրտս էկել էր, բերնիս հասել։ Տեսնում էի, որ էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում։ Մեկ ազգի պահողն էլ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վա՜յ էկել ա մեր օրին։ Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման. երեսուն տարվա փակ բերանս Աղասին բաց արեց։

Մեկ երես բան դեռ չէի գրել, որ իմ մանկական սիրելի բարեկամ ու ազնիվ հայազգի պարոն դոկտոր Աղաֆոն Սմբատյանը ներս մտավ։ Ուզում էի թուղթս ծածկեմ, էլ չկարացի։ Ինձ համար աստված էր նրան էն սհաթին ղրկել, նրա ջա՛նին մեռնիմ։ Ջոռ արեց, որ կարդամ. բարեկամիցը ի՞նչ պետք է թաքցրած։ Սիրտս դողում էր կարդալիս. մտքումս ասում էի, թե հենց հմիկ, որդե որ ա, գլուխը կպտտի, ունքերը կկիտի մյուսների նման ու իմ ախմախության վրա մտքումն էլա հո կծիծաղի, որ երեսիս չասի։ Վեր- Բայց փիսը ես էի, որ նրա ազնվական հոգին դեռ լավ չէի ճանաչել։ Վեր- ջացնելիս, որ հենց էն ա, թուրն էկել էր, ոսկորին դեմ առել, որ չասեց՝ «Թե էդպես կշարունակեք, շատ հիանալի բան կդառնա»,— ուզում էի վրա թռչիմ, բերանը, է՛ն քաղցր բերանը համբուրեմ։

Նրա սուրբ բարեկամության եմ պարտական, որ մունջ լեզուս բաց արեց։ Նա գնաց թե չէ, կրակը ջանս առավ։ Սհաթի տասն էր առավոտի։ էլ հաց, կերակուր միտքս չէկան։ Ճանճը առաջովս անց կենալիս ուզում էՖ սպանեմ, էնպես էի վառվել։ Հայաստան հրեշտակի պես առաջիս կանգ- նել, ինձ թև էր տալիս։ Ծնող, տուն, երեխայություն, ասած, լսած բաներ՝ էնպես էին կենդանացել, որ էլ աշխարքը միտքս չէ՛ր գալիս։ Ինչ խուլ, կո- րած, մոլորած մտքեր ունեի, բոլոր բացվել, ետ էին եկել։ Նոր էի իմա- նում, որ գրաբառ ու ուրիշ լեզվներ մինչև էն սհաթը միտքս փակել, բռնվել էին։ Ինչ որ ասում էի կամ գրում մինչև էն հաղաղը, գողացած կամ հնա- րած բաներ էին, էնդուր համար հենց մեկ երես բան գրում էի թե չէ, յա քունս էր տանում, յա ձեռս բեզարում։ Գիշեր։վան մինչև սհաթի հինգը ո՛չ հացի մտիկ արի, ո՛չ չայի. չիբուխն էր իմ կերակուրը, գրիչը՝ իմ հացը։ Տանցոնց խնդրելուն, նեղանալուն, խռովելուն էլ չէ՛ի մտիկ անում։ Երեսուն թաբաղեն, էն ա, լցվելով էր, որ բնությունը իր պարտքը պահանջեց, աչ- քերս գնաց։ Սաղ գիշերը ինձ էնպես էր երևում, թե նստած գրում եմ. երա- նի՜ կլլեր ինձ, թե էն մտքերը ցերեկն էին միտս ընկել։

Սի՛րելի կարդացող, չնեղանաս, որ բա՛նն էսքան երկարացրի։ Էնդուր համար եմ էստոնք հիշում, որ իմանաս, թե ազգի սէրը ի՞նչ լազաթ ունի, ի՞նչ զորություն։ Էն առավոտը իմ դուշմանի տանը ո՛չ ետ գա, ինչ որ ես տեսա։ Աչքս բաց եմ անում՝ իմ խեղճ, ղարիբ գերմանացի կողակցի ձենն ա ընկնում անկաչս։ Տեսնիմ, իմ միայնակ որդին դոշին առած՝ էն արտա- սունքն ա վեր ածում, որ քարեր կմղկտան։ Ծառա ու ղարավաշ էլ մեկ պու- ճախում են փետացել, կանգնել, ինձ ցավելով մտիկ անում։ Ո՞ւմ սիրտը էս սհաթին չէ՛ր ճաքիլ։ Գժվածի պես վեր թռա, երեխիս եմ նայում. փառք աստուծո, սաղ ա. կողակցիս եմ աղաչում, սիրտը չի՛ կարում ետ բերիլ։ Ի՞նչ էր պատահել, չէի իմանում։

— Անաստված, ինձ սպանեցիր հո, էս ի՞նչ բան բերիր գլխիս,— վեր- ջապես լսեցի։

Ծառեքն էլ մեկ կողմից են ինձ ղնամիշ անում։ Վերջապես իմանամ, որ սաղ գիշերը անդադար դելն եմ տվել, գոռացել, ա՜խ քաշել, խոսացել, ու ինչ որ հարցրել են տանըցիք, միշտ էլ գերմաներեն ո՛չ, հայերեն պա- տասխան տվել ու հազար տեսակ վայրիվերո բան ասել, էլ ետ իմ կռիվն սկսել։ Մինչև սհաթի ինը, էս հալումն ընկած՝ ես իմ քեֆն եմ արել, նրանք՝ իրանց սուգն, ու ինձանից ձեռք վերցրել։ Էն առավոտը, սաղ շա- բաթ ու ամիս, էսօր էլ մուրազս հենց էն ա էլել, որ գնամ, ընկնիմ մեկ իշխանի ոտք, ասեմ, ինձ մեկ կտոր հաց տա, ու ես՝ գիշեր-ցերեկ ընկնիմ գեղեգեղ ու մեր ազգի արած բաները հավաքեմ, գրեմ։

Թո՛ղ ինձ այսուհետև տգետ կանչեն. լեզուս բաց ա էլել, ի՛մ ընտիր, ազիզ, ի՛մ սրտի սիրեկան ազգ։ Թո՛ղ տրամաբանություն գիտեցողը իրան համքյարի համար գրի, ես՝ քո կորած, շվարած որդին, քեզ համար։

Ո՛վ թուր ունի, առաջ ի՛մ գլխիս խփի, ի՛մ սիրտս խրի, ապա թե ո՛չ՝ քանի բերնումս լեզու կա, փորումս՝ սիրտ, ես լեղապատառ ձեն կտամ.

— Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում։

Թաք ըլի դո՛ւ, դո՛ւ, իմ պատվական ազգ, քո որդու արսածը, քո որդու խակ լեզուն սիրես, ընդունիս, ինչպես հերը իր մանուկի կմկմալը, որ աշ- խարքի հետ չի՛ փոխիլ։ Երբ որ կմեծանամ, խրթին լեզվով էլ կխոսանք։ Աղասին քո փոքր որդին ա, սրանից դհա մեծ, դհա անվանիքը շատ ունիս. ինձ մի սիրտ տո՛ւր, արևիդ մատաղ գնամ, տե՛ս, թե ի՞նչ ձևով եմ գնում, նրանց բերում, առաջիդ կանգնացնում, որ դու էլ զարմանաս, թե էնպես որդիք ունեցողը աշխարքումն էլ ի՞նչ դարդ կանի։ Ե՛րեսս ոտիդ տակը։ Տո՛ւր էդ սուրբ ձեռդ էլ մի համբուրեմ, որ ինձ ների, ու գնանք մեր սի- րուն Աղասու մոտ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1

Բարիկենդան էր։ Ձյուն էկել, դիզվել, սար ու ձոր բռնել էր։ Պարզըկա գիշերը է՛նպես էր գետինը սառցրել, որ ամեն մեկ ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ճռճռում, ճքճքում էր ու մարդի ջանը սրսռացնում, ձեն տալիս։ Ամեն մեկ ծառի ճղքներից, ամեն մեկ տան բաշից հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա կախ էր էլել ու բիզ-բիզ իրար վրա սառել։ Հենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նո՛ր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել, որ տա ու աշխարքիս բարով մնա ասի։ Ղուշ, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել, էստեղ-էնտեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ բունը մտել, ձենը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում։ Գետերի, առվըների երեսները սառիցը մեկ գազ էկել, հաստացել, իրար վրա դիզվել, էնպես էր ջրի, աղբրի բերնին հուպ տվել, որ մոտըներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձենն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում քլքլում էր ու էլ ետ էստեղ-էնտեղ կամաց-կամաց ձենը կտրում, պապանձվում, սառչում։

Արեգակը․ էս առավոտ որ գլուխը քնի տեղիցը ու աղոթարանիցը չի՛ բարձրացրեց ու աչքը աշխարքի վրա քցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին է՛նպես էր պեծին տալիս, պսպղում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս, որ հենց իմանաս, թե ալմազ, զմռութ, յախութ ու հազար տեսակ-տեսակ անգին քարեր ըլեին դաշտերի, սարերի գլխին, երեսին, դոշին փռած։ Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին է՛նպես էր մեյդան բաց արել, գոռում, փչում, հռսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ճամփորդի քիթ ու պռունկը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փետացրած՝ ճամփից խռկում, սար ու չոլ քցում, խեղդում կամ քարեքար տալիս։

Էնպես մեկ խիստ ձմեռվան օրի լիսն ու մութը որ բաժանվեցավ, ու աղոթարանը բաց էլավ, **Խանաքոցիք** * *քնից վեր կացան, տան երդիկները բաց արին, երեսները լվացին, մեկ-երկու խաչ հանեցին, բարի լիս ասացին իրար, երեխեքը ծածկեցին, ու ամեն մարդ սկսեց գնալ իր բանը։ Մեծ մարդիկը միրքըները սանդրելով, պառավ կնանիքը չարսավը կռնատակների տակին՝ կամաց-կամաց տանիցը դուս էլան ու տերողորմյա քաշելով, Հայր մեր ասելով, Հրաժարիմքը կամ Հավատով խոստովանիմը քթըների տակին փնթփնթացնելով, իրար ողջույն տալով, շատը իր տակը քցելու շորը կամ մորթին ձեռին բռնած, քիթ-քթի տված՝ գնացին ժամ, դուռը պաչեցին, էն վախտին վրա հասան, որ տերտերը դեռ չէ՛ր էկել, ժամկոչին ասեցին, որ զանգակը քաշի, ու իրանք մեկ-քանի ծունր դնելուցը հետո՝ մարդիկը սեղանի առաջին կամ տների տակին, կնանիքը ետի դասումը իրանց համար իրար մոտ շորը փռեցին, չոքեցին, գլուխ-գլխի դրին ու սկսեցին զրից անիլ, իրանց գեղի ու տների բանը պատմիլ, իրար հալ հարցնիլ, մինչև տերտերն էկավ, ճրագները, կանթեղները վառեցին, որտեղ ձեթ չկար, մղդսին ածեց, տերտերի փիլոնը քցեց, ու ընչանք մյուս ընկերն ու տիրացուքը կգային, նա էլ մեկ-քանի ծունր դրեց, չոքեց, սաղմոս ասաց, աղոթք արեց, էկողներին լավ վարավուրդ արեց, որի քեֆը հարցրեց, որի հետ էլ էնքան զրից արեց կամ աչքերը ճմռեց, մինչև խալխը մի քիչ շատացավ, ընկերն էկավ, Հրաժարիմքն ասեցին գդակը գլխներին, երեսները դեպի Արևմուտը դարձրին, ու հետո էլ ետ շուռ էկան, Հավատամքն ու Մեղեն սկսեցին, զանգակն մեկ անգամ էլ քաշեցին, որտեղ զանգակ չկար, ժամհարը գնաց, կտըների, աղբըների վրա ձեն տվեց, ու ժամն սկսեց կանգնիլ։ Տերտեր, տիրացու ժամն էին ասում, ժողովուրդը ծունր դնում, խաչ հանում կամ չոքում, նստում, ու աշխատասեր, ժիր մղդսին յա ճրագի ծերը կտրում, յա կանթեղներին լիս տալիս, յա թե չէ՝ միրուքը քորելով, կռնդալ գլուխը տրորելով, արշտոտալով դուրս ու տուն էր անում, բուրվառ շինում, կամ էրեխեքանց գլխին խփում, որ հանդարտ կենան, ղալմաղալ չանեն, դես ու դեն չվազին։ Բաղի անգամ էլ բռնոթու ղութին ջիբիցը կամ ծոցիցը հանում, թափ տալիս, ինքը քաշում, փռշտում, երեսին խաչ հանում յա սատանին անիծում ու քեղխուդեքանցը թավազա անում, պատիվ տալիս ու էլ ետ ծանր-ծանր գալիս, իր տեղը կանգնում կամ տերտերի հրամանը կատարում։*

Ջահել, տան տղերքն էլ ամառվան պես խոտ հնձելու, կալ կալսելու,

---

* *Երևանուցը հինգ վերստ հեռու մեկ գեղ՝ հյուսիսային կողմն ընկած. տեղը բարձր, ջուրը քաղցր, օդը գեղեցիկ, չորս կողմը բաղերով լիքը։ Մեջը երկու հրաշալի եկեղեցի, հազար քյալափա, ու այժմ հիսուն տուն կա։ Ամառվան տեղը Երևանու խաների։*

թաղ փորելու, էտելու, թաղելու, դարման կրելու դարդ չունենալով՝ ճմլկոտալով, աչքները ճմռեցին ու քնահարամ մտան զոմը, որ տավարին, ձիանոցը խոտ տան, տակըները սրբեն, ջուրը տանին, ձիանը թիմարեն ու հետը խաղ անելով էլ ետ կապեն ու գնան տուն։ Հարգևոր հարսերը՝ աղաթույր գյուլաբաթնի օշմաղը մինչև քթըների կեսը խոր քցած, քող ու լաչակի ծերը աչքերի տակը խոր քաշած, որ էլ երեսները չէր երևում, մեկ գարայի կամ ղաղաք մինթանա հաքըներին, մովի կամ կտավի շապկով զարդարած, մեկ մեծ գոտկով մեջքները չորս տակ, հինգ տակ կապած՝ գշի պես կուփ-կուփ վեր թռան, երեսներին մի քիչ ջուր քսեցին, փեշով սրբեցին, ու որն սկսեց տունն ավլել, որը դուռը սրբիլ, որն էլ չախմախին տվեց, կրակ արեց, որ թունդիրը վառի ու տան թաղարեքը տեսնի, պղնձները վրեն դնի ու կերակուրները էփի, հազիր անի։ Տան ջահել աղջկերքն էլ գլխըները սանդրեցին, մազըները հուսած, քամակներին քցած, կարմրագագաթ պոպոզ մորթե գդակները գլխըներին, անկաչները կապեցին, դաստամալն ուսըներին քցեցին, կուժը վրեն դրին, բերանը կալան ու գնացի̂ն, որ տան համար ջուր բերեն, ու երկար ժամանակ ջրի վրա իրար հետ զրից տալուցը ետը՝ էլ ետ իրար հետ խոսալով, ծիծաղելով մեկն իրանց տունը գնաց, մյուսն՝ իրանց։

Արեգակի շողքն ընկավ տուն. բորյազը մեկ կողմից էր շվացնում, թզզում, հոսանը մյուս կողմից ֆստացնում, փստացնում, վզվզում, ձինը փանջարեքովը ու երդկովը ներս ածում, աչք ու անկաչ լցնում, ու էրեխեքն էլ քնաթաթախ վեր կացած, թունդրի չորս կողմովը բոլորված, շարված, ու դեռ անլվա՝ ոտըները քարին, գետնին էին ծեծում, մորըները խփում, որ հաց առնին, ուտեն։ Աթարի սև, թանձր ծուխը դուռն ու երդիկը կալել, տունը մխի ծով էր շինել, էնպես որ մարդի աչքը առաջը չէ՛ր կարում ջոկի։ Էրեխեքանց սուգ ու շիվանը գլուխ էր տանում, քյալլա ծակում։ Որն օրորոցումն էր լալիս, որը դեռ յորղանի տակին, աչք ու բերան ծխով լիքը՝ գոռում, հարայ տալիս, որն էլ տված հացովը հերիք չէր, էլի ժնգժնգում, ուզում էր, որ էլի տան, որ ձենը կտրի։ Խեղճ տանտիկինը հո, չէ՛ր իմանում, թե ձեռը ո՛րի բերնին դնի, ո՛րի աչքը կշտացնի, ու իր բերանն ու աչքը հո, բաց ու խուփ անելով մեռել էր, հենց բռնի՛ր։ Է՛նքան ծուխ էր կուլ տվել, բռնոթի քաշել, փռշտացել, հազացել, որ սիրտն էկել էր, բողազին դեմ առել։ Է՛նքան աչքերը տրորել էր ու աղի արտասունք թափել, որ աչքի լիսը թռել էր։ Է՛նքան կուզեկուզ, հավկրի պես ման էր էկել, պուճախ-պուճախ ընկել, որ էլ մեջքը չէ՛ր կարում քաշիլ։ Թունդիրն էլ քանի կենում էր, թեժանում էր։ Պղնձները ղլթղլթալով եփ էին գալիս, ինքն էլ

թունդրի չորս կողմը դուբարա ավել քսեց, սրբեց, կերակրների համը տեսավ, աղ քցեց ու մտիկ էր անում, որ ժամավորը տուն գա։

Աստուծո ողորմությունը հասավ. ծուխը ետ քաշվեցավ. քամին ետ առավ, ջրի գնացողները էկան, տղերքն էլ հավաքվեցան. արեգակը մեկ ջիդաբոյ էկավ, բարձրացավ, բայց դեռ Ողորմի աստծու ձեն չլսած, ժամավորները չէկած՝ ո՞վ էր կարող, որ բերանը նշխարք դնի։

Առվոտա սհաթի ութը դեռ չէ՛ր ըլիլ, էս որ ասում եմ։

— Է՜հ, ժամ չի՛ դառավ մեր գլխին, մեկ իշի հարսանիք դառավ, տո,— սկսեց տանուտեր Օհանեսի մեծ տղա Աղասին բերանը բաց անիլ ու ինքն իրան թոնթորալ, բարկանալ, որ իր բող ձին թամքել, հազիր էր արել, որ էսօր դուս գնա, ջիրիդ խաղա ու ուզում էր, մոնց որ ըլի, մեկ փոքր նհար անի, ձիու քամակն ընկնի ու գնա, իր թայդաշ (տոլ) տղերքանց հետ իր քեֆն արամիշ անի։— Տո՛, ձեր տունը չքանդվի, ախր ի՞նչ խաբար ա էսքան պոչը ձգել, երկարացնել։ Մեկ-էրկու ծունր դի՛ր, երեսիդ մեկ-քանի խաչ հանի՛ր, պրծանք, գնաց. ժամի դուռը պաշ արա՛, էլ ետ արի՛, քո բանդ տե՛ս։ Ի՞նչ ա, էսպես օրն էլ ժամի տուտը բռնիլ, ե՜րկար մտիկ անիլ, որ հա կա՛ց ու բերանդ բաց ու խուփ արա՛, թե Օրհնյալ եղերուքն ասեն, որ բերանդ հացի համ տեսնի։ Խաչը գիտենա, էս հալևորներն ու պառավները քանի մեծանում են, խելքըներն էլ հետըները կորցնում։ Կուզես բարկացի՛ր, կուզես սառը ջուր խմի՛ր, որ մեռնիս էլ, էնքան պետք է մտիկ անես, որ ժամավորները գան, Ողորմի աստված ասեն, որ բալքի թե աչքդ մի բան տեսնի։ Մարդի աչքը ջուր ա կտրում, լերդը չորանում։ Էսօր էլ հո մատաղ չե՞ն մորթել ու ժամի դռանը բաժանում, որ հա թե մտիկ էլ անես, էլի աչքդ մի բան տեսնի, բերանդ մսի համ, քիթդ մսի հոտ առնի։ Տերտերների գլուխն էլ հո էսօր լավ տաքացած՝ ի՞նչ են մտիկ անում, թե գելը ոչխարը տարավ։ Էլ տուտը չե՛ն կտրում, լավ-օսալ մի քիչ ոտը բարձրացնում, որ աղունը շուտով վեր գա, ամեն մարդ իր տուն գնա։ Էլ չե՛ն միտք անում, թե էսօր ի՞նչ օր ա։ Էս կարգ դնողին ի՞նչ ասեմ. նրա հորն ողորմի, ինքը հացի տեղ խոտ կըլի կերած, բա՜ս... Փորս վեց-վեց անում, ղլվլոց ա ընկել, էլի հա կա՛ց ու գլխիդ վա՜յ տո՛ւր, թե ժամը պետք է արձակվի, որ փորիդ արքայություն ըլի։

— Տո՛, խա՛նի խարաբ, ի՞նչ էլավ քեզ. մի քիչ որ համբերես, լեզուդ քեզ անես, լավ չըլի՞լ. ի՞նչ ես առավոտ-առավոտ էլ բերնիդ կապը կտրել, հո կրակ չի՞ ընկել փորդ ու քեզ էրում, խորովում,— ասեց մերը բարկանալով,— հո աշխարքը տարան ո՛չ, դու մնացիր։ Մենք ջա՞ն չունինք, մեզ աստված չի՞ ստեղծել, հողի՞ցը դուս էկանք։ Պա՛-պա՛, պա՛-պա՛... էս ժամանակիս տղերքը հենց սալթ գժվել, կապովի են դառել։ Ո՛չ մեծի պա-

տիվն են ճանաչում, ո՛չ հավատի գինը, ո՛չ ժամի, աղոթքի զորությունը։ Էս ա, որ աստված մեր գլխին բարկացել, ամեն կողմից մեզանից զուլումը պակաս չի ըլում, է՛։ Ամենն էլ իրանց ձին են քշում։ Էրեկվան երեխեն էլ դեռ ոտը չի՛ էլած՝ ոտն ա բարձրացնում, հո աստված չի՛ վերցնիլ։ Վեր կացար տեղիցդ, տո՛, մեկ հլա աստծուն փառք տո՛ւր, երեսիդ խաչ հանի՛ր, հոգիդ միտքդ բե՛ր ու ետո ուզածդ արա՛, է՛. հո ճաքեցիր ո՛չ։ Տա՛, տա՛, տա՛... Աստված ազատի էս ժամանակվա երեխեքանց ձեռիցը. որ թողաս, աշխարք կքանդեն։ Լավ ա, որ աստված էսպես անօրեն բանին համբերում ա, ես ըլիմ, չե՛մ համբերիլ։

Աղասին հնազանդ որդի էր։ Ղորդ ա, մորը ո՛չինչ չասեց, լռվեց, բայց ասածը մեկ անկաջովը մտավ, մյուսովը դուրս էլավ։ Ոտի տակին կրակ էր վառվում. սիրտն ուզում էր բերնովը դուս գա։ Գեղումը մեծացած ռամիկ տղա՝ հազարից մեկ անգամ ժամի երես չէ՛ր տեսել, մեղի ձեն չէ՛ր լսել, կողքերն ու գլուխը չոլում, սարում հաստացրել։ Մեկ զատկին, մեկ էլ ջրօրհնեքին, սատանի աչքը քոռ, ղորդ ա, զանգակի ու պատարագի ձեն իմանում էր, բայց վա՛յ էն իմանալուն. ո՛չ սրտին էր քյար անում, ո՛չ ջանին։ Նրա համար ժամն ու գիլի հարսանիքը մեկ էր. ո՛չ բառն էր իմանում, ո՛չ զորությունը. ծունր դնելիս կամ չոքելիս էլ մեջքն ու ոտներն էին ցավում. ծալապատիկ նստում էր, բեզարում էր, ոտի վրա կանգնում էր, չէ՛ր կարում համբերի։ Շատ անգամ ճարը կտրում էր, դուս էր գալիս ժամի հայաթը, մեկ գերեզմանաքարի վրա նստում, մեկ կուշտ քնում, էլ ետ ներս մտնում։ Շատ անգամ էն վախտին էր ժամ գնում, որ ամեն բանը կերել պրծել, Օրհնյալ եղերուքն էին ասում։ Ո՛չինչ. մեկ-էրկու խաչ էր հանում երեսին, ժամի դուռը պաչում, ետ դառնում։

Սաքի մենք է՞նպես չենք անում, կոպիտ գեղըցու վրա ի՞նչ ենք զարմանում կամ ծիծաղում։ Գրի սևն ու սպիտակը հո, էսպես տեղը, տերտերներն էլ բռանց էին ջոկում. ավետարան կարդալիս հազար անգամ յա չեշմակը (գյոզլուկը) դզում, յա տիրացվի; մզդսու վրա բարկանում, յա գրակալը դոշըներին քաշում, յա գլուխ, երես գրքի միջումը կորցնում, մեկ պստիկ մոմ էլ ձեռներն առնում, յա մոնթի գլխին խփում, որ մոմը դուզ բռնի։ Շատ անգամ էլ, որդիանց որդի, մեկ փիս, անմարս, դժար, ատամ, գլուխ կոտրող բառ էլ որ չէր ռաստ գալիս, հենց գիտես, թե սատանի թամքը կորավ. շատ կռանալուցը, մոմը մոտ բռնելուցը յա գիրքն էր էրվում, յա նրա միրուքը։ Ամա էսպես բառեր վարավուրդ էին արել, մոտանալիս կամ գլխովն էին պտտում, կամ մեկ գիրն ասում, մյուսը կուլ տալիս. յա թե չէ՛ սխ կարդալու տեղ՝ սոխ կամ սխտոր ասում, ղս ասելու տեղ՝ ղըսթախ, ու ժամ օրհնողն էլ յա չոռ էր ասում, յա չէ՛ լսում։ Մեկ գիր պա-

կաս ժամանակին հո, աստված հեռու տանի. ժամ ու ժողովուրդ, տերտեր, տիրացու իրար գլխով էին դիպչում. ամեն բերնից էնպես մեկ խոսք էր դուս գալիս, որ զուռնի փոխանակ դափ էին ածում, մմի տեղ ցխավելը յա քշոցը կարդացողի ձեռը տալիս, տպողին օրհնում, կազմողին գովում ու գեջդանգեջ, պրծնելիս, աստծուն էնքան իրանց հոգու համար շնորհակալություն չանում, որքան գրքից, ավետարանից ազատվելու խաթեր։ Թե մեկ վարդապետ էլ պատահում էր էսպես վախտը, աստված հեռու տանի, էշը մնում էր ցխումը խրված, կարդացողի ոտն ու ձեռը դող էր ընկնում, լեզուն կապվում։

Չէ՛ զարմանալու. ի՞նչ անեն խեղճերը, գեղերումը վարժատուն չունին, քաղաքներումը՝ օրինավոր վարժապետ, ու շատի փորում, հինգ օր ման գաս, մեկ այբի կտոր չե՛ս գտնիլ։ Է՛ն էլ շատ ա, որ իրանց ջուրը ջրամանիցը հանում են, իրանց բանը յոլա տանում, ժամի կարգը կատարում։ Ամենս էլ լավ գիտենք, թե ո՞ւմ մեղքն ա, ամա հիմիկ խոսալու վախտը չի, հետո կասեմ. ի՞նչ ասեմ, իմացողն իմացավ ու անկաջի տակն էլ բալքի թե քորեց. բայց անկաջի տակը քորելով փոր չի՛ կշտանալ, լավ է մեկ օր առաջ իր բանը կարգին բռնիլ ու չասիլ՝ էգուց, էգուց։ էգուց էլ էս օրվանից ա, ընչանք էգուց-էլօր կքցենք մեր բանը, գելը սուրուն կտանի. ով անկյաջ ունի, լսի, թե չէ ոտը քարին կառնի։

Մեր Աղասին, բացի սրանից, ղորդ ա, տարին իրեք-չորս անգամ սրբություն էլ էր առնում, խոստովանվում, պաս ու ծում պահում, զատկի մատաղին ընկեր ըլում, խունկ ու մոմ վառում, իր մեղքը բոլոր տերտերի վիզը կապում, ինքը բերանը սրբում, ձեռները լվանում, ղրաղ կանգնում, բայց էս պարտքերը պրծածին պես, քրդի ասածին պես՝ «էլմը զեն կիկոն» էր, «էլմը զեն կիկոն»։ Էլ էն ջուրը, էլ էն ջաղացը, ո՛չ ղուլն էր բան մտնում, ո՛չ բերանը լաղաթ առնում։ Շատ անգամ ժամի ճամփեն էլ էր մտքիցը քցում, խունկն ու մոմն էլ։ Էս մեկ ադաթ էր. աչքը բաց էր արել, էնպես էր տեսել, թե հինգ նավակատյացը միս չպետք էր կերած, ժամ գնացած, ծում պահած, սրբություն առած, պատարագ արած, հոգո հաց տված, գերեզմաններն օրհնած. ուրիշներն անում էին, ինքն էլ էնպես էր անում, աղքատաց կերակրում, շատ անգամ քահանա, խալխ կանչում ու իրանց ննջեցելոց հոգիքը հիշում։ Բոլոր, բոլոր հիանալի սովորություններ էին, աննման օրենք, սուրբ աստվածապաշտություն և մարդասիրություն։ Աստված տա, ամեն ազգ էս բարեգործությունները ունենան, որ մեր ընտիր հայերն ունին, ամա Աղասու ջիգրը հենց էնդուր վրա էր շատ անգամ գալիս, որ ինչ անում էին, խելքումը չէին նստացնում, թե բանի զորությունն ի՞նչ ա։ Հանդն էր դուս գալիս՝ իր մասիլն ու պտուղը, դաշտերի

ծառն ու ծաղիկը, երկնքի պայծառ արեգակի, լուսնի, աստղերի լիսը տեսնելիս Նրա հոգին վերանում էր, խելքը թռչում, շատ անգամ աչքերը ծով դառած՝ տեղն ու տեղը մնում կանգնած. հենց իմանում էր, թե իրան դրախտը տարան։ Ձեռները քցում, գլուխը բաց անում, երեսը մեկ երկինքը, մեկ երկրի վրա քցում, հոգոց հանում ու ցանկանում էր, որ ձեն տա։

— Ա՜խ, ո՞վ ես դու, ո՞վ, յարադանիդ ղուրբան, աստված, որ էսքան բարիքը ստեղծել ես մեզ համար։ Ա՜խ, ընչի՞ չե՛ս քո սուրբ երեսը մեկ օր մեզ ցույց տալիս, որ ոտներդ ընկնինք, մեր սիրտը, մեր հոգին քեզ մատաղ տանք։ Թե ասեմ՝ երկիրն ա մենակ գեղեցիկ, հազար ծաղկներով, բուսով զարդարած, բաս երկինքը ո՞ւր թողամ, որ ցերեկը ինձ լիս ա տալիս, հանդիս պտուղը հասցնում, գիշերը մութն իմ աչքիցս հեռացնում ու էնպես, չադրի պես գլխիս վրա կանգնած՝ անձրև, արև տալիս, որ ես ապրիմ, որդիքս պահպանեմ, աշխարքի պետքը գամ, որ մեռնելիս էլ գան հողիս վրա, ինձ մեկ դարտակ ողորմի ասեն։ Ա՜խ, երկնային թագավոր աստված, քանի աչքս բաց եմ անում, էս քո արարածը տեսնում, սիրտս կրակ է դառնում, աչքս՝ ծով, բերանս լռվում, մնում եմ տաքացած, ջեռուցած, բայց ա՜խ, ո՛չ էս կրակն ա ինձ էրում, ո՛չ էս ջուրն ինձ խեղդում։ Աչքս մոլորված՝ էս թփից էն թուփ, էս սարից էն սարն ա ընկնում, ծառի տակին ասես, սարի գլխին ասես՝ մտիկ անելով աչքս շաղվում, ջուր ա կտրում։ Հենց գիտես՝ մեկ ձեն, մեկ թև, մեկ աներևույթ հոգի, տերևները խշշալիս, ղուշը թռչելիս, աղբյուրը քչքչալիս, բյուլբյուլը երգելիս, հովը փչելիս, շաղը երեսիս թափելիս, ամպը գոռալիս, անձրևը գալիս ինձ ձեն ըլի տալիս, ինձ ձեռով ըլի անում, ինձ վրա խնդում, թե վայելի՛ր էստոնք, հողածին մարդ, բարի կա՛ց, բարություն արա՛, Արարչիդ մեծությունը ու խնամքը ճանաչի՛ր, ծառի պես պտուղ տո՛ւր, ծաղկի պես՝ հոտ, սարի պես՝ աղբյուր, դաշտի պես՝ մասիլ, երկրի պես՝ հաց, երկնքի պես՝ լիս. վայելի՛ր աստուծո բարությունը, ուրըշին էլ փայ տո՛ւր. աղքատ տեսնելիս՝ կերցրո՛ւ, կշտացրո՛ւ, ղուշը վրովդ անց կենալիս՝ կանչի՛ր, կուտ տո՛ւր. դու առատ ձեռք ունեցիր, որ առատ առնիս ու բախտավոր ըլիս։ Ա՜խ, բոլոր կանեմ, կյանքս ուզեն, չե՛մ խնայիլ, բայց ի՞նչ կըլի, որ, տե՛ր իմ և աստված ջան, էս հոգին մեկ օր էլա մի ինձ երևի, որ էսպես կարոտ չմնամ, չէրվիմ, չմաշվիմ Նրա աննման սիրովը։ Երազումն էլա որ մեկ Նրա պատկերը տեսնեի, սրտումս դարդ չէր մնալ, էսքան չէի հասրաթ ըլիլ ու տանջվիլ։ Թե դու ես Նրան ուղարկում, ո՜վ տեր իմ և արարիչ, ինչի՞ չես հրամայում, որ մեկ օր, մեկ օր, ա՜խ, մեկ րոպե էլա, մեկ աչքս բաց ու խուփ անելիս էլա, նա մի աչքովս ընկնի, նրան տեսնիմ, սիրտս հովանա ու էլի նրա ասածն անեմ. բերնիս թիքեն հանեմ, ուրըշին ուտացնեմ, հա-

քիս շորը հանեմ, ուրըշի լաշը ծածկեմ, որ հորնըմորս սիրտն էլ ուրախանա, ասեն, թե «Աստված իրանց բարի զավակ ա պարգևել, որ իրանց խրատը գետինը չի՛ քցում, իրանց բարի ճամփին ա հետևում, իրանց ասածն անում»։

Հանդը դուս գալիս՝ մեր բիրտ Աղասին էսպես էր մտածում, ու սիրտն էրվում, ժամիցը գալիս՝ փառք էր տալիս աստուծո, որ շուտ արձակվեցավ, ինքը տուն էկավ, որ մի քիչ դինջանա ու գնա հանդը, որ էլի սիրտը բացվի, էլի էն հիանալի ձենը լսի ու իր բանն անի։ Շատ անգամ բարկացած՝ գալիս էր, տան պուճախումը կամ քուրսու տակին ոտները փռում, տրտնջում, թոնթորում, գանգատ անում, որ ժամումը, խոստովանվելիս, էնպես բաներից էին խաբար առել, Նրա սիրտը վիրավորել, որ Նրա մտքովը ամենևին երազումն էլ չէին անց կացել։

— Ա՛խպեր, արածիս հլա մեկ ճար արա՛, հետո ուրիշ բաներից հարցըրու, է՜,— ասում էր շատ անգամ նեղանալով։— Հենց քանի ասում ես, էլի երկու սհաթ չոքացնում, գլուխդ տանում են, թե՝ ասա՛, ասա՛։ Ախր որ չեմ արել, ի՞նչ ասեմ, ի՞նչ։ Էնպես բան արա՛, որ սիրտս մի քիչ հովանա յա տաքանա, շատ խոսալուց ի՞նչ կշահվիս։ Ասենք, թե խաթր եմ անում, լիս չե՛մ ընկնում, հենց պետք է ամեն բան բերանդ գալիս խոսի՞ս։ Սիրտս սրսռում ա էդ հարցրած բաներիցդ, քար ըլի, էդ խոսքերը չի՛ տանիլ։ Ախր ի՞նչպես են աստուծո սուրբ տաճարումը էնպես բաներից խաբար առնում, որ չոլումը չի՛ պետք է խոսացած, բալքի թե քամին իմանա, տանի, ուրըշի անկաջ քցի. տանը չի՛ պետք է ասած, որ չըլիմ չիմանամ, պատերը զարզանդին։ Ես իմ կարճ խելքովս էնպես եմ իմանում, որ մարդ խոստովանվելիս ինքը պետք է իր մեղքի վատությունը, իր արած չարությունը միտք անի, փոշմանի, զղջա, աստծուն խնդրի, որ իրան թողություն տա, որ էլ չանի. կարողություն տա, որ իր ճամփիցը չհեռանա, բարի ըլի, թե չէ՝ զոռ անելով, մարդի վրա բեռը դնելով, անկաջը էսպես բաներով լցնելով, սրտիցը ո՛չինչ խաբար չառնելով ի՞նչ կընկնի մարդի ձեռքը. ոչինչ։ Հինգ օր էլ գլուխդ քարեքար տուր, տարով ծում պահի, որ սիրտդ թամուզ չի՛, ի՞նչ օգուտ։ Թե ինձ վատություն ես արել, պետք է սրտով իմանաս, ինքդ փոշմանես, թե չէ ուրըշի ասելով դու հո քո ուզածը ու քո խորհուրդը չե՛ս թողալ։ Տերտերի առաջին չոքելիս, մեղա տալիս էնպես պետք է վեր կենաս, որ խղճմտանքդ դինջ ըլի, նրա ասածը գլխումդ մտնի, թե չէ՝ սիրտդ լիքը գնացիր, լիքը վեր կացար, ի՞նչ օգուտ։ Խաթաբալա ա, է՜լի. մեկ որ յախեդ ձեռ ա ընկնում, էլ չեն ուզում, թե պոկեն։

Հաղորդության օրը որ գալիս ա, աստված գիտենա, ջանս դող ա ընկ-

նում։ Ինչ աման-չաման կա, լվանում եմ, ղուղս մզում, քամում, բեհնս քանդում, որ տեսնիմ, թե ի՞նչ եմ արել, որ ես ինքս ասեմ ու հարցնիլ չտամ։ Տուն չե՛մ կտրել, մարդ չե՛մ սպանել, ուրըշի հացը ձեռիցը չե՛մ խլել, աստծուն իրան այան ա․ գողություն, չարություն, անառակություն մտքովս էլ չի՛ անց կենում, էնքան արևի, անձրևի տակին չոքըչոք եմ անում։ Առավոտը գնում եմ հանդը, րիգունը գալիս, մեկ մարդի ծուռը աչքով չեմ մտիկ տալիս, էլ մեղքս ո՞րն ա, որ հենց գլխըներս տանում են, թե՝ հա՛, ասա, հա՛, ասա՛։ Ես լավ գիտեմ՝ մեղքի պարկն ո՞վ ա, իրանցից պետք է հեսաբ պահանջել․ մեզ վրա են բեռը բարձում, մեզ մեղավոր շինում։ Ղորդ են ասել, թե շատ կարդացողի ծուծը բարակ կըլի, գլխումը խելք չի՛ ըլիլ կամ թե չէ կթուրքանա։ Աշխարքս կարդացողիցն ա շինվել, կարդացողիցն էլ պիտի քանդվի։ Իմ դուշմանս նրանց ձեռը չընկնի, սաղ-սաղ կուտեն մարդի։ Ինչ ասես՝ նրանցից դուս ա գալիս։ Ավետարանը իրանք են կարդում, ժամ ու պատարագ իրանք անում, մեզ ասում, թե մեր ասածն արեք, մեր գործքին մեք նայիլ։ Ախր ի՞նչպես չնայեմ, հո քոռ չեմ, փառք աստծու։ Ինչ ճամփով որ դու գնում ես, ես էլ էն ճամփովը պետք է հետդ գամ․ տո՛, դու դուզ գնա՛, որ ես էլ դուզ գնամ, է՜․ զոռի բան չի՛ հա։ Տո՛, դու խեցգետնի պես ծուռն ես եռում, ինձանից պահանջում ես, թե ծուռը մի՛ գնա։ Առաջ դու արա՛, ետո ինձ խրատ տո՛ւր, է՜։

Ես էլ գիտեմ, որ աստված փիս բանը չի սիրիլ․ ես որ հող տեղովս ատում եմ, նա ի՞նչպես կընդունի։ Թե բան ունիս, է՛ն ասա, էդով քարվան չի՛ կտրվիլ։ Նստում են երկա՜ր, զունդալամա խոսում, հազար բանի անուն տալիս, հազար հրաշք պատմում, մեջը փուչ, օխտը հատիկ, ո՛չ աղ կա, ո՛չ համեմ։ Քրիստոս գիտենա, իմ ծառիցը ու դաշտիցը շատ բան եմ սովրում, քանց սրանցից։ Տո՛, փող էլ ուզես՝ կտամ, չունենամ, գլուխս կծախեմ, քեզ կպահեմ, թաք ըլի էնպես բան ասես, որ խելքումս մտնի, իմ հավարին հասնիս, էն ժամանակը հոգիս ուզես, քեզ թասիր չե՛մ անիլ, չե՛մ։

Ամենը հո ամենը, իլահիմ մեր Տեր Մարկոսը, որ առավոտից մինչ րիգուն՝ փիլոնն ուսին քցած, փոխանը վեր քաշելով, հողաթափը ծրփծրըփացնելով կամ քոշերը քստքստացնելով, քուցին-քուցին անելով, մեկ դագանակ ձեռին, լոնդի տերողորմեն շխշխկացնելով, քուչեքը չափելով, մեկ մեռել կամ կնունք, շիլափլավ կամ մատաղ պատահելիս՝ մեկ էլ էն ես տեսնում, որ հազալով, փռշտալով, ոտին-գլխին անելով, դռները ջարդելով, կոտրատելով, ափալ-թափալ ներս ընկավ, հոգեառ հրեշտակի պես էկավ, թունդրի ղրաղը կտրեց, իրան-իրան նստեց, արաղ, մաղա ուզեց, ու հենց իմանաս, թե մեռելի կես հոգին ինքն ա ուզում հանի։ Դեռ պատանը չկարած, չլվացրած, շուտով թաղումելեքն ու կողոպուտն ա ուզում, աստ-

ված հո չի՛ վերցնի։ Տո՛, մեկ արի՛, ձեռս բռնի՛ր, հոր պես ինձ սիրտ դի՛ր, ինձ անուշ լեզվով մխիթարի՛, ետո հոգիս էլ հետը հանի, է՜․ թե որ չտամ, պատժի գամ։ Մեկ հացկերույթ ըլելիս՝ սուփրի գլխին ինքն ա նստում, հինգ մարդի ղդար հաց ուտում, տկի հոտն առնելիս՝ փորը ղվլոց ընկնում։ Տո՛, քո տունը չքանդվի, քո տունը, հո սոված չմեռա՞ր, ա՛յ խանի խարաբ, ի՞նչ էլավ քեզ․ մարդի փորը հո դժոխք չի՞, որ իրան ուտի։

Սար ու ձոր՝ տերտերի փոր․ ի՞նչ ղորդ են ասել, է՜։ Բերնին ղուրբան, ով էս խոսքն ասել ա։ Ավետարանի կողքումը պետք է գրած, որ սրանք կարդան ու իմանան։ Քիչ ա մնացել, որ մեզ սաղ-սաղ ուտեն։ Երեխեքներս չոբան դառած ման են գալիս, նրանց դարդը չեն քաշում, որ մեկ այբբեն էլա, մեկ ճզի-բզի սովորցնեն, հենց իրանց ֆիքրն են քաշում։ Էդպես հո չի՞ ըլիլ։

Ղորդ ա, կարդալ-մարթալ չե՛մ գիտում․ էշ կերել եմ, էշ մեծացել։ Ես ի՞նչ գիտեմ՝ տերտերն ի՞նչ ա, ժամն՝ ինչ։ Էդպես բաները էս հաստ գլխումը, հազար տարի էլ ասեմ, մեռնիմ, կտրիմ, ոտներս քարեքար տամ, տուն չի՛ գնալ, տո՛ւն։ Պարտականը նա ըլի, որ ինձ կարդալ չի սովորցրել, ամա բանը մենակ կարդալումը չի՛։ Ինչ կուզե ասեն, ես իմ կոպիտ գլխովը էնպես եմ կարծում․ նհախ տեղը՝ դատած մալը ուտիլը ու դարտակ քնիլը հարամ ա։ Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի։

Էս լսողն էնպես կիմանա, թե մեր Աղասին մեկ սարսաղ, անհոգի, անաստված, իր հավատն ուրացած մարդ պետք է ըլեր, որ մեր ողորմելի կարդացողներին էսպես քարկոծում, պախարակում էր ու էլ միտք չէ՛ր անում, թե նրա՛նք են Քրիստոսի կենարար մարմինն ու արյունը ճաշակում, ծառա եմ նրանց սուրբ զորությանը։ Նրա՛նք են մեր հոգու տերը, մեր մեղքը սրբող-մաքրողը։ Նրա՛նց է տված երկնքի ու երկրի իշխանությունը, որ արքայության դուռը մեզ համար բանան կամ փակեն։ Նրանք որ չըլին, մեր հոգին դժոխքումը հուրն-հավիտենական իսրի պուճախումը հա՛ կտանջվեր, հա՛ կտանջվեր ու սատանեքանց փայ կըլեր։ Մազե կարմնջովը անց կենալիս՝ տեղը թե նրանք մեր ձեռը չի բռնեն, անդունդը կթափվինք, ու ամեն մեկ մեր թիքեն հազար սատանի ճանկը կընկներ։ Ինչ ուզում ես՝ խոսի՛ր, արա՛, ձեռդ ո՞վ <ա> բռնում, ամեն մարդ իր գլխի տերն ա, ամա էսպես բանի վրա խոսողի ատամները պետք է ջարդած, որ խելքը գլուխը գա։

Ի՞նչ անես, էշ գեղըցի ըլելով՝ գլուխը հաստ, ծուծը բարակ, անտաշ, կոպիտ, ո՛չ վարպետ էր տեսել, ո՛չ վարժատուն, ձիու տակը սրբելուցը, մաճը բռնելուցը, հանդը վարելուցը ու կատեպանությունից ավելի ո՛չինչ

բան չէ՛ր գիտում։ Ախր մեկ մարդ որ անլվա հաց ուտի, ամսըներով չոլումն ու գոմումն իր օրն անց կացնի, նրանից էլ ի՞նչ հարցնես, ի՞նչ բեդամաղ ըլիս. Նրա ասածը ո՞վ չվանի կդնի։ Թեկուզ գնըրցին, թեկուզ յաբանի հայվանը, մի հեսաբ ա։ Մեկ մարդ որ խաչ հանելիս չիմանա, թե ձեռը առաջ դո՞շին պետք է դրած, թե՞ ճակատին, ա՞ջու կողմը, թե՞ ձախու, սաղ տարին հինգ անգամ ժամի երես տեսնի, էլ ո՞վ նրա դնչին մտիկ կտա։ Կըլի որ նրա բոլոր անբավականության պատճառը բարիկենդանն էր ու ժամի երկարիլը։ Բալքի միտք էր անում, թե իր թայդաշ տղերքը էն սհաթին ձի ու ասպաբ հազրած՝ դուս ըլին էկած, ու ինքը ետ մնա։ Բալքի թե հենց է՛ստուր համար էր նա էնքան դատ-բեդատ անում, տրտնջում, բերանը ավերում, հոգին ալալկանում. թե չէ նրա ձենը մինչև է՛ն օրը իր հերնըմերն էլ չէին լսել։ Էս պատճառով կարելի ա նրա գիժ խոսքերը մոռանալ, նրան ներել ու էնպես ափեղցփեղ, հայվարա խոսողի բերանը ցխել, որ իր չափը ճանաչի։

Ուրեմն՝ լոտղը թո՛ղ չբարկանա ու իսկույն ձեռք բարձրացնի, որ Աղասու բերնին խփի։ Էնպես չար լեզու ուրիշ մարդիկ էլ ունին, բայց Աղասու բարի խասիաթը, բարի սիրտն ու հոգին քիչը կունենան։ Էս հասակը հասել էր, քսան տարին անց կացել, նա դեռ հորնըմոր առաջին էնպես էր, ինչպես մեկ անմեղ գառը։ Մեկ օր նրանց խոսքիցը չէ՛ր դուս էկել. մեկ օր նրա բերնիցը մեկ թթու խոսք չէ՛ր լսված. աչքը նրանց աչքին առնելիս՝ նա նրանց միտքը իսկույն իմանում ու գլուխը մահու էր տալիս, որ նրանց կամքը կատարի։ Գեղըցիքը բոլոր նրա արևովն էին խնդում, նրա գլխովն օրթում ուտում։ Ամենի աչքը նրա վրա է, նրան էր գովում, նրան էր օրհնում։ Մեկին մեկ փորձանք դիպչելիս կամ մեկ դարդ ունենալիս նա իր գլուխը ետ էր դնում, նրա մուրազին հասնում։ Բերնի թիքեն հանում էր, ուրըշին ուտացնում։ Էնքան իր ապրանքին, իր հանդին ու մալին չէ՛ր մուղայիթ, որքան իր հարևանների։

Տանուտերի տղեն էր, աղքատի ու նաչարի ընկեր։ Որբ էր նրա դուռը գալիս՝ սուփրեն էր բաց անում կամ քիսեն. ում գութան չուներ, իրանցը բան տալիս. ում եզն ու հոտաղ չուներ, իրանցն ուղարկում. ում փող չուներ, որ մշակ բռնի, իգին էտի, փորի յա թաղի կամ թաղը ետ տա, ինքն էր առաջ ընկնում, գեղի տղերքը հավաքում ու գնում նրա բանն՝ առանց կանչելու, առանց խնդրելու անում, ու իգու տերը մեջը մտնելիս՝ աչքը մնում սառած, նրան ումբր ու արև խնդրում, չունքի թե մեկ տարի վազն անթաղ մնա մեր աշխարքումն, իսպառ կչորանա։— Շատ հերնըմեր երանի էին տալիս նրա հորն ու մորը, որ էնպես բարի զավակ ունեին։ Ինչ տեղ

մեկ մեջլիս կամ մեկ սուփրա էր բաց ըլում, նա էր նրանց գլուխը, ուրախությունը ու քեֆ շհանց տվողը։

Նրա սուրահի բոյը, նրա թուխ-թուխ աչքերը, նրա ղալամով քաշած ունքերը, նրա աննման, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձենը, նրա լեն թիկունքը, բարձր ճակատը ու ոսկեթել ճալվերը մարդի խելք էին տանում. տեսնողը մաթ էր մնում, չէ՛ր կշտանում։ Սաղը ձեռն առածին պես՝ քարին, փետին շունչ, հոգի, լեզու էր տալիս։ Ղորդ ա, արևն երեսն էրել, գույնը փախցրել էր, ամա ծիծաղելիս որ աչք ու ունքը չէ՛ր բաց անում, հենց իմանաս՝ վարդ է բաց ըլում, երեսիցը լիս վեր թափում։ Նրա թվանքի գյուլլեն դարտակ չէ՛ր անց կենալ։ Սիրտն էնքան բարի էր, որ նհախ տեղը ղուշ էլ չէ՛ր սպանիլ. մոջիմը չէ՛ր կոխիլ, ամա հարամի թշնամու ձեռին տապակվելով գիշեր-ցերեկ, որ թե էնպես էր պատահում, որ թուրքերն էկել էին, բաղը լցվել, կամ իրան՝ սպանիլ, կամ իր հարևանին, էն ժամանակը երկնքումն ըլեր, վեր կգար, գեղի էն կողմիցը ձեն տային, իսկույն ական թոթափել հազիր էր, ու թե բառով բանը չէ՛ր վերջանում, էն ժամանակը նա իրան թրի, թվանքի ու կռան հունարը էնպես էր ցույց տալիս, որ թշնամին մնում էր կատու դառած կամ նրա ձեռին, հնձանի տաքարին ղուրբան ըլում, որ թաղում, ծածկում էին, չունքի հազար անգամ էին փորձել, վարավուրդ արել, թե մինչև տաճկին չծեծես, քեզ բարեկամ չի՛ դառնալ։

Էնքան ղվաթով էր, որ ձեռը մեկ տղամարդի գոտիկը որ չէ՛ր քցում, հավի ճուտի պես բարձրացնում, գլխի ծերն էր հանում, պտիտ տալիս, էլ ետ վեր բերում։ Ձին նի ըլելիս որ ձեռը չէր բարձրացնում, ասլան ձին կզանում էր ու մեջքը դեմ անում։ Հինգ մարդ վրա թափեին, բռանց ձեռը կոլոլեին։ Գոմշի կամ եզան բողազը մեկ թուր խփելով է՛նպես դուս կտրում, որ թրի ծերը գետինն էր խրվում։ Շատ անգամ քսան հարամի հենց թրի ոտքով էր հետ ածում։ Թուրքերը նրա անունը լսելիս լեղապատառ էին ըլում։ Շատ անգամ, կռիվ քցած վախտը, հենց նրա ձենն իմանում էին թե չէ, ճանճի պես ցրվում, դես ու դեն էին կորչում, գյում ըլում։ Ավելի անունը Ասլան բալասի էին դրել։ Ձեռներն էլ կապած որ հարամու, թուլու մեջ բաց թողեիր, կարող էր, որ իր գլուխը պրծացներ։

Բայց է՛սքան զարմանալի հատկությունները ունենալով՝ էլի երեխի հետ երեխա էր, մեծի հետ՝ մեծ։ Խանի, շահի առաջի էնպես էր կանգնում, ջուղաբ տալիս, որ, հենց իմանաս, թագավորի որդի ըլի։ Ծիծաղն ու խնդությունը նրա երեսիցը պակաս չէ՛ր հարկիզ. է՛նքան պարզ էր նրա սիրտը, է՛նքան հանգիստ՝ նրա խղճմտանքը, է՛նքան արդար՝ նրա հոգին։ Նրա ամեն մեկ խոսքը անգին ջավահիր էր։

Շատ մոր աչք մնացել էր կարոտ, որ նրան իր փեսա չինի, նրա գլխովը պտիտ գա։ Ջահել աղջկերքը, նրա ձենը կամ անունը լսելիս, ուզում էին, որ հոգիները տան։ Շատ անգամ, ջրի ճամփին կամ տան կտրներին կանգնած տեղը, որ Աղասուն անց կենալիս չէին տեսնում, էնպես էին կարծում, թե հրեշտակ է անց կենում, մնում էին քար դառած, մայիլ էլած։ Նրա ձենը լսելիս, նրա բոյը տեսնելիս, սիրտըները կրակ էր ընկնում, խելքըները գնում. ուզում էին իրանց հոգին հանեն, նրան տան։ Ջանգյուլում ասելիս կամ ֆալ քցելիս կամ թիզ բաց անելիս ամենն էլ իրանց մտքումը նրան էին դնում, երազում նրան տեսնում, վեր կենում՝ նրա սիրուն ա՜խ, ո՜խ քաշում։ Նրա ձեռի խնձորը կամ վարդը որ մեկի ձեռն էր ընկնում, որ փտում էլ էր կամ չորանում, էլի նա ծոցիցը չէ՛ր հեռացնում, քնելիս՝ բարձին դնում, զարթնելիս՝ դոշին, երեսին կամ քթին։ Մեկ տեղ ղոնաղ ըլելիս, հազար տեղից՝ պատի արանքից, դռի շեմից, տան սյուճախից, հենց նրան էին մտիկ տալիս, ու շատը ուզում էր, թե հենց էն սհաթը յա Աղասու ձեռը նրա ձեռին դիպչի կամ շունչը՝ շնչին, յա թուրը սիրտը մտնի, որ շուտով նրա արևին մատաղ ըլի, որ Աղասին նրան թաղի, Աղասու սիրտը նրա համար մրմնջա, Աղասու աչքը նրա վրա լա, բայց ա՜խ, Աղասին վաղուց էր իր մուրազին հասել ու նրանց մուրազը փորըներումը թողել։ Սաղ գեղը է՛նքան էր նրա սիրովը վառվել, որ մինչև նրա վրա խաղ էլ էին հանել՝ իրանք ասում, էրեխեքանցը սովորցնում։

Աղասի ջա՛ն, գլխիդ ղուրբան,
Դու ես մեր թագն ու պարծանքը.
Աշխարքս որ բոլոր ման գան,
Ո՞վ կլի հատդ, դու մեր կյանքը:

Գլխովդ միշտ պտիտ կըգանք,
Ա՛ռ մեր հոգին, դու մեր հրեշտակ.
Թե թաղես էլ մեզ, ձեն կտա՞նք,
Էլ քեզ կորհնենք, քեզ ղուրբան գնանք:

Երկնքին դու լիս ես տալիս,
Ծաղկերին՝ հոտ, համ ու հոգի.
Դաշտ, սար ու ձոր քեզ տեսնելիս՝
Գլուխ վեր բերում քո առաջի:

Բյուլբյուլն մեռած՝ սազիդ ձենին,
Վարդն թոռոմած՝ սերդ հիշելիս,
Ա՛խ են քաշում, տալիս գլխին,
Վա՜յ են ասում՝ դու մոտիկ չտալիս:

Քանի սաղ ենք, քեզ ըլինք ղուրբան,
Քո շվաքիդ տակին մնանք.
Ա՜խ, թե մեռնինք, մեր գերեզման
Էլ գաս, կոխես, որ դինջանանք:

Թագավորներ հասրաթդ քաշեն,
Որ ունենան քեզ պես որդի.
Քո անունը երբ լսում են,
Թոզ են դառնում քո թշնամիք:

Արեգակն իր լիսն երեսիդ,
Ամպերն իրանց թևերը փռած՝
Քեզ են նայում, որ արևիդ
Ղուրբան ըլինք, մնում կանգնած:

Տանիցը որ դուս ես գալիս՝
Ամենիս աչքն վրեդ մայիլ.
Քաղցր լեզուդ մենք լսելիս՝
Ոտիդ տակին ուզում մեռնիլ:

Ղալամով աչքերդ ա քաշած,
Սուրահի բոյդ մեկ չինարի.
Աշխարքի աչքն քո վրեն մեռած,
Աղասի ջա՛ն, մեզ մոտ արի:

Բայց, ինչ կուզե որ աներ, Աղասին իրանց տանն էնպես էր, ինչպես մեկ հարսը։ Ղորդ ա, մի քիչ ոտին-գլխին արեց, ամա էն էլ բարիկենդանի հունարն էր։ Շիրախանի բալանիքն ասես թե մառանի, մոր ջիբումն էր։ Սա էլ հո էնպես կապ էր ընկել, պպին կանգնել, թե ընչանք ժամը դուս չի գա, նրան, որ մեռնի էլ, մեկ կաթը ջուր չի տալ։ Աղասու նշանածն էլ լավ ոտին-գլխին էր անում, ամա ի՞նչ աներ ջրատարը, ձեռիցը մեկ բան չէ՛ր գալիս։ Անաստված կեսուրը ո՛չ մեկի դնչին էլ չէ՛ր նայում, չէ՛ր մոռում։ Ամեն բանը իր ձեռովն էր հազիր արել՝ արաղ, գինի, հավ, ձու, ոչխարի

միս, բայց, ժամը չարձակված, վա՜յ նրան, որ էստոնց կշտովն անց կենար կամ մատը դներ վրեն։

Էս միջոցումը գոմի սաքուն էլ սկսեցին Թամուզ սարքել, խալիչա փռել, բուխարին վառել, դուրսն ու տունն ավլել, չունքի որ գեղի քեդխուդեքը էսօր էստեղ էին կանչած, ու էսպես կարգով՝ օրը մեկ քեդխուդի տան, ինչպես որ միշտ սովորություն ա, իրանց բարիկենդանը պետք է անցկացնեին։ Աղասու մարդը վաղուց կտրիցը նայում էր, որ տեսնի, թե ե՞րբ ժամը դուս կգա։ Հենց կնանոնց սպիտակ չարսավը տեսավ թե չէ, նոքարը ափալ-թափալ տուն ընկավ ու նրան աչքալիս տվեց։ Էլի մերը իր ձին քշեց, իր ասածն արեց ու Աղասուն չթողաց, որ տեղից էնքան ժաժ գա, մինչև Սառախաթուն տատը տուն չէկավ, Սաղմոսն ու չարսավը չծալեց ու ամենին հավասարական Ողորմի աստված չասեց, նշխարք չբաժանեց։

— Աստված ձեր գլխին խռով չկենա, էսօր դուք հո՛ հոգիս հանեցիք, իմը ինձ հասցրիք,— ասեց Աղասին քթի տակին, մեկ կտոր նշխարք բերանը քցեց ու ընչանք ղոնաղները տուն կգային, փասա-փուսեն հավաքեց, դուս թռավ, ծլկեցավ։

Անիրավ ձին էլ, հենց իմանաս, իրան փառք էր համարում, որ էնպես նստող ուներ վրեն։ Ոտն օրզանգվին առավ թե չէ, մեջքը կռացրեց ու սկսեց գլուխը խաղացնիլ, ոտները գետնին խփիլ, նալներին կրակ տալ, խրխնջալ, փռնչալ ու թև առնիլ, ոտները գետնիցը կտրիլ։ Աղասու ընկերքն էլ մեկ տեղ թափ էին էլել, ամեն բանը հազիր արել, իրանց մեծին սպասում ու դեռ չէին համարձակում, որ իրանց քեֆն սկսեն, չունքի պատվելի քեդխուդեքը եկեղեցուց դուս էկած՝ գեղամիջումը կանգնել, զրից էին անում, իրանց հոգսը հոգում։

— Մեկ կորչում էլ չե՛ն էս անատամ հալևորները, էս ծերերը, որ մենք դինջանանք, մեր քեֆին նայինք,— ասաց մեկը՝ ատամները կրճտացնելով, բարկանալով։— Իրանք ջանից ընկել են, իրանց ջահելությունը մոռացել, ու չե՛ն էլ ուզում, որ մենք էլա մեր օ՛րը քաշենք։

Բայց տանուտեր Օհանեսը էփված, փորձված մարդ ըլելով, միրուք ու մազեր հազար բանում սպիտակացրած, հազար չաթուշվան կտրած՝ ծանր, ուռած կանգնել, գզրին թամբահ էր անում, որ թուրք պատահելիս տանի, մեկ տեղ ղոնաղ տա, էն շանը լավ մտիկ անի, որ մարդի չկծի, ու տերտերն էլ մեջլները քցած քիչ-քիչ երիշ արին, տուն գնացին։ Հենց նրանք հեռացան, մեր ղոչաղ տղերքանց աստղը դուս էկավ։

2

— Քեդխուդեքը գալիս են, տո՛, տե՛ղ արեք, ղրա՛ղ կացեք, ճա՛մփա բաց արեք,— ձեն տվեց գզիր Կոտանը՝ մեկ աչքը քոռ, դունչը ծուռը, էնպես որ միրքի կես փայը մնացել էր երեսի վրա ցից էլած, խճճված, կես փայն էլ բողազին, չանին կպել, չորացել, էնքան խոսացել էր ու հարայ տվել։

Թագավորն էլ էնպես ուռած-ուռած իր քոշք ու սարեն (պալատը) չէ՛ր մտնիլ, ինչպես մեր գեղի իշխանքը՝ իրանց տաք գոմը, թեև շատի հաքին էնքան շոր չկար, որ էրկու մանեթի գին ունենա։ Որը մեկ տասը տարվան կտրատված, քրքրված հին յափունջում կոլոլված, որը մեկ հազար տեղ կարկատած, մաշված քրդի աբա էնպես էր ուսերին քաշել, որ, ղո՛ւղ ա, բերանն ու միրուքը ծածկած ուներ, բայց գոտկի տակիցը դենը, գլուխդ ապրի՛, պատռված քոբաչի չուխի ծլանկները (կտորները) հազար տեղից էնպես էին ճոլոլակ էլած ու քամու ձեռին եսիր մնացել, որ փչելիս՝ ուզում էր, թե իրանց էլ հետը տանի։ Գլխըներին հո, էնպես գիտես, թե ամեն մեկը մեկ սաղ ոչխար ըլեր դրած։ Էն որ մի քիչ չաղ էր ու եղալի (հարուստ), ոտն ու գլուխը էլի մի քիչ քոք էր ու, աստծու տվածիցը, շորի հոտ էր գալիս վրըներիցը։ Սրանց ամեն բանն էլ կարգին էր. լաբչինը՝ թաղա, մուգ մավի ղադաք փոխանի ղրաղները՝ ասղարուր, մավի քոբաչի շալ չուխա կամ եզդու ղադաք կապա, սիպտակ կտավե կամ շալի գոտիկ. շապկըների յախեն՝ որինը մով, որինը քաթան. արխալղները, ղորդ ա, կարկատած էր, ամա շատ որ ըլեր, մեկ տասը-քսան տեղ, ավելի չէ՛, էն էլ ռանգռանգ կտորներով՝ որը կարմիր, որը դեղին, որը զոլ-զոլ, էնպես որ շատի արխալուղը հեռըվանց, հենց իմանաս, շալ ղաջարի ըլեր կամ շալ կատվի պոչ։ Ամենիցը գլուխը նրանց բորանի քուրքն էր. երեսը՝ կարմիր ներկած, ինչպես մեկ թուրքի հինա դրած ղաբա միրուք. երեսք չուներ, ջանումն էլ բաց տեղ չէ՛ր մնում, բոլոր ծածկում էր։ Փեշերը ու նեղ թևերը իշի նոխտի պես ուսըներիցը կախ ընկած՝ գետինն էին հասնում ու դիպած տեղը թամուզ ավլում, հայլի շինում. ամեն մեկ քուրք մեկ թզաչափ մազ ուներ, բայց, ա՜խ, շատ արևի ու անձրևի ձեռիցը է՛ն հալն էր ընկել, ներկն ու երեսի ջուրը գնացել, որ, հենց գիտես, քոսոտ ձիու սաղրի ըլեր։ Շատի վրա տասը տարվան թոզ ու կեղտ կար։ Շատի ուսերն ու քամակը էնպես էր ծակվել, բուրդն ու մազը դուս թափել, որ տեսնողը հենց կիմանար, թե գարունքվան բրդըհան էլած ուղտի կաշի ըլեր։ Բազընի փափախի մորթին էլ հո՛, էնպես էր չալ ընկել, ու ծերիցը բուրդը դուս թափել, որ մեկ բարակ քամի կամ հով փչելիս էլ՝ ամեն մեկ մազը թև էր առնում ու գլխընե-

րին պար գալիս։ Բայց էլի էնպես մարդի քեֆը գալիս էր տեսնելով, թե ի՛նչպես տանուտերն ու քեդխուդեքանց շատը գդակները կոտրել, աչու ականջի վրա թեքել, իրանց հինգ ոչխարանի քուրքը քեֆով մեկ էս ուսին էին քաշում, մեկ էն, ու բազի անգամ գլխըները էլ հետը տրմբացնում էին, որ գդակները գիժություն չանեն, իրանց չափը ճանաչեն ու դուզ կանգնին։ Բազի անգամ էլ իրար բռնոթի թավազա անելով կամ մեկը ձեռը մյուսի գոտիկը կամ ճտքովը քցած՝ իրանց էրեխությունը միտքըներն էին բերել ու շախա անում, իրար բոթբոթում, շվացնում, զռթկացնում, փռթկացնում, ճռթկացնում, մռթկացնում ու բազի վախտ էլ հրհռում, քրքռում, բրբռում, դրդռում. շատը հո, ծիծաղու, մեջքի իլիկը կոտրըվել էր, էնպես որ ժամիցը ընչանք տուն կգային, հենց բռնի՛ր, տարի քաշեց, էնքան էին էստեղ-էնտեղ կանգնել ու զրից արել։

Ղորդ ա, ասացի, որ շատի հաքին տրեխ էր, գյուլբա էլ չուներ, որ ոտը ծածկեր. շատի չուխի վրա հարիր կարկատան կար, շատի ձեռների, երեսի, միրքի վրա տասը տարվան աղբ, կեղտ, թոզ ու մազ կար, շատը բերնումը երկու հատիկ ատամ էլա չուներ, էնքան ծերացել էր, ամա ի՞նչ կանես, որ տունն ու շիրախանեն հազար բարությունով լիքը՝ տրաքում էին, ու աստուծո հոգի կար միջըներում, մեկ օձի ձուն էր պակաս նրանց տանիցը։ Գինին՝ կարասներով շարած, ամբարը՝ հացով լիքը, կթի կովն ու գոմեշները՝ ֆորթ ու ձագը տակըներին, գոմումը կապած, քյահլան ձին՝ թավլումը, գութանը՝ դռանը լծած, մառանը՝ եմիշով, կախանով, տանձ ու խնձորով խլթխլթում, և մտնողին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմացնում էր։ Նորահարսն ու փեսեն կամ մեկ աղիզ ղոնաղ որ գլուխը բարձին չէ՛ր դնում էս անմահական բարության մեջը, էնպես իմանում էր, թե դրախտումն ա աչքը խփում կամ բաց անում։ Որը երկու, որը իրեք բաղ ուներ, նոքար, հոտաղ՝ դռանը հազիր, ու տան ներսն ու պուճախը դրմբում էր։ Կարասներով կողակ, կճճներով պանիր ու ղավուրմա, աքաշներով զոխ, բոխ, ողորմակոթ, բղղներով եղ ու կարագ, մոթալներով պանիր,— ծո՜վ, ի՞նչ տուն։ Տասը ղոնաղ որ էն սհաթը նրա դռանը վեր գային, սաղ ամիս ուտեին, խմեին, կոտրեին, ջարդեին, փչացնեին, նրա տան խերն ու բարաքյաթը հա՛ կար, հա՛ կար, ու յաբանի յաղն էլ նրանց դռնովը անց կենար, իրանք թևիցը կքաշեին, տուն կկանչեին, որ նրանց սուփրի համն առնի ու էնպես ճամփա ընկնի։ Շատ անգամ եկեղեցումը որ մեկ ղարիբ օքմին կտեսնեին, Սուրբ սուրբն ասածին պես շատը կերթար, եկեղեցու դուռը կկալներ, որ աֆթա ինքը նրան իր տունը տանի, ու շատ անգամ, երբ ուզողը շատ կըլեր, խոսքըմին կանեին, որ մեկ-երկու շաբաթ նրան իրանց միջումը պահեն, նրան քեֆ շհանց տան, ու բոլորն ի միասին, մեկ

օր սրա տանը, մեկ օր՝ նրա, ուրախություն անեն, ղարիբի սիրտն առնեն։

Շատը սուրուով ոչխար էլ էին պահում։ Էնպես մարդ կար, որ տարենը երկու հարիր, իրեք հարիր լիտր տանձ, խնձոր, ծիրան ծախում էր ու մեկ էնքան էլ աղքատի ու ճամփորդի ուտացնում յա դեղապետի համար պահում, որ սարի աղքատ խալխը՝ թուրք, հայ, չունքի բաղ չունին, մեկ հիվանդ պատահելիս՝ գան, տանին, ու իրանց թամարզու նաչարի աչքը դռանը չմնա, չունքի մեր աշխարքումը ինչ հիվանդ էլ որ ըլի, նրա առաջին ու վերջին դեղը պտուղն ա։ Պտուղ որ չըլի, ո՛չինչ բան նրան չի՛ փրկիլ, ու լեզուն բերնումը կչորանա, յա հասրաթ կմեռնի։ Ամեն մարդ իր բաժակի գինին ալհաղա ուներ պահած, որ համ իր եկեղեցուն էր տալիս, համ էլ գեղըցոնցը բաժանում, ուրտեղ բաղ չկար, որ նրա ննջեցելոց հոգին հիշեն։ Ամեն նավակատյաց ոչխար ասես, կով ասես՝ մորթում, մատաղ անում, ժամ, պատարագ անիլ տալիս, ժամոց բաժանում ու տանով-տեղով գնում, իրանց սիրելյաց գերեզմանները օրհնիլ էին տալիս ու աղքատներին կըշտացնում։ Մեկ փարի բան բազարիցը տուն չէ՛ր գալ, բացի իրանց հաքնելու շորիցը. էն էլ՝ կտավ, շապկացու, չուխացու, շատը հարսներն ու աղջկերքն էին նրանց համար մանում, գործում կարում։

Նրանց կնանոնցը որ մտիկ տայիր, խելքդ կերթար. խասի ու ղումաշի միջում կորած էին. բերնըներիցը կտրում էին, օղլուշաղի ոտն ու գլուխը թամուզ պահում. տղամարդը շատ օրը հանդումն ա ըլում, ի՞նչ հաջաթ. կինարմատը միշտ պետք է աբուռով հաքնի, աբուռով մաշի։ Մեկը-մեկի չգրու, շատ անգամ, իրանց օղլուշաղին էնպես էին ծաղկում, զարդարում, ինչպես գարնան վարդը։ Սաղրի մաշիկ, կարմիր ծուղեք, ղասաբ, դրաղները գյուլաբաթնով արած փոխան, ալ դարայի մինթանա (քաթիբա), զառ լաչակ, ղալամքար արխալուղ, սամուր քուրք, արծաթե կոճակներ ու բիլազիգ, քարգահարուր օշմաղ, ճլպինդ, տոտեր, շապկի յախա, ոսկե քամար, յախութ մատանիք, քահրըբար յա մարջան ճտի շարք՝ շարի միջումը ոսկիք, մանեթ՝ աբասի ծակած, անցկացրած. դոշի քորոց, ականջի օղ՝ որը ոսկի, որը մարգարիտ. մինթանի դրաղները՝ շատինը մարգարտաշար։ Շատի մազերումը ու գլխին հինգ թումանի զարդ ու զարդարանք կար։ Շատի ճակատին շարքով յալդուզ ոսկի շարած։ Ամեն մեկի կնիկն ու աղջիկը, հենց իմանաս, խանզադա ու բեկզադա ըլեր։ Շատը չորս-հինգ հարսն ուներ տանը, որ մեկ տեղը ցավելիս՝ ուզում էին գլխովը պտիտ գան ու ոտները ջուր անեն, խմեն։ Գլուխն ու քամակը դեմ անելիս՝ հարսներն ու աղջկերքը իրար հետ բաս էին մտնում, որ իրանք քորեն կամ քութութեն։ Տրխըները կամ լաբչըները հանելիս՝ ձեռն էր, որ բան էր ընկնում. որը ոտն էր ճմռում, որը ջուրն էր տաքացնում, որը բերում, որ ոտն ու գլուխը լվա-

նա, որը թևերը վեր քաշած՝ ձեռին ջուր էր ածում, որը մահրամեն տալիս, որը թևն էր քաշում, որը շորերը դասում, որը տեղը քցում, քնացնում։ Քնած վախտին էլ ե՞րբ կարեր մեկ ճանճ, որ նրա մոտովն անց կենա կամ երեսին նստի, էնքան աչքաբաց էին հարսն ու աղջկերքը։ Մեկ ղոնաղ պատահածին պես էս պատիվը ղոնաղինն էր, ե՞րբ կարեին նրանք բաց աչքով նրա երեսին մտիկ տալ։ Մեկ բան ուզելիս՝ ոտի տեղ գլխի վրա էին գնում, որ նրա ասածն անեն ու ձեռըները դոշըներին դրած՝ աչքը կթած ունեին, որ տեսնեն, թե իրանց տերը կամ ղոնաղը ի՞նչ կհրամայի, որ կատարեն։ Կեսուրը կամ կեսարը մեկ աչքը քցելիս՝ ուզում էին, որ տեղնուտեղը հալչին, էնքան հնազանդ էին։

— Բա՛խտ, բախտ էս ա. փողի բարաքյաթին էլ նալլաթ, նրա կտրողին էլ,— շատ անգամ ասում էին գեղըցիք ու գլխըները ժաժ տալիս,— ուտիլ չի՛ կարելի, հաքնիլ չի՛ կարելի։ Էսօր ջերդ լցնես, էգուց պետք է մատդ լպստես։ Ո՛չ գիշերը քունդ ա տանում, ո՛չ ցերեկը՝ ղարարդ։ Փորացավ ընկածի պես՝ մարդ չի՛ իմանում, թե թիքեն ո՞ր կողմովն ա կուլ գնում։ Փողը որ կա, ժանգ ա, ձեռի կեղտ. էսօր կա, էգուց աստուծով մխիթարիս։ Մեռնիս՝ պետք է շներոց-գիլերոց ըլի։ Թեկուզ փողի համն առած, թեկուզ իր միսը կերած, հեսաբը մեկ ա։ Սարդարն էլ ա մեր դուռը գալիս, փողատերն էլ։ Տաշտումը հաց ունենամ, կարասումը՝ գինի, ջվալումն՝ ալիր, հերն անիծած, որ չիփ-չփլախ էլ ըլիմ, դարդ անեմ։ Օջախս լիքը ըլի, տանս՝ բարաքյաթ, որդիքս՝ սաղ-սալամաթ, թո՛ղ օրը հազար մարդ մտնի, հազար մարդ դուս գա, ի՞նչ եմ հոգում. հացն աստծունն ա, ես էլ հետը. ո՞վ հասնի, թո՛ղ ուտի։ Տերին փառք, տեղը հլա շատ կա. տղերքըս սաղ ըլին, ջանս սպրի՛։ Աստված իր ստեղծած բանդի ռզղը ի՞նչպես կկտրի։ Գդակս ծուռը կդնեմ, քեֆս արամիշ կանեմ. ո՛վ թամբալ ա, թո՛ղ նա դարդ անի։

Չէ՛, չէ՛, փողի սիքեն ճանաչողը ո՛չ հոգի ունի, ո՛չ հավատ։ Փող՝ հող, մին ա։ Զարգար Պ. որ շատ փող ունի, հենց էն ա, ինձանից մեկ թիզ բարձրացել ու լավ ա ապրո՞ւմ։ Նրա քոռ աչքը գիտենա։ Շատ ֆիքր անելուցը երեսի կաշին գնացել, չոփ ա դառել, քամակն էկել, փորին դեմ առել, ատամները ցից-ցից մնացել, աչքերը կուլ գնացել. մեկ որ փչես, հազար տեղ գունդ ու կծիկ կըլի. մեկ որ քթին հուպ տաս, հոգին էն սհաթը կտա։ Տարենը որ հազար շուն, գել, թուրք, հայ, աղքատ, ղարիբ, ղուրբաթ հացս չուտեն, տանս չքնեն, գինիս չխմեն, իմ աչքը հեչ քո՞ւն կգա։ Գյոռս էլ որ քանդէն, ձեն չե՛մ տալ։ Իգուա մասըլի տուտը Թեհրան, Ստամբոլ ա հասել։ Ո՞ւմ հաղդն ա, որ մեկին չէ՛ ասի։ Ինչ ուտում են, չեն ուտում, էնպես

պսած ունիմ, որ հարգա, խուրջին էլ լցնեն, որ տանեն իրանց տունը։ Իր տնկած ծառի տակին քնիլը, իր բհամ բերած պտուղն ուտիլը աշխարք արժի։ Նոր չե՛մ հաքնիլ, հին կհաքնեմ, ձեռս ո՞վ ա բռնում, ո՞վ ա գլխիս ծեծում, թե զառ ու ղումաշ հաքիր։ Ե՞ս չեմ իմ գլխիս տերը։

Քաղաքը որ մտնում եմ, հենց իմանաս, թե աշխարք սով ա ընկել. էլ ո՛չ խեր կա, ո՛չ բարաքյաթ։ Հացն ու ջուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ո՞ւմ դուռը գնաս, ո՞ւմ ձեռդ դեմ անես։ Բազի վախտ էլ տեսել եմ, որ դուքաններումը կիտուկ-կիտուկ մանեթները, ոսկին ածած, ամեն մեկ փող համարելիս, էնպես գիտես, թե փողատիրոնց հոգին հևան ա դուս գալիս, էնպես են սրթսրթում իրանց խազինի վրա։ Հենց իմանաս, թե առաջներիցը թև կառնի, կթռչի։ Մեկ ձեռդ դեմ արա՛, շան որդի ըլիմ, ո՛չ մեկ բուռ հողի արժանանամ, թե սուտ ըլիմ ասում, աստված, երկինք, գետինք, ծով, ցամաք՝ մեկ ծեղ էլ չեն տալ, որ աչքդ կոխես։ Թո՛ւհ, մարդ իրան հոգին պետք է ծախի, որ փողի թամահ անի։ Հազար տարի էլ որ քո ազիզ սիրելու դռանն էլ շլինքդ ծռես, կանգնիս, սովու մեռնիս, հազար տարի անոթի փորով զկռտաս, մեկն էլա քեզ տուն չի՛ կանչիլ, մեկ սառը ջուր խմացնիլ։

Էն մարդն էլ, որ քո տանը կերել, խմել, ամսով, տարով քո աղ ու հացի վրա ա էլել, աչքը աչքիդ առնելիս, հենց գիտես, թե գյուլլով խփեցին։ Երեսն ա քեզ դեմ անում ու աչքը քամակը քցում։ Տո՛, փողդ էլ ջհանդամը գնա, դու էլ, տո՛, ղո՛ւռումսաղ. ասենք թե աչքդ ա քոռացել, ինձ չես ուզում, որ ճանաչես կամ սուփրիդ ղրաղը նշանց տաս, տո՛, գլխիդ քար ընկնի, ինչ կերել ես՝ քթովդ դուս գա, խնդրել եմ աստվածանից՝ զահրըմար ըլի, էն դինումը առաջդ գա, աչքերդ բռնի, տո՛, մեկ բարով, աստուծո բարին է՞լ ա գլխիցդ ղհաթ էլել, որ դունչդ ցցում ես ու ետ փախչում։ Մեկ բարի լիս, բարի օր էլա տո՛ւր, է՜, հո բերնիցդ քրեհ չե՞ն ուզում, ի՞նչ ես քարացել, էդ էլ հո փողով չի՛, ա՜յ փողակեր՝ հողակեր։ Ասենք, թե չուխես մահուդ չի՛, հին, մաշված, բրդից ա, քոնը՝ նոր, կանաչ մահուդ, ձեռիցդ հո չե՞մ խլում։ Քեզ պես հազար մահդամարդ իմ էս աղքատ չուխիս ղուրբան ըլի, որ առանց ղոնաղի հաց չի ուտում։ Թե մեկ օր էլ ճանկս կընկնի՛ս, ես գիտեմ, թե ձիուդ գլուխը դվորը շուռ կտամ. հլա սաբր արա, հալբաթ էլի քամին կպտտի, քեզ մեր դեհը կքցի. էն ժամանակը աչքդ բարին տեսնի։ Ծոթ առնելիս հո՛, շատն ուզում ա, մեկ-երկու շահի փող ենք դառել, էն էլ նա խլի։

Է՜յ գիտի ժամանակ, հա՛. ո՞վ էր տեսել կամ լսել ավալի սֆթա էսպես բաներ. զառն ու գելն ի միասին արածում էին, հըմիկ կովը վեր են քաշում, որ տեսնեն, թե տակին երաք ֆորթ կա՞, թե չէ։ Սատկած ձիու

նալնի են ման գալիս, էլ ո՞ւմ ասես դարդ։ Հերը որդին չի՛ ճանաչում, որդին՝ հորը, ախպերն՝ ախպորը, լավ ա, որ քարը քարի վրա կանգնած մնում ա։ Մարդ ինքը պետք է լավություն անի, որ աստված էլ նրա բանն հաջողի։ էլի աստված օրհնի՛ մեր հողը, մեր ջուրը. էլի թե հոգի կա, հավատ, մեզանում ա։ Ուտե՛նք, խմե՛նք, քեֆ անե՛նք, իրար թասիբ քաշե՛նք, իրար արևով խնդա՛նք. մեկ օր կմեռնենք, որ ողորմի չտան, գյոռբեգյոռ հո չե՞ն անիլ։ Մարդ ինչ անի, է՛ն իր առաջը կգա։ Լավություն կանես՝ լավություն կտեսնիս, վատություն կանես՝ վատություն։ Հարիր տարի կըլի, որ լուսահոգի Ապօվը մեռել ա, էլի նրա ողորմին հա՛ կա, հա՛ կա։ Թուրք ու հայ նրա գերեզմանովն են օրթում ուտում։ Ճամփի վրի մենծ իգու անունը Հնդաստան ա հասել. էն չաղդահ բաղը իր ձեռովը տնկեց, որ անց կենողը գնա, նրա բարությունը վայելի։ Զորս կատեպան ամեն առավոտ, ինչ պտուղ ծառիցը վեր էր ընկնում, հավաքում, քթոցներով տանում էին, ճամփին դնում ու անց կենողի ջեբն ու խուրջինը լցնում։ Էն մեշա իգուցը մեկ պտուղ, մեկ թաս գինի իրանց տանը չէին բանացնիլ, ջոկ կպահեին ու աղքատ գեղըցոնցը կբաժանեին։

Ի՞նչ պետք է տանինք էս փուչ աշխարքիցը. դարտակ էկել ենք, դարտակ կերթանք։ Սաքի որ շատ էլ մալ, դովլաթ ունեցա, աշխարքի տեր էլ դառա, հո էլի պտի հողը մտնիմ։ Իմն ա մի բուռը հողը, մեկ գազ կտավը։ Լավ ըլիմ՝ լավ կասեն, վատ ըլիմ՝ վատ։— Տերտե՛ր ջան, քո ոտի հողն եմ, դրո՞ւստ եմ ասում, թե ծուռը։ Գրի սևն ու սպիտակը չե՛մ գիտում, ամա ես իմ կարճ խելքովը էսպես եմ աշխարքի բանը քննում։ Ով չի՛ ուզում, իր քեֆն ա, ամեն մարդ իր գլխի տերն ա։ Քեֆ սանն, fյանդ fյոխվանն (Քեֆը քոնը, գեղը տանուտերինը)։ Թուրքն անիծած ա, խոսքն՝ օրհնած։— Ի՞նչ կասես, տա՛նուտեր. թե սուտ եմ ասում, բերնիս խփի՛ր, անկաջս քաշի՛. դու գիտես, որ քո չորը ինձ համար ջան ա, քո մեկ մազը արարած աշխարքի հետ չեմ փոխիլ։ Թե ճշմարիտը չե՛մ ասում, ասա՛. «Գլուխդ քարին ես տալիս»։ Ես էլ ձենս կկտրեմ։ Ղորդ ա, վարպետի ու վարդապետի մոտ չեմ մեծացել, ամա իմ ողորմածիկ, լուսահոգի հերը տասը վարդապետի խելք ուներ գլխին։ Ինչ որ խոսում էր, հենց իմանաս, թե ավետարանի կողքին գրած ըլի։ Սաղ Աստվածաշունչը փորումն ուներ։ Մեկ խոսք խոսալիս՝ հազար վկայություն էր բերում։ Ժամագիրքը, Շարականը, Սաղմոսն ու Այսմավուրքը հո՛, ջրի պես գիտեր։ Հարիր փիլիսոփա, վարդապետ, տերտեր հավաքվեր, բերանները կցխեր, ճամփու կդներ։ Աշխարքի էն դինիցն էր խաբար տալիս։ Մեկ ժողովքարար մեր գեղը գալիս պետք է տափ կենար, որ նրա ձեռը չընկնի, թե չէ՛, աստված ազատի, հոգին կհանեիր, միսը բերանը կտար, շատ անգամ չէ՛ր իմանալ, թե էկած

ճամփեն ո՛րն ա։ Էս հմիկ որ լավ-օսալ գլխիցս դուս եմ տալիս, նրա հունարն ա, թե չէ՛ ես ո՞վ եմ, որ ինչ գիտենամ։

Բանը է՛ն չի, որ մարդ, ծեգը տալիս, գնա ժամը, մեկ-երկու ծունդր դնի, դուս գա, մի քիչ գրին մտիկ անի, արշտոտա, քունը տանի, կակող բարձի վրա, ղույթուքի յորղան-դոշակում երկար ձգվի, ուտի, խմի, քեֆ անի, փորն ու գլուխը հաստացնի ու գա, մեր ջանին ընկնի, թե ինչ որ դատել եք, էն էլ մեզ տվեք, որ տանինք, լավ ուտենք, լավ հագնինք, լավ մաշենք, ձեզ համար աղոթք անենք։ Ախպե՛ր, բաբա՛, ջա՛նմ, գյո՛զմ. աղոթք ունիս, քեզ համար պահի՛, քեզ համար արա՛։ Ի՞նչ ես տվել, որ մեզանից չե՛ս կարում ետ առնիլ։ Ըսկի որ չըլի, կասեմ. «Աստված, քեզ համար մեկ պասորդ կանեմ»։ Աստված բերնին չի՛ նայում, սրտին ա մըտիկ տալիս։ Մեկ հաս ու չհաս պատահելիս հո՛, ուզում են, թե մեր տունը քանդեն։ Տո՛, թե տուտը կարճ ա, չի՛ հասնիլ, փո՞ղն ա երկարացնում։ Բերաններս խփել ենք, ինչ որ ասում են, անկաջ ենք անում։ Ասենք՝ մենք չենք խոսում, բաս աստված վերևիցը չի՞ նայում։ Էս ի՞նչ բան ա, թե փլավը ես ուտեմ, քո գլխին դմփեմ. մածունը ես լպստեմ, քեզ գող կատու կանչեմ։ Ասենք, թե կարգավոր են, խաթրներիցը անց չենք կենում, չենք ուզում, որ անեծքի պատճառ դառնանք, չունքի սևագլխի անեծքը քարին որ դիպչի, քարը կպատռի. իրանք էլ մի քիչ պետք է իրանց չափը ճանաչեն։ Սևանու ճգնավորներն են լավ կարգավոր, ի՞նչ խոսք ունիմ, բաժակի, մսի համ չեն տեսնում, հաքածները բուրդ ա ու շալ, չոր գետնի վրա են քնում, երեսներիցը լիս ա վեր թափում. տաս՝ էլի կօրհնեն, չտաս՝ էլի կօրհնեն։ Մոտը մտած ժամանակը աստուծո բան են խոսում. կնկա երես տեսնելիս հո՛, երկու վերստ ճամփա հեռու են փախչում։ Չէ թե կնկանից; գինուց, փողից, ձիուց, էլ ի՛նչ գիտեմ, ինչ բանից խաբար տալիս։ Քյահլան ձիու վրա իրանք են նստում, խաս ու ղումաշ իրանց հաքին ա, ղաբլու փլավ ու հազար տեսակ անոշ կերակրներ, խմիչք իրանք գործածում, բանըդ կուշտն ընկած վախտը ուզում են, թե գլուխդ վեր բերեն. էս ո՛չ Քրիստոս ա արել, ո՛չ Մահմեդ։

Տո՛, հենց փող պետք է տամ, որ հոգիս դրախտը գնա՞։ Տո՛, որ գործքըս լավ չըլի, ես անօրեն ըլիմ, աստված նրանց խոսքովը իմ հոգուս պետք է թողություն տա՞։ Տո, աստված փողն ի՞նչ <ա> անում, նրա յարադանին ղուրբան։ Փողն աղքատին պետք է տված։ Դեն քցես՝ լավ ա, քանց էն մարդին տաս, որ քեզ մեկ շնորհակալություն էլա չասի։ Հազար օր նրանց տանդ պահի՛, պատիվ տո՛ւր, մեկ որ ոտդ մոտըներն ա ընկնում, մեկ սառը ջրի էլ լայաղ չե՛ն տեսնում։ Էս հո աստված չի՛ վերցնի։ Մեզանից առնում են, իրանց բարեկամներին ու ազգականներին շենացնում,

հեռ մեզ վրա էլ մեծ-մեծ խոսում։ Ասենք, թե ամեն բանի վրա լիս չե՛նք ընկնում, մեր աբուռը պահում ենք, որդի, երեխա իշի պես մենծանում են, նրանց հոգսը չե՛ն քաշում, վարժատուն չե՛ն բաց անում, չե՛ն կարդացնում, հենց ուզում են, թե մեր դատածը խլեն։ Մի գնա մեչիդը, ամեն մի մոլլա, էն անհավատ տեղըներովը, քառսուն-հիսուն մեծ, պստիկ գլխին հավաքել, առավոտից մինչև մութը ուսումն ա տալիս, իր մասամբի բանը սովորցնում. մերոնք հենց իրանց քեֆն են արամիշ անում։ Ո՞րի արածըն աստծուն դիր կգա, ձեզ եմ հարցնում։ Ասում էլ ես, աղաչանք անում, անկաշըրվեր են անում. մեր որդիքն էլ մեզ նման էշ ուտում, էշ մենծանում. չենք գիտում, թե մենք սովորցնենք, գիտացողն էլ անկաշը կալել ա, ո՞ւմ ասես։

Թե սուտ եմ ասում, ա՜յ ջամըհաթ, մատըներդ կոխեցե՛ք, աչքս հանեցե՛ք, թե չէ՝ ախր մեր ազգը որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա, որ մեզ մեկ ասող չի՛ ըլում, թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ընչի՞ համար ենք էկել աշխարհ. քոռ գալիս ենք, քոռ գնում։ Հա՛, լավ, հավն էլ ա օրը հարիր անգամ, ջուր խմելիս կամ կուտ ուտելիս, գլուխը ցածացնում, բարձրացնում, էստով ի՞նչ կղառնա։ Ո՞վ չի՛ գիտի, թե երկնքումն աստված կա, մեզ համար՝ դատաստան։ Ամա պետք է իմանանք էլ, թե երկրումը ի՞նչ պետք է անենք, որ էս դատաստանի տակը չընկնինք, է՜։ Ախպե՛ր էսպես չի՞, դուք ասեցե՛ք. ես մեղա, գլուխս քարը։ Տո՛, եսին Թուրքն էլ ախր Ղուռանի շատ փայը անգիր գիտի, ես մեկ Հայր մեր չեմ գիտում, ախր ի՞նչ իմանամ, թե հոգիս ո՞ւր կերթա, մարմինս՝ ո՞ւր. ախր իմ խեղճ երեխեքն ինձանից ինչ պետք է սովորին։ Շատ բան ասել չի՛ ըլում։ Չի՛ ըլել, որ մարդ իր մատը իր աչքը կոխի, իր ձեռով իր գլխին յա երեսին թակի. ամա ի՞նչ անեմ. սիրտս պատռում ա, որ մեր ողորմելությունը միտքս եմ բերում։ Թո՛ղ ինձ կարդացնեն, որդուս ուսումն տան, մեզ ճամփա շհանց տան, ճամփից, հավատից շհանեն, սատանի փայ ըլիմ, մեկ բուռը հողի, մեկ գազ կտավի, ժամ, պատարագի՝ հասրաթ, թե աչքս ուզեն, չհանեմ, իրանց տամ. որդիս ուզեն, չմորթեմ, մատաղ անեմ։

— Ի՞նչ ասեցիր, հերիք ա, խնամի Հարություն,— ասեց տանուտերը,— ո՞ւմ ասես, ո՞ւմ. հազար շուն, հազար գել կա, որ ո՛չ գիր գիտեն, ո՛չ գրի զորություն. մեր աստղը մեկ անգամ թեքվել ա. էսպես էկել ենք, էսպես կէրթանք. ամեն մեկ խոսքդ մեկ ջավահիր ածի, ամա ո՞ւմ ասես։ Գիլի գլխին ավետարան կարդացին, ասեց՝ շուտ արեք, սուրուն գնաց։ Բիլանա բիր, բիլմիանա բին. Թուրքն ա ասել (իմացողին մեկ, չիմացողին

հազար), ո՞ւմ գլուխը ծեծենք. ո՞վ կուզի, որ իր աչքը քոռ ըլի, ամա որ ասածդ տեղ չի՛ հասնում, ի՞նչ ես գլուխդ ցավացնում, բերանդ ափսո՛ս չի՞. քարին որ, հլա աստված սիրես, տասը տարի քարոզ էլ ասես, քյա՞ր կանի։ Աստված մեր հորնըմոր հոգին լուսավորի՛, որ եկեղեցու դուռն ու ճամփեն էլա սովորցրել են, թե չէ հենց յաբանի հայվանի պես պտի մենծանայինք։ Էդպես բանի վրա տարով էլ որ խոսաս, տուտը չի՛ հասնիլ. գնա՛նք տուն, ու ինչ որ աստված տվել ա, վայելենք, մեր հորնըմոր ողորմաթասը խմենք, հալբաթ աստված մեկ օր իր ողորմության դուռը բաց կանի, էսպես հո չի՞ մնալ։ Գնա՛նք, գնա՛նք, թե չէ շուտով մենծ պասը կգա. էն վախտը վա՜յ քո օրին՝ հա՛, կա՛ց ու թթու կե՛ր, գազար կրծի՛ր ու բերնիդ ու փորիդ հուպ տո՛ւր։ Բարեկենդան ա, մեր քեֆն անենք հլա. ինչ աստծու կամքն ա, է՛ն ըլի։ Փողատերն էլ իր համար կենա, վարդապետն էլ. լավություն չեն անում, իրանք գիտեն, նրանց մեղքը հո մեզանից չե՞ն հարցնիլ, մեզանից չե՞ն ուզիլ. ո՞վ ա գիտում, թե էգուց գլխըներիս ի՞նչ կգա. մարդի միս են ուտում, արինը խմում. ո՞վ ճար ունի, իր գլխին ա անում. մերն էլ՝ աստված, էսպես չե՛նք մնալ. փիս բանը, փիս ճամփեն էսօր ա, էգուց լիս կընկնի, ու էն ժամանակը շատ մեր լաց կըլի։ Ճամփեն որ ուղիղ ըլի, ինչքան երկար էլ ըլի, գնա՛, դուզ ճամփից մի՛ դուս գալ. թե չէ, որ սարերով, չոլերով ընկար, բանդ բոշ ա, գլխիդ փորձանք շատ կգա։ Յոլդան չխանն գյոզի չխար (ճամփից դուս էկողի աչքը դուս կգա)։ Գնա՛նք, գնա՛նք տուն, տեսնենք, մեր խանումը ի՞նչ ա հալիր արել, խեղճը սաղ գիշերը աչքը չի՛ կպցրել ու հենց չարխի պես գլխի վրա պտիտ էկել, դես ու դեն ընկել։

— Աղբաթը խեր ըլի մեր տանդրոնց, թե նա չէ՛ր էլել, էս մարդը մեր գլուխը հենց սալթ կտաներ,— էն կողմիցը մեկը բեղերն ոլորելով, քիթը վեր քաշելով, իշտահով կում անելով, հազալով, գլուխը տմբացնելով ձէն տվեց։— Հինգ սհաթ ա, ժամը դուս ա էկել. ագռավներն էլ, որդիանց որ էլավ, հմիկ մեկ կտոր միս յա աղբ, յա ուրիշ զատ քթած, կերած կըլին. փորըներս ղվլում ա, անկաջներս դժժում. ցուրտը մեկ դհիցը դափըներս տանում, սովը մեկ դհից զոռ անում, սա հենց իր խոսքի տուտը բռնել ա ու ոտը վեր կալած ջաղացի պես դանը վրա ածել, գլխիցը դուս տալիս։ Քիչ էր մնացել, որ ասեի՝ քարվանը գնաց. պոչդ կարճացրու, դնգի ոտը ցածրացրո՛ւ, բերնիդ կապը կապի՛ր, լեզուդ քնացրո՛ւ. ու քամի ունիս, տա՛ր, ձեր տանը փչի՛ր. էս քամին մեզ հերիք ա, որ ոտնուձեռ սառցնում, փետացնում ա։ Կրակ, պատուհաս ա, էլի. զրից ունիս, տա՛ր, ձեր քուրսու տակին արա՛, որ լսողի քունը տանի. ի՞նչ ես չարչու մասալեքդ բաց

արել, գլխընէրս տանում։ Մենք էլ լավ գիտենք, թե կորած էշը ո՞ր գոմումն ա կապած, ամա ի՞նչ անես, որ մոտանողի շլինքը կոտրում են, իշի ոտն ու գլուխը խուզում. որ տերը տեսնելիս զռում էլ ա, ասում են, թե քոնը չի՛, ո՞ւմ գլուխը կտրես։ Վաղի մասալեն շըլի, թե՝ Ուղտին հարցրին. ընչի՞ ա շլինքդ ծուռը,— ասեց. ի՞նչ տեղս ա դուզ, որ շլինքս ծուռը չըլի։ Մեր բանն էս ա դառել, ասելով ո՞ւմ կապի կբերես. առաջ լուծն ու կամըդ պատրաստի՛ր, կալդ շինի՛ր, դեզդ դիզի՛ր, ետո գիժ մոզու անկաշիցը բռնի՛ր, է՜. հո հազար անգամ տեսել ես, որ կամն առնում ա, չոլերն ընկնում, էլ ի՞նչ ես նհախ տեղը բերանդ ցավացնում, մեզ էլ հացից քցում։

Ցանք անողը առաջ պետք է գետինը վարի, փափկացնի, ետո սերմն ածի, թե չէ էլածն էլ ղուրդ ու ղուշ կուտի, կմնաս գլուխդ քորելով, մատդ լպստելով։ Մեղրաճանճին մուխ տո՛ւր, որ փախչի, թե չէ երեսդ ես դեմ անում, հալբաթ որ կկծի, յարալու կանի։ Ամեն մարդ հենց իր ձին ա քշում, էլ առաջը մտիկ չի՛ անում, թե ո՞վ ա կանգնած։ Ծրագը իրան տակին ա լիս տալիս. աշխարքը՝ դմակ, մարդը՝ դանակ. ո՞վ ա հարցնում։ Բարդին կռացնես, քեզ վրա կընկնի, գլուխդ կջարդի։ Ուրագն իր դեհն ա տաշում, ծառն իր տակին շվաք անում։ Ջուրն իր ձկանը պահում, հավն իր ճուտին մուղայիթ կենում. սաքի որ ամպի պես էլ գոռաս, լսողն ո՞վ ա։ Դեղ ունիս, քո գլխին արա՛. եղ ունիս, ձեր բղղումը պահի՛ր։ Ինչ կուզես՝ արա՛ յա ասա՛, ջուրն իր ճամփեն կքթնի։ Հենց դու կմնաս միջումը փսամարդի։ Դրուստը խոսողի փափախը ծակ կըլի, չե՞ս լսել։ Ով ասես՝ գլխին կխփի ու բուրդը քամուն կտա։ Ի՞նչ բանդ ա, փորդ հո բերնիցդ բարձր չի՛։ Ծունկդ փորիցդ ա դուս գալիս, պահի՛ր, տաք արա՛. քեզ ո՞վ ա ասում, թե արի, մեր կալը չափի՛ր, որ չանաղդ քեզ ու քեզ դեմ ես անում։ Թե մեկ բան էլ գիտես, ձեր տան պատերին էլ մավա մի՛ գնալ, հողին էլ մի՛ ասիլ. ձեն կտան, դու կմնաս միջումը մեղավոր։ Ախր ի՞նչ անես, որ լսող չկա. հո չե՞ս կարող քեզ սպանիլ։ Հոտաղ կերել եմ, հոտաղ մենծացել, պարտական մնա, որ ինձ մեկ լավ ճամփա ցույց չի տվեց, ո՞ւմ գլուխը կտրես յա՛ աչքը հանես։ Ղիամաթումը սառչում ենք, սա հենց ի՛ր զուռնեն ա փչում. տո՛, զուռնեն է՛ն տեղ փչիր, որ պար էկող էլ ըլի, է՜, աղբաթի խեր. թե չէ՛, էս չոլումը որ փչում ես, քեզ ո՞վ շաբաշ կտա, ո՞վ բարաքյալլա կասի։

Տանուտե՛ր, տունդ շնորհավոր։ Խնամի Հարությո՛ւն, ասածս սարին, քարին դիպչի, քամին տանի. համեցե՛ք, խռովել ես, սառը ջուր խմի՛ր, սիրտդ հովանա, համեցե՛ք, քո գլուխը որ կա, սար ա. անձրև, ձին, կարկուտ, կայծակ թո՛ղ դիպչի էլ, գա էլ, ի՞նչ վեճդ ա։ Մենք էլ լավ գիտենք, որ դրուստն ես ասում, ամա ի՞նչ անես, որ գեղըցու խոսքը չվանի չե՛ն

դնում, քաղաքացին էլ տեղը տաքացրել, տաք արել, իր չայը խմում, ո՞ւմ դարդն ա, թե քարը քարի վրա չի՛ կանգնիլ. ամեն մարդ իր գդակն ա դզում, իր գլուխը քորում. բերանդ բաց անելիս՝ հող են ածում, աչքդ բաց անելիս՝ թոզ. շունը տերը չի՛ ճանաչում, ո՞ւմ ասես, ո՞ւմ։ Կուտ ունիս, քո հավի առաջն ածի՛ր. դան ունիս, քո ջաղացը տա՛ր։ Դու էլ, թե ձեռիցդ գալիս ա, դանակդ սրի՛ր, մեկ կողմիցը վրա թռի՛ր. աշխարքս թալան-թալան ա, նամարդը իշի փալան ա։ Հա կա՛ց ու քեֆ արա՛։ Բարիկենդան օրեր ա, խելքըներս կորել ա, ետո ես կգամ, առաջ դու գնա՛։

3

Անչախ մի անչախ իրար բոթբոթելով, համեցեք անելով. կռնից, թևից քաշելով տուն ընկան։

Օրհնյալ է աստված,
Փառք հավիտյանս չամիչ.
Սրտրներն ընկավ տեղը,
Մատրներն ընկավ եղը.
Աքլորին բարձեցին գեղը
Ու կուզրկուզ անելով՝
Մտան տաք տեղը:
Նամարդ ըլի, ով չասի՝
Աստված վերջը խեր անի:

Արի՛, հմիկ գոմի դռանը կանգնի՛նք ու մեր քեդխուդեքանց քեֆին թամաշ անե՛նք։ Բայց ի՞նչ անես, որ չե՛ն թողում։ Հազար յաղ ու այլազգի էլ որ ըլիս, սրանց սովորությունն էնպես ա, որ առանց քեզ թիքա չեն բերանները դնիլ. չգնաս՝ կխռովին, ու ամեն մարդ իր տունը կերթա. գնա՛նք, ի՞նչ կա որ, հո մեզ չե՞ն ուտիլ։ Տարով մեջըներումը մնաս, քեզ տնետուն ման կածեն, քեֆ չհանց կտան։ Բարիկենդան օրը հո, որ քարվան մտնի գեղը, ճամփից ետ կդարձնեն. քեզ էլ կպահեն, նոքարներիդ էլ, ձիանոնցդ էլ, իրանք քո հոգսը կհոգան, քեզ քնից, տեղից չեն ժաժ տալ, էնքան ղոնաղասեր են։

Հա՛յ դե, ջո՛ւր տո՛ւ, քշի՛,
Ձիդ ներս քաշի՛:
Մտնինք գոմը,
Տեսնինք համը,
Ուտենք փլավը,
Մարսենք շլավը.
Ամա ադլուխդ դի՛ր քթիդ,
Որ հոտը չդիպչի սրտիդ:

Լսեցի՞ր, նստեցի՞ր, չէ՞. կանգնի՛ր, իմացի՛ր, բանը բանի նման չի՛.

ա՛ռ քեզ տրաքոց։ Շփոթ ու խաշիլ ա, որ հմիկ իրար կխառնվի։ Թե ճար ունիս, փեշդ ձեռիդ պահի՛ր, գդակդ՝ գլխիդ, թե չէ՛, գլխաբաց որ դուս գաս, խարփուխ կընկնիս, թե ասածս չանես, պարտական ըլիս։

Գոմի սաքուն էնպես էր տաքացել, ինչպես համամ։ Աթարի կրակի մարմանդ զոլը մեկ կողմից, եզի, կովի, ձիու հոտը՝ մյուսից, մարդի քյալլա էին ծակում։ Փորները՝ սոված, գլխները՝ դարտակ, ձեռք ու ոտք՝ մրսած, գոմի ծանրացած բուղն ու կրակի սև ծուխն էլ որ քթըներին չղփպավ, մաղձ ու աղիք իրար գլխով տվեց։ Որը բերնին էր հուպ տալիս, որը աչքին, որը փորին, որը քթին, որն էլ թութուն էր քաշում, որ բալքի թե էն զահրմար հոտը մի քիչ կտրվի։ Որը փռշտում էր, որը հազում, որն էլ էնպես էր զկռտում, որ սիրտ ու թոք հետը դուս էին գալիս։ Ամեն մեկ քիթ նաղրախանա էր դառել, ամեն մեկ բողազ՝ ղոռռռռռռ, ամեն մեկ փոր՝ դափ ու դարյա։ Հազալիս երես ու միրուք էր, որ ներկվում էր։ Փռշտալիս, հենց գիտես, անձրև էր գալիս. քթի ցելթուկը ինչ տեղ ասես հասնում էր. երես, բերան, աչք, ունք էլ չէր ասում, թե աստված ա ստեղծել։ Շատը աղլուխ չունենալով՝ կամ փեշով էր սրբում քիթը, կամ ձեռը պատին քսում, կամ թե չէ քիթն է՛նպես էր սաստիկ վեր քաշում, որ մեկ բուռը ծուխ ասես, բուղ ասես, գոմի հոտ ասես, թոզ ասես՝ քուլա-քուլա բարձրանում, բեին էին համբարձվում։

Էս միջոցումը խեղճ տանդրոջ կնիկն էլ փեշերը վեր քաշելով, քիթը սրբելով՝ գլուխը քարը չի տվեց, ուզեցավ, որ ներս մտնի ու ղոնաղներին բարի լիս ասի ու գալըները շնորհավո՛րի։ Հազի, փռշտոցի ձենը լսելով՝ քաղաքավարություն բանացրեց, գոմի դուռը բաց արեց, որ մի քիչ հոտն ու ծուխը դուս գնա։ Բայց երանի, թե ձեռը կոտրըվել էր, չէ՛ր բաց արել։ Հենց դռան ճռոցն իմացան։ թե չէ, աշխարքն իրար գլխով դիպավ, ու որն անգդակ, որն քուրքը քաշ տալով, աչք ու քիթ բռնած՝ էնպես քոռըքոռ հենց ուզեցան, որ դուս թռչին, երեսները մի քիչ հովին տան, էլ չկարողացան առաջներին մտիկ անիլ, չունքի տունը ծուխը խավարացրել էր, բուղը ամպի պես կալել. իրար գլխով ընկան. հենց իմացան, թե քամին դուռը բաց արեց, ու մեր խեղճ տանդրոջ կնկա ջանը իրան հասցրին, ոտի տակ տվին։

Հարայ հրոցը որ իմացան, ետ դարձան. աչքդ բարին տեսնի. չէին իմանում՝ ծիծաղե՞ն, թե սուգ անեն, յա վրա հասնին, քոմակ անեն. չունքի տանդրոջ խաթունը էնպես էր ծանրագոգոթ խրվել գոմի կպրե կարասումը, որ էլ ո՛չ քիթ, ո՛չ երես, ո՛չ լաչակ, ո՛չ մինթանա (դերիա). դարտակ տեղ չէր մնացել, բոլոր ռուսվա էր էլել վարդահոտումը։ Էս ղալմաղալումը ողորմելին հենց իմացավ, թե ձեռները թամուզ են, հենց մատները բերանը տարավ, որ օշմաղը մի քիչ բաց անի ու շունչը քաշի, քո

դուշմանի գլուխը չի՛ գա, ինչ նրա գլուխն էկավ. մեկ դուրում տաք-տաք, կովի էր թե գոմշի, չգիտեմ, մազա էլ էս վախտը բերանն ընկավ ու սրբություն, խաչ, ավետարան աչքիցն ընկավ։ Էլ թուք ասես, վատ խոսք ասես՝ նա էր, որ կվաթաթախ բերնով տալիս էր ու ասում։

Ծանրագլուխ տանուտերը ընչանք հմիկ էնպես էր իմանում, թե ֆորթերն են կապըները կտրել, իրար գլխով ընկել, ու տանտիկինն ուզում էր, որ տուն անի. աչքը ցցեց դռան մեջը թե չէ, տունը գլխին փուլ էկավ։ Մեռու արջի պես բղղալով, ճղղալով, էստուր-էնդուր գլխին բամբաչելով որ վրա չի՛ հասավ, որ իր խաթունին էս դժոխքիցն ազատի, սատանի աչքը քոռանա, քուրքն ընկավ ոտի տակը, գլխի վրա որ մաղալաղ շտվեց՝ շրը՛փ, շը՛խպ, ինչ նա տեսավ, քո դուշմանի գլխին չգա. երեսի վրա էնպես խրվեց էս կվի մեղրի կճուճումը, որ աչք, ունք, բերան, քիթ, միրուք էնպես ներկվեցին, որ հազար ուստա քիսաքսող էլ որ էլել էր, էնպես ադաթին, լաղաթին՝ հինա չէ՛ր կարող իր օրումը քսիլ։

Դարդիմանդ տանտիկինը մարդի խայտառակությունը տեսավ թե չէ, իր ցավը մոռացավ ու տեղիցը ժաժ էկավ, որ իր հալևորին մի քիչ քոմակ անի. հալևորն էլ հենց է՛ն էր ուզում, որ գլուխը էս անոշ բարձիցը բարձրացնի ու իր խաթունի՛ն էս ռուսվայությունիցը ազատի, ձեռըները իրար չի հասան, քամակ-քամակի դիպավ. ա՛ռ քեզ տրաքոց. էլ ետ դուբարա իրանց վարդահոտի մեջը էնպես խրվեցան, որ երկու լուծ գոմեշը անջախ կարող էր նրանց էստեղանց հանի։

— Տո՛, ջրատա՛ր, տո՛, գլուխդ հողեմ, ախր ի՞նչ բանըդ էր կտրվել, որ դու էլ էկար, էստեղ ընկար։ Ես քիչ ռուսվա էլա, դու էլ ուզեցար, որ հետս ընկեր դառնա՞ս։ Էս հո խուրմա չէ՛ր, որ մենակ ուտեի, քեզ չտայի, ի՞նչ էր սիրտդ պատռում։ Կրեմ էդ գլուխդ, որ դու ես։ Էդ հունարիդ տերն ես, որ մեկ էշ բզիլ չե՛ս իմանում։ Ժամն էլ գլխիդ խռով կենա՛, պատարագն էլ, հացն էլ, սուփրեն էլ, բարիկենդանն էլ, պասն էլ։ Մենք մեր բարիկենդանն արինք, հըմիկ որ ջհանդամը գնում են, թո՛ղ գնան դրանք։ Ծրանց ոտը պետք է կոտրվեր, որ մեր շեմը չէին կոխել։ Էս ի՞նչ բան էր, որ մեր գլուխն էկավ. գեղի, աշխարքի միջում խայտառակ էլանք։ Մեռը մեզ հասավ։ Թե մենք, թե մեր գզիր Կոտանը։ Ով ասես, մեզ վրա պտի բերանը բաց անի։

— Տո՛, քավթառ իմանսզ, իմ ցավս հերիք չի՛, դու էլ մեկ կողմիցն ես միսս ծամում։ Ի՞նչ ես բերնիդ կապը կտրել ու լեզուդ քեզ չես անում։ Ձենըդ կտրի՛, թե չէ էնպե՛ս քացի կտամ, որ ատամներդ փորդ կթափի։ Սաղ օրը աթար ես թխում, էսօր էլ համն ա՛ռ, էլ ի՞նչ ես գլուխս տանում։ Որ չէիր գոթրոմացել, թեզ վեր էիր կացել, հո հմիկ էրկուսս էլ պրծած

կըլեինք։ Կնիկարմատն ու ձուն մեկ օրինակի են, հենց ձեռն ես տալիս թե չէ, էն սհաթը փխլվում են։ Շատ կնկա թամահ անողին ի՞նչ ասեմ. հազար խոսք ա բերանս գալիս, ետ գնում։ Տե՛ր աստված, քեզ մեղա. խաթա-բա՛լա ա, էլի։ Կրակն ընկանք, տո՛։ Փասա-փուսեդ քաշի՛ր, վե՛ր կաց, կորի՛ր, էլ երեսս չի՛ գաս։

Էս խոսքումը ղոնաղներն, էն ա, էնքան ծիծաղել էին, որ սիրտըներն էկել, բողազներին դեմ էր ընկել, ու շատի ոտները դաբաղի աշ դրած կաշի էր դառել։ Ախր ո՞վ տեսնի էսպես լաղաթի թամաշա ու աչքը կալնի ու չծիծաղի։ Լավ իրանք էլ չէին ուզում, ամա, նալլաթ չար սատանին, բանն էնպես էր վրա էկել։ Ինչևիցե, փոր ու բերան բռնած՝ էլ ետ մոտ էկան, որ իրանց տանդրոջ հավարին հասնին։ Սա էլ քթի տակին փնթփնթալով, ոտ ու ձեռ հինաթաթախ՝ վեր կացավ ու դեպի իրան տեղը երըմիշ էլավ։

Էսքան թամաշեն ու նաղլը անց էր կացել, դեռ գզիր Կոտանը ո՛չինչ բանից խաբարություն չուներ։ Էս հարայ-հրոցը որ ընկավ՝ «Հա՜յ, ջուր բերե՛ք, հա՜յ, քոմակ արե՛ք, տանուտերն ու տանտիկինը խեղդվեցին»,— հենց իմացավ թե չէ, էնպես կարծեց, թե մուխն ա նրանց զոռ արել, վրա վազեց ղոչաղ-ղոչաղ, բրդի կծկի պես, մեկ կճուճ խտտեց կժի տեղ ու խալխին՝ «Հա՜յ, ձեր հերը, հա՜յ ձեր մերը» ասելով, միսն ատամի տակին, ափալ-թափալ ներս պրծավ ու հենց էն սհաթին վրա հասավ, որ տանուտերը երես-մերես սրբել, միրուքը լվացել, ուզում էր, որ բերանն էլ թամուզացնի, չունքի ատամների տակին էլ մեկ քանի անոշ թիքա մնացել էին։ Շատ փայը հո՛, բարկացած ժամանակը կուլ էր գնացել, էստուր համար էր բողազը ճոթռում, հազում, ջուր կում անում, ամա ձեռը ո՛չինչ չէր ընկնում, հաղալ-մաղալու վախտը անց էր կացել։ Սոված փոր, ծեր մարդ, դատարկ գլուխ ու էնպես խնկահոտ, մեղրահամ, ի՞նչ լաղաթ կտա, իմացողը թո՛ղ իմանա։ Էլ ի՞նչ ասեմ։ Էստուր համար էր մեր պարոն տանուտերը կատաղած արջի պես փորը բռնել, պտիտ գալիս։

— Վա՜յ, իմ աչքս դուս գա, տա՛նուտեր ջան, վա՜յ, ես դժոխքի փայ ըլիմ, վա՜յ, վա՜յ, վա՜յ. էդ ի՞նչ ա քո հալը, գլխիդ մեռնիմ, մկամ քո Կոտանը մեռել, կորել ա, որ դու էդ օրն ես ընկել,— ասեց խեղճ գզիրն ու աչքը կեռացրած, մեկ դհի վրա թեքված՝ վրա թռավ, որ նրա գլուխը լա, նրա ցավին մեկ դարման անի ։

Հենց քիչ էր մնացել, որ տանուտերը սիլեն ետ քաշի ու նրա մեկ քոռ աչքն էլ դզի, ատամները փորն ածի, որ իր տերն էնպես թողել, իր քեֆի ետևիցն էր ընկել, դովթալաբ գզիրը էլ սիլամիլին մտիկ չտվեց, ղաստ արեց, որ իր ծուռը դզի, աղի խաթրն առնի, ու էրկու ձեռով որ կճուճը շուռ չտվեց տանդրոջ գլխին, աստված ազատի, ինչ նրան հանդիպեց։ Մեկ եքա

կճուճ, հինգ տարվա թթու, թանձր, պճպճուն բազկաթանը էնպես նրան ողողեց, որ ջրհեղեղի օրն էլ էնպես ալեկոծում, էնպես զուլում չէ՛ր էլած, չէ՛ր տեսնված յա լսված։ Տանուտերը հո տանուտերը, քոռ գզրի սիրտը ջուր կապվեցավ։ Բազկաթանի հոտը էնպես քյալլին դիպավ, որ տասը գազ ծուլ էլավ ու գող շան պես վրվրթալով, սրսրթալով, հեթեթալով ետ թռավ գոմի պուճախն ու մնաց քար կտրած, սառած։ Մեկ մկան բունը որ հազար թումանի տվել էին, կառներ, մեջը կմտներ, որ իր սև օրը լա ու տանդրոջ ձեռիցը պրծնի։ Քու դուշմանի գլուխը չի գա, ինչ նրա հալն էր. տանդրոջը հո, աստված ո՛չ շհանց տա, ընչանք թաքրար ջուր կբերեին, իրանն իրան հասավ։ Միրուք, բերան, քամակ, ծոց, քուրք-մուրք՝ հոտած բազկաթանի մեջը չխչխպում, ծլծլում էին։ Ջեբ, լաբչին՝ բոլոր լցվել էին, տուտը պճեղն էր հասել։ Քամակը քոր էր ընկել, աչքերը մրմնջում էին. թե ուզում էլ էր, որ ժաժ գա չէ, փոխանն էնպես էր լցվել բազկաթանով, որ փաչեքը իրար դիպչելիս դափի, զուռնի ձեն էին հանում, չփչփում։

Էս շան հալին էլի զոռում, զոռում, հարայ էր տալիս, ձեռները դես ու դեն քցում, որ գզրին ճանկի ու սպանի։ Քոռ հավի պես մնացել էր պատի տակին կանգնած, ամա էլի հենց է՛ն էր ձեն տալիս.

— Թողե՛ք, թողե՛ք, դրա քոռ աչքն անիծած, թողե՛ք, դրան սպանեմ, շնատակ անեմ, դա՞ էր մնացել, որ իմ գլխիս օյին գա՞։ Դրան է՛ն օրը քցեմ, որ մեծ թիքեն անկաչը մնա։

Ընչանք ջուր կբերեին, ամենին իրանցը իրանց էր հասել. շատը նվաղել, քամակի վրա վեր էր ընկել։ Էլ ի՞նչ կանեին իրար երեսի ալիր փչիլ յա մածուն քսիլ, որ շատ անգամ, ուրախ վախտներն, անում էին։ Էս բավական ալիր էլ էր, մածուն էլ։ Էս ղալմաղալումը տանդրոջ կնիկը ճրրալով, թոնթորալով դուս էր գնացել, որ իր գլուխը լա, իր մեղքիցը ազատվի։ Խալխը տանդրոջ բնությունը լավ գիտենալով, որ բարկացած ժամանակին հրեշտակ էլ ձեռն ընկներ, չէ՛ր խնայիլ, ո՞ւր մնաց գզիր Կոտանը, տերտերին աչքով արին, որ նա, քանի աչքը բաց չի՛ արել, մուննաթ անի, որ բալքի խղճին մեկ ճար ըլի, ու էլ ետ գզրին բերեն, տանդրոջ ձեռը պաչիլ տան։ Հենց իմանում էին, թե կարգավորի պատիվն էլա կպահի։

— Բարիկենդան օրեր ա, խնամի Օհանես, խելքըներս կորել ա, տնա՛շեն,— բերանը բաց արեց ծանրագոգոթ մեր փառավոր տերտերը, որ իր կարգի պատիվը ճանաչելով՝ ուզում էր, որ բալքի հաշտություն քցի միջները ու էրկուսին էլ բարըշացնի։— Աշխարք ա, է՛դպես կըլի. հո աղջիկ չե՛ս, որ խասդ ու վարաղդ գնա. հո շուշա չես, որ կոտրվեիր, խանի՛ խաբար. մոմ չե՛ս, որ հալչիս. մի քիչ սիրտդ լե՛ն պահի, ի՞նչ էլավ քեզ։ Քրիստոս իր սուրբ ավետարանի միջումը գրում ա, ամենիդ մուրազն էլ տա, թե՝

Նրանի՛ խաղաղարարաց, կամ թե՝ Թշնամուդ գլխին կրակ կածես, թե որ նրան սի՛... ռը՜... ղո՜... րե՛ս... Վա՜յ քո հերն էլ անիծած, քո մեռոն քսողինն էլ, քո օխտը պորտին նալլաթ, քեզ բարի օր ասողին, բարի լիս տվողի շլինքը հախ մխսն տերը կոտրի, էս ի՞նչ ա իմ հալը,— տերտերը բուխարուց ձեն տվեց՝ գլուխը քորելով, միրուքը թափ տալով։— էս ի՞նչ անիծած մարդի ռաստ էկանք էսօր, տո՛, հենց ամեն բանն էլ թարս ա գալիս։ Հարամ ըլի է՛ն հացն էլ, է՛ն ջուրն էլ, խաթա-բալի մեջ ընկանք, է՛լի։ էս ի՞նչ կրակ ա, որ մեզ էրում ա։

Իրավ որ ողորմելի կարգավորը կրակի մեջ էր ընկել։ Ջունքի ինչ սհաթի որ նա մոտացավ, որ տանդրոջ սիրտն առնի, էլ չէ՛ր մտածում, թե նրա արինն ու հերսը աչք ու միտք կալել, քոռացրել էին։ Անաստված տանուտերը էնպես մեկ սաստիկ դուռթմա (մուշտի) տվեց էս քո խեղճ տերտերի դոշին, որ փիլոնը մի տեղ ընկավ, գդակը՝ մի, ու ինքն էլ չոքըչոք անելով՝ գլուխն էնպես բուխարու աթարի կրակի մեջն ընկավ, որ երեսմերես բոլոր խանձվեցավ։ Խեղճի բերանը մրով, մոխրով լցվել էր, միրքի կեսը հո, կես տարի անջախ դուս կգար, էնպես էր քոքիցը խանձվել, պլոկվել։ էստեղանց էր է՛ն քաղցր օրհնությունը տալիս, որ մեկ դուռթմի էլա ինքը չի՛ դիմացավ ու ուզում էր, որ մեր խեղճ թանակոլոլ, մեղրաթաթախ, վարդահոտ տանուտերին ճամփու բերի։

— Ժամումը գլլըներս տանում են, հերիք չի՛, գոմումն էլ են ուզում իշխանություն բանացնեն, ախր ի՞նչպես մարդ համբերի,— վրա բերեց տանուտերը։— Ձեր օրհնողին ի՞նչ ասեմ. նալլաթ չար սատանին, բերանս ի՞նչ ա գալիս, ետ գնում։

էլի երկար էսպես քթի տակին մռթմռթում էր տանուտերը, որ գզրին փախցրին, պահեցին։ Աստված բարի ճամփա տա, որ էնպես ղալաթ բան մյուս անգամ չըռնի՛, և մեր գրի սև ու սպիտակը ճանաչողներին էլ խելք, իմաստություն տա, որ էսպես տեղը իրանց պատիվը չկորցնեն։

4

Տանուտերը գեգջանգեջ աչքը բաց արեց, դուռն ու պուճախն ընկավ, որ իր սիրտը մի քիչ հովացնի, բայց գզիրը թռել էր։ Քեդխուդեքը մեկ կողմից, կնիկը մյուս կողմիցը թափ էլան, տանդրոջ սիրտն առան, տերտերին էլ բարշացրին, տանդրոջն էլ, գզիրն էլ էկավ, չոքըչոք ոտներն ընկավ, մեղա ասեց, ձեռը պաչեց, մեկ թաս արաղ էլ կոնծեց. ծուխն էլ քիչ-քիչ պակսեց, բուղն էլ, ամեն բան սկսեց իր կարգն ընկնիլ։ Տերտերը «Պահպանիչն» ասեց, քեդխուդի մեկը՝ «Եվ ևս խաղաղությունը», տանտիկինը «Ամեն» ձեն տվեց, տանուտերը՝ «Մեղա Աստուծո», «Հայր սուրբ, զքեզ

ունիմ միջնորդը» ու վերջապես արաղ-մազեն էլ որ տուն չբերին, ամենի սիրտն էլ տեղն ընկավ։ Ինչ անց էր կացել, քամուն տվին, խունկ ծխեցին, երդիկ ու դուռը բաց արին, հոտը-մոտը քաշվեցավ, կատարները տաքացավ, ու մեր սպարոն քեդխուդեքը հացի նստեցին, սուփրեն քաշեցին. մեկ գլխին տերտերը բազմեց, մյուս գլխին՝ տանուտերը, մեկէլներն էլ պատի տակին էնպես սրով բազմեցին ու ոտները ծալեցին, որ սուփրի մեջը էկող-գնացողի, անց ու դարձ անողի համար բաց էր մնացել։

Նոքարը որ արաղը չածեց, ավալի սֆթա տերտերին դեմ արեց. սա էլ խաչակնքեց, օրհնեց, տվողին խմացրեց, որ մեր գզիրն էր, ու ետո ինքն առավ թասը ձեռը ու օրհնության տուտը սկսեց։

— Աստված աշխարքիս խաղաղություն, թագավորաց հաշտություն, քրիստոնեից ազատություն տա՛։ Ընչանք մեռնինք ո՛չ, որ մեկ օր էլ էսպես՝ էլով, գյունով, ռուսի ձեռի տակին նստինք, քեֆ անենք։

— Ամե՛ն, ամե՛ն,— ձեն տվին ամենն էլ։

— Տունդ չե՛ն կենա, տունդ, տա՛նուտեր, որդիքդ ապրի՛ն։ Աստված օջախդ հաստատ պահի՛, նամարդի մուհդաջ չանի՛. մեր գլխի թագն ես, մեր աչքի ծաղիկը, Հայր Աբրահամի օրհնությունը քեզ վրա, Սիմեոն ծերունի պես քո ըմբրի խերը տեսնիս։ Քեզ ծուռը մտիկ անողի աչքը քոռանա, ո՛ւմ սրտումը մեկ խեթ կա, աստված բարին կատարի՛։ Ինչ էլավ՝ աստված վերջը բարի անի՛, քաշած զահմաթդ ապաշխարանք համարի՛. էսօր՝ քեզ, էգուց՝ մեզ. մենք էլ քո ջրերն ընկանք։ Ով խռով ա, սառը ջուր խմի՛։ Իմ գլխիս ջաղաց էլ աղան, թաք ըլի տեղս տաք ըլի, ձեռիս՝ թաս, սիրտս՝ ուրախ։ Տո՛, քեֆ արե՛ք, տո՛, դուշմանի աչքը հանեցե՛ք։ Շնորհավոր բարիկենդան. աստված զատկին էլ մեզ արժանի անի. քանի կարանք, մեր օրը վայելենք. էգուց ո՛չ էլոր մեծ պասը ոտները երդիկցը ճոլոլակ կանի, հա կա՛ց ու բազկաթթու կե՛ր։ Հավասարական սաղ ըլի՛ք, ուրա՛խ։ Տեր աստված, քեզ փառք. մեր երեսը քո ոտիդ տակը։ Քո ստեղծվածն ենք, մեզ չի՛ կորցնես։ Տե՛ր աստված, դու մեր Ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ ազատի. ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք։ Կենդանություն,— ասեց ու արաղի թասը շպռտեց։

— Կենդանի մնաս, սա՛ղ ըլիս. կարգիդ՝ հաստատ, տե՛րտեր ջան. անո՛շ, խմածդ անո՛շ, հենց իմացանք՝ մե՛ր սրտովը գնաց,— ձեն տվին ամենն էլ, ու մեկը մեկ թիքա պանիր, մյուսը մեկ թիքա խորոված յա խաշլամա, լոշում փաթաթած, թավազա արին։

Տերտերն էլ առաջ ձեռը տվողի բթի վրա դրեց, թիքեն առավ, բերնին, ճակատին դրեց, «Հա՜յ, ձեռդ ապրի, հա՜յ, զորանաս» ասելով, ձգվելով, օրհնելով, գովելով՝ թիքեն ծամեց, կուլ տվեց ու ինքը մյուսների օրհնանքին անկաջ դրեց, անո՜շ ասեց։

Էսպես՝ արաղի թասն սկսեց պտիտ գալ, ձեռնեձեռ ընկնիլ ու ամեն մեկի ձեռին մեկ սհաթ տանջվիլ, չխմողին տանջիլ, չունքի ամենն էլ մեկ եքա պարկ օրհնություն բերնըներումը հազիր ունին, ու ում լեզվումը մի քիչ հունար կա, սուփրի ու գինու կամ արաղի թասի վրա ա փորձում։ Բայց ամենի խոսքի տուտն է՛ս էր.

— Օրհնյա՛ ի տեր, աստված կարգիդ հաստատ պահի՛։ Քո աղոթքը մեր գլխիցն անպակա՛ս ըլի։ Տա՛նուտեր, սաղ ըլիս. տանուտեր, քո շվաքը մեզ վրա ղայիմ-ղադըմի ըլի։ Մի՛րզամ, աստված որդիքդ պահի՛։ Ավետի՛ք, քո որդու կարմիրը կապե՛նք։ Խնա՛մի, աչքի լիս ես, աստված քեզ մեկ ղոչ որդի տա՛։ Հավասարական սաղ ըլի՛ք, ուրա՛խ։ Տե՛ր աստված, վերջըներս բարի անես։ Կենդանություն։

Էսպես՝ ամեն մեկ խմող ամենին ջոկ-ջոկ մեկ բան պտի ասեր ու էն էլ ամեն թասի վրա։ Թեկուզ քսա՛ն թաս էլ մեկ մարդ խմի, քսա՛ն մարդ էլ նստած, ամեն թաս խմելուն ամենին էլ հատուկ-հատուկ մեկ բան որ չասի, թասը կուլ չի գնալ, բկումը կմնա։ Շատն էլ թասը մեկ սհաթ քիմի ձեռին բռնում ա, որ վրեն մի տաղ յա մի խաղ ասեն ու իրան անունի շարականը վրա բերեն։ Հայտնի բան ա, որ տերտերից յա տիրացվից գյուման շարական ասող՝ գեղ տեղն ո՞վ կա։ Ամա սրանք էլ խեղճ շարականի բուրդը շատ անգամ էնպես են գզում, որ աստված հեռու տանի։ Լսողը մինչև Երուսաղեմ մին կփախչի։ Բայց ի՞նչ կանես, բախտըներիցը հազար շուն կա, հազար գել, որ ո՛չ գիր գիտեն, ո՛չ գրի զորություն։ Լավն էլ էս ա, շատ գլուխ չի՛ ցավիլ։

Մեր երկրումը առաջ ձեռըները լվանում, սրբում (էն էլ նստած տեղըն ա նոքարը՝ փեշկիրն ուսին, ավթաֆա լագանը ձեռին, ամեն մեկի առաջին կռանում յա չոքում, ձեռին ջուր ածում), ետո են սուփրեն քաշում, աղամանը, պանրամանը, ձկնամանը մեջտեղը շարում, ապա հացը քաշում, ամենի առաջին կիտում, բազի վախտ կանաչի էլ ա ըլում։ Գդալ, չանգալ-դանակի ոտը դեռ մեր աշխարքը չի մտել։ Մատներն էլած տեղը ի՞նչ հարկավոր ա չանգալ-դանակ։ Կերակրներն էլ մեկ սինով (պոթնոս) ներս են բերում, ու մեկ նոքար փեշն ու թևերը վեր քաշած, ուսին քցած, կուզըկուզ անելով՝ երկուսի առաջին մեկ աման ա դնում։ Հացից ետը էլի ջրով որ ձեռք ու բերան չողողեն, չլվանան, կերածը հարամ կըլի։ Գդակ վերցնիլ սեղանի վրա յա գլուխ տալ ադաթ չի՛։ Երկրի ծեսն էսպես ա, Եվրոպա չի, որ կովը վեր քաշեն, տեսնեն՝ տակին հորթ կա, թե՝ չէ։

Հենց մի քիչ աղի կողակ ու պանիր որ անոշ չարին, գեղը կատաղեցավ։

— Տո՛, լերդս կպավ, է՛, բերանս հո ցամաքեցավ. էդ զահրըմարը մի

ածա՛, որ տեսնինք՝ ի՞նչ համ ունի, է՛, ա՛յ տնաշեն։ Կողակի թիքեն հրես բկիս դեմ ա ընկել, ի՞նչ էլավ ձեզ, մեզ հո սպանելու չե՞ք բերել էստեղ,— ձեն տվին էս տեղանց, էն տեղանց քեդխուդեքը, որ գինին շուտով ածեն։

Լսողը չիմանա, թե հայաստանցիք ուրիշ ազգերի նման, հենց էն ա, գինի տեսնելիս, ուզում են հոգիքը տան կամ, ինչպես բազի Կավկասյան սարը դեռ չտեսած մարդ, գինու ռումբին որ տեսնում են, երեսներին խաչ են հանում կամ շիրախանումը քնում, կամ թուր ու սերթուկ գրավ դնում, կամ թե չէ՝ ցխում, ձնում վեր ընկնում, երազ տեսնում, դելը տալիս։ Աստված մի՛ արասցե, էս պակասությունը չունին, նրանք էս շնորհքիցն ու մարիֆաթիցն վաղուց են ձեռք լվացել, որովհետև աշխարհ չեն տեսել, ու էշ կերել, էշ մենծացել, ո՛չ բարոյականության ձեն լսել, ո՛չ կրոնագիտության, որ գինու գինը լավ իմանան ու երկու թաս խմելիս ոտ ու գլուխ կորցնեն ու սիրահարված՝ երկինքը համբառնան։ Չէ՛, չէ՛, նրանք շատ բռի են ու էլած-չէլածը չեն տալիս խմիչքի, ամա տեղն ընկած վախտը, գինու տիրոջ ջանին մուննաթ, էնքան են խմում, որ երեսները վարդ ա դառնում, գլխըները՝ նաղրախանա, լեզվըները՝ բըլբուլ, սիրտըները՝ ասլանի և ո՛չ խոզի, չունքի մեկ հայ չես տեսնիլ քո օրումը հարբած, ցխումը թավալ տալիս, թեկուզ հինգ թունգի էլ խմի։ Մա՜շալա, տղեն սրան կասեմ, ա՛յ թե մարդ ա, ուրիշն էլ էս բանը կանի։

Հաց քցող տղեն էրկու ստաքանանոց տոլուն էլի տերտերին դեմ արեց. Նա էլ օրհնությունը տվեց ու ճամփու քցեց։ Ետո մեկելներին տվեց. էսպես՝ բոլոր հացի ժամանակը մեկն էլա ինքը չէ՛ր ածում իր գինին. էս նոքարի ու ղուլուղ անողի գործն ա. որ քսան մարդ էլ որ ըլին, հենց մեկ թասից պտի խմեն, էնպես որ, ընչանք թասը պտիտ կգա ու վերջին մարդին կհասնի, սրա բողազն ա ցամաքում, վերի նստողի՝ թուքը։ Կենաց-մենաց խմիլն Երևանումն էնքան ադաթ չի, ամա մարդ իր լեզվի հունարը ձեռաց պետք է չթողա, ամեն թասի վրա մեկ խոսք ասի. ինչ կըլի՝ ըլի, հաջաթ չի. բեինդ տաքացած ժամանակը ինչ կուզես, սաս՛, վատ խոսք էլ որ ասես, լավի տեղ անց կկենա։ Սովորական կերակրներն էլ մեր երկրի սրանք են՝ բոզբաշ կամ քուֆթա, կամ խաշ, տոլմա, խորոված կամ խաշած ձուկը, գառան մսով փլավ, խաշած հավ ու ոչխարի խորոված, որ հենց էնտեղ եեթ բուխարումը խորովում ու շատ անգամ շամփրով, տաք-տաք իրար թավազա անում։ Բազի անգամ էլ տոլուչին պետք է բերանը բաց անի, որ մեկ թիքա խորոված իրանց ձեռովը բերանը դնեն կամ մեկ թաս գինի կոնծիլ տան։

Էսպես՝ մեկ քանի տոլու մաքրազարդեցին թե չէ, քեֆըները չաղացավ, դամաղները տաքացավ, չունը տերը կորցրեց։ Կրչոնց Վիրապն էլ

հո՛ էնտեղ էր, էլ ի՞նչն էր պակաս, սազը կողքին հազիր ուներ. անկաշ պտեր, որ նրա ձենին հայիլ-մայիլ մնար։ Հենց ջուրն իր ճամփեն քթավ թե չէ, սա էլ իր սազը քոքեց, ճնգճնգացրեց. հա՛ կաց ու քեֆ արա՛։ Պատերը դրմբում էին, գետինը զրնգզրնգում, օճորքը տեղըհան ըլում, նրա ձենը մարդի քյալլին ցցվում։ Էնպես զոռբա ձեն ուներ Վիրապը, որ հինգ սհաթվա ճամփից լսվում էր.

— Փի՛ր օլսան, փի՛ր. ջանմ սան, ջանմ. ի՞նչ կըլեր, որ քո մերն քեզ նման մեկ հինգն էլ էր բերել, որ աշխարքի միջումը մի հատ չըլեիր։ Ասա՛, բերանիդ ղուրբան, ասա՛. բերանդ ապրի, ըմբրով կշտանաս,— հազար տեղից ձեն էին տալիս մեր պարոն քեդխուդեքը՝ գլխըները տրմբացնելով, անոշ-անոշ զկռտալով։

Շատի բերնի ջուրը հետը գնում էր։ Շատ անգամ, քեֆը քոք ժամանակին, տերտերն էլ ի՛ր ձենի հունարն էր ուզում նշանց տա, ու կամ Վիրապի հետ էր բաս մտնում, գոռում, կամ թե չէ «Երևեցավ խնկաբերիցն» ասում, խալխի թասընները վեր դնիլ տալիս, կամ ձեռըներին բանդ անում. ամա էնպես մեկ մխոտ, ճոթռած, ճղլանի, քացախած ձենով, որ մարդի գլուխը տեղիցը պոկ էր գալիս։ Քեդխուդեքը հո, մաջալ չէին տալիս. ինչ բերանները գալիս էր, հենց է՛ն էին քյոնդալանա ասում, զռում, էնպես, որ խեղճ սազանդարի ասածը բերնումը հարամ էր ըլում։

Ամենը հո ամենը, իլլահիմ մեր մեղրաբերան տանուտերը. անատամ ռեխը որ բաց չէ՛ր անում, պատերը դողում էին, կատվըները մլավում, հավերը բակումը իրանց տիրոջ ձենը լսելով՝ շարքով կանգնում, կռկռում յա կչկչում։ Ցորթ, եզը, ձի, տավար ուզում էին, որ ուրախությունիցը կապըները կտրեն։ Էշը զռում էր, գոմեշը տրլնգում, էծը մկկում, կովը բառանչում, ֆորթը բղավում, որը ֆշտացնում, որը փստացնում, որը վզզացնում, որը բզզացնում։ Մյուս բաները չեմ ասում, ամոթ ա։ Գարի, դարման կերած տավար, հայտնի բան ա, որ ինչ ասես, նրանցից դուս կգար։ Խուլասա, ի՞նչ գլուխ ցավացնեմ. էսպես նաղրախանէի ու մուզիկի ձեն շահի դռանն էլ չէր լսված։ Բայց գինու տակռին դալար մնա։ էս թոփ ու թոփխանեն, էս զարբազանը մեկին էլա քյար չէ՛ր անում։ Շատի, հենց բռնես, քեֆը գալիս էր։ Բայց ամեն սհաթ հո մեկ չի՛ ըլիլ, ու ում ուժն ասես՝ տերտերին յա գզրին ա հաղթում։ Սրանց մեկը էս ալեկոծության ժամանակին հենց շարքյասեն առավ, օրհնեց, պրծավ ու սռնկին դրեց, որ մաքրազարդի թե չէ, էշն էն կողմիցը էնպես մեկ թունդ տրաքացրեց, որ էլածչէլած խելքը գլխիցը թռավ, շշկլեց. գինու կեսը կատիկը թռավ, կեսը միրքին թափեցավ, ու հենց ուզում էր, որ թասն էլա չի՛ կոտրի, ու բեղաֆիլ ձախու ձեռը որ չի՛ վրա բերեց, սատանի աչքը քոռանա, էնպես սատիկ

խփեց տանդըրոջ գլխին, որ փափախը կրակի վրա ծունդր դրեց, խորովածի շամփուրը վեր քցեց, տասը հատիկ ատամների մեկն էլ բերնիցը վազեց, փորը գնաց, որ գլուխը պրծացնի։ Թե ուրիշ վախտ էր էլել, ես գիտեմ, թե տանուտերը ինչպես նրա միրքի մազերը մին-մին կպոկեր, բերանը կըտեր, ամա էս սհաթին, որ քար էլ աղային գլխին, ձեն չէ՛ր տալ։

— Լավ հարաքյաթ ես անում, հա՛։ Է՛հ, ի՞նչ անենք. բարիկենդան օրեր ա, խելքըներս կորել ա, դու սաղ ըլիս։ Ա՛յ տղա, ածա՛, լցրո՛ւ Վիրա՛պ ջան, մեկ լավ զլի՛. խմե՛նք, քե՛ֆ անենք, ո՞վ ա խաբար, թե էգուց գլխըներիս ի՞նչ ա գալացուկ։ Գյոռն չաթլասն, տերտե՛ր ջան, գյոռն. էդ շալ միրուքդ ուտեմ, որ մի սիրտս կշտանա. կե՛ր, խմի՛ր, քե՛ֆ արա,— ասում էր՝ ու տերտերի ուսերին լավ բաբաթ վեր հատում. սա էլ պարտքի տակին չէ՛ր մնում ու մեկի տեղակ հինգն էլա ետ տալիս։

Էսպես՝ դինջ, տանստանու, ինչպես հեր ու որդի, քեֆ էին անում մեր պարոն քեդխուդեքը, հանաք անում, իրար սիրտ շահում ու հազար բաբաթ նաղլ, մասալա, առակ, շախա ասում, անում, լսողի սիրտը բանում, իրանց օրը անց կացնում։ Վաղուց էին կշտացել. էլ հո հաց չէին ուտում, մաղա էին անում, գինի խմում. բաղինն էլ վեր էր կենում, պար գալիս։ Տերտերը մեկ թաս գինի մեկին դեմ անելիս հո, հազար տեղ գլխի վրա կունդկի էր տալիս, որ նրա սուրբ ձեռիցը բաժակն առնի, ձեռը պաչի։ Էսպես՝ վախտին էին մտիկ տալիս, որ դուս գան, գնան, ջահել տղերքանց ցիրիդին թամաշա անեն։

5

Արեգակն էկել, երկնքի մեջտեղը բռնել էր. օրվան փուշը մի քիչ կոտրըվել, տաքացել էր։ Սար ու ձոր արծաթի պես փլփլում, պլպլում էին։ Էս հաղաղին ով որ Քանաքեռ մտներ, հենց կիմանար, թե երկնքիցը մեկ ավետյաց ձեն ա էկել, աշխարքս արքայություն ա դառել, մարդի աչքն էլ ցավ, կսկիծ չի պետք է տեսնի, և Քանաքռու խարաբեքն էլ էին թև առել, ծափ տալիս, թե էլ էնպես չեն մնալ, թե իրանց մեջն էլ՝ շունչ կմըտնի, չեն կընկնի, էնքան տղամարդ, ջահել տղերք, երեխեք էին տներիցը դուս էկել, քուչեքումն ու կտրներին քեֆ անում։ Օտար մարդը հենց կիմանար, թե էս գեղըցիք աշխարքի տերն են. ո՛չ դարդ ունեն, ո՛չ ղասավաթ. ամեն մեկը հազար թումանի տեր են։ Ոհաթ խալխը՝ որը ձեռնաբռնուկ էին արել, պար գալիս, որը բոլորեշուրջ նստել, քեֆ էին անում, որը խաղ էր ասում, որը դամ քաշում։ Էստեղ զուռնեն էր փչում, էնտեղ ճժալախտի էին խաղում, մյուս տեղը փահլևաններն էին կոխ պրծնում, յա ղարաշիքը ֆալ բաց անում։ Մանր տղերքն էլ յա ձնաթափի էին խա-

ղում, յա աչքակապուկ, յա սաղդաթի պես կուլում։ Դաբխփի (դհոլ), զուռնի ձենն ու հարայ հրոցը աշխարք էին վեր կալել։

Աղասին էլ քեֆն արել, պրծել, իր դաստեն ետևին քցած՝ էկավ մեկ տասը ձիավորով, գեղի միջովն անց կացավ, որ գնա, կալերի դզումը, ջաղացների մոտին իր հունարը նշանց տա, ջիրիդ խաղա, չունքի գեղամիջին էնպես դուզ տեղ չկա։ Հենց իմանաս՝ մեկ թագավորի որդի ա գալիս։ Յարաղ-ասպաբը կապած, թվանքն ուսին, թուրը կողքիցը կախ, ջուխտ փշտովն ու ղամեն գոտկումը, կանաչ մով շալվարը, զառ կապեն հաքին, գյուլբանգի աղլուխը ճտին. նուղայի թուխ գդակը գլխին կոտրել, աջու անկաշի վրա էր քցել. ոսկեթել թուխ-թուխ մազերը ձախու կողմիցը քամու հետ խաղում՝ յա ազնիվ երեսին էր դիպչում, յա բկի տակովն ընկնում։ Բեղերն ապրշումի պես ոլորել, էնպես էր թշի վրովը դուս տարել, որ ամեն մեկի մեկ ծերը անկաշներին էին դիպչում։ Մտիկ անողի խելքը գնում էր։ Գեղըցիք հենց նրան տեսան թե չէ, ծափ տվին, պար էկան, ձեն-ձենի տվին ու սկսեցին նրա խաղն ասիլ, նրա գովքն ածիլ։

— Աղասի՛ ջան, գլխիդ ղուրբան, էս թասը խմե՛նք քո արևադաղին, արևիդ մեռնիմ. մեր գլխիցը ո՛չ պակսիս. գնա՛, մենք էլ էս ա, կգանք,— ամեն կողմից ձեն տվին ու Աղասու թասը խմեցին։

Ազնիվ երիտասարդն էլ, ով որ իրան էսպես պատիվ էր տալիս, գդակով էր անում, քաղցր երեսով գլուխ տալիս ու անց կենում։

Հեռըվանց երևում է, թե ի՞նչ ղիամաթ էր անում իգիթը։ Ձիու անկաշը մտած՝ էնպե՜ս էր քաշում, կրակին տալիս, որ, հենց իմանաս, թևավոր ղուշ ըլի։ Շատ անգամ ջրիդը հեռու տեղից շպրտում, ձին չափ էր քցում, ու գետնիցը ծուլ ըլելիս՝ ձիու վրիցը բռնում էր, էլ ետ քցում։ Շատ անգամ հենց էնպես դուզ շպրտում էր ու կրակի պես ետևիցը հասնում, կալնում, էլ ետ ծուլ անում։ Գետնին վեր ընկած տեղիցն էլ էնպես էր թամքի միջիցը կռանում, բարձրացնում, որ ջիրիդն առաջին դողում էր։ Ընկերտանց վրա էլ որ վախտ-վախտ ջիրիդ չէ՛ր քցում, է՛նպես էր նշանում, որ գդակների ծերին էր դիպչում կամ գդակը հետը տանում, որ իմանան, թե նա նրանց ղիմիշ չի՛ անում։ Շատ անգամ թամքի միջին ջուխտ ոտի վրա կանգնում, էնպես էր ձին չափ քցում։ Աչք պետք է ըլեր, որ նրա ռաշդութկյունը, տղամարդությունը, հունարը տեսներ ու զարմանար։

— Ջանմ սան, ջանմ, Աղա՛սի. մերդ մեկ հատ ա քեզանից բերել, հազար տարի անց կենա, քեզ նման մեկն էլա չի՛ բհամ տալ,— ասում էին թամաշավորքն ու խնդում, ուրախանում, ծափ տալիս։

Հանկարծ էս քեֆի միջումը, հենց բռնես, մեկ ամպ տրաքեց, երկիրը շարժեց, յա թոփի, թոփխանի ձեն էկավ, յա երկինքը փուլ էկավ։

— Տարա՜ն... տարա՜ն... աստվածասե՛րք, մոտ էկե՛ք... քոմակ արե՛ք, գլուխս լացե՛ք։ Տունս կոխեցի՜ն, օջախս քանդեցի՜ն... աչքիս լիսը հանում ե՜ն, սիրտս դուս են ճոթռում, տո՛, մեկ հասե՜ք, ի՞նչ կըլի։ Ա՛ստված, երկի՛նք, ծո՛վ, ցամա՛ք... էս ի՞նչ կրակ ա, էս ի՞նչ զուլում ա... Վա՜յ, օրս ու ումբրս խավարի, էս ի՞նչ եմ տեսնում։ Ձեր թուրը կոտրվի, ձեր էկած ճամփեն փուշ ու տատասկ դառնա... Վա՜յ իմ ըմբրիս, արևիս... ո՞ր ջուրն ընկնիմ, ո՞ր ջհանդամը գնամ... Գետինն էլա չի՛ պատռվում, որ ինձ մեջը տանի, աչքս հանի. էլ ի՞նչ աչքով իմ սև օրս լաց ըլիմ... Երեխիս տարա՜ն... քոմակ արե՛ք... Աստվա՛ծ, յարաղանդ քոռանա, էս ի՞նչ կրակ ա, որ մեր գլխին ես ածում, մեզ էրում, փոթոթում։ Ա՛ռ, ա՛ռ քո տված հոգին, էլ չի՛ հարկավոր. հոգի չե՛ս տվել, կրակ ես տվել, որ էրվի, ինքը չիմանա, մեր ջանը փոթոթի... Ամա՜ն... հարա՜յ... դա՜տ... մադա՜թ... Ե՛րկինք, մեկ փուլ արի՛, ինձ տակովդ արա՛, ի՞նչ կըլի... Ձեր փափախը ձեր գլխին խռով կենա, ի՞նչ տղամարդիկ եք, տո՛, մեկ ձեռն էլա հասցըրե՛ք, է՜, ի՞նչ եք քարացել, փետացել։ Թա՛գուհի ջան, գլխիդ մատաղ գնամ... Թա՛գուհի... Անումիդ մեռնիմ... երեսս ոտիդ տակը. Թա՛գուհի ջան... էդ չախմուր աչքերիդ ղուրբան ըլիմ, աղիզ ջան։ Աչքիս լսի պես մեծացրի, որ է՞դ տեղն ընկնիս... Թո՛ղ ինձ սպանենն... էդ թուրը թո՛ղ իմ սիրտս խրեն... թո՛ղ քո ոտիդ տակին հոգիս տամ... թո՛ղ ես հողը մտնիմ... էն վախտին ուր տանում են քեզ, թո՛ղ տանին։ Թո՛ղ քո նեղ օրը չտեսնիմ, ո՞ր դժոխքն ուզում ա, թո՛ղ ինձ ներս տանի...

Էս կսկծալի ձենի հետ լավ պարզ լսվում էր, որ մեկ տղամարդ թուրքերեն ասում, հարբա էր գալիս, որ ձենը կտրի։

— Ձենդ կտրի՛, զանջղ, ղարաչի... Հենց էս սհաթին փորդ վեր կածեմ. չինգյանությունն ի՞նչ պետք ա. սարդարի հրամանն ա, պետք է ձեր աղջիկը քաշենք, տանինք. ի՞նչ խոսք ունիք, ի՞նչ կարողություն. սարդարի հրամանին սարը չի՛ դիմանալ, դուք ի՞նչ կարաք անիլ։

Խալխի գլխին ջուր մաղվեցավ։ Ամենն էլ իմացան, թե ի՞նչ խաբար ա։ Սարդարի ֆառաշներն (ծառայք) էկել էին, որ աղջիկ քաշեն, ո՞վ հադդ ուներ, որ ծպտա։ Բարիկենդանը սուգ դառավ։ Երեխեքը լալով, դողալով տուն փախան. կնանիքը դռները կողպեցին ու շիրախանի կաշասների տակը մտան, կամ վերնատներումը տափ կացան, կամ դարմանի ու խոտի խրձերի մեջը մտան։ Գեղը, հենց բռնես, բիրադի քանդվեցավ։ Տղամարդկերանց որը որ վախլուկ էր, գլուխն առավ, կորավ. որը որ մի քիչ պինդ սիրտ ուներ, զարզանդելով, դողդողալով մոտ էկավ, չէ՛ թե օգնություն անի, չէ՛, այլ թե տեսնի, ի՞նչպես մարդիկ են էկողները, ի՞նչպես են տանում խեղճ ջրատար աղջկանը։ Ռանգ-մռանգները թռած, սփրթնած՝ էկան մեռելի

պես ու տան բաշին շարվեցան։ Շատի լեզուն բերնումը շաղվել, փետացել էր։ Շատի լերդն ու թոքը ջուր էր կտրըվել։ Շատի պռոշները ահու ճաքել՝ արինը շռռալով գնում էր։ Լավ ուզում էին, որ քոմակ անեն, լավ ուզում էին իրանց էլած-չէլածը տան, որ խեղճերին ազատեն, բայց ո՞ւմ ձեռիցը մեկ բան կգար։ Սարդարն էր հրամայել, ո՞վ էր կարող, որ ձեռք վրա բերի։ Թե մեկ ծպտոռ էլ հանել էին, էն ահաթը տուն, տեղ կրակ կտային ու իրանց էլ թոփի բերնին կդնեին, կքցեին։ Աստված ո՛չ շհանց տա։ Անօրենի ձեռը դուշմանս չի՛ ընկնի։ Մարդ ո՞ր հողը տա գլխին. ինչ ուզում են, է՛ն են անում։ Դատաստան չկա՛, իրավունք չկա՛, ու հայ ազգն էլ էնքան էսպես ցավեր տեսել էր, մեկ օր խոսքըմին չէ՛ր ըլում, որ իր գլուխն ազատի։ Աղջիկն ասես՝ քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը։ Զարմանալուն էս ա, որ էսպես կրակի, զուլումի մեջը էլի նրանց աչքը ուրախություն, նրանց երեսը ծիծաղ էր գալիս։

Էսպես, ինչպես ասեցի, հարիր մարդից ավելի վրա էին թափել, ձեռըները ծոցըներումը դրել ու պատի ծերիցը մտիկ էին տալիս։ Սուգ ու շիվանն աշխարքն առել էր։ Ֆառաշները կատաղել, փրփրում էին. շատ անգամ թվանքները դեմ էին անում, որ խալխին խփեն, վեր քցեն, որ բալքի ռադ ըլին, կորչին. բայց էլի հուշտ էլած ոչխարի պես ետ էին դառնում, էլ ետ՝ ետ փախչում, էլ ետ՝ ետ գալիս, մտիկ տալիս։

Ի՛նչ խեղճ, ողորմելի մերն էր անում, աստված հեռու տանի. քար չէ՛ր մնացել, որ գլխին չի խփի. հող չէ՛ր մնացել, որ վրեն չածի։ Զագը կորած հավի պես մեկ դես էր վազում, մեկ՝ դեն, մեկ գլխին տալիս, մեկ՝ ոտին։ Է՛նքան էր ծնկներին, գլխին խփել, հարայ տվել, լաց էլել, մազերը պըռճոկել, երեսը չանգռել, կտրատել, որ էլ ո՛չ աչքումը լիս կար, ո՛չ ջանումը՝ թաղաթ, ո՛չ բերնումը՝ լեզու։ Էնպես, հենց ձենը փորն ընկած, շունչը կտրված՝ ոտին-գլխին էր անում, ինքն իրան ջարդում, գլուխը քարեքար տալիս, յա սուրութմիշ ըլելով, գետինը լիզելով՝ ֆառաշների ոտներն ընկնում յա ձեռըները բռնում, որ թուրը խլի, իր սիրտը խրի, յա թե չէ, սրանք էլ որ դոշին չէին խփում յա քացով տալիս, դեն քցում, ընկնում էր ջուխտ ձեռով աղջկա վրա յա ճտովը ու էլ, թեկուզ քացով էին խփում գլխին, թեկուզ դմբզով (մուշտով), թեկուզ ղամշով յա թվանքի դուռթմով, էլ պոկ չէ՛ր գալիս, էլ չէ՛ր իմանում։ Ուզում էր, որ փորը ճղի ու իր հոգու սիրելին էլ ետ ներս տանի։

— Թա՛գուհի ջան, էս ի՞նչ ա, քո հարսանիքի պա՞րն եմ գալիս. փեսեն ո՞ւր ա, տերտերն ընչի՞ համար չի՛ գալիս։ Հինեն ի՞նչ տեղ ա, բե-

րե՛ք, որ աղջկանս ձեռները կարմրացնեմ։ Դափ ու զուռնեն ընչի՞ չեն ածում։ Ա՜յ ղոնաղներ, ի՞նչ եք էդպես պարապ, կտրի ծերին կանգնած մնացել, ձեռըներդ ծոցըներդ դրել... Ինձ չե՞ք սիրում... Պար էկե՛ք, է՜... Հարսանքավորքն էդպես բաշիբոշ կկանգնի ու թամաշա կանի՞... Խարջն իմն ա, հո ձեր քիսիցը չի՛ գնում. կերե՛ք, քեֆ արե՛ք, իմ որդուս արևն օրհնեցե՛ք։ Մեկ աղջիկ ունիմ, որ աչքիս լսի հետ չե՛մ փոխիլ, նրա խաթըրն էլա չո՞ւնիք, որ մեկ ուրախություն անեք, սիրտս հովանա։ Հա՞... քնա՞ծ եմ, թե՞ զարթուն, թե գլուխս վրես չի՛... Բաժինքը հազիր ա... Չէ՜, չէ՜... փեսեն հո Թիֆլիզ գնաց, էսպես թեզ չէ՛ր կարալ ետ դառնալ... Սրանք ո՞ւր են էկել... Թուրքը հո հայի հացը չի՛ ուտիլ... Հա՛, հա՛, հմիկ իմացա. մեր ճանաչներն են, էկել են, որ երեխիս հարսանքի ուրախությունը տեսնին... Լաց մի՛ ըլիլ, երեսիդ մեռնիմ... Թա՛գուհի ջան, ջանս ու հոգիս քեզ մատաղ. քանի որ գլխիդ սաղ եմ, ո՞վ հադդ ունի, որ քո մեկ մազին դիպչի... Մազերդ ոսկեթել, Թա՛գուհի ջան. ունքերդ վարաղով քաշած, ո՛րդի ջան. օրորոցիդ մատաղ գնամ, Թա՛գուհի ջան... Վարդի պես բաց էլած, մանիշակի պես փընչված, իմ ա՛րև, իմ կյա՛նք, իմ թա՛գ ու պարծա՛նք որդի ջան... Աչքերդ բա՛ց արա, աչքերիդ ղուրբան ըլիմ. բերանդ բա՛ց արա, էդ աննման, վարդահոտ բերնիդ մեռնիմ... Քո խեղճ, պառավ մորն է՞դպես ես սիրում... Է՞դպես ես իմ սիրտը շահում... Թե ամաչում ես, ասեմ, որ էս կանգնողները հեռանան։ Ա՜յ մարդիկ, հեռացե՛ք, կորե՛ք, իմ աղջկա աչքին մե՛ք երևալ։ Բան ու գործ չունի՞ք, գնացե՛ք ձեր տունը. ի՞նչ եք էստեղ կիտվել։ Ի՞նչ անամոթ մարդիկ եք, տո՛, ձեզ չե՞մ ասում, քառացե՞լ եք... Արի՛, գնա՛նք բաղը, Թա՛գուհի ջան, անումիդ մեռնիմ. ծառերը ծաղկել են, քո ծաղիկ երեսին ղուրբա՛ն։ Դաշտերը կանաչել են, քո կանաչ արևին մատաղ գնամ։ Ուր ենք մնացել էստեղ, գնա՛նք, տեսնի՛նք, ուրախանա՛նք...

6

Ո՞ր մեկն ասեմ, ո՞ր մեկը թողամ. մարդի սիրտ կրակ ա ընկնում, երբ որ խեղճ մոր արածն ու ասածը միտքն ա բերում։ Ո՛վ որդի ա մեծացրել, նա լավ կիմանա մոր սիրտը, տկար լեզուն ի՞նչ կարա սրտի ամեն մեկ կսկիծը, ամեն մեկ յարեն բառով ետ պատմիլ։ Ողորմելի մերը էսպես խելքը կորցրել, չէր իմանում, թե ի՞նչ էր ասում, ի՞նչ էր անում։ Թուրքերն էլ, որ տասը հատ էին թվով, է՛ն անօրեն տեղըներովն էլ, զորդ ա, բարկանում, հարբա էին գալիս, ամա մոր էսպես մորմոքվիլը տեսնելով՝ սիրտըները մի քիչ գութ ընկավ։ Իրանք էլ էին գիտում, որ մոր համար հեշտ

չի որդի մեծացնիլ, ետո էսպես բիրադի կորցնիլ։ Հավն իր ձագը կորցնելիս՝ կյանքը հետը տալիս ա, ո՞ւր մնա բանական մարդը. իրանք էլ մնացել էին մոլորված, ամա սարդարի հրամանն էր, չանեին, չտանեին, իրանց գլուխը կթռչեր յա աչքը դուս կգար։ Ճարըները կտրվեց, խոսքըմին արին, որ մորն էլ աղջկա հետ տանին բերդը, սարդարի դուռը, իրանց պարտքի տակիցը դուս գան, ետո ինչ կուզենան, անեն։ Նոքարներին հրամայեցին, որ ձիանները թամքեն, յարաղ-ասպաբ քցեցին, թուրըները կապեցին ու կամաց-կամաց մոտ էկան, որ մորն էլ, աղջկանն էլ վերցնեն, տանին։

Թագուհի՛ն, Թագուհի՛ն, աշխարքի աչք Թագուհի՛ն, երկնքի տակին, գետնի երեսին անթառամ ծաղիկ Թագուհի՛ն, դրախտ, մանիշակ, անգին, անհատ, աննման Թագուհի՛ն. ի՞նչ լեզու պետք է ըլի, որ նրա գովասանությունը պատմի, ի՞նչ աչք, որ նրա տեսքն ու կերպարանքը մեկ բանի նմանացնի։ Շարմաղ, լուսաթաթախ երեսը, որ արեգակի պես լիս էր տալիս ու վարդի պես փայլում, դառել էր սպիտակ քաթան, սառել, սփրթնել։ Էն երկնանման աչքերը, որ տեսնողի հոգին վառում, կրակում էին, ընկել էին խոր, փակվել, կուլ գնացել։ Թագուհի՛ն, ջիվան Թագուհի՛ն, մորը մեկ Թագուհի՛ն, որ հրեշտակի նման ում որ մեկ մտիկ էր տալիս, հոգին անմահական խնդությունով լցվում էր, սառել, փետացել, անշունչ, անլեզու մնացել էր գետնի վրա ընկած, երեսը երկինքը քցած. հենց գիտես, թե էլ էս աշխարքումը չի՛, հրեշտակաց մեջն ա համբարձել, դրախտումն ըլի իր անմեղությունը վայելում։ Նրա թուխ-թուխ ունքերը, նրա չալ-չալ աչքերը, նրա նռնահատ թշերը, նրա բարակ-բարակ, ղալամ քաշած պռոշները, նրա լուսեղեն ճակատը, նրա մարմար, նուրբ քիթը, նրա բլբուլի լեզուն, նրա ոսկեցնցուղ բուկը՝ բոլոր-բոլոր սառել, քարացել, պապանձվել էր։ Հենց հարամ ձեռը նրան առավ թե չէ, մեկ ա՜խն էր՝ նրա հոգին։ Քաշեց, թուլացավ, իրանից գնաց, ու մինչև դռան շեմը կբերեին, հավի պես մեկ էլ թրպրտաց, ու ձենը փորն ընկավ։ Շլինքը ծռվել, թուլացել, գլուխը շեմի էս կողմն էր մնացել կախ էլած, մարմինը՝ է՛ն կողմն ընկած։ Ոսկեթել մազերի կեսը մնացել էր բարձր, որ նրա անմեղ երեսն ու դոշը ծածկի, կեսը էնպես խճճված՝ գետնի վրա փռվել, քաշ էր ընկել։ Նազուկ ձեռների մեկը սրտի վրա էր թուլացած ընկած, մյուսը՝ հողի վրա, չորացած տարածված։ Դամարը ցամաքել, շունչը կտրվել, հոգին երկինքն էր վերացել։

Բաս ի՞նչ կըլեր, որ էսպես չէ՛ր էլել։ Մինչև էն հաղաղը նրա անկաջը մեկ թթու խոսք չէ՛ր լսել. նրա աչքը մեկ դառը օր չէ՛ր տեսել, նրա երեսը մեկ կոշտ գրից չէ՛ր էկել։ Վարդի պես ծաղկել, մանիշակի պես մեծացել էր։ Դեռ ոտը քարի չէ՛ր դիպել, դեռ մատը մեկ փուշ չէ՛ր մտել։ Տասնըհինգ տարին անց էր կացել, դեռ նրա անմեղ հոգին աշխարքիցս

մեկ բան չէ՛ր խաբար։ Նրա ընկեր աղջըկերքը դռներին, կտրներին էին ման գալիս, օր անցկացնում, նա ծունկը մոր ծնկանը կպցրած՝ յա կար էր անում, յա քարգահ, յա իրանց տանն ու դռանն էր մտիկ տալիս, յա իրանց մալին, ապրանքին աչք ածում։ Ղուշը գլխի վրովը թռչելիս՝ կարմրատակած, շունչը կտրած, լեղապատառ տուն էր ընկնում, որ իր շվաքն էլա մեկ օքմին չտեսնի։ Մոր մեկ մատը փուշ ըլելիս յա մեկ տեղը ցավելիս՝ ուզում էր հոգին հանի, իրան տա. էլ քար, էլ խոտ չէր մնում, որ նա վրեն չի՛ չոքի ու աստծու ողորմությունը խնդրի։ Աղքատ տեսնելիս՝ բերնի թիքեն հանում, իրան էր տալիս, որ նրան օրհնի, նրանց արևշատություն խնդրի։ Բաղն էլ է՛ն ժամանակն էր գնում, որ լիսն ու մութը դեռ չէ՛ր բաժանված ըլում։ Բաղիցն էլ է՛ն վախտն էր տուն գալիս, որ մութը գետինն առած, ոտը քաշված, խաղաղված էր ըլում։ Ով ուզենար նրան տեսնի, յա ծառի, յա պատի տակի պետք էր տափ կենար, որ նրա սուրբ երեսը տեսներ, նրա աչքի լուսը հայիլ-մայիլ մնար։ Ծաղկըներն էլ, հենց իմանաս, նրա ոտի ձենն առնելիս՝ ուրախանում, ցնծում, բացվում, փչչում էին։ Ղշերն էլ նրա երեսը տեսնելիս, հենց բռնիր, նո՛ր հոգի էին առնում, գլխըները թևըների տակիցը բարձրացնում, ճխում, ճչում, ծլվլում, թևերին խփում, ծափ տալիս։ Ձեռը գառան գլուխը քսելիս յա շփելիս, հենց գիտես, թե է՛ս անմեղ հայվանն էլ էր իմանում, որ հրեշտակի ձեռք ա իրան դիպչում և ո՛չ մարդի։ Մի քիչ մոտիցը պակսելիս՝ ձենը աշխարք էր վերցնում, մարդի սիրտ էրում, է՛նպես էր բղղում, քար ու քոլ ընկնում։ Շատ անգամ նրա փափուկ ծնկան վրա էր քնում, նրա անուշահոտ, ազիզ ձեռիցն էր խոտ ուտում։

Ջայիր-չիմանի, մանիշակի վրա, վարդի, թթենու տակին յա քչքչան առվի մոտ որ բազի վախտ քնած չէր ըլում, հենց իմանաս, երկնքիցը լիս ա վեր էկել, ափնիքը հայլի դառել։ Էնպես քնած վախտին էր ըլում, որ մերը ուսուլով մոտանում էր՝ յա երեսն էրեսին դնում, յա գլուխը իր գոգը դնում, յա վրեն շոր քցում ու խաչակնքում, որ քունն առնի, դինջանա, յա թե չէ, որ վախտը գալիս էր, երեսին հով էր տալիս, նանիկ էր ասում, որ վեր կենա, իրիկնահովը, արեգակի մեր մտնիլը տեսնի, ու միասին պտուղ, ծաղիկ հավաքեն, գնան տուն։ Շատ անգամ վարդի փունջը մեկ ձեռին, մանիշակինը՝ մեկել, աչքը որ չէ՛ր բաց անում, հենց գիտես, սար, ձոր, ծառ, թուփ, խոտ, ծաղիկ նրան էին մաթ մնացել, նրա շունչն ըլեին ուզում, որ քաշեն, ծծեն, զորանան, դալարին։

Հովը մազերի վրա սլսլալիս, երեսին դիպչելիս էլ չէ՛ր ուզում, որ առաջ խաղա յա ետ գնա, հենց նրա գլխո՛վն էր պտտում, հենց նրա մազերի՛ հետ խաղում։ Վարդի վրա երեսը կռացնելիս, ուզում էր, որ բարձրանա,

նրա շունչը քաշի, նրա պատկերի գունը գողանա, որ դհա ավելի գեղեցիկ, դհա անուշահոտ երևի։ Բլբուլը նրա հոտն առնելիս իր վարդը մոռանում, նրան էր գովում, նրա վրեն էր իր սերը թափում, նրա համարթովն էրվում, խորովվում։ Շատ անգամ, ինքը ձեն հանելիս, յա ինքն իրան խաղ ասելիս, հենց իմանում էր, թե հրեշտակներն են իր հետ խոսում, իրան ձեն տալիս յա ձենը քաշում։ Առավոտյան ցողը, իրիկվան վերջի լիսը՝ մեկը նրան տեսնելիս ցնծալով վեր էր գալիս, որ նրա սուրբ երեսին նստի, մեկը ցավելով երեսն իրան էր քաշում, աչքը խփում, որ նա շուտով քուն մտնի, գիշերն անց կենա, որ առավոտն էլի գա, նրա տեսության արժանանա, նրա լուսովը հոգի առնի ու զվարճանա։ Քունը նրա աչքերին է՛նպես էր մոտանում, ինչպես մեկ սրբի՝ երկնային հրեշտակը։ Թևերն երեսին փռում, անմահական երազով նրան գրկում, գգվում, արթնացնում, էլ ետ իր գիրկը դնում։

Ա՜խ, ո՞ր մեկն ասեմ. նրա ամեն մեկ շարժմունքը, ամեն մեկ խոսքը, ամեն մեկ մտիկ տալը, ամեն մեկ աչքի ու պռոշի ժաժ գալը հրաշք էր։ Էն լուսակոլոլ աչքերը, էն խնկան ծաղիկ շրթունքը որ չէ՛ր բաց անում, մարդ ուզում էր ո՛չ ուտի, ո՛չ խմի, հենց նրան մտիկ տա, նրա սուրահի բոյին թամաշ անի, նրա ոտի տակին հոգին տա, նրա ձեռիցն իր մահն առնի՛։ Է՛ս երկնային հրեշտակը, է՛ս անմեղ գառն էր էս հաղաղին է՛ն գազանների ձեռին. ի՞նչ քարացած, ապառաժ սիրտ պետք է ըլի, որ նրան տեսնելիս կամ նրա պատմությունը լսելիս գլխին կրակ չի՛ վառվի։ Ո՞ր մեր էս հաղաղին թուրը չէ՛ր առնիլ ու իր ջիգյարը ցցիլ։ Ո՞ր հարևան կամ անցվորական նրա էն լուսեղեն երեսին նայելիս՝ աչքին չէ՛ր հուպ տալ, որ լացը գա, ու սիրտը հովանա։ Ամա մեր գեղական խեղճ խալխը էնքան էսպես բաներ տեսել ու լսել էին, որ արտասունքներն էլ էր ցամաքել, աչքների լիսն էլ էր հատել։

Հենց էն ա, ֆառաշները տեսնելով, որ մեր ու աղջիկ դարդի ձեռիցը նողղեցան ու էլ ձեն, շունչ չէին տալիս, լավ համարեցին, որ էսպես թուլացած՝ վերցնեն, էրկուսին էլ տանին, որ էլ շատ ինջըմիշ չըլին, չշարշարվին։ Երկուսը ձիու վրա նստել, էն ա, տեղ էին բաց անում, որ մեկը մորը խտտի, մյուսը աղջկանը առաջն առնի ու, էն ա, խաթրջամ էլած՝ միտք էին անում, թե իրանց բանը լավ գլուխ բերին, մեկ թուր պսպղաց, ֆառաշների մեկի գլուխը գետնի վրա ընկավ ու սկսեց ղվվլացնիլ, բլբլացնիլ ու պար գալ։ Դեռ սա ձենը չէ՛ր կտրել, որ մյուս ընկերինն էլ սրա հացը կերավ, սրա մոտ գնաց։

— Աղասի՛ ջան, մեր տունը քանդեցիր։ Աղասի՛, ձեռդ քեզ քաշի՛, քո խեղճ, հալևոր հորը խնայի՛. որդով, տանով տեղով եսիր կէերթանք.

մի՛ անիր, մի՛ քլիր, ջա՛նմ, գյո՛զմ. քո ջիվան ջանիդ էլա ղադր արա՛, տո՛, բեմուրվաթ։ Աստված, էս ի՞նչ զուլում էր, որ մեր գլխին էկավ։ Ո՛վ զինավոր սուրբ Գևորգ, ո՛վ սուրբ Կարապետ, դուք մեզ քոմակ արեք։ Տղե՛րք, կորե՛ք, կորե՛ք, որ ձեր իզն ու թոզը ըստեղ չէրևա։ Տո՛, մեկդ ու մեկդ հասե՛ք տանդրոջ մոտ, անկաչաբռնուկ տվե՛ք, ա՜յ նրա տունը չքանդվի, ինչ քանդվեց. գինին գլխին զահրըմար ըլի. աշխարքս արինը բռնել, ծով ա դառել, մեր ախմախ քեղխուդեքը նստել, քեֆ են անում. ա՜յ թե մարդ են, հա՛։ Տո՛, քեֆն էլ գլխըներին խռով կենա, խաչն ու ավետարանն էլ։ Տնաքանդնե՛ր, տո՛, մի աշխարքի դարդիցն էլ խաբար առե՛ք, է՜. ախր ի՞նչ եք տան չորս պատը ու գինու գավն ու թասը բռնել, լակում, տրաքում։ Տո՛, Վա՛րո, հասի՛, հասի՛, վազի՛, թև ա՛ռ, թռի՛. մարաքեն քանի կենում ա, չաղանում ա. հենց էս սհաթը կգան, մեզ կտանին, բերդը կածեն։ Աղասի՛, Աղասի՛, քառանաս ո՛չ, Աղասի՛. փախի՛ր, փախի՛ր, էդ շներիցը գլուխդ ա՛ռ, կորի՛ր, էդ ի՞նչ արիր, տնով քանդված. մեր դուռը շարեցիր, մեր տան հիմքը տակըվեր արիր, տո՛, բե՛մուրվաթ։

Բայց թոփ էլ տրաքեր, նաղրախանա էլ ածեին, Աղասին չէ՛ր իմանալ. ղորդ որ քառացել էր. էլ ո՛չ անկաչն էր իրանը, ո՛չ ջանը, ո՛չ աչքը, բայց խելքն ու ձեռը լավ իմանում էին, թե ի՞նչ բանի վրա են։ Արինը աչքերը կոխած՝ ռաշիդ երիտասարդը հենց էսպես բանի էր ման գալիս, որ իր ձեռի ղվաթը, իր թրի հունարը շհանց տա։ Ախր էլ ո՞ր օրվան համար են թուր կապում։ Ջիրիդատեղիցը վարավուրդ էր արել, որ աշխարքն իրարոցով դիպավ ու ձենը կտրեց։

— Տղե՛րք, էստում մեկ բան կա, գնա՛նք, մեր բարիկենդանը հարամ էլավ,— ասեց ու թռավ։

Հենց տեսան նրան գալիս, բնությունը իմանալով՝ հարիր տեղից ձեն տվին, ձեռով, գդակով արին, որ հեռանա. բայց շունչը բերնին դեմ էր առել, էնպես ձին չափ էր քցել. էլ մաջալ չէ՛ր անում, որ տեսնի՝ թվանքը լիքն ա երա՞բ, թե դատարկ։ Առյուծի պես ներս ընկավ հսկա երիտասարդը. ճամփին անկաչովն էր ընկել, թե ի՞նչ խաբար ա։ Երկուսի գլուխը սրբելեն ետև, մյուսներն ուզեցան, որ թուր հանեն, բայց քաջն Աղասի որ բերանը բաց չի՛ արեց՝

— Դժո՛խքի որդիք, ձեզ ո՞վ ա ղրկել էստեղ, ո՞ւմ վրա եք էդպես կատաղել։ Ասենք, թե հայը ձեն չի՛ հանում, պետք է նրան սաղ-սաղ ուտե՞ք։ Աչքըներիդ լիսը կթռցնեմ էս սհաթը, կորե՛ք, թե չէ ամեն մեկդ ճուտի պես առաջիս կթպրտա։ Քանի էս կուռը վրես ա, դուք էստեղանց թել չե՛ք կարող դուս տանիլ։

Որ չասեց ու մեկի էլ ուսը վեր բերեց, մյուսի աղիքը վեր ածեց, էն

վեցը տեսան, որ ճար չկա, ձիանը նի էլան ու ընչանք բերդը մեկ գնացին։

— Արի՛, երեսիդ մեռնիմ, Թա՛գուհի ջան, աչքդ բա՛ց արա, աչքերիդ ղուրբան. Աղասին մեռած, ոսկորները փտած, հող դառած պետք է ըլեին, որ քո սիրուն մազին մեկն էլա մատով տար։ Վա՜յ իմ աչքին, իմ արևին, ինչպես փետացել, սառել ա։ Թա՛գուհի ջան, քո ջանին ղուրբան. ա՛ռ, հոգիս ա՛ռ, թո՛ղ ես մեռնիմ, դու կենդանացի՛ր և քո խեղճ մոր սիրտը մի՛ դուս կտրիր, մի՛ դուս ճոթռիր, երեսս ոտիդ տակը,— ասում էր քնքուշ երիտասարդը, լալիս, գլխին տալիս։ Արտասունքը աչքերիցը քուլա-քուլա էր վեր թափում։

Գնացին ջուր բերելու։ Նա ձեռները խաչել, ինքն էլ փետացել, մնացել էր կանգնած։ Մոտանար, սիրտ չէ՛ր անում, խատել, ձեռները ճմռել, անկաչումը ձեն տալ, երեսին ձեռը խփել, բոլո՛ր, բոլոր չէ՛ր կարելի, չունքի Թագուհին դեռ կույս էր, ուրիշ մարդի աղջիկ։ Մորն էր մտիկ անում, մերը ձեն չէ՛ր տալիս. դուրսն էր նայում, սատկած լաշերի դժոխային կերպարանքն էին աչքովն ընկնում։ Էլ ինս, ջինս, խսան, աղամարդի չէր երևում, ամենն էլ փախել, սարերով-ձորերով էին ընկել, որ իրանց գլուխը պրծացնեն։ Շների վնգվնգալն ու յա կոնձկոնձալը, աքլորի ու հավի կռկռալը, հենց իմանաս, թե նրան ասում ըլեին ցավելով.

— Ինչ արի՛ր, արի՛ր. գլուխդ ա՛ռ, կորի՛. գնա՛ Փամբակ, Թիֆլիզ, ասի հողը։ էս երկրումը քո արևը մեր մտավ, քո օրը խավարեցավ, քո ճրագը հանգավ։ Թոփի բերանն ա՝ քո ջանը։ Քանի ոտքը խաղաղ ա, քանի չիլավդ ձեռիդ ա, քանի բերնումդ շունչ կա, ոտումդ՝ թաղաթ, փախի՛ր, գլխիդ ճարը տե՛ս։ Մնաս էլ, ձեր տունը բոլոր սուրը կքաշեն, գնաս էլ՝ էն բաբաթ. քեզ էլա ճա՛ր արա։ Քո հերը քեզանից ղայրու էլ զավակ չունի. նրա օջախի ծուխը մի՛ կտրիր, ձեռներդ արնոտ արիր. սարդարի ֆառաշներին ես սպանել, տո՛, ա՛նիրավ, մեկ միտք արա՛ է՛լ։ Դրանց արինը քեզանից կուզեն. դրանց տերերը հիմիկ կատաղել, փրփրել, իրանց միսն ուտում կըլին, ի՞նչ ես փետացել, կանգնել. էլ ո՞ր օրին ես մտիկ տալիս։ Քյահլան ձին՝ տակիդ, յարաղ-ասպաբը՝ վրեդ. մեկ կտոր հաց ո՞րտեղ ըլի, որ չճարես։

7

Հենց իմանաս՝ դժոխքն առաջին բաց էր էլել։ Հազար գլխանի դիվան ատամներ ղրճտացնում, զարհուրելի ձևով խնդում, ծիծաղում, ժրնգժրնգացնում, չանգերը սրում, հազրում, բոցն ու կրակը չաղ ըլեին անում, որ նրան էրեն, խորովեն, կտրատեն, թիքա-թիքա անեն, իրանց փայ շինեն։ Հազար կպրե կարաս, հազար օձ, կարիճ՝ բերանները բաց, նրան ըլեին սպասում, որ քրքրեն, կուլ տան, մարսեն։ Դեռ աչքը էս սարսափելի քնիցը չբաց արած՝ է՛նպես էր երևում նրան, թե սարդարի ջալլաթները (դահիճ) կռները վեր քաշած, արինն աչքըները կոխած, թրերը սրած՝ գալիս էին, որ իրան տանեին։ Թոփչին թոփն էր սրբում, հազրում. գյուլլաչին գյուլլեն ջոկում, մոտ բերում։ Հեր, մեր, ազգական, էրլու, անցվորական՝ հեռու տեղից գոռում, հարայ ըլեին տալիս, գլխըներին, ծնկներին խփում, ծեծվում, ջարդվում, իրան անումը տալիս ու սուգ ըլեին անում։

— Ա՛ղասի ջան, մեկ թուր էլ ի՛նձ խփի, ի՛նձ... Վա՜յ իմ օրիս, արևիս, վա՜յ... Տունս բրիշակ էլավ... Բալա ջա՛ն... հոգի ջա՛ն... իմ երկի՛նք, իմ գետի՛նք... իմ հրեշտա՛կ... վա՜յ... ամա՜ն... աչքս դուս էկա՛վ... պտուղս խավարեցա՛վ... Թո՛ղ քո ձեռն ինձ սպանի... որդի ջա՛ն... թո՛ղ քո ոտիդ տակին հոգիս տամ... ախպեր ջա՛ն... թո՛ղ քո՛ ձեռիցը մահս առնիմ... ջա՛նըմ ջան... Սիպտակ մազս քեզ փի՛րնդաղ, Ա՛ղասի ջան. քանի աչքումս լիս կա, քանի բերնումս՝ շունչ, ոտդ բերնիս դի՛ր, թուրդ սիրտս խրի՛ր. տո՛ւր ինձ մահ, տո՛ւր, թո՛ղ գնա՛մ, կորչի՛մ, հետո ինչ կուզես, է՛ն արա, աչքիս լիսը հանի՛ր... ի՛մ երկնքի բարեբար որդի, ի՛մ սար... ի՛մ աստված...

Է՛սպես էր մեկ ծեր մարդ ընկել Աղասու ոտքը, գլուխը գետնին ծեծում, մազերը ճպռում ու վախտ-վախտ Աղասու ոտներովը փաթաթվում։

Սի՛րելի կարդացողք, էլ ի՞նչ ասիլ հարկավոր ա։ Դուք էլ իմանում էք, որ էս խեղճ, տարաբախտ հալևորը Աղասու ողորմելի հերն էր։ Հենց խաբար տանողը որ լեղապատառ, լեզուն կպած տուն չընկավ ու գլուխը ծեծելով ձեն չի՛ տվեց՝

— Տո՛, ձեր տունը չքանդվի, գեղը կոխեցին, տարան. Աքոյենց աղչիկը քաշեցին. Աղասին՝ արնի միջումը ծլծլում, ֆառաշները կրակ են քցել, խալխն էրում։

Ինչպես որ մեկ ամպի տրաքոց կամ սաստիկ թոփի ձեն մեկ ձորի խփում, քարափները դղրդում, թնդում, մարդի անկաջները խլանում, մի քիչ ժամանակ շշմում ա, ու գլուխդ սկսում ա դժժալ, պտիտ գալ, աչքերդ սևանում, մութ ու խավար քեզ կոխում, խելքդ թռչում, մնում ես քարի պես կանգնած, ոտքդ ու ձեռքդ թուլանում, ջանդ սրսռում, լեզուդ կպչում ա, էլ չէ՛ս իմանում, թե ո՞ւր ես՝ երկրո՞ւմը, թե դժոխքումը,— է՛ս հանգին Աղասու հոր ոսկերքը սարսափեցան, է՛ս հանգին ուշ ու միտքը թռավ, մնաց սառած, փետացած ու աչքերը չռած՝ քցեց է՛ս կողմն, է՛ն կողմը։ Ծերությունը ջանն առած՝ մի ոտը հողի երեսին, մյուսը գերեզմանումը, աշխարքի վրա է՛ն մեկ պտուղն ուներ, է՛ն մեկ զավակը։ Նրան մտիկ տա-

լիս՝ հենց իմանում էր, թե աշխարքի թագավորն էլ ա ինքը, շահն էլ։ Նրան ջիրիդ խաղալիս տեսնելիս՝ հենց իմանում էր, թե ոտը գետնիցը կտրվել ա, թե առել, թռչում. ծերությունն էլ էր մոռանում, մահն էլ, դժոխքն էլ, արքայությունն էլ։ Է՛նպես էր կարծում, թե նո՛ր ա ծնվել, ու ուրախությունիցը ճխում, ճչում, ոտին-գլխին էր անում ու, ինչպես ութ տարեկան երեխա, խնդում, ծիծաղում։ Նրա անունը որ տալիս էին, լերդի ծերը խաղում էր, սիրտն ուզում էր պատռի։ Ամեն մեկ Նրա աչքերին պաչ անելիս, ամեն մեկ նրան խտիտն առնելիս՝ հենց գիտում էր, լիս ա վեր գալիս գլխին, պատերը վարդ են դառել, դաշտ ու սար՝ ծաղիկ։ Նրա ճակատին մտիկ տալիս, նրա բոյն ու սուրաթը աչքովն ընկնելիս՝ նրա համար նոր արեգակ էր բացվում, ուզում էր սիրտը ճղի ու նրան մեջը դնի։

Էս հասակը հասել էր նա, նրան մեկ չոռ չէ՛ր ասել, չէ՛ր էլ ասել, թե աչքիդ վերևն ունք կա, յա ծուխը դեպի քեզ։ Ջանն էլ որ ուզեր, չէ՛ր խնայիլ նրան. հոգին էլ որ հաներ, ձեն չէ՛ր տալ նրան. գլուխը պտի ծախեր ու նրա մուրազը կատարեր։ Խանի, բեկի մոտ գնալիս՝ նա իր որդուն էնպես էր զարդարած դուս բերում, որ ամենի աչքը մնում էր վրեն սառած։ Սարդարն էլ էր տեսել նրա տղի կտրճությունը, նրա քաջությունն ու ձեռի հունարը։ Շատ անգամ, աղիզ օր ըլելիս, ինչքան ջիրիդ խաղացողներ կային, պատածակն էր կոխում, հետ ածում։ Փահլևանները հո, նրա անունը լսելիս, զրզնդում, դող էին ընկնում։ Նա մեյդան դուս գալիս՝ աշխարքի բերանը բաց էր անում։ Մեկն էլա սիրտ չէ՛ր անում, որ նրան մոտենա։ Թերդումը շատ անգամ, հանաքըլվեր, ոչխարի տեղ եզ, ուղտ էին բերում, որ բալքի կարենան նրան մեկ օր ամաչացնիլ, շատ անգամ թուրը փոխում էին, որ բալքի չի՛ կտրի, ու մնա ամոթով, բայց քաջ երիտասարդը մեկ խփելով եզան կամ ուղտի գլուխը է՛ս կողմն էր թռչում, լաշն՝ է՛ն։

— Հայի՛ֆ, հայի՛ֆ, որ հայ ես,— ասում էր սարդարը շատ անգամ, գլուխը պատելով,— թե որ թուրք էիր էլել, խանություն պետք էր քեզ տված։

Կռվի միջումը, էն գյուլլի ու կրակի թեժ ժամանակին, նետի պես արձակվում, ընկնում էր ղոնշունի գյուռ տեղը, ասլանի պես որին էս կողմը, որին էն կողմը քցում, ջախըբուրդ, թիքա-թիքա անում ու օսմանցվի մազերիցը բռնած, քաշ-քաշ անելով՝ հետը սուրութմիշ բերում, սարդարի առաջին կանգնացնում։

— Ասլա՛ն Բալասի (առյուծի ճուտ),— սարդարը ձեն էր տալիս ու ճակատին պաչ անում,— ի՞նչ կըլեր, որ քեզանից մեկ տասն էլ ունենայի. քո մոր մեջքը կոտրվի, ընչի՞ չէր քեզանից մեկ չորսն էլ բերում. աֆա՛րիմ, բա՛րաքյալլա, էրեսդ պարզ կենա՛, քեզանից շա՛տ ունենամ։

Ցորս գնալիս՝ առաջ նրա գյուղեն պետք է վեր քցեր։ Խաներ, բեկեր մնացել էին նրա սուրաթի, նրա լեն թիկունքի վրա զարմացած, հիացած։ Շատ անգամ, հանաքըլվեր, խոսք էին քցում, թե որ թուրքանա, բեկություն, խանություն կտան նրան։ Մուլք էին խոստանում, ըռհաթ, մալ, դովլաթ, աղջիկ էին ասում՝ կտանք. բայց նա է՛ն կաթը չէ՛ր կերել, որ իր սուրբ հավատն ուրանա, փուչ աշխարքիս մալին, դովլաթին թամահ անի։

— Իմ ցամաք հացը լավ աշեմ ինձ համար, քանց ձեր ղաբլու փլավը։ Իմ տերտերի մեկ մուռտառ մազը հազար ձեր մոլլի ու ախունդի հետ չե՛մ փոխիլ։ Գութան վարեմ իմ հավատովը, ցանք անեմ, բահի տամ լա՛վ ա, քանց խան, բեկ դառնամ, աշխարքի տեր ըլիմ ու իմ օրենքն ուրանամ։

Թուրը սարդարն էր բաշխել, թվանքը՝ Ջավաթ խանը, ձին՝ Նաղի խանը։ Նոր էլ Հայոց սարվազի նայիբությունը նրան էին տվել։ Ա՛խ, ո՞րն ասեմ. մեկ Աղասի էր, մեկ քյուլ Երևան. ո՛վ ասես՝ նրա անումովն էր օրթում ուտում. ո՛վ ասես՝ նրա արևովն էր խնդում, նրա գլխովն էր ուզում պտիտ գա։

— Էս ո՞ւր եմ... քնա՞ծ եմ, զարթո՞ւն եմ, երազո՞ւմ եմ. օ՜հ, օ՜հ, օ՜հ... արյան ծովն է՞ս ա, որ ասում են,— սկսեց ողորմելի ծերունին էսպես իրան-իրան խոսալ, երբ առաջի տաքությունն անց կացավ, ու թըմբրություն էկավ վրեն։— Դժոխքի տարտարոսն է՞ս ա, որ պատմում են... Իսրի պուճախն է՞ն ա... Վա՜յ ինձ, վա՜յ ինձ... վա՜յ ինձ... Միտս սըսռում ա... աչքս խավարում ա... չանգալ ա, որ հավրում են... մանգաղ ա, որ սրում... շիշ ա, որ կայծակին ա տալիս... Ա՛ստված, քո փառքդ շա՜տ... էլ ընչի՞ մեզ ստեղծեցիր... որ էս կրակի մեջը պետք է էրեիր... Երանի՜ նրան, որ մոր փորիցը դուս չի՛ էկել... էս ի՞նչ եմ տեսնում, արա՛րիչ աստված... Հրե՛ն, խորովում են... հրե՛ն, միսը կտրատում են... Ամա՜ն... ամա՜ն... ամա՜ն... Գլուխ առե՛ք, կորե՛ք... Շատ գինի խմողի փորն են ճղում... փիս խոսողի, բամբասողի, խաբարբզանի... տուն քանդողի լեզուն են բողազիցը դուս ճոթռում, էրում, տապակում... Շատ փող սիրողի ջանին մանեթներ ա, որ կրակիցը հանում են, կպցնում... Նաշարք ուտողի միսը քալփաթնով պոկում են, բերանն են տալիս... Վատ ճամփի ման էկողի, գողի, բոզի գլխներին հալած արճիճ են ածում... տաքացրած շամփրներ սրտները կոխում ու էրում, փոթոթում... Մեկ տեղ վնգվնգում են, մեկ տեղ թնգթնգում... Մեկ տեղ վլվլում են, մեկ տեղ թլթլում... Մեկի էրեսիցը քրտնքի տեղ կայծակ ա վեր թափում... մեկի բերնիցը կրակ, բոց ա դուս գալիս, իրան էրում... Կայծակը մեկ կողմիցն ա խփում, ամպը մյուս տեղից գոռում... Երկինք, աստղեր, արեգակ, լուսին՝ կորել, խա-

վարել են... Էնպես պատկերներ են առաջս գալիս, որ մեկի լեզուն կրակած թուր ա, մյուսի ձեռը՝ օձ. մեկի աչքիցը կրակ ա թափում, մեկի քթիցըն ծուխ վեր ըլում... Ա՛ստված, էս ո՞ւր տարան ինձ... էս ով բերեց ինձ էստեղ... Աշխարքի վերջը հո չի՞ հասել... էրեկ չէ՞ր, որ էլով, գյունով նըստած՝ քեֆ էինք անում... Քոմակ արե՛ք, օգնեցե՛ք, աստծու խաթեր, ի սե՛րը Քրիստոսի. հրես գալիս են, որ ինձ էլ տանեն... Աղա՛սի ջան, ո՞ւր ես. էդ ղոչաղ ձեռդ մի հասցրո՛ւ, է՜, անումի՛դ մեռնիմ... էլ քո հորը ո՞ր օրը պետք է քոմակ անես...

Որդու անումը անկաջն ընկավ թե չէ, հենց բռնես՝ կայծակը խփեց. ջանը մեկ թափ տվեց, սասանմիշ էլավ, աչքը բաց արեց, տեսավ, որ բոլորը մտաց ցնորք էր. ո՛չ դժոխք կար, ո՛չ կրակ. էլի էն սուփրեն էր, էլի էն հացը, բայց ղոնաղների շատը հեռացել, տերտերը ավետարանը նրա գլխին էր դրել, աչքը երկինքը քցել, սաղմոս էր ասում, աղոթք էր անում, վրեն խաչ հանում ու մարմանդ արտասունքը սրբում, հեկեկում։

— Տե՛րտեր ջա՛ն, դո՞ւ ես. ձեռդ մի տո՛ւր, համբուրեմ, աչի՛դ մատաղ գնամ։ Ուխա՜յ... Սիրտս հովացավ, ջանս տեղն ընկավ. հլա մեկ քանի տարի էլ ումուդ ունիմ, որ քո աղոթքովն ապրիմ։ Էս ի՞նչ էր, տո՛... ուզում էին ինձ սաղ-սաղ դժոխքը տանեն... Դեռ Աղասուս էրեսը չպաչած, դեռ կնկանս ու հարսիս օրհնություն չտված ո՞ւր կէրթամ... Տղերքն ո՞ւր են, Վիրապն ո՞ւր ա, խի՞ստ եք ձենըներդ կտրել, հա՜յ յա՛սսարներ. էլի ֆռասանդ են ճարել, ինձ քնած թողել, իրանք դուս գնացել, որ յալլի տան (պար գան)։ Տեսնո՞ւմ ես, էն հարամզադեքն ի՞նչ են բերում իմ գլո՞ւխը։ Ասենք՝ ծերացել եմ, ոտներս չի՛ պար գան, հո մեկ թեերս էլա կբարձրացնե՞մ, ծա՞փ կտամ, հետըները քե՞ֆ կանեմ։ Ծերության երեսին նալաթ. ո՛վ ասես՝ ծերի դնչին էլ չի՛ մտիկ տալիս։ Գինի ածա՛, խմե՛նք, տերտեր ջա՛ն։ Դժոխքն էլ քանդվի, աշխարքն էլ, մենք, քանի աչքըներումս լիս կա, քեֆ անենք։

Ծեր մարդը, ղորդ ա, ցավի է՛նքան չի՛ դիմանալ, չունքի կենդանական զորությունը հատած է, էլ է՛ն արինը, էլ է՛ն սիրտը չունի, ամա ցավն էլ շուտով կմոռանա, չունքի ջիգյարն էնքան տաք չի՛, միտքն էն կարողությունը չո՛ւնի, որ բանը երկար պահի։ Առաջի բոցն որ անց կացավ, թմբրությունիցը զգաստացավ, էլ մտքումը բան չէ՛ր մնացել։ Հենց իմանում էր, թե գինու զորությունն ա նրան հաղթել, թուլացրել, կրակի տաքությունը գլխին դիպել, քնացրել։ Աչքը որ բաց չարեց, էն սարսափելի երազն էլ, որ տեսել էր, հենց իմանում էր ողորմելին, թե նո՛ր ա էկել աշխարք, նո՛ր ա ծնել, ուզում էր, որ ինչ ունի-չունի տա՛, թաք ըլի մեկ քանի տարի էլ ումըր ունենա, աշխարքի սերը վայելի։

Էնպես, ինչպես որ մեկ մարդ մեկ սարսափելի երազ տեսնի՝ իրան սպանում ըլին, թշնամիք ըլին չորս կողմը փակած, որ գլուխը կտրեն, ի՞նչ սրտով տեղիցը վե՛ր կթռչի ու էրեսին խաչ կհանի, որ էլի իրանց տանն ա, իր յորղան-դոշակի միջին պառկած, է՛ս հանգին էր հենց նրա հալը։ Ուզում էր, որ դուս թռչի, պատեր, դռներ լիզի, հարս, էրեխա, դոստ, դուշման դոշին քաշի, համբուրի, սիրի, հոգին նրանց տա, որ քանի էս աշխարքումն են, իրար հետ լավ ապրին, իրար սիրեն, աշխարքի բարին վայելեն, որ էլ էն աշխարքումը մուրազները պակաս չմնա, էլ աչքըները էս կողմը չունենան։ Բաղ, հանդ, սար, ձոր, տուն, ապրանք, մալ, դովլաթ, ծառ, ծաղիկ՝ որ միտքն էր ընկնում, որ տեսնում էր, թե էլի իր ձեռին են, էլի բաց աչքով նրանց մտիկ էր տալիս, էլի նրանց հոտն ու համն էր առնում, ուզում էր որ քարերն էլ լիզի սրտի սիրուն, հողն էլ։ Ուզում էր բոլորի առաջին չոքի, ծունդր դնի, մատաղ անի։ Իր օրումը էն սրտով ժամ չէ՛ր մտած, իր օրումը էնպես ջերմեռանդ աղոթք չէ՛ր արած, էրեսին էնպես հավատով խաչ չէ՛ր հանած, տերտերի ձեռն էնպես տաք-տաք չէ՛ր համբուրած, երկնքին, գետնին, աշխարքին էնպես քաղցր աչքով չէ՛ր մտիկ տված, էնպես հոգին չէ՛ր փառավորված, ինչպես էս սհաթին։ Հենց գիտում էր, թե աշխարքս դրախտ ա, մարդիկը հրեշտակ են, էլ մեկ վատ միտք, մեկ փիս խորհուրդ նրա սրտումը չէին մնացել։ Էլ ո՞վ կտար նրա մտքումը բարկություն, չարություն, նախանձ, ատելություն, չկամություն, բախլություն. բոլորը, բոլորը ջնջվել, փչացել էին։ Հիմիկ էր իմանում, թե ժամ գնալն ի՞նչ ա, աղոթքն՝ ընչի՞ համար, պատարագի զորությունն՝ ի՞նչ։

Արա՛րիչ իմ, մարդ որ մտածի, թե քանի՞ օր, քանի՞ տարի կյանք ունինք, թե աստված մեզ ստեղծել ա, որ օր քաշենք, իր բարությունը վայելենք, թե մեր աչքն ա՝ մեկ բուռը հողը, մեր տեղն ա՝ երկու գազ կամ ոտնափոխ գերեզմանը, թե մեր առաջին էլ կա էն օրը, որ է՛ս հիանալի երկնքի պայծառ դեմը, է՛ս սիրուն երկրի ծաղկազարդ սարերն ու ձորերը մեր աչքիցը պետք է փակվին, խոր, սառը, մութը գետնի տակին մսըներս՝ որդունք, ոսկորներս փոշի պետք է դառնան, ու ո՞վ ա խաբար, թե ո՞ր աթրաֆի տակն, ո՞ր երկրի պուճախն ընկնի, էլի ասում եմ, ու աչքերիցս արտասունքը թափում ա, ջանս փշաքաղ ըլում։ Որ մտածենք, թե է՛ս անկաջը, որ չար բանի էնպես քաղցր դեմ ենք անում, մեկ օր պետք է խլանա, է՛ս աչքը, որ չի՛ ուզում, թե ուրշի աչքումն էլ փոքր լիս տեսնի, մեկ օր պետք է քոռանա, կիրանա, փչվի, է՛ս լեզուն, որ օձի պես օրը հազարին կծում ու յաղու ա տալիս, մեկ օր պետք է պապանձվի, չորանա, քըրքըրվի ու օրթունքի կերակուր դառնա, բա՛ս էլ չարություն մեր մտքովն

ա՞նց կկենա։ Բաս չե՞նք ուզենալ, որ ամենին պաշտենք, պատվենք, սրբի տեղ գլխներովը պտիտ գանք։

Աչքըներս սովորել ա, սիրտըներս սառել, մտքըներս քարացել։ Ժամ որ գնում ենք, հենց իմանում ենք, թե, էն ա, ամեն բանից պրծանք, պարտքըներս տվինք, որ մեկ քանի խաչ հանեցինք էրեսներիս, մեկ քանի ծունդր դրինք, պատարագի էրես տեսանք, պասըներս բաց արինք, սրբություն առանք։ Ինչ ասում են, մեզ համար մեռած ա, մեզ չի՛ ազդում, չունքի մեր սրտի բառը չի՛, մեր լեզվի խոսքը։ Ուրըշներն ասում են, մենք էլ անկաջներս կախ արած, աչքըներս ցցած՝ լսենք-չլսենք, տեսնինք-չտեսնինք, ե՞րբ ա մեր սիրտը մեկ օր վառվում, որ իմանանք, թե էս ի՞նչ հրաշք ա, որ աստված ամենաբարին մեզ համար ստեղծել ա, մենք ի՞նչ ենք, որ մեր ասած գոհությունը, փառաբանությունը, ծունրը, երկրպագությունը աստծու սուրբ առաջին ի՞նչ ըլի։ Պետք է մտածենք՝ ո՞վ ա աղքատ, որ նրան օգնենք. ո՞վ ա հիվանդ, որ նրան մխիթարենք. ո՞ւմ են զրկում, գնանք, նրան թափենք։ Ո՞ւմ սիրտը նեղացրինք, գնանք, էլ ետ հաշտվինք։ Թե սիրտըներս մաղձով, թունով, հազար մեկ դառնությունով լիքը մտնում ենք, լիքը դուս գալիս, էլ ի՞նչ օգուտ մեզ։ Հենց պետք է մե՞ռնինք, որ սիրտըներս թամուզանա՞, հենց պետք է դժոխքի էրեսը տե՞սնինք, որ աշխարքիս համն իմանա՞նք, հենց պետք է հո՞ղը մտնինք, որ ձեռն ածենք, թե, երա՛բ, մեկ իսան կքթնվի՞, որ էրեսը տեսնինք, լեզվըներս նրանց լեզվին առնի, ականջներս նրանց ձենն իմանա՞։

Ա՜խ, մտածի՛ր, թե որ հնար ըլեր՝ մեռած վախտդ գերեզմանիդ տակիցը դուս գայիր, էլի է՛ն խելքը, է՛ն զորությունն ունենայիր, որ հիմիկ ունիս, չէի՞ր ուզիլ էն մարդի ոտը համբուրիլ, որ գերեզմանիդ մոտովն անց կացավ։ Չէ՞իր ուզիլ էն մարդին խտտես, արտասունքով էրեսը լվանաս, էրեսն էրեսիդ կպցնես, բերանը՝ բերնին, փարվիս, էլ դոշիցը պոկ չի՛ գաս, որ քեզ մեկ «Աստված հոգին լուսավորի՛» ասեց կամ գերեզմանիդ վրեն մոմ վառեց։ Չէ՞իր ուզիլ, որ է՛ն հողն էլ ջուր անես, խմես, որ քո սիրուն աչքերդ ծածկել էր, քո ազնիվ պատկերը փչացրել, քո անույշ լեզուն, քո քաղցր շունչը բռնել, պապանձացրել, է՛ն քարն էլ պաշտես, որ քեզ ղայիմ բռնած ուներ։ Բաս հըմիկ ի՞նչ ա էլել, որ խելքդ՝ վրեդ, սիրտդ՝ փորումդ, միտքդ՝ գլխիդ, էդպես բաներ չե՞ս մտածում։ Ա՜խ, սիրելի, երանի թե էս սհաթին իմ սրտումը ըլեիր ու իմանայիր, թե ի՞նչ ծով ա պտիտ գալիս սրտիս միջումը։ Ձեր էրեսներիցը մեկ օր պետք է զրկվիմ, ձեր քաղցր լեզուն ու ձենը մեկ օր պետք է չլսեմ, ձեր ազնիվ երեսը մեկ օր պետք է չտեսնիմ, հոգվույս սի՛րելիք, բա՛րեկամք, սի՛րեկանք, դո՛ստ, ը՛նկերք, իմ բոլոր պատկերակից մարդիկ։ Դուք ինձ գերեզմանը կդնեք,

դուք իմ հոգուս ողորմի կտաք, դուք իմ էրեսիս հող կքցեք. կըլի, թե բազըմի սիրտը մրմնջա, կըլի, թե բազիմն էլ մեկ կաթ արտասունքի ինձ արժանի համարի. բայց, ա՜խ, լեզուս պապանձվում ա, որ միտք եմ անում, ձեռներս թուլանում... Ա՜խ, մեկ դարտակ շնորհակալություն էլա իմ բերնիցը չե՛ք կարող լսիլ։ Էլ ի՞նչ եմ անում դժոխքը։ Քանց էս էլ մեծ դժոխք ո՞րը կըլի, որ ձեզանից հեռանամ, ձեր խոսքը չիմանամ, ձեր էրեսը չտեսնիմ։

Էս տեսակ մտածմունք էին մեր խեղճ հալևորի ուշ ու միտքը բռնել, գրավել։ Ուզում էր տերտերի փեշերն էլ համբուրի. էրեսին էր քսում, աչքերին էր քսում, նրա ձեռը իր ծոցն էր տանում յա բերնին էր դնում ու հոտ քաշում։ Նաչար քահանեն մնացել էր մաթալ. թե աչքին էր հուպ տալիս, բերնիցն ու քթիցն էր ծուխ դուս գալիս. թե ձեռը բերնին էր դնում, աչքերն էին իրանց աղի ծովը բաց թողում։ Ասեր, ինչ անց էր կացե՛լ... վախում էր, թե ողորմելի ծերը գնա, էլ ետ չի՛ գա. թե չէ՛ր ասում, ի՞նչպես կմնար բանը թաքուն, աշխարքը դմբդմբում էր։ Բալքի թե որդին մեռներ, ու հոր աչքը մնար կարոտ, որ մեկ էրեսն էլա տեսնի։ Ի՞նչ աներ, աչքը մնացել էր դռանը. ինքը ղիմիշ չէ՛ր անում, որ ջրատար հալևորի էլած հոգին իր ձեռին դուս գա. սիրտը քրքրվում էր, աղքըները կտրատվում էին, մնացել էր էրկու սրի արանքում. գվորը շարժում էր, իրան էր կտրում։

— Օհանե՛ս ջան, ո՛րդի, վե՛ր կաց, մի քիչ գնանք դուս, մա՛ն գանք, էրեսներիս հով դիպչի, ինչ ենք տան պուճախը բռնել, նստել։ Օրը տաքացել ա, հավեն կոտրել. գնա՛նք, աստծու էրեսն էլ մի տեսնինք,— գեջզանգեչ բերանը բաց արեց էրվելով աստվածահոգի քահանեն ու տանուտերի գլխին, միրքին պաչ անելով՝ ուզում էր մեկ մհանով վեր կացնի, որ բալքի թե դուս գնալիս՝ ձենն անկաջն ընկնի, չիմանա, թե ի՞նչ խաբար ա, ուրըշների հետ խառնվի, գնա, իրան աչքովը տեսնի, չունքի որ անկաջի լսածն ուրիշ ա, աչքի տեսածն՝ ուրիշ, ու քանի ցավը հեռու ա, ավելի ա քյար անում, բայց երբ առաջներիս ա, մնում ենք թմբրած, մինչև յարեն իրան-իրան սկսում ա կամաց-կամաց սպլթալ, մրմնջալ ու ետո սաղանալ։

— Էս մեկ թասն էլ խմե՛նք, տերտեր ջա՛ն, ետո ո՞ւր տանում ես, տա՛ր ինձ. այսուհետև քո եսիրն եմ, քո շունն եմ. որ գլուխս կոխես էլ, ձեն չե՛մ տալ։ Ախր Աղասուն էլ էսօր, սաղ օրը չե՛մ տեսել. առավոտը տանիցը դուս ա գնացել, չի՛ էկել. բաս նրա ջիրիդ խաղալը չի՞ պետք է տեսնիմ, բաս նրա աչքերին չի՞ պիտի պաչ անեմ։ Առանց նրան կես սհաթ չե՛մ կարալ ապրիլ։ Գնա՛նք, ա՛չքիս վրա, կենդանություն, աստված կարգիդ հաստատ պահի։

Հենց ասեց՝ «Աղա՛սի ջան, գյո՛զ բալասի (աչքի որդի), էս խմում եմ քո արևադաղին, արևի՛դ մեռնիմ...», հենց բռնես՝ մեկ թոփի գյուլլա տրաքեց, դուռն ու փանջարեն ջախըջուրդ արեց, դուզ ճակատի մեջտեղին դիպավ, ղուղն ու բիբինը տաղըթմիշ արավ, է՛նպես քամակի վրա գետնին դիպավ մաշված, չորացած հալևորը ու մնաց մորթած ոչխարի պես սուսը-սասը կտրած, ընկած հենց է՛ն սհաթին, որ վեր էր կացել, գդակն ուզում էր գլխին դնի, փետը ձեռն առնի, որ դուս գնա։

— Աղասին ո՞ւր ա... Աղա՛ ջան... Աղասուն տարա՛ն... գլխի՛ս տեր... տներս քանդեցի՛ն... Աղա՛ ջան... օջա՛խդ խավարացրի՛ն... իմ սա՛ր ջան... դո՛ւռդ փակեցին, ի՛մ գլուխ... Աղա՛... ղա... ղա... սի... Աղա՛սի, Աղա՛սի, Աղա՛սի, Աղա՛սի... հրես էկա՜ն, հրես տանո՜ւմ են... ձեռները կապեցին... ոտները բխով դրին... վա՜յ... վա՜յ... վա՜յ... աչքս փորեցին... ո՞ւմ էի մեկ չոռ ասել, որ առաջս էկավ... Գնացե՛ք, հասե՛ք, էն սուրահի բոյին մտիկ արե՛ք... Տեսե՛ք, ի՞նչպես ա ջիրիդ խաղում... Գալիս եմ, գալիս, Աղա՛սի ջան... սաբր արա՛, որ մեկ չարսավս քցեմ, գլուխս կապեմ... Տո՛, տնաքանդի աղջիկ... մեկ ձեռներդ էլա բարձրացրո՛ւ... ի՞նչ ես փետացել, էդտեղ կաղնել... Վա՜յ... վա՜յ... վա՜յ... ամա՜ն, էրվեցի՜, խորովեցի՜... Ջորանա՛ք դուք, ա՜յ ձեռներ... խավարի՛ք դուք, ա՜յ աչքեր... Հարսի ջան, խաղա՛, է՜։ Տո՛, մեկ կռներդ բարձրացրո՛ւ, է՜հ. Վարդի՛թեր *ջան, ի՛մ մանիշակ, ի՛մ սմբուլ, ի՛մ ալվան լալա՛զար, ի՛մ խնկան ծաղիկ... աչքերի՛դ մեռնիմ... էրեսի՛դ մատաղ գնամ... ի՞նչ ես ձեռներդ խաչել... ի՞նչ ես քեզ ջարդում... սպանում... Ջանգուն մոտիկ ա, մի քիչ կա՛ց, Աղասուն ճամփու դնե՛նք... Դեռ նրա հոգին երկինքը չի՛ հասած... մենք նրանից առաջ կէրթանք էնտեղ։ Դարդ մի՛ անիլ... Անկաչ արա՛, մի Աղասու խաղն ասեմ...*

Աղասի՜ ջա՜ն, գըլ...խի՛դ... դո՜ւր...բա՜ն...
Դու... ես... մեր... թա՜գն... ու... պարծա՜նքը...
Թա՜գն է՜լ գնա՜ց... պարծա՜նքն է՜լ...
Թո՜ւրն է՜լ գնա՜ց... թվա՜նքն է՜լ...
Տո՜ւնս է՜լ քանդվե՜ց... պուճա՜խս է՜լ...
Ա՜չքս է՜լ փորվե՜ց... ումբրը՜ս է՜լ:

Աղասի՜ ջան, Աղասի՜... Տո՛, ջրատա՜ր... քանի՞ քնիս. լա՜վ ա, լա՜վ... Գնա՛... որդուդ տարա՛ն... գնա՛, ջուրն ընկի... մենք էլ էս ա, գալիս ենք։

Էս սհաթին էր, որ ողորմելի հերը տասն անգամ գնաց է՛ն դինեն, էլի ետ էկավ... Քանի որ գլուխը վեր էր քաշում, հենց իմանաս, էլի թաքբար խփում, նրան անդունդն էին տանում... Ջահել, քսան տարեկան հարսը մեկ կողմն էր գլուխը ծեծում, ջարդում, մազերը քրքրում, իր խեղճ պառավ կնիկը՝ մյուս։ Էլ հաքըներին շոր չէ՛ր մնացել, էլ էրեսներին սաղ տեղ չկար, բոլոր ճղել, քրքրել էին. արինը լաշակ, օշմաղ, ճակատ, դոշ շիլի պես ներկել էր։ Ինչ սպասի հարսն էր անում, աստված ո՛չ շհանց տա։ Բարձր ձենով լար՝ ամոթ էր... Էս պատճառով սիրտը դհա ավելի էր էրվում, խորովվում... ուզում էր դոշը պոկի, գնա, բաշնըվեր ընկնի... Առաջին խաբարն որ իմացել էին, նրանք էլ հենց, խելքը թռցրածի պես, հացատանը, որը մեկ պուճախում էր անշունչ մնացել, որը մյուսումն։ Նրանց տեսած էրազներն էլ պակաս սարսափելի չէին... Մորը՝ ջիրիդ խաղալիս էնպես էր էրևում, թե Աղասու ձին բուդուրմիշ էլավ, վեր ընկավ. հենց էն ա, վրա վազեց, որ որդուն խատի, վեր թռավ։ Հարսի աչքին երևում էր, թե հարսանիք էր, հարամիք վրա տվին, Աղասին մեկ բոզ ձիու վրա նըստած՝ նրանց առաջ արեց, թրով ծեծելով՝ թոզ ու դումանումը կորավ։ Իր թայդաշ հարսներն ուզում էին, որ իրան բռնեն. փեշը թափ տվեց, ուզում էր, որ նրա ետևիցը կորչի, երեսի վրա վեր ընկավ. աչքը բաց արեց, տեսավ, որ տունը գլխին պտտում ա։ Անց կացած բաները որ միտքը չէկավ, էնպես մեկ ծվաց, ծղրտաց, որ ձենը երկինքը հասավ, պատերը զրնգացին։ Էս ձենի վրա կեսուրն էլ, հենց բռնիր, հինգ գազ ծուլ էլավ, հենց բռնես, մեկ թուր ջիգյարը խրեցին. հարայ տալով, մազերը պոկելով՝ հարսնի կռնիցը բռնեց, դուս թռավ ու իր կիսամեռ մարդի առաջին թավալթավալ էր տալիս, գետինը պոկում, գլխին հող ածում ու նոր մորթած հավի պես, որ դեռ քանի արինը տաք ա, ոտն ու էրեսը քարերին էր ծեծում, ինչպես որ տեսանք։ Ա՜խ, ես չե՛մ ուզում բանը երկարացնեմ, թե չէ նրանց արածն ու ասածն լսողի սիրտը կէրեն, կփոթոթեն։

Էս ձենի վրա էր, ինչպես ասեցի, որ մեր անբախտ ծերունին բիրադի վե՛ր թռավ, էլ ո՛չ գդակ, էլ ո՛չ քուրք հարցրեց, տանիցը բղղալով, գլուխը ծեծելով, միրուքը պոկելով դուս ընկավ ու հոգին բերնին հասած՝ գլորվելով, տրորվելով իր որդու ոտի տակին գետնին դիպավ ու թրպըրտում էր։ Ընչանք էն տեղ հասնիլը հարյուր տեղ վեր էր ընկել, հարյուր տեղ ոտն ու ճակատը քարին էր առել, գլխումն ու ջանումն էլ սաղ տեղ չէ՛ր մնացել, հազար քարի էր դիպել ու յարալու-փարալու էլել, ձնի նման սիպտակ միրուքը արնի մեջը սառել, չանին էր կպել, ու հմիկ էլ որդու ոտները լիզում էր, որ մեկ թուր էլ իրան խփի, որ շուտով էս դառն աշխարքիցս պրծնի։

Վա՛յ է՛ն ազգին, որ աշխարքումս անտեր ա,
Վա՛յ է՛ն երկրին, որ թշնամու գերի ա,
Վա՛յ է՛ն խալխին, որ ինքն իր կյանքն, աշխարքը
Չի՛ պահպանի ու հարամու ձեռ կտա:
Ո՛վ որ սարեր կէրթա իրան ֆորսն անի,
Ո՛վ որ կուզի տեղը նստած մուլք դառի,
Անտեր ազգին նրա գյուլլեն կդիպչի,
Անտեր գլուխն նրա քիսեն կլցնի:
Հավատ, օրենք, տուն, բնատնիք, սրբություն
Հողի, քարի հետ կքսվին, կփչանան,
Թե մեկ ազգ իր չի պահվն, յախեն թշնամու
Իրան-իրան կտա, կմնա անվաքան:
Կատաղած ծովն ի՞նչ կհարցնի լաց, շիվան,
Նրա ֆրքնեն (ալիքը) ո՛չ սիրտ ունի, ո՛չ հոգի
Թե հար ունիս, մի՛ տար նավիդ գլուխն իրան,
Աչքդ թեքեցիր՝ ծովի տակին կբացվի:
Դառած արջը՝ փնչացնելով դուս պրծավ,
Սարեր, ձորեր սասանում են ձենիցը.
Անմե՛ղ գառը, ո՞ւր ես կանգնել դու սնցավ,
Քեզ կքրքրի՛, փախի՛ր նրա ձեռիցը:
Դաշտ ու գետին դմբդմբում են, դղրդում,
Ամպի գոռոցն աշխարքն իրար գլխով տալիս.
Ա՛նցվորական, ի՞նչ ես նամփիդ մրթմում,
Գնա՛ էլա մեկ քարի տակ, որ պրծնիս:
Ա՜խ, արեգա՛կ, բարի՛ հրեշտակ, մե՛ր մոր,
Ի՞նչ ես կանգնել, սիրուն աչքերդ բաց արել.
Հայի համար որ դուս էլ չգաս դու իսկի,
Դարդ չի՛ անիլ: Վաղուց է նրա աստղը թեքվել:
Թախտ, ապարանք, գենք, զարդարանք փչացան,
Թագավորներ, իշխանք, քաղաքք հողը մտան,
Էլ ո՞վ նրանց էթիմներին խեղճ կգա.
Մեկ թշնամու սրտումն մրգամ ատամված կա՞:

ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻ ՎԵՐՋԸ

Բա՛ցի վախտ, որ մարդ մեկ քանդված տեղի
Վրա կանգնում ա ու ինքն իր մտքի
Հետ ա ընկնում ու անց կացած բաները
Ցիքր անում, տխրում, տրորում աչքերը,
Էնպես գիտես, թե է՛ն անբան քարերն
Մեզ ասում ըլին, որ մենք մեր օրերն
Լանք ու զգաստանանք, չունքի էս աշխարհ
Չի՛ մնալ մեզ համար դաղմի մուղարար:
Հենց իմանաս, թե լեզու են առել
Պատերն, ուզում են մեզ լալով ասել.
«Ա՜յ ադամորդի, տե՛ս, քո վերջն է՛ս ա.
Էստե՛ղ էլ կային նորահարս, փեսա,
Էստե՛ղ էլ կային ծնող, երեխա,
Հարուստ, մեծատուն, իշխան համեշա:
Բայց ո՞ւր են նրանք՝ հողի հավասար.
Բայղուշն ա նստում նրանց գլխին անհար»:
Բայց ա՜խ, թե մեկ տեղ արին ա թափել,
Աշխարհ կործանվել, ազգեր փչացել,
Գազան բուն դրել, ավազակ բնակել,
Մարդի ջերդն ու թոքն կրակ է ընկնում,
Միսը սրսռում, աչքը սևանում:
Էս ցավն ա Հայի սրտում բհամ գալիս,
Երևանու բերդն, *Զանգին* տեսնելիս:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1

Լե՛ռ քարափի վրա ցից գլուխը բարձրացընում, թամաշա ա անում հանդարտ, հազար գլխանի դևի պես, Երևանու հազար տարեկան քավթառ, պառաված, չորս կողմը խանդակով կապած, բրջերով ղայիմացրած, սուր-սուր ատամները գլխին շարած, հինգ գազաչափ հաստ պարսպով երկու տակ բռնած, մեկ ոտը Կոնդումը, մեկ ոտը Դամուրբուլաղի գլխին դրած, մեկ բերանը հյուսիս, մեկը հարավ բաց արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լեն փեշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոկած, սվաղած, հազար բնով, հազար փանջարա աչքերը դես ու դեն չռած, ջուխտ չանգերով Զանգվի քարոտ, զարհուրելի, սևադեմ ձորը խոտտած, դոշին կպցրած՝ անմազ, անլեզու, մարդակեր բերդը ու դեղնած երեսը հեռու տեղից ծածկում, ագահ աչքերը գետնին քցում, որ միամիտ տեսնողին դհա շուտով խաբի, դհա հեշտ իր ծոցը քաշի ու բիրաղի, անձեն, անսաս կուլ տա, փչացնի։

Պարսիկ նրան շինեց՝ խորամանկ, խաբեբա, թե օսմանցի նրա հիմքը դրեց՝ կատաղի, անհաշտ, ո՛չ գիր կա, ո՛չ թարեխ։ Նրա պատմությունը խավարի միջումն ա, մարդ ուղիղ չի՛ գիտի, չի՛ լսել. բայց հազարավոր ժամանակավ՝ անահ, անվախ, պինդ երեսը լիրբ գազանի պես դեմ տված, որքան թոփի, թոփխանի գյուլլեք էլ նրա կոշտ քամակին, նրա կակող դոշին, նրա բաց գլխին դիպան, ո՛չինչ չի՛ ազդեց, քյար չարեց։ Կորցրած թևերն էլ ետ սաղացրած, ջարդած ոսկորներն էլ ետ պնդացրած՝ գլուխը վեր քաշեց, էլ ետ շունչ առավ, վեր կացավ, կանգնեց, ուսերը դզեց, ոլորեց, սարքեց ու էլ ետ հարբա գալով, հաթաթա տալով, իր գլուխը քորոտի, իր շվաքի հետ խաղացողի թուլության, փոքրոգության, անզորության ու հիմար հանդգնության վրա ծաղր անելով, ծիծաղելով, ծափ տալով՝ պպին կանգնեց, մատը ցցեց էս հողաշեն, այլ ո՛չ քարաշեն բերդը ու խենեշ ղիմոք, իր կոտրած ոտները Զանգվի բերանը խցկելով՝ մնաց տեղը նստած, Զանգվի, որ գիշեր-ցերեկ անքուն, անդադար, գժված, կատաղած՝ նրա բաց դոշին, նրա անիրավ սրտին իր պլոկած ջրի անբերան թրովը, քարի ուրագովը վեր հատում, զարկում ա, բայց տեսնելով, թե չի՛ կարում ջիգրը հանիլ, վրեժն առնիլ, նրան քանդիլ, գոռալով, ղանգատելով, կական բառնալով, քիչ-քիչ ձենը փորը քցում ու մունջ մունջ երեսը կալնում, Զանգիբասարի ծոցն ա մտնում ու հույսը կտրած, սիրտը կոտրած՝ տխուր դես ու դեն ցրվում, ցնորվում ու հազար բարի, հազար պտուղ ու արդյունք տալով, բաշխելով՝ ճամփեն մոլորում, կորչում ու չի՛ կարում իր սիրուն քվորն էլա՝ Արագին, մեկ խաբար տանի, չունքի Երևանու թամարզու, կարոտ բնակիչքը նրա ճամփեն բռնում, նրան սիրով խտտում, իրանց մեջը, իրանց հանդն են տանում, որ նրա սուրբ, կաթնահամ ջրովը իրանց էրված սիրտը հովացնեն, իրանց դառը քրտինքը նրանով լվանան ու նրա տված պտղովը իրանց գլուխը պահեն։

Երևանու բերդն, Հայաստանու հողն, որ հազար տարուց հետ սկսած՝ դառել էր գողի ու ավազակի բնակարան... Է՛ն հողը, է՛ն հիանալի աշխարհը, ուրտեղ որ դրախտն էր եդեմական, ուր որ աստված, բոլոր աշխարհը ջրհեղեղովը երբ որ կործանեց, հայոց սուրբ Մասսա սարը միայն արժան տեսավ, որ Նոյան տապանը նստի, ու Հայոց երկրիցը էլ ետ մարդիկ բազմանան ու ուրիշ երկրներ էլ շինություն քցեն։ Է՛ն սուրբ հողը, ուր որ անպարտելին Հայկ՝ անաստված Բելա չար մտքին չհավանելով, իր ընտանիքը, իր քաջ, պատվական զորքը հավաքեց, էկավ ու Հայաստանի զարմանալի սարերի, սիրուն դաշտերի տեսույն մայիլ մնացած, Զանգվի դրախտանման ձորը, Զանգվի փրփրադեղ, անահ ջուրը, Երասխի մարմանդ ծոցը, Մասսա ու Ալագյազի երկնանման գլուխը, Սևանա ծաղկափթիթ ձորերն ու սարերը տեսնելով՝ իր մզրախը ցցեց ու իր սուրբ անունովը Հայաստան կանչեց ու Բելա անհոգի մարմինը իր նետ ու աղեղին մատաղ արեց։ Է՛ն սուրբ տեղը, ուր որ Շամիրամ՝ աշխարհ տիրելով, ո՛չինչ տեղ էն պատկերը չճարեց, որը որ իր սիրտն ուզում էր, ու մեր հրեշտականման Արայի սիրուն երեսին կարոտ՝ զորք ժողովեց, էկավ, որ թե նրա սուրբ սիրտը լալով, սիրով չգրավի, զոռով նրան գերի անի, որ բալքի նրա սուրբ շունչը իր երեսին դիպչի, ու մեռած ժամանակն էլ նրա մարմինը առաջին դրած՝ գիշեր-ցերեկ սուգ էր անում, որ կամ նա կենդանանա, կամ ինքը նրա ոտի տակին հոգին տա։ Է՛ն աշխարհը, ուր որ Զարմայր՝ Աքքիլեսի հետ Հեկտորի դեհն ուզեցավ պահի, Պարույր՝ Արբակի հետ Սարդանաբաղին էրեց, Տիգրան՝ Կյուրոսի հետ Աժդահակա հոգին առավ, Վաճե Դարեհ Կոդոմանի հետ Աղեքսանդրի ճամփեն ուզեցավ

քոնի, Վաղարշակ Պարթևն՝ իր եղբայր Արշակա ոտը իր երկրիցը կըտրեց ու Հայաստանին կարգ տվեց, նախարարներ հաստատեց, Տիգրանն՝ արքա արքայից, Ասորոց աշխարհն իր ձեռի տակը բերեց ու կարթագինացոց հսկային՝ Աննիբալ զորապետին, իր մոտ հրավիրեց։ <Է՞ն աշխարհը>, ուր որ քաջահաղթն Տրդատ՝ Հռովմ իր քաջությունովը ու իմաստությունովը զարմացնելեն հետո, էկավ, իր հայրենական հողին տիրեց ու ալանաց, պարսից շունչն ու ոտը կտրեց. ուր որ որդին աստուծո երևեցավ ու սուրբ Լուսավորչու՝ Էջմիածին տեղի կերպը լուսով չափ տվեց։ Է՞ն տեղը, որ Վարդան Մամիկոնյան, Վահան՝ ընտիր եղբայր նորա, անօրինակ քաջությամբ, որ աշխարհ դեռ չի տեսել, իրանց օրենքն ու սուրբ եկեղեցու պատիվը արընով գնեցին։ Է՞ն տեղը, որ Վռամշապուհ բոլոր աշխարհի լուսավորությունն ու իմաստությունը իր կողմը քաշեց, իր աշխարհը բերեց։ Է՞ն ընտիր աշխարհը, ուր Ռուբինյանք, Բագրատունյանք՝ իրանց՝ հազար թշնամու ձեռի անտեր մնացած Հայրենիքը (վաթանը) էլ ետ գերեզմանից հանեցին, էլ ետ նո՛ր հոգի տվին։ Է՞ն օրհնյալ հողը, ուր ասորիք, պարսիկք, հոնք, ալանացիք, մակեդոնացիք, հռովմայեցիք, արաբք, օսմանցիք ջրհեղեղի պես վրա էկան, հարյուրավոր ազգ ու աշխարհ ոտնակոխ արին, ջնջեցին, սրբեցին, թըփ, կրակի մատաղ արին, ուրտեղ որ սար չի՛ մնացել, որ արին չտեսնի, քար չի՛ մնացել, որ մարդ տակով չանի, ու հարիր մեր հարևան ազգեր էնպես են հողի հետ հավասարվել, կորել, որ էսօր ո՛չ նրանց շունչը կա, ո՛չ անունը, բայց սուրբ Հայոց ազգը, անհաղթելի Հայկա որդիքը իրանց կյանքը, թագավորությունը, մեծությունը, փառքը, իշխանությունը, զորքը կորցնելեն ետև որ տեսան, թե է՞ս աշխարհակործան ջրհեղեղին, է՞ս գազան ազգերին, որ մեկը մյուսի ոտքը ճոլալակ՝ ուր որ կամենում էին գնալ, Եվրոպա թե Ասիա, Հայոց հողովը պետք է անց էին կացել, չե՛ն կարող դիմանալ, աչքները երկինքը քցեցին, գլուխները գոգները դրին ու հազար թրի տակից, հազար կրակի միջից՝ սիրտները տված, հոգի-հոգու կպցրած, մինչև էսօր էլ իրա՛նց գլուխը, իրա՛նց սուրբ հավատը, իրա՛նց սուրբ օրենքը է՞ն վեհանձնությունովը պահպանեցին, որի օրինակը աշխարքում ո՛չ էլել ա, ո՛չ կըլի։ Է՞ն աշխարհք, է՞ն անօրինակ ազգն էր էս վերջին ժամանակը, շունչը բերանը հասած՝ աչքը երկինքը կթել, որ ռուսաց հզոր արծիվը գա ու իրանց հողն ու զավակը իր թևի տակովն անի։

Քսան տարու միջում լուսավորյալ, քրիստոնյա, խաչապաշտ եվրոպացոց ոտը ողորմելի Ամերիկա էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինգ-վեց միլիոն ազգերիցը էսօր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած՝ վայրենի գազանների պես են իրանց սև օրը լա-

լիս ու կոտորվում. բաս ի՞նչ աներ Հայոց խեղճ ազգը, որ Նոյյան դեսը, վեց հազար տարի, ո՛չ թե քրիստոնեի կամ լուսավորյալ ազգի, այլ հեթանոսի, կռապաշտի, մահմեդականի, անօրենի ձեռին էր աչքը բաց անում, նրանց հետ քյալլա տալիս ու շառին, շատ անգամ, իր ոտի տակը քցում, բայց կարո՞ղ է վարդը ծովի միջում զորանալ, մանիշակը՝ կրակի առաջին դիմանալ. կարո՞ղ է կակող ցորենի հասկը է՞ն կայծակին ու կարկտին համբերել, որ մեր ազգը իր թշնամուն համբերել էր յա դիմացել։

Հայո՛ց ազգ, Հայո՛ց ազգ, ձեր ջանին մեռնիմ, Հայո՛ց ազգ, քո հողին մատաղ, Հայո՛ց աշխարհ. էն ո՞ր կաթը դուք ծծեցիք, է՞ն ո՞ր մեջքը ձեզ բերեց, է՞ն ո՞ր ձեռը ձեզ չրկեց, է՞ն ո՞ր բերանը ձեզ օրհնեց, որ դուք է՞ս հոգին ունենաք, է՞ս սիրտը ձեր միջումն ըլի, է՞ս հրաշքը դուք աշխարքին ցույց տաք։ Է՞ն ի՞նչ աչք պետք է ըլի, որ քոռանա, ձեզ չտեսնի, ձեր ղադրը չիմանա. է՞ն ի՞նչ բերան պետք է ըլի, որ կապվի, ձեր փառքը չգովի, ձեր անունը չպաշտի. է՞ն ի՞նչ քարացած սիրտ պետք է ըլի, որ ձեզ չսիրի, ձեզ իր հոգին մատաղ չանի։ Օրհնեցե՛ք ձեր ոտը, ջան-ջանի տվե՛ք, իրար սիրեցե՛ք. դուք է՞ն աշխարքի ծնունդն եք, է՞ն ազգի զավակը, որ աշխարհ ամենայն զարմացրել են ու կզարմացնեն։ Դո՛ւք, դո՛ւք իրար պահեցե՛ք, ինչպես ձեր նախնիքը, դո՛ւք իրար թասիբ քաշեցե՛ք, ձեր նախնիքը միտք բերե՛ք, ձեր հողն ու ազգը պաշտպանեցե՛ք, ես ետ եմ դառնում էլի իմ պառավությունն անեմ, բայց աչքս ճամփի ա, անկաջս՝ ձենի, ձեր ջանին ղուրբան. չթողա՛ք, որ էս մուրազը հետս գերեզմանս տանիմ, ու հողումն մարմինս քրքրվի, երկնքումը հոգիս տանջվի, երբ իմանամ, թե ձեր սերը պակսել ա, ձեր բարեկամությունը ցամաքել։

Գնա՛նք Երևանու բերդը, օրը մթնում ա, խավարը բռնում, աչքերս սևանում, սիրտս արորվում, ու ինչ տեղ որ ծնել եմ, է՞ն հողն էլ ա աչքիս փուշ դառել, սրտիս՝ դանակ։ Զուշն իր բունը սիրում ա, ես իմ հողը ատում, փնովում, չունքի լսած ու տեսած բաներս կրակ են դառել, սիրտս էրում, փաթթում, չունքի Երևանու բերդի հողի ու ջրի շատ փայլը, հե՛նց բոնիր, Հայի արընով ա շաղախած. ի՞նչպես անեմ, ո՞ր ջուրն ընկնիմ, որ սիրտս հովանա, յա մեռնիմ, պրծնիմ, ու էս դարդերը ինձ սաղ-սաղ չուտեն, չպանեն։

Երևանու բե՛րդն, Երևանու բե՛րդն, ուր որ,— քանի Հայոց թագավորությունը իր աշխարքիցը ձեռք վերցրեց, ու քրիստոնեությունը դառավ Հայոց ազգի հույսն ու ապավենը, ու երկնքից արքայությունը, ու պարսիկ, օսմանցիք հռովմայեցոց գլուխը Եվրոպա ուտելով, հունաց ազգը էնտեղ տանջելով, ասորոց, բաբելոնացոցը՝ Ասիա վերջացնելով, թուրըները սրած, կատաղած ասլան-ղափլանի պես, մեկն էս դհից, մյուսն՝ էն, մեր ազգի ար-

նին էին ծարավել, որ իրանց անկուշտ փորին մատաղ անեն, ու մեկը ծամում էր, մյուսին տալիս, մյուսը արինը խմում, մեկի չանգը քցում,— մնացել էր հարյուր հիսուն տարուց հառաջ օսմանցոց ձեռին, որ Նադր շահը դուս էկավ ու Հնդստան, Արաղստան ոտի տակը տալուց ետև երեսը ետ դարձրեց Երևանու վրա։ Սար ու ձոր նրան գլուխ էին վեր բերում, մեկ բուռը հողը ու լենաշալվար օսմանցին ո՞վ էր, որ առաջին դիմանա։ Հենց Մուրադ թափի գլխին, Քանաքռուց մի քիչ բարձր, նրա չադրի ծերն էրևաց, ղաջար Հասան Ալի խանը օսմանցվին ընչանք Ղարս մին քշեց, ու կտրիճ զորապետը էնքան թուրն ածել, օսմանցվի գլուխ էր թոցրել յա ուս վեր բերել, որ ձեռը փետացել էր, թուրը գուլացել, ու ինչ ժամանակ ետ դառավ ու Նադր շահի չադրի առաջին որ մզրախը չչպրտեց, մզրախը դողալով գետնումը ցցվեց, բայց քաջի արած տղամարդկությունը շահի աչքումը տնկվեց, ու պատվի, փառքի փոխանակ՝ ողորմելի խանի աչքերը իսկույն հանել տվեց, որ արեգակի առաջին լուսինը չերևի, ու իրան անունը չկոտրվի։ Էս կույր ողորմելին էր, որ օսմանցվից հետո Երևանու խանությունը ստացավ, ու էլի պարսից անիծած ոտը մեր աշխարհը մտավ։ Սրանից հետո իր ախպեր Հուսեին Ալի խանն սկսեց նստիլ, որ է՜նքան աչիղ, խեղճ էր, մինչև վրաց Հերակլ թագավորն էկավ վրեն, ջարդեց ու 3000 թուման էլ հարկ դրեց ուսին։ Սրա որդի Մահմադ խանն էլ որ նստեց, Աղա Մահմադ խանն, որ ավելի անունն Ախտա շահ էին կանչում, դուս էկավ, Նադրի պես սար ու ձոր ջարդելով՝ ինքը դեպի Ղարաբաղ ու Թիֆլիզ երըմիշ էլավ, իր ախպեր Ալի Ղուլի խանին Երևանու վրա ղրկեց։ Բայց մինչև Թիֆլիզու գերին Երևան չհասավ, Մահմադ խանը երկրի խալխը գլխին, բերդումը թոփ արած՝ իր ջիլավը թշնամու ձեռը չի՛ տվեց, որ Երևանու բերդի չորս կողմը կտրել, նստել էր, բայց կռիվ չէ՛ր տալիս, չունքի խանն ասում էր.

— Երբ Թիֆլիզ կառնիք, ես ձերն եմ ու ձերը։

Թիֆլիզ առան, էրեցին, եարի տուտը Երևան հասավ. թե չէ, խանի մեջքը կոտրվեցավ։ Ալի Ղուլի խանը մտավ բերդը, Մահմադ խանին ղոնաղ արեց ու, հացի վրա հենց, ոտն ու ձեռը կապիլ տվեց ու Պարսկաստան ուղարկեց։

Պատմում են, թե բոլոր խաների միջին սրանից լավը չէ՛ր նստել։ Մեկ քանի օր որ անց ա կենում, մեկ գիշեր հանկարծ մելիք Աբրահամին կանչել ա տալիս։ Ողորմելու արինը ջուր ա դառնում, բայց հենց կուշտն ա գալիս, սրան բարկացած հարցնում ա, թե ինքը լսել ա, որ հայերը առանց զանգակի ժամ չեն գնալ, ի՞նչպես ա, որ զանգակի ձեն չի՛ լսում։ Մելիքը որ դողալով չի՛ ասում, թե նրա ահու չե՛ն տալիս, իսկույն բարկանում, հրամայում ա, որ գնա, հայերին ասի, թե նա էկել ա, որ խալխին

պահի, նրանց տիրություն անի, նրանց ցավին հասնի ու ո՛չ նրանց նեղացնի։ Ու էս արժանահիշատակ խանն ա, որ խալխի խարջը, կոռը բաշխում, շատ ումուդ, շաֆաղաթ ա տալիս, բայց թուրը երկար չի՛ կտրում։ Ախպորը որ Ղարաբաղումը Սադըղ խանը չի՛ սպանում, Երևանու հայ, թուրք բերդը բռնում, սրան զոռով դուրս են անում, որ ղաջարի անունը իրանց վրա չըլի, էնպես որ ողորմելին հազար մուննաթով ու աղաչանքով, բռանց ա գլուխը պրծացնում ու էլ ետ իր երկիրը քաշվում։ Փոքր վախտ սրանից հետո Մակվա խանն ա գալիս, Երևան նստում, չունքի որ Մահմադ խանի ազգականն ա ըլում։ Ֆաթ Ալի շահը որ նստում ա, Մահմադ խանը շահի մորը մեջ ա քցում, մինչև 10 000 թուման Երևանու փող ռուշվաթ (կաշառ) խոստանում ու էլ ետ գալիս, իր տեղը բռնում։

Էս միջումն ա ըլում, որ Նախչվանու քոռ Քյալբալի խանը Ղարսա վրա կռիվ ա դուս գնում, փաշին ջարդում, երկիրը ոտնատակ տալիս, ու ռուսն էլ նոր Փամբակ առած՝ էնտեղ մեկ մայոր ա ըլում, ավելի անունը Ղարա (սև)։ Խանը ետ դառնալիս ուզում ա, որ Փամբակ էլ մեկ ատամին խփի, ու որ լսում չի՛ թե Ղարա մայորը մեկ քանի հարյուր մարդից ավելի ո՛չինչ չունի, հրամայում ա, որ գնան, նրան սաղ-սաղ բռնեն։ Բայց ռսի սալդաթի ու թոփի հունարը դեռ չեն տեսած ըլում ողորմելիքը։ Իրեք-չորս անգամ էնքան ղոնչունը վրա է տալիս, բայց տեսնելով, թե ռուսը պատի պես կանգնած՝ գյուլլից էլ չի երես ետ դարձնում, փոխանը կատու ընկած՝ ձիու գլուխը շուռ ա տալիս ու իր հողը գալիս։

Էլի էս միջոցումն ա ըլում, որ անիրավ Մահմադ խանը շահի հետ խոսքը մին ա անում ու քաջահաղթ Ցիցիանովին խաբնով իր մոտ ա կանչում, որ բերդը ռսին տա։ 3000 մարդով որ նա Երևան չի՛ մտնում ու տեսնում, որ խորամանկ պարսիկը կամեցել ա նրան ականաթի մեջ քցի, մըտնում ա թուշ Երևանու մեչիդը, ու իրեք ամիս էս քաջ հսկայն, առանց հացի, առանց օգնության, էն շոգ ժամանակին, որ մարդի գլխին կրակ ա վեր թափում, էն թանկությունն ա ըլում, որ աղի լիտրը մեկ մանեթով ճարվելիս չի՛ ըլում, ու շահն էլ անթիվ, անհամար զորքով գալիս, սար ու ձոր բռնում ա, ու ռսի ղոնչունի շատն էլ որը սովն ա սպանում, որը շոգը, ու հայերն են ըլում հաց տվողը, ռսի քոմակը, մանավանդ կենդանի նահատակ Հովհաննես եպիսկոպոսը, որ էջմիածնա ամբարները դարտակում ա, որ բալքի թե էնպես բան ըլի, որ ռուսն Երևան մնա, բայց աստուծո հրամանը չի՛ ըլում, Ցիցիանովը էնքան գազանի ոխից իր մեկ բուռը ղոնչունը ու հայերին հավաքում, էն վախտն ա քաղաքը մտնում, որ սաղ Վրաստանը, Կավկազը ղոնմիշ էլած՝ մեկ-մեկու ուտելիս են ըլում։ Մինչև Ղազախ ղզլբաշի ղոնչունը նրա աղաքն ու քամակը բռնած՝ կռվելով գա-

լիս են, բայց էլի գլխըները քորելով ետ են գառնում, ու Ցիցիանովի ոտն ու երկրի խաղաղությունը մեկ ա ըլում, էնքան անում ա ունեցել էս քաշ հակայն։ Հալվաբաբու հայերը որ կան, էն ժամանակն են իրանց երկիրը թողում, քոչում ու օրը մելիք Աբրահամի, որը Հավհաննես ուզբաշու ձեռի տակին՝ գալիս, քաղաքը մտնում։

Ռուսը որ ետ ա դառնում, Մահմադ խանին բռնում, Պարսկաստան են տանում, ու նրա տեղը Թավաքյալ խանն ա գալիս, նստում, որ Գուդովիչի հետ կռիվ ա տալիս։ Սրան էլ փոխում են, Հասեին խան սարդարը ու իր ախպեր Հասան խանն են Երևան գրկում, որ մեկ քանի տարվան միջումը Ղարս, Բայազետ, Արդաում ոտի տակ տվին ու օսմանցվին կատու էին շինել։ Կարելի ա, թե Երևան էնպես բարի, ազնիվ, խալխի ցավին հասնող, աշխարհաշեն մարդ չէ՛ր տեսել, ինչպես որ սարդարն էր. բայց ինչքան նա բարեսիրտ էր, էնքան չար, գազան, դժոխք էր նրա ախպերը, որ ոտը փոխելիս՝ սար ու ձոր դողում էին։ Նրա համար հե՛ մարդի, հե՛ ոչխարի գլուխը, բոլորը մեկ էր։

Էս էր, որ աստված գլխին բարկացավ, էլածն էլ ձեռիցը խլեց ու խեղճ հայերի էրված, խորովված սիրտը անչափ մի անչափ հովացրեց, ու էսօր խաչն ա նրանց պահում, ու ո՛չ Ալու փանչեն նրանց սասանացնում։

Օրհնվի՛ էն սհաթը, որ ոսկի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած, չար շունչը մեր երկրիցը հալածեց։ Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է գիշեր-ցերեկ մեր քաշած օրերը մտքըներս բերենք ու ոսկի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ էսպես թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռի տակը բերեց։ Բայց թե մինչև էս բախտին հասնիլը ի՞նչ օր ենք քաշել, ի՞նչ պլուլուք ա գալել մեր խեղճ ազգի գլխին, ի՞նչ թրեր ա նրանց լեզուն ու թաքը կերել, էրել, նրանց արինը վեր ածել, քանի՛, քանի՛ անգամ են քաշել, տեղհան, տեղըհան էլել, քանի՛, քանի՛ փշխանք՝ որը կրակով, որը փետի տակին, իրանց հոգին տվել, ով ուզում ա իմանալ, հետս գա, գնա՛նք էլ ետ Երևան։

Թո՛ղ լսողը չի՛ իմանա, թե ես Երևանու ծնունդ ըլելով՝ նրա հողի ու ջրի սերն ա էնքան սիրտս քաշում, տանում. չէ՛, գիտե աստված։ Երեխա եմ էլել, որ էնտեղանից գնա եմ էկել, ամա էսօր էլ, որ մտածում եմ, թե Զանգվի կամրջից վրովը յա ղազալի մեյդանովն անց կենալիս ինչպես էր իմ լսահոգի հերը ինձ առավ-ձեռով անում, չանքի լեզվով խոսալն էլ ղադաղի էր բերում, որ թեզ անց կենանք, մեզ թաքը չտեսնի, որ մտածում եմ, թե քանի՛, քանի՛ անգամ, հենց մեր աչքումը, յա մենք ենք գլխբաց յալալու տեսել, յա նրանք մեզ, ջանս վրես սառում ա, միտս վեր թափում։

Դեռ ոսկին չտեսած՝ մեկ էլ մտնինք Երևան, չունքի մեր հայրենիքն ա, մեր նախնիքն են էնտեղ կացել, տիրել, մեռել, թաղվել, էն ժամանակը կիմանանք ոսկի ղադրը ու մեր բախտավորության գինը. ով ուզում ա՝ գա։

2

Երևանու բե՛րդն, Երևանու բե՛րդն, ա՜խ, որ աստված բացվելիս նրա էն լաչար գլուխը մարդի աչքով չէ՛ր ընկնում, հենց իմանաս, թե դժոխքն ա իր բերանը բաց անում, ատամները ղըճտացնում ու իր ապականյալ, թունավոր, դառը շունչը չորս կողմը փռփռալով փչում, ցրվում, փոնչացնում, որ կարենա իր հոտած աղքերի կերած, լափած արդար ջանք մարնում, որ կարենա իր հոտած աղքերի կերած, լափած արդար ջանք մարսի, էլի չանգերը ղուբարա քցի, էլի հազար անմեղ, արդար հոգի անծամ կուլ տա, իր անկուշտ փորին մատաղ անի։ Արեգակը մտնելիս հո, հենց իմանաս, թե Սաղայելի որդիքն ու զավակները, նրա զորքն ու զորապետները ըլին իրանց դիվական խաղը խաղում, իրանց դժոխային քեֆն անում, ու բրջերի գլխին մեկ կտրած գլուխ էստեղ էին ոտի տակ տալիս, մեկ անգլուխ լաշ էնտեղ էին կտոր-կտոր անում, վրեն թքում, ծափ տալիս, ծիծաղում, հրհռում, քրքռում ու թրով, մզրախով յա փետով մեկ մեռած մարմին էս կողմն, էն կողմն գլորում, քացի տալիս ու ներքև քցում։ Ճաշվա ժամանակին, հենց իմանաս, մեկ կրակի սար ըլեր էնտեղ կանգնած՝ փառ, ծոց տալ քուքուրթով, բոցով լիքը, ծխում, բորբոքում էր, որ բերդանքիդ ճոնչա, բացվի, տրաքի ու ինչ կա, չի՛ կա, տակովն անի, լափի։ Ամեն մեկ բուրջը, ամեն մեկ բաղանը ոսկորով, ջամդաքով յա անմեղ դաժասղներով լիքը, քած խոզի պես, հենց իմանաս. ծանրացել, փորըներն էլ չէին կարում քաշել, էնպես ուռել էին, որ բիրադի ճաքին, պատռին, կտոր-կտոր ըլին։

Մեչիթների ոսկեզարդ գլխըներին արեգակի շողքը դիպչելիս, պլպլալիս, հենց իմանաս, էն իրանց միջի անսիրտ նամազ անողների անխղճմտանք հոգու շնչովը փքված՝ ուզում ըլեին աստծուն փառաբանություն, աղոթք անելու տեղը, որ երկրին խաղաղություն, դինջություն տա, սոդոմական կրակն ըլեին ուզում երկնքիցը վեր ածիլ տան, որ սար, ձոր էրեն, խորովեն, տակով անեն։ Հայի թշնամի մոլլեն, որ գիշեր-ցերեկ ուզում էր, որ յա քրիստոնեության անունը վերանա, յա Հայ ազգի, միարեն որ չէ՛ր նի ըլում, որ ազան տա, ու իրան հավատացյալ ժողովուրդը գան, իրանց իմամներին, իրանց Ալուն, Մուրթուզալուն աղոթք անեն, որ էն դինասը դժոխքի փաշ չըլին, ձեռն անկաջին։ որ չէ՛ր դնում ու ծվում, հենց իմանաս, հայի համար սաղայելյան փողն ըլի փչում, որ իրանց գլուխը լան, չունքի շատ անգամ էր պատահում, որ մեկ խեղճ, անճար գեղցի հայ, որ բազարն էր գալիս էս հարամին, որ իր աղջուրն անի.

մեկ քանի շահի ձեռք քցի, որ տանի, իր քյուլֆաթներին պահի, է՛ն տեղն էին քցում, է՛նքան էին ուտին, գլխին վեր հատում, որ հացն էլ էր մոռանում, էկած ճամփեն էլ, իր օղլուշաղն էլ չունքի բեղաֆիլ մեկ Թուրքի շուրի դիպած, մեռատառած էր ըլում։

Աշխարքի գլխին, հենց գիտես, կրակ պետք էր վեր գար, է՛նպես էր ամեն մարդ սասանահարվում, սարսափում, որ իր գլուխը պահի, բալի տակ չընկնի։ Ի՞նչ ասեմ, ի՞նչ պատմեմ. կըլի, որ ի՛սկ սաղայելյան փողն ու դատաստանի օրը է՛նքան սարսափելի չըլին, չունքի աստուծո ողորմության հույսը էլի կա, ինչքան էս օրերը, որ րիգունը գալիս՝ մարդ չէ՛ր իմանում, թե երաբ առավոտը կհասնի՞, լիսը բացվելիս՝ ումուդ չու՛ներ, թե սաղ-սալամաթ, մթանն աչքը խփի՞, է՛նպես ահում, դողում էին երկրի խալխը։

Երևանու բե՛րդը, Երևանու բե՛րդը, ա՜խ, աչքս դուս գա, քանի՜, քանի՜ ողորմելի հայի միս ա կերել, քանի՜, քանի՜ անմեղ հոգի՝ տարիքներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլնելուց, կրակի, բոցի, երկաթե շամփրի, թոխմախի, կրակած քարփչի տանելուց, համբերելուց ետը կամ թոփի գյուլլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարաղաչի (կախաղանի) վրա ա գոռալով, երկինք, երկիր աղաչելով, իր միսն իր ատամներովը կրծելով, աչքերը դուս տրաքելով, ղովում, ղարդաշ, իրավորի, ազգականի, իր որդոց, զավակաց ձենը լսելով, տրորվելով, փոթոթվելով՝ հոգին ավանդել, երկինքը գնացել, որ պրծնի էս դառն աշխարքիցը, էն կատաղի գազանների ձեռիցը։ Քանի՜, քանի՜ ջահել երիտասարդ՝ մեկ սաղ օջախի մեն մենակ որդի, մեկ աղքատ, չքավոր տան սին, մխիթարություն, մեկ տասը գլուխ քյուլֆաթի տեր ու սայավեն, իր ծաղկած, ղալար հասակին, իր ըմբրի ու արևի նոր բաց էլած ժամանակին կամ սաղ-սաղ քերթվել ա, կամ իր պատվական գլուխը գառան պես թրին դեմ արել, որ երկնքումը իր ջահելության մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անարատ արնին էր ծարավ, որ շուտով խմի ու բալքի կշտանա։

<3>

Սի՛րելի կարդացող, իմ ա՛չքի լույս հայ, էս քո հավատակիցքն ու հայրենակիցքն են, որ ես ասում եմ ու էրվում. քեզ հետ մեկ ավազանից ծնվել, քեզ հետ մեկ մեռոնով օծվել, մեկ խաչով կնքվել, երա՞բ, որ լսում ես, սիրտդ ի՞նչ ա ասում, ջիգյարդ՝ ի՞նչ։ Գիտեմ, որ ասում կըլիս մտքումըդ՝ էսպես օրը գնա, ո՛չ ետ գա, քո թշնամին էս կրակի մեջը չընկնի։ Գիտեմ, որ սիրտդ էրվում, խորովվում կըլի, ու ուզում ես, որ էս անիրավ ազգի երեսին էլ մտիկ չանես, նրան տեսնելիս՝ գլուխդ առնիս, կորչիս,

բայց, հավատացի՛ր ինձ, մեղավորը նրանք չեն, մենք ենք։ Մենք որ իրար թասիբ քաշենք, իրար քոմակ անենք, իրար պայծառացնենք, շենացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա, մեզ տակով չի՛ կարալ անել, ինչ թե օսմանցին յա պարսիկը։ Մեզ ամենաբարի արարիչը է՛ն հոգին, է՛ն խելքը, է՛ն շնորհքը չի՛ տվել, որ նամարդի մուհտաճ մնանք։ Աստված հիմիկ մեզ լիս ա բաց արել, ռուսաց թրին սարերը չե՛ն դիմանալ, որ ջանք անենք, մեկըզմեկու սիրենք, մեր լեզուն, մեր եկեղեցին էնպես ղայիմ բռնենք, ինչպես մեր երջանիկ նախնիքը, հավատացի՛ր ինձ, աստված էլ կսիրի մեզ, մարդ էլ։

Լավ չի՛ սկսած բանը թողալ ու էսպես քարոզ ասիլ, ես էլ գիտեմ, ամա սիրտս չի՛ դիմանում, ի՞նչ անեմ։ Էլի մեր գեղըցոնց ասածն ա միտքըս գալիս։ Խալխի մեղքը չի՛, որ ճամփից դուս են էկել, իրար մոռացել, մեզ նման կարդացողի ոտները պետք է ծառիցը կապած, ամսով սոված պահած։ Ախր թե շատ առնողիցը շատ կպահանջեն, բաս դատաստանի օրը ի՞նչ ջուղաբ կտան ինձ նման գրի սևն ու սպիտակն իմացողները, որ էլ ուրիշ բան չենք ֆիքր անում, հենց ուզում ենք՝ լավ ուտենք, լավ խմենք, քյահլան ձիու վրա նստինք, չալ-չալ մանեթները ջեբըներումս շխկշխկացնելով, ձեռըներիս դողդողալով, խաղացնելով ման գանք, քեֆ ու մարաքյա անենք։ Շինած արաղ կոնծիլը, Կախեթու գինին անուշ-անուշ խմիլը, կառեթով, դրոշկով փառավոր, ուռած-ուռած ման գալը, զառ, ղումարը, հաքնիլ-մաշիլը, նոքար-բեքարի՝ ձեռին ջուր ածիլը, երեսի հով տալը, տաք յորղանի տակին, փափուկ դոշակի միջում շնթռիլն ու թավալ տալը, ոտ ու գլուխ զարդարիլը մեզ թե դժոխքը չտանին, դրախտը ըսկի չե՛ն տանիլ, հարկից։

Էդ երեխեքն էլ գիտեն, կասես ինձ, բայց ի՞նչ անես. բանը գիտենալը չի՛, բանն անիլն ա։ Ես ինձ վրա եմ ասում, թո՛ղ ուրիշի սիրտը չնեղանա։ Ընչանք փողը չեմ առնում, ո՛չ գիրք եմ տալիս, ո՛չ աշակերտ կարդացնում։ Լազգին ու Թուրքի մոլլեքը էնպես չեն անում, անփող են իրանց ազգի երեխեքը կարդացնում, էլի աստված նրանց ռզղը հասցնում ա։ Հենց մե՞զ պտի սոված սպանի։ Ամեն մեչըդի հայաթում, գեղ տեղարենքն էլ, մեկ մեծ վարժատուն կա, ուրտեղ երկու- երեք լեզու են սովրում. մեր եկեղեցըքանց հայաթներումը լագլագն էլ բուն չի՛ դնիլ, բաս ի՞նչ կըլի, որ ազգի սիրտն էլ քիչ-քիչ չի՛ հովանալ։

Ով թուր չի՛ առել ձեռքը, թրի ղադրն ի՞նչ կիմանա. ով թվանք չի՛ քցել իր օրումը, ֆորս ի՞նչպես կարա անիլ։ Քրդին հազար տարի ասա՛, թե հնդուհավի միսը, ղաբլու փլավը հիանալի կերակուր ա, տո՛, որ նա իր օրումը նրանց համը չի՛ առել, իր սոխն ու մածունը, թանն ու ճաթը

կծողա, քո սատկի՞ն անկյաշ կանի, խելքդ ի՞նչ ա կտրում։ Ասենք՝ ես չաքած, ասքի դու չե՞ս գիտել, որ երեխի ընչանք ատամները դուս չի՛ գան, կոշտ բան չի՛ պետք է ուտե՞։ Դու ուզում ես անհիմքը տուն շինել, կրակ չի՛ վառած՝ հաց թխել. մմի ծերը թողել ես, մասը ես կրակին դեմ անում. տասնց պտտրուցի ուզում ես ճրագում ինքն իրան քեզ լիս տա՞։ Կացինը գնում ես ծառի քոքին, դու քնում յա ձեռներդ խաչում, դրաղին կանգնում, ծառն ինքն իրան քեզ ցախ կդառնա՞, խելքդ ո՞ւր ա։ Խմորն առանց թթխմորի չի՛ գալ, չի՛, նհախ տեղը ատամներդ գետնին մի՛ ծեծիր։ Անբանացնիլ թուրը կժանգոտի. նամ տեղի ցորենը կբորբոսի։ Անվարիլ հողը թե ցանեցիր, ղուրդ ու ղուշ կուտի սերմդ։ Առաջ մեկ վարի՛ր, հիմքը քցի՛ր, մեկ ազգի աչքը բաց արա՛, դուզ ճամփեն որն ա, էն ճամփովը տա՛ր, սար ու ձոր մի՛ քցիլ, դու նրան քո սիրը ցույց տո՛ւր, տեսնիմ, թե նա քեզ չի՞ սիրիլ։ Ուրըշները մեզ բամբասում են, հերիք չի՛, մենք էլ ենք մեր ոտիցը մեզ ու մեզ ճոլոլակ ըլում, էստով հո բան չի՞ գառնալ։ Հայոց ազգի ջանին ղուրբան, մեկ նրա երեխին ուսումն տո՛ւր, նրա էն լուսաթաթախ հոգին կրթի՛ր, կրթիլ եմ ասում, թուղթ խաղալ, ֆրանցուզերեն խոսիլ, անգիր բերան անիլ, գլխիցը դուս տալ չեմ ասում, ու շարական, փոխ յա շիլափլավ ուտիլ սովորցնիլ, որ մեզ էս տեղն ա քցել, տեսնիմ, թե ջան կտա՞ քեզ, թե չէ՛։

Մինչև գարունքը չգա, ծառը չի՛ ծաղկիլ, առանց ամառի պտուղ չի՛ հասնիլ, դու ուզում ես, որ ձմեռվան էն սառսափ ցուրտ, սառած ժամանակին վարդի հոտ առնիս քո քաղումը, հասած պտուղ քաղես քո բաղչումը, էդ էլա՞ծ բան ա կամ էղլի բակի՞։ Պինդ ոսկորն էլ, որ շատ ծալած մնում ա, թմբրում ա, ճռում ա ընկնում. երկու օր որ թեք ես ընկնում, քամակդ ցավում ա, ոտներդ մեկ գալիս բեզարում. տո՛, ախր հազար տարի ա էս բեռը մեզ վրա, էս բեռը մեր ուսումն ա էլել, ախր որ ասում ես՝ վազի՛ր, բաս ի՞նչ կանեմ, որ գլխիս վրա վեր չեմ ընկնիլ։ Շաքթով սառված մարդին մի՞ս կուտացնեն, ցուրտը տարած տեղը կրակի՞ն դեմ կանեն։ Անձողի հոտը դիպած գլուխը ձնո՞վը կդնեն, թե՞ կրակումը։ Մեզ ազգի հոգին մինչև էսօր քաղել են, հազար տարվա յարա ունի սրտումը, որ դեռ չի՛ սաղացել։ Էնքան դառն արտասունք ա կուլ տվել, որ ո՛չ աչքումը լիս կա, ո՛չ բերնումը համ, ո՛չ սրտումը եղ. դու հենց ուզում ես, որ էստոնք մեկ սհաթումն անց կենա, ի՞նչպես կըլի։ Տո՛, որ մեկ գերեզմանատան համար, մեկ դարտակ ողորմի տալու խաթեր քո ազգի պատվական իշխանքը՝ պարոն **Զավրիևը, Խատիսովը, Դավիթ Թամամշովը, Մովսես Տեր-Գրիգորովը**, հազար ժանիթներով կխարջեն, իրանք իրանց տեղ կբաշխեն, ժամ կշինեն, խալխը ինքն իրան կերթա, իրան հոգովը

մշակությամ կանի անփող, բաս խելքդ ի՞նչ տեղ ա, էնպես ընտիր իշխանքը, էնպես բարեսիրտ ազգը վարժատուն շինելուց, մեկզմեկու օգնելուց կփախչի՞ն, որ մեկ համն առնին։ Ջուրը դարիդուս չի՛ գնալ, սիրենելուց լի՛, չի՛։ Ճամփեն գտի՛ր, առուն սրբի՛ր, քար ու քոլ դեն ածա՛, տեսնիմ, թե ջուրն ինքն իրան կգա՞, թե չէ՛։ Բանը երկարացավ, լսողը չի՛ նեղանա, էլի գնա՛նք մեր դժոխքը։

Հե՛րիք ա, հերիք, աստղ կըլի ինձ, ձե՛ռք վերցրու էդ դժոխքիցը, ի՞նչ էլավ քեզ։ Ա՜խ, ի՞նչպես ձեռք վերցնեմ, բաս ո՞ւր թաղանք մեր ազգի էն սիրուն-սիրուն, լուսաշաղախ աղջըկերքը, բաս մեկ ողորմի էլա չի՛ պետք է ասե՞նք, որ երեսներե վրա, քարի, ավազի, փշի, տատասկի վրով՝ մազներիցը բռնած, քարքաշան անելով, գլխըներին խփելով, մեջքըներին թրեղամշելով, շատ անգամ փորըների վրա պար գալով, քացի տալով, թուր քաշելով, տրորելով, թվանքի ոտքով, լաբըլնի նալչով տալով յալով, թուր քաշելով, տրորելով, կլխշորելով, ձեռները կապած, ոտները բխոված՝ շատ անգամ հարիր վերստ տեղից, հերնըմերն ետևներիցը ընկած, քիր, ախպեր՝ բոբիկ ոտով յա գլխաբաց, քեռի, փեսա, ազգական՝ դոշըները ծեծելով, մազըները պոկելով, հող ու քար գլխըներին տալով, ինչպես մեկ սուրու գառն ու մերը կորցրած ոչխար, տանում էին, բերդն ածում, որ իրանց արդար իմամներին փայ շինեն, հարսնացնեն, թուրքացնեն։ Շատը հենց տանն էր հոգին տալիս, շատը ճամփին, հորն ու մոր աչքի առաջին, էն կյանքը գնում, ուր ցավ, ուր վիշտ էլ չկա։ Շատի սիրտն էլ որ մի քիչ պինդ էր ըլում, ընչանք ա, բերդն էր հասնում, հաջի, մոլլա, քյալբալայի, սուխտա, խան, բեկ, ախունդ, սեիդ վրա էին թափում, որ յա խաբնով հավատից հանեն, յա պատժով, բայց տեսնելով, որ նրանք ո՛չ փառքից են խաբվում, ո՛չ պատժից վախում, ո՛չ խանզադության թամահ անում, ո՛չ մահից ահ քաշում ու ուզում էին՝ Քրիստոսի հարսնանալ, կույս գնալ աշխարքիցս, որ հրեշտակաց դասը դասակվին, իրանց սուրբ հավատը չէին ուրանում, պատիժ, պատուհաս, սուր, հուր, բոց, կրակ, սով, մահ, մեկն էլա աչքըները չէին բերում, որի ոսկեթել գլուխն էին հորնըմորը տալիս, որի լուսաթաթախ լաշը, որի ձեռն ու ոտը։ Աղջիկ, ու էնքան սի՞րտ... քար ըլեր՝ կպատռեր։ Աստված նրանց հոգին լուսավորի։

<4>

Է՛ս սիրտը, է՛ս հավատը, է՛ս հոգին, է՛ս սերն ուներ Հայ ազգը, որ թշնամու, գազանի ձեռի, երկիր, աշխարհ, ազատություն, թագավորություն, իշխանություն, մեծություն, բոլոր, բոլոր կորցրեց, իր հավատին մատաղ տվեց, աղքատություն, նոքարություն, գերություն, դարիբություն, տան-

ջանք, չարչարանք, սով, մահ հանձն առավ, որ իր սուրբ եկեղեցին, իր լիս, լուսավորչադավան օրենքը ամուր, հաստատ ու անխախտ պահի։ Է՛ս ա հսկայություն, սրտապնդություն, մեծահոգություն, քաջություն, կամաց հաստատություն, հոգու կարողություն ու զորություն, որ աշխարքիս վրա, ջրհեղեղիցը դեսը, մեկ ազգ էլա մինչև էսօր չի՛ կարաց ու չի՛ էլ կարող ցույց տալ։ Սար ըլեր՝ փուլ կգար, երկաթ ըլեր՝ կհալչեր. կմաշվեր, ծով ըլեր՝ կպակսեր, կցամաքեր, բայց աստվածասեր Հայ ազգը մինչև էսօր գերօրինակ հսկայությամբ տարավ բոլոր ու իր անունը պահեց։

Թողա՞նք էն խեղճ, քոթրոմած, աչքից, ձեռից, ոտից ընկած, էն սիրուն տղամարդ երիտասարդ հայերը, որ էսօր էլ Երևանումը, որը ջուխտ աչքով քոռացալ՝ ա՜խ, ո՜խ քաշելով մաշված ա իր հարսի, օղլուշաղի երեսին մտիկ տալիս, որը ո՛չ գդալով ա հաց կարում ուտիլ, ո՛չ ձեռով, ուրիշը պետք է, երեխի պես, թիքեն բերանը դնի, չունքի ո՛չ պռոշներ ունի, ձեռներն էլ ուսաբերնիցն են կտրել,— որը քոթրոմացել, անդամալույծ ա դառել, սելով են ման ածում, որը քիթ չունի, որը լեզու, սրտըներն ուզում ա տրաքի, որ ուրիշը խոսում, խնդում ա, երեխեքը լալիս յա ծիծաղում են, բալքի թե մեկ ազար, մեկ մուրազ ունի սրտումը, լալի (մունջ) պես, մանուկ օրորոցկանի պես ոտին-գլխին պետք է անի, որ միտքը հասկանան, բայց ինքն ուրիշին ո՛չ մեկ չոռ ա կարում ասիլ, ո՛չ մեկ ջան։ Քանզվի՛ էսպես տերությունը, հաստատ մնա՛ Ռսի թագավորությունը, որ մեր ազգն ու աշխարքը գերությունից ազատեց, իր բարեգութ ձեռի տակը բերեց ու հոր պես մեզ խնամում, պահպանում ա։ Էն ի՞նչ լեզու, էն ի՞նչ աչք պետք է ըլի, որ ամեն մեկ երկինքը տեսնելիս փառք չտա աստծո, երեսը գետինը չքսի ու մեր ամենողորմած կայսերը կյանք, առողջություն, զորություն, նրա արքայազն որդոցը ու զավակացը՝ կենդանություն, բարեբախտություն, ու հզոր տերությանը՝ հաստատություն, պայծառություն, մշտական տևողություն չխնդրի, չաղաչի։

Էսքան բաները լսեցիր, սի՛րելի կարդացող, բաս ի՞նչպես չի սիրտդ վառվիլ, որ դու է՛ն ազգի որդին ես, որ էսքան տանջանք քեզ համար քաշեց, ինքը նահատակվեց, քո կաթդ ու արինդ ուրիշ ազգի հետ չխառնեց։ Էնպես կարծում ես քի՞չ բան ա, հազար տարով էս օրը քաշիլ, էլի ազգ պահիլ, որդի մեծացնիլ, անուն, լեզու, հավատ ունենա՞լ։ Ա՜խ, էս միտքը անողը էլ ի՞նչ սիրտ պետք է ունենա, որ իր լեզուն, իր ազգը չսիրի։

Ասենք՝ բլբուլի լեզուն քաղցր ա, վերու հավին (խոխոբին), սիրամարգին աստված գեղեցիկ գույն, սիրուն թևեր ու բմբուլ ա տվել։ Ասենք՝ վարդը շատ գովելի ա, բաս ընչի՞ չի մանիշակը իր ռանգը, իր հոտը նրան

տալիս։ Մի՞թե վարդին տեսնողը մանիշակին չի՛ սիրիլ։ Սարի անհոտ ծաղիկն էլ իրան տեղը, իրան փառքը վարդի հետ չի՛ փոխիլ։ Մի՞թե բլբուլի լսողը կանարեյկին էլ չի՛ պետք է պահի։ Ամեն բան իր գինն ունի, շաքարեղենը քաղցր ա, ամա հացի տեղը ե՞րբ կբռնի։ Շամպանսկի գինին անուշ ա, ամա ի՞նչ անես, որ մեր երկրումը չի՛ դուս գալիս, մեզ թանկ է նստում։ Ասենք՝ ջավահիրը, ալմաստը շատ ջուհար ունի, շատ մեծ գին, ի՞նչ անես, որ նրանով տուն շինիլ չի՛ կարելի, ամեն մարդի ձեռք չի՛ ընկնում։ Ասենք՝ հարևանդ հարուստ ա, օրը տասը տեսակ կերակուր ա ուտում, ձեռդ որ չի՛ հասնի, պետք է որ քո հացն է՞լ դեն քցես։

Ա՜խ, լեզուն, լեզուն. լեզուն որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի։ Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը: Լեզուդ փոխի՛ր, հավատդ ուրացի՛ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգիցն ես։ Ինչ քաղցր, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մոր կաթը նրա համար շաքարից էլ ա անուշ, մեղրից էլ։ Մեր կաթն էլ որ ծախենք, առնող չի՛ ըլիլ։ Մեր աչքը որ հանենք, ուրշին տանք, ուրիշը կարելի՞ ա դնել տեղը։ Մեր օրորոցի վրա մեր լեզվով մեզ նանիկ ասեցին, է՛ն էլ ա մեր միտքը չի՛ պետք է ընկնի՞։ Ասենք՝ նոր ապրանք շատ ես առել, հինը պետք է դե՞ն ածած։ Էն վայրենի ազգերն էլ իրանց սոպռ լեզուն աշխարքի հետ չե՛ն փոխիլ։ Հո լսել ես շատ անգամ մուզիկի ձեն, սաս՛, քո սազն ու բայաթի՞ն ա քեզ դիր գալիս, թե՞ էն։ Էնպես մարդ կա՝ տասը- տասնըհինգ լեզու գիտի, ամա նա իր լեզուն միշտ ամենիցը լավ աշի, իր ազգի հետ խոսալիս ամոթ ա համարում կամ ուրիշ լեզվով իր միտքն ասի, կամ ուրիշ բառ հետը խառնի։ Խառնի՛ր քո սիրեկան խաշի հետ ձուկը, շաքար, կանֆետ (շաքարեղեն), չամիչ, չիր, խիզիլալա, տե՛ս, ի՞նչ համ կունենա։

Ախր որ ասեմ ես՝ փրոֆոլիվաքսա արի, սֆուշնա եմ, օփիժաքսա էլա, փեզչեսփրոշենի տվի, սանյաքիե շատ ունիմ, գլուխս ֆրուժիքսա էլավ, փեզչեսքենի մարդ ա, ռազփոյնիֆ ա, յափեքնիֆ օքմին ես, գնանք ֆուփաքսա ըլինք, սոփրանիեմեն եմ գալիս, փրոիզրաքսա արին, ճամփին ֆսեքֆի ուքռփնռ ա, շատ խլափոք սլուչիքսա չի՛ ըլում և այլն։ Ա՛չքիս լիս, մի մտածի՛ր, թե լսողն ի՞նչ կասի։ Իսկ գիտուն, լուսավորյալ մարդը նա է, որ ամեն լեզու, քանի կարա, իստակ խոսա։ Դու քո լեզուն որ իստակ խոսաս, ի՞նչ վնաս ունի, հենց գիտում ես խելքդ ձեռիցդ կառնե՞ն, թե՞ սովորած իմաստությունդ ջուրը կթափի, կամ թե չէ, տերության սիրտն ես ուզում շահի՞լ։ Բարեխնամ տերությունը ե՞րբ կուզի, որ մարդ իրան լեզուն կտրի, իր ազգիցը հեռանա։ Բաս էլ ո՞ւր են էսքան վարժատուն շինում, վարժապետ պահում, ստիճան, պատիվ տալիս։ Ֆրանցուզ, նեմեց, ինգլիզ որ քո լեզուն սիրում, գովում են, քանի՞ պատիվ դու էլ պետք է սիրես ու գովես

Քեզանից չեմ նեղանում, ա՛չքի լույս, մեր բախտիցը ժամանակն էնպես ծռվել էր մինչև հիմա, որ մարդ իր գլուխը չէ՛ր կարում պահիլ,ո՞ւր մնա՝ լեզվի դարդը քաշիլ։ Էս ա պատճառը, որ մեր նոր լեզվի կեսը թուրքի ու պարսից բառ ա։ Բայց սրա դեղն էլ հեշտ ա, քիչ-քիչ կարելի ա խստակել, երբ որ ազգը ուսումն առնի ու իր լեզվի բառերը քիչ-քիչ հասկանա։ Էս էլ հերիք ա, որ թուրքի լեզուն, որ իրանք թուրքերը չեն գրում, միմիայն խոսում են, ու մեզանից որքան բռի են ու կոպիտ, բայց էլի էնքան ա նրանց լեզվի համն ընկել մեր ազգի բերանը, որ խաղ, հեքաթ, առակ թուրքերեն են ասում, իրանց լեզուն թողում. պատճա՞ռ. չունքի սովորություն ա ընկել։ Ազգին անհավատ են կանչում, լեզուն սիրում. զարմանալու չէ՞։ Ախր ո՞վ ա լսել, թե ծծմոր կաթը մոր կաթիցը լավ ըլի։ Էսքան խառը լեզվի հետ դու էլ որ քո իրոֆուլիվաքսան, մրոֆուլիվաքսան ես խառնում, ախր դրանից ի՞նչ համ դուս կգա։ Էլ ավետարան, գիրք, ժամասացություն ի՞նչ կհասկանաս։

Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնի՛մ, ձեր արևին ղուրբա՛ն. տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայիմ բռնեցե՛ք։ Մեկ դարտակ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկարենա սովորիլ։ Բաս չե՞ք ուզիլ, որ դուք էլ գրքեր գրեք, ազգի միջումն անուն թողաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ։ Ինչ կուզե ֆրանցուզերեն, նեմեցերեն գիտենանք, մենք չենք կարող էնպես բան գրիլ, որ նրանց միջումն անուն ունենա, չունքի նրանց միտքն, նրանց սիրտն ուրիշ ա, մերն՝ ուրիշ. մեկ էլ, որ նրանց միջումն էնքան գրող կան, որ ո՛չ թիվ կա, ո՛չ հեսաբ։ Ռուսաց լեզուն մեր տերությանն ա, պետք է ամենից առավել համարենք, հետո մեր լեզուն ձեռք բերենք։ Բաս ձեր սիրտը չի՞ ուզիլ, որ դուք էլ ոտանավոր գրեք, ձեր միտքը, ձեր խորհուրդը հայտնեք, որ այլազգք իմանան, թե մեր միջումն էլ ա էլել երևելի գրող, ու մեր լեզուն դհա ավելի սիրե՞ն։ Աստված կյանք տա էն ծնողացը, որի որդիքն ինձ մոտ են։ Նրանց առաջին խնդիրն միշտ էն ա էլել, որ նրանց որդիքը հայերեն լավ գիտենան։ Գերեզմանն էլ որ մտնիմ, նրանց էս սուրբ խոսքը մտքիցս չի՛ գնալ։

Ընչանք Երևան գնալը մեկ քանի ամիս ժամանակ ունեի, էնգուր համար էսպես ճամփես ծռեցի։ Ձմեռն անց ա կացել, ամառն էկել, վա՜յ նրան, որ էս շոգին գնա էնտեղ։ Ես պետք է գնամ. ո՞վ կուզի՝ հետս գա։

<5>

Ճաշվա շոգն անց էր կացել։ Սար ու ձոր գլխըներն էլ ետ բարձրացնում էին, որ փոքր շունչ առնին։ Արեգակը Մասսա քամակիցը հանդարտ

աչքը բաց էր արել, մունջ-մունջ Երևանու բերդին մտիկ էր տալիս ու էն ա, ուզում էր, որ կամաց-կամաց մեր մտնի։ Թանձր խավարը, սև դումանը էկել, բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացրել, կալել էր։ Ղուշը տեղիցը չէր ուզում ժաժ գա, հավը բնիցը գլուխը հանի։ Ամեն տեղից ոտքը խաղաղվել, ամեն տեղից ձենըձոր լռվել, պապանձվել, փասափուսեն քաշվել էր։ Ջուր չրողը առվի վրա էր թեք ընկել՝ քնած մնացել, վար ու ցանք անողը՝ հանդումը, բաղմանչին իր ծառի տակին, շվաքումը քուն մտել, դինջացել։ Մարդ, խնս, ջինս՝ գեղերումը էլ չէին երևում։ Բազի կոնդի (բլուր) ծերից, բազի սարի դոշից, բազի ճամփում, չոլում մեկ սև մազի չափ ղարալթու սևին էր տալիս, ձիու քամակիցը դես ու դեն թեքվում, երեսի, քամակի վրա շուռ գալիս, էլ ետ գլուխը դզում, օրղանգուն ու ղանթարղեն ժաժ տալիս, ձիուն քացի տալիս յա ղամշով խփում, որ ոտները մի քիչ եդին փոխի, թեզ տեղ հասնի։ Բազին էլ ձեռն անկաշի քոքին դրած՝ տխուր, բարակ ձենով մեկ բայաթի էր քոքել, քթի տակին, ձիու չիլաժը գլխին քցած՝ ինքն իրան բզզում, գնում էր, որ տուն հասնի ու իր բեզարած, չարդված ջանը կամ մեկ շվաքի տակի դինջացնի, յա իր տան դուռը, իր օղլուշաղի երեսը, քանի որ գեռ մութը վրա չէ՛ր հասել, տեսնի, ու սիրտը բաց ըլի։

Հոտաղներն (մեխրե) էլ իրանց գութանի տավարը բաց էին թողել, լուծը ետ արել ու մեկ քոլգի տակի՝ գութանը մեկ կողմը, եզըները՝ մյուս, ջրերի ղրաղին վեր էին թափել, քաղցր քուն մտել։ Նախիրը մեկ դզում, փընթշխարի սուրումն՝ մյուս, շվաք տեղը նստել, չանեն չանի էին քսում, փընչացնում, արոճ անում։ Չոբանն էլ գլուխը մեկ քարի վրա դրած՝ նդղել, աչքը կպցրել էր, որ շոգը քաշվածին պես վեր կենա, սուրուն իրիկնահովին մեկ լավ խոտավետ տեղ տանի, արածացնի։ Օյաղ շների մեկը է՛ս ցցի վրա, մեկը մյո՛ւս թափի ծերին, յա չոբանի ոտի տակին, գլուխը դրել, նոթերը կխռել, մարաղ էր մտել, որ թե գող, գել կամ գազան սիրտ անի, մոտենա, բերդանբերը վրա թռչի, թիքա-թիքա անի, իր տիրոջ ոչխարները պահի։ Մեկ կանաչ խոտ, մեկ դալար թուփ կամ մեկ ծաղիկ մեկ տեղ էլա չէր երևում, որ մարդ հոտն առնի կամ երեսին մտիկ տա, սիրտը բացվի ու իր ճամփի երկարությունը մոռանա, կամ շոգի ձեռիցն էրված, խորոված ջանին հովություն տա, էնպես էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձվել, պապանձվել։ Միմիայն խոտերի չոփերն ու քոլերի սուր-սուր ծերերն էին էստեղ-էնտեղ ցից-ցից գլուխ բարձրացրել, տխուր, տրտում, մոլորված, պաշարված կանգնել, մնացել։

Սև-սև ջամդաքոլեր ապառաժները յա վախլուկ տալաշներն էին հենց մենակ մնացել, որ էստեղ-էնտեղ, մեկ քարափի ծերի յա մեկ բրչի գլխի,

յա թե չէ, մեկ ճամփի միջում, իրար գլխի հավաքվել էին, նստել կամ պտիտ էին գալիս, իրար կտցահարում, իրար թևերից քաշում, որ մեկի գտած որսը ձեռիցը խլեն, փայ անեն, իրանց ձագերին էլ տան կամ հետըները տանին։ Օձ, կարիճ, խլեզ, բզեզ ու ինչ կերպ ջանավար ասես՝ մորեխ, մժեղ, մեյդան էին բաց արել։ Որը մեկ քոլի տակիցը, որը մեկ քարափի բաշիցը, որը խոտերի միջին, կամաց-կամաց ժաժ գալով, պոչ ու գլուխը իրանց քաշելով կամ ծլունգ ըլելով, էլ ետ տազ անելով կամ գետնի ապառաժի վրա սողալով, փշտացնելով, շվացնելով, փշշացնելով, ծվալով, ծղրտալով՝ ոտն էին էլել, ուզում էին իրանց արևի ձենն ածեն։ Որն էլ իր բնի առաջին արևկող անելով՝ գլխըները հանել, մունջ-մունջ անկաջ էին դրել, սուր-սուր աչքըները ցցել, պսլացել, շլացել՝ էս կողմն, էն կողմն մտիկ էին տալիս, որ ոտքը խաղաղվելիս դուս գան, մի քիչ շունչ քաշեն, իրանց քեֆն անեն, իրանց ոզզը ճանկեն, էլ ետ իրանց բունը մտնին, էլ ետ գնան, քնին, դինջանան։

Բաղի պատածակի արանքից կամ քարի ծերից էլ մեկ նաշար բայղուշ (բու)՝ գլուխը խոր վեր թողած, քիթ ու պռունկ կիտած, ծանրացած, գետնին նայում էր, իր սև օրը լաց ըլում։ Հավի թշնամի ուրուրն էլ (ձերեն) թևերը փռած, չանգերը սրելով, բաց ու խուփ անելով, կտուցը սրբելով կամ դոշը քուջուջելով, երկնքի տակին գլուխը դոշի տակին քաշ քցած՝ սուր աչքերը էս դեհն, էն դեհն էր քցում, պտտում, հազրվում, որ բիրդանբիր, ական թոթափել վեր վազի, մեկ լղպոր ճտի գլխի,— որ իր մոր թևերի տակին կամ մոր գլուխը քորելով, թևը քաշելով, ծվծվալով, կտկտալով կամ կտուց-կտցի տալով, մոր կրխալուն, ծվալուն անկաջ դնելով՝ սուս-փուս նստում էին իրար հետ կամ քուջուջ էին անում,— կամ մեկ խեղճ անճար լորի քամակի խփի ու ճվճվացնելով, ծղրտացնելով՝ վեր քաշի, քրքրի, թերթի ու իր ագահ փորին մատաղ անի։

Ահա՛ գեղեցիկ, անզույգ օրինակ անսիրտ, բարբարոս Պարսից՝ ժանդ բռնակալաց, մաշողաց ազգի, երկրի Հայկա զավակաց։

Էսպես մեռել, լռվել էր բնությունը, ու մեկ շփլթու էլա մեկ տեղից չէր լսվում։ Միմիայն հեռու տեղից մեկ բարակ քամի բաղի-բաղի վախտ փչում, ծառերի տերևները սլլացնում, ժաժ էր քցում ու գոլ-գոլ՝ մարդի երեսին, բերնին ձեռը նազուկ քսում, շուտով անց էր կենում ու փշերի, խոտերի, քարափների, ձորերի մեջը մտնում։ Ինչպես ծխի մեջը խրված՝ հեռու տեղից դաշտի գեղերը, հանդերը, փոսերը մթնած, լռված, ինչպես սև ամպի կտորներ կամ էրված, խանձված տեղեր, էս տեղից, էն տեղից սևին էին տալիս ու խառնիխուռն երևում։ Արազը, ինչպես մեկ նետ օձ կամ էրծաթի գոտի, արևմտյան կողմիցը, ձորերի միջիցը իր սուր, լռսա-

փայլ ճակատն ու գլուխը բաց էր արել ու մրմունջ, հանդարտ, լուռ գալիս, Մասսա փեշին մի քիչ թևով խփում էր, շփում ու էլի ծուռն աչքով նայելով, նրան հաթաթա տալով, ձենըձոր անելով, գլուխը պտտելով՝ գնում, Ջանգվին ու Գառնու գետն իր ծոցն առնում ու խաղալով, խայտալով, վռվռալով հեռանում քվերտանց հետ ու պռունկ-պռնկի, դոշ-դոշի, քամակ-քամակի տված, իրար գլխի, երեսի ձեռըները քսելով, փաղաքշելով, հանաք անելով, աչքըները խփում, նղղում ու Շարուրի դուզ ծոցումը ծեծված, ջարդված՝ քուն մտնում։

Էս տխուր մեյդանի չորեքշուրջը, աչքդ որ բաց չես անում, մեկ էլ էն ես տեսնում, որ բաղի վախտ երկինքն ամպակալած՝ ուզում ա, որ սար ու ձոր ոտնատակ տա, Ալագյազա, Մասսա ու մյուս սարերի գլխին բամբաշի, պոկի, նրանց գետնի, խցկի, որ համարձակում են իրանց գագաթը էնպես բարձր վեր քաշել, որ բոլոր ամպերը վերևը ոտի բռնելու տեղ չունենալով՝ իրանց երկինք մորիցը խռոված, վեր են գալիս ու նրանց գլխին քուլա-քուլա դիզվում ու էնպես իրար վրա նստում, որ շատը տեղ չունենալով՝ մյուսներին քռիչ ա տալիս, բոթբոթում, դուս ա քցում ու նրանց տեղը բռնում։

Էս հաղաղին էր, որ մեկ սև ղարալթու բարակ օձի պես կամաց-կամաց գլուխը դուս քաշելով, դզվելով, աջ ու ձախ ծանր-<ծանր> մտիկ տալով, մեկ բարձր մինարեթի ծերի պտիտ տալով, քնահարամ մարդի պես ձեռը ուսուլով բարձրացրեց, անկաջին դրեց, գլուխը քամակի վրա թեքեց ու ճլերք ընկած հիվանդի պես սկսեց ձենը ծոր քցել և, ինչպես մեկ խոր ձորից, կանչել. Ալլա՜հո՜ւ-ակբա՜-րո՜ւ... (բարձրելոյն աստուծոյ)։

Էս ձենը դուս էկավ թե չէ, հենց իմանաս, մեկ ամպ տրաքեց, ու ձենի տուտը հազար կտոր ըլելով, գետինը ժաժ տալով, սար ու ձոր իրարոնցով քցելով՝ քարափների, էրերի արանքներովն անց կացավ ու քիչ-քիչ ձգվելով՝ բարակացավ, խզվեցավ, կտրվեցավ։ Ինչպես մեկ բունը քանդված մեղրաճանճի թարում, էնպես դուս թափեցան ուղղափառ մահմեդականքը. որն իր դուքանիցը, որը բաղիցը, ձորիցը, որը քնաթաթախ, որը սովու աչքը կուլ գնացած, ձենը փորն ընկած, ռանգը սփրթնած, ունքեր, նոթեր կիտած, գլուխը կախ քցած, որը մեկ ավթաֆա ձեռին, փեշերը վեր քաշած, գոտիկը խրած, Խորասանու սև մորթի երկար գդակը ունքերին քաշած, միջի վրա կոտրած, թուխ ճալվերը (քոշորը) երկու տակ՝ անկաջներն էս կողմն, էն կողմն ոլորած, քցած, գլուխը պլոկած, կլեկած, վեր արած. վիզն ու բուկը կեղտով, քրտնքով սևացած, կոշտացած, տարթի պես բասմա ընկած, երկար, բարակ միրուքը հինա դրած, սևացրած, կոկած,

մեկ սև կամ մուգ կանաչ լեն բոքանի ֆարաջա՝ անյախա, անկաճակ, ուսերին քցած, փեշերը ղայիմ բռնած, երկուտակ կապի, չիթ արխալուղի բաղանները (շաքերը) բռթը մինչև ոտը ճղած, անթիվ դուգմեքով (կոճակ) թև, դոշ իրար հետ սխ, պինդ կոճակած, կպցրած, շալակի բոհճակ, սիպտակ յախեն, ինչպես մեկ ղաշղա եզան ճակատի խալ, թամուզ դուս թողած, բկին կպցրած, որը թիրմա շալի կամ սիպտակ կտավի մեկ բեռը գոտիկ, ինչպես մեկ մարգի (կվալի) թումբ կամ մեկ բոշքի կապ մեջքովն ոլորած, պիրկ կապած, մեկ ոսկորագլուխ, ծուռը խանչալ կամ մեկ հաստ, սրած կոլոլ թուղթ թեք մեջը խրած, կապած, մեկ չխալի ղդար, բերանը բաց արած, ղրաղները սիպտակ դերձանով մանր-մանր կարած, լեն, կարմիր ղասաբ կամ մուգ մավի ատլաս փոխանն ու շորերի փեշերը գաբերին (լուլա) տալով, քարերին խփելով, հող ու թոզ սրբելով, քամու առաջին, ոտների առանքին դես ու դեն ծալվելով, բացվելով, ֆռֆռալով, ոտները կաղ քցելով, գորտի բերանի նման սաղրի քոշերը՝ ծերը նեղ, բերանը լեն, ճոթռած, կրունկը սուր, բարձր, երկաթով նալչած, ոտի տակին քաշքշացնելով, ծլփծլփացնելով, չալ, ճիտը կարճ, բրդի հաստ գուլպեքանց հետ, սև, բաց-բաց գաբերի հետ հանաք անելով, խաղալով, կրնկին ծեծելով, թոզ, ավազ գետնիցը հավաքելով, անուշ-անուշ կուլ տալով, դուս ածելով, էլի հատիկ-հատիկ բերանը քցելով, չտրաղ անելով,-ոտների տակը ծակելով, բզելով։ Որը մեկ փալան սիպտակ կտավե չալմա (գլխի փաթաթան) գլխին փաթաթած, որը մեկ շիլա թասակ անկաջները պրծացրած, որը մեկ ոչխարի քոսոտ փոստ կատարին կպցրած, որը մեկ գելի քուրք ուսերին քցած, որը մեկ իծի յափնջի՝ կորատված, քրքրված, բուրդ ու մազը գզգզված, դուս դառած, ճոլոլակ կախ էլած, հազար տեղից ճղված, ճոթռած, հազար թելով, ղայղով շուլալած, կարկատած, տոպրակի պես ծակած, շլնքովը քցած, չաթվի կտորով բաղդադի տակին պինդ ղայիմացրած, շարմխած, գոմշի կամ եզան տրեխները հագին, զանգալները կամ մաշված պաճուճները վրեն, երեսին ու միրուքին հազար տարվա կեղտ, աղբ տարթ դառած, նստած՝ բարանջյամա յա ղալամփափախ, մեկ չաթու ճտին, մեկ մոթալ փափախ գլխին, տոպրակն էլ հա յափունջին էր,— դուս թափել, գնում են։

Մե՜ր տղա, չծիծաղես, լավ չեն ասիլ, ամոթ ա. կարելի ա մեկ քացախած ճամփորդի քեֆին դիպչի, տարինք անի, փոլանը շառ տա, հետո տուրուղմբոց քո գլխին գա։ Տե՛ս, ես իմ պարապիցը դուս էկա, կուզես ծիծաղի, կուզես պա՛ր արի, չունքի հանաք-մասխարությանս չի՛ էսքան հրաշք տեսնիլ, աչք ու բերան բանիլ, ո՛չինչ չասիլ կամ սուս ու փուս կշտովն անց կենալ։ Հմիկ դու գիտես

Էսպես, ինչպես ասեցինք, մեր ուղղափառ, աստվածապաշտ, նամազասեր, այլ ո՛չ քրիստոնեական մոլլեքը, ախունդները, հաջի, թաջիր, սրախլու, զըլբաշ, թարաքյամա, ղարափափախ, մսկլու, չոբան, քուրդ, պարսիկ, բեկ, խան սարից, ձորից, տանից, հանդից, գեղերից, յայլաղից, բազարից, ափից, սրից, ինչ ասեմ-չասեմ, վեր ածած՝ գութանը հանդումը, ոչխարը սարումը, տավարը նախրումը, ջուր, վար, ցանք տեղնուտեղը երեսի վրա թողած, ինչպես մեկ թունդ կավի ժամանակի, իրար ղըլխավ դիպչելով՝ Երևան էին թափում։

Մեկը ուղտի վրա նստած՝ տմբտմբալով, մեկը իշի քամակին բազմած՝ չո՜շ, չո՜շ ասելով, մեկը յաբվի վրա ուռած՝ դա՛հ, դա՛հ անելով, մեկը գոմշի մեջքին՝ հա՛ ապա՛ կանչելով, մեկը եզան պոչի տակին՝ հո՜, հո՜ ձեն տալով, մեկը ղաթրի ուսին՝ բզելով, ը՜մ, ե՜րի գոռալով, մեկը արաբում, մեկը քեջավում՝ հազար տեսակ ձենով իր ուլախին քշելով. որը քյահլյան ձիու վրա նստած, յարաղ-ասպաբը կապած, զարդարված, թվանքն ուսին դրած՝ ծվծվացնելով, օղանգուն զնգզնգացնելով, որը ոչխարի, իծի սուրսուն առաջին, որը մեկ դաան ուսին քցած, որը մեկ գիժի պարկ վզաքոքին կապած յա թվանքը միջովն անցկացրած, որը մեկ աղջի մոթալի շուռ ավլած, հաքած,— մե՛ր տղա, տե՛ս ու քե՛ֆ արա, էս թամաշեն թանկ ածի,— որը գոմշի կաշի, արն իծի մորթի, որը մեկ շան թուլա եղևին քցած, որը մեկ աքլոր թռչի ձիու կաքին կապած, որը մեկ գամփռ շան ակլի ականը թակած՝ էնքան վազել, հեթեթացել էին էս խեղճ կազանքը, որ լեզվները մեկ զազ կախ էր ընկել, աչքները դուս պրծել։ Որի արաբումն խնոցի, օրորոց, ամամ-չամամ, ամա բոլորը դատարկ. որն իր լակոտը քամակին ղայլով կամ փալասով կապած, չունքի ջատի հաքին էնքան շոր չի կա, որ երկու աբասով առնես, էն էլ կեղտով, ծխով սևացած, մուր դառած։ Որի սելումն կամ ծոցումն մեկ կատու, հազար տարվան, ժանգոտած, բոլբոսնած, քաքոցած ճաթ (այսինքն՝ կոթեկի հաց), որը քթոցով յա քաղալագով՝ հավ, ճիվ, ձագ, թուխսը, ձագեր, ճուտեր, չալ-չալ վառեկներ մեջն արած։

Հիմիկ ով մարդ ա, չծիծաղի, քարաքյալլա կասեմ. չունքի էս լավ, հնազանդ անասունքն ու թաշտերը իրանց տիրոջ ավածը կամելով էլ ետ տալ, հեսաբը գրատիլ՝ գազ ասես թե ջեր, խալուջին, սուփրա, ամամ, մարթարա, միրաք, երես էլ չէին խնայում, չունքի ոտերի շատը շաքի ձեռիցը անուշ-անուշ քնած ա սելումը ու երազ ա տեսնում։

Էսպես՝ մեկի ձեռին դամչի, մյուսի՝ գավազանակ. մեկի ուսին մանգաղ կամ երկար ձողի՝ չալաղի համար. մեկի դդակի առանքումն ղաշխլ ու մախաթ կամ թաղամյան կալ-ած, ասեղ մալլի թաշխած. որը մեկ ֆարթի թեկ,

որը մեկ շան ըհիր, որը մեկ ձիու նոխտա, որը ձիու կամ իշի փալանը քամակին դրած. շատ տեղ խեղճ հայերի կալն ու դեզը տաղըթմիշ անելով, կամ ձին խլելով, կամ բաղը քանդելով, խոռը վեր ածելով, բաշը ցրվելով, տնքալով, ճրրալով, ննջելով, բուղուրմիշ ըլելով, բայաթի ասելով, խաղ կանչելով, քյալլեի զլելով, մինչև գազանների քեֆն էլ բաց էլավ. որը վնգվնգում էր, որը տրլնգում, որը բղղում, որը խրխնջում, անչափ մի անչափ մեկ ջրի ղրաղ հասան, հենց էշը զռաց, շունը մռաց, փառք հավիտյանս ամեն, մոլլա Մասրադնի առակը տեղն էկավ, մեր ուխտավորքն էլ վեր էկան, որ ոտ ու ձեռք լվանան, հետո մտնին Երևան, չունքի էսօր նրանց Մհառլամն էր։

— Ալլա՜-հո՜ւ, բս՜-մլլա՜հ... ըլ ռա՜հ-մա՜ն... ըլ ռա՜-հի՜մ... չախսե՛-վախսե՛... Հասա՜ն, Հո՜ւ... սեյն, աղա՜մ... վա՜... Յա՛ Ալի՜... չախսե՛-վախսե՛...

— Հերի՛ք ա, հերի՛ք, նամազ հո չի՛ պիտի անենք,— ինձ ասող կըլի։

Ո՞վ ա ասում, թե նամազ անենք. միտքս էն էր, որ ցույց տամ, թե մեր դրացի պարսիկքը ինչպես են սկսում իրանց աղոթքը։

Հմիկ գնանք Երևան, որ Մհառլամը տեսնինք, ի՞նչ կասես. էս ձենըձորը էնտեղանց ա գալիս, էս սաս ու մարաքեն էնտեղ ա. ամա ծածուկ պետք է մտնինք, չունքի ինչ ունինք չունինք կառնին, մեզ էլ եզըդի կշինեն, որ իմամներին սպանեցին, էստուր համար էսօր որտեղ որ մեկ հայ ձեռք են քցում, ոտն ու ձեռը կապում են, լավ շորեր հաքցնում, ձի, յաբաղ, ասպաբ տալիս, ընչանք որ սուգ ու շիվանն անց կենա, Հասան-Հուսեյնի կարգը կատարեն, կտակը կարդան, հետո վա՜յ քո օրին, արևին. շորերդ հանում են ու ոտիդ-գլխիդ տալով դուս խռկում, հետ ածում։ Ո՞վ կարա խոսալ, տերությունն իրանցն ա։

— Սվանղուլի խանը, յա Ջաֆար խանը, իմ փիրս ա, իմ տերս, իմ աղեն,— մեկ երևանցի հայ ասում ա քեզ,— գնանք նրանց տունը ու էնտեղանց գնանք, թամաշ անենք։

Ի՞նչ անես, մարդի փիրն աստված ա, ու իր տղամարդությունը, ամա սրանք փետի տակին են մեծացել, էսպես որ չասեն, բանը բան չի՛ դառնալ։ Էս անգամ էլ մեր երևանցու խոսքին անկաչ անենք ու գնանք, որ էս հանդեսը տեսնինք, թե չէ ժամանակն անց կկենա։ Աչքդ սառչի ո՛չ. սըրտիդ ու բերնիդ հուպ տո՛ւր, որ չծիծաղիս, թե չէ գլուխդ կկտրեն, աղիքդ վեր կածեն։ Քուչեք, փողոց, մեյդան, բազար, հայաթ, կտուր՝ մարդի ձեռիցը ղվվում են։ Էս ո՛չինչ. կարելի ա քեֆ են անում. դու ո՛չ մեռնիս. ու ըլի էնպես քեֆը, իրանց սպանում են. մեկը դոշին ա խփում, մեկը գըլխին վեր հատում. մինը բողազը դուս ճոթռում, մյուսը միրուքն ու մազերը պոճոկում, սուգ անում, ոտ ու գլուխ քարերին ծեծում, վա՜յ, հարա՜յ, տալիս, գոռում, բղավում, է՛ս պատին, է՛ն պատին քոռի պես գլուխը խփում։ Ախր ընչի՞, ընչի. էս ի՞նչ խաբար ա, դատաստանի օրը հո չի՛ հասել, ո՞վ ա սրանց տունը քանդել։ Հլա համբերի՛ր մի քիչ, քո ցավը տանիմ, տռհաշչություն ի՞նչ հարկավոր ա, լոբի հո չե՞ս կերել. մի քիչ ձենդ փորդ արա՛, հետո կիմանաս։ Գնա՛նք մեչիդը, մեր երևանցին մեզ ձեռաց չի՛ թողալ, մի՛ վախենար։

Վա՜յ քո տղիս-տղա, էս ի՞նչ բան ա. տո՛, մի մտիկ արա՛, տո՛, է՜յ, քե՞զ չեմ ասում, շլնքիցդ հո ջաղացքար չի՛ կապած։ Էս մարդը գժվե՞լ ա, է՛ս ինչ մարաքյա ա։ Կա՛ց, կա՛ց, մի մտիկ անենք, հետո բանի զորությունն իմանանք, մեզ ով ա հետ ածում, կրակ չի՛ վառվել հո ոտըներիս տակին, մի քիչ համբերենք։

Մեկ հաստափոր թուրք՝ մեկ ղաբա միրուք, վրեն իծի քուրք, բալքի արչի ա, հլա քննելու վախտը չի՛, երեսը եղ քսած, մատները հինա դրած, կեղտոտ շորերով, վզին հո, աստված ո՛չ շհանց տա, տարով ջրի երեսը չի՛ տեսել,— մեկ եքա ձողի ջուխտ ձեռով ղայիմ բռնած, կոթը դոշին կպցրած, գլխին Ալու փանչեն (ձեռը) ցցած, լալով, սգալով, իրան կտրատելով, պատմություն, նաղլ անելով, մեկ սուրու խալխ հետը, ի միասին գլխըներին թակելով, նամազ անելով, չախսե՛-վախսե՛ ձեն տալով, թոզ, թոփրաղ կուլ տալով, շորըները վեր քաշած՝ կամըներն առել, ղռերն են ընկել ու ուզում են մինչև Մեքքա մեկ գնան։ Բանն էս ա, որ մեր բարեպաշտ ուխտավորը է՛նպես ա կրակվել, էշխ ընկել ու յա ոտը քարին դեմ անում, յա գլուխը ետ քաշում, յա դոշը դեմ տալիս, քամակի վրա ծռվում, ձգվում, ոլորվում ու դեմն էլ վազում ու Ալու զորությունն ու հրաշքը գովում, որ տեսնողը հենց կիմանա, թե թոկ են դրել վիզն ու քաշում։ Բայց ո՞վ չի գիտի, որ անիրավ չար սատանեն հենց բարեպաշտ ուխտավորների ճամփին ա թոզ ու դուման անում, աչքըները հող ածում։

— Չրխ՛կ, թրխկ...

Մեր տղա, հեռու կանգնի՛ր. մեր ուխտավորը մուրազին հասավ, սատանեն քոռանա. աչքդ հո ձենով չի՛ ընկել, ա՜յ տնաշեն։ Տո՛, մի մտիկ արա՛, տե՛ս, ի՞նչպես ա նա պատի տակին արինը սրբում, գլուխը կապում, է՜։ Ախր պատի հետ հանաք անիլ՝ ո՞վ ա լսել։ Դու էլ գլուխդ խփիր պատին, թե կարաս, տեսնիմ, արին դուս կգա՞, թե՞ մեկ անկաչ էլ կավելանա։

Տո՛, էս փոսիցն ո՞վ ա ձեն տալիս, բղղում, հարա՜յ, մադա՜թ անում, որ խալխը դեն կենան, ետ քաշվին։ Տուն քանդվե՞ց, էս ի՞նչ խաբար ա։ Տուն քանդվե՞ց... Տո՛, բաս տունը, որ լեզու չունի, էրդիկ է՞լ չունի, որ քոռըքոռ գնացողի հախիցը գա։ Տան դարդը թողանք. քանդվեց, է՛լ կշի-

նեն. բանն էս ա, որ մեկ ուխտավոր էլ մեկ հորից ա իր սև օրը լաց ըլում։ Անչափ մի անչափ խալխը ետ քաշվեցին. հավատը սուրբ ա, աղոթքը՝ զորավոր, ո՛վ չհավատա, նա մնա պարտավոր. էլի մեր աղոթքի պարկը տեղիցը վեր կացավ թե չէ, ոտն ու գլուխը դզում, սրբում ա ու տնքալով, հաղալով, ճրրալով, մրրալով, անկաչները թափեթափ տալով, ուսերը քաշելով՝ չուլ ու փալասը հավաքում, քափ ու քրտինք՝ երեսը, փրփուրը բերանը կոխած, աբեն մեկ կողմը, չալմեն մյուսը ցխակոլոլ ընկած, տոտքոշերը չխպչխպացնելով, ծլփծլփացնելով, ծլունգ ըլելով՝ իր կոտրած ձոզին էլ ետ պաչում, սրբում ու էն հալին էլ ետ ճամփա ընկնում։

Քո տունը չքանդվի, էս ի՞նչ անսիրտ մարդիկ են, տո՛. գլուխ առնի՛նք, կորչի՛նք։ Տո՛, մեկ ֆորթ որ ցխումը խրվում ա, պոչիցն էլա բռնում, քաշում են, որ հանեն, մեր համշարիքը բոլորեշուրջ կանգնել, փառք են տալիս աստուծո, որ իրանց կարդացողը էս փառքին հասավ. էս դինումը պատժվեց, որ էն դինումը պսակվի։ Խաչը տերը զորավոր կանի, բան չի՛ կա. մոտանաս ո՞չ, թե չէ մեծ թիքեդ անկաշդ կմնա։ Իր հավատին պինդ մարդը գլխին քար էլ աղա, հենց կիմանա, թե դափ ու զուռնա ես ածում։ Քո քիսիցն ի՞նչ ա գնում, որ գլուխ են ջարդում, դու քո գլխի դարդը քաշի՛ր. վա՜յ նրան, որ գլուխը հաստ ա, ծուծը՝ բարակ։

Տո՛, ճանճերն էլ են էսօր գժվել, կատաղել, էսպես հրա՞շք կըլի։ Շները հո, էլ ճամփա չեն տալիս. ընչի՞.— ո՛սկոր կա, ոսկո՛ր, խա՛նի խարաբ։ Ծըվզոցն ընկել ա դուքան, բազար։ Խորովածի, խաշլամի, փլավի, սանգակի (հաց) հոտը աշխարհ ա բռնել։ Հլա մեկ մտիկ արա՛, քո աստվածը կսիրես, էս սիպտակամիրուք ծերերն էլ չեն ամաչում, որ իրանց տունը թողել են ու էս մեյդանումը որը սանգակն ա մեկ կտոր խորոված միջին գուրում արել, մշրում, որը շերեփով ա փորի կամքը կատարում, որն էլ մեկ թիքա ջիլ միս, կիսաեփ, էնպես ատամի տակն ա քցել, ծամում, ծամլամորում, եղը շորերին քսում, դմակը՝ միրքին. փորը նեքսևիցն ա ձեն տալիս, ղլվլացնում, բողազը մեկ կողմիցն ա իր գլուխը լալիս, բաց ու խուփ ըլում, աչքերումը հո, էլ լիս չի՛ մնաց, ամա նա հենց գոռ ա անում ու թիքեն դարիվեր բռթում։ Աստված բարի ճանապարհ տա՛, թե կերթա նեքսև. ես գիտեմ, թե ո՛ր էշը նախրումը կզռա։ Տո՛, զռաց էլ, պրծավ էլ։ Մհառլամ-բայրամը կերան, գնա՛նք, էս թամաշեն ուրիշ օր էլ կտեսնինք։ Ջհուդ ղամշի՛ր, ղո՛չա բաբա, ալլա՛հ սախլասն։ Տո՛, նա իր փորի դարդն ա քաշում, քո ի՞նչ բանդ ա, գնա՛նք, նա քո դնչիդ չի՛ մռռալ, գնա՛նք։

Մեչդի մեջը մտնիլ կարելի չի՛, մարդի միս են ուտում. պետք է մոտիկ տների կամ մոլլեքանց օթախների կտրներիցը, խալխի հետ խառնվիլ ու հեռըվանց թամաշ անել։ Լավ սիրտ պետք է, որ դիմանա, լավ աչք, որ տեսնի ու լաց չըլի։ Մեչդի աղոթարանի առաջին մեծ բազմություն կա թափ էկած. թե՛ նրանք, թե՛ մյուսները էնպես են լալիս ու դոշըներին վեր հատում, որ հենց իմանաս, թե Հուսեյնի նահատակության օրը է՛ս ա, որ էս ա։ Ախունդը մեկ բարձր աթոռի վրա բազմել, մոլլեքը իր չորս կողմը բռնած՝ է՛նպես ա Ալու, Մահմադի ու Ալու որդի Հասան-Հուսեյնի պատմությունն անում, լալիս, իրան կտրատում, որ քարերն էլ ձեն են տալիս, մղկտում։ Նրա առաջին մեկ քանի ջահել աղջըկերք՝ մազըները ցրված, խճճած, կեսն երեսներին, կեսը դոշըներին քցած, մեկ ղրաղում կուչ են էկել ու իրանց մոր հետ սուգ են անում։ Մեկ քանի ջահել տղա էլ աղխոզորմ ձենով իրանց խեղճ հոր մահվան սուգն են ետ տասում։ Մեկ քանի ձիավոր էլ՝ թուրըները հանած, պլոկած, ձի չափ քցում, նրանց վրա վազում, որ նրանց սպանեն։ Սրանք էլ եզըդեքանց օրինակն են, որ վրա պրծած գալիս են, որ իրանց խալիֆի հրամանը կատարեն։ Ձիու վրա նըստած՝ դես ու դեն են վազում ու կամենում են որպես թե Հուսեյնի ընտանիքը կամ սուրը քաշեն, կամ եսիր անեն։ Բոլորն էլ խոսում են, բոլորն էլ է՛նպես կենդանի իրանց խաղը խաղում, որ տեսնողը հենց կիմանա, թե հենց է՛ս օր ա Հուսեյնը մեռել։ Օրինակի խաթեր, մեկ քանի խոսք էստեղ գրենք, որ կարդացողն իմանա, թե ի՞նչպես են մեր համշարիքն իրանց սուգն ասում։

ՄՀԱՌԼԱՄԻ ՍՈՒԳԸ

Առաջին բոթաբեր

Աչքըս խավարի, լեզուս կարկամի,
Ոտներս կոտրվեր, ա՜խ, ջանըս դուս գար,
Որ սկի նաշարս ձեզ մոտ չգայի
Ու ձեզ չտայի էս դառը խաբար:

Էլ ի՞նչ եք մնացել էստեղ լուռ նստած,
Ձեր արևն հանգավ, ձեր աստղը թռավ.
Ճար ունի՞ք՝ տեսե՛ք, ի՞նչ եք շվարած,
Թև առե՛ք, թռե՛ք, թշնամին հասավ:

Եզիդ խալիֆեն Դամասկոսի մեջ
Չի՛ ուզում գլուխ տա մեր սուրբ իմամին.
Զորքն էկավ անթիվ, չորս կողմներս բռնեց,
Կրակ է տալիս մեզ չար հարամին:

Մեր քաջ արաբի ազգի էս յաղին
Շլինքը ծռեց, նրես մոռացավ.
Մեր զորքի տուտը Հայեր հասցրին,
Իմամ Հուսեինն դրդու չանգն ընկավ:

Երկրորդ գուժկան

Հարա՜յ, մադա՜թ, վա՜յ թուր խփի սրտիս.
Ամա՜ն, Ֆարմա ջան, քո գլխից ղուրբան.
Հասան, Հուսեյն վա՜յ, վա՜յ իմ արևիս,
Հասան, Հուսեյն վա՜յ... վա՜յ... վա՜յ, վա՜յ, ա՜խ, ջան:

Աչքըս դուս գա, վա՜յ... խանում ջան, վա՜յ...
Երեսիդ մեռնիմ, օ՜խ... ըմբրիդ ղուրբան, ա՜խ...
Երկի՛նք, քանդվի՛ք, վա՜յ... մեր գլուխը տարան, վա՜յ...
Գլխիդ ճարը տե՛ս, ա՜խ... իմամին տարա՛ն,
սատկած ջան...
Վա՜յ, ես քոռանամ, վա՜յ... վա՜յ, ջանս դուս
գա, վա՜յ...
Վա՜յ, օրս խավարի, վա՜յ... վա՜յ, գետին,
պատռվի՛ր, վա՜յ...
Վա՜յ... ամա՜ն... մադա՜թ... ճարա՜յ... ջան, ղուրբան...

Մերն ու դստերքը

Մերը

Ա՜խ, ի՞նչ եք ասում, էդ ի՞նչ եք պատմում,
Կրակ եք բերել, որ օջախս էրեք.
Լավի էդ լեզուն, չորանա բերնումն.
Տունըս քանդեցին, ջիվա՛ն երեխեք:
Հող ըլի գլխիս, ըմբրիս, արևիս.
Վա՜յ, իմ անցկացրած, իմ սև օրերիս.
Վա՜յ, ես ի՞նչ կանեմ, ո՞ր ջուրն ես ընկնիմ,
Ո՞ւմ դռանը մնամ, ո՞ւմ ձեռին նայիմ.
Յարաղանդ խռով, իմ բա՛խտ անիրավ.
Ոտս ընչի՛ չկոտրվեց, էս ի՞նչ եմ լսում.
Ա՜խ, իմ ծուխս հատավ, օրս խավարեցավ,
Ինձ ո՞վ անիծեց էս դառն աշխարքումն:
Քո սուրբ իմամի նամազից ղուրբան, վա՜յ...
Քո Ալու փանջի գլխին ես մատաղ, ամա՜ն...
Արդար պատկերից, ա՜խ, ես մեռնիմ, ջան..
Ջանս քեզ ղուրբան, ա՛ղա ջան...

Երեսս ոտիդ տակը փիանդազ, մադա՜թ...
Եթմներից գլխովն պտիտ կտամ, աղա՛ ջան...
Հասան, Հուսեյն՝ իմ սա՛ր, իմ գլուխ, ա՜խ...
Սրանց ի՞նչ ջուղաբ տամ, ջա՛նմ ջան, վա՜յ...
Ախր էս ի՞նչ բերիր էսօր մեր գլխին, ա՛զիզ ջա՜ն...
Կրակ ածեցիր մեր սրտին, ջանին, թա՛ղյան ջան...
Ի՞նչ կըլեր, մեկ ձենդ էլա լսեի, ա՜խ...
Ի՞նչ կըլեր, մեկ երեսս երեսիդ դնեի,
ա՜յ իմ օրս խավարի:
Ի՞նչ կըլեր, հոգիս ոտիդ տակին՝
Քո հոտն առնեի, շունչս փչեի:
Ա՜յ իմ երկնքի հրեշտակ, իմամի որդի,
Երկրի թագավոր, աստուծո՛ սիրելի.
Մեկ քեզ երկնքումն, մեկ քեզ գետնում,
Սարերն էին թրիդ առաջին դողում:
Արարած աշխարն ոտի տակ տվիր,
Բյուր ջամհաթ, օլքյա ձեռիդ տակը բերիր.
Ոտդ փոխելիս՝ դող էին ընկնում
Սարերն ու իրանց գլուխն քեզ ցածացնում:
Ծով, գետ ու ցամաք երբ քո ձենն առան,
Իրանց ոտովն, ա՜խ, քո դուռը էկան:
Աչքդ քցելիս՝ ամպերն էն սհաթին
Թև էին առնում, զոռում, սասանում.
Ոտդ թափ տալիս՝ գետինն իր տակին
Լերդը պատռում էր, սասանած մնում:
Արեգակն իրա գլուխը քեզ տվեց,
Լուսինն իր մազերն ոտիդ տակն փռեց,
Երկինքն քեզ համար ծոցը բաց արեց,
Ամպերով տարավ ու մեզ որբ թողեց:
Էլ ո՞վ աշխարհիս տերություն կանի,
Էլ ո՞ւմ շվաքի տակին կհովանան:
Քյոլ աշխարհն, ջամհաթ քեզ կկարոտի,
Քո ձեռն էր պահում, էդ ձեռիդ ղուրբան:
Քյար ու Մեքեն մեր գլխները ծեծում,
Ծով, ցամաք, աշխարհն քո սուգն են անում,
Հող տալիս գլխին, հիմիկ էրվում են,
Անունդ հիշելիս՝ մաշվում, տոչորվում:

Քո եթմների պետք է ձեռը բռնած՝
Գլուխս առնիմ, կորչիմ, ես խեղդվիմ.
Անտեր մնացինք՝ սրտըներս մեռած,
Էս դառն աշխարքումն էլ ի՞նչ օր կտեսնիմ:
Իմ տե՛ր, թագավոր, լուսին, արեգակ,
Իմ գլխի դու թագ, իմ հոգվույս ճրագ.
Ամենն փչացան, բայղուշս մնացի,
Որ իր սև օրը, ա՜խ, միշտ լաց ըլի:
Թե քուր կոխեմ սիրտս, սրանց ո՞վ պահի.
Թե լերդս ճոթռեմ, սրանք ի՞նչ անեն.
Ո՞վ սրանց կաթ կտա, ո՞վ կմեծացնի,
Թե ծծերս էլ կտրեմ, սրանք ո՞ւր կորչին:

Աչքս լալուցը քոռացավ, մաշվեց,
Շատ սգալուցը ջիգյարս խորովվեց.
Ա՜խ, ի՞նչ կըլեր, որ մեկ երեսդ տեսնեի,
Հետո հազար թուր սիրտըս խրեի:
Ընկե՛ք իմ գլխիս, սարեր ու ձորեր,
Ինձ տակով արե՛ք, կերե՛ք, մաշեցե՛ք.
Թո՛ղ ես մեռնեի, չմնայի անտեր:
Ջա՛ն, դո՛ւս արի, ջա՛ն. դժոխք, ինձ կերե՛ք:
Անհեր իմ եթիմ դստե՛րք, խղճալի,
Ձեզ ո՞վ էլ դոշին, գոգումն կդնի,
Ա՜խ, ո՞վ էլ սիրով, ձեր խաբրն առնելով,
Ձեր դարդը կքաշի՝ ղուրբան ասելով:
Ո՞ւր ա էն աչքը, որ ձեզ տեսնում էր,
Խնդում, զմայլում, ձեզանով փառվում.
Ո՞ւր, ա՜խ, էն ձեռքը, որ ձեզ գգվում էր,
Համբուրում, սիրում, ձեզ մխիթարում:
Ձեր ծովն համիտյան ցամաքեցավ, վա՜յ...
Շլինքը ծուռը, ձեզ դարդամարամ
Թողեց ու գնաց, ձեռք վեր առավ, վա՜յ...
Ո՞ւր ա ձեր հերը, ո՞ւր էլ նրան մահ գալ:
Սիրտս յարալու, կրակ է ընկել,
Ո՞ւր ա ձեր տերը, քա՛ղցր բալեք ջան.
Թախտը փուլ էկավ, ո՞ւր կտեսնիք էլ,
Որ քաղցր լեզվով ձեզ մեկ բարով տան:

Հուսեյն աղամ ջա՛ն, ջանս քեզ ղուրբան,
Մեր տունը քանդեցիր, մեր սիրտն էրեցիր.
Ո՞վ մեզ ճար կանի, գլխովդ տամ ման,
Ո՞ւմ դուռը գնանք, մեզ էլ տանեի՜ր...

Աղջկերք (դստերք)

Աթա՛մ, անա՛մ, վա՜յ... բաբա՛մ, ջա՛նմ, վա՜յ...
Հերներս ո՞ւր ա, վա՜յ... նա ե՞րբ կգա, վա՜յ...
Ո՞ւր է գնացել, վա՜յ... էլ ետ չի՛ գալ, վա՜յ...
Աթա՛մ, ջա՛նմ, վա՜յ... նանա՛մ, գյո՛զմ, վա՜յ...
Ա՜խ, լաց մի՛ ըլիլ, վա՜յ... Աչքիդ մեռնիմ, վա՜յ...
Մեզ տա՛ր, ջուրն ածի՛ր, մեզ եսիր տո՛ւր, վա՜յ...
Բիզունը կգա, օրթ կբացվի,
Մեր դուռն բաց անող, ա՜խ, էլ ո՞վ կըլի,
Մեզ բարով տվող, ա՜խ, էլ ո՞վ կըլի:
Բաբա՛ ջան, վա՜յ... աղա՛ ջան, վա՜յ, վա՜յ...
Անա՛ ջան, վա՜յ... գյո՛զմ, ջա՛նմ վա՜յ...
Մեր աղեն, խալիֆեն էլ չի՜ գա՜լ...
Մեզ բարով, ա՜խ, սիրով էլ չի՜ տա՜լ...
Մեզանից խռովել ա, ձեռք վերցրե՜լ...
Մեր երեսն, մեր տունը չի՜ տեսնիլ...
Ախր ո՞ւր գնաց նա, մեկ բան էլ չասեց...
Ախր ի՞նչ արինք, որ մեզ դեն քցեց:
Մեր աչքը հանեիր, ախր ի՞նչ կըլեր,
Մեզ սաղ մորթեիր, քեզ ո՞վ բան կասեր.
Ղրղի ու ագռավ թո՛ղ մեր միսն ուտեր.
Մեզ սուր քաշեին, մեզ կրակ քցեին:
Ախր ի՞նչ կըլեր, դու էն չար մարդին
Մեզ տայիր, որ, ա՜խ, տարավ մեր աղին.
Բաս նա էլ չի՞ գալ, մեզ աչքից քցի՞լ,
Բաս նա մեր դարդը իմանալ չուզի՞լ,
Բաս որ լաց ըլինք, սիրտը չի՞ ցավիլ,
Մեռած վեր ընկնինք, չի՞ գալ, մեզ օգնիլ,
Մեզ եսիր տանին, չի՞ պրծացնիլ:

Որդիքը, աղջկերքը ի միասին

Ախր ի՞նչ արէնք նրան, որ էսպես խռովեց,
Ընչո՞վ կոտրեցինք սիրտն, որ մեզ թողեց.
Էլի որ վազինք, ետևիցը հասնինք,
Ոտի տակն ընկնինք, սուրուբմիշ ըլինք,
Փեշը համբուրենք, ոտները լիզենք,
Ծնկներն խտտենք, լանք ու ու վեր ընկնինք,
Ասենք՝ կմեռնինք, թե տուն չգաս, մեր շլինքն
Կտրի՛, դուս նոքաի՛, էլ տուն մի՛ դրկի,
Էստեղ սպանի՛, մեր հոգին հանի՛,
Քեզ մատաղ կըլինք, ոտիդ հող կդառնանք,
Մեզ մի՛ կորցնի, գլխովդ ման տանք:
Բաս նրա սիրտը, ա՜խ, զութ չի՞ ընկնիլ.
Բաս մեր սուգն ու լացն նրան քյա՞ր չանիլ:
Կասենք՝ հետդ տա՛ր, ուր որ գնում ես.
Մերներս մեռավ, բաս դու ցավում չե՞ս.
Բաս ետ չի՞ դառնալ, սիրտը չի՞ ցավիլ,
Բաս մեզ չի՞ խտտիլ, հողից վեր քաշի՞լ,
Երեսներս սրբի՞լ, աչքներս պաչի՞լ,
Գոգին նստացնի՞լ, դոշին կպցնի՞լ,
Ղանդ ու շաքար տալ, գուրգուրի՞լ, ասի՞լ.
«Գլխովդ ման տամ, երեսիդ մեռնիմ,
Էլ մի՛ լաց ըլիլ, քո չարը տանիմ.
Աղեն նոքարդ ա, քեզ ղուրբան ըլիմ,
Սիրտը քեզ կուտա, անումիդ ղուրբան.
Դուք որ լաց եք ըլում, ձեզ մատա՛ղ գնամ,
Աչքս փուշ ա ցցվում, ձեր փուշն աչքս ըլի»:

Բաս մեզ աղեն էլ չի՞ գալ... վա՜յ...
Բաս մեզ բարով էլ չի՞ տալ... վա՜յ...
Բաս ձեն տալիս՝ ջա՞ն չասիլ... վա՜յ...
Մեռնում ըլինք, լաց չի՞ ըլիլ... վա՜յ...
Սոված ըլինք, դա՞րդ չանիլ... վա՜յ...
Անումը տանք, տուն չի՞ գալ... վա՜յ...
Հետը վազինք, ետ չի՞ գալ... ա՜խ...
Բաս մեր աղեն ո՞վ կըլի... ա՜խ...

Բաս մեր տունը ո՞վ կպահի... ա՜խ...
Ո՞վ մեր դարդին դարման կըլի... ա՜խ...
Մեր հավարին ո՞վ կհասնի... ա՜խ...
Մեզ որ տանին, ո՞վ կփրկի... վա՜յ...

Չէ՛, մեր աղեն բարի ա,
Դուս ա գնացել, տուն կգա...
Նրա ջիգյարն ազիզ ա,
Նրա սիրտը մեզ վրա ա:
Նա մեզ աչքից ավելի
Ուզում, սիրում, պաշտում ա.
Նա մեզ անտեր չի՛ թողա,
Մի՛ դարդ անիր, ջան ա՛նա.
Քո ցավը տանինք, ա՜խ, ա՛նա,
Մեզ մի՛ սպանիր, մատաղ գնամ.
Մեզ տա՛ր, թաղի՛ր, քեզ ղուրբան,
Ա՜խ, անա ջան, ջա՛նմ ջան:
Մենք ո՞ւր կորչինք, ա՛զիզ ջան,
Ո՞ւմ ասենք՝ լաց մի՛ ըլիլ.
Քեզ ղուրբան, հողդ ըլինք,
Երեսիդ մենք մեռնինք:
Ձե՞նդ թո՛ղ չլսենք,
Լացդ չտեսնինք,
Քեզ տխուր չիմանանք,
Քեզ դարդոտ չգտնինք:
Ջուրն ածի՛ր, մեզ խեղդի՛ր.
Սուրը քաշի՛ր, մեզ սպանի՛ր.
Առաջ մեզ քո ձեռովն
Հողը գի՛ր, դու պրծի՛ր,
Հետո դու մեր կշտին,
Մեզ վրա լաց ըլի՛ր:

Անա՛ ջան, վա՜յ... Հրես էկան, վա՜յ...
Մեզ կտանին, կսպանե՜ն... վա՜յ...

— Տարե՛ք, տարե՛ք, անա՛ ջան, բաբա՛ ջան, բա՛ջմ ջան, ղովո՛ւմ ջան... ալլա՜հ, ալլա՜հ... վա՜յ... ա՜խ... վա՜խ... մեռա՜... հասի՛ր, հասի՛ր... հա-

բա՜յ… դա՜տ… բեդա՜տ… վա՜յ… վա՜յ… հը՜-հա՜, հը՜-հա՜. հը՜-հը՜, հը՜-հը՜. հո՜… հը՜… հո՜ւ…

— Սասն քյա՛ս, վե՛ր ջանն, իմա՛մ ուշաղի, սանն նա՞ հադդն վար քի դհա ուզըն բիզդան ղոնդարիսան, աղլիրսան, բաղրիրսան. դո՛ւրն, դո՛ւրն, գեդա՜խ (Ձենդ կտրի՛ր, ջանդ տո՛ւր, իմա՛մի որդի. քո ի՞նչ հադդն ա, որ էլի երեսդ մեզանից քաշում ես, լալիս ես, ձեն տալիս)։

<6>

Հենց էն ա, սուգը պրծնելով էր, որ բեղաֆիլ Թամաշաշոց աչքը մեկ կողմով ընկավ, ու ամենն էլ սկսեցին փսփսալ, իրար երեսի մտիկ անիլ։ Ուչքափալարի (երեք սարի) գլխին հանկարծ մեկ քանի ղարալթու երևացին, որ ո՛չ արախլվի (պարսիկ) նման էին, ո՛չ հասարակ ճամփորդի։ Հենց իմանայիր, թե նրանք զու են բռնել, որ գան Երևան, չափմիշ անեն, տանին։ Չին քշելիս՝ սուր գդակների ծերերը բռանց էին երևում։ Էնպես գիտես, թե ամեն մեկի գլխից մեկ մեծ մահրամա կապած, ծերը մախսուս բաց թողած ըլի, որ քամու հետ խաղա, ու ամեն մեկը մեկ աժդհի նման էին աչքի առաջը գալիս, էնպես էր քամին նրանց ծոցը մտել, շորերը ետ տարել, ու չափ քցելիս՝ ձիու վրիցը դես ու դեն տանում, ֆռռացնում։ Էն էլ էր լավ պարզ երևում, որ էս էկողները ո՛չ թվանք ունեին, ո՛չ թուր, ո՛չ ջիրիդ։ Հենց ձիանը բաց էին թողել ու իրար ետևից դարիվեր, դարիդուս իրանց քեֆին քշում։ Տեսնողը մնում էր սառած, թե ի՞նչպես են նրանք սիրտ անում, էն սուր սարերի ծերիցը դարիվեր էնպես չափ քցում, որ մարդ ոտով էլ չի՛ կարող վազիլ, էնպես դիք ա էն սարերը։ Փոքր ժամանակից հետո բոլորն էլ գյում էլան ու ընկան Դալմեճանց ձորերի, բաղերի մեջը։ Ամենն էլ ուզում էին իմանալ, թե էս զարմանալի ճամփորդները ո՞վ պետք է ըլեին։ Կարծեմ, որ մինչև չասեմ, դու էլ չե՛ս իմանալ։ Մեր երկրացոնց աչքը էնպես սուր ա, որ շատ հեռու տեղից ղարալթուն իր շարժմունքիցն են ճանաչում, բայց էս միջոցին, հենց բռնի՛ր, բոլորի աչքերն էլ կապվել էին։ Ո՞վ ա գիտում, բալքի թե շատ էին լաց էլել։

Կես սհաթ չքաշեց, Գյոռխանեճանց կողմիցը վեղարների սուր-սուր ծերերը ափաշկարա ցույց տվին, որ էն Ուչթափալարի ղոչաղ ձի խաղացողները մեր սուրբ Աթոռից էկող եպիսկոպոս-վարդապետներն էին, որ էնպես հանդիսավոր օրերը միշտ պետք է գային, լավ-լավ փեշքաշներ բերեին, որ Երևանի սարդարի, խաների խաթրը առնեն, տոներները շնորհավորեն ու իրանց ծառայությունը ցույց տան, որ նրանց աչքը մեր ազգի ու մեր աշխարքի վրա քաղցր ըլի։ Իրանք էլ, ղորդ ա, խալաթ էին ստանում, էնպես ետ գնում, ամա մեկին տասը քթըներիցը, ջանըներիցը հանում էին հետո, ու շատ անգամ շաբթով, էրկու-իրեք հարիր մարդով գնում էջմիածին, նստում, քեֆ անում, վարդապետներին մզում, քամում, էնպես դուս գալիս։ Ցավն էս ա, որ սարդարը կամ Հասան խանը գալիս՝ բոլոր միաբանքը պետք է խաչով, խաչվառով, զանգակ տալով, շարական ասելով առաջ գնային ու նրանց տուն տանեին։

Քյահլան ձիանոնց վրա նստած մեր փառահեղ հոգևորականքը՝ փոքրավոր, տիրացու, թվանքչի ետևներին քցած, մեկի ձեռին գավազանը բարձր բռնած, մյուսները՝ որը առաջ էր վազում, որ ճամփա բաց անի, տեղ պատրաստի, որը աչքը իր մեծավորի աչքին քցած՝ մտիկ էր անում, որ նա աչքը թերթելիս՝ իսկույն հրամանը կատարի։ Կոնդի, Շհարի տերտերներն էլ, որ տիրացըվերով, խաչով, խաչվառով դուս էին էկել ու սաղ օրը բերդի մոտին չորացել, սպասում էին, որ նրանց առոք-փառոք տուն բերեն, էնքան ահ ու դող էին քաշել անց կենող անհավատների ձեռիցը, որ թուքըները բերնըներումը սառել էր։ Ամեն անց կենող մեկ բան էր ասում. որը մատներն էր իրար վրա խաչաձև դնում, ափեղցփեղ գլխիցը դուս տալիս, բերանը հոտացնում, որը շարականի հանգով բան էր ասում, մռռում, տերտերների վրա ծիծաղում. որը դունչը ծռում, ձեն տալիս.

— Քեշիշ, բելա ի՞շ (տերտերն ու էսպես գո՞րծ)։

Բաղի թաչիր ու ախունդ էլ անց կենալիս հո, աստվա՛ծ ազատի, աչքերը առաջը քցած, նոթերը կիտած՝ էնպես մեկ խորթ ձևով տակնըհանց նրանց վրա քիթ ու պռունկը հավաքում, խոժոռած, քափը բերանը կոխած՝ մտիկ էր տալիս, որ թե ձեռին ճար ըլեր, կուզեր, որ հենց է՛ն րոպեին նրանց արինը ծծի, սաղ-սաղ ուտի։ Էս էր, որ հենց էսօր էլ Երևանումը, շատ եկեղեցու սրբերի՝ որի աչքերն ա հանած, որի բերանն ա քերած, որի կես երեսը պոկած, շատ եկեղեցու գլուխը քանդած, դռներն ու սեղանը խարաբա, շատի միջում ոչխարի տարթը մեկ գազ բարձրացել, բեմ ու դուռը ծածկել ա, ամեն ծունր դնողի յա մեջը մտնողի հոգին էրվում, խռովվում ա, որ միտք ա անում, թե որ անշունչ պատկերների, քարերի գլխին է՛ս օյինն են բերել, տե՛ս թե կենդանի քրիստոնեից հալը ի՞նչ կըլեր։

Անտեր երկրի, անօգնական ազգի կամ անճար մարդի ցավն ո՞վ կքաշի, թե ինքը չքաշի։

Եպիսկոպոսին տեսան թե չէ, խեղճ տերտերները դողդողալով՝ ամենը մեկ պուճախից դուս եկան, շուրջառները քցեցին, տիրացուքը շապիկը հագան, խաչվառները բարձրացրին, գդակները վերցրին, խոր-խոր գլուխ տվին, եպիսկոպոսն էլ մեկ ծանր-ծանր խաչակնքեց ու հետո, առոք-փա-

տոք, շարական ասելով, երեսները դեպի Անապատը շուռ տվին, ուրտեղ որ Երևանու առաջնորդը նստում ա։ Հայոց միջումը, ինչպես որ հայտնի ա, ամեն տեղ էս սովորությունը կա, որ նվիրակին յա եպիսկոպոսին էսպես պատվով ներս տանին։ Շատ անգամ խալխն էլ ա առաջները դուս գալիս, փեշերը, աջը համբուրում, օրհնություն առնում ու էսպես ճամփից էկած, բեզարած, էկողին մեկ քանի վախտ էլ քաղաքիցը դուս կանգնացնում, որ, ինչ ա, իր մուրազն առնի, բայց, փառք աստուծո, որ էսպես անկարգ սովորությունները հմիկ քիչ-քիչ վերանում են, ու էլ էկողին չեն ինջմիշ անում։

Մեր եպիսկոպոսունքն էլ խոր հոգոց քաշելով՝ մեկ աչքները քցեցին մեչըդի կողմն ու անսաս գնացին Անապատը, ուր քեդխուդեքը, իշխանք էկան, հավաքվեցան, ձեռները համբուրեցին՝ գդակները վեր կալած, օթախը ներս գնացին. մեկ քանի աղքատ-ուղքատ էլ տերտերների ու թվանքչոց հետ մնացին դռանը, ու փիլոնները կոնատակներին զրից էին անում, իրանց աղի հրամանին սպասում։ Եպիսկոպոսունքը հենց ներս մտան, չաքմեքները հանեցին, շորները փոխեցին, վեղարների ծերը ետ քաշեցին, խալըչի վրա նստեցին, բարձին թինկը տվին, իշխանաց որը երևելիքն էին, էս կողմն, էն կողմը պատի տակին չոքեցին, վարդապետ, տիրացու, փոքրավոր՝ աչքները իրանց աղի աչքին քցած, ձեռները դոշներին, առաջին կանգնած՝ իշխանների համար յա արաղ էին բերում, յա մազա թավազա անում։ Ամենի աչքն էլ էկողների բերնի վրա էր, նրանք եռալիս՝ իրանք էլ բարձր ու ցածր էին անում, նրանք երեսները շրջելիս՝ իրանք էլ հետըները շրջում, մեկ բառով՝ էնքան էր իշխանաց պատիվ տալը ու եպիսկոպոսաց ահարկությունը, որ հենց կիմանայիր, թե նրանց հոգին սրանց ձեռին ա։

— Հլա գալուստդ շնհավոր, հա՛յր սուրբ, մեր գլխին, մեր երեսին. աստված ձեզ մեր գլխիցը չի՛ պակասացնի։ Մեր աչքը հենց միշտ ձեր ճամփին ա. աստված մեր սուրբ Աթոռը ղադմի հաստատ ու պայծառ պահի,— սկսեց իշխանների մեկը գլուխ տալով ու տեղը դրստելով՝ բերանը բաց անիլ։— Ծառա եմ աջիդ, ի՞նչպես ա մեր հոգևոր տիրոնջ քեֆը, ջանը սա՞ղ ա, դամաղը չա՞ղ ա, լավ դուի՞ ա, թե՞ ոտից-ձեռից ընկել ա։ Աստված նրան իր թախտին հաստատ պահի, նրա սուրբ աղոթքը մեր գլխիցը անպակաս ըլի՛. քանի որ նրա շունչը կա, աստված մեր ոգը միշտ կհասցնի։ Մեկ Աթոռ ունինք, մեկ Հոգևոր տեր. էլ հո ուրիշ բան էս աշխարքումը չունի՞նք։ Գիշեր-ցերեկ մեր խնդիրքն է՛ն ա, որ աստված մեր Աթոռը շեն ու պայծառ պահի, մեր հոգևոր տիրոնջ կյանքը երկար անի։ Ինչ ունինք՝ ձերն ա. մեր ուդիքն էլ, տեղն ընկած տեղը, ձեր

ուղուրին կծախենք, թա՛ք ըլի՝ ձեր աչքը մեզ վրա քաղցր ըլի։

— Օրհնյալ լինիք, աստված ձեր հավատն օրհնի, աստված Հայոց ազգը միշտ շեն ու պայծառ պահի,— պատասխանեց եպիսկոպոսը,— դուք որ կաք, Լուսավորիչ պապի գառներն եք, հալբաթ որ ձեր եղը պետք է ուտենք, ձեր կաթը՝ կթենք, ձեր բուրդը՝ խուզենք, շոր կարենք, թե չէ հո՝ մերն ա, էն սև քարը. ո՛չ թուր ունինք, որ չափմիշ անենք, ո՛չ իշխանություն, որ զոռով խլենք։ Ինչ որ կտաք, մենք էլ պետք է աչքներս խփենք, ձեռըներս դեմ անենք, էն առնինք, ձեզ օրհնող ըլինք, ընդով յոլա գնանք։ Վաճառականություն ասես թե ռաչպարություն, ջուլհակությունն թե բաղմանչություն, դուք էլ գիտեք, որ մեր ձեռիցը չի՛ գալ։ Սևագլխի փիրն իրան խռով ըլի, ընչի՞ ա պետքը էս աշխարքումս. օղլուշաղի երես չի՛ տեսնում, մարդամեջ չի՛ դուս գալիս, ի՞նչ ա մեր կյանքը, մենք հո մարդի կարգում չենք։ Դուք մե՞զ կտաք՝ աստված էլ ձեզ կտա, մենք էլ մեր մեղավոր բերնովը աստված կաղաղակենք գիշեր-ցերեկ, որ դուք միշտ բախտավոր ըլիք, ձեր մինը հազար ըլի, ու որդով, զավակով ծաղկիք, ծլիք, զորանաք։

— Հա՛յր սուրբ, գլխիդ ղուրբան, քո ոտի հողն եմ, լավ ես հրամանք անում, ամա ի՞նչ անես, որ ընչանք բանը բանին ա հասնում, դանակն ոսկորին դեմ ա ըլում, էլ հանիլ չի՛ կարելի.— էն դհիցը քյոխդալանա մեկը ձեն տվեց ու փափախը դզեց։— Մենք էլ լավ գիտենք, որ խաչն էլ ա մերը, ավետարանն էլ, մենք էլ գիտենք, որ տասներկու խաչպաշտի, եթմիշիքի միլլեթի գլուխն հայն ա, հայի ժամի արարողությունն ու շարականը, հայի մեռոնն ու Հավատամքը մեկ ազգ էլա չունի, ամա էս անօրենքները մեզ հավատից էլ են քցել, հալից էլ. մալ են տեսնում մեզանում, խլում են. աղջիկ ան գտնում, քաշում են. մեզ կրակն են դրել, սաղ-սաղ էրում են, փոթոթում. թե մեկ խոսք էլ ասում ես հո, վա՜յ քո օրին, արևին, գլխիդ էնքան բոնցքում են (մուշտում), որ աչքդ բո-ոդ ա ընկնում։ Տունդ էլ որ քանդեն, ձեն չպետք է տաս։ Ախր որ մեր միսն էսպես գազանի պես ուտում են, սրա չարեն ի՞նչ կըլի։ Տեղից վեր կենողը ոտը մեզ վրա ա բարձրացնում։ Չի՞լում, որ մեկ օր գնանք, ջուրը թափինք, պրծնինք։ Ախր էս հո օր չի՛, որ մենք քաշում ենք։ Մնացել ենք եթմի պես շլինքներս ծռած. սրա վերջն ախր ի՞նչ պետք է ըլի, գիր չե՞ք բաց արել, ի՞նչ ա ասում. էս աշխարքս քանի՞ տարի էլ պտի մնա, վախտը հասել չի՞, որ մեկ Գաբրիելյան փողը փչեր, աշխարքս հալըու պես դզվեր, էնպես, որ մեկ պստիկ ասեղ էլ մեկ օրվան ճամփից էրևեր, աճուճ-պաճուճը, Եղիա մարգարեին գային, մարդիկ մեկ թզի չափ

դառնային, մեր սուրբ Էջմիածինը ու Երուսաղեմը մնային, մեր ազգը զորանար, էս անհավատ անօրենքները մի կորչեին, ջնջվեին, ու մենք սկսեինք երկնքի ու երկրի փառքը վայելիլ, ինչպես որ Հրեշտակը երազումը մեր սուրբ Լուսավորչին պատմել ա։ Մենք էլ ասողից ենք լսել, հո մեր գլխի՞ցը չենք ասում։ Ախր աթադան, բաբադան էսպես ենք իմացել, թե աստված պետականը որ մեր սուրբ Լուսավորչուն էնքան չարչարեց, տասնըչորս տանջանք տալ տվեց, տասնըչորս տարի խոր Վիրապումը, ծառա եմ նրա սուրբ զորությունին (ասեց ու երեսին խաչ հանեց), պահեց, մե՛ր խաթեր էնպես արավ, որ մեր ազգն էլ տանջվի, չարչարվի, էլ էս աշխարքին թամահ չանի, որ աստուծո մոտ պարզերես գտնվի ու երկնային թագավորությունը վայելի։ Ա՜խ, ի՞նչ կըլեր, որ էս օրը մի շուտով գար, մեր աչքն էլ մի լիս տեսներ. երկրի թագավորությունը մեր ընչի՞ն ա պետքը. երկնքումը պտի մեր աստղը բանի, որ ամեն ազգ էլ տեսնին ու մեզ էրնակ տան։ Մեր գլխին՝ թագ, իրանցը բաց տեսնին ու ամաչին, փոշմանին, որ երկրիս մեծությանը էնքան եսիր էին էլել։ Տերտերն <երն> էլ են գիր բաց անում, ղորդ ա, ամա շատը իրանցից են ասում. նրանց ասածը ո՞վ մեկ չվանի կդնի. սուրբ Աթոռն էնտեղ էլած տեղը մենք նրա՞նց մունաթը պտի ընկնինք։ Մեկ ջուղաբ տո՛ւր, է՜, ա՛ջիդ ղուրբան գնամ. ձեր ոտը շատ գիտի, քանց մեր գլուխը։ Մենք որ կանք՝ սարի հայվանի պես առավոտները վեր ենք կենում, էրեսներս լվանում, խաչ հանում, մեկ քանի խոսք էլ գլխըներիցս դուս տալիս ու գնում մեր բանը։ Գիրն էլ ա ձեր ձեռին, գրի բալանիքն էլ։ Ձեր մեկ մազը աշխարքի բարեբար բան գիտի։ Ասում են, թե ընչանք աշխարքս չվերջանա, մեր ազգին ո՛չ թագավորություն կըլի, ո՛չ թախտ, հենց էսպես պտի չարչարվինք՝ մենք դատենք, ուրիշներն ուտեն։ Ղորդն ու սուտն աստված գիտի, պարտական մնա ասողն էլ, գրողն էլ։ Ասում ա՝ մեկ գիժ մեկ կարաս կոտրեց, հարիր խելոք վրա թափեցին, չկարացին սաղացնիլ։ Բանն ընկել ա բերնեբերան, ասածդ հո չե՛ս կարալ ետ ուտիլ։ Մեր պապերիցը մեր անկաջն ա ընկել, մեզանից մեր որդիքը կիմանան։ Վա՜յ հախին, վա՜յ նհախին։ Լավ արիններս էլ եռ ա գալիս, լավ սիրտ էլ ունինք, տղամարդություն էլ, որ մեր դուշմանի հախիցը վեր գանք։ Մեկ հայ, տեղն ընկած վախտը, լավ տասը Թուրքի էլ տակն ա դնում ու միսըները բերանները տալիս։ Ղորդ ա, նրանք պաս չեն պահում, միշտ եղ ու կարագ ուտում, ու մենք շատ վախտ, շաբթով, ամսով, հենց ցամաք հացով ու խոտով, բանջարով ենք յոլա գնում, ամա, ղուրբան ըլիմ մեր սուրբ մեռոնի ու Լուսավորչի լիս հավատին, նրանց զորությունը շա՜տ, շա՜տ ա։ Փի՛ր ըլին մեր սրբերն ու մեր ամենափրկիչ սուրբ Գեղարդը. մեկ բան

ըլելիս յա ղոնշուն դուս գնալիս՝ մեր մի հայը մեկ դագանակով էլ շատ անգամ տասը Թուրքի գլուխը կջարդի, մեկ մատով որ խփի, տեղնուտեղը բանհոգի կըլին, հայի փիրն ու սոյը ա՛ստված օրհնի։ Ամա ի՞նչ անենք, որ մեզ հրաման չկա թուր բանացնել։ Քրիստոս ինքը Պետրոսի ձեռիցը թուրն առավ, որ հայ քրիստոնեն էլ թուր չի՛ վերցնի։ Քրիստոնեի թուրը աղոթքն ա, ժամը, պատարագը, պասը, ծոմը, ողորմություն տալը։ Ասիլը հեշտ ա, անիլը՝ դժար։ Թո՛ղ ժամ, պատարագն էլ ըլին, ո՞վ ասում՝ չըլի<ն>, լեզուն քըքրվի՛ ասողի, ամա թրի ու թվանքի փիրն օրհնած ա, թեկուզ բողազս էլ դուս կտրեն, ես դրուստն եմ ասում։ Թուր որ չունիս՝ գլուխդ կտրում են, օղլուշաղդ քաշում, կերածդ հարամ անում, դատածդ խլում, քեզ էլ եսիր անում. աշխարքն էսպես ա, ի՞նչ կարաս անիլ։ Տո՛փ էն աջը, որ բռնի էն խաչը։ Աղոթքն իր տեղը, թուրն՝ իրը։ Աստված ղշին, հայվանին էլ յա՛ չանգ ա տվել, յա՛ պոզ, յա՛ ատամ, որ չանգռի, հարու տա, կծի, իր գլուխը պահի։ Ես մեղա աստծու։ Սիրտս էրվում ա, էնդուր համար եմ ասում, թե չէ՝ ինձ նման շատերն էկել, ա՜խ, վա՜խ քաշել, իրանց սև օրը լաց էլել ու էլ ետ ա՜խ , վա՜խ քաշելով՝ հողը մտել. ես էլ նրանց մեկը. թե մենակ իմ դարդն ըլիմ քաշում, թո՛ղ աչքս հանեն։ Թողություն արա՛, ծառա եմ սուրբ աջիդ. գիտում եմ, որ դուք էլ կցավիք, էնդուր համար եմ ասում, թե չէ՝ մեկ պուճախ էլ ե՛ս կճարեմ, որ միջումը ձգվիմ. մեկ բուռը հող էլ հալբաթ կըլի, որ մեկ օր, աչքս խփելիս, երեսիս քցեն։

— Լա՛վ ես հրամայում, լա՛վ, ա՛ղա Պետրոս,— պատասխանեց սրբազանը,— ամա ի՞նչ անես, որ մենք Քրիստոսի ծառեն ենք և ո՛չ աշխարքի։ Երկնքի որդին ենք և ո՛չ երկրի։ Քրիստոս Տերն մեր, սի՛րելիք (երեսներին խաչակնքեցին), երկնի և երկրի արարիչը, եթե կամենար, որ իր սուրբ տնօրենությունը հեշտությամբ անց կենար, ու ինքը չչարչարվեր, չխաչվեր, էլ չէ՛ր գալ էս փուչ աշխարքը ու մարմին առնիլ, որ մեզ ազատի։ Մեկ որ հրամայել էր, ամեն բանը թամամ կըլեր։ Ամա չէ՛, Ադամա մեղքը մնացել էր մեր վրա. մինչև էն մեղքը չջնջվեր, դժոխքը չքանդվեր, մեզ ազատություն չէ՛ր ըլիլ։ Մենք սուրբ ավետարանի աշակերտն ենք, սուրբ ավազանի՝ որդիքը. էնպես մտքերը չար սատանեն ա ձեր սիրտն ածում, որ գիշեր-ցերեկ մեր շվաքի էտևիցը ման ա գալիս։ Ինքն՝ Տերն մեր, էկավ մեր մեջը, խոնարհեցավ, մեր մարմինն ու արինը առավ, մեր խաթեր խաչվեցավ, մեռավ, թաղվեցավ, որ մեզ, մեզ օրինակ ըլի, թե ով կամենում ա երկնային փառացը, Քրիստոսի սուրբ արքայությանը արժանանա, ընչանք չխաչվի, չչարչարվի, չտանջվի, իր գլուխը մահու չտա, աստուծո սուրբ տեսուն չի՛ կարող արժանանալ։

Ավետարանն ինքն ա ասում. «Որ ո՛չ առնու զխաչ և ո՛չ եկեսցէ զկնի, որ ո՛չ թողցէ զհայր, զմայր, զկին, զորդիս և ո՛չ եկեսցէ զկնի իմ, նա չէ՛ ինձ արժանի: Եւ թէ՝ յարիցեն ազգ յազգի վերայ և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ, նեղեսցեն, տանջեսցեն, հալածեսցեն զձեզ վասն իմ, այլ դուք ուրախ լերո՛ւք, զի վարձք ձեր բազում են յերկինս, և մազ մի ի գլխոյ ձերմէ ո՛չ կորիցէ առանց հօր իմոյ՝ որ յերկինս է: Այսպէս հալածեցին զմարգարէս՝ որք առաջ քան զձեզ էին» *և այլն։ Տեսե՛ք, սի՛րելիք, էս էլ ավետարանի խոսքը. ինչ գրվածն ա, պտի կատարենք։ Առաքյալք, մարգարեք, մարտիրոսք էսպես արին, իրանց արինը թափեցին, ինչպես ամեն օր լսում, կարդում ենք, որ այժմ աստուծո աջակողմյան դասումը նստած՝ իրանց վարձքն ստացել, փառավորվել, երկնային ուրախությունը վայելում են, մենք մեկ սհաթի հետ հավիտենական կյանքը պտի փոխե՞նք։ Էդ ո՞ր գիժը կանի։* «Փառք աշխարհիս, իբրև զծաղիկ խոտոյ, այսօր է և ի վաղիւն ցամաքի»: *Մեզ պես մեղավոր, անարժան մարդիկը պետք է աստծուն ընդիմանա՞նք։ Էդպես սարսափելի, չար միտքը ձեր սրտներովն էլ չի՛ պտի անց կենա, ո՞ւր մնա՝ բերան բերեք յա լեզվով էլ ասեք։ Ինչ աստուծո կամքն ա, էն պտի ըլի։ Պողոս Առաքյալը չի՞ ասում, թե* «Հնազանդ լերուք թագաւորաց, զի յԱստուծոյ են կարգեալ»: *Պրծա՛նք, գնա՛ց։ Ով այլ տեսակ կմտածի, անհավատ ա ու դժոխքի բաժին. մեր պարտականությունն ա, որ ասենք, ձերը՝ որ լսեք։ Չե՛ք լսիլ, պարտականը դուք մնաք։*

Բա՛ս թե իմանաք՝ մե՛ր գլուխն ի՞նչ են բերում էս հավատի թշնամիքը, էն ժամանակը դուք ձերը կմոռանաք։ Ամեն մեկ բեկ, մեկ խան սուրբ Աթոռը գալիս՝ մեզ կրակն ա դնում, էրում, շամփրի պես պտտում։ Ո՛չ հաց ու ջուրն ա նրանց փորը կշտացնում, ո՛չ պատիվն ու փեշքաշները նրանց աչքը բռնում։ Շաբթով նստում են մեզ վրա. ինչ որ ուզում են, տալիս ենք, էլի ռազի չե՛ն ըլում։ Սարդարն ու Հասան խանը գալիս հո, երկինքը մեր գլխին փուլ ա գալիս, աշխարքն աշխարքով դիպչում. էլ շունը տերը չի՛ ճանաչում, էնքան գել են մեր գլխին թափ ըլում։ Քչից-քչիցը, ամեն մեկ գալիս, չորս-հինգ հարիր մարդ ետևիցն ընկած՝ տուն են թափում, ո՞ւմ առաջը բռնես։ Խան, բեկ, ծառա, մեհտար, աշչի, ղուշչի, ղալյանչի, էրկու էնքան էլ ձի, ջորի, ուղտ, բարգ, բարխանա հետըները քցած՝ գալիս են, մտնում վանքը. դե արի՛, նրանց կառավարի՛։ Ինչ օր որ նրանց ոտքը մեզ մոտ պետք է մտնի, հացըներս էլ ա հարամ ըլում, ժամըներս էլ։ Սաղ օրը յա ժամի ծերին, յա ճամփի մեջտեղը, շոգում, անձրևում, թողում պտի կանգնինք, մտիկ տանք, որ նրանք գան։ Իրեքչորս եպիսկոպոս պտին առաջը գնալ։ Բոլոր միաբանությունը դուս ա գալիս, մեկ վերստաչափ տեղ էլ գլխաբաց, խաչով, խաչվառով, շուրջառով, բուրվառով, խնկով, մոմով առաջ գնում ու շարական ասելով, վազելով, ձիանո՛ւց առաջին քափ ու քրտինքները կոխած՝ նրանց ներս բերում։ Շատ անգամ, վանքի դուռը մտնելիս, պետք է ղառ ճոթից, ղումաշից, խասից փիանդազ քցած. որ էս անօրենների ոտը խերով ըլի, մեկ վնաս մեզ չհասնի, թե չէ ամենիս էլ կկոտորեն։ Փիանդազը ֆառաշների փայն ա, դե արի՛, նրանց սիրտը շահի՛։ Էսպես՝ գալիս են, վանքը լցվում։ Վեհարան, խցեր, Ղազարապատ՝ էլ տեղ չի՛ մնում, որ միջումը կուչ գանք։ Հլա սարդարի, խաների սիրտը փեշքաշներով, փողով ենք առնում, ու կաթողիկոս, եպիսկոպոս՝ գիշեր-ցերեկ գլխըներովը պտիտ գալիս։ Ամա ինչ որ մեր խեղճ միաբանի ու նոքարների գլխին ա գալիս, քո դուշմանդ չտեսնի։ Փետի, թրի առաջ արած, սաղ օրը ուշունց տալով, ծեծելով՝ հազար մեկ բան են ուզում։ Յա ձիանոնց տեղն ու խոտակը լավ չի՛, յա իրանց սրտի ուզածը բանի պետքը չի՛։ Մեր ձիանքն էլ են դուս անում, տավարն էլ։ Խոզերին հո, վա՜յ նրանց օրին, որտեղ որ տեսնում են, թրատում, միջիցը կես են անում. ախր խոզի թշնամի են, բաս ի՞նչ կըլի։ Մեր թխած հացը, էփած կերակուրը, մորթած միսը, ձեռը տված զատը հարամ ա ու հարամ։ Իրանք են ամբարը մտնում, մառանը ընկնում, դռները կոտրատում, ու ինչ սիրտըներն ուզում ա, շատ փայը շաղ տալով, ոտի տակ քցելով, կոտրելով, ջարդելով, փչացնելով՝ իրանց ձեռովը դուս բերում, ուզածները շինում, էլի մեր յախիցը կպչում։

Էսպես՝ մոյդա ասես, ղարաչի, քյամանչի, սազանդար, սաղ գիշերը որը պար ա գալիս, որը ֆալ բաց անում, որը բերնին զոռ տալիս, որը գլխին, որ էս անիրավի սիրտը շահի։ Գինի խմելն էլ հո, նո՛ր են սովորել, էլ ի՞նչն ա պակաս։ Աստված ո՛չ չհանց տա. մենք էլ ձեռըներս դոշըներիս՝ սաղ գիշերը նրանց առաջին յա պետք է չոքինք, յա կանգնինք, որ քեֆըները թամամ ըլի։ Շատ անգամ վարդապետ էլ ա թրատվում, յարալու ըլում։ Էսպես՝ ընչանք մենք նրանց միր հասարիցը դուս ենք տանում, մերը մեզ ա հասնում։

Ախր մեզ որ է՛ս են անում, ձեզ ի՞նչ կանեն։ Պտի համբերենք, համբերությունը կյանք ա։ Կարելի ա, որ մեկ օր աստուծո ողորմության դուռը բացվի. յա էն ա, բոլորս էլ կկոտորվինք, կփչանանք ու աստուծո սուրբ տեսությանը կարժանանանք, կամ թե չէ՝ մեկ ճար կըլի մեզ։ Քրիստոնեն սրով չի՛ պետք է իր բանը յոլա տանի. Նրա թուրը իր համբերությունն ու հավատն ա։ Էսպես արեց մեր էն էշ գեղցի, հիմար Աղասին էլ, որ մեկ աղչկա խաթեր սուր քաշեց, ու խեղճ քանաքռցիք էնքան ջարըմա տվին, ու նրա հալևոր հերը ու գեղի քեդխուդեքը էս ա, հինգ տարի ա, բանտու-

մը, քոխկամը չորանում, մաշվում են, ու աստված գիտի, թե վերջըները ի՞նչ կըլի։ Ո՛չ մելիք Սհակի, ո՛չ Կաթողիկոսի մուհաթը մեկ օգնություն չարին։ Ինքն էլ գժի պես ընկել ա սարեսար, չափմիշ անում, ճամփա կըտրում ու իր թշվառ օրը էսպես անց կացնում։ Ո՞վ ա գիտում, թե ո՞ր քարի վրա գլուխը վէր կդնի ու ի՞նչ տեղ շներոց-գիլերոց կըլի։ Լավն է՞ն չի, որ մարդ գլուխն իրան քաշի ու տաք անի։ Չէ՛, չէ՛, սի՛րելիք. քանի կարանք. մեր գլուխը պահե՛նք. «հա՛» կասեն, «հա՛» ասենք. «չէ՛» կասեն, «չէ՛» ասենք. կասեն՝ նստի՛ր, նստի՛նք, վե՛ր կաց՝ վե՛ր կենանք. մինչև տեսնի՛նք, թե բանն ի՞նչ տեղ կհասնի։ Ասում են, թե ռսներն էկել, Ապարան են հասել. ո՞վ ա խաբար. բալքի նրանցից մեկ ումուդ ըլի, աստուծո բանն անքննելի ա։ Աստված նրանց թուրը կտրուկ անի. թե մեկ նրանց ոտը մեր հողը կմտնի, էն ժամանակը թո՛ղ մեզ էլ տանին, մատաղ անեն։ Շտապել հարկավոր չի՛։ Ցիցիանովն ու Գդովիչը Երևան չառան, բալքի թե աստված չէ՛ր կամեցել, որ մեզ էլի փորձի։ Շատը տարել ենք, քչին էլ համբերենք, տեսնի՛նք. վերջըներս ի՞նչ կըլի։ Ամա էլի եմ ասում՝ քրիստոնեն թրի կոթն էլ ձեռ չի՛ պետք առնի, կարծ, որ քար էլ ազան գլխին*. Իրիկնաժամի զանգակը տվին, գնա՛նք ժամ, աղոթք անե՛նք, հլա շատ կխոսանք։ Ա՛յ տղա, վեզարս տո՛ւր, մաշիկս դի՛ր. ժամիցը ետը գիշերն երկար, մենք՝ պարապ, էնքան խոսանք, որ քունները տանի։

Աստված բարի ճամփա տա՛, հա՛յր սուրբ. էգ բերանդ լիս դառնա. Ո՞նպես պետք է քարոզել խալխին։ Աշխարքումը կենալը ի՞նչ լաղաթ ունի. անապա՛տը պետք է գնացած, անապա՛տը, որ աստված երկնքիցն ուրախանա, երկիրս քիչ-քիչ քանդվի, սատանեն ճաքի, տրաքի, հրեշտակները մեզ շատով տանին, մեր փառքին հասցնեն։ Ազգն ի՞նչ ա, աշխարքն՝ ի՞նչ։ Բոլոր սուտ բան ա։ Ամեն մարդ իր հոգու ճամփեն պտի պահի։ Քանի կարաս՝ օր առաջ թա.լարեքդ տե՛ս, որ էտ չքմկնիս։

Տիրացուն իսկույն վեզարը տվեց, ֆարաջեն հաքցրեց, վարդապետը մաշիկը դըրտեց, առաջը դրեց. իշխանքը գլխըները տմբացնելով, քուրք ու արա ուսըներին քաշելով, դդակները դզելով ետ կանգնեցին, ու որբապետը դուս էկավ։ Նրանք էլ ետևիցը մեկ-մեկ ճամփա ընկան, քաշերը հաքան, որ դասնը թողել էին. մեկ սարկավագ փիլոնը վերցրեց. մեկ վարդապետ՝ գավազանը, ու դասնը ձեռք տվեց. տերտերները հա, փիլոնները

* [illegible] խոստովանությունից [illegible] [illegible], թե ի՞նչ էր մեր խեղճության պատճառը։ [illegible] [illegible] Համբարձումը, էն ժամանակը [illegible]։

ուսըներին, դռանը էնքան կանգնել, վրվրթացել, դողացել էին, որ դատաստանի օրն էլ էն մահվան քրտինքը չեն տեսնիլ։ Եպիսկոպոսը դուս էկավ թե չէ, երկու կարգ դառան, փիլոնները քցեցին ու եպիսկոպոսին հանդիսով, տիրացու, սարկավագ, վարդապետ, իշխան, թվանքչի քամակիցն ընկած՝ տարան ժամը։ Ներս մտնելիս՝ տիրացուն հողաթափը առաջը դրեց, սարկավագը փիլոնը քցեց, մեկ տերտեր էլ մեկ խալիչա ծալած, ձեռին բռնած՝ հենց եպիսկոպոսը ժամը մտավ, սեղանի առաջը հասավ, մեկ քանի խաչ հանեց երեսին, մեկ խոր գլուխ տվեց, խալիչեն բաց արեց, ետ կանգնեցավ. եպիսկոպոսը մեկ քանի խոսք իր մտքումն ասեց, սուրբ սեղանին գլուխ, երկրպագություն տվեց ու փառահեղ կերպով գնաց, ձախու դասումը, իր աթոռումը բազմեց. ժամն օրհնեց, Հայր մերն ասեց, ժամը կանգնեց։

<7>

Ժամը դեռ կես չէ՛ր էլել՝ հարայ-հրոցն աշխարքս բռնեց. սար ու ձոր իրարոցով ընկան։ Թուրք, սարվազ, արախլու եկեղեցին լցվեցին. ժամ ասողների ձենը փորըներումը մնաց։ Էլ մեծի, պստկի չի՛ մտիկ արին. ով ոտումը հարաքաթ ուներ ու ջանումը՝ ղվաթ, դուս թռավ, գլուխն առավ, կորավ. ով՝ չէ, տեղնուտեղը մնաց քարացած, սառած։ Գլուխ ասես, որ պատռվում էր, աչքամ ասես, որ ջարդվում էր։ Անիրավ արախասես, որ պատռվում էր, ո՛չ ժամի էր խնայում, ո՛չ մարդի. թվանքի ոտքով ամեն մեկին մեկ լուն ո՛չ ժամի էր խնայում, ո՛չ մարդի. թվանքի ոտքով ամեն մեկին մեկ պատի կպցնին, վրա թռան, եկեղեցու ինչ զարդ, զինզինաթ, խաչ, ավետարան կար, դես ու դեն դաղթմիշ արին, շուրջառ, բուրվառ, ինչ տեղ մեկ երծաթի նշան էր երևում, բոլոր քանդում, ջախըբուրդ էին անում, վերցնում, ոտի տակ տալիս։ Մեկ քանիսն էլ եկեղեցու դուռն ու շեմը բռնեցին, որ դուս գնացողին ձեռք քցեն, թալանեն։ Էսպես՝ ում վրա մեկ նոր շոր էլ որ տեսան, հանեցին, զավթեցին։ Ինչ կնանոնց հալն էր, աստված ո՛չ չհանց տա. երեսի ոսկի ասես, ձեռի մատանիք, դոշի շարք ու քորոց, զառ մինթանա (լեհին), դիբա արխալուղ, սամուր քուրք, ինչ կար չկար, բռնցքելով, ոտի տակ տալով էին հաքըներիցը հանում։ Ծերունի եպիսկոպոսը մեջ ընկավ, որ մեկ քոմակ անի, բռնեցին, կռները կապեցին. տերտեր<ներ>ն էկան, ամեն մեկին մեկ պատի զարկեցին, ու ով կար չկար, ոչխարի պես թրի առաջն արած դուս քշեցին, հետ ածեցին։

Լացի, ողի ձենը երկինքն էր հասել, բայց էս անողորմ ազգի համար, հենց իմանաս, քյամանչի, սազի ձեն ըլեր։ Եկեղեցուցը դուս էկան թե չէ՛, աչքդ ո՛չ տեսնի էն օրը։ Մհալլամի ձենն էլ էր կտրվել, Հասան-

Հուսեյնինն էլ․ սար ու ձոր ոտն էր առել, փախչում էր, աչք առել, լալիս էր։ Զորագեղի ու Կոնդի քուչեքումը որ ասեղ քցեիր, գետինը չէ՛ր հասնիլ․ էնքան արախլու, ղարափափախ, քուրդ, սարվազ էին լցվել, որ գետինը սևացել էր։ Բերդի չորս կողմն է՛լ տեղ չկար․ դուքան էր, որ թարաշ էին տալիս․ տուն էր, որ թալանում, կրակ տալիս ու տանտիրոջը շփշփելիս, իր ողորմելի օղլուշաղի ձեռը բռնած, դաու ու դարտակ դուս խռկում, թրի, թվանքի առաջն անում։ Ով շուտով մեկ բան տեսել, թաղել էր, յա հացի, ալրի ջվալում մեկ բան թաքցրել, էն մնաց իրան։ Քուչեքանց միջին երեխեքանց, հարսների ու աղջկերանց ձենը քարերը մղկըտացնում էր, լացացնում։ Շատը ձիու ոտի տակին էր հոգին տալիս, շատը ահիցն ու դողիցն էր լեղապատառ ըլում․ շատին երեսի վրա էին քաշ տալիս, որին մազերիցն էին ձիու ետևիցը սուրութմիշ անում, քարեքար տալիս։ Էն օրը գնա, ո՛չ ետ դա, ինչ Երևանի հալն էր։

Շատ հեր, շատ տղամարդ կամ հանդումն էր, կամ բաղումը, կամ ուրիշ տեղ գնացել ու չիմացել, թե ի՞նչ կրակ ա գալու իր տան ու աշխարքի վրա։ Նորագեղի դուզն ու կարմնջի ճամփեն, Կուզևռան դոշը ձիավորներով խլխլում էր։ Մեկի տեղակ հազարն էին դուս թափել, որ գնան, խեղճ գեղցոնց էլ էս դառն ավետիքը տան։ Ղուշը գլխըներովն անց կենալիս՝ վեր էին քցում, թեբռում, պլոկում․ մարդ չէ՛ր կարում տեղիցը եռա։ Էնպես՝ որը ունևոր էր ու ջահել, շոր ու փալաս, բարգ ու բարխանա շալակները տվին, տարան, բերդն ածեցին․ որը հալևոր էր ու աղքատ, օրվան հացի կարոտ՝ ծեծելով, ջարդելով տանից դուս արին, որ հենց էն սհաթին տունը, տեղը թողան, երըմիշ ըլին, որ գնան, գնան մյուս գեղցոնց հետ խառնվին, որ քոչեն, չունքի ղալաբանդլղ էր, Ռուսը գալիս էր։ Երանի՛ նրան, որ մեկ սել, ձի, կով, եզը կամ մեկ էշ էլա ուներ։ Էնքան կարացին․ որ մեկ քանի կարպետ, խալիչա, յորղան, դոշակ, աման, մի քիչ ալիր յա չալթուկ հետըները վերցրին, որ անձրևի ու արևի տակին, սովի ձեռիցը չմեռնին։ Բայց քաղաքումը շատը ո՛չ գրաստ ուներ, ո՛չ մարդ, սել հո, սկի լսված չի՛։ Անիրավ թշնամին էնքան ժամանակ էլա չէ՛ր տալիս, որ էստոնք էլա վերցնեն։ Ինչ ուտելիք կար՝ ձուկն ասես, եղ, պանիր, հաց, գինի, տան բոլոր տարվան թադարեքը, կամ ջարդում էին, դեն ածում, կամ էրում, ջուրը քցում, տները կրակ տալիս, փետումիս անում, որ շուտով ճամփա ընկնին, քոչին։ Եկեղեցքանց, տների, ջաղացների դռները մնացին կրնկների վրա բաց կանգնած։ Տանող-տանողի էր, քաշող-քաշողի, շունը տեր չէ՛ր ճանաչում, հերը որդուն ուրացել էր։ Էս սարսափելի ձևովն ընկան գեջդանգեջ ճամփա․ օձերը ծնեցին, քարերը պատռվեցին, քոշը երմիշ էլավ։

Շատ ողորմելի, երկու հոգիս մեր կինարմատ՝ շունչը բերնին դեմ առած, մեկ քոռփա ծծին ուներ բռնած, մեկը՝ քամակին կապած, որի էլ ձեռիցը բռնած՝ հազար տեղ չոքում, հողին ուզում էր տա ու իր սև սհաթիցը պրծնի։ Չէ՛ր գիտում՝ ի՞ր գլուխը լաց ըլի, թե ողորմելի երեխեքանց ձենը կտրի, որ սոված, ծարավ, շոգի ձեռիցը թուլացած, ոտները յարալու-փարալու, չունքի շատը բոբիկ էր գնում, իրանց մոր ծնկներովն էին փաթաթվում, ճտովն ընկնում, որ իրանց կտոր հաց յա մեկ պուտ ջուր հասցնի։ Շատ հեր՝ երեխեն ուսին յա շալակին, խալիչա, խուրջին քամակին, դեմը գնում, դեմը լալիս, հենց որ ուզում էր մի քիչ նստի, շունչ քաշի, թրի ուռքն յա թվանքի լուլեն էին աչքը բուռը քցում, որ տեղիցը վեր կենա, վազի, որ ետ չմնա։ Որի հերն էր մերձիմահ՝ տանը մնացել ընկած, որի հարսը կամ կնիկը, կամ պառկած ծննդկանը, կամ ծծկեր երեխեն՝ օրորոցումը։ Տեսնողի սիրտը կրակ էր ընկնում, բայց անողորմ ղզլբաշի թուրն ու արինաթաթախ ձեռը ո՛չ հեր էր հարցնում, ո՛չ հիվանդ, ո՛չ ծեր, ո՛չ տղա, ո՛չ մեր, ո՛չ աղջիկ։ Որին քարով էին սպանում, որին թրով, որի ոտիցը քաշում, ջուրը քցում, որին բանհոգի անում, որ մնացողները ձեռք վերցնեն, գնան։ Անբան, հայվան շները շատ էին ցավում, կսկծում էս դառն, սոսկալի տեսարանի վրա, քանց բանական մարդիկը։ Ա՜խ, ո՞վ կարա է՛ն ողբը, է՛ն կսկիծը, է՛ն սուգն ու արտասունքը պատմել, ինչ որ էս ողորմելի խալխը վեր էին ածում ու քաշում։ Մարդի սիրտ պատռվում ա, բայց երկինք-գետինք մեկ փուլ էլ չէին գալիս, որ նրանց տակով անեն, մեկ չէին էլա ճաքում, սիրտըները բաց անում, որ նրանց կուլ տան, պրծացնեն։

Ինչ որ գեղցոնց հալն էր, աստված հեռու տանի։ Շատի տավարը հանդումը մնաց, մալը՝ չոլումը, ոչխարը՝ սարումը։ Ում ձեռը հասավ, էնքան արեց, որ արաբեն լծեց, երեխեքը մեջն ածեց, մեկ քանի փալաս-փուլուս էլ վրեն քցեց ու լալով, աղի արտասունքով ճամփա ընկավ։ Տուն, տեղ, բաղ, մասիլ՝ մնացին աստուծո ապով։ Որդին հորն ուրացել էր, բայց էլի էս օրհնած գեղըցիքն էին, որ ճամփի կիսին բազի քաղաքացու երեխա, բարգ, օղլուշաղ իրանց սելումն էին դնում, կամ նրանց հիվանդներին տիրություն անում, չունքի լավ-սաղ, էլի գրաստ, ուտելիք, տավար սրանք ունեին, նրանց ո՞վ կտար, ու ինչքան ձեռըներիցը գալիս էր, քոմակ էին անում նրանց։

Շատ ողորմելի հերնըմեր, հենց ճամփին, մեկ սովամահ, ծծկեր երեխա՝ էրկու-իրեք օր ձեռըներին պահում, ուզում էին, որ մեկ էնպես տե՛ղ հողի տակովն անեն, որ բալքի թե գազան չդիպչի, ու իրանք՝ էլի ետ գան, իրանց ջրատար մեռելի ոսկորները հանեն ու տանին իրանց

հետ, ժամով, պատարագով թաղեն։ Բայց որ ճարըները կտրվում էր, գլխըներին կրակ էին վառում, էրեխեն կամ ջուրն էին քցում, կամ մեկ քարի տակ դնում, իրանք էլ վրեն էրվում, խորովվում ու մյուս օրը լալով, կիսամահ ճամփա ընկնում։ Շատ հղի մեր հենց ճանապարհին կամ մեռած էր ծնում իր ինն ամիս դառը ցավով արգանդումը պահած, հասցըրած մանուկը, կամ թե չէ, սաղ էլ որ ըլում էր, մերը բարուրում, ուզում էր, որ կամ ինքն էլ հետը մեռնի, կամ մանուկը չթողա, տանի, բայց ա՜խ, անաստված ղզլբաշի թրի բերանը կամ երկսին էլ ի միասին էր կտրատում, կամ բարուրը մոր ձեռիցն առնում՝ կամ սպանում, կամ ջուրը քցում, կամ քարին տալիս, փչացնում։

Շատ հալևոր կամ ոտից-ձեռից ընկած պառավ, որ էլ չէին կարում ոտը ոտի առաջ դնեն ու կիսաշունչ մեկ քարի տակի նստում էին, որ բալքի թե գազանք գան, նրանց կտրատեն, ուտեն, որ գլխըները բաց չէին անում, լալիս, մղկտում ու իրանց որդոցը օրհնում, բարի ճամփա, բարով մնաս ասում ու ձեռաց գնում, յա արախչի ոտներն ընկնում, աղաչում, պաղատում, որ իրանց էնտեղ թողա, հենց խոսքը բերնըներումն էր՝ թրախորով ըլում՝ ո՛չ որդու ձեն լսում, ո՛չ թոռի երես տեսնում ու թամարզու աչքը խփում։ Շատ որդի՝ իր հալևոր հորնըմոր, շատ փեսա՝ իր նշանածի կամ նորահարսի, շատ ախպեր իր քվոր, աներ-զոքանչի հալը տեսնելով, որ էլ ջան չունին, որ տեղըներիցը շարժին, իրանք էլ կիսաջան՝ էլած ղվաթներն էլ որ ատամների տակը չէին առնում ու իրանց անգին բեռը շալակում, որ յա իրանք էլ մեռնին, յա նրանց չթողան, մեկ էլ էն էին տեսնում, որ քամակները թեթևացավ, ու իրանց քաղցր, ազիզ բեռան արինը շլընքներով շռալով ծոր ընկավ, գետինը ժաժ էկավ, իրանց գլխըները աչք ու լիս, ուշ ու միտք կորցրեց, դժժաց։ Շատի բախտն էնքան բանում էր, որ թուրը իրանն էլ էր զոռը ցույց տալիս, իր սիրելու հետ տանում, պրծացնում։ Բայց ա՛խ, իրանք, ղորդ ա, պրծնում էին, բաս իրանց քռփա մանուկներն, էրեխեքանց ցավն ու հոգսը ո՞վ պետք էր քաշեր, ո՞վ նրանց մեկ պուտ ջուր, մեկ կտոր հաց տար, սովից, մահից ազատեր։ Վա՜յ նրանց օրին. յա անիրավ արախչուն էր նրանց զավթում, յա սովը իր ճանկը քցում։

Բոբիկ ոտները քարերն էին ճղում, բաց գլխըները՝ արեգակը էրում, փոթոթում։ Շատ մոր երեխեն գրկիցը խլում էին ու կտոր-կտոր անում, որ եգին կնա։ Ո՞վ. երկինքը՝ աչքը բաց, հանդարտ մտիկ էր տալիս, երկիրը՝ բերանը փակ, անկաշ էր դնում. ում տալիս էին էնպես անմեղ քռփին, դեն էր քցում, մեկ բուռը հողի էլա արժան չէ՛ր տեսնում։ Վա՜յ նրան, որ կամ սելի ակն էր կոտրվում յա ծին սովի ձեռիցը բեզարում, կամ դրաստը

ծարավի, շոգի ձեռիցը թուլանում, վեր ընկնում. կամ տիրոնջն էլ անասունի հետ էին սպանում, կամ սել, մանր երեխեք միջումը վեր ընկած յա քնած թողում ու տիրոնջը թրածեծ անելով առաջ քշում, հետ ածում. շատը, ղորդ ա, վազում, գնում էր, չունքի ջանն ազիզ ա, բայց շատը գլուխը դնում սելի վրա, աղաչանք էր անում, որ կտրեն, մեռնի, պրծնի ու իր ողորմելի զավակները չոլումը չթողա։

Ա՜խ, ո՞ր մեկն ասեմ. սիրտս արին ա դառնում, ձեռներս դող ընկնում, աչքերս սևանում։ Երանի՜ նրան, որ էսպես բան ո՛չ տեսել, լսել ա, ո՛չ էլ կտեսնի, կլսի. բայց մեր ողորմելի ազգը հազար անգամ ա տեսել, լսել, քաշել։ Քար չկա մեր երկրումը, քոլ չկա, որ Հայի արնով ներկած չըլի։ Դո՛ւ էլ սրանց հետ գնացիր, սի՛րելի եղբայր իմ Մոսի, իմ գառնուկ ախպեր։ Ա՜խ, հենց մանուկ երեսիդ էի կարոտ, էն էլ չտեսա։ Մորս ծոցին, իրեք տարեկան, սովը քեզ տարավ, էդ լիս երեսիդ ղուրբան։ Գերեզմանդ ի՞նչ տեղ ա, չգիտեմ, բայց երկնքումն էլա նրաք մի քեզ կտեսնի՞մ, մի ճտովդ կընկնի՞մ, ա՜յ քո անմեղ ջանին մեռնիմ։

Ա՜խ, սի՛րելի Հայ, էս բաները լսելիս, ինչ ունիս-չունիս, տո՛ւր, որ քո ազգը քիչ-քիչ մեկ լավ օր քաշի։ Սրանք են, որ դռնեդուռ ման են գալիս, ողորմություն խնդրում, որ գնան, իրանց գերիքն ազատեն, որ էս դառն ժամանակին Բայազիդ կամ Ղարս ծախել են, որ մյուսներին պահեն։ Որդուդ նայի՛ր, աստծուն փառք տո՛ւր, որ քո առաջին խնդալով, խայտալով խաղում են։ Ա՜խ, քո դուռն էկողի ցավն իմացի՛ր, մի՛ երեսդ դարձնի՛ր։ Սրանք տանից, տեղից ընկած, որդուց, օղլուշաղից զրկված, սոված, ծարավ՝ քե՛զ են ապավինել։ Մի՛ ասիր, թե թամբալ են, բանից փախչում են, սրանց ամեն մեկի սրտումը հազար թուր կա ցցված։

Սրանց ուտելիքն էր խոտը, ծառերի կճեպը, թուփը ու իրանց սատկած տավարի ջամդաքը, չունքի մորթիլ չէ՛ր կարելի էսպես ժամանակին։ Մեկ արտ ռաստ գալիս կամ մեկ խարաբա գեղ տեսնելիս՝ հենց իմանում էին, թե դրախտն են գնում, չունքի լավօսալ, էլի մեկ բուռը ցորեն յա մեկ պտղունց գարի ճարում էին ու հենց էնպես բովում, աղանձում, հատիկ անում. աղը հո ղհաթ էր։ Էսպես էին քոշում մեր խեղճ, ողորմելի խալխը. չունքի ղզլբաշն իմացել էր, կամ ինքն էր ուզում ռսի հետ կռիվ բաց անի, ուզում էր, որ թե երկիրն առնեն, խալխն էլա չի՛ կորցնի, որ տանին Թեհրան, իրանց ծառա շինեն՝ յա թուրքացնեն, յա հողի հետ հավասար անեն։

Ա՜խ, հոգիս դուս ա գալիս, ընչի՞ հին դարդերս էլի նորոգեցի, ընչի՞ էս բանին ձեռք տվի։

Էսպես՝ տասը-տասնըհինգ օր քաշեց, որ Երևանու էլիգը կեավեկես

էլած, ծեծված, ջարդված, կոտորված՝ որը քրդի, որը ղարափափախի ձեռը եսիր գնացած՝ կեսը Ղարսա հողը մտավ, կեսն էլ Մասսա սարի էն կողմն անցկացավ, Բայազիդ գնաց, բայց ո՞ւմ մոտ, ո՞ւմ տունը, աստված ո՛չ գիտե։ Էջմիածնա միաբանքն էլ ցրվեցան։ Առաջին եպիսկոպոսքը՝ Եփրեմ, Բարսեղ, Հովհաննես՝ այժմյան կաթողիկոսը ու այլք, վանքի զարդն առան, էկան բերդը։ Հինգ-վեց օր էլ է՛ս քաշեց, ընչանք Թուրքի մհասիլը նրանց կցրվեր։ Գրքատուն, ամբար՝ որը դարտակեցին, որը փակեցին։ Էրկու<հարյուր> ջանիցը հինգն էլա չմնացին, որ սուրբ տաճարին ու Աթոռին պահպանություն անեն, էն էլ ծերացած, ոտից-ձեռից ընկած հաբեղա, վարդապետ էին, որ լավ համարեցին իրանց չոր գլուխը է՛նտեղ վեր դնեն, ուրտեղ որ էնքան տարի ծառայություն էին արել, քանց աշխարքե աշխարք ընկնին կամ ճամփին մեռնին։

Բաղի խեղճ մարդ էլ է՛սքան հեռու տեղիցն ու է՛նքան վտանգավոր ճամփերով՝ գլուխը փեշն էր դնում, օղլուշաղն ուրշի յա աստծուն պահ տալիս, ետ դառնում, գալիս, որ համ իր բաղերին ու հանդին, համ իր հարևանների մլքին օրոն անի, ջրի, պահի, որ չի՛ չորանան։ Էս խեղճերն էլ ցերեկը փշերի տակին, քոլերի միջումն յա քարափներումն էին տափ կացած, ու գիշերը՝ մութը գետինն առնելիս, ոտ ու չփլթու կտրվելիս, մահվան դողով ու քրտնքով դուս էին գալիս, իրանց բաղերը, հանդերը ջրում, իրանք էստեղ հալվում, մաշվում ա՜խ ու վա՜խ քաշելով, իրանց ողորմելի օղլուշաղն՝ էն ղարիբ երկրներումը։ Շատը հենց իմանալով, թե ոտը խաղաղվել ա, որ դուս չէին գալիս, իսկույն հարամին բկին չոքում, գլուխը կտրում, հոգին առնում էր։ Գլուխը դառել էր մեկ սոխի գլուխ, ինչպես որ ասում են։ Սար ու ձոր հարամով, գողով, ավազակով լցվել էին. ղուշը երկնքիցը վեր էին բերում։ Օդը ապականվել էր ջամդաքի հոտով, ու հարամի ղշերը, որ աշխարքի տակիցն ասես, թռել, էստեղ էին հավաքվել, որ իրանց փորը կշտացնեն։ Ջուր ասես՝ մարդ էր բերում, քամի ասես՝ մարդահոտ. քար չկար, որ արինաթաթախ չըլեր էլած։ Երկինքը պելացել, մտիկ էր անում, որ տեսնի, թե ի՞նչքան չարություն մարդ կարա անիլ, որ էնըգյորա նրա՛ պատիժը տա։

<8>

Էս ժամանակին էր, հունիսի...-ին 1825-ին, որ արինակեր Հասան խանը՝ սարդարի փոքր ախպերը, որ հազար անմեղ գլուխ կերել, հազար տուն քանդել, քաղաք, գեղ ավերել, Ղարս ու Բայազիդ հինգ-վեց անգամ ոտի տակ տվել, Արզրումա սարասկյարին խղճացրել՝ աշխարհ ձեռին զվիրն էր բերել, ոտը բարձրացրեց, որ գնա, Պետերբուրգն էլ առնի, ավերի, Թիֆլիզու սիրուն օղլուշաղը իրան գազան զորացը մատաղ անի, հրամայեց Նաղի խանին, որ իր ղարափափախները ու մսկլուն վերցնի, գնա, Ղազախու բերանը բռնի. քրդերի գլխավոր Օքյուզ աղին էլ ղրկեց Ղարսա սնորը, ու ինքը իր սարվազներովը, ղոնշունովը գնաց Ապարան, որ Փամբակու վրովը, ֆուսանդ ճարածին պես, ռուսի սահմանը անց կենա։ Բերդերը բոլոր ղայիմացրին, Երևանումն ու Սարդարաբադումը, որքան հարկավոր էր, զորք ու ջաբախանա թողին ու մնացածը հետըները վերցրին։

Ո՛վ էս սհաթը Երևան էր մտել, հենց կիմանար, թե ջրհեղեղը նոր ա էկել, աշխարհս քանդել։ Ապարան դառել էր մարդի ղասաբխանա։ Օր չէ՛ր ըլում, որ սարից, չոլից մարդ չի՛ բռնեն ու Հասան խանի առաջը չբերեն։ Ամեն գլուխ բերող նրա աջու ձեռն էր դառնում, փեշքաշի տուտը Ղարս էր հասնել։ Առանց մարդ սպանելու մեկ օր աչքը չէ՛ր կպցնում։ Տեղիցը վեր կենալիս, նամազը պրծածին պես, առաջին գործն էն էր, որ ջրատար, մոլորած եսըրների, որ էստեղ-էնտեղ ճանկում, բերում էին, կամ աչքըները հանի, քիթ ու պռունկը կտրի, կամ ոտն ու ձեռները կտրիլ տա, կամ կտրատած ձեռները դաղած եղի պղնձի մեջը կոխիլ տա, որ արինը կտրվի, կամ նրանց սաղ-սաղ փառչալամիշ անի։ Նաղի խանի ու Օքյուզի ղոչաղ ծառեքը հրաշք էին գործում։

Բոլոր Ղազախ-Բոռչալու դոնմիշ էր էլել, շատ էսիր սրանք էին բռնում իրանց միջիցը ու ղըլբաշի ձեռը տալիս։ Ճամփա ասես, վելադություն ասես՝ սրանք էին անում ու թշնամուն կամ իրանց մեջը բերում, կամ իրանք խեղճ հայերի տունն ու տեղը թալանում։ Շատ անգամ էն մարդի, որի հետ որ աթաղան, բաբաղան, մուղարար, տարերով նստել, վեր էին կացել, հացը կերել, հարևանություն արել, գալիս էին ափաշկարա, օրը ճաշին տունը կտրում, ունեցած չունեցածը վերցնում ու հետն էլ ասում, որ՝

— Մենք տանինք լավ ա, քանց թշնամին. մենք ձեր դոստն ենք, մենք ուտենք ձեր մալը, թե չէ՛ թշնամին կգա, կտանի։

Է՛սքան բանն անց էր կացել, խորամանկ պարսիկքը իրանց բանը էնպես էին գողի պես սկսել, որ մեր կողմը ո՛չինչ խաբար չկար։ Էսպես անօրենություն շա՜տ էր պատահում։ Շատ տարի, Ղարսա կամ Բայաղդու վրա գնալիս, էս օրը հաղիր էր։ Ապարանը ամեն տարի էր դուս գալիս սարդարը իր ղոնշունովը, իրեք ամիս մնում, Փամբակու մեծավորին փեշքաշ ուղարկում, իր մոտ հրավիրում ու հազար օրթումով հավատացնում, թե ռուսը քանց նրան էլ մեծ բարեկամ չունի։ Էս էր պատճառը, որ Փամբակու իշխող մեծավոր իշխանն և զորապետն՝ Սավարզամիրզա, ո՛չինչ

կասկած չէ՛ր տանում։ Ղորդ ա, էստեղ-էնտեղ տավար, եսիր տանում էին, ամա էս բարի սովորությունը էսօր էլ ունին մեր պատվական դրացի Ղազախ-Բոռչալուն։ Էսօր էլ են մարդ սպանում, թալնում, կոտորում, նրանց բան ու գործն է՛ս ա միշտ։ Էստուր համար զարմանք չի՛, որ ո՛չ ոք մեկ չար բան չէ՛ր մտածում, թե Երևանը քոչում էր. նրանք հավատացնում էին, թե սարդարը ուզում ա գնա Արզրումու վրա։ Ղալաբանթըլը հազար անգամ էր պատահել, էս նոր բան չէ՛ր, ու նրանց աղալարները էնպես էին Սավարզամիրզի սիրտը ձեռք քցել, որ ինչպես ուզում էին, էնպես էին շուռ տալիս։ Բազի հայ էլ, որ Երևանիցը, իր բարեկամներիցը գիր էր ստանում ու գիտեր, թե բանի զորությունն ի՞նչ ա, ձեն հանելիս՝ Ղարաքիլիսումը վրեն ծիծաղում, ուխին խփում էին ու վախլուկ հայ կանչում։ Աղալարները մեծավորի դուռն ու շեմը էնպես էին բռնել, որ մեկ հայի չէին էլ թողում, որ շունչն էլա հանի։

Էլի Փամբակու հայերը պարսից խորամանկությունը լավ իմանալով և իրանց քաշած դառն օրերը միտք բերելով՝ ամեն տեղ պատրաստություն էին տեսել։ Համամլու, Պարնի գեղը, Գյումրի, որը բերդ ուներ, պատերը շինել, մեջն էին մտել. Խլղարաքիլիսեն բերդ ու էր չունենալով՝ սելեր ու գութան իրար վրա էր դրել, սանգար կապել.— ունեցած-չունեցած էնտեղ <էին> ղայիմացրել, գեղարենքն էլ իրանց մեջ առել, ինչ հին ժամանակից թուր, թվանք ունեին, հավաքել, տղամարդիկը գիշեր-ցերեկ ասպաբավորած՝ օղլուշաղը էնտեղ էին հավաքել, տավարը բերդի տակն արել, որովհետև նրանց մեծ հարստությունը տավարն ա, գիշեր-ցերեկ ղարավուլ էին քաշում. հանդն էլ բազմությունով էին գնում. ճամփեքը համարյա՛ թե փակվել էին. շատ գիշեր, շատ վախտ էլ Քրիստոսի խոսքին չէ՛ին մտիկ անում, մեկ թուրք աչքը թեքելիս, գլուխը հետն էր թեքվում. չունքի յայլաղի ժամանակն էլ էր։

Թուրքերը լավ էին իմանում, թե էշը ո՞րտեղ ա կորել, ու ինչ տեղ ուզում էին, որ իրանց գազանությունը բանացնեն, իրանց արինը իրանց սիրտն էր թափում, չունքի, թե քիչ, թե շատ, էլի Փամբակու, Լոռվա, Ղարաբաղու, Մշու, Բայազդի հայերը սարում, չոլում մեծանալով, շատ տերտերի ու ժամի ձեն չլսելով՝ մինչև էսօր էլ իրանց սոպության հետ էն քաջ տղամարդության հոգին էլ ունին, որը որ ունեցել են մեր անհաղթելի նախնիքը, ու տեղն ընկած վախտը է՛լ ավետարանի ու վարդապետի խոսք նրանց չէ՛ր վախացնում, թե որ արին վեր ածեն, դժոխքը կերթան, ու մատը բարձրացնողի սաղ ձեռն էին բերանը կոխում, հավ թռցնողի՝ գլուխը թռցնում։ Էս էր պատճառը, որ թուրքերը էսօր էլ էս ձորերովը անց կենալիս՝ էնքան քարափի լեռ քարիցը չեն վախենում ու գետի կատա-

ղությունիցը, որքան քարափների բերնիցը, որդիանց որ քաջ լոռըցոնց թվանքի գյուլլեն, կամ մեկ լդրանի թուրը անցկենողի գլուխը սոխի պես էին թռցնում ու իրանց թշնամու մարմինը իրանց ձորերին մատաղ անում։

Մենակ դսեղեցի Մեհրաբյան-Թումանյան Հովակիմի անունը քարերը սասանացնում էին։ Սարերի, ձորերի միջում մեծացած՝ գազանի ու հարամու արինը թափելով էր նրա ոսկորները հաստացել։ Երկու տղամարդ նրա մեջքը չէին կարող խոտել. հինգ մարդ նրա մեկ ձեռը չէին կարող ոլորել. նրա գլուխը մեկ օր չէր ցավել։ Կերածը մեղր ու կարագ էր, հաքածը՝ շալ, կոխածը՝ ծաղիկ ու չիման. աղբրների վրա, մեշի միջումն էր նա օրորոցումը աչք բաց արել։ Նրան ի՞նչ կդիմանար։ Աժդահա՛, ու ո՛չ տղամարդ։ Չորս գազ ու կես բոյն էր, գազ ու կես՝ թիկունքի լենությունը, դոշը՝ ապառաժի պես հաստ. ամեն մեկ ձեռը՝ մեկ սնի ղղար, ամեն մեկ ոտքը՝ մեկ կաղնու ճուղքը, շլինքը՝ մեկ ծառի քոքի հաստությունով. երեսը մազն էկել, կոխել, երկու թիզ ճակատի տակին սև-սև ունքերն է՛նպես էին բռնել ու նրա արծվի աչքերն ու քիթը կոխել, ինչպես կարկտախառ ամպը՝ գիշերվան աստղերը։ Քիթ ու պռունկն էնպես էին մազի միջումը կորել, ինչպես մեկ ապառաժ քար՝ ջանջալի թփի միջումն։ Ութ ախպեր ուներ, մեկը քանց մեկը աժդահա. ամեն մեկը հինգ-վեց որդի ունեին, շատի չէ թե հարսանիքն էին մենակ նրանք տեսել, թոռներն էլ մեծացել՝ առաջներին խաղում, սարն էին գնում։ Վաթսուն ջանից ավելի հոգի՝ հարս, փեսա, թոռը, ծուռը, առավոտը նրանց տանիցը դուս էին գալիս, րիգունը մթանը՝ նրանց օճորքի տակին քնում, ու նրանց հարյուրտարեկան հեր Մեհրաբը դեռ երեկվան երեխի պես բեղերն օլորում, միրուքը սանդրում, փափախը կոտրում, նրանց հետ պար գալիս՝ պար գալի, խաղալիս՝ խաղում, սազ ածելիս՝ շատ անգամ ինքը սազը ձեռներիցը խլում, ածում, խաղ ասում, քսան տարեկանի պես ձիու վրա նստում, ասպաբը քցում, ու սարերում, ձորերում, չադրի տակին՝ պարզիկա գիշերը որդվոցը իրան արած քաջությունները, լոռըցոնց տղամարդությունը, հին-հին բաներից, լազգուց, թուրքից հազար բանիր պատմում ու նրանց էլ ասում, որ քնած վախտին էլ՝ թուրը ու թվանքը բարձի տակին, ոտը գերեզմանումը՝ թուրը յա կողքին քաշ, յա պատանի հետ պետք է հողը տարած, որ անբան քարն էլ իմանա, թե ո՞վ ա իրան տակին թաղած։

Էն Հովակիմը, որ մեկ օր լեղանալիս մեշիցը հանկարծ որ տասնըհինգ լազգի չե՛ն դուս գալիս, ինքն էլ կամաց-կամաց ջրիցն ա դուս գալիս ու որպես թե նրանց բանի տեղ չի՛ քցում, սկսում ա շորերը հաքնիլ։ Լազգիքը սովորաբար մարդ չեն սպանիլ, սաղ-սաղ կբռնեն, որ տանին, ծախեն։ Հենց որ մոտանում են, ձեն ա տալիս էս աժդահեն, որ կանգնին, ու

ասում, որ տղամարդկությունն էն չի՛, որ տասնըհինգ մարդ մեկի վրա թափին, բռնեն. թե սիրտ ունին, իրանք մեկ կողմը կանգնին, ու ինքը մեն մենակ՝ մյուս, թե որ հաղթեն, թո՛ղ էն ժամանակը բռնեն, տանին։ Լազգիքն էլ իրանց գլուխը էնքան ցած չհամարելով՝ համաձայնում են։ Ասլան Հովակիմը թվանքը քցիլն ու առաջի մարդին սպանիլը մեկ ա անում։ էս ղզղուն վախտը էլ գյուլլի չի՛ մտիկ անում, թուրը հանում ա, մեջըներն ընկնում. թշնամին երեսը ետ ա շուռ տալիս։ Տասնըչորսին էստեղ-էնտեղ, որը թրով, որը փշտովով սպանում, աղցան ա անում։ Վերջին տասնըհինգերորդն էլ որ էսրի պես չոքում, գլուխը դեմ չի անում քաջին, նա թևիցը բռնում, վեր ա կացնում ու ասում.

— Քեզ քո կյանքը կբաշխեմ, որ գնաս ձեր երկիրն ու ձեր քաջ ազգին պատմես, որ իմանան, թե մենակ իրանք չի թուր խփիլ գիտեն, թե Լոռու Դսեղ գեղումը էսպես, ինձ նման հազարավորները կան, որ թե ուզենան, ձեր երկիրը ոտի տակ կտան, կջնջեն։ Ամա՛ հայ քրիստոնեին մեղք ա էսպես բանը, մեր օրենքը չի՛ հրամայում։

Է՛ս Հովակիմը, է՛ս Լոռու ձորերի աստվածը, է՛ս սարերի արծիվը, է՛ս մեշեքանց ասլանը մենակ հերիք էր, որ մեկ քարի քամակից ձեն տալիս կամ մեկ չոլում ռաստ գալիս՝ հարյուր թուրքի լեղին ջուր կտրի, աչքերը սևանա։ Էն սևացած, արևի, անձրևի տակի մուր դառած ունքերի տակիցը որ աչքը չէ՛ր ընկնում մարդի երեսի, էնպես էր իմանում, թե կայծակն ա խփում, ու սար ու ձոր սևանում էր գլխին, գետինը պտտում, ու ինքը քար դառած մնում առաջին կանգնած։ Քանի՜, քանի՜ էսպես ղոշաղ տղերք քամակին քցած, գիշեր-ցերեկ, էս ահագին հսկայն վիշապի պես պտտում ու Լոռվա ձորերումը ու սարերի գլխին ղուշը երկնքիցը վեր էր բերում ու ձիավորի ոտի իզը բռնած՝ ձորեձոր ընկնում, ֆորսի քամակիցը հասնում ու տասը ձիավորով հարյուր ձիավորի մեջը ճղում, ջախըբուրդ անում ու էլի, թուրքերի օբեքանց միջովն անց կենալիս, մեկն էլա չէ՛ր սիրտ անում, որ աչքն էլա խեթի։ Ինչպես ինքն էր մեծացել, էնպես էլ իր բոլոր ընկերքը. ամեն մեկ տան հինգ-վեց տղամարդ կար, զարթնե մեծն ու պստիկը, ու սարի չայիր-չիմանը, ծաղիկն, աղբյուրը, ձորի քարն ու էրն էին նրանց ջանը, նրանց հոգին, նրանց կյանքը։

Տաք յորղան-դոշակում, բուխարու առաջի, շկոլում կամ եկեղեցում չէին մեծացել, որ նրանց սիրտ կամ ահ ունենա, կամ թուլություն։ Շատ անգամ, անձրև, կարկուտ դալիս էլ, նրանք չոլումը կամ սարումը, քնած տեղը գլուխ չէին բարձրացնում, որ քունը չփախչի։ Նրանց բուխարին, նրանց փեշը իրանց տան մեջտեղն էր, ուրտեղ որ երկու-իրեք ահագին ծառ իրար վրա քցած՝ առավոտից մինչև մութը էրվում ա, ու իրանք էլ

դռները բաց, շատ անգամ շապկսանց, գլխաբաց, կրակի չորս կողմը կրտրում, խմորը գունդ են անում, միջումը թխում, միս են խորովում, հաց են ուտում ու իրանց ձորերի պատմությունն անում, ու որդին հոր ճտովն, ախպերը քվորը խտտած՝ անմեղ գառի պես բոլորեշուրջը վեր թափում, քնում։ Մեկ ղալմաղալ ընկնելիս՝ իրանց ապրանքը, օղլուշաղը տանում էին էնպես քարափների, էրերի մեջ պահում, որ ղուշը սիրտ չէր անիլ մոտ գա։ Հազար գազ բարձր, սուր քարափների դոշին, որ մարդ մտիկ անելիս աչքը սևանում էր, սրանք էնպես էին ման գալիս, էնպես էին էս քարափի ծերիցը օձի պես էն քարափի ծերին թռչում, որ հեռըվանց տեսնողն էլ մնում էր քար դառած, աչքերը կալնում էր ու դուզ գետնի վրա չէր կարում ահիցը կանգնիլ, նստում։ Տավար, ոչխար, իլխի՝ մեշեքն էին քշում, ու իրանք, թվանքները ուսըներին, սար ու ձոր ոտի տակ տալիս։

Ա՜խ, ի՞նչ տեղ են կենում, որ էսպես չանեն, էս սիրտը չունենան։ Վարժատան չէին՝ մեռած բառով, անհոգի շնչով, թույլ լեզվով լսել, թե Հայք էլ վաղ թագավորություն ունեին, որ կամ չհավատային, կամ քունները վարպետի անսիրտ պատմության վրա տանեին։ Ամեն քար նրանց համար գիրք ա, ամեն ապառաժ՝ նրանց համար պատմություն, ամեն հին բերդ, քանդված մատուռ կամ եկեղեցի, որ սար ու ձոր լիքն են էստեղ, նրանց համար կենդանի վարժապետ։ Ամեն գերեզման, ամեն արձան՝ նրանց համար կենդանի վկա ու պատմագիր։ Լոռվա անառիկ բերդը, Սանահնա և Հախպատի վանքերի պատերը, տաճարները, սրահները՝ նրանց համար վարժատուն։ Իրանք, զորդ ա, կարդալ չեն գիտիլ, ամա սրտներումը երկաթի պես ա գրված, թե էս է՛ն սուրբ հողերն են, է՛ն սուրբ դաշտերն են, ուր մեծն Շահն-շահ Աշոտ Բագրատունի, Սմբատ..., Զաքարե Սպասալար, Արղությանց-Երկայնաբազուկ նախնիք, Հովհան Օձնեցի իմաստասեր, Հովհան Երզնկացի՝ արծվի պես խոյանային, առյուծի պես մռնչային ու հրեղեն սերովբեի ու քերովբեի պես թուրը ձեռ առած՝ երկրումս Օմարի, հոնաց, Ջինգիզ խանի, Թամուրլանգի հոգին քաղեին, երկնքումը իրանց համար անմահության բրաբիոն, անթառամ պսակ պատրաստեին։

Նրանց ծնկները՝ սրանց գերեզմանի վրա չոքում. նրանց երեսը սրանց սուրբ հողին ա քսվում. նրանց ոտը սրանց երեսին ա կանգնում. նրանց արտասունքը սրանց հողի հետ ա խառնվում։ Նրանց սերմը՝ սրանց հողիցն դուս գալիս, իրանց պահում։ Նրանց տան հիմքը՝ սրանց գերեզմանի վրա շինած։ Նրանց մեռելը՝ սրանց միջումը պառկած։

Քնից են վեր կենում, սրանց գերեզմանը տեսնում,
Թե՛ քուն են մտնում, սրանց երազում տեսնում,
Թե՛ օրթում ուտում, նրանց անունը տալիս,
Թե՛ ճամփա գնում, նրանց աղոթքն հիշում,
Թե՛ կռիվ անում, նրանց հիշում, հաշտվում:
Ո՛վ սուրբ լերինք, ձորք, Հախպատ, Սանահին.
Ձեր սուրբ դաշտերումը, սարերի գլխին
Հազար արձաններ անմռունչ կանգնին,
Կենդանի լեզվով՝ խեղճ անցավորին
Կանգնացնեն, ասեն, էլ լռվին կրկին.
«Լա՛ց քո տարաբախտ արևդ ու օրերդ,
Լա՛ց քո խեղճ գլուխը, բա՛ց էդ ձեռներդ.
Տո՛ւր հոգիդ անտեր, ողորմելի հայ,
Էլ ո՞ւր ես գնում, գլխիդ չտալիս վա՜յ:
Կա՛ց, մեռի՛ր էստեղ, թո՛ղ քո ոսկերքն էլ
Էս սուրբ հողումը կարենաս թաղել,
Որ մարմինդ էլա էս աշխարքումը,
Քո թագավորաց հետ ու միջումը
Էստեղ դինջանա, չունքի քո աչքը
Կարոտ մնաց, տեսնի քո ազգի փառքը:
Նրանց սուրբ հողն էլա թո՛ղ երեսդ ծածկի,
Նրանց կոխած թուփը քո գլխիդ ծաղկի»:

Թողե՛ք, սրբազան նախնիք մեր հզոր,
Ձեր սուրբ երեսին զոհ լինիմ մեկ օր.
Ա՜խ, չունչս քաշելիս կրակ է դուս գալիս,
Աչքս խփելիս, բերանս բանալիս
Ա՜խ ու ո՜խն ու լաց ամպի պես խառնվում,
Էրում, խորովում, օրս խավարացնում:
Ա՜խ, ի՞նչ օգուտ, որ սիրտս ա իմանում,
Աչքս չի՛ տեսնում, հոգիս մխիթարվում.
Ընչի՞ ձեր թևի տակին չծնեցի,
Ընչի՞ ձեր շունչը ես էլ չլսեցի,
Իր վեհ Շահն-շահն կամ Մեծն Սմբատ
Ինձ էլ ասեր, թե՝ «Որդի հարազատ,
Տե՛ս, է՛ս հողումը ես քեզ պահեցի,
Տե՛ս, է՛ս հողումը քեզ մեծացրի.

Շունչդ տո՛ւր, հոգի՛դ, բա՛յց քո հայրենիք
Մի՛ տար թշնամյաց, ու անաշխարհիկ
Ընկնիլ սարեսար, լինիլ չարաչար,
Մառա օտարաց կամ գերի անճար»:

Փակի՛ր երեսդ, աստվածասեր հա՛յ.
Վա՜յ մեր խեղճ օրին, մեր արևին վա՜յ.
Ամպել ա երկինքը, կայծակին տալիս,
Սար ու ձոր գոռում, հառաչում, լալիս:
Էլ ի՞նչ ես կանգնել ձեռդ ծոցումդ,
Մնացել շվարած՝ շունչդ բերնումդ:
Փախի՛ր, ա՜խ, գլուխդ ա՛ռ, կորի՛, որ պրծնիս,
Էս հեղեղին դու ի՞նչպես դեմ կընկնիս.

Ա՜խ, ի՞նչպես էսօր դու գլուխ բարձրացրիր,
Բարի՛ արեգակ, երեսդ հանեցիր.
Ա՜խ, ի՞նչպես սիրուն աչքդ չխփեցիր,
Ու էդպես հանդարտ էկար, կանգնեցիր,
Որ վկա լինիս անիրավ գործքի,
Որ լիս տաս խավար, անողորմ սրտի
Ու խեղճ հայերի արինն ու ջանը,
Էրված տան ծուխը, փակված բերանը,
Կտրատված լաշը, սուգ ու շիվանը
Լսես, տեսնիս, գնաս էլ ետ քո բանը:
Անողո՛րմ երկինք, ի՞նչպես դուք թողիք,
Ո՞ւր ձեր ամպը, կայծակն էսօր պահեցիք.
Չարի սուրը տեսած՝ դուք պապանձվեցիք,
Ու փուլ չի՛ էկաք, ձեր տակով չարիք:
Ապառա՛ժ գետին, անկո՛ւշտ հողի փոր,
Հենց անմե՞ղ արին կուզեիր էսօր.
Հենց անշո՛ւնչ մեռել ծոցդ կտանիս,
Ծնողաց սուգ, շիվան ո՛չինչ համարիս:
Աչքերդ կխփես, բերանդ կբանաս,
Թշվա՛ռ դու գազան, որ ո՛չ կշտանաս:
Ի՞նչ կըլեր էսօր մեկ գութ շարժեիր,
Անմեղի լացն, սուգն դու մեկ լսեիր,
Քո չար որդիքը հրով խրատեիր,

Բարի որդիքդ սիրով պահեիր,
Քեզ քանդողի դու տունը քանդեիր,
Քեզ շինողի դու տունը շինեիր,
Ու հազար անմեղ հոգի գառնի պես
Սրի չտայիր, խնամեիր մոր պես:

Ետ դա՛ռ, անցավոր, ա՜խ, ո՞ւր ես գնում,
Մի՞թե արյան ծովն առաջիդ չտեսնում.
Քո խեղճ ազգի ջանն առաջիդ ընկած,
Արինաշաղախ հողումը քցած՝
Մանուկն մոր սրտին, հարսը փեսային,
Որդին հոր դոշին, աղջիկն մոր ծծին,
Կարը բերնումը, ձեռը նրա ծոցին,
Արյուն, արտասուք, մազ ու հող, երես՝
Իրար շաղախված, հնձած ծաղկի պես,
Քուչա, ճանապարհ բռնել են, փակել,
Քար ու դաշտ ու հող արնով լվացել,
Քեզ ձեն են տալիս, թե որ անց կենաս,
Խլղարաքիլսեն մտնես կամ դուս գաս,
Աչքդ մեկ գետնին քցի՛ր ու ասա՛,
Աղլուխն ա՛ռ ձեռդ, սրբի՛ր ու մեկ լա՛.
Ջոքի՛ր էն հողի, է՛ն դաշտի վրա,
Նայի՛ր երկինքը ու լա՛ց, սուգ արա՛,
Հիշի՛ր նրանց հոգին, պահի՛ր քո մտքում.
Թե մեկ ազգ իրան, որ էս աշխարքում
Չի՛ պահի, թշնամուն ինքը գերի կըլի,
Աստված էլ նրան աչքից կըքցի:

<9>

— Տղե՛րք, օյաղ կացե՛ք, թվանքներդ հազրեցե՛ք, երեխեք, օղլուշաղ բերե՛ք, մեր տունն ածեցե՛ք,— ասեց Խլղարաքիլիսի իշխան պարոն աղա Սարգիսը,— *փառք աստուծո, տունս հացով լիքն ա, գոմեշներս՝ կթի. ինչ ունիմ ձերն ա. ձեր տավարն էլ, որքան կարեք, գեղին մոտացրե՛ք. սիրտըներդ պինդ պահեցե՛ք, քանի իմ ծուխս չի՛ կտրվել, ու շունչս՝ բերնումս, ջանս ձեր ուղուրին դրած ա: Մենք քրդերի ու օսմանլվի հետ ենք քյալլա տվել, էս անսիրտ աջամն ի՞նչ ա, որ մեր առաջին դիմանա: Երկինքն էլ որ թռչին, տեղվետեղ կրակ դառնան, մեր մազին չե՛ն կա-*

րող դիպչիլ: Մեր ոսկորները Ղարսա սարերումն ա պնդացել, սրանք ո՞վ են, որ մեզ դեմ կենան: Թո՛ղ մեզ բարութ ու թվանք չտան, մեր տղամարդությունը մեզ համար բարութ էլ ա, պարիսպ էլ: Լավ նայեցե՛ք, որ սելերը ղայիմ ըլին: Մեկ դաստեդ գնա գեղի էն կողմը, մեկ՝ էս կողմը. թե կարաք, մեծ ու պստիկ խառը կանգնեցե՛ք, որ թշնամին հենց իմանա, թե մենք շատվոր ենք, ու սիրտ չի՛ անի, մոտանա: Ես իմ դաստեն ճամփի առաջը կկտրեմ. առաջի դուս էկողի ճակատը էս գյուլլին ղուրբան կանեմ, որ հրես քցում եմ:

Ղորդ ա, շատ օր մտիկ արինք, չէկան, ամմա էս գիշեր ինձ սուրբ Սարգիսն երևաց, ծառա եմ նրա սուրբ զորությունին, ու ինձ ասեց, որ մեր գլխի թաղարեքը տեսնինք: Սուրբ Սարգսի անունը տվե՛ք, աղոթք արե՛ք, հրես աղոթարանը, որտեղ որ ա, կբացվի: Նրանք մեր ազգի արինը շատ են վեր ածել, մեկ օր էլ մենք նրանց արինը վեր ածենք: Հայ չե՞նք, հայի արարչին մեռնիմ, նրա ամեն մեկը մեկ սարի բարեբար ա: էլ վախտ մե՛ք կորցնիլ. կապրինք, էլի մեր հողումը, մեր օղլուշաղի հետ կխնդանք, կմեռնինք, էլի մեր ննջեցելոց հողի վրա արին կթափենք: Վարդանա թոռները չե՞նք, Տրդատա արինը չի՞ մեր սրտումը, Տիգրանի շունչը չի՞ մեր բերնումը: Սար ըլեր՝ կհալչեր, էլի մենք՝ հայերս չե՞նք, որ ամեն տեղ անուն ունինք, մեր հավատը ամեն տեղ գոված ա. մեռնի՛մ ձեր արևին, էնպես մեկ քաջություն անենք էսօր, որ աշխարհ ամենայն իմանա: Դե՛, էլե՛ք, Սմբա՛տ, Աշո՛տ, Տի՛գրան, էլե՛ք, ձեր խոքուն (հոգուն) ղուրբան, տեսնիմ, թե ի՞նչպես էսօր ձեր անունի լայաղ՝ ձեր հունարը նշանց կտաք: Էդպես անուն ունեցողը, սար ըլի առաջին, պտի վրեվը թռչի. ծով ըլի, պտի ոտնակոխ տա, ո՞ւր մնա էս քյամալաղ, թուլ աջամը, որ ո՛չ հոգի ունի, ո՛չ հավատ, ո՛չ օրենք: Մեկ մարդ որ մեռոն չունենա ճակատին, նրանում ի՞նչ զորություն կըլի: Մեր ձեռը որ թուլանա, աստուծո հրեշտակը, սուրբ Լուսավորչու բարեխոսությունը մեզ քոմակ կըլին, է՛նքան ա մեր հավատի զորությունը:

Տե՛րտեր ջան, վեր կա՛ց, ամենին էլ սրբություն տո՛ւր. դրա զորությունին ղուրբան. մեռնի՛նք, հոգու փրկություն ա, ապրի՛նք՝ մարմնի առողջություն: Խոստովանության վախտը չի՛. աստված ինքը գիտի, որ մեր սիրտն արդար ա: Թե մեռնիմ, ինձ թաղեցե՛ք, իմ հոգուս հացը տվե՛ք ու էս ջիվան որդուս պահեցե՛ք: Հինգ որդի ունիմ, իրեք՝ ախպեր, վեց-օխտը՝ ախպոր զավակներ, հարսն ու թոռը, ամմա իմ աչքի լիսը սա ա էլել: Ամենից ավելի սրան եմ ուզել, սիրել: Ա՜խ, թե գիտենաք՝ սա ի՞նչ ցեղից ա. վա՜յ, ի՞նչ ասեցի, դուք լավ գիտեք: Սա մեր քաջ նահատակի՝ Վարդան Մամիկոնյանի արնիցն ա: Երեխա էր, որ հերնըմերը մեռան, ես սրան

վեր առա, ինձ որդի շինեցի, ու ինձ որդուց ավելի համ տվեց։ Ջուրը որ քցեի, կընկներ. կրակը քցեի, երեսը ետ չէ՛ր դարձնիլ։ Տեսնո՞ւմ եք է՛ս լեն ճակատը, է՛ս պարթև բոյը, է՛ս արծվի աչքերը, է՛ս գեղեցիկ պատկերը. լսե՞լ եք սրա անուշ լեզուն։ Եկեղեցին մտնելիս, հենց իմանաս, հրեշտակ ա մտնում մեր մեջը, դուս գալիս. հենց բռնես՝ արեգակ ա ծագում։ Ա՜խ, ամեն մեկ սրան մտիկ տալիս, ամեն մեկ սրա ձենը լսելիս՝ էնպես եմ իմացել, թե սուրբ Վարդանն ա առաջիս կանգնած։ Տե՛րտեր ջան, սրան օրհնի՛ր, ձեռդ դի՛ր գլխին. ո՞վ ա խաբար, աղոթարանը բացվում ա արնով լցված. սրտովս դառը մտքեր շատ ա անց կենում, ամա մեր հավատը զորավոր ա։

Վա՛րդիկ ջան, արևի՛դ մեռնիմ. քանի շունչս վրես ա, արի՛, մեկ քեզ համբուրեմ, արի՛, էդ սուրբ երեսիդ ղուրբան ըլիմ։ Թե հողն էլ մտնիմ, էդ արդար ձեռովդ իմ աչքս խփի՛ր. իմ հողը դո՛ւ քցիր, իմ մեծ որդին դո՛ւ ըլի՛ր, իմ տեղը դո՛ւ բռնիր, իմ տունը դո՛ւ հովվիր։ Քանի ոտդ իմ շեմումն ըլի, իմ տունը կծաղկի, քարերն էլ ինձ պտուղ կտան։ Արի՛, երեսիդ մեռնիմ, իմ երկրո՛րդ Վարդան, իմ աղի՛զ Վարդան. գերեզմանումն էլ որ ըլիմ, որ դու գաս, երեսս կոխես, հենց կիմանամ՝ հրեշտակ ա թևերն վրես փռել։ Արի՛, արի՛, երեսս ոտիդ տակը, բալքի թե է՛ս ձեռը, որ հիմիկ քեզ խտտում ա, է՛ս աչքը, որ սուրբ երեսդ տեսնում, է՛ս լեզուն, որ հետդ խոսում, էսօր բոլորն էլ լավին, ու մարմինս քո առաջին անշունչ, անլեզու ընկած ըլի։ Լաս՝ ես չլսեմ, սգաս՝ ես չտեսնիմ, չիմանամ։ Վարդանի՛ աստված, Վահանի՛ աստված, ո՛վ սուրբ Լուսավորիչ. թե էս ծերացած գլուխը էլ ջեր օր չի՛ պտի տեսնի, թո՛ղ սրա ոտի տակին մեռնիմ։ Թե էս հալևոր աչքը էլ արեգակի լիս չի՛ պտի տեսնի, ա՜խ, աստված, քո հողն եմ ու մոխիրը, թո՛ղ սրա ձեռն իմ երեսիս մեկ բուռը հող քցի։

Վա՛րդան ջան, արևիդ մեռնիմ. մի՛ լար, քո արտասունքը սիրտս էրում, խորովում ա։ Մի՛ լար, էդ քո հրեշտակի աչքերիդ ղուրբան։ Քո սուրբ պապի օրհնությունը մեզ վրա ա, սրբի՛ր աչքերդ։ Մկամ քեզ որ օրհնեմ, ես պտի մեռնի՞մ. քեզ ո՞ր օրը չե՛մ օրհնել, ո՞ր օրը չե՛մ գովել ու երեսդ երեսիս, աչքերս երկինքը քցել, քեզ ումբր ու արև խնդրել։ Արի՛, ո՛րդյակ իմ. արի՛, հոգի՛ իմ. իմ տան սին, իմ կենաց գավազան. իմ օրհնությունը հոր օրհնություն ա։ Հոր ձենն աստված թեզ կլսի։ Արի՛, քեզ օրհնեմ. վախտը հասել ա, գնա՛ մորդ մոտը. մյուս տղերքանցս սիրտն ա՛ռ, քեզ պահի՛ր։ Աստված էս ձեռը, որ մինչև էսօր մեկի մազի չի դիպել, չի՛ թուլացնիլ։ Դուք ինձ համար աղոթք արե՛ք ձեր արդար բերնովը։ Էս քաջ տղերքանց ջանն ըլի սաղ. արծիվը երկնքիցը վեր կբերենք։

Տե՛րտեր ջան, Պահպանիչդ ասա՛, ավետարանը կարդա՛, մեկ կարճ աղոթք անե՛նք, աստուծո էս սուրբ երկնքի տակին, բալքի թե դհա շուտով մեր ձենը առ աստված հասնի։ Երեխե՛ք, չոքեցե՛ք, ծունր դրե՛ք. ձեր՝ էս սհաթի ամեն մի շունչը Աբելյան պատարագի պես երկինքը կվերանա. հանեցե՛ք թրըներդ, թո՛ղ տեր հայրն օրհնի։

Տան կտուրներին, հայաթի միջին,
Դաշտի երեսին, հողի բաց դոշին,
Երկնից առաջին, աստղերի տակին
Նրանք չոքեցին, նրանք կանգնեցին:
Էրեխանց ձենը, տղայոց լացը,
Մնողաց սուգը, նրանց մաղթանքը
Իրար հետ խառը երկինքն վերացան:
Հերը որդին օրհներ, մերը զավակն հանձնեն:
Մուրն ու խավարը քիչ-քիչ հեռանար,
Լիսն ու արևը ծանր մոտանար:
Երկիրը նրանց արտասունքը սրբեց,
Երկինքը նրանց աղոթքը լսեց.
Ուրախ երեսոք տեղից վեր կացան.
Տերտերի ձեռը, խաչն, ավետարան
Ճակատին դրին նրանք, համբուրեցին.
Ձեռ-ձեռի տված՝ իրար սիրտ դրին,
Աչքները սիրով երկինքը քցեցին.
Թե մահ էլ, թե կյանք նրանց հանդիպին,
Իրար հետ ապրին, իրար հետ մեռնին,
Իրար հետ արին թափեն ու կովին,
Իրար հետ թաղվին, իրար հետ պսակվին:
Ահ ու տխրություն էլ չէ՛ր երևում.
Երեսն արև՝ լիս դառած փայլում,
Արինն սրտիցը կրակի պես վառվում,
Հոգին մարմնիցը ձեն տալիս, ասում.
«Էլ մի՛ կորցնեք դուք ձեր ժամանակն,
Գրվեց երկնքումը ձեր սուրբ նիշատակն:
Սար ու ձոր հրեն ոտն են վերցրել,
Գալիս ձեզ վրա՝ ոտնատակ անել,
Բայց ձեր քաջությունն, երկնից զորությունն
Կարեն աշխարքումս թողալ ձեր անունն.

Թե սերն ու հավատն, հայրենյաց նախանձն
Որքան զորավոր են ու շնորհապանծ,
Որ միենն հազարին կարա խորտակիլ,
Երկուսը բյուրին՝ կոտրիլ, նվաճիլ»:
Ձեն տվին միմյանց, սիրտ տվին միմյանց,
Օրհնություն առան, գնացին ի բաց:

Բայց անմեղ Վարդանն մինչև էն վախտը,
Շլինքը ծուռը, աչքերը գետնին՝
Մեկ հորը նայելով, մեկ լացը սրբելով,
Մեկ ա՜խ քաշելով, մեկ սիրտը բռնելով,
Խալխին նայելով, սուգը կուլ տալով,
Երկնքին աղոթքը, երկրին արտասունքը
Տալով, հանելով՝ մեկ ձեռը թրին,
Մյուսը հոր ուսին, հոր ճտովն ընկած՝
Լար ու մղկտար՝ աչքերը լցրած:
«Անուշ իմ դու հա՛յր, անգին բարերա՛ր,
Իմ կենաց տվո՛ղ, իմ հոգուս դու ճա՛ր.
Մկամ տո՞ւնն կարա իմ ոտը փակել,
Մկամ չե՞մ կարա իմ աչքը կապել:
Մի՞թե էս արինն ինձ դո՞ւ չե՛ս տվել,
Մի՞թե էս ջանը ինձ դո՞ւ չե՛ս բաշխել.
Կարե՞ն դինջանալ, ինձ հանդարտ թողալ:
Բանտումն էլ ըլիմ՝ ոտս բխովումն,
Մահն իմ առաջիս, սուրն իմ դոշումս,
էլ քեզ կուզեմ, որ ես իմ հոգիս տամ,
Քո ոտից տակին մեռնիմ, հող դառնամ,
Որ ես քո կողքումն, ա՜խ, չըլիմ կանգնած,
Իմ կյանքը քեզ չտամ, հոգիս քեզ առաջ,
Հետո քո ոտը երեսս կոխի,
Հետո բերանդ իմ հոգիս օրհնի:
Ա՜խ, հա՛յր իմ, հա՛յր իմ. քո ըմբրիդ մեռնիմ,
Առանց քեզ մեկ օր թո՛ղ ես լիս չտեսնիմ.
Մեռնիմ՝ ինձ թաղի՛ր. ապրիմ՝ ինձ պահի՛ր,
Ինձ տա՛ր քո հետը, ինձ մի՛ սպանիր:
Տե՛ս, էս սուրը, որ ձեռիս բռնած եմ,
Առանց թշնամու իմ սիրտս կխրեմ.

Մինչև քո աչքի, քո տան առաջին
Հարիր թշնամի քեզ մատաղ չըլին.
Մինչև էս ձեռը քեզ գյուլլա քցողին՝
Հավի պես չմորթի քո ոտից տակին.
Մինչև էս թուրը հարիր թրավորի
Շլինքն առաջին կամ ձիու փորի
Տակին չջարդի, էլ ո՞ւր ես ծնա.
Իմ կերած հացը քրովս չի՞ դուս գա:
Չէ՛, հա՛յր իմ, հա՛յր իմ, քեզ մատա՛ղ ըլիմ,
Ինձ էլ տա՛ր հետդ, որ ես էլ կովիմ:
Աշխարք իմանա, թե քաջ Վարդանի
Ցեղն ու բոլոր ազգն՝ անմահ, անվանի,
Հայրենյաց սիրուն, հավատի խաթեր
Պատրաստ են զոհ տալ իրանց կյանքն, օրեր»:

— Սելավն վրա պրծավ, գլուխդ պահի՛ր, Վա՛րդ ջան. տունը քանդ էլավ, մնաս բարով, ղո՛ւրբան։

«Ինձ ո՛չ սելավի, ո՛չ թրի, թվանքի,
Ո՛չ ամպի կայծակ, ո՛չ ֆրթնա ծովի
Չե՛ն կարող հաղթել, քեզանից խլել:
Տե՛ս, սփթա էկողն ի՛մ փորսս պտի ըլիլ·
Թե սելի տակիցն չե՛ս ուզում՝ կովիմ,
Դուս կգամ դաշտը, մենակ կկանգնիմ,
Կընկնիմ նրանց մեջը կեծակի նման,
Դաղըրմիշ կանեմ, ինձ կտամ դուրբան:
Ցա՛ արագահաս զինավոր Սարգիս,
Քեզ եմ կանչել, դու դվար տո՛ւր ձեռիս»,
Ասեց պատանին՝ Վարդիկն Հայկազուն,
Ոտը վեր քաշեց թվանքի ու իսկույն
Ական թոթափել՝ թշնամու գլուխն
Ձիու ճտովն ընկավ, լիսը բացվեցավ:

Կամեցավ երկինքն՝ ամպերն հավաքի,
Որ էս դառն վիճակն բնավ չտեսնի,
Բայց արեգակի լիսն, քամու թևն
Առան, տարան նրանց սարերի ետևն,

Որ տեսնին Հայոց քաջության հանդեսն,
Թշնամու հաղթվիլն ու նրանց սև երեսն:
Ինչպես կատաղի գազան՝ Հասան խանն
Թափի տակիցը դուս պրծավ, հասավ.
Շորագյալի դոշն մտնեց, սևացավ.
Խլղարաքիլիսեն մխումը կորավ.

Հենց բռնես, երկինքն հանկարծ փուլ էկավ,
Ամպ ու կայծակով քանդեց սար ու ձոր.
Էսպես էր նրանց խեղճ հալը էսօր:

Տավարն մեկ կողմից քշեցին, տարան,
Գեղը մեկ կողմից կրակ տվին, առան:
Ինչպես մեկ կարիլ գարնան անձրևի՝

Սաստիկ մրրկի, քամու ձեռ ընկնի,
Կամ մեկ անմեղ գառը հարիր գազանի
Ռաստ գա ու մնա կանգնած նրանց միջի,
Էնպես մնացին չորս կողմը պատած.
Վերևն՝ երկինքը, ներքևն՝ հողը սառած:

Բայց քաջ Հայկազունք սիրտ-սրտի տվին,
Վարդանն մեջ արած՝ իրար կանչեցին.
«Մեռնի՛նք թո՛ղ էսօր մենք էլ միասին,

Որ սուրբ Վարդանի հասնինք, ա՜խ, փառքին:
Ընկե՛րք, մի՛ վախիք, դուք ղոչաղ կացե՛ք,
Քամակ-քամակի տվե՛ք, միացե՛ք,

Թո՛ղ մեկ հող, մեկ սուր փրթի, մեզ թաղի,
Մինչև ետին մարդն, մեկն էլա չփախչի»:

Արեգակը կրակ դառած՝ Ալագյազի կողմիցը բարձրացավ. աչքերը սրել, երկրի մեջն էր ուզում մտնի, քարերը ճոթռի, որ պարզ տեսնի մեր ազգի քաջահաղթությունն ու տղամարդությունը։ Ամպերի գլխին բոց էր վեր ածում, որ չհամարձակին նրա երեսը կալնին ու իրանց տեղը տաք արած մնան։ Սար ու ձոր սիրտ ու գլուխ բաց լին արել ու իրանց խոնարհությունը, իրանց ծառայությունը ցույց տալիս։ Բայց Խլղարաքիլիսեն է՛ն խավարն էր բռնել, է՛ն շամանդաղն էր պատել, որ աչքը իր առաջը բռանց էր տեսնում։ Թվանքի ձենը, թշնամու գոռոցը, ձիանոց խրխինջը, տավարի բառանչը, գետնի թոզը ու դումանը Շորագյալու դաշտը

բռնել, կապել էին։ Քրիստոսի խաչի ու Ալու փանջի հոգին ո՛չինչ օր էնպես իրար չէին դիպել, ինչպես էս սհաթը։

Հարյուր անգամ պարսից սևագունդ զորքը զու արին, երիշ քաշեցին, ամեն անգամ էլ հարյուրով կոտորվեցան, իրանք իրանց լաշերի վրովը էլի ետ փախան, շունչ առան, էլ կրկին էկան, էլ կրկին մեկ բուռը խալխի թվանքի համն առան, էլի ամոթով ետ դարձան։ Ո՛չ Նաղի խանն էր կարում իր հունարը ցույց տալ, ո՛չ Օքյուզ աղեն, ո՛չ Սվանղուլի խանը։ Ղազախ, քուրդ, սարվազ՝ ինչ տղամարդություն ունեին, թափեցին, ո՛չ նիզամով կարացին, ո՛չ երշով մեկ քանի հողագործի տուն առնել։ Որտեղ մոտանում էին, տան դռներիցը, սելի արանքներիցը թվանքները էնպես էին ճռռում, որ շատ պարսիկ իր ընկերին էր ոտնատակ տալիս։ Տա՛վար, ո՛չխար գնացին. արտերի կրակի բոցը և ծուխն երկինքն էր հասել։

Հասան խանը հուսակտուր սկսեց Սահակ աղին ղրկել, որ նրանց սիրով հորդորի, գան, նրան գլուխ վեր բերեն, ոսիցը դոնմիշ ըլին, իրան հնազանդին, նա նրանց մազին չէր դիպչիլ։ Բայց Սահակ աղեն՝ էս երեվանցվոց փրկիչը, որ օրը հարիր մարդի գլուխ պրծացնում, գազանի ձեռիցը իր ազգին խլում, պահում էր, օրը հարիր աղքատ հայի դարդին հասնում ու թուրքիցն ազատում էր, ի՞նչ սրտով պետք էր նրանց խրատ տա, որ աստված թողան, սատանին հնազանդին։ Բայց հրամանը ծանր էր. որ չանեի, հազար հայի սարվազ ու ձիավոր, որ ղոնշունումն էին, մեկ րոպեումը սուրը կքաշեին։ Աղլուխը աչքին դրած՝ մոտացավ էս պաշտելի իշխանը։ Նա չէր սրտասվում, թե գան, հնազանդին, նա լաց էր ըլում, թե իրանց գլխի ճարը տեսնին ու գազանի ձեռը չընկնին։ Հենց հայի ղոնշունը մոտացավ, Սահակ աղեն՝ նրանց գլխին, հենց բերանը բաց արեց, որ խոսի, ո՛չ թե նրանց դարձնի, այլ խրատ տա ու մխիթարի, հարիր թվանքի բերանը ցցվեց.

— Գնա՛, աչամի հայ, էդ երեսիդ միռոնին ենք խաթր անում, թե չէ վաղուց ձեր արինը մեր հողը կներկեր, վաղուց ձեր հոգին մեզ ղուրբան կըլեր։ Լուսավորչուն գնացե՛ք, խունկ ու մոմ վառեցե՛ք, որ ձեզ սաղ-սաղ ետ ենք դարձնում։ Մենք աչամի հացը չե՛նք կերել, աչամի ձեռի տակին չե՛նք մեծացել, որ նոքար դառնանք։ Դուք մեր թրի հունարը լավ գիտեք, դուք ղրաղ կացե՛ք, ձեր ի՞նչ գործն ա. թո՛ղ մեր թշնամին մեր առաջը գա, սիրտ ունի, մոտանա, սովորել ա գողի պես գեղեր քանդի, տավար հետ ածի. թե կտրիճ ա, թո՛ղ իր հունարը ցույց տա։ Մենք հազար մարդ չենք ըլիլ, ձեր ղոնշունը քսան հազարից էլ ավելի ա. քանի շունչ ունինք, մեր հողն ու օղլուշաղը ձեզ չե՛նք տալ, ե՛տ դառ։

Ինչպես մեկ կատաղած ղափլան (վագր), էս բանը որ լսեց Հասան
խանն, հրամայեց զորացը, որ թրի, թվանքի մտիկ չանեն. յա՛ էն օրը
մեռնին, յա՛ իրանց ամոթը ծածկեն, յա՛ խըզարաքիլիսեն տակնուվեր
անեն, յա՛ իրանք սակովն ըին։ Ինքը թուրը հանած՝ ուզում էր, որ նրանց
առաջին գնա ու առաջին թուրը ինքը խփի, սելի սանգարը ինքը կոտրի.
ավալի եսրի գլուխն ինքը թռցնի, Օքյուզ աղեն մեկ կողմից, Նաղի խանը
մյուսից՝ հազար մուննաթով նրան կակղացրին, որ իր անօրեն կենացը
խնայի, իր գլխի պատիվը չի՛ կորցնի, ինքը չադրումը նստի, սարեցը նա-
յի, տեսնի, թե ի՞նչ հրաշք կգործեն նրա ծառեքը. երբ իրանք կմեռնին,
էն ժամանակը թո՛ղ գա, որ նրանց արնի ջառմեն հանի։ Խնդրները կա-
տարվեցավ. Երկաթի երեսը մի քիչ դինչացրեց, քոսա միրուքը սղալեց
ու քամբառ քոսի աչքերը դես ու դեն քցելով, անատամ չանեքը իրար
խփելով՝ նոթերը կիտեց, ղայլանը քաշեց, որ քիթ ու պռունկը դեռ ծխով
լիքը՝ իր գժոխքի բերանը բաց արեց, որ ինչ հայի ձիավոր ու սարվազ
կան, առաջ քցեն, իրանք ետեւցը գնան, որ սրանք կոտորվին, նրանց բա-
րութը հատնի, որն էլ իրանք ետեւցը սպանեն, թե իրան հավատակցին
դիմիշ անի ու երըմիշ չըլի. կամ թե խըղարաքիլիսեցիք իրանց դավանա-
կիցը տեսնելով՝ թուլանան, թվանք չի քցեն, որ ետո իրանք հանկարծ
վրա թափին, սելերը դաղըթմիշ անեն ու նրանց ապավինողներին կամ
սրով ջարդեն, կամ սաղ-սաղ կրակը դնեն, էրեն։
Հասան խանը մեկ քանի ձիավորով նի էլավ սարը, դուրբինը առավ
ձեռքը, մեկ քարի վրա պըպզեց ու ձեռով արեց։ Օքյուզ աղեն իր քրդե-
րովը, Նաղի խանը իր ղազախներովը՝ աջ ու ձախ բռնած, Սվանղուլի խա-
նը իր սարվազներովը, Ջաֆար խանը՝ սարդարի մեծացրած փեշղամաթը
(փոքրավորը), իր ղոնշուներովը, հայերին, ինչպես մեկ սուրու ոչխար, մեջ
արած՝ ծեծելով, ջարդելով սկսեցին առաջ խաղալ։ Քաջածաղիկ պատա-
նին Վարդան, որ հինգ սհաթումը քառասնից ավելի մարդ կամ սպանել
էր, կամ յարալու արել, որ արծվի պես էս կտրից էն կտուրն էր ընկնում
ու որին բարութ, որին սիրտ տալիս, մխիթարում, լեղապատառ վազեց,
հոր անկաջը մտավ ու լացակրկնած, մազերը պոկելով՝ հորը ցույց տվեց,
ճտովն ընկավ, երեսը համբուրեց, ոտները պաչեց, որ չունքի մեկ օր
պետք է մեռնեին, թո՛ղ էսօր մեռնեին, սեւ ու տուն կրակ տային, օղլու-
շաղներն էրեին ու իրանք ընկնեին թշնամու մեջը, որ որտեղ թուրը կո-
տըրվեր, բարութը հատներ, իրանք էլ էնտեղ նահատակվեին, որ իրանց
ազգի վրա ո՛չ թուր քաշեն, ո՛չ թվանք քցեն։
— Ամեն մարդ իր գլխի տերն ա,— գոռաց էս անսիրտ հալևորը
էնպես, որ աչքերիցը կրակ էր վեր թափում,— ընչի՞ են էսքան խղճացել,

որ իրանց թուրը իրանց սիրտն են կոխում։ Մարդ որ իր տանը, իր աշ-
խարքին մուղայիթ չի՛ կենա, իր հողի ղադրը չգիտենա, մեռնի մեկ օր
առաջ լա՛վ ա, քանց սաղ մնա. հողն էլա հո կդինջանա՞։ Նրանք էն
վախտը կըլին մեր ազգը՝ հայ քրիստոնյա, որ թե էս սհաթին դոնմիշ
կըլին ու համ իրանց կազատեն, համ մեզ քոմակ կանեն։ Գլխիցս ձեռք
վերցրո՛ւ, դու դեռ ջահել ես. հալա մեծացի՛ր, ետո ինձ խրատ տո՛ւր։
Աշխարքը դեռ փակ ա քո աչքին։
— Հա՛յր, հա՛յր, նրանք ի՞նչ մեղավոր են, գլխիդ մեռնիմ, էդ սիր-
տը մի՛ ունենար, մեր ազգին խեղճ արի. թո՛ղ մենք մեռնինք, նրանք ապ-
րին։ Մեր օղլուշաղը մեր մոտին ա, նրանցի աչքը՝ ճամփի, մի՛ անիլ։
— Ձեռք վերցրո՛ւ, ասում եմ, հրես էկան։ Տղե՛րք, էլ մե՛ք մտիկ
անիլ։
— Աղա՛, ձեր ազգն ենք, աղա՛, քո արեւի սադաղին, ամեն մեկս տա-
սը, քսան գլուխ քյուլֆաթ տանը վեր ածած՝ թողել, էկել ենք. թրով են
բերել, մենք չէինք գալիս։ Աղա՛, գլխիդ ղուրբան, տեսնո՞ւմ ես, որ մեզ
զոռով կրակն են ածում. յա՛ բաց արե՛ք ձեր սանգարը, որ մենք էլ ձեր
մեջը գանք, ձեզ հետ թուր տանք, մեր օղլուշաղի տերն էլ աստված, յա՛
թող հայի թրով մենք չմեռնինք։ Մեզ մորթի՛ր, գլխիդ մեռնիմ. չէ՞, մենք
էլ քո ազգն ենք, մեկ ավազանում ծնված, մեկ խաչի պաշտող։ Մեզ ջուրն
ածի՛ր, խեղդի՛ր, մեզ մի՛ սպանիր, մեր դառն օրը մեզ հերիք ա։ Մեր
փրկիչն էսօր դու դա՛ռ։ Թուր էլ ունինք, թվանք էլ, ամա հազար թուր՝
մեր գլխին սրած, հազար գազան՝ չորս կողմներս բռնած։ Ի՞նչ անենք,
ո՞ր ջուրն ընկնինք։
Ամպերն սկսեցին սարերիցը գոռալով բարձրանալ. երկինքը երեսը
ետ դարձացրեց. արեգակը աչքը խփեց։ Արին էին ուզում հայոց հսկայ-
քը պրծացնիլ, իրանց ազգի արինը պետք է թափեին. հազար մարդ էին
ուզում պահպանիլ, հինգ հազար չիվլան տղերք սրախողով անիլ, տասը
հազար մանր երեխա՝ մեծ, պստիկ, անհեր, անախպեր թողալ։ Մեկ գեղ
էին ուզում շինիլ, մեկ սաղ աշխարհ քանդիլ։ Իրանք բոլոր մեռնեին, ետի
եկողները կասեին, թե թշնամին նրանց կոտորեց. բայց թե իրանք իրանց
ազգի վրա սուր քաշեին, հազար բերան ազգե-ազգս պետք է նրանց անի-
ծեր, թե հայը հայի տունը քանդեց, հայը հային կոտորեց։ Տղամարդու-
թյուն էին ջանք անում ճարեն, ամոթք, նախատինք պետք է նրանց հա-
վիտյանս հավիտենից մնար։ Շատ էլ ուզեց, որ աղա Սարգիսը աչքին,
սրտին հույս տա, բայց արինը ետ դառավ, արտասունքն էկավ, լցվեց,
կրակը հանգավ, դող ու սրսուռ ընկավ ջանը։ Առաջին էր նայում՝ իր ազգն

էր լալիս, ետևն էր նայում՝ գեղը վա՜յ տալիս, երեխեն գոռում, օղլուշաղը մեռնում.

— Էկա՛ն, էկա՛ն, վա՜յ մեր օրին։

Բայց ո՛չ երեխեքանց սուգը, ո՛չ կնանոնց լացը, ո՛չ մահն ու կյանքը էլ նրանց աչքը չէկան։ Երկնային հրեշտակն՝ անմահության պսակը ձեռին, էկավ, նրանց վրա կանգնեց, նրանց ձեն տվեց.

— Հազար ու բիլոն ձեր ազգիցը էս օրը քաշեցին. թե ազգ եք ուզում պահիլ, ահա՛, ձեր առաջին. մեռե՛ք նրանց ուղուրին, որ քանի աշխարհս կա, ձեր անունն հիշվի, թե դուք ձեր ազգի արինը լավ համարեցիք, քանց ձեր իսկ կյանքը. քանց ձեր որդիքը։ Էլ ի՞նչ եք կանգնել, կրակ տվե՛ք, տուն, օղլուշաղ էրեցե՛ք ու վրա թափեցե՛ք։

— Կրակ տվե՛ք, տուն, օղլուշաղ էրեցե՛ք, վրա թափեցե՛ք. տղե՛րք, երեխե՛ք, մնա՛ք բարով. ամպեր, թափեցե՛ք. երկինք, գոռացե՛ք. հողե՛ր, դաշտե՛ր, ձորե՛ր, սարե՛ր՝ սուգ արե՛ք, վկա կացե՛ք։ Ով անց կենա էստեղ, ասեցե՛ք, թե մենք մեր ազգի համար մեզ մատաղ արինք, մեզ գերի տվինք, սուրը քաշվեցինք։ Սելավ ըլեր, մեզ տանիլ չէ՛ր. դժոխք ըլեր, մեզ մոտանալ կարող չէ՛ր. երկիրը բացվեր, մեզ կուլ տալ կարող չէ՛ր. սաղ Պարսկաստան պոկ գար, մեր մեկ մազը թեքիլ չէ՛ր. Հասան խան, քո ամեն մեկ թիքեդ հազար սատանի ձեռ ընկնի. քո չիդեն սրտումդ ցցվի՛։ Որդիք, բալա, օղուլ, չոջուղ, ղովում, ղարդաշ՝ էլ սուգ մե՛ք անիլ։ Մեր տները թո՛ղ մեզ գերեզման ըլին, մեր արինը՝ մեզ մեռլաջուր, մեր հողը՝ մեզ պատան, մեր ձենը՝ մեզ ժամ, պատարագ։ Սուրբդ Վարդան քաջ նահատակ, դո՛ւ տուր մեզ պսակն։

Խոտի դեզերի կրակն ու բոցը,
Խեղճ օղլուշաղի հարայ հրոցը,
Դարմանի ծուխը, կալերի մուխը
Ամպի պես ելին, օրը խավարացրին։
Գեղի չորս կողմը առավ ալավը,
Տների մեջը ծով դարձավ լացը.
Էլ ո՛չ հեր կարաց որդուն համբուրի,
Էլ ո՛չ մեր կարաց տղին մեկ տեսնի։
Հարսի սրտումը իր սերը մեռավ,
Փեսի բերնումը լեզուն չորացավ.
Քիրն ուզեց ախպորն ջան էլա ասի,
Ախպերն՝ քվորը իր խտիտն առնի։
Մեր ու խեղճ հարսներ՝ իրանց երեխեքն,

Տղերք, ծերունիք իրանց սուրն ու զենքն
Դոշին կպցրին, երկինքն նայեցին,
Աչքները խփեցին ու ա՛խ քաշեցին։
Մեկը դուռը փակեց, որ կրակումն էրվի,
Մեկն աչքը խփեց, որ ցավ չտեսնի։
Տղերքը գեղիցը դուս բռան դաշտը.
Տանըցիք փախան, որ ընկնին կրակը.
Էլ լաց չէ՛ր գալիս նրանց կարոտ աչքը,
Նրանց բուրջ, բաղան մնաց երկինքը։
«Տունը քանդեցին տանըցոնց գլխին,
Սելը քանդեցին, վրա թափեցին».
Ձայն տվեց Վարդանն՝ հզոր պատանին,
Աշոտն քաջասիրտ, Մուշեղ Արծրունին,
Մեկն Նաղի խանի, մեկն Օֆյուզ աղի,
Մեկն Ջաֆար խանի քամակը բռնեցին.
Երկուսն հրեշտակի պես բռան, գնացին։
Բայց սուրն Վարդանի՝ Օֆյուզ աժդհին,
Որ սաղ առյուծին թե խփեր գլխին,
Իսկույն կատկեր, կհապաղեր գետնին,
Միջից երկու կես արեց էն սհաթին.
Կեսն ձիու էս կողմը քաշ էլավ,
Կեսն մյուս կողմին դիպավ ու կպավ։
Իսկույն սարիցը ամպը տրաքեց,
Երկինքը բաց էլավ, թե հողը պատռվեց՝
Քսան ձիավորով հսկայն Աղասի
Ղարսի սարերիցն թռած, իր դշի
Ձիու ականջումն մտած՝ վեր էկավ
Քրդի չորերով, սարին վրա պրծավ։
Գազան Հասան խան նրանց քուրդ կարծելով՝
Հենց որ մոտացան, ընկավ քարերով։
Փեշղամարքյարի, խանի, բեկերի
Գլխըներն, ինչպես մեկ անշան ծտի,
Թռան առաջները, ձիանոնց տակերը։
Հարամու գլխին ջուր, կրակ մաղվեց.
Ձին էլ տիրոջ վրա ոտը բարձրացրեց.
Գյումբրու դզիցը ոսի բալաքան,
Քաջ սալդաթների դ ստեն, կապիտանն

Արծվի պես ճասան, բշնամուն մեջ առան:
Թուրը մեկ կողմիցն, թուրը մյուսիցն,
Մինը առաջիցն, մինը ետևիցն
Հնձեցին բշվառ բշնամու զորքը,
Ջարդեցին, բերին էլ թափի կողքը:
Արինը ծովի պես գնում էր, կանգնում,
Հայերն լաշերի վրով անց կենում.
Նոր ճոզի առած՝ իրանց տունն ընկան,
Հեր ու մեր, որդի դոշ-դոշի կպան.
Հարսն ու փեսայի ջուր դառած աչքը,
Երկինքն վերացած ճոզին ու կյանքը
Էլ աշխարհ էկան, էլ իրար քթան,
Իրար գրկեցին, իրար մոռացան,
Իրար ձեռք տվին, բայց դեռ չիմացան՝
Երկնքո՞ւմն են, թե՞ աշխարհիս վրա,
Երազո՞ւմ, ճա՞ծ, թե՞ աչքներր բաց:
Հազար անգամ էն սուրր ճողին, գետնին
Ընկան, ճամբուրեցին ու ծունր դրեցին,
Աղոթք, պաղատանք աստծուն մատուցին:
Սար ու ձոր նրանց վրա խնդային.
Դեզերի բոցը դառավ շրաղդան.
Որդի ու ծնող իրար ճռով ընկան.
Ինչ որ ունեին՝ առան ու էկան,
Որ թափի տակին, սալդաթի մոտին
Հավաքվին, որ էլ վնաս չտեսնին,
Մինչև բշնամիքն գնան ու կորչին:
Բայց էս ճաղաղին ճաչն Աղասին՝
Հազար աչք ուզեց, որ տեսնի նրան,
Գյում էլավ իսպառ, կորավ նա անձայն:

<10>

Արեգակը դեռ երկնքի մեջտեղը չհասած՝ ուզում էր, որ կրակ վեր ածի, սար ու ձոր խորովի։ Հյուսիսային կողմիցը մեկ մթնած, սևակոլոլ ամպ, երկնքի երեսը ջարդելով, վազում էր, որ նրա առաջը բռնի։ Ալագյազի գլխիցը մեկ դառնաշունչ բորյաց վեր կացավ ու քար ու հող իրար

գլխի տալով՝ էկավ, Խլղարաքիլիսի վրա դաճիճի պես բռնեց։ Արինակեր Հասան խանը, որ էսօր ավելի իր ձիուն, քանց իր քաջության հունարովը գլուխը պրծացրեց, կատաղած գազանի պես հոգին բերանն առած որ եա չի՛ մտիկ արեց, աստված ո՛չ շհանց տա. զորքը ամեն մեկը սար ու ձոր ընկած, շատի ձիանն՝ որը լկամը կտրած, որի թամքը փորի տակին, որն էլ իր տերը էնքան էր գլխի վրա քաշ տվել, քարեքար տվել, որ գլուխ, երես ջարդվել, կտրատվել, ոտներն էին օրզանգվումը մնացել ոլորված, կախ ընկած, կամ կես մարմինը ջախըբուրդ էլել, սիրտն ու թոքը արինքամ էլել, փորիցը դուս թափել, ու խրտնած ձին, քանի ոտներին էր դիպչում, է՛նքան խրխնջում, սար ու ձոր ընկնում։

Ղուլ ու նոքար Աղասու թրին էին ղուրբան էլել, որ էս միջոցումը Ղարսա սարերի վրա մեկ քանի ղոշաղ քրդստանցի հայ ետևն էր քցել ու արծվի պես, որտեղ մեկ ֆորս ճանկում էր, ական թոթափել վրա էր հասնում, ցրվում, փարա-փարա անում։ Հարիր տեղ նրան ղզլբաշի ղոնշունը՝ Մաստարա, Ղոշավանքը դղերումն, ռաստ էին բերել, հինգ հարիր մարդով վրա տվել ու քառասունով, հիսունով ջարդվել, էլ ետ դառել։ Սուղագյան մեկ օր Նաղի խանին՝ էս աճագին գազանին, որ հարյուր մարդի չէ՛ր ասիլ, թե աստված ա ստեղծել, է՛ն տեղը քցեց, որ իր մարդկերանցովը մեկ բարձր թափից վեր ընկավ ու ղզլբաշի հողը մտավ, որ պըծավ, թե չէ՛ Աղասու ձեռին պետք է իր բոլոր սպանած անմեղ հայերի արնի ջւարըմեն տար։ Բայց Աղասու արածները թողանք ուրիշ ժամանակի ու գնանք մեր բանը։

Հասան խանը որ աչքը չի՛ բարձրացրեց ու Աղասուն՝ ձիու անկաչը մտած, ետևիցը քշելիս տեսավ, ոտն ու ձեռքը թուլացան. ուզում էր ձին բաց թողի ու քարափնվեր, Արփաչայի ձորն ընկնի, ուզում էր, որ ինքը իր թուրը իր սիրտը խրի, որ չասեն, թե Հասան խանին սպանեցին. քաջ ու ղոչաղ մարդ էր, քանց մեկ ոճաթ հայի, որ հազարներով հենց րին իր գլուխը մատաղ տա, քանց մեկ ոճաթ հայի, որ հազարներով հենց էն տեղարենքն էր սուրը քաշել, տանով, տեղով էրել, գերի արել. բայց էլի էն տեղարենքն էր սուրը քաշել, տանով, տեղով էրել, գերի արել. բայց էլի ռաշդի սիրտը ո՛չինչ տեղ էնքան ղայիմ չի՛ ըլիլ, որքան ետին ոճաթումը, կյանք ու մահ կռվելիս։ Մեկ չարեք վերստաչափ տեղ էր մնացել, որ շունը քամուն տա, հենց էն.ա, թուր, ասպար ուզում էր, որ ետ անի, ձին բաց թողա, մեկ քարի տակ չոքի ու բալքի իր թշնամուն գյուլլով էլա վախտն անց էր կացել։ Հսկայն Աղասի թուրը սրտին խացնի կամ սպանի, վախտն անց էր կացել։ Հսկայն Աղասի թուրը սրտին դեմ արեց.

— Վե՛ր քցի թուր ու թվանք ձեռիցդ, որ էս ոճաթիս փառչալամիշ կանեմ։ Դու էստեղ չի՛ պետք է սատկիս, հայակեր շո՛ւն, իմ թուրն ափսո՛ս ա, որ քեզ պես թշվառ ճիճուն սպանի. չէ՛, ամոթ ա իմ տղամար-

դությանը, որ քեզ քարի տակի կամ չոլումն սատկացնեմ, որ դշերը ջամդաքդ ուտեն, քարերն ու հողը քո մուռտառ արինդ ծծեն, ու լորդը էնպես կարծի, թե կռվումը մեռար. է՛դ անիրավ լաշդ չի՛ գտնի, մեռած հողիդ վրա էլ չի՛ թքի, ու ամեն անց կենող մեկ քար չի՛ վրեդ քցի ու գյոռիդ ուշունց տա, թե քո անաստված ոսկերքն են էնտեղ հող դառել: Հլա քանի Երևան չե՛ն առել, քեզ հետս շան պես քաշ կտամ, սարեսար կքցեմ: Ճանճը սպանիլ ի՞նչ տղամարդություն ա: Հլա շատ օր պետք է հայի հաց, խոզի միս ուտես, հայի մեծահոգությունը ու մարդասիրությունը տեսնիս, որ նեղ օրվան ղադրը իմանաս, իմանա՛ս, թե տնաքանդությունը, մարդասպանությունը ի՞նչ զատ ա, իմանա՛ս թե Քրիստոսի օրենքն ո՞րքան սուրբ ա, ու կամ մեր խաչին ղուլ դառնաս, մեր հավատը պաշտես, որ հոգուդ փրկություն ըլի, յա թե չէ, որ էդ արինաթաթախ ձեռներովդ, էդ սատանի փայ հոգվովդ ուզենաս ձեր ջհանդամը գնալ, քեզ էն հայերին տամ, որի որդիքը կոտորել, տները քանդել, աչքերը քոռացրել <ես>, որ միսդ՝ ղիմա-ղիմա, արինդ շանը տան ու գլուխդ գեղեգեղ, աշխարքե-աշխարհ ման ածեն, առաջիդ մատաղ մորթեն աստծու համար, չունքի մատաղի ու մարդի արնի էդքան ծարավ էր քո հարամ սիրտը, որ բալքի թե իմ խեղճ ազգի սիրտը հովանա: Հազար-հազար գլուխ ես կըտրել, Ղարս ու Բայազիդ քանդել, ավերել, ափսոս չի՞ էդ ղոշ գլուխդ քարի տակի մնա: Չէ՛, չէ՛, Հասան շուն, հայի սիրտը մեծ ա. քեզ վրա պետք է գյոռ շինած, քար կաղնացրած, անունդ ու պատմությունդ վրեն գրած, որ մեր որդիքն էլ քո տղամարդությունն իմանան ու ձեզ պես շան ձեռին գերի չընկնին, ձե՛զ գերի անեն, ձե՛զ կոտորեն, ձե՛ր հոգին հանեն: Էս էն քարերն են, որ ոտնատակ էիր տալիս ու հազար գերի վրներովը տանում կամ սպանում, որ հմիկ ոտդ բռնել են, քեզ ուզում են կուլ տան, քեզանից վրեժ պահանջեն. բայց ես չե՛մ տալ, ես քո արինը էգպես էժան չե՛մ ծախիլ, էդ թանկ ջանդ ի՞նչպես շուտով վարթարաֆ կանեմ. հլա ինձ շատ պետք է տեսնիս, որ արածներդ միտքդ բերես. դու ամաչես, որ հայի ղուլ ես դառել. ես ուրախանամ, որ քեզ լավություն կարողացա անիլ ու մեկ քանի ժամանակ էլ կյանքդ երկարացրի: Երեսիդ խաչ հանի՛ր, երեսդ մեր աղոթարանը դարձրո՛ւ. դու մեր անտեր հայերին շատ ես քո քյաբի կողմը դարձրել ու շլինքը կտրել. էսօր էլ դու մեր աղոթարանը ճանաչի՛ր. մերիցը արեգակն ա դուս գալիս, մեր դաշտերը ծաղկացնում, ձերիցը տաք քամի գալիս, հանդերը էրում, չորացնում: Ջոքի՛ր, Հա՛սան խան. տերտեր չե՛մ, ամա գետը մոտիկ ա, ջուրը կքաշեմ, Հասան անունդ կդնենք Օհան: Մեր պասը դեռ չե՛ս պահել, չունքի միս ուտելու սովոր ես՝ Օ՛, մեր սրբությունը, որ էնքան ոտի տակ ես տվել, թե որ աստված տա,

համն առնիս, էն ժամանակը է՛դ սև երեսդ կսպիտակի, է՛դ գիլի աչքերդ
գառնի կդառնա, է՛դ հոտած բերանդ կդառնա աստուծո տաճար: Մինչև
մեր Քրիստոսին չպաշտես, մեր սրբերի առաջին հազար անգամ չչոքես,
մեր մեռոնը երեսիդ չքսվի, մեր տերտերի ձեռը չպաչես, Աստված Երկընմեր
մեռոնը երեսիդ չքսվի, մեր տերտերի ձեռը չպաչես, Աստված Երկըն-
քիցը ձեն տա, քեզ չէ՛ թե բաց թողամ, փառչա-փառչա կանեմ, էդ փիս
հոգիդ սատանեքանցը կտամ: Շո՛ւտ, չոքի՛ր, չոքի՛ր, թե չէ, տեսնո՞ւմ ես
թուրը, գլուխդ սոխի պես կթոցնե՛մ, չոքի՛ր...
Քար ըլեր՝ կպատռվեր էս խոսքերիցը, ի՞նչ թե Հասան խանը՝ աշ-
խարքի տերը, երկրի քանդողը: Ամեն բանը տարավ համբերությամբ, ձեն
չի՛ հանեց: Քուրդ ասեր, օսմանցի ասեր նրան էս խոսքերը, ե՞րբ էնքան
կցավեր. հայից էպես թուք և մուր ստանա, որ մինչև էն օրը խո՛տ,
մ՛ղր էր համարո՞ւմ: Հայը նրա հավատը ոտի տակ տա՞: Արինը կոխեց
աչքերը, մեռած հոգին, հենց գիտես, նոր շունչ առավ. ատամները ղըր-
ճըտացրեց, աչքերը կայծակին տալով՝ տեղիցը վեր թռավ ու կատաղա-
ծի պես ղամեն հանեց, վրա պրծավ.
— Հայի շուն, ղո՞ւ մնացիր Հասան խանի վրա ոտք բարձրացնես,
ղո՞ւ մնացիր ձեր հոտած հավատի լափն իմ գլխին ածես. գյոռդ պատըռ-
վի, Հասան խան, հողը գլխիդ, էս ի՞նչ ես լսում: Գլխիդ փափախը քա-
մին տանի, քառանայիր, ո՛չ լսեիր, էս ի՞նչ իմացար: Հազար-հազար
մարդի փոր վեր ածես, մեկ հայի կտորի առաջին էսպես կո՞ւչ գա՞ս. էլ
ո՞ւր եմ ուզում աշխարհներ առնեմ, որ էս խոսքը պետք է լսեի: Ընչի՞
չի՛ պետք է ես հայ-օլանի քոքը կտրեի, որ ձեր անհավատ հոգին երկրի
վրա էլ չըլեր,— ասաց ու կատաղությամբ ղամեն էնպես Աղասու վրա
շպրտեց, որ թե ձին չէ՛ր խրտնել, ու Աղասին գլուխը կռացրել, ղամեն
սրտի մեջտեղը պետք է ցցվեր:
Աղասին քարիցը կկարծեր, նրանից չէ՛ր կարծիլ էս բանը:
Աղասին քարիցը կկարծեր, նրանից չէ՛ր կարծիլ էս բանը: դեռ ատամների տակը
— Խա՛ն, կատաղած գիլի կերած մսի համը դեռ ատամների տակը
կըլի, արինակե՛ր գազան. էդպես հո չե՞ն խփիլ կամ գողի պես վրա պըրծ-
նի՞լ: Ձեռս ափտո՛ղ ա, որ քեզ դիպչի. գազանին գազանով պետք է
պատժած: Խա՛ն, հլա ձիուս հունարը տե՛ս, հետո կիմանաս, թե ի՛նչ
թուր ա վրեդ խաղում,— ասաց հսկայն ու ձիուն ղամշեց:
Կատաղած ձին՝ բերանը փրփուրը լիքը, առաջին ոտները որ չի՛
բարձրացրեց ու թռավ, Հասան խանի լեղին ջուր կտրեց, բայց բախտը
բանեց. ձին որ թռավ, նա մնաց մեջտեղը անվնաս: Մինչև Աղասին ձիու
ջիլավը կքաշեր ու ետ կդառնար, Հասան խանը հազի առավ, փշտովը հա-
նեց, ձիու ճակատը ետ գարձնիլը ու փշտովի տրաքիլը մեկ էլավ: Հայվա-
նը փռնչաց, երկու քթիցը արինը պրծավ, առաջի ոտների վրա էնպես

չոքեց ու գետնին դիպավ, որ Աղասու ոտի մատները օրղանգվին կպավ, աչքը կեծակին տվեց, սևացավ, արինը սրտումը թան դառավ։ Մինչև Աղասին ոտը օրղանգվիցը կհաներ, մինչև ձեռը թրին կհասներ ու ձիու տակիցը կբարձրանար, ասլան Հասան խանը վրա հասավ. երկու լորանոց թուրը շողաց. քար ու ձոր սկսեցին, էն ա, էլ իրանց գլուխը լալ, ասլան Աղասին գլուխը որ սաստիկ թափ չի՛ տվեց, էլ ետ փոքր արինը տաքացավ, մեկ ոտը օրղանգվումը, ձախու ձեռը թրին ղուրբան տալով, թշնամու դեմը բռնելով, աջու ձեռը որ Հասան խանի գլխովը չի՛ պտտեց, քաքուլի կամ միրքի մազի տեղ չանեն ընկավ ձեռքը. մատները բերնումը, բիթը բուչաղի տակին՝ չանին որ հուպ չտվեց, էն թաք-թաք հին ատամներն էլ, որ էստեղ-էնտեղ երևում էին, ճռռացին, իրար կպան ու փշուր-փշուր էլան. գլուխը հավի գլխի պես սրտելով՝ էնպես սաստիկ ոլորեց, որ բոլոր տամարները ճռճռացին, ու Երևանու աստուծո գլուխը Աղասու մեկ ոտի տակին մնաց, փորը՝ մյուս, ու էնպես կաղնած վրեն, ինչպես սուրբ Գեորգ իր վիշապի գլխին, սկսեց մեր հսկայն մուշամբեն հանիլ, որ միշտ հետը ման էր ածում, դեմն ատամով ու աջու ձեռով յարեն կապիլ, դեմը էլ հավատի քարոզը կարդալ.

— Հայի ձեռի դու չե՛ս արժան, ոտը համբուրի՛ր, հայակե՛ր գազան։ Հայի արնի ծարավ էիր, դե՛, կշտացի՛ր, ա՛նհոգի,— ասաց ու մինչև կուռը կկապեր, արինն էնպես էր վեր ածում, որ խանի աչքին ու բերնին թափի։— Քեզ ասում եմ՝ մինչև հայ չի՛ դառնաս, մինչև երեսիդ խաչ չի՛ հանես, չե՛ս պրծնիլ, չե՛ս, ի՞նչ ես մտածում. ես էսօր Լուսավորիչը պետք է դառնամ։

Բայց ա՜խ, երանի թե հավատը էսքան չըլեր մեր Աղասուն մոլորացրել, ու վիշապն ընկել էր ձեռքը, տար, վարթարաֆ աներ։ Սատանեն իր պոչը մի բանում չխառնի. մինչև դու խաչը կհանես, նա իրան բանը կհոգա։ Հենց յարեն կապեց, պրծավ մեր կտրիճը ու ձեռը շարժեց, որ արինը էլ ետ իր տեղը գնա, ու ուզում էր, որ թշնամու չար ձեռները կապի ու էնպես նրան հավատ բերի, աչքը որ բարձրացրեց, աստված ո՛չ շհանց տա. իր ընկերտիքը, ամեն մեկը մեկ սարի ծերից թռած՝ էկան, վրա հասան։

— Ա՛ղասի ջան, գլխիդ ճարը տե՛ս. քեզ ման գալով հոգիքս թռավ, ախր ո՞ւր մնացիր. Հասան խանը նոր ղոնշուն ա հավաքել, գալիս ա։ Խլղարաքիլիսեն էլ ետ կոխեցին. Բոռչալվի թուրքերը կապիտանին գլխից հանեցին, թե ղզլբաշը Գյումրու բերդը կառնի, թոփ ու թոփխանա հետըներն առան, ետ դառան. ջրատար, ողորմելի խալխը մնաց չոլումը, ոչխարի պես սառած. ոտը ո՛չ առաջ կարաց փոխել, ո՛չ ետը. որը ձի ուներ,

էլ ո՛չ բարեկամի մտիկ արեց, ո՛չ ազգականի, վեր էլավ, փախավ Գյումրի. մնացածները, աստված ո՛չ շհանց տա, իրար ճտով ընկած՝ մնացին գառն ու ոչխարի պես բղղալով կանգնած։ Ի՛նչ նրանց հալն ա, աստված ո՛չ նշանց տա. սար ու ձոր սուգ են անում, լալիս։

— Ձեր տունը չքանդվի, ի՞նչ եք ասում՝ Հասան խան։ Տասը Հասան խան հո չկա՞ աշխարքումս. հրես, ոտիս տակին ընկած, հոգին տալիս ա. դուք երազ ե՞ք պատմում, թե՞ գինովացել եք։ Հասա՛ն խան, Հասա՛ն խան. տո՛, հրես գլուխը ճտի պես ձեռումս, դուք ինձ պառավի հեքաթ ե՞ք ասում։ Ամո՛թ ձեր փափախներին, տո՛, մեկ մտիկ արե՛ք, է՜։

Ո՞վ կհավատար ապա, թե էն ահագին ասլանը մեկ գառի ոտի տակի ըլի. որ աչքները չի առավ նրա զարհուրելի կերպարանքին, արինն աչքները կոխեց. բոլորն էլ թուր հանեցին, որ նրան թիքա-թիքա անեն. էլի մեր խաչապաշտ Հսկայն իր սազն ածեց.

— Ո՛վ իմ գլուխը կսիրի, թուրը էլ <ետ> տեղը դնի. էդ ո՛չինչ տղամարդություն չի՛ չոլումը մեկ ու մորթել։ Թողե՛ք, հալա սրան մեկ հավատ բերենք, ետո ի՞նչ ուզում ա ամեն մարդ, թո՛ղ էն անի։

— Տո՛, տո՛ւր, գլուխը ջնջխի՛ր, դրա հոգին աստված առնի, դրա ամեն մեկ շունչը յաղու ա. օձը քանի շուտ սպանես, էնքան քո խերդ ա։ Դա էլ օ՞ր պտի տեսնի։ Չէ՛, դրա օրը պտի խավարի, դրա գլխին քար ընկնի։ Քարը քցի՛ր գլխին, դրա արինը մեր վզին։ Տո՛, մեր ազգի տունը քանդողին էլ րոպե պետք է կյա՞նք տված, շունչը բերնումը թողա՞ծ. սպանի՛ր, ասում ենք, թե չէ քեզ էլ հետը կսպանե՛նք։

— Ինձ սպանեցե՛ք, սրան ձեռը մեք տալ։ Թո՛ղ սրա մահը մեկ քանի մարդ էլա տեսնի, որ սրտները հովանա, է՜։

Էս խոսք ու զրուցումն էին, որ բիրդանբիր ձիավորի տուտը նրանց վրա բաց էլավ։ Ընկերքը վրա թափեցին, որ անօրենի թոզը քամուն տան. անփորձ Աղասին, որ մինչև էն օրը նհախ տեղը մեկ արին չէ՛ր վեր ածել, նրանց դեն արեց, խանին քաշեց մեկ քարափի գլուխ, ինքը գլխին կանգնեց, խանի ձեռները կապած՝ ոչխարի պես առաջին վեր դրեց, ընկերներին հրամայեց, որ ձիանը ձորն անեն ու թվանքները հազրած՝ ձորի բերնումը կանգնին, ու իրեք գաղաչափ խանիցը հեռու կանգնած, դոշը քարափին դեմ տված՝ էնքան մնաց, որ ձիավորների տուտը մեկ թվանքի մանզլիլ էկավ, մոտացավ։

— Գլխըներդ ոտիս տակին ա, ա՜յ թուրքեր, ձեր ճակատը՝ գյուլլիս առաջին, քսան ինձ նման իգիթ (ղոչաղ) տղերք՝ քամակիս. ամեն մեկս մինչև ձեզանից քսանը չսպանենք, մինչև մեր բարութը չհատնի, կրակ դառնաք, մեզ չե՛ք կարալ մոտանալ։ Հինգ սհաթ ա ձեր հոգին, ձեր գլուխը

իմ ձեռիս ա էլել. էն Հասան խանը, որ սարեր էր դողացնում, ոտիս տա-
կին ընկած. սրան նայեցե՛ք, ձեր սև օրը լաց էլե՛ք։ Խա՛ն, հրամայի՛ր,
որ ԽլղարաքիլիսԵՆ ազատեն, կյանքդ էլ ազատ ա, թե չէ՛ հավի պես
կմորթեմ. իմ ձեռի հունարը դու լավ փորձեցիր։ Մարդ ղրկի՛ր, որ ղոն-
շունդ ետ դառնա, թե չէ՛ քարափիցը վեր կքցեմ, հազար թիքա կըլիս։
Ինչքան որ ըլի՝ մեկ հողում ենք մեծացել։ Խա՛ն, կռիվ ունիս, դուշմանիդ
հետ արա՛, խեղճ հայերը քեզ ի՞նչ են արել։ էն ժամանակը քեզ խան
կասեմ, թե որ էս տղամարդությունն անես։ Մեծություն ունիս, բա-
նացրո՛ւ։

Ջանն ազիզ ա. Հասան խանի նամազն էլ էս էր, որ մեկ պրծնի. հա-
զար արախլու ու թուրք սպանեին նրանք, ի՞նչ հաջաթ։ Իրան դարդը քա-
շելով՝ իսկույն հրաման տվեց, որ մեկ քանի ձիավոր հասնին, ղոնշունը
ետ քաշին տան, մինչև ինքն էլ գա։ Բայց դեռ կիսաճամփի՝ Աղասու սիր-
տը գնաց. քաջ հսկայն չէ՛ր իմացել, թե մհլամը յարի վրա կդնեն։ Կտրած
տեղը մնացել էր բոշ. արինը թևերովը գնացել, ջանը բռնել էր. արեգակի
շոգը մեկ կողմիցը, սովածությունը՝ մյուս, արինն էլ հո, հենց բռնի, ցա-
մաքվել էր. էն հաղաղին, որ զորքը ետ դառան, ու նա էլ սկսեց կրկին
Հասան խանին հավատ բերի, քիչ-քիչ աչքերը շաղվեցավ, գլուխը պտը-
տեց, ուզեց, որ մեկ գլուխը բարձրացնի, տեղիցը վեր կենա ու ընկերնե-
րին իր գլխի էկածը պատմի, թուլացավ, քամակի վրա վեր ընկավ, աչ-
քերը խփեց, մեկ բարակ ախից ավելի էլ ոչինչ չկարաց ասիլ։ Սար ու
ձոր ձեն տվին։ Աղասու անունը որ տվին, քարափները զարզանդեցին։ Ողոր-
մելի ընկերքը քար ու հող գլխներին տալով որ վրա չի թափեցին ու հա-
րայ տվին, ձենն ընկավ ձիավորների անկաջը։ Լացի, սգի ձենը որ իմացան,
հենց գիտես, արեգակը նոր ծագեց,ական թոթափել թե առած՝ ետ դա-
ռան. էլ ո՞ւմ գլխումն էր մնացել խելք։ Թշնամին էն ա, մեկ թվանքի մանգ-
ղիլ մոտացել էր, հարիր տեղից թվանքները բաց էլավ։ Աղասին աչքը բաց
արեց կամաց, ա՜խ քաշեց ու ձեռով իշարաթ արեց, որ ձորը թափին։ Ըն-
կերքը իմացան նրա միտքը, ուսըներին դրին իրանց թանկագին բեռը ու
ձորը թափեցին։

Հենց ոտն ու ձեռ բաց էլած որ տեսավ իրան, արյունակեր Հասան
խանը թուրը ավալ ինքը ձեռն առավ. մինչև ղոնշունը ձորի բերանը
կհասներ, Աղասու ընկերքը Անի քաղաքի բուրջը մտան ու էնտեղ, ուր
հարյուրավոր եկեղեցի, հազարավոր տներ, քոշք ու սարեք դիմացի սա-
րերին ամաչացնում, վախացնում էին, ուր, ըստ ասության ռամկին,
այնքան էր հարստություն և ճոխություն, մինչ մեկ հովիվ տեսնելով մեկ
զատկի, թե կնիկը եկեղեցումը տեղ չէ՛ր ճարել, էս պատճառով մեկ ահա-

գին տաճար շինեց, ու մեկ անսիրտ վանքականի խաթեր ասված հայոց
վերջին կենաց ճրագը փչեց, թագավորաց թախտը կործանեց, իրանց սրտ,
հրո գերի արավ։ Ա՜խ, անմեղ սնապաշտություն. թագավորաց հաբեղա-
յից մատաղ տվինք, որ էստեղ ընկա՛նք, է՛։ Ու էն հիանալի ավերակքը,
եկեղեցիքը թողեց մեզ սգո և լացի տեղեր։ Էս բրջերի ծոցն էր, էն սրբոց
աղոթքը ու մեր թագավորաց՝ Գագկի... երկնային հոգին, որ Աղասուն
պահեցին։

Մինչև նրան հինգ ընկերքը խտտած՝ գետնի տակի ճամփովը գետի
ղրաղը հանեցին, մինչև ընկերտանց հինգը թաքուն էս կողմից, հինգը՝
էն, անց կացան, որ ձորից, սարից ձեն տան, հարայ-հրոց անեն, մյուս
հինգը բրջի ծակերիցը քսան-ավել մարդ սպանեցին։ Նրանք լավ գիտեին,
թե հենց էսօր էլ թուրք, քուրդ, հայ՝ ո՛չ ոք սիրտ չի անում Անու միջովն
անց կենա, որովհետև կարծում են, թե մեջը քաջքերով լիքն ա, որովհետև
ասված մեկ անգամ անիծեց. էս իրանց պատճառ շինեցին. առաջուց
էլ էնտեղ էին նրանք շատ քրդի ու թուրքի միսը խորովել ու ամեն ծակ
ու խոռ էնպես իմացել, որ սատանեն նրանց չէ՛ր գտնիլ. մեկ կողմից
ղզլբաշի սնապաշտությունը գիտելով՝ որ ձորից, բրջից, սարից թվանք-
ները չճռռացին, հայերը չգոռացին, ձորերը, խուլ-խուլ էրերը, խոր-խոր
եկեղեցիքը, մատուռները նրանց ձենը ետ չի՛ կրկնեցին, Հասան խանի
շլինքը թեքվեց, էնպես կարծեց, թե հազար մեռել, հազար հրեշտակ, հա-
զար սատանա ոտն են առել, գալիս են։ էլ ձեն չկարաց հանիլ. խելա-
գարի պես ձեռով արեց, ինքը թռավ, իրան դաստեն՝ քամակին։ Երեք-
չորս վերստ հեռացած՝ որ մեկ քանիսը էլ ետ սիրտըները պնդացրին, որ
մեկ տեսնին, թե ախր էս դիվանը ո՞րտեղանց դուս էկան, ո՞ւր մնացին,
գա՞լիս են, թե չէ՛, մեկ չոբան, աստուծո ողորմությունիցը որ մինչև հիմա
մեկ եկեղեցում դողալով ջանն իրան էր հասել, ոտը խաղաղված տեսնե-
լով՝ իծանը, սեիզները դուս արեց, որ շուտով գնա, ձորը թափի ու թըշ-
նամու ձեռք չընկնի, սատանի պատկեր սեիզների գլուխը որ չտեսան
պարսիկքը, որ իրանց սատանեքը միշտ իծին են նմանություն տալիս,
հենց իմացան, թե Սաղայելի բոլոր զորքը աշխարհ են եկել. իրար գլխով
ընկան, թողն աչքըներն առավ. ամեն մեկ ձիու ոտը փոխելիս, հենց իմա-
նում էին, որ հմիկ, որտի որ ա, գլխըները կերթա. էնպես՝ որ աչքըները
բաց չարին, ասված ո՛չ մեր թշնամու առաջը բերի. իրանց դժոխքի
փորը սկսավ բաց ըլիլ, իրանց զորքն սկսավ Խլղարաքիլիսեն մտնիլ, որ
երեք սհաթվան ճամփա ա էստեղանց. քյաբի առաջին էնպես հավատով
չէին չոքիլ, որ էստեղ չոքեցին, նամազներն արին, ձեռըները լվացին, միրք-
ները սանդրեցին, չունքի ճաշը հասել էր. թըները սրբեցին, Ալուն իրանց

շնորհակալությունն արին, քյաբին՝ իրանց երկրպագությունը, ու թամուզ ձեռներով, մուստաս սրտով վեր կացան, որ իրանց աստուծո տված մատաղը կտրեն, տոն կատարեն, որ ջաննաթի դուռը շուտով բաց ըլի նրանց առաջին։

Բոլոր տիեզերք, հորիզոնք երկնից, գագաթք լերանց, սահանք բարձանց սկսեցին տապալիլ. թխպագին, արջնաթույր, սևաթև ամպն, որ բարձրացել էր, հասավ արեգակի մոտ ու արյան ծովի պես առաջ փոքր ժամանակ կարմրատակեցավ, ապա կուտակվելով, ծալվելով՝ էնպես այլագունեցավ, սևացավ, մինչև հեռու տեղից տեսնողք էլ էն օրը էնպես էին կարծել, որ մեկ տեղ աշխարհ ա կործանվում. օրը դառավ գիշեր։ Հավ, ճիվ, թռչուն, անասուն՝ վաղուց փախել, քարափների արանքը, մեշեքանց ծոցն, էրերի պուճախն էին մտել ու դողալով հեթեթում, հեթեթալով շունչ քաշում։

Խլղարաքիլիսո խոտերի, արտերի բոցը քամին քշելով՝ տարել էր, մեշեքն էր քցել. դուզ, չոլ, ղռ, քոլ, յավշան, թուփ, խուփ, ծղնոտ, տերև, ծառ, ինչպես ամառվան գիշերը կրակ տված չոլ, սարերը աստղեր էին շինել, ձորերը՝ երկինք, որ պարզիկա վախտը ամեն գիշեր մեր գլխին էրվում են։ Կատաղի քամին բոցին առաջն արած որ չէր ղամշում ու քացի տալիս, հենց իմանում էր մարդ, թե Շորագյալու դաշտը հրեղեն ծով ա դարձել, ու կրակի, բոցի ֆրթնեն (ալիքը) քուքուրթ, կայծակ ածում դաշտերի գլխին։ Խուլ ձորերը, խոր էրերը բողազները ետ ճոթռած որ կուլ տված քամին էլ ետ չէին քշում, տալիս քարափների ճակատին, քարերը, ծառերը ուզում էին անկաշները կալնին, ոտ առնին, փախչին, ու նրանց դողի ու զրնգոցի ձենի մեկ տուտը երկինքն էր հասել, ամպերն իրարոցով տալիս, մյուսը գետնի գլուխը, մեջքը, ոսկորները ջարդելով՝ անդունդը խրվում ու հազար տեղ գոռալով, ջարդվելով գնում, կորչում, լռվում, պապանձվում։ Կայծակի ամեն մեկ ճամբարակը, ճոպանը, ինչպես մեկ հրեղեն սուր, որ երկինքը չէ՛ր ճղում, ամպերի մեջքը կոտրում ու Ալագյազի, Մասսա, Դվալու գլխին, թափին տալիս, ուզում էին, որ էս ահագին երկրի գլխընները, իրանց աչք-ձորերը տակուվեր անեն, քոռացնեն, իրար սպանեն ու սաղ-սաղ անդունդը խրվին, բաթմիշ ըլին։ Ամպերը օխտը գլխանի վիշապի նման, երկնքիցը ճոլոլակ էլած, որ բերանը չէին բաց անում, խփում, ուզում էին, որ սաղ երկինքը կում անեն, ծամեն, փշուր-փշուր անեն ու էլ ետ հազար թիքա արած՝ ածեն անիրավ մարդի գլխին, որ ո՛չ երկնքիցն ա պատկառում, ո՛չ աստվածանից վախենում, ո՛չ ջուր իրան օրինակ առնում, ո՛չ հողից մեկ խրատ վերցնում, ո՛չ իր խեղճ հո-

գու ներքին ձենը լսում, որ գիշեր-ցերեկ լալով, արտասվելով, քնած թե զարթուն, ձեն են տալիս, գոռում.

— Երկնքի արեգակի պես, երկրի հողի պես, դու, աստուծո պատկեր, բարի կա՛ց, բարություն արա՛, քեզ պահի՛ր, լավություն արա՛, աստըծուն նմանի՛ր, ընկերդ պահպանի՛ր, աստուծո աշխարքը շինի՛ր, նրա ձեռագործը մի՛ քանդի՛ր, որ դու էլ մնաս շեն, դու էլ չի՛ քանդվիս, հողին չի՛ հավասարվիս։

Երկինք, երկիր, սար, ձոր՝ անկաշ, աչք խփել, լալիս, սուգ էին անում, դոշներին ծեծում, գլխներին տալիս, երեսները պոկում, պռճոկում. ամպք ուզում էին Խլղարաքիլիսեն վերև քաշեն, անդունդք՝ իրանց ծոցը քաշեն, պահեն. քար ու հող իրար կտրատում, սպանում էին, բայց աստուծո պատկեր մարդը՝ աչքը բաց, անկաշը սրած, կոները վեր քաշած, կայծակի թուրը ի՛ր գլխին էր խփում, նա իր թուրը՝ ողորմելի խլղարաքիլիսցվոց գլխին։ Ամպի կարկուտն ի՛ր դոշին էր վեր հատում, որ աստվածանից վախենա, նա իր թվանքի կարկուտը անճար հայերի էրեխեքանց, անմեղ մանկանց, նորահաս հարսների գլխին էր վեր ածում։ Երկիրն իրա՛ն էր ուզում քարի, հողի տակով անի, նա մեր ազգի ողորմելի ջիվան որդիքն էր արյան ծովումը խեղդում, ջախըբուրդ անում։ Սարերն ուզում էին պարսից գլխին թափին, խո՛ր տանին, նրանք մեր անտեր խալխի տուն, տեղ կրակում. իրանց սրի բերնով ղիմա-ղիմա տալիս։

Ա՜խ, սիրտս կտրատվում ա. լեզուն ի՞նչ ա, որ բառով կարողանա էն սարսափելի տեսարանը պատմիլ, որ լսողը կամ կարդացողը իմանա, թե իր խեղճ ավազանի քիր ու ախպերը ի՜նչ հալումն էին էս սհաթին, ի՞նչ էին քաշում, ի՞նչ էին տեսնում, ո՞ւմ առաջին, ո՞ւմ ձեռին, ո՞ր աշխարքում, ո՞ր հողում։ Ա՜խ, շլինքդ չկոտրի, Ա՜ղասի. ա՛խ, ո՞ւր էիր էս սհաթին։ Թագավո՛րք Հայոց, որ Անու միջումը անուշ քնած, ձեր որդիքը հարամու ձեռին՝ դուք մեկ գլուխ չի՛ բարձրացրիք, որ նրանց հավարին հասնիք. է՛ն որդիքը, որ մեկ սհաթից առաջ աշխարք զարմացրին իրանց քաջությամբը, երկիրը սասանացրին իրանց տղամարդությամբը ու, ինչպես դուք, հսկայաբար պահպանեցին իրանց աշխարհը, ձեր հողը, ձեր հայրենիքը, ու դո՛ւք, անգութք, թողիք նրանց էսպես փորձանքի միջում, թշնամու թրի առաջին։

<11>

Բայց վա՜յ ինձ, ո՞ւր հասա, ո՞ւր տարավ ինձ իմ կսկիծը, իմ էրված սիրտը։ Լեզուս չի՛, որ խոսում ա, հոգիս ա, որ զգում ա, ազգիս արինը առաջիս թափում, իմ հայրենիքն առաջիս քանդվում, իմ սիրելի

ախպոր աղի արտասունքը ու դառը սուգը՝ սիրտս էրում, խորովում։ Ի՞նչպես բերնիս հում տամ. արինս քթովս ա դուս գալիս, աչքս կայծակին տալիս. ջանս էլ տամ, էլի իմ թանկագին ազգի արինն ու ոսկերքը Շորագյալու հողումը չորացած՝ կարելի ա, թե մեկ մարդի չերևիր, մեկ մարդ չիմանար, թե ես էլ էստեղ պետք է զոհ ըլեի*, չիմանայի, չտեսնեի, չլայի ու աղի արտասունքով չխնդրեի. ով Խլղարաքիլիսու պատմությունը կարդա, ինչ աստվածասեր հայ նրանց տարաբախտությունն իմանա, գլուխը պահի, նրանց հոգին հիշի, իր հոգին ու մարմինը էլ թշնամու ձեռք չտա՛, չտա՛. ջուրն ընկնի, կրակումն էրվի, բայց իր յախեն պարսից ձեռը չի՛ քցի, չի՛ քցի. գլուխը ծախի, իր աղի դարդին հասնի, իրան դերի չա՛նի, չա՛նի։ Ա՜խ, երաբ աստծու տե՞ղ կհասնի, թե՞ հետս գերեզմանը կերթա ու հողումն էլ ոսկերքս կմաշի, կսանջի, դրախտն ինձ դժոխք կշինի, գերեզմանն՝ ինձ գեհյան (քուրա)։

Էրեխե՛ք, ձեր ջանին մեռնիմ, ձե՛զ եմ ասում իմ դարդը, ձեզ համար եմ գրում, ձեր երեսին ղուրբան. հողումն էլ ըլիմ, էկե՛ք, վրես կանգնեցե՛ք. թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա, անիծեցե՛ք ինձ, թե օգուտ՝ օրհնեցե՛ք ու լսեցե՛ք ձեր ընկերների լացն ու սուգը, նրանց հորնըմոր կսկիծն, ու ձեր հորնըմոր ծոցում դինջ հանգստանալիս՝ սասծներս մաքըներդ բերե՛ք։ Խլղարաքիլիսեցոց սիրուն երեխեքանց ձենը քանի անկաջներդ ընկնի, փառք տվե՛ք աստուծուն, որ էնպես երկնքի տակի ծնվեցի՛ք, որ ձեր աչքը էսպես բան չտեսավ. նրանց ծոցումը մեծացաք, նրանց կաթովն ապրեցիք ու նրանց արինը չխմեցիք, նրանց դոշի վրա քնեցիք ու չմորթվեցիք, նրանց կռան վրա խաղացիք ու ո՛չ նրանց մեռած, կտրատված, թիքա-թիքա արած, արինաթաթախ լաշի վրա ընկաք ու լալով, արտասունքով նրանց արինը չծծեցիք։ Կենդանի մոր փորից դուս էկաք, նրանց սերը վայելեցիք ու ո՛չ թե նրանց ճղած փորը դուք կենդանի մտաք, ու ձեր գլուխն էլ նրանց սրտումը արինաթաթախ ցցվեց։ Բարձի վրեն, յորղան-դոշակի տակին նրանց խտտեցիք, խնդացիք ու ո՛չ հողի միջումը, քարերի վրա, նրանց արնումը թավալ տալով՝ ձեր արինն էլ հետը խառնեցիք։

Ա՜խ, մի՛ լաք, մի՛ նախատեք ինձ, որ ես ձեր առաջին դժոխք եմ

* Էս ժամանակին վարժատանիցը դուս էկա ու Թիֆլիզուցը գնացի Հախպատ, Ներսես կաթողիկոսի մոտ, որ թուղթ առնիմ, գնամ, իմ ծնողացը հասնիմ, նրանց հետ քոչիմ ու գնամ Վենետիկ։ Ամեն բանս հազիր էր. Օսմանլվիցն էլ մեկ տերտեր էր էկել իր որդովը, ուզում էր ետ դառնար։ Սրանց հետ էի ուզում ճամփու ընկնիմ, բայց դերձիկը դեռ շորս չէ՛ր հասցրել։ Ո՛րքան նեղացա, որ նրանք գնացին, ես մնացի։ Էրկու օրից հետո հենց մտա Ղարաքիլիսեն, Խլղարաքիլիսու ներսերն էկան։ Ողորմելի տերտերն իր որդովն էնտեղ էր սպանվել։

բաց անում. իմ սիրտս էլ որ դժոխքումն էրվի, էսքան չե՛մ կսկծալ, չե՛մ մորմոքվիլ, չե՛մ տանջվիլ, ինչպես Խլղարաքիլիսու պատմությունը միտքս բերելիս։ Ջբարկանա՛ք ինձ վրա, չասե՛ք, թե երազ եմ պատմում. հազարից մեկը չե՛մ ասում, որովհետև ձեռքս թուլանում ա, աչքս սևանում։ Իմ լեզուս ի՞նչ ա, հարցրե՛ք էնտեղ ըլողներին, նրանք հազարապատիկ լավը կասեն, թե ի՛նչպես էին անողորմ պարսիկքը մոր փորը ճղում, երեխեն հանում, թիքա-թիքա անում, առաջ ասնելը կտրում, հետո՝ ձեռները, ապա մըրախը, թրի ծերը հանած՝ նրա մղկտալուն, թրպրտալուն երկար ժամանակ մտիկ տալիս, իրանց դժոխային քեֆն անում, ասում, լսում, խնդում, ծիծաղում ու հետո, ա՜խ, հետո, էնպես անմեղ քռփին հորնըմորը տալիս, կամ նրանց գլուխն էլ սրանցի հետ մատաղ անում։

Թողե՛ք, թողե՛ք անց կենա՛նք, հերիք ա. բայց ի՞նչ անեմ, հենց գիտեմ՝ էսօր ա Սահակ աղեն առաջիս կանգնել, աղլուխը աչքին դրել, աղաչանք անում, որ Հասան խանի սիրտը ռահմ ընկնի. էսօր են հայ սարվազներին են երեխեքանցը տալիս, որ նրանք բռնեն, իրանք փառշալամիշ անեն. էսօր են տասը պարսիկք Վարդանի քիր ու ախպերը, հերնըմերը առաջիս սաղ-սաղ քերթում, կաշիները հանում, ոտ ու ձեռ քարով թոխմախով ջարդում, քացով երեսներին տալիս, ու Վարդանը՝ էս հրաշեղ պատանին, ձեռները կապած, էս երկնային հրեշտակը՝ նրանց վրա կանգնած. ոտն ա կամենում շարժի, ճոպանը չի՛ թողում. ձեռն ա ուզում մեկ բանի հասցնի, չվանն ա ղայիմ. թրի առաջն ա ուզում ընկնի, թուրքը չի՛ թողում. սիրտը պատռում ա, ձեն չի՛ կարում հանի, շունքի նրա հասակի ջահել տղա, աղջիկ հավաքել, ձեռ, ոտ, բերան կապել, տանում են, որ իրանց դինին մատաղ անեն։ Ողորմելի պատանին ուզում ա, որ մեկ ետ էլա մտիկ տա, իր ծնողաց սուրբ արինը ու կտրատված լաշը մի տեսնի, փափագն առնի, մեկ կաթ արին էլա վրեն քսի, մեկ բուռը հող էլա ծոցը կամ ջեբը դնի, որ հիշատակ մնա, մեկ համբուրի էլա ու ետին բարովն ասի, մեկ չոքի էլա, նրանց օրհնությունն առնի, բայց ա՜խ, ա՜խ, հարիր սուր գլխին պլոկած, աչքերը կապած՝ իր ընկերների հետ քշում են, անկաջները՝ փակ, որ նրանց ձենն էլա իմանան, բերանները՝ կապած, որ իրար հետ խոսին. ձիու երըմիշ ըլելուցն են իմանում, որ շարժում են, բայց չգիտեն՝ ո՞ւր. դժո՞խքը, թե դրախտը.— դժո՛խքը, սիրելի, դժո՛խքը. սրանց տանում են, որ թուրքացնեն, իրանց դինին մատաղ անեն։

Ետ դառնա՛նք, պրծա՛նք. հազար ծեր ու պառավ, հազար տղա ու աղջիկ, մանուկ, ծծկեր իրար վրա փրթած՝ վաղուց ձեները կտրեցին, երկնային քունը մտան։ Ժահահոտությունը քիչ-քիչ սկսում ա բարձրանալ, հարավի չոր քամին՝ փչում. ամպերն էլ ետ սարերի գլխներին հա-

վաքվեցան, նրանց ալաղակը աստված չիմացավ։ Արեգակը վազում ա արևմուտը հասնի, ղըլբաշը՝ Ապարան քաշվում. խլղարաքիլիսեցոց հոգիքը՝ ո՞ւր.— դըրախտը. արդարը դժոխքը ե՞րբ կերթա։ Խլղարաքիլիսեն էրվեց, ամպերը քաշվեցին, սարերը դինջացան, հարիր տասը- տասնըհինգ տարեկան տղա, աղջիկ Հասան խանի օրդուն մտան։ Ղոնշունը նաղրախանեն ածելով, պար գալով ետ ա դառել. դահիճքը իրանց թրերն են հազրում, մոլլեքը իրանց լեզվները սրում, որ Քրիստոսի որդիքը Ալուն մատաղ անեն։ Վա՜յ, վա՜յ, Հայոց ազգ ջան, է՞ս օրին էիր դու արժան։

Իրիկունը որ գա, ա՜խ, գել, արջ, սարերի գազանները պտի գան, ձեր կացած տեղը իրանց ուրախությունն անեն։ Էլ ո՞վ կլսի մոր ձեն, հոր աղոթք, երեխի խաղ ու ծիծաղ, ժամէ ու զանգակի ձեն ձեր լաշերի վրեն։ Գազաններին կմնա բոլոր մեյդանը. նրանք պետք է էս գիշեր մարաքյա անեն էստեղ։ Գնա՜նք, գնա՜նք, միսս սրսռում ա. օ՜հ, ո՞վ սիրտ կանի մոտանա. բաս էրեխեքանց ճարն ի՞նչ կըլի. նրա՞նք կերթան Հասան խանի օրդուն, լաց կըլին, ջան ասող չի՛ ըլիլ. կէրվին, կմորմոքվին, մեկ ցավող չի՛ ըլիլ։ Ամեն մեկը մեկ խանի կամ արախլվի ձեռի՝ հավի պես կծվա կամ լեղապատառ կըլի, կամ սուրը իր դոշը կխրի, իրան կսպանի, կամ տանջանքին չդիմանալով՝ կթուրքանա. ո՞վ, լսողը ի՞նչպես չպտի սարսափի։

Տեսնի՛նք, ո՞ւր գնացին էս անմեղ գառները։ Մեր բախտիցը, թե տարաբախտությունիցը, մութը գետինն առել ա, էլ մեզ մարդ չի՛ տեսնիլ, որ եսիր անի։

Մթնագիշերը քեզ մեկ ղարալթու ա երևում. գլուխը ցից, պատերը քանդված, հազար կայծակի ու երկրաշարժության երեսը դեմ տված, դռներն ու փանջարեքը խարաբա, խորան ու սեղան ավերակ՝ կանգնել ա տխուր եկեղեցին Ապարանու։ Ուր հազար գող ու ավազակ աղոթքի ու պատարագի տեղ անմեղ հայերի որդիքը՝ ձեռըները կապած, բերան ու աչք խուփ, իրանց չար կատաղությանը պատարագ արին։ Ուր հայոց թագավորքը, իշխանքը ու պայաղատքը Ապարանի բյուրատեսակ ծաղկների հոտը, էն պատվական աղբրների համն առնելով՝ իրանց ամառվան օրեքը հովացնում, իրանց հովացած, զովացած սիրտը աստվածային սիրովը վառում, իրանց սուրբ սրտի աղոթքն ու մաղթանքը ծաղկների հոտի հետ խառը, թռչնոց ձենի հետ հավասար, մեկ բերնով՝ իրիկուն, առավոտ երկինքն էին ուղարկում։ Ուր էս սհաթին էլ մեկ ահագին չորս ջաղացի ջուր մեկ քանդված բլրի տակից, ուրտեղ որ Վաղարշակա, Տիգրանա, Տրդատա ապարանքն էին, երկրի երեսը ճոթռելով, Ալագյազի սրտիցը, գետնի տակովը ճանապարհ բաց անելով՝ բերանը փրփրով լիքը, աչքերը

խոժոռած, դուս ա պրծնում կատաղած, որ իրան պսակողների երեսը տեսնի, նրանց սիրտը հովացնի, քնելիս, զարթնելիս՝ երկնային ցողը նրանց երեսիցը զողանա, իր ցողը նրանց վրա թափի, բայց, ա՜խ, գլուխը քանդված տեսնելով, վրի շինած ապարանը՝ բրիշակ, եկեղեցին՝ ավերակ, չորս կողմը նրանց հմքի, սեղանի քարերը արինաթաթախ, մամռապատ, փշրված ընկած, բերանը կրկին բաց ա անում, որ արտասունքը կուլ տա, էլ ետ իր փորը տանի, բլրի չորս կողմը պտտում, ոլորվում, խոտ ու ծաղիկ պռճոկում, սուս, մունջ՝ իր ձենը փորը քաշում, աչքը խփում. ջուրը հողի, քարերի տակին ցրվում, էլ ետ գետինը մտնում, ու կես փայը առու դառած՝ գնում Երևանու դաշտը, որ նրա էրված, խորովված սիրտը հովացնի էլա, Ապարանու սուգը, տարաբախտությունը Էջմիածնին, Վաղարշապատին, Արմավիրին, Երասխին, Մասսին պատմի ու նրա սև ջրի դառը արտասունքը իր հետ խառնի, որ Արարատի սրտիցն ու աչքիցն, ահագին գետի պես, լուռ, հանդարտ դուս ա գալիս,— Արարատյան դաշտի քանդված, ավերած երեսը տեսնում, վըրները սուգ անում ու քիթ ու պռունկ աղի արտասունքով լիքը, տխուր երեսը անհոգի ղամշով ծածկած, քամու առաջին, թշնամու ձեռին ծալվելով, չոքելով, կանգնելով՝ մյուս սարերի աչքի ջուրը, որ էստեղ էկել, ծովացել, կանգնել են, ղամշի ու խլղունի միջումը կորել, վերցնի, գնա, Խոր Վիրապա, Արտաշատա դզովն անց կենա, ու տրտում Երասխի հետ Ջանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն, որոց մինը Սևանա աչքիցն ա կաթում, մյուսը սուրբ Գեղարդա սրտիցը բըխում, երեսները կալնին ու սուգ անելով, գոռալով, Նոյան, Նախիջևանի, Մարանդի գերեզմանի, Նարեկա վանքի, Սյունյաց դաշտերի սրտըները հովացնելով, աչքըները սրբելով՝ գնան, Քուռն էլ մեջ անեն, իրանց արտասունքը նրանի հետ խառնեն ու տանին, Կասպից ծովի սիրտըն ածեն, նրա աղի ջրումը կորչին, պարսից նավերը ջախըբուրդ անեն, ռուսաց նավերը իրանց քամակի վրա տանին ու բերեն, որ ճամփին չհուսահատվին, չբեզարին ու էն իրանց բարի ոտը մեր աշխարհիցը չկտրի, որ բալքի մեր հայրենիքը նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ ետ իր առաջին փառքին հասնի։

Է՛ս եկեղեցումը, է՛ս քարերի տակին ու աղբրի մոտին, քոլումը կուչ գա՛նք, որ մեզ չբռնեն։ Գիշերն էս ա, հասել ա, օրդուն՝ մեզանից մոտիկ, ու թուրք ազգը ցերեկն էլ էս կողմերովը չի՛ անց կենում, որովհետև Քրիստոսի թշնամի ա, ու անկաջ դնենք գիլանոց ոռնալուն, պարսից գոռալուն, հայոց լալուն ու սգալուն ու էն անմեղ էրեխեքանց էրվելուն, ծեծվելուն, մղկտալուն, շունքի էստե՛ղ պետք է նրանց աչք ու բերան բաց անեն, որ նրանց զարշելի երեսը տեսնին, իրանց ծնողաց երեսը, իրանց

քաղցր հոր տունը մոռանան ու նրանց արինաթաթախ շանգերումը՝ իրանք մըմնջան, նրանք փրփնջան. իրանք մղկտան, սրանք վխկտան. իրանք գլուխ ու երես ծեծեն, խորովվին, սրանք միրուք ու ճալվեր ողալեն ու փառավորվին. իրանք հերնըմեր, քիր ու ախպեր ձեն տալով՝ դոշըները եա ճոթևեն, նվալին, սրանք իրանց իմամ Հուսեյնի անունը հիշելով՝ յա ծոցըները ուզենան նրանց առնեն, յա դանակները, Թրերը սրելով՝ նրանց սրտըներին դեմ անեն, որ լավին։

Ա՜խ, չէ՛, չէ՛. անկաջդ կա՛լ, սի՛րելի, մարդի միսը սառում ա, գըլխին կրակ վառվում։ Աստղերը դուս են էկել, պելացել. ցավակից լուսինը տխուր, դառնավարամ՝ հենց աչքը Ապարանի երեսին առավ թե չէ, էլ ետ շոքըշոք արևմուտն ա փախչում, որ անկաջները կալնի, էս ողբալի աղաղակը չլսի. երկիրն իր սև սգի շորը հաքավ, աչքերը խփեց, որ էս դառը տեսարանը չտեսնի. միմիայն անսիրտ, անգութ սարերը սիրտ ու բերան բաց արած՝ չար հրեշտակ քամու ձեռովը խաբար են իմանում, խաբար տալիս. ծիծաղելիս՝ ծիծաղում, հրհռալիս՝ հրհռում, հառաչելիս՝ հառաչում, գոռալիս՝ գոռում, լալիս՝ լաց ըլում, ու մեկ բոպեում հազար տեսակ ձեն իրար հետ խառնում, ու մեկն էլա իրանք չիմանում։

— Նա՛նի ջան... ջա՛նի ջան.. ա՛խպեր ջան... ա՛ստված ջան... բա՛բա ջան, հո՛գի ջան... վա՜յ, վա՜յ... վա՜յ մեր սև օրին, արևին, վա՜յ մեր ջրատար գլխին։ Ա՜խ, ի՞նչ կըլեր՝ ձեր ձեռովը մեզ ջուրն ածե՛իք, ի՞նչ կըլեր՝ մեզ չէ՛իք ծնել. ընչի՞ չի՛ մեզ էլ ձեր սրտի վրա մատաղ արին, ընչի՞ չի՛ մեզ էլ ղիմա-ղիմա տվին. էս ո՞ւր են հասցրել մեզ, էս ո՞ւր բերել. գետինը չի՛ պատռվում, մեզ ներս տանում. երկնքի աչքը քոռացել, մեզ չի՛ տեսնում։ Ա՜խ, ո՞ւմ ծոցից զրկվեցինք, ո՞ւմ ձեռն ընկանք։ Ա՜խ, տեր աստված. ընչի՞ մեզ էսպես պատժեցիր. քեզ ի՞նչ էինք արել, որ մեր աչքը էսպես հանեցիր. ո՞ւմ մեկ վնաս տվինք, որ մեր գլխին քար քցեցիր։ Մեր հորնըմորը, մեր քիր ու ախպերը մատաղ արիր, ախր մեզ էլ նրանց հետ տանեիր, ի՞նչ կըլեր։

Մութն էկել ա, գետինն առել, նա՜նի ջան, սար ու ձոր խավարել, փակվել, մենք մերը կորցրած հավի ճտերի պես ընկել ենք չոլ ու դուզ. ո՛չ աչքըներս ա քուն գալիս, ո՛չ սրտըներս՝ ղարար, ա՜խ քաշելիս՝ կրակ ա դուս գալիս լերդըներիցս. ո՞ւմ երեսին մտիկ անենք, որ մեր սուգը տեսնի. ո՞ւմ ճտովն ընկնինք, որ մեր արտասունքը սրբի. ո՞ւմ մոտ գնանք, որ մեզ գոգն առնի, մեր սիրտը մխիթարի, մեր դարդն իմանա։ Քարերը անկաջ չունին, որ մեր ձենը լսեն. սարերը սիրտ չունին, որ մեզ վրա ցավին. երկինքը՝ հեռու, որ մեզ քաշի, տանի. երկիրը թուր չունի, որ մեզ էլ փրթի, կոտորի. ո՞ւմ ասենք մեր դարդը, ա՜խ, ո՞ւմ։ Ընչի՞ մեզ

աշխարհ բերիք, ընչի՞ մեզ կաթը տվիք, պահեցիք. դուք չուռով պրծաք, երկինքը գնացիք, մեզ՝ որբերիս, էս փո՛ւչ աշխարքի վրա թողիք, որ դհա ավելի տանջվինք, դհա ավելի չարչարվինք. ձեր կարոտը մեկ կողմից քաշենք, մաշվինք, մեր ցավը մյուս կողմից սրտըներս անենք, էրվինք, փոթոթվինք։

Ջեռըներս կապած, գլխըներս բաց, երկնքի տակին, Ապարանու չոլումը՝ ձեզ ենք կանչում, ձեզ ենք ուզում, ձեր անունը տալիս, ձեր խաթեր լալիս, ա՜յ մեր ազիզ ծնողք. երկնքո՞ւմն ա ձեր հոգին, թողե՛ք, մեկ սհաթ գա, վըրըներս պտիտ տա. երկրո՞ւմն ա դեռ, մեր աչքին մի երևի, հասրաթըներս առնինք ու հետո, ա՜խ, հետո մեր հոգին էլ ձեր հոգուն տանք. ձեզ հետ թռչինք, ձեզ հետ միանանք, դժոխք թե դրախտ, միասին տեսնինք. ուր որ ըլինք, առանց ձեզ չմնանք. ա՜խ, ի՞նչ կըլի, ի՞նչ... Ա՜խ, ի՞նչպես չի մեր սիրտը պատռվում, մեր ջանը էրվում, մեր բերնիցը կրակ դուս գալիս, մեզ խորովում. ի՞նչպես ա մեր լեզուն խոսում, ու չի՛ քըրքըրվում. մեր աչքը տեսնում ու չի՛ դուս տրաքում. մեր շունչը դուս գալիս ու չի՛ կտրվում. մեր արինը եռում ու չի՛ ցամաքում. մեր անկաջը լսում ու չի՛ քառանում. մեր ոտները փոխվում ու չի մեր տակին փշրվում, խուրդուխաշ ըլում. էս ի՞նչ օր ա, որ մենք քաշում ենք։

Նանի՛ ջան, ա՛խպեր ջան, բա՛բի ջան, վա՜յ, վա՜յ... է՞ս օրվան համար մեզ օրորոց դրիք, է՞ս օրվան համար մեզ սրից, ջրից ազատեցիք, մեր ցավին դարման արիք. մեզ ջան ասելով, մեր աչքը սրբելով, զոզըներդ առնելով, դոշըներիդ կպցնելով, քտինք թափելով, անքուն մնալով, սար ու ձոր ընկնելով՝ մեզ ապրուստ ճարեցիք. ձեր կյանքը խավարացրիք, մեզ ծաղկացրիք. դուք թառամեցիք, մեզ դալարացրիք. ձեր ումբըրը չորացրիք, մեզ տանը քուն դրիք. դուք հանդում, չոլում, արևի, անձրևի տակի ջանըհան էլաք, որ մենք զորանանք. աչքըներիդ լիսը սպիտակցրիք, որ մենք մեծանանք, հասնինք, ձեզ քոմակ ըլինք. է՞ս ա մեր քոմակ ըլիլը, է՞ս էր ձեր մուրազը։ Էստո՞ւր համար աստծուն՝ լիսը բաց ըլելիս, մութը մթնելիս, գիշեր-ցերեկ աղոթք էիք անում, որ մեր ոտին քար չդիպչի, մեր մատը փուշ չըլի, մեր գլխին կարկուտ, արև չխփի. մեզ իր աչքի առաջին, իր թևի տակին ցավից, չոռից ազատի, որ մենք բարի զավակ ըլինք. Քրիստոսի խաչի ղուլ դառնանք, ավետարանի՝ ծառա, եկեղեցու՝ հող, ազգի պարծանք, աշխարքի՝ շենություն։ Ա՜խ, ո՞ւր էս սհաթը աստուծո անկաջը, որ ձեր արդար ձենն մեկ էլա չլսեց, ձեր հազար մուրազի մեկն էլա չկատարեց ու մեզ էսպես քարին տվեց, ու մեր հոգին էլա չի՛ առնում, որ պրծնինք, ա՜խ, կորչինք էս անօրեն աշխարքիցը։

Սրբություն էիք առնում՝ մեզ հետըներդ տալ տալիս. ժամ էիք գնում՝

մեր ձեռը մոմ տալիս. զատիկ էր գալիս, ջրօրհնեք ըլելիս, կիրակու ժամին, սուրբ պատարագին՝ մեզ խտիտ անում կամ ձեռով տանում, քար, ավետարան, սեղանի, բեմի, խաչի, պատկերի առաջին, սրբերի ոտի տակին, գիրքը կարդալիս, սկին դուս գալիս՝ մեզ տերտերի ոտը քցում, խաչի առաջը դնում, մեզ համբուրիլ տալիս, դուք էլ համբուրում, աղաչանք անում, որ սուրբ ավազանի, մեռոնի շնորհքը մեզ վրա մնա. ջուրն ընկնինք, մեզ պահի. կրակն ընկնինք, մեզ պրծացնի, մեզ զորացնի, որ էսօր է՞ս կրակումը, է՞ս բոցումը էրվինք, տանջվինք, մեր ձենը չիմա՞նաք. մաշվինք, փչանանք, մեր սուգը չանե՞ք. Թրով մեզ կտրատեն, մեզ դուք չազատե՞ք։

Ո՜վ արարիչ, մեր հոգու տվող աստված. ինչպես մեզ ստեղծեցիր, էլ ետ մեզ սպանի՛ր. ինչպես կյանք տվիր, էլ ետ դու խլի՛ր. հող էինք քեզ մոտ, էլ ետ հող շինի՛ր. շունչ տվիր՝ ապրինք, էլի շունչդ ետ ուզի՛ր։ Ի՞նչ ենք անում մենք էլ փառքն ու կյանքը, մեզ ի՞նչ հարկավոր՝ երկիր, աշխարքը։ Մեր չունենաս, լա՝ դու լաց ըլելիս, հեր չունենաս, գա՝ դու կսկծալիս, քիրդ մոտիդ չըլի՝ դու սուգ անելիս, ախպերդ ձենդ չլսի՝ սիրտդ պատըռվելիս։ Ո՜վ մեր արարիչ, մեր տե՛ր ու մեր հե՛ր. հերնըմերըներս տարար, մեզ էլ տանեիր. քիր, ախպեր առար, մեզ էլ սպանեիր. էլ չենք ուզում քո սերն ու խնամքը, էլ չենք խնդրում, որ պահես մեր կյանքը. հրեղեն սերովբեդ թո՛ղ մեզ սպանի, բոցեղեն քերովբեդ թո՛ղ մեզ էրի, խորովի. մեզ դրախտը մի՛ տանիր, դժոխքը ուղարկի՛ր. հրեշտակի մի՛ տար, սատանեն թո՛ղ գար. մեր ծնողքը մի տեսնեինք, թող դևը մեզ կո՛ւլ տար. նրանց սերն առնեինք, նրանց տեսնեինք. մեր հոգին տայինք, նրանցն առանայինք ու էս դառն օրը հե՛չ չտեսնեինք, ա՜խ, չտեսնեինք։

էսքան մեծամեծ մարդիկ՝ խաներ, բեկեր, աղեք, ֆառաշ, մոլլա, ախունդ, էս ի՞նչ են էստեղ կանգնել, հավաքվել. չե՞ս ուզում դու էլ մի աչքդ քցես, նայե՞ս։ Հայ սարվազները աչք ու բերան կալել, փափախով են անում, որ հեռանանք, մոտ չգնանք։ Սաքի մոտ էլ գնացիր, ի՞նչ օգուտ. միսդ ջանումդ կմաշվի, կքրքրվի։ Ետ դա՛ռ, ես քեզ կասեմ։ Քսան-երեսուն էրեխա փարչալամիշ արին։ Մոլլի թուքը քյար չարեց, չեն թուրքանում, պտի մատաղ ըլին։ Դահիճը մեկը-մեկի ետևից շախկա տալով կոտորում ա։ Վարդանը՝ էս թագավորածին պատանին, երեսը լուսափայլել, հրեշտակի պես կանգնել ա, ո՛չ Հասան խանի պարգևին ա մտիկ տալիս, ո՛չ ոսկուն, մարգարտին, ո՛չ ալվան-ալվան շորերին, ձիուն, յարաղին, ո՛չ մոլլեքանց խրատին, ո՛չ հայերի աղաչանքին, ո՛չ թշնամու ահ տալուն, ո՛չ թրին, սրին, վառած կրակին, տաքացրած շամփրին, որ պտի

միսը կոխեն, ո՛չ քարփչին, որ պտի ոտների արանքը դնեն, ո՛չ քյալփաթնին, որ հենց, էն ա, բարձրացնում են, որ միսը քաղեն, ո՛չ կրակած պղնձին, որ պտի գլխին դնեն, սարի պես դոշը դեմ ա տվել. ո՛չ պատժիցը վախում, ո՛չ պատվիցը խաբվում, իրան կսկիծը մոռացել, ընկերներին էլ ձեն ա տալիս, սիրտ դնում։

— էս է՛ն անիրավ թուրն ա, սի՛րելիք, որ մեր հորնըմոր սիրտը էսօր մեր առաջին դուս ճոթռեց։ էս է՛ն անաստված ձեռներն են, որ էսօր մեր մանուկ, ծծկեր քիր ու ախպոր մարմինը թիքա-թիքա արին, կտրատեցին։ էս է՛ն անողորմ ազգն ա, որ մեր նաչար ազգի արյունը մինչև էսօր խմել ու խմում ա. էլ ի՞նչ ենք կանգնել սրանց միջին ու սրանց զարշելի երեսին նայում։ Ձեր ջանին մեռնիմ, երեխե՛ք ջան. մենք ո՞ւմ որդիքն ենք, որ թրից վախենանք. ո՞ւմ զավակներն ենք, որ կրակը մեզ թուլացնի։ Մեր ծնողք ու ախպերները չէի՞ն, որ էրեկ էնպես քաջությամբ մեռան, որ արարած աշխարքը զարմացավ ու հուրն հավիտենական պտի զարմանա։

Մտի՛կ արեք, ձեր երե՛սին զուրբան, էն պայծառ երկնքին. է՛նտեղ, է՛նտեղ են մեր սիրելիքը, մեր ազիզ բարեկամքն ու ազգականքը մեզ սպասում։ Մի՛տք արեք՝ թե գլխներդ ցավի, ո՞վ պետք է ձեզ մեկ ջան ասի. հիվանդ ըլիք, ո՞ւմ կռան վրա պետք է քնիք. լաք, ո՞վ ձեր արտասունքը կսրբի. մեռնիք, ո՞վ ձեզ կթաղի։ Մեր սո՛ւրբ լեզուն պետք է հարամ լեզվի հետ փոխե՞նք. մեր սո՛ւրբ պատարագն ու ժամը թողանք, ազանի ձենին անկաջ դնե՞նք. մեր սո՛ւրբ մեռոնը մոռանանք, մեր խաչ, ավետարանը մտքից հանենք, Ալուն, ղուռանին հետևի՞նք։ Մտի՛կ արեք սրանց էս դժոխք, ժանդ, մրրած, կեղտոտ երեսին. դժոխքը սրանից լավ կըլի՞. սրանց աչքերիցը կրա՞կ չի վեր թափում։ Վա՜յ մեր գլխին ու արևին, էնքան պետք է խղճանանք, որ մեր հորնըմորը սպանողներին, մեր ժամն ու աշխարքը քանդողներին նոքար դառնա՞նք։ Ա՜խ, թե էս փուչ փառքիցը խաբվինք, էս անպիտան պատժիցը վախենանք ու մեր սուրբ հավատն ուրանանք, որ մեռնինք, ի՞նչ երեսով պետք է գնանք մեր ծնողաց մոտը, ի՞նչ աչքով պետք է նրանց նայենք։ Ասենք, թե էս աշխարքումը նրանցից զրկվեցանք, բաս չե՞ք ուզիլ, որ երկնքումն էլա նրանց հետ միանանք, նրանց երեսը տեսնինք, նրանց սերը վայելենք։

Չէ՛, չէ՛. մեռնի՛նք միասին, երթա՛նք միասին, հասնի՛նք մեր ծնողաց փառքին, պսակին։ Երկինքն մեզ համար է իր սիրտը բացել, հրեշտակք մեր գլխին թևները փռել. նահատակք, կուսանք, սուրբք և մարտիրոսք մեզ ձե՛ն են տալիս, մեզ կանչում ամոք։ Նրա՛նց մոտ գնանք, նրա՛նց սիրուն մեռնինք, մեր մարմինը տանք, որ հոգով ծաղկինք։ Ձեզ

մոտ ենք գալիս, ծնո՛ղք սիրելիք, ձեր տեսուն կարոտ՝ դուք մի՛շտ պաշտելիք. ձեր արդար կաթը, ձեր սուրբ խրատը մենք ե՞րբ կմոռանանք, որ մտնինք կրակը:

Արի՛, Երկնային հրեշտա՛կդ լուսեղեն,
Տա՛ր մեր աղաչանքն աստծուն էս կողմեն:
Բարո՛վ մնաք դուք՝ լերի՛նք, հո՛ղ, աշխարհ,
Բարո՛վ կացեք դուք՝ ծառք ու ձո՛րք, անտա՛ռ:
Մենք չէինք արժան ձեր սուրբ երեսին,
Մեր ոտն անիրավ դիպավ ձեր դոշին:
Քանի՞ցս ձեր պտուղն, ձեր համն ու հոտը,
Ձեր շվաքի տակին, ձեր ծաղիկն, խոտը
Մենք հարամ ձեռով քաղեցինք, առանք:
Կոխեցինք ձեր սուրբ երեսն ու դոշը,
Ձեր ղադրն ու խաթրը մենք բնավ չիմացանք:
Աղբրի գլխին, առվի դրաղին,
Սիրելյաց միջին, ծնողաց գոգին
Սեր վայելեցինք, մեր օրն անց կացրինք:
Աստղերն մեր գլխին քաղցր ծիծաղեցին,
Լուսին, արեգակ իրանց լիսը տվին.
Թռչունք երգելով, ծաղիկք հոտ տալով
Մեզ քնացրին, մեզ զարթեցրին.
Բայց, ա՜խ, անիրավ մեր ձեռն, երեսը
Քնով ծածկեցինք, ձեզ մտիկ չարինք:
Քո սուրբ հողին, մեր քա՛ղցր Հայրենիք,
Ծունր չդրինք, մենք չպաշտեցինք,
Սիրուն վաթանին մենք կյանք չտվինք,
Մեզ մատաղ չարինք, մենք չսիրեցինք:
Թշնամուն հիմիկ մենք եսիր դառանք.
Թե որ ուզենան էլ, որ տան մեզ կյանք,
Էլ չի՛ հարկավոր. դո՛ւ ա՛ռ մեր հոգին,
Ո՜վ բարի հրեշտակ, որ կաս մեր գլխին:

Մնացե՛ք բարով, հողեր ու դաշտեր,
Ա՜խ, թո՛ղ վայելեն ձեր սերն ուրիշներ.
Վարդանի աշքը, էս մանկանց ոտքը

Էլ ձեզ չե՛ն տեսնիլ, ձեր վրեն չրջիլ,
Ձեր հոտովն զմայլիլ, ձեր գրկովն փարվիլ:
Ո՛չ հոր ու կգա մեր գերեզմանը,
Ո՛չ մոր արտասունք կթափի մեր տանը.
Ո՛չ ժամ, պատարագ, ո՛չ խունկ կամ բաժակ
Մեր հոգուն տվող կըլի մեկ ժամանակ:
Ո՛չ քիր ու ախպեր կգան մեր քովը,
Ո՛չ մեկ անց կենող կըլի մեր մոտովը.
Մեր ծնողաց մարմինք մեր գեղի չոլումն,
Մեր փուչ ոսկորներն էս օտար հանդումն՝
Չեն միմյանց տեսնիլ, իրար հետ բարվիլ.
Նրանք գազանի, մենք գիլի, ղշի
Փայ կըլինք, մեզ վրա մեկ աղող չի ըլիլ.
«Աստված ձեր հոգին միշտ լուսավորի,
Իր սուրբ երեսին արժանի անի»:

Կըլի, որ դուք մեկ էլ եա հոտ տալիս,
Գարունքը գալիս, դաշտերն ծաղկելիս՝
Մեր երեսին էլ ծաղիկք, կանաչիք,
Մեր հողիցն էլ դուք դուս գաք, զարդարվիք,
Ձեր ցողն մեզ վրա թափեք, հովացնեք,
Ձեր հովն մեր դոշին փչեք, զովացնեք,
Ձեր պարզ ջրի հետ մեր արինը խառնեք,
Մեր տված շունչը առնիք ու պահեք,
Ձեր քաղցր հոտի հետ երկինքն ուղարկեք:
Ա՜խ, թե մեկ ճամփորդ էս կողմովն անցնի,
Ձեր միջին վեր գա ու էստեղ քնի,
Ձեր հոտն առնելիս, ձեր ջուրը խմելիս,
Բալքի թե հոգին իմանա, ասի,
Միտքը բերի, թե էս է՛ն դաշտերն են,
Որ էսօր մեր չար թշնամու ծառեն
Ուզում ա, որ մեզ խաչին մատաղ տա,
Մեր ջանը խլի, մեզ անի ղիմա:
Ի՞նչ կըլեր, ա՜խ, որ մեկ օրհնած հողում,
Մեր ազգուտակի, սիրելյաց միջումն
Մեր հոգին տայինք, նրանց խառնըվեինք:

Ա՜խ, խա՛չ զորավոր, քո հրաշքիդ ղուրբան.
Մինչև ե՞րբ մեր ազգն, աշխարհն Հայկական
էսպես կտանջվի, էսպես կմաշվի,
էսպես կքանդվի, էսպես կխաշվի:
Խա՛չ, քեզ պաշտողին ընչի՞ չես պահում,
Խա՛չ, քեզ բռնողին ընչի՞ սպանում.
Քեզ անարգողին էսպես ղվաթ տալիս,
Քեզ պարսավողի սիրտը ո՛չ խրվիս:
Ա՜խ, տե՛ր իմ աստված, թե մենք առաջին
Մեղավոր էինք, որ պատվիրանիդ
Չհնազանդեցանք, անիրավ էինք,
Մեզ սպանեիր, ընչի՞ մեզ թողիր,
Մեր խեղճ ծնողացը թրի տակ տվիր.
Մեզ կրակ տվին, ընչի՞ չէրեցիր:
Թողիր, որ էսպես տանջվենք շարաշար
Անհեր ու անտեր, անմեր, անհավար
Մնանք էս չոլումն, զազանաց միջումն,
Մեր լաշը թոշնոց, մեր արինը հողին
Մատաղ տանք, մեր ջանն դնենք էս գետին:
Մնացե՛ք բարով, ա՜յ մեր խեղճ ազգ Հայ,
Էլ մի՛ լաք, ողբաք, ցավիք մեզ վրա:
Սրբեցե՛ք աչքներդ, տեսե՛ք մեր հալը,
Էլ ի՞նչ օգուտ մեզ ձեր սուգն ու լալը:
Թուրը գլխներիս, մահն առաջներիս,
Կրակն էրելիս, շամփուրն ծակելիս,
Բոցն խորովելիս, մեր հոգին տալիս,
Մեր կեսն փոթոթված, կեսն անձող դառած,
Մեր ոտներն մոխիր, շնչերս կրակված,
Մեկ ձեռը կտրած, մյուսը քերթած,
Պղինձն գլխըներիս, քարփիչն ոտներումս,
Սրտներումս արին, արտասունքն աչքումս.
Ո՛չ երկինքն փուլ գա, ո՛չ հրեշտակ տեսնի,
Ո՛չ դահիճն ցավի, ո՛չ երկիրն ճղվի:
Դուք ո՞ւր եք լալիս, որ մենք չենք լալիս.
Դուք ո՞ւր մղկտում, որ մենք չենք խնդրում:
Պահեցե՛ք ձեր սուգն սև օրի համար.
Ձե՛զ վրա լաց էլե՛ք ու տեսե՛ք ձեր ճար:

Մենք մեր ծնողաց հետ կմիանանք,
Էսօր նրանց տեսուն մենք կարժանանանք.
Էս դառն աշխարքիցս կհանգստանանք,
Դրախտը կերթանք ու միշտ կխնդանք:

Բայց վա՜յ ձեր օրին, ձեր օղլուշաղին,
Թե դուք կենդանի կանգնիք, ձեր աչքով
Տեսնիք սիրելյաց տանջանքն՝ մղկտալով.
Ձեռներդ խաչած՝ ձեր դոշը ծեծելով,
Հող տաք ձեր գլխին, թաղեք ձեր որդին.
Ձեր սիրտը հանողին, կյանքը քանդողին
Եսիր դառնաք ու էլի շպրծնիք, էլի միշտ տանջվիք
Ու ձեր հոգի վրա դուք մատաղ ըլիք,
Ձեր աշխարքումը էսպես դուք մաշվիք
Ու դեռ սիրտ չանեք, դուք չմիաբանիք,
Մեկ օր էս սուր, թուրն, էս կրակն ու բոցը,
Էս պղինձն, շամփուրն, էս վառ հնոցը
Դուք ձեր թշնամուն միշտ հազիր չպահեք,
Նրան դուք չէրեք, նրան չկոտորեք,
Ձեր ազգն, աշխարքը դուք ազատ չանեք
Ու էսպես թշվառ, տարաբախտ մնաք:

Մնա՛ք դուք բարով, տարե՛ք ձեր որդոցն
Մեր կարոտ սերը, մեր ազիզ բարովն.
Պատմեցե՛ք նրանց մեր խեղճ օրերը,
Թո՛ղ պահեն նրանք իրանց գլխըները.
Է՛ս օրին չհասնին, է՛ս ցավը չտեսնին,
Տա՛ն իրանց կյանքը ու պահեն աշխարքը.
Մնա՛ք բարո՜վ, բարո՜վ...

Վա՜յ... վա՜յ... ա՜խ... Նա՛նի ջան... բա՛բի ջան... Աստված, քե՛զ ղուրբան... ամա՜ն... ամա՜ն... ամա՜ն... Մեռա՜նք... էրվեցի՜նք... խորովվեցի՜նք... ամա՜ն... վա՜յ... Հրես պրծա՜նք, հրես էկա՜նք. ո՜վ Վարդան Նահատակ, սուրբ ծնողք. ձեր զավակք գալիս են, մոտ էկեք. կյանք տվին, մահ առան, ձեզ չթողին, ձեր հավատն, ձեր սուրբ խաչն չուրացան։ Թրի բերնին, վառ կրակին, տանջանքին դիմացան։

«Փշրեցէ՛ք, ջարդեցէ՛ք, ոտն ու ձեռ կտրեցէ՛ք,
Առաջ փորն, հետո գլուխն էրեցէ՛ք, չամփրեցէ՛ք,
Մատները հաղրհան, ձեռները կաշրհան
Արէ՛ք, մեջքն կրակին դեմ արէ՛ք, խանձեցէ՛ք,
Կտրած ձեռն, ոտն ու մատն եղումը դաղեցէ՛ք,
Ով շուտով սպանի, իր գլուխը կթռչի:
Ուսուլով ու յավաշ կամ կաշին հանեցէ՛ք,
Կամ գլուխը քերթեցէ՛ք, կամ աչքերն փորեցէ՛ք:
Թո՛ղ ոտներն էրվելիս՝ աչքը տեսնի, սիրտն էրվի.
Թո՛ղ ձեռներն կտրելիս՝ բալքի թե ան ընկնի
Սիրտները ու դարձ գան, մեր հավատն ընդունին,
Խաչը թողան, դռնանին գլուխ տան, մերն լինին»:

Հասան խանն անիրավ՝ էս հրամանն տալով,
Կրակին էր տալիս սուրբ մանկանցն՝ տանջելով:
Բայց արդարքն, վաղուց էր, տվել էին սուրբ հոգին,
Սուրբ արյան պատարագն նվիրել երկնքին:
Ողջակեզ, անուշ հոտն բարձրացել առ վերինն.
Սև ամպերն հեռացան, երկնային լիսն իջավ,
Նրանց մարմինն ամփոփեց, պատեց, բարձրացավ:
Ու հանկարծ՝ սոսկալի վերևիցը ձեն էկավ.
«Հասան խա՛ն, դու գազա՛ն, անօրե՛ն, դիվակա՛ն.
Բա՛ց չար սիրտդ, կա՛ց, կանգնի՛ր, որ ինձ տաս պատասխան:
Ո՛չ գետինն քեզ կպահի, ո՛չ անդունդն քեզ կքաշի,
Ո՛չ դժոխք բույ կտան, ո՛չ գեհյանն սոսկալի.
Կենդանի դու պետք է քրքրվիս ու տանջվիս,
Մինչև էդ անմեղաց սուրբ արինն վճարես:
Թե չանր քեզ հանդիպի, թե կայծակ քեզ էրի,
Իմացի՛ր, որ ե՛ս եմ, որ քեզ տամ տանջանքի.
Երերյա՛լ մնացես, տատանյա՛լ մաշեցիս,
Փուշ, տատասկ քեզ պա՛տի, թե հողն էլ դու մտնիս»:

Հանգիստ ու խաղաղ մնա՛ք, սիրելի՛ք,
Մինչև օրն վերջին, լիսն գեղեցիկ.
Անմե՛ղ երեխեք, արդա՛ր դուք հոգիք:
Քանի Ապարան տեսնիմ, անց կենամ,
Քանի շունչս առնիմ, ձեր անունը տամ.

Ա՜խ, իմ ազգի դուք հրեշտա՛կ, սո՛ւրբ որդիք,
Որ էդպես կանուխ դուք թառամեցիք:
Երբ երեսս հողին, ծնկներս չոքած,
Աչքս ծով դառած, սիրտս արնով լցված՝
Ընկնիմ, ա՜խ, գլուխս բաց ձեր առաջի,
Համբուրեմ ձեր հողն, մնամ վրա գետնի.
Քաղեմ ձեր ծաղիկն, հիշեմ ձեր հոգին.
Ո՜վ սուրբ հոգիք ջան, երկնային բեմին,
Աստուծո առենին, սրբոց խորանին
Տարե՛ք իմ խնդիրս, տարե՛ք արտասունքս,
Որ մեր խեղճ ազգը, մեր սուրբ աշխարքը,
Որ ձեզ պես մատաղ ավեց աստծուն,
Էլ չի՛ ավերվի, չմնանք գերի,
Որի մատաղ ու եսիր թշնամուն,
Անտեր ու անճար, անտեղ ու անտուն:

ՎԱԽՃԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

<1>

Հայաստան աշխարքը շատ վախտ էր նեղության, ավերման տակ
ընկել, ամա էս ամենիցը անց կացավ։ Սար ու ձոր դառել էր գողի, ավա-
զակի բնակարան։ Ամեն կողմից պարսիկք է՛նպես ոտը բարձրացրին
հանկարծ, որ էլ դեմ կենալու ճար չկար։ Բայց է՛ս նեղությունն էր, որ
հայոց էլ է՛ն հոգին էր տվել, որ թե մեկ կողմից իրանց ազգին ոտի տակ
էին տալիս, մյուս կողմից իրանք էին թշնամու արինը ծծելով ման գա-
լիս։ Սաղ Պարսկաստան պոկ էր էկել, սաղ Կավկազ՝ դոնմիշ էլել։ Էրակ-
լի որդի Ալեքսանդրեն, որ Վրաստան առնելուցը ետը փախել, պարսից
դուռն էր ընկել ու հարիր անգամ գլուխը քարեքար տվել, որ իր աշխար-
քը էլ ետ ձեռք քցի, էլ սար չէր մնացել, որ անց չկենա, որ բալքի թե իր
սրտի մուրազը կատարի։ Լազգի, Ջաչան, Ջերքեզ, Ղազախ, Բոռչալու,
Շամշադին, բոլոր Կասպից գավառները՝ ձեռըները հինա էին դրել, թե
առել, որ թռչին ու ոսի իշխանությունը ստանան։ Հայ ազգին յա կրակ
էին խոստանում, յա սուր. յա կոտորում, յա թալանում։ Ինչքան թույն
ունեին, մեր ազգի գլխին էին թափում։ Յա պատիվ, մեծություն խոստա-
նում, որ խաբեն նրանց, յա պատիժ, պատուհաս տալիս, որ վախենան,
ոսիցը ձեռք վերցնեն։ Շահիցը, սարդարիցը ֆարման ֆարմանի վրա էր
գալիս, բայց հայոց արդար սիրտը, ուղիղ սերը, որ ռուսաց հետ ունեին,
է՛ն ժամանակն էլ նրանց չթողեց, երբ թուրը գլխըներին խաղում, որդի
ու զավակ դոշըներին, առաջներին սուրն էր քաշվում յա կրակումն էրվում։
Ինչ որ Պարսից կռվի ժամանակին հայք արին, աստուծո է հայտնի,
ու ամենողորմած կայսրն էլ շնորհակալությունով ու հրովարտակներով,
խաչով ու նշանով էս արած լավության տեղը շատ անգամ լցրեց։ Թո՛ղ
բազի հիմար, անաստված մարդ հայոց ոտը ձգի. թե մարդ չիմանա, քա-
բերը վկայություն կտան։ Հալբաթ որ մեկ օր մեկ արդար, անաչառ մարդ
Վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակը կերևի, թե հայք ի՞նչ

արին, ի՞նչ հավատարմություն են ցույց տվել տերությանը, ի՞նչ արին
են վեր ածել։

Ո՞վ չգիտի, որ էս հաղային, ինչ ժամանակ Հասան խանը՝ արևմտից,
Աբաս Միրզեն՝ արևելից, ավազակի պես հանկարծ էկան, մեր սահմանը
(սնոր) կոխեցին, մեր կողմը ամենևին խաբար չունեին։ Ընչանք ռուսք
իրանց զորքը կհավաքեին, գլլբաշը կարող էր սաղ Վրաստան ոտի տակ
տալ, եթե հայք չէին ամեն տեղ նրա ճամփեն կտրել։ Միմիայն Ներսես
ու Գրիգոր եպիսկոպոսաց, Մատարովի ու Բեհբուդովի արածը բավական
է, որ աշխարք իմանա, թե ի՞նչ հոգի ունեի էն ժամանակը մեր ազգը։
Առաջինը՝ խաչը ձեռին, հայոց քարոզում, զորք էր հավաքում, որ գնան,
արին վեր ածեն իրանց ազգի համար. երկրորդը՝ Երմալովի խնդրքովը
եպիսկոպոսության շորերը փոխած, չերքեզի շոր հագած, յարաղ-ասպար
կապած՝ որ Թիֆլիզու, Ղազախ-Բոռչալվի միջովը չէր անց կենում, հենց
իմանում էր խալխը, թե իրանց փրկիչն էր գալիս։

Էն ժամանակը, որ Շամշադինի մովրովը հարիր մարդով հենց հա-
սավ Մատուշկի ասած կարմունջը ու սարսափելով էլ ետ ե՛տ դառավ,
չկարաց առաջ գնալ, էս հսկա եպիսկոպոսը երկու մարդով հաղար արի-
նակեր հարամու գլուխ ջարդելով՝ Ղազախ-Բոռչալու անց կացավ, հա-
սավ Շամշադին՝ իր հայրենիքը, իր ընտանյաց մեջը, գրաֆ Սիմոնիչին,
որ Գյանջուցը փախած՝ գալիս էր, իր բոլոր զորքովը իրանց տանը եր-
կար պահեց ու Երմալովի թղթովը բոլոր կառավարությունն ստացավ,
մինչև Թիֆլիզուցը օգնություն գար։... գեղը, որ պարսիկք էկան, քանդե-
ցին, դերի արին, ուր յոթնասուն տանից ավելի էր, երեսուն մարդով
հինգ հազար մարդի մեջ մտավ, առյուծի պես իր ժողովուրդն ազատեց,
նրանց եսիրը ետ բերեց։ Էս միջոցին Երմալովն էլ էկավ, հասավ։ Մեկ
պաս օր եպիսկոպոսիցը խնդրում ա, որ կռվի ժամանակին էլ պասին
մտիկ չանի, բայց նա հսկայաբար պատասխան է տալիս.

— Պարսից միսը թողած՝ ի՞նչ հարկավոր է տավարի միս ուտիլ։

Էս միջումը Ալեքսանդր վալին ու Ջոհրաբ խանը էկան, Շամշադինը
կոխեցին, ու քիչ էր մնացել, որ բոլորը տակ ու գլուխ անեն. քաջ եպիս-
կոպոսը իր ընտիր հայերով նրանց քամակը կտրեց, զորքըները կոտորեց
ու հինգ պարսիկ իր ձեռովը բերեց ու Երմալովին փեշքաշ արեց։ Սա էլ
ճակատը համբուրեց ու շատ անգամ խնդրեց, որ իրան ասի, թե ի՞նչ
պարգև ա ուզում թագավորիցը, բերիլ տա։ Անմահ եպիսկոպոսը է՛ն
խնդրեց, որ Շամշադինու ու Ղազախ-Բոռչալվի հայ ազգը թուրքի ձեռիցն
ազատվի, չունքի մինչև էն ժամանակը նրանց ձեռին շատ նեղություն էին

քաշում։ Խնդիրքը կատարվեցավ, ու ինքն էլ արքայական պսակին ու թոշակին (պենսիա) արժանացավ։

Ո՞վ չի զարմանալ, որ սրա ախպեր Գալուստը ինչ ժամանակ Հասան խանի ձեռը գերի ընկավ, ու ուզում էին, որ գլուխը տան, Նաղի խանը մեջ ընկավ ու նրան ազատել տվեց։ Սարդարն էլ էն պայմանով նրան թողեց ու ֆարման տվեց, որ Շամշադնու, Ղազախ-Բոռչալվի մեծությունը որդոց-որդիս նրան կբաշխեր, թե կարողանար հայերի սիրտն առնել, նրանց դարձնել, որ ղզլբաշին ծառայեն։ Հրամանն էնպես էր տված, որ թե չորս օրվա միջի խաբար չբերի, գլուխը հազար կտոր պետք է ըլեր։ Բայց նա էս բոլոր արէնը աչքի տակն առած՝ էկավ ու թղթերը Մատաթովին տվեց։ Հասան խանը հազար ոսկի նրա գլուխը բերողին, երկու հազար՝ նրան սաղ-սաղ բռնողին էր խոստացել։ Շամշադնու սարերը, ձորերը գիշեր-ցերեկ գող ու ավազակ ղզլում էին, որ նրան բռնեն, իրանց պարգևն առնին, բայց շատին ինքը իր թրին պարգև արեց։ Ի՛սքան անվանի, է՛սքան քաջության տեր էր էս օջախը, բայց էլի ով Գրիգոր եպիսկոպոսին տեսներ, հոգին հետը կերթար. է՛ն զարմանալի սրտի տերն էր, է՛ն քաղցր լեզուն, է՛ն անուշ բնությունն ուներ։ Երեխի պես կնստեր, կպատմեր, ինչ գլխովն անց էր կացել։

Բայց ի՞նչ հարկավոր է բանը երկարացնել։ Քանի Կովկասյան սարը կա, Մատաթովի ու սրանց արածը հավիտյան կհիշվի, կասվի։

Միթե Ներսես եպիսկոպոսը չէ՞ր, որ գրաֆ Պասքևիչի հետ մտավ Հայաստան ու հայոց մեծ մասը՝ քարոզելով, հորդորելով, ոսի ձեռի տակը բերեց։ Քանի՜, քանի՜ քաղաքներ, գեղեր դարտակվեցան ղզլբաշի ու օսմանցվի երկրումը ու քանի՜սն էր Հայաստան, Վրաստան նրանցով լցվել։

Ո՞ւր թողանք էն մեր հոյակապ իշխանքը՝ Բարսեղ, Մանուկ, Մկրտիչ աղեքն բայազդցի, աշխարհահռչակ տունն Տիգրանյան ղարսցի, որ, ինչպես հայր, իրանց բոլոր հարստությունը վատնեցին, փչացրին ու իրանց աղքատ ժողովուրդը պահելով՝ բերին էս կողմը։ Էսօր էլ նրանց անունը տալիս՝ բայազդցիք ու ղարսցիք ուզում են երեսներին խաչ հանեն, էնքան անթիվ է նրանց հերությունն ու լավությունը ազգի վրա։

Միթե էս բայազդցի՞ք չէին, որ երբ մեր զորքը նրանց քաղաքն առավ, մեկ քանի օրից ետը հանկարծ Վանա փաշեն մեծ ղոնշունով որ էկավ, Բայազդի չորս կողմը բռնեց, էս քաջ հայերը հոգին ատամների տակն առած, է՛ն տղամարդությունը ցույց տվին, որ դեռ Երևան չեկած՝ շատր աստիճան, խաչ ստացավ։ Էսօր էլ որ էս ողորմելիքը Թիֆլիզումը, մշակություն անելիս կամ բաղնսներումը ծառայելիս, խոսք ա ընկնում,

էն կտրատված շորերիցը էլի իրանց խաչերը հանում, գոռողությունով ցույց են տալիս իրանց արնի գինը։

Կարելի է, թե պատմությունը, որ հայի համար քոռացել, մեծ-մեծ ազգերի ա գլուխը ման ածում, էլի մոռանա, բայց աղգասեր հայն ի՞նչպես չպաշտի էն արժանիցի Մանուկ աղայի գերօրինակ քաջությունը ու հրակայությունը, որ դեռ Բայազիդ չառած՝ առյուծի պես, քառասուն քաջ հայազգի քամակին, Մասսա սարին նայելով, իր ազգի մեծությունը միտքը բերելով՝ թն էր առել, սար ու ձոր ոտնատակ տալիս, փաշին ու բոլոր Բայազդու գավառը պահում, քրդերին քարեքար տալիս, հալածում։ Տասը տարուց ավելի էնպես իր աշխարքին տիրություն էր անում. վաթսուն մարդով շատ անգամ երկու-իրեք հարյուր քրդի մեջ մտել, ջախջախել, դուս էր էկել, ու ինչ ժամանակ Պարսից կռիվը բաց էլավ, արծվի պես ընկել էր Մասսա էս կողմը ու Հասան խանի ղոնշունը շատ տեղ կոտորել, ջնջել էր։ Էնպես որ, խանը անճարացած՝ գրեց փաշին, որ յա Մանուկին կորցնի, յա թե չէ հազրվի, որ վրեն կռիվ կգնա։ Հսկա, բայց տարաբախտ Մանուկ աղեն էն օրը, որ էս խաբարն ընկնում ա քաղաքը, դալիս ա, որ բարութ առնի։ Փաշեն, որ նրան աչքի լսի պես էր սիրում, կանչում, աղի արտասունքով խնդրում ա, որ անպատճառ գլուխն առնի, քաշվի, բայց քաջասիրտ Մանուկ իր տղամարդության ապավինելով՝ աստծն անկաջըվեր անում ու գալիս, մեկ դուքանի առաջի վրեց տալիս, որ տասը ղզլբաշ հանկարծ վրա չեն թափվում, վեցին էլ սպանում ա ու հետո ա հոգին տալիս ու խաչվում։ Էսօր էլ ինչ բայազդցի նրա անունը տալիս ա, ծուխը քթիցը դուս ա գալիս։ Լիս կարի՛ գերեզմանդ ու հողդ, անպարտելի՛ հսկա։ Ա՜խ, ե՞րբ կըլի, որ քո հոգին գա, մեր ազգի վրա իջանի, որ մենք էլ մեր ազգին քե՛զ պես տիրություն անենք, քե՛զ պես մեռնինք։

Ո՞ւր թողանք ղարաբաղցոց, երևանցոց ու լոռըցոնց արածները, որ քար ու հող ղզլբաշի արնովը լվացել, արին են թափել։ Ղորդ ա, էն վաղուցվան հիանալի մելիքները չկային, ամա նրանց հոգին շա՛տ տեղ էր մնացել։ Ղզլբաշի շատ ղոնշունի գլուխը սրանք կերան։

Ա՜խ, ո՞ւմ մտքից կերթա է՛ն հսկա կերպարանքը, է՛ն գեղեցիկ պատկերը, է՛ն անոշ լեզուն ու անօրինակ ռաշիդությունն ու սիրտը, որ շուլավերցի Սոսի աղեն ու մելիք Հոհանջանն ունեին։ Հրեղեն վիշապի պես ընկել էին Քաշվեթու ու Բոլնիսի սարերը, որ թշնամու առաջը կտրեն, տեղ չտան, ու ինչ ժամանակ խաբարը նրանց է հասնում, թե Նեմեցի Կոլոնիեն տվին, քառասուն կտրիճ տղերք քամակին, իրանց մովրովն էլ մեջքներումը՝ է՛ն վախտն են վրա հասնում, որ քուրդ Օքյուզ աղեն վաղուց Կոլոնիեն քանդել ու իրեք հազար մարդով եսրների կեսը կոտորել, կեսը

առաջն արել, տանում ա։ Արինն աչքներն առած՝ ընկնում են էս մեկ բու-
որ ղորքը էն անթիվ բազմությունի եւնիցը։ Քուրդ ու ղարափափախ՝
եսրները տալիս են մեկ քանի մարդի ձեռք ու իրանք ետ դառնում։ Էս
միջոցումը մոլրոլը հայի ղոնշունն առնում, փախչում ա, որ իր գլուխը
պրծացնի. միմիայն քաջն Սոսի մեկ քարի տակի, իր կտրիճ ընկեր մելիք
Հոճանջանի հետ ղայիմանում, ու մեկը մեկէն ձեն են տալիս.

— Նամարդությունն ու թուլությունն տղամարդի համար ամոթ ա,
քաջությամբ մեռնինք, որ մեր որդիքն էլ իմանան, թե մենք էլ ենք սիրտ
ունեցել ու մեր երկրի թասիբը քաշել, մեր աշխարհի սիրով մեռել։ Էս
մուտտառ արինն էլ ընչի՞ ա պետքը, որ էսպես օրը չենք թափիլ։ Զոլումը
մեռնիլը տղամարդություն է։

Ճանանչ թուրքեր ձեն են տալիս.

— Սո՛սի աղա, քո աղ ու հացը շատ ենք կերել, մեր աչքը կբոնի,
թե քեզ վրա թուր բարձրացնենք։ Մենք քեզ կտանինք, սաղ-սալամաթ
ճամփու կքցենք. մի՛ անիր, գլուխդ մահու մի՛ տար, քե՛զ ենք ափսոս
գալիս, արի՛, քեզ խնայի՛ր։

Բայց հսկայն Սոսի՝ կասկած ունելով, թե իրանց կբռնեն, եսիր կա-
նեն, նրանց խոսքին չի՛ նայում ու առաջի թվանքը որ չի քցում, Օքյուզ
աղի տղեն է սֆթա ձիու շլինքումն ընկնում։ Կատաղած հարամին ընչանք
վրա կհասներ, մեկ տասնըհինգ մարդ էլ սպանում են էս կտրիճ հսկայքը
ու թուրընները հանած, երբ բարութները հատնում ա, ընկնում են գազանների
մեջը, առյուծի պես։ Ընչանք իրանց հոգին կտային, մեկ տասը հոգի էլ
թրի են մատաղ անում ու իրանք աստծուն մատաղ ըլում։

Հանգի՛ստ ձեր սուրբ ոսկերացը, ո՜վ քաջ նահատակք։ Ձեր ջիվան
ջանի արինն ա, որ էսպես սիրտս կրակում ա։ Ի՞նչ հայ ձեր անունը լսի ու
ձեր լիս գերեզմանին ողորմի չասի, ձեր հիշատակը իր սրտումը չգրի։
Մի՛ իմանաք, թե ձեր ազիզ արինը նհախ տեղը թափվեցավ. էդպես պատ-
վական արինն էր, որ աստուծո սիրտը գութ քցեց, մեր աշխարհն ազատեց
ու էսօր էլ է՛ն ձեր նահատակության քարի տակիցը ձեն ա տալիս.

— Հա՛յք, մե՛զ պես մեռեք, որ անուն ճարե՛ք։

Էսպես օրինակներ հազարները կան, բայց էլի մենք մեր պատմու-
թյան տուտն սկսենք։

Բարեխնամ կառավարությունը տեսնելով, որ աշխարքն էսպես ոտի
տակ ընկավ, հրամայեց, որ Փամբակ, Շորագյալ քոչին, գան Լոռի, որ
իրանց պրծացնեն։ Աստված հեռու տանի, ինչ խալխի հալն էր։ Որի ախ-
պերը չկար, որի հերը, որի որդիքը, որի մերը։ Ղարաքիլիսեն, ինչ տեղ
որ իշխանն Սավարզամիրզա կենում էր, դառել էր սգատուն, գողգո-

թան։ Անօրեն պարսիկքն ու թուրքերը ձորից, սարից, օրը ճաշին, մեր աչ-
քի առաջին, մեկ թվանքի մանգղիլ տեղ, վրա էին տալիս գաղանի պես
ու տավար, մարդ եսիր անում՝ կամ տանում, կամ գլուխը կտրում։ Ո՛չ
ցերեկն ունեինք քուն, ո՛չ գիշերը։ Մեկ ձիու ոտի կամ թվանքի ձեն մե-
րուցը գալիս՝ աշխարքն աշխարքով էր դիպչում։ Հերը որդին ուրանում
էր ու աչքը ջուր կտրած, շլինքը ծուռը՝ մտիկ անում, թե հրես, որտեղ որ
ա, հարամին կգա, նրան սուրը կքաշի։ Մեկ դաստա սալդաթ ու մեկ քա-
նի ղազախ, որ գնացել էին ճամփեն բռնեն, էնպես ջարդված, յարալու-
փարալու ետ էկան, որ մարդի գլխին կրակ էր վառվում։ Մեկ օր Նաղի
խանը էսպես վրա տվեց, Պշլաղ ասած գեղն էրեց ու Ղարաքիլիսու վրա
էկավ։ Էլած-չէլած ղոնշունը թոփերն առած՝ քաղաքի առաջը կտրեց,
խալխն էլ տուն ու տեղ բաց թողին ու իրանց էրեխեքանց ձեռը բռնած՝
գնացին, թոփի տակը մտան։ Ռուսաց քաջ հոգին էր, որ մեզ ազատեց։—
Վաղուց էինք սրբություն առել ու մեր սև օրին աչքըներս կթել։
Խալխը քոչիլ չէր ուզում, չունքի սրի ձեռիցը սովի ձեռը պետք է
ընկնեին, ու չէին ուզում էլ, որ իրանց քաղցր հողիցը բաժանվին։ Մըտ-
քիցս չի գնալ էն դառն օրը, որ հրամանն էկավ, թե անպատճառ քոչին։
Ո՞վ կուզեր ախր է՛ն տունն էրել, որտեղ որ իր հերնըմերը կացել, իրան
կաթը տվել, պահել, մեծացրել, մեռել էին. է՛ն իգին իր ձեռովը քանդիլ,
որ դառը քրտնքով բհամ բերել, էն տեղն էր հասցրել։ Հաչաթ, զարդ, տան
կայենք, ինչ կար չկար, բոլոր կրակ տվին, ինչ ժամանակ ոսի ժամի
մուխը տեսան, որը որ մեծավորը ի՛ր ձեռովը կրակ տվեց, ու սկսեցին
լալով, սգով իր քաղցր, ազիզ սիրելյաց գերեզմանը համբուրի, բարով
մնա ասիլ իրանց հողին, ջրին, թոփի, սալդաթի մեջն ընկնիլ ու Դվալի
սարի է՛ն կողմն անցնիլ։ Դեռ կիսաճամփի էինք, որ Նաղի խանը իր ղոն-
շունովը էկավ, մտավ Ղարաքիլիսա, ու սարի դոշիցը ամեն մարդ իր տան
կրակի ծուխը տեսնելով՝ քթի ծուխն էլ հետն էր դուս գալիս, ու աչքը
խփում էր, որ էս կսկիծն էլա չտեսնի։ Քոչվորի մեկ տուտը Ջալալօղլի
էր հասել, մեկը դեռ հլա սարի էն կողմն էր։ Թուրքերը ջամդաքակեր
գիլի պես գլխըներիս պտիտ էին գալիս ու սարից, ձորից թվանքները մեզ
վրա կրակում։ Էն օրը գնա, ո՛չ ետ գա, ինչ մեր հալն էր։ Լացի, աղի ձե-
նը երկինքն էր հասել, լսողի, տեսնողի սիրտը էրում, փոթոթում։

Խալխը սար ու ձոր լցվել, իրար վրա էր թափել. ո՛չ տուն կար, ո՛չ տեղ,
ո՛չ հաց, ո՛չ ապրուստ։ Ով բարեկամ կամ ծանոթ ուներ Լոռի, գնաց, նրա
մոտ վեր էկավ. ով հարուստ էր, գլուխը պահում էր. ով մեկ աստվա-
ծասերի ռաստ էր գալիս, գեղարենքումը իր քյուլֆաթին մեկ տաք գոմ
էլա ճարում, նրանց տեղավորում էր, ով չէ՛, սարում, ձորում, էրում,

քարափում բուն փորում, մեջը մտնում ու գլուխն ու մեջքը լեռ քարին տալիս։ Լոռվա ձորի մեջը, էս գլխիցը էն գլուխը, խալխ էր, որ իրար վրա վեր էր թափել. շատը հողն էր ծակել, մեջը մտել. շատը փետեր իրար վրա տվել, տակին կուչ էկել, բայց հաց, ջուր, ապրուստ ո՞րդիանց ստանային ողորմելիքը։ Հացի կոտը դառավ օխտը-ութ մանեթ, էն էլ չէր ճարվում։ Սարերումն՝ էլ բանջար, խոտ չէր մնացել, քաղել, կերել էին։ Ձուկը բըռնելով, ֆորս անելով ի՞նչպես կարելի էր տուն պահել. քչիցը, ամեն մեկ տան տասը ջան կըլեին։ Էլ սատկած տավար չմնաց, որ չմորթեն, չուտեն։ Շատ հեր, շատ ախպեր իրանց օղլուշաղի, քուփա էրեխեքանց ձենին չդիմանալով՝ տասնով, քսանով հավաքվում, գլխները փեշըներին էին դնում, էլ ետ թաքուն Փամբակ գնում, որ հաց բերեն. բայց, ա՜խ, որը եսիր էր ընկնում, որը գլուխը թշնամուն տալիս, իր տունը քանդում։

Զմեռն էլ էկավ, վրա հասավ։ Մարդ, անասուն սովի, ցրտի ձեռիցը ազար ընկավ։ Աստված ո՛չ շհանց տա, ի՞նչ էս խեղճերի հալն էր։ Քար էր, որ գերեզման էր դառնում, հող էր, որ ջիվան-ջիվան երեխեք, իրեքչորս օր սոված, թաղաթը կտրած՝ տակովն անում։ Մեկ հացի ֆոտ դուս գալիս, հազար աղքատ՝ շլինքը ծուռը, դունըդ կտրում. չտայիր, սիրտդ էր էրվում, տայիր, երեխեքդ մնում սոված. կարոտ լինք մնացել, որ ցամաք հացն էլա կուշտ փորով ուտենք։ Ով ինչ զարդ, զինքս ու զարդարանք, արծաթեղեն կամ մարգարտեղեն ուներ, որը ծախեց, որը գրավ դրեց։ Շատը որդիքը տարան Շուլավեր, Բոռչալու, եսիր տվին։ Իմ տան տերը դերձիկ էր։ Որ գնում չէր, բանում ու մեկ քանի շաբթից ետը մեզ համար հաց բերում, հենց իմանում էինք, թե երկնքիցը հրեշտակ է գալիս։ Էսպես՝ հազարավորք մեռան, սովամահ էլան, ու շատ փայն էլ էկավ, ընկավ Վրաստանու հողը ու գլուխը պրծացրեց։ Էսպես ա հայն իր խեղճ օրը հազար տարի պահել, իրան էս տեղ հասցրել, մեկ թշնամի ոտը բարձրացնելիս՝ նրա գլուխը ջարդվել, նրա տունն ու տեղը քանդվել, էլ ի՞նչ անօրեն, անգութ մարդ պետք է ըլի, որ հայի միսն ուտի ու նրան չխղճա։

Հիմիկ էս թողա՛նք, գնա՛նք էլի մեր սիրելի Աղասու մոտ, տեսնի՛նք, ո՞ւր մնաց, ու ի՞նչպես պետքը նրա բանը վերջանա։

<2>

Էս խառը, դառը, ալեկոծյալ ժամանակին էր, որ մեր իգիթ Աղասին հինգ տարի սարեսար, քարեքար ընկած, հինգ ընկերքցը իրեքը կորցրած, երկուսը քամակին, մեկի անունը Կարո, մյուսինը՝ Մուսա, մեկ տասը-

քսան քրդստանցի հայ էլ իր թրի տակը բերել, սար ու ձոր չափելով՝ ման էր գալիս։ Մեկ օր Անի էր ըլում, մեկ օր՝ Ղոշավանք, ու էստեղ-էնտեղ չափմիշ անելով՝ գլուխը պահում էր, որ յա իր ջիգրը հանի, յա մեկ հազար մարդ էլա սպանի, հետո հողը մտնի, որ սրտումը դարդ չըմնա։ Ավելի Անի էր նրա բնակության տեղը, որտեղ որ հարիրավոր ղզլբաշի գլուխ էր թրին մատաղ արել։ Էստեղից էր, որ վրա հասավ ու իր չար թշնամի Հասան խանին ճանկեց, ամա ջահելությունն ու խաչապաշտությունը նրան գլխից հանեցին, նա խաբվեց ու հազիր ձեռն ընկած ֆորսը էլ ետ բաց թողեց։

Մեր կարդացողների լավ մտքին կըլի, որ նա, երբ Քանաքեռ սարդարի ֆառաշներին սպանեց, ինքն էլ էնպես մնաց ազիզ Թագուհու ու իր արածի վրա սառած, կանգնած։ Ընկերներն էլ ժամանակ չկորցրին. գիտեին, որ բոլորի վերջը մահն է, էլ ո՛չ հոր մտիկ արին, ո՛չ մոր, Աղասուն կապեցին ձիու վրա ու ընկան Ապարանու սարը, որ կամ Փամբակ փախչին, կամ Ղարս, կամ Ախլցխա, որ իրանց գլուխը թափեին։ Էրկու սհաթից ետը ի՞նչ Քանաքռու հալն էր, աստված ո՛չ նշանց տա։ Սուգ ու շիվանն ընկավ գեղը. տուն էր, որ քանդում էին. մարդ էր, որ փետ ու մխ էին արել, փախածներին պտրտում. Նրանց հերնըմերը, օղլուշաղը թրի տակ արած՝ մեկ սհաթի միջումն որի շլինքը թոկ քցած, որի ձեռները ետևին կապած՝ ոչխարի պես առաջ արին, որ տանին սարդարի դուռը։

Որդի էր առաջները գալիս, որ հոր ճտովն ընկնի ու իր վերջին բառովն առնի. աղջիկ էր մոր դոշին ընկնում, որ հոգին տա. հարսն էր մեջ ընկնում, փեսա էր ոտներովը փաթաթվում. որին թրով էին յարալու անում, որին թվանքի ոքով ջարդում։ Քար էր ընկնում ձեռները, վրըներն էին քցում. փետ էր պատահում, գլխներին խփում։ Շատին էլ տան սներիցը կապել, էնպես էին չիփ-չիփլախ ոտին, գլխին վեր հատում, որ մեկ ձենը երկինքն էր հասել, մեկը՝ գետինը։ Սաղ գեղը պոկ էր էկել. որը գլխաբաց, որը բոպիկ ոտով, որը յարալու, որը կուռը կոտրած՝ արնաթաթախ, երեսը պռճռկելով, գլխին, դոշին տալով. որը ջուրն էր ուղում ընկնի, որը քարափնըվեր։ Քեդխուդեքն էլ հո, ձեռ-ձեռի կապած, էնքան ոտի, թվանքի տակ էին ընկել, որ ջաներումն էլ սաղ տեղ չկար։

Էս հալին տարան Երևան. գնացին բերդը։ Կնանոնցը քարով, փետով դեն արին, մարդկերանցը ներս քաշեցին, ու անկուշտ Երևանի բերդը տամները սրեց, որ էս նոր էկած ղոնաղներին էլ փորումը լավ տեղ տա, մարսի։ Երկար վախտ դեռ նրանց ձենը բերդիցը, կնանոնցը՝ դրսիցը, իրար էին հասնում, իրար գլուխ գալիս, մինչև քամին բոլորի ձենն էլ կըրեց,— աշխարք դինջացավ, դահիճքը կատաղեցին։

էս միջոցին խաբար հասավ Սահակ աղին։ էս Երևանու հայերի փըրկիչը, որ ազգով, պապով էնքան հոգի, տուն ազատել էին բանտից, մահից, սրից, թրից, որ թիվ ու համար չկա։ Ջին թամքած՝ տանը հալիր էր. թռավ ձիու քամակը ու նոքար, բեքար առաջն արած՝ է՛ն սհաթին հասավ բերդի դուռը, որ կնիկ, օղլուշաղ, քար, հող ուզում էին պոկեն, ղլխընեբին տան, բայց քարն էնքան անիրավ չէր, որքան անաստված ֆառաշները։ Ջին որ չքշեց մեկի վրա ու ղամշով գլխին տրաքացրեց, տասը տեղ գունդ ու կծիկ անելով՝ մնաց քամակի վրա ընկած։

— Հենց է՛ս սհաթին փորդ վեր կածեմ,— ասեց,— սա՛տկած շուն, քո ի՞նչ հադդն ա կնիկարմատի ձեռ վրա բերես։ Կապեցե՛ք էդ շներին, հենց էս սհաթին դրանց թոզը քամուն տալ տամ, դրանց սոյին նա՛լլաթ։

էս խոսքի վրա նոքարները էլ վախտ չի՛ կորցրին, վրա թափեցին ու հենց, էն ա, էստեղ-էնտեղ շատին բողմիշ արել, ուզում էին ոտ ու ձեռ կապեն, որ բիրդան Սվանղուլի խանը բերդիցը դուս էկավ։ Թուրքերի միջին, կարելի է, մեկն էլա էնքան հայի թասիբը չէր քաշում, ինչքան էս օրհնած խանը։ Նրան էլ որ էն դ՞հիցը դուս գալիս չտեսան, թուրք, հայ մնացին փետացած, կանգնած։ Բայց ո՞վ էր կարող էս հաղաղին էն նաշար, ջրատար եսըրների օղլուշաղի ձեռ ու ոտ կապիլ։ Հարայ տվին ու ընկան ձիու ոտը.

— Խա՛ն, գլխովդ ման տանք, ոտիդ հո՛ղ դառնանք, մեր ձեռն ա, քո՝ փեշը. վերևումն՝ աստված, ներքևումը՝ դու. մեզ տա՛ր, ջուրն ածի՛ր, մեզ էստեղ սպանի՛ր, սուրը քաշի՛ր, ձիուդ ոտի տակին մատաղ արա՛, մեզ մի ճար արա՛։

Բարեսիրտ խանը ձին ետ քաշեց, ֆառաշներին ղամշելով դեն արեց, որին իսկույն վեր քցիլ, բերանը հող ածիլ տվեց, որի ատամներն ու գլուխը մաշկի նալլով լավ տրորիլ տվեց, մյուսներին էլ բերդն արեց ու ինքը աղլուխը աչքին դրած՝ սկսեց ձեռը մելիք Սհակի գոտիկը քցիլ ու ասիլ.

— Ա՜խ, ճամփեն փուշ ու տատասկ դառնար էս անիծած ղաջարի, որ մեր հողը չմտներ։ Աշխարքը քանդեցին, աստված մեկ քար էլա չի՛ քցում սրանց գլխին, որ սատկին, փչանան։ էս ի՞նչ ա էս խեղճ խալխի հալը։ Մեկ աղջկա խաթեր էսքան տուն քանդիլն աստված ի՞նչպես ա ղաբուլ անում։ Աստված մեր թուրը մեկ օր մեր սիրտը կցցի, էս զուլումին քարը չի՛ դիմանալ, ո՞ւր մնա մարդը։ Գնա՛նք, Մա՛լիք, գնա՛նք, կես սհաթ որ ետի վրա հասնինք, էն խեղճ բռնվածների տունը կքանդեն՝ յա աչքները կհանեն, յա գլխները կկտրեն։ Աֆա՛րիմ, Ա՛ղասի. էս սհաթին էստեղ ըլի, աչքին պաշ կանեմ։ Ռաշիդ տղեն էնպես կըլի, ամա ի՞նչ անես,

որ անօրենի ձեռի ենք մնացել։ Գնա՛նք, վախտ կորցնիլ պետքը չի։

էսպես խոսեց էս արժանահիշատակ թուրքը, որ ամեն սհաթի հայերի համար գլուխը եա էր դրած։ Նոքարներին հրամայեց, որ էն կնանոնցն ու Թագուհուն իր տունը տանին, ընչանք ինքը գա, ու ինքը Սհակ աղի հետ մտավ բերդը։ Ղարավուլները սրանց որ տեսան, մնացին փետացած կանգնած։ Երևանու բնիկ թուրքերը, որ հայի հետ մեկտեղ մեծացել, ախպոր պես էին վարվում, սարդարին, Հասան խանին անիծելով, թքելով, ղզլբաշի վրա ատամները ղրճտացնելով՝ քիչ-քիչ քաշվեցին ու դեմը գնում էին, դեմը ասում.

— Տե՛ր աստված, ե՞րբ կըլի, որ քո ողորմության դուռը բացվի, ու մենք էս անիծած ղզլբաշի ձեռիցը մեկ օր ազատվինք։

Ջունքի սրանք երլու ըլելով՝ չէին ուզում մեկ օր էլա նրանց ծառայեն, ու շատ անգամ հայերի հետ միացել, քշել էին նրանց, ամա թրի զոռով էկել, էլ ետ երկիրը զավթել էին։

— Սարդա՛ր գլխի՛դ ղուրբան,— ասացին Սվանղուլի խանն ու Սհակ աղեն ու ձեռ-ձեռի տված՝ ընկան դիվանխանեն հենց է՛ն սհաթին, որ խեղճ հայերի կռներն ու աչքերը կապել, չոքացրել էին, որ գլխները տան։ Դահիճները թուրըները սրել, գլխներին կանգնել էին։— Սա՛րդար, մեր գլուխն էլ սրանցի հետ տո՛ւր,— ասեցին, չոքեցին ու ուզում էին իրանց ձեռովն իրանց աչքը կապեն։— Տուն, մալ, դովլաթ, օղլուշաղ, ղովում, ղարդաշ՝ գլխիդ եսիր ըլին։ Ջեռըներիցը բռնի՛ր, ջուրն ածի՛ր, մեր հոգին ա՛ռ ու էս անմեղ խալխին սուրը մի՛ քաշիր։ Սարը քո առաջին գլուխ չի բարձրացնիլ, ծովը, քեզ տեսնելիս, բերանը կփակի. ոտդ թափ տաս՝ երկիրը թև կառնի, կթռչի. արարած աշխարքը թրիդ առաջին ղուլ ա դառել. անունդ երկնքումն ա ձեն տալիս. ոտդ որտեղ դնում ես, ծաղիկ է դուս գալիս. աչքդ որտեղ քցում ես, արեգակ է բաց ըլում. ի՞նչպես ես մեկ լաշար աղջկա խաթեր, մեկ-երկու նոքարի խոսքով՝ էսքան տուն քանդում. բաս ո՞ւր մնա քո ռահմն ու քյարամաթը, որ ալամ աշխարք տեսել, զարմացել ա։ Ի՞նչպես էս էդ հալալ բերնիդ լայեղ տեսնում, որ սրանց արինը վեր ածիլ տաս։ Քո քոշք ու սարեն ողորմության դուռն ա, ընչի՞ ես արնի տեղ շինում։ Սրանց ծեր հասակին, սրանց խեղճ եթըմներին խնայի՛ր։ Սրանք ի՞նչ են արել, որ մեկ տղի, մեկ թուլի, հարամու գըլխին եսիր ես անում։ Երկինքն էլ ա քոնը, ի՞նչ թե երկիրս։ Արարած աշխարքս քե՛զ ա գլուխ վեր բերում. մեկ աղջիկն ի՞նչ ա, որ նրա խաթեր քո խալխի տունն ուզում ես քանդես։ Աղջիկ ես ուզում, հազարը կա։ Ո՞ւմ աչքդ առնի, որ քեզ մատաղ չըլի։ Մեր ջանն ուզի, որ քեզ տանք, աղջիկն ո՞ւմ շունն ա։ Դո՞ւ չես, որ էդ հալալ բերնովդ ամեն օր ասում ես. Հայե-

րը քո աչու թևն են, քո երկիրը շենացնողը, խաղինեդ լցնողը. քո Թուրք կտրուկ, երեսդ պարզ անողը նրանք են։ Ի՞նչ կըլի, որ էս սհաթին քո ցասումդ մեզ վրա թափես, սրանց խեղճ գաս։ Ասլանին ի՞նչ փառք՝ գառի գլուխը ջարդի։ Չէ՛, սրանք քո չրաղն են, քո ըմբրիդ դվաշին. ընչի՞ ես նհախ տեղը կորցնում։ Անողը պետք է բռնած, սրանք ի՞նչ մեղք ունին։ Ում ձեռն արնոտ ա, նրա աչքը պետք է հանած, սրանք ի՞նչ են արել։ Սա՛րդար, երկնքի, երկրի տե՛ր, սա՛րդար. Դու չես մեր շիրնքը տալ, մե՛նք մեր Թուրը մեր սիրտը կխրենք։ Թե մեր արինը քեզ համար թանկ ա, սրանց գլուխը մեզ բաշխի՛ր։ Քո ղռան շունն ենք, մեզ մի՛ կորցնի՛ր։

Էսպես աղաչանք արին ու չոքըչոք, Թրըները տարան, սարդարի առաջին դրին, ոտի տակն ու փեշը համբուրեցին, երեսներին քսեցին ու գլխըները գետնին կպցրին, որ տեսնին, թե բանն ինչպես ա վերջանում։

— Ջեռներս կապում եք, խա՛ն, Մալի՛ք,— սկսեց սարդարը բերանը բանալ,— ի՞նչ անեմ. ի՞նչ կըլեր, մի քիչ ետի էիք էկել։ Ինչքան բարկացած էլ որ ըլիմ, ձեզ տեսնելիս՝ Թուրը ձեռիս, ձեռս Թուլանում ա։ Մինչև ե՞րբ էս կրակը մեր երկիրն էրի։ Հայ ազգը ո՛չ Թրից ա վախենում, ո՛չ Թվանքից, ո՛չ Թոփից։ Կրակն ես քցում, էլի իր հավատն ա պաշտում. ծառին ես կախ անում, միսը պոկում, բերանը տալիս, էլի իր խաչն ա պաշտում, իր Քրիստոսի անունը տալիս։ Էս մեկ կտոր փետն ի՞նչ ա ախր, որ սրանք էսպես ապավինել են. որդին ես քշում, ինքն ա հետը կրակն ընկնում. հորն ես բռնում, որդին ա գլուխը մահի տալիս։ Սրանց մեկ կնիկ են տալիս, մեր օրենքը՝ քանի որ քեֆդ ուզի։ Ռահաթություն, մշակություն են անում, բուրդ հաքնում, ցամաք հացի կարոտ, մենք սրանց խանություն, բեկություն, աշխարք, պատիվ, դովլաթ, մեծություն ենք տալիս, ախր ընչի՞ համար չեն խելքի գալիս, մեր մասսաբին, օրենքին հավանում, մեր հավատը ընդունում, պաշտում։ Բոլորը ջնջես՝ աշխարքը կքանդվի, չունքի երկիր շենացնողը, հաց տվողը սրանք են։ Արևի, անձրևի, կռռի, բեգյարի տակին չորացել, չոփ են դառել, էլի որ մեկի մազին դիպչում ես, ասլան ա դառնում, մարդի պատռում։ Էսքան մեր ազգը սրանց կոտորեց, եսիր տարավ, աշխարքը քանդեց, էլի խելքի չէկան։ Շահություն էլ որ խոստանում ես, իրանց գլուխն են դեմ անում, էլ ի՞նչ ասես։ Մեկ մարդ փլավի, մսի տեղ խոտ, բանջար ուտի, ամսներով պաս պահի, ցամաք հացի ապով մնա, ախր էն գլխումն էլ ի՞նչ խելք կըլի։ Ախր ի՞նչ սատանա է սրանց սիրտը մտել, սրանց ճամփից հանում։

Մեր փեղամբար Մահմադն ասում ա՝ Թշնամուդ աչքը հանի՛ր. սրանց Քրիստոսն հրամայում, որ նրան սիրես, քո աչքդ հանես, նրան տաս, նրան

օրհնես, Թե քեզ հալածի։ Էս խե՞լք ա։ Հավն էլ իր ճուտը ուրուրին չի տաւ լիս, սրանք ո՞նց են իրանց որդիքը իրանց ձեռովը մատաղ անում։ Մեկ սիրտ անեն, մեր հավատն ընդունին, տեսնին՝ մեր շահն ի՞նչ փառքի սրանց կհասցնի։ Ջաֆար խանին Թո՛ղ մտիկ անեն. մեկ ղարաբաղցի հոտաղի տղա էր, որ եսիր արի, հմիկ աշխարքի տեր ա դառել։ Խոսրովխանն ո՞վ էր, ո՞ւմ որդի, էնպես էլ՝ Մանուչար-խանը. հմիկ սաղ Իրանը զավթել են. շահն էլ են նրանք, շահզադեն էլ։ Շահի հոգին նրանց ձեռին ա. ասեն՝ նստի, կնստի, վե՛ր կա՛ց, վեր կկենա. ինձ նման հարիր սարդար, խան, շահզադա նրանց ձեռին են մտիկ տալիս։ Ստամբոլ են գնում Թեհրան են ընկնում՝ նահայի տղերքը՝ վաղիր ու փաշա են դառնում. ղիր ու խան. սրանից ավելի էլ ի՞նչ պատիվ կուզի մարդ, որ ստանա, ու սրանք էսպես քարացել, ոչինչ չեն ընդունում։ Մեր կուռը բեզարեց՝ սրանց կոտորելով, մեր Թուրը գլացավ՝ սրանց սպանելով, սրանք էլի, հենց գիտես, Թե խիարի սերմ ըլին. մեկ ղրաղիցը կտրում ես, մյուս ղրաղիցը դուս են գալիս, էլի հասնում, էլի կտրածի տեղը բռնում։

Մարդ կուզի՝ օր քաշի, կյանք վայելի, սրանք իրանց կյանքը իրանք են մահու տալիս, իրանց օրը իրանք խավարացնում։ Մեռնին իրանց հավատովը՝ դժոխքը պետք է գնան, սատանի ձեռքը։ Մեկ կտոր պանիր ուտին, մեկ ուշունց տալն, մեկ արած մեղքը չասին ի՞նչ զատ է, որ սրանք էնպես կարծում են, Թե իրանք դևի փայ կըլին, Թե որ չպահեն։ Մեր հավատովը՝ կե՛ր, քանդի՛ր, խմի՛ր, սպանի՛ր, քեֆ արա՛, աշխարքի վայելչությունը քաշի՛ր։ Կնիկդ փիս ա, դո՛ւս արա, ուրիշն ա՛ռ. ո՛չ պաս, ո՛չ ծում. աչքդ ի՞նչ սիրի, էն կե՛ր, էն հաքի՛ր, մաշի՛ր. մեկ չոռ սաղմի աղիքը վե՛ր ածա, քեզ ծուռը մտիկ անողի աչքը հանի՛ր, էլի որ մեռնիս, գնա՛ էն կյանքը, ի՞նչ դժոխք, ի՞նչ պատիժ. առաջիդ էլի հազար մոյդա ու աղջիկ պար կգան, քեզ քեֆ շհանց կտան. վարդի ջուրն երեսիդ կԹափի, ոսկեջուրն տակովդ կերԹա, սրանից ավելի փա՞ռք։ Էստոնք Թողած՝ հոգի ու հավատ կորցրել են էս հիմարները. էս դինումը ջոկ են տանջվում, էն դինումը հո, էլ ի՞նչ ասիլ կուզի, չունքի դրախտի բանալիքը մեր փեղամբարի ձեռին ա։ Ո՛չ սրից են վախում, ո՛չ փառքից խաբվում։ Ըրծկեր երեխեն էլ, Թուրքի անունը տալիս, ուզում ա՝ մարդի կտրատի։ Էլ ի՞նչպես համբերես, համբերությունը մեկ օր կըլի, երկու օր։ Սաղ Իրան հարիր անգամ սրանց գլխին փուլ էկավ, էլի տակիցը դուս էկան, շունչ առան ու տեղն ընկած վախտը մարդի սաղ-սաղ ուտում են, սրանց արածին ո՞վ կդիմանա։ Հմիկ էլ մեկ գյադա իմ ղլերին (ծառա) ա սպանել. ախր ի՞նչ անեմ. սիրտս բերնովս դուս ա գալիս, ի՞նչպես չի սրանց ղի-

մա-դիմա անես։ Ախր նա էս օձերի ճուտն ա. ընչանք մորը չսպանես, ձագը ձե՞ռ կընկնի։

Խա՛ն, Մա՛լիք, էլի ասում եմ՝ սրանց արածը տանելու չի, ամա դո՛ւք եք էկել իմ դուռը, ի՞նչ անեմ, ի՞նչպես ետ դարձնեմ։ Որ սիրտս ուզեք, գիտեք, որ կհանեմ, ձեզ կտամ։ Սրանց գլուխը ձեր արևին սաղաղ. թո՛ղ բխով քցեն դրանց ոտներն ու շլինքը, ու բերդումն ընչանք մնան, մինչև սուշլուն ինքն իրան ետ գա։ Հորնըմոր արինը քաղցր ա, վաթանի հողն ու ջուրն՝ անուշ։ Թո՛ղ սրանք գրեն իրանց տղերքանցը, խրատեն, որ ետ դառնան, թե չէ բանը փիս կգա։ Կուզեմ, որ է՛ն, է՛ն, է՛ն բեդովլաթ Աղասուն մեկ էլ տեսնիմ, մեկ էլ էն սուրահի բոյին նայեմ, հետո միսը բերանը տամ, որ սրտումս դարդ չմնա։ Թո՛ղ նա էլ, ուրիշներն էլ լա՛վ իմանան, թե սարդարի հրամանը գետինը չի՛ պետք է քցած, սրբի պես պաշտած, որ մեկն էլա չի՛ համարձակի էսպես բանն անիլ։ Թե չէ՝ հայերը գել կդառնան, մեզ կուտեն։ էլ էս երկրումը կենալ չի՛ ըլիլ։

Ասում եմ ձեզ, ա՜յ աղսախկալուք (ծերունիք), ղուռանի զորությունը գիտենա, թև առնին ձեր որդիքը, երկինքը թռչին, էլի նրանց վեր բերիլ կտամ. գետնի տակը մտնին յա ծովի, կհանեմ, թիքա-թիքա կանեմ. նրանք որ չգան, սաղ հայ ազգը թոփի բերնին կապիլ, քցիլ կտամ. թե խելք ունին, ձեզ խեղճ գան, ետ դառնան։ Հազար ձիավոր նրանց ետևիցն ընկած՝ սար ու ձոր ոտի տակ են տալիս, ղազախ, ղարափափախ՝ նրանց արինը խմում. թե մեկ ձեռս են ընկել, մեծ թիքեն անկաջները կմնա. ձիու պոչից կապիլ, քաշ տալ կտամ, թո՛ղ ձեզ խաթր անեն, ետ գան, թե չէ, որ ես բերիլ տվի, ո՛չ դուք կպրծնիք, ո՛չ նրանք։ Քյաբ ու ղուռանով, շահի գլխովն օրթում եմ ուտում. ասածս ասած ա, դուք գիտեք։ Գնացե՛ք. էսօր կգան՝ ազատ եք, էգուց կգան՝ նմանապես։ Ձեր ու ձեր խալխի կյանքը նրանցիցն ա կախ. թե ետ գան, բալքի թե սիրտս ռահմ ըլի ընկած, բարկությունս անց կենա, նրանց սպանեմ։ Սար ու ձոր առաջիս դողում են, նրա՞նք պետք է ինձ դեմ կենան։ Գնացե՛ք, միտք արե՛ք. ձեր գլխի դարդը քաշեցե՛ք։

Էս խոսքի վրա Սվանղուլի խանն ու Սհակ աղեն վեր կացան, աթոռի ոտն ու սարդարի փեշը համբուրեցին ու հազար անգամ գլուխ տալով, ոռըոռ անելով դուս գնացին։

Բանտը բաց արին, ու մեր խեղճ քեդխուդեքը մտան ներս. դուռը վրըները փակեցին, նրանք աչքըները բաց արին։ Թագուհին էլ էնքան ոտին-գլխին տվել, երեսը չանգռել էր, որ էլ սարդարի երեսը չկարացին բերել։ Սվանղուլի խանը տարավ իր տունը, որ նրա հոգսն էլ քաշի, նրան էլ ճար անի։

<3>

Բայց ինչ մեր Աղասու հալն էր, աստված ո՛չ շհանց տա։ Ձեռն ու ոտը կապած. դժոխքը փորումը, սադայելյան չար հրեշտակները գլխին պտիտ տալով՝ Զանգվի վրովն անց կացրին, ու, հենց բռնես, սար ու ձոր բետալով՝ Զանգվի վրովն անց կացրին, ու, հենց բռնես, սար ու ձոր բերանները բաց՝ նրանց ըլին ուզում կուլ տան, էնպես փախցրին նրան նրա քաջ ընկերքը։ Շատ տեղ իրանից գնում, քիչ էր մնում ձիուցը վեր ընկնի. էլի ընկերքը հասնում, երեսին ջուր էին ածում, անկաջները տրորում, ետ բերում. էլի նրա սիրտը գնում, ձիու գլխովն էր ուզում ընկնի։ Բազի վախտ որ բիրդանբիր «Թա՛գուհի, նա՛նի, բա՛բի, Նա՛զլու» չէր ձեն տալիս, քար ու հող ուզում էին կրակվին։

Հենց մութը գետինն առավ, նրանք նի մտան Ապարանու քանդված եկեղեցին, չունքի օրն էլ կարճ էր. արեգակը քիչ էր մնացել մեր մտնի, որ նրանք գեղիցը դուս էկան։ Ձիանքը որ շունչ չէին քաշում, աչքըները արին էր քցում, քիթ ու բերան՝ կրակ։ Ամեն մեկ շունչ քաշելիս փոր ու աղիք իրար էին կպչում, էնքան էին քշել։ Վարոն սկսեց ձիանը ման ածիլ, Կառոն՝ սար ու ձոր աչքի տակն առնիլ, ղարավուլ քաշիլ, Մուսեն՝ Աղասուն երեսին դրած մտավ եկեղեցու խարաբին, գլուխը դրեց գոգն, ձեռը՝ երեսին, ու աչքը երկինքը քցեց, որ իմանա, թե աստղերն ի՞նչ են ասում։ Մեկելներն ընկան դես ու դեն, որ ձիանոնց համար մի քիչ եմ (ուտելիք) ճարեն։ Բայց էն վախտին չոլումն ի՞նչ կըլեր։ Խոտի չոփերն էին մնացել տեղ-տեղ ցից-ցից կանգնած։

Երկինքն աչք ու ունք կիտած՝ իր չարխը պտտում էր հանդարտ. լուսինը ամպերի տակիցն մեկ երեսն հանում, շհանց տալիս, մեկ էլ ծածկում, կորչում էր։ Գերեզմանատունն էնքան սարսափելի չէր ըլել, ինչպես էս յաբանի չոլը։ Ամեն մեկ սարի արանքից կամ քարի տակից դժոխքի ձեն էր գալիս։ Գել, չարխալ, արջ՝ մեկ կողմից, դառնաշունչ բորյաղը, որ էստեղ, օրը ճաշին, մարդի աչք ու բերան կալնում, խեղդում է՝ մյուս կողմիցը, Սանդարամետը բաց էին արել, սար ու ձոր իրար գլխով տալիս։ Ամեն մեկ քար, ամեն մեկ թուփ նրանց աչքին դև էր դառել, ու ձին մեկ ոտը խփելիս կամ փռնչալիս՝ քարերն ուզում էին ճաքին, ձորերը՝ տրաքին։ Աղասին՝ նաֆասը փորն ընկած, որ բաղի անգամ ա՜խ չէր քաշում ու ոտին-գլխին անում, գետինն ուզում էր պատռվի, ընկերներին խոր տանի։ Նրա հավատարիմ շունը գլուխը նրա ոտի տակը դրել, մնացել էր փետացած։ Ձին էլ բերին, գլխավերևը կապեցին, որ բալքի նրա շունչն էլա Աղասուն մեկ ճար անի։

— Ջա՛նիդ ղուրբան, Ա՛ղասի, էս ի՞նչ օրն ես ընկել. մեր աչքը պտեր

դուս գար, որ քեզ էսպես չտեսնեինք, էս ի՞նչ ա քո հալը,— ասում էր ջիվան Մուսեն ու գլխին տալիս, երեսն երեսին դնում, ձեռը՝ դոշին. դամարի տալն ու ջանի տաքությունն էլ որ չէր տեսնում, գլխին կրակ էր վառվում։

Էն մեկել տղերքն էլ ձիանոցը ջուր տվին, ձեռները քամակներին քսեցին ու էլ ետ թամքեցին, լգամները բերանները տվին։ Թվանքների, փշտովների ոտներն էլ քաշեցին, ազղոթին թազացրին, ու ամեն մարդ, իր ձիու լգամը ձեռին, էկան, Աղասու չորս կողմը կտրեցին։ Աչքըներիցը արտասունքը գետի պես էր վեր թափում։ Հորնըմոր դարդը մեկ կողմից, իրանց սև օրը մյուս կողմից, իրանց սիրելուն էլ է՛ն հալին տեսնելիս՝ ուզում էին քար ու քոլ պոկեն, գլխըներին տան։ Մեկ սա էր ընկնում Աղասու վրա, մեկ նա։ Մինը ձեռն էր դնում բերնին, մինը գլուխը քաշում դոշին։

— Յարադանիդ ղուրբան, աստված, փառքդ շա՜տ ըլի. հենց է՛ս առավոտ ամեն աչք մե՛զ էր էրնակ տալիս, ի՞նչ արինք, որ մեզ էս պատժին հասցրիր։ Վա՜յ մեր խեղճ օրին, ա՜յ աղիզ ծնողք. երաբ սա՞ղ եք, թե՞ թրի տակին մնացիք. երաբ թո՞փ ձեզ գետնին խփեց, թե՞ զընդան ձեզ մեջն առավ. երաբ մե՞ր ցավն եք քաշում, թե՞ ձեր սև օրը լաց ըլում։ Տե՛ր աստված, տե՛ր աստված. ո՞ւմ մեկ չոռ ասեցինք, որ մեր առաջն էկավ։ Ո՞ւմ մեկ ծուռն աչքով մտիկ արինք, որ մեր գլխին էսպես բարկացար։ Արյան ծովն էկել, չորս կողմըներս բռնել ա, ո՛ր կողմն էլ ձեռն ենք ածում, կրակ է ընկնում ձեռըներս։ Էստեղ մեր թագավորներն էին վաղ ժամանակը քեֆ անում, իրանց ամառը անց կացնում, որտեղ որ հիմիկ մենք կրակումն էրվում ենք։ Էս ժամումն էին նրանք կանգնում, աղոթք անում, որտեղ որ հիմիկ մենք մեր հոգին ուզում ենք տալ։ Ա՜խ, ո՞ւր էն ժամանակը, ո՞ւր էն փառքը։ Ձեր հողը լիս կտրի, ա՜յ մեր ազգի թագավորք, իշխանք. երա՛բ դուք էլ միտք կանեի՞ք, թե ձեր որդիքը մեկ օր էսպես արին պետք է վեր ածեն ձեր գերեզմանի վրա։ Էս ի՞նչ չար լեզու մեզ անիծեց, որ մեր օրն էսպես սևանա, մեր աստղն էսպես թեքվի։ Ո՛վ արագահաս սուրբ Սարգիս, ո՛վ զինավոր սուրբ Գեորգ. էլ ո՞ր օրը մեր հավարին պետք է հասնիք։ Դժոխքումն էրվում, տապակվում ենք, ախր ի՞նչ կըլի, որ մեզ չարա անեք։ Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. ի՞նչ կըլեր, որ ամենս էլ քո ուղուրին մատաղ էինք գնացել, ա՛խպեր ջան, մեր հո՛գի, մեր աչքի լի՛ս։ Արին կապեցիր խալխի սիրտը, կրակ վառեցիր երկրի գլխին, ա՜յ աշխարքի աչք Աղասի։ Մեկ ճանճ էլա նհախ տեղը չես սպանել, մեկ սառը խոսք քո բերնիցը չի դուս էկել, ա՜յ աստուծո գառն ախպեր, ախր ընչի՞ պետք է աստված քեզ էլ, մեզ էլ էստեղը հասցներ։ Ո՞ւր

գնանք, ո՞ւր, մեր գլուխը ո՞ր քարի առաջին լաց ըլինք։ Ո՞ր ջուրն ընկնինք, խեղդվինք, պրծնինք։ Տո՛, մեկ բերանդ էլա բաց արա՛, քո ջանին մեռնինք։ Ընչի՞ ես էսպես մեզ էրում, փոթոթում։ Ի՞նչ կըլի, որ էդ սիրուն աչքդ էլա մի բաց անես, մեզ էսպես չսպանես։ Աշխարքն էլ ի՞նչ պետք է մեզ համար, որ քեզ չենք ունենալ։ Մեր գլուխը քեզ ղուրբան, ամենս էլ առաջ մե՛ր արինը վեր կածենք։ Նաթն ու ծիծ մեկտեղ ենք կերել, որ քեզանից ձե՞ռ քաշենք։ Բախտ ու լավ օր մեկտեղ է՛նդուր համար ենք վայելել, որ քեզ նեղ օրը բա՞ց թողանք։ Որիս ուզում ես, վեր կա՛ց, քո ձեռքով մատաղ արա՛. ով երեսը ետ թեքի, շլինքը տո՛ւր, քո ձեռին ղուրբան. ախր մեկ խոսա, ի՞նչ կըլի։

Էս խոսքին բիրադի մեկ ձիու ոտի շփլթոց էկավ։ Երկինք, գետինք գլխըներին սևացավ։ Հենց իմացան՝ մեկ ամպ տրաքեց, մեկ սար գոռաց, փուլ էկավ։ Յարաղ-ասպաբ առան ուսըները, ամեն մեկը մեկ բուռը հող սրբությունի տեղակ բերանը քցեց, մեկ քարի առաջի չոքեց, իր մեղքը խոստովանվեց, մեկ քանի ծունր դրեց, երեսին խեչըհանեց, ժամի քարերը պաչելով տեղիցը վեր կացավ, ձիու աչքերը ճմռեց, մեջքը սղալեց, որ անկաջները սրել, խլշացրել, էն կողմն էին մտիկ անում էնպես խլշկոտալով, որդիանց որ ձենը գալիս էր։ Շունը ղրաղ քաշեցին, մատով-ձեռով արին, որ ձեն չհանի, ու իրանք թուր ու թվանք հազրած, ձիու ջիլավը քցած՝ սկսեցին պատի արանքիցը անսաս անկաչ դնիլ, որ տեսնին՝ էկողներն ո՛վքեր են։ Դամարները ուզում էր տրաքի, ոտըների տակին կրակ էր վառվել։ Անիծած բուքն ու քամին հյուսսի դհիցն էր գալիս ու ձենը փակում։ Ուզում էին իրանց կտրատեն, որ չէր թողում՝ պարզ իմանան, թե ի՞նչ խաբար է։

Էսպես՝ կես սհաթ քիմի մնացին փետացած։ Էլ չէին ուզում ծպտան։ Շատ մտիկ արին, ձեն չէկավ. հենց էն էին ուզում, որ էլ ետ տեղըները նստին ու թվանքները վեր դնեն, ու մեկն էն կողմիցն սկսեց բերանը բաց անիլ.

— Տղե՛րք, ի՞նչ կըլի՝ ըլի, տղամարդությունն էն ա, որ մարդ իր գլուխը դուշմանի ձեռ չտա։ Դուք լավ գիտեք, որ մեր մեկ հայը տասը թուրքի բարեբար է։ Երևում ա՝ ետևներիցս մարդ են քցել, ման գալիս։ Թո՛ղ գան, դրանց փիրն իրանց խռով կենա։ Բոլորին յա կջարդենք, յա կջարդվինք։ Քամակ-քամակի տանք, նամարդի մուհդաջ չըլինք։

Հենց էս խոսքն էր Կարոյի բերնումը, որ բեղաֆիլ տեղիցը էրկու գազ ծուլ էլավ, թուրը դուս քաշեց ու ուզում էր, որ դուս պրծնի, ընկերները փեշիցը քաշեցին, ձեռըները բերըներին դրին, որ անսաս տեղը նստի, չունքի ձիանոց ոտի թրխկոցն ու փռնչալը էնպես մոտեցավ, որ, հենց

քոնես, թե անկաչների տակին ըլի։ Բայց նրանք լավ գիտեին, թե գիշերը ձենը շատ թեզ տեղ կհասնի, ու չուզեցան, որ իրանց տեղը իմաց անեն, ու նրանք հավըրված գան։ Քիչ-քիչ էկողների խոսակցությունն էլ էին ջոկում, չունքի պարզիկա գիշեր էր, քարերն էլ էին խաբար բերում։

— Լավ հարաքյաթ են արել,— ասեց մեկը,— ա՛ֆարիմ. անիծած բորանն էլ իզըները կորցրել ա, գիշեր էլ ա, թե մարդ տեսնի. ամա ո՞ւր կկորչին։ Երկնքումն ըլին՝ վեր կբերենք. հլա քշենք, էս չոլումը նրանք չէին մնալ։

— Աչք ա, որ էգուց առավոտ յա կծիծաղի, յա լաց կըլի. սարդարին էլ ընչո՞վ իմ հունարը ցույց տամ, որ նրանց սաղ-սաղ չկալնիմ, չտանիմ, փեշքաշ չանեմ,— ասում էր մյուսը։

— Ախպե՛ր, ինչ առնինք՝ ճոթ անենք։ Աղասուն, թե կարանք, սաղ-սաղ բռնենք, ոտ ու ձեռ կապենք ու ձիու առաջն արած, յա կողքիցը կապած՝ տանինք, որ իր լայաղ պատիվն առնի, չունքի ռաշիդ տղամարդ է. մեկելներին սպանենք էլ ի՞նչ հաջաթ։

— Տղամա՞րդ, էս թո՛ւրը էսօր նրան իր տղամարդությունը կուտացնի աստուծով. հլա մի ձեռս ընկնի, մեկ մեյդան դուս գա, հետո կիմանա իր ռաշդությունը։

— Տո՛, բերանդ քեզ արա՛, Մա՛մմադ, մենք գիտենք՝ ինչ պտուղ որ ես. նրան ասլան ըլի, չի հաղթիլ. քանի՜ մեզ նմանին առաջն է արել տասնով, քսանով ու ջանըները հանել։ Բանն արա՛, հետո պարծեցի՛ր։ Էդպես քամի տալով ֆորս անիլ չի՛ ըլիլ։

Էս խոսքը մեր տղերքանց սիրտը տասը թիզ բարձրացրեց։

— Թուր, թվանք հազիր պահեցե՛ք,— ասեց Թուրքի մեկն էլ եա,— սատանին նալլաթ. կըլի, որ հենց էս քարերի տակին տափ ըլին կացել, սամծներս լսեն ու բիրադի էնպես վրա թափին, որ էլ չկարենանք ձեռըներս գլխըներս տանիլ։ Սրան Ապարան կասեն։ Աղասու պես ասլանը էսպես տեղը քսան ձիավորի մենակ չի ասիլ, թե աստված է ստեղծել։

— Տո՛, քի՛չ գովիր էդ մուստառ, անհավատ հային. չէ՛, չէ՛, մեզ սաղ-սաղ կուտի։ Հայն ի՞նչ ա, որ ինչ ջան ունենա։ Մեռնիմ ո՛չ, ընչանք մի աչքս նրան հասնի, կտեսնինք, թե ի՞նչպես ճուտ կդառնա առաջիս։

Էս ասեցին թե չէ, մեկը էն դհիցը ձեն տվեց.

— Ա՜յ աղա, ա՜յ ա՛ղա, ա՜յ աղա. էս ժամիցը հեռու կենանք, լավ կըլի, չունքի ասում են, թե ֆլան թարըղին մեկ խան էկել ա, թե քանդի, բիրադի միջիցը կանաչ ու կարմիր ձիավորներ էնքան են դուս էկել, որ սար ու ձոր բռնել, խանի ղոնշունը կոտորել, փախցրել, իրանք է՛լ եա գյում են էլել։ Սրա միջումը, ասում են, սուրբ Մողնու մասունք կա թա-

ղած, ու դուք լավ գիտեք, որ էս գիժ սրբի քյալլա տալ չի՛ ըլիլ։ Մարդի շլինքը ծռվում, երեսն եռեն ա ընկնում։ Հազար էսպես բան իմ աչքովն եմ տեսել։ Հայ, Թուրք, Նասրանի՝ ամենն էլ նրա ղուլն են։

— Բերնիցդ հայի հոտ է գալիս, Մա՛շադի, ամոթ էդ մեծ միրքիդ, էլ ո՞ւր ես վրեդ պահում, հինա դնում։ Տղամարդի փափախ չի գլխի՞դ։ Տո՛, հայն ի՞նչ ա, որ իր փիրն ի՞նչ ըլի։ Լեզուդ քեզ քաշի՛ր, էդ փափախիցդ էլա ամաչի՛ր։ Ես քո ջղրու էս գիշեր ընչանք սրա միջումը քյաբաբ չանեմ, չուտեմ, ձիս միջին չկապեմ, չապականեմ, բաս մարդ չեմ։ Էլ էս միրուքը վրես չե՛մ պահիլ։ Քանի՜ էդպես ժամի պատ իմ ձեռովս քանդել, քանի՜ սրբերի աչք էս մատովս հանել, դու հմիկ պառավի նաղլ ես գլխիս կարդում։ Քյաբդ քեզ խռով, էլ նամազ ո՞ւր ես անում, որ էդ սրտի տերն ես։ Քշի , քշի՛, գնա՛նք. քյաբաբի կեսն էլ քեզ կուտացնեմ։

Ասիլն, «Յա՛, սուրբ Սարգիս» ձեն տալն ու թվանքների ճռռոցը մեկ էլավ։

— Տղե՛րք, ձեր ջանին մեռնիմ, էլ մտիկ մե՛ք անիլ. մեր թուրը՝ նրանց գլուխը, էլ ո՞ր օրվա համար ենք կողքըներիցս կախ անում,— ձեն տվեց աժդահա Կարոն,— իրեքի գլուխը գնաց, սրանց փիրն անիծած։

— Էրկուսինն էլ ի՛մ թրիս մատաղ արի, ղոչաղ կացե՛ք,— էն դհիցը Վաթոն գոռաց։

— Երկուսին սպանել, մնի գլուխն էլ հրես, ոտիս տակին է,— ասեց Վանին։

— Տղե՛րք, փախան, ձիանը նի՛ էլեք, սրանց էկած ճամփեն քոռանա, սո՛րրել են գեղերումը հավի գլուխ թռցնելով մանի գան, հայերի արինը խմեն, սրանց տունը քանդվի։ Տղե՛րք, երըմիշ էլե՛ք, սուրբ Սարգսի ջանին մեռնիմ, մեյդանը մերն ա։

Ասեցին ու վիշապի պես ընկան հարամու քամակիցը, որին ինչ տեղ հասցրին, էնտեղ փառչալամիշ արին։ Քար ու սար աչքներին լիս էր տալիս, կռըներին՝ ղվաթ։ Հենց իմանաս՝ հայոց մեծ զորապետքը կենդանացել, նրանց սիրտ ըլին տալիս։ Էսպես՝ միս ու աղցան անելով ընկան եռեններիցը։

Բայց ա՜խ, արինը աչքըները կոխած՝ հենց քշեցին, գնացին, էլ միտք չարին, թե Աղասին, ի՞նչ նեղ սհաթի միջում, ընկեր ա ձեն տալիս, ընկեր չի կա. ա՜խ ա քաշում, ձենը լսող, իմանող չկա։ Թվանքները որ բիրադի չճռռացին, հենց իմանաս, թե հոգին եա էկավ տեղը։ Վրա թռավ տեղիցը, ընկավ ձիու քամակն ու խելքը կորցրածի պես էլ չիմացավ, թե ո՞ւր ա գնում։ Թուրը որ մեկի քյալլին չհասցրեց, գլխի հետ էրկու կտոր էլավ.

ընչանք թուրը յա ղամեն կհաներ, պարանն ընկավ ճտովն, ու շատ էլ ուզեց, որ ձին առաջ քշի, չէլավ. ձին տակիցը դուս թռավ, ինքը գետնին դիպավ, ու չորս աժդահա տղամարդ վրա թափեցին։ Նրա շանը վաղուց էին ուզում սպանել, որ ձեն չհանի։ Բայց շունը, շունը՝ էս տիրասեր, հավատարիմ կենդանին, տեսնելով, որ իր տիրոջն էլ խեր չի՛ անիլ, ընկավ գնացածների ետևիցը։ Աղասու ձեռները կապեցին, բերանը բամբակով լցրին, աղլխով ղայիմ հուպ տվին, ու աչքդ բարին տեսնի. մյուս օրն էր թոփն, ու Աղասու ջանը։

Շատ ու քիչն աստված գիտի, թե ո՛ւր հասան, տղերքը բիրաղի որ ետ դառան, գլխըներին կրակ վառվեց, երբ Աղասու շունը տեսան ճամփին։

— Վա՜յ, մեր տունը քանդվեց, տղե՛րք,— ձեն տվին,— էս ի՞նչ արինք, մեր ձեռովը մեր աչքը հանեցինք. հասնի՛նք, գնա՛նք. էլ ի՞նչ ենք անում մեր գլուխը, որ նրան կտանին։

Բայց ո՞ւր Աղասին, ո՞ր քարի տակին, ո՞ր չոլումը յա ձորումը։ Մեկն է՛ս սարն ընկավ, մեկն՝ էն ձորը. քարը լեզու չուներ, որ ասեր. ձին իմաստուն չէր, որ գտներ. շունն էլ առաջներիցը վաղուց կորել էր։ Ո՞ւր գնային, ո՞ւր կորչեին։ Գնային էլ թե պատովեր, ներս կէրթային, որ նրան հանեին։ Լիսնյակ գիշերը շատ որ դես ու դեն ընկան, զատ չգտան, էլ ետ հավաքվեցան մեկ տեղ ու միտք արին։ Սուգ ու շիվան անելու վախտը չէր։ Նրանք լավ իմանում էին, որ Աղասին էն ձենի վրա պետք էր, որ զարթնած ըլի էլած, փորձանքի մեջ ընկած, որ շունը նրան թողել, էն հայվան տեղովը իրանց ետևիցը վազել, որ գան, նրան ազատեն։ Էս էլ լավ էին իմանում, որ Աղասու բռնողները առաջ չէին գնալ, պետք էր, որ մեկ տեղ տափ կացած ըլեին, որ ոտը խաղաղվի ու էնպես ճամփա ընկնին։ Ի՞նչ անեն, մնացել էին մոլորված։

— Տղե՛րք, մնա՛նք էստեղ. Աղասու շունը, տեսնո՞ւմ եք, որ կորել ա. նա իմաստուն հայվան է, ինչպես որ ըլի, հոտի վրա կարող է գտնիլ. թե ճար կա, նրանից կըլի էս գիշեր, մենք ո՛չինչ չենք կարող անիլ։

Էսպես՝ խելիմ վախտ տարակուսած նստած՝ միտք էին անում, որ բիրդանբիր խելոք շունը՝ լեզուն հանած, հեթեթալով լիս ընկավ։ Շունը վազեց, նրանք՝ ետևիցը։ Հենց մեկ խելիմ տեղ անց կացան թե չէ, շունը ետի ոտը վեր քաշեց, կանգնեց։ Շատ էլ զոռ արին, որ տեղիցը եռա, չէլավ։ Իսկույն իմացան զգույշ հայվանի միտքը, ձիանոցիցը վեր էկան, մեկին տվին, ու Կարոն առաջները ընկած՝ կամաց-կամաց ոտները փոխեցին։ Մեկ թափի մոտացան թե չէ, էլի շունը կանգնեց, հոտոտաց։ Թվանքները առան ձեռըները։ Աստուծո ողորմությունը հասավ. նրանք

է՛ն կողմիցը գնացին, որ թափի շվաքը մնաց առաջներին։ Քարերի տակովը, փորըսող անելով, էնքան գնացին, որ մտան մեկ քանդված փոսի մեջ։ Ջուր չկար միջումը, բան չկար, անձրևի ճղած էր։ Թափի շվաքը մեկ հինգ գազ էլ էն կողմն էր ընկել նրանց գլխի վրովը։ Էս խանդակի միջովն էնքան էսպես ուսուլով գնացին կռացած, որ հարամին մնաց դես ու դեմ։ Լիսնյակը հենց ընկավ թուրքերի ճակատներին, տեսան, որ Աղասին միջըներումը չի։ Սիրտըները ընկան տեղ։ Մի քիչ էլ շունչ առան, ու ամեն մեկը մեկի ճակատին նշանելն, թվանքների տրաքալն ու հարամիքանց բանհոգի ըլիլը մեկ էլավ։ Հովլի պես դեռ էնպես թրպըտում էին, որ մեր տղերքը վրա հասան։ Ա՜խ, ո՞վ է կարող նրանց ուրախությունն ու արտասունքը էս սհաթին պատմիլ. երկնքիցը իրանց հոգին ետ բերին, էլ նրանց բերանն ի՞նչ խոսք կգար։ Որ էլ վախտ չկորցնեն, վերցրին իրանց կորցրած գանձը, հանեցին թշնամու յարաղ-ասպաբը, շորերը, բարձեցին թուրքերի ձիանոց վրա ու երըմիշ էլան։ Ո՞վ կզարմանա, որ լսի, թե Աղասին, ամեն իր շանը տեսնելիս, ուզում էր կյանքը նրան տա։ Վարավուրդով՝ մինչև տասնըհինգ մարդ էն գիշերը սպանել էին։ Եկեղեցու մոտ էլ ետ հասան, հանեցին, մեկ քանի շահի փող դրին սեղանի վրա, չոքեցին, աստծուն փառաբանություն տվին ու ճամփա ընկան։

<4>

Լիսաղեմը կարմրին էր տալիս, աղոթարանը քիչ էր մնացել բացվի, որ մեր ճամփորդները մտան Ռսի հողը ու թուշ քշեցին Պարնի գեղի վրա։ Աղասին չէր ուզում, որ մարդամեջ մտնի, ուզում էր՝ սարե-սար ման գա, որտեղ իր ճակատին գրած էր, էնտեղ մեռնի։ Ինքն էլ ուրախ չէր, որ աչքը լավ օր տեսնի, բայց ձմեռվան ցուրտ եղանակը, դաշտերի սառնությունն ու չորությունը, ողորմելի ձիանոց սովածությունը ո՛չինչ կերպով չէր կարելի հաղթել։

— Է՛ս վախտին, է՛ս հալին՝ աչա՜բ-աչա՜բ, Ա՛ղասի ջան, խե՛ր ըլի,— ձեն տվեց աղա Ն., որ նրա հետ միասին տարերով հաց էին կերել, ու ուրախ-ուրախ դուռը բաց արեց, ձիանը ներս քաշիլ տվեց ու ղոնաղների ձեռիցը բռնեց, տարավ սաքուն։

Գոմի երկենությունը հարիր գազ կըլեր։ Գոմեշ, ձի, եզը, տավար, ոչխար՝ էլ ո՛չ տուտ ուներ, ո՛չ տակ։ Իսկույն շոր փռիլ, բուխարին վառիլ տվեց, հարսներն էկան՝ հարգևոր-հարգևոր, քիթ ու պռունկ կալած. նրանց ոտները քաշեցին, ջուր բերին, ոտ ու գլուխ լվացին, ու ղոնաղները երկու կարգ սկսեցին նստել։ Աղա Ն. ամենիցը ներքև էր նստել։ Մեկ

ութ-ինը մեծ ու պստիկ ղոչաղ տղերք էլ, անլվա-անլվա, որը խանչալը կողքին քաշ արած, որը մեկ կտոր հաց ձեռին, կրծելով, որը մեկ փետ չանի տակին դրած, որը գլխաբաց կամ փորաբաց, շապկանց կամ անփոխան, էկան, անկաջները խլշացրած՝ սաքվի չորս կողմը շարվեցին ու աչքըները ղոնաղների երեսին կթեցին։ Հերը ծեծում էլ էր, դուս չէին գնում։ Դեռ բարիկենդանի մազեն՝ սուջուխ (չուչխել) ասես, ալանի, տանձ, խնձոր, փշատ, չիր, ջիբըներումն ունեին մեր տղերքը. հանեցին, երեխեքանցը բաժանեցին. աչքըները մնաց բաց, չունքի նրանց երկրումը էնպես արմաղան բաներ չկային։

— Մեր կաղնին ու ֆոնն էլ էս համը չունին,— մեկզմեկու ասում էին ու անուշ անում։— Էնքան մածուն, կարագ, եղ, սեր ու մեղր ենք կերել, որ բերան ու փոր հոտել են. աշխարք, աշխարք է՛ս պետքը ըլի, որ էսպես բաներ դուս են գալիս, մեր հավերիցն ու գոմիցն ի՞նչ լազաթ դուս կգա,— ասեցին ու ուրախ-ուրախ դուս թռան, որ գնան, իրանց հարևանների երեխեքանցն էլ իրանց ճարած նուբարը ցույց տան։

Ընչանք ծիտը ջուր կխմեր, գոմը երեխեքանցով լցվեց. մինը մնին բոթում էր, որ առաջ գնա, միրգ ուզի։ Ղոնաղների մեկը որ ձեռը չէր շարժում, հազար տեղ գունդ ու կծիկ էին ըլում։ Էսպես՝ հլա խելիմ վախտը երեխեքը նրանց պաշարպացրին։

Տանուտերը քանի ուզեցավ բան հարցնի, նրանք մատըները բերններին դրին, սուս արին. էստով իմացան, որ սրանում մեկ բան կա։ Մեկ քանի սհաթ անց կացավ թե չէ, սաղ գեղն էկավ, հավաքվեցավ նրանց գլխին։ Ով տուն էր մտնում, գդակը գլխին, յափունջին վրեն, չիբուխը բերնին կամ ձեռին, թութունի քիսեն ու խանչալը գոտկիցը քաշ արած, տրեխքոբաշի չուխեն հաքին, շալվարի ծերը պաճուճումը ղայիմացրած, տրեխները կուփ-կուփ հաքած՝ ամեն մեկը մեկ սարի ղդար տղամարդ։ Էլ մեծ ու պստիկ չէին հարցնում։ Գլուխ տալը հո, ըսկի՛ ադաթ չի։ Որն էկավ, մեկ Բարի՛ լիս կամ Ողորմի՛ աստված ասեց ու նստեց։ Քսան-երեսուն տարեկան ջահել տղերքն էլ որը սնըդուս, որը պատնըդուս շարվեցին ու իրար անկաջում քփսալով՝ յա ղոնաղներին էին մտիկ անում, յա նրանց յարաղ-ասպաբին, յա մեկ բան ուզելիս՝ ամենն էլ իրար գլխով էին դիպչում, որ իրանց պարոնի պարոնների ասածը կատարեն։ Տանու տղերքն էլ էկան. որը գոմն էր սրբում, որը ձիանը թիմարում, որը խոտ ու դարման բերում, որը մալը ջուրը տանում, որը չիբուխի կրակ դնում. ամենն էլ ուրախ էր, որ մեկ բան անի, մեծերի ու ղոնաղների սիրտը շահի։ Սրանք էլ յարաղ-ասպաբ հանել, պատիցը քաշ էին արել ու ծալապատիկ նստած՝ զրից էին տալիս։ Ջիանոնց համար ամոթ էր հարցնիլ. նրանք

լավ գիտեին, որ իրանց ուլախին շատ պատիվ կտան, քանց իրանց։

Օրը հենց մի քիչ ետ բացվեց, շատն էլ հանդիցն էկավ, ձինն աչքըներն առել՝ երկար վախտ չէին իմանում, թե էկողներն ի՞նչ մարդ են։ Գոմն էլ հո, լիս չուներ, չունքի մեկ պստիկ էրդիկ ուներ։ Ով ըլին, չըլին, թաք ըլի՝ ոտները խերով ըլի, նրանց աչքի, գլխի վրա, տարով կպահեն, պատիվ կտան։ Հենց լիսը բացվելիս աչքըներն էլ որ բաց էլավ ու տեսան ո՛չ, թե էկողներն ո՞վքեր են, խելքըներն էկավ գլխըները։

— Բարո՛վ, բարո՛վ, մեր Աղասին բարո՛վ,— ձեն տվին ամեն դհից ու վրա թռան, իրա՛ր պաչպչորեցին։— Էդպես ա, ձեզ յա ձմեռվան հոսանը մեզ մոտ կբերի, յա ամառվան շոգը։ Խա՛նի խաբարներ, հա՛, մտի՛կ արա, հա՛, մտի՛կ արա. էնքան մտիկ արինք, որ աչքըներս ճամփին ջուր կտրեց։ Մեկ ղուշ որ գլխըներովս անց է կենում, հազար անգամ փափախով ենք անում, որ ձեզանից մեկ խաբար իմանանք։ Մեր սարերը խոմ գել չե՞ն, որ ձեզ ուտեն. ի՞նչ կըլի, որ մեկ օր էլ ճամփեն մեր դհի վրա ծռեք։ Բաղ, բաղաթ չունինք, գինի, մազա չենք կարալ թավազա անիլ, մեր եղին, կարագին ու մեղրին էլա խելճ էկեք։ Փա՛ռք աստուծո, տունըներս՝ լիքը, գոմըներս՝ լիքը, ցամաք հացով ճամփա կքըցենք. մարդի սիրտն ա բանը, թե չէ՝ էսօր ղաբլու փլավ էլ ուտես, էգուց փորդ էլի իր ուզածը կուզի։ Աղ ու հաց՝ սիրտը բաց։ Տանտիրոջը տեր ողորմյա ասիլ չի՛ ըլիլ։ Քաղաքը գնում եք, սար ու ձոր ոտի տակ եք տալիս, հենց մե՞ր կողմն ա, որ ձեր աչքին փուշ ա դառել։ Ջեր հալը չի՞, որ էս սհաթին ոտներդ կապենք, մեկ լավ քոթալենք, ինչ ունիք, չունիք՝ խլենք ու ձեզ էլ դարտակ ճամփու քցե՞նք։ Էդենց եք անում, որ մենք էլ ձեր դուռը չի գա՞նք, ձեր հացը չուտե՞նք։ Հա՛յ նամարդներ, չե՞ք գիտում, որ մեկ օր էս սարերումը թե ձեզ ճանկենք, էլ հազար տարի որ կուչ ու ձիգ անեք, ձեզ բաց չենք թողա՞լ։ Ի՞նչ ա, ձեր թունդրի ու քուրսու ղրաղը կտրել, ձեր կնկա առին նստում եք, էլ միտք չեք անում, թե գնանք, մեր դոստ ու բարեկամին էլ տեսնինք, հալներն իմանանք, քանի մեռել չեն մեկ բարով էլա տանք, որ մեզ կարոտ՝ հողը չմտնինք։ Քա՛ր է ձեր սիրտը, քա՛ր, ձեզ հո մեր չի՞ բերել։ Բիր գյորանդա՝ յոլդաշ, իքի գյորանդա՝ ղարդաշ (Մեկ տեսնելիս՝ ընկեր, երկու տեսնելիս՝ ախպեր)։ Տո՛, ձեր տունը չծակվի. Էլա մուսուրման օլուբսազ ճի աքանըզ խաչի բանըմիրսզ (ինչպես թուրք եք դառել, որ ձեր հոր խաչն էլ չեք ճանաչում)։ Քրիստոնեի երկիրը՝ մերը, մենք՝ ձեր ազգը, ձեր արինը, ի՞նչ եք էդ շան հողումը կենում, ձեր օրն ու ումրը խավարացնում. ի՞նչ համ եք առնում, որ էդպես ծանր-ծանր նստել, տարենը մի անգամ էլա՝ երեսներդ մեր կուռը չեք շուռ տալիս։ Զմեռը հո բան չունինք, վախի՛լ մեք, ձեզ չենք ուտի՛լ.

ձի չունի՞ք, ձի կտա՛նք. կով չունի՞ք, կով կտա՛նք. էկե՛ք, տարե՛ք, ո՞վ ա ձեր ձեռը բռնում։ Կուզե՛ք, մեր երեխեքանց անկաջներիցը բռնեցե՛ք, տարե՛ք, ծախեցե՛ք. ով ձեզ ձեն տա, պարտականը ինքը մնա։ Ջունքի էսպես ա՛, քյո՛խվա, սրանց մեկ լավ պատժենք. հազիր բարիկենդան օր էլ ա. էս շաբաթ սրանց էլ չթողանք, աչքները հանենք. էնքան ուտացնենք, խմացնենք, որ էլ ճամփեն չգտնին։ Սրանց հախն ա. ով տարենը մի անգամ կգա մեր տունը, բոլոր տարվան պարտքը պետք է վճարի. քնի էլ, զարթնի էլ, պետք է ուտի, խմի, քեֆ անի։ Հաց ենք դատում, որ մենակ մե՞նք ուտենք, ու չորս պատերը տեսնին. էսպես հացը հարամ ըլի։ Մեկ թիքեդ որ հազար կտոր չանես, հազար ղուրդ ու ղշի չուտացնես, ի՞նչպես կուլ կերթա, յա կմարսես։ Էստուր համար ենք արևի, անձրևի տակին՝ սարում, չոլում ջանըհան ըլում, որ մեզ մի բարի լիս ասող, մեր դուռը բաց անող, մեր ննջեցելոց ողորմաթասը խմող չըլի՞։ Ի՞նչ տուն, ի՞նչ օջախ, որ օրը տասը աղքատ ու ճամփորդ չմտնին, չկշտանան։ Էլ էն տանը բարաքյա՞թ կըլի։ Էլ էն դաշտը պտո՞ւղ կտա։ Չէ՛, քյո՛խվա, էսօր ամենս քո ղոնաղն ենք, էգուց՝ իմը, էլօր՝ սրանը. էսպես՝ մեկ լավ քեֆ անենք ու մեծ պասին սրանց ճամփու քցենք։ Չեն ուզիլ մնան, ոտները կապենք, մինչև զատիկն ու համբարձումը էստեղ դուխսաղ անենք, պահենք։ Ի՞նչ կասեք։

— Հա՛յ, բերանդ ապրի, հա՛յ, ավետարանի կողքիցն ես խոսում,— ասեցին չորս կողմիցը.— շա՛տ լավ, շա՛տ բարի, էդուր ո՞վ ինչ կասի. մեր սրտի ուզածն էլ հենց է՛դ էր։

— Հա՛յդե, տղե՛րք, գնացե՛ք, աշըղին բերե՛ք,— ասեց քյոխվեն ուրախ-ուրախ ու գդակը մեկ լավ կոտրեց, աջու անկաջի վրա դրեց,— մեծ աշառը մորթեցե՛ք, ղավուրմա տվե՛ք, մեկ ղոչ էլ հետը, ու կակող տեղերը՝ բդերն ու սուկին, բերե՛ք, որ մենք մեր ձեռովը խորովենք. զուռնաչին էլ թո՛ղ գա, տերտերին էլ համեցեք արե՛ք։ Գինին դուքանումն ա, փողը՝ ջիբումս, մեր ջամըհաթն ըլի սաղ. եղն ու կարագը, սերն ու մեղրը ու պանիրն՝ կճճներով տանըս դրած, ամբարս ու հորս՝ լիքը։ Շահն էլ մեր քեֆը չունի. ուտե՛նք, խմե՛նք, քեֆ անե՛նք, աստծուն փառք տա՛նք, մեր մեռելները հիշե՛նք, մեր ղոնաղների սիրտը շահե՛նք, որ իմանան, թե սարի մարդն էլ սիրտ ունի, քար չի։ Աստված ռուս թագավորի թախտը հաստատ պահի, նրա դովլաթիցը՝ ինչ ասես, ունինք. օձի ձու էլ որ ուզենամ, կճարեմ։

Աղասին, էսքան խոսք ու զրից անց էր կացել, ոչինչ չէր իմացել. ինքը ճամփիցը բեզարած՝ ցուրտը մեկ կողմիցն էր թմբրացրել, շոգն էլ իր հարարաթը շհանց տվեց ու ջանն առավ։ Գլուխը պատին դեմ տված՝ մնացել էր էնպես ցից քնած։ Նստողները բոլորն էլ վարավուրդ էին անում, որ նրա երեսը հեչ ծիծաղ չէկավ, ինչ ասեցին էլ։ Աջու կուռը մնացել էր գոգումը, ձախունը՝ էնպես թուլ, գետնի վրա ընկած։ Շատն էնպես էին կարծում, թե ճամփի յա ցրտի հարարաթն էր նրան էն տեղը քցել։ Շոր չէր հարկավոր, որ ծածկեն, չունքի զոմը առանց էն էլ համամից սաք էր։ Ղոնաղները չէին վարավուրդ արել, որ էն գեղի թուրքերիցն էլ մեկ քանիսը խալխի հետ խառնըվել, ներս էին մտել ու շատը հայերեն էլ հասկանում էին, ու էստեղ-էնտեղ, գողի պես նստել, աչքները ղոնաղների թուր ու թվանքին էին քցում, ատամները ղըճտացնում, թե ընչի՞ չէին մեկ չոլում նրանց ռաստ բերել ու բոլորը թալանել։

Աղասու քափ ու քրտինքն էկել, ամպի պես աչք-ունքի վրա կիտվել էին. երեսի ռանգը ամեն սհաթի փոխվում էր. բաղի վախտ իրան-իրան խոսում, բաղի վախտ էլ ձեռը բարձրացնում, ջիլ ու դամար քաշում, էլ ետ հանգստանում էր։ Ամենից ավելի խալխը նրա վրա էին մնացել զարմացած, որ նրանք վեց հոգի էին, բայց քսան-ավել մարդի յարաղ-ասպաք ունէին հետըրները բերած։ Էսպես տարակույս, չորս կողմը կանգնած՝ խոսում էին, որ Աղասին բեղաֆիլ ձեն տվեց.

— Թուրդ քե՛զ քաշիր, դժոխքի պահապան, շլինքդ մեկնի՛ր։ Ախու ջան, էդ ո՞ւր են տանում քեզ...— էս ասիլն, տեղիցը վեր թռչիլն ու թրին վրա վազիլը մե՛կ էլավ։

Գեղըցիք իրար ջարդելով դուս թափեցին. որը երեսին խաչ էր հանում, որը Տե՛ր, ողորմյա ասում։ Մի քիչ որ դինջացան, էլ ետ դռնիցը անկաջ դրին, տեսան, որ ձենը կտրել ա, ուսուլով ներս էկան ու վախվախելով նստեցին։ Էլ ո՞վ կարեր հիմիկ նրանց բերնին փակ դնել։ Բոլորն էլ ուզում էին, որ իմանան, թե ի՞նչ ա անց կացել։ Աղասու ընկերքն էլ, ճարակտուր, սկսեցին պատմիլ։ Քանի գլուխն էր, ո՛չինչ, էնպես բան շատ էին լսել. ինչ ժամանակ խոսքն էն տեղն էկավ, թե ի՞նչպես կոտորեցին, փախան, հարիր բերան ձեն տվեց.

— Ջա՛նմ սան, ջա՛նմ, Աղասի. օջախի որդին, կտրիճ հայն էդպես կըլի։ Բարիկենդա՞ն, բարիկենդան է՛ս ա. դե տղե՛րք, էլ մեք մտիկ անիլ։ Հացը հազրեցե՛ք, սուփրեն քաշեցե՛ք, հայր Աբրահամի հրեշտակն ա էկել մեր տունը։ Էսպես իգիթ տղի գլխին ղուրբան գնամ. բարաքյալլա, տղե՛րք, դուշմանի աչքն էսպես պետք է հանած։ Տեսնո՞ւմ եք, ա՛յ գյադեք (իր տղերքանցն է ասում), ռաշիդ տղեն սրանց նման կըլի. ուտում եք՝ տանը նստում։ Ա՛ֆարիմ, տղե՛րք, որ ձեր մեծին էսպես պահել եք, շունն է՞լ էստեղ ա։

Մեծամարդիկը, ջահել տղերքն էս կողմից, էն կողմից վրա թափեցին, որ Աղասու ձեռքն, ճակատին պաչ անեն, քյոխվեն չթողաց. որ քնահարամ

չըլի։ Մյուսներին ուզում էին սաղ-սաղ ուտեն, էնքան դոշըներին կպցրին նրանց։

— Օրհնվի է՛ն կաթը, որ դուք կերել եք, է՛ն հողը, որ ձեզ ծնել ա. տղեն էդպես կըլի, թե չէ՝ քանի լեզուդ կարճացնես, գլուխդ կախ անես, ուսերդ կնստին, ղուզդ կքամեն, աչքդ կհանեն, ջիգյարդ վեր կածեն,— ասում էին ամեն կողմից։

Սաղ ու ղուռնի ձենը որ վեր չելավ, գեջդանգեջ Աղասին աչքը բաց արեց ու էնպես էր զարմացած դես ու դեն մտիկ տալիս, ինչպես թե նոր ըլի աշխարք էկել։ Ուզում էր էլ ետ աչքը խփի, բայց խալխը է՛նպես վրա թափեցին, որ քիչ մնաց նրան ոտնատակ տային. փեշերն էլ էին համբուրում, ո՞ւր մնա երեսը։ Էսպես՝ նրան էլ մեջ արին ու մինչև իրիկնապահը, ժամերի վախտը, է՛ն քեֆն արին, որ աչք պտեր՝ տեսներ։ Ձենն ընկավ գեղըցոնց անկաջը. ով ասես տուն էր ընկնում, որ նրան տեսնի, մուրազն առնի։ Հենց իմանաս՝ ուխտ ըլեին գալիս։ Տանուտերը Ղարաքիլիսա մարդ ղրկեց կնյազի մոտ ու բանի ահվալն իմացում տվեց։ Հրաման էկավ, որ մեկ-քանի օրից ետը՝ Աղասուն վերցնեն, կնյազի մոտ գնան։

<5>

Փամբակու թուրքերը տիրել, հայերը թև առել, ուզում էին թռչեին։ Բարիկենդանն անց կացավ, մեծ պասն էկավ։ Աղասին քսան ձիավորով որ Ղարաքիլիսա մտավ, աշխարք ամեն առաջն էր էկել, որ նրան տեսնին։ Հազար բերան նրան գովում, բարաքյալլա էր ձեն տալիս։ Կնյազ Ս. շատ ումուդ, շաֆաղաթ տվեց նրան ու խոստացավ էլ, որ բալքի մեկ կերպով սարդարի սիրտն առնի, չունքի շատ բարեկամ էին իրար հետ։ Ինչ հարկավոր էր, հրամայեց, որ նրանց տան ու լավ մուղայիթ կենան, որ նրանց վնաս չհասնի։ Բայց Փամբակու հայերը մե՞ռել էին, որ նրանց վնաս հասներ։ Էսպես՝ սաղ ձմեռը, քսան-երեսուն ձիավորով. տնետուն, գեղեգեղ էնքան ման էին ածել ու օրով, շաբաթով պահել, որ իրանք էլ էին բեզարել։

Քաջ լոռըցիք էլ որ իմացան, էլ դինջություն չունեին, սրանք էլ էին ուզում նրանց իրանց մեջը բերեն, պատիվ տան։ Մեկ ամսաչափ էլ էստեղ մնաց։

Էս պատվական խալխի պարզ սիրտը, նրանց տաք ջիգյարն ու անուշ սերը, տեղի քաղցր հավեն ու ջուրը, կնյազի տված ումուդը՝ Աղասուն մի քիչ ետ բերին, սիրտը բաց արին։ Ղորդ ա, ասում, խոսում, լսում էր, ամա տխրությունը նրա երեսի ու աչքերի վրա էնպես էր կիտված, ինչպես սև ամպ։ Շատ անգամ որ ա՜խ չէր քաշում, քար ու հող լաց էին ըլում։ Ծիծաղելիս՝ բերնի չորս կողմը, էնպես գիտես, թոռոմած վարդի տերև ըլի, որ շաղը տալիս մի քիչ զվարթանում, էլ ետ ճլորում, թուլանում է։

Շատ անգամ մեկ քարի ծերի նստած, կամ մեկ քարափի գլխի թինկը տված, աչքը ձորին, դեմին քցած, գլուխը ձեռին, կամ մեկ աղբըրի ղըրաղի՝ կողքի վրա ընկած, թփերի, խոտի, ծաղկի, ջրի հետ խաղալիս, լաց ըլելիս էին նրան ռաստ բերում։ Բաղի վախտ որ «Նազլո՛ւ» չէր ձեն տալիս յա հորնըմոր անունը հիշում ու ա՜խ քաշում, սար ու ձոր հետը ձեն էին տալիս, մղկտում։ Ինքը որ տխուր ու մաշված էր, հենց իմանում էր՝ մարդիկ սիրտ չունին, որ ուրախանում, ծիծաղում էին։ Էստուր համար իր ընկերքը սար ու ձորն էր շինել, էսպես էր ծնողաց կարոտը, քիր-ախպոր հասրաթը, դարդը նրա սիրտն առել։ Երևանու մեկ ծուխն էլա չէր ընկնում աչքովը, մեկ սար էլա էն կողմիցը չէր տեսնում, որ բալքի սրանով էլա սիրտը մի քիչ հովանա։

Էս ժամանակին էր, որ մեկ օր ընկերներին հավաքեց, գնաց ֆորս, Համզաչիման ու Ջբխլու անց կացավ, Ղառնիյարաղ հասավ ու հենց Մասիս աչքովն ընկավ, ընկերներին ձեռով արեց, որ մի քիչ հեռանան, ինքը նստեց մեկ թփի տակի, գլուխը դրեց քարին, աչք ու բերան արտասունքով, ծխով լիքը՝ էս խաղն ասեց։

Սար ու ձոր ընկած՝ մեկ չոր թփի տակի,
Գետին նայելով՝ մնացել եմ նստած.
Ձեռս ծոցումս, գլուխս մեկ լեռ քարի
Տված՝ լալիս եմ, օրս խավարած:

Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մտիկ տալով, ա՜յ իմ քա՜ղցր Մասիս,
Աղի արտասունքով էրված, խորոված՝
Երեսիդ նայիմ, մնամ քարացած:

Ծնո՛ղ, ազգակա՜նք հեռու ինձանից.
Լուսնին նայելով, ձեր սերն հիշելով՝
Երաբ, ե՞րբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարոտս առնիմ, ձեզ ջան ասելով:

Երաբ ձեր նտովն մեկ օր էլ կընկնի՞մ,
Երաբ ձեր երեսն մեկ էլ կտեսնի՞մ,

Երաբ ծունկ-ծնկի տված՝ ձեզ կասե՞մ.
«Ա՜յ, իմ խեղճ ծնողք, ձեր ջանին մեռնիմ»:

Աչքս ծով դարձավ ճամփին նայելով.
Մեկ դուշ որ գլխիս պտիտ ա գալիս,
Թե ե՞րբ մեկ խաբար կհասնի ինձ բարով.
Հոգոց հանելով՝ ասում եմ, լալիս:

Երաբ գետնի վրա դեռ սո՞ւզ եք անում,
Ձեր կորած որդուն կարոտ մնալով,
Թե՞ հողի տակը մտած՝ դինջանում,
Ինձ թողիք, տանջվիմ՝ ա՜խ, ո՜խ քաշելով:

Երաբ ձեր ամակն ինձ հալալ արի՞ք,
Երաբ սուրբ բերնով ձեր ինձ օրհնեցի՞ք,
Տերունի՛ իմ հայր, սարաբա՛խտ իմ մայր.
Էլ իմ հավարիս ե՞րբ կհասնի աշխարհ:

Էն սուրբ, անարատ կաթնին ես դուրբան,
Ձեր լիս ձեռներին, ձեր անուշ լեզվին.
Մեկ բուռն հողի էլ ե՞րբ կըլիմ արժան,
Որ գամ ձեր հողումն, քնիմ ձեր միջին:

Է՛ն ի՞նչ օր էր, որ ձեր քաղցր ծոցին,
Գլուխս ձեր դոշին, աչքս խուփ կամ բաց,
Ձեր սուրբ ձեռի վրա, երեսս բարձին՝
Կամ խաղում էի, կամ մնում քնած:

Է՛ն ի՞նչ օր էր, որ մեկ ծառի տակի,
Ճոնումն, ձեռներս ձեր ճտովն քցած՝
Ձեր սուրբ երեսին ես համբույր տայի,
Նանիկ ասելով՝ թողեիք քնած:

Ո՞ւր էն շվաքը, էն կանաչ՝ ջրի ափը,
Էն խոտն ու ծաղիկն, էն դաշտն ու տափը,
Որ ձեր առաջին անմեղ խաղայի
Ու ձեր բարի սիրտն խաղով բանայի:

Լալիս՝ դուք լայիք ինձ հետ ցավելով,
Ծիծաղս տեսնելով կամ ձենս լսելով՝
Կանչեիք. «Արի՛, մոտս, Ա՛դասի ջան,
Երեսիդ մեռնիմ, քո ջա՛նին դուրբան»:

Ա՜խ, էս խոսքերը ինձ կրակ են դառել,
Լերդս ու բոքս հիմիկ էրում, խորովում.
Ի՞նչ կըլեր՝ ես է՛ն վախտն էի մեռել,
Ձեր շվաքի տակին, ա՜խ, քնել հողումն:

Մեկ բուռն հողի էլ կարոտ եմ մնացել.
Քարափից թե ցած կամ ջուրը ընկնիմ.
Ձեր սուրբ երեսը դեռ որ չեմ տեսել,
Ի՞նչպես ես հանդարտ էս հողը մտնիմ...

Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, աննմա՛ն Նազլո՛ւ,
Սիրտս խորովի անունդ հիշելով.
Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, հրաշալի՛ Նազլո՛ւ,
Ադասին քեզ տա իր եարին բարով:

Սարերի դոշին, ձորերի միջին
Վա՜յ գլխին տալով քո խեղճ Ադասին՝
Երեսիցդ զրկված, քո սիրովն մաշված,
Տատրակի նման փշի վրա նստած:

Լիզեմ հող, գետին, այրիմ, մղկտամ,
Կամիմ օր առաջ, ա՜խ, որ հոգիս տամ,
Երբ մահն մոտանա սուր թևերովն,
Հոգիս պահանջե, որ տանի շուտով,

Էս դառն աշխարհիցս մի ինձ ազատի,
Ոսկերքս զազանաց կերակուր անի.
Կամ երբ գետի ափին նստած, շվարած՝
Աչքերս նվաղին՝ թմբրած՝ սասանած,

Գլորիմ կատաղի գետի փրփրի մոտն,
Հոգոց քաշելով պարզեմ ես իմ ոտն.
Կամիմ գերեզմանս որ էս ջուրն ըլի,
Էս սառը պատանն ինձ հողը տանի...

Կամ մեկ քարափի բաշից նայելով,
Աչքս մեր տան ծուխն հանկարծ տեսնելով,
Քո անուշ երեսն ինձ փակ մնալով՝
Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, անո՛շ իմ Նազլո՛ւ.
Թեքիմ, ու հանդարտ գա ինձ քուն մահու.
Երևի աչքիս, թե անդունդը խոր
Մոտ է ինձ գրկել, տանիլ իր լեն ձոր։

Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, մեկ շունչս ա մնացել,
Ոսկերքս քրքրվել, աչքս խավարել.
Թո՛ղ մեկ շունչդ առնիմ, հետո հողը մտնիմ,
Դժոխքն էլ տանին, ես հանգիստ կըլիմ:

Քե՛զ եմ մնում, քե՛զ, քո ջանին մեռնիմ.
Հող ու գերեզման ես վրես ունիմ.
Քանց իմ սառն մարմինը էլ ի՞նչ գերեզման
Ինձ պետքը կգա, երեսի՛դ ղուրբան:

Արի՛, ասածդ արա՛, ինձ թաղի՛ր,
Բե՛ր իմ երեխեքս ու վրես կանգնի՛ր.
Մեկ նրանց տեսնիմ աչքս խփելիս,
Մեկ նրանս ասեմ լեզուս լովելիս.

«Մնա՛ք բարով, ո՛րդիք, ազի՛զ, սիրեկա՛ն.
Է՛լ չէ՛ք տեսնիլ ինձ, ա՜խ, դուք հավիտյան.
Ձեր անբախտ հորը հոգին հիշեցե՛ք.
Մնա՛ք բարով, իմ քա՛ղցր, սիրո՛ւն երեխեք.
Ձեր հոր տեղակ ձեր խեղճ մորն հիշեցե՛ք
Ու իմ ողորմին, ժամն կատարեցե՛ք»:

<6>

Ո՞վ չի գիտի, որ մարդի սիրտը արնով լցվելիս՝ ո՛չ սուր էնքան քյար կանի, ո՛չ դեղ, ո՛չ քուն, ինչքան բառն ու խոսքը ու իլլահիմ խաղը, բայաթին, էստուր համար Աղասու ընկերքն էլ ղրաղ քաշվեցին ու հեռըվանց նրան մտիկ էին անում, որ գլխին մեկ փորձանք չգա, չունքի սար ու ձոր նրա արինն էին խմում։ Էնքան անկաչ դրին, որ ձենը կտրեց, քունը տարավ, հետո էկան, մեջըներն առան ու էլ ետ Ղարաքիլիսա տարան։

Մեկ օր էլ էսպես, էլի էս հալին, դռանը մեկ քարի վրա նստած էր, որ մեկ ղարիբ մարդ քիչ-քիչ նրան մոտացավ, առաջին կանգնեց, երկար նրան մտիկ արեց, ու հենց էն ա, Աղասին ուզում էր նրանից հեռանա, որ իր դարդն օքմին չտեսնի, ղարիբը դոշը բաց արեց, վրա թռավ, նրան խտտեց ու հենց «Ա՛ղասի ջան» ասեց, ու ձենը փորն ընկավ, լեզուն պապանձվեց ու էսպես մնաց յարալու-փարալու՝ Աղասու դոշին փետացած, ընկած։ Աղասին գեջղանգեջ որ խելքի չէկավ ու աչքը բաց արեց, աստվա՛ծ, ո՞վ կարեր նրա արտասունքը բռնիլ, նրա սրտին մեկ ճար անիլ։

— Ա՛մու ջան, Ա՛վետիք ամու ջան, դո՞ւ ես,— ասեց ու իրանից գնաց։

Տեսնողներն էս դհից, էն դհից վրա թափեցին, երկուսին էլ, էնպես մեռած, տուն տարան, ջրով, հոտով ետ բերին։ Հենց աչքըները բաց էին անում, իրար երես տեսնում, էլ ետ դուբարա ընկնում էին իրար ճտով, իրար անուն տալիս, գնում էին էն դինեն, ետ գալիս։ Մոտըներին կանգնողների աչքերիցը արտասունքը գետի պես էր վեր թափում։ Ճարըները կտրվեց, տերտեր կանչեցին, ավետարան կարդացին, խաչ ու մասունք գլխըների վրա դրին, որ անջախ մի անջախ ուշըներն էկան։

Էս էկող ղարիբը, սի՛րելի կարդացող, Աղասու հորախպերն էր, որ գլուխը փեշն էր դրել, էկել՝ իր ազիզ կորածին գտնի, տեսնի, մուրազն առնի, էնպես մեռնի։ Ո՞վ ըլեր՝ էնպես չաներ։ Սիրտըները որ մի քիչ դինջացավ, ջանըները հովացավ, Ավետիքը գդակի ծալիցը մեկ թուղթ հանեց, Աղասուն տվեց, ինքը մհանով տանիցը դուս գնաց, որ նրա աչքի արտասունքը չտեսնի, չէրվի, չփոթոթվի։ Երկու թուղթ էր բերել հետը. մեկը Աղասու մերն էր գրել, մեկը՝ նշանածը։ Երանի՜ էն աչքին, որ էսպես թուղթ իր օրումը ո՛չ տեսել ա, ո՛չ էլ կտեսնի։ Էլի Աղասին էր, որ դիմացավ, բայց վա՛յ էն դիմանալուն. հարիր անգամ թուլացավ, նվաղեց, թուղթը դրեց երեսին ու աչքերը խփեց, էլ ետ ջուր ածեցին, ետ բերին։

Մոր Թղթի խոսքերն էս ա.

«Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. գլխովդ փարվան ըլիմ, Աղասի։ Ընչի՞ չեմ էս ահաթին կրակ դառնում, ինձ էրում. ընչի՞ չի լեզուս չորանում, աչքս խավարում. ընչի՞ չեմ թող դառնում, որ բալքի թե քամին բերի, գամ, ոտիդ տակին ցրվիմ, սարեսար ընկնիմ, քարեքար, որ ի՛մ երեսը կոխես, որտեղ որ ման գաս, որ ի՛մ աչքը հանես, որտեղ որ նստիս, որ ի՛նձ վրա գլուխդ դնես, որտեղ որ քուն մտնիս. Նանն ըմբրիդ մեռնի, իմ թագավո՛ր, իմ աղա՛ Աղասի։

Տնկած ծառերդ փուշ են դառել, ինձ սպանում. պահած ծաղկըներդ կրակ են դառել, ինձ էրում, խորովում. ման էկած տեղերդ՝ աչքիս լսումը մզրախի պես ցցվում, սիրտս դուս ճոթում։ Ո՞ւր կորչիմ, որ ձենս օքմին չիմանա. ո՞ւր գնամ, որ աչքս քո տեսած բաներն էլ չտեսնի, միտքս քո ասած խոսքերն էլ չհիշի. ջանս քարանա, որ էլ անունդ չտամ. սիրտս ջուր կտրի, որ էլ քո սերը չզգամ. ումբրս փչանա, օրս խավարի, որ երկընքի տակին էլ չասեմ, թե ե՛ս էլ եմ մեր, ե՛ս էլ որդի բերի, ի՛նձ էլ մեկ օր աչքալիս տվին, ե՛ս էլ մեկ օր որդու, զավակի արևի ձենը պետք է ածեի. ես էլ որ աչքս խփեի, մեկ բուռը հող դո՛ւ պետք է երեսիս քցեիր, դո՛ւ իմ նաշը խատեիր, դո՛ւ իմ լաշը հողին տայիր, դո՛ւ վրես սուգ անեիր, գլխիս վրա կանգնեիր ու էդ աղի՛զ, էդ սո՛ւրբ բերնովդ ասեիր. «Հոգիդ լի՛ս դառնա, ա՜յ իմ մեր, ա՜յ իմ մեր. ի՞նչ կըլեր, որ մեկ էլ աչքդ աչքիս, բերանդ բերնիս առնեիր, ու հետո աստված հոգիս տաներ»։

Հոգիս խոր է, թե հանեմ, աստծուն տամ. սիրտս ձեռիս չի, որ կրակը քցեմ, էրեմ. երկնքին ձե՛ռս չի հասնում, անկաջդ ձե՛նս չի ընկնում։ Ղուշ ա գլխավերևս թռչում, քո անունն եմ տալիս. շունչս ա բերնիցս դուս գալիս, քո հասրաթը ջիգյարս էրում, փոթոթում. աչքիս եմ հուպ տալիս, սիրտս ա տրաքում. բերանս եմ կալնում, միտքս ա ցնորվում. տունն եմ մտնում, պատերն են ինձ դժոխք դառել. դուս եմ գալիս, սար ու ձոր սև օրս լաց ըլում. երկնքին եմ նայում, մեկ ձեն չի գալիս. երկրին եմ մտիկ տալիս, մեկ խաբար չիմանում։ Բարձին եմ գլուխս դնում, շունչս ա ինձ խեղդում. քնած թե զարթուն՝ դո՛ւ ես աչքիս առաջին պտիտ գալիս։ Արտասունքս ծով ա դառել, Ա՛ղասի ջան. ա՜խ ու ո՜խ քաշելուցը շունչս կտրվել, հոգիս մաշվել. գլխիս էլ մազ չմնացել, որ քամուն տամ. երեսիս էլ տեղ չկա, որ չըլիմ կտրատել. տան ու դաշն էլ քար չկա, որ չըլիմ դոշիս խփել։ Գլուխս ծեծելուցը ձեռներս բեզարեց. շատ լաց ըլելուցը աչքս խավարեց, բայց ա՜խ... ա՜խ... Հոգիս իմ տված չի, որ ասեմ՝ դուս գնա. սաղ-սաղ էլ գերեզմանը մտնիմ, ո՞ւմ ձենը լսեմ, ո՞ւմ երեսը տես-

նիմ, ո՞ւմ հոգիս տամ, ո՞ւմ ոտի տակին գլուխս դնեմ, ո՞ւմ էս փետացած ձեռներովս խատեմ, ո՞ւմ էս չորացած լեզվովս ասեմ. «Մեռնիմ էլ, Ա՛ղասի ջան, հոգիս գլխովդ պտիտ կգա. ապրիմ էլ, ո՛րդի ջան, ջանս քո ուղուրին դրած ա։ Հոգիս երկնքումն ըլի, մարմինս՝ քո առաջին, փիանդազ. շունչս վրես ըլի՝ դո՛ւ ես իմ սրտի մուրազը։ Հող կդառնամ, հողս քե՛զ պտուղ կտա. ջուր կկտրվիմ, քո՛ հանդի, ծաղկի վրա կթափվիմ. դրախտումն ըլիմ, քո՛ ծառի ճղքների վրա բլբուլի պես կկանգնիմ, քե՛զ անուշ քուն կդնեմ. աշխարքումս ապրիմ, ջանս քե՛զ ղուրբան կտամ, թաք դու ծաղկիս, ծլիս, զորանաս, անումի՛դ մեռնիմ»։

Անումի՛դ մեռնիմ, արևի՛դ մեռնիմ, Ա՛ղասի ջան. մոր աչքիդ պահած, հոր աչքի լիս, ո՛րդի ջան. Ալամ աշխարքի գոված, աստծու՝ սիրեկան, մարդի՝ դիրեկան. ջա՛նս քեզ մատաղ, Ա՛ղասի ջան. փուշ էիր տնկում, վա՛րդ էր քեզ դառնում. քարին էիր ձեռը տալիս, քա՛րը հոգի առնում։ Մեկ հոգի ունեիր, հազար աղքատի սրտում. մեկ շունչ ունեիր, հազար հիվանդի բերնում. մեկ անուն ունեիր, արարած աշխարքի միջում։ Երկու ձեռք ունեիր, մեկը՝ ողորմություն տալիս, մյուսը՝ աչք սրբում։ Երաբ, ո՞ւմ մեկ թթու խոսք ասեցիր, որ ինձ անիծեց. ո՞ւմ վրա դուռը հետ արիր, որ ինձ վա՜յ տվեց. ո՞ւմ վեր ընկած տեսար, անց կացար, որ մորդ գլուխը լաց էլավ. ո՞ւմ կաթը կերար, որ քեզ լեղի դառավ. ո՞ւմ ձեռին մեծացար, որ գիշեր-ցերեկ քեզ չօրհնեց. ո՞ւմ ծնկան վրա քնեցիր, որ երեսիդ քրտինքը տեսնելիս՝ հազար անգամ աչքը երկինքը չքցեց, արտասունքը երեսիդ չթափեց ու իր մեղավոր բերնովը չասեց.

— Փառքդ շա՜տ ըլի, ա՛րարիչ աստված. դո՛ւ տվիր՝ դո՛ւ պահիր, իմ կյանքս ա՛ռ, սրա վրա դի՛ր, սրան մեկ փորձանք գալիս՝ ի՛մ աչքը հանիր։ Թուր պետք է սրան դիպչի՝ ի՛մ սրտումը առաջ ցցվի. կրակ պետք է սրան էրի՝ սֆթա ի՛նձ փոթոթի. սրա աչքը ցավելիս՝ ի՛մ աչքը դուս գա։ Թա՛ք ըլի, սա, ո՜վ երկնային թագավոր աստված, զորանա՛, մեծանա՛, իր մուրազին հասնի՛։ Հաց չունենամ՝ դռնեդուռ կընկնիմ, սրան կպահեմ, գլուխս կծախեմ, եմ թողալ սրան ուրըշի ձեռին մուհդաջ, որ թաք, ես մեռնելիս, սա՛ իմ երեսիս հող քցի, սա՛ իմ աչքս խփի, սա՛ իմ գերեզմանս օրհնի, իմ օջախի սինն ու ճրագը սա՛ դառնա, որ իմ հիշատակը աշխարքի երեսից չկտրվի, իմ տան ծուխը չհատնի, չպակսի։

Ա՛ղասի ջան, ծուխս հատավ, կտրվեցավ, տունս քանդվեց, հիշատակս քո՛ռ էլավ, հիմքս՝ տակ ու վեր. աստղս խավարեց, իմ փայ արեգակը վաղուց մեր մտավ, իմ փայ երկինքը վաղուց փուլ էկավ։ Ինձ համար էլ լիս չի՛ բացվում, ինձ համար էլ աղոթարանը չի՛ ծեգում. օրն ինձ համար՝ գիշեր, գիշերն ինձ համար՝ տարտարո՛ս, դժո՛խք։ Վաղուց

եմ գերեզմանիս ղրաղին կանգնել, հորը փորել, հազար անգամ մեջը մտել, դուս էկել, բայց, ա՜խ, հողն ինձ ի՞նչ տեղ կտա, որ քեզ չեմ տեսել. աչքս ի՞նչպես կկպչի, որ քեզ չեմ նայել. գերեզմանումը կդինջանա՞մ, որ դեռ բերանս բերնիդ չառել, լեզուս՝ լեզվիդ, աչքս՝ աչքիդ, դոշս՝ դոշիդ, էդ ջիվան ջանիդ ղուրբան, Ա՛ղասի։ Հրեշտակս ի՞նչպես սիրտ անի, որ ինձ մոտանա. էն ձեռը չի՞ չորանալ, որ ինձ լվանա. էն լեզուն չի՞ փետանալ, որ իմ սուգն անի. էն բեմը ի՞նչպես տեղը կմնա, որ իմ նաշը տեսնի, էն բաժակը կրա՞կ չի դառնալ, որ հոգուս համար պտի խմեն. էն խունկը բո՞ց չի դառնալ, որ ինձ վրա պտի ծխեն։ Որ որդին մոր գլխին կանգնած չըլի, էն մորը ո՞նց պետք է թաղեն. որ որդին ծնողի սուգը չանի, էն ծնողին ո՞նց պետք է հողը դնեն. որ որդին մոր գերեզմանը օրհնիլ չտա, էն քարը ո՞նց պետք է քցեն։

Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. երեսս ոտիդ տակն, Ա՛ղասի. ի՞նչ կըլի՝ մեկ շվաքդ էլա տեսնիմ, հետո հոգիս տամ, մեկ ձենդ էլա լսեմ, հետո աչքս խփեմ, մեկ ձեռդ բերանս առնիմ, հետո շունչս կտրեմ։ Էն ի՞նչ օր էր, որ գլուխդ գոգումս, ձեռներդ դոշիս՝ ջուրն էի գնում, քամակիս կապում. հանդն էի գնում, ուսիս քեզ դնում. մեկ ձեռս բերնումս, մյուսովն քեզ խտտում. խոտ էի հնձում, քեզ ճոճումն պահում, հետդ խաղ ասում ու քեզ օրորում. պտուղ հավաքում, քեզ մեջքիս կապում. հացը բերնիցս հանում, քեզ դեմ անում, ծառիցը պտուղը քաղում, քո խաթրն առնում. հարիր անգամ գիշերը վեր կենում, քեզ ծածկում, ջա՜ն, ղուրբա՜ն ասեհ, լով հետդ քաշ գալիս, արտասունքդ սրբում, երեսդ համբուրում, վրեդ խաչակնքում ու աղոթք անում, կամ քեզ գիրկս առնում, հետդ քուն մտնում։

Հերդ՝ զընդանում, ոտները՝ բխովում. Նազլուն՝ կիսաջան, մահի հետ կռվում. հենց ե՛ս եմ մենակ չոր գլուխս պահում, որ մեկ շունչդ քաշեմ ու քո սուրբ գոգումը գլուխս դնեմ ու քեզ բարով մնա՛ ասեմ. բարով մնա՛ ասեմ ու աչքս խփեմ, որ քո արտասունքն հեչ չտեսնիմ, քո սուգը չլսեմ։ Ա՜խ, ա՜յ իմ կորած որդի, ըմբրի՛ս լուսատու. բաս քո խեղճ մերդ հեչ միտդ չե՞ս քցում, բաս քո չրատար հոր հալը հեչ չե՞ս հարցնում, բաս ջիվան Նազլուդ, որ քեզ ա ուզում. անունդ տալիս, թե աչքը բանում. քո սիրովն էրվում, թե քեզ ա հիշում. շունչը բերնումը, հրեշտակն առաջին, ոտը հողումը, խաչը գլխատակին, պատանը ծալած, խունկն ու մոմն հազրած, աչքը խոր գնացած, բերանը փակված. լեզուն չի բռնում որ անունդ տա. <Ա՜խ քաշելու տեղ նա Ա՛ղ... է ասում, ո՜խ ասելու փոխ նա սի՜... հանում։> Արտասունք չունի, սիրտը հովացնի. էլ թաղաթ չունի, որ ինձ էլ չէրի։ Ոտդ ի՞նչպես ա քարերին բռնում, աչքդ ի՞նչպես ա քուն գալիս, որ մեր մեռնիլը միտդ ա գալիս. գլուխդ էդտեղ լվա՛, էստեղ

չորացրո՛ւ. թո՛ղ մեկ սհաթ ըլի. թռի՛, արի՛, հողին տո՛ւր մորդ, որ էլ մեր չունենաս. մերդ քա՛ր դառնա. Նազլուն հետդ տա՛ր, սա էլա ապրի, քեզ մխիթարի. գնա՛, արևի՛դ մեռնիմ, Ա՛ղասի, արևիդ ձենն ածի. ինձ թաղի՛ր, բայց Նազլվիդ մի՛ թողար, մի՛ դեն քցիր. քեզանից ավելի սա էլ ո՞վ ունի. քեզ ապավինեց. արի՛, սրան հասիր, քանի շունչ ունի. տա՛ր, չտեսնիմ։ Հենց քեզ տեսա թէ չէ, հոգիս ձեզ կտամ. ես հողը կմտնիմ, ձեզ բարով կտամ։ էկե՛ք, թաղեցե՛ք, փախե՛ք, գնացե՛ք, էս դառն աշխարքի՛ցս, ոտըներդ քաշեցե՛ք ու ձեր անբախտ մոր հոգին հիշեցե՛ք»։

Էս թուղթը կարդալիս էլ հարիր անգամ իրանից գնաց ու էլ ետ՝ ետ էկավ ու սկսեց կրկին կարդալ ու ինքն իրան սիրտ դնիլ։ Վերջը թուղթը ծալեց, ծոցը դրեց ու մտքի ծովն ընկավ։ Իրիկնահովն ընկել էր, որ աչքը բաց արեց, ձեռը ծոցը տարավ, որ մոր գիրը մին էլ կարդա, իր սիրեկանիինն ընկավ ձեռը, իր Նազլվինը, ու քիչ էր էրվել, նորեն հազար խանչալ սկսեց սրտումը ցցվիլ. շշկլած, շշմած սկսեց կարդալ։

Նրա թղթի միջքն էլ է՛ս էր։

«Երա՛բ, որ սիրտս հանեմ, էս թղթումը դնեմ, երա՛բ, որ բաց անես ու հազար թուր միջումը ցցված տեսնիս, կիմանա՞ս էն ժամանակը, թե Նազլուդ, քո չրատար Նազլուդ, ի՞նչ ցավ ա քաշում, ի՞նչ օրումն ա, ի՞նչ հալումն, իմ գլխի՛ տեր, իմ ըմբրի՛ թագավոր, Ա՛ղասի։ Ո՞ր սարեր են առաջդ կապել, ո՞ր գետեր՝ ճամփեդ կտրում, ո՞ր ձեռն ա թևիցդ բռնում, ետ քաշում, ա՜յ իմ թագ ու պարծանք, որ էսպես ինձ կրակում թողել ես. ինձ դժոխքը ղրկում, դու արքայությունը վայելում. ինձ սուրը քաշում, դու ձեռներդ լվանում. ինձ դիվանոնցը տալիս, դու հրեշտակների միջին արևիդ ձենն ածում ու երեսդ էլա չե՛ս ետ դարձնում, որ ինձ հողը դնես։

Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. երաբ սիրտդ քա՞ր ա դառել, երաբ աչքդ ծաղիկ ու թուփ էլ չի՞ տեսնում, երաբ երեսդ մի երկնքին չե՞ս քցում, որ տեսնիս, թե ի՞նչ մրրած ամպեր են առաջիդ կանգնած, ի՞նչ կրակ է վերևիցը վեր թափում. չե՞ս իմանում, միթե, ա՛նիրավ, ա՛նչիգյար, թե էս կրակն ու էս բոցը, էս ծուխն ու էս ամպը ի՛մ բերնիցն են դուրս գալիս, ի՛մ սիրտս ա քուլա-քուլա իրանից հանում, վերեն աստղերը խավարացնում, բռնում, ներքևը սար ու ձոր պապանձացնում, անձող շինում։

Հարիր անգամ գերեզմանի դուռը հասել, էլ ետ՝ ետ եմ էկել. հարիր անգամ արեգակը, որ մեր մտավ, ես էլ իմ հոգիս հետը ճամու քցեցի ու, ա՜խ, էլի, ծեգը բացվելիս, հենց իմանում էի՝ հողումն եմ, չէի ուզում շունչ քաշեմ. հենց իմանում էի՝ մեռելների կողքին եմ, չէի կամե-

նում գլուխս բարձրացնեմ, ու էլի մորդ, ա՜խ, քո ումբրը խավարած մորդ ձենն որ անկաջս չէր ընկնում, էլ ետ աչքս բաց էի անում, մաղերս նրա ոտի տակին փռում, որ կամ ինձ սպանի, կամ թե չէ՝ մահի ձեռիցը չխլի, ինձ սաղ-սաղ էսպես չէրի, չխորովի. ամա էլի, որ նրա է՛ն խավարած աչքերը, է՛ն չորացած, մաղ դառած ջանը որ ուշքովս էր ընկնում, որ իմացնում էի, թե նա էլ քո ցավն ա քաշում, քո դարդովն ա էնպես փոթոթվում, քո՛, քո ջանի՛ն մեռնիմ, միտք էի անում, որ թե ես էլ մեռնիմ, էլ նրան աշխարքումը պահող չի՛ ըլիլ. որ ես կորչիմ, նա էլ կենդանի հետս պետք ա հողը մտնի կամ ջուրն ընկնի, խեղդվի. որ միտք էի անում, թե նրա խորոված սիրտը ինձանով ա մի քիչ հովություն գտնում, քո կարոտը, քո հոտն ու համը, քիչ թե շատ, ինձանից ա նա առնում. ինձ որ չունենա՝ կամ սովը պետք ա նրան սպանի, կամ քարեքար ընկնի, մեկ բուռը հողի, մեկ օրհնած տեղի էլ հասրաթ մնա։ Ի՞նչ պետք ա անեի, ո՞ր ջուրն ընկնեի։ Հողիս խմը չէր, որ հանեի, նրան տայի, բալքի նա ապրեր, քեզ տեսնիր, քո սրդար ձեռքը բռներ, գար գերեզմանս ու գլխիս կանգներ, ասեր.

«Ա՛ղասի ջան, է՛ս ա Նազլվիդ հանգստարանը, է՛ս հողին նա իր ջանը ղուրբան տվեց։ Հետս խոսում չէր, որ դարդն իմանայի. ես էլ չոփ էի դառել, աշխարքն աչքիս փուշ կտրել, որ մեկ մոտին նստեի, քրտինքը սրբեի կամ մեկ սառը ջուր տայի։ Ես ի՛մ տեղումն էի կրակի միջումն էրվում, սա՝ իր բարձի վրա. ես ի՛մ գլուխս էի բարձրացնում, որ հոգիս տամ, սրա հրեշտակին էի տեսնում գլխին պտիտ գալիս. ես ա՜խ էի քաշում, որ ձենս քո՛ անկաջն ընկնի, սրա անկաջն էր ընկնում. սրան էրում, մաշում։ Ա՜խ, հինգ ամիս էսպես տանջվեց, չարչարվեց էս խեղճ ջրատարը. ո՛չ դեղ կարաց սրան ետ բերիլ, ո՛չ դեղապետ. ո՛չ տերտեր, ո՛չ հըսկումն. ո՛չ աղոթք, ո՛չ սրբություն։ Մեկ առավոտ էլ, ա՜խ, էն սհաթը գնա, ո՛չ ետ գա, աչքս բաց արի, որ վեր կենամ՝ կամ երեսը ծածկեմ, կամ տեղը փոխեմ, առանը գլխիս փուլ էկավ. աչքերը երկինքն էր քցել, երեսն՝ աղոթարանը, ձեռ ու դոշ բաց արել. հենց իմանաս՝ էն ետին սհաթին էլ իր հրեշտակին ուզեցել էր խնդրի՝ մի քիչ համբերի, որ բալքի թե էս սհաթին էլա մեկ դուռը բաց էիր արել, մեկ քեզ տեսել էր, մեկ համբաթ առել էր ու հետո հոգին տվել։

Ընկի՛ր գերեզմանի վրա, Ա՛ղասի ջան. էս գերեզմանը քո արնի գինն ա, քո աչքի լիսն ա էստեղ թաղած. երեսդ հողին տո՛ւր, որ բալքի հողն էլ նրա մուրազը տա, բալքի հողիցն էլա գալդ իմանա ու գերեզմանումն էլա դինջանա։ Ա՜խ, ի՞նչ կըլեր, որ էնքան ցավը քաշեց, մեկ օր մեկ ձենն էլա իմանայի, մեկ օր մեկ խոսք էլա ասեր, որ սրտումս դարդ չմը-

նար, ինձ էսպես չէրեր, չխորովեր։ Ա՜խ էլ որ քաշում էր, էն կծկված շունչն էր երեսիս դիպչում. լաց էլ որ ըլում էր, էն գետանման արտասունքն էի միայն տեսնում. մեկ աչքն էլա չէր բանում կամ գլուխը բարձրացնում, որ բալքի երեսն երեսիս առներ, աչքը՝ աչքիս, որ մեկ սիրտս հովանար, մեկ լացը դինջանար, աչքս իրան տայի, որ ինչ արտասունք ուներ, ինձ բաշխեր, գետնին վեր չածեր. սիրտս իրան հանեի, բաշխեի, որ բոլոր ցավն ինձ տար, ես էլ անկորուստ էսօր քեզ ամանաթ տայի, որ քանի տեսնիս, իմանաս, թե քո խեղճ, անճար Նազլուդ քո սիրովն մեռավ, քո կարոտովն գետինը մտավ, որ քանի նրա անումը տաս, հրեշտակ էլ որ ըլի, էլ թամահ չանես. էլ է՛ն բարձի վրա ուրիշ գլուխ չդնես, որի վրա որ քո հարազատ Նազլուդ հոգին տվեց. որ է՛դ դոշդ էլ ուրիշի դեմ չանես, որ Նազլվի ջանը հանեց. է՛դ լեզուդ ուրիշի ջան չասի, որ Նազլվին կրակ դառավ, էրեց։

Չէ, Ա՛ղասի ջան, թե քո մերն եմ, ասածս արա՛. քանի Նազլվիդ գերեզմանն աչքովդ ընկնի, քանի քնից վեր կենաս, երեսդ երկինքը քցես կամ իգին մտնիս, ծաղկըներդ ջրես կամ պտուղ քաղես, դոշդ բա՛ց արա, նրա անումը տո՛ւր, նրա գլուխը լա՛ց էլ. թուփ չկա, որ նրա արտասունքը տեսած չըլի. քար չկա, որ նրա դոշին չըլի դիպել. ծաղիկ ու թուփ չկա, որ նրա գլուխը չըլի խառել, սուգը տեսել, հետը սգացել, սրտի ծուխը մեջն առել ու թառամել, չորացել, որ նրա կսկիծը չտեսնի, ձենը չլսի։ Թե իմ կաթն ես կերել, Ա՛ղասի ջան, թե իմ ձեռին մեծացել, քանի շունչդ բերնումդ ա, ոտդ՝ վրեդ, արի՛, արի՛, էս սուրբ հողի վրա կանգնի՛ր, ինձ էլ նրա հետ թաղի՛ր, ու հետո, աստված քեզ հետ։ Քանի որ կենդանի եմ, թուր կցցեմ սիրտս, աչքս կհանեմ, ուրիշի էլ հարս չեմ կարող ասիլ. ուրիշի էլ մեր չեմ դառնալ. ինձ էլ աչքալիս չի՛ հարկավոր, չի՛ հարկավոր. սրա իմ աչքիս լիսն էլ էր սա, իմ օր ու ումբրս էլ, որ կորավ, փչացավ. սրա կոխած տեղը թե ուրիշի ոտ ա դիպել, հոգիս կտամ. սրանից ետը աշխարքս ջավահիր էլ դառնա, էլ ո՞ւմ աչքը կգա, ո՞վ թամահ կանի։ Մեռնելիս էլ՝ անկաջումն էն եմ ասել. գնա՛, իմ ջա՛նի հանող. քանի շունչս վրես ա, Աղասին էլ կարմիր չի՛ կապիլ, էլ ձեռները հինա չի՛ դնիլ, նրա հինեն վաղուց քամուն տվի. մե՛կ բարձի գլուխ դրիք՝ մե՛կ հողում պտի քնիք. ինձ էլ միջըներդ առնեք, որ ձեր սերը գերեզմանումն էլ տեսնիմ, երկընքումն էլ վայելեմ, ձեզ օրհնեմ, ձեզ որդի ասեմ ու աստծուն, ինչպես առաջ, էնպես ամանաթ տամ»։

Գերեզմանի ղրաղին կանգնել եմ, քե՛զ եմ կանչում, Ա՛ղասի ջան, ձեռս ու դոշս բաց եմ արել, քե՛զ եմ կարոտ, ջանի՛դ ղուրբան։ Հողն իմ ձեռովս եմ առել, որ երեսիս քցեմ, որ մատաղդ գնամ. պատանս ե՛ս եմ

կարել, որ մեջը մտնիմ, Նազլո՛ւն չարդ տանի. խունկս ու մումս ու ժամոցս ի՛մ ձեռովս եմ տվել, ա՛նումիդ մեռնիմ. էլ ժամ կամ պատարագ, տերտեր կամ բաժակ ինձ չի՛ հարկավոր, ե՛րեսս ոտիդ տակը։ Հազար անգամ հրեշտակիս ոտն եմ ընկել, ետ դարձրել, որ մեկ էլ ձենդ լսեմ էս քառացած անկաչովս, մեկ էլ երեսդ տեսնիմ էս խավարած աչքովս, մեկ էլ էդ սուրբ ձեռդ էս քարացած դոշիս կպցնեմ, մեկ էլ էդ ազիզ պատկերը էս հող դառած երեսիս դնեմ ու էս էրված, խորովված, քրքրված հոգիս ու շունչս քեզ տամ, Ա՛ղասի ջան. բաս սիրտդ էնպես մեռել, փետացել ա, որ էլ ինձ չե՛ս սիրում։ Ա՜խ, ի՞նչ անեմ, ի՞նչ ասեմ. սիրտս՝ լիքը, ձենս՝ կարճ, տեղդ՝ հեռու. ո՞վ մեր դարդին ճար կանի»։

Ողորմելի աղջիկն էլ չէր կարացել իրան պահի. կեսուրն էլ էն վախտը վրա հասավ, որ էնպես փետացել, վեր էր ընկել. ձեռիցը բռնեց, դողդողալով տուն տարավ ու տեգորը խնդրեց, որ գնալիս՝ էս բայաթին էլ մեկ աստվածասերի գրիլ տա, հետը տանի, որ Նազլուն վաղուց իրանից հանել էր ու ամեն օր ազալով ասում.

ՆԱԶԼՎԻ ՍՈՒԳԸ

Գարունքը բացվել ա, դաշտեր կանաչել,
Ծառերը ծաղկել, սարեր զարդարել,
Բլբյուլն իր վարդի սիրովն կշտացել,
Հենց ե՛ս, ա՜խ, սիրույդ կարոտ մնացել: Ա՜խ, կարոտ...

Ինչ քար տեսնում եմ, դո՛ւ ես առաջիս.
Ինչ խոտ կոխում եմ, դո՛ւ միտս գալիս.
Աղբրի ջուրն էլ ք՛ո համն ա տալիս,
Հանդի ծաղիկն էլ ի՜մ օրը լալիս: Ա՜խ, օրս լալիս...

Աչքիս լիսն էլ, ա՜խ, լալով փչացավ,
Ա՜խ, ո՜խ քաշելով լեզուս չորացավ.
Ո՞ւմ սիրտս բանամ, ո՞ւմ ասեմ իմ ցավ,
Ասեմ էլ, երաք, ո՞ւմ սրտին կտա ցավ: Ա՜խ, կտա...

Չե՛մ ուզում աչքս երկինքը քցեմ,
Լիսնյակն, արեգակն ինձ հավար կանչեմ.
Սի՞րտ ունին նրանք, որ իմ դարդս ասեմ.
Արի՛, արեգա՛կ իմ, քե՛զ կարոտ եմ: Ա՜խ, քեզ...

Երաք քո սիրտն էլ հետս գա՞վում ա,

Երաք անուշս միտդ գա՞լիս ա,
Թե՞ չոր քարերը ձենս ու սազս լսում,
Ո՛չ հետս խոսում, ո՛չ սիրտս առնում: Ա՜խ, սիրտս...

Է՛դ սուրբ երեսդ մեկ էլ ես տեսնիմ,
Մեկ էլ մոտիդ նստիմ, մեկ ոտովդ ընկնիմ,
Թո՛ղ էն ժամանակն ես տամ իմ հոգին,
Մեռնի՛մ արևիդ, էդ ոտիդ տակին: Ա՜խ, ոտիդ...

Նազլվիդ աչ՛քը ճամփին մի՛ թողար,
Նազլուդ մի՛ սպանիր, Նազլուդ ջրատար
Քեզ ղուրբան ըլի. հասի՛ր նրան հավար,
Հասի՛ր, հողը դի՛ր, հոգին հետդ տա՛ր: Ա՜խ, հետդ...

<7>

Ա՜խ, ա՛յ իմ աստվածասեր կարդացող. քար ըլեր, էս խոսքերը կպատռեր, ո՞ւր մնա մարդ, էն էլ Աղասին, որ սիրտը բարակել, փոշի էր դառել։ Բայց մարդիս հոգին խոր ա, ջիլը՝ կակող. քանի ձգվում ա, բարակում է ու հանկարծ կտրվում։ Լեն օրին ա մարդ շատ անգամ իրան մոռանում, թե չէ նեղությունը միայն հոգին մաշում է, բայց շուտով չի հանում։ Աղասու էնքան էրվիլն ու տանջանքը որ տեսնում էին փամբակեցի կտրիճ հայի տղերքը, խոսքըմին արին, որ գնան, թաքուն նրա մորն ու կնկանը փախցնեն, բերեն, բայց խելոք մարդիկ խորհուրդ չտեսան, չունքի խեղճ ծերունի հորը բանտումը թիքա-թիքա կանեին։ Շատ անգամ վարավուրդ էին անում, որ Աղասին միտը ծռել, ուզում ա գնա հռոնումոր հավարին. բուսուն բռնում, ետ էին դարձնում։ Էնպես՝ տանջվելով էս ձմեռ էլ անց կացրեց, մինչև գարունքն էլի բացվեց, ու թուրք ու հայ յայլաղ դուս էկան։ Աղասին էլ հետըները գնաց։

Աղբրների գլխին, ծաղիկների վրա օբեքը իրանց չադրները տվին ու մալն արին էն անմահական դրախտը։ Առավոտը որ տեղիցդ վեր էիր կենում, հազար սարի ծերից ամպն ու ծուխը, իրար հետ խառը, երկինքն էին վերանում ու շաղն ու ցողը անձրևի հետ նրանց չորերի, երեսների վրա դնում։ Կնանիքը կթի տավարի հետ էին ըլում, կաթը հավաքում, եղ ու պանիր շինում. մարդիկը տավարը սարը տանում կամ բուրդ ու եղ բազարը բերում, ծախում, իրանց տան պակասությունը հոգում։ Մենակ էս չէր կնանոնց գործը. ցերեկը ջահրա էին մանում, շալ ու խալիչա կամ

կարպետ գործում ու իրանց օրը ուրախ, միամիտ անց կացնում։ Էլ ի՞նչ ասիլ կուզի, որ տան պես աղջիկ ու հարս էստեղ կուչ ու ձիգ անելով չէին ման գալիս կամ երեսները կալնում։ Մեկ տան պես, ում օբեն մըռնեիր՝ ճուչ էր, որ վարդի պես փայլում էր, աչք էր, որ մարդի խելք տանում էր։ Է՛ն օդի ու ջրի, է՛ն ծաղկի ու կանաչի հոտն ու համն առնողի հոգին ու ռանգն ի՞նչ կըլեր բաս։ Հայտնի բան է, որ ֆորսի ո, շատ անգամ, գողի ու հարամու հետ շաբթով էին ման գալիս ջահել տղերքը, ու սպանած կամ բռնած ժամանակը մեկ հարսանիք էր ըլում ըոլոր օբեքանց միջին։ Ղոնաղ պատահեր՝ էստեղ պատահեր։ Շաբթով, ամսով էլ չէին թողալ հեռանա. ու աղբրների քչքչոցը, ջրերի խշշոցը, ծառերի սըլսըլոցը, ղշերի ծլվլոցը, չոբանի թութակը, գառան, ոչխարի ու տավարի ձենն ու բառանչը ամեն մարդի ուզում էին ասեն. «Թե դրախտ ես կամենում, է՛ստեղ կաց, է՛սպես կաց. սիրտդ՝ անմեղ, միտքդ՝ հիստակ»։

Չե՛մ կարող ասիլ, թե էս տեղի փոփոխությունը Աղասու սիրտը բաց չի արեց. քար ըլեր, կկակղեր, կրակ ըլեր, կհանգչեր, ո՞ւր մնա նրա սիրտը։ Բայց Աղասու գլխին դեռ չար հրեշտակ էր պտտում, ու ինքը՝ ողորմելին, չէ՛ր իմանում։ Շատ անգամ սարից որ օբեն չէր մտնում, հազար աչք մնում էին վրեն հայիլ-մայիլ։ Իլահիմ որ իմացան նրա պատմությունը, ամեն աչք ուզում էր նրա՛ համար բացվի, ամեն բերան՝ նրա՛ն իր շունչը տա։ Ում որ մեկ ծաղիկ չէր թավազա անում, աչքը արտասունքով լիքը՝ ուզում էր ձեռի տեղակ սիրտը դեմ անի, քթի տեղը հոգումը դնի նրա տված ծաղիկը։ Ով մեկ անուշ թիքա ուներ, նրա համար էր պահում. մեկը սե՛ր էր նրա առաջին դնում, մեկը՝ ձվածեղ, մեկը՝ գառան միս, մեկը՝ պախրի խորոված։ Շատը նրան ղոնաղ կանչելիս՝ գառն ու ոչխար էին մորթում, որ նրա սիրտն առնին։ Նրա տխուր բայաթու ձենը, նրա աղիողորմ սուգը կամ արտասունքը որ չէին տեսնում, մեծ, պստիկ ուզում էին նրան մատաղ դնան։ Աղջկերքը որ չէին դաստա-դաստա սարի դոշին ման գալիս, ծաղիկ քաղում, գլուխ ու դոշ զարդարում, սիրտն ուզում էր, թե սպաքի, որ իր Նազլուն էստեղ չէ՛ր։

Բայց Մուսեն, ջիվան Մուսեն. ո՛չ Նազլու ուներ, որ դարդ անի, ո՛չ հեր, որ բանտումը տանջվի. մեկ ջահել մեր ուներ, էն էլ էսօր-էգուց էր ընկել, որ մեկ քիր կամ ախպեր էլ նրա համար բերի։ Բոյն էկել, շլշակացել էր, չինարի դառել. բեղերն նոր էր բերնի վրա ծաղկել. Թուխ-թուխ ճալվերը շարմաղ երեսին հովին անելիս, հենց իմանաս, հրեշտակ ըլի թևով խփում։ Տասնըվեց տարին անց էր կացել, դեռ նա ծուռն աչքով մեկի երեսի չէ՛ր մտիկ արել։ Բաղի վախտ, մեկ քող կամ սպիտակ լաչակ տեսնելիս, ղորդ ա, խելքը գլխիցը գնում, սիրտը կրակով լցվում, աչքերը արտասունքը կոխում, ուզում էր սար ու ձոր ընկնի, գլուխն առնի, կորչի։ Ամա մեկ քանի օր որ անց էր կենում, աչքը էլ որ չէ՛ր տեսնում, սիրտն էլ հովանում էր։ Բաղի վախտ, էնպես գիտես, թե նրան վեր ըլին քաշում։ Հովը տալիս, ծառը ծաղկելիս, ջուրը քչքչալիս, հենց գիտես, թե մեկ աներևույթ ձեն նրան ասում ըլի. «Մո՛ւսա ջան, քնի՛. ես աչքդ կկըպցընեմ, երազումդ հետդ կխոսիմ, որ զարթնիս, գյում կըլիմ, չունքի վախտը չի՛ հասել, որ դու քո նասիբը գտնիս։ Ինչ որ ճակատիդ գրած ա, էն պետք է ըլի»։ Քնից որ վեր էր կենում, հենց իմանում էր, թե հրեշտակները մոտիցը նոր թռան։ Նա չէ՛ր իմանում, թե սերն ա էս, որ քիչ-քիչ նրա սրտումը տեղ էր պատրաստում։

Մեկ օր էլ էսպես, մեկ ծառի տակի քնած տեղը, երազում մեկ թաս գինի բերին, դեմ արին նրան ու մեկ հրեշտակի պատկեր նրան՝ թևերն երեսին փռած, կամաց ձեն տվեց.

— Մո՛ւսա ջան, յա խմի՛ր էս թասը, յա ինձ սպանի՛ր, իմ կյանքս քո ձեռին ա։ Հերնըմեր չունիմ, ընկել եմ մեկ անօրեն տաճկի ճանկ։ Ղարսա սարումն ա մեր օբեն, թե սիրտ ունիս, թե աստվածդ սիրում ես, արի՛, ինձ ազատի՛. չե՞ս ազատիլ, քո օրումդ դու կյանք չե՛ս տեսնիլ։ Մո՛ւսա ջան, գնում եմ, դու գիտես։ Արի՛, թե չէ, էս ա, քսան օր ա, ինձ տանջում են, որ թուրքանամ, չեմ թուրքանում, քեզ եմ սպասում։ Ինձ երազումս ասացին, թե դո՛ւ ես իմ ազատողը։

Աչքը որ բաց արեց, հենց իմացավ, թե ծառ, խոտ, ծաղիկ անմահական հոտով լցված ըլին. ու արեգակի շողքը երեսը սըլալելով՝ ուսուլով սարի քամակը անցավ։ Ուզում էր խոսա, ձենը չէ՛ր դուս գալիս. ուզում էր վեր կենա, ոտն ու ձեռը չէ՛ին զորում։ Թութակի ու շվու ձենն էլ որ անկաջը չընկավ, էլ ետ աչքը խփեց։ Ա՜խ, ի՞նչ կըլեր, ջահելությունը նրան չէ՛ր էսքան հաղթել, սերը չէ՛ր էսքան նրան թմբրացրել։

Մութը գետինն առավ։ Մատդ որ կոխեիր մարդի աչք, չէ՛ր տեսնիլ։ Ամպերը սարերիցը գլխները բարձրացրին, ոտները կտրեցին. չանկ ու դուման սար ու ձոր բռնեց։ Հենց գիտես՝ հազար վիշապ բերանները բաց արած, գալիս են, որ սար ու ձոր կուլ տան։ Կայծակը էստեղ-էնտեղ որ շախմախին չտվեց, սարըցիք իմացան, թե ի՞նչ խաբար ա. տավար, ոչխար աղալի մեջն արին, թվանքներն առան, շները բաց թողին, չունքի լավ գիտեին, որ գողի, հարամու, ջանավարի ղզղուն վախտը հենց էս ա։ Ամպերը որ թափ ու թափխանեն չսարքեցին, ո՛վ ոտ ուներ, փախավ, ո՛վ աչք ուներ, փակեց. օղլուշաղը ալաչուխի տակն արեց, ճրագ, կրակ հանգցրեց, որ աչքը մի քիչ էլա բան տեսնի, ու հենց ոտի վրա՝ ամենը մի կտոր հաց առան, էն էլ գոտիկը դրին, չկերան, որ տեսնին, թե վերջըներ-

րը ի՞նչ կըլի, ի՞նչպես կլուսանա։ Մեկ բարակ կարկուտ, անձրևի հետ խառը, էկավ, վրըներովն անց կացավ։ Երկինք, գետինք սկսեց կրակվիլ։ Կայծակը որ չէր ղամշում սարերի գլխին, ուզում էին, թե հազար գազ խոր գնան։ Ամպը որ չէր թոփի բերանը բաց անում, գետինն ուզում էր հազար կտոր ըլի ու հոգին տա։ Ճրագ չկար, որ մարդ տեսնի. ձեն մարդի անկաջ չէր հասնում։

Աղասին պատռեց գոռալով, Մուսի անունը տալով, բայց ջուրը տանի նրա մորը. նա ի՞նչ տեղ էր, որ խոսք իմանա, ի՞նչ նեղ սհաթի, որ գլուխ առնի, փախչի։ Աղասու ընկերքը ամեն մեկը մեկ սար ընկավ, գլուխը մահու տվեց. հարիր տեղ թվանք քցեցին, ու ո՞րքան էր նրանց ահն ու երկյուղը, երբ որ իմացան, թե նրա թվանքն էլ վրեն չի՛։ Աղասին մահվան դուռը գնաց։ Ամպն էլ ետ դառավ, կայծակն էլ, բայց գիշեր էր, ի՞նչ տեղ պետք է նրան քթնեին։ Ընչանք ծեգը բացվեց, օձերը ծնեցին, ու ո՞վ նրանց հալը կարա պատմիլ, երբ էկան տեսան, որ ջիվան Մուսեն՝ արնի միջումը շաղախված, չորս կողմի խոտն ու թուփը պոկած, մեկ ահագին քաֆթառ նրա դոշին նստած, Մուսի ձախու ձեռը բերնումը, քիչ մնաց, որ թուրն իրանց սիրտը կոխեն. որ ձեն չտվին ու վա՜յ տվին, հսկայն Մուսա աչքը բաց արեց, ընկերներին որ տեսավ, գլուխը ժաժ տվեց ու ժըպտելով ասեց.

— Աֆա՛րիմ, լավ վախտի եք գալիս. էկե՛ք, կուռս հանեցե՛ք. ղամեն շատ խորն ա գնացել, ձեռս էլ հետը. ինձանում էլ թաղաթ չկա, որ հանեմ։

Ո՞ւմ աչքը էն ուրախությունը կտեսնի, ինչ նրա ընկերների աչքը տեսավ։ Վրա թռան, քաֆթառին դեն քցեցին, ու Մուսեն որ կուռը չհանեց, կեսը, հենց բռնի՛ր, ծամած էր։ Մեկ սաղ սհաթ Աղասին նրա դոշիցը չէ՛ր պոկ գալիս։ Էնպես գիտում էր, թե է՛ն կյանքիցն ա վեր էկել։ Սարըցիք էլ էս ջիվան, իգիթի սիրտը տեսնելով՝ մնացել էին զարմացած, ու սաղ շաբաթը հենց է՛ն էին խոսում։

Բայց Մուսի աչքիցը քունն էր փախել, սրտիցը՝ ղարարը։ Արեգակն էր դուս գալիս, նրա օրը մեր էր մտնում. օրն էր մեր մտնում, նրա ցավերն էին նոր ի նորո բացվում։ Սար ու ձոր նրա համար դժոխք էր դառել։ Գիշեր-ցերեկ նրա կերած հացը, նրա խմած ջուրը, նրա տեսած լիսըն ու երազը է՛ն սքանչելի պատկերն էր, որ իրան կանչել էր։ Ծառերն էին սլլում թե ջուրը քչքչում, քամին էր փչում թե հովը հնչում, նա ո՛չինչ ձեն չէր իմանում, ո՛չինչ չէր տեսնում, եթե ո՛չ՝ իր սիրեկանի երկնային դեմքը։

Հսկայն Աղասի, որ իր վերջին օրումն էլ չէ՛ր ուզում, որ իր ընկերների

մեկի մալն էլա թեքվի, վաղուց էր վարավուրդ արել սրա էս նեղությունը, վաղուց էր իմացել, որ իր սիրեկանի սիրտը, ուշ ու միտքը թռել ա, էլ վրեն չի՛. ամա չէ՛ր իմանում, թե պատճառն ի՞նչ ա։ Գիտեր, որ նրան աչքի լսի պես էր մինչև էն օրը պահել, բայց թե ի՞նչն էր էսպես նրան էրում, խորովում, չէ՛ր կարում հասկանալ։ Նա տեսնում էր, որ ջիվան Մուսին մեկ աղջկա ձեն լսելիս, մեկ աղջկա պատկեր տեսնելիս, իրանից գնում, խելքամաղ էր ըլում, ամա էնպես կարծում էր, թե էս էն առաջին կրակն ա, որ ամեն ջահել մարդի սիրտ վառում, բորբոքում ա, երբ ինքն իրան ճանաչում ա, երբ արինը եռ ա ընկնում, ու սար ու ձոր մարդիս աչքին յա սազ ու քյամանչա են դառնում, ուշ ու միտքը տանում, յա թուր ու դանակ դառնում, սրտումը ցցվում։ Շատ օր ճտովն էր ընկնում, լալիս ու աղաչանք անում, որ իր դարդն ասի, արտասունքից ավելի ո՛չինչ չէ՛ր տեսնում, լացից ավելի ո՛չինչ չէ՛ր լսում։

Շատ անգամ սիրտը բերանն էր գալիս, որ իր ցավերն ասի, ամա լեզուն չորանում էր, պապանձում, երեսը կարմրատակում, չէ՛ր գիտում, թե ի՞նչ ջուղաբ տա. դողդողալով սարերն ու ծառերն էր նրան նշանց տալիս։ Ընկերքն էլ էին մնացել մաթալ. որ մի ֆռսանդ էր ճարում, էլ հաց ու ջուր միտքը չէ՛ր բերում, գլուխն առնում, կորչում, ու սար ու ձոր պետք էր ոտնատակ տված, որ նրան մեկ տեղ քնած քթել էին։

Մեկ օր էլ էնպես Մուսին ման էին գալիս, որ մեկ քարափի տակից էնպես մեկ ձեն էկավ, որ մարդ լսելիս՝ ջանը վրեն սրսռում էր։ Քամին ձենը ձորն էր քցել, ու քարերն էին խոսքերը ետ ասում։

ԲԱՅԱԹՈՒ ԳՈՒՆՈՎ

Հրեշտակ էիր, որ ինձ երևեցար, ա՜խ, ինձ երևեցար,
Երկրո՞ւմն ես ծնվել, թե՞ երկնքից էկար,
Մեկ ջան ունեի, էն էլ դու տարար,
Ա՜յ իմ սուրբ պատկեր, արի՛, հոգիս ա՛ռ։
Ա՜խ, հոգիս ա՛ռ...

Մեռնիմ՝ չե՛ս տեսնիլ, կորչիմ՝ չե՛ս ման գալ,
Սո՛ւր կոխեմ սիրտս, դու չե՛ս իմանալ.
Ո՞ւր կորչեմ, որ էս անողորմ չանգալն
Սիրտս չխռվի, չթողա ինձ լալ։ Ա՜խ, չթողա...

Երա՜զ թե քո՞ւն ինձ, ա՜խ, մահ են դառել,
Իմ սև օրս՝ գիշեր, կյանքս խավարել.
Ի՞նչ պետք է անեմ, ո՞ւր եմ ապրում էլ,
Թե ոտիդ տակին մատաղ չե՛մ ըլիլ: Ա՜խ, մատաղ...

Ամպին իմ սրտիս դարդերը պատմում,
Ցրվում, գալիս չի՛ ու քեզ ետ ասում.
Քար ու սար աչքիս աղի արտասունքն
Էլ ետ սիրտս ածում, էլ ետ ինձ էրում: Ա՜խ, ինձ էրում...

Քանդեցիր անմեղ իմ հանդարտ հոգին,
Կրակ քցեցիր իմ ջանն ու մարմին.
Թե հրեշտակ էիր, ո՞ւր էն սուրն, էն կրակն.
Խրի՛ր իմ սիրտս, թափի՛ր իմ գլխին: Ա՜խ, թափիր...

Կգա՛մ, հո՛գի ջան, կգա՛մ քո ոտքը,
Քեզ մոտ ա սիրտս, քեզ հետ՝ իմ միտքը.
Բայց ի՞նչ տեղ ես քո անձման դեմքը
Տեսնիմ, կատարեմ իմ տված խոսքը: Ա՜խ, իմ խոսքը...

Որ ընկերքս էլ ինձ, ա՜խ, քոմակ չըլին,
Երես դարձնեն ու չըլին խոսքըմին,
Կընկնիմ սարեսար ու քո հավարին
Կըհասնիմ, դարդ չանես, քեզ մատաղ ըլիմ:
Ա՜խ, քեզ մատաղ...

Թո՛ղ մեկ էլ տեսնիմ քո սուրբ պատկերը,
քո սուրբ պատկերը,

Թո՛ղ մեկ էլ տա ինձ բաժակ քո ձեռը,
Մեկ շունչդ առնիմ, ընկնիմ սարերը,
Քեզ մատաղ անեմ իմ գլուխս, իմ օրը:
Ա՜խ, իմ գլուխս...

Ասեց ողորմելի պատանին ու սկսեց գլուխը քարին դնիլ:

Արևգակն ուզում էր մեր մտնի: Աղասին, որ թաքուն ետևիցը դուս էկել, մեկ թփի տակից անկաջ էր անում, սիրտը էրվում, չուզեց ողորմելու քունը խառնի, մնաց քարի վրա նստած ու աչքը իր ազիզ ընկերի

աչքին քցած՝ սկսեց իր դարդերը միտքը բերել, իր ջահելությունը ֆիքր անիլ ու մտքումն ասել. «Ա՜յ ջիվան, ջիվան տղա՛. լավ իմանում եմ՝ ի՞նչ թուր ա էկել, սրտիդ դեմ առել. ի՞նչ կրակ ա ընկել, լերդդ էրում ու ջիգյարդ. բայց ի՞նչ անեմ, ընչի՞ չես սիրտդ ետ բանում, որ մեկ քո ցավդ իմանամ ու էլած կյանքս էլ քո ուղուրիդ մատաղ անեմ: Ա՜խ, լավ եմ իմանում, ա՛ղիզ ջան, որ սիրո թևը երեսիդ քսվել, սիրո նետը քեզ էլ ա դիպել, բայց ընչի՞ չես պարզ ասում, որ գլուխս ետ դնեմ, սիրածդ գետնի տակին էլ որ ըլի, հանեմ, ձեզ ձեր մուրազին հասցնեմ ու ես էլ ձեր ոտի տակին հոգիս տամ: Մեր ու նշանած գլխիս կրակ են ածում, սար ու ձոր ինձ, քիչ ա մնում, ուտեն, մեկ քար չունինք, որ գլխըներս վրեն դնենք, էլի դու, ո՛վ սեր, ո՛վ բնություն, ուզում ես ցույց տալ քո զորությունը: Ա՜խ, ո՞ւր կորչի մարդ, որ քո ձեռիցը պրծնի, քո ցավը չտեսնի: Առաջ վառում, բորբոքում ես մեր սիրտը, հետո էրում, խորովում. առաջ վարդի հոտով գալիս, մեր սիրտը մտնում, հետո փուշ ու սուր դառնում, մեզ կտրատում»:

Էս խոսքերը միտք անելիս՝ բիրաղի անկաչն ընկավ.

— Հա՛, Հռիփսիմե ջան, քո ջանի՛ն ղուրբան. քո սրբի անունը կտամ ու էգուց, էգուց Ղարսա սարերումն ինձ կտեսնիս:

Աղասու էրված սիրտն էլ հենց է՛ս էր ուզում իմանա: Էնքան կացավ, որ սիրելին քնից կշտացավ, ու իրան-իրան որ աչքը չի՛ բաց արեց Մուսեն, վրա թռավ, ճտովն ընկավ, կպցրեց նրան դոշին ու լալով ասեց.

— Ա՜խ, ա՛չքի լիս, որ սրտումդ էդպես դարդ ունիս, հենց իմանում ես՝ քա՞ր եմ, որ ինձանից բան ես թաքցնում: Չէ՛, էնպես ես կարծում, թե էս իմ խորոված ջիգյարը, որ էլ սաղ տեղ չունի, քո դարդի համար էլ տեղ չի՞ քթնիլ, քո ցավը չի՞ քաշիլ, էլած շունչս ու ումրըս քե՞զ չեմ տալ: Հենց իմանում էի՝ աստվածանից դու բան կթաքցնես, ինձանից չե՛ս թաքցնիլ: Է՞դ ա քո սերդ ու սիրտդ: Հենց իմանում էիր, թե Աղասին էնպես մեռել ա, որ քեզ համար մեկ ա՜խ էլա չի՞ քաշիլ, քեզ համար մեկ կաթ արտասունք էլա չո՞ւնի: Հերնըմերս, ղորդ ա, մահվան դուռն են հասել, նշանածս, ո՞վ ա գիտում, հողի տակին ա, թե երեսին, ամա քանի նրանց ձեռս չի՛ հասել, ե՞րբ կթողամ ձեր մեկի աչքը ցավի, ձեր մեկի մազը թեքվի: Մինչև ես մեռնիմ ո՛չ, մինչև ինձ թիքա-թիքա չանե՛ն, ձեզ կթողա՞մ, որ մեկ ղուշ անց կենա գլխըներիդ վրա: Վե՛ր կաց, երեսդ սըրբիր, ինձ ուղիղ ասա՝ էդ քո ջանը հանող Հռիփսիմեն, էդ հրեշտակն ո՞վ ա, որ քեզ երևացել ա, քեզ տանջում, մաշում, ու դու մեզ բան չես ասում: Հազար սար ու ծով մեր մեջն ըլի, էլի կթռչիմ, նրան կհանեմ, կբերեմ, թաք ըլի դու դարդ չանես, երեսիդ մեռնիմ: Ասում ես՝ Ղարս ա: Էդ հա

երկու ոտը տեղ ա, դրա համար էդքան պետք է է՞րված։ Վե՛ր կաց, դեռ երեխա ես, դեռ գլխիդ բաներ չի անց կացել շատ, որ մարդ ճանաչես։ Վե՛ր կաց, էլ ամաչելու, գլուխը կախ անելու վախտը չի՛։

Մուսի աչք ու երեսը կրակ էր դառել ամոթու, չէ՛ր իմանում, թե իր մեծահոգի բարեկամի ո՞տներն ընկնի, թե՞ ձեռը համբուրի։ Արտասունքն ու դամարի սաստիկ խփիլը ցույց էին տալիս, որ Մուսին ուզում էր ասի, լեզուն չէ՛ր բռնում. բերանը փակվում էր, պապանձվում, որ ձեն տա. «Ա՛ղասի ջան, յա մորթի՛ր ինձ, յա սպանի՛ր էստեղ. յա ասածս արա, իմ մուրազին հասցրո՛ւ. Հռիփսիմեն որ չըլի, էլ ինձ ո՛չ կյանք ա հարկավոր, ո՛չ օր. Նրա շունչը որ չառնիմ, ես ինքս իմ շունչս բերնիցս կհանեմ, կկտրեմ. Նրա աչքը որ աչքիս չառնի, աչքս կփորեմ, դեն կքցեմ։ Դո՛ւ ես իմ տերը, իմ աստվածը. իմ ձեռս քո փեշն եմ քցել. յա ձեռս կտրի՛ր, յա գլուխս, յա իմ մուրազը անկատար պետք է չթողաս, պետք է ինձ սաղ-սաղ չէրես, չփոթոթես»։

Էսպես՝ որ ձեռք-ձեռքի ետ էին դարձել, գալիս էին, Աղասին իր սիրելու գլուխը դոշին կպցրած՝ քաշում էր նրան, քանց թե բերում, մյուս ընկերքն էլ, որ սաղ գիշերը չէին քնել դարդու, ուրախ-ուրախ վազեցին առաջ, հենց իմացան՝ արեգակը նոր ա բացվում, էկան, էրկուսին էլ մեջ արին ու չադիրը գնացին։ Սարըցիք էլ ուզում էին, որ ուրախությունիցը հոգիները տան։

Աղասին մտածման մեջ ընկած, աչք ու ունք կիտած՝ չադիրը մտավ թե չէ, տղերքանցը իշարաթ արեց, որ ձիանը հավաքեն, յարաղ-ասպաբ հազիր անեն, որ էն գիշեր դուս պետք է գնան։ Չէ՛ր ուզում, որ մարդ իմանա. վախում էր, թե իրան բռնեն, չթողան։ Էն իրիկունը բոլոր սարըցոնցը գլխին հավաքեց, նրանց խոսքով արեց, որ կասկած չտանին, հազար բերնով իր շնորհակալությունը էնպես էր ուզում ցույց տա, որ նրանք ո՛չ նրա միտքը իմանան ու, թե փախած ըլի, չասեն, թե ի՞նչ վատ մարդ էր նա, որ մեկ դարտակ շնորհակալություն էլ նրանց չասեց։ Էնքան աղ ու հացըները կերավ, բոլոր ոտի տակ տվեց ու վեր կացավ, փախավ։ Շատ էին նրան աղաչել ու լալով ասել, թե նա նրանց միջումը մնա, իրանք իրանց կերթան, կնյազին կխնդրեն, որ իրանց ուզբաշին, իրանց կառավարիչը նա ըլի, ու ասում էին.

— Մենք գիտենք, թե ի՞նչպես հոգի կտանք քեզ, որ արարած աշխարհ իմանա, թե հայի ազգումն էլ սիրտ կա, հայումն էլ ռաշիդ տղամարդին սատծու տեղ պաշտիլ գիտեն։

Էս իրիկուն էլ գլխին ժողոված մեծ ու պստիկ էլի էն էին ասում ու վրա բերում, թե որ նա իրանց միջիցը հեռանա, աշխարք նրանց համար

քանդված ա, ու նրանց աչքն էլ արեգակին ուղիղ չի՛ մտիկ տալ, նրանց սիրտն էլ լավ օր չի՛ քաշիլ։ Քանի նրա ասած խոսքերը, նրա տեհած բաները տեսնին, կուզեն, որ էրթան, ջուրը թափին, նրանց օրն ու ումրը կսեանա։ Ամեն էսպես խոսք լսելիս՝ ինչ Աղասու բերնիցն էր դուս գալիս, լեզու պետք է ըլի, որ պատմի. սիրտ պետք է ըլի, որ իմանա։ Տեսավ, որ անմեղ սարըցիք հենց նրա բերնին են կարոտ, ուզում են, որ սաղ գիշերը նրա կշտիցը չհեռանան, նրա մոտին նստին։ Հա՛, շատ էլ էկել, գլուխը նրա գոգին էին դրել ու երեսին մտիկ անում, սատծն իմանում. աղջիկ ու հարս էլ չադրի դուռն ու դրաղն էին կտրել ու ա՜խ քաշում. տղերքանցն իշարաթ արեց, որ ձիանները հազրեն, առավոտը ֆորս պետք էր գնար, գան, մի քիչ քնին, դինջանան, ամեն բան հազիր ունենան, ու ինքն էլ գլուխը թեքեց, որ սաքի թե աչքը կպցնի, խալխը քաշվեցին, բարի գիշեր ասացին, ու ամեն մարդ իր չադիրը գնաց։

Հենց աղոթարանը կարմրատակեց, ու ամպերն սկսեցին գլխները քիչ-քիչ սարերիցը բարձրացնիլ, տղերքը ձիանը թամքեցին, յարաղ-ասպաբ քցեցին, էկան, չադրի դռանը կանգնեցին։ Աղասու ձին ոտին-գլխին էր անում։ Սարերի ծաղկըները ու ջուրը նրա միսը անկյաշումն էին դուս բերել, էնքան չաղացել էր։ Ընչանք սարըցիք վեր կկենեին, որ իրանց կով ու ոչխար կթեն, նրանց զոնաղները մնաք բարով ասացին, ձիանոնց գլուխը ծռեցին ու թռան։ Աչք էր, որ ետևներիցը մայիլ էր մնացել. սիրտ էր, որ ասում էր իր միջումն՝ երանի՜ նրան, որ էսպես զավակ, էսպես փեսեք կունենա։ Սարը բարձրացան թե չէ, Աղասին, որ ման էկած սարերին ու ձորերին, իր տեսած ծաղկներին ու աղբրներին, իրան սրբի պես պաշտող անմեղ սարըցոնց օբեքանցը մտիկ չարեց, խելքը թռավ, աչքերը լցվեց ու սկսեց բարակ ձենով էս բայաթին ասել։

Բարո՛վ մնաք, բարո՛վ, սարեր ու ձորեր,
Ալվան ծաղկըներ, սիրուն աղբրներ,
Որ ինձ պահեցիք դուք էսքան օրեր,
Ա՜յ անմեղ հայեր, սիրուն աղջըկներ:

Աղասին բալքի ձեզ էլ չտեսնի,
Աղասին ձեր վրա, կըլի, էլ չքնի,
Ձեր ճոտը չառնի, ձեր կշտովն չանցնի,
Ձեր ձենը չլսի, ձեզ կարոտ մեռնի:

Հալալ արե՛ք նրան ձեր աղ ու հացը,
Քանի նա ձեզ մոտ կանգնած՝ իր լացը
Ծոցն ա հավաքում, քանի աչքը բաց՝
Ձեզ միտքը բերի, օրհնի ձեր արածը:

Ա՜խ, ի՞նչ կըլեր՝ ոտս կոտրեր, էստեղ չգար,
Ձեր ազիզ երեսն չտեսներ, էսպես չլար.
Ի՞նչ կըլեր՝ աստված ամեն մարդի տար
Ձեր անմեղությունը, ձեր հալալ պաշարն:

Երաք, յարալու սրտիս ասածը
Կլսե՞ք ձեր մտքումն, թփե՛ր բաց էլած.
Ձեզ վրա մեն գալիս՝ ձեռ-ձեռի տված
Աղջիկ ու հարսներ, ձեր մոտիկ նստած:

Սիրո՛ւն աղբրներ, լաջվա՛րդ ծաղկըներ.
Երա՜ք, որ նրանք ձեզ քաղեն, ծոցերն
Լցնեն, հոտ քաշեն, զարդարեն դոշերն,
Իրար տան, կապեն փունջ ու պսակներ,

Մեկ-մեկու ասեն՝ մեզ չմոռանա՛ք.
Պահի՛ր էս ծաղիկն քեզ մոտ նիշանակ.
Երա՜ք, իմ լացս էլ դուք չե՞ք մոռանալ,
Ու ձեր հոտի հետ իմ սուգս նրանց տալ,

Նրանց իմ օրհնությունն, իմ խնդիրն ասիլ,
Որ ինչքան շունչս կա ու չեմ մեռնիլ,
Նրանց սերը կհիշեմ, նրանց կուզեմ պաշտիլ.
Ինձ չի՛ մոռանան, ես նրանց չե՛մ քցիլ

Մտքիցս, ու նրանց սերն սրտումս կպահեմ,
Հետս մեն կածեմ, հողը կտանիմ.
Աստված թո՛ղ ձեզ տա, ինչ որ ես կուզեմ,
Մնաք բարո՛վ, սարեր, էլ ձեզ տեսնիլ չե՛մ:—

<8>

Մեկ տափարակ, դուզ տեղ բաց ա ըլում հանկարծ տեսնողի առաջին մեկ մեծ դաշտ՝ չորս կողմը սարերով պատած, աջ ու ձախ սևին տալիս, ու քանի գնում ա մարդ, ամպ ու դուման քաշվում, պարզում են, ու հենց իմանում ես, թե առաջիդ մեկ էնպես քաղաք ա բաց ըլում, որ հազար-հազար կենող միջումն ունի, ու ցրտի յա շոգի ձեռից բեզարած՝ ուզում ես, որ շտապիս, գնաս, մեկ աստվածասերի դռան վեր գաս, դինջանաս, էլ ետ ճամփեդ բռնես, գնաս։ Մեկ տեղից ահագին բերդի պարիսպն ա քեզ խաբում, մեկ տեղից՝ զարմանալի եկեղեցքանց գըմբեթն ու մեծությունը, մյուս տեղից՝ բարձր մինարեթքը, քոշք ու սարայի գլուխները։ Մտքումդ ասում ես, թե էս տեսածդ մեկ մեծ, զորեղ թագավորի թախտ պետք է ըլի. էստեղ ոսկին ու արծաթն աղբի հետ պետք է խառը ընկած ըլի, էստեղ օրը հարիր քարվան ներս մտնի, հարիրը դուս գա։ Հենց իմանում ես, թե ցերեկը թոզն ու դումանն ա աչքդ բռնում, գիշերը մութն ու խավարն ա քեզ խաբում, որ ինս, ջինս, մարդ, անասուն չե՛ս տեսնում, հենց ջամդաքալեր ագռավներն են աչքերիդ սևին տալիս։ Մարդ չի՛ կա մոտիդ, որ հարցնես. գիր չե՛ս կարդացել, որ իմանաս. մտքիդ հետ ընկած՝ տեսածդ հրաշք կարծելով յա աչքակապություն, որ հանկարծ գլուխդ չես բարձրացնում, ա՜խ, սի՛րելի իմ հայազգի, ջանդ դող ա ընկնում, կոներդ թուլանում։ Հենց իմանում ես, թե մեկ վիշապ յա մեկ հարամի հենց էն սհաթին ա մտել ու բոլոր կենողներին յա կուլ տվել, յա սուրը քաշել, յա գերի արել, ինքն էլ փախել։ Ուզում ես, որ աչքդ խփես, ետ դառնաս։

Ա՜խ, չէ՛, չէ՛, ետ մի՛ դառնալ. էստեղանց ծուխը հազար տարուց ավելի ա, որ կտրվել ա. կա՛ց, մի՛ վախենալ, անշունչ քարերն ու եկեղեցիքը մարդակեր չե՛ն։ Աչքդ բա՛ց արա, սիրտդ քե՛զ հավաքիր ու գըլխիդ վա՜յ տուր։ Է՛ս սրբատաշ տաճարները, է՛ս ահագին բերդը, է՛ս քարերը քեզ կասեն, թե սա է գոռոզն Անի, քո թագավորների հզոր մայրաքաղաքը, որ էնքան էր իր հարստությունովը, իր փառքովը փարթամացել, ճոխացել, մեծամտել, որ չոբանն էլ եկեղեցի էր շինում, ոչխարարածն էլ արծաթե նալչով, սարի քոշերով ման գալիս, ուզվորն էլ հացի տեղակ՝ փլավ, ղանդ ու շաքար, ու փողի տեղակ արծաթ ու ոսկի պահանջում, որ եկեղեցի մտած ժամանակ էլ էնքան էին նրանք աստված մոռացել, որ կարճ վարդապետ գալիս՝ բարձր գրքակալ էին գնում, բարձր եպիսկոպոս ըլելիս՝ ցած գրքակալ դուս բերում, որ յա ձգվին, յա կռանան, յա չոքին, յա գիրքը չտեսնին. ու իրանք ծիծաղին, աստուծո տա-

ճարումը քեֆ անենք։ Բայց սուրբն Հովհան Երզնկացի հանաք չվերցնելով՝ մեկ օր օրհնած բերանը բաց արեց, երկիրը տրաքեցավ, տակըվեր էլավ, խալխը ցրվեցին, փախան՝ որը Ղրիմ, որը Պոլշա. էս անշունչ քարերը մնացին ցից-ցից, հազար եկեղեցուցը հինգը մնացին շեն. տաճարք, ապարանք, գանձ, հարստություն անեծքի փայ էլավ, հողը մտավ հայոց ազգի մնացած փառքն էլ, ու մինչև էսօր էլ երկրի ձենը գալիս ա։ Գող, ավազակ են միջումը բուն դնում, նրանց բանն աստված հաջողում ա, նրանք չե՜ն տակով ըլում, ու աստված էնքան իր գութը հայերիցը պակասացրեց, որ էնքան անմեղ հոգիքը, էնքան միլիոնավոր մարդիկ մեկ սհաթումը մեկ սևագլխի խոսքով ջնջեց, Հայոց Տունը քանդեց, էլած փառքն էլ ձեռիցը խլեց, որ գնա, էսպես հերիյալ, տատանյալ մնա աշխարքիս երեսին։

— Լա՜ց գլուխդ, ա՜նցավոր, տե՜ս, թե աստուծո դատաստանն ի՞նչպես արդար է. կարգավոր տեսածին պես ոտները ջուր արա՜, խմի՜ր, որ էսպես քաղաքը անեծքով քանդեցին, ու էսօր էլ քանդողին եկեղեցումը տոնում են։ Դու չե՜ս իմանում, որ նրա անունը տաս, սուրբ աղոթքն ու բարեխոսությունն հիշես, որ քեզ էլ չանիծի, քու որդիքը պահի, մեծացնի։ Նրա տոնի օրը լավ մտքումդ տպավորի, ի՞նչ կանես Անի քաղաքի անունը։ Նա քանդվեց, պրծավ, ամա սուրբը քեզ միշտ օգնական ու բարեխոս կըլի։

Դրաղին կանգնել ես, ձեռդ ծոցդ դրել,
Խելքդ ցնորվել, լեզուդ պապանձվել.
Ո՞վ էսքան հրաշք տեսավ, վայելեց։
«Երա՞զ եմ տեսնում, քնա՞ծ եմ, ա՞չքս ինձ խաբեց»,
Ասում ես մտքումդ, ուշագնաց ըլում։
Հո նո՞ր են սրանք. բաս սրանց միջումն
Ընչի՞ չկա ձեն, ընչի՞ են լռվել։
Ա՜խ, թշնամյաց սուրն ա նրանց վերջացրել։
Հմիկ հավատո՞ւմ ես, ա՜յ իմ խեղճ ազգ,
Թե քո երկրումն բյուր էսպես քաղաք
Կամ կրակով փչացան, կամ սուրը քաշվեցին.
Ու քեզ չոր քարեր մենակ թողեցին,
Որ տեսնիս ու լաս, տաս քո գլխիդ վա՜յ.
Խելքդ ժողովես, լինիս կտրիճ հայ,
Ռուսաց հզոր, քաջ ձեռի տակին
Փոքր դինջանաս ու քո աշխարքին
Մուղայիթ կենաս, արյունդ թափես,
Քո ազգը պահես, քեզ անուն ճարես։

Հանգստարանի ձեն էր գալիս, որ մեր ճամփորդքը գիշերվա կեսին
էստեղ հասանք։ Լավ կտրիճ մարդ պետք է ըլի, որ էս ժամանակին էսպես
չոլ, յաբանի տեղը սիրտ անի, մտնի։ Կարելի է, թե մեր ընգարած ճամ-
փորդքն էլ էստեղ չէին հասել, թե գիշերվան կիսնյակի լիսը՝ էս տաճար-
ների, բրջերի գլուխը ու իրանց տգիտությունը նրանց չէին խաբել, էս
տարտարոսը քցել։ Անու քաղաքի անունն էլ չէ՜ին լսել, ո՞ւր մնա իմա-
նային, թե նրա խարաբեքը դեռ աշխարքումս կան։ Հեռվանց որ ցից-
ցից տների գլուխը չտեսան, ասի հողիցը դուս էին էկել, հարամու հողը
էլ ետ մտել։ Ղորդ ա, աքլորի ձեն չէ՜ր գալիս, ամա սարերի չոքանի շնե-
րի ձենը լսելով՝ էլ մտիկ չարին, զո՜ւ քաշեցին ու, քու դուշմանի գլխին
չի գա, որ չմտան էս լուռ, տխուր պարսպների մեջը, հենց իմացան, թե
մեկ մեռլատուն կամ գերեզմանատուն ընկան, ու ամեն մեկ ձիու ոտի
չփլթոցը յա իրանց քաշած շունչը սար ու ձոր կատաղացնում ա։

Ամեն մարդ փորձած կըլի, որ մութը ժամանակի մարդ, որ մեկ գե-
րեզմանատան կամ մեկ քանդված եկեղեցու ղրաղով էլ ա անց կենում,
սիրտը թուլանում ա, ջանը զարզանդում, հազար միտք հոգին կտրա-
տում, քարերն էլ դև համարում ու հարամի, որ իրան կամենում են ուտիլ,
շատ անգամ ուշագնա էլ ա ըլում։ Սրա պատճառը բոլոր էս ա, որ մարդ
սովոր ա, ինչ տեղ տուն ա տեսնում յա շինություն, կարծելով, թե մարդ
էլ կըլի, ու ետո, որ ձեն չի՜ լսում, էնպես կարծում ա, թե անպատճառ
չար հոգիք են էնտեղ բնակում. թե չէ մեռելի չոր մարմինը յա խարաբա
պատերը ի՞նչ զորություն ունին, որ մեզ ի՞նչ անեն։ Էլ ո՞վ սիրտ կաներ
ապա կամ եկեղեցու մոտանա, յա մեկ բուրջ մտնի, էն էլ է՜ն երկրումը,
որ ամեն քարի տակի հարիր գլուխ էր կտրվում, ամեն մեկ ձորում՝ հա-
զար լաշ հոգին զոռով տալիս։

— Տղե՜րք, չար սատանի թուրը գլխըներիս խաղում ա,— ձեն տվեց
պինդ սրտով քաջն Աղասին։— Տղամարդությունն էսպես տեղը մալում կա-
նի. յարաղ-ասպաբ հազրեցե՜ք, ձիանոցը դինջացրե՜ք, որ թե աստված
տա, մինչև առավոտը գլխըներս վրըներս ըլի, տեսնինք, թե էս ո՞ր գե-
դարգյալմաղն ընկանք։ Նամարդությունը էլ ձեռք չի՜ տալ. ձիաները
ջրեցե՜ք, քաշեցե՜ք մեկ պատի տակ, ես մեկ շունս առնիմ, յավաշ-յավաշ
մեկ աչք ածեմ, տեսնիմ, թե տեղըներս ռահա՞թ ա, թե՞ էլի սրով ու ար-
նով պետք է յա գլուխ պահենք, յա գլուխ կտրենք։

Շատ էլ խնդրեցին ընկերքը, որ չանի, անկաջ չարեց, թվանքն ուսին
դրեց, փշտոբերը հազրեց, սուրբ Սարգսի անունը տվեց ու ոտը փոխեց։
Գիժ կըլի էն տղամարդը, որ իր գլուխը մահու կտա, ամա Աղասին իր գլ-
խիցը վաղուց էր ձեռք վեր առել։ Հավատարիմ շունը գլուխը նրա ոտիցը

չէ՛ր հեռացնում. մեկ հոտ առնելիս յա շփըլթու իմանալիս կանգնում էր, եռի ոտների մինն էլ ցցում, երկար վախտ անկաշ դնում, հետո նըրմից ըլում։

Հենց մի քիչ հեռացան թե չէ, մեկ եկեղեցու դռնից կրակի լիսն ընկավ Աղասու աչքը. արինն աչքն առած՝ էլ միտք չարեց, թե էսպես տեղը գողից, հարամուց ավելի ուրիշ օքմին չի՛ ըլի, թուշ կրակի վրա գնաց։ Աստված հեռու տանի, ինչ նա տեսավ. տասը քուրդ եկեղեցու մեջտեղը կրակ էին արել, չորս կողմը նստել, խորոված էին անում, շամփըրներով բերանները քաշում, ուտում, խնդում ու աչքները օձաղ որսկանի շան պես յա դուռը քցում, յա պուճախը։ Հարամին ինչքան գազան էլ ըլի, շատ անգամ իր շվաքիցն էլ կվախենա։ Ընչանք նրանք կրակի մոտիցը ձեռները աչքներին կդնեին ու դռան ղարանլթուն կտեսնեին, Աղասին յավաշ-յավաշ ներս մտավ, ծանր դեմքով, առանց բարով տալու կրակին մոտացավ ու ձեռը մեկնեց, որ մեկ խորովածի շամփուր էլ ինքը քաշի։ Նրա դեղնած, մեռելի պատկերը, նրա անահ շարժմունքն ու էնպես անժամանակ վախտը ներս գալը որ չտեսան քրդերը, հենց իմացան, թե նա էն աշխարքիցն ա վեր էկել, լեզվները չորացան, ձեռները թուլացան։ Ի՞նչ կկարծեին, թե էն հազարին խոսանարդի մեն մենակ սիրտ կաներ էն ավազականացը մտնեը, որ ցերեկն էլ հարիր մարդ զարղանդում էին՝ մոտովն անց կենան, որ հազար տարուց ավելի՝ էր խոսանարդի սիրտ չէր անում, որ գա, էն հազիր շինած տներումը կենա։ Հենց գիտես, թե մարդիկ չըլին առաջին. աչքը խոժոռած՝ մեկ դես քցեց, մեկ դեն, քրդերին էլ չգիտեր, որ մեկ բառ էլա խոսի, բայց է՛ս էր, որ նրան պրծացըուց, չունքի թե խոսացել էր, կիմանային, որ մարդ ա, դև չի՛, թիքա-թիքա կանեին. մեկ շամփուր խորովածի որը կերավ, որն էլ ետ կրակը քցեց, տաճարի հիանալի շինվածքին ու գեղեցկությանը մտիկ արեց ու գլուխը ժաժ տվեց. քրդերը փետացած՝ մնացել էին նստած. աչքը որ հանկարծ նրանց վրա չխոժոռեց, ամեն մեկը տեղնուտեղը ուղեցավ, որ հալչի. էնպան էսպես նրանց աչքը մոխիր ածեց, որ ընկերների ոտի շփլթուն իմացավ, ու շունը ուրախ-ուրախ ներս ընկավ,ոտներովը փաթաթվեցավ։ Հենց շունը տեսան հարամիքը թե չէ, աչքների փառը վեր ընկավ. ամեն մարդ թրին վրա վազեց, որ նրան փառչալամիշ անի. առաջի թուր վրա բերողի գլուխը կես էլավ. փշտովների երկուսն էլ իրանց ֆորսը ճարեցին, ու ղամեն ձեռն առած որ գոռաց ո՛չ՝

— Տղե՛րք, ձեր արևին ղուրբան, աստված մեր կողմն ա. դուռը կըտրեցե՛ք, որ սրանց մատաղն էս գիշեր անե՛նք...

Հայի լեզուն որ բաց չէլավ, հենց բռնես, պատերը լեզու առան։

— Ամա՛ն, ձեր էկած հողին ղուրբա՛ն, ճար ունի՞ք, տեսե՛ք, մեզ ազատեցե՛ք, տնով- տեղով ձեզ եսիր կդառնա՛նք։

Տասը-տասնըհինգ քրդստանցի հայ էլ որ էս կողմից, էն կողմից գլուխ չի՛ բարձրացրին ու քրդերի մնացած թրերն ու մզրախները ձեռք առան, քրդերի աստղը թեքվեցավ. ութը կոտորվել էին, երկուսը մնացել յարալու ընկած։ Սրանց էլ կապեցին մեկ ձիու բհրի վրա, ու աչքդ բարին տեսնի. ոչինչ սհաթի մարդի քաջությունը էն բարերարությունը չի՛ արել, ինչպես հիմիկ։ Աղջիկ ասես, տղա, հարսը, երեխա, ծծկեր հազար չվաnով կապած՝ տուն էին արել, Ղարսա գեղերիցը եսիր բերել, որ տանին յա սարդարին փեշքաշ անեն, յա Ախըլցխա ծախեն։ Ո՞ւմ էսպես սհաթին մարդ կյանք տա, որ նրա առաջին ծունր չդնեն, երկրպագություն չանեն։ Բայց հսկայն Աղասի ինքն էր ընկնում նրանց ճտովը. ինքը նրանց կապը ետ անում, ինքը երեխին ջոկ, մորը ջոկ սիրում, գուրգուրում, որ աստծուն փառք տան, սուրբ Սարգսին խունկ ու մոմ վառեն, թե չէ էս իր հունարը չէ՛ր։ Ոչի՛նչ գիշեր էն լիսը, էն կյանքը չի՛ տեսել, չի՛ քաշել, ինչպես՝ էս։ Ազատվողք թե ազատողք, իրար տեսնելիս, հենց իմանում էին, թե երկընքումն են ու ո՛չ երկրում։

Փոքր-ինչ որ դինջացան. աչքդ բարին տեսնի։ Քրդերի շորերն, սապքն, ձի ռախտը ու խուրջինները որ բաց չարին, հազար արնի գին կար միջըներումը, ամեն մեկի վրա հարիր թումանի ղինքս, արծաթ ու ոսկի, թո՛ղ նաղդ փողը։ Աղասին ո՛չ մեկին էլա մտիկ չարեց, ղրկեց, ձիանը բերել տվեց, ներս քաշեց ու քրդստանցի հայերին հարցրեց, որ իրան միտրացնեն, թե էն գիշերը կարո՞ղ են էնտեղ ոհաթ մնալ, թե ո՛չ։

— Աղա՛, գլխուդ, արևուդ ղուրբան, վալլահա, չընք գինա, թե էս շան լաչերիցն էլ կա՞ն, թե՞ չէ. ամա օյաղությունն աղեկ է։ Սրանց չանգիցը շունը չի՛ խլսի, մարդն իմա՞լ կխլսի։ Մգա աստծուն փառք, խազար էնչունը չի՛ խլսի, մարդն իմա՞լ կխլսի։ Մգա աստծուն փառք, խազար էնպես ջանավար մեր առաջը գան, ղէնոնց խերն անիծեմ, մեկ թուր տո՛ւր մեր ձեռը, մենք գինանք, թե իմա՞լ քո ճակատը պարզ կէնենք։ Մեր ամեն մեկը, սուրբ Կարապետ գինա, էսոնց տասնին խավի պես կծալի, տակը կքաշի։ Դու դարտ մի՛ արա։ Ռահաթ պարկի, մեր երեսը ողացդ հողն ըլի։ Թե մեզ էսոնց քոքը կտրվի. քանց շուն շատ են, քանց գել՝ առավել։ Թե մեզ կխարցնես, մենք էմլա խեյրաթ կտեսնինք, որ մեր կես պարկի, կես ղարավուլ քաշի։ Էս ձորեր խանա լիքն են։

Հենց էս մասըհաթին էին, մեկ էլ էն տեսան, որ ձիավորի ոտի ձեն ա գալիս։ Արիասիրտն Աղասի միտք արեց, որ սրանք նրանց ընկերները պետք է ըլին, ական թոթափել, երեխա, օղլուշաղ ղրաղ քաշեց, հազար անգամ ձեռն էստուր<-էնտուր> բերնին դրեց, որ ձեն չհանեն, երկու

քրդին էլ բերան, ձեռ, ոտք դհա ղայիմ կապեց ու մեկ իգիթ քրդստանցու՝ թուրը հանած, վրընները կաղնացրուց, մյուս քրդստանցոնցը կրակի չորս կողմը նստացրուց, որ կարծիք չընկնին, ու ինքը իր ռաշիդ տղերքանցովը եկեղեցու դռան աջ ու ձախ կողմը կտրեցին, թուրները հանած պատնըդուս ցցվեցին ու թշնամուն ճամփա տվին։

«Լո՛, լո՛...» ձեն տալով՝ քանից ավելի ձիավոր ժամի դռանը վեր էկան, բալուր տվին մեկ-երկուսի ձեռքը, որ ման ածեն։ Հայի երեխեքանց ու կնանոնց սուգ ու շիվանի ձենը որ ժամը չէ՛ր ընկնում, պատերն էլ սուգ էին անում. բայց խեղճերը չէին իմանում, թե ի՞նչ բարի հրեշտակ ա աստված նրանց համար ուղարկել։ Հենց գյուռ արած, որ ղալմաղալ անելով ներս չընկան, էլ չիմացան, թե մարդ ա, որ իրանց գլուխը կտրում ա, դև կարծեցին կամ սուրբ. էլ թրի, մզրախի յա ղալխանի վախտ չէ՛ր։ Քրդստանցի հայերը մաչալ էլ չտվին աչամի հայերին. շատին հենց կրակի շամփուրն կամ թերէբեցն էին բերանը կոխում, գլխին, դոշին քարով, փետով ծեծում, որ շուտ չմեռնին ու տանջվին։ Էլի Աղասին էր, որ էս կատաղությանը չափ դրեց, սպանածներին դուս ածիլ տվեց, ու որը սաղ էին յա յարալու, ձեռ ու ոտք կապիլ տվեց ու ղրաղ քաշիլ տվեց։

— Աղա՛, մեր տուն քանդող էսոնք են, էսոնց խոր տունը քանդվի. էսոնք մեր ճիժը ու մանչ խատացրին. Թո՛րկ, թո՛րկ, էսոնց սատանի կեր անենք, էսոնց խոր գաղտը գյոռբագյոռ ըլի։

Թո՛ղ կարդացողը ինքը միտք անի, թե էս գիշեր ի՞նչ գիշեր կըլեր էս ջրատար եսրների համար, որ ամեն մեկ ոտք փոխելիս՝ իրանց մահն էին տեսել, իրանց մահին էին սպասում, թե ի՞նչ սրտով նրանք աղոթք կանեին, ի՞նչ հոգով իրար կնայեին ու աստծուն փառք կտային։ Հենց էն կոտորելու ժամանակին էր Աղասին դուս թռել, էն դռան երկու քրդի մընին էլ սպանել, մյուսը փախցըրել, ու խեղճ հայի էրեխեքանց աչքերի ու ձեռների կապը իրան ձեռովն ետ արել, իրան ուսին ներս տարել։ Զարմացած, մահի դուռը գնացած ու ետ եկած հայերը որ աչքըները բաց շարին, իրանց ազատողին տեսան, ուզում էին ոտներն արտասունքով լվանան, բայց համեստ պատանին հենց էն էր խնդրում, թե աստծուն փառք տան, սուրբ Սարգսի անունն հիշեն։ Տեսնելով, որ քրդստանցիք սուրբ Կարապետին ավելի են ճանաչում, ասեց.

— Թո՛ղ էդպես ըլի, սուրբ Կարապետին հիշեցե՛ք։ Սրբերը չե՛ն խռովիլ յա նախանձ պահիլ։ Ո՞վ ըլի՝ նրա զորությունն ու բարեխոսությունն շատ ա։

Աղասու սիրտը վկայում էր, թե էն գիշերը էլ փորձանք չի կա. բոլորին էլ խնդրեց, որ չոքին, աղոթք անեն։ Նրանց բախտիցը՝ եսրների միջումը տերտեր էլ կար, տիրացու էլ։ Սրանք սկսեցին առավոտվան ժամը, ու Անի քաղաքը, հազար տարուց ավելի, որ ո՛չ ժամ էր տեսել, ո՛չ աղոթքի ձեն լսել, էս գիշեր հենց իմացավ, թե իրան երևելի, շքեղ թագավորազունքը կրկին վեր են կացել, իրա հողն օրհնում, իրա ջուրն գովաբանում, որ հայ ազգը էլ չհավատա, թե իրան աստված էնպես ա անիծել, որ էլ մարդ չի՛ կարող նրա միջումը կենալ։ Ո՛չ երկիրը քանդվեցավ, ո՛չ երկինքը փուլ էկավ։ Քրդստանցիք իրանք էլ էին մնացել զարմացած, թե էն ի՞նչ անճոռնի ասություն պետք է ըլեր, որ մինչև էն օրը սրտըներումը հաստատ տպավորել էին։

Առավոտը որ լուսացավ, Աղասու աչքը մնացել էր սառած։ Չէ՛ր իմանում՝ աչքին հավատա, թե ո՛չ։ Եկեղեցի, պարիսպ, բերդ, մինարեթ՝ էնքա՛ն նոր, էնքա՛ն պայծառաշեն ու անբնակ։ Կարդալ չէ՛ր գիտում, որ միտքը բերի, թե էս ի՞նչ քաղաք պետք է ըլի. տերտերին որ չի՛ կանչեց ու պատմությունն իմացավ, խելքը գլխիցը թռավ.

— Վա՜յ իմ օրին, արևին. մեր ազգն էսպես քաղաքներ ա ունեցել, էսպես մեծություն ու հմիկ ամենն էլ կորցրել, հարամու ձեռին գերի ա մնացել,— ասեց հսկայն լալով։— Չէ՛, տեր հա՛յր, մեզ աստված ա բերել էստեղ. աստված մեր թրին, մեր կռանը ղվաթ տվե՛ց, որ մեկ գիշեր էսքան բաներ արինք. էն աստվածն էլ էնքան կարողություն ունի, որ մեզ միշտ հաջողի. հարամություն հո չե՞նք անում, որ նա բարկանա, հարամու ոտն ենք կտրում, աստուծո ստեղծվածը ազատում։ Մնանք էս սուրբ հողումը, մեր սուրբ թագավորաց գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքը ազատենք գողի, ավազակի ոտքից։ Հարըրից ավել ենք հիմիկ։ Ի՛նչ ձեռք ենք քցել, ձեզ ըլի։ Մնա՞նք էստեղ. յա մենք էլ մեր արինը մեր սուրբ թագավորաց հողի վրա թափենք, յա քիչ-քիչ նրանց քաղաքն էլ ետ պայծառացնենք։ Տուն կա, ջուրը՝ բոլ, հանդը, դաշտը՝ մեծ, մեկի տեղակ հինգ զարմանալի եկեղեցիք. քարի տակիցը ոզղ կհանեմ, ձեզ կպահեմ։

Բայց՝ թե քարին ասած, թե մեր քրդստանցի հայերին։ Կովում, ղորդ ա, ամեն մեկը մեկ աժդահա, բայց ինչ գրումը գրած ա, նրա շինքը տո՛ւր, նրան ուրիշ բան մի՛ ասիլ։ Մեռնիս էլ, նա իր ասածը կանի, էնքան կողքը հաստ ա։

— Իմա՞լ կեղնի, անիծած խողում վո՞վ կմնա՜։ Հայսմավուրքն սուտ իմա՞լ կխոսի։ Մեր վիզը զարկես, մեր ջանը խանես, վալլախա, էս չոլում կեցող հմլա մեկն էլա չեղնի, չեղնի։ Խազար տարի խա սաս՛, խա գլուխդ ի քարին զարկի։ Մենք չընք կենա, չընք գինա։ Ինչ կասես՝ սաս՛։ Մենք մեր խողը չընք թողա։

— Չե՛ք թողալ, աստված ձեզ հետ։ Մեր աստղը մեկ անգամ ծռվել

ա։ Մարդ ինքն իր գլուխը որ թրի տակը դնի, էլ ո՞ւմ բանն ա կտրվել նրան քոմակ անի։ Էսպես արինք, որ մեր տունը քանդվեց, է՛։ Գնացե՛ք, աստված բարի ճանապարհ տա ու ձեր սիրտը մեկ լիս քցի, որ ձեր խերն ու շառն իմանաք։ Ես իմ տղերքանցովն էս տեղանց էլ դուս գալու չե՛մ։ Թե ձեզանից էլ ուզող կըլի, որ ինձ հետ միանա, իմ ախպերն ա, իմ աչքի լիսը։ Մեկ թիքա ունենամ, կեսը նրան կտամ. ինձ համար աշխարքն յա ըլի, յա չըլի։

Ասեց ու հրամայեց, որ ինչ ճարել են, հավասար ճոթ անեն։ Ինքը մատն էլա մի բանի վրա չդրեց, բայց թուր ու ապար հրամայեց, որ վերցնեն, բոլոր ընկերներին մեկ-մեկ ձեռք քրդի շոր հաքցրեց, որ շուտով չճանաչեն. ամեն մեկին մեկ ձի էլ բաշխեց։ Էս որ տեսան, քսանից ավելի ջահիլ, կտրիճ տղերք կանգնեցին, խնդրեցին, որ իրանց էլ ընկեր շինի. նրանց էլ գլխին հավաքեց, օրհնություն առավ ու մյուսներին լալով խելիմ տեղ էլ տարավ, ճամփու քցեց ու ինքը իր ընկերտանցովը ետ դառավ, փոքր հաց կերան, պարիսպ, եկեղեցի բոլոր իսկույն ման էկավ, մեկ-երկու հոգի ու հարավային քարափի գլխի բուրջը իստակել տվեց, մեկ-երկու հոգի Շորագյալ ուղարկեց, որ գնան, հաց առնեն, ու ինքը՝ սիրտն ու թոքն էրված պատանին, ընկավ քաղաքի ամեն ճամփեն ու խոռը, ամեն քունջն ու պուճախն աչքի տակ առավ, տեղի ղայիմությունը ու վտանգավոր կողմը լավ վարավուրդ արեց ու բեզարած, ջարդված էլ ետ վեր էլավ, ձորիցը դուս էկավ, ղրաղ քաշվեց, մեկ բրջի վրա նստեց, Արփաչային ու արեգակի մըտնելուն նայեց, աղլուխը ձեռն առավ ու էս բայաթին ասեց.

Ա՜խ, վարան, վարան, քու ճողին ղուրբան,
Քո ծխին ղուրբան, քո ջրին ղուրբան.
Է՞ս փառքն ունեիր, է՞ս պատիվն առաջ,
Որ հիմիկ ավերվել, մնացել ես անջան:

Ե՞րբ միտք կանեի, թե էս հողերը,
Էս դաշտն ու սարեր, էս սուրբ ձորերը
Էնպես մեծություն, էնպես լավ օրեր
Քաշել են, մնացել, ա՜խ, հիմիկ անտեր:

Ո՞ւր ձեր տերերը, թագավորները,
Ձեր պահողները, ձեր իշխանները.
Ընչի՞ մեզ թողին իրանց որբերը
Ու ձեռք վերցրին, թողին էս քարերը:

14*

Ձեր գերեզմանը, ա՜խ, ձեր լիս հողը,
Որ հիմիկ չի տեսնում ձեր կորած թոռը,
Կրակ է ընկնում ջանն ու ոսկերքը,
Ուզում ա ձեզ հետ պարզի իր ոտքը:

Ընչի՞ ձեր վախտը աչքս բաց չարի,
Մարմինս հողին, ջանս ձեզ չտվի,
Որ հիմիկ էսպես չքաշեի, չգայի,
Ձեր հողը չտեսնեի, ձեր վրա չլայի:

Հող ունինք՝ խլած, կյանք ունինք՝ մեռած,
Ա՜խ, թրի, կրակի մեջ եսիր դառած.
Ո՛չ երկինքն տեսնի մեր սուգն ու լացն,
Ո՛չ երկիրն պատռվի, մեզ տանի գած:

Ի՞նչ կըլի մեկ էլ գլուխ բարձրացնեք,
Ձեր որդիքը տեսնեք, նրանց ցավը քաշեք,
Ձեր արինախառն աշխարհն ազատեք,
Յա մեզ էլ ձեզ հետ հողը տանիք, պահեք:

Աչքս բաց արի, խարաբա տեսա.
Ա՜խ, ո՞վ գիտեր, թե մեր ազգի վրա
Սարեր են էլել, հիմիկ բրիշակ,
Մեզ տակով չարել, որ էլ խեղդն չմնանք:

Ա՜խ, մեր սիրտն էսպես ընչի՞ հովացել,
Արինը ցամաքել, մեր կուռը թուլացել.
Երաբ կտեսնի՞մ, ա՜խ, ես մեկ օր էլ,
Մեր սուրբ երկիրը թշնամուցն ազատիլ:

Էն ի՞նչ շունչ կըլի, որ էս նոր հոգին
Փչի՛, վեր կացնի քնից մեր ազգին.
Էն ի՞նչ ձեռք կըլի, որ մեր աշխարքին
Էլ ետ սիրտ տա ու կանգնացնի՛ կրկին:

Ա՜խ, ես էն ձեռին կյանքս ղուրբան կանեմ,
Էն կոխած հողին երեսս կքսեմ.
Ապրիմ, իմ արինս նրան մատաղ կանեմ,
Մեռնիմ, հողիցն էլ ես նրան միշտ կօրհնեմ:

Կանգնել ես էդպես, գլուխդ ամպին խփած՝
Ա՜յ խեղճ ճալեոր, Երեսդ փակած.
Ի՞նչ կըլեր, Մասի՛ս, ա՜խ, դեռ աչքդ բաց
Սրի չտայիր քո որդիքն էրված:

<9>

Արեգակն սկսել էր, որ մեր մտնի։ Մութն էն ա գետինը առավ։
էսպես նստած սուգ էր անում մեր տարագիր Աղասին ու իր ու մեր
սև օրը լաց ըլում, որ հանկարծ աչքը ձորին ընկավ, աչքը սևացավ։ Հինգ
հարիր ձիավորից ավելի՝ Թարաքյամա, քուրդ, Ղարսա դզիցը հազարից
ավելի քյուլֆաթ, մալ, խլխի, ոչխար առաջ էին արել ու վեր հատելով՝
սարիցը ձորն արին, որ տանեն Երևան՝ յա սպանեն, յա ծախեն, յա Թուր-
քացնեն։ Շատին էնքան թակել, հետ էին ածել, որ ջանումն էլ թաղաթ
չէ՛ր մնացել։ Ամեն մեկ ձիավոր մեկ ջահել տղա կամ աղջիկ գավակն էր
առել, ձեռն ու ոտ հաղրել, որ էն գիշերը յա նրանց անմեղ հոգին ապա-
կանի, յա սրի, կրակի ղուրբան անի։ Հենց նստած տեղիցը ընկերներին
ուսուլով ձեռով արեց, որ տեղըներիցը չշարժին, ինքն էլ քարափնըվեր
կուզըկուզ նրանց մոտ հասավ, որ հարամին չտեսնի, իր պատրաստու-
թյունը չանի։
էնքան կացան, որ թշնամիքն էկան, գետի ղրաղին վեր էկան, թըընե-
րը, երեսները լվացին, նամազները արին ու իրանց Սաղայելի նոքարներին
հրամայեցին, որ ինչ բեզարած, հալեոր, պառավ մարդ ու կին կա, աչք
ու ձեռք կապեն, բերեն իրանց առաջին, կարգավ չոքացնեն, որ իրիկնա-
հացն ուտեն, պրծնին ու նրանց անմեղ գլուխը իրանց մուռտառ սրտին
մատաղ անեն։
էլ չթողին էլա, որ հեր ու որդի, յա մեր ու աղջիկ, իրանց ետին բա-
րովն ասեն, իրար մի համբուրեն, մի օրհնեն, իրար մի փարվին. Թրի ու-
քով վեր հատելով՝ հրամանը կատարեցին ու բերին, ողորմելիքը իրար
մոտ չոքացրին։
Աստված ո՛չ շհանց տա, ի՞նչ նրանց քոռփա էրեխեքն անում էին.
ջուրն էին ուզում ընկնիլ, քարերը պոկում, գլխըներին էին տալիս, բո-
ղըները թրին դեմ էին անում, որ մեկ թողան էլա, իրանց հորնըմոր
երեսը յա ձեռը համբուրեն, բայց շատի թևից որ չէին վեր քաշում, գետ-
նին խփում, հենց էն սհաթը հոգին հետը յա դուս էր գալիս, յա էնպես
բանհոգի մնում վեր ընկած, գետնին կպած։ Ողորմելի ծնողքն էն հալին
էլի է՛ն ասում, աղաչանք անում, որ որդիքը մեռնին, սրին, կրակին տան

իրանց գլուխը ու իրանց հավատը չուրանան։ էսպես՝ հեռըվանց խոսալիս
էլ էնպես էին խփում գլխըներին, որ աչքըների լսին կրակ էր տալիս։
Ընչանք նրանք մեկ քանի ոչխար կմորթեին, կքերթեին, ու կրակը
շաղ կըլեր, սար ու ձոր մութն առավ. մեր քաջ հայերը թուր ու թվանք
հազիր արին, չոքեցին, աղի արտասունքով իրանց աղոթքն արին, վեր
կացան, իրար ճտով ընկան, իրար ետին բարովն ասացին, ձիանները
թամքած՝ մեկին պահ տվին, ու իրանք ստծու անունը տվին, ճամփու
ընկան, ամա էնպես ճամփով, էնպես տեղով, որ ղուշը չէր իմանալ։ Հին-
գը մեկ կողմից գնաց, հինգը՝ մյուսից, էն մնացած տասը հոգին էլ էն-
պես պետք է գային, որ բոլոր մեջ անեին, թրի առաջը ընկածը կոտորեին,
սաղ բռնածը եսիր անեին ու, որքան կարելին ա, հայերին արձակեին, որ
քոմակ անեն, իրանց թուր ու թվանք տային, չունքի ամեն մեկը ամեն
յարաղիցն էլ ջուխտ-ջուխտ ունեին։ Ձորս քուրդ էլ, որ բռնել էին, Աղա-
սին ինքը վերցրեց, չունքի նրանք օրթում էին կերել մինչև մահը նրա ձե-
ռի տակիցը չհեռանան, ու նրանց միջումը օրթումը սուրբ ա։ էսպես՝ բո-
լորը քսանըչորս մարդ, պետք է հինգ հարիր մարդի հախիցը գային։ Լսո-
ղը չի զարմանա, թե ի՞նչպես կարելի ա։ Քաջությունն սրտիցն ա կախ-
ված. մեկ էլ որ ինչ-<քան> կուզե թշնամին շատ ըլի, հանկարծ վրա
տալիս, է՛ն էլ գիշերը, ի՞նչ ա իմանում դիմացի կռվողի շատությունն ու
քչությունը։ Սրանից զատ, Աղասին պատվեր էր տվել, որ հայերեն
յա թուրքերեն հեչ չխոսան, քրդերեն հարայ տան, հավար կանչեն, ու
էնքան եսիր արած հայի միջումն ի՞նչպես կըլեր, որ մեկ-երկու հարիր
տղամարդ չըլեր. որ սուր չունեին, էնդուր համար էին խղճացել։
Հենց էն սուփրի ու խորովածի շաղ ժամանակը, էն վախտը, որ ամեն
մարդ յարաղ-ասպաբ վեր քցած՝ իր ֆորսի ետևիցն էր ընկել, որ նրան
ձեռք քցի, թվանքների տրաքիլը, տասնըհինգ-քսան հարամու հոգին տալը,
ձիանոնց խառնվիլը ու հարամու փախչիլը մեկ էլավ։ Աղասին, իր ըն-
կերների կեսը վրեն, ձորի ճամփեն էր կտրել, մյուս կեսը՝ հարիրից ավելի
հայ բաց արած, քամակներին քցած, ձորի ետևը։ Մեկ քսան-երեսուն
մարդ էլ վրա թռան, էն խեղճ չոքածների աչք ու ձեռներ ետ արին, ու էս
հալեոր աժդըհեքը, որ կռվումն էր մազերն սիպտակել, թուր որ չտեսան
ձեռըներին, սալան դառան. որը միջիցը, որը ձորի քամակիցն ու ետևի-
ցը էն կարկուտն ածեցին թշնամու գլխին, որ աստված ո՛չ շհանց տա։
Ղարսցի հայերը էս ձորերի քարերն էլ ունեին համարած. ինչ տեղ փշտով,
թվանք էր տրաքում յա թուր խաղում, առանց դոշի ու գլխի չէ՛ր անց կե-
նում։ Մենակ Նաղի խանը ու Օքյուզ աղեն, ինչպես որ էլավ, գլխըները
թափեցին, ձիանները ձեռք քցեցին ու մեկ քանի մարդով դուս փախան։

Մնացածը, ինչ կոտորվել էին՝ կոտորվել, ինչ չէ, մնացել ձորի միջումն ոչխարի պես չոբանը կորցրած, կանգնած։ Ընչանք էսպես պահեցին մեր տղերքը, մինչև ծեգը բացվեց, ու աչքդ բարին տեսնի. տասնըհինգ թուրքի մենակ էն չորս քրդերն էին սպանել. տասից ավելի ղուղ մենակ Աղասին էր ցրվել ու փոր վեր ածել։

Լսողը կարելի ա զարմանա, թե ի՞նչպես է՛սքան բաներ մեկ օր ու գիշեր անց կացան։ Էնդուր համար, որ ղզլբաշը էս միջոցումը Ղարսա վրա կռիվ էր դուս գնացել, ու ասածս քսան ու մեկ թվին էր, որ սար ու ձոր, մանավանդ Անի, հարամի ու յաղի էր դառել։

Առավոտը լուսացավ. էն առավոտը երանի՜ ամեն խղճի ու տառապելոց ուստ գա։ Հինգ հարիր հոգուցը. վաթսուն հոգի չէ՛ր մնացել, էն էլ ոչխարի պես մեջ արած, շատը անյարաղ-ասպաբ։ Ձիուն, չորին, ասպաբին թիվ ու համար չկար։ Լեզու պետք է ըլի, որ պատմի է՛ն փառքը, է՛ն ուրախության արտասուքը, որ էսօր Անի տեսավ։ Ղարսըցի հայք դեռ չէին հավատում իրանց աչքին, թե ղորդ, թշնամու ձեռից ազատված՝ էլ ետ իրանց աշխարքը պետք է գնային։ Էնքան շշկլել էին, որ չէին էլա միտք անում, որ մեկ հարցնեն, թե ո՞վ էր նրանց ազատողը։ Գեջդանգեջ որ Աղասու մարդիկը ձիանը չէին վեր բերում բերդիցը, աշխարհն իրարոցով դիպավ. հենց կարծեցին, թե թշնամի են. թվանք վեր առան. բայց Աղասին բոլորին էլ հանդարտացրուց ու հսկայական քայլիվ որ առաջ չի գնաց փոքր ու իր ընկերներին կանչեց, ամենի աչքն էլ մնաց նրա սլարթև բոյի, նրա ազնիվ շարժվածքի վրա հիացած։ Էլ էնքան նրանց փարվելուն ու օրհնելուն չմտիկ արեց, երբ իմացավ, թե Հասան խանը ղոշունով Ղարսից ետ ա գալիս (ղարսըցիք ասեցին նրան), շուտ ական թափել՝ մեկ-երկու ձիավոր Գյումրի ղրկեց, մյուսներին հրաման արեց, որ էլ ժամանակ չկորցնեն, օղլուշաղն տանին, բերդումը յա ձորումը ամրացնեն, մալն ու ոչխարը ձորնըդուս քշեն, Շորագյալու հանդը տանին, ու ինքը, ինչքան թվանք, թուր բռնող տղամարդ կային, գլխին հավաքեց ու սարնըդուս վեր էլավ։ Տասը-տասնըհինգ տարեկան տղերքն էլ ասլան էին դառել, ուզում էին իրանց արընի ջիգրը հանեն։ Գերի արած թուրք ու քրդերիցն էլ յարաղ-ասպաբ ետ արին, իրար կապեցին ու բերդը տարան։ Աղասին չէ՛ր էլել, ղարսըցիք ուզում էին նրանց քարով սպանեն յա ջուրն ածեն։

Հուլիսի 23-ին 1821-ին էր, որ հայոց երևելի հին քաղաքն Անի իրեք հարրից ավելի կարիճ զորք, թողունք ջահել տղերքը, զրահավորված, զարդարված՝ աչքը բաց տեսավ. որ մտան ո՛չ իրանց որբ մայրաքաղաքը·

աչքըները ծով դարձավ. մեկ սհաթ քիմի տաճարի միջումն ընկել երեսի վրա, գետնիցը պոկ չէին գալիս։

Բայց գլուխը պահելու ժամանակ էր. Աղասին խնդրեց, որ ինչ սրտներումն ունին, ետո ասեն, ետո անեն, ու զորքը կես արեց, կեսը տվեց Կարոյի ձեռքը, որ էս կռվըներումն եփվել, հասել էր, կեսը ինքը ձեռի տակն առավ. ամեն մարդ, ինչ ուտելու էր, ջեբը դրեց. երեսնաչափ մարդ էլ օղլուշաղի հետ դրեց. ինքը բերդումը ղայիմացավ, Կարոն՝ արևմըտյան ձորումը, Մուսեն՝ օղլուշաղի հետ։ Աստուծո ողորմությունիցը՝ բարութ-գյուլլեն էլ լավ վախտին հասավ։ Էնպես էին պայման կապել իրար միջում, որ թե Հասան խանը ձորը մտնի, էնքան թողան, որ բոլոր ղոշունի ոտքը կտրվի, ետո շենլիկ անեն. թե թուշ բերդի վրա գա, էնքան դուս չի գան, մինչև բոլորը նրանց գլխին հավաքվին, ետո կեսը ձորի մեկ կողմիցը, կեսը մյուսիցը, կռվի շաղ ժամանակը, վրա տան, որ էնպես շըշկլացնեն թշնամուն, որ փախչելուց գյուման էլ ուրիշ ճար չքթնին, ու թե աստված էս հաջողությունը կտար, Մուսեն օղլուշաղը թողար մեկ ղայիմ տեղ ու ձիանը դուս բերեր իր մարդկերանցովը, որ բալքի թե հնար լինի, բոլորին էլ ջարդեն։

Առավոտյան հովն անց էր կացել, որ ամեն մարդ հեռացավ ու իր տեղը քթավ։ Ճաշն էլ եկավ, հասավ։ Էնքան շոգը չէ՛ր գետինն էրում, ինչքան քաջ հայերի արինը, իրանց սիրտն ու դամարները, որ իրանց ազգի իշխանաց, թագավորաց հողի վրա արին թափելն ու քաջությամբ մեռնելն էլ իրանց համար անմահություն էին համարում։ Արեգակը երկնքի միջիցը երկու գազաչափ թեքվել էր, որ բերդիցը մեկ թոզ տեսան. քիչ-քիչ շատացավ ու ամպի պես Անու սաղ դուզը կոխեց։ Ձորիցն էլ էին տեսել ու իրանց տեղը անսասել։ Դամար էր, որ ուզում էր տրաքի, սիրտ էր, որ ուզում էր պատռի, շատն ուզում էին բերդ ու ձոր թողան, մեյդան դուս գան, իրանց տղամարդությունը ցույց տան։ Աստուծո ողորմածությունիցը՝ էնպես էր երևում, որ թշնամին բանից խաբար չի, ու հենց էնդուր համար ա էնպես ոտն առել, որ գան էնտեղ, մի քիչ դինջանան ու ետո, իրիկնահովին ճամփու ընկնին։ Հետըները ո՛չ թոփ էր երևում, ո՛չ ջաբախանա. հենց սուբահ ձիավորներն էին առաջ ընկել, որ հասնին Երևան, ավետիք տան, թե Ղարս առան, քանդեցին, բոլոր գեղարենքն էլ քոչացրել, թրի առաջ են արել, բերում են։ Էնպես՝ մարդաշատ երկրները քանդող Հասան խանն էլ ի՞նչ կասկած կտաներ, թե մեկ խարաբա տեղում, ուր չոբաններն էին անց կենում, ագռավները բուն դնում, գլխին փորձանք պետք է գա։

Թոզ ու դումանի տուտը քաղաքը բռնեց. խարաբա պարիսպն ու բըրջերն էլ, հենց գիտես, իրանց քանդողներին տեսնելով՝ աչքըները խփում

էին, չէին ուզում թամաշ անիլ։ Աստուծո աչքը որ քաղցր լինի, մատաղի գառը իրան ոտովը կգա դուռդ՝ ասած ա։ Հենց էս օրինակին բանը պատահեցավ. քաղաքը մտնիլն ու Հասան խանի ձիուց վեր գալը, շադիր խփիլը մեկ էլավ։ Ղզլբաշի սովորությունն ա՝ ձիուց վեր էկավ թե չէ, թվանք, ասպաբ, յափնչի կըցի թամքի ղաշը, ձիանը ման ածիլ կտա՝ չորս-հինգ մեկ գյադի ձեռք տված, ինքը, թե նամազի վախտ ա, նամազը կանի, թե հացի՝ ղալյանը կքաշի ու հացի կնստի ծալապատակ։ Էս անգամ երկուսի վախտն էլ էր. ճամփից էկած, ջարդված՝ քսանը մեկ տեղ, հարիրը՝ մեկել, յափունչին փռեցին, կուլոլ քարըները ու սանդրիրը՝ ծոցըներիցը, թրերը բնիցը հանեցին, առաջներին դրին, ու, հենց իմանաս, սև-սև հոգիք են, լեզու, բերան փակած՝ բարձր ու ցած անում, երեսները դնում քարի, թրի վրա, փոքր ժամանակ մնում գետնին կպած, էլ ետ գլխները վեր քաշում, էլ ետ երեսի վրա ընկնում, գդակը գլխներին, ետո բարձրանում, կիսով չափ գլխները կախ քցում, աղոթքները մունջ քթըների առաջին էնպես ասում, որ իրանց անկաջն էլ չէ՛ր իմանում, ետո ձեռըները ծընկների վրա դնում, քարին, թրին կռացած մտիկ տալիս, էլ ետ չոքում, գլխըները գետնին կպցընում։ Մահմեդականին նամազ անելիս որ գլուխը կտրես, ամեն մարդ էլ գիտի, որ երեսը թեքիլ չի, էնքան իր աղոթքի զորությունն զգում ա, բայց մի բառ էլա չի՛ հասկանում, չունքի բոլոր աղոթքները արաբերեն ա։

Հենց առաջին չոքելումը ուզեցան մեր տղերքը, որ վրա տան, բայց քաջն Աղասի մատը բարձրացրեց, որ տեղըներիցը չեռան. Թուրքերն ուզում էին իրանց կտրատեն, որ իրանց հավատակցի հավարին չէին կարում հասնիլ։ Մեկ-երկուսի փորը տեղնուտեղը վեր ածեցին. որ էս բանը վարավուրդ արին, մյուսներն էլ շուն դառան, ձենըները փորըները քցեցին։ Աղասին ղզլբաշի միջումն մեծացած՝ գիտեր լավ, որ նամազը ընչանք կես շըլլի, վախտը <չի>։ Զորի տղերքն էլ տեսնելով, որ թվանքի ձեն չէկավ, իմացան, որ գելը ինքն իրան ա ականաթի մեջն ընկել, էրեր թողին ու քարափե-քարափ էկան, քաղաքին մոտացան։ Շատը ղզլբաշի նոքարների աչքըներովն էլ ընկան, ամա ի՞նչ կարծիք կտանեին. իրանց մարդիկն էին կարծում, որ էնպես վախտին ֆորսի են մանգալիս, որ բերեն, խաներին, բեկերին փեշքաշ անեն, խալաթ առնեն։ Նրանց շարժմունքը բերդըցիքն էլ էին տեսել ու ջանները դող ընկել. էլ վախտը կորցնիլ չէ՛ր հարկավոր, թե որ իմացել էին թշնամիքը, բանը խարաբ կըլեր։ Հեռվանց էլ Երևանու կողմիցը մեկ-երկու ձիավոր, ձիանոնց անկաջը մտած՝ թողին, փափախին անելով գալիս էին։

Թշնամին նամազ էր անում, ի՞նչ մտիկ կտար, թե աշխարքն էլ փուլ

գար։ Հենց մեկ էլ ձեռըներն անկաջներին դրին, չոքեցին ու գետնին կպան, թվանքները բերդիցը ճռռացին, սար ու ձոր թնդացին, եկեղեցիքը գլուխ բարձրացրին. ձիանքը թոկ ու ղանթարղա կտրեցին, երկու հազարից ավելի՝ յափունչի, թուր, թվանք, գետնի վրա մնացին, ու ղզլբաշի շատը անգդակ, բոբիկ ընկավ ձորնըվեր, չունքի հրաշքից յա քաջքից ավելի ո՛չինչ չէին կարծում։ Ղոչաղ հայի տղերքը քար ու ձոր բռնած՝ էլ էնքան թվանքին չէին զոռ տալիս, որքան թրին ու ղամին։ Գաղան Հասան խանի լավ աջալն էկել, հասել էր, ամա նրա բախտն էր, որ էն Երևանից էկած ձիավորները հենց էս սհաթին ձորաբաշը հասան. մինչև փիադա հայի տղերքը նրան կհասնեին, սրանք ներքև էկան, Հասան խանին ձիու վրա դրին ու թռցրին։ Ողորմելին ձորի էս կողմիցը որ աչքը չի քցեց ու իր ջրատար օրդուն տեսավ, երեսը կալավ ու ձիուն օրզանգվիլ ավեց։ Հազար մարդից ավելի հոգին տվել էին էսօր, մյուսքը՝ որը քարափի, քարերի գլխով վեր ընկել, փառչա-փառչա էլել, որը բանհոգի էլած՝ վերընկած մնացել, որն էլ քարի, քոլի տակի տափ կացել, ճապաղել։ Շատին հենց էնպես տեղերից հանեցին, կոները կապեցին ու դարիդուս տարան։ Թո՛ղ նրանց հարախությունը նա զգա, իմանա, ով սիրտ ու երևակայություն ունի։ Հարիր ավելի գերի էլ էս օր ձեռք բերին։

Փոքր ժամանակի Անի էն անունը հանեց, որ սաղ Երևան դողում էր։ Էն ժամանակը ես ինքս էջմիածին էի, որ Հասան խանը էնպես փախած էկավ, անց կացավ։ Առաջուց մարդ էր ուղարկել, որ էջմիածնա միաբանքը առաջը չգնան խաչ ու խաչվառով, ինչպես միշտ անում էին։ Բայց ձեն հանեցին, թե քրդերը ճամփին վրա են տվել, ու Ղարս ցավ էր ընկել։

Աչալուրջն Աղասի, երբ բոլոր խալխը էկան, հավաքվեցան, ամեն բանը թողաց, հրամայեց, գնացին եկեղեցին, ռիգնաժամն ասեցին, աստծուն իրանց շնորհակալությունն արին, ու ժամը որ դուս էկավ, մարդ քցեց ամեն տեղ, որ ղարավուլ քաշեն, տեսնին, թե հարամու ոտքը կտրվե՞լ ա, թե՞ էլ ահ կա։ Գոհություն աստուծո, ոչինչ չտեսան, ետ դառան։ Մեռած մարմինները որը քարափնըվեր ձորը շպրտեցին, որը՝ հորերը. մնացած ձի, հարստություն ճոթ արին։ Շորին, ձիու, ասպաբի մտիկ անող չկար։ Մութը գետինը չառած՝ ամեն տեղ պահապան դրեց ու մնացած խալխը բերդը հավաքեց։ Ռիգնահացը որ կերան, Աղասին սկսեց խորհուրդ անիլ, թե ի՞նչ ա նրանց միտքը, ո՞ւր են ուզում գնալ։ Նրա միտքն էն էր, որ բալքի սրանց էլա ճամփու բերի, մնան Անի՝ իրանց հին աթոռանիստ քաղաքը, ուրտեղ որ նրանց կյանքը ապատվել էր, կրկին շեն քցեն, գրեն Գյումրի, ուր ռահաթ դառնան ու էստով աշխարքումը հավիտենական անուն ճարեն։

Բայց սնապաշտությունն ու սուրբ Հովհան Երզնկացվո անեծքի սուրը էնպես էին նրանց սրտումը ցցվել, որ հազար քարոզ ու քյալփաթին ըլեր, չէր կարող հանել։ Աստված մի՛ արասցե, որ մարդի գլուխը մեկ անգամ ծովի, էն ժամանակը հազար կարգավոր ու բժիշկ էլ որ հավաքվին, խեր չի անիլ. քանի դզես, էլի կծավի, ու վերջը, թե զոռ արիր, խպառ կկոտրվի։ Գիժն, ասած ա, մեկ քար քցեց ծովը, հազար խելոք վրա թափեցին, չկարացին հանիլ։ Աղասին տեսավ՝ ասածը չվանի վրա չե՛ն դնիլ, զուր տեղն անց կկենա, քաշվեց մեկ ղրաղ, աղլուխը դրեց աչքին ու բերանը բաց արավ.

— Փառքդ շատ ըլի, ո՜վ արարիչ Աստված. էլ ո՞ւր ենք ասում, թե մարդ Քո սուրբ հոգին ունի, Քո պատկերն ա, որ քարից էլ շատ անգամ միտքը պինդ ա, գլուխը՝ հաստ։ Գող ու ավազակ էստեղ տարերով բուն են դրել, էլի Քո երկիրը նրանց տակով չարել, վրեն պահել ա, հենց մեր ազգի՞ն ա Քո զուլումք հասել, որ չես թողում իրանց աշխարքը շեն անեն, Քո սուրբ անունը փառաբանեն, կյանք ազատեն ու կյանք վայելեն։ Չէ՛, ամենակալ Արարիչ, դու Քո ստեղծվածք, Քո որդին էդքան չե՛ս անարգիլ, չե՛ս ստնահարիլ։ Մարդս որ ծնվում ա, մեկ գունդ մսից ավելի էլ ո՛չինչ չենք տեսնում։ Տարիք են անց կենում, որ քիչ-քիչ ոտն ա ըլում, քիչ-քիչ լեզու, ուշ ու միտք գալիս, ձեռք բերանը տանիլը ու դարտակ հաց ուտիլն էլ ա, հաց դատիլը չե՛մ ասում, սովորում։ Բայց վա՜յ էն էրեխին, վա՜յ էն ազգին, որ աչքը էնպես գոցում բաց կանի, որ լսի տեղ խավար կտեսնի։ Աչքը բաց՝ դուզ ճամփեն կթողա, քարեքար կընկնի, վա՜յ էն ազգին, որ բնական օրենքը կթողա, անբնականին կհետևի, որ էնպես խրատ տվող չի՛ ունենալ, որ նրան հոգի տա և ո՛չ՝ հոգին էլ հանի։ Երաք, որ լավ կարդացող էր էլել, երեխեքանց ջոկ, ժողովրդին ջոկ գիշեր-ցերեկ խրատ էր տվել, կարդացրել, լուսավորել էր, հիմիկ մեր ազգը է՞ս հալին կըլեր, է՞ս տեղ կընկներ։ Սարի հայվանն էլ մեզանից լավ ապրում, հարամուց, ֆորսկանից յա փախչում, յա վրա թռչում, կոտրատում, գլուխը պահում։ Ծտի բունն էլ որ քանդում ենք, ղժվժում, թևին-գլխին ա անում։ Մենք ծտի ղդար էլա չկա՞նք, որ մեր բունը պահենք։ Ի՞նչ օգուտ էն գիրքն ու ավետարանը, էն խաչն ու երկրպագությունը, որ մենք չենք հասկանում։ Գետնի տակին էլ շատ գանձ կա, մեզ ի՞նչ։ Ա՜խ, մեր կարդացողներ, մեր կարդացողներ. ի՞նչ կըլի, որ ինչքան ժամանակ քնի, քեֆի հետ են անցկացնում, ավելի փողի թամահ անում, էնպես բանի թամահ անեն, մեզ լուսավորեն, իրանք էլ թշնամուց, հարամուց ազատվին, մեզ էլ ազատեն։ Մարդս մեկ անգամ է աշխարք գալիս, էնպես պետք է անի, որ դուս գալիս՝ էս դինումը անունը հիշվի, տոնվի, էն

դինումը հոգին փառավորվի, լսի փայ ըլի։ Բայց ի՞նչ օգուտ, որ ասածս քարերն են իմանում։ Ասենք, թե տգետ խալխը էսպես բանը լսել, ասում ա, կարգավորին ի՞նչ ա էլել, որ նա էլ ա հաստատություն տալիս, թե էսպես հրաշալի քաղաքը անեծքով ա կործանվել։ Առաջինը՝ սուրբ մարդի բերնից անեծք, դառը խոսք չի պետք է դուս գա, դուս էլ էկավ, Արարի՛չ, երեսս ոտիդ տակը, դու պետք է մեկ մարդի խաթեր միլիոն հոգի կորցնե՞ս։ Թե պետք է կորցնեիր, ընչի՞ ստեղծեցիր։ Ա՜խ, հազար էսպես ցավեր կա սրտումս, ամա բերանս փակում են, չե՛մ կարում ասիլ։

Էս մտատանջության միջումն էր, որ աչքը հանկարծ որ չի՛ բարձրացրեց, Անու բոլոր դուզը կրակ էր դառել։ Նա իմացել էր, որ Ղարսա էլիգը Հասան խանը քոչացրել, ուզում էր, որ բերի, Երևան ածի։ Լավ իմանում էր, որ սրանց վրա թե ղոնչուն էլ ըլին, էնպես մարդիկ չե՛ն ըլիլ, որ իրան դեմ կենան։ Հասան խանին որ կոտրեց, ի՞նչը նրան կդիմանար։ Նրա համար կռիվը խաղալիք էր դառել. մինչև առավոտն սպասիլ չէ՛ր ուզում, կասկածում էր, թե նրանց գլխին էլ է՛ն բերեն, ինչպես մյուս հայերի, ծեր ու պառավ սուրը քաշեն։ Երկու հարյուրչափ ընտիր ձիավոր քամակը քցած՝ ընկավ դուզը։ Էն հազարին վրա հասավ, որ նոր էկել, վեր էին էկել, ու շունը տեր չէ՛ր ճանաչում. քոչ-քոչ<ի> վրա վե՛ր էին թափել, ամեն մարդ իր գլխի ցավն էր քաշում։ Թշնամին էնպես ցրվեց, տաղըթմիշ էլավ, որ մեկը չմնաց։ Հայերին որ չարձակեցին ու մեկ տեղ հավաքեցին, նրանք իրանց դարդը մոռացած՝ ձեն տվին էկողներին, որ թոփ ու ջաբախանեն ձեռք քցեն ու սարվազներին հետ ածեն։ Երկու հազարից ավելի սարվազ, որ Հասան խանը թողել էր, որ էլիգը յավաշ բերեն, շատը հայ, ղալմաղալը որ ընկավ, հենց իմացան, թե էկողները ռուս են, բոլորն էլ թոփ-թոփխանա թողին ու ձեռը թափեցին։ Մեկ քանի երևանցի թոփչի ու սարվազ ձեռըներն ընկավ, էլ ի՞նչ էր պակաս, որ Անի քաղաքին հարամի մոտանա։

Ինչպես որ էր, գիշերն անց կացրին։ Առավոտը որ լուսացավ, աստուծո լիսն ընկավ հայերի սիրտը։ Էնքան բարութ, թվանք, թոփ էին նրանք ճարել, որ սաղ աշխարքը պոկ գար, նրանց վնաս չէ՛ր ըլիլ։ Բայց ինչքան Աղասին խրատեց, ասեց, խնդրեց, չէլավ, չէլավ, հայքը ետ չի՛ դարձան, անիծած տեղը չուզեցան մտնիլ, ու շատը երեսները էլ ետ դեպի Ղարս շուռ տվին։ Աղասին շատ ուզեց, որ ոսի հողն էլա գնան, չէլավ. որը կամենում էր, որը՝ չէ՛։ Ընչանք էսպես կզովսային, Ղարսա փաշեն ղոնչուն հավաքած՝ գալիս էր, որ իր ոհաթը ետ դարձնի։ Պետք է ասած, որ թե Ղարսա, թե Բայազդու փաշեն հայերին իրանց որդու պես էին սիրում։

Փաշեն մնաց սառած. երազ էր կարծում աչքի տեսածը։ Նա էնպես

էր կարծում, թե իր գլուխն էլ սաղ չի դուս տանիլ էս ձորերիցը, բայց ի՞նչքան զարմացավ, որ երբ կամենում էր վրա տալ, խալխը հազար տեղիցը ձեռները բարձրաց<ր>ին, անունը տվին ու խնդալով առաջը վազեցին։ Հոր պես, որդվոց ազատությունը տեսնելով՝ սկսեց փառք տալ աստուծո, երեսը գետինը քսել ու դեռ բերանը չբաց արած, որ հարցնի, թե ախր էս հրաշքը ի՞նչպես էր պատահել, Աղասուն ձեռների վրա բռնած՝ առաջին կանգնացրին, ու հազար բերան ձեն տվեց.

— Էսո՛ւր, էսո՛ւր մեզ, մեր որդիքը ղուրբան էրե՛, փաշա, գլխիդ ղուրբան։ Մեր ազատողը, մեր երկրորդ աստվածը սա է։

Ազնիվ երիտասարդը, որ ամեն մեկ սրտի ցավը հազար անգամ երեսի գույնը էնքան փոխել, ներկել էին, էնքան աչք ու թուշ կարմրացրել, սպիտակացրել, որ շարմաղի պես, մեկ ձեն անկաջն ընկնելիս, իսկույն աչքի աղրները գետ էին դառնում, երեսի գույնը՝ ղրմզ,— ձեռը անվեզու երկինքը քցեց ու առանց խոսալու ցույց տվեց, որ նրա հաջողողն ու զորություն տվողը երկինքն էր, և ո՛չ իր ձեռի հունարը։

Ազնիվ փաշեն առաջին անգամ իր կենաց միջումը մեկ հայի տղի ճակատը էնպես համբուրեց, ինչպես իրան նամազի քարը. դոշին քաշեց, էլ ետ գլուխը ձեռն առավ, էլ ետ համբուրեց ու իր քաջության բոլոր ըխտիարը նրան խոստացավ, որ հետը գնա Ղարս ու իր ձեռի տակին մնա. Աղասին ընկավ փաշի ոտը, շնորհակալություն արեց ու ասեց, որ աշխարքի թագավորությունն իրան տան, նա Անուցը ձեռք վերցնողը չի. նրա միտքն էն ա, որ Անի շինություն քցի։ Ի՞նչն էր փաշի ձեռին հեշտ, քանց էս. միմիայն խնդրեց, որ հմիկ հետը գնա Ղարս, ոտը խաղաղվի, էն ժամանակը նրա բոլոր մուրազը կկատարի, ինչքան տուն, մալ, ապրանք ուզում ա, կտա ու ինքն էլ հետը քոմակ կանի։ Արտասունքն աչքերը լիքը՝ կրկին ընկավ Աղասին փաշի ոտը.

— Է՛ս գլուխը, որ ինձ էլ պետք չի, է՛ս դոշը, որ հազար անգամ կրակումն էրվել, խորովվել ա, է՛ս ձեռը, որ հազար անգամ ուզել ա իր թուրն իմ սիրտս խրի, բոլոր, բոլոր քեզ մատաղ, փաշա՛. յա էս սհաթին ինձ սպանի՛ր, յա ասա՛ծդ արա՛, որ ես իմ ազգի մայրաքաղաքը էլի շեն տեսնիմ, ետո գետինը մտնիմ։

— Անխավատ աչամ,— քրդստանցիք հազար տեղից ձեն տվին,— ծո՛, ի՞նչ կզրուցե, ծո՛։ Գ՛իր չգինա՞, կարդալ չգինա՞. փաշություն կտան, հմլա էլ իր սաղ կածե։ Ո՞վ է խելք, իման կորցրել, որ էմալ անիծած տեղ դա, բուն դնե։ Շիդակ ա՛չամ, աչամի լաճ։ Ի՞նչ կուզես, էրե՛, աքլոր-մաքլոր չի խարցնիլ, հմլա կրոռա՝ մեր ճետ խանչեց, մեր ճետ խանչեց (մեր աքլորը կանչեց)։

Խնդալով, պար գալով ղարսըցիք էլ ետ իրանց հողը մտան, ա՛խ քաշելով, աչքը սրբելով՝ Աղասին Անի թողեց։ Փաշի կողքին, հազար խոսք, զովասանություն անկաջն էր ընկնում, հենց գիտես, քառացել էր։ Հազար անգամ շուռ էկավ, էլի որ դեռ Անու պարիսպը, եկեղեցիքը աչքին երևում էին, սիրտը մի քիչ հանդարտում էր, դոշին խփում էր, ա՛խ քաշում, կրակ վեր ածում։ Հենց սարի գլուխը վեր էլան, որ էն կողմն անցնեն, ու Անին պետք է աներևութանար, էլ չկարաց իրան պահիլ. թուլացավ, ձիուց վեր ընկավ, չոքեց, ձեռները երկինքը քցեց, աչքերը՝ Անու վրա, ու գոռաց.

Յա ա՛ռ իմ սիրտս, յա տո՛ւր ինձ հունար,
Ո՛վ դու երկնային ստեղծող բարերար.
Յա իմ հոգիս էլ հանի՛ր, քեզ մոտ տա՛ր,
Յա քո երկրնքիցդ արա՛ ինձ մեկ ճար:

Քանի շունչս վրես ա, քանի ձեռքս գլուխս,
Կրակ էլ որ թափես, խորովես իմ սիրտս,
Էլի իմ հոգիս ուրախ քեզ կտամ,
Թե Անու միջումն իմ մարմինս թողամ:

Աչքե՛ր, քոռացե՛ք, բալքի թե էլ բաց
Չտեսնիք դուք Անու լուսահողն օրհնած.
Բալքի թե մեռնիմ էս դարդովն էրված,
Հողս էլա հողին չմնա կորած:

Թո՛ղ հոգիս դժոխք գնա՛, խորովվի՛.
Իմ սուրբ նախնյաց տեղ՝ իմ ազիզ Անի,
Էլի որ մարմինս մեկ քարի տակի
Ըլի, քո ծոցումն, ինձ դրախտ պետքը չի՛:

Թո՛ղ էն անեծքը, որ քեզ են տվել,
Բանան անդունդը, կուլ տան ինձ սաղ էլ.
Քո հողն երեսիս մտնիմ գետնի տակն էլ,
Երկնային լիսն էլ ես չե՛մ կարոտիլ:

Սուրբ Երզնկացի, սուրբ Երզնկացի,
Պարծեցի՛ր, թե ես չեմ շինիլ Անի.
Անեծքդ էն վախտը թրի, կայծակի
Պես թո՛ղ ինձ էրեն, իմ հոգիս տանջվի:

Ջանս ձեզ ղուրբան, ա՛յ սուրբ քար, ճողեր,
Տաճարք, ապարանք, պարիսպք, տապաններ
Թե մուրազս սրտումս պետք է մեռնի, մնա,
Էս չոքած տեղս թո՛ղ ջանս քարանա:

Քարացած տեղիցս կանգնիմ ու ասեմ,
Ամեն անցնողին ետևից կանչեմ
Քարացած լեզվով վա՛յ տամ, աղաչեմ.
«Ո՞ւր եք գնում, թողում, ձեր նախնյաց տեղն եմ»:

<10>

Առավոտը, էն ա, լսին էր տալիս, որ իշխանն և քաջահաղթն գեներ-
բալ-մայոր Մատարովն *վեր կացավ, Շամքոռա դլին մտիկ արեց, զորաց*
ինչ հրաման ուներ, տվեց, ու ինքը՝ արծվի աչքերովը Գրիգոր եպիսկո-
պոսը ու հայերի իշխանները քամակը քցած, օրդվի չորս կողմովը պտտտ
տալով՝ մտիկ էր անում սարերի գլխին, խոռ տեղերին ղուրբընով, որ
թշնամին հանկարծ վրա չտա, ու իր պատրաստությունը տեսնում էր։
Զորքը, ղորդ ա, շատ քիչ էր, ամա Մատաթովն էր նրանց գլխին, որ սար
ու ձոր դողացնում էր, որ ասաուծո տեղ պաշտում էին, որ ղզլբաշի հոգին
ջուր էր կտրում անունը լսելիս, ու իր հավատարիմ ազգը՝ արինը աչքու-
մը, շունչը բերնումը, գլուխը փեշումը, հաշիր, վառված, քամակին՝ որ
տուն, տեղ, որդի, օղլուշաղ, մալ, դովլաթ թշնամուն յա գերի տան, յա
ուսի թուրը նրանց աչքը խրիլ տան։ Զոռը խփեցին, առավոտյան աղոթքն
արին, բայց մեկն էլա դեռ չէր գիտում, թե ո՞ր կողմովը գնան։
Ղզլբաշի զորքն Գյանջա, Ղարաբաղ էս կողմիցն էր առել, ոտնատակ
տվել, Փամբակ, Շորագյալ՝ լնւ էս կողմիցը՝ Աբաս Միրզեն, էն կողմիցը՝
Հասան խանը, քանդելով, ավերելով էկել, հասել էին, որ գնան Պետեր-
բուրգ։ Թիֆլիզ, ինչպես որ տեսանք, սհաթե-սհաթ աչքը կթած ուներ, թե
Աղա Մահմադ խանի կրակը, որդիանց որ ա, էլ կրկին իր գլխին կթափի։
Երմալովն ինչ հնար, ճարտարություն ուներ, գործ դրեց։ Մատաթովը
պետք էր Վրաստանու փրկիչը լիներ ու ցույց տար աշխարքի, թե հայոց
հ գումը իրանց հին հսկայության կրակը, քաջության բոցը, հավատար-
մության խունկը դեռ կար ու վաղուց միտում էր, որ մեկ հով դիպչի՝ հոտն
աշխարք ընկնի, կրակն իրանց թշնամուն, իրանց աշխարքը քանդողին
էրի, փոթոթի։
Պտտելով՝ էլ ետ չադիրը մտավ զորապետը ու միրզի մեկին կանչեց,

որ ասածը գրի, թուրքերին խաբրի, թե ֆլան գեներալը ֆլան տեղիցը, ֆլանը՝ ֆլան, անթիվ զորքով գալիս են, որ թշնամու գլուխը ջնջիեն, հանկարծ ղշղրուն ընկավ զորաց մեջը։ «Կարաու՜լ» ձեն տվին, թվանքները հազար դհից վրա բռնեցին, բայց «Քրիստիան, Արմյան» գոռալով, երեսին խաչակնքելով՝ մեկ աժդահա որ ղոնչունի մեջը չընկավ, Մատաթովի չադիրը չտեսավ ու ձիուն ետի ղամչին տվեց, Մատաթովը ստոլի վրա մնաց փետացած. ընչանք մարդ կկանչեր, անծանոթի ձին առաջի երկու ոտը չադրի առաջին փռեց, փռնչաց ու հոգին քթովն ու փորովը դուս փչեց։ Կտրիճ ձիավորը մզրախը գետնին ցցեց, ղարավուլի, բանի մտիկ չարեց ու Մատաթովի չադիրն ընկավ։ Քաջ գեներալը, թե եվրոպացի էր էլել, հուշտ կըլեր յա կզարմանար ու էնպես հանդգնությունը, կարելի ա, պատժեր, բայց նա մեր երկրի մարդի խասիաթը լավ գիտելով՝ տեղը մնաց կանգնած, ու էլ էկողին ժամանակ չտվեց, որ խոսի, ինքը հարցրեց, թե ի՞նչ խաբար ա։ Ձին որ էն հալն էր ընկել, նստողինն ի՞նչ կըլեր։ Երկար ժամանակ լեզուն խոսք չէ՛ր բռնում։ Գեչդանդեչ որ խելքը գլուխն էկավ, ձեն տվեց.

— Կնյա՛զ, թաղարեքդ տե՛ս, որ էսօր ա՝ ձեզ դաղթմիշ կանեն, էս գիշեր ա՝ նմանապես։

Ու պատմեց, թե ինքն ո՞վ ա, Խլղարաքիլիսումն ի՞նչ արել, Անի՝ ի՞նչ, Ապարան, Դիլի՝ ի՞նչ, ու քսան-երեսուն ձիավորով հազար հարամու աչք հանելով, էստեղ-էնտեղ կոտորելով՝ ուղեցել էր հենց ինքը մեկ ֆռսանդ ճարի, ղզլբաշի օրդուն մեկ գիշեր կոխի, ամա բանը տեղը չէ՛ր էկել։ Էն օրն էլ Թարթառ գետի ղրաղիցն անց կենալիս, թշնամու աչքովն էր ընկել, սաղ օրդուն վրեն պոկ էկել, ընկերների մեկ-երկուսն էլ բռնել, մյուսները սար ու ձոր ընկել, ինքը հազար թվանքի գյուլլից պրծել, նրա անունը լսել, ընկել ուսի հողը, ընկել, որ գա Թիֆլիզ, իմաց անի, բեղաֆիլ նրա օրդուն տեսել ու թուշ էնտեղ էկել։

— Ղզլբաշի շատը, որ ինձ հետ էին ածում, հենց նոր քամակիցս ուռ էլան. երբ ձեզ տեսան, փախան. հմիկ ի՞նչ գիտես, էնպես ա՛րա. գլուխս ետ եմ դրել, որ ուսին ղուրբան անեմ։ Վաղուց էս մուրազը սրտումս կար, վախտ չէի ճարում։ Հույս ունիմ, որ մեկ քանի թշնամի էլ ես իմ թագավորի ուղուրին ղուրբան անեմ։ Էս կողմերի քարերն էլ համարած ունիմ, աչքս խուփ՝ մութը գիշերը ես ճամփեն կքթնիմ։ Ի՞նչպես կամենաս, էնպես իմ ծառայությունը թագավորին հասկացրո՛ւ։ Փաշություն էլ ինձ տվել են Օսմանլվումը, չեմ ուզել։ Քրդերն իրանք էին ուզում ինձ իրանց գլխավոր շինեն. հինգ տարի ա, Բայազդու ու Ղարսու գլխու ղուշ չի՛ անց կացել. սար ու ձոր ոտի տակ եմ տվել։ Միտքս էն էր, որ Անի

քաղաքը չինեի։ Հայերը, հայերը, աստված նրանց խեր տա, ո՛չ ինձ մտիկ արին, ո՛չ փաշի հրամանին. էնքան էսօր-էգուց քցեցին, մահանա արին, որ ղալաբանթլղը ընկավ։ Ճարս որ կտրեց, էլ ո՛չ փաշի մտիկ արի, ո՛չ փաշության, ետ էկա էլի, Անուն ապավինեցի։ Լավ աստված Հասան խանին ձեռս քցեց, ես ջահելություն արի, հոգին չհանեցի. ուզում էի նրան թաքուն չսպանեմ։ Ղզլբաշը որ ետ դառավ Փամբակից, ես էս սարի, էն սարի ծերին էնքան գլուխս պահեցի, որ էլի նրան մի ձեռք քցեմ, չէլավ. աստված գլխիս բարկացավ ու էս հալիս ինձ քո ոտը բերեց, որ շատ չի՛ հպարտանամ, շատ չի՛ ամբարտավանամ։ Որքան բարութ ունեի, հատավ։ Ընկերքս էլ չկարացին դեմ կենալ, ամենը մեկ սար ընկան, ես էլ էս հալին առաջիդ կանգնած եմ. ինչ հրաման ունիս, ասա՛. մեկ գլուխ ունիմ, էն էլ ռուս թագավորին ղուրբան։ Թաք ըլի՝ մեր աշխարքը անօրենի ձեռիցն ազատվի, թո՛ղ մեր կերածը ցամաք հաց ըլի։ Երևան բոլոր քոչացրին. խեղճ խալխի տուտը Թավրեզ, Բայազիդ, Ղարս հասավ։ Մեկ ծեր հեր ունիմ, բանտումն ա փտում. մեկ պառավ մեր ունեի, ճամփին, քոչելիս ա հոգին տվել. մեկ նշանած ունիմ, հազար կրակից, սրից, թշնամուց սաղ ամառը տանջվեցա ու անջախ մի անջախ բերի, ռուսի հողը քցեցի։ Էլ ուրիշ բան չե՛մ ուզում, մեկ հորս էլ ազատեի, մեկ մեր ազգը, մեր երկիրը, մեր հավատը ազատ տեսնեի, ետո թո՛ղ աստված, ինչ իմ ճակատիս գրվածն ա, էն կատարի։

Էս խոսքումը էլ սիրտը չդիմացավ։ Ջիգյարի կրակը բերանը փակեցին, աչքի արտասունքը՝ տեսությունը։ Հսկայն Մատաթով երկար ժամանակ մնացել էր զարմացած ազնիվ երիտասարդի էնպես ճարտար բերնի, էնպես քաջ սրտի վրա, էնպես հիանալի, պարթև բոյի ու փափուկ ջիգյարի վրա։ Խնդրեց, որ քիչ-մի հանգստանա, ու ինքը իրան թաղարեքը տեսավ։

Ով էն ժամանակը կար, տեսած կամ լսած կլինի, թե Մատաթովն ի՞նչ արեց։ Նհախ տեղը չի նրա անունը հայի, թուրքի, ղզլբաշի բերնումը մնացել։ Աշխարք տակ ու վեր կըլի, բայց նրա հիշատակը անջնջելի կմնա մեր ազգի միջին ու մեր աշխարքումը։

Դեռ վարժատան աշակերտ էի ու, ինչպես էսօր, կենդանի է մտքումս՝ Աղասին ի՞նչպես մտավ Թիֆլիզ։ Երևելի իշխանի որդի չէ՛ր, որ նրան մեծ փառքով ներս բերին, բայց ով նրա արածը իմացել էր, ուզում էր ոտները ջուր անի, խմի։ Մեկ թղթի միջում ծալած՝ իրան ոսկորները, քսան անգամ հենց ինձ ա ցույց տվել, որը որ զանազան տեղ կովըներումը կոտրել, հանել էին։

<11>

Մեկ քանի ժամանակից ետը, հայտնի ա ամենին, որ երբ Ղարաբաղու կողմն թշնամուցը ազատվեցավ, Ապարան, Երևան դառան ռուսաց քաջ սրտի մեծագործության ու տղամարդության ասպարեզը։ Նհախ տեղը չի Երևանու անունը էնպես անձին պատիվ տվել, որ ռուսաց զենքը Ասիա ու Եվրոպա երկինքը հասցրեց։ Ո՞ր հայը իրան պարծանք չի համարիլ, որ օսմանցվի, ղզլբաշի ու Պոլշիո աստվածը էսօր իր կոմսության անունը Երևանու անունովն ա զարդարել։ Իշխանն Վարշավի և կոմսն Երևանի՝ Ասիու միջումը Ալեքսանդրի ու Պոմպեոսի, Ջինգիզ խանի ու Թամուրլանգի հիշատակը խապառ ջնջեց ու ռուսաց քաջության, մեծահոգության, բարեսրտության, մարդասիրության անունը աստղերի հետ դասեց։ Քանդելու միայն էին սովոր ասիացիք, շինություն ու խաղաղություն տեսան։ Ուրիշ՝ թշնամու առաջ իրանց արինն էին տալիս, ետո իրանց քաղքն ու օղլուշաղը. ռուսաց, ընդհակառակն, բալանիքն էին ընծայում, ետո իրանց տունն ու ընտանիքը։ Գոռոզ կարծիքն պարսից, թե խաչը միշտ պետք էր Ալու փանջին հնազանդեր, ցրվեցավ, ու իրանց անողորմության, անօրենության տեղակ շնորհք, ողորմություն տեսան։

Հայոց արտասվալից աղոթքը, որ գիշեր-ցերեկ անում էին, թե ե՞րբ կըլի՝ ռուսաց, իրանց հավատակցի երեսը տեսնին, ետո հողը մտնին, լսեց աստված ու կատարեց։ Խաչի լիսը ու ռուսաց մարդասիրության շնորհքը ապառաժն էլ կակղացրին, ու Հայաստանի չոլ, ամայի դաշտերը էսօր մարդաբնակ են դառել ու ռուսաց ազգի խնամքը վայելում, իրանց սուրբ աշխարքը կրկին շենացնում։ Հայոց ազգի կարոտ աչքը վաղուց էլ արտասունք չի՛ տեսնիլ, իրան Հայրենիքը կտեսնի, նրա ծոցումը կմեծանա, նրա սերը կվայելի ու քոռ, նախանձոտ մարդին գործով ցույց կտա, թե Հայ ազգը ո՛չ թե փողի կամ շահի խաթեր ա ռուսի տերության անունը պաշտում, այլ թե իր սրտի ուխտն ա ուզում կատարի, որ իրան հավատն ու ազգը պահողին արինը, կյանքը, որդին չխնայի։ Հայ ազգը, որ ո՛չ թե թուլ էր յա քաջություն չուներ, որ իր երկիրը պահել էր, ո՛չ։ Երկիրն ինքն էր պարտական։ Աշխարքումն ով ոտը բարձրացրեց, Հայաստանու վրովը պետք էր լոք տար, հայոց ազգին պետք էր ոտնատակ տար, ձեռք քցեր, որ իր թշնամու հախիցը կարենար գալ։ Ո՛չ ասորիք, ո՛չ պարսիկք, ո՛չ մակեդոնացիք, ո՛չ հռովմայեցիք, ո՛չ պարթևք, ո՛չ մոնղոլք, ո՛չ օսմանցիք չէին կարող էն զորությունն ստանալ, եթե հայոց ազգը մեկի դեհը չէ՛ր պահել։ Դեհը պահելով, զորդ ա, իր տունը քանդեց, չունքի իր բարեկամը վեր ընկնելուց ետո իր թշնամին ավելի եա իր չարությունը գոր-

ծում, իր ինադը (չիգրը) հանում էր, բայց էստով հայոց ազգը արարած աշխարքին հավիտյանս հավիտենից կարող է համարձակ ցույց տալ, թե ի՞նչքան հոգի ուներ, ի՞նչքան կամաց զորություն, սրտի հաստատություն, որ իրան չորս կողմի էն հզոր ազգերը կորան, փչացան, անուններն չկա, հայոց ազգը անուն էլ ունի ու իրան հավատն ու լեզուն մինչև էսօր իր արնի գնովը պահեց, հասցրեց, որ մեկ ազգ էլա էսպես օրինակ չունի։

Երևան թևին տվեց, երբ ռուսաց զորքը իր մեջը մտավ։ Էջմիածնի խնկի, մմի հոտը ու զանգակների ձենը երկինքը հասավ։ Քաջահաղթ հսկայն՝ կոմսն Երևանի, Տոբիթա հրեշտակ Ներսես արքեպիսկոպոսի ձեռից բռնած մտավ Վաղարշապատ, որ Եփրեմ կաթուղիկոսի սուրբ աչքին լիս տա ու առողջություն։

Էն ժամանակվան խաղերը, որ հանել, ասում էին, հավիտյանս հավիտենից կարող են աշխարքին վկայություն տալ, թե թուրք ու հայ հենց իմացան, թե աստված վեր էկավ իրանց համար։ Հարիր տեսակ խաղ՝ հայերեն, թուրքերեն, Երևանու բաղերն ու ձորերը լսում էին, ու հինգ տարեկան երեխեն էլ էսօր, ուրախ վախտը, ձեռը բերնին ա դնում ու ասում։ Որ ասածիս ամեն մարդ հավատա, էն խաղերիցը մեկը թո՛ղ օրինակի համար գրվի էստեղ։

Սար ու ձոր սասանմիշ էլան, զարմացան,
Պասքովիչ սարդարի ոտի տակն ընկան,
Մեր Մասիսն, Ալագյազն փիանդազ էլան.
Անիրա՜վ, էս բաղին բաղմանչի ունի:
Անիրա՜վ, էս բաղին բաղմանչի ունի,
Տարալու սիրտս էդ քարը մի՛ քցի:

Մատաքովն Ղարաբաղ առավ, ազատեց,
Կրասովսկին Ապարան ոտնատակ տվեց:
Սաղ Իրանն Պասքովչին չոքեց, ծունր դրեց,
Ղզլբաշն մուկ դառած՝ գլխին վա՜յ տվեց:
Բեկենդորֆն Սարդարին ջախըրուրդ արեց,
Ասլանի գլուխն արծվին ռուսն մատաղ արեց:
Անիրա՛վ, հայերի արինն մի՛ խմի,
Միտք արա՛, էս բաղին բաղմանչի ունի:
Անիրա՛վ և այլն:

Սրբազան Ներսեսի խաչին դուրբան գնամ,
Եփրեմի՝ հոգևոր տիրոջն դուլ դառնամ:

Սուրբ Գեղարդն, մեռոնի զորքն մալում էլան,
Թշնամին քոռացավ, հայքն ուրախացան:
Հայ ազգի աղոթքը երկինքը հասան:
Անաստվա՛ծ, հայիցը ձեռք քաշի՛, կորի՛:
Անիրա՛վ, հայերի արինն մի՛ խմի:
Միտք արա՛ և այլն:

Մենք քամակ-քամակի կտանք, վեր կկենանք,
Ռուսին մեր աշխարքը, կյանքն դուրբան կտանք:
Հասան խանն կատվի պես քարեքար ընկավ,
Շանզադի գոնչունը ցիր ու ցան էլավ:
Մեր խաչին, անհավա՛տ, արի՛, հանաչի՛:
Անաստվա՛ծ, հայիցը ձեռք քաշի՛, կորի՛:
Անիրա՛վ, հայերի արինն մի՛ խմի:
Միտք արա՛ և այլն:

<12>

Էջմիածին, Թավրիզ, Աբասաբադ, Սարդարաբադ ռուսաց օրհնյալ ոտի հողին արժանացան, բայց դեռ Երևան իր անճար գլուխը դեմ էր տվել ու հետին շունչն ընկած՝ ուզում էր, որ դեռ մեկ քանի սհաթ էլ իր ջրատար որդվոց գլուխը լա, նրանց սև երեսը մեկ էլ տեսնի, որ փրկիչն Հայաստանի՝ կոմսն Երևանի, իշխանն Վարշավի, էկավ՝ էնտեղանց բանտում, զընդանում մաշված հայերին էլ մեկ օգնություն անի, ազատի։

... ամսի ... էր, որ Երևանու բերդը ծխումը կորավ։ Երկնքի կրակը չոկ էր վեր թափում խեղճ կենողների գլխին, թոփի, թոփխանի գյուլլեն՝ չոկ։ ... օր ... գիշեր սար ու ձոր դմբում, դմբդմբում էր։ Հենց գիտես՝ Սոդոմ-Գոմորի քուքուրթն ու կրակը էսօր ա վեր գալիս։ Երևանու բերդը, ձեթը հատած պատրուգի պես, թե մեկ ճրթճրթում էլ էր, մեկ սհաթ քիմի, էլ ետ հանգչում, խավարում էր։ Էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել։ Սարդարը, շահզադեն վաղուց էին իրանց սև օրը լաց ըլելով՝ Երևանու երկրիցը ձեռ քաշել, Իրան փախել։ Հասան խանն էր մնացել մենակ թոռումը, որ իր արած չարության պատուհասն առնի, ու էն մարգարեական ձենը կատարվի, որ Ապարանումը նրա խուլ անկաջն ընկավ, բայց խելքը գլուխը չեկավ։ Նհախ, որքան բերնումը լեզու ու ձեռին հունար կար, բանացրեց, որ իր ազգին սիրտ տա՝ իրանց գլուխը ձեռ չքցեն։ ... օրվանից հետո խալխը, որ տեսավ՝ ճար

չկա, իրան միջի մեծամեծներիցը մեկ քանի մարդ ընտրեց, ու հենց, էն
ա, վերջին սհաթն էր մնացել, որ բերդը հոգին տա, կենողները իրանց.
իրանց դուս էկան բրջերի գլուխն ու բալանըքերը ձեռըներին բռնած՝ ռա-
յի էկան։
Քանի որ Երևան բինա էր ընկել, կարելի ա, թե է՛ն օրը, է՛ն տեսա-
րանը, է՛ն անունը չէ՛ր տեսել, չէ՛ր ճարել, որ էսօր տեսավ ու իմացավ։
Կարելի է՝ աշխարք աշխարքով դիպչի, ազգեր գան ու էլ ետ ո՛չնչանան,
բայց քանի որ հայի շունչն ու լեզուն կա, ե՞րբ նրանց մտքիցը կերթա էն
ավետալից սհաթը, որ իշխանն Վարշավի, գեներալն Գրասովսկիյ, մեր
անմահ Ներսեսին հետըները՝ խաչ, ավետարան ձեռին, մտան բերդը, որ
Հայոց աշխարքի ազատության տոնը կատարեն։ Պետք է աշխարքումն էլ
հայի հոգի չըլի, որ իրանց փրկիչ Պասքևիչի անմահ հիշատակը արտա-
սունքով ու լալով չհիշեն, իրանց աշխարքի հոր ու պահպանողի սուրբ
անունը, որ Հյուսիսի բևեռիցը սկսած նրանց հոգսը քաշել, նրանց իր թևի
տակն էր ուզում բերի, սրբության պես չպաշտեն։ Կամիլլոս, ղորդ ա,
Հռովմ ազատեց։ Սցիպիոն՝ հռովմայեցվոց ճուրը Աֆրիկումը ցցեց՝ Կե-
սար՝ Գալլիա ու Բրիտանիա ոտի տակն առավ, Նապալեոն՝ Իտալիո,
Սպանիո և Եգիպտոսին ազատություն էր խոստանում, բայց ե՞րբ հռով-
մայեցիք, գալլիացիք, եգիպտացիք է՛ն սրտովը, է՛ն սիրովը իրանց ազա-
տողներին կընդունեին, կպաշտեին, ինչպես հայք, հա՛յք, որ առավոտն
էին վեր կենում, է՛ն էին աղաչանք անում աստվածանից, րիգունն էին
քնում, է՛ն էր նրանց աչքի արտասունքը։ Մեծ էր հիրավի ու անմոռա-
նալի ռուսաց Փարեժ մտնիլը, բայց ե՞րբ գաղղիացիք էն հոգվովը իրանց
բախտավորությունը կվայելեին, ինչպես հայք էս արժանահիշատակ օրը։
Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ՛, հազար տեղից, հազար
փանջարից լացն ու արտասունքը էլ չէին թողում, որ մարդի բերան բաց
ըլի։ Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքե-
րը, որ քարացել, սառել, երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ
ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէ՛ր
ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար։
Ինչպես բարեկամ, ինչպես երկնային ավետաբեր հրեշտակ, ազատու-
թյան ու ողորմության պսակը ձեռին՝ մտավ իշխանն Պասքևիչ սարդարի
ամարաթը։ Նա անց կենալիս հազար տեղ տեսել էր ու արտասունքը բըռ-
նել, թե ինչպես էին ծեր, մանուկ, աղջիկ, պառավ՝ չէ՛ թե մենակ իր ոտը
համբուրում, այլև շատը ընկնում էին սալդաթների ճտովն ու էնպես նվա-
ղած, հոգին քաղված մնում։ Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր,

քանի հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք քցել, է՛ս օրը, է՛ս
ուրախությունը չէին տեսել, չէին վայելել։
Էջմիածնա եպիսկոպոսունքը, որ բերդումը, հենց բռնի՛ր, մաշվել,
հետին թելն էին ընկել, մեկ կողմից, Շհարի ու Կոնդի քահանայք ու դպիրք
մյուս կողմիցը որ դուս չէկան՝ երեսները գետինը քսելով, էնպես գիտես,
թե քաջն Վարդան նո՛ր ա վեր կացել, Տրդատ նո՛ր ա գալիս Հռովմիցը,
որ իրանց հայրենյաց աշխարքը կրկին ազատեն, նո՛ր լիս, նո՛ր կյանք
իրանց ազգին տանե։
Սցիպիոն Աֆրիկացի Կարթագինեի ծուխն ու էրված, քանդված ամա-
րաթներն էր տեսնում, աչքը բռնել, լալիս, որ հռովմայեցվոց գազան
բնությունը նրանց արինը խմեց, կշտացավ, Պասքևիչ Մասիս էր առաջին
տեսնում ու ուրախությունիցը աչքը սրբում, Տիգրանա, Վաղարշակի, Ան-
նիբալա, Տրդատի, Վարդանի պատմությունն էր մտածում, նրանց պատ-
կերն էր առաջին կանգնել։ Նրանց անմահ հոգիքն էին երկնային լուսով
նրա աչքի առաջին, նրա գլխովը պտտում, ժպտում, զմայլում, ձեն տալիս.
— Տե՛ս Հայկ աստղի կամարը. է՛ն լուսեղեն, է՛ն կապտագույն գըր-
քումն քո անունը գրվեց, փրկի՛չ որդվոց մերոց։ Էնտեղ տարանք քո մե-
ծագործության պատգամը։ Հայկի մոտ, Լուսավորչու գրկումն իրար կտես-
նինք, այժմ պահի՛ր մեր աշխարքը։
Հայկա որդիքն էին նրան երկրպագություն տալիս, հայոց անմեղ լե-
զուն էր նրա կյանքը օրհնում, հայոց սուրբ աշխարհն էր իր սիրտը բաց
արել, նրան պատվում, պաշտում։ Երևանու բերդի անվան կեղտը սրբող
էր նա սրբեր ու իր անունովը նոր կնքեր, երևանցվոց, հայոց մեծ ազգին
հավիտյանս հավիտենից հեր, տեր դառնար։ Ի՞նչ սիրտ ըլեր, որ էստոնք
մտածելիս չվերանար, չմեծանար։ Ի՞նչ աչք ըլեր, որ էս սհաթին իրան
բռներ ու էնքան օրհնության, ուրախության ձենը լսելով՝ դինջ մնար, ծով
չդառնար։ Նա արեգակ էր դառել Հայաստանի, ռուսք մոլորակի պես նրա
գլխովը պտտելով՝ նո՛ր կենդանություն էին բերել, ո՞վ կարեր էս մտա-
ծել ու լուռ կանգնիլ, որ էնպես քաջ հսկայն կարողանար դիմանալ։ Հա-
սան խանն ընկել էր ոտը, իր վերջին սհաթին էր սպասում. նա չէ՛ թե
Սցիպիոնի պես իր ազգի կատաղի բնությունն իմանալով՝ ոտնահար արեց,
այլ ռուսաց ազնիվ հոգին ճանաչելով՝ էնպես անօրեն ավազակին գրկեց,
էլ իր պատվով՝ հրամայեց, որ ճամփու քցեն, գնա, դհա ավելի իմանա,
թե ո՞րքան ողորմած է հզոր տերությունն Ռուսաց։ Ռուսք էն մութը հո-
գին չունեին, որ Նապալեոնի պես մարդին, իրանց մեծահոգությանը ապա-
վինելիս, նավ քցեն, որ գնա, իր դառն օրը Ովկիանոսի միջումը վերջաց-
նի, չէ՛։ Ռուսք իրանց թշնամուն, էնպես անարգ հոգուն էլ, ցույց տվին

էսօր, որ իրանց ոտքը որտեղ որ մտնի, էնտեղ բախտավորություն ու խաղաղություն պետք է ըլի։ Հասան խանը գլուխն էր դեմ անում, որ կտրեն, պարսիկք երեսներն էին փռում, որ ոտնակոխ անեն, բայց Պասքևիչ՝ անօրինակ հսկայն, մեկին հանդիսով Թիֆլիս ուղարկեց, մյուսցը շնորհք, ողորմություն ցույց տվեց։ Այլ եվրոպացիք Ամերիկա ավերեցին, հողի հավասարեցին, ռուսք Հայաստան կանգնացրին ու ասիացվոց բիրտ, գազան ազգերին մարդասիրություն ու նոր հոգի տվին, աստված ի՞նչպես չի՛ պետք է նրանց թուրը կտրուկ անի, պատմությունն ի՞նչպես չի՛ պետք Պասքևիչին աստվածացնի, հայք ե՞րբ կարեն ռուսաց արածը մոռանալ, քանի որ շունչ ունին։

<13>

Բայց ա՜խ, սիրելի կարդացող, մի հարցնես, թե ախր էսքան բանը որ անց կացավ, ո՞ւր մնաց մեր ջրատար, սիրտը փորումը մեռած Աղասին, որ չի՛ գալիս՝ իր մուրազն առնի, իր մահվան դուռն ընկած խեղճ հորն ազատի, նրա օրհնությունն առնի, թողություն խնդրի, որ էնքան նեղությունն ու տանջանքը իր խաթեր էր քաշել, հինդ տարի բանտումը չորացել, ցամաքել, հազար անգամ գերեզմանի դուռը գնացել, ետ եկել, որ իր որդուն տեսնի, փափագն առնի, էնպես հողը մտնի, որ սրտումն էլ դարդ չմնա, գերեզմանն իր համար դժոխք չդառնա։

Բերդի մեջն ու չորս կողմը, որ ասեղ քցեիր, գետնին չէ՛ր հասնի. աշխարքը իրարոցով էր դիպել։ Աչք էր, որ խնդում էր ու լալիս. բերան էր, որ գովում էր ու օրհնություն տալիս. ազգական, բարեկամք էին, որ իրար փաթութված՝ մնացել էին փետացած։ Լեզվի տեղակ արտասունքն էին նրանց էրված սիրտը հովացնում։ Սար ու ձոր խնդացին, բաղ-բաղստան ցնծացին, որ իրանց տերերն էլ ետ ճամփու էին ուզում ընկնիլ, որ գնան, նրանց զվարթացնեն։ Բերդի դռներն ու քուչեքը դըմբում էին ոտի ու ուրախությունի ձենիցը։ Ոսի զարավուլները ամեն տեղ բռնեցին. խալխը քիչ-քիչ սկսել էր, որ քաշվի, բայց որտեղ որ Հասան խանի խերիցը քոռացրած, քոթրոմացրած, ոտից-ձեռից ընկած անդամալույծ կար, էկել, բերդի դուռը բռնել էին, որ իրանց սև օրին մեկ լիս, մեկ ողորմություն, մեկ դինջություն գտնեն։

Էս միջոցին էր, որ Ներսես սրբազանը Սահակ աղի ձեռիցը բռնած՝ ընկել էր բրջերի, բաղանների գլուխն ու հենց գիտեր, թե երկնքիցն ա Երևանու դաշտին մտիկ տալիս, նոր ըլի դրախտը նրա աչքի առաջին բաց էլել, նոր ըլի ջրհեղեղը դադարել, նոր ըլի որդին միածին վեր էկել, որ

իր արդար, սիրելի Հայոց ազգին փրկություն բերի։ Անց կացած ժամանակները երազի պես էին նրա աչքի առաջին կանգնել։ Չէ՛ր իմանում, թե Երևա՞ն ա տեսածը, թե՞ Թիֆլիզ։ Է՛ն պուճախներումը, է՛ն ձորերումն ու բաղերումը, որ սև գլխաշի երեսի էր նրա աչքը սովորել, ռուս էր տեսնում ցրված, նստած. ո՞վ չէր տեսածը երազ համարիլ յա հրաշք։

Էս մտածմանց մեջը խրված՝ էն թանձր ունքերի տակիցը իր հոգելից աչքը Զանգվի վրա էր քցել ու մնացել վերացած, գավազանի վրա թինկը տված, որ մեկ քաղցր ձեն Լուսիցը որ «Հա՛յր սուրբ ջան» չասեց ու ձեռն առաջ դոշին, հետո երեսին չկպցրեց, քաչաչան հովվապետը մնաց ուշագնաց։

— Հա՛յր սուրբ ջան, սրբազան տե՛ր. ա՜խ, էս ի՞նչ օր ա,— մեկ ձեն էլ մյուս կողմիցն էկավ ու մյուս ձեռը բերան ընկավ։

— Սմբատով ջան, Երուսալեմսկի ջան, ո՛րդիք. թաղեցե՛ք ինձ այսուհետև ձեր ձեռովը։ Թե որ մեկ քանի օր էլ աստված ինձ կյանք պետք է տա, թո՛ղ էնդուր համար տա, որ էս էրված սրտիս մուրազը կատարեմ, մեր խեղճ, ցրվյալ ազգը էլ ետ իրանց աշխարհը բերեմ, էս մեկ բանն էլ թո՛ղ էս կարոտ աչքս տեսնի, հետո, ա՜խ, հետո Հայաստանի սուրբ հողի տակը մտնիմ։ Խնդրեցե՛ք, խնդացե՛ք, խնդրեցե՛ք, ո՛րդիք ջան, որ ձեր ծերունի հոր էս մեկ խնդիրն էլ աստված լսի, էլ ուրիշ բան չե՛մ ուզում։ Հայաստա՛ն, Հայաստա՛ն, տո՛ւր ինձ քո սիրտը, տո՛ւր ինձ քո գերեզման։ Էլ որ նոր ազգեր թե գան ու երթան, ա՜խ, չի՛ մոռանաս քո սև, դառն օրվան նեղությունն, տանջանքն. կա՛ց ու զգաստացի՛ր, քո խեղճ որդոցը սիրով պահպանի՛ր, էլ քո զավակը գերի մի՛ քցիր։ Սուրբ հողդ իմ երեսս, ընտի՛ր Հայաստան, աթոռ աստուծո, տուն Արշակունյաց։ Ախր ո՞րտեղանց որտեղ թռաք, էկաք, սիրելի ո՛րդիք, որ ձեր Հայրենիքը տեսնիք,— վերջապես հարցրեց սրբազանը զարմացած՝ աչքերը սրբելով ու էս ազնիվ հայկազանց գլուխը դոշին կպցնելով,— ախր մի՛ ասեցե՛ք, որ դինջանամ. ձեր կարոտն էի քաշում, ձե՛զ էի ուզում, ձե՛զ որ էս սհաթին իմ սիրտն իմանաք, իմ ուրախությանը մասնակից ըլիք, ո՛րդիք ջան, հայոց ազգի բարի շառավիղք։ Էդ ո՞ր աստվածը իմ մեղավոր սրտի խորհուրդն իմացավ ու ձեզ ինձ մոտ բերեց։

— Մենք էլ հենց է՛դ մտքովն ու մուրազովը տուն ու տեղ թողինք, իրեք գիշեր ա, չենք քնել, սար ու ձոր ոտնատակ տվինք, որ մի գանք, էս սհաթին ձեզ տեսնինք, քո ուրախությունն ու օրհնությունն առնինք, մեր Հայրենյաց ազատությունը տեսնինք, մեր կարոտ աչքը մի կշտանա, ու էլ հենց էս սհաթին պետք է ետ դառնանք, որ կուսակալը մեր գալը չիմանա։

— Հա՛յ անիրավս ձեզ, է՞տուր համար եք էդպես չերքեզի շորերում կուչ էկել, որ մարդ ձեզ չճանաչի՞. շատ լա՛վ, հանաքն հո էդպես չե՛ն անիլ. դուք ձեր խաղն եք խաղացել ձեր ջահել տեղովը, ես էլ իմը կխա-ղամ էս ծեր տեղովս, տեսնինք՝ ո՞րս կհաղթենք։ Ձեզ բանտ պետք չ քցած, որ մի քիչ քիթըներդ տրորվի, իմանաք, թե Հայրենյաց համար էդքան նե-ղություն քաշողը, էդքան ճամփա էկողը ու իր ղուլլուղից ձեռք վերցնողը՝ թուր էլ որ դեմ անեն սրտին, կրակ էլ որ ածեն գլխին, պետք է երեսը ետ չի՛ թեքի։ Դուք էսքան տեղն անահ, աներկյուղ անց եք կացել, ոտի տակ տվել, որ մարդ են ուտում, հիմիկ սիրտ չե՛ք անում, որ կուսակալի առաջը գա՞ք։ Տո՛, Հայաստանու փրկիչը որ ձեր էդ ազնվական գործն իմանա, հասկանա, թե դուք ձեր աշխարքի ու ազգի ազատության հան-դեսը էկել եք, որ տեսնիք, ձեր ձեռն էլ նրանց ձեռի հետ խառնեք, ձեր ազնիվ սիրտն էլ նրանց սրտի հետ միացնեք, էն էլ է՛ս հրաշալի, է՛ս ար-ժանահիշատակ ժամանակին, ձեզ սիրելու, ձեզ գրկելու խաթեր ձեզ վրա պետք է բարկանա՞։ էն ի՞նչ սիրտ պետք է ըլի, որ տեսնի՝ մեկ որդի սա-րեսար ա ընկել, գլուխը մահու տվել, որ իր ծնողին նեղությունից պրծած տեսնի, ինքն էլ ջանը նրա դնի, ինքն էլ հետը ուրախանա ու, մահապարտ էլ որ ըլի որդին, նրան թողություն չտա՞։ Ձեզ պես որդիք շա՛տ ունենամ, շա՛տ. էկե՛ք, էկե՛ք, ձեր երեսին մեռնիմ, ձեր էդ ազնիվ աչքերին ղուր-բան, իմ սիրուն պահած որդիք, էկե՛ք, ձեր էդ մաքուր ճակատը մեկ էլ համբուրեմ, մեկ էլ ձեր էդ սիրուն երեսը դոշիս կպցնեմ, հետո ձեր շունչն իմ վզին։ Կուսակալը թե խոսք ունի, առաջ ինձ ասի։ Դուք է՛ն օրինակն եք ցույց տվել, որ մեկ որդի Սիբիրից ոտով գնացել ա Մոսկով, որ իր հորն ազատի, ձեզ ո՞վ կարա ղնամիշ անիլ։ Հայոց ղոնշունն էլ, է՛ն ա, հա՛, հազրել եմ. քիչ-քիչ սովորում են կռվելու կերպը։ Մեղի՛ք, էսպես զավակներ որ թագավորն էլ ունենա, չի՞ ուրախանալ։ Հայոց ազգը է՛ս-պես որդոց ա կարոտ, է՛սպես. ի՞նչ կըլի, որ սրանց նման մեկ հարիրն էլ ըլին։ Հլա մտիկ տո՛ւր սրանց բոյին, սրանց պատկերին, սրանց լեզ-վին, սրանց աննման աչքերին. աստծուն հայտնի ա, ուզում եմ, թե էս ոհաթը հոգիս հանեմ, սրանց տամ։ Օրհնվի՛ էն արգանդը, որ էսպես զա-վակներ կբերի։ Ամեն մեկը, էնպես գիտես, թե թագավորազունք ըլին։ Ձեզ ստեղծող աստծուն ղո՛հ ըլիմ, ղո՛հ. ինձ պետք է թաղեք, որ հետո վրըներովդ ղուշ անց կենա։ Ձեր Հայրենիքն էլ ուզում, էս էլ ձեր Հայ-րենիքը։ Ես էլ գիտեմ, որ չոր, հալևոր սևագլխի խաթեր էդքան ինջըմիշ չէիք ըլիլ։ Ինձ սիրեք, չսիրեք, ձեր ազգն ու աշխարհը որ էդքան սիրում եք, հենց գիտեմ, թե Գաբրիել ու Միքայել հրեշտակն եք ինձ համար, որ մեր Լուսավորիչ պապին խոր Վիրապումը մխիթարում էին։ Գնա՛նք, իմ

հոգուս ճրագներ, գնա՛նք, ուշացանք, կուսակալը ինձ կըլի մնում. հլա հոգուս ճրագներ, գնա՛նք, ուշացանք, կուսակալը ինձ կըլի մնում. հլա բերդը նոր ենք առել, ո՞վ ա խաբար, թե ի՞նչ դուս կգա։ Խալխի հոգսը պետք է քաշենք. բանտ ու զընդան լիքն են մեր անմեղ զավակներովը, նրանց ախր հանիլ, ազատություն ու տերություն կուզի, ո՞վ ա խաբար, թե ղրաղ-կյուճախում դեռ ի՞նչ բաներ անց կկենա. չունքի ղզլբաշը, ղորդ ա, կոտրվել ա, ամա դեռ ոխն ու քենը սրտումը մնում կըլի, որ էրեկ իրանք էին Երևանու տերը, մեր ազգի գլուխը, էսօր մեր ոտն ա նրանց գլխին, մեր խաչին պտի հնազանդին ու երկրպագություն տան։ Գնա՛նք*։

Էս խոսքը բերնիցը դուս գալը ու մեկ ողբալի ձեն հենց էն վրեն կանգնած բրջի տակիցը վեր ըլիլը մեկ էլավ.

— Հա՛յր սրբազան, գլխիդ ղուրբան, հասի՛ր. մեկ հայ աֆիցերի սպանեցին իր հոր հետ. ճար ունիս, տե՛ս։

Բրջի դռանը մարդ չէ՛ր երևում. որ մի քիչ կռացան, մտիկ չարին, գլխըներին կրակ վառվեց, բերդը մեկ գաղ էլ խոր գնաց, չունքի տեսան, որ էն մարդը փանջարիցն ա գլուխը հանել ու ձեն տալիս։

Ա՜խ, սի՛րելի կարդացող, էլ ի՞նչ երկարացնեմ էս սարսափելի պատ-մությունը։ Կըլի, որ քո սիրտն էլ քեզ ասեց, որ էս հեղադին ի՞նչ աֆի-ցեր պետք էր էնպես դժոխք մտնիլ, որ գլուխը մահու տա, եթե ո՛չ մեր ջիվա՛ն Աղասին, որ հինգ տարի սար ու ձորի, գազանի, հարամու գլուխը չի՛ տվեց, պահե՛ց, էն բաներն արեց, որ աշխարքումը քիչ ադամորդի արած կըլի, վերջը Գրասովսկիյ գեներալի հետ թռավ իր ցանկալի վա-թանը, որ իր ջրատար հոր հետին շնչին հասնի, ու հենց բերդն առան թե չէ, նա, մերը կորցրած գառան պես, էլ չի՛ համբերեց, որ ոտքը մի քիչ խաղաղվի, ընկավ բրջե-բուրջ ու որ հոր անունը չհարցրեց, մեկ երևան-ցի հայ առաջն ընկավ, տարավ նրան էն բրջի դուռը, որտեղ որ նրա տա-րաբախտ հերը, մեկ քանի հայերի հետ, բռնված էր։ Բայց անիրավ պար-սիկքը վաղուց էին իմացել նրա՝ ղոնշունի հետ գալը, ու նրա սպանած-ների հեր, ախպեր, ազգական՝ մինչև տասը մարդ, գնացել, էն բրջումը տափ էին կացել։

* Էս ընտիր, հայրենասեր հայկազունքը, որ երկուսն էլ էսօր մեր ազգի միջումը իրանց ազնվությամբը, իրանց ազգասիրությամբը դեռ, փա՛ռք աստուծո, փայլում են, ու տեր աստ-ված դհա երկար փայլիլ տա, Ներսես եպիսկոպոսի ձեռին էին, հենց բանի՛ր, մեծացել-Երևան մնալն ու չմնալն էլ չե՛մ իմացել, ու ինչ արած ունին, լավ հայազգին պետք է չոկ-չոկ գրքեր շինի, որ բոլոր կարողանա պատմի, ու ամեն տեսնելիս, էնպես գիտեմ, թե նո՛ր Սմբատ, նո՛ր Վարդան են մեր միջումը շրջում։ Հետո ժամանակի՝ ասված էնպես նրանց մուրադը կատարեց, որ Երուսաղեմակին երկար ժամանակ քաղաքապետ (պոլիցմեյստր) էր Երևան, մյուսը հո՛, որ ազգի աչքի լիսն ա էսօր էլ, տարի ու կես կառավարիչ էր բոլոր Հա-յոց նահանգին։ Ո՛չ թե հայք, թուրքերն ևս նրանց անունովը էսօր էլ երդվում են։

Ա՜խ, էլ ի՞նչ գրեմ, ձեռս թուլանում ա, սիրտս արին կաթում... Ա՜խ, բաս Աղասու սուգն ո՞վ անի, նրա ջիվան ումրըն ու օրը ո՞վ լաց ըլի։ Ե՛ս, ես, ողորմելիս, նրա գերեզմանին ղուրբան... Ա՜խ, բաս նա, որ ինձ էնքան էրեխա ժամանակս իր ծնկա վրա խաղացրել ու ինձանով մխիթարվել ա, բաս ես քա՞ր պտի ըլիմ, որ նրա սուգը չանեմ։ Բաս սիրտս կհամբերի՞, որ էսօր չուզենամ էնպես հսկա, էնպես ազնի՛վ, քաջ երիտասարդի վրա հոգիս տամ։ Բայց չէ՛, ես ի՞նչ եմ, որ Աղասու սուգն անեմ, իմ բերանն ի՞նչ ա, որ լսողի սիրտը շարժի, էրի, խորովի։ Նրա սուգ անողը հետո կգա, ես իմ դառը պատմությունն անեմ։

Իրեք թուրք ջոկ էին ընկել բրջի մեկ ղրաղումը, մյուսները փախել. ա՜խ, լե՛ղու, լովիս, ի՞նչ կըլի։ Աղասին, հրեշտակ Աղասին. երկու խանչալ սրտումը ցցված, իրեքը քամակումը, ու ոտ ու ձեռ հազար տեղ յարալու-փարալու՝ իր ողորմելի հոր դոշին, արինը ծովի պես չորս կողմը բռնած, որ սրբազանը վրա հասավ։ Աջու ձեռը որ չէր տարել, որ հոր գլուխը, էն ձնի պես սպիտակ մազերը, մեկ խոտի, մեկ դոշին կպցնի, որ էնքան տարվան էրված սրտի մուրազն մի առնի, հովանա, հենց տեղնուտեղը ուսըվեր էին բերել, ու կտրած ձեռը մնացել էր հոր գլխատակին, երեսը՝ երեսին, ու ձախու ձեռն՝ էնպես փետացած, դոշի վրա ընկած։

— Վա՜յ, աչքս դուս գա, ա՜յ իմ ազգի ազիզ որդի. վա՜յ, մեր ճամփեն փուշ դառնար, ա՜յ ջիվան, ա՜յ մեր ախպեր, հայի զավակ. վա՜յ մեր օրին ու արևին, Երևանու ճրագ, իմ պահած-մեծացրած, սիրուն Աղասի, քո արինն է՞ստեղ պտի թափե՛ր,— ասացին էս ազգասեր հոգիքն ու գլխներն աչքներին դրած՝ ամեն մեկը մեկ ղրաղ քաշվեցին, չորացան, թուլացան, երկինքը գնացին, քարացած մնացին, ու էլ որ մեկն ու մեկը հանկարծ աչքը կամ հոր երեսին՝ էն լիս դառած պատկերին, յա տղի կտրատած ջանին՝ էն արնաթաթախ մարմնին, չէ՛ր քցում ու սիրտը բերնովը դուս բերելով՝ բիրդանբիր ձեն տալիս ու գոռում.

— Հլա մի մտիկ արե՛ք, տեսե՛ք, հորն ի՞նչպես ա խոտել։ Տո՛, էն ծերին նայեցե՛ք, տեսե՛ք, աչքը ի՞նչպես ա որդու երեսը քցել ու երկու ձեռով ճակատին խփում։

Սի՛րտ, տրաքի՛, սի՛րտ. էլ չեմ կարում տանել. ո՛վ ջիգյար ունի, ինքն իմանա, մնացածը էգուց կգրեմ։

<14>

Հայոց ազգը էնպես ռաշիդ, էնպես ջիվան որդիք շատ էր կորցրել էս կռվներումը. էլ ո՞ւր կհասներ, էլ ի՞նչ օգուտ շատ ազալն ու մղկտալն,

բայց, ա՜խ, Աղասու մերը քոչի ճամփին էր իր սև օրը վերջացրել, հերը՝ որդու արնովը իր փետացած լաշը լվացել, նշանածը՝ ողորմելի Նազլուն, դեռ Փամբակ էր. միմիայն տես ու ճանաչ էին նրա վրա ցավում, կսկծում, իր ռաշիդ ընկերներ<ից> հո, քանի Մատաթովի մոտ էր գնացել, ո՛չինչ խաբար չէ՛ր իմացել. էկող-գնացող էնպես էին պատմում, թե նրանց եսիր էին արել, Հասան խանի մոտ տարել։ Ո՞վ էր խաբար, բալքի թե էն անդամալուծների շատը նրա բարեկամքն էին, բայց մարդ չէ՛ր գիտում։ Էն բրջից ձեն տվող երևանցի հայիցը հենց էնքան իմացան, թե երբ քաջն Աղասի՝ ոսի ապելատով, բրջի դռանը երևեցավ, ղարավուլ սալդաթը ղրաղ կանգնեց, պատիվ տվեց։

— Ինչպես մեկ հրեշտակ, է՛նպես ներս ընկավ իգիթը,— վրա բերեց երևանցի հայն։— Անօրեն թուրքերը մեկ ղրաղում, թուր ու խանչալ պլոկած, տափ էին կացել։ Բերդի առնիլը դեռ չէինք իմացել։ Հենց իմացանք, թե էն թուրքերն էկել են՝ մեզ յա սուրը քաշեն, յա դուրս տանեն, կախ տեն։ Լերդ ու թոք ջուր կտրած՝ մնացել էինք սառած, որ հսկայն Աղասին ներս ընկավ. հենց իմացանք, թե եկել ա, որ էն անիրավներին քանիլ տա ու մեզ ազատի։ Ո՞վ կիմանար, թե ի՞նչ մարդ ա ու ընչի՞ համար ա էկել։ Խեղճ հոր հո, շունչն էր մնացել բերնումը. աչքի լիսը վաղուց էր հատել, վաղուց էին ոտ ու ձեռք նրան թողել, չորացել։ Փորն էկել էր, ուռել, բերնին դեմ առել. հենց գիտես, թե հոգին ինքը նրանից չէ՛ր ուզում ձեռք վերցնի, չունքի շատ անգամ, էն ուշագնաց վախտը, լավ պարզ լսում էինք, որ ուզում էր գլուխը բարձրացնի ու մեռած ձենով մղկտում էր. «Բաս ո՞ւր ա... թո՛ղ, թո՛ղ, մի տեսնիմ... Ա՛ղասի, ո՛րդի, հո՛գի, քա՞նի մի քանի ինձ մաշես. երկինքումը վաղուց եմ տեղս տեսել, ա՜յ իմ ջիվան որդի, քանի՞ մի քանի ինձ մաշես։ Արի՛, արի՛, երեսիդ մեռնիմ, արի՛, մեկ շունչդ առնիմ, էլ հո աչք չունի՞մ, որ քեզ տեսնիմ. էլ հո ձեռք չունի՞մ, որ քեզ գրկեմ. լեզուս ա մնացել, անկաջս. թո՛ղ մեկ էլ ձենդ լսեմ, որ մորդ էլա մեկ խաբար տանիմ։ Հո՛փսիմե, Նա՛զլու, Կա՛րո, Փա՛րիխան, Ա՛ղասի»։ Սանգարի ժամանակին ձենը իսպառ կտրվել էր։ Մենք հենց իմանում էինք, թե վաղուց ա հոգին տվել։ Թոփի, ղումբարի ձենը մեզ խլացրել էր։ Երբ ոտը խաղաղվեց, էլի առաջվան պես նղղալով խոր հոգոց քաշեց, էլի էս խոսքերը սկսեց ետ ասել ու հոգու հետ կռիվ տալ։ Վերջին խոսքն էլի էն էր՝ «Արի՛, արի՛, Ա՛ղասի, ո՛րդի, հո՛գի ջան», որ դռները ճռռացին, ու ջիվան որդին հոր ձենը որ իմացավ, «Ա՛փու ջան, գլխովդ ման տամ, դեռ սա՞ղ ես, երեսիդ ղուրբան, ա՛փու ջան», «Ա՛փու ջան» ասելը, գժվածի պես հոր վրա ընկնելն ու թուր ու խանչալ վրա գալը մեկ էլան։ Հերը հենց ձենիցը մեռավ. որդուն, ա՜խ, ջրատար որդուն

էլ ժամանակ չմնաց, որ յա հորը ետ բերի, յա իրան մեկ չարա անի։ Էլի
աստված մեզ էր խեղճ եկել, որ սալդաթը էս ձենըձորը որ լսեց, խիշտն
առած՝ ասլանի պես ներս ընկավ, իրեքին սպանեց, մյուսները փախան։
Քոռանա իմ աչքս, որ էսպես բան չէ՛ի տեսել։ Հազար անգամ Աղասու
հոր հացը կերել, հետը քեֆ եմ արել։ Բարիկենդանին էլ, որ Աղասին փա-
խավ, նրանց տան քեֆ անողների մեկն էլ ես էի։ Իմ որդիս, ա՜խ, իմ ջի-
վան Մոսին էլ էր նրա հետ փախել։ Բայց ես լսում եմ, թե նա դեռ սաղ
ա։ Աստված, դատաստանդ քաղցր ըլի, էսպես զուլում էլ ո՛չ շհանց տաս,
էլ ո՛չ տեսնինք, երեսս ոտիդ տակն,— ասեց ողորմելին ու փեշն աչքե-
րին դրեց։

Բիզնահովն ընկել էր, թոզ ու դուման՝ բերդի չորս կողմը բռնել։ Էս-
պես վախտին ղուշն էլ իր բնիցը չի՛ դուս գալիս, բայց սաղ աշխարհն
էկել, Երևանու բերդի չորս կողմը բռնել էր, որն ջիվան Աղասու խաթեր,
որը նրա մեյիդը դուս բերելու, չունքի լսել էին, որ մուզիկով ու ղոնչու-
նով պտի թաղեն, ու էսպես բան, էսպես տեսարան, Երևանումը դեռ
առաջինն էր։ Սալդաթ ու մուզիկանդ բերդի դուռը կտրել էին. ժանդար-
մեքը ճամփա էին բաց անում։ Համամների ու սուրբ Սարգսի դուզը էն-
պես էր սևին, սպիտակին տալիս ու դես ու դեն ծփում, ինչպես մեկ փըր-
փըրած ծով, որ քամու ձեռին յա սպիտակ փրփուրն ա, կիտուկ-կիտուկ,
քարին, ապառաժին խփում, յա սև ջուրն ա դրմբալով դես ու դեն քցում։
Թոզն էլ հո բոլորը թամամ էր անում։

Տամբուր մայորը թափուզը պտտեց, սալդաթները կարգ ընկան, մու-
զիկեն իր կսկծալի ձենն սկսեց, սև ծիանոնց գլուխն ու դագաղի ծերն երե-
վեցան, ու գեներալ, աֆիցեր՝ Ներսես սրբազանին մեջ արած, դուս էկան.
ոտը շարժելն ու ազի ձենը մեկ էլավ։ Հազար բաշից, հազար կտրից աչք
էր, որ մրմնչում էր. սիրտ էր, որ էրվում, մղկտում էր. բերան էր, որ ա՜խ
քաշելիս՝ քարերն էլ հետը ա՜խ էին քաշում, սղլթում։

Մեծ ա Անապատի հայաթը, բայց ռուս, հայ, թուրք, մեծ, պստիկ
է՛նպես էին լցվել, որ շունչ չէր դուս գալիս։ Տերտերներն եկեղեցու դուռը
վաղուց էին բաց արել, ճրագները վառել, շուրջառները քցել, բուրվառ,
խաչ, խաչվառ ձեռըներին՝ մտիկ տալիս, որ մեյիդը ժամը տանին։ Խալ-
խին դեն անելուցը զվիրն էին էկել. շատը պատերովն էին ներս թափում,
որ շուտով մեկ տեղ ճարեն։ Էս հաղաչումն էր, որ իրար ոտնատակ էին
տալիս, մեկ անդամալույծ էլ սուրութմիշ ըլելով, քանի որ ոտը խաղաղ
էր, գլխին-դոշին վեր հատելով, մազերը պոկելով, «Սուրբ Սարգիս» ձեն
տալով՝ հասավ, ընկավ մեկ տերտերի ոտ, որ թողա, ժամի դռանը վեր
ընկնի։ Աստվածասեր քահանեն՝ Տեր Մառուքը՝ Հովսեփ եպիսկոպոսի հե-

ըը, հենց իմացավ, թե յա ուխտ ա էկել ողորմելին, յա ուզում ա մեկ
ողորմություն խնդրի, սիրտը մրմնջաց, հանեց, մեկ-երկու գռոշ էլ առա-
ջը քցեց ու տիրացվներին ասեց, որ նրան ձեռ չի՛ տան։

— Ա՜խ, քոռանա քո քոռացնողի աչքը, մեկ բուռը հողի հասրաթ
մնա, որ քեզ էդ տեղն ա քցել, ա՜յ խեղճ աղա. էդ պատվական սուրաթը,
էդ գյավդեն ու սիրուն բոյը, որ քոնն ա, ընչի՞ պետք է էդպես չուռումիշ
ըլեր, չուռումիշ ըլի քո էդպես անողի կյանքը,— ասեց աչքը տրորելով
աղեխիվ քահանեն ու երեսը շուռ տվեց։

Հենց պատվական մարմինը տեղ հասավ, հենց մուզիկի ու չարա-
կանի ձենը կտրեցին. մեյիդը վեր բերին, որ հողոց ասեն, հենց Ներսես
սրբազանը էն սուրբ բերանը բաց արեց, ա՛ստված, ո՞վ ունի էն լեզուն,
որ պատմի, ինչ որ էստեղ պատահեցավ։ Սար ու ձոր կրակ ընկավ, խալ-
խի գլխին չուր մաղվեցավ, էլ բերան չէ՛ր բաց ըլում. աչքն էր իր կրակը
վեր ածում, սիրտն էր իր խանչալները փոխում, շունչն էր իր ծուխն ու
բոցը քթիցը քուլա-քուլա դուս փչում։ Ալամ-աշխարք մնաց քարացած,
կանգնած։ Երազ չէ՞ր, որ աչքները բաց անեին, պրծնեին. կրակ չէ՛ր, որ
պատըռ-
փախչեին, դինջանային. ջիգյար էր, որ էրվում էր, սիրտ էր, որ
վում էր։

— Ա՛ղասի ջան, Ա՛ղասի. աչքիս լիսը վաղուց ա խավարել, որ մեկ
երեսդ էլա տեսնիմ,— մեկ ձեն գոռաց,— ոտներիս ջլերը վաղուց են փե-
տացել, որ վրեդ էլա մի կանգնիմ, սուդ անեմ. ձեռներս քրջուկի պես
դոշիս են կպել, որ մեկ նաշդ էլա խտտեմ, որ մեկ նաշդ էլա դոշիս կպցնեմ,
որ մեկ երեսիդ վրա ընկնիմ, երեսդ երեսիս տամ, հոգիս հոգուդ հետ
ճամփու քցեմ, էդ լիս երեսիդ ղուրբան, Ա՛ղասի, էդ ջիվան ջանիդ մեռ-
նիմ, թա՛գավոր Ա՛ղասի։ Է՞դպես էիր ուզում քո խեղճ հոր հավարին հաս-
նիս, է՞դպես էիր ուզում քո դոստ-բարեկամի սիրտն առնիս, Է՞դպես էիր
ուզում Անի շինես, ումբրդ ու արեդ խավարացնես, որ բալքի քո ազգին
ու աշխարքին մեկ ճար անես, ա՜յ քո հրեշտակ ջանին ղուրբան։ Ա՜խ,
մկամ երկիրը քեզ պես ծնունդ ո՞ւնի, քեզ պես ղավախ բե՞րել ա, որ էդ-
պես անջիգյար քեզ տանում ա. մկամ երկինքը քեզ պես հոգեղեն տեսել,
ստեղծե՞լ ա, որ քեզ խլում ա. մկամ հայոց ազգը քեզ պես որդի, քեզ
պես ճրագ էլ ո՞ւնի, որ քեզ բերել ա. հողը դնի, քեզանից ձեռք վերցնի,
քո ջիվան ջանը գետնին, գերեզմանին պահ տա, էդ երկնքի՛ նման լու-
սեղեն պատկերիդ մեռնիմ, Ա՛ղասի։

Լոռվա սարերը քեզ պահեցին, քեզ սիրեցին. Անու խարաբեքը քեզ
ղվաթ տվին, հարամուց ազատեցին. բաս հենց վա՞թանն էր քոռացել,

վա՞թանն էր խարաբ էլել, որ խոշոր մոր պես իրան գլուխը պրծացրեց, քեզ մահու տվեց, քե՛զ, որ հազար տարի անց կենա, էլ քեզ նման ղավախ ո՛չ ունեցել ա, ո՛չ կունենա։ Հինգ տարի բոլոր դո՛ւ էիր մեր դաշտերի, սարերի աստվածը. հազար գերի ու անճար քո՛ ձեռիցը իրանց կյանքը նորեն ստացան, բաս է՞նքան սիրտ էլա չունեիր քո աշխարքը, որ մեկ սհաթ էլա քեզ պահեր, քո արևը էդպես շուտով չթո՞ղար մեր մտնի։ Աչքերս Հասան խանը հանիլ տվեց. ոտ ու ձեռ նրան ղուրբան էլան, Ա՛ղասի ջան. երկինք ու երկիր ինձ համար հավիտյան խավարեցան, ջան ու զորությունս վաղուց ինձանից ձեռք վերցրին, արեգակ ու լուսին վաղուց ինձ համար մեր մտան. ծնող, ազգական դեռ չե՛մ տեսել, որ սիրտս չէրվեր, բայց էլած շունչս էլ քե՛զ համար էի պահում, քառացած անկաշներս քո՛ ձենին էին հասրաթ մնացել, խավարած սիրտս քո՛ անունովն էր պայծառանում, մխիթարվում. քո անուշ ձենին էի մնում, որ մեկ լսեմ, հետո հոգիս տամ. քո լուսեղեն պատկերին էի կարոտ, որ մեկ գայիր, էն խավա՛ր զնդանին լիս տայիր, որտեղ ինձ պտի դնեին. էն սա՛ռը գերեզմանին շունչ տայիր, որ ինձ պտի ծածկեր. էն տեսնող-լսողին էրեիր, որ իմանային, թե դո՛ւ, դո՛ւ ես ինձ վրա սուգ անում, քո արևին մատաղ. հմիկ, ա՜խ, ի՞նչ կըլի, երկնքիցը մեկ կրակ ընկնի գլխիս, ինձ էրի, փոթոթի, կամ երկիրը պատռվի, ինձ ներքև տանի. ա՜խ, ե՞ս պետք է քո սուգն անեմ, որ աչք էլ չունիմ. ե՞ս պետք է քո վրեդ գամ, որ չե՛մ էլ տեսնում. հո՞ղը պտի ըլի քո գերեզմանը, թե՞ սիրտս. մարդիկ են մենակ վրեդ լալի՞ս, թե՞ սար ու ձոր էլ. գիշե՞ր ա, որ քեզ թաղում են, թե՞ ցերեկ. արեգա՞կն ա աչքը բռնել, խավարել, թե՞ լուսինը. հրեշտա՞կք են քեզ շրջապատել, քեզ սղբում, թե՞ մարդիկ. երկնքո՞ւմն եմ քեզ հետ, թե՞ երկրումս, էդ սիրուն ջանիդ մեռնիմ, Ա՛ղասի։

Հերնումերդ առաջիս կանգնել, խնդում են, հրճվում են, քե՛զ են կանչում. թագ ու պսակ, լիս ու ծաղիկ քե՛զ վրա են վեր գալիս, քե՛զ պետք է զարդարեն. թագավոր ու նահատակ քո առաջն են եկել. բոլորը տեսնում եմ, բոլորի մեջումն դո՛ւ ես արեգակի պես փայլում. բաս էս ի՞նչ տխուր ձեն ա, որ անկաշս ա ընկնում. բաս էս ի՞նչ կոծ, կսկիծ ա, որ վեր ա ըլում. բաս ո՞ւր ա Նազլուդ, ո՞ւր քո ջիվան երեխեքդ, որ թողել, գնում ես, չե՛ս հարցնում. բաս էս ի՞նչ քարեր են, որ չոքած տեղս ծընկներս ջարդում, մաշում են. չէ՛, վա՜յ իմ գլխիս, արևիս. դո՛ւ ես երկնքումը, ե՛ս, ե՛ս, ողորմելիս՝ միայն երկրումը, էս փո՛ւչ աշխարքումը, էս խավար տարտարոսումը, էս փշալից ձորումը, ե՛ս՝ առանց քեզ. Մոսին, ու ո՛չ Աղասին, մարմինն, ու ո՛չ հոգին. լաշը դարտակ, բայց ո՞ւր հրեշտակն։ Քե՛զ հետ կյանք քաշեցի, առանց քեզ թո՛ղ չըլի. քո կողքին արևս

բաց էլավ, իմ առաջին՝ քոնը մեր մտավ. էս շունչը կրակ կդառնա, ինձ կէրի. էս հողը դժոխք կդառնա, ինձ կմաշի. էս մարմինը, որ ինձ պետքը չի՛, քե՛զ, թո՛ղ քեզ ղուրբան ըլի, քե՛զ. ինձ ո՞ւր ես թողում, դու գնում. ինձ ո՞ւր ես թաղում, դու թռչում. երկիրն մեկ տեղ վայելեցինք, օրորոցում, շորում դու էիր իմ կենաց ընկերը, դու՝ իմ սրտի սիրեկանը, ես՝ քո աղիզ բարեկամը։ Մեկամ հերնըմեր, որ քեզ լաց ըլեն, ազգական, սիրելի՝ վրեդ չկանգնեն, բաս քո չըստար Մոսին՝ քո պահած որդին, քեզ կուղարկի, ինքը կմխիթարվի՞, քեզ հոգին կտա, որ հետդ չի՛ գա՞. չէ՛ չէ՛, էդ սուրբ երեսիդ մեռնիմ, որ էլ չեմ տեսնիլ. դու կնա արքայությունը, ինձ տա՛ր դժոխքը, տա՛ր, էս աշխարքն էլ չի՛ կարող ինձ պահիլ. մարմնիս աչքը քեզ չի՛ տեսնում, հոգուս աչքը հո բա՞ց կըլի, քո ջանին մեռնիմ. թե երկնքումն էլ քեզ չկարենամ խատիլ, գրկիլ, հետդ խոսալ, մոտդ նստիլ, հրեշտակ տեսնելիս, գլխովդ շրջելիս, դրախտումը նայելիս, լիսն վրեդ գալիս, որ քեզ տեսնիմ, քե՛զ, Ա՛ղասի ջան. սուր խոցեն սիրտս, էլի կխնդամ. կրակ վառեն գլխիս, էլի կցնծամ. տա՛ր, տա՛ր քո բարեկամն, թե չէ ես կգամ, որ ետ չմնամ... Ա՜խ...

— Ա՜խ, էս ո՞ւմ ձենն էր, որ լսեցի. քար առե՛ք, ա՜յ ջամըհաթ, ինձ սպանեցե՛ք. սուր առե՛ք, ինձ թիքա-թիքա արե՛ք,— մեկ ձեն էլ խալխի միջիցն վեր էլավ ու, հենց իմանաս, մեկ ամպ տրաքեց։— Մոսի՛, ո՛րդի, առաջ ի՛նձ սպանի, ի՛նձ թաղի, ա՜յ իմ կորած որդի, որ իմ ջանը հանեցիր, իմ սիրտը մաշեցիր. քո հալևոր հորը խեղճ արի՛. էս սպիտակ մազերը քեզ ղուրբան, բա՛լա ջան։ Թո՛ղ մեկ շունչդ էլա առնիմ, է՜. վա՜յ իմ գլխիս, արևիս։ Մո՛սի, Ա՛ղասի. երկի՛նք, քանդվեցե՛ք, աշխարք, հիմքըդ կործանվի՛։ Հա՛սան խան, դժո՛խք, դժո՛խք. ինձ տարե՛ք, ինձ կերե՛ք։ Մո՛սի ջան, բալա՛ ջան, դու ինձ թողիր, գե՛, կշտացի՛ր. ե՞ս պետք է քո հողը բուռն անեմ, էս չորացած ձե՞ռները պետք է քեզ թաղե՞ն. ընչանք ես գետինը չմտնիմ, քեզ երկնքումը տե՞ղ կանեն։ Գնա՛ք բարով, աղիզ ո՛րդիք ջան, գնա՛ք բարով. սիրով ինձ էրեցիք, ես էլ էս սրով հոգիս ձեզ կտամ, մարմինս՝ հողին, որ ձեր առաջին, սատուծո բեմին, իրար հետ խնդանք, իրար հետ ցնծանք, իրար հետ տանջվինք, իրար հետ մաշվինք. գնա՛ք բարով՝ հերնըմերով,— ասաց ողորմելին։

Թուրը պսպղաց, արինը շռաց, ամպը գոռաց, օրը խավարեց. Թըվանքները ճռռացին, դաղդղները բարձրացրին, շարական ու երգ վերջացրին, ու Քանաքռու Վերի եկեղեցին էրկու հեր, էրկու որդի մեկ օրում, մեկ տեղում մինչև էսօրը առել՝ պահել ա իր սուրբ ծոցումը, որ դատաստանի օրը լիս քցի, իրանց փառքին հասցնի։

Գերեզմանն կորած, հողումը թաղված,
Աչքից հեռացած, մտքից մոռացած,
Իրանք անլեզու, աշխարհն անիրավ,
Որ հայոց ազգիցն անթիվ ու անբավ
Էսպես քաջ որդիք խլեց, չկշտացավ.
Ո՛չ մատուռ նրանց գլխին կանգնեցավ,
Ո՛չ արձան նրանց անունը թողեց,
Ո՛չ ազգի միջումն հիշատակն լսվեց:
Դո՛ւ, քնքուշ Մուսա՛, որ ինձ շարժեցիր,
Իմ էրված սրտին զորություն տվիր,
Ա՜խ, էնքան չառնիս հոգիս, չմեռնիմ,
Որ իմ ազգի սուգն անեմ, հետո մտնիմ
Քո թևի տակը, նազելի՛ Մուսա:
Քեզ թո՛ղ Աղասին, իմ սիրուն Մուսա,
Էնքան ամանաթ մնա, որ սրտիս
Մուրազն, ա՜խ, առնիմ, հետո ես գալիս՝
Իմ ազգի հսկայքն ինձ որ ճանաչեն,
Ինձ իրանց կշտիցն չզրկեն, չասեն.
«Անիրա՛վ որդի, մեր հողի վրա
Էնքան կանգնեցիր, կացար համեշա,
Մեր արի՞նը չէիր, որ չի՛ ցավեցիր,
Մեր արինը տեսած՝ դու մեզ չհիշեցիր»:
Ո՛չ, քեզ՝ Ա՛ղասի, սիրուն իմ Մուսա,
Որքան շունչս, արինս դեռ իմ վրես ա,
Ինձ քուն ու հանգիստ, ինձ փառք ու պարծանք
Ես էն կհամարեմ, որ իմ բոլոր կյանքն
Զոհ տամ իմ ազգին, որ ձեր առաջին
Ես, ա՜խ, պարզերես լինիմ, երևիմ,
Ձեր գերեզմանին, սուրբ հողին մեռնիմ:—

<ԵՐՐՈՐԴ ԳԼԽԻ ՎԵՐՋԸ>

ԶԱՆԳԻ

<1>

Ինչպես մեկ կատաղած վիշապ՝ երկնքիցը թռած, գլխիվեր ճոլոլակ, մեկ տուտը Սևանի հանդարտ ծովումը, մեկ տուտը Արազի քրքրված ղրաղումը, սար ու ձոր կխշոր տալով, քանդելով, տապալելով, քար ու քոտինքը բերանը կոխած, գզգզված մազերը քյալլին ցցած, կապը կտրած, գժված, ռեխն ավազով, քարով, ղիբիլով լիքը, էս կողմն, էն կողմն փըն-չացնելով, ճոթռելով, ջարդելով, տակ ու ղրաղ ծամելով, բրդելով՝ մեկ թևն իր ծոցի, էն սև, մութն ու չանգը կոխած, խևանդ-խևանդ կտրա-տած փորն ու դոշը բաց արած, ծառով, թփով զարդարած ձորի գլխովը քցած, մեկ թևն էն նե՛ղ, չո՛ր, տխո՛ւր Կաքավասարի տակիցը որ ական թոթափել դուս չի՛ պրծնում, վազում,— ու հրո՛վ, սրո՛վ, բոցո՛վ, բրո՛վ, փռնչալով, մռնչալով, խռնչալով, քարի, քարափի գլուխ վե՛ր հատելով, իր փորը խցկելով, վեմ, ապառաժ իրար ծեծելով, կայծակին տալով, ճչալով, ճռնչալով, թնդալով, դղրդալով,— ցած ափները, սասանահար գետինը պոկելով, պռճոկելով, քրքրելով, քրքրվելով, կենդանի, անկենդան, խաշն, հայվան գետնին զարկելով, բամբաչելով, խլացնելով, քառացնելով, սրսրթացնելով, վրվրթացնելով՝ վառված, կրակված աչքերը արնով լիքը, յալը ցցած, ատամները ղրճտացնելով, կրճտացնելով, դաշտ ու տափ ղրմբացնելով, դրնգացնելով, դմբդմբացնելով, դնգդնգացնելով, ու կայծակի թուրը բերնին բռնած, վրա պրծած որ չի՛ գալիս ամեհի Զանգին ու Զորագեղ մտնում, որ Հայաստանի սուրբ գետինը ոտնատակ տվողին, մեր նախնյաց մաքուր գերեզմանները քանդողին, կործանողին, մեր Նահատակաց սուրբ, անմեղ, արդար արինը թափողին, կխշրողին, մեր աստվածաբնակ տաճարները, եկեղեցիքը ավերողին, ապականողին, մեր հոյակապ թախտերը, քաղաքները խլողին, փչացնողին, մեր անճար, օրվան հացին կարոտ, եթիմ, ցրված, սասանած, գերի ընկած, հարամու, թշնամու ձեռին կոտորված, երկրե-երկիր կորած, փչացած, խեղճ, անտեր ազգի տունը քանդողին, հողի հետ հավասարողին՝ ու մեր չար հարամու բունը, անօրեն թշնամու տունը, մեր արինը խմողի թախտը, մեր աշխար-

քը քանդողի ամարաթը, նրա արինաշաղախ բերդը, նրա ոսկորաշեն բուր-
ջը, նրա գողաբնակ տեղը, նրա գազանաբնակ հողը՝ քանդի՛, տապալի՛,
փշրի՛, ավերի՛, տակ ու գլուխ, գլուխ ու տակ անի՛, քարեքար, պատեպատ
տա՛, հիմնատակ, բրիշակ անի՛, կլանի ու՝ նրանց միջի ըլողներին, դրսի
թաղածներին, գլխումը բուն դնողներին, տակումը քուն մտնողներին՝ քշի՛,
տանի՛, սրբի՛, ողողի՛, թիքա-թիքա, փառչա-փառչա անի՛ ու մեր խեղճ աշ-
խարքի, մեր ողորմելի ազգի աղի արտասունքը սրբի՛, էրված, խորովված
սիրտը հովացնի՛, զովացնի՛, մեր հազար տարվան թունալից, անբժշկելի
յարեն կտրի՛, վերջացնի՛, որ հազարների, բյուրավորների ցավամաշ հոգին
ուտում, կեղեքում, մաշում, տոչորում, սաղ-սաղ, դալար ու զվարթ՝ էս ան-
գո՛ւթ ազգին, անողո՛րմ գազանին շատ տարի, շատ դար դուրբան էր տա-
լիս, վերջացնում։

Գիշերվան մութը գետինն առած ժամանակին, որ մարդ իր շվաքիցն
էլ սասանում, սարսափում ա, ու բաղի դիվահալած, մահատագնապ ան-
ցավոր՝ երեսին խաչ հանելով, Հավատով խոստովանիմն ասելով, աղոթք,
մարգարեից անունը տալով որ Զանգվի կարմնջի վրովը անց չի կենում ու
Կոնդի չոր դարդուսը նի ըլում, սարսափը ջանն առած, լեզուն բերնումը
սառած, աջու կողմն՝ Երևանու զարհուրելի բերդն ու Թուրքի գյոռխանեքը
(գերեզմանատուն), ձախու կողմն՝ դնգերը, ջաղացները, որ չեն ձորումը
թխթխկացնում, չխչխկացնում, ու փոքր ինչ հեռու՝ չանգը կոխած, կամա-
րակապ համամները ու տխուր Զորագեղը՝ փոսումն ընկած, ձենըները
փորըները քցած, առաջին՝ Երևանու Շհարը, տրտում, դառնավարամ սգի
քողն երեսին փռած,— որ չե՛ն երևում, հենց իմանաս, բոլորն անդունդն
ա գնում, բաթմիշ ըլում, քանի մարդ բարձրանում ա, վեր ըլում,— ու
հեռըվանց որ արթուն շները տների կտրներիցը չեն վնգվնգում, օռնում,
հաչում, ղշղըռ տալիս, էլի ձենները փորըները քցում, բարակ ձգում, զլում
ու քթերիցը իրանց տխուր, սարսափելի կոնգոռնալը դուս թողում, նվում,—
որ սուր-սուր սարերի, թափեքանց գլխըներիցը, տակըներիցը սովամահ
գիլանը ֆորսի հոտն առած, փրփրած, անկուշտ բողազներն ու ոխըները
չե՛ն բան քցում, ոռնում, շան պես կռնձկռնձում, որ նրանց խաբեն, մոտ
գան, ներս մտնին՝ կամ իրանց գզգզեն, պատառեն, խեղդեն, գաղըթմիշ
անեն, կամ մեկ անմեղ գառն, մեկ կաթնակեր, ճամփեն մոլորած, տունը
կորցրած ֆորթ, կամ մեկ նախրիցը ետ ընկած, քուչում կամ քարի տա-
կի կուչ էկած արդար կով, կամ աղըխ յաբու, կամ ծնած ղարաղ, կամ մեկ
բեզարած, իրան համար հանգիստ, խաթրջամ նստած արածող ոչխար
գտնեն ու լափեն, կամ մեկ շատ բանացրած, հալից իսպառ ընկած, տի-
րոջիցը խռոված, տանից դուս արած, էստեղ-էնտեղ չոր-չոփ, ծերը սուր

փուշ կրծելով, ծամելով, ղոթուր անկաջները թափեթափ տալով, իր սև
օրիցը բեզարած, ձեռք վերցրած, անատամ, անպոչ, անլեզու, հայվան՝
մեկ խղճալի է՛շ, պարապ ռաստ բերեն, հետը խաղան, ծլունգ-ծլունգ ըլին,
ջահելությունը միտքը քցեն, որ մեկ քեֆը բացվի, սաղը քոքի, ու հետո
իրանք իրանց բանը տեսնին, մաքրազարդեն։ Սրանց սոսկալի ձենի հետ
էլ որ ձորերի միջիցը, քարափների արանքներիցը, ապառաժների գլխնե-
րիցը, բաշերիցը, թփերի, քոլերի տակերիցը, դզերիցը, չոլերիցը, բների-
ցը մեկ կատաղած արջ կամ խորամանկ աղվես, կամ վախլուկ չախկալ,
կամ մեկ ամեհի քաֆթառ, կամ գլխիցը ձեռք վերցրած ալապաստրակ իրանց
սոսկալի, զարզանդելի ձեներն իրար չեն խառնում, գոռում, մռռում, բըռ-
ռում, մնկմնկում, ճնկճնկում, ճչում, խառանչում, բառանչում, բղղում,
ճղղում,— կամ անքուն աքլորները իրանց տիրոջը կամենալով արթուն
պահպանիլ՝ լեղապատառ, սասանահար վախտ-բևվախտ որ չեն թըպըր-
տում, թևըները թափեթափ տալիս ու ճղլանի ձեները նեղ բողազներիցը՝
մեկ խոր ձորից, մեկ փոսից, մեկ բաշից յա կտրից հանում, կանչում, ան-
կաջ գնում, էլ ետ ծղրտալով կանչում,— կամ հիմիկ ոսի սալդաթը, էն
ժամանակը Թուրքի ղարավուլ սալդաթը, ինչպես գերեզմանիցը նոր դուս
էկած, դիվանոնց ճանկն ընկած, ոտ ու ձեռը կապած, սուրն առաջին հա-
նած, մահապարտ մեղավորի պես որ ուզում ըլին՝ հոգին հանեն, թե բե-
րանը բաց անի յա ծպտա, սևամորթ փափախը խոր, քիթը քցած, աչք
ու ունքը կալած, ծանր, կամաց, սուս, փուս՝ ոտները փոխելով, աչքերը
տրորելով, քնահարամ արշտատալով մեկ մութը պուճախից կամ մեկ
բուդկի տակից որ գլուխը չի՛ հանում ու խուլ, խոր, զարհուրելի, փորն
ընկած ձենով «Սլո՛ւ-շա՛յ» կամ «Խաքա՛r-դա՛r, սա՛r–հե՛–սա՛ր» գո-
ռում, կանչում,

Որ քամին մեկ կողմից, բուքն ու բորյաղը մյուս դեհից, ինչպես կա-
տաղած դահիճ, սրարձակ ղամչով, մաթրախով, թոփով, մզրախով՝ սա-
րերի գլխըներիցը, ձորերի միջիցն թո՛ղ, ա՛վազ, հո՛ղ, ա՛ղբ, զի՛բիլ առաջն
արած՝ փոսերիցը հանում, պատեպատ չի՛ տալիս, գետինը պոկում,
քարափին խփում ու՝ ծառերը ջարդելով, խոտերը ճոթռելով, գետինը ճղե-
լով, մեկ ճուղք մյուս ճղքի, մեկ պատ մյուս պատի, մեկ տախտակ մյու-
սին չի՛ սաստիկ կպցնում, թրխկթրխկացնում, զրխկզրխկացնում, մեկ էս
քարափին քարով բոնցքում, մեկ էն սարի գլխին դմբզում, բամբաչում,
զրխկացնում, թրխկացնում ու մեկ կիտուկ հող, ավազ՝ շունչդ քաշելիս
կամ աչքդ բանալիս, էրկու ձեռով բերանդ ու բաց քիթդ չի՛ խցկում, լըց-
նում, շունչդ կտրում, քիթդ կալնում, փակում, աչքերդ խավարացնում ու
անկաջիդ տակին թոփի գյուլլի պես կամ սուր նետի նման վզվզալով,

16*

ղղղղալով եա դառնում շուտով, երեսիդ էնպես խփում, որ աչքերդ մըթ-
նած՝ կեծակին են տալիս, ու դու տեղնուտեղդ չե՛ս շշմում, շշկլում, թըմ-
բըրում, սասանում, քար կտրած մնում ու սառած կանգնում, ու աներե-
վույթ թշնամիդ էլ եա ձին չափ քցած, էլ եա հրեղեն բոցով որ չի՛ սա-
րերի, ձորերի ջանին ղաստ անում, հասնում, թակում, մեյդանը բաց
անում ու՝ թնդում, դղրդում, շաչում, շառաչում, ճայթում, կատաղում,
փրփրում, խռնչում, դռնչում, գլուխը թափեթափ տալիս, նայում, ձենը
կտրում,

Որ աչքդ կիրացած, ջանդ սասանահար, խելքդ թռած՝ հանկարծ, ինչ-
պես մեկ խոր քնից, գլուխդ ահիվ, սասանմամբ չե՛ս բարձրացնում, առա-
ջըդ բցում ու՝ ամեն մեկ խորից, փոսից, ամեն մեկ ճեղքից, մութը արան-
քից էս կողմն, էն կողմն՝ հեռու տեղերից, ծառերի տակից, քարերի մի-
ջից, սարերի գլխից, Ջանգվի ղրաղներիցը ծիրանի փետի չաղ ալավը,
կրակի վառ բոցը հրեղեն ձողու պես վռվռալով, խավար գիշերը թրի պես
ճղելով, սև մութը, թանձրամած ծուխը, պեծն ու վառ կայծակը վերըվեր
չե՛ն խփում, ձորերն ու երկինքը կրակում ու՝ խավարը կոխած սև խոռոչ-
ների, բերանները բաց էրերի, օձի պես ոլորված ճեղքերի, քաջքի պես ճո-
լոլակ էլած, չանգըները դես ու դեն քցած, մազերը խճճված, ծամերը
կախ ընկած, գոշ ու ծիծ եա ճոթռած՝ բարձր ծառերի, դիվի պես երեսը
դեմ տված կանգնած, անահ, անվախ, սուր, ցից, իրար վրա թիկնը տված,
երես-երեսի դրած, բերան-բերնի խփած, խավարադեմ ծոցըները բաց
արած, ատամները սրած զարհուրելի քարափների սոսկալի աշաթները
չե՛ն բաց անում ու էլ եա խփում, ու էլի՝ խելքը ցնդած, ընկնավորի (թու-
լացկոտ) պես շատ թրպրտալուց, ծեծվելուց, դես ու դեն գլորվելուց,
դըճտացնելուց, ղնջռտացնելուց հետո իրանց-իրանց էլ եա աչքերնները չեն
խփում, տաղ անում, անշունչ, անսաս մնում, դադարում։

Ու է՛ս հաղաղին, է՛ս սարսափելի ահաթին, որ բազի վախտ էլ եր-
կինքը իր ալեկոծությունը չի՛ սկսում, սարերը ջարդում, ամպերը տրա-
քացնում, կեծակի լախտին աշխարքի չորս կողմի գլխին վեր հատում,
փշուր-փշուր անում, ու Ջանգին, սարսափելի Ջանգին էլ որ մեկ կողմից
չի՛ գոռում, մռնչում ու թուլ ձեռները, անկազմ ոտները քարեքար տալիս,
թոզ, դուման անում, բառանչում, ու քամու վժվժոցը, երկների տրաքոցը,
քարափի ճռճռոցը, սարերի դըմբդըմբոցը, ձորերի դրնգդրնգոցը, ծառերի
խշխշոցը, էրերի խռնչոցը, դնգերի, ջաղացների թրխկթրխկոցը, գետնի
գըղնգալը, տների թնդալը, պատերի տրաքտրաքոցը, շների, գիլանոնց,
արջերի, ղարավուլների, աքլորների ծղրտալը, ճչալը, ծվալը, բառանչիլը,
խառանչիլը, վնգվնգոցը, կոնձկոնձալը, ճնկճնկալը իր ահագին ձենի հետ

չի՛ խառնում, ոլորում, փորը քաշում, էլ եա, մեկ բոպեից հետո, հազար
կողմերով դուս փչում, ցանում ու սարերի, ձորերի, քարափների բերանը
էլ եա լեզու դնում, էլ նա շունչ տալիս, որ իր քաղցր ձենը քաշեն, դամ
անեն, իրանց դժոխային քեֆն արամիշ անեն, պար գան, ծափ, ծիկա
տան, ծղրտան, գիժինա քցեն, քեֆ անեն, խնդան, ցնծան,
Էս հաղալին, որ աստված ո՛չ շհանց տա, մեկ անծանոթ անցավոր
որ Կոնդի դուզը չի՛ նի ըլում յա Ասլանքափոսիցը* վեր գալիս, որ Ջանգ-
վի վրովն անց կենա, աչքը շաղվում ա, գլուխը շվարում, ու հենց իմա-
նում ա, թե մեկ ահագին սար վրեն փուլ էկավ։ Էլ ո՛չ առաջն ա տեսնում,
ո՛չ ետևը։ Քարացած, փետացած՝ մնում ա տեղնուտեղը սառած, ցցված։
Ինչպես երազում՝ մեկ հեռու, խոր տեղից մեկ խուլ դղրդոց անկաշդ ընկ-
նի, ու հենց իմանաս, թե երկինք, արեգակ, լուսին, աստղեր իրարոցով
դիպան, փշրեցին, փշրվեցին, կոտրեցին, կոտրվեցին ու գոգռալով, գոռ-
գոռալով, պատռելով, պատռվելով վեր թափեցին, ու՝ անդո՛ւնդ, դժոխք,
արքայություն, տարտարոս, հրեշտակք, դիվանք, սերովբեք, քերովբեք,
Սադայել, Սադանայել, սասանած, սփրթնած՝ հրեղեն սրով, բոցեղեն
թրով, ամպով, կայծակով թոթափում են, վեր ընկնում, որ աշխարհս
վերջացնեն ու հետին դատաստանի տեղը պատրաստեն, որ Աթոռ սատ-
վածության իջանի, բազմի ու անիրավ մարդիցը հեսաբ պահանջի, որ

---

* Ասլանքափոսն Ասլանքափոսն Ասլովենց մենձ իգու տակին ա։ Քանաքռցիք պատմում են, թե մեկ
չոբան, էշը բարձած, տուն գալիս, տեսնում ա բիրադի իրան աղաքին մեկ դուռը բաց էլավ։
Մտնում ա ներս, աչքդ բարին տեսնի. ջավահիր, մարգարիտ, ոսկի էնքան ա, որ էլ հեսաբ
չի՛ կա։ Իշի բեռան մոխիրը դեն ա ածում մեր բախտավոր իշարածը ու խարարները պրծե-
պրունկ ջավահրով լցնում, դուս գալիս։ Մի քիչ տեղ որ գնում ա, ձեռի փետը միտն ա ընկ-
նում։ Աչքը չկշտացած՝ էն փետի խաթեր եա ա դառնում, հենց ուզում ա, որ դուս գա, էլ
դուռը չի՛ կա։ Նա էն տեղ ա իր սև օրը լաց ըլում ջավահրի միջում, իշարածի խաթունը՝
տանը, չունքի անբան էշը ի՞նչ կիմանար, թե վրինը ջավահի՞ր ա, թե աղբ. տնքալով որ տուն
չէկավ, դռանը անկաչները կախ արած կանգնեց, աղիզ խանումի լեղին պատռեցավ, որ
տեսավ, թե իր սիրելի մարդը չի՛ կա։ Քիչ էր մնացել, որ իր դրատին էլ խոկի, բերդաներէր
մեկ զատ սպպղաց։ Էնպես իշին ուրիշ մարդ թաղավորություն կտար, ամա մեր տանտի-
կինը չուներ։ Իր օրումը մարդին էլ չէ՛ր էնպես մուրազով, կուշտ փորով պաչ արել, ինչպես
մեր էշ աղային, ու նոխտիցը բռնեց, տուն հրավիրեց։ Էշն էս սիրովը զարմացած՝ լեզու
էլավ ու, ինչ որ անց էր կացել, պատմեց։ Աստված իշարածի դատաստանը քաղցր անի ու
ամեն քրիստոնեի էսպես մեկ իշարածի ռաստ բերի։
Մեր գեղցիք էս էլ են պատմում, թե էս տեղ էր, որ մեկ բիզուն, բաղարիցը գալիս
տեսան, որ իրանց Ասլով պապը, որի լավությունը հազար բերան էսօր էլ պատմում ա,
եափն շունչը հասած՝ վեր էր ընկել։ Որդու հարսանքավորը տունը լցվել էին, որ հոր մեյիդը
ուսներին դրած բերում են։ Հարսանիքը սուգ ա դառնում։ Էնպես են ասում, թե դեղել են։

հենց իմանում ա, թե աշխարքն իրն ա, ինչ ուզենա, է՛ն պետք է անի,—
էսպես ա ողորմելի անցավորի հոգին ու սիրտը խառնվում, երկրից երկին-
քը գնում, իր վախճանը տեսնում ու արյան քրտինքը երեսիցը՝ մեղա
ասելով, իր մեղքն հիշելով սրբում, երբ աչքի առաջին կամ Քանաքեռ ա
բացվում, կամ Նորագեղի դուռը։

<2>

Էսպես մեկ սարսափելի գիշեր էր, որ Ապովենց Հարությունը՝ Քա-
նաքռու աղնվական անձանց մեկը, Ապրանքափուխցը դուս էկավ, մտավ
իրանց մենծ իգին, տեսավ կատեպանները (բաղմանչի) բոլոր քնած են,
էլ զիմիշ չարավ, որ նրանց վեր կացնի, ինքը, քյան՝յան ձ՛ն տակին, ասեց՝
մեկ Գորգոչանը գիպչի յա բանդը գնա, տեսնի, թե ջուրն ընչի՞ չի՛ գալիս։
Մութն էնպես էր գետինն առել, որ մատդ կոխեիր մարդի աչքը, չէ՛ր իմա-
նալ։ Բայց բոլոր քարերն էլ, որ բերանները բաց անեին, նրան չէ՛ին կա-
րող վախացնիլ, է՛ն աներկյուղ սիրտն ուներ մեր քաջ հայազգին։ Թուրք
ու հայ էսօր էլ կասեն, թե նրա ո՛չ սրտին, ո՛չ լեզվին սարն էլ չի՛ դի-
մանալ։ Բաղերի գլխովը տվեց մեր սրտոտ իգիթն ու հասավ Գորգոչանի
գլուխը. ջրի բաժանվելու տեղն էս էր։ Տեսավ, որ էստեղ էլ ա ջուրը պա-
կաս։ Հենց Վերի եկեղեցու գլխովը պտտեց, որ մեկ բանդին հասնի, ջուրը
կապի, աչքը որ ետևը չքցեց, մնաց անդնդատեղը սառած։ Չէ՛ր գիտում,
թե ի՞նչ տեղ ա։ Ուզում էր ետ դառնա, սիրտը չէ՛ր տալիս, ամոթ էր հա-
մարում իր գլխին. ձիուն էր զոռ անում, ձին անկաջները խլշացնում, փըն-
չացնում էր, ետ վաղում։ Չորս կողմը բոլոր մութն ու խավարը կոխել էր,
բայց եկեղեցու գլուխը արեգակի պես փայլում, ճաճանչում էր։
— Սո՛ւրբ Մարիամ Աստվածածին, քեզ եմ կանչել,— ասեց բարե-
պաշտ հայազգին, ձիուցը վեր էկավ, մեկ դրաղ ետեղ կապեց, ու երեսին
խաչակնքելով՝ մտավ գերեզմանատունը։— Աստված ձեր հոգին լուսա-
վորի, ա՜յ արդար ննջեցյալք,— ասեց ու մտավ ժամի հայաթը։
Քանի Քանաքռու սատղը ծովել, հազար հարուստ տանիցը քառասուն
տուն ։ին մնացել ու էն էլ աղքատ, ողորմելի, օրէն հացին կարոտ, էս
սուրբ եկեղեցին էլ մնացել էր ամայի։ Տարենը մի անգամ էին էնտեղ
ժամ ասում, էն էլ սուրբ Աստվածածնի տոնին։ Էստուր համար դուռ ու
հայաթ բաց էր մնացել։ Հենց մեկ քանի ծունր դրեց, էրեսին խաչ հանեց
ու ուզում էր, որ սեղանն էլ համբուրի, գնա իր բանը, էնպես գիտես, թե
թևիցը քաշեցին։ Էնպես որ սառած, կանգնած մնաց ո՛չ, հանկարծ մեկ
երեխի ձեն ընկավ անկաջովը։ Կարծում էր, թե երազ ա տեսածը, յա

միտքն ա իրան խաբում։ Մի բիչ էլ որ անկաջ դրեց, մեկ ուրիշ ձեն էլ ըն-
կավ անկաջը, ու պարզ լսում էր, որ մեկ երեխա՝ ձենը փորն ընկած, հե-
կեկում էր։
— Նա՛նի ջան, նա՛նի. ա՛խր մի աչքդ էլա բա՛ց, ա՜յ քո չարը տա-
նիմ։ Մեզ ո՞ւր բերիր էստեղ. էս մեռելները հո մեզ կուտեն. մեր ճարն
ո՞վ կըլի, որ դու էլ քնում ես, աչքդ չե՛ս բաց անում։ Վե՛ր կաց, գնա՛նք
տուն, քանի՞ լաց ըլիս, քանի՞. մեր ափուն հո կորել չի՞, էլ ետ կգա, ի՞նչ
էս էդքան սուգ անում։ Մեզ թաղի՛ր, նա՛նի ջան, մեզ մորթի՛ր, ջուրն
ածի՛ր. մեզ հարամին կգա, կտանի, մեզ ի՞նչ կանես էս չոլումը։ Նա՛նի
ջան, նա՛նի. էդ սի՛րուն երեսիդ ղուրբան, ընչի՞ չես մեկ խոսք էլա ասում,
ախր քո երեխեքը չե՞նք, ի՞նչ արինք, որ էդպես մեզանից նեղացար։ Էլ
քո սիրտը չե՛նք կոտրիլ, քո հոգուն մատաղ, թաք ըլի մեզ սիրես, մեզ
պահես, մեզանից էլ չխռովիս։
Ա՜խ, էնպես զարհուրելի սհաթին ո՞ւմ անկաջն էս ձենն ընկնի, որ
սիրտը չտրորվի, չխռովվի։ Նազլուն էր, ա՜յ իմ սիրելի կարդացող, էս
մերը, որ երեխեքը սուգ էին անում։ Թե դու էլ սիրտ ունիս, չե՛ս ասիլ,
թե շինովի ա էս պատմությունը։
Սե՛րը, սուրբ սե՛րը, որ բալասանի պես կենդանացնում ա մարդի
սիրտը, ու թրի պես կտրատում, սե՛րը, ի՞նչ ասես, որ չանի։ Ի՞նչ կրակ
կարա անսեր սիրտը տաքացնիլ. ի՞նչ ջուր կարա սիրով վառված հոգին
դինջացնիլ, հանգցնիլ։ Սիրով վիրավորված սիրտը ո՛չ հողից կվախենա,
ո՛չ գողից. ո՛չ ահ գիտե, ո՛չ վախ. ո՛չ սրից երեսը կդարձնի, ո՛չ ջրից։
Քանի շատ ա սերը, էնքան քաղցր ա տանջանքը։ Սերին ի՞նչ կգիմանա, որ
մահից վախենա։ Սիրելուցդ զրկված վախտը հողն էլ ա բերան առնում,
քեզ ուտում, քարերն էլ են աչքումդ մզրախի պես ցցվում, քաշած շունչդ
էլ ա քեզ կրակ դառնում, էրում, փոթոթում, քո մարմինը քեզ գերեզման
դառնում, քո սիրտը՝ քեզ դժոխք, քո աչքը՝ քեզ արյան ծով, քո ձենը՝ քեզ
ամպ ու որոտումն, մրրիկ, փոթորիկ, բաս Նազլուն կարո՞ղ էր առանց
Աղասուն կենալ, ասած խոսքը, նրա հետ կապած ուխտը չկատարի՛լ։
Ճշմարիտ սիրողի մեծ մուրազն հենց էն ա, որ իր սիրելու խաթեր մեռ-
նի. Նազլվի սիրելին էր հողումը, է՛ն թագավոր տերը, է՛ն աշխարքի աչ-
քի լիսը, բաս նա կարո՞ղ էր, առանց նրան, աչքը բաց ու խուփ անի՞լ կամ
մեռած, գնացած շունչը երկար քաշի՞լ։— Գլուխը դրել էր գերեզմանի վրա,
երեխեքն առել դոշի տակը, լիսն էկել էր, չորս կողմը բռնել, բայց ողոր-
մած երկինքը դեռ չէ՛ր կամեցել նրա սուրբ հոգին առնի, ընչանք էն ան-
մեղ էրեխեքանցը մեկ տեր լիս կընկներ։ Նա էլ հո գլխներին կանգնած
էր։ Մեկ ա՜խից ավելի էլ ո՛չինչ չիմացավ էս էկողը։ Նրանի՜ էն գերեզ-

մանին, որ էսպես կսիրեն։ Նրանի՛ էն հողին, որ երկու սիրելու մարմինը
էսպես խստակ, անարատ կտանի, կպահի, որ աստուծո առաջին պարզե-
րես դուս գան, մեր երկիրն էլ, որ երկնքի քիրն ա, մեր հոգին էլ, որ
աստուծո սուրբ պատկերը։

Նազլուն էլ գնաց, Աղասին էլ, նրանց էրեխեքանց տերն էլ աստված
հասցրեց, աստված կթողա՞, որ իր որդիքը կորչի՞ն։ Մենք էլ մեկ օր կեր-
թանք, մե՛նք էլ, ա՜յ իմ սիրելի հայրենակիցք. ասա՛, որ Աղասու գերեզ-
մանն էսօր քո աչքիդ առաջին էլ ըլի, դու չե՞ս ա՜խ քաշիլ, ողորմի տալ
ու մտքումդ ասիլ. «Ի՞նչ կըլեր, ես էլ քո ընկերների մեկն էի էլել, իմ
Հայրենիքը սիրել, իմ ազգին լավություն արել, որ ինձ էլ էսպես սիրեին,
իմ անունն էլ էսպես աշխարքի միջումը փայլեր»։

Գանձ ու հարստություն, պատիվ ու նշան, իշխանություն ու մեծու-
թյուն մինչև գերեզմանի դրա՞ղն են մեզ հետ ընկեր և ո՛չ բարեկամ։ Սա-
ռը պատանը երբ որ աչքդ փակեց, էդ հոգելից աչքին ղուրբան, ա՜յ իմ
Հայկա ազնիվ զավակ, տխուր զանգակը երբ որ քեզ ժամը տարավ, քո
պայծառ երեսը երբ որ մահվան դեղնությունն առավ, քո անուշ լեզուն
երբ որ փետացավ, սիրուն արևդ երբ որ մեր մտավ, դագաղդ՝ գերեզմանը,
մարմինդ՝ հողը, հոգիդ երկինքը գնացին, դինջացան, էն սգավորքն էլ
կդինջանան, որ քո խաթեր իրանց սպանում էին, ու նրանք էլ որ մեռնին,
խունկն ու մոմն էլ վրեցդ կպակսի, ժամ-պատարագն էլ։ Կարելի ա, որ
էն քո վրա անսիրտ, անջիգյար ման էկողների, խնդացողների շատը
նրանք են, որ հացդ ուտելիս, բարությունդ վայելելիս քո սաղ վախտը
ուզում էին ոտդ համբուրեն։ Աշխարքն էսպես ա։ Քո գո՛րծքը, քո գո՛րծքը
միայն քո անունը կպահեն։ Հայրենասիրությունը միայն քո հիշատակը
կտանի, ազգասիրությունը՝ քո արածը կենդանի կպահի, քեզ սրբի տեղ
պաշտիլ կտա։ Հայրենյաց հողը քո անգին ոսկերքը, քո սուրբ գերեզմա-
նը ամեն անց կենողի առաջին կկանգնացնի ու մատով ցույց կտա.

— Թե ուզում ես քեզ էլ էսպես սիրեմ, գգվեմ, դու էլ ինձ սիրի, ինձ
պայծառացրու՝ ի՛մ սիրելի որդյակ։

Աղասու սուգն արինք, պրծանք. ա՜խ, նրա պես հայազգի հիշատակը,
նրա պես աննման հսկայի պատմությունը ե՞ս չպետք է գրեի։ Նրանի՛ էն
նա, իմ անպիտան գրությունը դեն քցի ու ինքը նորեն էնպես գրի մեր
քաջ հայերի պատմությունը, որ լաց-կարդացող վառվի, բորբոքի, զար-
մանա, հիանա ու էն գրողի ղալամն ու գիրքը, ինչպես Պետրարքինը,
բախտին, որ մեկ ազնիվ հայի ծնունդ իմ անպիտան լեզվի վրա բարկա-
մասունքի տեղ պաշտի, ծոցումը պահի։ Սերն էր, որ ինձ համարձակու-
թյուն տվեց, որ գրեցի, թո՛ղ կարդացողը պակասությունս երեսովս չտա։

Գնա՛նք մեկ Զանգվի ղրաղն էլ, մեկ մեր սուրբ Զանգին էլ տեսնի՛նք,
մեկ նրա ձորն էլ օրով տեսնի՛նք, չունքի դիշեր էր, որ վրովն անց կա-
ցանք, դիշերվան տեսածն ու ցերեկվանը մեկ չի՛ ըլիլ. մեկ էլ մեր սուրբ
Հայրենյաց հողը մտնինք, հետո ձեռ-ձեռի տա՛նք, սիրտ-սրտի, իրար
գրկե՛նք, դոշ-դոշի տա՛նք, ու որ արտասունքը մեր աչքը կալնի, ցավն
ու կսկիծը մեր բերանը փակի, սար ու ձոր մեր ձենը խլեն, ու թե մեկսու-
մեկս երկնքումն ըլի, մյուսը՝ գետնքումը, ո՛ր լուսնի տակին որ կանգնի,
ո՛ր աստղին որ նայի, ո՛ր ծովի ղրաղին նստի, ո՛ր սարի գլխով անց կե-
նա, աչքը երկինքը քցի, ձենը՝ փորը, ու առաջին ա՜խը, առաջին կաթը,
որ թափի կամ բերնիցը դուս գա, է՛ն ըլի, որ ասի.

— Բա՛րեկամ, բա՛րեկամ, դու գնացիր, ես մնացի. ասած խոսքդ
գետինը չի՛ քցեցի, Հայրենյաց սերը միշտ սրտումս ունիմ, Հայրենյաց
ուղուրին կյանքս ետ եմ դրել։ Ձի՛ դարդ անես, չի՛ ցավիս, ինձ հիշես,
կարողություն խնդրես։

<3>

Զանգի՛, Զանգի՛, գեղեցի՛կդ իմ Զանգի՛։ Քո երկնանման երեսը տես-
նելիս, քո տխուր ձենը լսելիս, քո սուրբ ջուրը բերան առնելիս, քո ծաղ-
կազարդ ձորերի միջումն, քո զորավար ափների ղրաղին, քո սիպտակ,
լուսաթաթախ փրփրի տակին, քո պարկեշտ Մասրու ափին, քո խնկա-
հոտ ծառերի տակին, քո անմահական ծաղկների միջին, քո էդ տրտում,
դառնավարան լացի, բոբի, ողի ձենն առնելիս, քո սիրուն աչքերի աղի
արտասունքը տեսնելիս բաս ի՞նչ կըլեր, որ քո բախտավոր, վաղուց հե-
ռացած, մեր գլխիցը պակասած մեծազն, քաջազոր, աշխարհասասան, ան-
հաղթելի, անպարտելի իշխանաց, աշխարհակալուց թագավորաց, մե-
ծազոր, քաջաբազուկ հսկայից, տարաբախտ, վատաբախտ, թշվառացյալ,
գերեվարյալ, տատանյալ, տարտամյալ, զուրկ, թափուր, սրախողխող,
քարակոշկոճ, հայրենամերկ, կենսակորույս, տնանկ, սգավոր, աղքատ,
չքավոր որդիքը ու թոռունքը մեկ միտք անեին, գլխըներին վա՜յ տային,
իրանց սև օրը լաց ըլեին, թե ո՞վ քեզ առաջ՝ ուրախ ձայնիվ, բարձրա-
դիր ճակատով, երկնանման պատկերով, արծվահայաց աչոք, հսկայա-
կան դիմոք, քաղցրամոք ժպտիվ ողջույն տվեց, քո համն առավ, <քո
լեզուդ ծծեց, քո ջուրը խմեց,> քո ծաղկըներիցը խնդալով, ցնծալով հոտ
քաշեց, որ քաղցրահամ պտղըները ախորժանոք ճաշակեց, քո հով, զո-
վարար ղրաղին էկավ, բազմեց, քո սուրբ, անարատ գիրկը համբուրեց,
քո անուշահոտ վարդը, քո պարկեշտ մանիշակը ողջագուրելով, խնդա-

զատելով ջաղեց, <ծոցը դրեց,> ու պերճ դիմոք, վսեմ ծանրությամբ իր քաջ բազուկը վրեդ մեկնելով, տարածելով ու՝ իշխանական զորությամբ, խորհրդածու ուշիմությամբ էդ սուրբ ափներից, էդ ազնիվ ձորերից, էդ անգրվելի քարափներից սուր նայելով, էդ անահ, քաջ սրտից, էդ փրփրուն, ամեհի, սարսափելի ալյացդ երկա՞ր հիացյալ, ապշյալ մնալով՝ խրոխտ ձայնիվ, հզոր շրթամբք, վճռահատ, ազդու բարբառով, երկնալից բերանով, քերովբեական լեզվավ գոչյաց.

— Հրազդա՛ն*, դո՛ւ ես իմ այսուհետև նազելի՛ բնակարան։

Այս քա՛ջ բազուկ, այս լայնալի՛ճ աղեղն, այս նետ երեքթևեա՛ն, այս կուրծ քաջալի՛ու, ամո՛ւր, այս աշխարհասասա՛ն, անընկճելի՛, անվանելի՛ հսկայից սիրագումա՛ր դասք, քե՛զ լիցին յայսմհետէ պահապա՛ն, պաշտպա՛ն՝ սիրելի՛դ իմ Հրազդան։ Ցնծա՛, զուարճացի՛ր, բերկրեա՛ց, փարթամացի՛ր, հրճուեա՛ց, զուարթացի՛ր, գեղեցի՛կդ իմ Հրազդան։ Թո՛ղ ծոց քո ցնծալից, թո՛ղ դաշտ քո զուարճալից ուռճասցի՛ն, ծաղկասցի՛ն. ընձիւղեսցե՛ն, բողբոջեսցե՛ն պտուղս հազարաւորս, սերմանիս բիւրաւորս՝ ի կերակուր իմ սերընդոց, ի ցնծութիւն իմ զաւակաց, ի վայելչութիւն իմ աղանց դիւցազանց։ Իմ տո՛հմք ժառանգեսցե՛ն յայսմհետէ զայս դաշտ երկնատիպ, իմ շառաւի՛ղք եղիցի՛ն քեզ թշնամայա՛ղթ խնդակիցք։ Այս լերի՛նք երկնամբարձք եղիցի՛ն իմ պատուարք մշտահաստատք. այս դաշտավա՛յր չքնաղադէմ՝ իմ քաղցր օթևան։ Քո ձո՛ր ծաղկածին՝ իմ նազելի զբօսարա՛ն։ Իմ անուն կնքեսցէ՛, դրոշմեսցէ՛ զայս մաքուր, վայելչագեղ սահման, զի ո՛չ գտի երբէք ի բոլոր ուղիս, յերկարատև չուս իմ բացական՝ սմա հանգունատիպ տեղի յարանման. սա՛ կոչեսցի՛ այժմ և յայսմհետէ, մինչև ցօրն յաւիտենակա՛ն՝ Հայաստա՛ն...

Զանգի՛, Զանգի՛, անողոքելի՛ իմ Զանգի՛. սի՛րտ իմ մորմոքի, աղի՛ք իմ գալարի՛ն, ոսկե՛րք իմ քստմնին, ո՛ւշ իմ աղմկի, հոգի՛ իմ բորբոքի. տուայտի՛մ ի ցաւս, վարանի՛մ ի ծուփս, հառաչե՛մ լալով, հայցե՛մ ողբալով. ա՛ռ զիմ արտասուս, տո՛ւր ինձ սփոփ, յոյս — Քանի՜ցս, քանի՜ցս կանգնեալ ի վերայ ահեղատեսիլ քարաժայռից քոց, խայտալով ի ծաղկանկար, երփներանգ ծոց քո հրաշագեղ, մինչ տղայն էի, խնդայի, խաղայի, ցնծայի՝ զմայլեալ, ապշեալ, մերթ ևս զարհուրեալ, սասանեալ, յահեղ-գեղեցիկ դէմս քո զայրագին, ահիւ, սարսափմամբ, կամ ի գիրկս ծնողաց վազէի, կամ խնդութեամբ, ցնծութեամբ յալիս քո կայտռէի,— այժմ թանձր հառաչք և թախիծք <հոգետանջք՝> կուտակեալք ի մրրկայոյզ, վարանեալ սրտէս, առ քե՛զ համբառնամ, առ քե՛զ գոչեմ, ի քե՛զ մեռանիմ, ի քե՛զ կարկամիմ։

Զանգի՛, Երա՛սխ, Հրազդա՛ն, Արա՛զ. կաթնահա՛մ ստինք մօր իմոյ սիրելւոյ և գորովագութ ծնողի՝ Մեծին Հայաստանի։ Ո՞ւր ձեր ախոյերատօն անո՛ւն, ո՞ւր այն ոսկեղէն դա՛րք, ո՞ւր դիւցազանց բո՛յլք. ո՞ւր հսկայից կաճա՛ռք, ո՞ւր աթոռանի՛ստք, ո՞ւր քաղաքք, ամրապատա՛կք, <ուր> բրգունք, աշտարանք, կրկէսք երկնահրաշք, տաճարք պանծալի՛ք, շէնք զուարճալի՛ք՝ որք զձեօքն պնդագոյն զօդիւ, հզօր ձեռամբք, ամուր բազկօք, քնքուշ սրտիւ, խանդակաթ սիրով, գորովամոլիտ դիմօք պաշարեալ, պատեալ՝ խանդաղատէի՛նն, փարէի՛նն, ողջագուրէի՛նն, փաղաքշէի՛նն և գիրկս արկեալ զանուշահամ, երկնատի՛պ ձեռօք լանջօք՝ համբուրէի՛նն զնոսա ի համբոյր սրբութեան, ի նշան սիրո՛յ մշտական, ի ջերմեռանդն ուխտ մտերմութեան, հարազատութեան։

Զանգի՛ իմ, Երա՛սխ, Մասի՛ս, Ալագեա՛զ.
Դեռ կանգնիք անմռո՛ւնչ,
Դեռ նայիք անշշո՛ւնչ:
Գնայք միամի՛տ, հուէք ի մեր հովի՛տ,
Սպառնա՛յք ամպո՛ց, խիզախէք ձորո՛ց,
Վարսագեղ ալեօ՛ք, կատաղի դիմօ՛ք,
Ոմն ձիւնափա՛յլ, ոմն արծաթափա՛յլ,
Ոմն ի փողփողիւն, ոմն ի փրփրիւն,
Ոմն վանէ զերկին, ոմն ննջէ զգետին,
Ոմն ի ձիւնեայ պսակ, ոմն ի ծաղկանց բաց՝
Յարշալոյսին տես, լուսնին ի պայծառ, հեզ՝
Ողջունէք միմեա՛նց, համբոյր տայք շրթանց
Զեր սուրբ սորոտաց՝ խնկածին դաշտաց
Հայկազա՛նց վայրեաց, <սուրբ անդաստանաց:>
Երկիր՝ աւերա՛կ. դաշտք մեր՝ անբնա՛կ,
Անփի՛րտք, անողո՛րմք՝ հի՞մ եղէք վկայք
Կորստեան ազգի՛, աւերման դաշտի՛
Զքնա՛ղ քաղաքաց, հզօ՛ր իշխանաց,
Որոց զարմ և ճիռ ի ձեռս թշնամեաց,
Ի բանտ, դառն յոճիր, անօրէն ազգաց
Զոհ եղէն ի սուր, մահն ի բոց, հուր,
Թողին զմեզ ի սուգ, յարեան արտասուք,
Վտարիլ յայլ աշխարհ, զսուրբ Հայրենեաց վայր,

* Զանգի։ <Հրազդան է անուն Զանգի գետոյն>։

Սգալ, ողբերգել, կոծել, հեծեծել
Ի հեռուստ աչօք՝ արտասուօք մաշեալ,
Աղէկէզ սրտիւ, կարօտով մեռեալ:
Ջանգի՛, Ջանգի՛, քա՛ղցր իմ Ջանգի՛.
Ի քոյդ հայեցեալ անյողդողդ ճակա՛տ,
Վառէինն ի զէնս հսկայք քաջամարտ.
Հայկազեան տոհմի ընտիր պատանեակք
Զքո այխս տեսեալ ահեղ-աղուորակ,
Մղէին ի մարտ, վանել քաջայաղթ,
Զինակո՛ւռ բազկաւ, տիգօք, ասպարաւ,
Աղեղա՛մբք վառեալք, զրահի՛ւք զարդարեալք՝
Ցհելայն զունդ ահեղ սրոյ մատնեալ ի զոհ.
Ելին յասպարէզ, թշնամեաց ետուն գրոհ.
Ոսկեթել վարսիւք, դաբնեայ պսակօք,
Պսակեալ զհերեանց գլուխ անվախճան փառօք,
Ճեմեալ յերկնից խումբս՝ զվերինն վայելեն
Զկեանս անտրտում, յերկրի կանգնելով
Յանմահից անուն <գրուեալ անձանց՝>
Ի դարս անանց, անհոլով ամաց:

Ջանգի՛, Ջանգի՛, հրաշագե՛ղդ <իմ> Ջանգի.
Դու զքոյդ սուրբ նախանձ տակաւին տածես,
Դու ահե՛ղ ընդմամբ տակաւին հերքես,
Դղրդաս յարձակմամբ, մեծաձայն գոչես.
«Ելէ՛ք, Հայկազեան սեռո՛ւնդք քաջազունք,
Առէ՛ք զէն, զասպա՛ր՝ զաւա՛կք բարեսնո՛ւնդք,
Հարէ՛ք, փշրեցէ՛ք զթշնամեաց ձեր զունդ,
Տո՛ւք հոգի հոգւոյ, թիկն ընդ թիկուն,
Ջախջախեցի՛ թող գազա՛նն նկուն.
Ռուսիա՛ հզօ՛ր բազուկ եղիցի՛ ձեզ նիզն,
Նմա՛ զոհ լինիլ լիցի՛ ձեր միշտ ճիգն:
Վօլգա՛յ՝ իմ մեծ քեռ, եւ՛ ւ իմ քոյր Երասխ
Համբո՛յր մատուսցուք ի Կասպեան կոհակ:
Նա զի՛ւր քաջութիւն, ես զի՛մ խեռութիւն
Ի մի մեր մօր ծոց ընդ միմեանս խառնեսցուք:
Ես զի՛մ Սեւանայ օրհնութեան մաղթանս,
Ես զի՛մ սուրբ Մասսայ ողջոյն հայրական

Տարա՛յց, մատուցից սիրելւոյն իմ քեռ,
Բերի՛ց ձեզ զողջոյն նորա աւետաբեր:
Ո՛չ ես խղճալի օրիօրդս էի պարտ,
Զի չար թշնամին եմուտ ի մեր դաշտ,
Այլ քոյրս զառամեալ՝ հին աւուրցն Արազ,
Թո՛յլ ետ նոցա զալ՝ բռնի, ինքնահաս:
Տեսեա՛լ զծերունի սկեսրայր իմ Մասիս՝
Ծածկեմ զիմ գլուխ, փակեմ զիմ երես,
Զի մի՛ ալեորն արդու, ձիւնահեր,
Յալիս հասակի լիցի՛ դառնավէր:
Թէ քոյր իմ Երասխ անհաշտ բնութեամբ
Ո՛չ տայ խղճալւոյն հանգիստ և դադար.
Ճեղքէ, պատառէ զոտս նորա ցայտմամբ,
Ե՛ս պարտիմ զայս վէրս փարատել իսպառ:
Իմ չե՛ն բայց այդ շնորհք, զի դաշտք, անդաստանք
Ետուն զիս կոչել՝ *Զանգի* ոսկեհանք*,
Այլ սուրբ Սեւանայ, հօր լուսաւորչի՝
Որոյ արդար նշխարք աստ իմ առաջի
Կան և պահպանեն, օրհնեն, խնամեն
Զիմ անզօր ձեռաց զարդիւնս, որք աստ են:

Բացէ՛ք զճակատ ձեր, ցնծացէ՛ք յամայր,
Իմ քաղցր Վօլգայ քոյր հոգայ միշտ զձեր ճար:
Ես զի՛մ մտերմութիւն ցուցից նմա համակ,
Նա զի՛ւր քաղցրութիւն տացէ՛ ձեզ, ո՛րդեակք:
Այս կա՛պ անխզուն, այս սէ՛ր սրբազան
Մնասցէ՛ ի մէջ մեր ի կեանս յաւիտեան:
Դո՛ւք զօրացարո՛ւք, որդի՛ք Արամեան,
Եղերո՛ւք ընդ միմեանս սիրով միաբան.
Սէր, խաղաղութիւն պահեն զամենայն
Զազգս և զազինս ի բարօրութեան։

* *Զանգի պարսկերէն նշանակէ՝ Հարուստ, ճոխ*

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Գիշերվան մութը գետինն առել էր։ Մեկ ուող քարին դիպչելիս, հազար տեղ ձեն էր տալիս։ Երևանու բերդն ու Նորագեղի բաղերն՝ դառել էին դիվանոնց բնակարան։ Ամեն մեկ քարի, ամեն մեկ թփի տակի՝ հենց իմանում էիր՝ քո հոգեառ հրեշտակը նստած, քեզ ա մտիկ անում, որ սաղ սաղ կուլ տա: Կատաղած Զանգին փրփրել՝ ուզում էր սար ու ձոր բաթմիշ անի, իրար գլխով տա։ Մեկ բարակ քամի՝ էս սարսափելի սհաթին՝ մեկ տխուր ձեն բերում էր, կտրվում, էլ եդ քարափներին տալիս, լսողի սիրտը խորովում։

«Հոգի ունեի, դու էիր, ա՜խ դու.
Ո՞ւր տվիր ինձ նրան, որ ես քո սիրու
Էրվիմ, խորովվիմ, ո՛չ երկինքն լսի,
Ո՛չ երկիրն իմ չոր գլուխս տակով անի։
Երաբ էս սհաթին՝ որ ես քարանամ
Փա՛րիխան իմ ջան՝ գլխովդ ման տամ,
Մեկ շվաքդ էլա երեսիս կընկնի՞,
Որ հողս էլա իր հասրաթը մեկ առնի։
Ընչի՞ չէ՛ր աչքս էն օրը խավարում,
Որ աֆթա վառվեց էս կրակն իմ սրտում.
Ընչի՞ Աստված ինձ էս շունչը տվեց,
Ու քե՛զ էս չրատար գլխիս աստ բերեց։
Վա՜յ որ չեմ կանչում, դողում են քարերն,
Ա՜խ որ չեմ քաշում, սասանում սարերն.
Բայց ա՜խ Երաբ ձենս քեզ էլ հասնո՞ւմ ա,
Թե ինձ էրում միայն, վա՜յ քո Վանուն վա՜յ։
Հոգիս հանդարտ, մեր գեղի դաշտերումն,
Ծաղկի, ջրի վրա, հոտում, չիմանումն,
Արևն ու լուսին, աստղեր ու հրեշտակ
Ծիծաղում իմ հետս ամեն ժամանակ։
Քեզ տեսա թե չէ, աստղս թեքվեցավ.
Նոր աշխար, նոր օր ա չ ք ի ս բաց էլաւ.
Վարդին էլ թաքուն ես մոտանալիս,
Աստղին էլ աչքս տխուր քցելիս,
Հենց իմանում էի իմ գլխիս կանգնած,
Դու ես աչքս ու սիրտս թողել մոլորած։
Զանգին ա մնացել իմ հույս, ապավեն.
Փարիխան իմ ջան՝ փակ քո փանջարեն,
Ի՜նչպես էս ջրին մատաղ տամ իմ ջան,
Որ դու չե՛ս տեսնիլ՝ ազի՛զ Փարիխան։
Երաբ ի՞նչ հալումն ա անմեղ հոգիդ,
Երաբ ստ՛ւր դիպավ էդ արդար սրտիդ.
Թե դու էդ խորումն, ա՜խ ե՛ս էս ձորում
Իրար կարոտու էրվում, տոչորվում։
Ո՞վ անօրենի տանը կկարոտի,
Ո՞վ չար գազանի տեսին հասրաթ կըլի.
Բայց քո շունչն էդ տեղ էլած ժամանակն,
Որ բերնիս էլ դնեն նրանք թուր ու դանակն,
Էլի կպաշտեմ ես նրանց ոտի հողը,
Թաքլի երեսիս փռեն քո քողը։
Լուսինն ամպի տակն մտավ, մթնացավ,
Անշունչ քարերն են լսում՝ ա՜խ՝ իմ ցավ.
Ո՞ւր է՛ն սուրբ, արդար մեռոնի լիսը,
Էն սուրբ կենարար արինն ու միսը,
Սուրբ Գեորգի հրաշքն, սուրբ Գեղարդի շնորքն,
Էն արագահաս սուրբ Սարգսի զորքն,
Որ մեկ ճար անեն. թո՛ղ՝ հոգիս առաջ
Առնեն, որ չմնամ քո սիրովն մեռած։
Փարիխա՛ն իմ ջան՝ արևն որ բացվի,
Էլ չե՛մ ուզում, չե՛մ, որ աչքս լիս տեսնի։
Մեկ հենց շունչդ առնիմ, ապա հոգիս տամ,
Երեսս ոտիդ տակն դնեմ, թուլանամ.
Որ դու իմանաս՝ քու կորած Վանին
Մեկ քեզ ուներ, մեկ իր խավար հոգին,
Էն էլ քեզ տվեց, որ էս աշխարքումն
Թե դու նրա անունն չպահես քո սրտումն,

Երկինք ու երկիր կմնան նրան փակ,
Կջնջվի նրա ա՜խ՝ դառն հիշատակ։
Բա՛ց էդ սուրբ երեսդ՝ դու իմ հրեշտակ՝ բա՛ց.
Մեկ ծունր էլ դնեմ առաջիդ չոքած,
Հետո թո՛ղ՝ Զանգին գերեզմանս ըլի,
Էրված սրտին ա՜խ՝ սառը պատան կուզի։
Բա՛ց էդ սուրբ երեսդ՝ արեգա՛կ իմ՝ բա՛ց,
Քանի շունչս բերնումս ա, դեռ աչքս բաց»։

Էսպես էր էրվում, մղկտում տարաբախտ երիտասարդն, ջիվան Վանին՝ Ջրենդհեցի ռես Կարոյի որդին՝ Զանգվի ղրաղին նստած, մեկ մութը քարափի տակի կուչ էկած, աչքը Երևանու բերդի, սարդարի ամարաթի վրա քցած, սառած։ Էն տեղը որ ցերեկը օրը ճաշին էլ՝ ղուշն իր թևովը մոտանալիս՝ սարսափում էր, ուր տեղ որ քար ու հող՝ արնի հոտը մարդի քյալլում էին ցցում, էս ողորմելին՝ գլխիցը ձեռք վերցրած՝ էն զարհուրելի սհաթին էկել, նստել, իր սև օրը լաց էր ըլում։ Քար ըլեր կհալչեր, բայց նրա սիրտը ապառաժից էլ՝ ավելի էր պնդացել։ Մահը նրա աչքին խաղ էր թվում. նհախ տեղն էին Զանգին, քամին իրանց բարկությունը, կատաղությունը թափում, նրա անկաջն ու դոշը ծեծում, որ իր ջանին էլա ափսոս գա, գլուխն առնի, կորչի, բայց նրա ջանը որ վրեն չէ՛ր, խելքը գլխիցը որ թռած, աչքը արինը կոխած, ի՞նչ կիմանար, ի՞նչ կվախեր։ Ախր ո՞ւմ էր կորցրել, որ նա դիմանար։

Աչքը Արազի ղրաղին էր ափթա բաց արել, առաջին՝ նրա մարմանդ ջուրը, Մասսա ու Ալագյազի սարերը տեսել, նրանց դոշերին ման էկել, նրանց ալվան ծաղկները քաղել, նրանց քաղցր աղբրների վրա քնել, վեր կացել։ Երեխությունից նրա մեծ գործը, նրա ուրախությունն էն էր, որ քյահլան ձիու վրա նստած, յարաղ ասպաբը քցած, իր թայդաշ տղերքանց հետ՝ յա ֆորս դուս գնա, յա ջիրիդ խաղա, յա մզրախը ձեռին Քրդերին՝ ճամբում, չոլում ռաստ բերի ու նրանց գլխին՝ իր տղամարդությունը փորձի։ Երեսի, թշերի ղրաղները դեռ նոր էին սկսում ծաղկիլ, որ սիրտն էլ հետը՝ քիչ քիչ սկսեց փոխվիլ։ Մինչև էն ժամանակը՝ մեկ սիպտակ լաչակ (չիքիլա), մեկ կարմիր, յա ալ քող՝ աչքովն ընկնելիս՝ հենց իմանում էր՝ թե մեկ անմահական հով երեսին դիպավ, սիրտը մի քիչ թրպրտում, միտքը հետը գնում, ա՜խ էլ որ քաշում, արտասունքն էլ շատ անգամ՝ որ աչքը լցվում, խավարացնում էր, էլի դեռ չէ՛ր իմանում, թե պատճառն ի՞նչ ա։ Հենց իմանում էր, թե սարերի գլխին, չայիր չիմանի միջին ըլի իր սիրտը թաղած։ Տանը որ չէ՛ր համբերում, էս տեղարենք էր դուս գալիս, հորից, մորից քաշ-

վում, որ իր դարդը մարդ չիմանա, արտասունքը չտեսնի, ու էս թփի տակին, էն աղբրի ղրաղին՝ էնպես քշված, գժված՝ գլուխը վեր դնում, արեգակի, իր շվաքի հետ խոսում, ու էս հալին նզզում, որ բալքի քնով էլա իրան մի քիչ հովացնի։

Քյարամի, Աշղ Ղարիբի, Քեշիշ Օղլվի խաղերն ու պատմությունը՝ որ Աշղները չէին պատմում ու հետն էլ իրանց սազը բան քցում, ուզում էր՝ էլ ո՛չ ուտի, ո՛չ խմի, գիշեր, ցերեկ մեկ սազ էլ ինքը ձեռն առնի, սարե-սար, աշխարքե աշխարք ընկնի, որ ինքն էլ էն օրերը քաշի, որ բալքի իրան էլ Աստված մեկ էնպես յար, մեկ էնպես հրեշտակ ռաստ բերի, որ գիշեր, ցերեկ մոտին նստած, ո՛չ քնի, ո՛չ աչքը թերթի, հենց նրան մտիկ տա, նրա գովքն անի, նրա հոտն առնի, նրանով կշտանա։

Վարդեվառի պասն էկել, օրը մոտանում էր։ Վանու մեր՝ Սոնի խաթունը կոները վեր քաշած՝ սաղ շաբաթը ո՛չ աչքը քուն էր էկել, ո՛չ միտքը զարար, պաշար էր, որ հազիր էին անում. բուղլամա դրած գառներ, խաշած հավեր, ձկներ շինել, հացի մեջ կոլոլել էին։ Քաթին, թերթին, լոշին, բոքոնին հո՝ ո՛չ թիվ կար, ո՛չ համար։ Խունկն ու մոմը, գանձանակը վաղուց էին առել, հազիր արել, մատաղացու աչառի՝ միսն էկել, անկաջները կոխել էր, էնքան իր քեֆին թողել էին՝ որ կանաչ խոտումը ման գա, չաղանա։ Ով մեկ զինքս ու զարդ ուներ, էնպես օրվա համար էր պահում, որ քցի, դուս գա, իր գլուխը աշխարքին, ալամին ցույց տա։ Ով նոր շոր չուներ, կարիլ էր տալիս, ով ձիու ռախտ, յա լավ ասպաբ չուներ, յա բազարիցն էր առնում, յա փոխ ուզում։ Ջահել հարսն, աղջիկ հո՝ ամսով առաջ՝ հարիր անգամ գլխըները շինել, աչքըները դեղ դրել, հայլու առաջին հազար անգամ կուչ ու ձիգ արել, էլ ետ չհավանել, էլ ետ քանդել, նեղացել, էլ ետ նորեն շինել, իրանց պատկերին, գյոզլին, շորերին մտիկ արել, իրար թաքուն շհանց տվել ու մտքներումը հազար մեկ բան անց էին կացրել, թե ո՞ր սարի ետևից, ո՛ր չոլի տակից իրանց սիրած ուզածը պտեր էն օրը լիս ընկնիլ, որ երազումը էնքան նրանց տանջել էր, առաջներին ջիրիդ խաղալ, իրանց յա խնձորով, յա վարդով խփել, որ իրանց մուրազը մի կատարվեր։ Ղուշ էր գլխըներովը թռել, նրանք նրա համար էին ա՜խ քաշել, հով էր երեսներին դիպել, հենց իմացել էին, իրանց սիրածի շունչն ա. ծաղկի հոտ էին առել, յա վարդ ծոցըները դրել, հենց գիտացել էին՝ նրա՛ հոտն են առնում, նրա ձեռը ծոցըները դնում, նրան երեսներին կպցնում, էնպես էր սիրտները թափ տալիս։

Հինգշաբթի առավոտը ով Ջրենդեհ մտներ՝ հենց կիմանար, թե դաշտ ու ձոր թև են առել, ուզում են, որ թռչին։ Սպիտակ լաչակի ու կարմիր, ալ քողի շողքը մեկ դհից էր արեգակի ու հովի հետ խաղում, թուր ու թվան-

քի, յարաղ ասպաբինը՝ մյուս կողմից լսի հետ պեծին տալիս, փայլում, դաբ ու զուռնա, սազ, քյամանչա քարերին՝ էլ հոգի էին տալիս, վեր կացնում։ Ջահել տղերքը քյահլան ձիանոնց վրա՝ ուզում էին իրար կտրատեն, էնքան էին դռների, չոլի երկենությունը չափել, ձիանոնց հոգին առել, որ հարսն օղլուշաղ էլ մի շուտով դուս գա, մի ճամփա ընկնին, մի իրանց մուրազն առնին՝ իրանց հունարը ջահել աղչկերանցը շհանց տան, նրանց սրտին մի դիր գան ու հետո գնան **Ծաղկեվանք**, որ իրանց ուխտն անեն, **վարդեվորի** տոնը էնտեղ կատարեն։

Ով Հայաստանու սուրբ աշխարհի մեծությունը, նրա դրախտանման դաշտերի հոտն ու համը, էն ծաղկափթիթ ձորերը, էն անմահական աղբրների ջուրը, ու Հայոց անմեղ ազգի հաքուստը, ուրախությունը, խաղը, բարեպաշտությունն ու աստվածասիրությունը կամենում էր տեսնի, նրա գառը որդոց ազիզ երեսին նայի, մուրազն առնի, էս տեղ պետք է գար, Ծաղկեվանքի ծերին պտի կանգներ, որ իմանա՝ թե էս երկնանման բարձրությունից էին Հայք իրանց աշխարհին մտիկ տալիս, Մասսա, Ալագյազի վրա խնդում, Նոյան տապանը, Լուսավորչու կանթեղը, սուրբ Գեղարդավանքն, էջմիածին ու Խոր Վիրաբ միտքըները բերում, կրակի պես վառվում, արծվի պես թռչում, ամպի հետ բարձրանում, ջան ու արին ջրի պես մատաղ անում, որ իրանց լիս հողիցը չզրկվին, չհեռանան, սուր տան, սուրը քաշվին, բայց էնտեղ ապրին, էնտեղ մեռնին։ Սրանք էին, որ Հայկա վեհ սիրտը վառեցին, Վաղարշակ իրանց ծոցը քաշեցին, Տիգրանին թև տվին, Տրդատին Հռովմա ետ բերին, Վռամշապուհի վսեմ միտքը բորբոքեցին, որ Հայաստան իմաստության տուն շինի։ Սրանք էին, որ Մովսես Խորենացին տեսնելիս՝ վերանում էր, Եղիշե պատմելիս՝ խոյանում, Վարդան, Վահան Մամիկոնյան արին վեր ածելիս՝ նո՛ր հոգի առնում, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի գովելիս՝ հրեշտակի լեզու ստանում։ Էլի սրանք էին, էս սուրբ սարերը, որ ջրհեղեղովն աշխարը քանդվելիս, Աստուծո աչքը մեր աշխարհի վրա մնաց քաղցր, մեր աշխարհն ընտրեց արդար Նոյի բնակության համար, էնքան ազգեր էլ, որ սար ու ձոր ոտնատակ տալով, թուր թրի տվին, որ մեր ազգի շվաքն աշխարքի երեսիցը կտրեն, իրանք փչացան, իրանք վերջացան ու էլի մեր սուրբ հավատը, մեր արդար Հայոց որդիքը՝ էս օր էլ կան, էս օր էլ իրանց օրենքն ու լեզուն՝ սրտներումն, բերնըներումն ունին, ու իրանց լավությունովը, աշխատասիրությունովը, խելոքությունովն ու հավատարմությունովը՝ ամեն ազգի սիրելի, ամեն երկրում գոված՝ կան ու կմնան ու իրանց ընտիր հոգին ո՛չ կփոխեն, ո՛չ կմոռանան։

Էս երկնքի դոշն էր էս օր մեր ուխտավորների գալու տեղը։ Էլ գեղ չէ՛ր մնացել՝ որ տեղիցը պոկ չգա, էլ տուն չէ՛ր մնացել՝ որ ինչ ունի չունի,

թողա, էս տեղ գա։ Ո՛ր ձորը մտնեիր էս օր, ո՛ր աղբրի վրովն անց կենայիր, որ նո՛ր թամաշա, նո՛ր ուրախություն չի՛ աչքիդ առաջը գա, ո՛ր քարի, ծառի տակիցն ասես, որ կրակի մուխը, սազի, խաղի ձենը՝ չէ՛ր վեր ըլում։ Կարելի ա, բաղի քնթի մազ, ծուծը բարակ, գլուխը հաստ՝ մարդ ասի, թե ուխտ գնալիս՝ պետք է գլուխդ քաշ գցած, լալով գնաս, բայց միթե անմեղ ուրախությունը Աստուծո ընդդե՞մ ա, որ մարդ էնպես օրն էլ իր սիրտը կոտրի։ Հետին աղքատն էլ՝ էնքան պաշար էր վերցրել էս օր հետը, որ ամիս նրան հերիք էր, բայց նա իրան դարդումը չէ՛ր մենակ։ Ամեն ռաստ էկող, էն յաբանի յադն էլ, թուրք էլ որ ըլեր, հենց աչքըներովն ընկան թե չէ, պտի կանչեին, ուտացնեին, խմացնեին, էնպես ճամփու քցեին։ Քանի՞ աղքատի աչք էս օր պետք է կշտանար, չէկողին էլ՝ իրանք էին զոռով իրանց սուփրի վրա քաշում, էկողը հո՝ գլխըների վրա տեղ ունե՛ր։ Ամեն մեկ կանաչ տեղ, ամեն մեկ աղբյուր՝ նրանց մանգղին էր, նրանց սեղանը։ Տեսածին պես խոկուլն ջահել տղերքը ձիուց վեր էին թռչում, հարսն աղչկանը ուսուլով վեր բերում, չախմախ տալն ու կրակ վառելը մեկ սհաթվա բանն էր, պաշարը հո՝ բռներով, խորովածի շամփրները կրակի վրա էին դնում, իրանք կարգով նստում, որը հացն էր փռում, որը աչքը չռում, որը գինու գավը, որը խորոված հավը, իրար տալիս, հաց ուտելիս, ու հետը սազ ածում, խաղ ասում, պար գալիս։

— Ա՜խ՝ լավ աչք պտի, որ մեկ էլ էս սար ու ձորը տեսնի,— մեկ զմեկու ասում էին,— քանի՜ էնպես մեզ նման էկող գնացող տեսել, բարովել են սրանք, իրանք մնացել, նրանք գնացել։ Քանի բերնըներումս շունչ կա, մեր կյանքը վայելենք։ Ա՜յ տղա ածա՛, դրա սուրբ բաժակին ղուրբան, մեռած տեղս էլ կուզեի որ գյոռումս ածեն։ Երեխե՛ք՝ Աստված ինչ մուրազ ունիք, է՛ն կատարի. ծառա եմ սուրբ Ծաղկեվանքի զորությունին, ո՞վ ա նրա դռնիցը դատարկ ետ դառել, որ մենք ետ դառնանք։ Մերն էլ մեր ուխտատեղերը, մեր սուրբ խաչերն են մնացել, որ նրանք էլ մեզանից երեսները թեքեն, էլ ո՞վ մեզ ճար կանի։ Հա՜ աչքներս լիս, մեր բանը խեր ա, էս ծիծեռնակը որ ծլվլալով վրըներովս թռավ, բարի նշան ա։ Աստված տա՝ մի տեղ հասնինք, ուխտըներս անենք, մատաղներս մորթենք, խունկ ու մոմ վառենք, քեֆ, քեֆ՝ էն ժամանակ պտի արած, էս ի՞նչ ա։ Ա՜յ տղա՝ տո մի սազդ քոքի՛ր, տեսնինք՝ Աստված ի՞նչ տուն ա տալիս քեզ։ Ցո օխտո տարի սուրբ Կարապետի պասը պահել, ուխտդ կատարել, գնացել, դիլակդ առել ես, էլ ի՞նչ ես ծուռ պահողի պես՝ բերանդ փակել. հունար ունիս, շհանց տո՛ւր, էլ ո՞ր օրվա համար ես պահում։ Ահա՜՝ աչքներս լիս, ճանճը թռավ, աչքս շլում ա, հմի՛կ որդս որ ա, ճամփորդ լիս կընկնի. անիծած ըլի՝ թե որ իմ դուշմանն էլ ըլի, չքաշեմ, չբերեմ, մեր գլխավերևը չնստացնեմ։

Դուք էստեղ կացե՛ք, ես մի սարը նի ըլիմ, աչք ածեմ, որ խոսքս սուտ չի՛ դուս գա։— Մի քիչ վախտ անց կացավ թե չէ՝ մեկ էլ էն տեսան՝ որ երկու մարդի թևիցը բռնած՝ քարքաշան անելով՝ բերում ա։ Արեգակը մի քիչ թեքվեց թե չէ՛, մեր ուխտավորքն էլ եդ ձի նստեցին։ Ջիու վրիցն էլ մեկ խելիմ տեղ դեռ իրար գինի, մաղա էին թավաղա անում, սազ ածում, քեֆ անում, ձի քշում, ջիրիդ խաղում, թվանքի ու փշտովի ձենը հո՝ երկինքն էր հասել։

Իրիգնահովն ընկել, արեգակը արևմտի դուռն էր հասել, որ մեր ուխտավորների տուտը Ծաղկեվանքա փեշը հասավ։ Ծաղկըների հոտն ու ալվան ռանգները, աղբըրների քչքչոցը ու ղշերի ձենը՝ մարդի հոգին ջանիցը հանում էին։ Շատը հենց ուխտատեղը տեսավ թե չէ, իսկույն ձիուցը վեր էկավ, ծունր դրեց, աղոթք արեց, մեկ խելիմ տեղ էլ չոքեչոք գնաց։ Էն անշունչ քարերն էլ աչք էին առել, ծիծաղում։ Մողնուցը մեկ քանի վարդապետ, տիրացու էին էկել, որ ժամ ասեն, պատարագ անեն։ Սրանք էլ պարկեշտությամբ դռանը կանգնել էին, էկողին աջըները տալիս, օրհնում էին, ու նրանց արևշատություն խնդրում։ Կնիկ, աղջիկ, տղամարդ, մեծ, պստիկ էնպես էին իրար խառնվել, ինչպես գառն ու ոչխար։ Քար չէր մնացել, որ չըլիվեին, հող չէ՛ր մնացել, որ երեսներին չքսեն, յա բերանները չքցեն. որը դոշին էր ծեծում, որը չոքած՝ աղոթք անում։ Ամեն մեկ քարի հազար մոմ կար վառած։ Էս էլ որ պրծան՝ էրիցը դուս էկան ու ամեն մարդ իր թաղարեքի հետ էր։ Ծեր մարդիկը վարդապետի մոտ գնացին, ջահելները իրանց դասթի միջում՝ ջուր էին բերում, կրակ վառում, հարսն աղջկերքն էլ իրիգնահացը պատրաստում։

Բայց ա՜խ՝ ինչ էս հաղաղին մեր Վանու հալն էր, Աստված ո՛չ շհանց տա։ Ինչ երեխությունից էնպես խուլ, մունջ՝ նրա սիրտը քրքրել էր, էս օր աչքի առաջին կենդանացել էր, հոգին տանում, ջանը հանում։ Էն ո՞ր հրեշտակն էր նրա աչքովն ընկել, որ լիսը չքաղեր, խելքը չմաղեր։ Ճամփի դեռ կեսը չհասած՝ հենց էջմիածնի դուզը հասան՝ ձիանը կատաղեցան։ Մեյդանը լեն, թամքի վրեն, որ մեկ թվանք էլ չտրաքեց, քառասուն ձիավոր, որը մզրախով, որը ջիգով՝ իրար ետևից ընկան, թոզ ու դումանն արեգակի լիսը կալավ։ Էն ղզղուն կռվումն էլ՝ էս կրակը չէ՛ր վառվիլ, ինչպես էս տեղ։ Ո՞վ չգիտի, որ Ջրենդհեցի Հայերը կտրիճ տղամարդ են, ու ձիու ղաշը բռածին պես՝ էլ ո՛չ սար աչքըները կգա, ո՛չ ծով։ Էնքան տղամարդի միջում էլ, Վանու հատը մեկն էլա չկար։ Յարաղ ասպաբի շողքը աչք էր քոռացնում. Նրա բոյն ու պատկերը՝ տեսնողի ուշք ու միտքը հետը տանում։ Քցած ջիրիդը էլ դարդակ չէ՛ր անց կենում։ Էս կրակված ժամանակին մեկ գել Սև ջրի ղամշի միջիցը դուս պրծավ, հարիր թվանք բաց

էլավ, գյուլլեն տեղ չի՛ հասավ։ Վանին ձին թռցրեց, թե ո՛ւր հասավ, էլ չի՛ հայտնի, մեկ էլ որ էն թռղակալած աչքը չի՛ բարձրացրեց, սար ու ձոր մեկ ծափ տվին, ծիծաղեցին, էլ եդ ձենըները կտրեցին, ինքը հո՝ տեղնուտեղը մնաց քարացած, կանգնած։

Նրա թմրրած աչքին էր տեսածը երազ թվում՝ սիրելի կարդացող, բայց օրը ճաշին նրազն ո՞ւմ աչքը կգա։ «Վանի՛, նեքսևիցը մեկ ձեն էր գալիս,— Վանի՛, քո սիրտը քանդողը էս անմեղ պատկերն ա, որ աչքը քեզ ա քցել։ Հեր չունի, անմեր, եթիմ ա, էս աղքատ հալևորն էլ, որ դրան առաջն ա արել, բոբիկ ոտով տանում, իրեք օր ա տանիցը դուս ա էկել, որ դրան էլ տանի ուխտ, որ Աստված բալքի դրա մուրազն էլ տա, դրան էլ մեկ ճար ըլի։ Մեկ շեն օջաղից էդ մեկ եթիմն ա մնացել, հերնըմերը ցավով հինգ օրվա միջումը կոտորվել, քեռի, հորախպեր կռվում, գյուլլի առաջին փչացել, մալ դովլաթ անիրավի ձեռ ընկել ու դա, էդ անմեղ հրեշտակը դռնեդուռն ընկել։ Վա՛նի՝ մտիկ արա՛ դրա էն արդար երեսին, դրա լուսաթաթախ աչքերին, դրա վարդագեղ բերնին, ու թե սիրտ ունիս, եդ դառի՛ր, տե՛ս՝ քար ու հող ի՞նչ կրակ են ածում գլխիդ»։

Ա՜խ՝ քարը բալքի թե ոտն առներ, եդ դառնար, բայց Վանին ո՞ւր կերթար։ Աղբյուրը առաջին էր քչքչում, արեգակը ետևին պլպլում, Վանու սիրտը արեգակից էլ ավելի էր բաց էլել, բայց շուտով ամպերը գլուխ բարձրացրին, շուտով նրա հոգուն չոքեցին։ Արտասունքն՝ աղբրիցն էլ ավելի էին զոռ տալիս, որ աչք ու սիրտ հովացնեն, բայց ներսի կրակն ու բոցը ցամաքացնում, ակը խավարացնում էին։ Ի՞նչպես մոտանար, ի՞նչպես հեռանար։ Ուխտավորների թողը քիչ քիչ մոտանում էր, ողորմելի երիտասարդի լերդն ու թոքը չորանում։ Նրա տեսածը մեկ տասնը հինգ տարեկան աղջիկ էր, ղորդ ա, շորերը կտրատված, երեսն արևն էրած, բայց աչքը որ աչքին չառավ, հազար թուր սրտումը ցցվեցավ, ո՛չ սպանեց, ո՛չ դուս ճոթռեց, որ մնացած հոգին ու ջանն էլ՝ նրա ոտի տակին տա։

Հալևորը՝ ճամփիցը բեզարած՝ քուն էր մտել։ Հենց գիտես, երկնքի լիսն երեսին պտտում ըլեր, էնպես անմեղ, հանգիստ էր նրա քունը։ Փարիխանը՝ (էս էր էն անմեղ հրեշտակի անունը՝) որ աշխարքումն էլ ոչով չուներ, էն ծերիցը սավահի, էն ոսկեթել գլուխը դրել նրա դոշին, մեկ ձեռով հով էր տալիս, մեկ ձեռով ջրի հետ խաղում։ Երկնքին նայելիս՝ հենց գիտեիր՝ նրա հոգին շնչի հետ դուս ըլեր գալիս, որ Աստանից խնդրի, էն հալևորի շվաքն էլա՝ իր եթիմ գլխիցը պակաս չանի։ Էնպես սաստիկ ձին փքշելով էլ էկել էր Վանին, բայց ջարդված ծերունին ոչինչ չէ՛ր իմացել, Փարիխանն էր ձենիցն իմացել, որ էկողը Հայ Քրիստոնյա պտեր ըլիլ, էլ չէ՛ր վախեցել, չէ՛ր իր բարի հոգեհոր քունը կտրել, մազն երեսին էր քաշել,

չունքի գլուխը գդակ էր, ու մոտումն անց կենալիս՝ բեղմաթիլ ունքի տակիցը աչքը մի պտտեց, որ Վանու ոտն ու ճամփեն բռնեց։ Խոսք բաց անէր, լեզուն չէ՛ր բռնում։ Տեսնում էր՝ որ էս էն պատկերն ա, որ իրան գիշեր, ցերեկ չէ՛ր բռնում։ Տեսնում էր՝ որ էս էն պատկերն ա, որ իրան գիշեր, ցերեկ չէ՛ր բռնում, բայց երեսին մոտիկ անելն էլ չէ՛ր համարձակում, չունքի երկուսն էլ ջահել, երկուսն էլ ղարիբ՝ էն ի՞նչ անսիրտ, անօրեն մարդ պտեր ըլիլ, որ անտես, անճանաչ աղջկա՝ օրը ճաշին՝ բաց աչքով մոտիկ անի, ո՞ւր մնաց, հետը խոսա։ Հայի արի՞ն չէ՛ր նրա սրտումը, որ էսպես անօրենք բանը բռնի։ Ջրին մոտանար, վախում էր, թե ջիվան Փարխիանը ահու՝ իր վաստակած հորը վեր կացնի, քնահարամ անի, ու նրա էկած ճամփեն, նրա կերած կաթն անիծի։ Հոգին վառվել էր, աչքը սևացել, ոտները քարացել, ձեռները թուլացել։ Ծարը որ կտրվեց, ծիու ջիլավն առավ ձեռը, մեկ քարի վրա թինկը տվեց, ձեռը ղոշին խաչեց ու էս բայաթին ասեց։

«Ի՞նչ արի, ա՜խ ինչ արի.
Ջեզ ա՜յ սարեր՝ ի՞նչ արի.
Թե մեղք ունիմ, հոգիս ա՛ռ,
Արի՛, հրեշտակ իմ՝ արի՛։

Սրտովս գնում ա՝ ա՜խ՝ արին.
Ո՛չ չար գիտեմ, ո՛չ բարին.
Աշխարս ա դառն, ու խավար.
Հոգիս, մարմինս ի՞նչ արին։

Ա՜խ սառն է, սառ էս գետին,
Ջիգյար չունի, մեր սրտին
Թուր ա խփում ու տանում,
Մեր թողը տալիս է՛ս գետին։

Ո՞ւմ ասեմ դարդս՝ որ լսի,
Էլ ցավս ուրիշի եդ չասի։
Թո՛ղ՝ սիրտս մենակ խավարի,
Հազարաթ մնա Քո լսի։

Կանաչել են սար ու ձոր.
Ես եմ ա՜խ՝ քո ուխտավոր.
Դու էլ թե ձենս չե՛ս լսիլ,
Թո՛ղ սպանեն ինձ սար ու ձոր»։

Ո՞ւմ անկաջն ընկներ էս ձենը, որ սիրտը փուլ չէր գալու Փարխիանի էրված սրտի յարեքը բաց էլան, աչքը ջրեց երկինքը էն անմեղ կույսը ու էլ չիմացավ՝ թե ի՞նչպես բերնիցը դուս էկավ։

«Յարեքս էլ եդ բաց էլան,
Ա՜յ իմ կորած ծնո՛ղք ջան՝
Ջուր հողն ինձ համար՝ ա՜խ փակվեց,
Աստղերն ձե՛զ համար բաց էլան։
Նթիմ, անտե՛ր՝ սուգ ու լաց
Թողեց աշխարս՝ քո մեռած
Սրտի համար, որ տանջվիս.
Էլ ի՞նչ տնիս, գլուխդ լա՛ց։
Ա՜խ սրտի պես ջուր արա՛,
Սրա ոտի հողն ֆուխա՛րա,
Էս Քրիստոնեն էլ չըլի,
Ա՜յ հող ինձ էլ ջուր արա՛։
Անցվորական՝ ի՞նչ ես արում
Թուրդ ու սիրտս կարատում.
Փչի՛ր, էս սհաթն հոգիս առամ՝
Որ ո՛չ հրում ա, ո՛չ արում»։

Էս խոսքը դեռ բերնումն էր, որ ուխտավորների տուտը բաց էլավ։ Ընչանք ա որ գետինը մի քիչ դըմբդըմբաց, հալևորն էլ քնից կշտացել էր, ոտնձենը որ անկաջն ընկավ, աչքը բաց արավ։ Ուխտավորներին տեսնիլը, գդակը վերցնիլը ու ձեռք դեմ անիլը մեկ էլավ, որ մեկ ողորմություն տանի Հարիր տեղից որը ստեկիք, որը թասը, որը փող դեմ արավ։ Վանին ուզում էր՝ իր բոլոր ջանն էլ նրան տա. չէ՛ր համարձակվում։ Հալևորն էն ա, տված բաների վրա մխիթարվել, օրհնում էր, որ գնացողների շատ փայն անց կացավ։ Վանու ոտը տեղն ու տեղը չորացել, ո՛չ առաջ էր գնում, ո՛չ եդ, որ մոր աչքը նրան առավ։ Նա էլ էս էր ուզում, շլինքը ծռել, մնացել էր քարացած։— Հա՝ ուզում ես՝ որ դրանց էլ հետըներս տանինք՝ Վա՛նի ջան,— որ մերը բերան բաց չարեց, քիչ պրծավ, ոտներն ընկնի, մոր դոշը համբուրի։— Քո խաթրը ե՞րբ կկոտրեմ՝ արևիդ մատաղ։ Վե՛ր կաց բա՛բի ջան՝ վե՛ր, էդ երեխեն էլ հետդ բե՛ր, ի՞նչ պատկեր ունի, հենց իմանաս, Աստուծո գառն ա. յարաբ ո՞ր ջրատար հերնըմերն են քեզ կորցրել, ա՜յ անմե՛ղ երեխա՝ երեսիցը հենց իմանաս՝ լիս ա վեր թափում։ Ա՜խ՝ հենց իմանաս՝ իմ կորած Հռիփսիմեն ըլի,— ասեց աստվածասեր կնիկը, աչքերը սարերին

քցեց, հալևորին մեկ ուլախի վրա դնիլ տվեց, Փարիխանին իր գավակն առավ, Վանու արտասունքը չորացավ, քյահլան ձին թև առավ, թռավ։ Փարիխանի ամեն մեկ գլուխը ժաժ տալիս, յա աչքը բանալիս, ուզում էր սար ու ձոր քանդի, տակ ու գլուխ անի, ընկերներին հո՝ ջրիդի տակին՝ քիչ էր մնացել՝ որ սպանի, որ մեկն էլ ա իր հալանածին մտիկ չանի, աչքով չտա, տամարն կրակի պես էր տալիս, աչքերը կայծակ էր թափում, բայց հենց Փարիխանին տեսնում էր թե չէ, յա մոտովն անց կենում, ոտ ու ձեռը թուլանում, շունչը բերնումը մնում էր կապված։ Սար ու ձոր յա երեսին վարդի պես բաց էին ըլում ծիծաղում, փայփայում, յա հենց իմանում էր՝ թե երկինք, գետինք կատաղեցան, իրար պտի ուտեն, Վանուն էլ հետը։ Էնպես հազար միտք սրտովն անց էին կենում, նրա արինը սառցնում, կամ վառում։ Ուր տեղ որ էլ վեր էին գալիս, նա երեխի պես յա ծուլըծուլ էր ըլում, յա ջրի ղրաղի, քարի վրա կանգնում, աչքերը գնում, խելքը մաղվում։ Ա՜խ՝ առաջին սե՛ր, ո՞ր կրակը էնպես կերի, կփոթոթի, ո՞ր թուրը էնպես լերդախորով կանի, ինչպես դու։

Ո՞ւմ Ծաղկեվանքի սուրբ սարը, նրա փշշած ծաղիկները, նրա երկնանման գլուխը՝ էնպես կքաշեր, կտաներ, ինչպես Վանու սիրտը։ Ճամփեն դառել էր նրա համար՝ մեկ տարվա ճամփա, ո՛չ պրծնում էր, ո՛չ հատնում։ Գեջղանգեջ հենց սարի դոշը հասան թե չէ, Վանին որ չոքեց ո՛չ, խելքը գլխիցը գնաց. չէ՛ր իմանում՝ թե յարաբ իրա մուրազն էլ տեղ կհասնի, թե չէ՛։ Ով խունկ ու մոմ կվառեր, մատաղ կմորթեր, նրա սիրտն էր մատաղ դառել, նրա շունչն ու լեզուն՝ խունկ ու մոմ։ Իրիգունը որ կրակի ծուխը, ճրագների լիսը, քամու սլսլոցը, ջրի քչքչոցը, մութն ու խավարը, աստղերի ծիծաղը, ծաղկների բուրվառը՝ իրար հի խառնվեցին, նրա հոգին էլ էնպես խառնվեց, էնպես իր ներսը տակ ու վեր արեց։ Խալխը՝ բեզարած՝ քուն էր մտել. Վանին էնքան իր սիրածի երեսին նայեց, որ մոր հետ քուն մտավ, հալևորն էնքան էր օրհնել նրան, որ քար ըլեր, կծաղկեր։— Ինձ արևշատություն մի՛ ուզի՛ր՝ ա՜յ ծեր. պապի,— ասում էր մտքումը, արևս էլ քո ձեռին, ջանս էլ, էս խավար սիրտը մի բաց արա, էդ արդար ձեռովդ մեզ մի օրհնի՛ր, մեզ ձեռ ձեռի տո՛ւր, հետո ե՛ս հոգիս հանեմ էդ քո մնացած օրերը մխիթարեմ։

Լիսնյակն Ալագյազի ծերիցը աչքը բաց արեց. Երևանու դաշտի երեսին ծովի պես կանգնած բուղը սիպտակեց, դառավ լուսակամար։ Գիշերվան ցողն հազար տեղից վռվռում, փլփլում էր։ Վանու աչքին էնպես էր երևում՝ թե երկնքիցը քուլա քուլա լիս էր վեր գալիս, հրեշտակի ձեն էր լսում, խընկան ծաղկի հոտ առնում։ Փարիխանի էն ցողաթաթախ, լուսակոլոլ երեսին

մեկ էլ որ մտիկ չարեց, մեկ էլ էն անմեղ պատկերը՝ որ շունչը քաշելիս՝ չտեսավ, ուշ ու միտքը գնաց։ Ինքն էլ չիմացավ՝ թե ի՜նչպես տեղից վեր կացավ, հեռացավ, բայց հենց մի քիչ ոտը փոխեց, հենց գիտես մեկը փեշիցը քաշեց, եդ բերեց, էլ եդ Փարիխանի մոտ չոքացրեց։ Թե ինչ բերնիցը դուս էկավ, ինքն էլ չիմացավ, բայց ով սիրտ ունի, նա կիմանա, նա կցավի։

«Լիսնյա՛կ՝ ի՞նչ ես դուս էկել,
Կանգնել, աչքդ բաց արել,
Որ իմ խավար սիրտս մաշես,
Ա՜յ երեսիդ մեռնեմ ես։
Քեզ ստեղծողն, լիս տվողն,
Որի ոտի ես եմ հողն,
Անշունչ տեղո՜ւդ, որ քեզ տվեց
Լիս. իմ շունչս ո՞ւր քաշեց։
Ա՜խ՝ մեկ աչքդ բաց անես՝
Տեսնիս իմ հալն, էլ եդ խփես.
Ա՜յ իմ սրտի դու քանդող՝
Քանի՛ քնիս, քա՛նի՝ օ՜խ։
Մեռնիլն ինձ ի՞նչ քյար կանի,
Դեռ քեզ չասած իմ սրտի
Խորհուրդն, ի՞նչպես հողը մտնիմ.
Էդ լիս երեսիդ մեռնիմ։
Արինս սրտումս ցամաքեց,
Երբ աչքդ քնին քեզ տվեց,
Թո՛ղ՝ երազում ա՜խ՝ տեսնիմ
Քեզ իմ դոշիս՝ ու փշվիմ»։

Վանին չէ՛ր իմանում՝ թե ձենը մոր անկաջն էր ընկել, անսաս աչքը բաց արել ու մտիկ անում, որ տեսնի, վերջն ի՞նչ կըլի։ Չէ՛ր ուզում որդու էն քաղցր ձենը կտրիլ տա։ Ողորմելի երիտասարդը էնպես կսկծու որ նղղաց ո՛չ, գլուխը իրան իրան ցածացավ, հենց իմացավ քար էր՝ որ երեսը վրեն դրեց, բայց՝ ի՜նչպես սասանած վեր թռավ, երբ Փարիխանը ոտը քաշեց։
—Վանի ջան՝ մեր տունը քանդեցիր, մեր անունը բեդնամ արի՛ր, էդ ի՞նչ հալի ես՝ քո մերը մեռնի,— ասեց ողորմելի կնիկը ու որ վրա չի՛ թռավ, որ որդուն եդ բերի, չունքի սա Փարիխանի ոտի շորշոփը որ չառավ, հենց իմացավ՝ հոգին էլ հետը քաշեցին, մեկ ախիցն ավելի՝ էլ բան չասեց ու ձորնըվեր ընկավ։ Էս ձենըձորը, ոտի շփլթոցը Վանու հոր անկաջն էլ ըն-

կավ, Փարիխանը հո՝ լեղապատառ՝ չէ՛ր իմանում, թե ուր կորչի։ Հալևորի ճառվը որ չընկավ, սա էլ դողդողալով աչքը բաց արեց, սրբեց, երեսին խեչը հանեց՝ ու հենց լսեց, ինչ անց էր կացել, ինքն էլ Վանու հորնը մոր ոտներն ընկավ։ Փարիխանն էլ ո՞ւր կը մնար, որ իր հերը գնաց։

Վանին էնպես ուշաչնաց մեկ քարի վրա ընկել, հոգու հետ կռիվ էր տալիս, մերը նրա գլուխը գոգը դրած՝ իրան սպանում էր, որ մյուսներն էլ հասան։ Ինչ ծնողքն էին անում՝ Աստված հեռու տանի, քար չմնաց, որ գլխներին չտան։ Հենց իմանում էին խաչն ա իրանց որդուն պատժել, գժվացրել։ Հերը չոքեց, հալևորը հետը, Փարիխանն էլ՝ էս հաղաղին՝ որ վախելու ու ամաչելու վախտը չէր, բայց ցավելու ու կսկծալու՝ ձեռները խաչեց, Վանու մոր առաջին չոքեց։ «Աստված՝ փառքդ շատ՝ էս սիպտակ մաղիս խեղճ արի, մեղավորը ե՛ս եմ, ե՛ս, ինձ պատժի՛ր, իմ գլխիս թող կրակդ վեր գա»։ Հերն էր գոռում, իրան կտրատում։ «Ո՜վ Մայր Աստվածածին՝ որ Քո ոտն ենք էկել, էս գերեզմանի դուռը հասած, աղքատ հալևորիս հոգին ա՛ռ, էսպես բարի ծնողաց զավակը մի՜ կորցնի՛ր, իրանց բաշխի՛ր, սրա ջիվան արևին խեղճ արի՛, սրա մուրազը ի՞նչպես ես իր փորումը թողամ, երեսս ոտիդ տակն՝ Աստված»,— հալևորն էր մղկտալով ասում։ «Ա՜խ ի՞նչ արի, ի՞նչ՝ տեր իմ Արարիչ Աստված՝ որ իմ ոտը որտեղ մտնում ա, էնտեղ ուզում ես քանդիլ։ Եթիմ, անտերին մկամ քո արեգակն էլ ա խեթ աչքով նայում։ Ո՞ւր ինձ սրան ռաստ բերիր, որ իմ մեղքի խաթեր, սա չարչարվի։ Բաս ընչի՞ էր երեկ էնպես ուրախ։ Ինձ որ չէ՛ր տեսել, իմ շունչը որ չէ՛ր իմացել, իմ դառը շունչը, սրա արդար սիրտը՝ ե՞րբ էսպես կպղտորվեր, ե՞րբ սա էս օրը կընկներ։ Հրես չոքել եմ առաջիդ. հերնըմերս գլխիցս պակասացրիր, ինձ որբ թողիր՝ իմ օրս խավարի, իմ աչքս դուս գա։ Ուխտ էի գալիս, որ մեկ ճար գտնիմ. դու էս ջիվան տղին ինձ ռաստ բերիր, որ իմ դարդին դարման անի. ա՜խ՝ քարանա՛ր թող ոտս, կուրանա՛ր թող աչքս, սա չի՛ ինձ տեսներ, սա՛։ Իմանում եմ սրա դարդը, էս գիշեր. էս գիշեր... ա՜խ... վա՜յ...»։

Ա՛խ՝ սա էլ էստեղ գնաց... Աստղերը պելացել, սև քարափների, խոր էրերի բերնիցը՝ հենց գիտես դժոխքն ըլեր քիչ քիչ բացվում, որ նրանց սաղ սաղ կուլ տա։ «Հա՝ ծառա եմ Քո սուրբ զորությունին՝ Մարիամ Աստվածածին, փոքր վախտից սկսեց Փարիխանը էլ եդ դելը տալ, ասիլ. գիտեմ իմ հորնըմոր աղոթքը դեռ ինձ վրա յա. ես ի՞նչ եմ, որ էսպես օջախի զավակ դառնամ, էսպես մեր ունենամ, էսպես հեր։ Իմ արևախաշ երեսիս, իմ կտրատված շորերին, իմ բոբիկ ոտներին՝ մտիկ անողը՝ ողորմությունից ավելի, ինձ ի՞նչ լայաղ կանի, որ հետս էլա խոսի։ Բայց ինչ իմ բարի հրեշտակն ինձ ասում ա, կանեմ, հրես դոշս բաց եմ անում, որ

ոտներն ընկնիմ, սա էլ թող եդ գա, որ իմ հալս տեսնի, ինձ տիրություն անի։ Ամա որ ինձ լայաղ չանի, ո՞ր ջուրն ընկնիմ, ո՞ւր կորչիմ»։

«Մեղավորիս ինձ նայի՛ր,
Աչքդ մի բա՛ց՝ ինձ նայիր։
Սիրտ սրտի որ մեկ ուզեց
Սիրածն՝ հո ա՜խ՝ իրն ա իր»։

Ասեց, ու Վանու մոր ճտովն ընկավ։

Բոլորի միջին հալևորի խելքն էր մի քիչ գլխին։ Նրա արդար հոգին նրան ազդեց, որ էս սրտի պատիժ չէր, սրտի պատիժ էր։ Իր հոգեորդու խորհուրդն էլ՝ իր բերնիցն էր լսել, էլ ի՞նչ բախտավորություն նրա համար սրտով կուզեր, քանց էս։ «Եթիմի տերն էլ դու ես՝ փառքդ շատ ըլի՝ Աստված». Հոգոց քաշեց ու աչքերը լիքը՝ տեղիցը վեր կացավ։ Վանին երազումը տեսել էր, որ մուրազի ոսկեթասը վարդ մանուշակով զարդարած իրան դեմ արին։ Մեկ քաղցր հով, որ երեսին էլ չփչեց, շունչը քիչ քիչ վրեն էկավ։ Ինչպես մեկ անուշ քնից որ աչքը բաց չարեց, հենց էն իմացավ, որ մեկ ձեռ իր ձեռը բռնել, մեկ հրեշտակ առաջին կանգնել, երեսը շուռ էր տվել։ «Աստված ձեզ ի միասին ծերացնի, ծաղկացնի»,— որ հալևորն էլ բերանը բաց չարեց, խոսքը բերնումը մեռավ, Վանու խելքը կորավ։ Ջափիցը դուս ուրախությունն էլ մարդու կթմբրացնի, ուր մնաց տրտմությունը, որ մեկ րոպեից առաջ՝ նրա հոգին առել էր։— Թե՞զ էր, որ տեսա՝ այ իմ հրեշտակ՝ ո՞ւր եմ, ի՞նչ տեղ, էս ի՞նչ ձեն էր, որ անկաջս ընկավ. էս ի՞նչ շողք էր, որ երեսիս դիպավ։ Էս անմահական հոտը ո՞ւմ ձեռիցն էր, որ քաշեցի։ Անիրա՛վ, սուտ երազ, ինչ ես ինձ տանջում, որ տեսածս էլ ձեռիս չի՛ մնալ, երբ որ աչքս բաց անեմ, չէ՛, չէ՛. երկինքն՝ իմ օջաղը, էս չիմանը, քարափը իմ դոշակը, ա՛չք՝ բաց մըլիք. ա՛րև՝ դուս չի՛ գաս։ Ո՛վ սուրբ գիշեր՝ ծածկի՛ր երեսս, ծածկի՛ր, որ էլ վեր չկենամ, էս երազումը մնամ։ Թո՛ղ՝ երազումը քո հասրաթին անեմ՝ ա՜յ իմ հոգի, իմ արև, էլ օրը, էլ արեգակը, էլ աշխարքս՝ ինձ չե՛ն պետքը, չե՞ն։ Վանին որ էսպես ուշագնա չէ՛ր խոսում, գիշերվա ժամի կոչնակը խփեցին,— թուլանար էդ ձեռքը, որ իմ հոգիս խառնեց, մուրազս կտրեց,— ասեց ու էնպես շշմած որ վեր չի՛ թռավ, ոտները մնաց գետնին կպած, որ Փարիխանն էր խոսել, գլուխը՝ մոր դոշին կպած. հերն ու հալևորը գլխին կանգնել՝ ձեն տվին։— Որդի ջան՝ ա՛չքի լիս. թե էդ էր քո մուրազը, մեզ ո՞ւր էիր սպանում, մեզ ո՞ւր սաղ սաղ գերեզմանը տանում։ Վե՛ր, վե՛ր՝ արի Մառալ, թո՛ղ քանի աչքս բաց ա, մեկ ձեր սերն էլ օրհնեմ, ձեր արևը ձենն ամենլիս տեսնիմ, ձեր

կարմիրը կապեմ, հետո հողը մտնիմ։ Արդարն արդարին կսիրի, եթմին պտի սիրտն առնիս, օրն ուրախացնես, մալ ու դովլաթ ի՞նչ զատ ա, երբ սիրտը իր ուզածը չի՛ ճարի, իր ղսմաթին ռաստ չի՛ գա։ Սա՛րեր, ձո՛րեր, ա՜յ սուրբ Ծաղկեվանք, ա՜յ Մայր Աստվածածին՝ ա՜յ Հայոց լիս աշխարհ, լիս հավատ, դուք սրանց քոմակ ըլիք, սրանց արևը պայծառ պահե՛ք, ես մեղավոր եմ, սևերես։— Ասեց բարեգութ հերն ու երկու զավակին էլ խտիտն առավ։— Քո մուրազն էստեղ պտեր կատարվիլ՝ Վանի՛ ջան,— մերը աչքը երկինքը քցեց, երեխեքանցը դոշին կպցրեց։— Հռիփսիմես նո՛ր գտա, փառ. քըդ շատ ըլի՝ Աստված. որդիքս էլ եդ չխտվեցին, էրնակ իմ աչքին, իմ արևին, էլ ի՞նչ դարդ ունիմ։ Սո՛ւրբ Ծաղկեվանք՝ թող՝ արտասունքս քեզ ասի, թե սիրտս ի՞նչ հալի ա։ Էնպես հրեշտակին ճարողը, որ դո՛ւ մեզ ռաստ բերիր, դո՛ւ մեզ բաշխեցիր, էլ ի՞նչ դարդ կունենա աշխարքումս։ էկե՛ք, ձեր ջանին մեռնիմ, էկե՛ք, ձեզ մի՛ դոշիս կպցնեմ, սիրտս հովանա։ Աստված՝ ինչպես տվի՛ր, էնպես պահի՛ր։

Սուրբ աղոթարանը հենց էն ա կարմրատակել, ճկճկում էր, որ մեր սիրահարքը առաջին անգամը իրանց օրումը կարող էին իրանց մտքումը համտատ ասիլ, թե ինչ իրանց սիրտն ուզում էր, ճարեցին։ Երկուսն էլ ամո. թու, սիրու՝ կրակ էին դառել, վըռշնել, աչքըները գետինը քցել, սիրտըները ծածուկ իրար գլխով պտիտ էին գալիս։ Առավոտու աստղն ու հովը՝ հազար տեսակ լիս ու հոտ նրանց երեսովն, շնչովն էին տալիս, ու նրանց բերնի ու սրտի անուշ հոտը ծաղկներին, սարերին, վերջ ամենայնի երկնքին տալիս։ Լեզվով ե՞րբ կարեին ասել, երբ կհամարձակեին, ինչ որ նրանց մտքովն անց էր կենում։ Նրանց ուզածը էս սհաթին, յա մեկ խոր քարափ էր, յա մեկ մութը մեշա, կամ մեկ հով՝ ծառի քոլգա, կամ մեկ ծաղկավետ ջրի, աղբրի ղրաղ. չայիր, չիման՝ որ ձեռ ձեռի տված նստին, ո՛չ խոսան, ո՛չ ծպտան, ո՛չ ուտեն, ո՛չ խմեն, հենց էնպես իրար նայեն, իրար սիրեն՝ ու ծառ ու թուփ, խոտ ու ծաղիկ, ջուր ու քամի՝ նրանց վրա խնդան, նրանց հետ ծիծաղին։ Ա՜խ՝ ո՞վ չի առաջին սերի համը տեսել, հարարաթն իմացել՝ որ էլ երկարացնեմ։ Ո՞ր անմեղ սիրտը չի՛ վկայիլ՝ թե էս երկնային կրակը, որ սֆթա մարդի հոգին վառում ա, մարդ՝ երկրումը ման գալիս, երկըն. քումն ա իրան կարծում։ Քունը սաղ ու քյամանչա յա դառնում, միտքը վարդ բացված, անմահական դրախտ, ապառաժ քարն էլ սիրտ ա առնում՝ մեզ ավետիք տալիս։ Սիրտդ հազար բան ա ուզում՝ սիրելուդ համար անի, ասի, լեզուդ, ձեռդ չի՛ զորում, շատ անգամ մարդ տխրում, սարե սար է ընկնում, թե տեսնի՝ սիրելին էլ կը գա, նրա վրա կցավի՞, նրան միտքը կբերի՞, թե սար ու ձոր իրան կուտեն։ Ամսով հետը նստած վախտն էլ, որ պետք է հեռանաս, հազար անգամ սիրտդ քաշում, երեսդ ինքն իրան շուռ

ա գալիս՝ որ մեկ էլ եդ դառնաս, մեկ էլ սիրելուդ շունչն առնիս, ոտը համ-բուրես։

էս հալումն էին մեր անմեղ սիրահարքը, որ հանկարծ, մեկ էլ որ աչ-քըները չի՛ բաց արին, ողջունի ձենն ընկավ անկաջները, ու ինչպես մեկ խոր, անուշ քնից երկուսն էլ վեր թռան, երբ մոտըների կանգնողները՝ գլխները մոտացրին՝ որ ողջուն տան, ողջուն առնին։ «Ա՜խ՝ թե էս մտքով էին առաջին մարդիկը ասում, «ողջոյն տո՛ւք միմեանց ի համբոյր սրբու-թեան», հրեշտակ էին նրանք, ու ո՛չ մարդ, երկուսն էլ մտքըներումն ասե-ցին։ Գիշերվա ժամը, պատարագի կեսն էլ անց էր կացել, մատաղների աղն օրհնել, պղնձները վրա էին դրել, եկեղեցին դառել էր լիս, խնկի, կնդրկի հոտը հոգի էր թմրացնում, մեր սիրահարքն էնտեղ կանգնած՝ ոչինչ չէի՛ն իմացել, ողջուն տալիս էլ՝ նրանց սիրտը հենց մեկ թըպրտաց ու էլի մտավ իր անուշ երազը։ Նրանք մինչև վերջը՝ է՛ն էին տեսնում, որ մեկ լուսաթաթախ հոգի՝ անմահական հոտով, վարդապսակով զարդարված՝ նրանց գլխին պտիտ էր գալիս, նրանց սիրտը հետը տանում, նրանց ան-երևութաբար ասում՝ որ արդար սերը աշխարիցս չի՛, երկնքիցն ա էկել, որ էլի մեզ երկինքը տանի, թե մենք նրա սրբությունը անարատ, անխախտ պահենք, մեր սիրտը չարին չտանք։ էս երազումն էին՝ որ բիրդանբիր խալ-խը իրար գլխով դիպավ, նրանց զարթացրեց։ Ժամի մեջտեղը մեկ ձեն էր գուս գալիս, որ ավելի հոգու ձենի նման էր։ Հազար թաքուն խորհուրդ, հա-զար մուրազ, խնդիր, մեղք էնտեղ էին լիս ընկնում։ Վանու, Փարիխանի անունն էլ որ չտվին, նրանց միսը սրսռաց, խելքները թռավ։ Բայց էս խոր-հրդավոր ձենը՝ նրանց օրհնում, գովում, սրբի կամքը հայտնում էր, թե «էնպես սեր ոսկեգրով ա երկնքումը գրած՝ երբ մարդ սրտին կհետևի, և ոչ մալի՛ կամ դովլաթի, աղքատի աչքը կօրբի, և ոչ հարստի արծաթին թամահ կանի, խղճին, եթըմին կբախտավորի, ու ո՛չ շենին էլ կխղճացնի, սիրով սերի գինը կիմանա, ու ո՛չ փողով, դրամով կառնի»։ էս ձենը ընկնավորի խոսքն էր՝ սիրելի՛ կարդացող. դու լավ գիտես՝ որ նրան հոգին ա տուն տալիս, նրա ասածը միշտ ճշմարիտ ա ու անպատճառ կատարվում ա։ Ի՞նչ կերպով, էդ իմ բանը չի, որ հարցնեմ, Աստուծո հրաշքը անքննելի ա, ես ո՞վ եմ, որ իմանամ, բայց դու լավ գիտես՝ որ ընկնավորի հոգին ա խո-սում, ու ո՛չ բերանը։

Ժամը դուս գալով էր, որ խալխը կրկին իրար գլխով դիպան. էլ պառ, էլ քար չէ՛ր մնացել, որ չհամբուրեն, երեսները չքսեն, շատ հարսն ու աղջիկ իրանց դոշի շարքն ու ճտի զինքսն էին էստեղ, էնտեղ՝ գանձանակի տեղակ վեր դնում։ Քանըսի, ա՜խ՝ քանըսի սիրտը սհաթի չարխի պես տպտպում էր, երբ էն ջրի տակն էր դնում, որ օչոռքիցը նրա վրա յա կաթում, ում մուրազը

պտեր կատարվէր։ Ով երկուհոգիս էր, տղա պտեր բերել, ով աղափ, իր նասիբը ճարել՝ հետ դառնալիս։ Շատի արտասունքը ուրախությունիցն էր կաթում, շատինն էլ տրտմությունիցը՝ որ ջուրը նրա վրա չէ՛ր կաթել։ «Իմ մեղքը շատ ա հոլըմաթ՝ որ Աստուծո ռահմն էլ, սրբի գութն էլ ինձանից պակասել են», էստոլ էին իրանց մխիթարում էս մուրազից ընկած ջրատարները։ Քանի աչք մեր Վանուն ու Փարիխանին էրնակ էր տալիս, ո՛վ կարա պատմիլ։ Բայց նրանք դեռ էլի ո՛չ իրար հետ նստիլ կարող էին, ո՛չ խոսալ, ո՛չ մոտիկ անիլ, չունքի սուրբ պսակն ու խաչ ավետարանը միայն կարեն էս իշխանությունը տալ, բայց հենց էս էր, որ նրանց էրում, փաթթում էր. սրտերն ուզում էին իրար կպչի, ազգի օրենքն ու ադաթը չէ՛ին թողում։ Ժամը դուս էկավ։ Կերակուրները հասել էր, հարիր տեղ խալեր բոլորեշուրջ, ջոկ ջոկ նստած՝ քեֆ էին անում, իրանց օրը խոշ անում։ Թվանքի, զուռնի, սազի ձենը երկինքն էր հասել։ Սար ու ձոր ցնծում էին, բայց մեր սիրահարքը էլ էս աշխարքումը չէին, որ էսպես հասարակ բաներին մոտիկ անեն։ Նրանց համար աներևույթ սազի ձեն էր գալիս. էն օրն էլ էս սրտով, էս քեֆով անց կացրին, ըիգնաժամը, մյուս օրվան աղոթքն էլ արին, ու ամենը մեկ կտոր օրհնած հող, խաչալվա, ու իրանց տան մնացողների մատաղի փայը՝ հացում, շորում, շուշում՝ վերցրին ու հազար անգամ ա՛խ քաշելով, էրի քարերը համբուրելով, երեսներին խաչը հանելով, գոշըներին ծեծելով՝ կամաց, կամաց ճամփա ընկան, ու դեմը գնում, դեմը երեսները շուռ տալիս՝ Մաղկեվանքա սարին մոտիկ տալիս, աղոթք անում, ա՛խ քաշում, աչքըներին հուփ տալիս, բերանները բաց անում։

Արեգակը մեր մտնելով էր, որ մեր ուխտավորաց ծերը՝ փեստի կարմնջի մոտ Զանգվի ղրաղն հասավ։ Ո՛վ Մարավ աղբրի գլխին մեկ անգամ նստել ա, կուզի որ սաղ տարին էն տեղ իր օրն անց կացնի։ Մեկ խաչի, սրբի գորությունն էլ սա ունի։ Սրանից էլ թուրք ու հայ, ով հավատով մոտանա, իր մուրազն առանում ա։ Ջրին մոտիկ անելիս՝ հազար բան ա ընկնում աչքովդ. շարք, փող, երկաթի կտոր, մեխ, ուլունք, ի՞նչ ասես՝ որ նրա միջումը չկա. որ բարեպաշտ ուխտավորը՝ էկել, մեջն ա քցել, ուխտը կատարել, գնացել։ Աղբրի գլխի քարը հո՝ սաղ տեղ չունի, էնքան մեխ ա մեջը ցցած։ Ով նրանց ձեռը տա, միջիցը հանի, ձեռը կչորանա, էնքան ա սրբի հրաշքը՝ Թանաքրա տակիցը մեկ քառան ոտը Զանգվի ղրաղիցը հեռու, աջու կողմիցը՝ Մուսթը շվաքի տակին դուս ա գալիս էս անմահական աղբյուրն ու, հանգիստ, մարմանդ՝ գնում, Զանգին թափում։ Նհախ տեղը չեն անունը Մարավ աղբար դրել, որ համ հոգով ա մարդիս ծարավը կոտրում, համ մարմնով։

Էնտեղ էր՝ որ պարոն Կարոն իր օղլուշաղի ու բարեկամների հետ՝

մտավ, բարդ, բուրգ վեր ածիլ, կրակը շաղ անիլ տվեց, որ վերջին գիշերն էլ էնտեղ քեֆ անեն։ Վաղուց էր նա սրտով ուզում, որ էս աղբրի համը մի առնի։ Շատոն ասեցին՝ որ էնտեղ չմնան, չունքի ոտի վրա էր, ու ղրաղ տեղ, թուրքերն էլ հո՝ գիլի սլես էին դժվժւում գիշեր, ցերեկ էս ձորերումը։ Բայց ռես Կարոյի անկաջը չմտավ։ «Տասը ձիավոր մենակ է՛ս թրիս ղուրբան կանեմ, ի՞նչ եք վախում», նրանց ասեց։ Վանու սիրտը՝ հենց գիտես նաս՝ իմանում ըլեր, որ նրանց գլխին մի բան ա գալացուկ, բայց հորիցը քաշվում էր։ Փարիխանին մոտիկ տալիս, սար ու ձոր նրա գլխին լալիս, վա՛յ էր տալիս, բայց ի՞նչ կարեր անիլ։ Հենց գիտես՝ Զանգին նրան ասում ըլեր,—«ա՛ռ սիրելուդ, նստի՛ր վրես՝ ձեզ տանիմ մեկ թաքուն տեղ, էս տեղ ձեր մահն ա, ո՞ւր եք կանգնել». բայց էլի հենց էս ֆքրումը՝ որ Զանգվի փրփրած ղրաղին չէր կանգնել, ու դեմը ջրին նայում, իր աչքի գետը բաց թողում, դեմը իր սիրելուն երեսը շուռ տալիս, ծուխը քթովը հանում, մեկ ձեռ որ ճառվը չընկավ, երկու գազ ծուլ էլավ։— Տո գիժ ես, գիժ. իմ տղեն ըլիս, ու է՞դ սրտի տերն։ Մինագիշերի՞ցն ես վախենում, թե Զանգվի խըշշալուցը. ջահելի գլխին խե՞լք կըլի։ Գդակդ կոտրի՛, բա՛ց քնի։ Քանի իմ ջանը սաղ ա, քեզ ո՞վ մեկ խեթ աչքով էլ ա մոտիկ կանի։ Արի՛, արի՛, գնա՛նք, քեֆ անենք։ Գեղը հասնինք, քեզ էլ քո մուրազին կհասցնեմ, էդուր համար ի՞նչ ես դարդ անում,— էս ասողը Վանու հերն էր։ Քարը ջուղաբ կտար, բայց Վանու բերնիցը մեկ խոսք էլ ա դուս չեկավ։

Գիշերվան մութը ձորամեջը խավարացրել էր։ Ամեն մեկ քարափ ու էր՝ բերանները գազանի պես բաց արել, մոտիկ էին տալիս։ Կրակը ճըրճըթալով՝ որ մուխը քուլա քուլա չէ՛ր բարձրանում ու բոցը ծառերին, ջրերին տալիս, հենց իմանաս՝ հազար տեղից՝ թուլի, հարամի, սատանա, քաչկեր՝ ատամները ղռչրտացնում, թրերը սրում՝ հաղրվում ըլեին, որ բիրատի նրանց վրա թափին ու հոգիները առնին։ Երկինքը, ղորդ ա՝ պարզ էր, բայց Աբարանու դհիցը մեկ սառը քամի որ վախտ վախտ չէ՛ր փոնչալով՝ էս քարերի գլուխը ծեծում, տերևները խշշացնում, հենց իմանաս՝ բոլորը բերան էր առել՝ ու ձեն տալիս, որ ամեն մարդ իր գլուխը պահի։ Բայց սազի ու դայրի ձենը մեկ դհից, Զանգվինը մյուս կողմից՝ էնպես էին մեր ուխտավորների միտք ու ականջ բռնել, որ թոփ տրաքեր մոտըներին, չէին իմանալ, չէին տեղըներիցը ժաժ գալ։ Սիրողներին էլ հո՝ ուրախ էր, ուրախ, էլ ի՞նչ էր պակաս։ Բայց ա՛խ՝ մարդ էն տեղը պտի միշտ ոյաղ կենա, իր գլխի թաղարեքը տեսնի, որտեղ որ փորձիք չունի։

Շատ ու քիչն Աստված գիտի, թե ի՞նչքան վախտ էր անց կացել, գիշերվա ո՞ր տեղն էր, հենց էն էր ուզում ռես (տանուտեր) Կարոն իր թասը խմի ու որդուն, հարսին օրհնում էր, մեկ թվանք որ չի՛ գռռաց, սար ու ձոր

զարզանդեցին ու քանից ավելի ձիավոր, փիադա Թարաքյամա Թուրքները պլոկած՝ յարաղ ասպաբ՝ կրակին տալով՝ վրա թափեցին։ Աստված ո՛չ շհանց տա. սար ու ձոր ոտն առան, որ փախչին, պրծնին, բայց մեր ողորմելի ուխտավորների համար ո՛չ փախչելու տեղ կար, ո՛չ ծածկվելու. անիրավ կրակն էլ՝ նրանց աչքերը բռնում, հարամուն պահում էր, իրանց լիս քցում։ Էնպես վախտը կիմացվի՝ թե տղամարդն ո՛վ ա, ո՛ւմ գլխումը խելք կա, կռնումը հունար։ Ում էն շրջափն դիպչեր, էնպես վախտին, հոգին էլ հե՛տը կտար, բայց Աստծուն փառք, Թվանքի գյուլլեն անկաչին քսվելով՝ որ անց չի՛ կացավ, քաջն ռես Կարո ասլանի պես տեղիցը վեր թռավ ու ընչանք Թուլին ձեռնե ձեռը կհասներ, նա էլ իր դասթեն հազրեց ու տասն բռաքե չքաշեց, թուր էր՝ որ չրխկում էր, արին էր որ շիթկում, ծկլակին տալիս։ Աստուծո ողորմությունիցը մեր տղերքը մեկ տեղ էին, թուր ու թվանք գլխավերևները՝ ծառերիցը քաշ։— Տղերք՝ ձեր արևին ղուրբան՝ մենք ուխտից, սրբի դռնիցն ենք գալիս, էս անիծածները՝ թուլությունից, հարամությունից։ Տվե՛ք, ջարդեցե՛ք՝ սրանց էկած ճամփեն քոռանա։ Ով իմ գլուխը սիրում ա, իմ հացը նրա աչքը բռնի, թե ձեռը ետ քաշի։ Գեղամիջին են սրանք ղոչաղ, չունքի ձեններս կարճ ա, էնպես տեղն ո՛վ կհարցնի։ Հարաքյաթ արե՛ք՝ ձեր ջանին մեռնիմ։ Քարերի տակը մտե՛ք՝ օղլուշաղներիդ մեջ արե՛ք. թե մենք կկոտորվենք, էն ժամանակը նրանց ճարն էլ՝ Աստված։ Ես ձեզ չլսեցի, ամա էս էլ մեկ ջոկ քեֆ ա, մեկ քանի շուն էլ ա կսատկացնենք, թո՛ղ՝ մեռնինք, սրտըներումս էլ ա դարդ չի՛ մնալ։ Իրեքը առաջիս թավալ են տալիս, ձեզ տեսնիմ, Ծարավ աղբրին էլ մեկ օր Թուրք մատաղ անենք, մեզ վրա չի՛ բարկանալ, չվախի՛ք։— Էս ասողը ռես Կարոն էր։ Նա որ էս սրտին էր էն ծեր տեղավ, Վանին ու նրա իգիթ ընկերները ի՞նչ հալի կըլեին։ Քանից ավելի էլ սրանք էին. բոլորը ջոկովի տղերք։ Հայն արինը աչքը չառնի, թե չէ սար ըլի առաջին, չի դիմանալ։ Կրակը հենց էն սհաթին ոտնատակ տվին, երբ հարամին վրա տվեց, ու ամենը մեկ քարի տակ մտան։ Թվանքի գյուլլեն կարկտի պես էր վեր թափում։ Հարամին հենց իմացավ՝ թե բիրադի վրա տալովը՝ նրանց հախիցը կգա, բայց աչքը դուս էկավ, ինքը մնաց կրակումը, բաց տեղը, գյուլլի առաջին։ Իրան քցածը քարին էր դիպչում, մեր տղերքանցը՝ նրանց գլխին, կամ դոշին։ Ետ դառնալ չէ՛ր կարելի, չունքի չորս կողմը փակել էին։ Բոլորն էլ պտի մատաղ ըլեին՝ որ էս հաղաղին մեկ բարակ ձեն ա՜խ քաշեց, ծղրտաց ու մեկ Թարաքյամա ուրախ ուրախ ձեն տվեց,—ես իմը ճարեցի, դուք ձեր գլուխը լաց էլե՛ք։ Սարդարին էնպես խնձոր մեկն էլա դեռ փեշքաշ չի՛ արել։ Ով ձեռին ճար ունի, հետս գա, դրանցից մեզ խեր չի՛ ըլիլ։ Էս խոսքերի մի-

ջովն էր մեկ բարակ, կտրված ձեն գալիս. —Վա՜նի... Վա՜նի... ա՜խ... ինձ տարան... ո՞վ ինձ ճար կանի...

Վանին Ջանգին էլ ընկներ, ի՞նչ կճարեր։ Կատաղածի պես դյում էլավ։ Ռես Կարոն ու մյուսները հարամու ոտն էին ուզում կտրել, ի՞նչ կիմանային։ Տարաբախտ երիտասարդը թռավ, ո՞ւր. ինքն էլ չէ՛ր գիտում։ Հարամու որը կոտորվել, որը փախել էր, որ մեր քաջ ուխտավորքը դեչղանգեջ՝ քարերի տակիցը դուրս էկան, կրակ վառեցին, բայց գիշերը խավար, Ջանգին կատաղած, ձոր ու քարափ՝ խոր, ծառ ու ջանջալ ամեն տեղ բռնած, Փարխանն ու Վանին, խալխի աչքի լիսը՝ կորած, բաթմիշ էլած, ո՞ւր գնային, ո՞ւր գտնեին։ Ողորմելի հերը՝ որ Վանի չէ՛ր ձեն տալիս, գլխին տալիս, ջրատար մերը, որ Փարխան չէ՛ր կանչում, քարերին ծեծվում ու լալիս, սար ու ձոր հետըները սուգ էին անում, կրակ վեր ածում։—Սարեր՝ գլխիս քանդվեցեք, քարեր՝ հոգիս հանեցե՛ք, թո՛ղ ես էլ ա՜խ քարացած էստեղ մնամ. ինձ թաղե՛ք։ Վանի՝ արի, ջանս հանի՛, քեզ տամ հոգիս, ու Ջանգվի միջին իմ գլուխս ես թաղեմ, էլ լաց ու սուգ չլսեմ։ Վա՛նի՝ ա՜խ աչքս դուս հանի՛. ջանիդ մեռնիմ, ո՞ւր տանի էս ջուրն ինձ։ Էս հողն ի՞նչ անի, որ մնացինք անորդի։ Ո՛չ ջուրն ա ձենս՝ ա՜խ՝ լսում, ո՛չ քարն իմ ցավս իմանում, ես եմ ուզում, սիրտս ճոթռեմ, ձեռս բռնած չեն թողում։

ԹՈՒՐՔԻ ԱՂՋԻԿԸ

(Զրուցյուն կռնի)

Ամառն էկել էր, սիրտս էլի մթնել։ Տարվան ո՛չ մեկ ժամանակը էնքան ինձ չի՛ տանջում, ինչպես ամառը։ Ձմեռվան ցուրտը, բուքը, սառը եղանակը, չանգը՝ զորդ ա՝ ծանր են մարդի համար, բայց հենց արևը մեկ քաղցըր աչքով որ մտիկ չանում, բոլոր տխրությունը, բոլոր մեր սրտի մթությունը երկնքի հետ պարզում, անց ա կենում,— ու ո՞վ չգիտի՝ որ ցուրտը մարդի մարմինը պնդացնում, զորացնում ա։ Ո՞վ չգիտի, թե ո՛րքան հիանալի ա աշխարը, ի՞նչպես ա մարդիս հոգին քաշում, վերացնում, զվարթացնում, երբ գարնան զովարար հովը փչում, սար ու ձոր իրանց մահվան քնիցը վեր կացնում, ձին ու սարից հալցնում, նոր հոգի, նոր կյանք տալիս բոլոր բնությանը։ Ո՞ւմ սիրտը չի՛ վերանում, զարմանում, աչքը ծովանում, երբ Մայիսի առավոտը փանջարեն բաց անելիս՝ տունը անմահական հոտով ա լցվում, օթախը՝ երկնային լուսով, անկաչը՝ հազար տեսակ ձենով, աչքը հո՝ էն ալվան ծաղկներր ու կանաչ խոտերը որ չի՛ տեսնում,

ուզում ա թախտ, աթոռ, փառք, մեծություն, փափուկ տեղ ու բարձ թողա՛,
ու դուս վազի, գետինն ու հողը լիզի, համբուրի, երեսին քսի, չոքի, Աստ-
վածափառաբանի, պաշկի անույշ երազ տեսնի։ Ո՛վ, ա՞խ, ով կուզեր՝ որ
էն թագավորական լաջվարթ, ոսկեվարաղ ամարաթը, էն սուփրեն ու սե-
ղանը, էն սազն ու քյամանչեն՝ մեկ ձորի հետ փոխի՝ որ գարնան ժամա-
նակին բացվում՝ հազար տեսակ ծաղկներով լցվում, զարդարվում ա, որ
բյուր տեսակ թռչունք գլխավերևն են ծափ տալով՝ խայտում, ցնծում, եր-
գում, պարզ, արծաթանման աղբրները աչքի առաջին են քչքչում, ու ճրագի
պես վառվում, օղը մեկ կողմից ա իր կենդանարար հովը փչում, ամպը
մյուս կողմից իր երկնային ցողը վեր ածում։ Աշունքն էլ՝ զորդ ա՝ իր
տխրությունն ունի, մարդ չի կարում սրտին հուփ տալ՝ որ հանգստանա,
դարդ չանի, չունքի բոլոր իր հույսն ու մխիթարությունը, իր գանձն ու
դովլաթը երկրին ա պահ տալիս և ձեռը ծոցին կանգնում, ղրաղից մտիկ
անում, որ տերևները քիչ-քիչ դեղնում, թառամում, վեր են թափում, ծա-
ռերն իրանց պտղից ու զարդարանքից են զրկվում, դաշտ ու ձոր իրանց
կանաչ ռանկից ու ալվան ծաղկներիցը։ Քամին մեկ կողմիցն ա իր դառը
շունչը ցույց տալիս, ամպերը մյուս կողմից իրանց նոթերը կիտում, գըլ-
խըները բարձրացնում, թնդվում, շարանում — ամա աշունքն ա, որ մարդիս
դառն աշխատության և քրտինքով դատած, վաստակած պտուղը հասցնում՝
իրան ա տալիս, որ աչքը կշտանա, սիրտը մխիթարվի, մարմինն էլ եդ զո-
րություն ստանա, էլ եդ ուրախ ուրախ իր հանդին մտիկ անի, ու հույսը չի
կորցնի, թե նրա աշխատությունը ձնի ու սառցի տակին կփթին, կփըչա-
նան, իր աչքը մեկ խեր չի՛ տեսնիլ։

Բայց ամառը, տոթագին, կրակ ամառը, զորդ ա՝ մեր պտղըները հաս-
ցընում, մեր սիրտն ումուդ ա քցում, բայց մեր համոքերն էլ հետն ա չորաց-
նում, մեր աղբրներն ու գետերն էլ հետն ա ցամաքացնում, էրում, խա-
շում, երկրի երեսը, դաշտի խոտն ու ծաղիկն անձողի պես սևացնում, խո-
րովում ու շատ անգամ՝ որ սիրտդ ու բերանդ բաց ես անում, որ շունչ
առնիս, կրակ ա գլխիդ վեր գալիս, կրակ բերանդ թափում, բոց ոտիդ տա-
կին վառվում, ցողի ու հովի տեղը մահվան տաք քամին երեսիդ փչում,
շունչդ կտրում, արինդ ցամաքացնում։

Էսպես մեկ ամառվան օր էր, որ քաղաքի շոքն ու կրակը շունչս բե-
րանս էր հասցրել, ինձ խեղդում էր, որ գժվածի պես ընկա փողոցե փողոց,
քուչա քուչա, որ գնամ մեկ հով տեղ գլուխս վեր դնեմ, մի քիչ շունչ առ-
նիմ։ Շատ անգամ՝ որ ամառը թուլանում, ինձանից գնում էի, ուզում էի
գլուխս մահու տամ, որ պրծնիմ էս դառն աշխարքիցը, հենց կարծում էի,
թե ես եմ մեղավորը, ես եմ չար անօրենը, որ էլ աշխարքի չէի կարող

պետքը գալ, ուզում էի շուտով էլա ոտս քաշիլ, գնալ։ Գիշերն երազն էր
ինձ տանջում, ցերեկը իմ միտքը, իմ չար միտքը։ Աստված, երկինք, դժոխք,
արքայություն, սիրելի, բարեկամ սրտիցս էնպես էին քաշվում, ջնջվում,
որ հենց իմանում էի՝ թե էս դինումն ինձ մեկ չարա չի՛ ըլիլ։ Քարերն ու
անբան անասունքն էլ աչքիս գրող էին երևում։ Ամեն մեկ ոտս փոխելիս՝
ամեն մեկ շունչս քաշելիս՝ էնպես էի կարծում, թե հազար թուր սիրտս են
խրում, հազար ձեռ գլուխս բանցկում, հազար թշնամի եդևիցս վազում, եր-
կինք ու երկիր գլխիս փուլ գալիս՝ որ ինձ տակով անեն։ Ում մեկ ծանր խոսք
էի ասել, ով ինձ մեկ խեղ աչքով նայել էր, ինչ բարեկամից թուղթ էի ստա-
ցել, պատասխանը չի՛ գրել. ինչ մտքումս դրել էի ու չէի՛ կատարել, աշա-
կերտի էի նեղացրել, ծառայի էի մեկ թթու ջուղաբ տվել. ծառայությունս
չէի օրինավոր կատարել, յա մեկ գործ էս օր վաղը քցել, բոլոր, բոլոր
գալիս՝ առաջիս կանգնում էին ու հոգիս էլ՝ որ ասում էի տամ, հենց
իմանում էի, թե էլի ինձանից ձեռ չեն վերցնիլ, էլի հոգս նրանք կհանեն,
կրակ կտան, բարեկամք ինձ երախտամոռ կկանչեն, գլխավորք ինձ ծույլ,
անպիտան կհամարեն, ամենն էլ կուրախանան, որ ինձանից շուտով պրծան։
Որ լսում էի՝ թե մեկ մարդի պատիժ տվին, յա բանդը քցեցին, որ ասում
էին՝ թե Ռուսաստանիցը մեծ մարդ ա էկել, որ մեր երկրի ահվալն քննի,
իմանա, որ կուսակալիցը, յա նախարարիցը (մինիստրիցը) մեկ թուղթ էր
գալիս, որ կառավարությունիցը (դերեկցիիցը) ստորոժը գիրքը կոնտակին
աչքիս չէ՛ր երևում, էնպես էի սարսափում, կարծում, թե էս ա, իմ վերջի
օրը հասել, մոտացել ա, իմ արած չարությունը լիս ընկել, Պետերբուրգ,
Մոսկով, Թիֆլիզ ինձանից գանգատով լցվել են, իմ բարեկամքը ինձանից
ձեռք վերցրել, իմ թշնամիքը ինձ մատնել, ինձ պետք է՝ տանեն սաղ սաղ
թաղեն, յա կախ տան։ Աստված իմ թշնամուս չի՛ տա էսպես սիրտ, էս-
պես միտք։ Երևակայությունը մարդիս ո՞ր դժոխքը չի՞ տանիլ, եդ բերիլ։
Ինձ պահողը հենց էս էր՝ որ ասում էի՝ թե մտքումդ դրել ես ազգին պետքը
գաս, մեկ անուն թողաս, կմեռնիս, մեկ վրեդ կանգնող, ողորմի տվող էլ
չի՛ ըլիլ։ Ապրի՛ր՝ որ ասածդ անես, մուրազդ առնիս։ Էս, էս էր ինձ ամեն
դժոխքից, պատուհասից ազատում, հոգիս եդ բերում, թե չէ Քուռը վաղուց
կըլեր իմ գերեզմանը։ Լսող, կարդացող՝ թո՛ղ ինձ դնամիշ չանեն՝ որ իմ
մեղքս իմ բերնովս եմ խոստովանում։ Մարդ իրան սիրտը որ փակի, ո՞վ
կիմանա, ո՞վ կզգա՝ թե նրանում ի՞նչ կա։ Բայց էսպես դժոխք սիրտ՝ Աստ-
ված ո՛չ տա, ո՛չ ստեղծի։

Մեկ օր էլ էս կրակը ջանս էր ընկել, սիրտս էրում, փոթոթում, ինչ-
պես ասեցի, որ տանից, տեղից, դուս ընկա, ու դեպի թագավորական՝ բաղ-
նիսների եդևի բաղը երըմիշ էլա։ Քուչա, փողոց գերեզմանատուն էր դառել։

Երկնքիցը կրակ էր վեր թափում, երկիրը տաքացած պղնձի պես ոտիս տակը կրակում։ Ամենը քուն էին մտել, որ ճաշվա շոքն անց կենա։ Բաղի մուշա կամ ջուր կրող էին մնացել էս մեռլատան բնակիչն ու շունչ քաշողը, որ իրանք էլ գերեզմանից դուս քաշած հարիր տարվան մեռլի պես շունչ ու ուանկ կորցրած՝ կամ կիսաչան ոտը ոտի առաջն էին դնում, կամ մեկ քարի վրա նստում, շունչ քաշում, գտակները վերցնում, քրտինքները սրբում, կամ թե ա՜խ ու ո՜խ քաշելով, դես ու դեն տմբտմբալով, օրորվելով իրանց ճամփեն գնում։

Իմ բախտիցը Թագավորական բաղի դուռը բաց էր։ Մտա ներս, բաղմանչուն գլուխ տվի. սուտ, որ ինչ ա, չբարկանա ու ծառին, քոլին մտիկ տալով, ընկա դարըդուս, որ կարծիք չտանի, թե բան կգողանամ։ Հասարակ մարդիքը ի՞նչպես արդար են ու պարզամիտ։ Էնպես էի անում, որ իմանա՝ թե ես մեկ գիտուն մարդ եմ, դնացել եմ, որ սար ու ձորին մտիկ տամ, յա սիրտս բացվի, յա մեկ նոր շնորք վեր առնիմ։ Բոլոր մհանա էր։ Աստված որքան ողորմած ա, որ մարդիս էնպես սիրտ ա տվել, որ փոքր բանով էլ, իսկույն իր տրտմությունը ցրվում, միտքն ուրիշ տեղ ա քցում։ Օգոստոս ամիսը, հավողի ճթերը հազար տեղից կախ ընկած, ես էլ մրգի գերի, փորի գերի, ո՞վ ըլի, որ սրտի ծերը չէրի։ Քարափի տակի ընկուզի ծառն ու հավողը աչքիս տակն էի առել, ու դեմը գնում, դեմը աչքըս եդևս, չորս կողմս քցում, որ տեսնեմ, թե բաղմանչին հո չի՛ գալիս, ծառերի տակին հո մարդ չկա, որ ինձ տեսնի։ Հարամ ըլի էսպես ահն էլ, էսպես իշտահն էլ։ Մեր փորը փոր չի՛, ջրհոր ա. ձեն տաս ձեն չի՛ տալ. ինչ տիլ ու ախպ միջիցն էլ հանես, խոտակես, էլի մյուս օրը իրան իրան կլցվի, ընչանք տերը հանգը հունց կանի։ Ինչ և իցե, աչքդ ուզածդ չտեսնի, թե չէ՛ սիրտդ՝ չաքուչն առած, գլխիդ կանգնած ա, կտաս, շնորհակալություն չանիլ, չե՛ս տալ, գլուխդ կպատռվի. լավն էն ա, որ մարդու ո՛չ աչքը բան տեսնի, ո՛չ սիրտն ուզի։ Ամա էդ էս աշխարքումը ո՛չ պատահել ա, ո՛չ կպատահի։ Քանի աչքդ բաց ա, փակ չի, մեջքդ լեն, շլինքդ վրեն, ինչքան ուտես, էնքան կուզես—

Ա՜խ՝ ի՞նչքան խոր ա մարդիս սիրտը, ի՞նչքան անքննելի, անիմանալի։ Մեկ րոպեից առաջ կրակ էր գլխիս վեր թափում, դետինը բերանը բաց արել, ինձ ուտում, ամպ ու կայծակ փորումս հազար տեղից տրաքում, լերդս ու թոքս կրակ տալիս, հիմիկ բոլորն, բոլորն կտրվեց, վերջացավ, գարնան օրվա պես պարզեց, լուսացավ, երեխությունս միտս ընկավ, բաղմանչին տուն մտավ, հավողի շաղ շաղ, սև սև ճլմկոտած ճթերը ցրվեցին սրտիս հոքսն ու ցավերը, ու նստած տեղիցս, ընկուզու տակիցը հարիր անգամ շլինքս երկարացրի, էլ եդ քաշեցի, ծղլուրդ էլա, ծլունկ էլա ու, Աստուծո փառք, մարդ չտեսավ։ Պատիկ ժամանակս բոստան շատ էի կտրել, քա-

նաքոցոնց ավելի անուշը հո՝ Երևանումը տանձապող են կանչում։ Տանձ ըլի հավող ըլի. հեսաբի բան չի՛, ատամներիցդ չե՛ն իմանալ, փորիցդ չե՛ն հարցնիլ։ Բայց վա՜յ նրան՝ որ փորձանքի կպատահի, կերածն էլ, մարսածն էլ քթովը կհանեն։ Երեխե՛ք, ձեզ եմ ասում, ձեր արևի՛ն ղուրբան՝ արածս չանե՛ք, թե չէ կփոշմանեք։

Բոստան գող գնալիս, կամ տանձ գողանալիս՝ ղորդ ա, քոթակ շատ էի կերել, ամա էլ եդ մոռացել։ Երեխին շաքար տուր ձեռը, թեկուզ հարիր անգամ գլխին բռնցկի, հարիր փետ էլ ոտին խփի, էլի մեկ սհաթից հետո ցավը կմոռանա, բերանը կքաղցրանա։ Ամա մեծին ի՞նչ անես, որ էսպես ջահելություն անի։ Սիբիր չեն տանիլ հավողի խաթեր, ամա վրեն կծիծաղին տեսնող լսողներ։ Թո՛ղ՝ ինձ վրա ծիծաղին, որ ուրըշները վախին, չաղին։ Հազար անգամ թուք մուր, մեկ անգամ օրինակ տո՛ւր. էս մեկը շատ բան կտեսնի, քանց մեկ կարաս խրատ, մեկ ջվալ ղաբըհաթ։

Մատներիս ծերերը դառել էր ինձ համար թառլանի թև. յավա՜շ, յա՜վաշ փեշերքս էլ վեր քաշեցի՝ որ թփի, քոլի չդիպչի, չխշշա, ուսուլով վեր էկա ու հավողի բարունակի տակը մտա։ Եզովբոսի աղվեսը ինչպես էր իր ագռավի պանրին մտիկ անում, էնպես էի ես էլ իմ հավողի ճթերին նայում։ Բայց վազը անկաչ չունի, որ խաբվի, ով ուզենա քաղի, պետք է ոտները հանի, ծառը նի ըլի, սատանական էսպես բարձր էր՝ իմ սիրուն, իմ ուզած հավողի վազը։ Լերդս կատիկս էր թռել, շունչըս բերնիս դեմ ընկել, թուքս չորացել, երեսս թան դառել, էլի անիրավ փորս իր զուռնեն էր փչում ու ներսևիցը հարայ տալիս, գոռում, ղոռում։ Դես ու դեն մեկ էլ աչքս քցեցի ու յալահ՝ վազնըվեր շուլալվեցի, ինչ կըլի, կըլի՝ մտքումս ասեցի։ Ձեռս ճթին հասավ, ջանս դող ընկավ, ամա բանը որ թարս գա, սատանեն ի՞նչ անի, մահանեն ի՞նչ։ Կոթին էի զոռ տալիս, գիլեքն էին լալիս. ղվաթս էի փորձում, ճիթը սաղ սաղ հալչում։ Ա՜խ՝ էն հաղաղին թե մեկ չխպլիկ (դանակի կտոր) էր ձեռս ընկել, հազար անգամ կպաչեի, ճակատիս կդնեի, ու ալմազե թրի հետ չէի փոխիլ, էն էլ չկար, սատանին նալաթ։ Տո սատանեն ի՞նչ անի, ինձ մեկ ասող ըլի. էսպես ա, լեզվըներս սովորել ա, մենք գոփում ենք, սատանին դմփում։ Ախր ո՞վ չուզիլ, որ մեկ ղոթուր էշ էլա ունենա, որ ընկած տեղը, բեռը նրա քամակին դնի, ինքը դինջանա։ Շատն էլ հո՝ իրանք էլ են վրեն նստում, իշին բզում, թեկուզ ոտին անի, թեկուզ գլխին, թեկուզ տրտինգ, թեկուզ տրինգ։ Իշի քամակը բարակ, նստողի ոտները երկար, էլ ի՞նչ կուզի թամք ու օրզանգու։ Փալան էլ չըլի, բանդ երըմիշ կըլի։ Դու քո բանը տե՛ս, ես իմ հավողը քաղեմ, քեզ չթաղեմ. բանս շլոր էր, ճթի կոթը գոռ. քիչ էր մնացել էն չար սհաթը, հավողի վազը անիծելով վեր գայի, ատամներս բերնումս եռացին — ա՜խր բարկացած էի չէ՞... Աչքդ բարին

տեսնի, ղասաբն իր մսին էնպես վրա չի՛ թռչում, ինչպես ես իմ ճթին. բայց սև ըլի էն ճիթն, ինչպես սև էր. իմն ինձ հասավ, դուշմանիդ գլխին չգա։ Փիս բանն էսպես ա, ինչքան ծածուկ էլ մարդ գործում ա, էլի էնպես ա իմանում, թե իր շվաքն էլ ա իրան ուտում, ինչպես իմն ինձ կերավ։

Հենց ստամս ճթի կռթին հասավ, հենց մեկ ղոնաղցրի թե չէ, թուփը որ տակիս բեշաֆիլ չխշշաց ու մեկ թրփթրփոց անկաջս չընկավ, ճութն իր տեղը մնաց կախ ընկած, ես գետնի վրա՝ գլուխս շշմած էնպես կոլոլվեցի, վեր ընկա։ Գետինը որ պատռել էր, ինձ ներս տարել, անիծած ըլիմ, թե էնտեղ էլ՝ խունկ ու մոմ չէի՛ առել, վառել, ծխել, մխել, յա չի՛ չոքել՝ սատանին ուխտ արել՝ որ ինձ պրծացրեց. չունքի սատանական գործքի եղևիցը ման էկողը սատանի դուռը պտի գնա, որ սևերես չմնա, ու սև սպիտակին չի՛ սիրիլ. սպիտակը սևին, է՛րնակ իմ սև օրին. էս օր սատանի աչքը քաղցր էր ինձ վրա։ Հա՛ կա՛ց ու քեֆ արա՛,— հենց իմանում էի, թե ինձ կապեցին, թողեցին, երեսս մուր քսեցին, գլխիս ջուր ածեցին, աչքերս սևացել էր, ատներս քարացել, բայց ամեն դոսթ, դուշման էն բարի սհաթին ռաստ գան, ինչ ինձ ռաստ էկավ. եդ մտիկ տամ, տեսնիմ որ մեկ գոմփոռ շուն մեկ սև կատվի՝ հե՛տ ածավ։ Դե՛, հա՛ կա՛ց ու շարժե վախեն կանչի՛ր. թփերն էլ հետս ծափ տվին, ցնծացին, ծառերն էլ վրես ծիծաղեցին, տնաղ արին, որ մեկ եքա մարդ՝ մեկ կատվից էսքան վախեցավ, լեղապատառ էլավ։ Հենց նրանց չգրու էլի՝ ոտ ու գլուխ հավաքեցի, էլի իմ վազիս խառեցի ու գլխին նստեցի։ Կատվի՞ց... շանի՞ց... մարդ վախենա... կերած հացը հարամ չի՞ էնպես մարդի։ Ա՜խ սիրելի՝ կատուն ո՞վ ա, շունն ո՞վ. փիս մարդի խղճմտանքը, խղճմտանքն ա իրան չանգռում, իրան կծում, փիս գործքի կիրին նալաթ։ Ատամներս իրանց բանը տեսան, փորս իր մուրազն առավ, ռանկս տեղն էկավ, հանաքն անց կացավ, բերանս քաղցրացավ, չանս դինջացավ։ Էլ ահ ու դող չունեի, ուզածս արել էի, մեղքս գործել. ծառը չէ՛ր ասիլ, ես էլ հո՝ էլի ինչպես մեկ մարդ՝ բանից բեխաբար, վազին էլ՝ չէի մտիկ անում, որ իմ արդարությունը կարծիք չտա — ընկա էլ եդ սարնըվեր, սարնըղուս ու էկա մեկ կանաչ տեղ նստեցի, աչքս թուրքերի գյուղխանին քցեցի։ Ա՜խ՝ ի՞նչ կըլեր որ չէի՛ արել, ու տուն դնացել։

Էլ եդ շոքը զոռ արեց. տաք քամին երեսիս փչեց, սրտիս չոր քամին լերդիս ու ջիգյարիս, էլ եդ տրորեց, էլ եդ միտքս ու սիրտս՝ ինչպես մեկ կատաղած ծով իրարոցով քցեց։ Քարափի բռչերը մեկ կողմից էին գլխները բարձրացրել, լուռ, մունջ մտիկ տալիս, գյուղխանի գերեզմանաքարերը առաջիս լավել, պապանձվել, չոր, էրված, խոռովված սարն ու ձոր՝ մեկն իր մեռած գլուխը ցույց տալիս, մյուսն իր ճոթռած սիրտն ու դողը։ Լազգի, թուրք, ղզլբաշ, սոմանցի մեկ կողմիցն էին թվանքի, թոփի գյուլլին

զոռ տալիս, գոռում, հայ, վրացի, ոս, փշավ, իմերել մյուս կողմիցը՝ իրանց կրակը բաց արել՝ էկողին չարդում, մոտանողին գյուլլախորով անում, հասնողին՝ յա գլուխը փորը խրում, յա իրան սաղ սաղ բերդը քաշում։ Ղշղրուն, հարայ հրոցը, ձենը ձորը անկաջ էին խլացնում։ Սար ու ձոր դըմբում, դրնգում, մարդի ուշ ու միտքը գլխիցը թռցնում էր։ Որի մազիցն էին բռնել քաշ տալիս՝ որի թևիցը ձգում կախ տալիս, որը որդու եղևիցն էր լալիս, որը գլխին վեր հատում՝ սիրելուն տանելիս։ Դառն ժամանակ, գնաս, ո՛չ եդ գաս։

Գյուղխանումը ֆոր են փորում։ Հալբաթ մեռել պետք է թաղեն։ Թուրքլի, Աստուծու պատկեր չի՞, մեռելին տեսնողը բաս սո՞ւք չանիլ, կծիծաղի՞։ Հրեն նաշը դուս էկավ։ Մոլլեքն առաջին տխուր, գլխները կախ քցած՝ գնում են։ Տարական, ժամ չե՛ն ասում, բայց ա՜խ, ինչպես են գլխներին ծեծում, ի՜նչպես կուտալ կուտալ գալիս, իրանց ջարդում, սպանում։ Մեկը մազերն ա ցրվել՝ ձգում, պոկում, մեկը դոշը բաց արել՝ կտրատում, իր միսն ու արինը վեր ածում, ու ամեն մեկ սրտաքոքին, գլխին տալիս՝ քարերն էլ են ձեն տալիս, ղարղանդում, մղկտում, քարափներն էլ։ Մեկը դեմը պար գալիս՝ խանչալ ու թուր հանած, ձեռին բռնած, դեմը ընկնում գետնի վրա, մեյդի առաջին թավալ, թավալ տալիս, ոտ ու գլուխ քարերին ծեծում։ Մեկը բայաթի կանչում, երեսը դուս ճոթռում, մեկը գլուխն առել՝ վազում, որ քարափներովեր ընկնի, չե՛ն թողում, ձեռիցը բռնում, եդ քաշում։ Նաշը ֆորի բերանը հասցրին. Ա՛րարիչ՝ ի՞նչպես լռվեցին բոլորը։ Մոլլեն աղոթք ա անում. աղոթքը բերան ու սիրտ փակե՞ց, դարդ ու կրակն հանգցրե՞ց. չէ՛. ո՞վ սաղացրեց, ո՞վ բժշկեց էս բույեի միջումը։ Մեռելի հոգու համար աղաչանք են անում. ի՞նչ ազգ իր աղոթքին էնպես արի, էնպես ճիշտ, էնպես ջերմեռանդ ա, ինչպես մահմեդականը։ Մոլլեն կարգը կատարեց, պրծավ, մեյիդը գերեզմանն են դնում, ով անկաջ ունի, թո՛ղ խլանա. էս լացին, էս արտասունքին, էս կսկծալուն, էս մղկտալուն քարը չի՛ դիմանալ։ Խաղաղություն հոգուդ՝ հանգուցյա՛լ մարմին, ա՜յ իմ պատկերակից հողածին։ Հավատներս մեկ չի՛, սիրտըներս հո մեկ ա, մեր ժամը չէ՞իր գալիս՝ մեկ երկնքի տակի, մեկ երկրի երեսի էիր հո ինձ հետ կենում, ման գալիս. լեզուդ իմը չէ՛ր, պատկերդ, հոգիդ հո իմի՞ցն էր։ Տերտեր չի՛ քեզ թաղում, մոլլեն էլ հո աղոթք անում, չի՛ հայհոյում։ Խաչ, ավետարան չկա վրեդ, միևնույն հողի տակը չե՞ս մտնում, ուր որ ես էլ պտի մտնեմ։ Խունկ ու մոմ չե՛ն վառում, չե՛ն ծխում, մկամ ա՞չք չի՛, որ վրեդ լալիս ա, սիրտ չի՞, որ քեզ համար էրվում ա։ Բաս ես քա՞րի պես պտի քեզ նայիմ, որ քրիստոնյա եմ, ու աչքս չխփե՞մ։ Գնա. ո՛վ մեզ ստեղծել ա, էն բարի Արարիչը՝ որ քեզ էլ ինձ հետ իր լուսովը լիս էր տալիս, իր քաղցր աչքի տա-

կին պահում, քեզ համար էլ ունի տեղ, բնակություն, որ քո՛ վարձքն էլ տա։ Երկնքի վարձքն ու փառքը բարյաց համար ա։ Թե բարի էիր, չե՛ս կորչիլ։ Գնա՛, երկիրը քեզ էլ մոր պես անփորձ կպահի մինչև գալստյան օրը։

Բայց ա՜խ՝ մեռլատերերը հո գնացին, հոս ար ու ձոր դինջացան. էս ի՛նչ նոր ձեն ա, որ անկաջս ա ընկնում, սիրտս խորովում։ Երազ չի՛ տեսածս, օրը ճաշ, արեգակն առաջիս։ «Անա (մայր) ջան, անա՛ գյոզմ անա, ջանմ անա՛. աչքերիցս արին ա գնում, սրտումս կրակ ա վառվել, ի՞նչ կըլի, որ Աստված հոգիս առնի, որ յա քեզ՝ մեկ էլ տեսնիմ, յա հողը մտնիմ, պրծնիմ։ Անա ջան՝ անա՛, կրակ ա վեր թափում գլխիս, ձենս լսող չկա. դու էդքան մոտիկ, ինձ մեկ ջան ասող, հալս հարցնող չկա։ Ձենս անկաջդ ա ընկնում՝ աղիզ ջան, դու էդտեղ էրվում, ես էստեղ. բայց ա՜խ՝ իրար սուք լսում ենք, իրար չե՛նք կարում տեսնիլ։ Ա՜խ՝ ընչի՞ չի՛ աչքս քոռանում, ընչի՞ չե՛մ գետինը մտնում։ Աթա՛ (հայր), անիսաֆ աթա, ճամփեդ քո՛ռ ըլի։ Աթա. էս ո՞ւր բերիր ինձ, էս ո՞ւր քցեցիր ողորմելուս. էս ի՞նչ թուր ցցեցիր սրտումս, որ կտրատում ա, բայց ա՜խ, վա՜խ, չի՛ սպանում, չի՛ վերջացնում, որ քո երեսիցը, քո դառն երեսիցը քո անաստված ձեռիցը պրծնիմ մեկ օր առաջ, ու ես էլ էս մեռելների ղաթարումը պարկիմ... Աթա՛... աթա՛... անա՛, անա՛... հարա՛յ... դա՜թ...»։

Էս ձենն էր՝ որ շոքի բերանն ընկել, սար ու ձոր մղկտացնում — էն էլ է՛սպես ժամանակին, է՛ս սհաթին, որ ղուշը տեղիցը չէ՛ր եռում. ծառերի տերևները՝ հենց իմանաս՝ չորացել ըլին։ Ու ի՜նչպես խորհրդավոր ձեն—ի՜նչ անիմանալի խոսքեր։ Գերեզմանից չէ՛ր գալիս, լավ էի իմանում։ Աչքս վրիցս թռել՝ սքացողին պտրտում, ման էր գալիս, բայց քարափները որ ձեն չէին տալիս, չէ՛ի իմանում՝ էրերն են ինձ խաբում, թե իմ միտքս։ Էսպես մոլորած, շվարած մնացել էի, որ աչքս ընկավ թագավորական բաղի դիմացի խարաբեքանց վրա, որ գյոռխանիցը երկու ոտ հեռու չի ըլիլ։ Է՛նպես տեղից է՛սպես ձե՞ն, որ իսանաորդին մոտիկ անիլ էլ չի՛ ուզիլ։ Հենց իմանում էի քաշկեր են խարաբեքանց միջին թախ կացել։ Աչքիս դեռ չէ՛ի հավատում, որ գեջդանգեջ տեսա, որ մեկ ջան քարերի միջին նստած՝ դեմը գլուխն էր ծեծում, դեմը դոշը կտրատում։ Մեկ էլ որ լավ մոտիկ արի, ու անկաջս ինձ քաշեցի, բոլոր կարծիքս վերջացավ։ Ո՜վ ըլի, թո՛ղ ըլի. սրա դարդը ընչանք չիմանամ, չե՛մ գնալ ըստեղանց, ասացի ու թև առա։ Բայց ի՞նչպես ճամփա գտնիլ. բաղը մեկ դուռն ուներ, դենը գնայի, պտի կրկին քաղաքը մտնեի ու բաղնների գլխովը գայի էնտեղ հասնեի. ընչանք էն վախտը բալքի նա գնացած ըլեր։ Հետո՞... հո շատ օր պետք է մաշվեի, տանջվեի, որ նրա դարդը չիմացա։ Բալքի թե նրա դարդը իմիցն

ավելի՞ էր։ Ցարալուն յարալվի սիրտը թեզ կհասկանա։ Երկու պստիկ դուռն էլ կային, ամա կոխպած, ո՞ւմ ասեմ, ո՞ւմ խնդրեմ։ Էլի երեխությունս միտքս բերի. թե գող էլ կանչեն՝ ասեցի մտքումս՝ գողությունը հո արել ես, պատովն էլ թռի՛ր, ընչանք եդևիցդ կհասնեն, դու էլ հո ոտն ունիս, ձեռք էլ հետը, յա փախի՛ր, յա կպի՛ր. մեկ ճիթ հավողի խաթեր հո մարդ չեն սպանիլ։ Ասիլն, անիլը մեկ էլավ. ձորն առաջիս բաց էլավ. լավ էր, որ ոտս չկոտրվեցավ, չունքի պատը բավական բարձր ա։ Ոտս էլ որ կոտրվեր, չէ՛ի իմանալ, ջանս էնպես տաք էր։ Մեկ քանի լոք էլ որ տվի, խարաբեքն առաջիս կանգնեցին. իմ սքացողին աչքս տեսավ. բայց իրեք գոմփոռ շուն էնպես վրա էկան ինձ, որ ուզում էին երեսս վեր բերեն։ Շան հետ վազուց էի բաղումը հեսաբս դրստել ու իմ օրումը շանից չե՛մ վախեցել, չե՛մ էլ վախենալ, բայց ում ուզում էի, ալբեալ գյում էլավ։

Ռսի սերթուկը հաքիս, շապկեն գլխիս, երեսս անմիրուք, ես տղամարդ. խաչապաշտ, նա աղջիկ մահմեդական, բաս ի՞նչ կաներ, որ չէ՛ր փախչիլ։ Բախտիցս քարեր շատ կային. շները դեն արի, խռկեցի, էս խարաբի առաջին՝ հասա, կանգնեցի, բայց հիմիկ եմ իմանում արած գժությունս ու զարզանդում. մահմեդականի, ասիացու տանը օրը ճաշին աղչկա եդևից ընկնիս էնպես ղրաղ տեղ, ռսի շորով՝ ո՞վ պետք է ձեռը բռնի, որ տան տերը փորդ վեր ածի, յա գյուլլեն սրտումդ ցցի. քի՞չ ա սպատահել։ Քաղաքումը ղաբուլ չե՛ն անիլ, հայ քրիստոնեն չի՛ տանիլ, ո՞ւր մնաց չոլումը, էն էլ մահմեդականի տան։ Ի՞նչ անես, բանը բանիցն անց էր կացել, ես դրան առաջին կանգնել, շլինքս ծռել, շորերս էլ որ հին ըլեր, հենց կիմանային հաց եմ ուզում, յա ջուր։

Բա՛ջմ (քույր իմ), սկսեցի թուրքերեն ասիլ ու գլուխս տան դըռնովը ներս տանիլ, բա՛ջմ, թե չար մտքով ըլիմ էստեղ էկած, ո՛չ էսպես գյոռ, էսպես մեկ բուռը հող աշխարքումն ինձ փայ ըլի։ Հայ եմ, եվրոպացի չեմ, քո երկրացի, քո համշարի, մեկ հողի, մեկ ջրի որդի։ Քո կսկիծը, քո ձենն ինձ էրեց՝ բա՛ջմ. ջանս ուզես, քեզ կտամ, գլուխս ուզես՝ կծախեմ, ես չե՛մ էկել, որ քեզ ինջմիշ անեմ, քո յարափալու փարալու սրտին դհա ավելի ցավ հասցնեմ։ Իսանաորդին, որ իսանաորդու սուքը տեսնի, ու դարդ չանի, արտասունքը տեսնի, ու ինքն էլ լաց չըլի, ձենը, էն ողբալի ձենը լսի, ու ինքն էլ հետը չմղկտա, նա էլ ի՞նչ Աստված կունենա, ի՞նչ հոգի, ի՞նչ հավատ։ Քո դինը ու մասաբը գիտենա, ա՜յ, էս երկինքը՝ որ գլխըներիս կանգնած ա, էս արեգակը, որ մեզ լիս ա տալիս, էս հողը, որ մեզ մեկ օր երկուսիս էլ պտի թաղի, բաջի՝ Աստված, երկինք վկա են, որ ես ուրիշ մտքով չեմ առաջիդ կանգնել։ Կուզես՝ դուռդ վրես փակի՛ր, թե ամաչում ես, յա վախենում, կուզես՝ թո՛ղ՝ ես գնամ, ղրաղ կանգնիմ, երեսդ կալ, աչքդ

փակի՛ր, ու հետո տեղանց էլա ինձ ասա՛, ինձ պատմի՛ր քո սրտի ցավը, թե ձեռիցս գա՝ բա՛չի, Աստուծո սուրբ անունը գիտենա, կմեռնիմ, քեզ մեկ ճար կանեմ։ Ասա՛՝ գլխիդ ղուրբան, ասա՛, երեսս ոտիդ տակը։ Հենց իմանում ես, ամեն չալ բան օ՞ձ ա, որ կծի, ամեն պսպղուն բան թո՞ւր ա, որ կտրի. չէ՛, ես էլ մարդ եմ, հորնըմոր, քիր ու ախպոր տեր. որդի, օղլուշաղ չունիմ, ամա մարդ հենց օղլուշաղ պտի ունենա, որ սրտումը գութ ըլի։ Թուր խրես սիրտս, չե՛մ հեռանալ, քարով ինձ հետ ածես, չե՛մ ձեռք վերցնիլ, դուռդ վրես հետ անես, էս շըլումը կմնամ, էս օր չասես, էս գիշեր էլ կմնամ, մինչև քո ցավը չիմանամ, չե՛մ հեռանալ, չե՛մ գնալ։ Թե եթիմ ես, արի՛, քեզ պահեմ, թե հիվանդ ես, թո՛ղ գամ քեզ ծառայեմ, թե չէ, էդ ջահել, ջիվան հասակիդ, էսպես օրը ճաշին, էս շոքին, որ ջանավարը բնիցը չի՛ դուս գալիս, ղուշը տեղիցը չի՛ եռում, դու նստել, սուգ ես անում, ա՜յ իմ սրտի քանդող՝ ի՞նչպես էդպես ձենը լսեմ ու հանգստանամ։ Թե քո հավատը չունիմ, քո պատկերն ունիմ, թե թուրք չեմ, հայ, քրիստոնյա, մկամ թուրքին Աստված կա, հային չկա՞։ Թե տղամարդ եմ, էնդուց ես քաշվում՝ բա՛չի, ա՜չքի լիս, չար տղամարդը, վատ հոգին ցերեկը, լուսով, էսպես չի՛ գալ մարդու դուռը, էսպես չի՛ աղաչիլ։ Դարդդ ասա՛. թե էլ ինձ տեսնես քո օրումը, թուր ա՛ռ, ինձ սպանիր, ինձ կրակը դի՛ր, էրիր. թե ձեն տամ, ո՛չ մեկ էլ էս օրին հասնիմ, քո ցա՛վը տանիմ, չե՛մ գնալ, չե՛մ գնալ, ոտդ կհամբուրեմ, գլխովդ պտիտ կգամ. ասա, որ իմանաս՝ թե մենակ քո ազգի սրտումը չի՛ Աստված ռահմ, ջիգյար ստեղծել, հայ քրիստոնեն էլ սիրտ ունի, հայ քրիստոնեն էլ ցավ կիմանա։ Ասա՛, գլխիդ մեռնիմ։ էս թաղածների սադաղին ասա՛, ինձ մի՛ մաշիր, մի՛ սպանիր։

Ինձ էնպես էր երևում, որ երկար վախտ մտքի հետ կռվում ու չէ՛ր իմանում՝ թե օտար մարդը, քրիստոնեն ի՞նչպես թուրքին քոմակ կանի, որ էնպես միմյանց հակառակ են, միմյանց հավատի թշնամի։ Բայց հետո էլ տեսնում էր բալքի, որ բերանս չէ՛ր մենակ խոսում, սիրտս էլ, աչքս էլ։ Ինձ համար չե՛մ ասում, օձն էլ իր թույնը կթափի, երբ լեզուն ուղիղ ասի, ո՞ւր մնաց ադամորդին, է՛ն հալին, է՛ն դառը հասրաթին, որ երկուսի սիրտն էլ՝ կրակի պես էրվում էր։ Սուտ են ասել՝ թե ասիացի կինը մարդ տեսնելիս՝ ուղում ա, նրան կտրաքի, աչքն ու հոգին լավ իմանում են, թե ի՞նչ պառուղ ա կամենում իրանց հալալ սիրտը հարամացնի, իրանց անմեղ հոգին դառնացնի։ Ասիացի կինը հրեշտակ ա, սուրբ հոգով մոտացի՛ր, սրբի պես կտեսնես նրան, օձի պես սողա, նրա աչքը բոց ա, շունչը կրակ, ձեռը թուր, նա քեզ կէրի, նա քեզ կկտրատի, նա քեզ կխորովի. ես էսպես եմ տեսել, էսպես տեսա էս օր էլ, նհախ տեղ չեմ իմ երկրացի

աղջիկ, կինարմատի՝ գովում։ Վատ հոգին ամեն տեղ կա. չոռոտ պտուղը ամեն ծառի վրա։

— Ձեր խաչին ղուրբան՝ ա՜յ հայ քրիստոնյա. ձեր ժամի հողին երեսս մատաղ՝ ա՜յ անծանոթ ղարիբ,— գեջդանգեջ սկսեց իմ ցավալից աղջիկը, իմ սիրուն թուրքի աղջիկը, գլխին տալ, գոռալ, ծնկին վեր հատիլ, ասիլ.— Ա՜խ՝ էն ի՞նչ բերան էր, որ ձեզ օրհնեց, որ էդպես ազգ ունենաք, էդպես հավատ, էդպես եկեղեցի, էդպես սուրբ օրենք։ Հենց մե՞զ էր Աստված իր աչքիցը քցել, իր սրտիցը հանել, մեզ անիծել, որ էնպես օրենք ունենանք, է՞նպես հավատի ծառայենք, որ ո՛չ ծնող ա հարցնում, ո՛չ որդի, ո՛չ սեր, ո՛չ կարգ, ո՛չ աղոթք, ո՛չ պսակ։ Անա՛մ ջան, անամ (մեր) երաբ որ որդիդ կրակումն էրվում ա, փոթոթվում, երաբ որ դժոխքն ամեն սհաթ չանգերը քցած, ինձ ուզում ա տանի, ուտի, փչացնի, դու էլ իմանո՞ւմ ես, քո սուրբ, քո ազիզ երեսին ղուրբան։ Տունդ աչքիս առաջին, տեղդ տասը գազ հեռու՝ բայց ա՜խ՝ վա՜յ... գազան հեր ա Աստված ինձ ռաստ բերել, որ ո՛չ սիրտ ունի, ո՛չ գութ։ Հայվանն իր ճուտին սիրում, պահում ա, նրա ցավը քաշում, նա ինձ է՛ստեղ ա բանդը, կրակը գցել, էրում, տանջում, քեզ էդտեղ՝ տանից, տեղից հեռացրած՝ դուս արած՝ իմ կարոտով քե՛զ մաշում, խորովում, քո ազիզ սիրովն իմ սիրտս անշեջ բոցի մեջը քցել՝ սպանում։ Քո տան դռնեցը դու ես ինձ մտիկ տալիս, քեզ ու քեզ կտրատում, էս խարաբիցը ես եմ քո շվաքին նայում, նվաղում, օրը հազար անգամ դժոխք ու անդունդ մըտնում, մաշվում, էլ եդ դուս գալիս, մղկտում, պլլթում։ Դուռդ գամ, դու չե՛ս ինձ մոտ թողալ, հարևաններդ կտեսնեն, դու գաս ինձ մոտ՝ սար ու ձոր բերան կառնեն եդ կասեն ու մեր անգո՛ւթ հերը, մեր անօրեն դահիճը թե իմանա, քո արինը ինձ կներկի, իմ մարմինը քեզ կդառնա գերեզման։ Ընչի՛, ընչի՛ ինձ աշխար բերիր, ինձ կյանք տվիր, որ իմ կյանքն էլ էսպես խավարի, քո արևն էլ։ Ո՛չ երկինքն ա մեր ձենը լսում, ո՛չ երկիրը մեր առաջին ճաքում, ո՛չ հրեշտակ մեր հոգին առնում, ո՛չ սատանա մեր տուն ու տեղը կրակ տալիս, ո՞ւր գնամ, որ քեզ մոռանամ, ո՞ւր ըլիս, որ ինձ չերևիս, ո՞ր աշխարքում, ո՞ր պուճախում։ Թև չունինք, թռչինք, սար ու ձոր ընկնինք, թո՛ւր չունինք, որ մեր սիրտը մենք ճոթռենք, վեր ածենք. վե՛ր ածենք, որ մեր արինակեր հոր աչքը մեկ օր կշտանա, մեկ օր չար սիրտը հովանա, մեր սև օրը վերջանա, նրա սև հոգին ղինջանա։ Դանակը կոխեմ ջիգյարս՝ ա՛նա ջան, բաս մեկ ա՜խ էլա չքաշես, մեկ ձեն էլա չտաս, ո՞նց մտնիմ հողը, ո՞նց թաղեմ իմ գլուխը։ Հե՛ր, հե՛ր՝ ո՛ր չար սհաթին արևի լիսն աչքիդ ընկավ, շունչդ էս աշխարքի օդի հոտն առավ, որ էդպես ջիգյարդ քարացավ, սատանեն էկավ, սրտումդ բուն դրեց, քո սիրտը դժոխք դառավ,

քո միտքը անշեջ կրակ, որ ո՛չ մոր սուգ ա իմանում, ցավում, ո՛չ որդու կսկիծ, արտասունք տեսնում, սիրտը մրմնջում։

Ինքը դուռն երեսիս հետ արած թողել գնացել ա, հաց ու կերակուր ինձ համար լեղի,էն էլ ա ձեռիցս խլել։ Առավոտը մթնե մութը գնում բազարը, րիգունը մթնե մութը՝ մրրած, փրփրած գալիս, ու աժդահա օձի պես պատից, դռնից հոտ քաշում, որ տեսնի՝ թե հո մարդ չէկել էստեղ։ Հայ քրիստոնյա, քո հավատին, քո անումին ղուրբան, քո խաչը, քո սուրբ հավատն ա քեզ պահել, մեկի հալբաթ մեկ սառը ջուր ես տվել, որ նրա խերը առաջդ ա էկել, թե չէ քունն էր թուրը, քո կյանքն էր թվանքը։ Գնա՛, հեռացի՛ր՝ թե քո արևը, քո Աստվածը, քո սո՛ւրբ հավատը, իմ էրված օրն ու ումբրը կսիրես, <թե> իմ մեկ սհաթ ումբրը քո աչքին քաղցր ա։ Գնա՛, հեռացի՛ր. թո՛ղ՝ էս հողը, էս խարաբեն, էս գյոռխանեն ըլին իմ գերեզմանը, իմ պահարանը, իմ դժոխքը, իմ տանջանքը։ Հալբաթ մեկ օր էլա մեկն ու մեկը կքանդվի, ինձ տակով կանի։ Հերս չարասիրտ ա, անգութ անողորմ, վրես չի՛ լար։ Մերս հեռու, տանից դուս արած, օլքից, ալամից, ղովում ղարդաշից զեն քցած՝ որ վրես սուգ անի։ Իմ սուգը՝ ես պետք է անեմ, իմ հողը՝ ես պետք է տամ գլխիս, իմ մարմինը՝ ես պետք է թաղեմ, կորչիմ, ֆռրեմ, պրծնիմ։ Ինձ ո՞վ արեց չարա, որ դու անես, դու ա՞յ աստվածասեր հայ, քո դնին, մասաբին ղուրբան, քրիստոնյա հայ։

Մոլլա, ախունդ ինձ չօգնեցին, Մուշտեիդ, ղուրան, իմամ, իսլամ ինձ ճար չարին, էլ ալամ մեջ ընկան, իմ հերս չլսեց, մորիցս ինձ զրկեց։ Հերնըմերս գլխիս, ես եթիմ, անտեր, անճար, անքոմակ, սոված, ծարավ, որ օրենքն ու հավատը մարդի սիրտը չկապեն, որ Աստված ու մեչիդ նրան չար ճամփից եդ չքբերեն, որ Աստծու տված սերը, Աստծու դրած սիրտը մարդ ու կնիկ չկապեն, հեր ու որդի իրարից հանեն, մերը որդու համար տանջվի, մեկ հուքմ չունենան, չթողան, հերն իր ձեռովը իր տունը քանդի, իր դուռը շարի, քյաբով, ղուրանով առած կողակիցը՝ էլ եդ բաց թողա, էլ եդ անհաց, անջուր, չիփ չփլաղ տանից, տեղից դուս անի, օրվան հացին կարոտ՝ սար ու չոլ քցի, ու նրանից բերած, նրա կաթնով մեծացրած որդին, նրա դառը քրտնքով պահած ապրացրած, ջրից, կրակից դոշին, գրկին թափած, պրծացրած զավակը՝ գլխին տա, ձեռիցը խլի, ու երեսն երեսի հետ էլա, լեզուն լեզվի հետ էլա՝ տեսնիլ, խոսալ չթողա, վա՛յ էսպես աշխարքը քանդվի, էսպես կաթը հարամ ըլի, էսպես կյանքն ու օրը փուչ ըլի, էսպես օրենքն մարդի ու Աստուծո առաջին սպարտական, էսպես հողն անիծած՝ սատանայի փայ, էլ ի՞նչ կարող ես դու ինձ անիլ, ա՛յ քո էկած ճամփին, քո ստեղծող Աստծուն, քեզ պահող, մեծացնող օրենքին, հավատին ղուրբան։ Սիրտդ ցավում ա, գիտեմ, չունքի քեզ էլ ա մեր բերել, քեզ էլ ա հեր՝ որդի ձեն տվել, քեզ էլ՝ քիր ու ախպեր սիրել, գրկել, գլխի վրա, դոշին դրել, կպցրել։ Հաց չի՛ ինձ հարկավոր, որ ուզեմ, տաս, ջրի չեմ հասրաթ, փողի չի՛ սիրտս փափագում, զառ ղումաշ ունենամ էս սհաթին կէրեմ, կկտրատեմ, զանձ ոսկի ունե<նամ>, ջուրը կածեմ, հարամուն կտամ, թախտ, ամարաթում նստացնեն՝ կրակ կտամ, ինձ էլ հետը կէրեմ. իմ մորն եմ կարոտ, իմ ծնողին հասրաթ, աչքս նրա ճամփին ա, սիրտս նրան թամարզու, տունն ոտիս տակին, ձենն անկաչումս, ա՜խն ու վախը՝ հենց բանիր լսում եմ, ցերեկը չե՛մ կարում ոտի, դշի ձենիցը իմանալ, գիշերն եմ լիսնակի տակին՝ անկաջ դնում, լսում, ինձ էստեղ սպանում, նրան էնտեղ մորթում, հոգին առնում։ Ա՜խր՝ որ զառը, անբան զառը իր մոր եդևիցը միա, բղղա, օձի ճուտը իր մոր քամակիցը սողա, հավի ձագը մոր ձենը լսելիս ծվծվա, լվլվա, գլուխը թևի տակը դնի, յա կտուցը կտցին, մերը կրխա, ձագը ճիւա, մերը քուչուչ, ձագը մունչ մունչ, հետը խաղա, հետը ճվա, բաս ինձ մե՞ր չի՛ բերել, բաս ես կա՞թով չեմ մեծացել, բաս ինձ չե՞ն գրկել, սիրել, որ սիրտս չտրաքի, լերդս չճաքի, աչքս չմաշվի, շունչս չքաշվի՝ լերդս չնվաղի, թոքս չղաղվի, ա՜յ էդ լիս երեսիդ, քո լիս հավատին ղուրբան...

Քո լիս հավատին, քո արդար կրոնին, որ ընչանք հորնըմոր սիրտը չի՛ կապում, թազը չի՛ դնում, ընչանք սերը չի՛ փորձում, կարմիրը չի՛ կապում, ընչանք սուրբ տաճարը չի՛ թողնում, մինչև նրանց բնությունն ա քննում, իմանում, ընչանք հերնըմերը չե՛ն զավակաց թագն ու պսակն օրհնում, քահանեն չի՛ ձեռը դնում, ընչանք աջը չեն հարսի ու փեսի իրար մեջ դնում, խաչը չեն գլխներին դնում, ընչանք մահը չի՛ գալիս, հոգին չի՛ բաժանվում, մարմինը դինջանում, հողն ու գերեզմանը իրանց տվածը, Աստված ու հրեշտակ իրանց պահ դրած ամանաթը տանում, ո՛չ հասրաթը պակսում, ո՛չ մուրազը, ո՛չ սերը, ո՛չ տերը, ո՛չ հերը, ո՛չ մերը։ Ո՛չ կրակը, ո՛չ ջուրը, ո՛չ բոցը, ո՛չ ցողը, ո՛չ դաշտը, ո՛չ պտուղը, ո՛չ սարը, ո՛չ ծաղիկը, ո՛չ ամպը, ո՛չ անձրևը։ Ա՜խ՝ օրհնվի՛, օրհնվի էն բերանը, որ ձեզ օրհնեց, էն սուրբ միտքը՝ որ ձեր օրենքը մտածեց, ձեզ կրոն տվեց։ Ա՜խ՝ աշխարքումն որ էս բախտն ունիք, երկնքումը ի՞նչ տեղ կունենաք, մարդի միջին, մարդի սրտով որ էնպես եք իրար սիրում, իրար ընդունում, հրեշտակաց միջին, հրեշտակի սրտով, հրեշտակի սիրով՝ ի՞նչքան մեծ չպիտի ըլիլ ձեր փառքը, ձեր կյանքը, ձեր մխիթարությունը, ձեր ուրախությունը, ձեր սուրբ կրոնին ու հավատին ես-եսիր դառնամ։

— Որ գնամ մուշտեիդի ոտներն ընկնիմ, որ գնամ գլուխս ծեծելով հորդ ճտովն ընկնիմ, չոքիմ, ոտը համբուրեմ, կանգնիմ, երեսը՝ ա՜յ իմ հրեշտակ, իմ արդար հոգի, իմ ա՛չք, իմ լի՛ս, որ հոգիս կրակ քցեցիր, լերդս դուս ճոթռեցիր, բաս ինձ չե՞ն լսիլ, որ ես հայ քրիստոնյա տեղովս էսքան ցա-

վում եմ, մղկտում, իրանք իրանց արնին ոտի տակ են տալիս, կրակը քցում իրանց միսը՝ սաղ սաղ խորովում, բա՛ս ինձ չե՞ն լսել, չե՞ն հետս մրմնջալ, չե՞ն հետս մղկտալ, գալ, բարշել, քո աչքը սրբել, քո սիրտն առնել՝ էդ արդար սրտիդ ստեղծողին ղուրբան,— էրված, լցված սիրտս ու բերանս գեջղանգեջ բաց արի ու մնացի՝ էն արևի էրած, էն արտասունքով մաշված, չուռումիշ էլած երեսին, էն թուխ թուխ աչքերին, էն ղալամով քաշած ունքերին, էն խոռըփոթ ընկած ճակատին, էն ոսկեթել մազերին, էն լուսաթաթախ պատկերին, էն երկնանման տեսուն, էն կախ ընկած գլխին, էն ծեծված, ջարդված, արինակոլոլ, արտասվաթաթախ դոշին ու բգին՝ հոգիս երկնքումն, աչքս վրեն սառած, մեռած, կանգնած, չորացած, փետացած, ու քար ու հող փուշ դառան, աչքումս ցցվեցին, սուր դառան, ինձ կտրատեցին, դժոխք դառան, ինձ ուզում էին ուտիլ։ Որ մեր հավատիցը չըլի մարդ, պետք է չսիրե՞նք, հետը չցավի՞նք...

— Չէ՛, չէ՛, վա՜յ իմ օրիս, արևիս, գնա՛, հեռացի՛ր, վա՜յ, վա՜յ, Աստված դու ինձ ազատի. Ալլահ, դու ինձ պրծացրո՛ւ, քո ձեռն ինձ պահի. էն ո՞վ ա գալիս. վա՜յ վա՜յ... թե հե՛րս ըլի... ի՞նչ կանեմ... ի՞նչ... ի՞նչ... գնա՛... գնա՛... քո գլուխդ էլ ա պրծացրո՛ւ... վա՜յ քո օրին, քո ջիվան արևին, մահդ առաջիդ ա — էլի կանգնե՞լ ես... գնա՛, գնա՛...— Ասեց ու ա՜խ... էն օրը գնա, ո՛չ եդ գա... ինչ որ ես տեսա... դուռը վրես հետ արեց։ Ասփացու սիրտն ինձ հայտնի էր, չունքի ես էլ եմ ասիացի. վրես թուր չկար. ը՛լեր էլ, յա ես պտի մեռնեի, յա իմ դիմացի մարդը։ Ո՞վ մեկ բարաքյալլա կասեր, ո՞վ իմ մուրազս տեղ հասցներ. մեռնելու հետ վաղուց էի բարեկամացել, հաշտվել։ Իմ սրտիս էրողն էլ նեքսևիցը՝ Աստված, երկինք, սուրբ, մարգարե, հավատ, օրենք մեջ բերում, որ գլուխս առնիմ կորչիմ։ Էկողը մոտանում էր, սիրտս մղկտում, իմ լերդս տրորողն՝ առաջիս տրորվում, գետինը ոտիս տակին դողում, արին էի տվել, նրան հո չէի պրծացնիլ, ազատիլ։ Էլի մուշտեիդի, ախունդի, էլի հոր, բարեկամի տանեը փլավ ընկնիմ, բալքի մեկ ճար անեմ, էսպես մնալով, գլուխս մահու տալով ի՞նչ կշինեմ, միտք արի, գլուխս թափ տվի, աչքս տեղն էկավ, խելքս իմ գլուխս։ Մեկ ա՜խ քաշեցի, դոշիս խփեցի ու արինն աչքս առած, մուխը քիթ ու բերանս լիքը, ձորն ընկա, սարնըդուս նի էլա։ Բայց ա՜խ էն գնալն էր, որ գնացի էլ ո՛չ ախունդ կարաց կտրածս գտնիլ, ո՛չ մուշտեիդ, ո՛չ թուրք, ո՛չ հայ։ Երկինքն ես գնացել, հոգիդ լիս կտրի, ա՜յ տարաբախտ հոգի, մորդ ծոցը մտար, հանգստացի՛ր, դինջացի՛ր։ Սուր քո սիրտը մտավ, էն ձեռը չորանա, դու հո քո մուրազն առար։ Թե սաղ ես դեռ հլա, ու սարեսար քցած, որ տեղդ չիմանամ, ա՜խ ի՞նչ կըլեր, մեկ անունդ էլա լսել էի, մեկ ազգդ իմացել, որ քո ցավն հիշելիս անունդ էլ տայի, որ հավանայի։ Ես քո պատկերը,

էն անմահ պատկերը, ես քո էն ցողանման արտասունքը, էն երկնքին՝ սաղիքյան տված, ընծայած հոգիդ՝ չե՛մ մոռանալ, չե՛մ ուրանալ։ Թո՛ղ իմ հավատն ինձ պատժի, թո՛ղ՝ իմ օրենքն ինձ հալածի, տանջի, քո ազգի գյոռխանեն՝ քանի շունչս վրես ա, լեզուս բերնումս, հլա շատ կգամ ուխտ, հլա շատ անգամ կգամ էն արդար հողը տեսնիմ, էն քանդված խարաբեն մտնիմ, որտեղ քո ծունկն էր չոքել, քո արտասունքը թափում, քո շունչը դուս գալիս, քո աչքը լալիս։ Էստեղ չտեսանք էլ իրար, երկնքումը հո՝ Աստված մեզ վրա չի՛ բարկանալ, էն բարեգութ Աստվածը, որ իր աչքի առաջին իր որդիքը՝ իրար տեսնին, իրար փաթաթվին — հոգին անմեղ ա, երկինքը սուրբ — աղջիկ ու տղա, թուրք ու հայ, ո՞վ էն միտքը կունենա — որ սրբություն չըլի սրտի, որ սրբություն չըլի կամքը։ Մեր չար կամքը հողին ա, հողն ա մեզ խաբում, էս չար հողը, էս չար աշխարքը, մեր հրեշտականման Աստուծո պատկեր հոգին Աստծունը։ Էնտեղ էլ հավատ, օրենք չեն հարցնիլ, գործք կհարցնեն. արքայությունումը տեղ շատ, Աստուծո թագավորությունումը՝ այլան օթախ շատ։ Հալբաթ մեկ պուճախ էլ մե՛զ կընկնի, մեկ քյոլգա էլ մե՛զ շվաք կանի, մեկ ծաղիկ էլ մե՛զ իր հոտը կտա, թե չէ՛ դժոխքը հո կա ու կա։ Դրախտը ամեն մարդ ա ուզում, ու չի՛ դրախտի ճամփի հետ գնում։ Թող Աստված քո խաթեր ինձ դժոխքը տանի, թե էնպես իմ մեղացս բարկանա։ Գերեզմանս քեզ մոտ չըլիլ, դժոխքումն էլ հո չե՛ն հարցնիլ, չե՛ն ջոկիլ։ Ամեն չար, ինչ ազգ էլ որ ըլի, էնտեղ պտի գա՝ ես էլ թո՛ղ էնտեղ գնամ, թաք ըլի քեզ տեսնիմ, քեզ գտնիմ՝ որ սիրտս հետդ տարար՝ ա՜յ իմ տարաբախտ անմեղ, անտեր, անօգնական, իմ սիրեկան, իմ սրտի էրող, իմ լերդս չորացնող աղջիկ հեզիկ, հոգի բարի։

Կրոն, կրոն, որ ռամիկը՝ անունդ չիմանալով, քեզ **հավատ** ու օրենք ա ձեն տալիս, քեզ **դին** ու **մասաբ** կանչում, դեռ ո՞ւր էր մարդը, որ քո լիսը արեգակի հետ էր խառնվել, քո շոխքը աստղերի հետ. քո զորությունը երկինքն էր շարժում, պահում, քո սերը երկրին խոտ ու ծաղիկ, ծառ ու պտուղ, քար ու հող, օդ ու ջուր տալիս, կենդանացնում, որ տարաբախտ հողածինը՝ երբ իր կարոտ աչքը էս խոր ձորումը բանար, իր ստեղծող Արարչի հրաշքը տեսներ, զարմանար, նրան չտեսներ, թուլանար։ Երբ տկար ադամորդին՝ չորս կողմը օձ ու կարիճ, թույն ու լեղի, հուր ու սուր, գլխավերևն ամպ ու կայծակ, աստղ ու լուսին աչքովն ընկներ, վերանար, ձեռովն ընկներ, հիանար, յա սարսափեր ու դողար, երբ խոտ ու ծաղիկ, թուփ ու տերև, հոտ ու համ նրա աչքն առներ, բերանն զմայլեր, քիթն առներ, հոգին մխիթարվեր, նրանց տվողին, նրանց ստեղծողին՝ ուզեր, ճանաչեր, խնդրեր, չգտներ, ու աչքը ծով դառած, երեսը հողի երեսին դրած՝ չոքեր, աղաչեր, լար ու պաղատեր, ողբար, գովաբաներ, սքար, օրհնաբաներ։ Դո՛ւ, դու ծնունդ

աստվածային, հրեշտակ անմարմին, հո՛ւր երկնային, դո՛ւ էիր՝ որ նրա սիրտը զարթեցնում էիր, նրա խոր գլուխը բարձրացնում, նրա թուլ ձեռքը զորացնում, նրա սասանահար, վշտահար հոգին մխիթարում, պնդացնում, ու բերնիցը շունչը, հոգուցը օրհնություն ու գոհություն՝ արեգական լույսի հետ, ծաղկըների հոտի հետ, թռչնոց երգի, եղանակի հետ՝ տանում Արարչի մոտ, որ նրա քաղցր աչքը, նրա հայրագորով խնամքը՝ ո՛չ մեր երկրիցը պակսի, ո՛չ մեր գլխիցը, ո՛չ մեր հանդիցը, ո՛չ մեր տանիցը։ Ա՜խ երկինքն էր մեր տաճարը, երկիրը մեր ժամատունը, արեգակն ու լուսին՝ մեր ջահ ու լապտեր, աստղերը՝ մեր կանթեղ ու մոմ, երկրի հոտը, մեր բերնի շունչը՝ մեր խունկն ու կնդրուկը, ա՜խ՝ է՛ն, է՛ն ժամանակը ի՞նչպես էր ջերմ մարդի սիրտը, ի՞նչպես արդար նրա միտքը, ի՞նչպես պարզ նրա լեզուն ու խոսքը։

Քար էր պաշտում մարդը Աստուծո տեղ, փետի էր երկրպագություն տալիս, արեգակն էր իր Արարիչը շինել, թե լուսնյակը, որ իրան լիս էին տալիս. կրակը, թե կայծակը, որ մեկը ոտի տակին էր էրում, մեկը գլխավերևին, քամուն էր ումուդ դրել, թե ջրին, աստղերին, թե ամպին, ծովին, թե գետին, Աստված էր կանչում՝ թե Ալլահ, Բուդա, թե Բրամա, Լամա, թե Եոհովա, որ իր հորը գտնի, ուր համբուրի, իր ստեղծողի տեղն իմանա, նրան փառաբանություն տա, դո՛ւ, դու էիր նրա սրտի դրդողը, աչքը բաց անողը, միտքը հորդորողը, երեսը դարըդուս քաշողը՝ որ գա հասրաթ, հասրաթ ման գա, որդին իր հոր սիրովն էրվի, մաշվի, բայց չտեսնի, չհովանա, ու իր տկար մտքումն չհպարտանա՝ թե ինքն էլ կարաց էնքան բարձրանալ, որ իր ստեղծող հոր տեղն իմացավ. էնքան վերացավ, որ երկնքի տուտն ու տակը գտավ, բոլոր աստղ ու արեգակ քննեց, իմացավ, էլ երկիրը իրան պետքը չի՛, երկինքը պետք է թռչի՝ որ միշտ իր հոր հետ ըլի, իր հոր ձեռի տակին, նրա աչքի առաջին, ու երկիրը մնա անզարդ, անապատ, չոլ ու դարդակ։ Անբան անասունքն էլ, անլեզու քարերն էլ՝ շունչ առան, գլուխ բարձրացրին, որ նրանց էլ լեզու տաս, նրանց էլ հոգի, միտք, որ իրանց ստեղծողին փառաբանեն, բայց դու երեսդ ծածկեցիր, մարդի փայն էիր, մարդի մեջն էկար, հորը սիրտ տվիր, մորը ջիգյար, քիր ու ախպոր, որդու, զավակի, ազգական, բարեկամի՝ աչքին արտասունք, բերնին բարբառ, լեզվին՝ խոսք, սրտին սեր, ա՜խ սեր, որ երկնքին նայեն, Արարչին սիրեն, երկրին նայեն, Ստեղծողին սիրեն, ու էս մաքուր, էս աստվածային սիրովը վառված՝ իրանց նմանին սիրեն, նրա բարին կամենան։

Բայց մարդն, ա՜խ՝ մարդն էստոնք բոլոր, քե՛զ, քե՛զ, սուրբ հոգիդ թողեց, որը կրակով էրեց իր նմանին, որը թրով կոտորեց, որը ջրով խեղդեց, որը կախ տվեց, որին անիծեց, որին նզովեց։ Քո՛, ա՜խ քո՛ խաթեր՝

շունչդ աստվածային բարեկամությունը հեռացավ, սերը վերջացավ, թշնամությունն արմատացավ, ատելությունը զորացավ։ Բայց ա՜խ, ա՜խ, ե՞րբ էս մեր աչքի կապը կարձակվի, ե՞րբ էս մեր կույր, խավար մտքի փարդեն կպատռվի, որ էլի քեզ ճանաչենք, քեզ սիրենք, քեզ մեր մեջը բերենք, մենք քո գիրկը գանք, որ էլի իրար սիրենք, իրար ընդունենք, ու ինչպես մեկ հոր որդի, երկրումն մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ միտք, մեկ տեղ, մեկ գերեզման ունենանք, ինչպես երկնքումը, որ ետ առաջ պտի գանք, պտի գանք, բայց վա՜յ մեզ, վա՜յ, թե պարզերես չըլինք ու լանք։

ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՂԱԼԻՔ

ՊԱՐԱՊ ՄԱՐԴՈՒ ՏԱՆՁԻ ՄԻՏՔ

Ով չուզենա, իր պարկի
բերանը փակի, թող պառկի։

Շինեց ու սազացրեց

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

1841

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Շատ անգամ պարապ ժամանակս միտք էի անում, էնպես մեկ բան գրեմ, որ մեր խալխի սրտովն ըլի, բայց չէի գիտում թե ինչ լեզվով գրեմ։ Մեր գրաբար լեզուն անգին է, նմանը չունի, ինչքան լեզու էլ որ գիտեմ, մեկն էլա էն համը, էն քաղցրությունը, էն ճոխությունը չունի. բայց մեր վատ բախտիցը հազարիցը մեկը չի հասկանում, ինչ պետք է արած։ Երանի էն սհաթին, որ մեր ազգը քիչ քիչ կարողանա էս կորած գանձը գտնիլ, ու իր լեզուն սովորիլ, իմանալ։ Բայց ով չի գիտի, որ սրան շատ ժամանակ կուզի. ու մինչև էն ժամանակը մնալ, ո՞վ գիտի, մարդ սա՞ղ կմնա, թե չէ։

Էս մտածելով ուզում էի, որ գրած բանս ամեն մարդ հասկանա, ու էնդուր համար աշխարհաբար գրեցի։ Թող գիտուն մարդիքը ինձանից չնեղանան, նրանք շատ գիրք են կարդում, իրենց սիրտը մխիթարում. ամա հասարակ մարդը մեկն էլա չունի, որ նա էլ նրանով իր պարապ վախտը՝ ժամանակն անցկացնի։

Շատ մարդ է գանգատ անում, թե մեր խալխը գիրք կարդալ. ուսումն չի սիրում. ախր ի՞նչպես սիրի մարդ, որ զորությունը չի հասկանում։ Կարելի է, ես սխալվում եմ, բայց բնական է, մարդ միշտ էն բանը կսիրի, որ իր սրտովն ըլի։ Եվրոպայցոց մուզիկեն շատ հիանալի է, խոսք չունիմ, ամա մեր սազն ու զուռնեն մեր ականջին ավելի ա դիր գալիս, չունքի էլ խու-թյունից էնդուր ենք սովոր։

Շատ բաներ էսպես գրել, հազիր էի արել աշխարհաբար, բայց էլի սիրտ չէի անում, որ լիս քցեմ։ Վախենում էի, թե ժամանակս, փողս կորչի, գիրքս էլ մեկ տեղ թոզումը վեր ընկած մնա, փթի։ Բարեկամ մարդիք որ վախտ վախտ տեսան, խորհուրդ տվին ինձ, թե շատ լավ կըլի, որ տպիլ տամ։ Իրավ՝ թե որ մուրազս տեղ հասնի ու գրածս ազգին դիր գա, որքան բախտավոր կըլիմ։ Էն ժամանակը ջանք կանեմ, որ դհա լավ բան գրեմ, թող էս առաջինն էսպես ըլի։

Կարդացողը ինքն էլ լավ կիմանա, որ էս գրած բաները ավելի ուրախության համար են, էն պատճառավ բոլորը մեր խալխի խոսացած բաներն եմ հավաքել. թարգմանածներս էլ՝ էնպես եմ դուս բերել, որ մեր խալխի սրտովն ըլի։ Բայաթիքը էն մտքով եմ գրել, որ չունքի մեջլսում, հացի

վրա Թուրքեվար են էսպես բաներ ասում. լավ հայը հայեվար ասի, որ քիչ քիչ լեզուն քաղցրանա, չունքի ոչինչ բան լեզուն էնքան չի քաղցրացնիլ, որքան խաղ ու տաղը։ Հույս ունիմ, որ ուրիշ մարդիք դհա լավը շինեն։

Աղասու մեկ քանի խաղը, որ էստեղ մեջ եմ բերել, կարելի է՝ թե շատ մարդ չիմանա, թե նա ո՞վ էր։ Աղասին մեկ ջահել, ռաշիդ քանաքռցի հայ էր։ Ղզլբաշի ժամանակին սովորություն կար, որ աղչիկ էին քաշում։ Մեկ օր էսպես աղչիկ քաշելիս՝ կտրիճ Աղասին դուս էկավ, մեկ երկու Թուրքի սպանեց ու փախավ Փամբակ։ Խղճի հորնըմորը Երևանու բերդումը չորացրին. ինքն էլ՝ Ռուսը որ Երևան առավ, գնաց, որ հորն ազատի, իրան էլ հոր վրա տվին, սպանեցին։ էս խաղերը էն փախած ժամանակն է ասել։ Սրա պատմությունը շատ երկար է, որ գրած մոտիս հաղիր ունիմ ու նրանով կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարքի հալը։ Գրքի անունն **Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի:** *էնպես էլ շատ զվարճալի պատմություններ աշխարհաբար գրած՝ մոտիս հաղիր ունիմ։ Ով գիտի բալքի թե մեկ աստվածասեր մարդ իր հոգու խաթեր տպիլ տա։ Ես չկարացի բոլորը ի միասին գրել, չունքի խարջը շատ կըլեր։*

Թե գիտուն, խելոք մարդիք ինձ պախարակեն, դու էլա ինձ պահիր՝ սիրելի ազգ, չունքի իմ ուզածս էն ա, որ քեզ ծառայեմ, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերնումս ա։

1841 թվին, Թիֆլիզ.

ԷՍ ԳՐՔԻ ՃԱՄՓԻ ԽՐԱՏԸ

Գնա՛, իմ խեղճ գիրք՝ գնա՛ մարդամեջ.
Գլուխդ քաշ քցի՛ր, մի՛ նեղանար հեչ։
Անկաջդ փակի՛ր, սիրտդ լեն բռնի՛ր,
Ինչ ասեն, խոսին, տա՛ր ու համբերի՛ր։
Ճամփորթի գլխին շատ փորձանք կգա։
Անձրև, ձին, կարկուտ՝ հազիր համեշա։
Դուման ու կայծակ, շոք, բուք ու կրակ
Ամեն տեղ կըլին, ամեն ժամանակ։
Էսպես բանիցը ով շուտ վախենա,
Ու ճամփի կիսիցն վեր կենա, եդ գա,
Ոչի՛նչ չի շահվիլ, դարդակ կմնա։
Փորձանքից՝ մարդը՝ լավ չի՝ նեղանա։
Ի՞նչ ես դարդ անում, որ վրեդ խոսին,
Յա քեզ ծաղր անեն, յա աչքից քցեն։
Ամենի սրտին դուր գալ չի ըլիլ.
Ամենի խաթրը ո՞վ կարա առնիլ։
Աշխարքի բերանն ջվալի բերան։
Առակ է ասած՝ ո՞ւմ ասես քո բանն։
Հալբաթ մեկ օր էլ արև դուս կգա,
Էն վախտն կիմանան, թե ուզածդ ի՞նչ ա։
Գնա՛, աստված քեզ բարի ճամփա տա,
Ում տուն էլ մտնիս, բարով տո՛ւր, գնա ։
Մտքումդ պահի՛ր էն վաղի առակն,
Որ չանես քեզ էլ ինձ էլ խայտառակ։

Որ մեկ ծեր մարդ իր ջահել որդու հետ
Դուս էկավ, գնաց, աշխարք տեսնի, եդ
էլ իր տունը գա։ Ինքն իշի նստեց,
Անգսնգալով՝ նա որդին առաջ քցեց։
Ժամփորթի մեկը էս տեսավ, ասեց.
Ի՞նչպես հեր ա նա, որ որդուն թողել
Ոտով, լիտր ու կես՝ ինքն իշին բազմել։
Ասածը ծերը լսեց, վեր էկավ,
Որդուն նստացրեց, ինքն առաջ ընկավ։
Մեկն էլ էն կողմիցն՝ իր զուռնեն փչեց,
«Երկուսդ էլ նստեք, ի՞նչ բան ա էդ մեծ»։
Սրան էլ լսեց լողլող հալևորն.
Ոտներն ճոլոլակ էն մեծ միրքավորն։
Հեր ու որդի որ իշի վրա բազմած՝
Զմտան քաղաքն, էլ մարդ չի մնաց,
Որ մատով նրանց ցույց չի տա՝ հանկարծ։
Բեղ, միրուք՝ բոլորն լավ սղալելով,
Ծափ տվին քամակիցն, վրեն ծիծաղելով։
Խղճի որ ճարը կտրվեց, վեր էկավ,
Իշի ոտները կապեց. մեկ փեդ լավ
Միջովն անց կացրեց, մեկ տուտն իր ուսին
Մեկը իր որդու՝ դրեց քամակին։
Քար ու ձոր բերան, ու աչք բաց արին։
Ճարն որ կտրվեց, ի՞նչ պետք է աներ,
Սիրտը չտարավ աշխարքի բաներ։
Հազար ուշունց ու անեծք կարթալով,
Էշը վեր առավ, քցեց ջուրն՝ լալով։
Գետի ղրաղին կանգնած՝ սուք արեց՝
«Լիս դառնա հոգիդ՝ ա՛յ իմ էշ»՝ ասեց։
«Ի՞նչ կըլեր, տանից չէինք դուս էկել,
Ո՛չ ուրշին լսել, ո՛չ մեր տունն քանդել։
Ինձ տեսնողը՝ թո՛ղ՝ իր գլուխը լա,
Ուրըշի դնչին հեչ մտիկ չտա»։—
Ամենի խոսքին ականջ դնողը
Գլուխը կկորցնի, յա էլած ղուղը։
Ով լայաղ չանի, քեզ վերցնի, կարթա,

Թո՛ղ իր շնորքը պահի, մոտ չգա։
Քար ու չոլ ընկնիլ ի՞նչ մեկ մեծ բան ա,
Խոր խոր խոսալուցն ո՞վ ինչ կիմանա,
Խոսողին էլ՝ միշտ հասկացող պտի,
Թե չէ փուչ՝ քամին կառնի, կտանի։

ԱՍԱՑՎԱԾՔ ԲՆԱՀԱՑՏՔ ԻՆՔՆԱՀԱՐՄԱՐ ՀՈՐԻՆՎԱԾ

ԼՈՌԸՑԻՔ

1

Երկու լոռըցի՝ հալալ ախպոր նման՝
Թուր ու թվանք կապած սար ու ձոր ընկան,
Որ իրանց համար ֆորս անեն, բերեն,
Իրանց օղլուշաղն էնդով կերակրեն։
Հենց մտան մեշեն, մեկ ծառի վրա
Տեսան, որ մեկ չաղ չալ աղավնի կա։
Ընկերի մեկը մյուսին ասեց.
«Տյեղս կա՛ց, ք՚յընամ, տյանիցն յաղ պյիրեմ,
Հլե յէս սհյաթին, յես քյըմատաղ յեմ,
Ատյա՛, մե՛ր տղյա՝ մեր պյախտը պյանեց,
Շուտով յետ քյըքյամ, յէս թըվավորյին
Լյավ հյաշքը պյռնի՛, մնյա յէս ծյառին,
Մեկ քյաբյաբ յանենք, հյուտենք լյավ պյապյաթ։
Մըհյիկ քյընում յեմ, տյու քյիտես լյավ վյատ»։—
Նա ուշացավ, մյուսն էլ չհամբերեց,
Տրեխը հանեց, մտքումը դրեց.
Որ ծառն վեր ըլի ու ձեռով բռնի։
Ախմախ ֆորսկանը դեռ կիսաճամփի,
Աղավնին թռավ, գնաց իր քեֆին։
Լոռըցու աչքը բաց մնաց, հոգին
Էլ չի համբերեց, ասեց բարկացած.

«Տյո չարլամիշ ղյուշ, տյու յոր քյու հյունարն
Պյանյացնիլ քյիտես, յե՞ս յեմ հլե նաշյարն։
Ցոր տյու յէտ պստյիկ տեղյովն կյթռչիս,
Ձեռս յո՞վ է պյռնել, յոր ղոլես փախչյիս»։—
Ասեց ու գրը՛խկ, ծառի ծերիցը
Էնպես դըրըմփաց, ու իր ջանիցը
Ձեռք վերցնիլն, հոգին տալը մեկ էլավ,
Ու զուռնա մեիդն էնտեղ ձգվեցավ։
Ինչպես պատահեց։ Աղավնու թևիցն
Մեկ բմբուլ էկավ, ընկավ վերևիցն
Լոռըցու բերանն, որ ընկերն էկավ,
Իշտահը զլած՝ մոտին կանգնեցավ։
   «Հյա՞ քյընըծահե՛ր՝ տյու յիշի քյուռյակ։
Ասեց ախմախը ու գնաց աղաք։
«Ա՛տյա՝ քյու փյորը խյոզի թյափյան յէ՞ր.
Հինչ յէիր ճյաքյում, ու յէս խեղճ, յանտեր
Ղշին սյաղ, սյաղ յես տյու փյորըդ քյաշել,
Կըլլխեդ խռյով յինի յիշտյահդ, փյորդ յէլ։
Մի քիչ սյաբր յէյիր յարել, հի՞նչ քյըներ»։
Ասեց, ընկերին տեղն ու տեղ թողաց,
Քամի կուլ տալով՝ իր բանը գնաց։
Ա՛ստված ողորմի լոռըցու հոքուն,
Էն ֆորսն, ընկերն ո՛չ ես տեսնիմ, ո՛չ դուն։

2

Երկուսն էլ մեկ օր էլի ֆորս գնացին,
Շատ որ ման էկան, բան չճարեցին.
Էկան մեկ ծառի շվաքի տակին
Քրտինք սրբելով՝ ծանր նստեցին։
Շատ ու քիչն աստված գիտե՝ ի՞նչ ասեմ.
Քոռաղադինա՝ մեկ ճանճ, չգիտեմ,
Ի՞նչ կողմից էկավ, մեկի ճակատին
Նստեց ու արինն ծծեց իր քեֆին։
Ղոչաղ ընկերը էս որ հենց տեսավ,
Մատը բերնին դրեց, շվացրեց, ասավ։
   «Հե՛ Հանի՝ քյը մա՛տաղ՝ մեկ ժուկ սաբր արա՛,

Աստված մեր նյասիբն հյասցրեց յէս ա՛»։
Ասեց ու թվանքն դոշին դեմ արեց,
Նա ոտը քաշեց, մյուսն գլուխը թեքեց։
Ընկերի մահը՝ հանաք իմացավ,
Մեռած մեյիդը կապեց, վեր կալավ։
Գոմշի քամակին դրած՝ մեկ ջրի
Որ մեջը մտան, շոքն առավ գոմշի
Ջանն. աղավարի կուզեր, որ պառկեր,
Ախմախ ընկերը՝ էն կողմիցն ուսեր
Քաշելով՝ գոռաց, մեռլին վեր հատեց,
   «Ատյա քյու նանի միսը շոն ծյամի.
Հենց մեռել յես, յոր բերանդ զորում չի՛.
Մեկ հա՛, տպփոյու էլ ա անես էդ կյոմշին,
Չթողաս նստինք, հոր քյնանք մեր պյանին»։

3

Մեկ քանիսն էլ մեկ օր կացին ուսին
Գնացին, փեդ անեն ու ճամփի կիսին
Մեկ ձիավորի որ ռաստ չէկան,
Կտրեցին աղաքն, խնդրեցին նրան,
Որ տեսնին՝ թե ո՞ւմ կացինն է լավ սուր։
Ղոյմաղոշում դու խելոք ձիավոր
Բոլորի կացինն որ մոտ չի արեց,
Ղամշեց ձիուն ու դարնըվեր քաշվեց։
Փալան ու նոխտա կորցրած իշի պես
Կանգնած՝ ճմռեցին նրանք աչք ու երես։
Սատանին նալաթ՝ ձիու քուռակը
Մնացել էր եդ։ Ռնեցին աղաքը։
Ինչ շոր ունեին, բոլորն հանեցին,
Նրան բարձեցին, որ սատկի տակին,
Որ նրանց սիրտը մի քիչ հովանա։
Բայց ղոչաղ քուռակն՝ բարգ ու բարխանա
Հետն առավ, վազեց՝ տրտինգ անելով։
Լոռըցոնց աչքը սառած մնալով,
Հենց իմացան, էս տեսածն հրաշք էր։

Քորելով անսաս՝ գլուխ ու բեղեր.
Ընչանք տուն հասան, անձրևի տակին
Իրանց վրի կեղտն էլ մեկ լավ լվացին։

4

Էլի էս օրհնած խալխը հազրված՝
Գնացին մեկ օր մեշեն՝ հավաքված։
Տեսան՝ մեկ լավ ծառ քարափի ծերին.
Թե կտրենք սրան, էսպես միտք արին,
Մեզ խեր չի անիլ, խոր ձորը կընկնի,
Մեր աշխատանքն էլ հետը փուչ կըլի։
 Շատ որ միտք արին, խոսքը մին էլան.
Որ կախ ընկնին, ձեռ ձեռի նրանք տան,
Ու էնպես քաշեն, քոքըհան անեն,
Իրանց միջումը հետո փայ անեն։
 Աստված կանչեցին, ճոլոլակ էլան։
Ծառը պոկ չէկավ, իրանց գլուխն ի՞նչ լան։
«Ատյա մեր տղե՛րք՝ տյուք ղայիմ կյացե՛ք,
Մի ձեռիս թքեմ, յետո քյաշվեցյեք»։
 Ձեռը բաց ընկավ՝ նրանք իրար գլխով՝
Խաչ, ավետարանի անուն տալով,
Էնպես գլորվեցան, քարափնիվեր ընկան,
Էն գընալն էր, որ գնացին, եդ չէկան։

ՄՈԼԼԱ ՄԱՍՐԱԴՆԻ ԻՇԻ ՔՈՒՌԱԿԸ

Իշի քուռակը վերջն է՛շ կըդառնա,
Ամարաթում, թե գոմում մեծանա։

Մոլլա Մասրադինն շատ բան է արել,
Ինքն ախմախացել, ուրըշին խաբել,
Բայց նրա հունարքն իշի քուռակին
Իր իշությունից էլի չի դարձրին։
 Մայիս ամիսն էր, օրերն քաղցրացել,
Իսան ու հայվան սար ու ձոր բռնել,
Ամենի արինն նո՛ր էր եռ ընկել,

Ամենի սիրտը էլ եդ նոր բացվել։
Մեկ քաձ էշ էլ իր քուռակն քամակին
Քցած՝ հանդումը նայում իր քեֆին.
Ինքն թավալ տալիս ախպումն ու զռում,
Քուռակն էլ պոչը ցցած մոտն խաղում։
Մոլլեն որ իր սուրբ ղուռանիցն ավել՝
Ուխտը ուլիցը չէր կարող ջոկել,
Նրա չափ ընկնիլն որ աչքովն ընկավ,
Էլած ուշք ու միտքն էլ նրա հետ թռավ։
«Ջահել վախտն էսպես որ հունար ունի
Էս օրհնած գառը, ու փախչիլ գիտի,
Որ մեծանա հո՝ աշխարք կարմացնի,
Երբ տակիս՝ նստած՝ էսպես չափ քըցի»։
 Գողացավ քուռակն, տարավ գոմն, կապեց։
Էշն լեզու չուներ, խելքը ո՞վ տվեց,
Որ տիրոնչն ասի քուռակի տեղը,
Մոլլեն էլ գիժ չէր, ասեր, դառնար գողը։
Էսպես տանը կապեց, ո՛չ թե խոտ, խոռակ,
Ջամիշ ու խուրմա ուտեր մեր քուռակն։
Արև ու անձրև աչքը չըտեսավ,
Թոզ ու ախպ, փալան, ո՛չ բեռը տարավ։
Էսպես պահելուցն էլած ղվաթն էլ
Պակսեց։ Մեր թամբալ քուռակն մեծացել
Իր իշի բոյը, իր իշի հասակն
Առած։ Վախտն էր, որ տեսնին Մոլլի փառքն։
 Մեկ ազիզ օր էլ որ էկավ, հասավ,
Մոլլեն էլ լավ իր թադարեքն տեսավ։
Ու տնկտնկալով, քամի կուլ տալով,
Իշի քամակին բազմած խիստ քեֆով։
 Նոխտի փոխ՝ չաթու, թամքի տեղ փալան
Իշի դունչն ու վրեն դրած՝ էկավ մեյդան.
Որ ջիրիդ խաղա, քանի ինքն սաղ ա.
Բայց էշ ու ջիրի՞դ — ա՛յ Մոլլա Աղա։
Ջիանքն էլ մնացին հուշտ էլած, սառած,
Չէ թե ձիավորքն՝ բերանները բաց։
Մոլլեն ամենի սիրտն առավ, ասեց,
Որ իրան նայեն, ու էշը քշեց։

Քոռաղադինա էն օրը շոք էր,
Ջիրիդի տեղն էլ ախպսին մոտ էր։
Թո՛շ, թո՛շ կանչելով՝ խեղճ Մոլլեն բերանն
Պատռեց, բայց իշի ղուղը չի մտան։
Բերնով օրհնում էր, ոտով վեր հատում,
Գլուխը սղալում, եդևիցն բզում,
Բիզն էլ բեզարեց, քարն էլ, քացին էլ,
Բայց կակող ախպուսն իշի խելքն առել։
Փռվեց չորս ոտովն էն տեղ իր քեֆին.
Ո՛չ ծեծին նայեց, ո՛չ Մոլլի միրքին։
Տեսնողք փոր, բերան բռնած՝ քաշվեցին,
Մոլլեն զո՛ռ տվեց ուշունցի պարկին։
Բայց խելոքի մեկն ղրաղ քաշեց նըրան,
Ու կարթաց գլխին սաղ սըհաթ ղուռան,
«Ով իշին կուզի նոր մարիֆաթ տալ,
Աստված գիտենա, ի՛նքն ա էշն հալալ»։

ՄՈԼԼԱ ՄԱՍՐԱԴՆԻ ՊՂԻՆՁԸ

Մոլլա Մասրադինն իր հարևանիցն
Մեկ օր մեկ պղինձ սկսեց փոխ ուզիլ։
Իր կարիքն հոքաց, եդ բերեց պղինձն,
Բայց հետն էլ մեկ փոքր թավա էր դրել։
Խեղճ հարևանը մնաց զարմացած,
Խորամանկ Մոլլի միտքը չիմացած,
«Պա՛տվելի՝ ասեց, էս ի՞նչ ընկեր ա,
Որ պղնձիս հետ իմ տունս էկել ա,
Ես քեզ անցած օրն՝ մինը փոխ տվի,
Հիմիկ ջխտվել են. ի՞նչ պետք է ըլի»։—
Սուրբ Մոլլեն նրան փառավոր դիմով
Իմամ, Հուսենի, Ղուռանի անունով
Գլխումն նստացրեց, թե նրա պղինձն
Ծնավ իր տանը։ Թե չէ իրանից
Գի՛ժ չէր, որ իր տան հաչաթն վերցներ,
Ու նըհախ տեղը ուրըշին բախշեր։—
Հարևանն թեև շատ էլ միտք արեց,

Ուսերը քաշեց, գլուխը շարժեց.
Բայց ավելի շահն ո՞ւմ փորն ա ծակել.
Ով շատ ագահ է, վա՜յ էն մարդին էլ։
Հարևանն սկսեց շնորհակալ լինիլ
Ու ուրախությամբ թավեն տուն տանիլ։
Մեկ քանի օրից եդը մյուս անգամ
Մոլլեն էլ էկավ առ իր բարեկամն.
Դեռ չէ՛ր բերանը բաց արել, իսկույն
Դրացին խնդությամբ՝ շուտով վազեց տուն,
Պղինձը դուս բերեց, մեր Մոլլին տվեց,
«Էլի կըծընի», իր մտքումն կարծեց։
Բայց Մոլլի հեսաբն դեռ չէր մտածել։
Օրն շաբաթ դառավ, շաբաթը ամիս.
Ջարեն կտրեցավ, պղինձը պահանջել
Սկսեց դրացին, բայց դու ո՛չ մեռնիս։
Մոլլեն էլ ո՛չ սուրբ, ո՛չ իմամ թողեց,
Քյաբ ու Ղուռանով չարաչար երդվեց։
«Թե նրա խեղճ պղինձն՝ մեկ ամսից առաջ
Վա՜յ տեր կանչելով, մեղա գոչելով
Հոգին ավանդեց, երկինքը գնաց»։—
Դըրացին մնաց քար կտրած, սառած.
Հենց բռնես, մեկ ձի գլխին քացի տվեց։
Մոլլի ոտն ու գլուխն չափելով՝ ասեց։
«Հանաքն ուրիշ վախտ արա՛ դու ինձ հետ.
Էդպես մասալեքն պառավքը կասեն.
Կամ պղինձս տո՛ւր, կամ նրա ջառըմեն.
Թե չէ ո՞վ է լսել՝ թե պղինձը կը մեռնի»։—
— «Էսպես հաստագլուխ մարդ էլ կըլինի՞,—
Տո քո՛փակ.
Ծնանողն մեկ օր պետք է մեռանի.
Ով որ ծնելուն հավատ կընծայի,
Ու ծնած որդին իր տունն կտանի,
Բաս մահվան սուքն չպետք է կատարի՞։—
Դիվանն էլ Մո՛լլին իրավունք տվեց.
Դրացին թեև գլուխն քարեքար տվեց.
Ջեռն ո՛չինչ չընկավ. ում էլ հարցրեց,
Հենց է՛ն շահվեցավ, որ վրեն ծիծաղեց։

Խորամանկ մարդիցն սատված ազատի,
Խելացին նըրա ո՛չ խերն, ո՛չ շառը,
Իր օրումն երբեք չի պետք է ուզի։

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՄԱՐԴԻՔԸ

Շատ տեղ ման էկած, շատ երկիր տեսած՝
Մեկ մարդ՝ էլ կրկին իր աշխարհն էկավ.
Ծանոթ, բարեկամ գլխին հավաքված՝
Կուզեին գիտել, թե նա ի՞նչ տեսավ։
«Լեզուս չի՛ բռնում, որ ձեզ ե՛դ պատմեմ,
Ինչ որ լսել եմ ու աչքով տեսել.
Թողե՛ք, բա՛րեկամք՝ փոքր շունչ առնեմ,
Ապա լսեցե՛ք, ինչ կուզեմ ասել։—

Վա՜յ էն մարդին, որ իր տանը միշտ մնա.
Ու աշխարքիցս ո՛չինչ խաբար չիմանա։
Դուք լավ գիտեք, թե ի՞նչքան մեծ ա երկիր.
Ու ո՞րքան ծովք, ազգք և քաղաքք ու բաներ
Կան ամեն տեղ հազար տեսակ զանազան
Ո՛չ թիվ ունին, ու ո՛չ հեսաբ, ո՛չ սահման։
Շատ տեղ կա, մարդիք իրար միս ուտեն,
Շատն էլ հացի տեղ խոտը ճաշակեն.
Ոսկի ու արծաթն՝ էնպես երկիր կա,
Խոտի հետ դուս գա, ջըրի հետ գնա։
Բայց էս ինձ էնքան չի զարմացրուց,
Ինչպես մեկ երկրի մարդքերանց գործն։
Հառավոտե մինչև ի մութն անխափան
Նստին նրանք ի միասին լուռ, անձայն։
Ո՛չ դժոխքն են մտածում, ո՛չ արքայությունը,
Հաց ու կերակուր խսպառ մոռացած,
Ու Աստծու աչքիցն՝ հենց բռնի՛ր՝ ընկած,
Իրար երեսի նայիլ չեն ուզում։
Ամպն էլ որ գոռա, կայծակն էլ թափի,
Թուփ ու թնդանոթ նրանց գլխովն անցնի,
Թեկուզ սաղ երկինքն նրանց գլխին փուլ գա,

Մեկն էլա տեղիցը չի՛ ուզիլ ժաժ գա։
Թե դժոխքն էի գնացել, հավատացե՛ք ինձ՝
Էն զարհուրելի կերպարանքն ինձ
Չէին պատահիլ։ Քանի միտքըս գա,
Հոգիս ու մարմինս սարսի ու դողա»։—
«Ախր ի՞նչ է նրանց միտքն ու կամքը,
Որ էսքան մտածեն», հարցրին բարեկամքը։
«Կարելի է՝ թե իրանց աշխարքի հոքսն են միշտ
քաշում»։
— «Ա՜խ՝ ի՞նչ եք ասում»։
— «Ուրեմն իրանց հին մեղքն են լաց ըլում»։
— «Ո՛չ, բա՛րեկամք՝ ո՛չ»։
— «Ուրեմն անգին քա՞րն են նրանք պտրտում»։
— «Չէ՛, չէ՛. ի՞նչ ասեմ»։
— «Ուրեմն խելացնո՞ր են, որ չեն զգում,
Խոսում, կամ լսում, բաս ի՞նչ են անում»։—
— «Թո՜ւղթ-թո՜ւղթ են խաղում»։—

ՄՈԼԼԱ ՄԱՍՐԱԴՆԻ ՃԱՇԸ

Ճամփեդ բռնի՛, գնա՛, ամեն ծափ տվողի
Առջևն մի՛ պար գալ, ոտդ կդիպչի քարի։

Մոլլա Մասրադինն բեհեսաբ չարեց,
Մեկ քոռ կնիկ առավ, հետը պսակվեց։
Մոլլեն ու կնի՞կ — վա՜յ քո տղիս տղա՝
Լսողն չի՛ ասիլ, թե Մոլլեն գիժ ա։—
Մոլլի փորն սկսեց շուտով ցավ ընկնիլ,
Կերած, խմածը քթիցն վեր թափիլ։
Օրն հազար անգամ յա դուս էր գնում,
Յա տեղը քցում, միջումը պարկում։
Բայց հիվանդի սիրտն էլ՝ շորվա կուզի,
Ի՞նչ անի խեղճը, ո՞ր ջուրը ընկնի։
Կերածն համ չուներ, մեկ օր ալանի
Էր կնկա էփածն, յա խսպառ աղի։
Ջարեն որ կտրեց, կնկա խոսքովը

Վեր կացավ, գնաց իր զանքաշի քովը․
Որ մեկ ճար անի, աղջկանն դարձ բերի,
Աղին, ալանին նրան սովորցնի։
Զանքաշն որ տեսավ նրան տուն մտնելիս,
Կարծեց փեշքաշով ա փեսեն գալիս․
Հենց բարով տվեց ու միտքն իմացավ,
Գլխին բամբաշեց, դուռը հետ արավ։
Կրեմ էդ գլուխըդ ինչ կարթացող ես,
Բաս էդքան բա՞նն էլ դու իմացել չես։
Շատին շատ ֆցի՛, ֆշին՝ ֆիշ՝ ասա՛
Իմ աղջկանը․ ու ջհանդամը գնա՛։
«Շատին շատ, քշին քիշ»՝ ասելով էկավ,
Անճար Մոլլեն մեկ կալի կշտով անցավ։
Հենց է՛ս հագաղին՝ երկու ախպեր էլ
Կալը կուզեին ճոթ անիլ, տանիլ։
Մեծն ասում էր՝ թե ինձ շատ կհասնի,
Իմ օղլուշաղըս շա՛տ շատ է չունքի։
Փոքրն էլ ասում էր, պետք է պսակվիմ,
Հարսանիք անեմ, շատն ի՛նձ տուր, տանիմ։
«Շատին շատ, ֆշին ֆիշ՝» Մոլլեն որ չասեց,
Մեծ ախպոր սիրտը երկու թիզ եղվեց։
«Տե՛ս․ սուրբ Մոլլեն էլ ի՛նձ ա դրստում,
Էլ ի՞նչ խոսք ունիս, նըհախ տեղն կռվում»։
Ղոյմաղոշում տղա՝ եղանըդ քաշի,
Մոլլի ոտն ու գլուխն ձվի պես ջարդի։
«Ա՛խպեր՝ ի՞նչ ասեմ․ գլուխըս քարը,
Էլ տեղն ասածս՝ քո խերն ու շառը»։—
Տո քո՛փակ՝ տեսար կալ ենք ճոթ անում,
Դու ո՞ւր ես գալիս, մեր մեջն խառնըվում։
Ղրաղովն անց կա՛ց, մեկ բերան ասա՛,
«Աստված բարաֆյաք ու միշտ ձեզ խեր տա»:—
«Աստված բարաքյաթ ու միշտ ձեզ խեր տա՛»։
Ասելով գնաց մեկ խելիմ ճամփա։
Տեսավ․ մեկ աժդահա մարդ մեկ տեղ նստած,
Շորերը հանած, արևկող արած,
Իր չար թշնամու միսը պոկում ա,
Բերանը տալիս, որ քիչ դինջանա։

Քութութ անելով, քուցին անելով
Ջանը քոս ընկել, ղնգներն գուլացել։
Գլուխն վեր քաշեց, որ տեսնի, ո՞վ ա․
«Աստված բարաքյաթ, խեր տա՛ համեշա»։
Որ չի՛ լսեց անճարն․ ջանը դող ընկավ,
Հենց էնպես տկլոր տեղիցն վեր կացավ,
Մեր ախմախ Մոլլին էն քոթակն տվեց,
Որ նախրի իշին կհամարեր էծ։
«Բաս ի՞նչ ասեմ, ի՞նչ․ ինձ մի՛ սպանիլ,
Թե սասծդ չանեմ, ինձ մարդ մի՛ ասիլ»։
— Ա՛խմախ, ղուռումսա՛ղ՝ տո Մոլլի կտո՛ր․
Չե՞ս կարող ասիլ ինչպես մեկ ուղվոր․
«Աստված բոլորին ջնջի՛, փչացնի՛»,
Հախ միայն տերը դրանց քոքը կտրի՛։
«Աստված բոլորին ջնջի՛, փչացնի՛»։
Բերան անելով Մոլլեն խելացի
Հենց էն տեղն էկավ, որ մեկ մեռելի
Նաշն ուսի դրած, որդի, ընտանի
Բոլոր խալխի հետ գլխներին տալով,
Տանում էին՝ որ թաղեն՝ սքալով։
«Աստված բոլորին ջնջի՛, փըչացնի»։
Որ չի լսեցին խալխն ու գեղըցի,
Հենց բռնես՝ մեկ թոփ բիրդան տրաքեց․
Դագաղն վեր դրին, Մոլլեն էլ կանգնեց,
Հենց իմացավ՝ թե ուզում են խնդրել,
Որ աղոթք անի, փող տան իրան էլ։
Մոլլի ոտն ու գլուխն նրանք աղցան արին։
«Տո բե՛մուրվաթներ, լսեցե՛ք իմ բանին․
Ախըր ի՞նչ ասեմ, սիրտներդ հովանա․
Մեկ խոսք ասեցե՛ք․ էս ի՞նչ մուրվաթ ա։
Թե որ էն չասեմ, աչքըս հանեցե՛ք»։—
«Ա՛յ իշագլուխ՝ տո մի միտք արե՛ք,
Մեռլին ո՞վ կասի․ ջնջվի՛, փըչանա՛։
Կասեն՝ «Տեր աստված հոգուն ռահմ արա՛»։
«Տե՛ր աստված սրա հոգուն ռահմ արա՛»։
Սերտելով ընկավ էլ էդ ճամփեն նա։
Տեսավ մեկ սատկած շուն դուս են քաշում,

Որ տանին, հորեն մեկ ղրաղ տեղում։
Տանողք աչք ու քիթ բռնել են ղայիմ,
Որ մուտտառ հոտիցն զահլակուշտ չըլին։
Աչքն առավ թե չէ մեր գիտուն Մոլլի,
Լեզուն բան ընկավ․ անոտ ջաղացի
Պես պտուտ էկավ, իր աղոթքն ասեց,
«Աստված ռահմ անի՝ հոգուն»․ ձեն տվեց։
Շունն էլ չէ՛ր տանիլ, նրանք ի՞նչպես տանին։
Մոլլի խոր հոգին կատիկն հասցրին։
Խելք ու միտքն թռավ, ճամփեն կորցրեց․
«Ի՞նչ ասեմ՝ ջա՛նըմ» գեջղանգեջ ասեց։—
«Տո դուդուկ քոփակ, աչքըդ քոռանա՛,
Տեսնում ես ախըր՝ մեր տարածն շուն ա։
Մեկ թըքի՛ր գետնին, հուփ տո՛ւր աչքերիդ․
Ու հետո ասա՛․ մտիկ տո՛ւր առաջիդ։
«Փյո՛ւֆ, փյո՛ւֆ, փյո՛ւֆ․ էս ի՞նչ անիծած հոտ ա։
«Ջհանդամը գնա՛, սրա սպանողն եդ չգա՛»։
Հիմիկ է՛ս դասն էր սերտում ջրատարն,
Որ մատը խառնեց մեջն սատանեն չար։
Հենց մտավ կուչ գալով՝ մեկ հարսանքատուն։
Տեսավ թամաշեն, պարն, ուրախություն։
Քիթը պինդ բռնեց ու տվեց հարա՛յ․
«Փյո՛ւֆ, փյո՛ւֆ, փյո՛ւֆ․ էս ի՞նչ անիծած հոտ ա»։
Զուռնաչին զուռնեն, դափը դափաչին,
Քափկիրն ու թավեն՝ մքրուկն ու աշչին․
Կպրած տիկն ու թասը պարոն շիրաչին,
Էնպես խըփեցին Մոլլի ճակատին,
Որ աչքն բուռն ընկավ, սկսեց ձեն տալ․
«Ա՛խպեր՝ ի՞նչ ասեմ, էս ի՞նչ ա իմ հալն»։
— «Բանը գլխիցդ կտրվե՞լ ա՝ քո՛փակ՝
Որ մեկ աչքդ էլ ա քցես քո աղաք։
Ձեռդ էլ ա՛ ժա՛ժ տուր, թե պար չես գիտում։
Ի՞նչ ես էդ հոտած ըռեխըդ ցրվում։
Մեկ իծի պես էլ չե՞ս կարող մկկալ,
Յա իշի թահըր կանգնիլ ու զռա՞լ»։
Էսպես կռները թափեթափ տալով,
Հետը մկկալով, վախտ վախտ զըռալով,

Հենց ընկավ ճամփա, տուն հասնի բարով։—
Քռաղադինա ֆորսկանի մեկը
Հինգ սհաթ խստել թվանքի ոռքը,
Աչքը ջուր կտրել ու բուսու մտել։
Հենց է՛ն էր ուզում, մեկ ղուշ սպանիլ։
Մոլլի մարաքեն ղուշը որ տեսավ,
Բարով մնա՛՝ ասեց ֆորսկանին՝ թռավ։
Ֆորսկանի աչքը կայծակին տվեց,
Մոլլին պար գալիս որ տեսավ, վազեց,
Թվանքի լուլեն միջիցն ճոթ էլավ,
Էնպես նրա գլխին սաստիկ վրա էկավ։
Խեղճ Մոլլեն էլ եդ՝ գլուխը լաց էլավ․
Էլ եդ իր զուռնեն փըշեց, ու ասավ։
Որ էն օրհնածը գլխին խելք դնի,
Ի՞նչ անի, որ էլ բալի տակ չընկնի։
«Տո տա՛վար՝ չոլումն ախր ո՞վ պար կըգա,
Ի՞նչ ծուխ ա մտել քիթդ՝ քեզ դաղում ա։
Տեսար ղուշն նստած՝ գըդակըդ վեր ա՛ռ,
Կուզեկուզ ընկի՛ր դաշտ, ու ձոր ու սար։
Ո՛չ ղուշ կփախչի, ո՛չ դու կթագվիս,
Էս ի՞նչ բերիր դու էս օր իմ գլխիս»։—
Մոլլի գլուխը հաստ, ու ծուծը բարակ․
Ճամփին էլ կերած էնքան տուր, քոթակ,
Սաղ Ղուռանն փորումն, կարթացող, տեղյակ
Փեշերն վեր քաշեց, դրեց կռնատակն
Ջարդված ղայլանը ու գզած գդակն․
Փիր ու փեղամբար կանչելով՝ ընկավ
Ճամփեն կուզեկուզ, մեջքը կոտրելով,
Կնկանն, զանքաչին օրհնություն տալով,
Իր հարամ փորն էլ հետն անիծելով,
Հենց մեկ բաղի մոտ հասավ, տնքալով։
Բաղմանչին հինգ օր աչքը չէ՛ր կպցրել,
Գիշեր ու ցերեկ զարթուն մնացել։
Որ գողը բռնի, հախիցը վեր գա։
Կուզ Մոլլին տեսավ հենց բիրադի նա,
«Էս ա իմ գողըս, որ օրը ճաշին
Էսպես վախում ա, գընամ, նրա հոգին

Հանեմ, վեր ածեմ, որ էլ մյուս անգամ
Չըգա՝ թե ինքս էլ որ նըրան ձեն տամ»։—
Աստված իմանա, թե ո՛րքան թագեց,
Տունն էլ հեռու չէր, նրա բախտը բանեց։
Գնացին դատաստան, որ գանգատ անեն,
Մոլլի վերջի կարգն էս օր կատարեն։
Բաղմանչին սկսեց իր զուռնեն փչել,
Ախունդն Մոլլի կճուճն լավ ձեռնահարել։
Տեսավ մեջը փուչ, էլ հատիկ չկա,
Արձակեց Մոլլին՝ որ իր տունն գնա։
Էնքան ծեծվել էր անճարն ու ջարդվել,
Որ ջանումն էլ սաղ տեղ չէր մնացել։
Քանի առնում էր դեղն ու մհլամը,
Ու միտքը բերում կերածի համը,
Վա՛յ էր կանչում ու դոշին վեր հատում,
«Ով էս աշխարքումն, անիծած տեղումն
Ամենի խոսքին միշտ ականջ կանի,
Մեկ գլուխ ու թո՛ղ՝ երկու ձեռք անի»։—

ԵՐԿԱԹԱԿԵՐ ՄՈՒԿՆ ՈՒ ԱՂՔԱՏ ՀԱՐՈՒՍՏԸ

Փո՛ղն ա բան տեսնում էս մեր աշխարքումն։
Գեղըցու խոսք ա, հա ես չեմ ասում,
Բայց խի՛ստ հեսաբի,
Ով բանը չափի։

Մահն էկավ դուռը մեկ հարուստ մարդի,
Խեղճն ուներ հենց մեկ բեդովլաթ որդի։
Կանչեց նրան մոտն, խելք դըրեց գլխին.
«Գիտեմ, որ ասեց՝ իմ դատած մալին
Ղադրը չե՛ս անիլ, կուտես, կմարսես.
Վերջն դռնեդուռ հաց պետք է ուզես։
Արի՛, խրատըս գետինն մի՛ քցիր,
Երբ էս օրին դու հասնիս, գոմն մտի՛ր,
Պարանը քցի՛ր էն մեծ սնի արանքն,
Կախվի՛ր, ու խեղդվի՛ր, թե ատես քո կյանքն»։—

Շաբաթ չըքաշեց, որ հերը թաղեց.
Մեկ մարդ աշխարքումս էլ նա չըթողեց։
Սազանդար ասես, դմբակ ու դայրա.
Էլ դափ ու զուռնա, չմընաց, մոյդա,
Բարեկամներին գլխին հավաքած,
Փորի հետն ընկավ, քեֆ արեց, ցնծաց։
Էս անիրավներն էլ էնպես էին
Նրա ղուզը քամել ու նըստել ուսին
Օրը հազար անգամ գլխովը երդվում,
Ու անուշ խոսքով հետն էլ լավ եղում,
Որ հենց էր կարծում էն ողորմելին,
Թե ի՛ր ձեռին ա նրանց սուրբ հոգին.—
Բայց ո՞ւմ չի էսպես փորի բարեկամ
Ռաստ էկել՝ որ նոր ես բանը շուռ տամ։
Հենց դանը հատավ, ջաղացն էլ կանգնեց,
Ով էլ հաց ուներ, իր դարդը քաշեց։
Փորի տակն ընկավ հենց ջուլ ու փալանն,
Էլ ո՞վ էր գիժ՝ որ մոտիկ գա նրան։
Բարեկամները տաշտաքերանքն էլ
Որ լավ մարսեցին, պարկը թափ տվին,
Տիկը մզեցին, ջանը հանեցին,
Բերանն ու միրուք թամուզ սըբեցին,
Խաչակնքելով ղըրաղ քաշվեցին,
Ձեռը լվացին։
Ո՛չ թե բարով տալ, կամ կշտովն անցնիլ
Նրանք լայաղ չէին անում, կամ խոսիլ։
Մեկ բան ասելիս էլ հըհռում էին,
Ծափ տալիս, խնդում, ծաղր անում խղճին։
Մեկ օր էլ տեսան, մաշիքը ծակ էր.
Մյուս շորերն հո ձեռից ընկել էր։
Որ չասեց՝ թե մուկն ա մաշիքն ծակել,
Գելը կատաղեց, էնպես ծաղր անիլ՝
Քա՛րը կը պատռեր, ի՞նչ թե նըրա սիրտը,
Որ էլ տեղ չուներ, ծածկի իր դարդը։
Դանակն ոսկռակն էկել էր, հասել
Մեկ անուն ուներ, էն էլ նա կոտրել։
Հոր տըված խրատն իսկույն միտքն ընկավ,

Սիրտն արնով լիքը հենց որ տուն էկավ.
Մեկ թոգ վեր առավ ու գոմը վազեց,
Հոր հոգին հիշեց, իր օրն անիծեց,
Էլ հոգի, հավատ ի՞նչ միտքը կըգար,
Որ մեղա ասեր, յա իր մեղքը լար։
Թոկի ծերը որ նա չի՛ բարձրացրեց,
Գերանի արանքն ուժով որ խրեց,
Հանկարծ մեկ տոբրակ է՛նպես շըրխկա՛ց
Առաջին, որ աչքն վրեն մնաց սառած։
Ոսկի էր մեջը լիքն ու պինդ կապած.
Ո՞ւմ էն հաղաղին պատահի հանկարծ
Էսպես բան, որ խելքն էլ վըրեն մնա,
Նո՛ր հոգի չառնի, նոր սիրտ չըստանա։
Բարի հոր միտքը նա նոր իմացավ,
Վեր առավ փողը, հետը տուն տարավ։
Օրեց օր էլ եդ ոտն ու գլուխն դըզեց,
Բարեկամների տուտն էլ եդ բացվեց։
Բայց էն շա՛տ վաղ էր, որ էշը կաղ էր,
Էս մահվան գին էր, իշտահի բան չէր։
Նոր շենացածը մկան հիշատակը
Մըտքումն պահելով, ու իր առակը.
Մեկ օր էլ նրանց եդ ղոնաղ արեց,
Հազար բաբաթ բան պատրաստիլ տվեց։
Որ կերան, խմեցին, քեֆներն շաղացավ,
«Պա՛տվելի իշխանք՝ բերանն բաց արավ,
Աշխարքումս հրաշք շատ է պատահել,
Բայց Աստծու խաթեր՝ ինձ՝ խնդրեմ ասել,
Ո՞վ է լըսել՝ թե անիրավ մուկը
Թողած հավի միսն, շաքարն ու ձուկը,
Երկաթի խոփի կեսը էնպես կըրծի,
Որ տեսնողի աչքն բաց մընա, սառչի»։—
— «Կըլի, շատ կըլի, Ա՛ղա»՝ ձեն տվին
Նրանք հազար տեղից, խոսքը ղորդեցին։—
— «Երկաթ ու մո՞ւկը»։— Տղե՛րք՝ դուս էկե՛ք,
Մուկը որ մաշիք կարող չի ծակիլ,
Նա ի՞նչպես կարաց երկաթը ծամիլ»։—
Դուռը փակած էր, տղերքը կանգնած,

Կետի, դագանակ ձեռներին բռնած։
Ղորդ ա, կերած հացն նա հարամ արեց,
Որ հալալ տեղ չէր, խի՛ստ շատ լավ արեց։
Հիմիկ մարդիք որ իրանց խերն ուզեն,
Էսպես բարեկամ չուզեն, ռադ անեն,
Քանի՞ էսպես ճաշ պետք է պատրաստած,
Քանըսի՞ մաշիքն առաջը դրած։
Քանի փող ունիս, մուկդ երկաթ կուտի,
Ձեռըդ պակսելիս՝ մաշկիդ չի՛ դիպչի։

ՀԱՑԱԿԵՐ ՓԵՇԸ

Անիրավ աշխարքն՝ ախր ո՞վ չգիտի,
Որ լավ շորին միշտ գըլուխ վեր բերի։

Մեկ սարում, չոլում մեծացած օմքին,
Որ դեռ չէր խաբար աշխարքի բանին,
Էկավ մեկ քաղաք, շունքի հարուստ էր,
Տեսավ ամեն մարդ որ զարդարված էր,
Ինքն էլ սկսեց խասից, ղումաշից
Մեկ ձեռք շոր կարիլ, ու ոսկու թելից
Յախեն էլ կարիլ։ Տեսնողի աչքը
Հետը գնում էր, ու նրա փառքը
Էնպես մեծացավ, որ մեծ ու պստիկ
Ո՛չ ցերեկն էին տալիս նրան մարդիք
Ո՛չ գիշերն հանգիստ. ու տանը թողում։
Հացի կանչում նրան, իրար ձեռից խլում։
Զունքի փալանը նոր էր ու թազա,
Ո՞վ չէր տալ պատիվ նրան համեշա։
Նա լսել էր, որ քաղաքի մարդը
Հացի քոռ կըլի, ու էս մոհբաթը
Որ տեսավ, մտքումն խիստ շատ զարմացավ։
Հրեշտակ են նրանք, էնպես իմացավ։
Քիչ էր մնացել, իր էլած խելքն էլ
Տանիլ տա. չեբն հո՝ վաղուց դարդակվել։
Շուտով զգաստացավ, խելքը ժողովեց,
«Մեկ փորձեմ սըրանց, մտքումը ասեց,

Ու շորը փոխեց։
Քիչ քիչ գդակի փոստն դուս էկավ ծերիցը,
Մաշկի տակն էլ կախ մնացել կրընկիցը։
Ջուխի հո՝ ամեն մեկ թեն ու յախեն
Էնպես գզգզվել, քըձըձվել ամեն,
Որ ուսերն ու լաշն բաց էին մնացել,
Հազար կարկատան քամակին կըպել,
Էլ ո՞վ էր գիժը, որ հաց տար նրան,
Բարի լիս տալն էլ ամոթ էր իրան։
Էս փորձն որ տեսավ, խելքը տեղն էկավ,
Քիչ քիչ ոտ ու գլուխ նորեց, զուգվեցավ,
Տեսնողն անկաչի տակը քորելով,
Ուսերն քաշելով, քուցին անելով,
Տեսավ նրա աչքը որ լիս ա էկել,
Սկսեց սուփրեն նորեն բաց անել։
Ինչ տուն որ նրան սըֆթա կանչեցին,
Հետն էլ շատ ղոնաղ, մեծ մարդիք կային։
Սուփրեն որ նրանք բաց արին, նստեցին,
Հաց ու կերակուր առաջներն դըրին։
Ամենն էլ իր ձեռն ամանին տվեց,
Փորը հո վաղ էր նրանց անում վեց վեց։
Աման ու բերան ճամփեն բաց արին.
Մեր նոր ղոնաղին հըլա մտիկ չարին։
Քանի շիլափլավն տաք տաք էր դրած,
Տոլմեն, խաշլամեն, որ դեռ չէր էկած,
Հանկարծ մեկի աչքն ընկավ նըրա վրա.
Տեսավ որ փեշն է ձեռին բռնել նա,
Ամանի պռնկին դընում ու ասում,
«Փե՛շ՝ հաց կե՛ր, քեֆով, ի՞նչ ես վախենում,
Քեզ են էս պատիվն տալիս էս մարդիք,
Ինձ հո չեն սիրում էս շատ պատվելիք։
Կե՛ր ու գլուխդ ա՛ռ, փախչինք սրանցից։
Թե չէ՝ տըված հացն կառնին մեզանից.
Դու որ կտրատվիս, ոչինչ դարդ չունիմ,
Ես կմնամ ցխումն, էստուց ես փախչիմ.
Մարդին մարդ շինողն որ շորն է էլած,
Գնա՛նք մեր սարը, անիծվի էս հացն»։

ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՑԻՆԸ

Ծառերն որ մեշումն խիստ շատ զվիրն էկան
Կացնի ձեռիցը, ու էլ չիմացան,
Ի՞նչ անեն, իրանց գլուխը պահեն,
Խորհուրդ արին, մեկ ճար իրանց անեն։
«Կացինն ի՞նչ զատ ա, որ մեզ քյար անի»,
Ձեն տվեց նրանց՝ մեկը ծառերի։
«Մենք որ կոթ չտանք, կացինը կարա՞
Մեզ վնաս տա, կամ հեչ մեզ մոտանա»։
Թո՛ղ իմացողը ինքը իմանա,
Ու նհախ տեղը կացնի կոթ չտա։
Թե չէ սկիզբը իրան կկտրի,
Հետո փոշմանիլն բանի պետքը չի՛։

ՉԸՂՐԵԽԸ

(Բամբակի հունդը հանելու հաչաթ)։

Մեկ քըրդըստանցի անմեղ Հայ մշակ
Տուն ու տեղ թողած՝ էկավ մեկ քաղաք,
Որ չըղրեխ քաշի, մի քիչ փող դատի,
Գնա, որ իր խեղճ օղլուշաղն պահի։
Չըղրեխի անունն էր մենակ լըսել,
Աչքով չէր տեսել, հունարն իմացել։
Չըղրեխ ու տըրեխ հենց գիտեր մեկ ա,
Միտքը մոլորված՝ նա քուչա քուչա
Որ ման էր գալիս, մեկ մարդ ռաստ էկավ,
Աչքիցն ու ունքից նա չափեց, տեսավ,
Որ էս օրհնածն իր ատամի խարջ ա։
«Ախպա՛ր՝ քո խոքուն ղուրբան էղնիմ՝
խա՛յ՝
Չըղրեխն օր կըսեն, էս իմա՞լ զատ ա։
Ջոջուխ ու լաչերս տուն եմ վորնդել,
Ջըմեն ֆուխարա մեր օլքեն թորգել,
Քալել էմ վալիաթն, օր չըղրեխ քաշեմ,

Տանիմ զիմ քուլվաթն պախեմ,
                                        կերակրեմ»։—
  Սատանա մարդին գազ, կշեռք պետք չի՛,
Աչքով նա մարդի խելքը կըչափի։
Գըլխին խելք դըրեց, որ գնա, մոմ առնի,
Տանի շը՛ղրեխի չորս կողմը վառի,
Առաջին չոքի, դեմը համբուրի,
Դեմը շըղրեխի կոթը պտըտի։—
  Շուտով վազըվազ գնաց, մմերն առավ,
Ու արդար սրտով նա իր ուխտն էկավ։
Ինչպես ասել էր, մմերը վառեց,
Չոքեց առաջին ու խաչակնքեց։
Բայց վա՜յ նրա օրին. կոթն էլ որ չքաշեց,
Էն դաստա միրուքն էլ հետը ծալվեց։
Ի՞նչ վնաս ունի, միրուքն ո՞վ կուտի,
Չըղրեխն կատու չէր, որ երեսն չանգռի։—
  Խեղճ Քրդստանցին էնպես իմացավ,
Թե դեռ շըղրեխի վախտը չի հասավ,
Որ մուրազը տա, իրան ռադ անի,
Չոքելով էլ՝ ջուրն եկավ ծնկների։
Առաջ հլա կամաց սկսեց ասիլ,
«Յամա՜ն սուրբ շըղրեխ՝ քզի եմ խանչել,
Զիմ մորուս սաղաղ՝ քեզ ապավինել:
Թո՛րգ զիմ մորուս, թո՛րգ՝ քեզ ղուրբան եղնիմ,
Թո՛րգ,— թո՛րգ,— հա՜յ յաման՝ արեվուդ մեռնիմ,
Քզի մեկ ող մը ես մատաղ կէնեմ,
Զիմ մորուսը թո՛րգ. որ խազանչ էնեմ»:—
Չըղրեխ ի՞նչ տեղ էր քրեվար սովրել,
Որ կարենար նրա աղոթքը լըսել։
Ղոյմաղոչում դու մեր Քրդստանցի,
Գիժ կովի նման կաթըդ շուռ ածի,
Թո՛րգ, թո՜րգ ասելով՝ որ զարբ չի արեց։
«Չքո շինողի խերը անիծեմ,
Չքո բունյաթի փիրը նզովեմ,
Խուլ մի, գեշ խաչաթ խմա մեջ ձգել,
Ուխտ կըսեն. էրե՛, գլխուն խռովել.

Չմլա դմբլակի պտուղն խավարի՛,
Մեր սաքվի քյոթուկն էստուց աղեկ կըլի»։—
  Ասեց ու հետը միրուքը քաշեց,
Թափեթափ տալով, պռոշը կծեց։
Չըղրեխը մընաց միրքիցն ճոլոլակ,
Անեծք ու օրհնանք խառնեց մեր մշակն։
Չըղրեխն անեծքին ի՞նչ մտիկ տար,
Թե գլուխն էլ հետը մեր Քրդի պոկ գար։
Ընչանք անիծածն թողեց խերն ու շառը
Միրքի կեսն ու բեղն հենց էնպես ձար, ձար
Պոկեց, պլոկեց, տարավ Քրդի չարը։—
  Աստված ո՛չ տա՝ մարդ էնպես տեղ ընկնի,
Որ խըրատ տվողն էլ սատանա ըլի։
Թե չէ է՛ն չղրեխն կըկապեն միրքիդ,
Որ չես պրծընիլ, թե տաս էլ հոգիդ։

ԲԱՔՄԱԶ (ԲԱԴԱԳ) ԾԱԽՈՂՆ ՈՒ ՍԱԼԴԱԹԸ

Սալդաթի մեկը մեկ դուքան մտավ,
Բաքմազ կուզեր նա առնի, ու տեսավ,
Ծախողի մեկ աչքն վաղուց քոռացել,
Ի՞նչ աներ սալդաթն, շատ քիչ էր փողն էլ։
Ընչանք բախկալը՝ իր քոռ աչքովը
Գրվանքա, կշեռք, բաքմազն գդալով
Մեյդան կըբերեր, չափ ու ձև կաներ
Պակասն, ավելին գլխիցն վեր կառներ՝
Սալդաթի ձեռը փլավ չէր ուտում,
Ուրիշ մարդ էլ խոմ՝ չկար դուքանումն։
Մեկ շերեփ լիքը բաքմազ վերցըրեց,
Էնպես բախկալի սաղ աչքին խըփեց,
Որ ընչանք նա իր գլուխը լաց կըլեր,
Ուսվա երեսն ու աչքը կըսրբեր,
Սալդաթն սաղ կճուճ բաքմազն վեր առավ,
Էն գնալն էր, որ գնաց, եդ չեկավ։

Բանն ընչանք բանի վերջը կհասնի,
Գողը՝ քարվանը կըտա, կըտանի.
Թե աչքդ էլ քոռ է, սարհեսաբ բանիդ
Կա՛ց, թե չէ էլածն ջո՛ւր կդառնա ձեռիդ։

ՃՐԱԳՈՎ ՄԱՆ ԳԱԼԸ

Աշխարքիս բանը էսպես էկել ա,
Էսպես գնացել՝ մարդ ի՞նչ իր գլուխը լա։
Առաջնի ղադրը մենք չենք իմանալ,
Ընչանք եդինը իրան չի՛ ցույց տալ։
   Մեկ գեղում մեկ Հայ սարքար կարգեցին,
Գեղըցիք իրանց բարեբար մարդին
Պատիվ չըտալով, օր չէ՛ր անց կենում,
Որ խանի դռանն, կամ դիվանխանումն
Գանգատ չի՛ անեն, որ նրան փոխի,
Իրանց վրա մեկ նոր՝ Թուրք սարքար կարգի։
   Խանը խրատեց, նըրանք չիմացան,
Սարքարին փոխեց, ապա դինջացան։
Հավատի դուշմանն ղամշին քամակին
Նոքարն եդևին, ֆառաշն առաջին
Փեդ ու միս արեց, նրանց հոգին առավ,
Էլ ո՞ւմ ասեին, մեկն էլ չիմացավ։
Մեկ ծեր մարդ նըրանց գլխին խելք դրեց,
Գիշերն որ էկավ, մոմ վառիլ տվեց,
Բոլոր գեղըցոնցն ու քուչա քուչա՝
Սաղ գիշերն էսպես մեծ ու երեխա
Ման էկան, մինչև օրը լուսացավ,
Խանն իր քոշկիցը բոլորը տեսավ,
   Որ կանչիլ տվեց, պատճառն իմանա,
Խելոք հալևորն, բան տեսած՝ ուստա։
«Քո գլխին ղուրբան»՝ խանին արզ արեց,
«Ասած խրատըդ որ մեզ քյար չարեց,
Ճրագով ընկանք բոլորս տնետուն,
Որ գտնենք մեր հին սարքարի բուսուն.
Սևերես մարդին, ի՞նչ խոսք կըհասնի,

Նորն ընչանք չըգա, հինն իմացվիլ չի»։—
Խանն նրանց գլուխը մեկ լավ էլ լվաց,
Ու էլ եդ կարգեց հին սարքարն փոխած։

ՁՈՒ ԳՈՂԱՑՈՂԸ

Ձու գողացողը ձի կըգողանա.
Թո՛ղ լսողն գլխին լավ մուղաթ կենա։

Անմեղ երեխի միտն դեռ աշխարի
Ո՛չ ցավը գիտեր, ո՛չ չարն, ո՛չ բարի,
Ընկած իր քեֆին, իր քաղցր արևի
Ձենն ածելով միշտ շրջեր տուն, այգի.
Ծառերի տակին ղշերի ձենին
Մայիլ մնացած՝ աչքի տեսածին։
Ով մեկ քաղցր աչքով նայում էր նըրան,
Ով մեկ անուշ խոսք հենց դընում բերանն,
Էնպես էր կարծում, թե իր ախպերն ա,
Ուզում էր, հոգին հանի, նըրան տա։
Ո՛չ պատժի համը, ո՛չ մեղքի ձենը
Դեռ չէր իմացել, որ պահի ջանը։
Ինչ մերն ասում էր, էն էր կատարում,
Նըրա բերնի խոսքն ու ասածն անում։
   Հանկարծ մեկ օր էլ հարևանի տանն
Խաղալիս՝ գտավ մեկ ձու նա բիրդան։
Ձու ու երեխա՞—ի՞նչպես չէր խաբվիլ։
Ձուն դըրեց ջեբը, սկսեց քաշվիլ։
Մերն ուրախ ուրախ ձուն ձեռիցն առավ,
Ճակատը պաչեց ու խըրատ տվավ։
«Քո ջանին մեռնիմ, խելոք տղեն էն ա,
Որ դըրսիցը՝ հեչ ձեռը դարդակ չգա։
Էդպես ղայրաթով կա՛ց, չարըդ տանիմ,
Որ ես էլ մի քիչ ա՜խ՝ լավ օր տեսնիմ»։—
Բայց վա՜յ էն մորը, որ իր երեխին
Էսպես խրատի, ծախի իր հոգին։
Երեխի բերանն է՛ն լազաթն ընկավ,

Որ պազան դառավ, քանի մեծացավ։
Հանդ ու հարևան, բաղեր ու բոստան
Նըրա գող ձեռիցն ամանը էկան։
Դուքան, տուն կտրիլ, ապրանք փախցընիլ,
Քարվան թալանիլ, ճամփորթ սպանիլ,
Փեշակ դառավ նրան։ Ու ազիզ մերը՝
Քանի բերում էր, էնքան իր սերը
Ավելցընում էր, որդուն խըրատում,
Տեղն էկած վախտը ինքն էլ էր անում։
Բայց ով ուղենա, ֆորի մեջ ընկնի,
Գըլուխը կջարդի, կամ ոտն կըկոտրի։
Էսպես էլ էլավ մեր գողի բանը.
Մեկ օր էլ ուզեց, որ խանի տանը
Քյահլան ձին կապած՝ դուս քաշի, տանի,
Ձին տանելու տեղ ինքն հասավ բալի։—
Թող հիմարք ասեն՝ թե մեր ճակատին
Ինչ գրված որ ա, էն կգա մեր գլխին:
Ով էսպես գըրեց, ձեռը չորանա,
Ճակատն ի՞նչ իր գլուխն ու արևը լա,
Որ մարդ ինքն իրան ղազաբի կըտա։
Փիս խրատներով ճամփից դուս կըգա։—
Խանին էլ խնդիր անող ո՞վ կըլեր։
Մեր Ասիացիք չեն էնպես կեռմեռ,
Ու դատաստանը շուտով վերջացնում,
Կամ գլուխ կտրում, կամ աչքեր հանում։
Երկար պարանը որ չըձգեցին,
Մեր ղոչաղ գողին տակին կանգնացրին,
Որ խեղդեն նրան, նա չոքեց բիրդան,
Որ կես սհաթ էլ ա դաստուր տան նըրան,
Իր մորը տեսնի ու մուրազն առնի,
Մերն էլ իր կաթը նրան հալալ անի։
Հենց մերն մոտացավ՝ լալով, սքալով,
Որդին ճտովն ընկավ՝ դոշը ծեծելով,
Բայց ա՜խ՝ տեսնողի գլխին կրակ վառվեց.
Որ անսիրտ որդին՝ մորն երբ փաթութվեց,
Ծիծն առավ բերանն՝ է՛նպես սաստիկ կծեց.
Որ տեղից պոկ գալն ու մոր հոգին տալն

Երկար ժամանակ էլ հեչ չքաշեց։—
Թո՛ւր էր, քաշեցին, քար էր, վերցրին.
Գողի՝ տեղն ու տեղն որ հանեն հոգին։
Նա անահ, անվախ՝ իր կիսահոգի
Մոր լաշին քցեց աչքն ու բիրադի
Ձեն տվեց խալխին։ «Տեսե՛ք՝ ջամըհա՛թ՝
Լացե՛ք իմ գըլուխն ու բարի խրատ
Տըվե՛ք ձեր որդոցն, որ էս ղազաբին
Չի հանդիպին ու ձեր անբախտ գըլխին
Անեծք չըթափեն, իրանց պահպանեն։
Գյոռբեգյոռ ըլիս՝ անիրա՛վ իմ մեր,
Էս է՛ն մեկ ձվի լազաթն ու խրատն էր,
Որ դու ինձ տվիր, էս տեղն քըցեցիր,
Երկուսիս հոգին դժոխքի փայ արիր»։—
Ասեց ու թուրը մեկիցը խըլեց,
Ընչանք որ հասան, նա իր սիրտն ցցեց։
Ու մեռնելիս էլ՝ շունչն էստով կտրեց։
«Վա՜յ էն հորնը մորն, որ որդի պահի,
Ու ո՛չ խրատ տա, ո՛չ էլ լավ կրթի»։—

ԱՌԱՍՊԵԼՔ

ԺԱՆԴ ՓՈՒՇԸ

Փըշին հարցըրէն՝ թե ի՞նչ խեր ունիս,
Որ քարվանի բեռն մոտովդ անցնելիս,
Էլ բուրդ ու բամբակ դու չես հարցնում,
Միշտ քաշում, պոկում, բեռն խարաբ անում։
«Խերն ի՞նչ եմ անում», պատասխան տվեց
Անիծած փուշը ու գլուխը ցցեց։
«Խեր ուզեցողը՝ խեր էլ պետք է տա,
Իմ սրտի ուզածն էս չի՛ մեկն էլ ա։
Էնդով ա հենց իմ սիրտըս հովանում,
Որ ուրշի՛ տունն եմ ես էսպես քանդում»։—
Էսպես տուն քանդող փշեր խիստ շատ կան,
Երանի՝ նըրանց մեկ օր կրակին տան։

ՖՈՐԹՆ ՈՒ ԽՈԶԸ

Կով ու խոզ մեկ մարդ իր թավլեն արած՝
Կովին դարման, էլ՝ չէ՛ր ածում առաջն։
Խոզին թեփ, գարի տալիս, չաղացնում։
Ֆորթն էս անիրավ գործքը որ տեսավ,
Մորը գանգատվեց ու մեկ օր ասավ.
«Ախըր կաթն ու եղ, մածունն էլ հետը
Հո մեզանից ա ստանում մարդը,
էս ի՞նչպես բան ա, մեր միսն էլ ուտում,
էլի էս խոզին ընդունում, սիրում»—
«Համբերի՛ր՝ որդի՛, վերջը կըտեսնիս»,
Մերն ասեց նըրան, «ու լսիր խոսքիս,
Մարդն էն բարեսիրտ կենդանուցը չի՛,
Որ նըհախ տեղը լավություն անի։
Դըրա հեսաբը մեկ օր կպահանջեն,
Թող մեզ խոտ տան ու մեզ մըտիկ չանեն»։—
Մեկ օր էլ ֆորթի ջանը դող ընկավ,
Որ լսեց դռանն՝ ինչ ճղղոց էկավ.
«էս ի՞նչ խաբար է», մորը հարցրեց։—
— «Գարո՛ւ հեսաբն է»,— նա պատասխանեց։
Թո՛ղ անոշ թիքին մարդ հեչ չի խաբվի,
Քըթից կհանեն, ինչ օր որ ըլի։—

ԷՇՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Ամառվա էն շատ շոք ժամանակին
Խեղճ իշի մեկը իր բեռի տակին
Կանգնել էր անսաս մեկ մեծ մեյդանում,
Քիթ ու պռունկը քաշ՝ խոր միտք էր անում։
Ջար ճանճերն էլ հենց վախտ էին ճարել,
Էլ պոչ ու անկաջ նրանք չէին թողել,
Ուր հասնում էին, կըծում, ցավացնում,
Իշի դարդերը դըհա շատացնում։
Մեկ շուն էն կողմիցն՝ շըվաք տեղն ընկած,
Իշի չարչարանքն տեսավ ու ասաց,
Ա՛յ ողորմելի՝ քեզ ո՞վ էր ասում,

Որ յախեդ ձեռ տաս ու մընաս բալում։
էն գլուխն ու անկաջն, էն ձեննն ու գոռալն,
Որ դուք ունեք, ու էն սիրուն ման գալն,
Թագավորի դուք լայաղ կըլեիք,
էդ չոռն ու ցավը դուք տանիլ չէիք,
Թե մեկ դանգի չափ խելք ունենայիք,
Ձեր գըլուխն ձեռի տակ չըքըցեի՛ք։
Մարդի առաջին քանի որ կուչ գաս,
Գըլխիդ կընստի, թե լավ իմանաս։

ՍՈԽՆ ՈՒ ՍԽՏՈՐԸ

«Ա՞յ թե քոռուղուփ, դու հոտած պատ ես,
Ժանգի պարկի պես լըցվել, տըռզել ես»։—
Մեկ օր սըխտորը էսպես խոսք քըցեց,
Խեղճ սոխի գըլխին թուք ու մուր ածեց։
«Կոխքըդ հաստացել, գլուխըդ գիրացել,
Ի՞նչ ես դու էդպես շատ ուռել, փըքվել։
Ինչ պտուղ որ ես, քեզ ո՞վ չի գիտի,
Որ ուզում ես՝ թե հենց քեզ տեղ ըլի։
Մարդ քեզ ուտելիս, բերանն ես կըծում,
Դանակ դիպչելիս՝ աչքը քոռացնում։
Ջեմ գիտում՝ մարդը սխր ի՞նչ լազաթ ա
Քեզանից տեսնում, որ քեզ ցանում ա։
էլ մաեզ ու բոստան հեչ չի՛ մընացել,
Բոլոր գեշ հոտովըդ բռնել, հոտացրել։
Ընչանք չեն եփում, քո աչքըդ հանում,
Դու քո փիս հոտը չե՛ս պակասացնում»։—
— «Տօ դու քո Աստվածն՝ ով էլ ինչ ասի,
Խոսքը սաղ կըգա, իրավունք ունի»։—
Սոխը ջուղաբը եդ դարձացրեց, ասաց.
է՞դ էր մնացել, փա՛ռք քեզ՝ տե՛ր Աստված.
Որ դո՞ւ էլ ըռեխդ ցրվես ինձ վրա։
Տօ ա՛յ անզգամ, հոտած, բեհայա,
էփելիս էլ ա ես հոտս քաշում եմ,
Մարդի բերանը ապականում չեմ։

Քո գլուխը լավ՝ որ խաշի միջումն
Է՛ն հոտն ես թողում, ուտողի բերնումն,
Որ մոտի կանգնողն իրանից գնում,
Սիրտը խառնըվում, ու քյալլեն ծակվում։—
Գիտե՞ս՝ խնամի՝ իմ միտքըս ի՞նչ ա,
Ես չեմ ուրանում, իմ հոտըս փիս ա։
Արի՛, դու էլ քո չափը ճանաչի՛ր,
Խոսքիս լսի՛ր ու լեզուդ քեզ պահի՛ր։
Երկուսս էլ ունինք էդ պակասությունն
Մենք մերը ծածկենք, ու պահենք թաքուն։
Մենք իրար վատն որ ասենք մեր լեզվով,
Խայտառակ կըլինք, կմնանք ամոթով։—
Էսպես սոխ, սխտոր հոտած մարդըքերքն
Լա՛վ կանեն, իրանց այիբն որ ծածկեն։
Բայց շատ անգամ որ էսպես սխտոր մարդ
Բերանը բանում չի ու վախտ բեվախտ
Ուրշին փուդ դնում, է՛ս ա մեզ էրում,
Էս մեզ խորովում։

ԱՂՎԵՍՆ ՈՒ ԳԵԼԸ

Վա՜յ էն մարդկնն՝ որ էնպես տեղ ընկնի,
Որ գրի, արզի մտիկ տվող չըլի.
Մարդի՝ սաղ սաղ էլ որ ուտեն, ապանեն,
Մ՛եկ սիրտ չի ցավիլ, կաշին էլ հանեն։

Աղվեսն խորամանկ մեկ ձմեռվան օր
Սոված ման գալիս՝ նա որդիանց որ
Մեկ թուղթ գտավ ճամփին, բերնին որ բանած՝
Նա ուսստ չէկավ գիլին կատաղած,
Ջանը դող ընկավ, փախչել չկարաց.
Գլուխ տալով էկավ մեր գիլի առաջն։
Եդ էկած ու կապը կտրած մարգին
Ինչ պետք է շոքիլ ուստի առաջին։
Հազար պարզամիտ ու անմեղ ուստի
Հախիցն վեր կըգա, ավ իր բանն գիտի։—

Դեռ գելն իր իշտահն ատամի տակին
Հազըրում էր, որ կնքի աղվեսին,
Սատանի ոտը բարով տալուց եդ,
Թուղթը բաց արեց, կարթաց նրա հետ,
Որ ինչ տեղ գնա, տասը ճուտ ու հավ
Տան իրան. էնպես խանն հրաման արավ։
Գիլի փոր, ալիք է՛ն կատուն ընկավ,
Որ էս լսեց։ Տեր աղվեսին ասավ,
«Ցառաշ չի՞ պետքը, որ հարկն հավաքի,
Էդ գործն էլ թո՛ղ դու՝ իմ վզիս ըլի։
Բանը թամամեց։ Երկուսն էլ հասան
Իրանց մուրազին ու ընկեր դառան։
Գալով, զըից տալով, խորհուրդ անելով,
Հենց էկան, հասան մեկ մեծ գեղի քով,
Աղվեսն մեկ սարի ծերի վրա կանգնեց,
Իր գել ֆառաշին տանդրոչ մոտ ղրկեց։
Գելը գիշերն էլ գեղից կփախչի,
Ո՞ւր մնա ցերեկն ու օրը ճաշի։
Ամա հրամանն տեսավ որ ունի,
Դունչն էլ մեկ կես գազ նա բարձր ցցած՝
Մըտավ գեղի մեջն անահ, անկասկած։
Գեղ ու գել ու շուն — էն էլ էն սհաթին.
Էլ ի՞նչ կհարցներ շների ուսբաշին։
Հենց որ բուրդ ու մազ լավ գզգզեցին,
Ու շատն ատամն էլ հասցրեց մսին,
Մեր Աղվես խանը սկսեց ձեն տալ,
Տանդրոչը թուղթը տալ ու տուն գնալ։
Խեղճ գիլի հոգին բերանն էր հասել,
Հենց էն կարաց նա Աղվեսին ասել։
«Աստված քո տունը քանդի քո գլխին,
Ինչպես ինձ հասցրիր դու էս սհաթին.
Գլխիդ քար ընկնի՛,
Ի՞նչ թուղթ, ի՞նչ հրաման, կամ ի՞նչ տանուտեր։
Անիծվի՛ քո սոյն, էս ի՞նչ իմ բան էր։
Հազար շուն կան, որ ո՛չ գրել գիտեն.
Ո՛չ գրի զորությունն, որ ասածս լսեն։

Դուշմանիս չգա, ինչ իմ գլուխն էկավ,
Ով որ իմանա էս իմ դավն ու ցավ,
Խորամանկ մարդիցն գլուխը պահի,
Տեսնելիս՝ աչքը եղնը քցի»։—

ԱՂԻ ԳՆԱՑՈՂ ԱՋԱՌԸ

Մարդ որ մեկ բան արած չի ըլում,
Ամեն բան աչքին խաղ է երևում,
Ջահել մարդը հո՝ ինչ որ ասում ես,
Անկաշվեր անում, շուռ տալիս երես։

Մեկ Թարաքյամա մեկ քանի աշառ
Առաջն էր արել գնում աղի սար։
Խոտ կերած աշառ՝ էնպես դուզ մեյդան.
Քամին էլ ո՛ր քիթն չի մտավ բիրդան,
Էլ տիրոնչ ռխին չի՛ մտիկ արին,
Պոչ ու գլուխ ցցած՝ նրանք զու քաշեցին։
Տիրոնչ հոգին հո՝ բողազն հասցրին,
Էնքան դես ու դեն՝ խաղ, տրտինգ արին։
Բիրդան մեկ չոլում մեկ քանի եզը
Նրանց ռաստ էկան, կտրեցին հազը։
«Ի՞նչ տեղ եք գնում՝ ա՛խպեր՝ խե՛ր ըլի»,
Տնքալով հարցրին։ Մեր աշառ, մոզի
Էլի իրանց խաղն նորեն սկսեցին,
Էլի փռնչալով՝ գլխներն քամակին
Դրած՝ քեֆը չաղ՝ պատասխան տվին։
«Աղի՛ ենք գնում, աղի». ասացին։—
— «Գնացե՛ք՝ աստված ձեր բանն հաջողի,
Հըլա համն առե՛ք ձեր ասած աղի,
Հետո ձեզ կասենք, հիմիկ վախտը չի»։—
Եզերն ասեցին ու ընկան խոտի։
Աղը որ բարձած՝ էլի եդ էկան,
Քամակ ու ուսեր ուռած, նրանց տեսան։
Էլի որ հարցրին ինչ տեղից գալը,
Էլ ի՞նչ էր նրանց ահվալն ու հալը,

Շլնքները ծուռ, ձեն ու շունչ կտրած
Մեկը խոր նաֆասն քաշելով՝ ասաց,
«Աղի՜ց ենք գալիս, աղից՝ հե՛ր օրհնած։
Էլի ի՞նչ ես մեր ցավն՝ ա՜խ՝ դու անում բաց»։—

ԲԱՐԴԻՆ (ՉԻՆԱՐԻՆ) ՈՒ ՎԱԶԸ

Բարդին մեր վազին ղնամիշ արեց։
«Ի՞նչ ես կուչ էկել»։— Նա նրան ասեց.
«Ես էլ որ չըլիմ, ի՞նչ կըլի քո բանն,
Քեզ որ իմ տակիս շվաք տեղ չտամ։
Ինձանով որ դու չգաս, փաթութվլիս,
Ի՞նչ կըլի քո հալն, էլ ի՞նչպես կապրիս։
Բարակ քամին էլ հոգիդ կհանի,
Էդպես սև օրը՝ Աստված տա՝ չըլի։
Ինձ մտիկ արա՛, տե՛ս, ո՞ւր եմ հասել,
Ինձ պես բոյ արա՛, որ ամեն մարդ էլ
Մտիկ անելիս քեզ՝ խելքը գնա,
Շլինք ծռելով՝ ո՞վ պատիվ կտա։
Ոչ ցից ա ինձ պետք, ո՛չ գերան, ձողի,
Մեկ տուտս գետնումն, մեկը երկնքի
Ամպի, անձրևի, քամու առաջին։
Ծիկներս վեր քաշած, որ սուր ու կացին
Չի հասնի, դիպչի իմ միջքին, ծերին։
Բայց ձեր խեղճ սոյը հենց դուս է գալիս,
Շուտով շլինքը կախ անում, թեքվում,
Ոտի տակ ընկնում, մեկ հով դիպչելիս,
Գետնին չոքըչոք դես ու դեն ընկնում։
Ափսո՛ս էդ պտղին, որ դուք եք տալիս,
Մեզ է՛դ սազ կգար, էս բարձր ծերիս»։—
— «Ի՞նչ եմ անում ես՝ հաստ քոքն ու բոյը,
Շատ բարձրանանք էլ՝ էլի մեր սոյը
Է՛ն սիրտը չունի, գլուխ բարձրացնի»,
Պատասխան տվեց վազը սիրելի։
«Ո՞ւր թողանք մեր քաղցր պտուղն ու ճուխկը,
Էլ ո՞վ կբանա մարդի տխուր միտքը։

Էլ ո՞վ էն աղնիվ, էն սուրբ բաժակը
Կտա, որ հետքն մնալ հիշատակը։
Ու մենք էլ ուզենք՝ մեր պատվի խաթեր
Քեզ պես բարձրացնել տերև ու ճյուղեր։
Ղորդ ա՝ քեզանով մենք փաթաթվում ենք։
Բազի անգամ ու շվաքդ տեսնում ենք։
Բաս է՞ն էլ սա՝ որ մեր բարի տերը
Չունենա էսքան մեր տված խերը,
Քեզ մեկ օր էլա՝ բաղում չի պահիլ։
Լավ չի՞ բա՛րեկամ՝ էսպես զրից անիլ։
Ինձ որ պահում են, փորում տակս, ջրում,
Ի՞նչքան ա քեզ խեր սրանից հասնում։
Ինչքան սիրտդ ուզի, էնքան բարձրացի՛ր,
Մի՛ հպարտանար, մեր ղադրն իմացի՛ր։
Մենք էլ որ պտուղ չտանք՝ քեզ նման.
Մեր նյութն ու ղվաթը չկորցնենք էսքան,
Ո՛չ կըկռանանք, ո՛չ կըցածանանք,
Ո՛չ կբարակինք, ու կհաստանանք։
Բանից վախեցողն ու փորի գերին
Էդպես կգիրանան, երկինքն կհասնին»։—
Երկար բոյիցը, ու հաստ մեջքիցը
Ի՞նչ խեր դուս կգա, կամ մեծ գլխիցը։
Պտղատու մարդը աղնիվ ծառի նման
Պետք է խոնարհի, որ լինի պիտան։
Բայց ա՛խ՝ բարդի մարդն մեկ շվաք տալիս՝
Ցա բաղի վտխառ էլ քիչ մոտանալիս,
Էնպես է կարծում, թե իր պահածն ա
Երկիր ու աշխարքը։ Ու գոռողանա։

ԷՇՆ ՈՒ ՁԻՆ

Էշն մեկ օր պարապ արըշտատալով,
Երկար ականջներն թափթափ տալով,
Թավալ որ տվեց, մոխրիցն վեր կացավ,
Թե ի՞նչ տեղ գնա, ինքն էլ չիմացավ։
Շատ էր էն օրը չունքի զռացել,

Փորի հարսանիքն արել, կշտացել,
Մեկ սաղ շաբաթ էր, փալանի երես,
Կամ դագանակի, բեռնի համ ուտես
Չէր ընկել աչքովն, քամակը դզվել,
Դառն օրի ֆիքրը ի՞նչ կքաշեր էլ։
Էսպես քունն առած, գլուխը ուռած,
Մեկ դունով ուզեց, անց կենա, հանկարծ
Ձիու խրխնչոցն ընկավ անկաջը,
Լենացրեց շեքը, խլըշաց առաջը.
Թափ տվեց քշոցն, մեկ թունդ փռշտաց,
Չունքի գործ չուներ, մեկ կուշտ էլ զռաց։—
Ու ծանրագոգոռթ՝ նա թավլեն մտավ,
Բարով տվեց ձիուն ու բարովն առավ։
Տերը տանը չէր իշի բախտիցը։
Մունջ մունջ բաց արեց նա իր զրիցը։
Թե ի՞նչպես է ձին էս ղաբուլ անում,
Որ իրան հանում են, մեյդան բերում։
Շատ անգամ միտը պռկում ու ղամշում,
Որ ոտն ու գլուխը նա միշտ մանն գալիս՝
Դուզ բանի, տերը վրեն նստելիս։
«Քեզպես քյահլան ձին ի՞նչ կանեն խըրատ.
Ո՞ւմ համար ես դու սովորում մարիֆաթ,
Պարկի՛ր քո քեֆին, երբ սիրտդ ուզի,
Զարթի՛ր դու ճաշին, էդ սիրուն փորի
Ճարը տե՛ս, շնորքն ի՞նչ մասնտահ բան ա.
Որ քեզ էլ էդպես գլխից հանել ա։
Տեսնի՛նք՝ աշխարքումն ո՞ւմն են պատվական,
Նրա՞ն, որ գիժին թունգով է լագում.
Փորը հաստացրել, մեկ բան միտք չանում,
Լավ ուտում, խմում, նայում իր քեֆին.
Գիշեր ու ցերեկ բարձին, դոշակին
Տասը լղրանի ու հինգ գազանի
Գլուխն ու փորը տալիս, որ չնթոլի։
Տեղից վեր կենում, սիրտը քացախած,
Ընկնում դուռ ու տուն, որ մեկ բեզարած
Պարկ ուտած թերի, հետը զրից անի—
Թե նրան՝ որ իր տերն ու օրը

Մաշում, սևացնում, հանում հոգին, որ
Մեկ կտոր հացի բալքի տիրանա։
Էն էլ քըթիցը հանողն հանում ա։
Շնորք, մարիֆաթն որ խեր ունենան,
Մկները պետք է փիլիսոփ դառնան։
Մենք որ չենք սովրում, օսա՞լ ենք ապրում,
Ա՛նբախտ՝ մեր գըլուխն շառից ազատում։
Ղորդ ա, մենք էլ մեր չարչարանքն ունինք,
Շնորքի համար չի՛, պետք է որ տանինք։
Թեըըս քամակիցս որ չեն վերցնում,
Ու բրախ տալիս ախպսում, չոլում,
Հավատացի՛ր ինձ՝ հենց իմանում եմ,
Աշխարքն իմ փայն ա, էլ ֆիքր ե՞րբ կանեմ։
Ղոլան ու փալան, ոռտեն ու նոխտա
Էնքան եմ պատին քսում, որ էն ա
Բարդանի շալը, ծղնոտ ու կաշի,
Վա՜յ տեր կանչելով քերվում, որ մաշվի։
Հե՜րը անիծած՝ ի՞նչ եմ դարդ անում,
Թող ջանը դուս գա տիրոնչն՝ եմ ասում»։—
«Ձեր սոյն է՛ն սոյը չի, որ բան հասկանա,
Ի՞նչ ասեմ, ղղումդ որ լավ ներս գնա»։—
Ձին անսաս նրան պատասխան տվեց.
Ու իշի բերանն էս խոսքովն ցխեց։—
«Ղորդ ա, երբ քանի ես քուռակ էի,
Էնպես քոթագը ինձ չէր դուր գալի.
Ամա որ հիմիկ խելքս էկել, հասել,
Աշխարքի բանը սկսել ճանաչել,
Տեսնում եմ, որ իմ էս կերած հացն էլ
Էս պատիվն, ղուլլուղն, որ ինձ տալիս են.
Իմ մարիֆաթի հունարն ա, ու էն
Քոթակ ուտիլը։ Որ ինչ սհաթի
Դուս եմ գալիս ես, նայում եմ աղի
Ծառեքը կանգնած, ինձ են սպասում,
Մեջքս թիմարում ու լավ զարդարում։
Թագավոր, իշխան ինձ են մտիկ անում,
Որ նստին վրես, իրանց փառքն ցույց տան։
Առանց ինձ նրանք ի՞նչ օր կումենան։

Քանի՞ ինձ պես ձի, իշի չեմ ասում,
Որ խաթրդ մնա, մեր բանն եմ պատմում,
Քանի՞ բոզ յաբու՝ աղըխ ու մաշված,
Քամակի ոսկոռքն հենց բիզ բիզ էլած,
Էս օր չոր խոտի կարոտ են մնում,
Տաք գոմի հասրաթ՝ ցրտում ու սովում
Տանջվում, չարչարվում, յա սոված սատկում,
Յա բեռը կրում»։—
«Շնորքն, մարիֆաթն ով ասի, վատ ա,
Գլուխը հաստ ու ծուծը բարակ ա։
Ձե՛ս լսել, ով որ բանից գլուխ ունի,
Ամեն լավ տեղի նա միշտ հասանի։
Էնպես հաստագլուխն՝ որ դու ասում ես,
Փողն ու շորն էս օր թե ձեռիցն առնես,
Պետք է ջուր կրի, կամ համալ դառնա,
Կամ թե չէ սովու դռնեդուռ մուրա։
Շատ դովլաթի տերն թե շնորք չունի,
Քոշք, սարայումն էլ շատ վախտ չի գիտի,
Ընչո՞վ իր վախտը որ անց կացնի։
Դուռն է դուս գալիս, ոտն է բեզարում,
Քնում, թե խմում, գլուխը շշմում։
Մեյդանում կանգնում, նա թոզ կուլ տալիս։
Բամբասանք անում, մեկին տեսնելիս։
Գրքի հոտ չառել, որ նստի կարթա,
Սիրտն մխիթարվի, միտքը զորանա։
Փեշակ էլ չունի որ հետը ընկնի.
Էսպես ժամանակ, կյանք չկորցնի։
Էսպես ճարակտուր, կամ քնի ձեռին,
Կամ ուրիշ բանի նա ընկած ջանին,
Օրը կորցնում, քիսեն դարդակում,
Իր կյանքն էլ հետը նաղդում, սաղացնում։
Ո՛չ կերածն ունի համ, ո՛չ խմածը,
Գլուխը թշշած, սիրտը խառնըված.
Իր ազիզ արևն քիչ քիչ վերջացնում,
Անպետք աշխարքս գալիս, էլ եդ գնում։—
Չէ՛՝ քանի տերս առաջիս ունիմ,

Որ չի միտք անում, քար պետք է ըլնի.
Թե նա իմ խելքն ա ուզել, կամեցել,
Մարիֆաթ, շնորք ավել մեծացրել։
Անշնորք, անկիրթ, բութ կենդանին
Համ այլոց է վնաս, համ իր խեղճ ջանին։—

ԽՈԶՆ ՈՒ ԵԶԸ

Խոզն ի՞նչ գլուխ ունի, որ ինչ զրից սա,
Բայց մեկ օր եզին սկսեց խրատ տալ նա։
  Խոզ ու խրատ՝
  Տո անհամարատ։
Լսի՛ր՝ սի՛րելի՝ աստանանքին նալաթ
Խոզ փիլիսոփա քի՞չ կան՝ ըն՛մուրվաթ։
  «Իրավ որ եզն ես՝ հո ասա չեն ասում
Մարդիք ու կապում, լծում քեզ, տանջում։
Արաբա ու գութն՝ քո բեռն ու բարձին.
Վար ու ցանք, քութան միշտ քո շլինքին։
Ախըր խերդ ի՞նչ ա, կուզեմ իմանալ.
Շատ օր սոված ես դու կարկառում մեր կալն։
Տուն որ գալիս ես՝ մեկ բուռը խոտ էլ
Չեն ուզում քեզ տան։ Քո բերած մալն էլ
Ձեռիցըդ խլում, քեզ մաղրում անում,
Իրանք վայելում, քեզ սոված թողում։—
  Մարդի հախիցը էդպես չեն վեր գալ.
Քանի ձեռիցդ կգա, քե՛զ հոլալ։
Քանդի՛ր գյուղերբյուր մարդի տունն ու տեղը,
Ծծի՛ր նրա արինն, քամի՛ր նրա եղը։
Ոտնատակ արա՛, քանդի՛ր համբն ու բաղը.
Կե՛ր նրա մառանն, հանի՛ր աչքի պտուղը։
Ո՛չ հավին խնայի՛ր, ո՛չ նրա ճտին։
Ի՞նչ ես հարցնում, մարդ միշտ իր գլխին
Պետք է հանապազ մտադրութ կենա,
Աշխարքը դժար, ձեռքդ գանձակ ա,
Որդիանց հասնի, կե՛ր, ու փորդ արա՛։
Ո՞վ ըլի, ըլի, ի՞նչ ես ֆիքր անում,

Էնպես եկել ա աշխարհն՝ էնպես գնում։
Թե տեսնող ըլի, գլուխդ էլ կախ քցի՛ր,
Ինձպես խոնչալով գնա՛, հեռացի՛ր։
Կատվի ձագ դառնիս, թե հավքի ճուտը,
Կե՛ր ու քեֆ արա՛, թո՛ղ էրվի սիրտը։
Տանն էլ մի՛ մնար, որ մեկ խոսք ասեն,
Դուս արի՛, գնա՛, որ խիտալ չանեն։
Օրն հազար մարդի տուն էլ որ քանդես,
Էլի դեռ քիչ ա, որ լավ մտածես։—
Էնպես եմ արել, էնպես չաղացել
Որ ճրաքուս էկել, աչքերս լցվել։
Դու էդպես փեշի նման չորացել,
Շունչդ դուս կգա, թե մեկ փչեն էլ։
Տեսնի՞նք ո՞վ ա քեզ ասում՝ ա՛ֆարիմ.
Կամ ինձ բաղուխասա անում, որ պատժվիմ.
Ասած է։ Հաստ ու բարակն է մեկ գին.
Վա՛յ ու հազար վա՛յ բարակ մանավին»։—

Խոզն իր խոզավթյունն ձեռից չի թողալ։
Մեր եզն սկսեց իր թերանը բանալ։
«Ցեխն ա քո չանը, փնաս, տաս թավալ.
Հալբաթ որ էդպես կուզես դու խոսալ։
Ի՞նչ օգուտ ունի էն քաղցր արեգակն,
Կամ էն՝ երկնքի պայծառ լուսնակն,
Որ լիս են տալիս, իրանք մեր մանում,
Մեզանից մեկ քաղցր խոսք էլ չեն լսում։
Կամ անբան երկիրն ո՞ւմնից խեր ունի.
Որ հազար բարի տա ամեն տարի։
Անձրևը գալիս, արևը բացվում,
Սար ու ձոր էնպես ցնծում, ու ծաղկում։
Էն խեղճ մեղրաճանճն էլ որ չի քնում,
Աղքատ, հարստի բերան քաղցրանում։
Վարդն՝ որ իր հոտը չի պակասցնում,
Ծառն՝ որ իր պտուղն ինքը չի՛ ուտում։
Հողը ծառին է նյութ տալիս, պահում,
Ծառը հողին միշտ շվաք անում, սիրում,
Երկինք՝ անձրևն ա փայ տալիս երկրին,

Երկիրն ծովերիցն բարձրացնում ամպին։
Սրանք որ չեն ուզում, իրանց մենք պաշտենք,
Ընչի՞ չի պետք է մեկ խեր էլ տանք մենք։
Ի՞նչ վնաս ունիմ, որ ես աշխատում,
Հազար որբ, խղճի կարիքն լցնում։
Էս առողջ ջանը էլ ո՞ւր ա տվել
Աստված՝ որ չուզեմ բանի պետք ածել։
Էն երկրի խոտը ի՞նչ սրտով ուտեմ,
Էն աղբրի ջուրը ի՞նչպես ես խմեմ,
Որ աշխարքումս բանի պետք չգամ,
Ի՛մ գլխիս նայիմ, ի՛մ ցավս հոքամ։
Ես հո իմ փորի հմար չեմ աշխատում,
Որ կերն պակսելիս՝ լամ ու տրտնջամ,
Սրբերին էլ ի՛նձ են մատաղ անում,
Ով մեկ մեծ մուրազ ունի իր սրտումն։
Ամա քե՛զ՝ անբան,
Թուրքն էլ չի սիրում, ջհուդն հո ատում։
Ո՛չ գառն ա հետդ ման գալը ուզում,
Ո՛չ կով ու ոչխար իրանց մեջ թողում։
Ով մեկին մեկ վատ անուն է դնում,
Խո՛զ է ասում նրան, կամ գոշի կանչում։
Քրիստոնեն էլ որ քեզ տուն է թողում,
Թուրքի, ջհըդի ջգրու է անում։
Մեյդան դուս գալիս, շունն էլ վրեդ հաչում։
Մեր հացն որ չուտես՝ կարո՞ղ ես ապրել,
Որ էդպես ռեխդ սկսում ես ցրվիլ։
Խոզինը ցեխն է, կամ մուռտառ տեղը,
Լավ միտքն ե՞րբ կընկնի նրա խելքն, ղուղը։
Դու լագողներիդ՝ է՛դ խրատը տո՛ւր,
Որ տնքանդությունն անեն, հասնին ուր։
Ես իմ աշխատանքն ձեռից չեմ թողալ,
Քանի շունչ ունիմ ու խեր կարեմ տալ։
Իմացողի հմար ես չեմ աշխատում,
Խեր տալն եմ ուզում, տեսնում, մխիթարվում»։—

ՄՇԵՑԻ ՀԱՅՆ ՈՒ ՈՍԿՈՌԻ ՓԵՇՔԱՇԸ

Մեկ մշեցի հայ մեկ քաղաք մտավ,
Աբեն ուսին քցած՝ որ լիս չի ընկավ,
Ձեռի դագանակն, գլխի ֆասն, չարուխն
Հենց տեսան թե չէ էն քաղաքի խալխն,
Կո՛ռ ձեն տվին, Մխո՛ կանչեցին,
Էլ ֆոտած եմիշ, խնձոր, սերգևիլ
Չմնաց, նրա գլխին քցեցին։
Շորումն, հաքին սաղ տեղ չթողին.
Որը բեղն ձգեց, որն աբեն քաշեց,
Որն վզաքոքին, որն ֆասի ծերին
Մուշտի ու քացի լավ տրաքացրին։
Ծեր մարդիքն էլ նրան, որ մատով տայիր,
Հազար տեղ կունդկի կտային, ու փչեիր,
Իրանց հունարը ցույց էին տալիս,
Բողազ ճոթռելով, նրա վրա գալիս։
Մեր խելոք Հայը՝ անհավատ երկրում՝
Մեծացած՝ հազար թոդում, չվանում
Գլուխ, ոտը դրել է, եդ դուս պրծել.
Սուսը, փուսն քաշեց, դեռ տեղ չէր ճարել,
Գնաց մյուս օրը, քունջ, պուճախ ընկավ,
Մեկ եքա ջվալ ոսկոռ մոտ տարավ։
Էս նոր փալանն էլ՝ որ ուսին դրած՝
Չմտավ քաղաքն նա ուռած, ուռած,
Քարերն էլ տվին ծափ ու ոտն առան,
Բայց ինչ նրանք տեսան, չտեսնի քո դուշմանն։
Ով ծպտաց թե չէ, կամ շվացրեց,
Կոռն ոսկոռը առաջը քցեց։
Մեկ, էրկու, իրեք՝ էլ իշխան չմնաց,
Որ չառնի փեշքաշն, մնա աչքը բաց։
Ղալմաղալն ընկավ սաղ քաղաքի մեջ,
Թագավորն լսեց ու նրան ուզեց։
«Տո ի՞մալ էնեմ քո խոքուդ ղուրբան
Գլուխս քո օդաց խողն, ես քո ծառան։
Վալլախա՛, մեր սուրբ Կարաբե գինա,
Ձմլա խենթ ճժեր չոլում էլ չկա։

Ծո ծովի ձեր վիզն, մեկ չեն օր մանիս,
Շներ կխաչեն՝ մարդի տեսնելիս։
Մարդիք կխանչեն՝ խեղը խաց կուզեն.
Մարդիք զիմ վրա զմլա ձեն կխանեն,
Իմալ էնեմ, չատ օր էլ միտք էրի,
Էս աղեկ բանը ֆիքրս բերեցի։
Մգա ըխտիարն էլ իմ առին չի,
Ինչ ամր կէնես, վըր իմ էս աչքի»։—
Թագավորն բերանն ու փորն հինգ սհաթ
Բռնած՝ մնացել էր ձեռաց գնացած։
Խելքը որ մի քիչ գլուխն հենց էկավ,
Տոնլուղ, ճամփի խարջն էլ ինքը տրավ։
Ծաղր անիլն մեկ մեծ հունար, լավ բան չի,
Շատ վախտ էլ՝ անողն իր ոսկոռն կառնի։

Էս ներքևի գրած ոտանավորը էնպես մարդի վրա է գրած, որ ո՛չ գիր գիտի, ո՛չ գրի զորություն, ու գրողի վրա էլ՝ բերանը կցրվի։ Իմ աշխարհաբառ գրածների գլուխը՝ շատ անգամ է էսպես բան տեսել, մարդի միտք չեն հասկանում, հենց իրանց իրանց խոսում են։ Մեկ օր էլ մեկիցը էսպես բան իմացա, ու ի՞նչ պետք է արած, լավ կըլի, որ դերձիկն իր գազը, մաշեկարն իր բիզը, փինաչին իր ճոնդը, փոնչին իր գունդը՝ լավ ճանաչեն, տեղըները ծանր նստին, ամա չի քլում։ Ինձանից խրատ չի հասնիլ, ամա մարդի սրտին դարդ է դառնում, երբ էնպես օմքին էլ ա խոսում մարդի վրա, որ իր անունը դրուստ գրիլ չի գիտի։ Ղորդ են ասել՝ թե տանու տերտերին օրհնյա՛ տեր չի ըլիլ։ Ինչևիցե՝ թուր ու թվանք չունիմ, արզա գրիլ պետքը չի, թո՛ղ բլբուլը խոսի։

Էշն ի՞նչ գիտի վարդն ի՞նչ զատ ա,
Նրանք փալանն {ու} թավալ տալն ա։

ԷՇՆ ՈՒ ԲԼԲՅՈՒԼԸ

Բացվել էր գարունքն, սար ու ձոր ծաղկել
Անուշ հոտն ու հովն ամեն տեղ բռնել։
Ամեն աշխարից, հեռավոր տեղից
Փախած, կորած ղշերն իրանց բներից
Էկան, որ գարնան գալն շնորհավորեն։
Մեր ու ձագ նստած ծառերի վրեն,
Թփերի տակին, սարերի գլխին,

Իրանց սրտի քեֆն հայտնել կուզեին։
Բայց պարկեշտ բլբյուլն իր էրված սրտի,
Իր սիրուն վարդի սերն ու իր մտքի
Հասրաթն ու էշխը բերան բերելով,
Խոր ձորում նստած, դարդերը լալով,
Նայում էր չրին, իր վարդի թփին,
Ուզում էր բացվի ա՛խ՝ իր սիրելին։
Բայց վարդն անիրավ մնացել էր փակ,
Խեղճ բլբյուլի սիրտն դառել էր կրակ։
Մեկ չոր քարի վրա մնաց կուչ էկած,
Աչքը իր վարդի երեսին քցած,
Լալիս էր, էրվում, «ա՜խ՝ վա՛րդ իմ կարմիր՝
Բացվի՛ր՝ երեսիդ մեռնիմ, ա՜խ բացվի՛ր։
Կամ իմ հոգիս էլ ա՛ռ, քո հետդ տա՛ր.
Կամ էրված սրտիս արա՛ դու մեկ ճար»։
Սար ու ձոր նրա սուգն էին անում,
Ծառ, ու թուփ, ծաղիկ նրա հետ ցավում,
Բայց ձեն չունեին՝ որ մեկ անցվորի
Եդ պատմեն, որ նրան մեկ չարա անի։
Էս դառն հաղաղին սատանի քամին
Ո՛րդիանց հանեց մեր կորած իշին։
Քունն էր հատել, թե փալանը ծովել.
Խոռակը պակսել, քիթն քամի մտել,
Գելն էր հետ ածել, թե տերը դնքսել.
Նոխտեն կտրվել, թե բեռից փախել։
Անկաչները խլշացրած
Պոչը ցցած, զուռնեն քոքած.
Սարնըվեր ընկած, որ չէկավ առաջ.
Էն հաստ գլուխը թափ տվեց, զռաց,
Էն մուռտառ դունչն էլ՝ որ վրա բերեց,
Անմեղ վարդի թուփն, կոկոմն որ բանեց,
Մշրեց ու զռաց մեր էշ խնամին.
Սար ու ձոր իրանց աչքը փակեցին.
Ղշերը թռան՝ ա՜խ, ո՜խ քաշելով
Ծաղկներն երեսներն ծածկեցին՝ լալով։
Իմ անմեղ բուլբյուլն գլուխն թևի տակին,
Դեռ չէ՛ր հեռացել որ իր թշնամին

Հենց ոտը փոխեց, ընկավ ցխի մեջ.
Էլ ճանճ ու ագռավ չմնաց, վազեց
Ղոթուր մեջքն, ուսերն յարալու արեց։
Արինն քամակիցն շռալով փախավ։
Թրքահոտ գոմումն կանգնած՝ միտք արավ։
«Հարամ ըլի ինձ էս հաստ գլուխն էլ,
Էս գեշ անկաջներն, էս կոպիտ բոյն էլ.
Որ ո՛չ զռալով, ո՛չ քացի տալով
Ճանճին էլ ա չե՛մ վախացնում, ա՜խ՝ ո՞վ
Իմ հալիս կըլի, վա՜յ նրա օրին,
Վարդն էլ համ չի տալ իր դարդակ փորին»։
Էլի բլբուլի էրված հոգին էր
Որ միտք անելով իր դառը ցավեր,
Էկավ, վարդի վրեն կանգնեց, սուքն սկսեց։
«Աննման իմ վա՛րդ» ողբալով ասեց.
«Թագուհի իմ վարդ՝ հոգուս սիրելի,
Անունդ հիշելով, սիրտս խորովի,
Ընչի՞ դառն աշխարս քեզ բերեց բհամ,
Որ մեկն էլ ա չի՛ իմանում քո համ։
Երկինքն ա տեղդ, ընչի՞ ես մնում,
Իշի կերակուր, էս փշի միջում.
Քանի փուշ ու էշ դեռ կան աշխարքում,
Կմնաս անտեր։ Է՛ս իմ միտք անում,
Ու գլխիս տալիս, էրվում, խորովվում։
Քո սերն հանապազ կպահեմ իմ սրտումն,
Բայց ո՞ւմ ասեմ, ո՞ւմ, իմ դարդերս՝ ա՜խ ո՞ւմ.
Էշն ի՞նչ գիտի ղադրդ՝ սրտումս էլ պահեմ,
Քեզ, ամեն խաթից միշտ էլ ազատեմ,
Էլի դեռ քանի իշի հոտը կա,
Մեզ էս աշխարքումս մեկ չարա չկա։
Յ՛ա դու ինձ էրի, մեկ օր պրծնիմ,
Յա թե ա՛ռ, թռչինք՝ երեսի՛դ մեռնիմ»։
Իմ սիրուն բլբուլ՝ մի՛ էդքան ցավիր.
Կա՛ց մեր միջումը՝ քո վարդը գովի՛ր,
Էշը թրքումն ա իր ծնունդն առել
Էլի թրքի ճոտն նա կուզի առնել,
Քեզ վարդ, մանիշակ, քեզ ծառ ու ծաղիկ
Աստված փայ տվել, բլբո՛ւլ գեղեցիկ։

ԱՍԱՑՎԱԾՔ

ԽԱՆԸ

Ժամանակավ մեկ նաքյազ հարուստ կար.
Մեկ որդի ուներ, էն էլ անհունար։
Մեռավ, մեկ միլիոն նա փող եդ քցեց,
Որդին խան դառնալն մտքումն դրեց։
Նալաթ սև սիգին, մարդ ի՞նչ կամենա,
Որ փողով չճարի, ջանը դինջանա։
Խանությունը որ գտավ, ու պրծավ,
Բեկլարբեկու տեղ ճարել կամեցավ։
Էն էլ ձեռք բերեց, սիրտը դինջացավ։
Հիմիկ էլ վազիր լինիլ ուզեցավ,
Կամ թագավորի դռանն ու քովը
Մեկ մեծ գործք ճարիլ անցավ մտքովը։
Ղոնշունի գլուխ ըլիլ, խաչ, նշան
Դոշին քաշ անիլ։ Էս էր նրա բանն։
Բայց մեր խեղճ խանի ծուծն ու գլուխը
Հենց դարդակ էին, որ քամելիս, ծուխը
Քթովն դուս կգար, այբի կտոր չկար։
Շնորք, մարիֆաթ փողով ո՞վ կտար։
— Ա՜յ իմ անխելք խա՛ն՝ թո՛ղ էդ քո ֆիքրը։—
Բայց չէ մեր խանի է՛ս էր հենց միտքը,
Որ վազիր դառնա, կամ ղոնշունի գլուխ.
Նստի դիվանումն, սրտի սոխն ու ոխն
Հանի, ամենին հրաման անի։
Որին կպչի նա, իրան չէր հայտնի։
Բայց նրա շնորքն հենց իր միլիոնն էր,
Էնդով էր ուզում բոլորը ճարեր։
Քոշք ու ամարաթ՝ լավ բաբաթ սարքեց,
Խազինի դուռը, քիսեն բաց արեց։
Աշխարք մնացել էր վրեն զարմացած,
Ո՞վ ասես՝ որ նրա հացին չէր նստած։
Զ՞ուռնա, նաղարա միշտ դմբում էին,
Նրա ամարաթումն, ու նա իր քեֆին
Նւքար ու ֆառաշ ոսկով զարդարած,

Ամեն կողմիցը նրա կուշտը բռնած։
Կառեթումն էլ որ չէր նստում փքված,
Հենց իմանում էր, սար ու ձոր չոքած՝
Իրան էին միշտ գլուխ վեր բերում,
Ջունքի սաղ քաղաքն նրա հացն էր ուտում։
Ում լեզուն սուր էր, փորը մեծ ու հաստ,
Փորըսող նրան գովում ամեն վախտ։
Մկան պոչի պես կուչ ու ձիգ անում,
Գլուխը փչում, աչքը թող ածում.
Լիրբ լեզվով նրան երկինքը հանում.
Իմաստությունը, շնորքն մեծացնում.
Հոգին հանում ու քիսեն դարդակում։
Խանի սիրտն էսպես կասվի ձեռի էր,
Էսպեսի վրա նա քաղցր աչք ուներ։
Ինչ սհաթի էլ հացն ուտում էին,
Ծիծաղում վրեն, լափ ածում գլխին։
Բայց ո՞վ չի գիտի, թե փողը՝ ձեռի
Կեխտ ա, ու մեկ օր կհատնի, կպակսի։
Միլիոնը գնաց վայ տեր կանչելով,
Խանն էլի փորի Ֆիքրը քաշելով.
Էլածն էլ տվեց քամուն, ու կերավ.
Ինչ սրտումն ուներ, սատանեն տարավ։
Վազիրությունը ու մեծությունը
Ղոնշուն ունենալն, իշխանությունը
Վաղուց էր խեղճը աքլորին բաքձել։
Փորը կարաս, ոտքն էլ ծակ, գլուխն էլ։
Ինչքան էլ ածես, հերիք ե՞րբ կասի,
Վա՜յ նրան, որ փորին կդառնա գերի։
Խեղճ խանի բանը քիչ քիչ շլոր դառավ։
Ջեռը պակսեց ու փողի տուտն հատավ։
Միլիոնն էլ գնաց, զուռնեն էլ, սազն էլ։
Ազիզ բարեկամք՝ հո վաղ հեռացել։
Ծառած ջաղացի պես մնաց կանգնած։
Էլ ո՞վ նրա դուռը կգար, կաներ բաց։
Վիզն էլ բարակեց, երկուտակ փորն էլ,
Միս, մորթի, կաշի երեսին կպել։
Էսպես նա իրան կանոն էր շինել,

Երբ մարդ ուզում էր պատճառն հարցնել,
Է՜ն ախն էր քաշում, որ հետը հոգին
Ուզում էր դուս գա, ասում հարցնողին։
«Ով էս աշխարքումն որդու լավություն
Կուզի, թո՛ղ տա նրան շնորք, կրթություն։
Խազին, դոլվաթ կերթան, կփչանան,
Մարդիս իր ուսո՛ւմն կմնա միայն»։—

ԲԱՂԴԱՏԻ ՃԱՄՓՈՐԹ ԷՇԸ

Եփրատ գետի կանաչ ղրաղին
Կենում էր մեկ խեղճ ռաշպար։
Անունն Հասան. իր հավատին
Արի, բարի, արդար, անշառ։
Մեկ էշ ուներ մեր Մուսուրմանն.
Սիրում, պաշտում ախպոր նման։
Էնպես էր նրան թիմարում, պահում,
Խերն ու լավությունն ամեն տեղ գովում.
Լիսը բացվում էր, թե օրը մթնում,
Քամակին բազմած՝ Հասան տուն մտնում։
Մաքի հետ ընկած վախտն նոխտեն թողում,
Էշ ախպորն էնպես էր նա հավատում,
Որ նա իր բեռը միշտ տուն կտանի.
Թե ուզենա, մարդ ճշմարիտն ասի,
Էշն իմաստուն էր, խոսիլ պետքը չի՛։
Գլուխն էլ շատ հաստ, կոխքն ու անկաջն էլ։
Բոյը սուրահի, տեսնողի աչքն էլ
Հետը գնում էր, հենց զգաստ, հպարտ էր։
Հասանի դարդերն ցրվում զռալով,
Մեծ մեծ անկաջներն թափեթափ տալով։
Սիրուն բոյն ղորդ ա՝ քաշում, մաշում ա
Մեր սիրտը, բայց մեջը ոչինչ խեր չկա,
Երբ գոգրեն դարդակ ու ծուծը բարակ
Մարդ չի ճանաչում ո՛չ էշ, ո՛չ քուռակ։
Խելք է հարկավոր։ Պարոն էշն քիչ, շատ
Էստուց էլ ուներ, էլ ի՞նչն էր կիսատ։

Թեռի տակին չէ՛ր բուղուրմիշ ըլում։
Աչքը առաջին. դուզ ճամփեն գնում։
Դբի դեմ գալիս նա շարժում կամաց,
Ինչպես մեծ մարդը իր բաղումն կանաչ։
Անվանի Սադին էնպես է գրում,
Թե ճշմարիտ խելքն էնդում ա մալում,
Որ իմաստունի խրատը լսենք,
Ու բեռի տակին բնավ տնքալ չենք։
Կտանենք անսաս։ Տեղն ընկած վախտն էլ
Կհամբերենք, գլուխ չենք ցավացնիլ։
Մէկ անգամ Հասան իշի վրա բազմած՝
Գնում էր քաղաքն նա երիշ քաշած։
Մեկ դարվիշ էկավ փետով նրա առաջն։
Միրուք, մազն սպիտակ։ Մեկ պոպոզ գլխին.
Հասան տեսավ՝ ձեռն դրեց ճակատին։
«Բարի օր՝ աչքի լիս»՝ ասեց դարվիշն։
«Փեղամբարն օրհնի քո ալիշ, վերիշն։
Էդ քո տակին ի՞նչ էշ ունիս սիրուն»։—
— «Դարվի՛շ բաբա՝ իմ մխիթարությունն,
Ընկերն էս էշն ա. իր գեղեցկությունն
Խելքովն ավելցրել, իմ սիրտս առել
Խոնար, հնազանդ, ճամփին վելադ էլ։
Նոխտեն թողում եմ, իր գլխու գնում
Ամեն ժամանակ, ու ճամփեն գտնում։
Չէ՛ թե ես սրան, սա՛ է ինձ պահում։
Հոգիս էլ ուզեն, կտամ սրա գնում։
Քսան թուման էլ տան, չեմ ծախիլ սրան»։
— «Թե կուզես, հարիր ես կտամ դրան»։—
Շատ ուրախությամբ սուրբ դարվիշն ասեց,
Որ կակղի Հասանն ու ախին նայեց։
Հասան իր իշին՝ իր աչքի լսի
Հետ չէր փոխիլ հեչ, ամա թումանի
Ձենն որ իմացավ, ջանը դող ընկավ։
Փողն ո՞ւմ չի խաբել։ Հասան բոշացավ.
Ի՞նչ պետք է արած։ Ձեռը բարձրացրեց,
Էն ա բարըշիլն էր նա ուզում հենց։
Դարվիշն միտք արեց ու խոսքը փոխեց,

Ուրիշ թահր նրա գլուխը փչեց։
«Նհախ ասեցի, որ իշիդ ծախես,
Գիտեմ, որ դրան դու շատ սիրում ես։
Խեղճդ գալիս ա, աչքիցդ եմ տեսնում,
Լսի՛ր, ի՛մ որդի՝ տե՛ս, ի՞նչ եմ ասում։
Շատ կարելի ա էնպես բան արած,
Երկուսիդ բերդան հացի հասցրած
Ասա՛ ինձ՝ էշդ հեչ գիտի՞ խոսիլ»։—
— «Հեչ մեկ բառ էլ ա, ի՞նչ պետք է ծածկիլ»։—
— «Կամ գրել, կարթալ, խելքը բան կտրել,
Աշխարքի խերն ու շառը ճանաչել»։—
— «Ի՞նչ ես հարցնում»։— «Բաս որ էդպես ա,
Էդ էշը ուրիշ քյամալի տեր ա։
Պետք է պատմություն, աշխարհագրություն,
Լավ գիտենա, ու փիլիսոփություն»։—
«Ա՛խ՝ ի՞նչ ես դարդակ խոսքեր դու խարչում,
Ա՛յ դարվիշ բաբա՝ ու գլուխս տանում։
Էդ որ գիտենար, դու ի՞նչ ես կարծում,
Էլ մտիկ կտա՞ր դնչիս, կմռար։
Ինձանից էլ հո՝ դա անց կըկենար։
Էշն էլ որ ախըր փիլիսոփ դառնա,
Էլ ո՞ւր կորչին բաս Դարվիշ ու Մոլլա»։—
«Գեղ տեղ մեծացածն քեզ պես միտք կանի,
Բերանդ էլ որ քեզ քաշես, լավ կըլի։
Էշ փիլիսոփա՞։— Ի՞նչ զարմանք բան ա,
Էդպես հրաշք մկամ աշխարքումս կա՞։
Սուտ սանիաթ չունիմ, քեզ խորհուրդ տալիս,
Կամ ա՛ռ էս քիսեն, կամ լսի՛ր խոսքիս։
Թո՛ղ սիրելի էշդ մեկ Մեքքա տանիմ,
Աչքը բաց ըլի, ես գլխին կանգնիմ։
Մեկ քանի վախտ դու հո՛ւփ տուր քիչ սրտիդ,
Թե որ բարով գանք, ու տեսնիս իշիդ,
Ի՛նչքան լեզվների դա տեղյակ կըլի,
Որ Քյաբը գնա, ուխտ անի, տեսնի։
Մենակ սրա աղոթքն ու արած նամազն
Իրան էլ կտա, քեզ էլ քո մուրազն։
Թե ջրի պես դա ղուռան չկարթա,

Իրանից նոր բան չլսեցինք, դուս ասա,
Աշխարհի շենքերն դեռ մնացած չե՞ն,
Երեսիս թքի, ինձանից սովի
Դրա չարությունն։ Ի՛մ վերջս ըլի։
Տարի չքաշի, մեզ եղ կտեսնենք,
Փողն էն ժամանակն դու կփառավոր կանենք։
Կամ բանը կարգի՛, Հազարի թամամանն ա՛ռ,
Կամ թո՛ղ՝ մենք գնանք Մեքքա բարաբարով։—
«Թողի»՝ ասեց մեր հուսահատված Հազարանն։
«Ի՞նչ եմ անում փողն, որ ունիմ գրպանս
Ափսոս եմ գալիս, վախտը չկորչի։
Էն ի՞նչ փառք, պատիվ, էն ի՞նչ աչք կըլի,
Որ տեսնի՝ տակին էշը զոռանի
Համն առած՝ եղ գա, ինձ տանի, գերի։
Աստված ձեզ բարի համեստ տա, գնաք,
Ու սաղ սալամաթ բարով եք դառնաք»։—
Ասեց ու Հազարն թռչելուն վեր էկավ,
Աշխերին պաշեց, բարով տալեց, առավ։
Դունչ, անկաշ ու պոչ մեկ լավ տնտղեց.
Ղոլան ու փափաշնն, ոտներն դրդանեց,
Նախտեն ու բերքը քըքված նորա վերը,
Հոքոց հանելով, Դարվիշին ասվեց։
«Թասխրս բաշխե՛ք իմ էշ Հոտի ցավը».
Լալով, կսկծալով ասեց մեր Հազարն։
«Ես չէի թողալ քեզ էդպես մնալն
Հալալ ձեռք եմ քեզ էս օր հանձնեմ։
Աստծո՛ւն ամանաթ՝ մեր հանդիպումն, չոլումն
Ի՞նչ պետք է սովրիս, որ տանը մնաս,
Երկիր չտեսնես, աշխար մեան չգաս։
Ճանճի, ու մժեղի, բզեզի ձեռքին
Դու եսիր դառնաս, կորցնես քո գլխ։
Գնա՛, դրա սաղաթքը քեզ մեղա կարահի,
Սիրտդ ուրախ բանի, իմ անհամ հեչըն
Մեկ քանի ծոմր էլ ինձ համար պա՛ս դի՛ր,
Ուսումդ ա՛ռ ու էլ շուտ վերադարձի՛ր
Մահմադի աչքը վրեդ քա՛շ չըլի,
Փշվի փուշ ու քարն, որ քեզ կոխիպյին։—

Ինչպես որ էլավ՝ սարը Դարվիշ բաժան
Կուզ կռաց տնելով բարձեց էշի վրեն։
Լեն շորերն չորս կողմն փռված՝ ճոլոլակ,
Ոտներն աջ ու ձախ ընկած քաշ ու կախ։
Էշը գնում էր, տերը ձեն տալիս։
«Խոսքը խո՛սք ա հա՞, տարին անցնելիս,
Ես ձեզ կապատեմս»։— Ասեց ու ոտով
Ընկավ նա ճամփա՝ Դարվիշի փեշով։
Հոգին բերանն կպած՝ նա գեղը հասավ,
Ու տանը նստած՝ ձանձ մռնչ միտք արավ։
Աստուծով էշս շատ քյամալաթ տեր
Դառած եղ կգա։ Է՛ն վախտն տեսնողներ
Թո՞ղ զարմանան ու աչքերներն դուս գա,
Հիմիկ ի՞նչ խոսիմ, թո՛ղ նա եղ դառնա։
Մեկ տարուց հետո իրար մի տեսնինք,
Իրարից փառք ու հասարաթ առնինք։
Մեկ տարի էսպես թող ուտեմ ման գամ,
Եդո իմ փառքը աշխարքին ցույց տամ.
Շուշա չի ուտեր՝ որ թեզ փշրվի,
Մոմ չի իմ մարմինս՝ որ հալվի, էրվի»։—
Էսպես էր ցավում Հազարն, միտք անում,
Օրերն համարում. Տարին լրանում։
Դարվիշն էշի վրա շատ տեղ անց կացավ,
Բոլոր Օսմանցվի հողը ման էկավ.
Պոլովն լիքն ա էն մեծ Դիարբեքիր,
Արզրմի մաքյան էն Պարսից երկիր,
Մարգարտով լիքը Մոսուլ, Ղայսարի,
Հալեբ, ու Թոխատ, ու հինն Եդեսի.
Շրջեց ու հասավ մեծ քաղաքն Հարբամ
Ուր՝ ինչպես պատմեն, ծնվեց Աբրահամ։—
«Հրես է՛ս տեղ ա՞՝ ուխտավորն ասեց,
Մեր իշի նոխտիցն բռնեց, կանգնացրեց։
«Որ Աղեքսանդր Մակեդոնացին
Ջարդեց, հետ ածեց Պարսից ղոնշունն։
Էն տեղ էլ՝ Կեսար քաջ Հռոմայեցին
Եկավ ու տեսավ, հաղթեց Միհրդատին։
Աչքդ բաց արա՛, որ գլուխդ մտնի»։—

Բայց պատմությունը իշին քյա՞ր կանի։
Ոչ ջուղաբ տվեց, ո՛չ մեկ բան խոսեց։
Շատ բեզարելուցն անկաջներն ցցեց,
Նրա հոր խերին թափեթափ տվեց,
Պոչ ու գլուխ գլեց, ու մեկ կուշտ զռաց
Սուրբ Դարվիշն էլ հո՝ միտքը մոլորած,
Չէր կարծում, թե ինչ կա իր առաջին,
Բեղաֆիլ՝ ա՜խ, վա՜յ նալաթ սատանին.
Իշի ոտն առավ մեկ ախմախ քարի,
Բուղուրմիշ էլավ էնպես բիրադի
Ինքը մեկ ղրաղ քյալլի վրա ձգվեց,
Դարվիշն մյուս կողմն՝ ջարդվեց փռվեց։
Պատմությունն էլ գնաց, անիծած ուխտն էլ,
Դարվիշն իշին էր տնքալով օրհնում,
Էշն իր ոտների ցավն ու դավն քաշում։
Օրհնություն, անեծք ի՞նչ խեր ունին՝ որ
Էսպես հաղալին լինին զորավոր։
Դարվիշն քիչ քիչ իր փալաս փուլուսը
Իր պապոզ գդակն, իր ջուլն ու պոզը
Հավաքեց, մինչև էշն էլ խոր քնեց.
Դարվշի կետին, որ կոխքը չքոքեց,
Բիրդան վեր թռավ, պոչ ու դունչ դզեց,
Հողն էլ թափ տվեց, առաջին կանգնեց։
Սուրբ Դարվիշն էլ հո՝ բիզը հազրած,
Վիզը կրակեց ու վռկեց առաջ։
Շատ ու քիչն աստված գիտե՝ թե ինչքան
Ճամփա գնացին, ու էկան բիրդան
Մեկ մեծ քարվանի նրանք ռաստ էկան։
Ուղտ ու էշ բարձած, ջորի ու հայվան
Ուխտն էին գնում Քյաբն՝ զնգզնգալով,
Մահմեդի գյոռը ուզում կարոտով։
Դարվիշն դարվիշին ու էշը իշին՝
Բարով առան շուտ՝ ու սալամ տվին։
Որը շոքիցն էր տրտնջում, էրվում,
Որը փալանը, բեռը ծռմռում։
Քացի ու զռոց, չոչ ու զռզռոց
Ո՞վ կարա պատմիլ ու հարայ հրոց։

Ի՞նչ զարմանք։ Մեքքի անունն ու սերը
Վառել էր նրանց սիրտն, հոգին, փորը։
Բայց էս ի՞նչ էր դեռ, մարդ որ միտք անի,
Թե ո՞վք էին նրանց վրեն բազմած՝ աղի։
Թիվ չկար, համար նրանց ո՞վ կտար.
Իմաստուն ասես, հեքիմ, ուստաքյար.
Աստղաբաշխ ու լավ պատմություն գրող,
Փիլիսոփա ու խաղ, տաղի հանող։
Ջադուբազ ու էլ ղուռումսաղ ասես,
Լեզու գիտացողն թե հեսաբ քցես,
Բանը կհասնի՝ հո Տրապիզոն,
Էլ ո՞վ եդ կգա մեր քարվանի քովն։
Դարվիշն էլ լավ օր սրանից ավելի
Երբ ձեռ կքցեր, աշկերտին կրթի։
Մեկը ունքերը ամպի պես կիտած՝
Աշխարքի բհամ գալն էր եդ պատմում.
Մեկը քիթ ու նոթ քացախացրած՝
Լեզվի դուս գալն էր մեկնում, բաց անում։
Թողանք դերձկի ու ջուլհակի ղրիցն
Խառադի, բրդի ու աշպազի բրինձն.
Մաշեկարի բիզն, չարվադարի վիզն։
Է՛ն ձենն էր ընկել, է՛ն խոսքն, աս ու լիսն,
Որ մարդ իր գլխին թե տեր չկենար,
Բեյինն էլ հետը կճաքեր, դուս կգար։
Բայց ամենի ռեխն, բերանն ու լեզուն
Մեկ թարաքյամա կուզեր ճղի իսկույն։
Սարում մեծացած՝ բռի, աղլամազ.
Հենց իր զուռնեն էր փչում, ու իր սազ.
Թե Ադամ պապը Եվի հետ դրախտումն,
Թարաքյամեվար էր խոսք, զրից անում։
Աջակողմն էլ մեկ հաստափոր ախմախ
Մեջ էր բերել իր շինած տաղ ու խաղ,
Իր հաստ գլուխը երկինքն էր հանում,
Ուրշի գրածը ցեխն ու ռեխն կոխում։
Ձախակողմն էլ մեկ ուռած եզի գլուխ՝
Հով տալով ձգվել՝ մզում իր չոր ղուզն,

Թե աշխարքիս վերջն ի՞նչ պետք է լինի,
Էլ չէր հարցնում՝ թե ներկա վախտի
Բանն ի՞նչպես կլինի, ու չէ՛ր էլ գիտում,
Էշ փիլիսոփան բոլորի միջումն,
Գլուխը քաշ արել՝ անհոգ էր դնում,
Ինքն իրան անտես միտքն լուսավորում։
Տեր ու տուն, թավլա մաքից էր հանել,
Էնքան էս ֆքրումն թաղվել էր, խրվել։
Ծանճերին նայաթ՝ որ չէին թողում,
Պոչ ու գլուխ գողում, ու սիրտը խառնում։—

Ուղտը ուխտն արեց,
Էշը էշին առավ,

Դարվիշ, քյալլբլայի, թաշիր ու անհաֆ
Մուրադի հասած, ամեն եփ էկան։
Վերջը վախտն էկավ, սարին լըսցավ,
Հասան իր իշին հարաթ մնաց, մեռավ։
Մեկ իրիկուն էլ խիստ դարդավարած
Նստած իր տան դռանը նա քնահարած.
Ա՜խ ո՜խ քաշելավ՝ ասում էր, լալիս։
«Անիրա՛վ Դարվիշ՝ ախպեր իմ իշիս
Ի՞նչ արիր, ա՜յ դու անիծած, ա՛նտերս։
Փուշ դառնար ճամփեդ, շլինքդ փորումդ
Ցցվեր, որ իմ տանն էսպես քանդեցիր։
Իմ աչքիս լիսը հանեցիր, փչացրիր
Բոլոր ասող օր մենակ եմ թանում,
Դու իշիս վրա փաշի պես նստում։
Քեֆիդ ման գալիս, աշխարքը շրջում։
Հարամ լինի քո աված մարիֆաթին,
Քունս հատել ա, դարդ ու ղասաֆաթ
Ջանս առել, տարանում ինձ՝ ա՜յ խամալթաթ։
Իմ ջաֆիս կեսը էշս էր վերջացնում,
Էսպես մնացել եմ ես ցավի միջումն։
Ախր ե՞րբ կգաս, որ մուրադս առնիմ,
Էշ ախպորս տեսնիմ, ու հաքը մտնիմ»։—
Էս ասեց՝ թե չէ աչքը թարթին տեսնեի,
Գլուխն որ վեր քաշեց, մեկ ձորի միջի

Դարվիշն շեք արած՝ իշի վրա՝ անդադար
Գալիս էր կամաց ու դեմը տմբում,
Դեմն իշի գլուխը քաշում, ու բզում.
Քամակի վրա շուռ գալիս, նեղում,
Գլուխն իշի գլխին տալիս, վեր թողում։
«Տես հրեն գալիս են՝ վա՜յ քո տղիս տղա.
Մարդի միտքը կարճ ու սիրտը նեղ ա»։
Ասեց, տեղիցը էնպես թռավ Հասան,
Որ ոտ ու գլուխ իրարով դիպան։
Դարվիշն մոտ էկավ՝ նրան ողջույն տալով,
Հասան գնաց առաջ՝ լալով, խնդալով։
— «Ո՞ւր է իմ ազիզ էշն»։— Նա ձեն տվեց։
— «Քո՞ռ ես, չե՞ս տեսնում։— Դարվիշն եդ կրկնեց։
— «Քարեկամիդ էլ որ չես ճանաչում,
Սախել ես գլուխդ, էլ ի՞նչ ասեմ, ո՞ւմ։
Է՞ս չի քո էշը»։—«Վա՜յ օրիս, ըմբրիս,
Ես ո՞ր ջուրն ընկնիմ, ի՞նչ վայ տամ գլխիս։
Աչքս դուս էկել, էշս չոլախացել։
Սաղ ոտի տեղը կաղ ոտն ա ճարել։
Ալլա՛հ, իլլալլահ՝ փեղամբարի գլուխն,
Մահմադի արևն գիտենա, իմ ծուխն
Հատել, տունս քանդվել։ Ես էլ ի՞նչ անեմ»։—
«Էդուր խոսք չունիմ, կհավատացնեմ,
Որ հոգին կաղ չի ու միտքը շատ սուր»,
Դարվիշն ասեց նրան ու աչքն ածեց մոտ։
«Վայ իմ սև օրին՝ ա՞չքն ուր է մնացել.
Որ էսպես քոքիցն քոռացել, փչվել»։—
— «Շատ ղարդ ես ասում, մկամ խմաստամն
Չի՞ կարող լինել քոռ ու շատ գիտուն։
Ղուռանումն էլ ա էս բանը գրած.
Մեկ աչքով պետք է սիրտը քննած։
Լա՛վ է աչքով քոռ լինել, քան մտքով»։—
«Էն հաստ վիզն ո՞ւր էր», ասեց տեղն լալով։
«Էն լիքը փորը, էն պոչն ու թուշը,
Էսպես քուռտ, լղար ե՞րբ էր իմ էշը։
Գյամու պես էկել ցվել, հաստացել.

Գառան անկաջներն մուշտը թաղվել․
Էնպես էր դղդղում նա ման գալիս էլ,
Որ ուղտ ու գոմեշ կուզեին ճաքել։
Հիմիկ հենց բռնես՝ ուլ ըլի դառած,
Ոսկոռն մնացել կաշվիցը կպած։
Փչես, վեր կընկնի, ի՞նչ իմ գլուխս լամ»։—
«Հո ռաշպարի խելքն իմ բա՛րեկամ,
Հո էս քու իշի. ո՛ր ջհանդամ գնամ։
Տո խե՛լք սաս՝ խե՛լք. ի՞նչ անտաշ մարդ ես,
Մարիֆաթ ուզի՛ր, հասա փորն ի՞նչ կանես։
Լեզու հարցրո՛ւ, տե՛ս՝ ի՞նչ ա սովրել,
Ապա սկսի՛ր դու ինձ քարկոծել»։—
— «Մարիֆաթ ունի՞, ուրեմն իմ էշը»։—
— «Էլ ասիլ կուզի՞»։— Ասեց Դարվիշը։—
«Էլ Սողոմոնի գիրք չի՛ մնացել,
Բոլոր Ասիո լեզվովն հո էլ
Ջրի պես գիտի։ Խանի ու բեգի
Ջուղաբը կտա։ Աստծուն է հայտնի։
Տա՛ր, մեկ քանի օր թավլումդ կապի՛ր,
Թո՛ղ, քիչ դինջանա, հետո իմացի՛ր։
Ժամանակ չունիմ, է՛դ դու, էդ քո տված
Ամանաթդ։ Աստված ձեր բանն հաջողի՛,
Ձեր ցավն ու չոռը՝ թո՛ղ քամին տանի։
Մնաս բարով իշիդ հետը մուղարար,
Ես պարտքիցս պրծա, դու արա՛ դրան ճար»։—
«Թողություն արա՛՝ սուրբ Դարվիշ բաբա,
Ուր գնաս, քեզ քոմակ փեղամբարն դառնա։
Ավել պակասը ների՛ր, ինձ բաշխի՛ր,
Գնաս բարով, ինչպես դու բարի եկիր։
Ու դո՛ւ աչքի լիս՝ իմ էշ շնորհալի՝
Մտի՛ր առաջվան տեղդ ու դինջացի՛»։
Դարվիշն հեռացել՝ ճամփին գնում էր,
Որ Հասան իշին դեռ գուրգուրում էր։
Քոռ աչքին պաչում, կաղ ոտն համբուրում,
Մեջքը սղալում ու հետը խոսում։
«Ընչի՞ էդ բլբլի լեզուն չի բլբլում,

Ընչի՞ բերանդ կապել, չես խոսում.
Ա՛յ իմ շնորհալի արևածաղիկ՝
Ախր էդ հալին՝ թե տեսնին մարդիք,
Քեզ ի՞նչ կասեն, ինձ, մեկ լավ միտք արա՛,
Աշխարք շրջելու մարիֆաթն է՞դ ա։
Ամա չէ, էս օր բեզարած կըլիս,
Մի քիչ դինջացի՛ր, դու լսիր խոսքիս։
Էքուց տեսածդ պատմի՛ր մեզ քիչ քիչ։
Իմ ջանը դուս գա՝ ճամփին հո չամիչ
Չէին տալ քեզ՝ էդ ե՛ս էլ լավ գիտեմ,
Հլա դինջացի՛ր՝ ես քեզ խնդրում եմ։
Հետո պատմի՛ր մեզ քո սովրած բաները։
Խոտով, դարմանով լիքն ա մեր ամբարը՝
Պոտեպոռունկ՝ դու հեշ էլ չի վախենաս,
Կե՛ր, քեֆիդ պարկի՛ր, որ դու կարենաս
Իշտահով ասիլ, թե ի՞նչ ես տեսել,
Լսել, իմացել, քեզ դատում արել»։—
Էն մեկ գիշերը սաղ տարի դառավ
Հասանի համար, ընչանք լուսացավ։
Հարևաններին բոլորին ասեց՝
Ավետիք տալով ու հավատացրեց,
«Թե իր թավլումը մեկ փիլիսոփա
Կա իշի ցեղիցն։ Մարդ չի զարմանա։
Ամենին կանչեց. գան, նրան տեսնին։
Դաստա կապած՝ մյուս օրն հավաքվեցին։
Հասան ձեն տվեց։ «Ա՛յ մեր ջամըհաթ՝
Էս ձեզ՝ իմ էշը, ո՛չ բարակ, ո՛չ հաստ։
Թարաքյամերեն ոտանավորով
Ու Ասորեվար՝ դա արձակ գրով
Կարող է խոսիլ, շնորքը հայտնիլ.
Խնդրում եմ հետը մի քիչ զրից անիլ»։—
Մեկ քաշալ, քոռ մարդ՝ միրուքը ղաբա,
Դուս էկավ մեյդան, որ հետը խոսա։
Գլուխ վեր բերեց ու սալամ տվեց,
Իմաստուն իշին խոսալ դուս կանչեց։
«Երկինք ու երկիր ի՞նչպես են կապված,

Լուսինն ընչի՞ է պղղով ստեղծված։
Հույս ունիմ, ասեց, որ չբարկանաս,
Թասխըս բաշխես ու չի՛ նեղանաս,
Ա՛յ չորս ոտանի, ուսյալ կենդանի՝
Գեղըցու գոգրումն ի՞նչ խելք, շնորք կըլի։
Էդ իմաստության ծովը դարդակի,
Որ մեզ էլ քիչ փայ դրանից հասնի»։—
Էշը դունչը կապ՝ մնացել էր կանգնած,
Ու մեր գեղըցիքն էն ա հազրված՝
Ուզում էին՝ որ Հասանի գլխին
Մեկ ջվալ ծիծաղ ածեն ու քաշվին։—
«Մի քիչ սաբր արե՛ք»՝ Հասան ձեն տվեց,
«Ամոթու էսպես սա ձենը կտրեց։
Փիլիսոփա է, որ հատը չունի։
Հավատացե՛ք ինձ, թողե՛ք միտք անի»։—
«Կացե՛ք մեկ սհաթ՝ տո ի՞նչ ա էլել»,
Փինաչին սկսեց էն կողմիցն ասել.
Փորը հասա, ինքը յոռնիկ շախաշի,
Յարամազ քոսա, շատ էլ հանաքչի։—
«Մտիկ արա՛ ինձ, ա՞յ երկարանկաջ
Իմ փիլիսոփա՝ որ գնացիր Հաջն։
Ասա՛, մի տեսնիմ, քանի՞սն ա սհաթի։
Ի՞նչ ես ամաչում, էս էլ հո դժար չի»։—
Էշը ունքերը մի քիչ եդ տարավ,
Քամի մտավ քիթն, թե երազ տեսավ։
Անկաջներն նորեն թափեթափ տվեց,
Մեր կանգնողներին լավ մտիկ արեց։
Քթի ծակերը թունդ լենացրեց,
Ոտներն եդ քաշեց, պոչը դուզ ցցեց,
Ինչքան ղվաթ ուներ է՛նպես զիլ զռաց,
Որ պատ ու գետին մնացին խլացած։—
«Հա՞յ բարաքյալլա՝ նոր փիլիսոփա։
Էդ հունարն հո մեր քուռակումն էլ կա,
Շե՛ն կենա, հաստատ պահողիդ տունը,
Որ ունի իր մոտ քեզ պես իմաստունը։
Աստված աղորմի՛ խրատողիդ հոգուն»։—
Մաշեկարն ասեց։ Բայց խալխի լեզուն

Կապվել, փակվել էր ու էնպես ծիծաղ
Իրանց օրումն էլ չէին տեսել՝ սաղ։—
Հասանի փոխանն է՛ն կատուն ընկավ,
Որ մեկ դագանակ իսկույն վեր առավ։
Իշի ոտն ու գլուխն լավ բաբաթ դզեց.
Խղճի ոսկոռտանքն բոլոր փորն ածեց։
«Ընչի՞ ես ծեծում՝ ա՛յ դու հե՛ր օրհնած»՝
Փինաչին էլ եդ Հասանին ասաց։
«Ասա՛, ի՞նչ տեղից ես դու իմացել,
Թե էշդ մարիֆաթ, խելք ա սովորել։
Փիլիսոփոսի պես խոսալ գիտի,
Ո՞վ ա լսել՝ թե էշը կխոսի։
Դարվիշն ուզել ա աչքդ թոզ ածի,
Ոտով ման չգա, որ չբեզարի։
Դու էդ դլում, դարդակ գլխովդ
Նրան քոմակ արիր էդ խեղճ իշովդ։
Էդ հունարի տեր էս տեղ էլ շատ կա,
Ու դու՝ բա՛րեկամ՝ ի՞նչ զարմանք բան ա,
«Ով էշ ճամփա գնա, էշ էլ եդ կգա,
«Բայց էշը նա է, որ կհավատա»։

ՔՈՌԵՐԸ

Մեկ քանի քոռ մարդ ընկած մեկ ճամփա,
Էնպես էին գնում, ինչպես քոռն կէրթա։
Երբ սաղ աչկանին ճամփեն ցույց չտա։
Ոտն էին փոխում, բուդուրմիշ ըլում,
Կամ քյալլի տալով՝ գետնի վրա չոքում։
Անց կենողի մեկն՝ էս որ հենց տեսավ,
Սիրտը մրմնջաց, մեկ փեդ վեր առավ,
Ու նրանց տվեց, որ էլ վեր չընկնին,
Փեդը դեմ տալով՝ գնան, տեղ հասնին։
Քոռերի մեկը գլուխը պատռած՝
Փետը ձեռն առավ ու ընկավ առաջ,
Ու մեկելներին եդևիցն քաշեց։
Էնպես իրար բռնած՝ քոռ սուրսուն քաշվեց,

Ու առաջվա պես էլ վեր չի ընկան,
Լոք լոք անելով՝ քիչ որ հեռացան,
Հանկարծ մեջըներն խիստ կռիվ բացվեց,
Առաջին գնալն, որն ասես, ուզեց։
Էս չվերջացրած՝ մեկ ուրիշ քամի
Մտավ քթները, թե ձեռնափեդի
Ասլն ընչի՞ց կըլի, ի՞նչ ծառից կտրած.—
«Բոխի փետից ա»։ Մեկն ասեց հանկարծ։
Մյուսն ընկերի դնչին չմռած,
Հաստատում էր՝ թե կաղնուց է պոկած։—
  Էսպես ամեն մեկն իր զուռնեն փչեց,
Փեդն առավ ձեռը ու մատնահարեց.
Որ ձեռ քսելով էն բանն իմանա,
Ինչ որ սաղ մարդի փեշակն ու գործն ա։
Աղլամազ քոռերն իրանց մարաքեն
Էնպես չաղ արին, էս դհեն, էն դհեն
Էնպես ղալմաղալ, դատըեդատ արին,
Որ անկաչ պտեր, լսեր նրանց խոսքին։
Սատանեն էլ հո՝ է՛ս ա միշտ ուզում,
Մատն էնպես խրեց նրանց քոռ աչքումն,
Որ ամեն մեկի ըերնիցն մեկ ջվալ
Ուշունց դուս էկավ, թե քաշես հալալ։—
  Լեզուն հո թուր չի, որ կտրած տեղը
Մրմնջա, կալնի մարդ իր ըռեխը,
Էրված սրտի դեղն կամ քարն ա, կամ փեդն,
Էն էլ հազիր էր՝ ղոյմաղոչում տղե՛րք։
Գլուխ էր, որ պատռվեց, ատամ, որ ջարդվեց.
Որն հարայ կանչեց, որն արինն սրբեց։
Էն փեդն՝ որ պետք էր նրանց պահպաներ,
Մխս, աղցան շինեց բոլոր ոսկռներ։
  Բայց ի՞նչ անես, բանն էն տեղ էր ընկել,
Որ անկաջներն էլ՝ էր սալթ քառացել։
Էն տուր ու քոթակն տվին նրանք իրար,
Շուն էլ որ ըլեր, տերն կմոռանար։
Բայց իր ասածը հեչ չուզեց մեկն էլ,
Թողա, որ էս կրակն չէրի իրանց էլ,

Խերի տեղն՝ էսպես՝ էն տված փեդը
Քանդեց նրանց տունն՝ էս կռվից եդը։
  Իմաստուն մարդիք մեզ նման քոռին
Որ հավատ տվին, օրենք կարգեցին,
Ուզեցան՝ քոմակ մեզ նրանք անեն,
Չէ թե մեր տունը քանդեն, կործանեն։
Բեդուղուր քոռին ի՞նչ ժամ, պատարագ
Էնքան ձգձգեցինք հավատ ու բաժակ,
Որ մեկի տեղը՝ բյուր ու միլիոն
Իրար գլուխ կերան, որ պահեն կանոն։—

ԱՐԱԲԵՔԸ

  Արաբեքումը բարձած կճճներ
Գեղըցին կուզեր գնալ դարնըվեր։
Մեկնել ձիանոնցն թողեց սարի գլխին,
Ուզեց՝ որ տանի առջի արաբին։
Խելոք ձին նրան քամակին տարավ,
Որ չի գլորվի սելը, ղաստ արավ։
  Սարի գլխիցը ջահել ձիու մեկն
Որ դեռ ոտներումն ուներ բոլոր խելքն,
Ամեն մեկ ոտը փոխելիս՝ անճար
Ջիուն նախատեց, գժվեց չարաչար։
Թուք ու մուր ու ախպ նրա գլխինածեց,
Ոտները քարին ծեծելով՝ ասեց։
«Հլա մեր գոված ձիուն նայեցե՛ք,
Աստված կսիրե՛ք, ի՞նչպես ա, տեսե՛ք,
Գորդի պես գետնին կպել, ճապաղել,
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, ամա՜ն, քիչ մնաց մեկ էլ
Էդ քարին դիպչի։ Ծո՛ւռն է, թե՛ք, ա՜խ՝ թե՛ք։
Ղոչաղ կա՛ց, ղոչաղ։ Տո մի մտիկ արե՛ք։
Մեր եզը յաբուն քարին կպավ էլի,
Ա՜յ էդ հաստ գլուխդ փորըդ պրծնի՛։
Ջախ դհիդ վրա՝ ա՞յ տնով քանդված.
Տո է՛շ անասուն՝ ի՞նչ ես մոլորված

Մնացել էդ տեղ։ Սարն ըլիս գնում,
Էն էլ գիշերը, ո՞վ կըլի զարմանում։
Թե չէ դարիվեր, էն էլ ցերեկը՝
Ի՞նչ դժար բան ա, թո՛ղ ասի մեկը։
Մտիկ անելիս՝ սիրտս պատռվում ա։
Թե քեզանում էլ ուրիշ հունար չկա։
Ջուր կկրեիր՝ չա՛ռլամիշ էլած,
Էդպես սրսգալով՝ չէիր գնալ ցած։
Թե սրեն մեզ գա՝ ապա համբերի՛ր,
Ի՞նչպես կթռչինք, դու դարդ մի՛ անիր։
Վախտ չենք կորցնիլ, մեր վրի բեռը
Չէ թե կքաշենք, կվազինք դարնըվեր»։—
Էս տեղ շունչ քաշեց, դոշը դուզ ցցեց,
Ու ճամփա ընկավ, ջուր տու քշի արեց։
Հենց իր տեղիցն թռավ, ընկավ դարնըվեր,
Բեռը լխլխկաց, սելը դես ու դեն՝
Մեկ առաջ քցեց ձիուն, մեկ եղը։
Ճարը որ կտրվեց, մեր ղոչաղ էս ձին
Չորս ոտն վեր առավ. հա՛յդե՝ գնաց քեֆին։
Աստված հաջողա՛ նրա բանն՝ ախպեր՝
Էլ ի՞նչ եդ պատմեմ նրա տիրոնչ ցավերն։
Քարով, քարափով ընկավ ջարդվելով,
Չափ քցեց ու զու քաշեց՝ գնալով՝
Ընկավ չորս ոտովն մեկ խանդակի մեջ,
Էլ ի՞նչ կմնար սաղ սալամաթ հեչ։
Գլուխդ ապրի՛՝ կճճնե՛րի տեր.
Էլ ի՞նչ կանեն քեզ նրանք ախր խեր։
Էս աշխարքումն էլ էս ջուռա մարդիք
Շատ կան։ Իրանցից ունին մեծ կարծիք։
Ուրշի արածին միշտ չեն հավանում,
Բայց երբ որ բանը իրանց է մնում,
Զուկն ու մածունը իրար են խառնում,
Տասն էնքան՝ բանը խժժում, մժժում։—

ՃԳՆԱՎՈՐՆ ՈՒ ԱՐՋԸ

Հարկավոր տեղը լավություն անիլ
Խիստ շատ լավ բան է. էս ո՞վ չի ասիլ։
Ամա ամենի ձեռիցը չի գալ.
Վա՜յ նրան՝ որ գժին կուզի յախեն տալ։
Խաթրապահ հիմարն թշնամուց վատ է,
Փորձանքի կտա, հառաջ, հետո թե։
Ժամանակավ մեկ սարում, կորած տեղ
Մեկ մարդ էր կենում անտուն, ու անգեղ։
Մենակ կենալը խելքից կհանի,
Քիչը յաքանի տեղն կհամբերի։
Իր սրտի հալը ամեն մարդ կուզի
Ընկերին ասի, որ շատ չտանջվի։
Թո՛ղ ասեն՝ բաս էն չայիր չիմանը
Էն ձորի կանաչն, էն ծառաստանը,
Էն շվաք տեղը, սառն աղբյուրն, հովը,
Ծաղիկների հոտը, ղշերի քովը՝
Ի՞նչ տեղ կա, որ մարդ սիրտը բաց անի,
Շատ լավ՝ խոսք չունիմ, ի՞նչ ասիլ կուզի։
Բայց էլի մարդի սիրտը տրաքում է,
Երբ զրից տվող չունի, մենակ է։
Էսպես էլ մեր խեղճ ճգնավորի սիրտն
Շատ էր նեղանում, որ մարդ չկար մոտն։
Ընկավ նա մեշեն, որ ընկեր ճարի,
Հետը ճանաչվի, օրը անցկացնի։
Մեշեն ու խա՜ն։
Արջն ու գելն ի՞նչ են, թե որ ռաստ գան։
Էսպես էլ էլավ, մեր ճգնավորին
Մեկ արջ ռաստ էկավ խոր մեշի միջին։
Ի՞նչ պետք էր արած՝ գդակն վերցրեց,
Գտած սիրելուն խոր գլուխ տվեց։
Արջն էլ իր թաթլուկն դեմ արեց նրան։
Ի՞նչ գլուխ ցավացնեմ։ Հենց իրար տեսան,
Բարով տվին, առան, բարեկամ դառան,
Սիրտներն կպան, էլ ո՞ւր հեռանան։
Սաղ օր իրարից չէին բաժանվում։

Թե ընչից խոսում, ի՞նչ զրից անում,
Ի՞նչ առակ ասում, ընչո՞վ պարապում,
Կամ ի՞նչպես իրար միտքը իմանում,
Մինչև էս օր էլ էս ինձ չէ հայտնի։
Ընչի՞ սուտ ասեմ, որ հոգիս տանջվի։
Ո՛չ ճգնա՛վորն էր շատախոս անչափ.
Արջ ախպորն էլ հո՝ մորուց լեզուն կապ.
Էնպես նրանց ընիցն կռիվ լիս չընկավ,
Ինչպես որ ըլեր, ճգնավորն ասավ,
Թե դանձ է ճարել նա իր ընկերումն։
Արջի եղևիցն ընկած նա մեշումն։
Առանց նրան սիրտը հեչ չէր դիմանում,
Ի՞նչպես զովի նրան, ինքն էլ չէր գիտում։
Մեկ օր էլ նրանց մտքովն անց կացավ,
Հենց հավեն մի քիչ որ չի տաքացավ,
Կանաչ ու մեշա նրանք դուս էկան,
Սար ու ձոր ու ջուր ընկան, հովանան։
Բայց չունքի մարդը տկար է արջից,
Էնպես ճգնավորն առաջ նրանից
Բեզարեց ճամփին ու մնաց եդը,
Ընկերն հենց տեսավ, խոսեց նրա հետը։
«Քնի՛ր՝ ա՛չքի լիս՝ մի քիչ դինջացի՛ր.
Ես քեզ կպահեմ, հեչ դարդ մի՛ անիր»։—
Արջի խոսքը նրա անկաջը մըտավ,
Արշտոտաց, պարկեց, քունը տարավ։
Ղարավուլն արջն էր, պարապ չնստեց։
Քոռաղադինա մեկ ճանճ վրա վաղեց։
Արջը ընկերին դինջ՝ հով էր տալիս,
Աչքը երեսը քցած՝ նստելիս։
Ճանճին հետ ածեց, թշի վրա նըստեց,
Էլի որ քշեց, քթին նա ծըտեց։
Քիչ քիչ կատաղեց, էլ չուզեց փախչի,
Ինքն իրան ասեց առանց մեկ խոսքի,
Թաթլուկը լիզեց, անսաս պպզեց,
Շուն< չ >ը փորն առավ ու խոր՝ միտք արեց։
«Ես քեզ կթոցնեմ»։ Ասեց, «համբերի»։
Ճանճը հենց էկավ ճակատին նստեց,

Ինչքան զոռ ուներ, մեկ քար վերցրեց։
Ու ղոյմաղոշում հենց տո՛ւր, թե կտաս,
Էնպես վրա բերեց քարն, ու մունջ, անսաս,
Որ ճգնավորի ջարդեց ճակատը
Ջախըփուրթ արեց, ջնջխեց գագաթը։
Ընկերի հոգին վա՛ղ էր տեղ հասել,
Բայց ախմախ արջը դեռ կուշտը կտրել,
Հով տալիս նրան, որ անուշ քնի,
Բայց քուն ու երազ մեռլին ի՞նչ կանի։
Մեռելն իր տեղը, արջը իր մերին՝
Բարեկամ էկան, բարեկամ գնացին։—

ԱՌԱՍՊԵԼՔ

ԱՆՔԱՂԱՔԱՎԱՐԻ ԷՇԸ

Ձին հանկարծ իշին մեկ տեղ ռաստ էկավ,
Ճամփեն շատ նեղ էր, անց կենալ չէլավ։
Ձին կարծեց՝ թե էշն իրան պատիվ կտա,
Բալքի ինքն իրան ճամփից դուս կգա։
Բայց ի՞նչ տեղ էր էշն մարիֆաթ առել,
Կոպիտ ծնվել էր, կոպիտ մեծացել։
Էնպես դունչը դուզ՝ ձիու վրա գնաց.
Ձին քաղաքավարի ղոդուղին ասաց։
«Ձի՞ լինիլ, մի քիչ դու ղրաղ կանգնիս,
Որ ինձ տեղ ըլի, դու էլ ճամփա գտնիս։
Կամ թո՛ղ տուր, որ ես էլա առաջ գնամ»։—
Բայց իշի ուշը երբ ա մեկ անգամ
Էնպես անոշ խոսք մտել, տեղ արել,
Ոտն ու պոչն սկսեց դհա պինդ ցցել,
Ձիուն տեղ չտալ ու ճամփեն կտրել։
Ձին որ էս տեսավ, ինքն ղրաղ կանգնեց,
Մեր փաշա իշին համեցեք արեց։
«Ջեմ ուզում, ասեց, քեզ պատվից քցեմ,
Ու քո իշության փառքիցն քեզ զրկեմ»։—

ԱՆՑՎՈՐԱԿԱՆՔՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Իրիկնադեմին մեկ ղրաղ քուչով
Երկու մարդ իրար հետ զրից տալով՝
Անց էին կենում, մեկ էլ էն տեսան,
Դռան շեմի տակիցն մեկ շուն հենց բիրդան
Մղրդաց, իսկույն վնգվնգալ սկսեց։
Էս ձենի վրա սաղ քուչեն լցվեց.
Հիսունից ավել՝ շներ մոտ էլան,
Մեր անցվորների գլուխը տարան։
Մեկը կռացավ՝ որ քար վերցնի,
Մյուսը ձեռիցն բռնեց ընկերի,
«Սի՛րելի՝ ասեց՝ տեղըդ ծանր կա՛ց,
Շան փեշակն ա, որ հաչի հանապազ։
Քարով դու շանը ճամփա չես բերիլ.
Թե չես ուզում նրանց դհա կատաղացնիլ,
Գլխըներս առնի՛նք, գնանք մեր բանը.
Թե չէ քար քցիլն ի՞նչ կօգտի շանը»։—
Իրավ մի քիչ տեղ որ չի հեռացան,
Շներն էլ անսաս քաշվեցին բիրդան։
Բերանը պատռած հայվարա մարդի
Փեշակն է՛ն ա, որ մեզ վրա հաչի։
Բայց դու քո ճամփեն՝ դուզ բռնի, գնա՛,
Կհաչի, կըհաչի, էլ եդ կդինջանա։

ԱԼԱՊՍՏՐԱԿԸ ՖՈՐՍ ԱՆԵԼԻՍ

Մեկ թաբուն գազան մեկ տեղ թոփ էլան.
Արջին բռնեցին, մեկ դուզ չոլ տարան։
Հոգին հանեցին, կաշին քերթեցին,
Ինչքան ուժ ունեք, ամենն իր քեֆին
Մեր լուսահոգի արջին քըքրեցին։
Որդիանց որտեղ՝ նալա՛թ սատանին,
Ալապստրակն էլ հենց էն հաղաղին,
Ծուռ անկաջները խլըշացրած,
Արջի անկաջի ծերիցը բռնած՝

Քաշում էր, որ նա էլ իր փայն հանի։
«Ախ դու թոփալ կաղ», տվին ձեն ձենի։
Մեր գազանները ու վրա թափեցին։
Դո՞ւ ինչ տեղից ես խառնվել մեր միջին,
Քեզ ֆորս անելիս՝ ախր ո՞վ ա տեսել»։—
«Տո ի՞նչ եք ասում», սկսեց խոսիլ։
«Բաս աստված չո՞ւնիք, որ չեք մտածում,
Թե ես չըլեի, դուք հեչ ձեր օրումն
Սրան կտեսնեի՞ք, որ քեֆ եք անում։
Ե՞ս չի մեշիցը սրան դուս խռկեցի,
Ու թո՛ւշ էս տափը՝ ձեր առաջն արի»։—
Լավ տեսան, որ էլ ինչպես էր փչում։
Քեֆըներն էկավ սրա էս խոսքում։
Արջի անկաջի ծերը կտրեցին,
Ու բաժին տվին մեր Ալապստրակին։
Ցավա մարդի վրա շատ ծիծաղին էլ,
Էլի նրա բաժինն չեն պակասցնել։

ԿԱՏՈՒՆ ՈՒ ՄՈՒԿԸ

«Ընկել եմ ձեռըդ՝ դե ուտում ես, կե՛ր,
Էլ ի՞նչ ես խառնում իմ դարը ցավեր։
Գիտեմ, որ իմ վերջս էս օր հասել ա,
Խեղճ ձագս իր բնումն անտեր պետք է մնա»։
Ասեց մեկ խեղճ մուկն անիրավ կատվին,
Որ չանգել նրան դրել էր առաջին։
«Մկամ ուտիլն ա մենակ իմ ուզածն»,
Պատասխան տվեց կատուն չարացած։
«Ամեն մեկ ձենդ, էդ քաղցր ծվծվալդ
Որ անկաջս ընկնում, ու էդ թուլանալդ
Տեսնելիս՝ սիրտս էնպես ա ցնծում,
Հենց իմանում եմ, նո՛ր կյանք եմ ստանում»։—
Անգութ անիրավ խանի սրտին
Ուրախություն է տանջիլն ընկերին։—

ԽԶՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Մեկ չաղ շուն ընկած՝ ախոռի մոտին,
Հով տեղը ձգված՝ անսաս, իր քեֆին,
Իր սիրուն օրը անց էր կացընում.
Որ մեկ խեղճ եզը իրիկվան մթնումն
Հանդիցն էկավ տուն ու գոմը մտավ,
Բերնի ջուրն գնաց, խոտը որ տեսավ։
Շատ բանելուցը ոսկոռն ու կաշին
Իրար էին կպել։ Ու խեղճն էս հալին
Մոտացավ, մի քիչ բերանն ե՛մ քցի,
Շունը մռռաց, չթողեց, որ ուտի։
«Տո ա՛նիրով դու՝ քեզ ի՞նչ ա պակսում»,
Ասեց մեր եզը. «Դու է՞լ ես հաչում։
Սաղ օրը հոգիս արևի տակին՝
Հանդը վարելիս կրակի առաջին՝
Հո դուս է գալիս։ Ու դու քեզ համար
էս շվաք տեղը ընկած մուղարար,
էնքան ես ուտում, խմում, քեֆ անում,
Որ հենց էն ա հա՝ ճաքում ես տրաքում։
Ի՞նչ քո խարջ բան ա էս չորացած խոտն.
Որ չես ուզում ես էլա գնամ մոտն»։—
Ա՜խ, ով չի գիտի՝ նախանձոտ մարդի
Աչքը կրակ ա ու սիրտը լեղի։
Լավ օրըդ տեսնի, սիրտը կտրաքի,
Վատդ լսելիս՝ մի թիզ կըեղվի։—

ՋՂԱՐԻ ՇՈՒՆԸ ՈՒ ՓԻԼԸ

Քուչեքանցովն մեկ փիլ էին տանում,
Որ ցույց տան՝ էնպես էր բանն երևում։
Ո՞վ չի գիտի փիլն հրաշք է մեր կողմերն։
էսպես եդևիցն հազարն ընկել էր։
Ով բանից փախած՝ հայվարա մարդ էր։
Որդիանց որտեղ մեկ պստիկ շուն էլ
Ռաստ էկավ թե չէ՝ սկսեց հաչել,

Վրա թռչիլ, կոնձալ, բողազը ճոթռել։
էսպես կռվելով՝ հետը քաշ ընկնիլ։
«Ա՛չքի լիս՝ կտրի՛ ձենդ ու անսաս կա՛ց։
Չե՞ս ամաչում՝ որ երեսդ պատռած,
Քաշ ես ընկել դու, քեզ ու քեզ սպանում։
Ախր ի՞նչ քո բանն ա՝ տո ջանմ, գյոզմ։
Չափդ ճանաչես, քո գլուխդ լաս։
Լեզիդ հո պատռեց, հերի՞ք չի գոռաս։
Չե՞ս տեսնում, որ դու խռռում ես, ճաքում,
Փիլն իրան համար՝ իր ճամփեն գնում։
Քո հաչալը նա բանի տեղ չքցում»։—
Նրան մեկ ուրիշ շուն խրատ տվեց։—
Հա՜ֆ, հա՜ֆ, հա՜ֆ՝ նրան պատասխան տվեց
Մեր պստիկ շունն, ու էլ սաղն սկսեց։
«Հենց է՛դ ա սրտիս շատ ղվաթ տալիս.
Որ առանց կռվի՝ անունս լսելիս՝
Մեր հարևանի շները կասեն։
Տե՛ս՝ Ջղարի շունն ի՞նչ ղոչաղ շուն ա։
Որ փլի վրա էլ հաչիլ կարում ա»։
Բաղի քնձոտ մարդ էլ է՛ս ա ասում,
Երբ մեծ մարդի վրա նա իր ձին քշում։—

ԾԱՌԸ

Մեկ ծառ մեկ ձորում էր բհամ էկել։
Մեկ օր սկսեց տրտնջալ, ասել,
Թե ընչի՞ չի ինքն մեկ սարի ծերի
Դուս էկել, որ նրան ամենն էլ տեսնի։
Հենց է՛ս էր ասածն ցերեկ ու գիշեր.
Համը որ տարավ. աստված ի՞նչ աներ։
Նա կուզի աշխարքն միշտ խաղաղ մնա,
Որ չէլավ ծառի մուրազն էլ տվեց նա,
Ու նրան ասեց։
«Շա՛տ բարի՝ քո տեղն՝ կասեմ՝ որ փոխեն,
Թո՛ղ սիրտդ հովանա, գանգատ ինձ պետք չեն»։
Իսկույն գետնիցը կրակ դուս էկավ,

Ձորը սար դառավ ծառը բարձրացավ․
Ջանը դինջացավ։
Աչքը սկսեց չորս կողմը քցել,
Իր բախտի վրա քեֆը քոք անել։
Ի՞նչ պատահեցավ․ էլ ինձ չի հայտնի։
Աստված բարկացավ մեշին բիրադի,
Բոլոր քամուն՝ թունդ տվեց հրաման,
Ինչքան մեշեք կան, անեն քոքըհան։
Կատաղած քամիքն վրա թափեցին,
Սար ու ձոր իրար տվին, ջարդեցին․
Դող ընկավ մեշեն, ճուխկ ասես, տերև
Ջախըփուրթ էլան, լցվեցին մեկ խև։
Ամենն իր սև օրն սկսեց լաց ըլիլ՝
Բայց երկնքիցը քոմակ չէր հասնիլ։
Ճուխկ ու կոխք ջարդված, քոք ու տակ ցրված՝
Միտք արին ծառերն՝ սարի վրա բուսած։
«Երանի՛ նրանց՝ որ ձորի միջին
Ա՜խ՝ դուս են էկել ու էլ դարդ չունին։
էն սա՛ռն աղբրի, էն հով շվաքի,
էն կանաչ խոտի, ու սիրուն ծաղկի
Վրեն ու միջումն՝ չորս կողմը բռնած,
Դինջ, անմեղ խնդան արևովն իրանց։
Ո՛չ քամին նրանց ձեռը կխփի,
Ո՛չ արև՝ քոքն ու տերևներն կէրի։
Խոսքը դեռ կիսատ։ Էնպես թափ տվեց
Քամին՝ որ նրանց քոքըհան արեց։
Ի՛նձ վրա եմ ասում էս պարզ առակը։
Ի՞նչ հարկավոր ա մարդիս՝ թագ, պսակը,
Քանի ցած է տեղդ ու միտքդ հանդարտ,
Էնքան քեզանից հեռու փորձանք, դարտ։
Ա՜խ՝ մի՛ ցանկար, մի՛՝ հոգվույս սիրելի,
Որ բարձր պատվի հասնիս բիրադի։
Պատիվն, պատուհասն՝ որդի են մեկ մոր՝
Փուչ կանեն՝ սիրուն արևդ ու քո օր։

ԳԵԼՆ ՈՒ ԳԱՌԸ

Ով զոռ ունի, հենց անճարի գլխին
է քացի տալիս, հանում աչքն, հոգին։
Իր արած մեղքն էլ նրա վզին դնում։
Օրինակ շատ կա էս մեր աշխարքումն։
Գառը մեկ շոք օր աղբրի վրա
Ջուր էր խմում, որ քոռաղադինա
Մեկ սոված գել էլ՝ էն կողմը կամաց
Հոտ առավ, էկավ գառին մոտացած։
Բայց էլի բանը օրենքով ուզեց
Բռնի, ու հանկարծ գառին ձեն տվեց։
«Հա՞յ դու անզգամ, վատթար կենդանի․
Ի՞նչպես սիրտ արիր՝ իմ խմելու ջրի
Համն ապականել, էսպես պղտորել՝
Էդ մուստառ դնչովդ՝ էսքան ախպ, վիբիլ
Սրա մեջը խառնել, իշտահս կոտրել։
Նայի՛ր՝ թե ի՞նչ դառն օրի կհասնիս,
Գլուխդ որ չուտեմ, ե՞րբ կպրծնիս»։—
«Քո գլխիդ ղուրբան՝ մեղքս ինձ բաշխի՛ր,
Արածս լավ տե՛ս, հետո ինձ պատժի՛ր։
Քո ջուրն պղտորիլ ի՞նչպես կարող եմ,
Հարիր ոտ հեռու քեզանից ցած եմ։
Իմ հադդս ի՞նչ ա, որ էդ բանն անեմ,
Ու քո մեծության աչքիցը ընկնիմ»։—
«Թշվա՛ռ՝ ուրեմն ե՞ս եմ սուտ ասում,
Էդպես լիրբ՝ բերանդ ի՞նչպես ես ցրվում։
Էս թողանք, անցած տարին դո՞ւ չէիր,
Որ ինձ՝ հենց է՛ս տեղ փիս խոսք ասեցիր,
Սիրտս կոտրեցիր։
Հենց գիտես, էստոնք ես մոռացե՞լ եմ,
Ու դրա ջիգրը մեկ օր հա՞նիլ չեմ»։—
«Տե՛ր իմ և Աստված՝ էս ի՞նչ լսեցի,
Տարիս թամամ չի․ քեզ ո՞նց վնասեցի»։—
«Բաս քո ախպերն էր»։—«Ախպեր էլ չունիմ»։—
«Բաս խնամիդ, կամ կնքահերդ էր։— Իմ
Ասածս ասած է։ Ինչ որ էլ անես,

Ազգականներիդ մեկը կըլեր։ Ես
Կարճ՝ քեզ ասում եմ, որ թե դու, թե ձեր
Ջոբանն ու շունը. բոլոր նոքարներ
Իմ թշնամին եք, արինս եք ուզում,
Որ խմեք, ու էս կանաչ տեղերումն
Ձեր քեֆին ման գաք, մեզ փչացնեք.
Բայց դուք մեր հունարն հլա տեսել չեք։
Աստված է էս օր քեզ իմ ճանկս քցել,
Բոլորի մեղքն էլ քեզանից ուզել»։—
«Ե՞ս ինչ եմ արել, որ ինձ ես բռնում»։—
«Կտրի՛ր՝ ա՛նզգամ, ձենդ, քե՛զ եմ ասում։
Գլո՞ւխ ունիմ, որ քեզ հետ չանա տամ,
Քո արածն է՛ն ա, որ ես էս անգամ
Սոված ըլելով, քեզ ձեռք եմ քցել,
Ուզում եմ ուտել, փորս կշտացնել։
Ի՞նչ իմ բանն ա, որ նստիմ, քննեմ,
Կամ մեղք հարցնեմ, կամ քեզ ազատեմ»։—
Ասեց ու գառի վզիցը բռնած՝
Քաշեց մութ մերին, ատամներն սրած։

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄՈԾԱԿԸ

Խղճի վրա մի՛ ծիծաղիր,
Անճարին մի՛ վիրավորիր։
Խեղճ մարդն էլ շատ անգամ քեզ էնպես
Կկծի, որ կմնաս սևերես։
Քո գլխին շատ էլ մի՛ հավատար,
Լսի՛ր էս մասալեն, անկաջդ ա՛ռ։
Էսպես պատահեց, առյուծ թագավորն
Մոծակի սիրտը՝ խիստ խոցեց մեկ օր։
Մոծակ շահզադեն մարսիլ չկարաց,
Կռիվ բաց արեց՝ հաքված, հազրված։
Կռվողն էլ ինքն էր, շվի ածողն էլ,
Թոփն էլ վրեն հազիր, յարաղ, ասպաբն էլ։
Բզզալով թռավ թշնամու վրա։
Առյուծ փադիշահն հենց իմացավ, նա
Հանաք էր անում, վրեն ծիծաղեց,
Սայմիշ չարեց նրան, ու մնաց նստած։
Մոծակն ի՞նչ կաներ էս հալին հանաք։
Մեկ՝ թիկունքիցը, մեկ՝ անկաջ ու աչք
Սաղ ածելով՝ նա ծակում էր, դաղում,
Առյուծն եռալիս՝ վեր կենում, թռչում։
Էլ եդ վախտ, ֆռսանդ հենց որ ճարում էր,
Էլ եդ վեր գալիս, միսը պոկում էր։
Առյուծի ջանը որ շատ կրակ ընկավ,
Պոչովը ղամշեց։ Էլ եդ ճար չէլավ։
Ղոչաղ մոծակը արնի համն առած՝
Սիրտն էլ նեղացած՝ էնպես բարկացած,
Թուշ էկավ, նստեց ճակատի վրա,
Ա՛րինը ծծեց տզրըկի պես նա։
Անճար առյուծը շատ էլ զոռ արեց.
Յալը թափ տվեց, գլուխը շարժեց։
Բայց դու ո՛չ մեռնիս։ Մոծակն իր քեֆին
Նստած՝ մեկ՝ քթին, դնչին, անկաջին
Էնպես էր զարբում, որ հոգին հանեց։
Առյուծի ճարը հենց որ կտրվեց,
Պարկեց գետնի վրա, սկսեց գոռալ,
Ջանն առել էր ցավն, ի՞նչպես լար իր հալն։
Դեմն ատամներն էր նա ղրճտացնում,
Դեմը գետինը չանգռում ու պոկում։
Գոռոցն ընկել էր մեշա, ձոր ու սար,
Թև, ոտ ունեցողն հո սասանահար
Գլուխն առել, կորչում՝ լալով, դողալով։
Հենց բռնես մեշեն բռնած՝ կրակով
Վառվում ըլի, կամ ջրհեղեղ գալիս։
Նոր հասած ետին վերջը աշխարքիս։
Բայց ո՞ւմ հունարն էր էսքան ղալմաղալ
Մոծակին, որ չի կարաց դիմանալ։
Առյուծն սկսեց գոռալ, մռնչալ,
Գետնի վրա չոքիլ, նրան մեղա գալ։
Խնդրեց, որ իրան հանցանքը բաշխի,
Ու մեջըները հաշտություն ընկնի։
Մոծակն առյուծի հալը տեսնելով,

Մեղքն էկավ, հաշտվեց, նրան ներելով։
Ջիգրը հանած ու սիրտը հովացած,
Թշնամուն էնպես քարովը տված,
Ընկավ սարեսար՝ ինքն իրան բերնով
Պատմեց իր արածն, գլուխը գովելով։—

ԱՐՏՈՒՏԸ ԻՐ ՁԱԳԵՐՈՎԸ ՈՒ ԵՐԿՐԱԳՈՐԾԸ*

Առակ է ասած։— Ընկերիդ խոսքին
Հավատա՛, էլի պինդ կա՛ց քո բանին։
Շատ դրուստ խոսք է, օրհնվի բերանն,
Որ էս ասել ա՝ բաս լսե՛նք առակն։
Գարունքն որ բացվեց, Դրերն քաղցրացան,
Սար ու ձոր ծաղկեց, դաշտք ու անդաստան
Իրանց զարդարանքն հաքան, զուգվեցան։
Ծաղիկ, հոտ ու հով ամեն տեղ առան։
Ամենն էլ ուրախ ձեն ձենի տվին,
Արջը մերումը, ձուկն ծովի տակին,
Ղշերն հանդերումն, սարերի գլխին
Իրանց արևի վրա խնդացին։
Չգիտեմ՝ կամո՞վ էր, թե հենց զոռով.
Մեկ արտուտ թռչուն քեֆին նայելով.
Թռչում էր, գնում, ման գալիս սիրուն,
Էլ չէ՛ր մտածում, թե էկել էր գարունն։
Քիչ էլ որ մնար, պետք էր անց կենար։
Վերջը նրա էլ բնությունը քաշեց,
Սիրտը ուզեց, որ որդոց մեր դառնար,
Ձագերն եղևին քցեր ու ման գար։
Ղշին ի՞նչ պետք էր շատ մեծ թաղարեք,
Ո՛չ տուն կուզի նա, ո՛չ մեծ թանթանեք։
Բուն դրեց հարդումն, ձու ածեց, նստեց։
Մեկ քանի օրից հետո ճուտ հանեց։

Ցորենը հասավ, հնձի վախտն էկավ,
Բայց ձագերի դեռ օրը չհասավ,
Որ թռչին, գնան, ուտելիք ճարեն,
Մորն էին նայում, կուտ բերի, ուտեն։
Մեկ օր էլ որ մերն բնիցն հեռացավ,
Խրատ տվեց նրանց, ու էնպես թռավ։
«Մնա՛ք բարով՝ ասեց՝ իմ ազիզ որդիք,
Կացե՛ք դուք էստեղ, նաբաթ ա՝ մարդիք
Թե գալու ըլին, որ հարդը հնձեն,
Իմացե՛ք՝ նրանք ինչ խոսին, ասեն։
Ու ինձ ասեցե՛ք, ուրիշ տեղ ճարեմ,
Հմիկ գնում եմ, որ պաշար բերեմ»։
Հենց նա դուս գնաց, հարդի տերն էկավ,
Ցորնին մտիկ արեց ու որդուն ասավ։
«Հարդը հասել ա, դու էլ ես տեսնում,
Հասկի ճիթը կախ մեր ցորնի միջումն։
Էլ վախտ չի կորցնես, էքուց կգնաս,
Մեր բարեկամներին իմացում կտաս,
Որ գան մեր հանդը, մեզ քոմակ անեն»։—
Հենց խեղճ ձագերը իմացան էս ձենն,
Կլլվացին ու անսաս վշվշացին։
Ա՜խ՝ ո՞ւր ես մեր մեր, ի՞նչ տեղ՝ ասեցին.
Արի՛, դու հասի՛ր, ա՜խ՝ մեր հավարին»։—
«Ի՞նչ ա պատահել», մերը հարցրեց։
«Ի՞նչ պետք է ըլի, հանդի տերն ասեց,
Բարեկամներին որդին գնա, կանչի,
Որ էքուց հարդը հնձվի, պրծնի»։—
«Էլ ոչինչ չասե՞ց», մերը հարցրեց։—
«Էստուր համար դուք հեչ դարդ մի՛ անեք։
Թո՛ղ լիսը բացվի, հետո իմացե՛ք։
Էս ձեր կերակուրն, կերե՛ք, կշտացե՛ք,
Որդիք, ու պարկինք։ Դուք հաց կերել չեք»։—
Ինչպես որ էլավ, նրանք կտկտացրին,
Գլուխ գլխի տված՝ մոր թևի տակին
Կուչ էկան ու շուտ աչքը խփեցին։
Օրը լուսացավ, բարեկամ չէկավ,
Ղուշն էլի պաշար բերելու թռավ։

* Արտուտ ղշին աշխարհաբար չորանխարուկ են ասում։ Ծտի նման, բայց գլխին մեկ սուր քաքուլ ունի, ու հետ ածելիս՝ փոքր թռչում ա, էլ եդ վեր գալիս, նստում։ Բունը միշտ հարդի միջումն ա դնում։ Ծան. հեղ.։

Ու խեղճ երկրագործն էլ իր հանդն էկավ։
Ժաժ <եց> գլուխն, որդուն էլ ասավ։
«Հեռու բարեկամն, մոտիկ ազգականն
Ի՞նչպես մեկ կըլին՝ որդի՛ սիրեկան։
Աստծու անունը տո՛ւր, էքուց գնա՛,
Հորախպորդ ու մեր խնամուն ասա՛»։—
Ղլվլոցն ընկավ մեր ձագերի մեջ.
Էլի իրանց մորն ձեն տվին՝ որ հենց
Էն սհաթին եդ գա, իրանց ճար անի։
«Ա՜խ՝ մեր աղիզ մե՛ր՝ արի, ա՜խ՝ արի՛։
Ազգականներին որդին գնաց բերի»։
«Հե՛չ ձեն մի հանե՛ք», մերն պատասխանեց։
«Մի էլ վախենաք ամենևին հեչ։
Աստված հիշեցե՛ք ու էս տեղ կացե՛ք.
Թո՛ղ օրը բացվի, հետո դուք տեսե՛ք,
Ազգականն էլ իր դարդը կունենա։
Մուխանաթ մարդի մհանեն շատ ա։
Երրորդ անգամը տերն իր հանդն էկավ։
«Ամա՜ օյին են գալիս մեզ», ասավ։
Շա՛տ բարի՝ էս թո՛ղ մեզ խրատ ըլի,
Որ ումուդ չանենք էլ ուրշի խոսքի։
Ու մեր սրտումը լավ տպավորենք։
Որ մարդիս ախպերն, բարեկամն ինքն ա,
Գնա՛՝ սի՛րելի՝ մորդ ու քվերդ ասա՛,
Որ մանգաղն առնին, էքուց հանդը գան,
«Վա՜յ նրանց՝ որ այլոց ապով կմնան»։—
Արտուտն որ լսեց, ձագերին կանչեց
«Հիմիկ վախտն էկավ, որ գնանք», ասեց։
Ջագերն էլ իսկույն մոտ էլան գլխին,
Առաջին անգամն թևերը բացին
Ու մոր եդևիցն ինչպես որ էլավ,
Հանդիցն դուս էկան, քիչ քիչ բարձրացան
Ու թռալով, ու ճովղալով
Ու ծլվլալով, ու ճթճթալով
Ծվալով, գվալով
Արտի վրովը գնացին, անց կացան,
Հասան ամպի տակն, աչքից հեռացան։

ՋՎԱՐՃԱԼԻ ՈՒ ԿԱՐՃ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՔ

ԳԺՈՒԹՅՈՒՆ—ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ—ՏԽՄԱՐՈՒԹՅՈՒՆ—ՋՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ ՋԵՂԽՈՒԹՅՈՒՆ—ՓԱՌԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ—ԺԼԱՏՈՒԹՅՈՒՆ (ՆԱՔՅԱՋՈՒԹՅՈՒՆ)

Պարապ մարդն էլ, աշխատավորն էլ՝ եթե փող ունին ու ժամանակ, կուզեն՝ որ մի քիչ ֆիքրները ցրվեն, կամ քեֆ անեն։ Առաջինն էնդուր համար՝ որ չի՛ գիտի՝ թե ի՛նչպես իր ժամանակն ու փողը բանացնի, երկրորդը՝ չունքի շատ աշխատելուցը զորությունը հատնում ա։ Մինն կուզի՝ որ ժամանակը կորցնի, մյուսը՝ դհա ավելի զորություն ստանա, որ լավ աշխատի։ Էս պատճառով են ամեն ազգի միջում էնքան բաներ լիս ընկել, որ մարդ տեսնելիս՝ կամ ժամանակն անց կացնի, կամ սիրտը ուրախանա— ինչպես կռիվ տալը, մուշտակռիվը, գոմշակռիվը, քարակռիվը, ջիրիդ խաղալը, հավ կռվացնիլը, թուղթ խաղալը, պար գալը, ծովակռիվը, նարդին, դհա շատ խաղեր՝ որ ո՛չ թիվ կա, ո՛չ հեսաբ։ Սրանք բոլորն էլ էնպես մարդկանց համար են սահմանվել, որ չգիտեն, թե ի՞նչ անեն։ Էն հո չե՛մ ասում, որ շատն էլ գինով ու քնով ա իր ժամանակը սպանում. էդ թո՛ղ մնա։

Մասխարություն անիլը, ափեխցփեխ խոսալը՝ վաղ ժամանակից սկըսած՝ էն հին ազգերի միջումն էլ կար։ Հույնք, հռովմայեցիք՝ որ էնքան լուսավորված էին, հաց չէին ուտիլ, եթե մոտըներին էնպես մարդիկ չըլեին, որ հայվարա խոսային, մասխարություն անեին, ուրիշ մարդի թաhր խոսային, որ հաց ուտողների քեֆը դառ։ Աթեն քաղաքումը մեկ ժողով կար, ուր որ 60 ընկեր էին. նրանց գործն էսպես մասխարությունն էր։ Ալեքսանդր Մակեդոնացու հերը՝ Ֆիլիպպ, որ ինքն էլ էնպես մասխարեք իր դռանն ուներ, նրանց 1000 (հազար) մանեթ բաշխեց։

Սրանից ղայրու հունաց միջումը էնպես փորի եսիր մարդիք էլ կային, որ իշխանների տներումը հենց էնդուր համար էին կենում, որ նրանց սիլլա խփեն, գլխըներին ջուր, ախպածեն, կմճթեն, քթըներին հուփ տան, վիզըներին խփեն, միրքըներիցը ձգեն, ու նրանք էլ ուլի պես մկկան, իշի

պես զռան, ձիու պես խրխնջան, որ անողի քեֆը գար, էնքան անարգ էին
էսպես մարդիկը, որ մեկ փոր հացի խաթեր, ինչ որ անում էին, չէին
նեղանում, այլ միշտ ծիծաղում, քացի քցում, տոտինգ անում։

Դիոնիս Սիրակուսացի թագավորի մոտ էնպեսները կային, որ չունքի
ինքը լավ չէր տեսնում, սրանք էլ հացի, ամանի, կերակրի վրա էնպես ձե-
ռըն ածելով էին շարժում, որ թագավորն հենց իմանա՝ թե իր աչքը լավ ա
տեսնում։

Հռովմայեցիք, մանավանդ կնանիքը՝ էնպես մարդիկն էին սիրում, որ
քոռ լինեին, քաչալ, շիլ, քոսա, կարճ, հաստափոր, երկարաքիթ։ էսպես
մարդկանց համար հատուկ բազար կար, ու բազի անգամ մեկ էսպեսին հա-
զար մանեթ էին տալիս։ էստուր համար շատ մարդիք իրանց երեխանց ոտ
ու գլուխը՝ էնպես կապում, հուփ էին տալիս, որ էսպես այլանդակ ըլի ու
նրանց ծախեն, դատում անեն։ Հելիոգաբալ կայսրը մեկ օր իր սուփրի
վրա՝ հաստափորի, քաչալի, շլի, կաղի, խլի ու սևի էր ղոնաղ արել. ամեն
մեկիցը ութ հատ։— Շատ թագավոր ու իշխան հա՝ էսպեսներին միշտ հե-
տըներն էին ման ածում։ Շատը էս օր էլ ունին։ Հիմիկ էլ որ հարսանքում,
մեջլըսում, էսպես բաներ անում են, էն ժամանակիցն ա մնացել։

էսպես մասխարա ու շախաշի մարդիքը շատ անգամ կոպիտ, ախմախ
էին, շատ անգամ էլ էնպես սուր, խելացի, որ թագավորի, վաղըրի, իշխա-
նի էնպես խոսք էին ասում, որ նրանով խելքի էին գալիս, բազի անգամ
էլ՝ էնպես խոսքի ջաղըմեն իրանք էին քաշում։ Ինգլիզ թագուհի Էլիսա-
բեթի դռանը մեկ շատ շաթուքյաստն յարամազը կար։ Մեկ օր թագուհին
հարցնում ա.— Պասի, ի՞նչ խաբար ես բերում ինձ համար քաղաքիցը, էլի
իմ մեղքի դավթարը պետք է կարդա՞ս։— Է՛հ, ձեր Մեծությունը,— պատաս-
խանեց մասխարեն,— ի՞նչս ա գնում էնպես բանիցը խոսամ, որ սաղ քա-
ղաքըն ա նրա վրա խոսում։— Մեկ էսպես ինգլիզ մասխարա էլ էկավ
Ֆրանցուզի թագավորի մոտ։ Թագավորը տարավ նրան իր պատկերի զալը
ու Քրիստոսի պատկերի առաջին կանգնած, նրան ցույց տվեց. թե նա ճա-
նաչո՞ւմ ա էն պատկերը, թե ո՛չ։— Չէ՛, ձեր Մեծությունը,— ասեց։— էս
միջի պատկերը Քրիստոսին ա,— ասեց թագավորը, աջու կողմինը Պապինն
ա, ձախու կողմինը իմը։— Շատ շնորհակալ եմ,— ասեց մասխարեն,— որ
իմ աչքս բաց արիք. չունքի ես լսել էի, թե Քրիստոս երկու ավազակի միջի
խաչվեցավ, հիմիկ իմացա՝ թե էն ավազակները ո՞վ են։

Շատ երևելի ա կարճիկ մարդկանց հարսանիքը, որ մեկ թագավոր իր
դռանը՝ քեֆի խաթեր անիլ տվեց։ 1710 թվին էր՝ որ երկու կարճիկ (թզուկ)
հարսն ու փեսա՝ մեկ իրեք ականի կառեթում նստած՝ քաղաքումը ման
էին գալիս, որ ղոնաղներին կանչեն։ Կառեթի առաջին մեկ ձի էր լծած,

վրիցը շալ շալ ճոթեր կախ, երկու ձիավոր էլ առաջներին էին գնում։ Մյուս
օրը հարսն ու փեսա գնացին ժամը՝ որ պսակվին. նրանց մարշալը (հար-
սանքի գլխավորը) էլի մեկ կարճիկ էր, ձեռի գավազանը ճոթով, աղլխնե-
րով զարդարած։ Առաջներին սա էր գնում, հետո հարսն ու փեսա, հետո
թագավորն ու իր բոլոր մեծամեծքը ու 72 կարճիկ, մարդ ու կնիկ, որ շատը
1000 վերստ ավելի տեղից բերել էին, որ էս հանդեսումը գտնվին։

Նրանց գլխի թագը թագավորը ինքն էր բռնել։ Հարսանիքը մեկ մի-
նիստրի տան էր։ Կարճիկների շորերը բոլորը ֆրանցուզի շոր էին։ Հարսը
մեկ սեղանի վրա էր նստած, փեսեն՝ մեկ, գլխըների վրա կամար էին
շինել։ Մեկ կարճիկ մարշալ ութը կարճկի հետ կռներին աղլուխ կապած՝
ղոնաղներին ղուլուղ էին անում։ էնպես ուրախ էին նրանք, որ հենց իմա-
նաս՝ թե աշխարքի թագավորությունն իրանցն ա։ Թագավորն ու իր մեծա-
մեծքը, էլչիք, տան պատերի տակին նեղ սեղանների վրա նստած՝ նրանց
մտիկ էին անում, ու քեֆ անում։ Մանավանդ որ սկսեցին պար գալ, աչք
պետք էր՝ որ թամաշ աներ։ Որի ոտներն էին ծուռը, որը հաստափոր, որը
մեծ անկաջանի, որի պռոշները կախ, որը կուզ, որի շլինքը փորն ընկած։
Մինչև 12 սհաթը գիշերվան էսպես քեֆ արին։ Հարսն ու փեսի տեղը թա-
գավորի իր օթախումն էր շինած։ Կարդացողը կարծեմ՝ ինքն էլ կուզեր,
որ էսպես հարսանըքին թամաշ աներ։

Շռայլությունն ու ժլատությունն էլ պակաս գժություն չեն։ Հռովմա-
յեցիք՝ որ առաջ էնպես հասարակ էին ապրում, հետ ժամանակի, երբ որ
խազինա ճարեցին, էնպես գժվեցան, որ Աստված հեռու տանի։

Մեկ իշխան մարդ թաղելիս՝ նրանց թրակոիվն էնպես էր, որ հազար
մարդ տեղն ու տեղը մնում էին։ էսպես կռիվ ուրիշ վախտ էլ էին անում,
որ խալխը ուրախանա։ Ինչքան շատ էր արին թափում, ինչքան շատ էին
ա՜խ ու ո՜խ քաշում, էնքան շատ էր խալխը մխիթարվում, էնպես անսիրտ
էին։ Բայց թե ի՜նչքան էր սրա խարջը, ո՞վ կարա հեսաբ անիլ։ Մեկ գերու
գինը էն ժամանակը տասներկու հազար մանեթ էր, ուրեմն թո՛ղ լսողը
մտածի, թե 100 կամ 1000 մարդի գինը ի՜նչքան կըլեր։

Լուկուլ զորապետը հրամայեց՝ որ մեկ լիճ հանեն՝ որ միջումը ծովի
ձուկը պահի։ էստուր համար սարեր ճղիլ տվեց, խանդակներ շինել տվեց՝
որ ծովի ջուրը ինքն իրան գա էն տեղ։ էնպես գժվել էին հռովմայեցիք էս
ժամանակին, որ մեկ երկու ֆունտանոց ծովի ձկանը 200 մանեթ էին
տալիս, առնում։ Մեկ հռովմայեցի Հիրցիոս անունը՝ մեկ լիճ ուներ ձկան,
որ տարենը չորս հարյուր հազար (400.000) մանեթ էր նստում նրան, բայց
խերը դհա շատ էր։ էս Լուկուլ զորապետին մեկ բարեկամ մարդ խնդրեց՝

որ հարյուր շոր տա թեատրի համար. նա հինգ հազար շոր տվեց՝ որ ջոկի, որը լավն ա, էն վերցնի։

Խալխին զանազան թամաշեք շհանց տալը՝ դառել էր նրանց համար խաղ։ էս անում էին, որ խալխի աչքին դուր գան։ Պոմպեոս զորապետը հրամայեց՝ որ մեկ թեատրը շինեն։ Մեջը բոլոր մարմառ արձաններով լիքըն էր ու քառասուն հազար (40.000) մարդ կմտնեին։ Հինգ, վեց օր իրար վրա զանազան խաղեր էին էստեղ ցույց տալիս, թրակռիվ, մարդակռիվ, խաղ են ասում, պար գալիս։ Բազի անգամ 600 ջորի, էնքան էլ ձի, էշ, մարդ՝ մեկ տեղ էին դուս գալիս։ Գազանները կռվացնելիս՝ 30 փիլ ու 100 առյուծ դուս էկան, ու բոլորն էլ իրար կոտորեցին։

Մեկ քանի ամիս խալխին քեֆ նշանց տալու խաթեր Սկավրոս անուն հռովմայեցի մի, էնպես մեկ թեատրը շինել տվեց, որ ութսուն հազար նստելու տեղ ուներ, իրեք հարյուր վաթսուն սյուն, մարմառից շինած, ու իրեք հազար պատկեր ու արձաններ կար միջումը։ Հազար տարի կարող էր մնալ, բայց հենց մեկ քանի ամիս անց կացավ, էլի քանդիլ տվեց։ Մեկ հռովմայեցի էլ երկու էնպես կիսաթեատր շինիլ տվեց, որ մաշիններով կարելի էր պտտել, իրար կպցնիլ, ու էլ ետ հեռացնիլ։ Արեգակի շողքը խասու ղումաշով էին փակում, ու խալխին հովացնելու խաթեր՝ էնպես մաշիններ էին շինել՝ որ գինին, վարդաջուրը անձրևի պես էր կանգնողների վրա գալիս։ Տրայանոս կայսրը՝ որ էնքան գովում են, հարյուր տասն իրեք օր իրար վրա կռիվ տալ տվեց։ Տասը հազար մարդ ու սրանից դհա ավելի անասունք, գազանք մնացին տեղն ու տեղը մեռած։

Մեկ նոր գործ ճարելիս, երևելի մարդիքը էնպես մեկ ճաշ պետք է տային, որ ութսուն հազար (80,000) մանեթ էլ ա նստեր իրանց։ Էսպես մեկ հացկերութումը՝ հենց մենակ Եգիպտոսից բերիլ տված վարդը տասը հազար (10,000) մանեթ էր նստում։ Անվանին Հուլիոս Կեսար մեկ օր որ հաղթությունից ետ դարձավ Հռովմ, հինգ օր քաշեց էս հանդեսը։ Ամեն մեկ հասարակ սալդաթ վեց հարյուր, ամեն մեկ հասարակ մարդ՝ քսան մանեթ պարգև ստացավ։ Բոլոր խարջը հարիր միլիոն մանեթից ավելի էր, բայց էլի իննսուն միլիոն մանեթ էլ՝ խազինեն աձեց։

Սրանից եդը մեկ քանի շաբաթ իրար վրա՝ թամաշեք էր, որ տալիս էին։ Ահագին խանդակներ էին փորել, որ ինչպես ծովի վրա՝ կռիվ տան։ Վերջը մեկ ճաշ տվեց, որ բոլոր խալխը հրավիրած էին։ Քսան երկու հազար տան նստած՝ հաց էին ուտում. ամեն մեկ տան՝ տասը կարաս հենց գինի էր դրած։ Շատ մարդ ոտի տակի մեռավ։ Մյուս ուտելիքը թողանք։

Մեծ պատիվ էր էն ժամանակը՝ շատ ուտիլն ու խմիլն։ Ազիզ պահած մարդիքը՝ գլխըներին ոսկու թոզ էին ածում, որ դեղին մազ ունենան.

մաշկըները անգին մարգարտով ու ջավահրով էին կարած։ Գլուխ, երես անուշահոտ ջրերով ու յուղով էին լվանում, շատ անգամ լեղանում էին միջումը։ Հաց ուտելիս՝ էնպեսը կար՝ որ տասն անգամ շորերը փոխում էր։ Մեկ փիլիսոփա մարդ՝ անունը Սենեքա, որ էսպես բաներից պետք է հեռու կենար, ինչպես ինքն էլ գրել ա, որ մարդ քանի հասարակ ապրի, էնքան բախտավոր է, երբ որ մեռավ, հենց մենակ հինգ հարյուր սեղան եդ քցեց, որ ամեն մեկի գինը քսանը հինգ հազար մանեթ էր։ Էս ի՞նչ ահագին գումար ա։ Տե՛ս՝ թե մյուս բաներն ի՞նչ կըլեին։— Ներոն թագավորի կնիկը՝ ամեն օր հինգ հարյուր իշի կաթնում էր լեղանում, որ փափուկ մորթի ունենա։ Կնանոց մյուս զարդն ու զարդարանքն էլ չեմ ասում։

Բաղնսների վրա հո՝ անթիվ գումար էին խարջում։ Գարաքալլա կայսեր բաղնիսը էնպես հիանալի էր, որ բոլոր օթախները մարմառից էր շինած, ոսկե ջահեր ամեն տեղ. անգին արձաններ։ Էրծաթի լուլեքանցով էր ջուրը ներս գալիս, հազար վեց հարյուր մարմառի աթոռ կար շինած նստելու համար, ու քսան հազար մարդ միջումը կտեղավորվեր։

Դեոկղիտիանոս կայսեր բաղնսի վրա քառասուն հազար քրիստոնյա գերի յոթը տարի բանել, երեսուն հազարը մեռել էին։ Ամեն մարդ կարող էր լեղանալ։ Էնքան սոխաս ու սներ կային, որ էլ թիվ չուներ։ Փիլիսոփեքը իրանց տեղն ունեին, գիտունքը՝ իրանց, գրքատունը միջին գրքերով լիքը։ Պատկերահանն ու ուրիշ ճարտարագործքը՝ իրանցը, մեջը պատկերներով, արձաններով լիքը, ու խալխի համար էլ՝ էնպես էր շինած՝ որ միջումը կարեին կռիվ տալ, թեատր խաղալ, պար գալ և այլն։

Ներոն կայսրը՝ էնպես մեկ ղալ ուներ շինիլ տված, որ օջաղքն ու պատերի կեսը՝ նրա սեղանի վրովը՝ երկնքի պես պտուտ էին գալիս, որ տարվան չորս ժամանակը ցույց տալիս. ամպը գոռում էր, անձրևի ու կարկտի տեղակ՝ անուշահոտ վարդաջուր էր վեր թափում։ Հելիոգաբալ կայսրն էլ էնպես մեկ ղալ շինել տվեց, ամա անուշահոտ ջուրը՝ էնպես սաստիկ էկավ՝ որ մեկ քանի ղոնաղ՝ հոտիցը խեղդվեցին։ Էս տխմարը՝ իրան օթախիցն սկսած՝ մինչև էս ղալը, որ հենց բռնիր՝ թե հինգ ոտ ճամփա չէ՛ր ըլիլ, ու միշտ կառեթով էր գնում, գալիս, բոլոր ճամփեն ոսկեփոշի էր շաղ տվել, որ ոտը գետնին չդիպչի։ Նրա սեղան, աթոռ, սնդուկ, ու բոլոր տան հաջաթները՝ ոսկուց էր շինած։ Շորերը անգին ջավահրով կարած, բայց էլի, մեկ շորը՝ երկու անգամ չէ՛ր հագնիլ, մեկ մատանիքը՝ երկու անգամ չէ՛ր դնիլ։ Ինչ թախում ուներ, ոսկուց էր, ու ամեն իրիկուն, ինչ ամանի վրա ու ընչով որ հաց էին կերել, բոլորը ղոնաղներին ու ծառայիցն էր բաշխում։ Իրան սալդաթներին էլ էր՝ էս ամաններիցը, կամ ջավահիր, կամ մեծ գումար բաշխում։ Նրա ձկան լիճը՝ վարդաջրով էր լիքը։ Լավ ձկները չէին ուզում,

ամա ինքն էնպես էր ուզում, ի՞նչպես պետք է անեին։ Նրա խանդակները՝ ծովի կռիվ տալու համար, գինով էր լիքը։

Նրա ճաշին էնպես կերակրներ էին գալիս սեղանը, որ ամեն մեկը երեսուն հազար մանեթ էր նստում։ Բոլորը էնպես ղշերի լեզվիցն էր շինած ըլում, որ հեռու երկրներից էին կալնում, բերում, կամ նրանց ղըիցը, որը բըբյուլի լեզվից էր, որը ֆազանի, որը սիրամարգի, որը փափագեի, որ Հռոմ չէր գտնվում։ Շատ անգամ նրա շներին բադի ջիգյար, ձիանոնցը՝ չամիչ էին ուտացնում, ձիանը լավ ֆոնչացնում, չէին ուզում, ամա տերն էնպես էր ուզում։ Ղոնաղ մարդ ու կնիկ ի միասին էին նստում, մեջըներումը առյուծ էր կապած ըլում, կամ ղափլան, ատամները հանած։ Շատ անգամ նոքարներին մեծ ծեծ կարասներ էր բաշխում, ամա մեջըները օձ ու կարիճ լիքը։ Բավական <է> հին ժամանակիցը, նոր ժամանակիցն փոքր պատմենք։

Մեծ մոգոլն կամ Հնդստանու կայսրը՝ երբ էն հարուստ երկրները առավ, էնպես փառքի մեջում էր կենում, որ չի՛ լսված։ Ավրենգ Զեբ կայսրը չափը կորցրեց, էնպես էր նստում, վեր կենում։ 1647 թվին մեկ միլիոն սալղաթ՝ մենակ իր փողովն էր պահում, ուրիշ տեղից չէ՛ր վերցնում։ Հինգ հարյուր ավելի ֆիլ ուներ կռվի համար։ Էս ֆլերի նստելու տեղերը՝ արծաթից, ոսկուց ու ջավահրից էին շինած։— Էնքան ոսկե, արծաթե, մարգարտակապ, ջավահրաշեն յարաղ ասպաբ կար նրա խազինումը իրար վրա ածած, որ հեսաբի տակ չի՛ կարելի քցել։— Ագրա քաղաքումը՝ մեկ ոսկեշեն բրջի միջում՝ հարյուր ութսուն միլիոն մանեթի՝ մենակ ակնեղեն ու ջավահրեղեն կար, ֆլի, ուղտի, ձիու և այլն ձևով շինած։ Վաթսուն միլիոն մանեթի՝ նրա տան՝ ոսկեշեն ու արծաթեշեն հաջաթներն էր։ Երեսուն ու վեց միլիոն մանեթի՝ նրա տան փարդեքը, խալիչեքը և այլն։ Տասն ու հինգ կես միլիոնի՝ նրա բամբակե հանդերձեղենը։ Քսան միլիոնի՝ նրա ձիու, ֆլի յարաղը, ղաջարեքը և այլն։ Հիսունը հինգ միլիոնի՝ նրա թուր, թվանքը, մզրախը, թամքը, օրղանգուն, լգամը — ութսուն հազար ձեռագիր գրքերը քսան միլիոնի. մյուս մանրամասը բաները թողանք, հենց էս հեսաբ անենք, ջամը կանի՝ իրեք հարյուր ութսուն ու վեց ու կես միլիոն մանեթ. էսքանը դեռ մեկ քաղաքում ուներ, բաս մյուս քաղաքների խազինեն ինչքան կըլեր. բաս նրա տները, բաղերը, չունքի էսքան բաները հենց էնպես անօգուտ ածած էին, ու միմիայն փառքի համար էր։ Էս անպիտան թագավորը թախտ ունենալը խիստ շատ էր սիրում։ Շատն ուներ, ամա նրանց միջին մեկը կար սիրամարգի ձևով շինած, ոսկեկուռ ու ջավահրապատ՝ ու նրա գինը յոթանասուն ու հինգ միլիոն մանեթ էր։

Իր ծննդյան օրը մարդամեջ էր դուս գալիս էս կես Աստվածը, թե ի՞նչ թաղարեքով, ի՜նչ փառքով, թո՛ղ մտածողն իմանա։ Մեկ թանկագին վրանի միջում՝ մեկ կշիռ էր կախ տված. էս կշեռքի թայերը զուտ ոսկուց էր շինած ու ջավահրապատ։ Կայսրը ակնով, ջավահրով զարդարված՝ դուս էր գալիս ու իր մեծամեծքը առոք, փառոք առաջն էին գալիս։ Կշեռքի մեկ թայումն ինքն էր նստում, մեկ թայումը տոպրակներով լիքը ոսկի ու արծաթ. էս վերցնում, տեղը անգին քարեր ու զուտ ոսկի էին դնում, էս էլ վերցնում, տեղը զառ ճոթեր, հաց, մեղր ու եղ էին դնում, որ թագավորի ծանրությունն իմանան։ Էս ինչ որ թագավորի հետ կշռել էին, պետք է խալխի միջումը բաժանեին,— բայց սուտ — աչքըները թոզ էին փչում ու բոլոր ուստությունով ղրաղ քաշում։ Բանի միտքն է՛ս էր, որ իմացվի, թե կայսրը էս տարի դհա ավելի ծանրացել էր։ Էստուր վրա խալխը ծափ տալիս՝ քեֆ էր անում։— Էս որ պրծնում էին, էն ժամանակը թագավորը թախտն էր վեր ըլում ու ոսկե ամաններով բադամ, ընկույզ ու ղանազան պտղներ բոլոր ոսկուց շինած բերում էին առաջը։ Թագավորը իր ձեռովը ցրվում, իր մեծամեծքը հավաքում էին։ Տեսնողը կամ լսողը կզարմանա, թե էս ի՜նչքան առատություն էր, բայց սուտ — բոլորն էլ փուչ էր, բարակ արծաթից շինած ու երեսըհանց ոսկեջրած, էնպես որ մեկ եվրոպացի հեսաբ ա արել, հազարը՝ հարյուր ոսկի չաժեր։ Էսպես էին կենում Հնդստանու թագավորքը, որ հիմիկ փչացել, գնացել, երկրներն էլ ինգլիզի ձեռին է մնացել։ Ո՞ւր թողանք Ամերիկու, ասիացվոց մյուս թագավորաց հարըստությունն ու փառքը, բայց ով աշխարքիցս մեկ բան տանի հետը, թող նա պարծենա։

Հիմիկ Եվրոպիուցը խոսանք։ Գրաողն Վալլենշտեյն՝ որ Ավստրիո թագավորի զորապետն էր ու երեսուն տարի նեմեցի երկիրը կռիվ տալով քանդեց, որ Լուտերի հավատը կործանի ու կաթոլիկի օրենքը հաստատ պահի, չունքի նեմեցի շատ փայը լուտերական էր դարձել, էս զորապետը՝ որ իր թագավորին էլ սայմիշ չէր անում, երբ իր գործը թողեց, էնպես տներ, ամարաթներ շինել տալ տվեց, որ նմանը չկար։ Մենակ իրեք հարյուր ձի ուներ գոմումը կապած. բայց ի՜նչ գոմ, մեկ հոյակապ ամարաթ։ Ախոռները մարմառից էր. միջումը շադրվաններ. տակը պղնձից շինած։ Օրը հարյուր տեսակ կերակրից պակաս չի՛ պետք է ըլեր նրա ճաշը։ Վաթսուն ազնվական տղա՝ մախմուռ ու ոսկեթել շորերով զարդարված՝ նրա սուփրի վրա ղուլլուղ պետք է անեին. հիսուն թիկնապահ սալդաթ նրա տան ղարավուլն էին։ Նոքարներին, ֆառաշներին, նրանց հաքուստին հո՝ էլ խելք չի՜ հասնիլ։ Կայսեր դռանը էնքան չկար։

Քանի դեռ երկրորդ անգամը էլի զորապետությունը չէ՛ր ստացել,

տարին չորս հարյուր հազար մանեթ եկամուտ ուներ, էն ժամանակին անթիվ գումար էր էս։ Ինչ ժամանակ որ Թաքրար Թագավորի ղոնչունը ձեռի տակն առավ, Փրագ քաղաքիցը դուս գալիս՝ հետն ուներ տասնըչորս վեց ձիանի կառեթ, քառասուն ազնվական, հարյուր քսան ծառա, տասը բալաբանչի, բալաբանները ոսկուց շինած։ Բոլորը իր գլուխը շհանց տալու համար էր, չունքի ինքը կաշե շորը հաքին, կարմիր աբեն ուսին քցած՝ էնպես էր նրանց առաջին ձիու վրա գնում։ Չորս քամերղեր իրանց փաժերովը՝ միշտ պետք է նրան ծառայեին։

Նրա մարդիքն էլ սկսեցին շռայլություն անիլ։ Մեկ պոլկովնիկ օրը յոթանասուն տեսակ կերակուր էր ուտում։ Սալդաթները գինով ու պիվով էին ջանները լվանում։ էս անօրենները փոքր ժամանակի մեկ միլիոն ու կես մանեթ թալանեցին, որ էն ժամանակը անթիվ գումար էր ու չէին գիդում ամբարտավանությունից՝ թե ի՞նչ անեն։ էն թագավորները՝ որ ուզած փողը չէին կարում նրա աֆիցերներին տալ, պետք է գեղեր բաշխեին նրանց, ու մեկն էլ ա չէր կարում նրանց առաջին ծպտալ։ Նրա ամարաթի մոտ՝ մեկ սել չէ՛ր կարող անց կենալ, մեկ բարձր ձենով խոսք չէ՛ր լսվիլ, էստուր համար ղարավուլ էր կանգնած։ Մեկ թագավորի որդի էկավ՝ որ նրան տեսնի. քեֆ շհանց տալու խաթեր՝ հրամայեց՝ որ երկու դասթա ղոնչուն իրար հետ կռվին. շատը մնացին մեռած։ Սա էլ էնպես արեց, ինչպես մեկ Հնդստանու թագավոր, որ՝ մեկ եվրոպացու խաթեր, որ նրան մեկ քանի շուշա ռոմ էր բաշխել, հրամայեց՝ որ իր մարդիքը կռիվ բաց անեն. շատը մեռան. Եվրոպացին խնդրեց, որ կռիվը վերջացնի ու էն խեղճերին խնայի, թագավորը պատասխանեց.— ի՞նչ կա որ, սրանք իմ ռահաթն են։

Իշխանն Պոտեմկին՝ Եկատերինե թագուհվո սիրելի զորապետը չորս ամսումը մեկ միլիոն, երկու հարյուր հազար ռուբլի էր խարջել, մենակ ճաշի վրա։ Նրա հասարակ ճաշը ութ հարյուր ռուբլի էր նստում. նրա ստերլետ ձկան կերակուրը՝ որ շատ սիրում էր, իրեք հարյուր ռուբլի։ Մեկ բալոսն հինգ, վեց ռուբլի էր տալիս, թեև ինքը չէր ուտում, ամա շատ անգամ սաղ ծառը առնում էր։

էսպես բաներում ինգլիզները դհա ղոչաղ են։

Կարլ Հինգերորդ Ինգլիզի թագավորը՝ իր փառքը հաց տալով էր ուզում իմաց անի։ Նրա ամարաթումը՝ օրը ութսուն ու վեց սեղանի վրա հաց էին ուտում։ Իր սեղանի վրա քսանութ տեսակ կերակուր էր գալիս, թագուհվո սեղանի վրա՝ քսանը չորս. չորս մյուս սեղանների վրա՝ տասնըվեց. մյուսների վրա էսպես կարգով, որը շատ, որը քիչ. ու տասնիրեք վերջի սեղանների վրա, ամեն մեկին, երկու երկու տեսակ։ Գինին ու պիվոն ջրի պես էր գնում։ Տարին նրա տանը մասրաֆ էր ըլում. հազար հինգ հարյուր եզը, յոթը հազար ոչխար, հազար երկու հարյուր աչառ, իրեք հարյուր գոչի, չորս հարյուր ֆորթ, յոթը հազար գառը, իրեք հարյուր խոզ։ Մյուս բաները թո՛ղ մտածողն իմանա։

1470 թվին Գեորգ Ա<ռաջինը> Յորկ քաղաքի եպիսկոպոս նստեց։ էնպես էր սովորությունը՝ որ նոր տեղ ճարողը՝ պետք էր հաց տար։ Ինչքան ինգլիզի իշխան մարդ կար, էս օր էստեղ կառավարիչ էին։ Հազար ծառա, վաթսուն երկու աշպազ, հինգ հարյուր տասնը հինգ սպասավոր էին կարգել։ էս մեկ հաց տալումը մսխվեցավ. ութսուն եզը, հազար ոչխար, իրեք հարյուր խոզ, էնքան էլ ֆորթ, իրեք հազար բադ, երկու հարյուր վերի էծ, չորս հարյուր պախրա, իրեք հարյուր սիրամարգ, վեց հարյուր կռունգ ու ֆազան, հազար ջրի ղուշ, չորս հազար սիպտակ ալապստրակ։ Ձուկն ու գինին, պիվոն չքցենք. հազար հինգ հարյուր պիրոգ (քաթա), հինգ հազար չորս հարյուր աման՝ հենց ժիլե ասած՝ կերակրիցն էկավ սեղանը։

Տասնըհինգ տարի չի՛ ըլիլ՝ մեկ երևելի կնիկ՝ ինգլիզի թագավորի որդուն իրիկնահաց տվեց. ամեն բանն էն կողմը դնենք, հացը որ կերան պրծան, իրեք հազար մանեթի՝ մենակ միրգ մեջ բերին։

Ասենք՝ թե էս բաները փորի ու աչքի համար ա, էլի մեկ բան ա, ամա լսողը ի՞նչ կասի, որ իմանա՝ թե լուսավորյալ մարդիքը շան համար էլ են խարջ ընկնում։ Լսող՝ ի՞նչպես ես կարծում, ինչ կուզե որ անգին շուն ըլի, մեր միջումը ո՞վ նրան տասը մանեթ կտա, կառնի։ Տասը մանե՞թ — մեկ արջի մեկ օր մեկ մանեթ տվի, մինչև էս օր էլ սիրտս ցավում ա, ամա հիմիկ անկաջ անենք, թե շներն ի՞նչ թագավորություն են անում։ Մեծ Ֆրիդրիխ Պրուսսիո թագավորը մեկ սիրեկան շուն ուներ, որ սատկեց, վրեն մարմարից քար քաշիլ տվեց։ էս ո՛չինչ. սա հլա թագավոր էր, բայց ի՞նչ անենք, որ բազի ինգլիզ մեկ շանը երկու, իրեք հարյուր մանեթ ա տալիս, առնում։ Մեկն էլ ըլի, գլուխը քարը, շատը էսպես թանկագին շներիցը՝ ամարաթներ ունի լիքը։ Հերցոգ Ռիխմոնդի շների ամարաթը վաթսուն հազար մանեթ նստեց։ Բեդֆորդ իշխանի շների ամարաթը՝ չորս հարյուր հազար մանեթ։ Թովլեյ իշխանի շների ամարաթը մեկ մեծ քաղաքի չափ կա. էնքան շուն, ու էնքան նոքար կա մեջըներումը։ Շատ մեծ գրաֆ, իշխան՝ ուրիշ տեղ էնպես տուն չունի, որ միջումը կենա։ Ֆորսիցը եդ գալիս, հատուկ բաղնիս ունին, ու նրանց միջումը լեղացնում են։ Ինչ զարդ ասես, կա էս տեղ։

Չի՛ պետք է մտածել՝ թե մենակ ինգլիզներն են էս պակասությունը գործում։ Մեկ ֆրանցուզի իշխանի աղջիկ, շունը որ սատկեց, սուգ նստեց ու ծանոթ, բարեկամք գնացին մխիթարելու։ Մեկ նեմեցի իշխանի աղջիկ

էլ՝ էնքան էր սիրում իր շներին, որ նրանց համար ջոկ մատուռ էր շինել տվել։ Շունը սատկելիս՝ ղագաղով, պատվով էին տանում, թաղում։ Մեկ օր սրա մեկ շունը սատկեց, ու իր ղարավաշների մեկը սուք չէր անում վրեն։ Ասեղն առավ, նրա միսը ծակծակոտեց, ու տեղը վառած զմուռ ածեց, որ էրվի, կսկծա։ Հայտնի բան ա, որ ողորմելին սուքի տեղ, ոտներն էլ էր քարերին ծեծում, գլուխն էլ, ամա էլ անկաչ անող չի՛ կար։ Էս էլ քո լուսավորած, ուսումն առած մարդը։ Ի՞նչ ուսումն, որ մարդի սիրտը դժոխք կըլի։

Շան սերը թողանք, հիմիկ ուրիշ բան խոսանք։ Ո՞վ ա լսել թե քամու-զություն էլ մարդի կգժվացնի. գինին, արաղը, հեսարի. ամա թամուզու-թյունը, թամուզությունը։— Անգլիա՝ մեկ քանի տարի կըլի, մեկ մարդ կար, անունը Էդմոնդ. էս պատվելին՝ էնքան տուն ուներ բռնած քրեհով, ինչքան ամիսը օր ունի, այսինքն երեսուն ու մեկ տուն։ Ամեն տան թախումը ջոկ էր. շորերիցը բռնած գնաս կառավաթը, յորղան դոշակը, ծառեքը, աշխա-նեն ու ինչ որ տանը հարկավոր ա։ Օրը մեկ տուն էր փոխում. շորերը հո՝ օրը հինգ վեց անգամ։ Առավոտը կանուխ՝ վարդաջրով իրան լավ լվանալ էր տալիս ու անուշահոտ կնդրկով, խնկով ծուխ տալ տալիս. հետո գնում էր բաղը ման գալու, չունքի ամեն տուն մեկ բաղ էլ պետք է ունենար. ուր հովը նրա թեթև շորերի մեջը պետք է մտներ ու նրան հովացներ։ Զմեռը չունքի էլ բաղը չէր կարող գնալ, ծառեքն էին նրան՝ փուքսն առած՝ հով տալիս։ Մեկ նուրբ քող ուներ շորերի վրա հաքած, որ վրեն թոզ չի՛ նստի։ Առավոտը նհար անելիս՝ չայը մեկ ոսկե լուլով էր ծծում, որ թոզ չի՛ մտնի բողազը։ Էստուց եդը կարդում էր։ Գրքերն էլ թամուզության վրա էին խո-սում, որ էլի առաջ ծուխ էր տալ տալիս, հետո ձեռն առնում։ Ամեն ճաշի ութ տեսակ կերակուր էր նրա կերածը։ Ամեն մեկ կերակուրը՝ մեկ ջոկ օթա-խում էր ուտում։ Հենց մեկն ուտում պրծնում էր, տեղիցը վեր էր կենում, ձեռները լվանում, բերանն ողողում։ Էսպես ութ անգամ էս հանդեսը կա-տարում էր։ Էստուց հետո էլի իր քողը քցում, պարկում էր։ Դոշակը փուչ-կից էր շինած ու խստակ օդով լիքը։ Վեր էր կենում թե չէ, էլի շորերն էր սկսում փոխիլ։— Մոտը էկողիցը հեռու էր կանգնում, ու քողը քցած՝ նրա միջովն էր հետը խոսում, որ իրան շունչ չի՛ դիպչի։ Ամեն մեկ դուս գնալիս՝ պետք է լեղանար։

Էլի էսպես մի՛ իմանաք, թե հազար տարի ապրեց, հիսուն տարուց եդը մեռավ։ Մեր գեղըցոնց շատը հարյուր տասը, հարյուր քսան տարի էլ են ապրում ու կերածները, հաքածները հայտնի ա, թե ի՞նչ ա ու ի՞նչ աշ-խատություն ունին։

Հիմիկ էլ նաքյազության (ժլատության) գժերի վրա խոսանք։

Ժոն Էլվես Ինգլիզը՝ որի հեր<ը> պիվո ծախող էր, մորիցը վեց հար-յուր հազար մանեթ ժառանգեց մեռնելուցը եդը, որ հենց բռնես սովիցը մեռավ։ Մեկ էսքան գումար էլ՝ քեռուցը մնաց նրան, անունը Հարվեյ Էլվես։ Սրան տեսնելու գալիս՝ մեկ ղոնաղխանում վեր էր գալիս, հին, կտրատված շորեր հաքնում, մուստառ, կարկատած գուլբեք, ու էսպես էր գնում մոտը։ Էսպես նստում էին երկուսն էլ բուխարու առաջին, որ մեկ կտոր փեդ էր էրվում միջումը։ Գանգատ էին, թե մարդիք չափիցը դուս փող են փչաց-նում ու շուտով քուն էին մտնում, որ ճրագի փող չտան։ Ժոն գիտեր, որ իր քեռու մոտ փորացավ կընկներ՝ թե սոված էր էկել նրա մոտը, առաջ փորը լավ պնդացնում՝ էնպես էր գալիս։ Քեռին հենց իմանում էր՝ թե քիչ ուտիլ գիտի, էս չափավորության համար՝ նրան դհա ավելի էր սիրում։ Նա որ իննսուն տարեկան դառավ, մեռավ, ու մեկ միլիոն ու կես մնաց Ժոնին։

Հենց քեռին մեռավ, Ժոն սկսեց Լոնդոնումը որ տեղ որ մեծ մարդ կար, նրա հետ թուղթ խաղալ։ Տանում էին, իսկույն տալիս էր, ինքն էր տանում, մեկն էլ ա չէր տալիս։ Վերջ ժամանակի, ղորդ ա, շատ նաքյաղ, ժլատ էր, ամա մեկ պարտքատերի էլ ա չէ՛ր ասիլ՝ փող տո՛ւր։— Առաջ ֆորսի ձիանք ու շներ էլ էր պահում։ Սաղ գիշերը թուղթ էր խաղում, ու չորս հինգ սհաթին առավոտը՝ ցեխ, տիլ կխշորելով գնում էր իր ֆոր-թերի առաջը՝ որ գեղիցը քաղաքն էին բերում, որ ծախեն ու ղասաբների հետ անձրևում, ցրտում կանգնած՝ մեկ գրոշի համար ուզում էր արին վեր ածի։ Ճամփա գնալիս՝ մեկ տեղ էլ ա չէր մտնիլ, որ փող չի խարջի։ Մեկ քանի կտոր չոր հաց, մեկ քանի պինդ խաշած ձու ջիբումն ուներ։ Ձիուն խոտ չէր առնիլ, պատերի տակի վեր թափած կրճեմն էր նրա ջանը։ Ինքն էլ հացի հետ ջուր կխմեր։ Նրա ծառեն, որ էլի նրա օրինակի մարդ էր, չորս սհաթին էր վեր կենում, ու կովերը կթում, իր աղի նհարը պատրաս-տում, հետո շորը հաքնում, ձիանը թամքում ու գնում էին ֆորս։ Ֆորսից եդը ձիանքն էր թիմարում, հացը քցում, ղուլլուղն անում, ձիանոցը եմ տալիս, էլի կովերը կթում, հետո ութը ձիու համար դարման կոտրում — էլի տերը չէ՛ր բավական ու նրան պարապ շուն էր կանչում, որ նհախ տե՛ղն էր փող առնում։ Էսքան ղուլլուղի համար՝ ողորմելին տարին քսանը չորս մանեթ էր ստանում ու աղի մահվան օրը՝ սաղ օրը սոված փորով դես ու դեն ման էր գալիս։

Էսքան նաքյաղ մարդ էր Էլվես, ամա շատ անգամ ահագին գումար էր փոխ տալիս ուրըշին։ Մեկ անգամ ձի չափ գցելիս՝ որ Ինգլիզները շատ սիրում ու մարջով են չափ քցում, մեկին քառասուն երկու հազար մանեթ բաշխեց, որ տանի իր մարջը։ Մեկ քահանայի հետ էր գնացել էն տեղ՝

առավոտը սհաթի օխտին։ Խեղճ քահանեն էնպես էր կարծում՝ թե մեկ տեղ էլ ա նհար կանի, բայց դու ո՛չ մեռնիս։ Հետո Ֆիքր արեց՝ թե ճաշին էլ ա քաղաքումը մեկ տեղ կերթա, հաց կուտի, նհախ — չորս սհաթին քահանեն՝ որ ճարը կտրվեցավ, ասեց՝ թե հավեն շատ փիս ա ու իրան նեղացնում աւ Էլվես իմացավ, որ ինչ խաբար էր, ջիբիցը մեկ գաթա հանեց, որ հինգ ամսա կըլեր ու ուտելիս՝ գովում էլ էր անիրավը, թե հենց գիտես, թե երեկվան թխած ըլի. կեսն էլ քահանին տվեց։

Բայց էլի շատ թամուզ, արդար ու կամակատար մարդ էր, նրա փողումը մեկ հարամ փարա չկար։ Մեկ օր Ֆորս անելիս, մեկը սաչմով նրա երեսին խփեց։— Աչքդ լի՛ս, պարո՛ն,— ասեց նա,— ես գիտեի, որ մեկ բանի պետք է խփեիր։—Մեկ քանի որբ պառավների խաթեր, որ նրան ո՛չինչ պետքը չէին, ամեն գիշեր հարյուր քառասուն վերստ ձիով Լոնդոն էր գնում իր գեղիցը, որ նրանց հալն իմանա։

Թե նա էսպես չէր խաբվել, չափիցը դուս կհարստանար։ Շատը փողն առնում, մեծ շահ էր խոստանում ու վերջը մեկ կապեկ եդ չէր տալիս։ Մեկ Ֆաբրիկանտի վրա մենակ, հարյուր հիսուն հազար մանեթ կորցրեց։ Մեկ գինի ծախողի վրա, որ նրան մեկ քանի շուշա գինի էր բաշխել, հազար հինգ հարյուր մանեթ կորցրեց։ Գինին խմելիս ասում էր. «ղորդ ա, լավ գինին ա, բայց շուշեն ինձ վրա հարյուր քսան մանեթ ա նստել»։

Ո՞վ կհավատա, թե էնպես նաքյաղ մարդը, էնքան մեծ սիրտ կունենար։ Լոնդոնու մը սաղ քուչեքը նրանն էր, էնքան տներ ուներ, էն էլ Լոնդոն, ու էլի շինել էր տալիս։ Մեկ մեծ ղոնաղխանա՝ որ նրանն էր, էրվեց։— Շատ լավ էլավ,— ասեց,— շատ լավ, սրա բռնողը մեկ կոպեկ էլ ա՝ ինձ չէր տալիս՝ ու չէի գիտում, թե ի՞նչպես ձեռք վերցնեմ նրանից։ Ինքն էլ էնպես տան էր կենում, որ բռնող չէր պատահում։ Շորերը միշտ մեկ հին բոխչում կպահեր։ Մեկ շինովի գլխի մազ (պերուք), որ մեկ ուզվոր դեն էր քցել, վեր կալավ ու երկար ժամանակ գլխին ուներ ծածկած։ Իր շինովի մազը, որ պարլամենտը գնալիս ծածկում էր, չունքի որ ինքն էլ անդամ էր, երբ որ հնացավ, էլ չուզեցավ նորն առնի. իր մազն սկսեց ծածկի։

Իր գեղերի իջարադարների վրա հեչ թունդ չէր ու շատ էժան գնով էր տվել նրանց, բայց ինչ որ շինելու բաներ կային, իջարադարները իրանց քիսիցը պտի մխսեին, ինքը ձեռը չէ՛ր տալ։ Հետին աղքատն ու ուզվորը էնպես խեղճ չէ՛ր ապրիլ, ինչպես <սա>։ Մեկ անգամ ոտները քարովն էին դիպել ու խիստ շատ վնասվել, ջանից ընկել էր, էլի չէր ուզում հեքիմ բերել տա։ Իր քեռորդին էնքան հորդորեց, որ մեկ հեքիմ բերել տվեց, բայց անիրավը մեկ ոտը նրան սաղացնիլ տվեց, մեկը ինքը ձեռն առավ ու ոչինչ չարեց, որ խարջ շատ չանի։ Քոռաղադինա իր ձեռն առած ոտը տասն ու չորս օր առաջ սաղացավ, քանց հեքիմինը։

Իր կենալու տեղը միշտ էն գեղումն էր ըլում, որ ամենիցը վատն էր, բայց նա էնդուր համար էր էնտեղ կենում, որ քաղաքը գնալիս դըռնափետի (շլաղբաում) համար փող չտա։ Մեկ անգամ հենց էստուր խաթեր դռնափետի վրովը՝ գլուխը մահու տալով՝ անցկացավ, որ թե բռնել կամ իմացել էին, հոգին կհանեին, էն էլ ձմե՛ռը, գիշե՛րը, մո՛ւթ, ցո՛ւրտ ղիամաթ։ Բայց ի՞նչքան ուրախ էր, որ մեկ քանի կոպեկ էս պատճառով եդ քցեց։ Մեկ քանի սհաթ էլ՝ էս ղիամաթ գիշերը, որ ցուրտը դանակի պես կտրում էր, ձին մեկ չափարի (ղորի) մոտը կանգնացրեց՝ որ վրեն մնացած խոտի չոփերը կրծի, ու ինքը փող չի՛ խարջի սրա խաթեր։

Բայց էլի մեկ քանի թուղթ խաղացող ընկերներ պահում էր, էն էլ էնդուր խաթեր՝ որ ինքը շատ էր սիրում, ցած էին խարջում, ու ճրագլսի փողը իր քիսիցը չէ՛ր գնում։ Քանի ծերացավ, էնքան նաքյաղությունը ջանն առավ։ Փանջարեքը թղթում էր, էլ շուշա չէր քցում։ Մեկ օրանժերիա ուներ (որ էնպես տուն ա, որ ամառ, ձմեռ՝ պտուղ, ծաղիկ՝ կրակով են հասցնում ու պահում), ձմեռն էս տեղ էր ման գալիս, որ փետի փող չտա։ Իր իջարադարների հողումը ցորնի հասկերը էնպես էր հավաքում, ինչպես մեկ աղքատ, սրանք էնպես շուն էին, որ հնձելիս բավական տեղը թողում էին։

Էնքան հո ծերացել, մեջքը երկուտակվել էր, էլի ման գալիս, որ տեղ մեկ տաշեղ կամ ոսկոռ էր տեսնում, խկույն կռանում, վերցնում, ջեբն էր դնում, առաջինը վառելու խաթեր, երկրորդը՝ շան համար։ Մեկ օր մեկ ծառ նի էլավ, որ մեկ ագռավի բուն քանդի, հետը տանի, չունքի անիրավություն ա,— ասում էր,— որ էս անպիտան ղուշը էնքան փեդ փչացնում էր։— Հլա Աստուծո խաթեր մի մտիկ արա՛, թե էս դշերը ի՛նչքան չափիցը դուրս մեծ բուն են շինում, ու էլ չե՛ն հոգում, թե ո՛րքան փեդ ա գնում։

Հազարիցը մի անգամ թե մոտը մարդ էր գալիս ղոնաղ, ու նոքարը ձիուն խոտ էր քցում, ինքը թաքուն գնում, խոտն ախոռիցը քաշում էր։ Վերջապես չկամենալով, որ հեչ փող խարջի, ժամանակ առ ժամանակ մեկ ոչխար կառներ, մորթել կտար, էն վերջին թիքեն էլ չէր կորցնիլ, թեկուզ հոտած, փթած ըլեր։ Մեկ հավ, շատ փայլը մկնակեր, մեկ ձուկը՝ նեխած, ժամահոտ՝ նրա համար անմահական թիքա էր։ Վերջ ամենայնի չուխեն էլ ուրիշը բաշխեց ու ինքը փեդ չվառելու խաթեր, կերթար, հարևանի տանը կտաքանար։ Մաշիկը չէր սրբիլ տալ, որ ինչ ա, կաշին չի քերվի։ Մեկ օր լսեց՝ թե մեկ միլիոն տեր մարդ մեկ կառեթ ա շինել տվել իր համար, ախ ու ոխ քաշելով ասեց.— Շուտով իր հարստության վերջը կհասնի։

Ծերությունը որ մոտացավ՝ խելք ու միտքը՝ հենց բռնես՝ կորցրել, երեխա էր դառել։ Փողը՝ որտեղ ասես՝ պահում էր, փանջարի տակին, դռան շեմումը, բաղումը և այլն. գիշերն էլ ո՛չինչ չէր խոսում, եթե ո՛չ, թե նա ուզում ա, որ իր փողը ձեռից չքցի, պահի. շատ անհանգիստ էր, կես գիշերին վեր կկենար, որ իր պահած փողը գտնի, լաց կըլեր, ա՜խ կքաշեր վրեն։ Մեկ միլիոնչու հարյուր քսան մանեթ փող էր փոխ տվել, գիշերը չի կարաց քնիլ, հենց լիսը բացվեց, վազեց նրա մոտ ու ի՞նչքան զարմացավ, որ իմացավ, թե նրանից իննսուն հազար մանեթի առնելացուկ էլ ուներ, որ մոռացել էր։ Նրա մեկ որդին մեկ դատավորի աղջկա հետ պսակվել էր ու ինքն էլ շատ բավական էր։ Հարցրին՝ թե ի՞նչ փայ կտա որդուն։
— Ի՞նչ տալ,— պատասխանեց,— տալ ո՞վ ա ասել։ Շատ որ ըլի, պետք է՝ որ մի կամք տամ, էլ ուրիշ ո՛չինչ։

Էս հիրավի աղքատ մարդի վերջի օրերը շատ վատ էր։ Ութսուն տարեկան էր, որ մեռավ ու վեց միլիոն մանեթ նաղդ փող թողեց, տներն ու գեղերը, ուրիշ մալն ու դովլաթը չքցենք։ Է՛սպես պետք է փող դատած, կարելի ա բաղի մարդ մտքումն ասի, բայց հարամ ըլի էն փողն էլ, էն կյանքն էլ՝ որ էսպես մարդը կունենա։ Փող, աչքդ հող, մի՛ դատիր ինչպես գող, այլ վաստակի՛ր, վայելի՛ր, քեզ էլ պետքն արի՛, այլոց էլ։

Մեր արդարահոգի էլվեսին մենակ չթողալու խաթեր մեկ օրինակ էլ բերենք էստեղ, թեև օրինակ շատ կա։ Մեկ ինգլիզ էլ՝ անունը **Դանեեր**, որ տարենը **քսան հազար մանեթ** եկամուտ ուներ, բայց էլի շների ձեռիցը ոսկորը խլում էր, որ սուպ էփիլ տա, սատկած ոչխար որ պատահում էր, առնում քվորը, որ հենց նրա նման էր, խմորով շինել էր տալ տալիս, ո՛չ շապիկն էր լվանալ տալիս, ո՛չ մահրամեքը՝ որ սապոն չփչանա. ձեռն ու երես լվանալիս էլ գետն էր գնում ու ավազով լվացվում, տրորվում։ Շանը՝ զավակ էր կանչում ու ամեն առավոտ մեկ ստաքան կաթն էր նրա բաժինը։ Ինքը համն էլ չէ՛ր առնիլ։ Սրա էս շուն զավակը՝ մեկ օր մեկ ուշխարի՝ դունչ էր քսել, իսկույն մեկ դարբնի ձեռով ատամները հանիլ տվեց, որ մի գուցե սրանից վնաս դուս գա հետո։ Թութունամանը ուրշի թամբաքվով էր լցնում, որ նրան՝ պատահելիս՝ դեմ էին անում, ու հետո որ լցվում էր, տանում, մեկ գրոշանոց մմի հետ փոխում էր, որ փող չի՛ տա։ Երեսուն տարի քիրը նրա տունը կառավարել էր անփող, անվարձ, բայց որ հիվանդացավ ու մեռավ, մեկ հեքիմ էլ ա կանչիլ չի՛ տվեց։ Նրա ծառեն ամենիցը լավ էր,— մեկ լավ կառավաթ ուներ, ու ինչ սիրտն ուզում էր, է՛ն էր ուտում։ Նա էլ էնպես ժլատ էր, ինչպես իր աղեն։ Մեկ օր աղեն օխտը գրոշի մեկ գդակ էր առել, հենց ծառեն իրեք գրոշ շահ տվեց թե չէ, նրա վրա էլ եդ ծախեց։

Մեռնելու վախտին հրամայեց՝ որ մեկ ջվալ բերեն, չիփ չփլաղ տկլորվեցավ ու մինչև բողազը մեջը մտավ։ Յոթանասուն ութ տարի ապրեց էս մարդը. փողը՝ որ բանկումն էր տվել շահով, որն էլ թրքի միջում, բուխարումը, տան կտերը, օջախի տակին պահել, թուղթ փողերը գոմումն, հին շուշերում էր թաքցրել։ Հինգ միլիոնի մոտ փող էլ սա եդ քցեց, բայց իր կենաց միջումը մեկի էլ ա էնպես չի խաբեց, ինչպես ինքն իրան։

Մեր **Դավիթ** կաթողիկոսի համար էլ ասում են, Աստված հոգին լուսավորի, միրուքը մինչև ծնկներն էր հասնում, ու ձնի պես սիպտակ էր, որ նա էլ ա մի քիչ փողի հետ սեր ունեցել ու չէ թե մենակ իր փողի համարքը, իր աշխանի ձվի, ընկուզի, իր մառանի տանձ ու խնձորի, իր բաղի հավողի ճթերն էլ ա համարած ունեցել։ Բայց սատանին նալաթ, քանի աղեն էսպես թունդ ըլի, էնքան ծառեքը զալում ու հնարագետ կըլին։

Հավողը որ հասնում ա մեկ ամառ, վազի չորս կողմը բարակ հող ա ածիլ տալիս, որ թե գողացող ըլի, կոխած տեղը չափի, ուստղին գտնի, քթիցը հանի։ Ղոյմաղոչում — բայց չգիտեմ ֆառաշ, թե տիրացու է ըլում, ինչ և իցե, ով որ, Աստված բանն հաջողի, թե մեռած ա, դատաստանը քաղցր անի, կաթողիկոսի իրան հողաթափը վերցնում, հաքնում, վազի հոգին հանում ա։ Մյուս օրը սար ու ձոր իրարոցով են դիպչում։ Ինչքան դռանը մարդ ա ունենում, բերել ոտները չափել ա տալիս, բայց ընդվայր։ Ծառայից մեկը, կարելի ա՝ թե հենց անողն ըլի էլած—իրան ա գող հանում, չունքի իր հողաթափը որ բերում են, մի և նույն չափն ա դուս գալիս։ Տեսնում ա վեհապետը, որ բանը բոչ ա, ծանր ծանր էլ տուն ա գնում ու հողաթափներին էլ ղարաուլ կանգնացնում։

ՋՎԱՐՃԱԼԻ ՈՒ ԿԱՐՃ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՔ

Շատակերություն

1

Շատակեր աշխարքումս անթիվ են էլել ու էս օր էլ կան, որ թե գրող ըլի, գրքեր կարելի ա շինել։ Գերմանիա 1754 թվին մեկ էսպես մարդ լիս ընկավ, անունը **Հակովբ ալե**, որ չէ թե մենակ երկաթե զատեր, դանակ, չանգալ, մեխ էր կուլ տալիս, այլև շատ մուստաա անբնական բաներ։ Կավե ամաններ խուրմի պես էր չարազ անում. իշտահը տեղն էլած վախտին հա, քրամիտ, չինի, շուշա, քար, ավազ՝ շաքարի պես էր ծամում,

կուլ տալիս։ Ջայ, ղայֆա խմելիս՝ թասերն էլ հետն էր մաքրազարդում ու էնպես էր մշրում, ինչպես մեկ շուն՝ ոսկորը։ Մուկ, բայղուշ, թրթուռ, մորեխ՝ նրա ազիզ թիքեն էին։ Մեկ օր չունքի շատ սոված էր, մեկ արճճի թանաքաման վեր առավ ու թանաքամանն՝ իր թանաքովը, ավազամանն իր ավազովը, ղալամ, ղալամթրաշ — բոլորն էլ բիրադի ներս շպրտեց։

Մեկ պոլյակ արջ էր ման ածում, որ խաղացնի։ Նրա էն պարկապկուն որ կուլ չտվեց, պոլյակը մնաց սառած։ Արջ պար ածողը հենց իմացավ՝ թե նա աչքակապ ա ու իրան էլ կուտի, փախավ։ Մեր շատակերը հանաքվանց եդևիցն ընկավ, որ վախացնի։ Յոթանասուն ինն տարի ապրեց էս մարդը։

2

Շատակերի մեկն էլ ֆրանցուզ Կարլ Դոմերին էր, որ էս դարումը դեռ կենդանի էր։ Նրանց բոլոր տունը, ինն ախպերը, ամենն էլ շատակեր էին։ Մինչև իր քսան ու մեկ տարին համնիլը՝ հարյուր յոթանասուն ու չորս կատու էր կերել, շատ սոված վախտը՝ ախկըներն էլ էր հետը չարազ անում։ Ուրիշ բաները սրանով կիմացվի, թե ի՞նչ իշտահ ա ունեցել էս մարդը։

3

Տրատար էլի մեկ ֆրանցուզ՝ սաղ քաղելակը պտղով լիքը՝ բիրադի էր մշրում. կատու, մուկը, օձ, կարիճ, մեռլի մարմին, ջանից թողած արինը, հոտած ջամդաքը՝ էնպես կուտեր, ինչպես շաքար։ Սոված վախտը՝ փորը բռնում, ինչպես մեկ ախլուխ՝ մեջքովը փաթաթում էր։ Կուշտ կերած վախտը՝ փորն էնպես էր ուռչում, ինչպես ռումբի։

4

Վիթխարին ու թզուկը

Աշխարքումս շատ են պատահում մեծաբոյ մարդիք էլ, որ վիթխարի են ասվում, կարճիկ էլ, որ թզուկ են ասվում։ Ֆրանցիա Գիլի անունով մեկ վիթխարի կար, իրեք գազ բոյ ուներ։ Բայց յԱնգլիա մեկ թզուկ կար անունը Հուդզոն, որ իրեք թիզ բոյ ուներ։ Զարմանալուն էս ա, որ վաթսուն իրեք տարի ապրեց սա։

Թագավորազն ֆոն Բուխինգամ հրամայեց, որ նրան սառը խմորե կերակրի մեջ դրած, բերանը ծածկած, սուփրամեջ բերեն։ Բոլոր մեծամեծքը էն օրը հացի էին։ Ամանի բերանը որ չի բաց արին, բերողի ջանը դող ընկավ ու մեր թզուկը սկսեց ցոփ-ցոփ սուփրի միջումը դես ու դեն վազիլ, վերը վեր թռչիլ։ Պետք է, որ սա շատ մեծ սրտանի ու խելոք ըլի էլած։ Զունքի մեկ օր մեկ իշխանի հետ կռիվ քցեց ու նրան դուել կանչեց։ Իշխանը կամենալով նրան ծաղր անել, թվանքի տեղակ՝ հետը մեկ հոխնա էր բերել։ Էս որ տեսավ թզուկը, էնպես բարկացավ, որ իսկույն իշխանին սպանեց։ 1682 թվին նրանից գանգատ արին, թե ուրըշների հետ ընդդեմ տերության խորհուրդ ա կապել, էս պատճառավ բանդը քցեցին ու էնտեղ և եթ մեռավ։

5

Անձեռ արհեստավորը

Քառասուն տարի կըլի, Անգլիա մեկ մարդ կար՝ անունը Քինգստոն, որ ձեռն չուներ ու ոտով էր իր բանն անում։ Շատը ձեռով չէին կարող էնպես պարզ գրիլ, ինչպես նա ոտով։ Ջայի թասը ոտով էր բերանը տանում, չանգալ, դանակ, գդալ՝ ոտով էր բռնում։ Կրակ էր վառում, երեսը վեր անում, շորերը հաքնում, կոճը կթում, ձին թամքում, լգամը բերանը տալիս, բոլորը ոտով էր անում։ Շատ մարդի ձեռն էլ էսքան հունար չունի։

6

Փորախոսն

Աշխարիս զանազան ու մեծ ճարտարությանց մեկն էլ փորախոսությունն ա, որ մարդ բերանն էնպես ա ծռում, ձենն էնպես փորիցը հանում, որ լսողը, մոտին էլ որ նստած ըլի, հենց կիմանա, թե դռանը, կտերը, տան տակին են խոսում։ Էսպես մարդիք Եվրոպա հիմիկ շատ են ման գալիս ու փող դատում։

Մեկ ինգլիզ՝ անունը Ժամես Փարեզ մեկ բաղում հաց էր ուտում։ Ծառեն որ հացը բերեց, լսեց՝ որ բուխարու միջիցը մեկ խոր ձեն ա գալիս, ախ են քաշում, տնքում և այլն։— Աղա՝ չե՞ս լսում էս ձենը,— հարցրեց վախեցած ծառեն։— Ի՞նչպես չէ։— Էդ ո՞վ ա,— սկսեց ծառեն բուխարին դուս գոռալ։— Ձեն չկա։— Գող պետք է ըլի, սրա հերն անիծած,— ասեց ու գնաց, փեդ բերեց՝ որ նրան էնտեղից հանի։— Աստուծո խաթեր, ձեն տվեց, ինձ մեկ չարա արե՛ք, ինձ մի՛ մատնեք,— փախած մարդ եմ ու ուզում եմ, որ գիշերը գլուխս առնիմ, կորչիմ, ինձ փորձանքի մեջ մի՛ քը-

ցեք։— Ծառեն խսկույն աղին իմաց արեց, սա էլ գոռալով, ուշունց տալով բուխարին ի դուս ձեն տվեց, որ ներքև գա։— Կգամ, կգամ, թե ինձ ձեռ չեք տալ,— ասեց։— Չէ՛, չէ՛, հլա ներքև արի՛, հետո կասեմ։— Ջունքի էդպես ա, ես էլ չե՛մ գալ,— վերևիցը ձենն էկավ։— Շատ լավ, հիմիկ կտեսնիս՝ թե գլխիդ ի՞նչ կգա,— ասեց ու ղարավուլ կանչիլ տվեց։ Ձենը վերևիցը աղաչեց, պաղատեց, մղկտաց, բայց ի զուր։ Իրեք ղարավուլ սալդաթ էկան, ձողին տվին բուխարու մեջը, խառնեցին, ինչ արին արին, ձեն ու ծպտուն չկա։ Ղարավուլները կարծեցին, թե իրանց հետ հանաք են արել, տանտիրոջը մեկ լավ էլ դնքսեցին, փող էլ առան ու ինգլիզը՝ իր հացը անսաս անոշ արեց ու ճամփա ընկավ։

Էս բոլոր օյինը նա էր հանել, չունքի փորախոս էր։

7

Մեկ քաղաք թշնամիքն էկել բռնել էին ու ամեն օր մտիկ էին անում բնակիչքը, որ վրա կտան, իրանց թաղարեքը տեսել էին։ Մեկ սալդաթ թշնամու ղոնշունի հանդեպը ղարավուլ էր կանգնած, մթնագիշեր էլ էր, նրա մտքումը ո՛չինչ բան չկար, եթե ոչ սպանություն, կրակ, թուր, արյուն։ Ղարավուլխանի մոտին մեկ կճուճ կար դրած, միջումը մեկ քանի եփած սիսեռ, որ սալդաթների իրիկնահացիցն էր մնացել։ Մեկ մեծ մայմոն սիսեռի հոտն առել էր ու չունքի ղարավուլը 40—50 ոտը հեռու գնում գալիս էր, մոտացավ կճճին ու գլուխը զոռով ներս տարավ։ Հենց էս սհաթին ղարավուլը վրա հասավ, մէյմոնը դողալով գլուխը բարձրացրեց ու կճուճը գտակի պես մնաց գլխին նստած։

Սալդաթը հենց իմացավ՝ թե թշնամի ա, ջանը դող ընկած՝ թվանքը քցեց, գոռաց, հարայ հրոց արեց՝ թե թշնամին ներս ա մտել։ Մյուս ղարավուլներին էլ դողն առավ, որ թվանքի ու ղալմաղալի ձենն իմացան, բալաբանը խփեցին, նշանի թոփը քցեցին ու տասը մինուտ չքաշեց, բոլոր ղոնշունն ու քաղաքապետը կռիվ դուրս էկան, կարծած թշնամին ձեռք քցեցին՝ կճճի գդակը գլխին, երես մերես լափոթ ու հենց գդակը վեր առան, տեսան գեշղանգեշ՝ թե սատանի քամին ո՛րդիանց էր գալիս, էլ եդ պոչ ու գլուխ քորելով՝ ամեն մարդ իր տեղը գնաց։

8

Մեկ բարկացող մարդ մեկ օր եկեղեցումը Հոբի համբերության վրա քարոզ լսեց, մտքումը դրեց՝ որ էլ չբարկանա։ Հենց տուն էկավ թե չէ, կնգանը աչքալիս տվեց, չունքի բարկացած ժամանակին սրա հոգին հանում էր։— Դե, աչքի լույս, հիմիկուց դենը էլ դարդ չանես, էնպես մեկ քարոզ եմ լսել, որ գլխիս էլ քար աղան, ձեն չեմ տալ,— ասեց ձեռները տրորելով։— Հայդէ, գնա՛, մի քիչ պիվո բեր, որ մի քիչ սիրտըներս հովացնենք։ Մեծ բոչկեն բաց արա՞, էլ ո՞ր օրվա համար ենք պահում։

Խեղճ կնիգը, խելքը գլխիցը թռած՝ որ մարդն էնպես փոխվել էր, վազեց մառան, ու — սատանի աչքը քոռանա, ռանկ մռանկը թռած, եդ էկավ՝ հարայ տալով։— Ի՞նչ խաբար ա,—գոռաց մարդը՝ բարկացած։—Ի՞նչ խաբար ըլի՝ ա՛չքի լույս,— ասեց կնիկը,— էս ի՞նչ անբախտություն ա։— Ի՞նչ, ի՞նչ անբախտություն. ո՞ւմ տունն ա քանդվել, ես իմ փայը՝ փառք Աստծու, ինչպես քրիստոնյա համբերելու եմ, էլ չի՛ պետք է բարկանամ, բայց ո՞ւր ա մեր պիվոն, ո՞ւր։— Ա՜խ՝ տե՛ր Աստված՝ հենց է՛դ ա՝ որ կուզեի ասել, է՛դ, կրկնեց կնիգը, էս ի՞նչ ա էկել մեր գլխին, բոչկի կապերը կտրատվել են, մառանը պիվով ծով ա դառել, Աստված գիտե՝ ի՞նչպես ա պատահել։ Գլխին, ոտին տալով գժվեց, կատաղեց մարդը, տեղիցը վեր թռավ ու ուզում էր տունը տակը վեր անի։— Ա՛չքի լույս, իմ գլխի տե՜ր,— ձեն տվեց կնիգը,— Հոբա համբերությունը միտքդ բե՛ր, մի՛ բարկանար։— Հոբա համբերութունը,— գոռաց մարդը,— տո լա՛չար անզգամ՝ Հոբ իր օրումը երբ ա պիվո ունեցել, կամ խմել, թե նա էսպես մեկ բոչկա պիվո կորցներ, աշխարքը տակ ու գլուխ կաներ։

9

Մեկ տեղ ղոնաղներ կային, մեկ ջահել տղա ուզեցավ՝ որ մի քիչ մասխարություն անի, հարցրեց նրանց՝ թե ո՞վ ունի վրեն սհաթ, մատանիք կամ ուրիշ բան,— ես մարչ կգամ՝ թե ձեզանից մեկը իրեք անգամ իրար վրա կարողանա ասիլ, իմ սճաթս, իմ մատանիքս:

Մեկը հանեց ծոցիցը իր ջավահրակապ սհաթը ու դրեց սեղանի վրա — էն տղեն էլ մեկ քանի ոսկի հանեց՝ որ թե տանի, իրան ըլի։— Շատ բարի, թե իրեք անգամ կարացիր իրար վրա ասիլ՝ իմ սհաթը, էս ոսկիքը քեզ ըլին։

— Թե չասեմ, էն ժամանակը ինչ կուզես, արա՛,— ասեց մյուսը, որ լավ իմանում էր՝ թե էս մեկ դժար բան չի՛, ու ոսկիքը իրանն են։

— Լա՜վ,— կրկնեց էն տղեն ու սհաթն առաջին բռնեց։— Պատվելի, ո՞ւմն ա էս սհաթը։— Իմը,— պատասխանեց տերը։

— Բարաքյալա, լավ իմացավ, ի՞նչ պետք է արած, կաց մեկ էլ հարցնեմ,— ասեց ու մատանիքը առաջին բռնեց։— Ո՞ւմն ա էս մատանիքը,—

տերը գիժ չէ՞ր՝ որ ասեր, իմ մատանիքն ա, ծանրագոգոթ ասեց,— իմ սհաթըն ա։— Հենց մեկ անգամն էր մնացել, թե որ էս էլ ասել էր, սհաթի տիրոչ բանը՝ էլ ի՞նչ ասել կուզի, որ լավ կգար։— Բանս բո՛շ ա,— ասեց մարչ էկողը, գլուխը քորելով, ամա ի՞նչ պետք է արած, խոսքից չի՛ ըլիլ ետ դառնալ։ Է՜հ՝ ինչ կըլի, թո՛ղ ըլի։

— Պարոն աղա՝ ի՞նչ կտաս ինձ, թե ես տանիլ տամ,— հարցրեց։ Էս որ ասեց՝ մյուսի փոխանը կատու ընկավ, թե ասեր, իմ սհաթը, սհաթը պետք տանիլ տալ ու մեկ քանի ոսկի ձեռ բերիլ, թե չասեր, էլի սհաթը կերթար։ Բանը շլոր էր, ամա մարչ էկողը հանաք էր անում, ոսկիքը էլ ետ վերցրեց ու նրան խրատ տվեց՝ որ էլ չխաբվի։

10

Էրկու ֆրանցուզ աֆիցեր իրար պատահեցան մեկ կարմնջի վրա ու սաստիկ իրար դիպան։ Մեկը շատ կարճ ու քնձոտ էր, մյուսը ջանով ու սարի բոյ ուներ. կարճը բարկացավ ու մյուսին մեկ քանի փետ խփեց։ Սա ո՛չ բարկացավ, ո՛չինչ։— Էդպես բիաբռչությունը գիտես՝ որ արնով պետք է լվացած մեր միջումը, էս անգամ էլ ջրով լվանանք, վնաս չունի,— ասեց անսաս, ձեռը քցեց նրա գոտիկն ու ինչպես մեկ թոփ կարմնջի վրովը գետը քցեց։— Ինքը իր ճամփեն գնաց, մյուսը երկինքը։

11

Մեկ բանաստեղծ գնաց մեկ գիտուն մարդի տեսության, որ գրքերի միջումը թաղվել, չէր ուզում տեղիցը վեր կենա։ Բանաստեղծն սկսեց դուռը առաջ կամաց ծեծել, հետո քիչ քիչ ղայիմ, վերջապես ուզում էր՝ թե դուռը ջախըփուրթ անի։ Գիտունը կատաղած՝ տեղիցը վեր թռավ ու դեռ դուռը բաց չարած՝ բարկացած գոռաց։— Ճրաք քո ու եզի միջումը ի՞նչ զանազանություն կա։— Ո՛չինչ՝ պատասխանեց բանաստեղծը,— էս դուռը միա՛յն բերանն ապրի՛, ջուղաբն էսպես կտանի։

12

Մեկ ինգլիզի գեներալ շատ աֆիցերի ղոնաղ արեց։ Հացը որ կերան, պրծան, գինի բերին, սեղանի վրա դրին, ինչպես որ Ինգլիզումը սովորություն ա։ Աֆիցերների մեկ քանիսը շոտլանդացի էին, որ ինգլիզի հետ թշնամի են։— Ներեցե՛ք ինձ,— ասեց գեներալը,— ես մեկ վատ սովորություն ունիմ, որ գինու վրա շոտլանդացոց վատն ասեմ։— Բան չկա,— պատասխանեց մեկ շոտլանդացի աֆիցեր,— գինու վրա ինչ ասես, անց կկենա, զորօրինակ ով մեկ վատ խոսք ա ասել շոտլանդացոց վրա, իսկույն գետնովը կտամ։

Գեներալի անկաջի տակը քոր էկավ, էս որ լսեց։ Հավիտյան էլ ձեն չտվեց։

13

Մեկ քարոզչի ժամումը քարոզ տվեց՝ թե Աստված ինչ որ ստեղծել ա, բոլորն էլ կատարյալ է, պակասություն չունի։ Մեկ կուզիկ մարդ՝ որ շատ մասխարաչի էր ու ուրախ, մտքումը դրեց՝ որ քարոզչուն օյին գա։ ժամը որ դուս էկավ, դռանը կանգնեց, քարոզը գովեց ու կուզիկ քամակը նրան դեմ անելով՝ ասեց.— Պարոն պաստոր՝ թե Աստված ամեն բան թամամ ա ստեղծել, բաս է՞ս ինչ խաբար ա, ինձ ընչի՞ ա էս պակասությունը տվել։

Պաստորը լավ իմացավ նրա միտքը ու ուսին խփելով ասեց.— ի՞նչ պակասություն՝ սի՛րելի, չե՞ս տեսնում՝ որ Աստված քեզ էլ թամամ կուզիկ ա ստեղծել։

14

Մեկ մարդ մեկին խիստ շատ հավատի բան էր հարցնում։ Ճարը որ կտրեց, հարցրեց.— Դու էլ ինձ ասա՛, Հակոբ ո՞ւր գնաց, երբ տասը տարին թամամեց։— Ո՞վ ա խաբար, ուր գնաց, ես հո հետը չէի, դու էլ չե՛ս իմանալ, ինչպես որ տեսնում եմ,— ասեց մյուսը։— Ես լավ գիտեմ, պատասխանեց, տասն մեկ տարին գնաց, էսպես չի՞։

15

Մեծն Ալեքսանդր իր աֆիցերների հետ հաց էր ուտում, հանկարծ սկսեց հարցնել.— Էն ի՞նչն ա, որ անցյալ տարին չկար, էս տարի էլ չի՛ ըլիլ, մյուս տարին էլ։— Ա՜հ՝ ես լավ իմացա, ձեն տվեց մեկ խելոք աֆիցեր, էս հենց մեր տոնլուղն ա։— Էնպես դուր էկավ թագավորին էս խոսքը, որ հրամայեց, նրան համ տոնլուղը տան, համ պարգև։

16

Մեկ քահանա ղոնշունիցը քաղաքը տարան ու շատ լավ տեղ տվին, չունքի իրան բանին շատ արի էր ու ավագ քահանայություն էլ հետը։ Նրա գեներալը ուզեցավ՝ որ նրա հետ մի քիչ հանաք անի, հարցրեց։— Շատ ուրախ եմ, որ էդպես լավ տեղ ճարեցիք, թեև մենք ամենս էլ կուզեինք, որ մեզ մոտ էիր մնացել։ Հենց մեկ բանը չի՛ ինձ դուր գալիս։— Ի՞նչը,— պարոն գեներալ։— Էդ անունը, որ քեզ ավագ քահանա պտի կանչեն, չունքի որ ավագ սատանա, ավագ ավազակ էլ են ասում։— Ո՛չինչ, վնաս չունի,— պատասխանեց,— չունքի սատանի գլխավոր էլ են ասում,— այսինքն գեներալ։

17

Անվանի զորապետն Մոռեց Սաքսոնացի մեկ իշխանի հետ գեղումը ման էր գալիս, գեղցիքը քաղցրությամբ գդակները վերցնում, գլուխ էին տալիս, նա էլ իր գդակն էր վեր կալնում, շնորհակալություն անում ու գլուխ տալիս։— Ի՞նչպես կարելի ա էսպես ռամիկ էշ խալխի համար գդակ վերցնել,— հարցրեց իշխանը։— Ընչի՞ չի,— պատասխանեց մարշալը,— բաս սրանք էնպես պետք է կարծեն, թե իրանք լավ սնունդ են առել, ես չէ՞։

18

Մեկ կնիգ իր խեղճ մարդին ամանն էր բերել, էնքան բարկացրել, գլխացավություն էր տվել նրան։ Ո՛չ խնդրելով, ո՛չ աղաչանքով, ո՛չ խրատով ճամփա չէկավ։ Ճարը որ կտրվեց, մեկ օր լավ բաբաթ նրա հախիցն էկավ։ Մազերը պռճոկելով, գոռալով ընկավ հոր տունը ու մարդիցը գանգատ արեց։ Հերը իր աղջկա չար բնությունը գիտենալով, խիստ նեղացավ։
—Ինչպես կհամարձակի իմ աղջըկանը ծեծի, տես, ես նրա թամբահն ի՛նչպես կանեմ,— ասեց ու մեկ մաթրախ վեր առավ, ու աղջըկանը, զորս դու պատվիրեցեր, միսը բերանը տվեց։— Գնա՛ հիմիկ քո մարդին ասա, իմ աղջիկ, որ մեր հեսաբը դըստվեց, նա իմ աղջըկանն ա ծեծել, ես էլ նրա կնգանը։

19

Մեկ թագավոր մեկ վարդապետի վրա բարկացել էր, չէր ուզում, որ երեսը տեսնի։ Ինչքան մարդ մեջ քցեց, հնար չէլավ։ Վերջապես էլի ինքը

սիրտը պնդացրեց ու գնաց մոտը։ Թագավորը հենց տեսավ նրան, երեսը շուռ տվեց ու ուզում էր՝ որ տուն մտնի, վարդապետը ետևիցը ձեն տվեց։
— Շատ շնորհակալ եմ, շատ՝ թագավոր։— Ընչի՞ցը,— հարցրեց թագավորը բարկացած.— Էնդուց, որ հիմիկ իմանում եմ, որ իմ թշնամին չե՛ք։— Ընչո՞վ ես իմանում, հարցրեց։— Էնդով՝ որ ինձ քամակդ շուռ տվիր, ու մեկ թշամու էլ ա չե՛ս արել։
Էս խելոք խոսքը թագավորի սիրտը կակղացրեց ու էլի սկսեց նրան սիրել։

20

Մեկ սուփրի վրա մեկ հարուստ, երևելի ու մեկ գիտուն մարդ էլ կային նստած։ Մեկ աման խիստ պատվական կերակուր բերին։ Գիտունն էլ սկսեց իր փայը վեր առնիլ։— Օհո՜, կարդացող մարդիքն էլ են իմացել իրանց բերնի համը,— ձեն տվեց հարուստը։— Ընչի՞ չէ, բաս հենց իմանում ես՝ թե անուշ թիքեն հենց ախմախների՞ համար ա,— պատասխան տվեց գիտունը։

21

Մեկ քաղաքում տաք ջուր կար ու շատ մարդ էին գալիս էնտեղ լեղանալու, ամսներով մնում, քեֆ անում, բալ տալիս, պար գալիս։ Էստեղանց վերակացուն խիստ շախաշի մարդ էր ու ամենին սիրելի։ Մեկ օր էլ շատ խալխ էին ժողովել զալումը՝ որ պար գան, մեկ զուռնա մարդ մտավ ներս, գյոզլուկն աչքին, չաքմեն հաքին, մաթրախը ձեռին ու շպորը (երկաթի բիզը) չաքմին կապած։
Վերակացուն ուրախ ուրախ գնաց առաջը, դուռը բաց արեց, խոտեց նրան ու ասեց՝ ամեն բանը լավ կարգին սարքին ունի պար գալու համար, ամա հենց մեկ բանն ա պակաս։ Մտնողը որ զարմանալով հարցրեց՝ թե ի՞նչը, նա պատասխան տվեց. «Ձեր ձին, ձեր ձին, աչքի լիս»։ Ամենն էլ բերանները կալան։
Բայց մեկ օր մեկ խաթուն սրան լավ օյին էկավ։ Նա որ զալը մտավ, սա հենց իմացավ՝ թե մեկ ծուծը բարակ օմքին ա, գնաց առաջը, ուզեցավ որ հետը հանաք անի, ու հարցրեց՝ թե.— Տովբիա շան անունն ի՞նչ էր։— Խանումը ծանր ծանր պատասխան տվեց.— Նաշ, ու շատ անամոթ շուն էր։
Նաշը էն վերակացվի անունն էր։

22

Մեկը իր բարեկամին հարցրեց՝ թե ի՞նչպես ա յոլա գնում.— Ինչպես երկնքումը,— պատասխանեց։ Հարցնողը մնաց զարմացած՝ որ էնպես բիրաղի բախտավորվել ա, չունքի շատ աղքատ էր։— Էդ ի՞նչպես ա պատահել,— հարցրեց առաջինը զարմացած.— Ի՞նչպես պտի պատահի, ո՛չ ուտում ենք, ո՛չ խմում,— պատասխանեց։— Հեսաբի՞։

23

Մեկ սալդաթ բայրաղի տակիցը փախել էր, բռնեցին ու դատաստանը կտրեցին՝ որ պիտի մեռներ, բայց չունքի լավ, ղոչաղ սալդաթ էր, իրան թողին, թե ինչ ձևով կուզի մեռնիլ։ «Չունքի որ բանն ինձ վրա ա մնացել, ես էլ կուզեմ, որ ծերությունես մեռնիմ»։

24

Աղեքսանդր Մակեդոնացին կամենում էր, որ մեկ քաղաք տակըվեր անի։ Նրա վարժապետի մեկը էստեղ էր կենում, դուս էկավ, գնաց թագավորի ոտը, որ քաղաքի համար աղաչանք անի։ Հենց նրան տեսավ Աղեքսանդրը թե չէ՝ շատ բարկացավ ու օրթում կերավ, որ ինչ որ նա խնդրի, ներհակն անի։— Խնդրում եմ ուրեմն, որ էս քաղաքը քանդես, բնաջինջ անես,— ասեց խելոք իմաստունը ու էս ձևովը քաղաքն ազատեց։

25

Մեկ իշխան մարդ մեկ օր իր որդուն շատ անարգեց՝ որ նա մեկ խոսք էլ ա չէ՛ր խոսում, երբ երևելի մարդիք իր տունն էին գալիս։ Որդին շատ հաստադլուխ էր։ Հորը հարցրեց՝ թե ի՞նչ խոսի, պատասխանեց՝ որ նրանց օղլուշաղիցը, նրանց քեֆը հարցնի և այլն։ Որդին հոր խրատը ականջումը հալեց, ու հենց առաջին էկողը մեկ եպիսկոպոս էր։ Տղեն էլ ձեռ չէր վերցնում, հենց միշտ հարցնում էր եպիսկոպոսին՝ ի՞նչպես ա նրա կնգա, զավակաց քեֆը։

26

Մեկ լավ մուզիկանտ, որ իր բանը լավ գիտեր, ամա մի քիչ ծուծը բարակ էր, բախտավոր գտնվեցավ, որ նրան ֆրանցուզի թագավորի մոտ տարան։ Թագավորը հարցրեց նրան՝ թե նա՞ է էն մուզիկանտը՝ որ էնքան գովում են։— Ձերդ մեծություն, զորդ ա, էդ գովասանությանը չեմ արժանի, ամա կարող եմ համարձակ ասիլ, որ էնպես ձեն ունիմ ես, որ ինչ ուզենամ, կարող եմ նրանից շինել,— պատասխանեց։— Թե որ էդպես ա,— ասեց թագավորը,— հրամայում եմ՝ որ մեկ ջուխտ գուլբա շինես քո ձենիցը, չունքի հաքիդ գուլբեքը բանի պետքը չեն։

27

Մեկ գեներալ մեկ քաղաք մտավ։ Բոլոր քաղաքացիքն եկան՝ որ նրա գալը շնորհավորեն։ Հրեաներ էլ էին հավաքվել դռանը, բայց նա հրամայեց՝ որ նրանց քշեն։ «Դրանք են մեր Քրիստոսի չարչարողը, թո՛ղ կորչեն երեսիցս»։ Հրեաները շատ նեղացան, որ էնպես պատասխան ստացան, ամա ասեցին, որ չորս հազար ոսկի են բերել փեշքաշ։ Հենց մեծավորն իմացավ թե չէ, իսկույն հրամայեց՝ որ ներս գան, «դրանք ի՞նչ անեն,— ասեց,— խաչելու ժամանակին դրանք դեռ չէին ծնվել»։

28

Մեկ կաղ ֆրանցուզ Գերմանիո միջովն անց էր կենում, ձիուցը վեր ընկավ։ Գեղըցիք՝ որ տեսան, վրա թափեցին՝ որ քոմակ անեն, բայց որ տեսան՝ թե կաղում ա, հենց իմացան՝ թե ոտը դուս ա ընկել, ինչքան զոռ ունեին, բանացրին՝ ու ոտիցը քաշում էին, որ տեղը քցեն։ Ողորմելին ինչքան էլ որ գոռաց՝ թե ոտը դուս չի ընկել, ինքը կաղ ա, նրանք հենց կարծում էին՝ թե ցավի ձեռիցն ա էնպես գոռում, ու դհա՛ ավելի զոռ էին տալիս, չունքի լեզուն չէին հասկանում։ Նրա բախտիցը մեկ մարդ էկավ՝ որ երկու լեզուն էլ գիտեր ու խեղճին ազատեց էս դառը տանջանքիցը։

29

Մեկ թոգիցը փախած մարդ մտավ մեկ վարժատուն, տեսավ՝ որ երեք շինել կան կախ տված, վերցրեց և քաշվեց։ Դուս գնալիս մեկ աշակերտի ռաստ էկավ, որ մեկ լավ շինել էլ նա ուներ քցած։ Սա տեսնելով՝ թե նա

էնքան շինել ձեռին տանում ա, հարցրեց պատճառը,. գողն ասաց հանդարտ՝ թե շինելու ա տանում։— Թե որ էդպես ա, խնդրեմ իմն էլ տանիս հետդ,— ասեց աշակերտը, չունքի յախեն մի քիչ լավ չի, ամա շուտով բերես։— Աչքիս վրա,— պատասխանեց գողը,— մեկ սհաթից հետո բոլորն էլ հետս կբերեմ, միամիտ կաց։

Էն գնալն էր՝ որ գնաց, հա մտիկ արա՛, թե էս օր էլ եդ կգա։

30

Գողի մեկն էլ մտավ ժամը, որ մեկ բան ձեռ քցի, տեսավ՝ որ մեկ խաթուն մեկ թանկագին թութունաման հանեց ջիբիցը։ Հենց տեղը դրեց թե չէ, ղոչաղ գողը մոտեցավ ու թռցրեց։ Փոքր վախտ անց կացավ, էլի ուղեցավ էն խաթունը՝ որ թութուն քաշի, զարմանքն իրան առավ՝ որ տեսավ՝ թե թութունամանը չկա ու սկսեց գոռալ։ «Ի՞նչ էլավ թութունամանս, ա՜խ, էս սհաթին ո՞վ կտաներ»։ Գողը՝ որ ժամանակ չէր ճարել, որ քաշվի, մոտ էկավ ու նրան խրատ տվեց՝ որ մեկ էլ լավ ման գա։ Ջեբ, ծոց, էլ տեղ չմնաց, որ ման չգա, չգտավ։ Ջունքի գողին մեծ մարդ էին համարում, էլ մեկն էլա կարծիք չտարավ՝ թե նա կըլի։ «Էս ի՞նչ անբախտություն էր՝ որ գլխիս էկավ, մարդ էնպես թութունամանը ի՞նչպես կորցնի. բալքի սհաթս էլ են գողացել, հլա մի մտիկ անեմ։ Ա՜խ՝ չէ, փառք Աստուծո՝ որ տանը սեղանի վրա թողի»։

— Հեչ ֆիքր չանես՝ խաթուն,— ասեց գողը,— ձեր թութունամանը կըգտնվի, ջուղաբը ես տամ, պոլիցումը մեկ քանի բարեկամ ունիմ, հենց էս սհաթին կերթամ, իմաց կանեմ, որ ամեն տեղ ման գան։ Արժանի ա՞ք, հենց ձեր անունն ու տեղն իմանամ, որ թե իմ բախտիցս՝ ես գտնեմ, գամ, ձեզ հայտնեմ։— Խաթունը շատ շնորհակալություն արեց ու իր անունն ու տեղն ասեց։ Գողը ժամիցը դուս էկավ ու ուղղակի նրա տունը գնաց։— Ես ձեր խաթունի կշտիցն եմ գալիս,— ասեց ղարավաշին,— որ անց կենալիս՝ նրա սհաթը առնեմ ու իրան տանիմ, որ սեղանի վրա թողել ա։— Ղարավաշի մեկը՝ որ նրան հեչ չէ՛ր տեսել, չէր ուզում սհաթը նրան տա։ Գողը տեսնելով՝ որ կարծիք են տանում, ասեց։— Ես լավ եմ տեսնում, որ դուք Աղա Բեգզադին չե՛ք ճանաչում, պետք է ձեզ մեկ նշան տալ, որ դուք ինձ հավատաք։ Էս թութունամանը ճանաչո՞ւմ եք, թե չէ։ Ձեր խաթունը տվեց ինձ, իմանալով՝ որ դուք առանց նշանի չեք հավատալ, նրա սհաթը ղարիբ մարդի տաք։— Էլ ի՞նչ տարակուսություն կմնար. սհաթն էլ իրան տվին, ու մեր խեղճ խաթունը՝ ո՛չ սհաթիցն ստացավ խաբար, ո՛չ թութունամանիցը։

31

Մեկ էլչի գնաց Ավստրիո թագավորիցը՝ փափի մոտ ու սկսեց էնպես երկար ճառ (ռեչ) ասիլ, որ փափի քափ ու քրտինքը կոխեց անհամբերությունիցը։ Ճառը որ պրծավ, փափը իսկույն հարցրեց. էլ ի՞նչ հրաման ունի ձեր թագավորը։— Ո՛չինչ,— պատասխանեց խորամանկ սեկրետարը, որ տեսավ՝ թե փափն ի՞նչ հալի ա,— մեր թագավորի հրամանն էն ա, որ էս ճառը մեկ էլ ասենք, թե մեր ուզածը չանես։— Չէ՛, չէ՛,— պատասխանեց փափը պռոշները կծելով,— էլ գլուխ չունեմ, որ լսեմ, ինչ ուզում եք, կանեմ։

Աստված տա, որ ամեն մարդի բան էսպես հաջողի, բայց շատ անգամ փորըդ էլ ես գետինը քսում, էլի բերնիդ նայող չկա։

32

Մեկ գիտուն մարդ մեկ կաթոլիկի եպիսկոպոսի հարցրեց՝ թե ի՞նչ տեղ չկա Աստված։ Եպիսկոպոսը հայտնի բան ա, որ նրա խոսքի վրա ծիծաղեց ու ասեց. «Աստված ամեն տեղ ա»։ «Բաս Հռովմ ընչի՞ համար ա Քրիստոսի տեղը փափը նստում, մալում ա, որ էնտեղ Աստված չկա, որ տեղակալն ա բանը յոլա տանում»։

33

Թագավորի մեկը մեկ հանդիսավոր օր գնաց բանդը, որ բռնվածներին ողորմություն անի։ Ում որ հարցրեց, գլուխը ղորդեց ու գանգատ արեց՝ որ նհախ տեղն են իրան բանդը քցել։ Էս հադաղին թագավորի աչքն ընկավ մեկի վըրա, որ ղրաղումն անսաս կուչ էր եկել։ Թագավորը մոտ եկավ, որ նրա սուչն էլ իմանա։— Ձերդ մեծություն,— պատասխանեց բանդարկեալը,— իմ հախն ա, ի՞նչ ասեմ։ Քանի օր էր օղլուշաղս մնացել էին ցամաք հացի կարոտ։ Հուսահատությունը ջանս առավ։ Մթնով դուս էկա տանից փշտովը ձեռիս լիքը, մեկ հարուստ իշխանի ռաստ էկա ու ասեցի, թե որ ինձ օգնություն չանի, կսպանեմ։ Էս մասին բերին ինձ, բանդը քցեցին։

— Ա՛յ չար անիրավ,— ձեն տվեց թագավորը,— քեզ պես ավազակ մարդը էսպես անմեղների միջումն ի՞նչպես պտի թողած։ Դո՛ւս, դո՛ւս, էլ էստեղ ոտդ չկոխես, թե չէ քոնը քեզ կհասնի։— Աստված ո՛չ անի,— Ձերդ Մեծություն,— որ էդ ղալբությունն անեմ, թե մեկ էլ տեսնեք ինձ էստեղ, ըխտիարը ձերն ա։

Ասեց ու գդակը կոնատակն առած՝ դուս քաշվեցավ։

34

Մեկ ջահել ծառա անկարգություն էր արել ու օթախը հոտացրել։— Էս ի՞նչ զարշելի հոտ ա կանգնել էստեղ,— ձեն տվեց աղեն քիթը բռնելով։— Ա՛խ՝ ո՛ղորմած տեր,— պատասխանեց ծառեն,— մեր անպիտան շունն ա էս խայտառակությունը արել, ա՜խ՝ նրա աչքը դո՛ւս գար, որ չըլեր իսկի։— Ի՞նչ, գլուխդ քարն ես տալիս, շո՜ւնը, շո՜ւնը, շո՜ւնն էստեղ չի՛ հո,— ասեց տերը։— Ղորդ ա՝ աղա, ճշմարիտ ես ասում, էստեղ չի՛, ամա հենց որդի որ ա, կգա,— կրկնեց լեզապատառ՝ ծառեն։

35

Մեկ աղքատ կնիկ մեկ հարուստ իշխանից ողորմություն էր խնդրում, որ նրա ծծմերն էր էլել։— Թող էլ չեմ տալ՝ որ աչքդ ածես,— ասեց իշխանը,— չունքի երեխա վախտս ինձ օյին ես էկել։— Ե՞ս, վա՜յ, իմ աչքս դուս գա, էդ ի՞նչ ես ասում։— Հա՛, դո՛ւ, դո՛ւ, չունքի իմ մերս շատ անգամ ա ինձ ասել, որ ես շատ սիրուն երեխա եմ էլել, ամա դու ինձ փոխս ես քցել։

36

Մեկ հաստափոր մարդ ցխումը վեր ընկավ ու չէ՛ր կարում տեղիցը վեր կենալ։ Էս հաղաղին մոտովը մեկ մարդ անց կացավ, խնդրեց՝ որ գա, իրան քոմակ անի, ցխիցը հանի։— Աչքիս վրա,— ասեց անցվորը,— քեզ քոմակ կանեմ, ամա էդ տեղ շատ մուռտառ ա, վեր կաց, մի քիչ ղրաղ քաշվի՛ր, էն ժամանակը բա՛շ ուստա, ձեռիցս էկածը չեմ խնայիլ։

37

Մեկը քաղաքն էր գնում ձիով։ Ճանապարհին մեկ ճանաչ ռաստ էկավ ու հարցրեց։— Աջաբ, աջաբ, ո՞ւր էս սհաթին։— Քաղաքը։— Ուրեմն ձիուդ զոռ արա՛, որ տեղ հասնիս, տասը սհաթին դռները կողպում են.— Բան չկա,— պատասխանեց ճամփորդը գլուխը տրմբացնելով։— Մարդն է՛ն ա, որ ամեն բանի հունարը գտնի։ Թե քաղաքի դռները տասը սհաթին են փակում, ես էլ նրանց ջգրու իմ սհաթը մեկ սհաթ եդ եմ քաշել։

38

Մեկ գեղցի, որ իրան շատ իմաստուն էր կարծում, չունքի գրել, կարդալ գիտեր, էկավ քաղաքը ու տեսավ, որ մեկ տան տախտակի վրա գրած էր. «Էս տեղ ձիանք կան քրեհելու»։ Ու 1748 տարվան թիվը։ Հենց իմացավ՝ թե էն տանը էնքան ձի կա, գլուխը թափ տալով սկսեց գոռալ. «Պա՜, պա՜, պա՜. մեկ գոմում որ էսքան ձի կա՛, տե՛ս՝ թե սաղ քաղաքումը որքան կըլի»։

39

Մեկ սալդաթի հրամայեցին, որ կռիվ գնա։— Ա՛ղա,— ասեց իր աֆիցերին,— ես չե՛մ կարող գնալ, չունքի կա՜—կա—կա՛—կազ եմ։—«Ի՞նչ վնաս ունի,— պատասխանեց աֆիցերը,— դու հո թշնամու հետ չի՛ պետք է գլխիցդ դուս տաս, վայրահաչություն անես, պտի կռվիս։—«Շա—շատ բարի»,— ասեց կակազը, «թե—թե—ո—ո՞ր ղա—ղա—րա—վու—վուլ ըլիմ, ու—ու մե—մեկը գա, մե—մեկ սը—սհաթ անց կը—կենա ըն—չը—չանք կը—կը կասեմ, ո՞վ վո—վո—ո՛վ է գալիս։— Բան չկա,— պատասխանեց օֆիցերը,— քեզ մեկ ընկեր էլ կտան, որ նա ձեն տա, երբ դու թվանքդ քցես։— Շա—շատ բա—բարի,—կրկնեց սալդաթը,—թե որ ի—ինձ ե—եսիր անեն փո—փո—փորս վե—վեր կածեն, ընչանք կա—կասեմ մը—մը—մը—մեղա՛, պը—պը— պրծը—ծը—ծը—ծացրեք։

40

— Սո՛ւս, սո՛ւս,— ասեց բարկացած մեկ դատավոր դատաստանատանը, ձեններդ կտրեցե՛ք։ Ի՞նչ եք բերնըներիդ կապը կտրել։ Հինգ սհաթ կըլի էստեղ նստած եմ, տասներկու ավելի շառ եմ կտրել, քսան մարդ ճամփա քցել, առանց մեկ խոսք ասելու կամ լսելու։

41

Մեկը մեկ քանի բադ էր գողացել, դատաստան որ տարան, հետը մեկ քանի շհադ վերցրեց, որ ասեն՝ թե էն բադերը դեռ շատ պստիկ էին, որ նրանք նրա մոտ տեսել էին։ Էս կերպով գլուխը պրծացրեց։ Ախմախի մեկն էս իմացավ, գնաց, երկու թվանք գողացավ և հետը վկա տարավ մեկ քա-

նի մարդ դատաստանատունը՝ որ ասեն՝ թե էն թվանքները շատ ջահել էին, երբ որ նրանք նրա մոտ տեսել էին։ Հայտնի բան ա, որ թվանքի տեղակ իրան աճելացրին։

42

Մեկը հայլին առավ ձեռը, առաջին բռնեց ու աչքերը խփեց։— Էդ ի՞նչ ես անում,— մոտի կանգնողը հարցրեց։— Ի՞նչ պետք է անեմ,— պատասխանեց,— ուզում էի մեկ իմանամ, թե քնած ժամանակս ի՞նչ պատկեր ունիմ։

Ո՜վ չի ասիլ՝ մաշա՜լլա, խելքի կողմանե գլուխդ ապրի՜։

43

Մեկ պերուք շինող (մազ շինող) խնդրեց մեկ թագավորից՝ որ իր շինած պերուքը գլխին պահի։— Բոլոր դռան մարդիկն էլ շինել տվին ու պերուք շինողը լավ դատեց։ Մեկ փեդե ոտ շինող էլ՝ էս լսեց, ու գնաց թագավորին խնդրեց, որ իր շինած փեդե ոտներն առնի, նրանով ման գա։

44

Մեկ ղարավուլ սալդաթի քնած տեղը՝ թոփի գյուլլեն էկավ, գլուխը տարավ։ Ընկեր սալդաթը, որ զարթուն էր, հազալով ձեն տվեց։ «Աչքդ բարին տեսնի, ընկերս թե որ վեր կենա տեղիցը, ի՜նչքան կզարմանա, որ տեսնի՝ թե գլուխ չունի»։

45

Մեկ չոբան գնաց մեկ մուհրը փորողի մոտ, ու խնդրեց, որ իրան համար էնպես մեկ մուհրը փորի, որ ինքն ու իր բոլոր սուրուն վրեն ըլնի։ —Աչքի լույս,— ասեց ուստեն,— ոչխարները կարելի ա փորել, ամա թե դու հետըներն ըլիս, Մուհրը շատ մեծ կըլի։— Ի՞նչ վնաս ունի,— պատասխանեց չոբանը,— ոտներս մի քիչ կարճ շինի, ո՞վ ա հարցնում.— Մհրափորը, չոբանին մինչև կեսը փորեց, վրեն մեկ սար, սարի գլխին մեկ ոչխար։ Չոբանը իր պատկերին հավանեց, ամա ոչխարի համար շատ անբավական էր։— Հենց մեկ ոչխար ես փորել, մյուսներն ո՞ւր են,— հարցրեց։— Սարի

քամակումն արածում են,— պատասխանեց։— Թե որ էդպես ա, էլ ձեն չի՛ պետք է տված, թո՛ղ իրանց համար արածին. քանի որ էս գլուխը սաղ ա, նրանց գելը չի՛ ուտիլ,— ասեց չոբանը։

46

Մեկ աֆիցեր մեկ տավար ռեկրուտ էր ձեռ քցել ու երկար ժամանակ չէր կարում նրան հասկացնի, թե ի՞նչպես պտի սալդաթը ձեն տա. «ո՞վ ա»:*— Հիմիկ լավ մտիկ արա՛՝ այ հաստագլուխ՝ հմիկ կգամ, դու իսկույն ղայիմ գոռա՛,* «ո՞վ ա»: *Աֆիցերը մի քիչ տեղ հեռացավ ու էլ եդ էկավ։ Ռեկրուտը մոզու պես դունչը կապել, անսաս մտիկ էր անում։ «Տո ե՛զը՝ ընչի՞ չես ձեն տալիս՝ թե* «ո՞վ ա»: *«Է՜հ, բանդ կտրվել ա, ի՞նչ ձեն տամ, մկամ չե՛մ գիտում, թե դու ո՞վ ես»։*

Անչախ անչախ սալդաթությունը լավ օսալ սովորել էր, թեև դագանակը քամակիցը պակաս չէր ըլում։ Մեկ անգամ կռվի ժամանակին աֆիցերը նրան հրամայեց՝ որ գիշերը ով էլ որ պատահի, իրեք անգամ ձեն տա՝ «ո՞վ ա», *ու թե էկողը ձեն չհանի, կրակ տա։ Գիշերը՝ մեկ էլ է՜ն տեսավ՝ որ մեկը իր վրա ա գալիս։ Իրեք անգամ ձեն տվեց, բայց էկողը ո՛չինչ չասեց։ Իսկույն թվանքը վեր դրեց, ջիբիցը չախմախն ու քարը հանեց, չախմախի տվեց ու վառված ղավը էկողին դեմ արեց։ «Էս էլ քո կրակը»։*

47

Մեկ ծուծը բարակ մարդ սկսեց իր բարեկամին էս ձևով մեկ գիր գրել։

— Սիրելի բարեկամ։ Վերջապես փոքր հանգստացել ենք ու հմիկ կարող եմ քեզ մեր որպիսությունը գրել՝ թե թշնամիքը ի՞նչպես են մեզ ամեն օր անհանգիստ անում, թեև փառք Աստուծո՝ ամենն էլ կոտորել, փչացրել ենք։

Մեր հալը շատ վատ ա, մեկ կտոր հացի կարոտ ենք մնացել, լեզվներս բերնըներումս չորացել են, թեև փառք Աստուծո հաց ու խոզի միս շատ ունինք։ Մա՛կ կաթ գինի չունինք, ամա արաղ՝ որքան ուզես՝ կա։ Բայց հացին նստելիս, պետք է թուր ու թվանք ձեռըներիս բռնած։ Հենց էս սհաթին էլ՝ որ էս թուղթը գրում եմ, մեկ ձեռիս թուրս ա, մյուս ձեռիս՝ թափանչես։

Տասն չորս օրից առաջ քո գրի պատասխանը կգրեի, ամա էգուց առավոտն ստացա, ներեցե՛ք։ Փոշթը մեկ անգամ էլա չի՛ գալիս, որ թալա-

նած ըլլի։ Երեկ փոշտն էկավ, ինչ կար չկար, թալանել էին, բայց փառք Աստուծո, որ ոչինչ չկար, երկու մարդ էինք, նրանք էլ դարդակ։

Անց կացած հինգշաբթի օրը խաբարն էկավ, թե մեկ դասթա ձիավոր մեզ վրա են գալիս, ամա ո՛չ բայրաղ ունեին, ո՛չ բալաբան, զուռնա էին փչում։ Տղամարդ, կնիկարմատ, մեծ, պստիկ՝ բոլորս էլ առաջ գնացինք։ Մենք շատ քիչ էինք, բայց էլի առաջ գնացինք։ Մահն ամենի երեսին տպվել էր։ Բայց չունքի առաջ գնացինք, թեև էս միջոցին մեր դասթեն բոլոր կոտորեցին, ամա էլի փառք Աստուծո, ամենս էլ մնացինք սաղ սալամաթ ու թշնամու վրա թափեցինք։ Մեր բախտիցը թշնամին բարութ չուներ, թափանչա ուներ, թուր ու մզրախ, բայց չունքի գյուլլա շատ ունեինք, բոլորն էլ թուրը քաշեցինք, մեկ հոգի էլա չպրծավ, էնդոնցից սավահի, որ ջմջմումը խրվեցին ու խեղդվեցին։ Նրանց շորերը շատ ռանգ ռանգ ու մեկ ձևի էր, բայց բոլորն էլ կանաչ։

Թշնամուն որ հետ ածեցինք, սկսեցինք օրդուն թալանել, աչքդ բարին տեսնի, աշխարքի խազինեն ու մալն էնտեղ էր, ամա մեկ քանի թրից, մզրախից, թվանքից սավահի՝ ոչինչ չկար, էն էլ ո՛չ բերան ունեին, ո՛չ կոթ, ո՛չ լուլա, ո՛չ քար ու չախմախ։ Մեկ քանի դարդակ շուշա կար, ամա ջրով լիքը։ Շուշեքանց գինին բոլոր լագել էին, բայց մեր բախտիցը ո՛չինչ չէր էլել միջումը։

Թե էս գիրը չստանաս, պետք է որ կորած ըլի, խնդրեմ ուրեմն՝ որ ինձ պատասխանը գրես։ Թուղթս լցվել էր, մեկ մատնաչափ տեղ էլ չկար, ամա դեռ էլի հինգ սհաթ գրում էի, թուղթը չէր հատնում։

48

Մեկ ջահել տղի կես գիշերը վեր կացրին ու բոթը տվին, որ մերը մեռել ա։ «Ա՜խ՝ տեր Աստված,— ձեն տվեց ձգվելով ու արշտատալով,— իմ հալն ի՞նչ կըլի, թե որ առավոտը քնից վեր կենամ, աչքս բաց անեմ ու էս խաբարն իմանամ»։

49

Մեկ ջահել տղա մեկ ջմջմա տեղի մոտացավ. մոտովը մեկ գեղըցի էր անց կենում, հարցրեց նրան՝ թե ջմջմեն պի՞նդ ա, թե չէ։— Հայտնի բան ա, որ ջմջմի տակը շատ պինդ ա,— պատասխանեց խորամանկ գեղըցին։ Հենց մի քիչ գնաց թե չէ, ձին միջումը մինչև անկաջները թաղվեցավ։ Տղեն

կրակվեց գեղըցու վրա.— տո ղուռումսաղ՝ չէ՛իր ասում, թե տակը պինդ ա։— Պատվելի՝ հայտնի բան ա, պինդ ա, ամա դու դեռ տակը չես հասել, ի՞նչ կիմանաս,— պատասխանեց գեղըցին՝ հանդարտ գլուխը քորելով։

50

Մեկ մարդ թունդ խուլ էր, ամա չէր ուզում իր քառությունը վրեն առնի։ Մեկ շախաշի ճամփին հեռըվանց տեսավ նրան ու ընկերին ասեց. արի՛ մեկ օյին գանք նրան, ու սկսեց ոտով, ձեռով անիլ, բերանը բաց անիլ, իրան զոռ տալ, որպես թե սաստիկ ձենով գոռում, ձեն ա տալիս քառին, ամա մեկ բառ էլ ա չէ՛ր խոսում։ Քառը վրա պրծած, բարկա<ցած> էկավ ու սկսեց նրան ղնամիշ անիլ։ «Ի՞նչ եք բերաններդ ճոթռում, աշխարքը հո քանդվել չի՝ խա՛նիխարաբ։ Հենց իմանում եք՝ թե քա՛ռ եմ, որ ասածներդ չիմանամ»։

51

Փորդուգալացիք երկար ժամանակ մեկ ճգնավորի իրանց ապավեն էին բռնել։ Մեկ անգամ կռիվ պտի գնային, գլխավոր չունեին։ Խելոք մարդիքը խորհուրդ արին, որ իրանց ճգնավորին գեներալ շինեն, բայց չունքի ծառայություն չէ՛ր արել, չէին գիտում, թե էս տեղն ի՛նչպես նրան տանի։ Էլի միտք արին ու սկսեցին ճգնավորի պատկերին առաջի օրը սալդաթի շոր հաքցնիլ, մյուս օրը՝ աֆիցերի, երրորդ օրը՝ գեներալի, չորրորդ օրը ֆելդմարշալություն իրան տվին ու 150 ոսկի էլ ռոնլուղ կարգեցին, որ թագավորն ինքը իրան ձեռովը մախմրի վրա դրած՝ իր ժամանակին բերում, պատկերի առաջն էր դնում։

Մեկ կռվում պատկերն էնպես առաջներին տանում, ղոնշունն էլ ետևիցը գնում էր։ Որ մոտացան, թշնամին մեկ քանի թոփ քցեց։ Մյուս օրը տեսան, որ էլ մեկ Փորդուգալացի չկա իրանց առաջին։ Ֆռանցուզի գեներալը էնպես էր կարծում, թե տափ կըլին կացել, բայց մեկ քանի եսիր արած մարդիք պատմեցին՝ թե ճգնավորի գլուխը գյուլլեն տարավ, էնդուր համար նրանք փախան, չունքի էլ գլխավոր չունեին։

52

Մեկ ժամանակ ինգլիզի ու հոլլանդացվոց մեջ ծովային պատերազմ կար ու մեկ նեղ տեղ ամեն օր ծովի վրա կռիվ էին տալիս։ Հենց մեկ էլ

ուզում էին կռիվը նորեն սկսեն, խաբարն էկավ՝ թե բարշությունն ա ընկել թագավորների մեջը։ Երկու կողմն էլ շատ սիրով սկսեցին իրար հետ յոլա գնալ։ Մեկ հոլլանդացվոց նավում՝ որ ինգլիզների նավիցը հեռու չէր՝ մեկ մատրոզ (ծովի սալդաթ) շատ լավ քյանդրբազություն գիտեր ու էնպես էր նավի դիրակը (կայմ) վեր ըլում, ինչպես մեկ կատու։ Մեկ օր էլ էսպես վեր էլավ, հասավ դիրակի ծերը, մեկ ոտի վրա կանգնեց ու հազար մեկ հունար բանացրեց։ Էստուց հետո՝ որ շուռ չէկավ ու գլխի վրա դիրակի ծերին ցից էլավ՝ ոտները դարիդուս՝ տեսնողների աչքը սևացավ, գլխներին կրակ վառվեց։ Վերևիցը որ վեր էկավ, բոլոր հոլլանդացիք սկսեցին նրան գովել, երկինքը հանել ու ինգլիզների վրա պարծենալ՝ որ էնպես հունարով մարդ կա իրանց միջումը։

Մեկ պառավ մատրոզի բարկությունն էկավ՝ որ իր ազգին էսպես անպատիվ էին անում։ Նա էլ սկեց կատվի պես դիրակը վեր ըլիլ. ծերին կանգնել ու հենց էն ա, ուզեցավ՝ որ նրա նման հունարներ բանացնի, թանն ու լոբին իրար խառնվեցավ, աչքերը շաղվեցավ ու զրխ՜կ — դիրակի տակին սկսեց գլուխն ու եղևը քորիլ։ Նրա բախտիցը պարաններն ու երբյանը պահել էին նրան, թե չէ հոգին ճամփի կիսին կտար։ Հենց մի քիչ խելքը գլուխն էկավ թե չէ՝ սկսեց հոլլանդացոցը հարբա գալ ու բղավիլ. «է՜սպես վեր կըլեին ա՞յ. թե մարդ եք, դուք էլ էսպես կանե՛ք»։

53

Զորս ջահել տղերք աշխարքիս բանի վրա սկսեցին խոսք ու զրից անիլ, վեճ բաց անիլ։ Մեկն ասում էր՝ թե որ Աստված մարդի բանը չհաջողի, կարելի ա մեկ քաղաքի դռնովը մտնիլ, էլի քաղաքը չհասնիլ։ Մյուսը՝ որ էքսի օրը պտեր մեկ քաղաք գնալ՝ որ ղարավուլ էր դրած, էս խոսքին ընդդեմն էր ասում։ Մի քիչ էլ կռվեցին ու դուս գնացին։ Տղերքանց մեկը մյուսներին ձեռ բերեց ու սովորցրեց՝ որ էս կռվողի գլխին օյին գան։ Նրանք էլ խոսք տվին, գիտեին գնալու վախտն էլ։

Մեկ սել ուզեցավ մտնի քաղաքը, ղարավուլը ձեն տվեց։— Ուստի՞ ես գալիս, անունդ ի՞նչ ա։— Լ. քաղաքիցն եմ գալիս, անունս էլ Մեկղրաղանի ա։— Մեկ սել էլ էկավ. սալդաթը հարցրեց, էկողը պատասխան տվեց։ — Լ. քաղաքիցն եմ գալիս, անունս էլ Էրկուղրաղանի ա։ Սալդաթի ջիգրն էկավ. էս ինչ բան ա, մեկղրաղանի՞, էրկուղրաղանի՞. ուզում են թագավորի սալդաթին օյին գան, գլուխը փչե՞ն, տնազ անեն, ու սկսեց գլուխը քարեքար տալ, գոռալ, թոզ դուման անել, ամա էկողը էլի սիրտն առավ ու անց կացավ։ Մեկ էլ որ լսեց սալդաթը՝ թե մեկ նոր էկողի անունն էլ Իրեքղրաղանի ա, ուզում էր՝ որ մաղերը պոկի, էկողին բռնի։ Բայց փողով, բանով խաթրն առավ սա ու յախեն ձեռից հանեց։ Էս իրեք անուններն էլ շինովի էին։

Հմիկ չունը կապի, սալդաթին բա՛ց թող. չունքի իսկ ճամփորթն էկավ, որ անունը Զորսղրաղանի էր, ու էն տղեն էր, որ կռիվ էր արել։ Հենց անունն ասեց թե չէ, սալդաթը կապը կտրեց, ոտին, գլխին քոթագելով քաշեց նրան, ղարավուլխանեն քցեց ու էնքան չթողաց, մինչև ինչ քաղաքից որ էկել էր, վկայություն բերել տվին, որ ճշմարիտ նրա անունն էնպես էր։

Սրամիտ առածք (մասալեք)

54

Մեկ զորական ծառայությունը որ պրծավ, դուս էկավ, գնաց իրանց մինիստրի (նախարարի) մոտ ու հարցրեց.— Պարոն մինիստր՝ ի՞նչ կանեք, որ մեկ մարդ ձեզ հարամզադա կանչի։— Ի՞նչ,— պատասխանեց մինիստրը,— ի՞նչ կանեմ, կհրամայեմ՝ որ նրան հաց ու ջրի աբով բանդը քցեն։— Շատ բարի,— խոսքը եդ առավ աֆիցերը,— ես ձեզ էդպես եմ կանչում, թե մարդ ես, խոսքիդ դրուստ կա՛ց, չունքի ես հաց չունիմ։

Էս խելոք մտածմունքի վերջն էն էլավ, որ աֆիցերին պենսիա (թոշակ) կարգեցին, որը որ առաջուց շատ էր խնդրել, բայց բանի տեղ չէին քցել, ու ասածը լվանի չէին դրել։

Էսպես մինիստր քիչ կըլի՝ սի՛րելի. չըլիմ չիմանամ դու էլ ուզենաս մեկ տեղ էս հունարը բանացնել։ Դեռ տուն չմտած, բունը կմտնիս։

55

Էլի էս կերպով մեկ քաջ աֆիցեր Ֆրիդրիխ մեծի մոտ, որ Փրուսիո թագավորն էր, իր կամքը առաջ տարավ։ Շատ անգամ էր թագավորիցը ողորմություն խնդրել, բայց հենց հրամայում էր, որ համբերի։ Մեկ օր էլ՝ ճարը որ հատավ՝ բռնեց շատ փիս փիս բաներ գրեց թագավորի վրա։ Գրողի անունը չկար. թագավորը հիսուն ոսկի խոստացավ, ով նրան գտներ։ Մյուս օրը էլի թագավորին պատահեցավ։— Ես ձեզ շատ եմ ասել, որ համբերեք,— ասաց Ֆրիդրիխ,— էս հաղաղին ձեզ համար ոչինչ չեմ կարող անիլ։

— Աչքիս վրա,— պատասխանեց աֆիցերը,— ամա էն փիս թղթի գրո-

ղը ն՛ս եմ, որ խոստացել եք, հիսուն ոսկի բաշխեք, ով նրան գտնի։ Ինչ պատիժ կուզեք, ինձ տվե՛ք, ամա էն փողը իմ օղլուշաղին տվեք, որ իր երեխեքանց համար հաց առնի։— Քո պատիժն էս ա, որ գնաս Շպենդաու բերդը։— Հույժ բարի, Ձերդ Մեծություն, բայց հիսուն ոսկին չի՛ մոռանաք։— Կհրամայեմ՝ որ քո կնգանը տան,— պատասխանեց թագավորը, ու էն բերդի կամենդանդին հրաման գրեց, որ ընչանք հաց չուտի, թուղթը բաց չանի, որ մինչև ճաշի վերջը գիր տանող աֆիցերը մեկ լավ տանջվի իր միջումը։

Ճաշից եդը հրամանագիրը բաց արին։ Միջումն է՛ս էր գրած։— Սրա բերողին էդ բերդի կամենդանդությունը տվի, ու ձեզ հրամայում եմ, որ գնաք Փոտսդամ, էնտեղի բերդը պահեք։

56

Էս երևելի թագավորի վրա մեկ օր էլ՝ էլի մեկ վատ թուղթ գրել, իր պալատի առաջին՝ մեկ պատից էին կպցրել։ Փանջարիցը որ մտիկ չարեց թագավորը, տեսավ, որ շատ բազմություն հավաքվել, ուզում են՝ որ էն թուղթը կարդան։ Ծառային ղրկեց, որ իմանա՝ թե ի՞նչ խաբար ա։ Ծառայն լեզուն կապ ընկած եդ էկավ, ու չէ՛ր համարձակում, որ բանի զորությունն իմաց անի։ Թագավորը շատ որ զոռ արեց, իմացավ ու հրամայեց, որ գնա թուղթը պոկի, ցած կպցնի, որ ամեն մարդ կարդա, չունքի տեղը բարձր էր։— Ես ու դու ըլեինք, գլուխ կպոկեինք թղթի տեղակ։

57

Մեկ օր էլ մեկ կռվում տեսավ՝ որ մեկ ֆրանցուզի սալդաթ (զորական) մեկ Փրուսսիո սալդաթի հետ՝ արինը աչքը կոխած՝ կռիվ էր տալիս ու ուզում էր, որ իր գլուխը պահի, թեպետ ամենևին հույս չուներ, որ պրծնի, բայց էլի չէ՛ր ուզում իրան ձեռ քցի, ու իր մահը աչքի տակն էր առել։ Թագավորը մոտացավ նրանց ու ձեն տվեց ֆրանցուզին։— Աֆարիմ՝ քաջ զորական՝ դեռ չե՞ս հաղթվել։— Չեմ հաղթվիլ,— պատասխանեց ֆրանցուզը,— Ձերդ Մեծություն, թե դուք ըլիք իմ գլխավորը։

58

Մեկ անգամ էլ թագավորը իր բաղումը ման էր գալիս։ Մեկ հոլլանդացի վաճառական ներս մտավ։ Թագավորը հարցրեց նրան, թե բաղը տես-

նիլ կուզի։ Վաճառականը նրան չճանաչելով, պատասխանեց՝ թե չի՛ գիտի հրաման կա՞ բաղը տեսնելու, երբ թագավորը էնտեղ ըլի։— Դրա համար հեչ մի՛ նեղանաք,— պատասխանեց Ֆրիդրիխ,— ես ձեզ ման կածեմ։

Բոլոր լավ տեղերը նրան շհանց տվեց ու հարցրեց՝ թե նրան դուր են գալիս, թե ո՛չ։ Ինչ ժամանակ ամեն բանը տեսավ, պրծավ, քիսեն հանեց վաճառականը, որ նրան փող բաշխի։— Աստված մի՛ արասցե,— ասեց թագավորը,— մենք հրաման չունենք, որ մեկ ղատ վերցնենք, եթե թագավորն իմանա, մեզ սաստիկ պատիժ կտա։

Վաճառականը շնորհակալություն արեց քաղաքավարությամբ ու հենց մի քիչ հեռացավ թե չէ, բաղմանչին ռաստ էկավ, ու նրան թնդված ձեն տվեց։— Ի՞նչ եք էս տեղ, թագավորը բաղումն ա։ Վաճառականը պատմեց, ինչ որ անց էր կացել, ու շատ գովեց, թե էն ի՜նչ քաղաքավարի մարդ էր, որ նրան բաղը ցույց էր տվել։— Բաս դուք չե՞ք գիտում՝ թե նա ո՞վ ա,— ասեց այգեպանը,— թագավորն ինքն ա։

Թո՛ղ կարդացողն իմանա, թե խեղճ հոլլանդացու զարմանքը ի՞նչքան կըլեր։

59

Մեկ անգամ էլ Ֆրիդրիխ զանգակը քաշեց, բայց ո՛չ ոք չէկավ։ Դուռը բաց արեց, տեսավ՝ որ ծառայն՝ աթոռի վրա նստած՝ քունը տարել էր։ Թագավորը գնաց մոտը՝ որ զարթեցնի, տեսավ՝ որ մեկ թուղթ ջիբիցը երևում ա։ Ուզեց՝ որ իմանա թե ի՞նչ ա գրած, առավ ու կարդաց։ Էս թուղթը մերն էր գրել ու շատ շնորհակալություն էր անում, որ նա իր տոնլուղի (ռոճիկ) կեսը ուղարկել էր՝ որ նրան քոմակ անի։ Հենց կարդաց պրծավ՝ թագավորը կամաց էլ եդ իր օթախը գնաց ու մեկ կապ ոսկի մոր թղթի հետ իր ծառայի ջեբը քցեց։ Էլ եդ որ օթախը գնաց՝ էնպես սաստիկ քաշեց զանգակը, որ ծառայն վեր թռավ ու ներս մտավ։

— Լավ քաղցր քուն էիր մտել,— ասեց նրան թագավորը։ Ծառայն ուզում էր ներողություն խնդրի։ Էնպես շշկլած որ ձեռը ջեբը տարավ, մնաց սառած, որ տեսավ՝ թե ինչ կա ջիբումը։ Փողի համը քաղցր ա, բայց էս անգամ նրան իրանն իրան հասցրեց։ Ջիբիցը հանեց, ռանգ մռանգը թռած, սպրդնած, ու առանց մեկ խոսք ասելու, արտասունքը գետի պես էր թափում։— Ի՞նչ ա պատահել քեզ,— հարցրեց թագավորը։— Ա՜խ՝ Ձերդ Մեծություն, ինձ ուզում են կորցնեն,— պատասխանեց ծառայն ու չոքեց,— չեմ գիտում՝ էս ի՞նչ փող ա, որ ջիբումս ա։— Սիրելի՝ ասեց թագավորը,— Աստված շատ անգամ մեզ քնած տեղն էլ ա իր ողորմությունը ցույց տա-

լիս։ Դրկի՛ր մորդ, ինձանից շատ բարով արա, ու նրան հավատացրու, որ ես միշտ ձեր երկուսի հոգսն էլ կքաշեմ։

60

Էս անվանի թագավորը իր ծառայից հետ շատ լավ էր յոլա գնում։ Իր վերջին հիվանդ վախտը՝ կես գիշերին վերկացավ, նոքարների մեկին ներս կանչեց՝ որ դուրսը ղարավուլ էր քաշում, ու հարցրեց՝ թե ո՞ր սհաթն ա։ Երկու սհաթն ա, պատասխան տվին։— Էլ չեմ կարող քնիլ,— ասեց թագավորը՝— տես՝ թե ծառայքը զարթուն են, թե քնած ըլին, չի՛ վեր կացնես, չունքի շատ բեզարած կըլին։ Թե Նեյմանը զարթուն ըլի (իր փեշղամաթքյարը), նրան միայն ասա՛, թե դու էնպես ես կարծում, որ ես շուտով վեր կկենամ։ Բայց լսեցի՞ր, մեկին էլ ա չի՛ վեր կացնես՝ թե քնած ըլին։

Էս թագավորը սովորություն ուներ իր ծառայից հետ շատ անգամ զրից տալ։ Իր վերջին հիվանդ վախտը մեկի հետ սկսեց էսպես զրից տալ։

Թագավորը։ Ո՞ր սհաթն ա։

Ծառայն։ Կես գիշերը։

Թագ<ավորը>։ Քունս չի՛ տանում, մեկ պատմություն արա՛ ինձ։

Ծառ<այն>։ Ի՞նչ կարեմ պատմիլ Ձեր Մեծությանը։ Ես մեկ խեղճ հիմար մարդ եմ, ու ո՛չինչ չգիտեմ։

Թագ<ավոր>։ Ո՞րդիանց ես։— Մեկ գեղից։— Հերնըմեր ունի՞ս։— Մեկ պառավ մեր ունիմ։— Ընչո՞վ ա ապրում։— Բուրդ մանելով։— Ի՞նչքան ա դատում օրը։— Օխտը շահի։— Էստով նա չի՛ կարող լավ օր քաշիլ։— Մեր տեղը շատ էժանություն ա։— Դու նրան ոչի՞նչ չես ուղարկում։— Մեկ քանի ռուբլի էլ ես եմ խարջլղ ուղարկում։— Շատ լավ ես անում, լավ տղա ես դու, ինձ համար շատ ես նեղություն քաշում, համբերի՛ր, ես քեզ համար բան կգտնիմ, թե աչքաբաց կըլիս։

Մեկ քանի օրից եղը էլի սրեն էս ծառային ընկավ։ Թագավորն ասեց.— գնա՛ փանջարի առաջը, քեզ համար էնտեղ բան եմ դրել։— Վաթսուն ոսկի էր դրած։— Ծառայն չէր կարծում, թե էսպես մեծ զումարը իրան համար կըլի, հինգ ու վեցը վերցրեց, ձեռումը բռնեց՝ որ թագավորին նշանց տա։— Էս էր, որ պտեի վերցնիլ.— հարցրեց։— Չէ՛,— պատասխանեց թագավորը,— բոլորը վեր առ, քեզ համար են, մորդ էլ ջոկ եմ մեկ քանի բան ուղարկել։

Բարի ծառայն լեղապատառ դուս վազեց, որ իմանա՝ թե մորն ինչ ա ուղարկել։ Ուրախությունիցը ուզում էր մեռնի, երբ իմացավ, թե թագավորը մորը 100 ոսկի պենսիա (թոշակ) էր կարգել՝ որ ամեն տարի տան։

61

Իր կենաց վերջին ժամանակը պատահում էր բավի անգամ, որ երկար էր քնում, ինքը չէ՛ր ուզում ու չափիցը դուրս նեղանում էր, էս պատճառավ հրամայեց որ իրան չորս սհաթին վեր կացնեն, ինչ կուզե որ ասի էլ։ Ծառայից մեկը որ նոր էր մտել թագավորի մոտ ղուլլուղ, մեկ անգամ ներս գնաց՝ որ էս հրամանը կատարի, թագավորն ասեց։— Թո՛ղ մի քիչ աչքս կպցնեմ, շատ բեզարած եմ.— Ձեր Մեծությունը հրամայեց ինձ՝ որ կանուխ գամ։— Հենց մեկ չարեք (քառորդ) սհաթ, քեզ ասում եմ։— Մեկ մինուտ (վայրկյան) էլ ա չե՛մ թողալ. չորս սհաթն է, պտիք վեր կենալ։— Շատ բարի,— ասեց թագավորը,— տեղիցը վեր կենալիս, շատ լավ տղա ես, տե՛ս ինչքան եմ սիրում քեզ, որ քո բանին էդպես մուղայիթ ես։

62

Օխտը տարվա կռվումը, որ Ֆրիդրիխ Ավստրիո հետ արեց, մեկ սալդաթ իր մեծավորիցը փախավ, էկավ նրա մոտ ու շատ հարկավոր թղթեր բերեց հետը, որ նրանցով թշնամու ահվալը լավ կարելի էր իմանալ։ Թագավորը հրամայեց՝ որ նրան հաց ուտացնեն ու հետո իր մոտ կանչիլ տվեց։— Ես չեմ կարող քեզ իմ ծառայությունը վեր կալնիլ,— ասեց,— ի՞նչպես հավատամ է՛ն մարդին, որ իր մեծավորին էդպես մուխանաթ գտնվեց։ Քո արած ծառայության համար էս հարիր ոսկին վե՛ր կալ, էստիանց ռադ կորի՛ր, ու էլ մյուս անգամ իմ ղոնշունումը, կամ իմ երկրումը չերևիս, թե չէ կախիլ կտամ։

63

Մեկ անգամ էլ իր ղոնշունովը մեկ գեղի մոտ չադիր էր տվել։ Թշնամիքը հեռու չէին, ու մեկ բարձր տեղ ղարավուլ էին կանգնացրել։ Բայց չունքի թագավորին գեղիցը դուս գալիս չէին կարող տեսնիլ, չունքի մեկ խոր ճամփա էլ կար, էս տեղ էլ ղարավուլ դրին։ Թագավորը դուս գալիս իմացում տվեց ու գնաց որ ման գա։ Շատ շոք էր, ղարավուլը՝ որ պետք է թագավորի դուս գնալը իմաց էր արել, քունը տարել էր, չէր կարացել ու հենց է՛ն սհաթին աչքը բաց արեց, որ թագավորը մոտացել էր։

«Մի քիչ համբերի՛ր, Ձերդ Մեծություն, ձեն տվեց, իմ արևը գիտենա, չեմ թողալ՝ որ անց կենաս. սպասեցե՛ք, մինչև ղարավուլին իմաց անեմ, եթե ոչ՝ ինձ կբռնեն»։ Թագավորը սալդաթի ձենի վրա իրանից գնաց ծի-

ծաղու։ «Շատ բարի,— ասեց,— շուտ գնա, ես կմնամ»։ Սալդաթը մի քիչ տեղ հեռացավ, էլ եդ էկավ ու գոռաց. «Խոսքիցդ դուս չի՛ գաք հա՝ իմանում եք, ու տեղըներիցդ չշարժիք, մինչև եդ դառնամ»։—«Գնա՛,— ասեց Թագավորը,— ես քեզ խոսք եմ տալիս, մինչև քո գալը էս տեղ մնամ»։ Ճշմարիտ էնքան մնաց, որ նա եդ էկավ, հետո ծիծաղելով ճամփա ընկավ։

64

Գիտուն մարդի մեկը գնաց, որ իր բարեկամին տեսություն անի։ Դուռը որ ծեծեց, բարեկամը ծառային կամաց հրամայեց, որ ասի թե աղեն տանը չի՛։ Բայց գիտունը իմացավ ու անսաս եդ դարձավ։ Մեկ քանի օրից հետո բարեկամը գնաց գիտունի մոտ։ Հենց նա դուռը թրխկացրեց թե չէ, սա ներսևիցը ձեն տվեց՝ թե աղեն տանը չի՛։ Հենց իմացավ հանաք ա անում, էլի ծեծեց, էլի մի և նույն խոսքն իմացավ։— Ա՛յ խանիխարաբ, ախր դո՛ւ ես ասում, թե աղեն տանը չի՛, ի՞նչպես հավատամ,—ասեց բարեկամը։— Պատվելի՝ ընչե՞ն ա, որ ես քո ծառային հավատացի, դու ինձ չե՛ս հավատում,— պատասխանեց գիտունը։ Էս մեր Մոլլա Մասրադնի իշի փոխ ուզելու նման ա, ով լսել ա, կիմանա։

65

Մեկ հողագործ գնաց մեկ գեղ՝ որ էնտեղ կենա ու փոքր ժամանակի շատ բարեկամ ճարեց։ Մեկ տարուց եդև մեկ լավ կովը սատկեց։ Շատ տխրեցավ, բայց խեղճի ցավը դհա շատացավ, չունքի մեկ քանի ամսից եդև էլ՝ կնիկը մեռավ։ Աշխարքը քանդվեց գլխին, էն հալին էր, որ ո՛չ աչքը քուն էր գալիս, ո՛չ բերանը հաց մտնում։ Հարևանները էկան՝ որ նրան մխիթարեն։

— Սիրելի՝ ասեց մեկը,— ճշմարիտ է, քո ցավն անտանելի ա, ո՞վ էնպես ազիզ ջան կորցնի ու հոգին հետը չգնա, բայց ինչ պտի արած, փառք Աստուծո, դու դեռ ջահել ես, մալ դոլվաթ ունիս, քեզանից կնիկը պակաս չի՛ ըլիլ, դարդ մի՛ անիր։ Իրեք աղջիկ ունեմ, իրեքն էլ վարդի պես բացված, ղալամով քաշած, որն ուզենաս, քեզ փեշքաշ, աչքիդ սիրածը քոնն ա։— Մեկն էլ իր քիրը առաջարկեց, մյուսը քվոր աղչիկը, թոռը և այլն։— Լավ տեսնում եմ,— ասեց սգավորը,— որ էս գեղումը շատ լավ ա էլել կնիկը կորցնիլ, քանց կովը։ Երկու օր չի կա, կնիկս մեռել ա, ուզում եք՝ որ մեկի տեղակ հինգը կապեք գլխիս, բայց կովս որ սատկեց, մեկն էլա չէկավ, թե մեկ ուրիշը նրա տեղ ինձ տա։

66

Կոնրադ Գ. Թագավորն Գերմանացոց 1138 թվին մեկ քաղաք էկավ չորս կողմը բռնեց։ Էս քաղաքի իշխողը չէր ուզում նրան հնազանդի ու միշտ նրա հրամանին ընդդեմ էր կենում։ Թագավորը բարկացել, ուզում էր՝ որ սաղ քաղաքը կրակ տա, էրի, բայց օղլուշաղին խեղճն էկավ, հրաման արեց՝ որ ինչքան կնիկարմատ կան, դուս գան, ու ինչ թանկագին բան ունին, հետըները վերցնեն, ու օրթում կերավ, որ նրանց մաղին դիպչող չըլի։

Քաղաքի մեծի կնիկը էս բանը որ լսեց, ուզեցավ որ մարդին ազատի, մյուս բաները կորչում են, կորչեն։ Նա իր մարդին շալակեց, մյուս կնանիքըն էլ որ էս տեսան, նրանք էլ սրա օրինակին հետևեցին և իրանց մարդիկը շալակներին, մեծի կնիկը առաջներին էսպես բեռնավորված որ դուս չէկան, թագավորը մնաց զարմացած։ Տված խոսքը եդ ուտել չէ՛ր կարող, էնպես սիրտը շարժեց՝ էս որ տեսավ, որ կնանոց խաթեր՝ մարդքերանց մեղքն էլ բաշխեց ու ազատ արեց։

67

Մեկ թագավոր որսի ժամանակին իր մարդքերանցիցը հեռացավ, առաջը մեկ տուն էկավ, մտավ ներս, որ փոքր հանգստանա։ Հենց ներս մտավ թե չէ, տեսավ՝ որ չորս մարդ էնտեղ թեք են ընկել, որպես թե քնած են։ Առաջինը տեղիցը վեր կացավ, թագավորի վրա էկավ, ու ասեց՝ որ սհաթն իրան տա, ու առավ։ Երկրորդն էլ ասեց՝ թե երազումը տեսա, որ շինելդ ինձ խիստ սազ էր գալիս, նա էլ էն առավ։ Երրորդն էլ քիսեն ուզեց։ Չորրորդն էլ ասեց՝ որ բեդամաղ չըլի, որ նա նրան պտի թալանի։ Թալանելիս տեսավ՝ որ մեկ ոսկե զնջիլ կար ծոցումը, ու վրիցը մեկ շվի էր կախ տված, նա էլ էս էր ուզում վերցնի. «սիրելի՛ք՝ ասեց թագավորը՝ էս շվին դեռ չառած, թողեք՝ որ ես ձեզ սրա հունարը ցույց տամ», էս հադաղին սկսեց, որքան ջանումը զորություն կար, շվացնել։

Թագավորի մարդիքը՝ որ նրան ման էին գալիս, հենց էս ձենն իմացան թե չէ, իսկույն ական թռթափել տուն ընկան, ու աչքըները սառեց՝ որ տեսան՝ թե թագավորը ի՞նչ ընկերների մեջ ա ընկել։ Փորձանքիցը որ պրծավ՝ սկսեց թագավորն ասիլ.— Սիրելի՛ք՝ էս մարդիքը երազ են տեսել, ինչ որ սրտներն ուզում ա, անեն։ Հմիկ էլ երազ տեսնելու նոբաթը իմն ա։— Փոքր աչքը խփեց ու էլ եդ բաց արավ։— Երազում տեսա՝ որ էդ չորսիդ էլ կախ էին տվել,— ասեց ու չորսին էլ հենց էնտեղ կախ տալ տվեց։

Մեծին Պետրոս Ռուսաց կայսերն էլ էս տեսակ մեկ բան պատահեցավ։ Նրա մեծամեծքը չէին ուզում, որ նա էնպես նոր նոր բաներ անի, խոսքը մին արին, որ մեկ տեղ կրակ քցեն ու երբ թագավորը դուս գա էնտեղ, տան, սպանեն։ Էն իրիկունը՝ որ էս մասլահաթն անում էին, թագավորը մեկ տեղ ղոնաղ էր։ Երկու մարդ էկան, խնդրեցին՝ որ թագավորին տեսնին, չէին թողում, բայց էնքան արին՝ որ թագավորը ինքը դուս էկավ։ ընկան ոտները ու ամեն բանը պատմեցին։ Թագավորը հրամայեց՝ որ նրանց պահեն, ինքն էլ եդ տուն մտավ, մեկի էլա մեկ խոսք չասեց ու սկսեց իր ուրախությունն անիլ։

Ձմեռ ժամանակն էր՝ մեկ աֆիցերի հրամայեց՝ որ իր դասթովը գնա էն ասած տունը, ինչ տեղ մասլահաթ էին անում։ Տասը սհաթը որ թամամեց, թագավորն հրամայեց՝ որ մեկ շանա բերեն ու ասեց մյուսներին՝ թե գնում ա, փոքր ման գա։ Էն տունը որ հասավ, տեսավ՝ որ ճրագները վառած, բայց դռանը մարդ չկար, հենց կարծեց՝ թե սալդաթները բակն են մտել, էնտեղ էլ մտավ, մարդ չկա։ Ի՞նչ անի, եդ դառնա, ի՞նչպես կարելի էր էնպես քաջ մարդը էս բանն անի։

Էլ չի՛ մտիկ արեց, անվախ, անահ ներս մտավ։ Նստողների սրտումը հայտնի բան ա, որ հազար բան անց կացավ, բայց թագավորը, որպես թե բանից խաբար չի, էնպես ուրախ ուրախ՝ ձեռները տրորելով՝ ասեց.— Իմ ո՛րդիք, փոքր ուզում էի ման գամ, ցուրտն ինձ զոռ արեց, փանջարի տակովն՝ որ անց կացա, ու էս չրաղդանը տեսա, իմացա՝ որ իմ որդիքը էստեղ ժողոված քեֆ կըլին անում, ուզեցա՝ որ ես էլ ձեր միջումն ըլիմ, էստուր համար ներս էկա, ներե՛ք։ Հետո սրա քեֆը հարցրեց, նրա հետ խոսաց, էնքան խոսքով արեց՝ որ ոտի ձենն իմացավ։ Էս միջոցին նստողներից մեկը աչքով արեց՝ որ լավ վախտն ա։— Շա՛ն որդի, գոռաց կայսրը, թե ձեր վախտն ա, իմն էլ ա,— ասեց ու թուրը հանեց։ Ասողի գլուխը թպրտում էր, որ դուռը բաց արեց, աֆիցերին կանչեց։ Էլ ի՞նչ կըլեր նրանց հալը։

Աֆիցերը որ ներս մտավ, է՛նպես մեկ սիլլա դիպավ երեսին, որ աչքերը չախմախին տվին, կայսրը բարկացավ՝ թե իրան վախտին չի՛ էկել։ Սհաթը հանեց խեղճը ու կայսերը ցույց տալով՝ ասեց.— Ձերդ Մեծություն, հրամայեցիք, որ 11 սհաթին գամ, տեսե՛ք ուրեմն՝ թե քանի՞ սհաթն ա։

Թագավորը տեսավ՝ որ ինքն ա շշկլել, շտապել, իսկույն ճակատը պաչեց ու չարագործներին բռնիլ տվեց։

•

Մեկ իշխան Ֆրանցուզ գնում էր նեմեցի թագավորի մոտ շատ հարկավոր գործի համար։ Չորս մարդ ուներ վրեն, էկավ մեր գեղ։ Ո՛չ տեղ կար, ո՛չ տուն։ Մեկ բերդ կար էնտեղ։ Մեկ գեղըցու հարցրեց՝ թե էնտեղ քնիլ կարելի՞ ա։ Գեղըցին ասեց, որ էնտեղ մարդ չի՛ կենում, մեկ ղարավուլ կա, էն էլ ցերեկն ա գնում էնտեղ, չունքի գիշերը՝ Աստված հեռու տանի՛, սատանեքը մարդի սաղ սաղ ուտում են։ «Է՜հ, սատանե՞քը, էդպես հիմար բանը մի՛ ասիլ, ես էդպես դարդակ բանի չե՛մ հավատալ, ու թե կուզես, թո՛ղ իմ մարդիքն էստեղ քո տանը մնան, ինձ մեկ ճրագ տո՛ւր, ես մենակ կքնեմ էնտեղ, տես թե սատանեքանց գլուխն ի՞նչ կբերեմ»։

Ի՞նչ պետք է արած, ասածը չլսեց ու ճրագն առավ, գնաց բերդը՝ կրակը չաղ արեց, չիբուխն ու թամբաքուն, երկու բութիլկա գինի էլ դրեց մոտը, ու չորս լցրած փշտով էլ առաջին։ Էսպես մեն մենակ նստած՝ չիբուխ էր քաշում, կես գիշերը հենց անց կացավ, մեկ սաստիկ զնգզնգոց էկավ ու շատ վախտ չքաշեց, մեկ այլանդակ պատկեր ներս մտավ, երես, գլուխ ծածկած, ու պինդ ոտները փոխելով՝ նրա վրեն էկավ ու ձեռով արեց՝ որ վեր կենա հետը գնա։ Քաջ իշխանը երկու փշտով գոտիկը խրեց, մեկը ջեբը դրեց, էն մինն էլ աջու ձեռին, շամադանը ձախու ձեռին բռնած, եդևիցը գնաց։ Էկող պատկերը սանդուխտը վեր էկավ, բակն անց կացավ ու մեկ ծառոտ տեղ մտավ։ Հենց էս ծառերն էլ անց կացան, բիրադի գետինը բաց էլավ ու իշխանը ընկավ մեկ խոր գուբ։

Իր հիմարությունը նոր միտն ընկավ։ Առաջին մեկ մաղարա բաց էլավ, ու տեսավ՝ որ ոչ թե սատանեքանց, այլ տասներկու ավազակի ձեռն ա ընկել, որ մասլըհաթ էին անում, թե ի՛նչպես սպանեն իրան։ Նրանց խոսակցությունից իմացավ, որ սրանք ղալբ փող շինող էին։ Իշխանը՝ որ տեսավ՝ թե ինքը ոչխարի պես գիլանոնց ձեռն ա ընկել, էլ չարա չկա, բերանը բաց արեց ու խնդրեց՝ որ իրան էլ հրաման տան, մեկ երկու խոսք էլ ինքն ասի։ Համաձայնեցին նրանք, ու ասեց։— Իմ էստեղ գալը դուք էլ կասեք՝ որ շատ հիմարություն էր, ամա որ լավ միտք անեք, կարծեմ որ հավատաք, թե ես պակաս մարդ չեմ, ու իմ ձեռիցս էլ բան կգա։ Դուք լավ գիտեք՝ որ անպիտան մարդը սիրտ չի անիլ էսպես տեղը մտնի։ Ես ձեզ մեկ խորհուրդ կասեմ ու իմ անունովը օրթում կուտեմ։ Մեղք չե՞ք համարիլ էնպես մարդի սպանեք, որ ձեզ երբեք չի ուզեցել վատություն անի։ Սրանից ղայրու միտք արե՛ք՝ թե որ ինձ սպանեք, դրանից ի՛նչ դուս կգա։ Հետո շատ հարկավոր թղթեր ունիմ, որ իմ ձեռովս պտի թագավորին տամ։ Չորս մարդ ունիմ գեղումը, ես որ կորչիմ, ախր որ նրանք կասեն՝ թե ո՞ւր

գնացի ու վերջ ամենայնի ինձ ման կգան ու տակուվեր անելով՝ հալբաթ որ ձեր տեղն էլ կիմանան։ Էն ժամանակը դուք լավ գիտեք, թե ձեր վերջըն ի՞նչ կըլի։ Ինձ թողե՛ք, ես իմ պատվովս օրթում եմ ուտում, թե որ ձեր գլխին մեկ բան գա, Աստուծո առաջին սևերես մնամ։

Ավազակները՝ որ էս խոսքն իմացան, ասեցին իրանց մտքումը, որ էնպես մարդի խոսքին հավատալու ա։ Ավետարանը մեջ բերին, օրթում տալ տվին, որ մարդի բան չասի։ Նրան որ բաց թողին, մյուս օրը պատմեց գեղըցուն՝ թե ճշմարիտ նա էլ էնպես հրաշք տեսավ բերդումը, որ մարդ ահու կմեռներ։

Տասներկու տարուց եդը մեկ օր էս իշխանը իր պալատումը շատ ղոնաղներ ուներ ու քեֆ էր անում, էկան, ասեցին՝ թե մեկ մարդ երկու ձի ձեռին կարմնջի վրա կանգնած՝ ուզում ա, նրան տեսնի, ու ներքև չի՛ գալիս։ Բոլոր ղոնաղները անկաջները խլշացրին, որ իմանան՝ թե էս ի՛նչ բան ա։ Հենց իշխանը իր բարեկամները եդևին մոտացավ, էն մարդը ձեն տվեց՝ որ նրանց հեռացնի, չունքի իրան հետ թաքուն խոսք ուներ։ Հենց նրանք հեռացան, նա սկսեց ասիլ՝ թե էն մարդիքը, որ տասներկու տարուց առաջ մաղարումը քեզ ռաստ էկան, ու դու էլ խորհուրդ ասեցիր, նրանք են ինձ ղրկել քեզ մոտ՝ որ շնորհակալություն անեմ քեզանից, որ դու էնպես պատվելի մարդ էիր, որ տված խոսքդ պինդ պահեցիր։ Նրանք էնքան փող են դատել, որ հմիկ կարող են ապրիլ ու էս երկրիցն էլ դուս են էկել։ Էս ձիանքը նրանք են ուղարկել քեզ փեշքաշ։

Էս ասեց թե չէ էն ձիանքն էնտեղ թողաց, իրանը մեկ ծառից էր կապել, կայծակի պես նի էլավ ու ական թոթափել աներևութացավ։ Հետո սկսեց իշխանը բոլոր անց կացած բանը մի առ մի իր բարեկամներին պատմիլ։ Ով լսում էր, դող էր ընկնում ջանը, թե ինչ սրտի տեր ա էլել նա։ Սրանից հետո տեսան՝ որ հիրավի բերդումն էլ սատանա չի՛ ման գալիս։ Շատ բանին էլ էսպես մեկ պատճառ ունի, բայց չգիտեցող մարդը՝ սատանին ա մեղ դնում։

70

Մեծն Լուդովիկոս, ֆրանցուզի թագավորը՝ իր պալատումը ման էր գալիս, առավոտ էր ու դեռ պալատականքը չէին էկել ու իր ծառայքն էլ դես ու դեն էին գնում, որ իրանց ծառայությունը կատարեն։ Էս միջոցումը տեսավ՝ որ <մեկ> մշակ մարդ մի սանդուխտ վեր ելած, ուզում էր՝ որ մեկ մեծ ջահ վեր բերի, բայց քիչ էր մնացել՝ որ շլինքը հետը կոտրի, էնքան բարձր էր ու մեծ։

— Ջե՞ք տեսնում, որ ձեր սանդուխտը կարճ ա ու տեղ չի՛ հասնիլ,— ասեց թագավորը,— լավ վախտի վրա հասա՝ որ բռնեմ ու քեզ օգնություն անեմ։ Թե չէ քոնը քեզ կհասներ։

— Շատ շնորհակալ եմ,— ասեց մշակը՝ որ թագավորին չէր ճանաչում,— խնդրում եմ՝ որ ինձ ներես, որ քեզ աշխատություն տվի։ Ինձ շատ մեծ լավություն կանեք, թե քոմակ անեք։ Ընկերներս բոլոր ինձ թողել են, է՛ն պատճառավ, որ էս օր մեկ էլ չի պետք է գա։

Էն ահագին ոսկե ջահը վեր բերեց, ուսուլով վեր էկավ, ձեռն էլ մի քիչ թագավորի ուսին դրեց, որ տակին նարդիվանը բռնել էր, մեկ խոր էլ գլուխ տվեց, շնորհակալություն արեց ու դուս քաշվեց։

Սաղ գիշերը թագավորի պալատումը հենց է՛ն էին խոսում, թե ի՛նչպես սիրտ էր արել գողը ու աշխարքի աչքի առաջին էնպես թանկագին, ծանր ջահը գողացել։

Քաղաքապետին հո՝ վաղուց իմաց էին արել։ Թագավորը սկսեց բարձր ծիծաղալ ղալումը ու ղայիմ ձենով ասեց.— Ես կերթամ, քաղաքապետին կխնդրեմ՝ որ էս բանը տակով անի, որ մարդ չիմանա։ Ջունքի գողը պատժելիս, ընկերին էլ պետք է պատժած, ու ե՛ս էն գողի սանդուխտը բռնեցի։

Կարդացողը կիմանա՝ թե լսողների զարմանքն ու ծիծաղը ի՛նչպես իրար կխառնվեին։

71

Մեծն Տիգրան, անվանի թագավորն Հայոց մեկ օր ֆորս անելիս, մեկ քարի վրա մեկ սև ղարալթու տեսավ ու հենց իմացավ՝ թե արծիվ ա. նետը լարեց, ղարալթուն վեր ընկավ. ձին չափ քցեց՝ որ ֆորսը բռնի, բայց ա՞խ՝ ֆորսի տեղ՝ մեկ ութ տարեկան երեխա արնումը շաղաղվել ու ողորմելի մայրը, որ մոտին քնած էր էլել, վրեն ընկել, իրան կտրատում էր։ Մեծահոգի թագավորի գլխին կրակ վառվեցավ. իսկույն ձիուցը վեր էկավ. էն կնկա ոտներն ընկավ, ու հրամայեց՝ որ մեկ կշիռ բերեն։ Մեկ թայումը իր թուրն ու երեխեն դրեց, մյուս թայումը՝ էն քաշովը ոսկի լըցնել տվեց ու ասեց։— Քո՛ւյր իմ, էս թուրն ու քո որդին, էս նրա չափովը ոսկին, էրեխիդ ես սպանեցի անգիտությամբ։ Կուզես, թուրն ա՛ռ, շլինքս տո՛ւր, կուզես ոսկին վերցրո՛ւ, որ քո գլուխն էլա պահես, ես լավ գիտեմ, որ դու քո ազիզ զավակը աշխարքի հետ չես փոխիլ. ամա ի՞նչ անեմ, չար սհաթն ռաստ բերեց էս բանը, բայց էլի կամքը քոնն ա, ինչպես ուզես, էնպես արա՛։

Ի՞նչ պետք է աներ ողորմելի մերը. ինքն էլ տեսավ՝ որ թագավորը կամոք չի՛ արել, ընկավ ոտները լալով ու ասեց.— Իմ աստղս խավարեց՝ թագավոր, բայց ի՞նչ անեմ, քո ոտի հողն եմ, էդ մեծասրտությունը՝ որ ղուրգու արիր, ի՞նչպես կթողա, որ ես իմ միայն որդու արինը քո գլխիդ բան չանեմ։

Էս օրից սկսած՝ էն կնիկը էլ թագավորի դռնիցը չի՛ հեռացավ։

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԵՐ ՈՒ ՄԵԾԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ

Մեկ ջահել տղա, անունը Ռոբերդ՝ մեկ ծովի ղրաղի սպասում էր, որ էկող, իր նավլումը նստող ըլի, որ տանի, ման ածի։ Մեկ անծանոթ մարդ էկավ, նստեց ու էլ եդ սկսեց դուս գնալ, չունքի կարծում էր՝ թե նավի տերն էնտեղ չի՛։ Դուս գնալիս ասեց՝ որ չունքի նավչին էնտեղ չի, նա գնում ա, որ ուրիշ նավ բռնի։— Ողորմած տե՛ր,— ասեց Ռոբերդ,— էս ի՛մ նավն ա, թե կուզեք, տանիմ, ձեզ ման ածեմ։

— Ո՛չ, պարոն,— պատասխանեց անծանոթը,— հեռանալ չե՛մ կարող, մեկ սհաթ ա մնացել օրիցը, ես կուզեի մի քիչ ծովի երեսին ման գամ, որ իրիկվան հովն ու գեղեցկությունը վայելեմ։ Բայց զարմանքն ինձ կալել ա, քո ո՛չ ձենն ա նավչու ձենի նման, ո՛չ դեմքդ, ո՛չ խոսակցությունդ, էս ի՞նչպես բան ա։— Հիրավի եք ասում, ես նավչի չեմ, բայց ուզում եմ, որ կիրակի ու տոն օրերը փոքր փող դատեմ,— ասեց տղեն։— Վա՜յ, վա՜յ… էդ սիրուն պատկերը, էդ քաղցր լեզուն, էդ ջահել հասակն ունենաս, ու էդ- ւյես աչքածակ, ազահ ըլիս, ափսոս չի՛ քո անմեղ հոգուն, քո ջիվան արե- վին։ Ով կիրակի օրը կանհանգստանա, դու քեզ փողի համար տանջո՞ւմ ես։

— Ա՜խ՝ ողորմած տե՛ր՝ թե իմանաք, ինչն ա ստիպում ինձ՝ որ ես էս բանը բռնում եմ, չե՛ք ուզիլ, որ էդպես խոսքերով դհա ավելի ցավացնեք ինձ ու չե՛ք կարծիլ, թե իմ բնությունը էդպես վատ ա,— պատասխանեց Ռոբերդ։— Կարելի ա՝ թե ասածս անիրավություն ա,— ասեց անծանոթը,— դուք մեկ բան էլա չե՛ք ասել ինձ, գնա՛նք, ման գանք, դու էլ քո պատ- մությունն արա՛։ Անծանոթը նստեց, նավն ընկավ ծովի երեսը։— Էլ ի՞նչ ես մտիկ անում, ասա՛, տեսնիմ, ի՞նչ ա քո ցավը։ Ասածներդ ինձ զար- մացնում են ու սիրտս քեզ համար շատ ա նեղանում։

— Ես հենց մեկ ցավ ունիմ, ա՜խ՝ մեկ, մեկ հե՛ր, էն էլ բանդում, ընչլում բռնված։ Ո՛չ ինքը ունի կարողություն, ո՛չ մենք մեկ ճար, որ նրան ազատենք։ Նա էս քաղաքումը դալալ էր։ Իր աշխատությունովը փոքր փող էր ձեռ բերել ու կամենում էր գնա Զմիռնա։ Ավազակները նավը ձեռ էին քցել և հորս էլ հետը տարել Եգիպտոս, ուր որ հերս էս րոպեին էլ

բռնված ա։ Երկու հազար ռուբլի ա նրա արնի գինը. ո՛չ նա է կարող իր գլուխը թափի, մեր ձեռին հո ո՛չինչ չկա։ Էս պատճառավ մերս, քուրերս գիշեր ցերեկ աշխատում ենք, ես էլ սաղ շաբաթը իմ ուսթի մոտ եմ ջանիս ջաֆա տալիս, կիրակի ու տոն օրեր էլ՝ ինչպես որ տեսնում ես, էս բանին եմ հետևում, որ մեկ բան շահվիմ։ Բացի գլխավոր հարկավոր բանիցը՝ ո՛չինչ չենք գործ ածում։ Մեր բնակությունը մեկ փոքր տուն ա։ Սկիզբը ուզեցա՝ որ գնամ, հորս տեղը ես մնամ, ու նրան ազատեմ, էն ա հազրվել էի, որ էս անեմ, չեմ գիտում ի՞նչ տեղից՝ մերս իմացել էր ու բոլոր նավավարներին զգուշացրեց՝ որ ինձ հետըները չվերցնեն։ Էս հալին մնացել ենք դուռն երեսներիս հետ արած։

— Բաղի վախտ հեչ խաբար ստանո՞ւմ եք ձեր հորիցը։ Գիտե՞ք՝ ում մոտին ա ձեր հերը ու ի՞նչպես ա նրա տերը հետը կառավարվում։

— Նրա տերը թագավորի բաղի վերակացուն ա, նրա հետ սիրով են յոլա գնում, ու նրան շատ զոռ չեն անում։ Բայց ի՞նչ օգուտ, մենք մոտին չենք, որ նրան մխիթարենք, նրա քոմակ անենք. նա մեզանից հեռու, ու նրա ողորմելի որդիքն ու կինը նրա կարոտովը մաշվում, էրվում ենք։— Ի՞նչ անունով ա հերդ էնտեղ կենում։— Անունը չի՛ փոխել, էլի Ռոբերդ ա.— Ռոբերդ. հ՜մ… բաղի վերակացվի մոտ։

— Էդպես ա՝ ողորմած տե՛ր։— Քո անբախտությունը սիրտս էրում ա՝ ա՜յ խեղճ տղա, բայց էդ սիրտը՝ որ դու ունիս, Աստված քեզ ձեռաց չի՛ թողալ. ես էլ էն կխնդրեմ Աստնից։ Թո՛ղ հմիկ մի քիչ հանգստանամ, քանի օրը մթնել չի՛։

Հենց մութը կոխեց թե չէ, ասեց՝ որ եդ դառնա. դուս գնալիս՝ մեկ քիսա դրեց Ռոբերդի ձեռն ու ինքը էլ չմնաց՝ որ նա շնորհակալություն անի, ական թոթափել հեռացավ։ Քիսումը 40 ավելի ոսկի կար։ Տղեն մնացել էր աչքը սառած, ու չէ՛ր գիտում՝ թե ի՛նչ մեծահոգի մարդ էր, որ էս լավությունն արեց։ Շատ էլ աշխատեց՝ որ նրա եդևիցը հասնի ու նրան շնորհակալություն անի, բայց ընդվայր։

Օխտը շաբաթից հետո՝ էլի սրանք մեկ իրիկուն նստած տանը, հաց էին ուտում, որ բիրադի դուռը բաց էլավ, և Ռոբերդի հերը՝ ոտ ու գլուխը նոր՝ տուն մտավ։ Ի՞նչ աչք, ի՞նչ սիրտ կըլեր, որ էսպես բանը տեսներ, իմանար ու չի՛ զարմանար։ Արտասունք ու ծիծաղ իրար խառնվեցին, հեր ու որդի ուրախությունիցն չէին իմանում, ի՞նչ անեն։ Իրար փաթաթված՝ մնացել էին կանգնած։ Բարեսիրտ հերը վերջ ամենայնի սկսեց շնորհակալություն անել իր կնկանիցը, որ էնքան փող ուղարկել, իրան թափել, իր ճամփի, նավի, շորի, ուտելու խարջը քաշել էին։ Չէ՛ր իմանում՝ թե նրանց նախանձն ու սերը ի՛նչպես գովի։

Մեկ նոր զարմանք էս տանըցոնցը բռնեց. մեկը մեկի երեսին մնացել էր պելացած։ Վերջ ամենայնի մերն սկսեց բերանը բանալ. Նա կարծում էր, թե բոլոր որդին կըլի արած։ Հորը պատմեց, թե նա ի՞նչպես էր վառվել ու հենց իրան գերի արին թե չէ, ի՞նչպես էր կամենում գնա, հոր սիրտը բռնի ու ինքը նրա ճամփեն փակեց։ Երկու հազար ռուբլի էր հարկավոր, որ նրան թափեին։ «Մենք փոքր բան ձեռք էինք քցել, շարունակեց մերը, ու շատ փայը որդու ձեռաց աշխատությունն էր։ Նա բարեկամներ էր ճարել, ասեց, որ նրան օգնել էին»։

Հերը մինչև էս խոսքը մնացել լուռ, ուշք ու միտքը հավաքած, գլուխը կախ արած, երեսը մթնած, ապա շուռ էկավ, աչքը քցեց որդու երեսն ու ասեց։— Տարաբա՛խտ որդի, էդ ի՞նչ ա քո արածը։ Ի՞նչպես պետք է իմ ազատությունը քեզ պարտական ըլիմ առանց փոշմանության։ Ի՞նչպես մորիցդ կծածկեիր էդ բանը, թե վատ կերպով ըլիս դատած էն փողը։ Քո հասակին, ա՜յ տարաբախտի, գերու զավակ՝ ի՞նչ կերպով պետք է էնքան բանը ձեռ բերեիր։ Սիրտս պատռում ա, որ մտածում եմ, թե քո որդիական սերը՝ քեզ էդ ճամփեն սովորցրել ա։ Թո՛ղ գերի մնայի, ձեզ չտեսնեի, ու իմ արինը հարամ փողով չառնվեր։ Իմ սիրտս հանդարտացրո՛ւ, ճշմարիտ ասա՛, թե բոլորս էլ պետք է մեռնինք, թե դու վատ ճամփով ըլիս էն փողը դատած։

— Միամի՛տ կացեք, հայր՝ ձեր որդին էդքան անարժան չի՛, որ էդ կեխտը վրեն կպցնի. ու հույս ունի, որ ձեզ ապացուցանի, թե ի՛նչքան բախտավոր է ինքը, որ ձեզ պես հեր ունի։ Էդ ես չեմ, որ քեզ ազատել եմ, մեր բարերարը գիտեմ՝ թե ո՞վ է։ Միտքդ գալի՞ս ա՝ մա՛յր իմ՝ էն անծանոթ մարդը, որ ինձ իր քիսեն բաշխել էր։ Որ ինձ էնքան հարցմունք արեց մեր մասին։ Կյանքս վեր կդնեմ ու նրան ման կգամ, կգտնիմ, ու Աստուծով նա էլ կգա, որ իր արած լավության պտուղը տեսնի ու ուրախանա։ Հետո պատմեց հորը՝ ինչ որ ծովի վրա անց էր կացել։

Ռոբերդի հերը էլի իր հին բարեկամներին տեսավ, բոլորն էլ ուրախ էին, նա չէ՛ր կարծում, թե իրան էնքան սիրում են։ Երկու տարի չքաշեց, էլի շենացավ, որդիքը տեղ ճարեցին, բոլորն էլ բախտավոր էին ամեն բանով, ամա նրանց հենց է՛ն էր սպանում, որ իրանց բարերարին, ազատողին էնքան վախտ չկարացին գտնել, որ իրանց շնորհակալությունն ու բախտավորությունը ցույց տան։ Վերջապես մեկ օր ծովի ղրաղին մենակ ման գալիս Ռոբերդի աչքը նրան առավ։

«Ա՜խ՝ ամենակարո՛ղ Աստված»,— հենց է՛ս նրա բերնիցը դուս էկավ ու ընկավ նրա ոտի տակը ու մնաց անշունչ։ Օտարականը վազեց, որ նրան ըռմակ անի ու պատճառն իմանա, թե ի՞նչ պատահեցավ նրան։ Վերջը որ

Ռոբերդ աչքը բաց արեց, ձեն տվեց լալով։ «Ի՞նչպես, տե՛ր իմ, ա՜խ ի՞նչպես չեք ինձ ճանաչում, ձեր կենդանացրածին, ձեր գերուն։ Մոռացե՞լ եք մկամ Ռոբերդի անունն ու նրա ընտանիքը, որ գերեզմանիցը հանեցիք, նոր հոգի տվիք, ու նրանց տարաբախտ հերը՝ էլ եդ իրան բաշխեցիք։ Մեր փրկի՛չ, մեր Աստված, ինչպե՛ս եք ուզում մեզ քարովը տալ, ու մեկ լսիլ էլ ո՛չ մեր դարդակ շնորհակալությունը, որ գիշեր ցերեկ մեր բերնիցը դուս ա գալիս։ Մեր արտասունքն ու օրհնությունը երկինքը հասավ, բայց մեր աչքը, մեր սիրտը մաշվեց մինչև էս օր, որ ձեզ չկարացինք տեսնիլ»։— Սխալվում եք՝ ա՛չքի լույս,— պատասխանեց անծանոթը,— էս ձեզ առաջին տեսնիլս ա, ձեզ չեմ ճանաչում, դուք էլ ինձ չե՛ք կարող ճանաչիլ, չունքի մեկ քանի օր ա, որ ես էս քաղաքն եմ էկել։— Շատ կարելի է,— ասեց Ռոբերդ,— բայց միտք արեք, որ էս քսան ու վեց ամիս ա, որ դուք էստեղ էիք։ Մտածեցե՛ք էն սեյր դուս գնալը ծովի վրա, էն ցավակցությունը՝ որ դուք իմ տարաբախտության համար ինձ ցույց տվիք, էն հարցմունքը, որ դուք արիք մեր դրության վրա ու մեր հալն իմացաք, որ մեր բարերարը դառնաք։ Իմ հոր ազատող՝ ի՛նչպես եք մոռանում, որ դուք մեր մեկ սաղ օջաղի ճրագ եք դառել, մեկ սաղ տուն ազատել, որ ո՛չինչ չի՛ ուզում, եթե ոչ ձեր ներկայությունը, ձեր տեսությունը։ Նրանց աղաչանքը, նրանց խնդիրքը ոտի տակ մի՛ տաք, ու էկե՛ք՝ որ ձեր աչքովը տեսնեք էն բախտը, էն փառքը, որ դուք եք մեզ տվել, էկեք՝ երեսս ձեր ոտի տակը, կամ սպանեցե՛ք ինձ էստեղ։

— Ես քեզ էն ա ասեցի՝ սիրելի՛՝ որ դուք սխալվում եք, ինձ չե՛ք ճանաչում։— Ձե՞զ չեմ ճանաչում,— պատասխանեց Ռոբերդ,— ձե՞զ — կո՞ւյր եմ մկամ. ձեր պատկերը էնպես ա սրտումս տպավորվել, որ ձեզ չճանաչեմ։ Աչքս գերեզմանումը որ հող դառած ըլի, էլի հոգիս ձեզ պետք է պաշտի, մեր տե՛ր, մեր պահապան։ Աստուծո սերը, խնդրում եմ, որ գաս, յա ինձ սպանես։— Էս խոսքումը ձեռիցը բռնեց ու զոռով ուզում էր, որ նրան ձգի, հետը տանի։ Աշխարքը գլխըներին հավաքվել էր։ Վերջապես անծանոթը սկսեց թունդ ձենով նրան ասիլ։— Պարոն՝ տեսնում եմ, որ իմ գլխի ուզում ես թամաշա սարքել։ Ի՞նչ նմանություն է քեզ էդպես խաբել։ Խելքդ հավաքի՛ր ու գնա՛ ձեր տունը, որ հանգստանաս, չունքի շատ բեզարած ես երևում։— Ա՜խ՝ տեր Աստված՝ էսպես էլ անսրտություն կըլի՞, ձեն տվեց ջահել տղեն.— մե՛ր օջաղի բարերար՝ ընչի՞ համար ես էսպես մեզ սպանում, ընչի՞ համար չես ուզում մեկ սաղ տուն բախտավորես, որ ձե՛զ են պարտական, ձեզ են սրտով ուզում։ Նհա՜խ տեղն եմ միթե ոտիդ տակն ընկել։ Ի՞նչ անեմ, որ քո սիրտը ռահմ ընկնի, որ գաս մեզ տեսնիս։ Մենք էլ մեր պարտականությունը վճարենք։ Էսքան ժամանակ է, որ մենք քեզ

ապասում ենք։ Ա՜յ բազմություն, որ կանգնած մտիկ եք անում, թե ի՞նչ ա իմ հալը, տեսնում եք, թե ի՞նչպես եմ գժվել, թող ձեր սիրտն էլ ա ցավի, բարեխոս էլեք, որ սա ինձ մեկ ճար անի, ու էսպես չմնամ կրակում, ի՞նչպես տուն գնամ, ի՞նչպես իմ հոր երեսը տեսնիմ։ Մեկ ճար արե՛ք ինձ Աստուծո խաթեր։

Էս խոսքերումը անծանոթը էնպես էր երևում, որ իրան զոռ էր անում, բայց ընչանք մյուսները մեկ բան ֆիքր կանեին, նա իր զորությունը ժողովեց ու սիրտը պնդացրեց, որ էս հիանալի վայելչությունը չտեսնի, որ նրա առաջին կար, նետի պես թռավ խալխի միջիցը ու մեկ րոպեի միջումը աներևութացավ։

Կարելի էր, որ էս մեծահոգի մարդը չիմացվեր, թե ո՛վ էր, եթե նրա գործակատար մարդիքը՝ նրա մեռնելուցը եդը, նրա թղթերումը մեկ նուսխա չգտնեին։ Էս թղթումը յոթը հազար հինգ հարյուր ռուբլի էր նշանակած մեկ ղադիի անունով։ Իմանալու խաթեր հարցրին՝ թե էն ի՛նչ թուղթ պտի ըլեր, չունքի կոլոլած էր, որ էրեն։ Բանկիրը պատասխանեց, որ էս փոքր պարոն բարոն Մոնտեսքեի հրամանովն էր Աֆրիկա ուղարկած, որ մեկ գերի, անունը Ռոբերդ ազատվի։ Հայտնի է, որ անվանի գիտունն Մոնտեսքի շատ ման գալ էր սիրում, ու հաճախ իր քվոր մոտն էր գնում, որ Մարսել քաղաքումը մարդի էր տված։

ՄԵԿ ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԷԼ ՀԱՅՈՑ ՎՐԱ

Ժամանակի անգութ ձեռը ուր որ հասնի,
Երկիր, աշխար, փառք, մեծություն տակվեր կանի։
Բայց մեկ ազգ ինքն պետք է իր վերջն լավ մտածի,
Ու իր նախնյաց անունն ու գործքն անմահ պահի։

Հային էլ որ էս օր ասում ես, թե իր ազգը մեծ ա էլել ժամանակով, երազ է համարում, չի՛ հավատում։ Պատճառը որ հայտնի է, ընչի՞ պետք է զարմացած։ Հայն վեց հարյուր տարուց ավելի ա, որ աչքը բաց ա արել զարիբ աշխարքում, օտար ազգի ձեռի տակի, ի՞նչպես նրան հավատացնես, թե իր նախնիքը ո՛վ էին։ Բայց ընչի՞ համար ենք հավատում, թե Ասորիք, Բաբելոնացիք, Մակեդոնացիք, Հռովմայեցիք կային, հո նրանք էլ են ջնջվել, աշխարքի երեսիցը վաղուց վերացել։ Պատճառն էն ա, որ էս ազգերի պատմությունը կարդում ենք, մերը աչքից քցել, չենք էլ գիտում, թե ընչի՛ համար է մեր անունը Հայ, ի՞նչ լեզու ա, որ մեր բերնումն ա, ո՞վ մեզ մեր հավատը տվեց։

Թե սուրբ գրի ասությանը հետևինք, թե բնական կանոնին, երկուսն

էլ մեզ ապացուցանում են, որ Հայաստան հին աշխարների մեկն ա, չունքի տեղի բարձրությունն ու վայրահակությունը ցույց են տալիս, որ մեր աշխարքը շատ կանուխ ցամաքեց ու մարդիք սկսեցին միջումը կենալ։ Նմանապես էս օր էլ տեսնում ենք, որ մեր աշխարքը ավելի լեռնային է, քանց դաշտային։ Ո՞վ չի գիտի, որ սարի մարդը քաջ կըլի, սրտոտ, արի, պատերազմասեր. բոլոր էս բնությունքը մեր ազգի միջումը կային։ Թո՛ղ հիմար, տգետ մարդը տարակուսի, չհավատա, թե հայք հին ժամանակը անօրինակ քաջություն, վեհանձնություն, սրտապնդություն ունեին։ Թուրը որ վեր քցած թողաս, հայտնի բան ա, որ կժանգոտի. մեկ բաղ որ չպահպանես, հայտնի բան ա, որ չոլ կդառնա, ծառերը կչորանան։ Միթե մարդի սիրտն էլ էսպես չի՞։ Քանի մարդ անտեր մնա, միտքը խավար, աչքը խուփ, ո՛չ օրինակ տեսնի, ո՛չ իր ազգի պատմությունը կարդա կամ լսի, էնքան կբրդանա, սիրտը կհովանա, ամեն բանից կհեռանա։

Ուրիշ ազգեր՝ իրանց միջումը մեկ երևելի մարդ որ դուս ա գալիս, կամ քաջ ա ըլում, կամ խելոք, կամ գիտուն, կամ ազգի համար մեկ պիտանի բան ա եդ քցում, կենդանի ժամանակը նրան պատվում, պաշտում, մեռնելուց եդը՝ նրան գովում, պատմությունը գրում, վրեն արձան են կանգնացնում, որ ջահել մարդիք, երիտասարդք տեսնելիս, իրանք էլ ցանկան նրա օրինակին հետևիլ. իրանք էլ էնպես անուն թողան աշխարքի վրա։ Բայց ա՜խ՝ ո՞ւր մեր ազգի միջի էլած երևելի անձանց արձանը, կամ պատմությունը, կամ գովասանությունը, թե կային էլ, որը ոտի տակով էլավ, ջնջվեցավ, որն էլ էնպես ա գրած կամ շինած, որ միջումը էն կրակը չի՛ կա, որ կարդալիս մարդի սիրտ վառվի։

Թե Հայկա, Արամա, Զարմայրի, Պարույրի, Վահեի, Վաղարշակա, Տիգրանա, Տրդատա, Վռամշապհո, Վարդանա, Վահանա անվանքը ազգին չեն հայտնի, թե մեր հին քաղաքների փոշին ու մոխիրն են երկրի երեսին այժմ էնպես ցրված, թո՛ղ մեկ մտածենք, թե ի՞նչն է պատճառ, որ Նոյան ժամանակիցն սկսած մինչև էս օր հարյուրավոր ազգեր ջնջվել, գնացել են, բայց մեր ազգը է՜ս օր էլ կա, էս օր էլ իր լեզուն ու հավատն ունի։ Ո՞ւր են ասորիք, բաբելոնացիք, հին պարսիկք, պարթևք, փյունիկեցիք, լիդացիք, փռյուգեցիք, եգիպտացիք, մակեդոնացիք, հռովմայեցիք, արաբացիք և այլք անթիվք։ Չէ՛ սրանք էլ մեր ազգի պես հին, մեր ազգիցը դհա ավելի զորեղ ու մեծ էին իրանց ժամանակին։ Ինչ ազգ որ վեր կացավ, թե երկիր առնի, ճանապարհը մեր խեղճ աշխարն էր. առաջ մեզ էին ոտի պակ տալիս, հետո գնում ուրիշ ազգերի վրա։ Սաղ Եվրոպա չկարաց միմիայն Հոնաց առաջին, գազան Ատիլայի թրին դիմանալ, Չինգիզխանն ու Լանգ Թամուրը հո՝ շատ ազգի հոտը կտրեցին, Արաբացիք կայծակի պես

շատ աշխարհի գլուխ ջախըփուրթ արին, թե Հայք քաջ չէին, ի՞նչպես դիմացան, ի՞նչպես մինչև էս օր իրանց գլուխը պահեցին։

Ինչ լուսավոր ազգ էլ էս օր որ կա, թե եվրոպա, թե ասիա, պատմությունից հայտնի ա, որ շատը քրիստոսիցը եդը հազար տարի էլ անց էր կացել, որ քիչ քիչ սկսեցին իրանց սոպռությունը, ավազակությունը, վայրենությունը թողալ ու քաղաքներ շինիլ, օրենք հաստատիլ, իրար հետ կենալ, արհեստի հետևիլ, վար ու ցանք անիլ։ Եվրոպա՝ հազար երեք հարյուր տարի անց էր կացել, դեռ էլի ավաղակի, գողի պես էին կենում նրա բնակիչքը։ Բայց բոլոր պատմության միջին մեկ տեղ չե՛ս գտնիլ, որ ասի՝ թե հայք ե՞րբ իրանց ավազակությունը, սոպռությունը թողին։ Քսենոֆոնց հույն զորապետն ու պատմագիրը վեց հարյուր տարի քրիստոսից առաջ Հայաստան որ մտավ, զարմանում ա, թե էն ժամանակն էլ հայք ի՞նչպես աշխատավոր, դինջ, խաղա<ղա>սեր էին։ Էս բավական պատճառ չի՞, որ իմանանք, թե մեր ազգը ի՞նչքան շուտով սկսեց լուսավորվել, ի՞նչ ազնըվական հոգի ուներ, որ էնպես կանուխ իր վայրենի կյանքը թողեց ու աշխարհաշինության ձեռ տվեց։ Ո՞ր ազգը քրիստոսի սուրբ հավատը է՛նպես շուտով, է՛նպես ջերմեռանդությամբ ընդունեց, ինչպես մեր ազգը։ Ուրիշ տեղ արին թափեցին, հազարները սուրը քաշվեցին կամ թրի զոռով խալխին ճամփա բերին, բայց մեր ազգը՝ հենց ճանաչեց քրիստոնեական հավատի լիսը, ճշմարտությունը, սիրտն էլ, հոգին էլ նրան տվեց։

Էս օր էլ շատ գռեհիկ հայ էնպես ա կարծում, որ հայոց լեզվի նման ճոխը չկա։ Հիրավի, որ մարդ ուրիշ ազգերի լեզուն էլ քննի ու ճշմարիտը կամենա խոսիլ առանց երեսպաշտության, պետք է հիանա, թե էն ի՞նչ ժամանակ ա էլել, որ հայք էն ծայրագույն լուսավորությունը ստացան, որ իրանց լեզուն էնպես ճոխացավ, չունքի մեկ ազգ ընչանք երկար ժամանակ կրթվի ո՛չ, ուսման չհետևի, անկարելի ա, թե նրա միտքը էնպես բացվի ու նրա գյորա բառեր հնարի։ Անկարելի ա, թե մեր երանելի թարգմանչաց ժամանակին՝ Հայք էն լեզուն էին ըլում խոսալիս, որ նրանք գրեցին։ Ասենք՝ թե խոսային էլ. ե՞րբ կարող էր տգետ մարդը էն մտքերը, էն բառերը գիտենալ, որ նրանք գործ են ածել։ Կամ թե չէ ի՞նչպես չէր լեզուն խառնվել, չունքի էնքան պարսից, հռովմայեցվոց ու ուրիշ ազգերի հետ խառնվել էր մեր ազգը էն ժամանակը, ինչպես հիմիկ, որ լեզվի շատ փայը թուրքի ու պարսից բառ է ու բոլոր մեր նոր լեզվի ոճը էս լեզվներին ա նմանել։ Էս էլ քիչ պատճառ չի, որ ամեն մարդ իր բնական խելքովը հավատա, թե Հայոց ազգը վաղո՜ւց-վաղուց սկսեց ծաղկիլ, լուսավորվիլ, բայց ա՜խ՝ բարբարոս ազգաց ոտքը ջրհեղեղի պես բոլորը սրբեցին, ոչնչացրին։

Բայց ո՞վ չի զարմանալ, որ մեկ ազգ, եթե էսքան գովելի բնություն ուներ, էսքան քաջություն, ընչի՞ էսպես տկարացավ, ու իր բոլոր գեղեցիկ հատկությունքը քիչ քիչ վերջացան։ Շատ ցավ է ըլում մարդի, որ բազի անփորձ, կարճամիտ մարդ՝ Հայի վրա խոսալիս՝ միշտ հենց է՛ս ա պատճառ բերում, թե հայք անմիաբան էին, զոռզ էին, իրար չեն սիրում և այլն։ Էսպես խոսողը՝ երևի իր տան պուճախներիցն ավելի, մեկ բան էլ ա աշխարհիցս էնպես պարզ չգիտի։ Դիցուք հայք անմիաբան էին. մյուս ազգերին ի՞նչ պատահեցավ, որ՝ ինչպես ասեցի, էնպես են վերջացել, որ նրանց իզն ու թոզը չկա։

Էն ջրհեղեղը՝ որ մեր աշխարքը մտավ, այսինքն էն գազան ազգերը, որ մեր աշխարովը անց կացան, սար ըլեր, նրանց ոտի տակին կհավասարվեր, ծով ըլեր, կցամաքեր, բայց մեր ազգը՝ սարի տեղակ իր դոշը, ծովի տեղակ՝ իր արինը դեմ անելով, է՛ն հոգին ուներ, որ էնպես զորեղ ազգերը կորան, փչացան, նա էլի իր գլուխը նրանց փոշուցը հանեց, էլի սկսեց զորանալ, բազմանալ, ու զորդ ա, թե իր աշխարքը չկարաց ձեռին պահիլ, իր լեզուն, իր հավատը պահեց, որ ո՛չինչ ազգ չէր կարող անել։

Հինգ գլխավոր պատճառ մեր ազգին էս տեղը հասցրին։ Մեկ որ անդադար զանազան ազգեր իրար վրա կռիվ էին գնում ու մեր աշխարովն անց կենում։ Երկրորդ՝ մեր ազգը աշխատասեր ըլելով, ամենն էլ ուզում էին, որ իրանց ձեռի տակը քցեն, իրանք շահվին։ Երրորդ՝ մեր ազգը քրիստոնյա էր, մյուսները կամ կռապաշտ, կամ մահմեդական, որ Քրիստոսի հավատը ուզում էին ջնջեն։ Չորրորդ՝ որ ազգը էսպես ժամանակին էլ չկարաց ուսումն առնիլ, իր լեզվի պատմությունը կարդալ, մնաց տգետ։ Հինգերորդ՝ որ գրած գրքերը՝ ասենք թե կարդացող էլ ըլում էր, ո՛չ միտքն էին հասկանում, ո՛չ զորությունը։ Էսպես քիչ քիչ ամեն բանը մոռացան։ Էս օր էլ ազգը՝ ինչ խաղ որ ասում են, ինչ առակ իրանց միջումն գործ են ածում, բոլոր թուրքերեն ա։ Ի՞նչպես իմանա ողորմելի գեղցին կամ քաղաքացին էլ, թե ի՞նչ մարդիք են էլել իրանց միջումը, որ սիրտը վառվի, երբ որ մեկ խաղ, մեկ երգ իր մեկ թագավորի վրա էլ ա, չունի, թե կա էլ, իր խելքի, իր սրտի գյորա չի, չունքի բառը չի՛մանում։

Թո՛ղ ամեն մարդ իր երեխությունը միտքը բերի, թե ի՞նչպես ա մարդ վառվում, երբ աշըղները Քյոռ–Օղլուն, Քյարամին և այլն էնպես գովում են։ Ի՞նչպես ա մեր սիրտը պանկանում, որ երևելի մարդ դառնանք, ինչ ժամանակ մեկ գրագետ մարդ պատմում ա, թե հունաց, հռովմայեցոց, ռուսաց, գերմանացոց, ֆրանցուզի, ինգլիզի միջումը՝ ինչպես երևելի մարդիք են էլել ու էս օր էլ կան։ Թո՛ղ մեկ քանի բան էլ մեր ազգիցը պատմենք, թո՛ղ՝ ինչպես որ էնպես տաք տաք ուրըշին գովում են, մեր ազգին

էլ գողենք, տե՛ս՝ թե էն ժամանակը մեր երեխեքը՝ ի՞նչպես կսկսեն ջանք անիլ, որ իրանք էլ լավ, ազգաշեն մարդ դառնան, որ իրանցից եղը իրանց անունն էլ մնա ազգի միջումը։ Հենց բերաններս բաց ենք անում, առակ ենք ասում, ուրիշ լեզվից ա, օրինակ ենք բերում, նմանապես, հենց ասում ենք «Եվրոպա, Եվրոպա», բայց մեր վրա խոսալիս, Աստված հեռու տանի, ի՞նչ չենք ասում. բաս մեր երեխեն մեզ կսիրի՞։ Բաս ազգի սրտումն էլ բարի նշան կմնա՞։ Էն գռեհիկ խոսքն էլ ա չենք մտածում, թե պառավն իր թանին թթու չի՛ ասիլ, կացինն իր փետը չի՛ կտրիլ։ Ընչո՞վ են լազգին, չերքեզը, թուրքը մեզանից ավելի, որ էնպես իրար վրա մեռնում են։ Բայց պատճառն ի՞նչ ա. լազգին, թուրքը որդոց որդիս իրանց միջումն պահել են՝ իրանց ազգի արած քաջությունքը, լավությունքը, խոսալիս, զրից անելիս, միշտ էն են պատմում, իրանցից էն կարծիքն ունին, որ ամենից լավը իրանք են, նրանց որդիքն էլ էս լսելով, հայտնի բան է, որ գոռոզանում են, ու մտքըներումը դնում են, թե իրանց պես ազգ չի՛ կա։ Կարծեմ՝ թե էս ըլի պատճառը, թե օձն էլ իր ճուտին ֆլի հետ չի՛ փոխիլ։

Եվրոպա էլած ժամանակս մեկ օր մեկ գիր էի գրել լուսահոգի Ալամդարյան Հարություն վարդապետի վրա, որ իմ վարժապետն էր, ու գանգատում էի, թե նեմեցները ինձ սիրում, պատիվ են տալիս, մեր ազգը չէ՛։ Իմ լուսահոգի բարերար պարոն պրոֆեսոր Պարրոտը թուղթս առավ ու պատռեց, ասելով.— Ո՞վ ես դու, ի՞նչ ես արել, որ ազգիցը էդպես բաներ պահանջում ես։ Հազար լավություն էլ որ ազգին անես, չի՛ պետք է քո բերնովն ասես ու կամենաս, որ քեզ պատիվ տան։ Բավական չէ ձեր ազգի ցավը, որ դուք էլ եք նրա վրա խոսում։ Նեմեցները ձեզ ղարիբ դեյի են պատիվ տալիս։ Ձեր ազգը ինձ շատ պատիվ ա տվել։ Ինչ լավություն ձեր ազգի միջումն եմ տեսել, Եվրոպա հավիտյան չեմ տեսնիլ։ Ում տունը մտնում էի, գլխի վրա էր ընդունում։ Ընչի՞ չեք ձեր չափը ճանաչում, ձեր լավությունն իմանում և այլն։ Օտար նեմեցը էս խրատը տվեց ինձ, որ հավիտյան մտքիցս չի՛ գնալ, սիրելի հա՛յ՝ դու ի՞նչ կասես։— Ես էնպես եմ կարծում, որ վատ մարդին գովելով կարելի է լավացնել, բայց լավին՝ վատացնել։

Թողանք մեր հին ժամանակի երևելի թագավորքն ու իշխանքը, նրանց պատմությունը գրքեր կդառնան, որ գրելու ըլինք, նորիցն առենք, որ կարելի ա շատի մտքումն էլ ըլի։ Մենք զարմանում ենք, որ շատ թագավորք, շատ մարդիք ուրիշ ազգերի միջին մեծ մեծ գործքեր են բռնել, բայց էն չենք հարցնում, թե ի՛նչքան հնարք, իշխանություն ունեին նրանք, որ էս արին։ Ի՞նչպես հանգիստ էր նրանց ժամանակը, ինչպես բոլոր դռները նրանց համար բաց էին։ Բայց որ մտածենք, թե ի՞նչ նեղության միջի

մեր աշխարհն էր, ի՛նչպես ամենայն դուռն ու ճանապարհը փակ էին, ու սրան չնայելով՝ էլի ժամանակ առ ժամանակ էնպես մարդիք դուս էկան մեր միջումը, ու էն գործքերը բռնեցին, որ ուրիշ ազգեր իրանց պարծանք կհամարեին, էն ժամանակը պետք է էնպես անձանց անունը, գերեզմանը սուրբ համարինք, նրանց պաշտենք միանգամայն։

ԿԱՐՃԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՔ

ԿԱՐԼՈՍ ՄԵԾԻ ՋԱՀԵԼՈՒԹՅԱՆ ՍԵՐԸ

Էնպես են պատմում, թե Մեծն Կարլոս, կայսրն Գերմանացվոց, ջահել ժամանակը մեկ աղջկա հետ էնքան սեր ա քցում, որ գիշեր ցերեկ կուշտը կտրած մեկ բան էլա միտքը չի՛ բերում, ո՛չ իր ժողովուրդը, ո՛չ աշխարքը, ո՛չ թագավորական գործքերը, հենց նրա սերն ա ուզում վայելի, նրա չորս կողմովն ա պտտում։ Ինչքան մեծամեծք, իշխանք, նախարարք խրատ են տալիս, հնարք են գործում, քյար չի՛ անում, նա իր գժությունիցը ձեռք չի՛ վերցնում։ Աստուծո ողորմությունը հասնում ա, աղջիկը ցավագարվում, մեռնում ա։ Իր դռան մարդիկը բոլոր ուրախանում են, թե էս ա, սերը կվերջանա։ Բայց Աստված ո՛չ շհանց տա, ինչ թագավորի հալն ա ըլում։ Մեռելի մարմինը բալասամով ու անուշահոտ բաներով օծիլ ա տալիս, իր օթախումը դնում ու շաբաթներով կուշտը կտրում, նստում, լաց ըլում՝ իր սրտի դարդերը նրան պատմում, խորհուրդ հարցնում, համբուրում, էնպես որ հենց իմանաս՝ թե կենդանի ա։ Էլչի, նախարար, իշխան, մեկին էլ ա մոտը չի թողում։ Ամեն բանից ձեռք ա վերցնում։

Վերջը նրան մեկ սիրեկան վազիր ա ունենում, որ շատ բարի, աստվածապաշտ մարդ ա ըլում։ Սա սկսում ա գիշեր, ցերեկ Աստված աղաչիլ, որ մեկ ճար անի, հենց բռնի՛ր, սրա հույսն էլ ա կտրվում, վերջի գիշերը էլի էնպես աղոթք անելիս ու լալիս, երկնքիցը հանկարծ մեկ ձեն ա գալիս, թե թագավորի սերի պատճառը էն մեռելի լեզվի տակին ա։ Էս որ իմանում ա, փառք ա տալիս Աստծու ու գնում, թաքուն մատը մեռլի բերանը տանում, լեզվի տակիցը մեկ մատանիք ա դուս գալիս, ալմազի ակնով շինած։ Հենց մատնիքը հանում, տանում ա, թագավորը տուն ա գալիս, ու իր սովորության գյորա իսկույն իր սիրելու մոտ վազում, հենց սառած մեյլդի երեսը աչքովն ա ընկնում թե չէ, իսկույն ջանը դող ա ընկնում, ախրաը գնում, ու հենց էն սհաթին հրամայում ա, որ տանին թաղեն։

Էստուց դենը սերը էն վեզիրի վրա յա քցում, էնպես որ աչքիցը չի՛

ուզում հեռանա։ Վեզիրը խելոք մարդ ըլելով, չի՛ ուզում, որ թշնամիքը շատանան ու իրան վնաս տան, մատանիքը տանում մեկ ջմշմի մեջ ա քցում։ էն օրվանից սկսած թագավորը տուն, տեղ թողում, գալիս, նրա դրաղին նստում, սաղ օրը էն ջմշմին ա մտիկ անում։ Վերջը էլ սիրտը չի՛ համբերում, հրաման ա անում, որ ջմշմեն խստակեն, մեկ ամարաթ ա շինել տալիս էն տեղ ու թախտն էլ էնտեղ ա փոխում ու մինչև մահն էն տեղ մնում ու կտակ անում, որ որդիքն էլ էս տեղ նստին, էս տեղ օծվին։ էսպես՝ Ախեն քաղաքի շինելու պատճառը Կարլոսի ջահելության սերն ա ըլում։

ԵՐԱԶ

Պետրարքա իտալացի անվանի բանաստեղծը երկու զարմանալի երազ ա պատմում, որ իրան պատահել են։— Մեկ բարեկամ ունեի, որ աշխարքի հետ չէի փոխիլ, էսպես ա սկսում իր բանը։ Հանկարծ հիվանդացավ ու բոլոր հեքիմները իրանց հույսը կտրեցին, սիրտս արնով լցրին։ Իմ մխիթարությունն էս էր, որ գիշեր, ցերեկ սուգ էի անում, ինձ սպանում։ Մեկ գիշեր աչքս քուն չեկավ. էնքան էրվում, խորովվում էի. լուսադեմին հենց փոքր նղղացի թե չէ, էս սարսափելի երազը տեսա։

Իսկույն իմ բարեկամիս պատկերը առաջս էկավ, էնպես բարձր ձենով ախ քաշեցի, որ ընկերներս բոլոր վեր կացան, ու ինչպես որ իրանք ինձ հետո պատմեցին, տեսնում են, որ քնած եմ, կարծում են, որ կարելի ա, ինձ ծանր երազ ըլի պատահած, չեն ղմիշ անում, որ վեր կացնեն, չունքի սաղ գիշերը չէի քնել ու կամենում են, որ մի քիչ նեղացած քնիմ, հանգստանամ, քանց անքուն մնամ։ Իմ հիվանդ բարեկամը էկավ մոտս, երևում էր, որ ուզում ըլի արտասունքս կամաց սրբի, ու խնդրեց, որ իմ ցավս՝ որ նրա համար անում էի, վերջացնեմ։ Հենց ուզեցա նրա ասածի պատասխանը տամ ու հարցնեմ, թե իմ դարդս ինչպես պտի կտրվի, խոսքս կտրեց բարեկամս ու ասեց.— Սուս կա՛ց, գիտեմ, ինչ ուզում ես ասես, մեզ մոտին մարդ ա երևում, շըլիմ մեր խոսքը կտրի։ Խնդրում եմ, որ էս մարդին ասես, որ ինձ սաղացնի, իմ ումուդը սա ա, ու հավատացի՛ր ինձ, որ էս հիվանդությունը ինձ չի՛ սպանիլ, թե ինձ քոմակ անեն։

էսպես խոսաց բարեկամս ու խոսքը կտրեց թե չէ, լսեցի որ օթախիս դուռը մեկը ծեծեց, էս ձենի վրա պատկերն էլ փախավ, երազս էլ։ Աչքս բաց արի, տեսա որ ադոթարանը բացվում ա։ Երկու հեքմի մեկը, ինքը մեկ քաղցր մարդ, որ իմ բարեկամիցս ձեռն էր վեր առել ու ինձ համար էր տանջվում, որ ինձ մխիթարի, սիրտ տա, դռշակիս առաջին կանգնեց։ Իսկույն աղաչեցի, պաղատեցի նրան, որ գնա, բարեկամիս մեկ ճար անի, ու

քանի դեռ բերնումը շունչ ունի, հույսը չկտրի, չունքի դեռ ջահել էր։ Հեքիմը նեղացած զարմացավ, որ ես էնպես անժամանակ ու անօգուտ բան էի խնդրում իրանից, ու ասեց.— նրա հնարն էն ա, որ հիվանդը առողջացնի, ու չէ թե մեռելը կենդանացնի, նա բժիշկ ա, Աստված չի՛։ Բայց ես նրան պատմեցի դեռ աչքս գիշերվան արտասունքովը թաց, ինչ որ տեսել էի լուրջ ժամանակս, ու ոտը համբուրելով՝ աղաչանք արի, նրան էն նեղությունիցն ազատի։ Կարճ, զոռով ղրկեցի նրան բարեկամիս մոտ, նա գնաց ու շուտով ետ դառավ, ու լավ խաբար բերեց։ էս օրից սկսած բարեկամս քիչ քիչ լավացավ ու մահիցը Աստված էլ ետ ինձ տվեց։

Մեկն էլ էսպես ա պատմում։ Որ իր բարեկամների մեկը՝ անունը Կոլոննա, որ շատ գիտուն, խելոք մարդ ա էլել, ու Պետրարքի հետ մեկ հոգի, վերջի ժամանակը հեր, ախպեր, հայրենիք թողել, մեկ ղրաղ տեղ ա քաշվել, որ անկաշը դինջ ապրի, իր փոքր ժողովուրդը հովվի, իր աղոթքն անի, որպես թե իմանում ըլի էլած՝ թե մահը մոտացել ա։ Պետրարքա էլ էս ժամանակի Ֆրանցիա ա էլել ու մեկ բաղում իրան համար կենալիս, էս երազն ու պատմությունը էն տեղ ա տեսել ու գրել։

— Խաբարն ինձ էր հասել,— ասում ա,— որ բարեկամս հիվանդ ա, ու գիշեր ցերեկ աչքս ճամփի էր, որ մեկ հաստատ բան իմանամ։ էս սհաթս էլ ջանս դող ա ընկնում էս հեռու տեղը, երբ էն սհաթն ու էն տեղը միտքս ա գալիս, որ տեղ նրան տեսա։ Նա մենակ էր ու բաղի առվի վրա անսասան էր գալիս։ Զարմացած գնացի մոտը ու մեկ քանի բան հարցրի։ Ո՛ւր տեղից ա գալիս, ո՛ւր ա գնում, ընչի՞ էնպես թայթի ու մենակ։ Նա ո՛չինչ բանի պատասխանը չտվեց, ու ինչպես իր սովորություն էր, որ խոսալիս, միշտ կժպտար, էնպես ժպտալով ասեց.—Միտքդ գալիս ա, որ մենք ինչ ժամանակ Գարոն գետի էն կողմը կենում էինք, Պիրենյան սարերի քամին ի՛նչպես ինձ նեղացրեց։ էստուց էնպես եմ նեղացել, որ գնում եմ Հռովմ ու էլ եդ չեմ գալ։ էս խոսքն ասեց թե չէ, մին էլ էն տեսա, որ սարի գլուխը հասավ, եդևիցը ձեն տվի, խնդրեցի, որ ինձ էլ հետը տանի։ էս բանիս վրա բարկացավ ու կամաց ինձ եդ կանգնեցրեց ու երեսը, ձենը բոլորովին փոխած, ասեց.— Ինձանից հեռացի՛ր, էս անգամը չեմ ուզում, քեզ հետս տանիմ։ Աչքս քցեմ երեսը, տեսնիմ, որ սիպտակել, կտավ ա դառել, իմացա որ բարեկամս մեռել ա։ էս որ տեսա, էնպես գոռացի ահու, դարդու, որ ինչ ժամանակ վեր թռա, դեռ վերջին ասած խոսքս անկաջս ընկավ։ Օրը նշանակեցի, բոլոր բարեկամներիս պատմեցի մյուս օրը ու հեռավորներին գրեցի։ 25 օրից հետո թուղթ ստացա, որ բարեկամս էն օրը, էն սհաթին ա հոգին տվել, ինչ սհաթ որ ինձ երևացել էր։ Նրա մեռած մարմինը իրեք տարուց հետո բերել են Հռովմ, որ էն ժամանակը, ո՛չ գիտեի, ո՛չ կկարծեի։

Բայց նրա հոգին, ինչպես հույս ունիմ, երկինքն ա գնացել, իր փառքին հասել։ Բավական ա, ինչքան երազ պատմեցի. հենց էս եմ ուզում զարթուն վախտս ասեմ։ Ո՛չ թե ցավն էր, որ բարեկամս առաջս բերեց, ո՛չ թե մեկը որ մեռավ, մյուսը որ կյանք ստացավ, չէ՛։ Ինչ որ երկու անգամն էլ ցանկանում, կամ վախենում էի, որ տեսնիմ, առաջս էկան։

Մեկ երազ էլ էսպես ա պատմում։

— Երեկվան երազս եմ քեզ պատմում։ Էնպես էի կարծում—(չգիտեմ, ինչպես ա էսպես բանը միտս ընկել, չունքի իմ սովորությունը չի, որ էսպես բանը մտածեմ, կամ խոսիմ)— էնպես էի կարծում, թե իմ գեղումն եմ, ու էնպես մեկ խազինա եմ գտել, որ բոլոր կիտուկ հին ոսկի էր։ Էրկուսս մենակ էինք գնում, որ մի քիչ սեյր անենք։ Ես քեզ կանչեցի մոտս ու գտածս շհանց տվի։ Երկուսս էլ ուրախությունից զարմացած, մնացինք կանգնած ու Սենեքա փիլիսոփի խոսքը միտքըներս ընկավ. «Էն բանիցը հեռացի՛ր, որ խալխին դիր ա գալիս, որ պատահմամբ ձեռդ կգա, ու բոլոր պատահական մալ, դովլաթին աhով, դողով մոտացիր։ Վայրենի անասունն ու ձուկն էլ են խաբնով ձեռք քցում. ու ինչ որ կարծում ես, թե բախտն ա քեզ բաշխում, խաբեբայություն ա։ Էսպես մեկ փոքր ժամանակ խազինի վրա կանգնած մասլհաթ անելիս, կամ ուրախանում էինք, կամ դողում։ Վերջը խոսքը մին արինք, որ շատ հիմարություն կըլի, էն բանը ձեռաց թողալ, որի համար որ էնքան ծով ու ցամաք չափում են, որ ձեռք բերեն ու մեզ ինքն իրան էր պատահել։ Շուտով վերցրինք ոսկին բասով ու տուն տարանք, մնացածն էլ հողի տակովն արինք, որ չէինք կարող հետըներս տանիլ։ Էսպես շատ անգամ գնացինք, բերինք, թաղեցինք, ու քանի գնում էինք, էնքան սեր էինք ընկնում։ Ինչպես սովորություն ա, քանի ոսկին տեսնում էինք, էնքան ջանըներս դող էր ընկնում։

Էս միջոցումը, մեկ դառը քչփչոց ընկավ անկաջներս։ Մեր խորհուրդը՝ թեև մեկի էլա չէինք ասել, խալխի անկաջն ընկավ, ու շատ ժամանակ չքաշեց, մեկ մեծ մարդ լիս ընկավ, որ ասում էր, թե էն խազինեն իրանն ա։ Մենք ինչքան զորություն ունեինք, նրան դեմ կացանք։ Էստուց սփթա երկար ու անկարգ զրիցներ առաջացան, հետո դավի, դառաբա, բիաբռչություն՝ որ կռվի հետ կապված ա, չունքի նա զոռ էր անում մեզ, մենք էլ ասում էինք, թե բախտն ա մեզ տվել մեր հողումը, ո՞ւմ հադդն ա, որ խլի։ Էստուց հազար բաներ ծագեցան, որը խելոք, կարգի, որը անկարգ, անխելք, որի պատճառը էնքան մեր հերսը չէ՛ր, որքան մեր թշնամու գոռոզ կոշտությունը, որ մեզ վառում, բորբոքում էր։ Էն ա գեղի հանգստությունիցը քաղաքի ղալմաղալի մեջն էինք ընկնում, էն ա մեր գրիլ, կարդալը թողում, յարաղ ասպաբ պտի վերցնեինք, որ հազար մեկ հոքս մեզ չըրչարին էր քցել, պատում։ Մեր աչքաբացությունն ու քննությունը դառել էր նախանձ ու բարկություն։ Վերջապես վեճիցը կռիվ դուս էկավ։ Էսպես էր մեր սիրտը փոխվել ու փոշման էինք շատ փողը գտնելու վրա։ Երազումը փիլիսոփություն էինք անում։ Ո՞ւր ա մնացել մեր ուրախ, հանգիստ կյանքը։ Էս հոքսի ամպը ո՞վ մեր գլխի վրա թափեց։ Ո՞վ մեզ էս տարտարոսի մեջը քցեց։ Միթե մենք չէի՞նք գիտում որ փողումը պսպղան հոգս կա, շողշողուն թշվառություն։ Քանի հարստանաս, էնքան ցավ ու կարիքդ կավելանա. քանի բավականանաս, էնքան բախտդ կկորչի։ Շատ օրինակներ մտըներս ընկավ, որ հարստությունով տարաբախտվել էին, ու աղքատությունով բախտավորվել։ Կրեսոս թագավորի գանձը ոչինչ էին համարում, Միդասի ոսկին ցավալի, ու էն մալ ու դովլաթը, որը որ Դիոնիս ու Կրասուս տաճարիցը խլեցին։ Ցինցինատի, Բեգուլի, Կարիոսի ու Ֆաբրիցիոսի բախտավոր ու անվանի աղքատությունը գովում էին։ Էստուր վրա էլ հեսաբ էինք անում մեր ժամանակի էնքան անթիվ մարդիկը, որ ցրտով, շոքով պնդացած, տկլոր, չոլում, սարում մենակ կացել են, երկինքը նրանց օթախն ա էլել, երկիրը նրանց դոշակը, ուրախ սրտով պղտոր ջրերի վրա իրանց սիրտը հովացնելով, քարոտ, նեղ ճամփով ման գալով, աչքների առաջին դնելով՝ որ դհա լավ աշխար կա, բոլոր երկրիս փառքը անպիտան են համարել։ Ու որքան էսպես բաները մտածում էինք, էնքան փոշմանում, ցավում էինք, թե ինչի՞ չի առաջուց էսպես բանը միտք արինք, գլխըներիս ցավ ավելացրինք, ու ինչպես սովորություն ա, որ ասում են, աչքըներս եռներս ունեինք։ Վերջապես էն տեղը հասանք, որ հենց ամոթն էր մեզ պահում, որ մեր խազնիցը ձեռք վերցնենք, չունքի էնքան բաների խառնվել էինք։ Էն ա հա, օրը մոտացել էր, որ վերջի կռիվը վերջանա, որ բարկացած, ջանս դող ընկած՝ կես գիշերին հանկարծ տեղիցս վեր թռա։

Մեկ սառը քրտինք բոլոր մարմինս բռնել էր ու իմ հոգին գիտենա, հոգիս էլ, մարմինս էլ էնպես էին բեզարել, ղվաթից ընկել, ինչպես թե մեկ ծանր գործ զարթուն ժամանակս կատարած ըլեի։ Բայց չեմ էլ կարող <ասիլ>, թե ի՛նչքան էի ուրախ, որ խազնի հետ՝ իմ հոքսն ու ցավն էլ հեռացան, ու վեր կենալիս էնքան ունեի, որքան ապրուստի համար հերիք էր, ու տանջանք չէր դառնալ ինձ, որքան կենաց համար բավական ա, ու ավելի չի՛։ Ինչպե՛ս ա էս երազը իմ միտքս հաստատել, որի ճշմարտությունը, որ զարթուն ժամանակս եմ հաստատ իմանում, որ հարստությունը, մալն ու դովլաթը աչքածակ, ագահ մարդին թշվառացնում ա, քանց բախտավորացնում։ Քեզ էլ էստուր համար եմ էս երազը պատմում, որովհետև դու էլ հետս ընկեր էիր։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԻ ՎԱՅԵԼՉՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ԻՄՈՑ.

Ասացեալ ի 1824 ամի. յԵրեվան:

Ե՞րբ տեսից զքեզ՝ քա՜ղցր իմ Հայրենի՝
Անցեալ ի հին դարս հաւուց մեր նախնի.
Գալարին աղիքս, միտք իմ ցնորի,
Մինչ նախնի վիճակ քոյ յուշ իմածի։

Հայեցեալ ի շուրջս՝ միայն աւերակք
Ինձ յառաջ բերեն զնախնեացն յիշատակ.
Պայծեն զգայարանքս, այլ ո՜հ, ես անզօր
Կարօտիւ միայն լամ անօժանդակ։

Ե՞րբ առ արձանօք նախահարց մերոց
Զոհեսցեն աշխոյժ պատանեակք Հայոց
Ջերմ իւրեանց զարիւն՝ պատարագ յանոյշ
Ի սէր Հայրենեաց, մաշելոյ անյոյս։

Ծխի յամպս արդէն յԱղուանեաց դաշտին
Երկնընծայ նուէր սուրբ ողջակիզին.
Անդ Վարդան փրկել կրօն, զՀայրենի
Արեամբ իւր գնէ փառս զիւրոյ ազգի։

Եւ սուր Հայկազանց զխումբս թշնամեաց
Յոճիրս մաշէ՝ իբր զշեղջ խոռւաց.
Հսկայն անկանի անդ անմահ փառօք,
Պատուեալ, պսակեալ ի քաջ նիզակակցաց։

Ո՞ր հողմ կատաղի զմեօք հնչեաց,
Կործանել զսիւն միաբան ազգացս.
Փշել յանխարդախ որդիս Արամեան
Զայս հոգի տկար, լոյծ, հեղգ, հեշտակաց։

Կրկնեսցի՝ շրջան այնց ժամանակաց,
Զի ՛ւ մե՞ք վառեսցուք ի նախանձ փառաց.
Ժառանգել զանուն մտերիմ որդւոց,
Տալ զկեանս ի զոհ սիրոյ Հայրենեաց։

Մեռանիմ ի քեզ՝ ժամանա՛կ անցեալ՝
Ժամանա՛կ շքոյ իմոց դիւցազանց.
Ո՜հ՝ ո՞ տայր և ինձ՝ անդ զիմ ջերմ արիւն
Հեղուլ ի յերկրի Վարդանայ յանուն։

Անկուշտ տապանաց՝ ո՜հ՝ անքուն ցեցոյ
Լինիցին ոսկերք իմ այժմ ի բաժին.
Զոր բոլորընծայ ի սէր Հայրենեաց
Անդ ես զոհէի սիրով հեշտագին։

Երկնամբարձ խրոխտմյք՝ լերի՛նք Արամեան.
Յանկալի՛ բարձունք, նախնեաց իմ՝ կայա՛ն։
Հի՞մ ծիծաղէին նոքա ի ձեր տես.
Հի՞մ դուք յետնորդացս սքարա՛ն միայն։

Մասի՛ս, հին աւուրց կենդանի՛ արձան,
Ծերացեալ վարսիւք քովք սպիտակահեր.
Յո՞ր որդւոց զրկեալ, ո՞ւմ այժմ դու պաշտպան,
Անդ լեառն պարարտ, այժմ լեառն տրտմաբեր։

Ի ջնջիլ համայն սերնդոց երկրի,
Քո գագաթ միայն եղև փրկարան։
Ի խաղաղանալ արդ բոլոր ազգաց,
Դու քոյոց որդւոց լեալ ցաւոց դարան։

Քայլեցա՞ն արդեօք հարք, մարք իմ ազգի
Առ ստորոտովք քովք երբեմնակի.

Յո՛յց ինձ համբուրել զնոցա ոտնավայր,
Յո՛յց և ես թացից արտասուօք զտեղին։

Քաղեցի՞ն կուսանք, ողջամիտ հարսունք,
Զուարթուն պատանիք, նորափթիթ մանկունք
Զքո դաշտի ծաղիկս չքնաղ, պատուական,
Յընծայել միմեանց ի սիրոյ նշան։

Այդպէս ընթանայք դեռ գոռոզ, հանգիստ.
Ծիծաղի ալեօք ձեր՝ դիւթեալ զիմ սիրտ.
Երա՛սխ, Զանգի՛ գետք՝ կենդանի վկայք,
Զորովք քաջ մեռան Հայկազանց հսկայք։—

Առէ՛ք ընդ ձեզ զիմ արտասուս արեան,
Հեղե՛ղք ծարաւիք նախնեաց իմ՝ արեան.
Դուք՝ որք զԱնակայ կորուսիք զխուժան,
Դուք՝ որ տայք տեղի արդ մեր թշնամեաց։

Անկանիս՝ կծկեալ՝ ընդ հորիզոնաւ՝
Համե՛ստ վերջալոյս՝ կարմրաշուրթ ներկեալ՝
Գաղիս դու անշուշտ զերթ քնքուշ կուսան.
Զի մի՛ տեսցես զքակ երկրիս մոռացեալ։

Եւ սիրտս ցաւալից, և աչքս արտասուալից
Պտուտին ընդ քեզ, յոր վայր և շրջիս։
Ե՞րբ տեսից զքեզ ծիծաղիլ ընդ իս,
Ե՞րբ տեսից՝ քեզ ինձ յայտնիլ խնդալից։

Ե՞րբ տեսցեն նեղեալ որդիք Արամեան
Յաշխարհի իւրեանց լոյս խաղաղութեան։
Ե՞րբ սփոփեսցին անյոյս գերդաստանք
Ի դառն հարուածոց՝ անանց, անվախճան։

Ե՞րբ ծագեսցի լոյս քո յամպս վայոց,
Զոր դէմք լալագնեալք ամբառնան առ քեզ։
Ե՞րբ ելցես սրտից խոր ցաւագնելոց
Արև Արմենիայ՝ որ մտեր անտես։

Այլ դուք կացէ՛ք ինձ՝ դա՛շտք Հայաստանի,
Քաղցր, ուր ամփոփի նախնեաց իմ փոշի։
Ես և անդ տաց զիմ քաղցրութեամբ զհոգի,
Մինչ ի քիմս նոցա հոտ հետոց բուրի։

ԽՆԴԱՄԻՏ ԶԳԱՑՄՈՒՆՔ ԵՐԱԽՏԱԳԷՏ ՀԱՅԿԱԶԻՆ ՅԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ԻՒՐՈՑ.

Ասացեալ յԵրեւան ի 1826–ին։ Առ Կոմսն Երեւանի։

Այն ինչ ժամ տուեալ պանդուխտ իմ կենաց՝ ելի ի հայրենիս,
Թուէր ինձ մատչիլ յանլուր տեսարանս, յանծանօթ վայրիս։
Ո՛հ, ո՞ւր եմ, ասեմ, կամ ո՞ւր յառաջեմ, կամ զի՞նչ տեսանեմ,
Չիցե՞մ ես արդեօք յիմում աշխարհի, վիճէի ընդ իս։
Յանցնիւր քայլափոխս միտք իմ վերանայր, ձգիւր ի զարմանս.
Յանցնիւր հայեցուածս աչք իմ փոփոխէր անդ զիւր առարկայս
Ոչի՛նչ երևոյթ, և ոչ բնութիւն իշխէին մեկնել,
Թէ զի՞նչ իցէ այն տեսիլ նորալուր, հանդէս նորահրաշ։
Թէև յամէն կոյս կրթեալ իմ յապուշ՝ նրբին հայէի,
Այլ ոչ երևիւրն սևագունդ կաճառն այն լեգէոնի։
Արհաւի՞րք են ինձ, կամ ցնո՞րք աչաց, այլ ոչ հաւաստի.
Գուցէ խաբիմ ես, անդրէն ի վարանս մտեալ՝ ասէի։—
Ո՞չ յերէկ աստէն խրոխտայր կռամոլն այն հարկ դեմոսին,
Ո՞չ յերէկ աստէն խռիւ հարկանէր մանգաղ կռոնոսին.
Չէ՞ յերէկ աստէն հնոց սպառնայր պետ Բաբիլոնին.
Հի՞մ դադարեցան, զիա՞րդ չքացան յստուեր թագատին։
Սարսափ սոսկալի յանձն իմ հարկանիւր, մինչ նշմարէի,
Թէ չիք ոտնառու երգոց օրհնութեանց Աստուածեան խմբի։
Յերազի՞ իցեմ, ի քո՞ւն, թէ յանուրջս, ա՞յս է Հայաստան.
Ժպիտ ի շրթունս, տրոփ ի սրտի ի հարց մատչէի։
Ո՞ւր այն զառամեալ դէմք իմ հայրենեաց, որ կայր ի վշտի,
Ո՞ւր ողբ, սուգ և լաց հնոց և նորոց ի մերում գնդի.
Ո՞ւր դառն արտասուք, կոծ և հառաչանք աղէխարշ ձայնի,
Ո՞ սրբեաց, եբարձ, ի՞ւ փարատեցան և չեն լսելի։
Մինչդեռ վարանմամբ զայս անակնկալ դիպուած խորհէի,
Յոր սիրտ իմ խռովեալ յանլոյծ խռովանս՝ կայր ի տագնապի.

Եւ պատգամախօսն՝ այն կենդանագիր ձերոյ դրօշակի,
Գրկեալ զՀայաստան՝ գծէր ընդ իւրև զայս հաուած բանի։
«Արի, Հայաստան, ոսկր ցամաքեալ ի հիւսեան դաշտի,
Ընդ փչումն ի քեզ Մեծին Ռուսիայ հոգւոյ կենդանի։
Յո՛տն կաց, բազմե՛ց, դուստր տառապեալ ընդ ձայն ողջունի
Մեծ ինքնակալի, ողորմած կայսեր, Նիկողայոսի»։
Այո՛ աւետեօքս յարեան և յարիցեն խամրեալ նախնիք մեր,
Որք որդեկորոյս և զինակորոյս հսկէին յեղեր։
Բազում ձեր եղեալ նոցա յենարան թիկանց խստամբեր,
Որ դարուց ի դարս յանողորմ տանջանս հաշեալ կոչկոճէր։
Ծգնէր Պոմպէոս առնուլ զՀայաստան հարկանել յաւար.
Ծգնէր Լուկուլէս սրոյ ճարագել կամ գերել իսպառ։
Այլ ձեր ոտնամուտ՝ զաւեր, զանապատ, զխոռոչ եւ զայր
Մեզ թափառելոցս արար հանգստեան տեղի և դադար։
Այն ինչ Հայաստան, և էջմիածին ի մահիճս անցեալ՝
Ընդ Եզեկիայի դառնային յորմ անդր լքեալ և խռովեալ.
Ելիք առ նոսա իբրև մարգարէն յԱստուծոյ ազդեալ՝
Կանգնել զել և էջ նոցա ընթացից արևու՝ դարձեալ։
Իբրև ծագեցաւ առաւօտ կենաց մերոյս փրկութեան՝
Հանգեան, լռեցան ի մերոց սրտից լալիք և կական։
Ընդ տես երևմանդ կնքեաց զիւր ողբերգ Մովսէս Խորենեան,
Զի յառաջ կացցեն, երգեսցեն մուզայք տանն Արարատեան։
Հարի՛ք, փշրեցիք զկուռ զօրութիւն գոռոզ վիրագաց,
Պարսից, Օսմանցւոց, Լազ, Հագարացւոց ժանդ բարբարոսաց։
Ածիք ընդ թևովք զերերուն որդիս Քրիստոնեայ ազգաց,
Որք ի գուճս անկեալ՝ նստեալ ողբային զկորուստ անձանց։
Խաղան ամենայն քարայրք, ծերպք և ծագք դաշտաց ի վիմաց,
Մինչ ի լուր հնչին ձայնք թնդանօթից և նուագարանաց։
Յաղերս ա<ն>կանին, որք անդ ամփոփին[1] նշխարք ոսկերաց,
Կալ մնալ անշարժ ձերոյ տէրութեան ազգաց հզօրաց։
Ո՞ կարէ չափել զթիւ երախտեաց ձերոց անսահման,
Ո՞ կարէ փակել զայսոսիկ արդիւնս ընդ չափ և սահման.
Թէև փողեսցեն, կամ քարոզեսցեն գրիչք կամ մատեան
Այլ ի զուր տքնին, խաղան զստուերօք ձերոյ վեհութեան։
Ո՞հ, դար երջանիկ՝ որ զքեզ եգիտ ինքեան պարագլուխ.

1 [անկանին]

Ո՞հ, չքնաղ գարուն, ուր հոսեալ յորդէ աղբիւրդ շնորհաբուղխ։
Երթան, անցանեն, հաշին, խորտակին ամք և ժամանակք,
Այլ ոչ ի մերոց սրտից անցանին ձեր քաղցր յիշատակ։
Եկեսցեն, կացցեն հերոսք Հռովմայ և Յունաստանի,
Հայել, տեսանել զքեզ նոր հերոս ծագեալ յաշխարհին։
Համբարձցէ երկինք դասել ընդ աստեղս յիւրում կամարի
Զձեր արութեան գործս դիւցազնական, որ յափիւոս փայլի։
Պա՛րտ էր մեր դրոշել պայծառ ձեր անուան կոթող և արձան,
Պա՛րտ էր մեզ ածել ձեզ թագ ի դարնեայ ի ծագ Ոլիմպեան.
Այլ մե՛րս Արարատ անզրո՛շ, անքանդակ խաչիւ տէրունեան
Բարձրացոյց զտիտղոս հզօրիդ մեծի յիւրում գագաթան։
Անցին, մաշեցան դարք հազարամեայք, անդ ո՛չ մերձեցան,
Ո՛չ շօշափեցին ո՛չ ոք երկրածին և ո՛չ հետք մարդկան։
Անդ եկաց միայն, որ կացոյց զաշխարհ ի նոր սկզբան,
Անդ կացիք և դուք որք եղէք պատճառ մերոյ փրկութեան։
Տիեզերք համայն զձեզ ծանիցեն Հայր Հայաստանի,
Իւ մեք Հայկազունքս զմեզ կոչեսցուք քեզ ծառա, և որդի,
Ուր և դիմեսցես, ուր և խաղասցես՝ արև՛ մեր աչքի,
Ի քե՛զ ուղղեսցո՛ւք զդէմս և զհոգիս իբր արեծաղկի։
Քեզ լանջակցեսցին հզօր դիւցազունք մերազնեայ նախնեաց,
Հայկ, Արամ, Արայ, Թորգոմ, Արմենակ, Զարմայր սաստ քաջաց։
Քեզ թիկնկալցեն խնկեալ նահատակք սուրբ զամարճակաց,
Վարդան, Հմայեակ, Արսէն և Խորէն՝ հօլք առաքինեաց։
Սուրբ եղիցին մեզ կաթիլք ձեր արեան և արդար քրտանց,
Որք զոհք մատուցան և պատանք եղեն անկեալ հայրենեաց։
Ուխտադի՛ր լիցի պահել Հայաստան ի ծոց իւր՝ անդարձ,
Զայն անգին հատուսն, որք որբոցս եղան անդ գինք փրկանաց։
Թող լուծցի՛ն մեր կեանք, բարձցին մեր աւուրք կենաց ձեր՝ փոխան,

Ո՞վ փրկիչ մեր, տէր հայր և խնամածու, Տեսուչ և պաշտպան։
Մտցո՛ւք Հայկազունքս ընդ հորիզոնիւ արեւոյդ լրման,
Զի կեցցէ՛ անշարժ, անդարձ, անհոլով ամաց ձեր շրջան։

ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ Ի ԼԵԱՌՆ ԱՐԱՐԱՏ

Ի 1829-ին ի 28 Սեպտեմբերի.

Ի հանդարտասիւգ մարմանդս՝ հողմաբեր մեղմիկ զեփիւռին
Դիմեցի երբեմն զբօսնուլ ի ծոց Մասսեաց սուրբ լերին։
Զուարճալի տեսիլ սոյն երկնատեղեաց բարձանց՝ կաթոգին
Խլեալ՝ գրաւէր յակճիռս, ի զնին զիմ հոգի, զմարմին։

Խոնջեալ, վաստակեալ յանհարթ ելևէջս այս ճանապարհին,
Խնդրէի հանգիստ օտար ուղևորս յանծանօթ վայրին.
Մտի ի քարայր միոյ ի ժայռից բլրոց այս լերին,
Մտի գիշերել, սփոփել զհարուածս դառնադէպ ուղին։

Զի՛ էին բացեալ ծալք արծաթաձոյլք՝ թևոց արեգին.
Զի՛ էին մեկնեալ խաւար՝ մառնամուտ մթոյ գիշերին.
Այն ինչ կոր ի կոր պարզեալ եմ զդէմս, հայել խնդրէի,
Անդէն դիտապաստ յերկիր կործանեալ, անշշունչ կայի։—

Սխրալի յայս վայր սուրհանդակն հիւսսեան բևեռին,
Գոռայր, մռնչէր, որոտ հարկանէր յերեսս լերին.
Մոլեխանձ դիմեալ ի խոռոչս, ի ծերպս ի թափ ժանտագին,
Խլէր, կործանէր զամուր, զպատուար՝ ձիւնաշէն յարկին։

Ի կնճիռ եկեալ այն չքնաղակուրծ լանջք ծիծաղագին.
Կոծէր, տատանէր, ճայթէր, սասանէր դիմօք զայրագին։
Զոյգ ընդ արհաւրացն և գիշերավարն ահ պատեալ զտեղին,
Ո՛չ տայր քուն աչացս, ոչ հանգիստ սրտիս առ գետնախշտին։

Ո՜ Մասիս, Մասիս՝ բեկբեկ հեկեկեմ անդ զարհուրագին.
Առ իմէ՞ իցեն, յո՞յր վերայ յարեան չարիքս այս քոյին։
Ո՛չ տայ ինձ բարբառ։ Իսկ ես ցաւագնեալ, դառնամ յարևելս,
Դառնամ ողբաձայն, կրծաբա՛ղխ գոչեմ՝ հառաչմամբ ուժգին։

Ո՞ւր ես՝ առաւօ՛տ, ո՞ւր քա՛ղցր արշալո՛յս՝ արև՛ գերարփին՝
Ո՞ւր՝ դուք բարերար գիշերահալած ծնունդք երկնային։
Ելէք՝ սասանեալ հոգւոյս կազդուրիչք՝ յայս անձուկ մթին,
Յայս դարան խորին, ուր յահէ կոշկոճ՝ ոսկերք իմ մաշին։

Ասացի, անկայ անդ կիսակենդան ի ճեղս բլրակին,
Ուր օթագայեալ անցուցի գիշերս զայս ինձ մահածին։
Տիրեա՛ց լռութիւն, կարկեցան որոտք, շառաչ ամպրոպին.
Անցի՛ն առ սնարս, յանութս, յանոտս հիւլէք շողագին։

Սփռեցաւ զինև հեզիկ ջերմութիւն առ դուրս խորափտին,
Լա՛նջ արկեալ զանձամբս շարժէր մեղմովին զիմ պաղեալ
մարմին։
Ամոք շոշափմամբ՝ մերթ զոտս, մերթ զգլուխս, մերթ զթաթ
բազկիս
Սեղմեալ հաստատէր՝ ուղղեալ առ դիտակ ծայրից սուրբ լերին։

Հազիւ դողդոջմամբ բարձեալ զգլուխս ի մահճից ժայռին,
Յենեալ թիկնէի՝ ի կուրծ մի վիմաց՝ քարակուրծ այրին։
Վայրիկ մի դիտեալ՝ անդրէն կորաթեկ ճոճեալ՝ գլորէի,
Սուղ ինչ կողմանիլ և տալ լուրջ աչացս սակաւ նինջ հեշտին։

Աչօք մի ի քուն, աչօք մի արթուն դարձեալ թնդագին
Բաղխեաց զլսելիս այլ ձայն երկնահրոս ի կուսէ լերին։
Հատա՛ն, խզեցան բարձք, ջիլք և յօդուածք իմ բոլորովին։
Զգայուն անզգայ՝ մերձ եղէ գլորիլ ի վիհ խորխորին։

Աստէն մակարդակք՝ առաստաղք երկնից ցոլեալք յերկկուսի,
Իջին ընդ ամպովք հոգիք անմարմին՝ երկնաբնակ խմբի.
Առեալ զանշշունչ՝ դի ոսկերոտեացս ի վախից աստի,
Ածին ի թատրօն երկծայր գագաթան Մասսեաց կատարի։

Անցանէին ժամք, ճոխայր արեգակն յելս իւր զուարթարար,
Իսկ ես վերանցեալ՝ յանկոխ լեռնամէջսն՝ չուէի անդադար։
Երբեմն գահավէժ ի բարձուէ լերին հոսէի ի վայր,
Երբեմն ի վեր կոյս ընդ հոգեղինացն եղեալ զուգապար։

Աղու ալևոր, մեղուակն, մրայօն գահերէց գնդին՝
«Մատիր աւէ, աստ՝ պանդուխտ թափառեալ, մարդ դու
հողածին»։
Ասաց և յարեաւ, յարոյց և կանգնեաց կանգուն զիս յոտին.
Մածեալ զերեսօքս զալեզարդ իւր գիրկ՝ խնդրէ քաղցրագին։
«Պատմեա՛ ինձ՝ ո՛րդեակ, կտոր մի փայտեայ, անկերպ,
անսովոր
Ծաճանչ արձակէ՝ զբոլոր լերամբս լուսով ահաւոր.
Չէ՛ նա ի փայտից՝ մերոյս տապանի՝ քառաթև է նա,
Անծանօթ մտաց, անհուպ տեսութեանց և անմերձաւոր։

Քանիցս դողալով՝ մայր քո և եղբարքդ սիրտ տուեալ միմեանց,
Կամեցաք հպիլ, շօշափել ձեռօք զայս նոր արարած։
Չև իսկ մերձեցեալ՝ անդէն հոգեսպառ յերկիր գլորիմք,
Պակուցեալ նորին յահեղ նշուլից՝ լուսաքանչ դիմաց։

Խարխալուն մայր քո և ես ծերունիս՝ անգէտ մնալով,
Կական արձակեա՛լ յամայր ի հեռուստ դեդևիմք լալով։
Ո՞չ մեք տնկեցաք՝ զայգի, զորթ, զուռ, ասեմք ողբալով,
Որ մե՞ր են աշխարքս, շարժուն և զեռուն, այս ցամաք և ծով։

Ե՛կ, հայեա՛ց, որդեա՛կ, ահա՛ Արկուրին, ուր արկաք զուռին,
Ահա՛ և Մարանդ, ուր մայր քո է անդ ընդ յարկաւ շիրմին։
Ա՛ստ էր մեր հովիտ, ա՛նդ մեր բնակարան, ա՛նդ խաշնատեղին։
Ա՛ստ մեր զոհարան, ա՛նդ վրանավայր ի ձորամիջին։

Տե՛ս՝ շերտ մի փայտեայ՝ անշուք, անպիտան՝ աստէն երևեալ,
Ծակէ, ծակոտէ, ոչ թողու հպիլ, ի կուշտ իւր գնալ»*։
Ասէր և ողբայր խորշոմ ծերունին՝ զլանջօքս անկեալ.
Ցուցանէր զոլորտս, որ շուրջ զմեօք. մատամբ իւր օրհնեալ։

Չէ՛ նա շերտ փայտի, չէ նա անպիտան, չնչին ստեղծուած.
Որպէս դուդ կարծես, կրկնեցի առ նա, Հա՛յր համայն ազգաց։
Է՛ նա դրօշակ՝ վահան, զէն, ասպար Արքային փառաց,
Որով փշրեցան ժանիք՝ մահագլուխ իշխանին դիւաց

* Փայտեայ խաչն է, զոր կանգնեցաք ի վերայ գագաթան Մասսայ։

«Սա՞... սա՞... լսե՞ք զայս Յափէթ, Սէմ և Քամ, զաւա՛կք
անդրանիկ.
Լսէ՞ք, զի՞նչ նոր ձայն, նոր դարձ շրջանի տեսանի այժմիկ։
Այս լուր և յիմ դարս հնչեաց՝ լռեցաւ, թէ այր մի մարտիկ
Հարցէ ուժգնաձեռն՝ խաչին զօրութեամբ դժոխոցն զնիզ»։

Ասաց և կալան՝ ոմն ըզուսօքս և ոմն զձեռացս,
Բոլորեալ զինև իբրու ջոկ մաքեաց ըզհօտովք գառանց։
«Գնա, տա՛ր՝ ասեն, աղաչեմք զքեզ, զայս ձև նշանաց,
Գնա՛, տար՝ ի կառս ի վայրս հանգստեան քոյոց նախահարց»։

Ի ձայն երկնագրոհ, դէմս յարտասուաթոր, լի անմահութեամբ՝
Հային ի կայան իւրեանց հին աւուրց, հային կարօտով,
Եւ բացեալ զկուրծս՝ անդ բազկատարած՝ միաձայն հնչմամբ՝
Օրհնեն ըզդարուց անհուն կառավարն գոհաբանելով։

«Հեղեղաց ալիք Քև դադարեցաւ՝ էակ անսահման.
Եւ ճիռ՝ քեզանուէր իմ գերդաստանի աստ եգիտ զհանգիստ։
Այլ յետամնայ թոռունք որբացեալ՝ աստ ի ծով արեան
Սուզեալ, ծփային մինչ Քո ձեռն հզօր՝ փրկիչ նոցա եւ։

Առ քե՛զ սլանամք սոյն աղերսանօք յատեան Քո ի վեր.
Պահել ամրաձեռն զազգ մեր և զերկիր, զայժմեան նոցա հայր։
Աստ փայտն փրկագործ, աստ ազատարարն սերնդոց մարդկան.
[illegible] ընդէ՞ր նոցա միայն մնացէ կեալ անտէր, անհայր»։

Ի ճէմս նազափայլս անդ ծագի լուսին համեստ, պերճափայլ.
Տեսանեմ զհրաշ անճառից փառաց ներկայիս, անցեալ։
Մեկնի վարագոյր երկնից՝ վառվառին աստեղք՝ հրաշագին.
Եւ դեռ երկրամած երկինք ամփոփեն զիմ միտս՝ կաթոգին։

Յաշաց, ի շրթանց, վարդագեղ յայտուց ժպիտ և արտօսր
Խառնեալ՝ փայլին մեղմ՝ լուսափիւռ ի դէմս դասուց
երջանկաց։
Երկնընթաց ի չուս դեռ հային ջերմին ի լեառն և ի ձոր,
Դեռ օրհնեն զնոսա խոյացեալ ի թևս ամպոց՝ երկնամբարձ։

Եւ իմ համբուրեալ զորբազան տեղին նախնեաց կայանին,
Ողջունիւ մաղթեմ՝ կալ նմա պատուար իմում աշխարհին։
Կալ յայմհետէ ամուր հանգստեան ընդդէմ թշնամեաց.
Կալ պաշտպանարան տարագրեալ որդւոց՝ յուսացելոց նմին։

Եւ ի ծոցս անկեալ երկնարձակ լուսոյ պայծառ արեգին.
Հայիմ զմայլեալ՝ ի ձորն ի խոնարհ՝ իբր յաշխարհ կրկին։
Աստ երկնից շրջան շառագնի ընդ ամպոց ծագաց խորանին,
Ուր յամէն կուսէ հրոսայ սոսկակերպ խարխափ գիշերին։

Դիւթական տեսիլ մառախլոտ դաշտին հանդիպահայեաց՝
Յիշեն ինձ զօրհաս՝ անբախտ կորստեան ազգաց, աշխարհաց,
Անդ գետք ծածանին, անդ դաշտք ծիծաղին ընդ նորեկ
ընտանին,
Ընդ նոր փոփոխումն, յիշխել հզօրաց, պարտիլ թշնամեաց։

Դարձաւ արեգակն գառել ընդ որմովք իւր հորիզոնին.
Դարձայ և ես յիս, զգացեալ զինև շորշոփ փախստին.
Վայ, եղո՞ւկ անձինս՝ ո՞վ զիս աստ էած յարտևան Մասսին.
Կորնչիմ աստէն, ուղղեալ առ բարձրեալն՝ գոչեմ լալագին։

Լե՛ր ինձ առաջնորդ՝ որ եսդ միշտ տէր անհուն և անճառ.
Լեր ինձ ուղեկից մոլար տարագրիս առ դարձս իմ ի վայր.
Ա՛ռ, տա՛ր զիս աստի, ուր մերձ են սահիլ ջախջախումն իմ ոտք.
Ա՛ռ, տար զիս աստի, զի մի՛ հասցէ ինձ գիշեր, կամ խաւար։

Ո՞վ անհուն, անհաս երկնից տեսչութիւն էակիդ վերին.
Ո՞վ որոյ խորոց՝ անեզր իմաստից չի՛ք չափ բնաւին.
Քանի՞ անհնար, քանի՞ դժուարին սահմանք անքննին
Քոյդ արարչատես ներհուն թափանցմանց բաց են և մեկին։

Ո՞ւր ձգին ձևակք ճարտար քոց մատանց, որ ո՛չ հարթեսցին.
Ո՞ւր ցողասցին շողք սրադէտ դիտմանդ, որ ո՛չ յայտնեսցին։
Քեզ օվկիանոս՝ բանայ զիւր յարգանդ անդնդոց խորին,
Քեզ երկինք, երկիր, ծովք և արարածք ի ծունր խոնարհին։

Ո՞ր աչք յուսային տեսանել զՄասիս, զգավառ նախնային.
Թէ նախասահման քոյ կամք հրաշածին ո՛չ գործակցէին։
Քև բարձրաւանդակ գագաթք լուսահրաշք նորայն ամպածին,
Ածան, ամբարձան ի ծագս շրթանց երկնից կամարին։

Հանցէ՛ զիս աստի՝ Քոյ լոյս երեսաց՝ փրկի՛չ բարերար.
Որ միայն գովես անյոյս նեղելոց հնարել զճար։
Երթայց և կալայց՝ հայթայթել անձին հանգիստ և դադար
Յորմէ զրկեցայ, անկեալ յայս դիպուած անել, չարաչար։

ԶԳԱՑՄՈՒՆՔ ՑԱՎԱԼԻՑ ՍՐՏԻՍ ԸՆԴ ՏԵՍԱՆԵԼ ԻՄ ՅՕՏԱՐՈՒԹԵԱՆ ԶՍԻՐԵԼԻ ԱՇԽԱՐՀԱԿԻՑՆ ԻՄ ՑԱՀՐԱԴ ԲԱԴԱԼՈՎ.

1832. 2 Մարտի: Դերպտ.

Անցին երկու ամք և աչք իմ լալով կարօտ մնացին,
Տեսանել առ իս զոք հայրենակից զիմ փափագելի.

Հաղորդել նմա զիմ վիճակ օտար,
Գրկել զնազելին, ցուցանել զիմ վայր,
Լսել զմայրենի լեզուն քաղցրանոյշ,
Տալ հանգիստ սրտիս, տալ հանգիստ հոգւոյս։

Ո՛չ բարեկամութիւն քաղցր գերմանացւոց, ո՛չ շրջան չքնաղ,
Ուր իմ վերացեալ ի թևս բախտին, կայի անզբաղ.

Ո՛չ յորդորք սիրոյ, ո՛չ ձայնք սիրելեաց
Մեղմէին զայս վէրս, սրբէին զիմ լաց,
Ուր և հայէի ժողով ինչ բազմաց,
Անդէն փլանիւր սիրտ իմ տրտմազգած։

Այլ ի վախճանի գտանեմ զնա, աւաղ աստուած իմ,
Զի՞րդ կաթոգին զարկան նորա աչք հանգեան ի դէմս իմ։

Տեսիլ ցամաքեալ, հանդերձ բիրտ անշուք
Կերպարան խանձեալ ի ցուրտ և ի բուք.
Չև նորա բացեալ զդայլայլեակ լեզուին
Հուր կայծակնաթափ յերակունս անցին։

Ձեռք ինձ բազմերախտ ածին զնորաաքանչ զայն նոր արարած,
Ձեռք՝ որ երախտեօք լցին զիմ հոգի ի չափս կենաց.

Զիս կոչէ առ ինքն նա անակնկալ
Ես երթամ առ նա արհաւրօք պատեալ,
Զինև պարառի անոյշ գերդաստանն,
Ժպտի քաղցրամոք ո՛չ տայ ինչ նշան։

Անհամբեր դիմեմ դէպ ի մենարանն, խուժեալ ուժգնաբար,
Այլ յետս կասին աստ ջոկք ընտանեաց, անդ իմ բարեբար,

Ձեռն ածեալ նորա, դիմեմք երկոքին,
Տեսեալ զայն հրաշ յափշիմ մոլեգին.
Այլ նորա բարբառ «ահա՛ Հայկազն ոք»
Թափէ զիս անդրէն իբր ի քնոյ զոք։

Սեղմեալ մեղմովին իմ զձեռս նորա հայիմ ըղձագին,
Ի գիծս և ի գոյնս ի դէմս և ի դերս քաղցր հայրենակցին,

Նա ցիս հարցանէ թէ ուստի՞ իցեմ,
Ես նմա անդրէն զայս հարցուած կրկնեմ.
Եւ գետք արտասուաց սորեն երկոցունցս
Թանան, ոռոգեն զերեսս և զծոցս։

Չև՛ աւարտ տուեալ նա իւրոց բանից, անդէն խզէին
Զթելս դարձուածոց թառաչք ծխամածք խոշտանկեալ սրտին.
Պատմէր և սգայր, սգայր և պատմէր
Զվիշտս հայրենւոյն, զքակ և դաւեր,
Զմահ, զգերութիւն, յանսիրտ թշնամեաց,
Զրկանս, զհալածումն յանողորմ տէրանց։

Չև շիջեալ նմա ջերմ բորբոք սիրոյ գողտրիկ ընտանեաց
Չև՛ մեկնեալ յաչաց երկնատիպ պատկեր կնոջ, զաւակաց,

Յիշեալ նորա զայնս, անդէն պապանձէր,
Լեզուն կարկամէր, խելք նորա ցնդէր.
Եւ յուշ իւր եկեալ, մերթ անիծանէր,
Մերթ խնդրէր ինքեան մահ դժոխըմբեր։

Անոյշ հայրենեաց լերինք և ծործորք, անոյշ դաշտ և վայր
Դեռ կային նմա յանդիման աչաց կենդանի դալար (յամայր)

Թէ կամէր յիշել զտեղւոյն քաղցրութիւն,
Անդէն գայր ի միտս մարդկան դառնութիւն,
Միոյն կարօտիւ, միւսոյն ահիւ
Մաշեալ էին նմա, ոսկերք դառնախռիւ։

Զի՞նչ մղեաց զքեզ նժդեհիլ ասեմ յերկիր յայս օտար,
Զինչ վարեաց զքեզ տարբերել յայս ծով անկայ անդադար,

Ո՞ւր քո հայրենիք, ո՞ւր հայրենակիցք,
Զիա՞րդ հեռաւոր, զիա՞րդ տարաձիգ
Նոքա անընկէր և դու անաշխարհ
Մաշիք կարօտիւ մեմեանց չարաչար։

Քնքուշ կենակցին թողեր անդ մաշիլ, հառաչել զքեվ,
Արտասուք ի դէմս, կսկիծ ի սրտի որոնել զքեզ.

Աստ որդիք վայեն, անդ եղբարք սգան,
Ոմն զամուսին, ոմն զհայր կարդան.
Ո՛հ չի՛ք այցելու, փախեաւ նոցա յոյս,
Մթին նոցա վայր, ոչ ոք տա անդ լոյս։

Ծագի արեգակն, փայլի անդ լուսին, աստեղք շողշողան,
Այլ ջերմ ամուսնոյն, որբացեալ, որդւոց մութ է շրջական,

Հային յամեն կոյս կականմամբ, լալով,
Գուցէ յայտնեսցի սիրելին բարով.

Այլ աւաղ ժխտին արարածք համայն,
Ոչ գայ ի նմանէ համբաւ նորաձայն.

Ի պանդխտութեան ի տապ և ի տօթ գազազեալ արփին,
Ուխտէր մեռանիլ ի դուրս օտարաց քան դառնալ ի տուն.

Լաւ՝ ինձ փչել աստ անէ զիմ հոգի,
Քան անդ տեսանել վիշտ, ղաւեր ազգի
Աստէն զիս բարձցէ գէթ ոք քրիստոնեայ,
Այլ ո՞ յիս անդէն ողորմի, գթայ։

Այսպէս Թափառի, այսպէս շրջշրջի անտուն, անտեղի,
Անբախտ Հայկազունն յամենայն անկիւնս ի ծագս երկրի

Ջիք նմա հանգիստ, չի՛ք նմա կայան,
Ոչ յօտար աշխարհս ո՛չ յիւր ծննդարան,
Ելեալ յօտարիս, լայ զիւր հայրենիս
Մինչև սպառին շունչք նորա յաստիս։

Հայրենեաց սիրոյ ո՛չ մնաց նշմար ի սիրտս Հայկազանց,
Անդ շիջաւ նոցա մինչ օրհաս նոցա տուաւ այլազանց

Ազատել նոցա ի ծանր լծոյն,
Գրաւեն զցուպ, լինին երերուն.
Թողուն զհայրենիս աշօք ցաւագին,
Դիմեն յօտարիս մուրալ զպարենին։

Վասն հաւատոյ, վասն օրինաց կորեան նորա փառք,
Ի ձեռս այլազգեաց, աշխարհ սիրալի, իշխանք բարեփառք,

Նոյն իսկ կրօնակիցք հալածեն զնա,
Եւ դաւանակիցք ո՛չ ժուժեն նմա.
Խուզէ նա անձին ուստէք օգնական,
Այլ ընդվա՜յր, զի չի՛ք նմա ոք պաշտպան։

Ո՛հ, անհուն էակ դու ամենագութ հա՛յր արարածոց
Զի՞նչ այս դառնագին պատիժ, պատուհաս քոյոց
ստեղծուածոց.

Առ քե՛զ իմ աղերս, առ քե՛զ իմ մաղթանք,
Առ քե՛զ իմ խնդիր, առ քե՛զ հառաչանք,
Թո՛ղ ամենաբարի աչք քո քաղցրասցին
Յիմ ազգ Թափառուն, յիմ ազգ վշտագին։

Ընկալ զաղաղակս ի խորոց սրտից առ քեզ ամբարձեալ,
Ընկա՛լ զգանդատ, զոր հանէ առ քեզ հոգի ցաւագնեալ.

Յանհասիդ աթոռ հասցէ իմ բողոք,
Բարձրելոյդ յատեան ելցէ այս մորմոք.
Դու՝ յորոյ կախին վիճակք էակաց,
Դու՝ յորմէ ելին կարգք տիեզերաց։

Եւ թռչունք անգամ ունեն իւրեանց բուն, ուր օթագային
Եւ սողունք անգամ, որք ի սիրտ երկրի անվրդով հանգչին.

Այլ մեզ չի՛ք տեղի, չիք ուրեք դադար,
Ի վերայ երկրի, զոր ձեռք քո արար,
Սահի Հայկազունն միշտ ալեկոծեալ
Զաւակ և զտուն, զաշխարհ մոռացեալ։

Ո՞չ ձեռք քո հանեն յանդնդոց զքոյ զարարածս համայն,
Ոչ շունչք քո ածեն՝ կեալ նոցա յերկրի քեզ միշտ օրհնաբան.

Եկեսցէ՞ արդեօք և մեզ ժամանակ,
Զի անցցէ ի մէնջ այս խիստ քո մուրհակ.
Տեսցուք և մեք լոյս ի մերում գնդի,
Զոր ձրի վայելեն համայն ազգք երկրի։

«Հայրենեացն քաղցրութիւն ո՞ւմ ոչ գրաւէ զսիրտ, ո՞ւմ ո՛չ շարժէ զեռանդն ներքին՝ ի զրկելն ի սիրալի տեսութենէ այնր սրբազան վայրի, ուր ծնաքն և սնաքն, ուր զառաջինն ճաշակեցաք զհամ գոյացութեան մերոյ։ Սոյն այս հուր եռանդնաբորբոք էր՝ որ ի 1832 ամին ի լինելն իմ ի Դերպտ

քաղաքի զցայգ և զցերեկ տանջէր զիս հանապազ. Ամենայն գերմանացի բարեկամ իմ նկատեալ զիս ջանային ամենայն կերպիւ փարատել ի մտաց իմոց, զայս վիշտ դառնակսկիծ։ Բայց ո՛չ ոք ի նոցանէ այնպէս ջերմ զգայր, այնպէս մարդասիրաբար դարմանէր զայսօրինակ վիճակ հոգւոյ իմոյ, որպէս անմոռանալի բարերարն իմ, անուանի պրոֆեսօրն և քաղաքական խորհրդականն անճառաշնորհն Պարրոտ։

Բազմիցս ցուցանէր ինձ զպատկերս հայրենեաց մերոց. կամ ընթեռնոյր զպատմութիւն ինչ ի վերայ աշխարհին մերոյ առ ի դիւրացուցանել զաղէտս սրտի մերոյ։

Անգամ մի ես տեսանէ զվերոյիշեալ Յահրատ Բաղալեանն խոյեցի ի մտանելն ի պոլիցէն։ Նկատեալ ի հանդերձիցն, զի Հայազգի է, իսկոյն ինքն ես աճապարի անդ և առեալ զնա, տանի ի տուն իւր և տալ կոչել զիս, ուր ես միշտ անհրաւէր գնայի։ Մտեալ առ սիրելի ընտանիս նորա, տեսանեմ զնոսա խռովեալս. ո՛չ ոք կամի ի հարց իմ պատասխանել ինչ։ Նոքա քաջ ճանաչելով զկասկածոտ բնութիւն իմ, կամէին այսու առաւել ես վառել զիս և արկանել ի մտատանջութիւնս։ Այնպէս զի, մինչև համարել իմ թէ յանցանք ինչ գործեալ իցէ իմ, զի նոքա այնպէս անսովոր վարէին ընդ իս։ Յայսմ վարանման, յայսմ խռովայոյզ վիճակի սրտի իմոյ, յանկարծ դրունք սենեկի անհամեմատ բարերարին իմ յետս բանին և նա ինքն՝ զձեռանէ կալեալ Յահրատի՝ կանգնի առաջի իմ այսու բառիւ «Ահա ցանկացեալն ի ձէնջ հայազգին»։ Առ տեսիլ նորա և խօս ամենայն գերդաստանն բոլորի զինև բարձրաձայն խնդութեամբ և ծափահարութեամբ։ Արարիչ իմ, ո՞ր քարացեալ սիրտ ո՛չ փոխիւր աստ ի հուր կայծակնաբորբոք ի տեսիլ հայրենակցին, ի խնդակցութիւն այնպիսի ազնուածնունդ անձանց։ Եւ զինչ [Պարրոտ] անուանի փիլիսոփայն, երկնային ուրախութեամբ դրոշմեալ ի դէմս՝ կայր մնայր, յերկար առ ի վայելել զպտուղս առաքինութեան. որում վսեմ սիրտ նորա էր պատճառ։

Զամենայն զգացմունս և զզրոյցս մեր՝ զիարդ և իցէ, յայտնեալ իմ ի վեր անդր, բայց լսող կամ ընթերցող հայազգին որպէս ոչ զարմասցի, թէ այնպիսի անձն, որ հոյակապ արժանի համարեաց ինքեան հրաւիրել ի տուն իւր զայնպիսի գծուծ, քրձազգեստ աղքատ ոք ողորմելի, առ ի միմիայն զիս առնել՝ ուրախ տեսութեամբ հայրենակցոյն՝ հի՞մ քնքուշ այս զգացմունք։ Սովաւ ոչ բաւականացեալ, խնդրեաց ի նմանէ ճաշել ընդ մեզ. ապա իւրաքանչիւր ոք բաշխեալ աղքատին՝ ոմն զոսկի մի, ոմն զմանէթ և այլն այնպէս արձակեցին զնա։ Բայց այս զամենայն բորբոքէին, մորմոքէին զիս. ի տեսանելն ազգակցոյն իմոյ զայնպիսի դառն վիճակ, զայնպիսի ազալի կերպարան։ Մահ խնդրէի անձին ի ցաւոցս, բայց կեանք իմ չէր

տուրք։ Որպէս մոռացայց և զսխրալի նոցա զրոյց ի ժամ հացկերութին։ «Որպիսի չքնաղ դէմք, որպիսի գեղեցիկ գծագրութիւն երեսաց, որպիսի նազելի են աչք Հայկազնոյս» և այլն և այլն. Զայսօրինակ դիպուածս մարդասիրութեան զհարիւրաւորս ղբիւրաւորս տեսեալ է իմ առ գերավսեմ անձինս այսոսիկ, զորս այժմ չէ տեղի պատմելոյ. բայց ո՞ ոք ի մէնջ արասցէ զայս, զայս միայն կամէի հարցանել։ Այնպիսի Յահրատք յիւրաքանչիւրում աւուր հարիւրաւորք շրջին ի փողոցս, քաղաքին մերոյ վասն մշակութեան և ում անկանի 'ի միտս, թէ նոքա ես արիւն մեր են։ Զյիշեալ Յահրատն ես աղքատութեանն էր հասուցեալ անդ։ Աղքատութիւն, որ զհազարաւորս ի պատուական հայրենակցաց մերոց ի վերջին վախճան յուսահատութեան հասուցեալ տանջէ և մաշէ, այլ աւա՛ղ ե՞րբ բացցի սոյն արշալո՛յս առաւօտեան, ուր ճոխք և փարթամք ազգիս մերոյ դարման տարցեն, նմանապես ցաւամաշն իւրեանց մերձաւորաց և սրբեսցեն զարտասուս նոցա հոգետանջ։ Երանի ժամանակին, երանի՜, որ ժամանակակից և մասնակից գտանիցէ այսօրինակ սղղաշէն հայրենասիրութեան...»։

ՏԱՂ Ի ԳՈՅՆ:

Կարե՞մ սրտիս կսկիծը լեզվով քեզ պատմել.
Թե իմանաս իմ իղձը, թողո՞ւս ինձ տանջել
Ամեն մեկ քո անունը միտքս բերելիս
Բոլոր ոսկերքս ջանումս մաշին՝ հիշելիս։
Ախ քո սուրբ հրեշտակային դեմքն իմ աչքիս
Էլ ո՞ր օրն ինձ կերևին արև իմ սրտիս։
Լաց ու սուգ ու հառաչանք ինձ խավարացրին.
Էլ ի՞նչ օգուտ ինձ էս կյանքն՝ որ թե քեզ չունիմ։
Ընչո՞վ կարե վիրավոր սիրտս մխիթարել.
Թե քո սուրբ ձեռն զորավոր չկամի բժշկել։

Քո փանջարի առաջին բոլոր գիշերը
Շրջիմ, սգամ ցավագին իմ դառն օրերը։
Լուսինն պայծառ աննման փայլի երկնքից
Նրա լուսով բոլոր աշխարհ ցնծա խնդալից։
Բայց իմ կարոտ աչք ու սիրտ արտասուս արյան
Սփին դառնագին ցավոք ի խորս տրտմության։

Բացվի՛ր, իմ լուսին բացվի՛ր, միայն քո տեսություն
Կարե իմ բոլոր ցավերն տանել ու բառնալ։
Ախ թե սերն իմ մարմինը մոխիր դարձնի,
Կաթի՞ մեկ ցող երեսիցդ՝ որ ինձ կենդանացնի։

ՍԷՐ ԱՌ ՀԱՅՐԵՆԻՍ

Հեռաւոր տարածում այս միջոց լայնութեան
Որ խլէ ուժգին ի քոյ սուրբ տեսութեան
Կարօտիւ զնա ի սէր քո անբաժան
Հայաստան իմ քաղցրիկ Հայաստան,
Ճամբեցեր զիս անհաց, անպաշար, անդարման
Անընկեր, աննպաստ, յուղի այս տարական,
Այլ զքո քաղցր անուն կալայց ես սրբազան.
Ե՞րբ եկից երբ տեսից զքոյդ սահման աննման
Ուր Մասիս, Արագած հոյակապ հոյանան,
Երբ եկից երբ մտից ի դաշտ քո ի գեղազան Հայաստան
Ուր կամար երկնային կայ զքեզ շրջական,
Ոհ վաղուց ոչ տեսին զայն աչք իմ լալական
Որ ընթացք փոփոխեն զմանկութեանս իմ կայան. Հայաստան.
Ծիծաղին թերևս այն աստեղաց վառարան,
Ի վերայ մարմանդոց քոց վայրից հրաշական
Իսկ թէ լան ո՛չ գիտեմ։ Կամ բացեայ տարական Հայաստան։
Յանձնեցի քեզ զծնօղս, զընտանիս, զգերդաստան,
Յանձնեցի սքամած, ի լաց յողբ անպայման,
Լան արդեօք տակաւին, թէ արևովք քո խնդան Հայաստան
Թ·է արևն ելանէ՝ կամ նորա յանդիման,
Թէ գիշերն տարածէ՝ անկանիմ ի վարան.
Ե՞րբ տեսից կողկողեմ ի հայրենիս զայս վայրկեան, Հայաստան,
Ծխամած իմ հեծեծ իմ մորմոք հառաչման,
Թխպագին քան ամրոց՝ ի բարձունս վերանան
Ո՛չ գիտեմ բերե՞ն ամպք քեզ ցաւոցս զայս զուժան, Հայաստան
Սիրախումբ քոյդ զաւակք որք ի քեզ զօրանան
Ի դասուց, որոց ես կամ օտար, զուրկ միայն
Ոհ յիշե՞ն զիս արդեօք, թէ վաղուց մոռացան, Հայաստան,
Ոչ լսեմ զ<ձ>այն երգոց՝ զոր ի դաշտ քո

Գա՞ն արդեօք յայդ կուսէ թռչնակաց ինչ երամ
Չի տացես ինձ ոչ լուր ի վայրեաց սիրական,
Զայս տեսին ո՛չ աչք իմ, որքան աստ կամ մնամ Հայաստան.
Զիմ սիրոյ զիմ հոգւոյ առ քեզ միշտ զեռանդեան
Ա՛ռ վերջին զայս կտակ՝ զոր շրթունք իմ քեզ տան,
Կաց դու ինձ, որպէս ես քեզ սիրով անբաժան։ Հայաստա՛ն։

ՍՈՒԳ ՀԱՐԱՋԱՏ ԵՒ ԾՆՈՂԱՍԷՐ ՈՐԴՒՈՅ Ի ՎԵՐԱՅ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄՕՐՆ:

1837. Փետր. 5. Թիֆլիս:

Շատ օրեր անցին ու շատ ժամանակ
Որ անույշ տեսույդ քո զրկյալ որդի
Ո՛չ ձայնդ լսեցի, ո՛չ առի փափագ
Կարոտյալ սրտիս մա՛յր իմ սիրելի։

Արյուն, արտասունք թափին իմ հաչաց,
Կրակ է ընկնում հոգիս ու մարմինս,
Որ ընկերքս ի գիրկս յուրյանց ծնողաց
Փաթութին և ես ա՜խ անմայր տանջիմ։

Ինձ որբ թողեցիր հաշխարքիս վրա.
Հավիտյան մնամ կարոտ տեսությանդ.
Թ՛ե գիշեր, թե օր թե առավոտ գա.
Ես պետք է մաշվիմ քո քաղցր սիրովն միայն։

Միթե լա՞վ է հողն, ուր հանգստանաս
Քան զտուն ու տեղն՝ որ դու շինեցիր
Միթե հա՞յր, որդի, քո զավակաց դաս
Այդքան դու շուտով մտքիցդ հանեցիր։

Որքան ես իմ հորն ա՜խ ու ո՜խն լսեմ
Սևանում է ինձ աշխարքս ամենայն.
Լեզուս չի՛ բերում՝ որ խոսք ինչ ասեմ.
Տրտմյալ ծնողին մխիթարության։

Հաշխարքե հաշխարք էկանք՝ որ թողուս
Մեզ ցավով, սգով անբժշկելի.
Է՞դ էր կամքն՝ որ մեք մնամք անհույս
Մա՛յր իմ բազմագութ, մա՛յր իմ սիրելի։

Ո՞ւր այն գթալից ձեռք քո մայրենի,
Որ պահեր ինձ միշտ, անփորձ, անսասան.
Իմ սիրտս ու հոգիս, քար պետք է կտրի,
Որ ես մոռանամ էստոնք ամենայն։

Ձեռս ծոցումս շլինքս ծռած
Ա՜խ ոխ քաշելով կյանքս սևացավ.
Իմ դառն օրերիս լերդս խորոված
Անունդ հիշելով սիրտս մաշվեցավ։

Գամ գերեզմանդ ո՛չինչ ձայն լսեմ.
Երթամ ես ի տուն՝ քո տեղդ է պակաս.
Լամ թե արտասվեմ թե հոգոց հանեմ,
Ո՛չ ես հովանամ, ոչ դու իմանաս։

Խղճալի իմ հայր երբ որ քեզ հիշե,
Սգամք մենք բոլոր, լամք անմխիթար,
Ի՞նչ կըլեր մեր կյանք քեզ համար պակսեր.
Որ քո շվաքն մեզ վրա անպակաս մնայր։

Ե՞րբ կըլի որ ճտովդ ընկած
Էս բոլոր իմ ցավս քեզ մեկ մեկ ասեմ,
Էն սրբոց միջումն քո կշտիդ նստած.
Քո քաղցր երեսդ տեսնեմ, վայելեմ։

Ինձ մի մոռանար ո՛վ անուշ իմ մայր,
Քո որբ զավակդ միտքդ բեր էդտեղեն.
Որքան շունչս կա դու մի՛ հավատար,
Թե քո արածդ կերթա իմ սրտեն։

* * *

Ո՞ւմ ասեմ սրտիս դարդերն ես, ա՜խ ո՞ւմ
Լավել ա լեզուս, փակվել իմ բերնում.
Լեզուն որ սրտի դարդը եդ չասի,
Էլ ո՞վ կիմանա, ախ, ո՞վ կցավի։

Մեր սրտի դարդը կրակ է ու բոց
Քանի որ պահես, չասես դու այլոց,
Կէրվիս, կմաշվիս անդեղ, անդարման.
Մարմինդ քեզ համար կդառնա գերեզման։

Սրտի բալանիքն լեզուն ա, լեզուն,
Բերանը՝ դուռը, աչքը՝ լուսատուն.
Թէ փակ կպահես, կսկիծն ու ղուսուն
Քեզ կփոթոթեն, աչքի լույս՝ սիրուն։

Շունչ որ չքաշես, ու նոր շունչ չառնես,
Ապրել չես կարող՝ հո՛գի՝ կհալվես.
Ի՞նչպես ես ուզում, որ մնաս հանդարտ.
Թե չասես ուրշին քո ցավերն, քո դարդն։

* * *

Էս ոտանավորի գրելու պատճառը։

Ո՞վ չի գիտի, որ տեղիցը վեր կենողը հենց մեր խեղճ խալխի վրա ա ոտը բարձրացնում։ Գիտուն մարդը նա է, որ պակասություն տեսնելիս, սիրտը ցավի, ձեռից էկածը չխնայի ու պակասավորին ուղղի, չէ թե վրեն ծիծաղի, գրով լեզվով խայտառակ անի։ Ամեն ազգ լավութեան հետ վատություն էլ ունի՝ ինչպես մեկ ծառ, որ սաղ պտղի հետ չուռոտն էլ ա բերում։ Եթե անուսում մարդը պակասություն ունենա, չէ զարմանալու, այլ ներելու, ցավն էս ա, որ մեկ մարդ համ լուսավոր ըլի, համ պակասավոր, բայց իր ծեղը թողած՝ այլոց գերանը քննի։ Թե աստված կտա մեր Ասիացիք էլ քիչ քիչ աչքըները բաց կանեն, էն ժամանակը չեն թողալ, որ ամեն հայվարա մարդ իրանց վրա բերան բաց անի։

Կամենալով մեր խալխի բնությունը էնպես իմաստուն մարդկանց բնու-

Թյան հետ մի քիչ համեմատիլ, ես մեր հազարփեշեն մեջ բերի։ Կարելի ա՝ թե շատ բառ, շատ խոսք քիչ մի ծանր թվի, բայց այլ ձեռվ հնար չի կար, չունքի բանն էնպէս պետք է շինած, գրած, որ կարդացողի սրտովն ըլի։ Շատ մութը լեզվով գրիլ էնպես եմ կարծում, թե խալխին դիր չի գալ։

ՀԱԶԱՐՓԵՇԵՆ։

(Երգիծաբանություն էն բարի անձանց վրա, որ մեր խալխին փուդն են դնում. Խաչ. Աբովյան)

Մեկ իմաստուն մարդ մեր հազարփեշի
Անունը լսելով, ու մեր ումբի,
Մեր կռաքիթ կուլի, ու գինու պոզի,
Մեր սև տկճորի, ու կպրած տկի,—
Զահլեն գնում էր, սիրտը խառնվում։
Քթին հուփ տալիս, աչքերը խփում.
Մեր խալխի գլխին թուք ու մուր ածում։
Հենց իր տեղումն էլ ոտը քարին խփում,
Թե վրաստանցիք մարդի հեսաբում
Չի պետք է ըլին՝ որ չեն խնայում,
Աստուծո սուրբ բաժակն էսպես մուռտառում,
Իրանց բերանն էլ հետն ապականում,
Նոյի շարբաթը՝ գոմշի ու եզան
Կամ իծի, ֆորթի լպրդած կաշում
Ածում ու պահում, ու նրանց բերանն
Էնպես՝ ղաղլով հուփ տալիս, կապում,
Որ ազնիվ գինու քաղցր հոտն ու համը
Ումբու, տկճորի կպրած փիս հոտումն
Յաղու ա դառնում, ու հոգին, ջանը
Իրան փորումը խեղդում, սպանում։
Ժամի բաժակն էլ հենց հարամ անում.
Տերտերի բերանն ու իրանց փորը
Կպրի կարասի պես սևացնում։—
Մեկ սուպի գդալ հենց մեջ են քցել,
Անունն էլ մեծ մեծ՝ հազարփեշա դրել,
Լավ շշի նրանով կարես խփշտել։
Որ յախա չունի, փեշն ո՛վ ա տվել,
Որ էսպես են նրան կնքել, մկրտել։
Դեռ գլուխը բերանդ չհասած, դրած՝
Կոթն են դեմ անում, գինով լցրած։
Ումբին, տիկն հո՝ էնպես իմանաս,
Սելի միջումն՝ թե որ ռաստ գաս,
Անգլուխ հայվան ըլի դես ու դեն ընկնում,
Մարդի ոտ ու գլուխ ռուսվա անում։
Չէ՝ էսպես երկրում շունը չի կենալ
Էնպես շան հաջաթն իրան բերնին տալ։
Ափսո՛ս էն հողը, ափսո՛ս էն վազը,
Որ էսպես հիմար մարդքերանց ճանկը
Գինն էլ ա կորցրել, իրան պատիվն էլ։
Ընչի՞ չենք էնդեղ մենք ծնունդ առել,
Որ խստակ բոչկում, շուշե բուդիլկում
Աստուծո տված բարին պահենք ամանում։
Որդիանց որտեղ սատանի քամին
Պտտեց ու մեր խեղճ շնորքի կարասին
Աչքը թող լցրեց, քարեքար տալով.
Գլուխը ջարդելով, ոտը կոտրելով
Երկինքը հանեց ու գետնին խփեց,
Կավկասի սարի էս կողմը շպրտեց։
Աչքը տրորելով՝ հենց որ բաց արավ,
Գլխին, ոտին վեր հատելով տեսավ,
Որ մեկ քանի մի ջահել վրաստանցի
Իրար մոտ նստած մի ծառի տակի,
Բաղերը քաղում, խաղողը կտրում,
Հնձանը բերում, առագաստն ածում,
Ոտները վեր քաշած կոխում, կխչորում.
Հետն ուտում խաղողը, կեսը դեն քցում.
Պանիր, խորոված՝ հենց տաք տաք ուտում.
Հազարփեշեն բռնած՝ իրար դեմ անում.
Կուլեն կլկլացնում, ռումբին դարդակում,
Ու իրանց քեֆին խաղող կամ խնձոր
Իրար գլխի խփում, հետը խաղ ասում։
Վեր կենում ցոփ, ցոփ՝ պար գալիս, նստում.
Իրար ճիտ անում, էլ եդ հաց ուտում,
Երեսները վարդի պես կարմրացրած

Թունգերով գինին իրար գլխով խփում,
Կամ անց կենողին կանչում, նստացնում,
Ուտացնում, խմացնում, էլ ճամփու քցում։
Խելքները տեղը, ուշները գլխին,
Մեկին էլա մեկ վնաս չէ՛ր ըլում։
«Տեր իմ և Աստված՝ ես ի՞նչ տեղ ընկա»,
Գեջդանգեջ գլուխը բարձրացրեց նա,
«Ո՞ւր մեր բալն, կոնցերտն, մեր էն թեատրը.
Մեր քլուպն, մեր բիրժը, ու մեր տրաքտիրը,
Ո՞ւր մեր մուզիկեն, մեր քաղցր սկրիպկեն,
Մեր դամերն ու մեր կավալերները,
Մեր կանֆետն, մեր տանցն, ռոմի թասերը,
Շամպանսկու ռումկեն, ու բուդիլկները,
Որ ուտես, խմես՝ կոմպլիմենտ տալով,
Դամի ձեռիցը բռնած՝ պար գալով՝
Աթոռի վրա, դիվանի միջումն
Նստիս քո դամի կշտին. կամ սրտումն
Քո սերն ու շնորքը, սրտիդ հասրաթը
Թափես, էլ եդ ձեռն առնես քո ձեռը,
Էլ եդ պտտիս, մինչև գլուխդ ուռչի,
Ու շշմած ընկնես դամիդ առաջի,
Նա էլ աղլխով խփի երեսիդ,
Կամ իր սուրբ ձեռովն ջուր շաղ տա դոշիդ»։
«Էս ի՞նչ տեղ ընկա, էս ի՞նչ ջհանդամ.
Որ կողմն էլ ընկնեմ, էլ եդ սախտ մնամ։
Ո՛չ լեզու գիտեն, ոչ ինձ հասկանան.
Սիրտս պատռում ա, ո՞ւմ ասեմ իմ դարդն։
Հայ ասես, վրացի գլխիս մոտ էլած,
Քեֆընները քոք, գլխընները լցրած.
Բոն ժուր եմ ասում*, «քեֆ արա» լսում.
Գուտեն տաղ* կանչում, «տո խմի» լսում։
Ջդրաստի գոռալով ես բերանս ճռռթում,
Ուռա՛ են կանչում, գինին փորս ածում.
Բեսթի եմ ասում, ես «դոսթ» եմ լսում.
Պոկլյատիյ գոռում, «ալլահ վերդի» լսում.

---

* Գաղղ[իերեն] և գերմ[աներեն] կնշանակե բարի օր։

Կանալյա ասում, «յաղշի օ՞լ» լսում։
Մազերս եմ ուզում պոկեմ, պռճոկեմ.
Դուել եմ ուզում կանչեմ, սպանեմ.
Ոտս եմ բարձրացնում, քացի տամ ջարդեմ.
Մեկ մեծ պարկ ուշունց, ու հազար անեծք
Նրանց գլխին ածեմ, ու դուս գամ փախչեմ։
Շատ ուշունց տալով բերանս հոտեցավ,
Լեզվիս ու փորիս բոլոր նյութն հատավ,
Էս տավարները, հաստագլուխները
Բերնիս չեն նայում, իմ ասածները
Անկաջվեր անում, թե հասկանում էլ,
Էլի թևիցս քաշում, նստացնում.
Հազարփեշեն ու կուլեն դեմ անում։
Հենց գիտես՝ սրանք մարդի որդի չե՛ն,
Որ էսքան խոսքին տանին, համբերեն։
Սատանին ասես, քեզ դժոխքը կտանի.
Մեր մեկին ասես փորըդ վեր կածի
Դուել կկանչի, արինդ կթափի։
Սրանց կոպիտ գլխումն դեռ մեր մարիֆաթն
Հեչ տեղ չի՛ արել, կամ քթին դիպել.
Որ դատած ապրանքդ, մալդ ու դովլաթդ,
Պահես սև օրին, թե ջուր ուզեն էլ,
Ընչանք փողը չառնես, նրան տուն չթողաս.
Դռանդ ընկած ըլին, քացով խփես, գնաս։
Էս ի՞նչ ախմախ են, որ իրանց հացը
Ում որ տեսնում են, ածում առաջը։
Փող պտի շինած ու ծոցը դրած.
Լավ հաքած, մաշած ու կառեթ լծած,
Բալ տալ, բալ գնալ, իր փառքը ցույց տալ,
Մոտովդ անցնելիս, երեսդ շուռ տված.
Ինչ ունես, գլխիդ, ոտիդ խարջ արած...,
Լավ տեղ ու լավ շին, լավ նշան ճարած.
Ամենի աչքն էլ վրեդ մայիլ թողած,
Բուլվարն մտնելիս՝ հազար աչքի մեջ
Կամ կրակ վառած, կամ սուր, փուշ ցցած»։
«Սրանք հո մարդիկ չեն, իրանց շապիկն էլ,
Որ ուզես, կտան, էնքան խղճացել։

Անտես, անճանաչ տուն էլ որ մտնես,
Սուփրի գլխին դու կնստես, կբազմես։
Մեկ աչքդ աչքին, երեսդ երեսին
Առնելիս՝ կուզեն՝ տան իրանց հոգին։
Մեկին մեկ դարդակ դու բարով տալիս,
Ուզում ա ջանը հանի, քեզ բաշխի։
Չէ. սրանց մտքումն մեկ ֆիքր որ շըլի,
Քեզանից մեկ բան, մեկ ումուդ շըլի,
Մեկ խնդիր, արզա թե որ չունենան,
էս տեսակ պատիվ քեզ ի՞նչպես կտան։
Ասածն էլ չանես, խնդիրը չկատարես,
Էլի ոսկիքը, գլխով շաքարներ
Սունդուկով չայը, շալ շալ մանեթներ
Էլի ջեբդ ածես, նրանց հոգին հանես,
Թե խոսք էլ ասեն, քամակդ դեմ անես,
Ասիացի մարդն զակօն ի՞նչ գիտի,
Որ քեզ հետ խոսա կամ համարձակի։
Գլխին տուր, ղրաղին կանգնի՛ր, քեֆ արա՛,
Ջեբդ լցրու, քո երկիր գնա.
Ո՞վ ա հարցնում, կամ գլուխդ կտրում.
Անլեզու հայվանն տուն թողում, պահում։
Շատ էլ որ անեն, մեկ պոդսուդ կտան,
Պրծար, գլուխդ առ, ու գնա՛ քո բան։
«Որ դռնով անցնես, քեզ տուն են կանչում,
Հարսանիք, ղոնաղ առանց քեզ չանում։
Սազ ու սազանդար կանչում, մխիթարում։
Սրանք ի՞նչ գիտեն զակոն, էտիքեթն,
Գտակները գլխին, բերնին չիբուխի փետն
Ձեռք բռնում են, վերևը նստացնում,
Ջազդրա՛վիա ուռա՜ հենց կանչում, գոռում.
Ալլա՛հվերդի, յա յախշի՛ օլ բղավում։
Տո ձեր ալլահն էլ, վերդի մերդին էլ,
Ձեր զդրավին էլ, ուռա մուռեն էլ
Ձեր գլխովը դիպչի, ձեր աչքը հանի՛։
Ախր տրաքեցի, էնքան լագեցի,
Ախր ճաքեցի, էնքան լափեցի,
Գլուխըս վրես էլ դուզ չի կանգնում.

Աչքերս սևանում, խելքս ցնորվում։
Տո մեռա, թողեք՝ ա՜յ դուք մաշենիկ.
Ինձ հո չեք սպանիլ՝ ախ դուք յաբեդնիկ.
Ձեր տունն էլ քանդվի, ռումբին էլ տրաքի.
Ձեր հազարփեշեն, կուլեն ո՛չ ըլի։
Իմը ինձ հասավ, թողեք՝ մեկ դուս գնամ.
Մի քիչ շունչ առնեմ, իմ գլուխը լամ։
Խեղճ վրաստանցիք մնացին սառած,
Իրանց ղոնաղի ահվալը տեսած.
Փորը մեկ կողմից, բերանը բաց էլած.
Ուզեցան քուն դնեն, նրա մոտը նստած.
Կամ իր ֆաթերը մթնով հասցնեն,
Որ այլք չտեսնեն, վրեն չծիծաղեն.
Նա էլ չամաչի, իր երկիրը չփախչի,
Կամ իրանց մեկ չար խաթի մեջ չքցի։
Տեղից վեր թռավ գիժ կովի նման,
Ջարդեց շարքյասեն, կուլեն ու ամանն.
Ուզեցավ մեկ քար, կամ մեկ փեդ առնի,
Նրանց գլխին քցի, նրանց ջանը հանի.
Ինքը չորս ոտով գլխի վրա չոք, չոք,
Մաղալաղ տվեց ու ցոփ, ցոփ, լոք, լոք,
Շիրի կարասը ընկավ նա կուփ, կուփ,
Բերանն էր բանում, աչքն էր մնում խուփ,
Աչքերն էր ճմռում, քցում բերնի թուքն։
Գինին հարամվեց, բայց մեր խեղճ Հայերն •
Գինուց ձեռք վերցրին, ղոնաղի չորերն
Ուզում էին՝ որ հանեն, չորացնեն,
Բարձ, յորղան, դոշակ քցեն, պարկացնեն։
Մեր փիլիսոփեն, մարիֆաթի պարկն
Կուռը վեր քաշեց՝ որ նրանց ոտի տակն
Անի, սպանի, իր ջիգրը հանի,
Մեկ էլ որ ջանին զոռ տվեց, բիրադի
Ջուխտ ոտով ընկավ սուրբ ամբու գլխին.
Ռումբին կատաղեց, ռեխը բաց արեց,
Մեր ուսյալ գժին խտիտը քաշեց,
Աչք, ունքեր, երես դեղ դրեց, կպրեց։
Մեկ էլ որ ուզեց, բերանը բաց անի,

Որ իր շկոլի աղոթքն եդ ասի,
Ռումբին շկոլի դեռ ձեն չլսած,
Ո՛չ վարպետ տեսած, մարիֆաթ չառած,
Որ իմանա թե՛ կոմպլիմենտն ի՞նչ ա,
Կամ ետիքեթը ի՞նչ փթած կոմշի ա,
Էնպես մեկ գոռաց, բողազը ճոթռեց,
Ու ջուխտ ոտով նրան էնպես քացի տվեց,
Որ հենց ուզում էր գլուխը հանի,
Քամակի վրա էլ եդ շուռ էկավ,
Մաղալաղ տվեց, գունդ ու կծիկ էլավ,
Ու փռռալով, աղոթք ասելով,
Հային օրհնելով, վրացուն գովելով,
Ընկավ օջաղի, քյաբաբի վրա,
Շուռ տվեց, ջարդեց պղինձ ու թավա,
Կրակն մեկ կողմից, շամփուրն մյուս դհից
Բարկացած, տոլմի պղնձի ղրաղից
Բռնեցին գոռալով, իրանց գլուխը լալով
Էնպես մեր խղճի կարթացած բերանն,
Ու ղշի լեզուն, սիպտակ երեսը,
Նազուք ձեռները, բարակ ծնկները
Բերան քցեցին, ատամի տակին
Հուփ տվին, ծամեցին, միսը թոցրին,
Որ կատու դառած՝ ձեռները քցեց՝
Որ իրան հանեն, աղաչանք արեց։
Դուս էկավ՝ թե չէ՝ էլ ասլան դառավ
Քարերով ընկավ, քոլերով ընկավ.
Որ նրանց կերածն քթներիցն հանի,
Նրանց բոլոր տանի, պոլիցեն ածի։
Սատանի աչքը պետք է քոռանար,
Որ էսպես վախտին բանի մեջ չգար։
Քոռաղադինա՝ մեկ պղնձով նաֆթ
Բերել էին՝ որ տկերը կալնին,
Որ գինին չտանին։
Խելոք գինեգիժն հենց ֆռսանդ ճարեց,
Մեկ էլ իր ձեռը որ չի՛ բարձրացրեց,
Ծղղաց, թըպրտաց նաֆթի պղինձն ընկավ,
Դու լավ կիմանաս, ինչ գլխին էկավ։

Նաֆթը դաղած էր ու կրակի վրա.
Վա՜յ նրա օրին, դուշմանիդ չգա։
Գլխի վրա էր նա մեջը ընկել.
Ոտները դարիդուս ցցվել, մնացել։
Ձենը կտրվել, շունչը պապանձվել։
Էլի մեր նաշար բարի վրաստանցիք
Ոտիցը բռնեցին, նրան դուս քաշեցին,
Ջուր քցեցին, երեսը լվացին,
Գնացին դեղ բերեն, կամ հեքիմ կանչեն,
Էլի իմաստունն՝ որ ափալթափալ
Հենց մեկ շունչ քաշեց ու քիչ դինջացավ,
Թաքրար քար, փետի նա վրա պրծավ։
Էրված, խորովված ձեռներովն սկսեց,
Որ մեր անաստված նաֆթի պղինձը
Նրանց գլխին քցի, նրանց փոթոթի։
Սատանին նալաթ՝ պղինձն իր գլխին
Շուռ էկավ, էրեց նրան, զարկեց գետնին։
Ձեռը չորս կողմը քոռքոռ ածելիս,
Քարերը պոկելիս, դոշին խփելիս՝
Որդիանց որդեղ մեկ հազարփեշա
Նրա ձեռն ընկավ քոռաղադինա։
Հենց իմացավ թե էս դաբանչա ա,
Դոշին որ չդրեց՝ աստված կանչելով,
Իսկույն մեկ քանի հոգի ձեն տալով.
Մեկը սապոժնիկ, մյուսը կալբասնիկ,
Մյուսը պորտնոյ, մեկը տրաքտիրշչիկ,
Քոթուկ-ոտներով, ջվալ բերանով,
Տեփուր-երեսով, ճարխալ-թշերով,
Ջուռնա-քթերով, բհիր-ձեռներով,
Տրուբկա քաշելով ու բոչկա-փորով,
Ղոբի ու չափար, դռները քանդելով,
Վրա թափեցին, ռխները ցրվելով,
Գինու, արաղի, կպրի փիս հոտով
Ուզում էին՝ որ հենց սոված փորով
Մեր խեղճ վրաստանցոցն բիրադի ուտեն,
Իրանց հունարը նրանց վրա փորձեն,
Ահա մեր խալխի մուշտու հունարը

Դեռ չէին տեսել, որ իրանց ձեռը
Թոխմախ-գլխներով բալի տակ չքցեն։
Հենց պլտուխները լցրին ուշունցով,
Դուռակ ու շելմա՝ էկան ձեն տալով,
Մեր հայի մուշտին, վըրացու քացին

Էնպես թունդ դիպավ նրանց գլխին, փորին,
Որ ամեն մեկը հազար տեղ շոքեց
Թխկաց, ղըխկաց, հազաց ու պարկեց.
Մեկ կողմը շապկեն, մյուսը տրուպկեն
Ցխումն թավալ տվին, տերները կորցրին։
Նրանք էլ իրանց տլոտ ֆրակով,

Հազար տեղ ցխին պաչ արին սիրով.
Ուզեցան մեկ էլ քոռ հավի նման
Գլուխ վերցընեն, իրանց գլուխը լան.
Բաղմանչիք կետով, թիով, դագանակով

Վրա հասան՝ որ նրանց ցխոտ բահերով
Գլխները ջարդեն, նահատակ անեն.
Բայց մեր խալխի սիրտն կակող ըլելով,
Նրանց եդ կանգնացրին, վրա թափեցին,
Փիլիսոփեքին ցխից հանեցին.

Գլխները սըբեցին, երեսները լվացին.
Էլ ձեն տալ նրանք հեչ կարո՞ղ էին։
Սուս ու փուս իրանց զատերը կիտեցին,
Ուզում էին՝ որ քաշվեն, պրծնեն.

Բայց մեր սուփրի համն՝ ղուշն էլ անց կենա,
Որ չտեսնի, մեր սրտումն շատ դարդ կմնա։
Մեր ղոչաղ տղերքն իրանց դուշմանին
Կանչեցին, սուփրի գլխին նստացրին.
Իրանք քեֆ արին, նրանց քեֆ շհանց տվին։
Հենց հազարփեշեն որ մեջ չըբերին,

Մատաղ գառի պես մեր եվրոպացին
Առավ՝ մուրազով պաչեց, դրեց բերնին։
«Սուրբ հազարփեշա՝ զորությունդ շատ ա.
Մեր բալն, մեր կոնցերտն, մեր տանցն ո՛չինչ ա։
Ով Կախեթու սուրբ բաժակի համն,
Ումբրու, տկճորի ու կպրի ջուքամն

Չի տեսել, նա հեչ մարդի հեսաբում
Չի՛ ըլիլ բնավ բոլոր աշխարքումն։
Քնելիս, զարթնելիս՝ թե ժամ գնալիս,
Ընչանք քո համը չառնենք, չխմենք,
Թող աստուծո մոտը սևերես մտնենք։
Մեկ միրկիտանի դուքան տեսնելիս,

Մեկ պուճախում կպրի հոտը առնելիս՝
Փող էլ չունենանք, գլխներս ծախենք,
Գլուխն մերը չըլի, սերթուկն գրավ դնենք,
Մտնենք քո տաճարն, ռումբիդ համբուրենք.
Շատ անգամ մոտիդ վեր ընկնինք, քնենք։

Թո՛ղ վրաստանցին քեզ կպրում ածի,
Քեզ անլվա ոտով կոխի, կխշորի.
Քեզ ճաշակելիս՝ էլ գլուխը ձեռին
Ման գա, շշշմի քո քաղցր հոտով.
Հինգ թունգի խմի, բեղերն սրբելով՝

Էլի դուս գա լուրջ ու պարծենալով
Հազար տեղ ասի. «էս օր խմեցի
Հինգ թունգի, կուզեմ բայց խմեմ էլի.
Ինձ համար գինին, Քռի ջուրն մեկ ա,

Ինձ համար որ նա կրակ էլ դառնա,
Էլի չի՛ կարող մեկ խեր, կամ շառ տա,
Հազար էլ խմեմ, էլի կորցնիլ չեմ
Իմ ուշս ու խելքս, իմ բանս կանեմ։
Էլի տկճորը մոտիս կունենամ,

Քեֆ կանեմ ու իմ հոգսը կը հոգամ»։
«Չէ՝, սուրբ ռումբի՝ սուրբ հազարփեշա,
Ձեր համն առնողը պետք է քնած մնա։
Հազար օր բարձից գլուխ չվերցնի.
Ձեր էշխին, քեֆին նա մատաղ ըլի.

Ցխումն էլ ընկնի, ձնումն էլ թաղվի,
Էլի ձեր էշխը, ձեր սէրն ու հրաշքը
Միտքը բերելիս՝ երազով ընկնի,
Գնա երկինքը, յերկիրը եդ գա.
Ձեր արևի ձենն ածի ու խնդա։

Օրթում էլ ուտի, ձեր գլխովն երդվի,
Դեռ հաց չկերած, ձեր անունն հիշի,
Ձեզ փորը ածի, որ բանն հաջողի»։
Էս ա, որ հմիկ մեր ամեն բանը
Փոխվել ա, ամա մեր գինու ջանը
Դեռ կպրում մնում, զոռը բանացնում.
Որ հազարփեշա ու տկճոր, կուլա
Էլի մնացել են էնպես միշտ թազա։
Ով ասես՝ մեզ միշտ հարբա է գալիս,
Մեր ումբու ձենը հենց իմանալիս,
Բարեկամ դառնում, մեզ ախպեր ըլում,
Մեզ պատիվ տալիս, մեզ քոմակ անում։
Ասացե՛ք տղերք՝ դուք ալլահվերդի,
Յաղշի՜ օլ, ուռա՜, կամ զդրավի.
Բոն ժուրն, գուտն տաղն բանի պետքը չի՛.
Աստված՝ օր, արև ումբու շինողին,
Աստված մեր հազարփեշի սարքողին
Մինը հազար անի, գերեզմանն օրհնի՛։
Նրա մեռած հոգին միշտ լուսավորի՛.
Ու մեզ էլ պահի, որ մեր Կախեթու
Բաժակի ղադրը միշտ իմանանք, ու
Միշտ հազար բերնով, ու հազար ձեռով
Հազարփեշեն բռնած՝ հազար օր ասենք
Աստված կախեթը չեն պահի, հաստատ.
Նա է մեզ տալիս ուրախ սիրտ, ղվաթ։
Աստված նրա բունյաթն միշտ հազար տարի
Ղայիմ, ղադըմի անպակաս անի։
Հազար ձեռով մեզ հազար փորձանքից,
Հազար շառից, շռից մեզ ազատ պահի՛։
Տղե՛րք՝ ձեր մինը միշտ հազար ըլի։
Ուտե՞նք, քեֆ անենք, հո հազար տարի
Մենք չենք ապրելու էս փուչ աշխարքումն։
Սաղ ըլիք, ուրախ՝ հավասարական.
Մեր մեռած ու սաղ ըմբրով կշտանան։

ԱԶԳԱՍԵՐ ՄԱՐԴԸ ԻՐ ՄԵՌՆԵԼՈՒ ՎԱԽՏԸ։

Մնա՛ք բարով, մնա՛ք՝ անց կացած օրեր։
Մոռացի՛ր՝ աշխար՝ քեզ տված ցավեր։
Որդի՛ք, ընտանի՛ք, ո՞ւր եք դուք լալիս,
Մարմինս թե փթի, սիրե ձեզ հոգիս։

Էս ճամփեն մեկ օր պետք է մենք գնանք,
Մահով էն կենքին հասնինք, դինջանանք։
Բայց մեռնել ես որ շուտ ուզում չէի.
Պետքը գամ ազգիս՝ ախ՝ ասում էի։

Բայց ո՞ւր իմ մուրազն՝ որ սիրտս էրում էր,
Տանջում, ինձ մաշում, ա՜խ՝ ցերեկ գիշեր։
Թե իմ աշխարքիս ջանս ղուրբան տայի,
Որ հողի տակին՝ օ՜ֆ — պետք է փթի։

Աշխարքիս ո՛չ փառքն, ոչ էն մեծություն
Ես չեմ ափսոսում, որ մնացի մաղբուն։
Բայց ի՞նչպես փակեմ աչքս ու ա՜խ չքաշեմ,
Որ հազար մտքեր հողն պետք է տանեմ։

Ո՛չ երկար ապրելն էր իմ ուզածը,
Ո՛չ լավ օր քաշելն՝ ա՜խ՝ իմ խնդրածը։
Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աչքիս,
Երբ չէի կարում պետքը գալ ազգիս։

Իշխանություն թե, կամ փառք ուզեցի,
Թագի, պսակի թե փափագեցի,
Էնտուր համար միայն, որ հազար մարդի
Աչքի արտասունքն սրբեմ, որ չցավի։

Էկե՛ք հողիս վրա՝ հոգիս հիշեցե՛ք
Իմ ազիզ որդիք՝ ձեր հորն օրհնեցե՛ք։
Լեզուս որ լուլի, իմ հողն ձեզ կասի,
Թե երկնքումն է՛ս ինձ կտանջի։

Փա՛կ էր աշխարհն, սև՝ իմ քաշած օրն,
Որ ձեռս չհասավ, ինչ ուզեց սիրտս որ։
Արարի՛չ իմ տեր՝ թե մարդ չիմանա,
Իմ աղօթքն է՛ս էր, քեզ լավ հայտնի ա։

Մարդի՛ք, ա՜խ մարդիք՝ դուք ե՞րբ կզարթնիք,
Որ սիրտ սրտի տաք, միմյանց քոմակ ըլիք։
Իմանաք, մեր դրախտն ու կյանքն հենց է՛ն ա,
Ով խեղճ ազգի ցավը կիմանա։

ԽԱՂ ԲԱԺԱՆՎԵԼՈՒ ՎՐԱ:

1842. օգոստոսի 4. Երևան:

Աշխարքումս ո՞վ ա մնացել
Մեկ տեղ, որ մենք էլ՝ ա՜խ՝ մնանք,
Շատն են էսպես եկել, գնացել,
Մենք էլ պետք է՝ մեկ օր գնանք։

Բարեկամի սիրտը՝ ղորդ ա,
Չի՛ համբերում էսպես ցավին.
Բայց նա խելքին պետք է մտիկ տա,
Ջտանջի, չմաշի նհախ իր հոգին։

Էլ էս երկինքն, էս արեգակն՝
Ինչ տեղ նստենք ու վեր կենանք.
Պետք է քցեն շողք ու շվաքն
Միշտ մեր գլխին, էլ ո՞ւր մենք լանք։

Լացն ու սուքը թույն են, լեղի,
Հենց կմաշեն սիրտ ու հոգի։
Ոչ գնացողին կանեն մեկ ճար,
Ո՛չ մնացողին կգան հավար։

Թե իրիգուն, թե առավոտ,
Ուր որ փչի էս քաղցր օդն.
Պետք է հիշենք բարեկամի
Ազիզ անունն միշտ մեր միջի։

Շատ դարդ անելով, շատ վշվշալով
Էլ ո՞ւր կհասնի, որ լավ մտածենք։
Թո՛ղ ընկնենք ճամփա միմյանց աղոթքով,
Որը բարին է, Աստնից խնդրենք։

Շատ էլ որ մնանք ծունկ ծնկի տված։
Ի՞նչ օգուտ, թե վերջն պետք է բաժանվենք։
Սիրտն ըլի մոտիկ, լավ խոսք է ասած,
Հեռանալով հո մենք մոռանալ չենք։

Սրբեցե՛ք ձեր արտասունքը,
Ազի՛զ ծնողք՝ քա՛ղցր բարեկամք.
Թո՛ղ սարն առնի ձեր ցավն ու սուքը.
Մտքիդ պահե՛ք, մեզ չմոռանաք։

Թե գնացողի, թե մնացողի
Ասենք սիրով՝ մնա՛ք բարով.
Տա՛նք ու առնենք մենք դոշ դոշի
Վերջի համբույրն անուշ սրտով։

Ինչ սար, ձոր էլ որ մեզ ծածկեն,
Մեզ իրարից խլեն, զրկեն,
Թե աչքներս էլ իրար չտեսնի,
Սիրտը մեր սերն հաստատ կպահի։

Առնե՛նք թասը, տանք ձեռ ձեռի,
Խմե՛նք ճամփի սալամաթին։
Ո՞վ ա խաբար, թե ո՞ր վախտի
Մեկ էլ ռաստ կգանք մենք էս սհաթին։

Մնա՛ք բարով՝ ազի՛զ սարեր.
Կանա՛չ ձորեր, քա՛ղցր դաշտեր.
Լավ բախտավոր գլուխ պտի,
Մեկ էլ ետ գա ձեզ ա՜խ՝ տեսնի։

***

1842 օգոստոսի 3-ին. Երևան։

1

Ում սիրտը, որ տխուր ըլի,
Թող մտնի բաղն, քեֆը բացվի։

Արեգակը մեր էր մտել,
Լուսնին իր տեղը բաց արել։
Իրիգնահովն Թփերի վրա,
Աստղ ու լուսին երկնքի վրա։

Զարման խանումի ձեռիցը
Բռնած՝ գնացինք մենք տանիցը։
Փեգե կարմունջն դողդողալով
Մենք անց կացանք չարչարանքով։

Պողոս ափում էս հաղաղին
Միտք էր քցել իր հին հոգին։
Մեկ ամանով հավող լիքը
Էկել, հասել էր նա դիքը։

Նրան Թողինք ու անց կացանք,
Բաղի միջովն եկանք, հասանք
Զորաբաշի գլխի ծերը,
Աչքըներս քցեցինք ձորը։

2

Ա՜խ էն ձորը, ա՜խ էն ձորը,
Ո՞ւմ ասեմ ես նրա շնորքը։

Զարման խանումն, Շողան քիքիրն,
Պետրեն Թողած իր միտքն ու ֆիքրն,
Զըրից էին տալիս, խնդում,
Ես էլ նըրանց հետ ծիծաղում։

Անուշ լուսինն էրծաԹի պես
Փայլում, խփում էր իր երես։
Քաղցր հովը, Թփերի քովը
Գալիս, գնում, մտնում ծովը։

Սիրտս լիքը կայի նստած՝
Աչքըս ամպերին, ձորին քցած,
Ղորդ ա, ասում, լսում էի,
Թե ինչ էր հալս, ո՞ւմ ասեի։

Զանգվի էն քաղցր Ֆշըշալը,
Ծառի Թփի խշըշալը
Որ չէր ընկնում ականջս, գնում,
Հոգիս հետը հանում, տանում։

Մտքումս ասում էի, մաշվում.
Երաբ կնստիմ էլ էս բաղումն։
Ա՜խ՝ քո ձենը՝ քա՜ղցր իմ Զանգի,
Ո՞ւր գնամ, որ խելքս չտանի։

Երկնքի մուզիկի նըման
Տուտըդ քցած ձորի բերան,
Գնում ես, հասնում դու Արազը,
Տալիս հազարի մուրազը։

Բանդն ու Մամռին, Աբիհայաթն
Տանում, ջրում տուն ու հայաթ։
Մեջք ու քամակ, ծոցդ կանաչ,
Ուր որ նայես, Թե ձախ, Թե աջ։

Հազար տեսակ պտուղ զանազան
Զարդարել են չայիր, չիման։
Քարափներիդ խորդ երեսը
Տեսնելիս՝ մարդ կալնում է երեսն։

Էլի էդ քո անուշ ձենը,
Էդ քո կանաչ ձորն ու շենը
Աչքն առնելիս՝ մայիլ մնում,
Գալիս ղրաղդ, մոտիդ նստում։

3

Ախ իմ զանգի, քաղցր իմ զանգի,
Թող՝ սաղ աշխարն չարըդ տանի։

Լեռ քարերին դալղեդ տալիս,
Քարափները սքում են, լալիս,
Անցվորականն ձենդ առնելիս՝
Եդ է նայում, հոգին տալիս։

Դղրդալով մտնում ես ձորն,
Սասանացնում էր, սար ու խոր.
Քո էն սիպտակ քափ, փրփուրը
Տեսնողի սիրտն քցում է հուր։

Քո աննման զավակներըդ,
Էն ծառ ու թուփ սիրուն թոռներդ
Կաթդ ծծում, գլխիդ կանգնած՝
Հով են տալիս ճխկներն փռած։

Ո՞վքեր են քեզ տեսել, գնացել,
Զանգի՝ քո տեսըդ վայելել։
Մենք էլ կերթանք, ուրիշն կգա,
Թաք քո դաշտը դալար մնա։

Միթե էս է՞ն տունն, էն տեղն չի՞,
Ուր մեծանուն իշխանազգի
Ազնիվ զավակք Աղամալյան
Լինեին քեզ հովիվ, պաշտպան։

Ա՜խ ո՞ւր էն փառքն, էն մեծություն,
Էն վեհանձին իշխանություն.
Միթե՞ էն տխուր, տրտում մատուռ
Սահակ աղին՝ ա՜խ պահե լուռ։

Զանգի՝ սքաս, Զանգի ողբաս,
Իմ արտասունքն էլ առ, ու հա՛ս.
Աշխարքի տված վայելչություն
Կորչի ինչպես քո ջուրն սիրուն։

Շատ աչք պտի, մեկ էլ տեսնի
Քեզ ու քո սերն մեկ էլ առնի

. . . .

. . . .

Զեզ ի սիրոյ մնացէ՛ նշան...
Իմ զբօսանաց սակաւ այս բան։
Եւ ի վայրս օտարութեան
Միշտ պաշտեցից զսուրբ Հայաստան։

***

Զարթնուք ի միտս իմ կրկին կենդանի
Պատկերք սխրալի անցեալ իմ աւուրց
Ո՞հ յումմէ՞ առից զվշտահար սրտի
Իղձ, կարօտութիւն նեղեալս ի ցաւոց։

Քակտին իմ ոսկերք ի սուգս դառնութեան,
Աւաղ հառաչանք մաշեն զիմ աղիս,
Այլ կողմն տարաձիգ ոչ բերէ զիմ ձայն
Ո՛չ տայ ինձ լսել զանոյշ ձեր բարբառ։

Ի վայրս ծննդեան ի ծոց հայրենեաց
Թափառիմ անյոյս, անճար, անմխիթար.
Թէև խաւարին իմ կեանք խղճալի
Չի՛ք ոք՝ որ լիցի սրտառուչ ինձ աստ։

Երբ գրկախառնեալ ընդ ձեզ միւս անգամ
Փչեսցի ինձ շունչ ձեր կենդանարար
Թող անդ իմ հոգի ելցէ ի փոշւոյն
Որոյ վերջին վճիռն է դառնալ ի հող։

Դարան է աշխարհս ցաւոց և վշտաց
Մինչ սիրտն զգայուն զրկեալ ի դիմաց
Սիրելեաց՝ որ ի նման եղեն համակից․
Վարանի յետոյ ի միայնութեան․

ՄՈՒՏ Ի ՀԱՅՐԵՆԻՍ: Ի 1844.

Զարթի՛ր՝ իմ Մուսա՛յ ի տես Հայրենեաց.
Զարթի՛ր ի բուրումն խնկածին դաշտաց.
Եւ զքոյդ դաշնակել օրհնաբան նուագ
Ի դէմս սրբազան Հայրենեաց վայրաց․

Քեզ ի՛մ սիրալիր ողջոյն գոհութեան.
Քեզ ջերմ իմ սրտի օրհներգ խնդութեան.
Թո՛ղ ինձ իջանել ի ծունր ի քո տես,
Երկնատի՛պդ իմ քաղցր, սուրբ ծննդարան։—

Գաւազան զշոր թողեալ պանդխտին՝
Դիմէ առ քեզ այժմ սիրով կաթոգին,
Որդին կարօտեալ ի գիրկս քո հանգչիլ
Փութայ աստանօր՝ մայր իմ թանկագին․

Ժա՛մ է տալ վաճխան սքոյ վտակաց.
Ժա՛մ է արդ փակել զսրտիս թանձր հառաչ.
Քե՛ զիմ նորոգել զաւուրս դառնահոս,
Քև զիս պարարել զկեանս վաղաանց․

Երազք և անուրջք՝ տեսիլք և իմ միտք
Քո՞ չէին միթէ մինչև ցարդ հովիտք,
Քո անոյշ լերինք, քո դաշտք երկնանմանք,
Որոց բուռն սիրով մաշիւր իմ սիրտ միշտ․

Քո՞ սուլէ յունկս իմ հողմ աւետաբեր.
Քո՞ բուրի յիմ քիմս հոտ այս խնկանուէր.
Ի քեզ բանամ զաչս՝ Սրբազան իմ վայր.
Պանդխտին կապանք անկա՞ն միթէ վեր․—

Լսեմ աստանօր՝ ծանօթ ինձ բարբառ,
Աստ մայր քաղցրագութ, սիրելեաց կաճառ
Զիմ օրհնեն ուրախ՝ զոտնամուտ նորոգ,
Ինձ բանան գթով զգիրկս սիրավառ․

Զե՞ն այս սրբազան այն վայրք վաղեմնի,
Ուր մանուկ տկար դեռ գայթ ի գայթի՝
Մերթ ի քուն անոյշ ընդ քաղցր հովանեաւ,
Մերթ ի խաղ անմեղ բերկրեալ հրճուէի․

Օրհնեա՛լ քո դաշտի, հող անմահատարր.
Օրհնեա՛լ ի գաւառս, ի շէնս շնորհավայր.
Դու իմ օրօրոց՝ մանկութեան իմ դրախտ.
Քաճ զքոյդ և fեռ չէ՛ սէր այնպես քաղցր*․

Ո՞ւր այն քոյր մաքուր, որոյ դառն կորուստ
Մղեալ զտարաբախտ եղբայրն ի փախուստ.
Անցաւորն զնա տեսեալ յողբ, ի սուգ,
Զայնէ.— Քա՛, նա քեռն լայ զմահ անգութ․—

Գուցէ անողորմ սուր բռնաւորի
Ածեալ զօրհօրդն անմեղ՝ յիւր գերի,
Աստ պատարագեալ ի զոհ սրբութեան,
Եթող ջերմ եղբօրն արտասուաց տեղի․

Եւ վառ պատանւոյն կացեալ առ շիրմին,
Ի հեղուլն զիւր դառն արտօսր՝ ցաւագին,
Անցաւորն ի գութ շարժեալ յայս տեսիլ՝
Գոչէ.— Քա՛, նա քեռն ողբայ զսէր ջերմին․—

Ցե՛ն այս՝ իշխանաց ճոխ բնակարանք
Ցե՛ն շքոյ փառաց քարոզ՝ այս տապանք.

---

* Բառդ Քաճաfեռ թէև անյայտ է ըստ իսկական նշանակութեան, բայց կամելով քաղցր ծննդարանի իմում տալ զանուն արժանաւոր, այսպէս մեկնեմ․ Քա՛ նա fեռ: Այսինքն. Քա՝ ըստ աշխարհաբառին նշանակէ. աճա՛, տե՛ս: Այսպէս որպէս թէ տեսեալ ուրուք զեղբայրն առ շիրմին քեռն նստեալ ի սուր, գոչէ. Քա՛, նա քեռն ողբայ զկորուստ և այլն․ Ընթերցողք ներողամիտ գտցին քաղցրութեամբ յայս իմ մտացածին կեղծիք․ Որ բարին է և քաղցր. ընդէ՞ր ոչ համարել հաւանական և հաճելի․

Բուռն ժամանակին դարձեալ այժմ ի կեր,
Ուր երբեմն փայլէին վեհից դամարճակ։—

Ձեր զաւակ դիմէ ձեզ այժմ ի տես
Որք վաղուց լռէքդ ի մոխիր այս հեզ,
Արտասուաց կաթիլ, սրտի իմ թառաչ
Ի Ձեր յիշատակ հոսեն աստ՝ անտես։

Տապա՛նքդ լռին՝ օրհնեալ ոսկերաց.
Առ ձեզ իմ խնկեն ուղերձ օրհնութեանց.
Վերինն ձեզ մաղթեմ հանգիստ հոգեզմայլ.
Ձեր մաղթանք և ինձ լիցի մասն շնորհաց։—

Ի ձեր յիշատակ ուխտ իմ սրբազան
Լիցի՝ միշտ զոհել ինձ ցկէտ վախճան.
Զիմ բոլոր զկեանս՝ ջերմեռանդն սրտիւ,
Նպաստ ինձ աղօթք թէ լիցի ձեր միայն։—

Ցի՞մ քաղցր՝ հայրենեաց հով զուարթարար,
Ցի՞մ անոյշ բարբառ, հի՞մ օդ բարերար.
Աստ և խուղն չնչին, աստ և ծուխն տխուր
Ի քիմս՝ խնկահոտ մեր բուրեն յամայր։

Տօնեմ զքո տեսիլ՝ սեղա՛ն սրբութեան
Տօնեմ, փառատրեմ զանունդ յաւիտեան.
Փա՛ռքդ Հայաստանի, գերամբա՛րձ Մասիս.
Համայն դու ազգաց ուխտի սուրբ արձան։

Արևին ոսկի երբ ի քո գագաթ
Ի մուտս և յելս իւր ճաճանչ, ճառագայթ,
Երբ լուսացնցուղ բացցի ի վերուստ,
Քե՛զ իմ առաջինն ձօնեսցի ուխտ աստ։

Թէ ո՛չ Նոյեանն քեզ ճենճեր օրհնութեան,
Թէ ո՛չ պատարագ սուրբ գերդաստանին
Քեզ վերխնկեսցի գոհութեան ի նշան,
Գէթ սիրտ գոհաբան առցէ զտեղին։—

Պահեա՛ միայն՝ հա՛յր՝ զաշխարհ և զորդիս
Անփորձ, անսասան ի կենցաղս յաստիս.
Մի այլ մխեսցին մեզ հեղեղք կործանման,
Մի՛ հա՛յր քաղցրագութ՝ յապայն կամ զարդիս։—

Մեծին Ռուսիոյ աջ աշխարհասաստ
Լիցի՛ մեզ նեցուկ, օժանդակ, նպաստ.
Արամեան սերունդ այժմէն յաւիտեան
Զնորայն օրհնեսցէ՛ օծեալն յամայր աստ։—

Սուրբ եղիցին մեզ կաթիլք ձեր արեան,
Սուրբ՝ յիշատակ ձեր, հոգի՛ք պատուական.
Հիմնադի՛րք ազգի, փրկի՛չք աշխարհի.
Հսկա՛յք երկնածնունդք՝ անմա՛հք՝ անվախճան։

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԳՐՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեզուն անշուշտ ամենաազնիվ գործիքն է, որի միջոցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ մարդկանց, առանց որի ոչ անհատը, ոչ էլ մանավանդ ժողովուրդը ի վիճակի չէ մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին։ Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, ցոլանում է մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը։ Ինչպես առանձին անհատի մոտ տարիքի աճման դեպքում, այնպես էլ յուրաքանչյուր ժողովրդի մոտ նրա հոգևոր զարգացման աճման կամ նվազման հետ միասին լեզուն էլ բոլորովին այլ կերպարանք է ստանում։ Ո՞վ կարող է ժխտել, որ մեր ամբողջ հոգեկան զարգացումը, ինչպես և մեր լեզուն գլխավորապես կախված են այն պայմաններից, որոնք մեզ վրա քաղաքական ազդեցություն են ունեցել։ Կրթական հիմնարկների և գիտական հետազոտության բացակայությունը, շփումն այլ ազգերի հետ, օտար լեզուների իմացությունից քաղած արտաքին օգուտը — այս բոլորն առանց այն էլ արդեն բավականաչափ ուժեղ հիմք են, որոնց պատճառով մենք կարող ենք մեր լեզուն հակամայիցս անտեսել։ Եվ եթե մի ժողովուրդ քաղաքակրթված պետությունների մեջ ենթակա է այս ազդեցության, ինչպես ցույց են տալիս հին և նոր ժողովուրդների օրինակները,— շոթլանդացիները՝ անգլիացիների տիրապետության տակ, հին պրուսացիք, բոհեմներն ու հրեաները՝ գերմանացիների, սպանացիները, ֆրանսիացիներն ու անգամ անգլիացիները՝ հռոմեացիների և այլն,— ապա այդպես չէ բռնապետական երկրներում, որտեղ աշխատում են ամեն օտար և ազգային բան բռնությամբ ոչնչացնել։ Եվ երբ մի ժողովուրդ դժբախտություն է ունենում իր երկիրն ու ինքնուրույնությունը կորցնելու և իրեն իր սեփական հայրենիքում որպես ստրուկ զգալու,— իսկ այս ավելին է ասում, քան այդ ամենը,— այլևս

կարո՞ղ է նա ի վիճակի լինել մտահոգվելու նրանով, որ զբաղվի գրականությամբ ու գիտությամբ, չէ՞ որ դրա համար անհրաժեշտ է, որպես հիմնական պայման՝ արտաքին խաղաղություն, բարեկեցություն և անդուլ խնամք կառավարության կողմից։

Հայաստանի ճակատագիրը հայտնի է ամեն մի կրթված մարդու։ Մոլի-բռնապետական պետությունների ծանր լծի ճնշման տակ՝ Հայաստանի հայրենազուրկ զավակները վաղուց են հեռացել իրենց երկրից և ապաստանել և ապահովություն փնտրել համարյա բոլոր աշխարհամասերում։ Այս հանգամանքն է եղել պատճառը, և ոչ թե առևտրական ոգին, ինչպես ոչ բոլորովին իրավացի կերպով կարծում են մի քանի եվրոպացիներ,— որ հայերը վտարվել են իրենց երկրից. իսկ երկրում մնացած իրենց եղբայրակիցները միայն գույքի և կյանքի գնով են կարողացել իրենց սուրբ հայրերի անունն ու իրենց կրոնը պատմության բեմի վրա պահպանել։ Իսկ նրանց ազգային ինքնուրույնությունն ու լեզուն հազարամյակներ առաջ կորել են ամեն ինչ խորտակող ուժեղ հեղաշրջումների հորձանքի մեջ, որի նմանը հազիվ թե մի այլ աշխարհամասում եղել է։

Որքան էլ հին հայերեն լեզուն իր արտակարգ հարստության, իր կատարելության և իր գրական արժեքի կողմից բարձր լինի, այնուամենայնիվ, այդ լեզուն է միակ արգելակող պատճառը, որ խեղճ ժողովուրդը մինչև հիմա զուրկ է մնացել զարգացման միջոցներից։

Սակավաթիվ ընտանիքներ, որ բարեբաստիկ կերպով հայրենիքից հեռացել են, փոխարինում են իրենց կենցաղն ու լեզուն այն ժողովրդի կենցաղով ու լեզվով, որոնց մոտ ապրում են։ Նրանք բոլորովին մոռացել են իրենց մայրենի լեզուն, ինչպես այդ տեսնում ենք Լեհաստանում և Թուրքիայում, անգամ այստեղ՝ Վրաստանում, ուր անգամ քահանաները հայերեն ոչ մի խոսք չեն հասկանում։ Ժողովրդի մեծագույն մասը, որ մնացել է Հայաստանում, դարեր շարունակ թուրքական ժողովուրդների ազդեցության տակ լինելու և արտաքին ճնշման տակ կռացած լինելու, ուրեմն և ամենատարրական իմացություններից զրկված լինելու հետևանքով՝ կենցաղի և տարազի հետ միասին ընդունել է նաև նրանց լեզվի կառուցվածքը։ Այդպիսով, առաջ է եկել մի բոլորովին ուրիշ բարբառ, որ ինչպես իր կազմով, այնպես էլ իր ձևով բոլորովին տարբեր է հնից և ամեն բանում նման է թաթարականին։ Սովորական խոսակցության ժամանակ ժողովրդի բերանից լսում ես ոչ միայն թուրքերեն բառեր, այլ ամբողջ նախադասություններ ու դարձվածքներ։ Մինչդեռ գրքի լեզուն մնացել է որպես սեփականություն հոգևորականության, որը,— ինչպես նրա դասակիցները մյուս ազգերի մոտ,— սկսել է այդ լեզուն էգոիստորեն դարձնել եգիպտական

գաղտնիք, որպեսզի ժողովրդի աչքում ավելի դիրք ու ակնածություն ձեռք բերի։

Չափից շատ բարձր կարիք ունենալով իրենց դասի առավելությունների մասին՝ հոգևորականները գրել և մշակել են այնպիսի բաներ, որ ոչ մի կապ չունի ժողովրդի և ժամանակի ոգու հետ։ Նրանց ամբողջ հոգևոր գործունեության ուղն ու ծուծը կազմում են աստվածաբանական մտքերը, նույնիսկ պատմության գրքերում կամ այլ բովանդակության երկերում նրանք ամեն ինչ փորձում են վերածել աստվածաբանության։ Եվ եթե տեղ-տեղ առիթ չեն ունենում երիտասարդներին դաստիարակելու, ապա նրանք ամեն կերպ աշխատում են նրանց ճաշակը գրավել միայն հօգուտ իրենց շահերի։

Սակայն այս էլ երկար չտևեց։ Եվ այժմ, նույնիսկ խոշոր քաղաքներում, հաճախ ես հանդիպում հոգևորականների, որոնք հին հայերենից ոչ մի գաղափար չունեն։ Եկեղեցական արարողությունը կատարվում է գրաբար լեզվով, աստվածաշունչն ու բոլոր եկեղեցական գրքերը կարդացվում են գրաբար. սակայն հարյուրից հազիվ մեկը կարող է այդ լեզուն հասկանալ, ուստի և բնական է, որ ժողովուրդն սկսեց սիրել այն լեզուն, որը նա լավ է հասկանում։ Զարգացած եվրոպացիները զարմանում են, որ հայ ժողովուրդը, որի ճակատագիրն ու բնակավայրը այդքան նպաստավոր է պոեզիայի համար, այնուամենայնիվ, մինչ այժմ ոչ մի բանաստեղծ չի կարող ցույց տալ։ Սակայն ամբողջ գաղտնիքը հետևյալումն է.— հոգևորականությունը ծաղրել է այն ամենը, ինչ բանաստեղծական իմաստ ու զգացմունք ունի, որպես իր դասի համար անվայել ու գռեհիկ բան։ Ժողովրդի լեզուն մնացել է անմշակ։ Թուրքերենը նույնիսկ կանայք և երեխաներն են հասկանում։ Ուստի շատ բնական է, որ ժողովրդի մեջ՝ ականավոր և ի բնե բանաստեղծական ձիրք ունեցող մարդիկ թաթարերեն բանաստեղծեին և արտասանեին։ Մի Քեշիշօղլի (քահանայի տղա), մի Ալլահվերդի (Աստվածատուր) հանճարներ են եղել, որ մի ժողովրդի գրական փառք ու պատիվ կբերեին։ Թաթարները հիանում են դրանց բանաստեղծությունների և երգերի գեղեցկությամբ. մինչդեռ դրանք հայ են եղել։ Առանձնապես առաջինը, որ մի քանի տարի առաջ մեռավ, կույր էր, և շնորհիվ իր արտակարգ բանաստեղծական տաղանդի, թուրքական արքունիքում մեծ հարգանք էր վայելում։

Գրականական տեսակետից, առհասարակ մի թանկագին գանձ կլիներ, եթե մարդ ազատ ժամանակ և միջոցներ ունենար ի մի հավաքելու այն բոլոր երգերը, պատմվածքները, անեկդոտները և ասացվածքները, որոնք տարածված են այստեղ հասարակ ժողովրդի մեջ՝ և դրանց հետ ծանոթաց-

նելու եվրոպական հասարակությանը, իսկ այդ բանը կարող է անել միայն նա՛, ով միանգամայն ազատ է արտաքին հոգսերից։

Չի կարելի ժխտել, որ բարեկեցիկ ծնողներից ոմանց հաջողվում է իրենց երեխաներին սովորեցնել գրաբարի գաղտնիքները. սակայն դրա համար անհրաժեշտ է 10—15 տարի, մինչև որ հնարավոր լինի որոշ անկատար գիտելիքներ ձեռք բերել։ Իսկ գրաբարը գործ է ածվում միմիայն գրքերում։ Նույնիսկ հոգևորականները քարոզ տալիս խոսում են նոր հայերեն։

Դրան ավելանում է նաև մի հանգամանք.— մեր դպրոցներում ուսուցիչները սիստեմատիկ կրթություն չունեն, ուստի և ուսուցման մեթոդ էլ չունեն. աշակերտները ետ են մնում, և տարիներ են անցնում, մինչև որ նրանք կարողանում են մի բան հոլովել կամ խոնարհել, սակայն չեն հասկանում, մանավանդ որ շատ ուրիշ առարկաներ էլ կան, որ նրանց արտաքին գոյության համար շատ ավելի կարևոր են, քան այդ լեզուն։ Հենց այդ հանգամանքն է պատճառը, որ նույնիսկ շատ բարեկեցիկ ընտանիքներ իրենց երեխաներին չեն տալիս գրաբար սովորելու, այլ իրենց ժամանակն ու ջանքերը նվիրում են այլ՝ եվրոպական լեզուներ սովորելուն, որ ավելի օգտակար է և գործնական։ Եվ խեղճ երիտասարդներն ինչպե՞ս կարող են հաճույք ստանալ, երբ նրանց ձեռքը տալիս են այնպիսի գրքեր, ինչպես սաղմոսը և այլն, որոնք թե լեզվով և թե՛ իմաստով անհամապատասխան են այդ երիտասարդների ըմբռնողությանն ու հասակին։

Նոր հայերենը գրաբարի հանդեպ ոչ միայն այն առավելությունն ունի, որ նա կենդանի ապրում է ժողովրդի բերանում, այլ և այն, որ նրա քերականությունը վերին աստիճանի հեշտ է։ Նա ունի, չնչին բացառությամբ, միայն մի խոնարհում և մի հոլովում, մինչդեռ գրաբարը բազմաթիվ հոլովական ու խոնարհման ձևեր ունի։ Ժողովուրդը թաթարական շատ խոսքեր ու դարձվածքներ է ընդունել և այժմ գործ է ածում։ Կարելի է լեզուն մաքրել դրանցից և լեզվին այնպիսի հաստատուն ձև տալ, որ գրաբարից շատ չշեղվի, սակայն այնպես, որ հասարակ մարդու համար իսկ հասկանալի մնա։

Հին և նոր լեզուների գլխավոր տարբերությունը թեքման և շարահյուսության մեջ է։ Գրաբարում, ինչպես և բոլոր նոր եվրոպական լեզուներում, որոշիչները, հատկացուցիչները, բացահայտիչները գրվում են որոշյալներից, հատկացյալներից և բացահայտյալներից հետո, իսկ նախդիրները՝ առաջ, մինչդեռ նոր հայերենում — թաթարերենի նման — հակառակն է։ Այսպես, օրինակ, հին գրաբարում կասեին.

Առաջի տան իմոյ կայ ծառ մի։ Առ պարտիզի դրացւոյն քոյ հոսի

աղբիւր մի։ Ես սիրեմ զառաքինութիւն քո։ Համեստութիւն է զարդն երիտասարդութեան։ Ոմանք յաշակերտաց ձերոց են ջանասեր։

Նոր լեզվով ասում են.—

Իմ տան առաջ մի ծառ կա։ Քո դրացու պարտեզի մոտ մի աղբյուր է հոսում։ Քո առաքինությունը սիրում եմ ես։ Երիտասարդության զարդը համեստությունն է։ Ձեր աշակերտներից ոմանք ջանասեր են։

Դրա հետ միանում են այն բոլոր օժանդակ բայերն ու հոլովման և խոնարհման վերջավորությունները, որոնք հին լեզվից բոլորովին տարբեր են։ Իսկ այն, ինչ հակառակ է քերականական բոլոր կանոններին, այդ նախդիրներից շատերի հոլովումն է, որ ոչ մի լեզվում չի լինում, բացի թաթարերենից և նոր հայերենից (աշխարհաբարից)։

Նախ քան Եվրոպա տեսած լինելը, դեռ երիտասարդ ժամանակ, իմ ջերմ ցանկությունն է եղել նվիրվելու հայրենի երիտասարդության դաստիարակության գործին։ Ամենաբարի նախախնամությունն իմ նպատակն այնպիսի զարմանալի ձևով ի կատար ածեց, և մարդասեր կառավարության ողորմածության շնորհիվ իմ կրթության համար այնքան շատ-շատ չվաստակած բարիք վայելեցի։ Ուրիշ ինչպե՞ս պետք է ես իմ երախտապարտ շնորհակալությունն իշխանավորներին և հայրենիքիս հանդեպ արտահայտեի, եթե ես այս կարևոր հանգամանքը լռությամբ զանց առնեի։ Ոչ թե նորմուծության մոլությունը, այլ իմ հայրենակիցների ընդհանուր բախտավորությունն է շահագրգռել ինձ դիմելու այս քայլին։ Դեռ երիտասարդությունից եմ ես գնացել այս փշալից ճանապարհներով, և այժմ իմ կոչումը շատ պարզ ապացույցներ է տալիս դրա համար։ Որպես գլուխ մի դպրոցական հիմնարկի, որտեղ տարեկան 200-ից ավելի երեխաներ են վստահվել գլխավորապես իմ ղեկավարությանը, ամեն օր այն տխուր դիտողությունն եմ անում, թե այս ծանր դրությունից միայն մի կերպ կարելի է դուրս գալ՝ **նոր հայերեն մտցնելով այժմյան դպրոցական հիմնարկները:**

Այս դժարին կացությունը փոխել կարենալու համար, անհրաժեշտ համարեցի փորձել նոր հայերենի մի տարրական գիրք կազմել։

Այստեղ իմ նպատակն է՝ ուսուցիչներին, ինչպես և սովորողներին տալ ուղեցույց առաջին տարրական պարապմունքների համար։ Հաճախ եմ հանդիպել տերտերական կամ այլ դպրոցի աշակերտների, որոնք տարիներ շարունակ կարդալ են սովորել, բայց երբ ես նրանց մի գիրք եմ տվել կարդալու, այս զարմանալի պատասխանն եմ ստացել, թե նրանք սաղմոս կամ այլ գիրք են կարդացել, և ոչ թե այդ. իսկ գրել՝ ոչ մի տառ չէին կարող։

Այդպիսով, ես գլխավոր ուշադրությունը դարձրի այն բանի վրա, որ հենց գրքի սկզբում, **Նիմայերի և Ստեֆանիի** սկզբունքներով ցուցում տամ

կարդալու-գրելու մասին և հնչական մեթոդը ցույց տամ, որ նախ ես ինքս մի քանի մասնավոր աշակերտների վրա փորձել էի և լավագույն արդյունքի էի հասել, այնպես որ հազիվ 5—6 տարեկան աշակերտները տառաձևերը ճանաչելուց հետո իսկույն կարողանում էին ամբողջ բառեր ու խոսքեր կազմել և մի քանի օրում սկսել հայերեն ու ռուսերեն կարդալ։

Երեխաների մտածելու և խոսելու ունակությունը դյուրին եղանակով զարգացնել կարողանալու նպատակով (որովհետև մեզանում, նույնիսկ բարձր դասերի մոտ, մինչև հիմա էլ երիտասարդության մեծ համեստությունն է համարվում, երբ երեխաները համր շարժումներով են արտահայտվում և ոչ թե խոսքերով)՝ ես աշխատում էի ուսուցիչներին այնպիսի ցուցումներ տալ, որ կան **Նիմայերի, Կամպեի և Կրաուզեի** մտավարժությունների մեջ։

Գրքի մնացած մասը պարունակում է ընթերցանության նյութեր, ինչպես՝ պարզ պատմվածքներ, ոտանավորներ, հետաքրքրական երևույթներ ֆիզիկայից և բնապատմությունից, բարոյակրթական պատմություններ — մասամբ եվրոպական դասագրքերից, մասամբ իմ կողմից կազմված։ Սակայն որպեսզի մինչև այժմ իշխող դասավանդման սովորությանը շատ դեմ չգնամ, գրքի վերջում գրել եմ մի քանի գրաբար հատվածներ։

Որքան ինձ հայտնի է, ոչ մի հայերեն գիրք չկա իմիս նման՝ թե լեզվի և թե բովանդակության կողմից, այդ ես պարտական եմ գերմաներեն լեզվի իմ իմացությանը։

Այժմ ես նյութեր եմ հավաքել իմ աշխարհաբարի քերականության հրատարակության համար, որով հին լեզուն էլ կարելի լինի սովորել ավելի դյուրին և ըմբռնելի եղանակով։ Այս էլ եմ ինքս փորձել փոքր երեխաների հետ, մյուս ուսուցիչների միջոցով կիրառել եմ տվել դրա հիմունքները և ինձ համար շատ շոյող լուրեր եմ ստացել բոլորից, թե փոքրահասակ մանուկներն անգամ մեծ ուրախությամբ ու եռանդով են կանոնները յուրացնում և մի քանի օրում այնքան են առաջադիմություն ցույց տալիս, որ նրանք առաջ տարիներում չէին կարող անել։ Եվ ի՞նչպես կարող էր անհաջողության մատնվել մի գործ, որ վարվում է այնպիսի մարդկանց սկզբունքներով ու հայացքներով, ինչպիսիք են Նիմայերը, **Կրաուզեն և Կամպեն**, որոնք մանկավարժական աշխարհի վառ փայլող աստղերն էին։

Իմ ձգտման նպատակը, ինչպես և հայ ժողովրդի ճակատագիրը, կախված է միայն բարեխնամ կառավարության վճռից։ Եթե ինձ բախտ վիճակվի իմ այս առաջին փորձը կենսագործել, ապա ես իմ բոլոր ուժերը կգործադրեմ ինչպես վերոհիշյալ քերականությունը, այնպես և այլ օգտակար գրքեր կազմելու և թերևս դրանով Կովկասի հայսկույս ուրիշ ժողո-

վուրդների համար էլ օգտակար լինելու։ Մեր գավառային դպրոցի թաթար ուսուցիչ Միրզա Ֆաթալի Ախունդովը յուր հայրենակիցների համար արդեն սկսել է այս մեթոդով մի դասագիրք կազմել։

Հույները, նման անհրաժեշտության հետևանքով, թողել են իրենց գեղեցիկ հին լեզուն։ Իտալացիք այդպիսի ուժ ունեցող լատիներենը փոխարինեցին իտալերենով։ Այդքան շատ տարածված և դարեր շարունակ որպես կրթական լեզու գործածված սլավոներենը հարկադրված էր տեղի տալ ժամանակի ոգուն և պահանջին։

Մի՞թե միայն հայերը պետք է մյուս ազգերից ետ մնան և թողնվեն հոգեկան խավարի այդպիսի ստրկական կապանքների մեջ։ Սակայն սա մի առանձին անձի գործ չէ, այլ բարեհաճ, ընդհանուր բարօրության մասին այնպես հայրաբար հոգացող իշխանության գործն է։ Որքան էլ նախապաշարմունքներն ու սնահավատությունները առաջին փորձին որոշ չափով դեմ գնան, այնուամենայնիվ, ճշմարտությունը և այդպիսի բարձր նպատակների ձգտումը կհաղթանակեն երջանիկ գալիքի համար։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անդրկովկ<ասյան> ուսումնարաններում՝ ինչպես դասավանդման կերպի, այնպես էլ դասատուների նշանակման, ուսման առարկաների բաշխման գործում ներկայումս գոյություն ունեցող մի քանի թերությունների վերաբերյալ և հետագայում դրանք վերացնելու և նրանց ուղղելու միջոցների մասին

Հարկ կա՞, արդյոք, որևէ բան ասելու այն բարի նպատակի մասին, որով իմաստուն և ողորմած կառավարությունն իր վրա վերցրեց իր լայնատարած կայսրության նաև հեռավոր սահմաններում, ինչպես ամենուրեք, այնպես էլ անդրկով<կասյան> երկրում հիմնելու ժողովրդի բարօրության այն սրբարանները, որպիսիք են ուսումնական հաստատությունները։ Ո՞ր բնիկը, աղքատիկ հյուղում, առատության վայելքի պայմաններում, այժմ չպետք է ընդունի և լիովին զգա, որ այդ որբացած երկրամասերն իր հովանավորության ներքո վերցնելու հենց սկզբից՝ կառավարության կողմից բնակիչներին ցույց տրվող հայրական բազմաթիվ բարերարություններից մեկը և առաջինը այն է, որ ցանկանում է լուսավորության բարեբեր ճառագայթները տարածել նաև նրանց վայրենացած, դարերով մոռացության մատնված ձորերում, որպեսզի այնքան այլացեղ թշնամական ժողովուրդների այդ զանգվածը մոտեցնի, միացնի այն մեծ ընտանիքի հետ, որի հայրը ռուս ցարն է, փառքը՝ ռուս անունը և որի անդամ լինելը վեր է երկրային բոլոր բարիքներից։

Բայց չնայած այդ բարձր նպատակին, չնայած ինչպես բարձր քաղաքացիական, այնպես էլ դպրոցական վարչության այդքան անդուլ ջանքերին ու հոգացողությանը՝ արդարացնելու կառավարության այդ բարի մտադրությունները, անդր<կովկասյան> ուսումնարանները ցարդ չեն կարողացել և չեն կարողանում համապատասխանել նրանց համար նախագծված կոչմանը։ Այդպիսի, բավական առեղծվածային, ձախորդության պատճառը վերագրում էին մերթ տեղական պարագաներին, մերթ ամենաանհրաժեշտ միջոցների բացակայությանը և պակասությանը, կամ թե, որ ամենից ավելի էր պատահում և պատահում է, հաստատություններին կից գտնվող չինովնիկների անհոգությանն ու անջանասիրությանը, իսկ ամենակարևոր պարագաներին քիչ ուշադրություն է նվիրվել կամ, դրանք համարելով բոլորովին ոչինչ չնշանակող բաներ, անցել են կողքից և մոռացության են մատնել, որովհետև նման թերությունների մասին դատողները եղել են եվրոպացիներ, որոնք, նախ՝ անծանոթ են տեղական հանգամանքներին, բնիկների մտածելակերպին, երկրորդ՝ երբեք զբաղված չլինելով և չզբաղվելով բնիկների երեխաների դաստիարակությամբ ու կրթությամբ, կարող էին, բնականաբար, հեշտությամբ դեմ առնել գայթակղության այդ քարին։ Դրա համար էլ այն բոլորը, ինչ եղել է, այնպես էլ մնացել է, և ով հավատարիմ է իր թագավորին ու հայրենիքին, ով սիրում է ժողովրդի բարօրությունն ու լուսավորությունը, ով վերջապես, սուրբ երդումով պարտավորվել է լինել կառավարության նպատակի ճշմարիտ կատարողը, չպե՞տք է արդյոք նրան սրտի ցավ պատճառի այդ՝ վկա լինելով նման հսկայական ծախսերին, որ կառավարությունը յուրաքանչյուր տարի կատարում է անդր<կովկասյան> պատանեկության դաստիարակության համար և վերջիններիս համար այնքան թանկագին ժամանակի կորստին, որը ոչ մի գնով հնարավոր չէ վերադարձնել, այդպիսի մեկը չպե՞տք է, արդյոք, ամեն կերպ ջանա կամ դադարեցնի կամ, համենայն դեպս, վերացնի [դրանք, եթե այդ անելու հնարավորություն կա]։

Հայտնի է, որ ներկայումս եվրոպ<ական> լեզուները ոչնչով հարուստ չեն այնքան, որքան ուսման գործին վերաբերող երկերով, և երջանիկ են այն երկրները, որտեղ այդքան գլուխներ, այդքան փորձված մտածողներ ո՛չ ժամանակ, ո՛չ ջանք և ո՛չ էլ միջոցներ չեն խնայում, որպեսզի, հաղթահարելով դժվարությունները, ամեն կերպ աջակցեն իրենց համաքաղաքա-

ցինների բարօրության գործին։ Դրանք մարդկային ցեղի իսկական լուսատու ջահեր են։ Բայց կարելի՞ բան է, որ ես՝ ասիացիս, կայսրության ամենահեռավոր ծայրամասում, վայրենացած երկրամասի խուլ վայրում գտնվող դպրոցական ուսուցիչս, խիզախեմ [և մոռացված անկյունում մտածեմ, այսպիսի մի ժամանակ, որևէ լավ բանի, որևէ նոր բանի մասին։ Այն ո՞վ է, որ լսելով նման տարօրինակության մասին, այն չի համարի բանդագուշանք, խելացնորություն։ Բայց այդ բոլորով հանդերձ՝ ես բնավ չեմ երկընչում ինձ սպասող նման կշտամբանքներից ու ծաղրուծանակից, որովհետև իմ նպատակը սուրբ է, ինչպես և սուրբ է ս. ավետարանի և աստուծո սեղանի առաջ իմ տված երդումը], որը պարտավորեցնում է ինձ հավատարմությամբ ու ջանասիրությամբ ծառայել մեծ կայսրին և ընդհանուր հայրենիքին։

Ութ տարի ծառայելով նույն ասպարեզում, վառ ցանկություն ունենալով գեթ որևէ օգուտ բերել իմ երկրին ու իմ համաքաղաքացիներին, լինելով, բացի դրանից, նրանց դավանակից, ցեղակից, գիտենալով նրանց բարքերը, լեզուները, սովորույթները, հարկավ, պատշաճ չէր լինի իմ կողմանը, եթե գեթ որևէ բանով, որի կարիքը ունեն իմ հայրենակիցները, չհետևեի նրանց և, որքան կարելի է, լավ չկարգավորեի նրանց կրթության գործը։ Բայց թող գիտական քննադատությունը որևէ նոր, չեղյալ բան չորոնի անդր<կովկասյան> ուսումնարաններում գիտությունների դասավանդման մեթոդի մասին արած իմ դիտողություններում։ Դրանք վաղուց հայտնի են, բայց միայն թե մեր հաստատություններում կա՛մ ընդունված չեն բնավ, կա՛մ եթե ընդունված էլ են, սակավ են կատարվում,— թող դրա համար էլ չդատապարտեն ինձ, երբ իմ գաղափարները ոչ սիստեմատիկական կարգով, ոչ էլ լրիվությամբ ու պարզությամբ չհամապատասխանեն իմ դատավորների գիտական ճաշակին, որոնք սովոր են նման դեպքերում իրն ընդգրկել բոլոր կողմերից ինչպես հարկն է, քանի որ ես տակավին շատ հեռու եմ այն պահանջներին լիուլի բավարարելուց, որոնք անհրաժեշտ են այնպիսի մի կարևոր առարկայի պարզաբանման համար, ինչպիսին է մեթոդիկան: Դա չափազանց ընդարձակ ասպարեզ է նաև ամենագիտուն մարդու համար։ Եվ այսպես, իմ դիտողությունները հիմնված են ոչ թե գիտական դատողությունների և մտաեզրահանգումների վրա, այլ շատ պարզ սկզբունքների վրա, երկարատև փորձի վրա և այն ամենի ուշադիր դիտողության վրա, ինչ վերաբերում է մեր ուսման գործին Այսրկովկասում։ Ահա և նրանց գլխավոր պայմանները՝ դիտողություն, պարզություն և հիմնավորվածություն՝ ուսումնական հաստատությունների ստորին դասարաններում փոքրահասակ երեխաներին գիտություններ ավանդելիս, և ոչ թե սիստեմատիկ ուժա-

պառություն, որ առաջանում է հենց ուսման սկզբից նրանց սարսափեցնող և նրանց ցանկությունը, նրանց մտավոր և հոգեկան ունակությունները հենց սաղմում մեռցնող պեդանտիզմից ու բերանացի դատարկախոսությունից. անցում հայտնիից դեպի անհայտը, գործնականից դեպի տեսականը, կենդանի աշխարհից դեպի վերացականը և մտայինը, անհայտի համեմատումը հայտնիի հետ. հասկանալ և հաճախ կրկնել այն բոլորը, ինչ անցել ենք. իսկ ամենից գլխավորն է բոլոր և ամեն մի դեպքում՝ դաստիարակի միակ հոգացողությունը և ձգտումը պիտի լինի՝ իր մատղաշ սանի մեջ արթնացնել նվիրական ու ազնիվ, կրոնական ու բարոյական զգացումներ, և հարմարեցնել նրան, որպեսզի ճիշտ հայացք ունենա այն ամենի մասին, ինչը շրջապատում է իրեն, և ըստ կարելվույն, լրիվ գաղափար ունենա այն մասին, ինչ որ անում է։ Ե՛վ ամերիկական վայրենիների, և՛ աֆրիկական բարբարոսների մեջ արդեն վաղուց փայլել և մինչև այսօր փայլում են, իրենց ամբողջ բարերար ազդեցությամբ, մտքի ու սրտի լուսավորության և ճշմարիտ կրթության ճառագայթները մարդկային մոլորյալ ցեղի տգիտության խավարում, իսկ անդր<կովկասյան> ցեղերը, շնորհիվ աստուծո, շրջապատված են առավել կամ պակաս կրթված ժողովուրդներով, ամենաբարի նախախնամության կամքով հանձնված են այն իմաստուն միապետի ձեռքը, որի ողորմածությունը, գթասրտությունն ընդհանուր են ամբողջ աշխարհում և որի հզոր պաշտպանությամբ, ամեն մի կարոտյալ, թեկուզ երկրի ամենահեռավոր անկյունից, պատրաստի ապաստարան և անխախտ բարօրություն է գտնում, իսկ ի՞նչը կարող է պատճառ լինել, որ Այսրկովկասում գտնվող նրա զավակները այսպես դանդաղ են զարգանում։ Մի՞թե պատասխանը հենց հարցի մեջ չի գտնվում, մի՞թե հարկ կա բացատրելու, որ մենք ինքներս, որոնց վրա է դրված ժողովրդական դաստիարակության սրբազան պարտականությունը, մենք ինքներս տոգորված չենք այն առաքելական ճշմարիտ ոգով, այն աստվածային ներշնչմամբ ու անձնուրացությամբ, որոնցով աչքի են ընկնում ուսյալ ու բարի միսիոներները՝ աստվածային խոսքը, ավետարանի խոսքը իրենց վայրենի եղբայրների մեջ տարածողները։ Ահա ամենագլխավորը, որ մենք չունենք։ Աստիճանները և պարգևները, ռոճիկը և անդորրը, մի խոսքով՝ սնափառությունն ու ինքնասիրությունը[1], ինչպես ամենուրեք, այնպես էլ այստեղ, այն

[1] Հարկավ, մեզ մոտ ռոճիկն աննախանձելի է, և թաղապետն ավելի է ստանում, քան որևէ ուսուցիչ, և պարգևները՝ չլսված բաներ են, բայց դրա փոխարեն աստիճաններն ստացվում են շատ և առանց դասային խտրության, ահա թե ինչու ում առջև փակ է ճանապարհը այլ աշխատանք ստանալու համար, դիմում է միայն ուսումնական գերատեսչությանը։

միակ զսպանակներն են, որոնք հրապուրում են մեզ կրել ուսուցչական անունը, այդ կործանարար տարրերը, որոնք մեր միակ նպատակն են դաստիարակի պաշտոն ստանձնելիս և դրա հետ մեկտեղ, Անդրկովկասում մեր եղբայրների մեջ աստծու խոսքը հաստատ պահողի ու տարածողի սուրբ առաքելական պաշտոնին կարգվելիս։ Կառավարության ո՛ր տեսակները մենք կարող ենք արդարացնել, ի՞նչ օգուտ կարող են բերել իրենց համաքաղաքացիներին։

Բայց իհարկե, ինչ որ լուսնի տակ մնացել է միևնույն տեղում և նույն վիճակում անփոփոխ, բոլորը, և՛ լավը, և՛ հոռին ժամանակին այս աշխարհում կենթարկվեն փոփոխության և անխուսափելի փոփոխության, պետք է հուսալ և հաստատ կերպով հենվել այն բանի վրա, որ մեզ մոտ էլ փոփոխություն կլինի, կգա ժամանակ և կլինի խորհուրդ և ընդսմին պետք է նաև այն ասել, որ մեր երկրամասը դեռևս նոր է, ամեն բան չի կարելի միանգամից անել. մեր ուսումնական հաստատությունները ոչ երկար տարիների ընթացքում, այնուամենայնիվ, արել են որքան հնարավորություն են ունեցել, բայց որ այնպես չի արվել և այժմ էլ չի արվում ինչպես հարկն է, դրանում միայն ուսումնարանները չեն մեղավոր,— չեն եղել բավականաչափ պատրաստված ղեկավարներ, ուրեմն և ճիշտ ուղի, որով պետք է ընթանար Անդրկովկասում սովորող պատանեկությունը, ահա թե ինչու ժողովրդական դաստիարակության ու կրթության գործը հասկացող ու գնահատող յուրաքանչյուր մարդու պարտականությունն է ձգտել իր գիտելիքները, իր փորձը ի սպաս դնելու երկրի կարիքներին և նպաստելու այն ընդհանուր վեհ ծրագրին, որով պետք է ընթանա ժողովրդական դաստիարակության ու կրթության գործը։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Յուրաքանչյուր ուսումնական հաստատության ամենագլխավոր կարիքների մասին և մանավանդ, դասատուների մասին ընդհանրապես

Յուրաքանչյուր արքունական, ինչպես և մասնավոր, բարեկարգ ուսումնական հաստատություն, բացի յուր նյութական պահանջմունքներից, այն է՝ շենք, կահկարասի և ուսումնական պիտույքներ, պետք է անպայման ապահովի նաև հետևյալ անհրաժեշտ պայմանները.

1-ին. որ դասատուները տիրապետեն, բացի իրենց կողմից ավանդվող առարկաներից, նաև բավականաչափ գիտելիքների, փորձի, լավ մեթոդի և, մանավանդ, սիրեն այն գիտությունները, որ սովորում է իրենց վստահած պատանեկությունը։

2-րդ. որ ուսման առարկաները համապատասխանեն տեղական պահանջմունքներին ու կրթվող պատանեկության հասակին, հասկացողություններին և ունենան հաստատուն սահմաններ, իմանալու համար, թե ո՛րտեղից մինչև ո՛րտեղ պետք է անցնել այս կամ այն դասարանում։

3-րդ. որ հատկապես այն լեզվով, որով ավանդվում են առարկաները, որքան հնարավոր է, զարգանան սովորողների ընդունակությունները թե՛ մտավոր և թե՛ բարոյական տեսակետից, որպեսզի մութ, անհասկանալի և չպարզաբանված որևէ բան չմնա կրթվող պատանեկության համար.

և 4-րդ. որովհետև հետագա ժամանակում, մեծ հասակում, այդ ամենի հիմք և մեր մտավոր ու հոգեկան սնունդ պետք է ծառայի փոքր հասակում ստացած դաստիարակությունն ու կրթությունը, ուստի այնպես պետք է անել, որպեսզի ուսումնական հաստատություններում մեծ ուշադրություն դարձվի փոքրահասակների վրա, այսինքն՝ ուսումնական հաստատությունների ստորին դասարանները, այն է՝ գիմնազիաների ու գավառական ուսումնարանների 1-ին, 2-րդ և 3-րդ դասարաններն ընդունվածների և ընդունվողների վրա։

Ահա սրանք են առաջին, գլխավոր պայմանները ամեն տեսակ ուսումնական հաստատությունների համար, առանց այդ պայմանների, ըստ իս դժվար է և նույնիսկ կարելի չէ որևէ լավ բան սպասել։

Այժմ տեսնենք, թե ի՛նչպիսի դասատուներ են եղել և ներկայումս էլ կան մեր Անդր<կովկասյան> ուսումնարաններում։

Գիմնազիայի բարձր դասարանների համար մեզ մոտ ավագ ուսուցիչներ են նշանակվում կա՛մ Ս<անկտ> Պետերբուրգի Մանկավարժական ինստիտուտի, կա՛մ Ռուսաստանում որևէ համալսարանի դասընթացն ավարտածները, որոնց խորհուրդներով էլ կառավարվում են անդր[կովկասյան] ուսումնական հաստատությունները։ Այդ մարդիկ միանգամայն խորթ են և՛ տեղական պայմաններին, և՛ բարքերին, և՛ լեզուներին, և՛ բնիկների երեխաների մտածելակերպին ու հասկացողություններին, և, որ ամենից վատն է, այդ մարդիկ, ըստ մեծի մասին, իրենց դաստիարակության վրա պետական գանձարանի կողմից արված ծախքի դիմաց, պարտավորված են որոշ տարիներ ծառայել ուսումնական հաստատություններում — որտեղ էլ որ լինի — հետևաբար, նրանք կամ բնավ շահագրգռված չեն, կամ չափազանց քիչ են շահագրգռված իրենց առաջիկա պարտականությունները կատարելու գործով, այնպես որ նրանցից շատերն իրենց ծառայության համար օրերով ու րոպեներով հաշված ժամկետից ավելի չեն պարապում, քան

նրանց առարկաների ավանդման համար որոշված[1] փոքրաթիվ ժամերն են։

Եվ, բացի դրանից, նրանց մոտ աշակերտները մտնում են 4-րդ դասարանը, արդեն փոքր ի շատե պատրաստ, կարո՞ղ են արդյոք նրանք դատել ստորին դասարաններում տիրող դրության մասին և նրանց ի՞նչ գործն է նույնիսկ դատել այդքան նվազ կարևոր և նրանց արժանիքը նվաստացնող խնդրի մասին։ Ահա թե ինչու այդքան ժամանակի ընթացքում, մինչև այժմ դեռ ոչ մի քայլ չի արված այդ դասարաններում նախնական ուսուցման համար և օգտակար գրքեր կազմելու ուղղությամբ՝ ոչ ռուսերեն լեզվով, ոչ էլ տեղական լեզուներով, իսկ եթե որևէ մեկը սեփական նախաձեռնությամբ ցանկանում է այդ անել, ապա նրանք պատրաստ են ուղղակի խեղդել, փոխանակ աջակցելու և խրախուսելու այդպիսիներին[2]։

Դրանից հետո էլ ի՞նչ ասել գիմնազիաների ստորին դասարանների և գավառական դպրոցների ուսուցիչների մասին, որոնց տնօրինությանն է հանձնվում ամենից նուրբ[3] և ոչինչ չհասկացող պատանեկությունը։ Դա տարբեր դասերի պատկանող և տարբեր բնավորությունների տեր մարդկանց մի խումբ է, իսկ մեծ մասամբ այնպիսի մարդկանց, որոնք որևէ հույս չունենալով, որ աստիճաններ կստանան քաղաքացիական ծառայության մյուս բնագավառներում, իրենց համար ամենահուսալի ապաստան են գտել ուսումնական գերատեսչության մեջ, և զարմանալի՞ է, որ ամիսները նրանց տարիներ պիտի թվան, մինչև այդ նպատակը կկատարվի

---

1 Այդ մարդկանց մեջ, որքան ինձ հայտնի է, գովասանքի արժանի բացառություն է կազմում Թիֆ<լիսի> գիմնազիայի մաթեմատիկայի ավագ դասատու Պ. Շեստակովը՝ մի մարդ, որը հոգով, սրտով ու մեթոդով նվիրված է իր գործին, որին աստվածացնում են իր աշակերտները և որի հետ, ճշմարիտ բավականությամբ, բազմիցս դատողություններ ենք ունեցել մեր ընդհանուր առարկայի շուրջը, և ուրիշ ոչ որի հետ՝ Թիֆլիսում իմ յոթնամյա պաշտոնավարության ընթացքում իսկ գանգատները անբավարար ռոճկի, ծառայության հետ կապված դժվարությունների, պարգևներ կամ աստիճան չստանալու մասին — դրանք սովորական ողջույնի խոսքեր են յուրաքանչյուրի շուրթերին։

2 Ընթերցողները, հարկավ, կարող են կասկածել իշխանությամբ ինձնից բարձր կանգնած անձանց վերաբերյալ իմ այդպիսի չափազանց խիստ դատողությունների մասին, բայց ես կարող եմ այդ ապացուցել փաստերով։ Ուսյալ մարդկանցից ո՞վ չգիտե Տապպեի ռուս-գերմաներեն այն գործնական քերականության առավելությունների մասին, որը մինչև այժմ էլ լավագույն ձեռնարկն է հանդիսանում Ռուսաստանում ապրող գերմանացիների համար ռուսերեն սովորելու գործում։ Հայերի համար իմ կազմած այդ հրաշալի քերականությունը Գիտությունների Ակադեմիան հաստատել է, իսկ Թիֆ[լիսի] գիմնազիայի խորհրդի կողմից որպես անօգուտ գիրք դատապարտված է փոշիների ու փտման հավիտենական զոհ դառնալու, այլևս չխոսելով իմ մյուս գրքերի մասին, որոնք նրանց կողմից արժանացել են նույն բախտին։

3 [Թարմ]։

Այնուհետև մնաք բարյավ և՛ ուսումնարան, և՛ ուսում. վաղո՞ւց են արդյոք նրանք մտածել այդ մասին։

Արժե՞ արդյոք որևէ բան ասել նաև կրոնուսույցների ու տեղական լեզուների ուսուցիչների մասին, որոնք, աստված գիտե, թե ի՛նչպիսի ուսումնարաններից են դուրս եկել և որոնց վրա ավելի է սրբազան պարտականություն ընկնում ազնվացնել մատաղ սերունդը, զարգացնել նրա բարոյական ու կրոնական զգացմունքները և դրանով իսկ այդ սիրասուն, նուրբ երեխաներին հաճելի դարձնել իրենց ամենաբարձրյալ հորը։ Դրանք գրեթե զրադաշտական ժամանակներից մնացած էակներ են, որոնք տակավին խարխափում են լույսի ու խավարի միջև, ոչ մի գաղափար չունեն ոչ իրենց պարտականությունների, ոչ մեթոդի և ոչ էլ ուսման վերաբերյալ գրեթե որևէ բանի մասին, իսկ ռուսաց լեզվից թերևս գիտեն միայն հաց ու ջուր բառերը, այն էլ հայ ու վրաց դավանանքի կրոնուսույցները, իսկ թուրքականների մասին ավելորդ է խոսել. մոլլան ինչպե՞ս իմանա քրիստոնեական լեզուն, երբ նա այդ լեզուն արհամարհում է։ Բացառություն կազմում են միայն նրանք, ովքեր սովորել են Թիֆլիսի ռուսական սեմինարիայում։ Խոսելով բավական պարզ, բայց թերևս, չափազանց ազատ՝ մեր ուսումնարաններում տիրող վիճակի մասին՝ նրանց դասատուների հարցի կապակցությամբ, ես անցնում եմ մյուս, դրան անմիջապես հաջորդող խնդրին։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Գիմնազիայի և գավառական ուսումնարանների ստորին դասարաններում ավանդվող առարկաների և նրանց ավանդման եղանակի մասին

Բոլոր դպրոցների 1-ին դասարանների ուսման առարկաները հետևյալներն են՝ կարդալ ռուսերեն լեզվով, թվաբանություն, վայելչագրություն. գիմնազիայի 2-րդ և 3-րդ դասարաններում, բացի տեղական լեզուներից, այսինքն հայերենից, վրացերենից և թուրքերենից, նաև՝ ռուսերեն, ֆրանսերեն ու գերմաներեն, այնուհետև՝ աշխարհագրություն, թվաբանություն, վայելչագրություն և նկարչություն, իսկ գավառական ուսումնարաններում, ի բաց առյալ Թիֆլիսինը, որը հավասարեցված է գիմնազիայի, տեղական լեզուներից միայն երկուսը և այլ ուսման առարկաներ։ Դասավանդումը 1-ին դասարանում դրված է մեկ ուսուցչի վրա, իսկ մյուս դասարաններում՝ տարբեր ուսուցիչների։ Աշակերտը, առանց որևէ պատրաստության,

հաճախ չկարենալով կարդալ նույնիսկ մայրենի լեզվով, ռուսերեն ոչ մի բառ չիմանալով, ընդունվում է 1-ին դասարանը, ուսուցչի կողմից գրվում մյուս աշակերտների ցուցակում և սկսում է նրանց հետ կարդալ, նախ տառերով, ապա վանկերով և այլն, կամ աղյուսակներով կամ գրքերով։ Այստեղ նրա բախտն ու հաջողությունները լիովին կախված են կա՛մ այն ուսուցիչներից, որոնց ղեկավարության տակ նա գտնվում է, կա՛մ իր սեփական ընդունակություններից, հասկանալու կարողությունից ու ջանասիրությունից։

Այդ դասարանը մտնող աշակերտների մասին կարելի է արդեն վճռականորեն ասել, որ նրանք առանց բացառության, որ դասին ու կոչման էլ պատկանելիս լինեն, մինչև այն որևէ տեսակի վարժություն չեն արել, բացի չարաճճիությունից, վայրագությունից և նման այլ արարքներից, որ նրանք ցուցաբերում են կամ իրենց տանը, կամ փողոցում, այն պատճառով, որ նրանց ծնողները որևէ գաղափար չունենալով դաստիարակության մասին, նրանք լիովին թողնված են բախտի քմահաճույքին։ Այն ծնողներն էլ, որոնք իրենց երեխաներին ուղարկում են ուսումնարան, հաճախ և մեծ մասամբ միայն այն նպատակով, որպեսզի ազատվեն նրանց գլխացավանքից, այստեղ՝ ուսումնարանում սովորաբար ի՞նչ շրջանի մեջ է ընկնում աշակերտը,— ոչ ավելի լավ, քան ինքը, իսկ մտավոր զբաղմունքի տեսակետից հազիվ թե ոչ ավելի վատ, որովհետև նրա միտքը թեև մինչ այդ ոչնչով զբաղված չի եղել, բայց գոնե ազատ է եղել, թարմ և ենթակա չի եղել որևէ հարկադրանքի, այստեղ նա արդեն շատ շուտով տեսնում է, որ քանոնը և ճիպոտն իզուր չեն գործածվում դասարաններում, պահանջում են սովորել և հնազանդ լինել, կամա թե ակամա նա տեսնում է հնազանդ և զգույշ լինելու անհրաժեշտությունը <այնքան ժամանակ>, քանի դեռ նա ուշադրության է առնվում, իսկ եթե ուշադրության չառնվի, ապա՝ աստված մի՛ արասցե։

Այսպիսով անցնում է երկու, երեք, նույնիսկ չորս տարի և դեռ ավելի։ Այդ հսկայական ժամանակամիջոցում նա, հազիվ սեփական ջանքերով կամ, ավելի լավ է ասել՝ այս կամ այն ընկերոջից, դասարանում կարդալիս կամ թվաբանության դասին գործածվող մի շարք տեխնիկական, բայց մութ, իր համար բոլորովին անհասկանալի արտահայտություններ անմտորեն ու մեքենայորեն որսալով, սովորում է մի կերպ կարդալ արդեն գրքով, կատարել թվաբանական չորս գործողությունները, մի կերպ ընդօրինակել տառերը, և ահա նա ընկերանում է նրանց, որոնք կոչվում են ավագ աշակերտներ և որոնց պարապմունքները ոչ այլ ինչ են, եթե ոչ նույն բաների կրկնությունը, բայց արդեն ուսուցչի ղեկավարությամբ, որը նախորդ ղեկավարներից բնավ էլ ոչ հաջող կերպով, ստիպում է նրան գրքով կար-

դալ, խնդիրները լուծել, մինչև կգա քննությունների ժամանակը, որից հետո արդեն նա կփոխադրվի 2-րդ դասարանը՝ հուսալով, որ այնտեղ նրա համար ավելի դյուրին կլինի, բայց այդքան երկար ժամանակի ընթացքում մեկն ու մեկը թեկուզ մի բառ բացատրե՞լ է արդյոք ոչ միայն ռուսերեն, այլև նրա մայրենի լեզվով՝ այնպես, որ նա լիովին հասկանա բացատրվածը, նրան ստիպե՞լ են արդյոք թեկուզ միայն տառերն արտասանել ինչպես հարկն է,— դա կողմնակի, չլսված, 1-ին դասարանի աշակերտների անելիքների մեջ չմտնող բան է, սահմանված է կարդալ, գրել և սովորել թվաբանության 4 գործողությունը, իսկ դրանք հասկանալու մասին ոչինչ ասված չէ, դա 2-րդ դասարանի գործն է[1]։

Այսպիսի անհաստատ և նույնիսկ անօգուտ հիմքի վրա են դրված նաև 2-րդ ու 3-րդ դասարանների առարկաները, որոնք պահանջում են ոչ միայն ռուսաց լեզվի գիտություն, որի հետքն անգամ չկա,— այլև պահանջում են ունենալ պարզ գաղափարների ու արտահայտությունների նախնական բավական մեծ պաշար, մտավոր ընդունակությունների զարգացում և այլն[2], իսկ հիշողությունն ու ճիպո՞տը։ Եթե մեկը դրա համար ունի առաջինը և վախը ծնողների հանդեպ, ինչպես ուսուցիչների, ապա նա քաջաբար կդիմանա նրանց այդ սարսափելի տանջանքներին, բայց արդեն վճռականորեն դեն նետելով տեղական և օտար բոլոր լեզուները, առանց որոնց նույնպես նա կփոխադրվի դասարանից դասարան. վա՛յ նրան, ով չունի այդ անհրաժեշտ պայմանները։ Այդպիսին, բացի հաճախակի պատիժներից և, վերջապես, դասարանից բոլորովին վտարվելուց, ոչ մի լավ բան չի տեսնի իր համար, բայց բախտավոր է և նա, ով ժամանակին թողնելով այդ խեղդիչ պարապմունքները, ջանում է ծայրահեղ դեպքում գոնե որևէ արհեստ սովորել, չէ՞ որ շատերը աշակերտ անվան տակ պարապ-սարապ թափա-

1 Այսպես էին պատասխանում և պահանջում նույնիսկ գիմնազիայի պ. պ. ավագ ուսուցիչները, որոնք ամեն տարի դիրեկցիայի կողմից գործուղվում էին ինձ մոտ՝ ներկա լինելու Թիֆլիսի գավառական ուսումնարանի աշակերտների տարեվերջի քննություններին, երբ ես այդ ուսումնարանի տեսուչն էի,— և ես ինչպե՞ս կարող էի իմ ուսուցիչներից որևէ այլ բան պահանջել։

2 Բայց չէ՞ որ գրքերը նրա համար են, որպեսզի սովորեն [այդ առարկաները], մի՞թե Արսենևի Աշխարհագրությունը, Կայդանովի Պատմությունը, Վոստոկովի Քերականությունը բավական չեն դրանք սովորելու համար։ Եվ նույնիսկ շատ, ավելի քան բավական են, բայց կհասկանա՞ արդյոք տեղացին թեկուզ հենց ռուսը — գրքի այդ գիտական ծանր լեզուն, ո՞ւմ բանն է հասել, միայն թե նա տառացիորեն սովորի, ինչ որ կա նրանց մեջ, միայն թե նա սերտի և անսխալ կրկնի այդ գրքերից տրված դասերը բառ առ բառ իրար հետևից, էլ ի՞նչ հարկ կա հասկանալու։ Բնիկը ռուսերենը անգիր պիտի սովորի այնքան, մինչև ինքը կհասկանա։ Ահա այդպիսի պատվարժան դասատուների միակ արդարացումը։

ռում են, որովհետև նրանց ծնողները ցանկանում են, որպեսզի իրենց երեխաները հետագայում անպայման չինովնիկներ լինեն, մինչ այն ժամանակ, երբ բնըերն ու տարիքը ստիպում են նրանց ընտրել ապրելու միջոց,— իսկ թե ինչպիսի՞ն կարող են ընտրել նրանք այդ բոլորից հետո, եթե ոչ անազնիվ [անկարգ], անպետք և ամենաողորմելի ապրելամիջոցը, որովհետև նրանք հենց իրենք անպետք են։ Այդպիսի խղճուկների ու դժբախտների որքա՜ն օրինակներ կան։ Եվ այդ բոլորի համար ո՛վ է հանցավորը, եթե ոչ մենք ինքներս, բարի դաստիարակներս։

Այլևս չխոսենք գիտությունների և օտար լեզուների ավանդման համար եղած ուսումնական ձեռնարկների մասին,— հոգատար իշխանության հրատարակած օտար լեզուների դասագրքերը, որքան էլ դժվար լինեն դրանք այնուամենայնիվ, փորձված մարդու ձեռքին մեծ օգտակարությամբ կարող են գործածվել բոլոր դասարաններում. բայց ի՞նչ ասել տեղական լեզուներով հրատարակված մի քանի հին, դասարանում գործածելու համար միանգամայն անպետք դասագրքերի մասին, որոնցից բացի ոչ մի կարգին բան գոյություն չունի։ Տեղական լեզուները, եթե դրանք [ավանդվում են] սահմանված են, որպեսզի դրանցից որևէ օգուտ լինի, ապա պետք է ավանդվեն այնպես, ինչպես կայսրության այլ ուսումնական հաստատություններում ավանդվում են օտար և հին լեզուները, այսինքն՝ նրանց դասատուները պետք է նախ՝ շատ լավ գիտենան ռուսերեն, դպրոցականներին իրենց առարկաներն ավանդեն համեմատական եղանակով, և, երկրորդ՝ պետք է ունենան նրանց համապատասխան ուսումնական հարմար ձեռնարկներ, այն է՝ բառարան, քրեստոմատիաներ, թարգմանության համար գրքեր և այլն։ Բայց վերևում ես արդեն ասել եմ, թե մեզ մոտ մեծ մասամբ ի՛նչպիսի մարդիկ են տեղական լեզուների և կրոնի դասատուները. սրան պետք է ավելացնել նաև ուսումնական ձեռնարկների պակասը և այդ առարկաների ավանդման համար սահմանված դասաժամերի քչությունը, որովհետև ստորին դասարաններում դրանց հատկացված է շաբաթական երկու <ժամ>, իսկ բարձրերում՝ միայն մեկ ժամ. այստեղից որոշակիորեն հետևություն պետք է անել, որ դրանից որևէ օգուտ չի կարող ստացվել։

Բայց գուցե քչերին է հայտնի, որ բոլոր այդ լեզուները կազմված են երկու բարբառից՝ գրքի կամ մեռյալ բարբառից, որից ժողովուրդը ոչինչ չի հասկանում և որով ոչ ոք չի խոսում, և ռամկական կամ կենդանի բարբառից, որը ներկայումս գործածության մեջ է. ուսումնարաններում անցնում են առաջինը, այսինքն՝ գրքի բարբառը, որը սովորողների համար նույնքան խորթ է, որքան և օտար լեզուները։ Իսկ թուրքերեն լեզուն, ես մինչև օրս էլ չեմ հասկանում, թե ինչո՛ւ է մտցված անդր<կովկասյան> ուսումնարաններում ավանդվող առարկաների ցանկի մեջ։ Մի՞թե ոչ ոքի հայտնի չէ, որ թուրքերենը հենց իրենց՝ թուրքերի կողմից արհամարհվում է, որպես անպետք և ոչ մի բանի անընդունակ լեզու[1]։

Մի՞թե ոչ ոք չգիտե, որ թուրքերեն լեզվով չկա ոչ գիրք, ոչ գիր և բացարձակապես ոչինչ, և որ իրենք՝ թուրքերը իրենց մզկիթներում սովորում են միայն արաբերեն և պարսկերեն, որ բոլոր, նույնիսկ չնչին գրությունները էլ կազմվում են բացառապես պարսկերեն և դպրոցներում, թուրքերենի անվան տակ, մեր բարի մոլլաների մոտ կարդում են Գուլիստանը, Հաֆիզը, Թարիդ-Նադիրի և պարսիկ այլ հեղինակներ, որոնցից ուսման ամբողջ ժամանակաշրջանում այնտեղ էլ չեն հասնում սովորողները, որպեսզի ամեն մի երեսը կարողանան կարդալ գեթ տառ առ տառ, իսկ արդեն հասկանալ նաև բովանդակությունը — այդ արտասովոր և անհասանելի հրաշք կլիներ։ Այսպիսով, ինչպես միանգամայն պարզ երևում է, եթե մեկը ցանկանում է թուրքերեն սովորել նրա համար, որպեսզի հետագայում պետք գա որպես թարգման, ապա նա անպայմանորեն պետք է գիտենա թե՛ պարսկերեն, և թե՛ արաբերեն, և, ով գիտե այդ լեզուները, պետք է խղճի մտոք համաձայնի ինձ հետ, որ դրանք սովորելու և նույնիսկ միջակ իմանալու համար, անհրաժեշտաբար պետք է, համենայն դեպս, բոլոր պարապմունքներից բոլորովին ազատ 6 կամ 8 տարի, եթե ոչ ավելի, անխոնջ համբերություն, անընդհատ վարժություն, որպեսզի այդ լեզուները գիտենա ոչ թե անվանապես, այլ օգտավետ կերպով։

Դա այնպիսի առարկա է, որ կարելի է մեր ուսումնարաններում ավանդվող բոլոր առարկաների հետ զուգահեռ դնել, կարելի՞ է արդյոք յուրաքանչյուր դասարանում շաբաթական երկու դասով որևէ դրական արդյունքի հասնել։ Չէ՞ որ իրենք՝ բնիկ թուրքերը, 10—15 տարի անընդհատ, այն էլ առավոտից մինչև երեկո, և ուրիշ որևէ առարկայով չզբաղվելով, սովորում են իրենց մոլլաների մոտ, բայց չնայած դրան, որ ամենից զարմանալին է, իրենց նպատակին հասնում են ոչ բոլորը։ Դրա պատճառը դասավանդման վատ մեթոդն է և տառերի, վանկերի ու բառերի հիերոգլիֆիական խառնուրդը, որը անչափ դժվարություն է պատճառում նույնիսկ ուսյալ մարդուն՝ խորամուխ լինել արևելյան իմաստությունների այդ անթափանցելի գաղտնիքների մեջ։

[1] Թեև այդ ճիշտ չէ, սուտ է, որը ծագում է ընդհանրապես նրանից, որ մահմեդականները ֆանատիկորեն կապված են արաբերենի և պարսկերենի հետ, գտնելով, թե այդ լեզուների մեջ են պարփակված իմաստության, գիտության և բարիքների բոլոր աղբյուրները։ Չէ՞ որ միջնադարում այդպես էին դատում նաև հին լեզուների մասին։ Բայց թուրքերենը իր տեսակի մեջ միակ բանաստեղծականն է, հնչեղը և, թերևս, քերականական տեսակետից ամենահեշտն է բոլոր լեզուներից։

Այդ է եղել պատճառը և այժմ էլ այդ է, որ, ոչ ի նշտամբումն որևէ մեկի ասած, անդր<կովկասյան> ուսումնարանները, մանավանդ Թիֆ<լիսի> գիմնազիան՝ ազնվականական ուսումնարան անվան տակ իր գոյության հենց սկզբից մինչև օրս չի կարողացել և չի կարող, Ռուսաստանի մյուս գիմնազիաների օրինակով, թեկուզ մի տղացու պատրաստել այնպես, որպեսզի նա կարողանա ուղղակի մտնել համալսարան, առանց նախապես գիտելիքներ ձեռք բերելու այն քաղաքներում, որտեղ գտնվում են համալսարանները[1]։ Բայց այդ քիչ է։ Չկա այնտեղից դուրս եկած և ոչ մի բանիմաց թարգման, որի կարիքը այն աստիճան անհրաժեշտ համարվեր, որ կառավարությունը ինքը հարկ համարեց Ս. Պետերբուրգում ամբիոններ հիմնել արևելյան լեզուները հիմնավորապես սովորելու համար, այն ժամանակ, երբ Թիֆ[լիսի] գիմնազիան հենց նրանց կենտրոնումն է գտնվում։ Դա, իմ կարծիքով, բավական ուժեղ և զգալի հարված է Անդրկովկասի դպրոցական վարչության ամեն մի ծառայողի համար, որը, այնուամենայնիվ, իրեն չի արդարացրել կառավարման ինքնին ոչ այնքան դժվար այդ գործում։ Ճիշտ է, մեր ուսումնարաններից դուրս եկած և այժմ քաղաքացիական մասում լավ ծառայողների թիվը բավական մեծ է, բայց մի՞թե դրանով կարող ենք ապացուցել, որ մենք առանձին ճիգ ու ջանք ենք թափել նրանց կրթություն տալու համար։

Մի՞թե ծխական ուսումնարաններից չեն դուրս գալիս քաղ<աքացիական> պաշտոնյաների մեծ մասը, որոնք կարճ ժամանակամիջոցում, ոչ պակաս հաջողութեամբ ընտելանում են թղթերի ձևերին, գործավարությանը, ուրեմն ո՞րտեղ են երևում մեր աշխատանքի թեկուզ հետքերը։ Դրանց զուգահեռ դնենք այն դժբախտների թիվը, որոնք երկար, շատ երկար ժամանակ տառապել են մեր անպտուղ, անբնական ուսուցմամբ, որոնք մեր միջոցով իբր թե պատրաստվել են ապագայում իրենց համար մի կտոր հաց վաստակելու, բայց ոչ մի օգուտ չտեսնելով մեզանից, վերջապես թողել են և՛ մեզ, և՛ մեր ուսուցումը, և արդեն ի վիճակի չլինելով, ինչպես վերևում ասված է, որևէ հաստատուն զբաղմունք գտնելու, դարձել են և դառնում են կամ պարապ-սարապ թափառողներ, կամ փերեզակներ՝ ով

[1] Թեև եղել են համալսարանները մտնողներ, բայց դրանք բացառապես եղել են նրանք, ովքեր իրենց նվիրել են մաթեմատիկային, որի համար, ինչպես հայտնի է, այնքան խիստ չեն պահանջում մյուս առարկաները, և այդ սակավաթիվ մարդիկ եղել են բնիկ ռուսներ, որոնց քիչ չեն նպաստել լեզուն և ընտանեկան դաստիարակությունը։ Շատ չի անցել այն օրից, երբ Թիֆ<լիսի> գիմնազիայի դասընթացն ավարտելուց հենց նույն տեղում ոսկե մեդալ և աննման ատեստատ ստացած մի աշակերտ, ինքը բնիկ ռուս, չի ընդունվել Մոսկ<վայի> համալսարանը՝ հատկապես այն պատճառով, որ չի ունեցել դրա համար նրան իրավունք տվող բավականաչափ գիտելիքներ։

կարողություն է ունեցել, կամ գրագիրներ, կամ որևէ այլ բան, որոնցից շատ քչերն են օգտվում թեկուզ այն սահմանափակ ռոճիկից, որ տրվում է այս վերջիններին, իսկ շատերը, որոնք նույնիսկ հասարակ թղթեր արտագրելու ընդունակություն չունենալով, պարապ տեղը քարշ են գալիս ի վնաս իրենց և իրենց խեղճ ծնողների, հուսալով, որ երբևիցե կարժանանան աշխարհում նրանց համար միակ երջանկությանը և ամենօրյա հացը վաստակելու հնարավորությանը, այն հացը, որի կարիքը մեր լիառատ երկրամասում, շնորհիվ աստուծո և իշխանության հոգատարության, չի զգում ոչ հասարակ երկրագործը և ոչ էլ հետին օրավարձ մշակը։

Վա՜յ մեզ այդ դժբախտների համար, և՛ աստուծո առաջ, և՛ գահի, հայրենիքի առաջ, և՛հասարակության առաջ, և՛ հենց նրանց՝ մեր պատճառով անվերջ տառապողների առաջ։ Ուրիշ ի՞նչ անեն նրանք։ 10—12 տարի, իսկ շատերը և 16 տարի, մեր ձեռքի տակ են նրանք, այդ բավական չէ, մենք նրանց պահում ենք մեր տիրանական իշխանության ներքո և, վերջապես, դուրս են գալիս մեր ձեռքից՝ շատ քիչ բան ստանալով կամ ոչինչ չավելացնելով իրենց ունեցածին, հրաշալի տարիներն անցել են և մեր բեղավոր չափահաս աշակերտն ո՞ւր պետք է դիմի, եթե ոչ վերջին, հաճախ ամենավատ զբաղմունքին։

Բայց փա՜ռք աստուծո, որ նրանց թիվը հիմա, այնուամենայնիվ, փոքր է, սակայն տարեց տարի այն ավելանում է, թե ի՛նչպես կլինի նրանց գործը, այդ Աստված գիտե միայն։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Վերը բացատրված թերությունները վերացնելու և ուղղելու միջոցների մասին

Համառոտակի խոսելով Այսրկովկասում գտնվող մեր ուսումնական հաստատությունների ողորմելի վիճակի մասին, ես այժմ անցնում եմ այն չափազանց կարևոր խնդրին, թե ինչպե՛ս վերացնել վաղուց արդեն առաջացած այդ թերությունները։ Հարկ կա՞ արդյոք խոսելու նաև այն մասին, թե ի՛նչպես և ինչո՛վ, հատկապես ումնի՛ց են կախված աշակերտների հաջողությունները յուրաքանչյուր ուսումնական հաստատության մեջ, եթե ոչ՝ ուսուցիչներից։ Եթե լավ ուսուցչի մոտ և՛ կույրը, և՛ համրը, և՛ խուլը կարող են որևէ բան սովորել և սովորել հաջողությամբ, ապա կասկածի ենթակա՞ է արդյոք, որ մեր ուսումնարաններում էլ իշխանության գլխավոր

Հոգսը պիտի լինի, ինչպես վերևում ասվեց, ընտրել լավ, փորձառու և բարեխիղճ դաստատուներ, մանավանդ ստորին դասարանների համար։ Իսկ ո՞րտեղից գտնել այդպիսի դաստատուներ,— կասեն մեզ։ Ռուսաստանից եկողներն անպետք են դրա համար, իսկ տեղացիներից դժվար է գտնել։ Բայց ինչպե՞ս են վարվում օտար երկրներում և մեզ մոտ՝ ռուսական պրովինցիաներում, որպեսզի ժողովրդական դպրոցների համար ընդունակ ուսուցիչներ պատրաստվեն։ Մեզ մոտ էլ, Թիֆլիսում, ինչպես այնտեղ, բաց անել այսպես կոչված ուսուցչական սեմինարիա, նա, ով մտադիր է հետագայում դաստատու լինել, փորձառու մանկավարժի հսկողության ներքո, մի քանի տարի գործնականում կարողանա տեսնել և սովորել, թե ինքը ինչպե՛ս պետք է սովորեցնի փոքրահասակներին։ Ես կարծում եմ, որ դա անհնարին բան չէ, դատելով այն հսկայական ծախսերից, որ առատաձեռն կառավարությունը ամեն տարի կատարում է տեղացիների դաստիարակության վրա։ Այդպիսի ուսումնական հաստատություն հիմնելու, նրա օգտակարության և բարերար ազդեցության մասին հարկ էլ չկա խոսելու, որովհետև այդ շատ վաղուց և լավ հայտնի է։

Բայց եթե այդպիսի մի ուսումնական հաստատություն հիմնելու գործում կա որևէ արգելառիթ հանգամանք, որ լինել չի կարող, գեթ Թիֆ.<լիսի> գիմնազիայի ստորին դասարաններում <ունենալ> մեկ կամ երկու լավ ուսուցիչ, որպեսզի, այդպիսով, կարելի լինի ոչ միայն բարելավել Անդրկովկասում առաջին և գլխավոր ուսումնական այդ հաստատությունը, այլև, որպեսզի հենց նրանց մոտ, նրանց վերահսկողության տակ, ապագայում ուսուցիչներ լինելու ցանկություն ՝ունեցող երիտասարդ մարդիկ, այդ թվում և կրոնուսույցներ ու տեղական լեզուների ուսուցիչներ պահվեն նույն դասարաններում, որպեսզի թե՛ դասատվության մեթոդը տեսնեն և թե՛ իրենք այդ դասարանների աշակերտների հետ պարապեն, վարժություններ կատարեն նրանց հետ՝ նույն դասարանների ուսուցիչների վերահսկողությամբ և ղեկավարությամբ։ Չէ՞ որ մեզ մոտ, հենց այժմ էլ, ով ցանկանում է ուսուցչի պաշտոն ունենալ գավառական դպրոցներում, միանգամից չի նշանակվում, այլ պարապում է երկար, բայց որտե՞ղ։— Դիրեկցիայի գրասենյակում՝ գրությունների արտագրությամբ։ Ահա թե ի՛նչ է պահանջվում ուսուցչից և ինչպես են իմացվում նրա ընդունակությունները։ Ո՞ւր է այստեղ նպատակը, և ի՞նչ օգուտ դրանից։ Հարկավոր էր նրան շուտ և անպայման տեղավորել գիմնազիայի այն դասարանում, որ դասարանը ցանկանում էր ընդունվել գավառական դպրոցներում, հետևել, թե նա ինչպե՛ս է վարվում աշակերտների հետ, ցույց տալ նրան մեթոդը, եթե նա չունի այդ մեթոդը, ստիպել նրան, որպեսզի շաբաթը մի քանի

անգամ աշակերտների հետ ինքը պարապի այդտեղ ավանդվող առարկաներից, հետո արդեն, իր կոչմանը համապատասխան ընդունակություններ ձեռք բերելու դեպքում միայն, թույլ տալ նրան ստանձնելու իրեն ցանկացած պաշտոնը, որտեղ ուզում է։ Ըստ իս՝ այդ դժվար չէ հենց այժմ գլուխ բերել, և դա՝ ամեն տեսակ ուսումնարանի համար լավ և ընդունակ ուսուցիչներ պատրաստելու անհրաժեշտ ուղին է։ Բայց մեզ մոտ, ինչպես լսվում է, աշխատում են վերացնել այդ չարիքը, գավառական դպրոցների ուսուցիչներ նշանակել Թիֆ[լիսի] գիմնազիայի ավարտածներից։ Հարկավ, այդ, համենայն դեպս, ավելի լավ է։ Բայց արդյո՞ք նրանք լավ մեթոդով են սովորել։ Կարո՞ղ են վերհիշել, թե փոքր հասակում իրենց ինչպես են սովորեցրել։ Գրքերո՞վ, թե՞ ուսուցիչների տետրակներից էին բերանացի սովորում գիտելիքները, և մեծ մասամբ չհասկանալով, թե ի՛նչ են <իրենց> սովորեցնում, ինչպես այդ մեզ մոտ, դժբախտաբար, արվում է, դժվար թե կարելի է ավելի լավ ուսուցիչ լինել, քան նրանք, որոնք այլ տեղերից են ընդունվում։ Այդպիսի օրինակներ շատ կան, այլևս ի՞նչ հարկ կա խոսելու։ Թող նա, ով ավելի փորձ ունի մեր գործում և ով անաչառ է, թող նա դատի այդ ամենի մասին, և ասի ճշմարիտը՝ ո՛վ է արժանի նրան։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ

Այն մասին, թե ինչպես մատաղ սանի մեջ մտավոր ընդունակություններ զարգացնել ռուսերեն խոսակցական լեզվով

Եթե երեխայի ընդունակությունները մայրենի լեզվով զարգացնելու արվեստը մանկավարժության մեջ համարվում է ամենաճիշտը և, միևնույն ժամանակ, ամենադժվարը, ապա ինչպիսի՞ ջանք ու աշխատանք կպահանջի նույն պայմանի կատարումը օտար լեզվով, ինչպիսին ռուսերենն է տեղացիների համար։ Բայց ի՞նչ կարելի է անել — մենք ռուսներ ենք, այդ պատճառով էլ մեր երեխաները նույնպես պետք է անպայման սովորեն ռուսերեն և ոչ միայն խոսեն, այլև մտածեն, զգայեն, դատեն, որպեսզի ռուս լինեն բառի բուն իմաստով։ Բայց ի՞նչպես դառնալ այդպիսին։ Չի կարող պատահել, որ ռուսների մեջ ապրելով, գիշեր-ցերեկ ինչպես տանը, այնպես էլ փողոցներում խոսելով իր մայրենի լեզվով, այդքան շուտ կարելի լինի վարժվել ռուսերենին, թող թե մտածել ռուսերեն։ Եվ եթե կարելի էլ լիներ, ապա ո՛րտեղ և ե՛րբ անել այդ։ Կարելի՞ է արդյոք 1-ին դասարանում սովորեցնել տեղացուն և՛ կարդալ, և՛ գրել, և՛ թվա-

բանություն, և՛ խոսել, և՛ դատել ռուսերեն։ Այդ չլսված ու չեղած բան է։ Այդօրինակ պատասխաններ ես լսել եմ միշտ և լսում եմ ամեն օր բոլորից, նույնիսկ ոչ առաջին դասարանի ուսուցիչներից։

Եվ ի՞նչ կա զարմանալու։ Միշտ, մարդ ինչ որ ինքը չի իմանում, չի հասկանում և չի կարող կատարել, համարում է անհնարին և նույնիսկ գերբնական։ Բայց՝ «Дело мастера боится»,*— ասում է ռուսական առածը,— հետևաբար, ոչ թե գործն է անհնարին, այլ նա՛ է հնարավորությունից զուրկ, ով չի հասկանում այդ գործը։ Ամբողջ շաբաթը աշակերտներն զբաղվում են հետևյալ, բոլորովին էլ ոչ դժվար առարկաներով, այն է՝ կարդալ, գրել և թվաբանություն. հետևաբար շաբաթվա մեջ յուրաքանչյուր առարկային ընկնում է $4\frac{1}{3}$ դաս կամ 11 ժամ։ Ո՞ր դասարանում է այդքան ժամանակ հատկացվում որևէ առարկայի դասավանդմանը։ Բայց տեղացիները կարդալ էլ չեն կարողանա սովորել, եթե կրճատվի ժամանակը։ Այդ նույնիսկ քիչ է։ Անփորձները և իրենց գործը չգիտցողները միշտ այդպես կդատեն և կգոռան, իսկ դրա հակառակ, ով իր գործի վարպետն է, նա մի ժամում շատ բան կանի, քան մի ուրիշը ամբողջ շաբաթվա ընթացքում։ Վայելչագրությունը, որպես երկարատև վարժություն պահանջող արվեստ, ճիշտ որ և երկար ժամանակ է պահանջում, և այն էլ դասագրքի առկայության դեպքում, իսկ ընթերցո՞ւմը, իսկ թվաբանությո՞ւնը, որից միայն 4 գլխավոր գործողությունն է սահմանված անցնել 1-ին դասարանում։*

Իհարկե, եթե դրանք անցնեն այնպես, ինչպես ես ասել եմ առաջ, ապա այն ժամանակ ամբողջ շաբաթը քիչ է այդ առարկաներից թեկուզ մեկը դասավանդելու համար։ Բայց դասավանդիր, ինչպես հարկ է, այն ժամանակ 1-ին դասարանում էլ կարելի է գիտելիքներ անցնել։ «Դատարկ բան է, սնապարծություն և խաբեություն»,— ահա թե ի՞նչ կասեն ձեզ իմ բարի ուսուցիչները։ Բայց մենք արդեն գիտենք, թե ովքե՛ր են նրանք, ի՞նչ հարկ կա նրանց լսել կամ նրանց մասին խոսել, ավելի լավ է գործի անցնել։

Առաջին դասարանում ոչ մի բանի այնքան ուշադրություն, ջանք ու ժամանակ չպետք է հատկացնել, որքան երեխայի մտավոր ընդունակությունների, բարոյական զգացմունքների զարգացմանը, այն բանին, որպեսզի նա պարզ հասկանա ռուսերեն լեզուն և ազատ ու դյուրին կերպով արտահայտվի ռուսերեն։ Պարզ գաղափարներ և զարգացած միտք ունեցող երեխան, ինչպես հայտնի է, մի ժամում ավելի բան կարող է սովորել, քան մի ուրիշը ամբողջ մի ամսում, եթե ոչ ավելի։ Իսկ մեր միտքը չէ՞ որ կրթվում է լեզվով, բառերով, և որքան մաքուր, որքան պարզ ենք հասկանում լեզուն, այնքան դյուրին և այնքան շուտ ենք ընկալում այն առարկան, որի մասին մեզ պատմում են։ Այս կարծիքը, թվում է, պատիր չէ, կասկածելի չէ։ Այժմ տեսնենք, թե 1-ին դասարանում երեխաներին ինչպե՞ս ընտելացնել դրան։ Ամեն բանի համար պահանջվում է ժամանակ և արվեստ, կամ ունակություն։ Դասավանդման համար այստեղ սահմանված 22 դասից $7\frac{1}{3}$-ը թողնենք վայելչագրությանը, մեզ մնում է էլի $14\frac{2}{8}$ դաս։ Թող $4\frac{2}{3}$ դասը գործադրվի թվաբանության վրա, մենք, այնուամենայնիվ, ունենք 10 դաս ավելի, 5 դասը կարդալու համար նույնիսկ չափազանց շատ է, մնացած 5 դասը միանգամայն հեշտ կարելի է գործադրել՝ 2 դասը այն ամենի բացատրության համար, ինչ աշակերտները կարդում են, իսկ 3 դասը՝ այն առարկայի համար, որի մասին այստեղ խոսվում է, այսինքն՝ ռուսաց խոսակցական լեզվի և երեխայի մտավոր ընդունակությունների զարգացման համար՝ հասկանալու ռուսերենը, խոսելու և դատելու նրանով։ Այսպես կբաժանեի ես, համենայն դեպս, ուսման ժամերը։

1. Ստորին դասարանների համար ուսուցիչներ ընդունել այնպիսի մարդկանց, որոնք ոչ միայն բարեխիղճ են, կրթված, այլև մանկավարժության մեջ փորձված են, գիտեն տեղական լեզուները, իսկ այդպիսի մարդիկ չի կարելի գտնել, եթե չունենանք Անդրկովկասի գլխավոր քաղաք Թիֆլիսի գիմնազիային կից կամ առանձին, այսպես կոչված **ուսուցչական սեմինարիա:** *Որովհետև փորձով ապացուցված է, որ հաճախ նաև շատ գիտուն պրոֆեսորը պիտանի չէ, որպես լավ ուսուցիչ։ Այդպիսի ուսումնական հաստատության արժանիքներն ու անհրաժեշտությունը ժողովրդի համար՝ գիտակցել են ամենալուսավոր ազգերը։*

2. Անդր<կովկասյան> երկրի բոլոր ուսումնական հաստատությունների 1-ին և 2-րդ դասարաններում ռուսաց լեզուն ավանդել գործնականորեն և ոչ թե քերականությամբ, ինչպես այժմ արվում է 2-րդ դասարանում։ Թեև այդ դասարաններում ռուսաց լեզվի ավանդման այդպիսի մեթոդ այժմ էլ առաջադրված է իշխանության կողմից, բայց դասատուներն այն չգիտենալով գործնականում, բնավ ի վիճակի չեն, նույնիսկ լավ տեսուչների ղեկավարությամբ, իրագործել այդ մեթոդը։

3. Աշխարհագրությունը և թվաբանությունը 2-րդ դասարանում սահմանափակել ամենաանհրաժեշտ և ամեն մարդու համար պիտանի նախնական գաղափարներով միայն։ Առաջինից իմանալ իր հայրենիքը՝ մանրամասն, ցամաքի ու ջրի գլխավոր բաժանումը, ամեն մի աշխարհամասի գլխավոր քաղաքական բաժանումները և նրանց ազգաբնակությունը, դավանանքը, արդյունագործությունը, բնական և արհեստական արտադրությունը,— այս բոլորը ավելի օգտակար է յուրաքանչյուր մարդու համար, քան ծովածոցեր, նեղուցներ, հրվանդաններ և նման անուններ գիտենալը։

Թվաբանությունից միանգամայն բավական է վերջացնել այստեղ կոտորակները, իսկ ռուսերենի քերականությունը և մյուս առարկաները մանրամասն անցնում են 3-րդ դասարանում։

4. Այդ նույն տեղը թույլատրել միայն ազնվականների, խաների, բեկերի, չինովնիկների և այլն քաղաքացիների երեխաներին, որոնք ի վիճակի են ու կցանկանան իրենց երեխաներին լրիվ կրթություն տալ և նույնիսկ մտադիր են, գավ<առական> ուսումնարանների դասընթացն ավարտելուց հետո, ուղարկել բարձրագույն ուսումնական հաստատությունները։

5. Քաղաքներում, ինչպես՝ Երևանը, Նախ<իջևանը>, Գան<ձակը>, Նուխին և այլն, որտեղ քիչ են ազնվականներն ու չինովնիկները և որտեղ բնակիչների գլխավոր զբաղմունքը կազմում են այգեգործությունը, երկրագործությունը և առևտուրը, ուսումնարաններին կցել, առաջին պահ, մեկական լավ գյուղատնտես, որը ոչ միայն իմանա լավագույն ձևով օգտագործել հողն ու նրա արգասիքները, այլև կարողանա հասկանալ զանազան և հասարակ տնտեսության մեջ անհրաժեշտ երկրագործական գործիքները, որոնց մասին ոչինչ չգիտեն ամբողջ Անդր<կովկասյան> երկրամասում։ Դպրոցականները, մանավանդ քաղաքացիների երեխաները, դասերից ազատ ժամերին, առավոտյան 11-ից մինչև 1-ը, ճաշից հետո 5—7-ը և այլ տոնական օրերին, որոնք այնքան շատ են տարվա մեջ, ի բաց առյալ հարյուրավոր կարևորները, և ամառային արձակուրդների ընթացքում կարող են շատ հեշտ և մեծ օգտակարությամբ վարժվել այդ այնքան հանրօգուտ[1] զբաղմունքներին և ուսումնարանից դուրս գալով, հաստատ կունենան մի կտոր պատրաստի հաց, այլևս չխոսելով այն օգուտի մասին, որ նրանք կարող են բերել և՛ երկրամասին, և՛ պետությանը[2]։

Ուսումնարանները, առավելապես ժողովրդականները, ամենատարրական հանրօգուտ գիտելիքները ժողովրդի մեջ տարածելու հետ մեկտեղ, անպայմանորեն պետք է հոգան ժողովրդի բարօրության և պետության օգուտի մասին։ Թե ո՛րչափ են մեր անդրկովկասյան ուսումնարանները կատարում հասարակական այդ կարևոր նպատակը, այստեղ չէ, որ պետք է մանրամասն բացատրել, բայց և այնպես ամեն մի մարդու պարտքն է՝ ջանք թափել վերացնելու այն բոլոր և ամեն տեսակի թերություններն ու խոչընդոտները, որոնք կարող են կանգնեցնել ուսման ընթացքն այդ ուսումնարաններում և իրենց հետևանքներով ավելի վնաս, քան օգուտ բերել երկրին[1]։

Մեր ուսումնական հաստատությունների առաջին և ամենագլխավոր թերությունն այն է, որ այս երկրամասում ապրող ժողովուրդների այնքան բազմացեղության պատճառով, աշակերտը, հենց որ ուսումնարան է ընդունվում, որևէ գաղափար չունենալով ոչ մի լեզվից, միանգամից դեմ է առնում մինչ այդ իրեն բոլորովին անծանոթ լեզուների ու առարկաների կույտի, այդ պատճառով այն ամենը, ինչ նա մի շարք տարիների ընթացքում, հաճախ նույնիսկ մինչև դասընթացն ավարտելը և ավարտելուց հետո, լսել ու սովորել է բերանացի, այսպես ասած, ճիպոտի ուժով, իսկ մտքի և հոգու սնունդ նա շատ սակավ կամ երբեք չի ունեցել։ Այդպիսի ուսումը, հայտնի բան է, թե ի՛նչ ազդեցություն կարող է ունենալ մարդկային ամբողջ կենցաղի վրա։ Բայց դրա ամենագլխավոր պատճառը դասատուների, մանավանդ ստորին դասարանների դասատուների անփորձ լինելն է, տեղացիների մտավոր զարգացման հիմք ծառայող ռուսաց լեզուն չիմանալն է, ծնողների անհոգությունն է և շատ քաղաքներում տեղական իշխանության բոլորովին անուշադիր վերաբերմունքն է այդ հարցում։ Թեպետ տեղացին, չնայած այդ ամենին, կարող էր մինչև այժմ, թողնելով ուսումնարանը և ծառայության մտնելով, հետագայում ձեռք բերել մինչ այդ իրեն պակասող տեղեկությունները, ծանոթանալ գործերին և վարժվել ռուսերենին։ Բայց այդ վիճակին ավելի նպաստել է և երկրամասի նորությունը և, որ դրանից ավելին է, լավ չինովնիկների պակասը. այս բոլորից հետո կարելի՞ է արդյոք այժմ էլ սպասել նրա համար այդ պատահական, այսպես ասած, բարիքին, թողնելով ուսումնարանները այն նույն վիճակում, որի մեջ գտնվել են մինչև այժմ։ Բնավ ո՛չ։ Ամենօրյա փորձը ինքն է ապացուցում, որ մեր ուսումնական հաստատություններում, մանավանդ գավառական ուսումնարաններում, դասավանդման ներկա եղանակը վաղուց արդեն չի համապատասխանում երկրամասի պահանջներին։ Որովհետև արհեստավորը կամ նույնիսկ այն քաղաքացին, որն իր երեխաներին դպրոցում հաճախ թողել է տասը և ավելի տարի այն միակ հույսով, որ ավարտելուց հետո կտա ծառայության, ապա տեղ չլինելու կամ ծագումով դրա համար որևէ նախապատվություն չունենալու դեպքում ո՞րտեղից մի կտոր հաց ճարի նրանց համար։ Դասընթացն ավարտելուց

1 [ամեն մի մարդու համար անհրաժեշտ]

2 Դրամական տույժ սահմանել այն ծնողների համար, որոնք, առանց որևէ պատճառի, ժամանակից շուտ իրենց երեխաներին հանում են դպրոցից, այդ մասին ոչինչ չհայտնելով ոչ ոքի։

1 [Հպատակորեն ու մարդկայնորեն բացահայտել այն բոլոր թերությունները մեր ուսումնարաններում, որոնք այժմ, իսկ հետագայում ավելի ևս, պետք է ի վնաս, քան հօգուտ ծառայեն երկրին]։

ի՞նչ վիճակ կարող է սպասել դասարանում երկար տարիներ նստած և հոր ղեկավարությամբ խորթացած պատանուն, եթե ոչ ամենախղճուկ, ամենաթշվառ, մի խոսքով՝ թափառաշրջիկ կյանք։

Մեր ուսումնարանները, այդ միանգամայն բնական պատճառներով, անհրաժեշտաբար պետք է ենթարկվեն հատուկ վերակազմության, այնպիսի վերակազմության, որը առավել չափով համապատասխանի և՛ երկրամասի պահանջներին, և՛ ժողովրդի վիճակին, եթե նրանց պտուղները մի ժամանակ պետք է ծառայեն նրանց օգտին։ Դրա համար, ինձ թվում է, հարկավոր է անուշադիր չթողնել հետևյալ պայմանները.

6. Խստորեն պարտավորեցնել տեղական քաղաքացիական իշխանությանը, մանավանդ Անդրկովկասի գլխավոր քաղաքից հեռու գտնվող քաղաքներում, արթուն հսկողություն ունենալ ինչպես ուսումնարանի, այնպես էլ հասարակության վրա, առավելապես մահմեդական հասարակության վրա, որը մինչև այսօր էլ խուսափողական դիրք է բռնում իշխանության այդ փրկարար միջոցների նկատմամբ, որպեսզի նա՝ հասարակությունը, որևէ պատրվակով չդադարի յուր երեխաներին ուսումնարան տալ, համենայն դեպս, 8 տարեկան հասակից և ոչ թե 15, հաճախ նույնիսկ 20 տարեկանից, որպիսի տարիքի պատանիներից դուրս կգան անզգամներ և ոչ թե աշակերտներ, ասիացիների մոտ տեղ<ական> իշխանության և ընդհանրապես բարձր քաղաքացիական դասի այդպիսի ուշադրությունը, նույնիսկ ուսումնական հաստատության վրա մի հայացք նետելը՝ ավելի ազդեցիկ է, քան ամենախելոք մարդկանց բոլոր խրատներն ու խորհուրդները։ Ես առավել ևս անհրաժեշտ եմ համարում այդ նկատել, քանի որ հասարակության մեջ իշխողներից շատերի կողմից այդքան կարևոր խնդիրը արհամարհանքի արժանանալու հետևանքով, շատ տեղերում ուսումնարանը ժողովրդի աչքում ընկնում է ամենախայտառակ դրության մեջ, ինչպես ես այդ գիտեմ փորձից։

7. Ըստ հնարավորության կրճատել ռուսաց լեզուն չգիտցող կրոնուս<ույցների> ու տեղական լեզուների ուսուցիչների թիվը և դրանց փոխարինել ինչպես ռուսաց լեզուն, այնպես էլ իրենց առարկաներն արդեն գիտցող դասատուներով — ներկա ուսուցիչները վճռականապես ոչ մի օգուտ չեն բերում ուսումնարանին։

8. Վերջապես՝ ես համարյա ավելորդ եմ համարում նույնիսկ հիշատակել, բայց, այնուամենայնիվ, խնդրի կարևորությունը պահանջում է հարևանցիորեն նկատել հետևյալը.

ա. Այն ձեռնարկները, որոնցով մեղանում անցնում են գիտելիքները, բնավ չեն համապատասխանում ոչ երկրի հանգամանքներին և ոչ էլ պա-

հանջներին, և այն մարդիկ, որոնք կարող են զբաղվել այդպիսի կարևոր առարկայով, այսինքն՝ եթե ոչ ավելի լավ, բայց համենայն դեպս շատ ավելի հեշտ և տեղացիներին հարմար գրքեր կազմելու գործով, մնում են առանց որևէ աջակցության ու խրախուսանքի։

բ. Գավառական ուսումնարաններում պ. պ. տեսուչները հավասարեցված լինելով մյուս ուսուցիչներին, ուսումնարանը բարվոք վիճակում դնելու նրանց ամենաբարեխիղճ ջանքերի դեպքում անգամ, ոչ մի կշիռ չունենալով նրանց հանդեպ, այնուամենայնիվ, ոչինչ չեն կարողանում անել հօգուտ ուսումնարանի։ Նրանց նկատողություններն ու խոսքերը միայն գժտություններ և անախորժություններ են առաջ բերում իրենց պաշտոնակիցների շրջանում, այդ պատճառով նրանք հարկադրված են միայն լռությամբ ամոքել իրենց և ուսումնարանի դառն վիճակը։

Բոլոր մահմեդական մասնավոր ուսումնարանները դնել ուսումնարանների վերատեսչի վերահսկողության ներքո և այդ ուսումնարաններում ևս նշանակել ռուսաց լեզվի առանձին դասատու։

ՆԿԱՏՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՌՈՒԹԵԱՆ

1. Յետ ցուցանելոյ համբակին զինն նշանագիծս թուաբանութեան՝ որք են 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9. պա՛րտ է յո՛ւշ առնել նմա՝ թէ այսոքիկ նշանագիծք ի լինելն անհատ, ունին պմիմիայն նշանակութիւն, կոչին միաւոր. և եթէ երկու ի սոցանէ ի միասին գրեսցին, յայն ժամ կոչին տասնաւոր, այսինքն ի 10 է սկսեալ մինչև ց99. եթէ իցեն երեք թիւք ի միասին կոչին հարիւրաւոր, եթէ չորս հազարաւոր. այսինքն ի 100 էն սկսեալ մինչև ց1000. եթէ հինգ տասն հազարաւոր. եթէ վեց հարիւր հազարաւոր. եթէ եօթն, միլիոնաւոր. եթէ ութն, տասն միլիոնաւոր. եթէ ինն հարիւր միլիոնաւոր. և առ ի դիւրեաւ գտանել զբազում թուանշանս եդեալս ի միասին, պարտ է բաժանել յերիս. առաջին երեքն է միլիոնաւոր. երկրորդ երեքն՝ հարիւր հազարաւոր. երրորդն՝ հարիւրաւոր, որոյ բազմացուցումն սկսանի յաջոյ յահեակն, և նուազումն յահէկէ յաջն. և թուանշանդ Նոլ ինքնին է ոչինչ, ի դնելն ի ներքոյ այլ թուանշանաց մի անգամ բազմացուցանէ զտասնաւորն. երկու անգամ զհարիւրաւորն. երեք անգամ՝ զհազարաւորն. վեց անգամ՝ զհարիւր հազարաւորն. ինն անգամ՝ զհարիւր միլիոնաւորն եւ այլն։ Ի ցուցանել զայսոսիկ ի կարգի, պա՛րտ է սկիզբն առնել կամ ինքնին գրել, կամ համբակին գրել տալ՝ առ ի տպաւորել նմա զառաջին շաւիղ այսր փորձառութեան։

2. Թուումն. *Առ ի դիւրեաւ ցուցանել համբակին զթուումն, պա՛րտ է գրել տալ նմա զզանազան թիւս ի միասին և ապա թուել, ապա հարցանել՝ որ թիւ իցէ մեծ, որ՝ փոքր, ո՞ր՝ հարիւրաւոր, ո՞ր՝ տասնաւոր, որ՝ հազարաւոր, ապա հարցանել զորքանութիւն գումարին։ Ի դասաւորել զթիւս պա՛րտ է միշտ զայս կարգ պահպանել, զի ի թուելն՝ միաւոր թիւն ի ներքոյ միաւորի դնել, տասնաւորն ի ներքոյ տասնաւորի, հարիւրաւորն ի ներքոյ հարիւրաւորի, հազարաւորն ի ներքոյ հազարաւորի և այլն։ Առ ի դիւրեաւ գիտել զհարազատութիւն գումարին, պարտ է զիւրաքանչիւր թուեալ գումարս մի զկնի միոյ անփոփոխ դասաւորել, այնպէս, զի միշտ մինն քան զմիւսն բարձր դիցի, ապա զթուեալ գումարն կրկին թուել, զոր օրինակ՝*

կամ այսպէս

1799	9300	12	137523
4533	8875	14	43783
8700	7935	16	3874
7977	324	18	360
19	17	10	72
19	12	12	23
18	23	14	15
20	24	16	32
22009	26437	113	23
			13
			17
			185635

ԱՄԵՐԻԿՈՒ ԼԻՍ ՔՑՈՂԸ

Փորթուգալացիք կամենում են՝ Աֆրիկու հարավային ծայրի մոտովը մեկ ճանապարհ գտնին ծովով, որ գնան Հնդստան։

Ամերիկու կամ Նոր աշխարհի *անունը՝ կարծեմ՝ որ շատ մարդի անկաջ ըլի հասել, շատ մարդ էլ քիչ, շատ իմացած ըլի, թե նրա լիս քցողն ո՞վ էր, ի՞նչպես գտավ, ի՞նչքան խազինա Եվրոպացիք էնտեղից դուս բերին, ի՞նչպես Ամերիկա շուտով շենացավ, մարդիք բազմացան, վաճառականությունն ու լուսավորությունը ծաղկեցավ, ու էս օր ամերիկացիք լուսավորու-*

թյունով մեկ ազգից էլ ա պակաս չեն ու շատիցն ավելի։ էն տեղ, ինչ տեղ որ գազաններ, վայրենի ազգեր էին կենում, իրար միս ուտում, ի՞նչպես են էս օր հիանալի քաղաքներ, տերությունք ծաղկել առաջացել. էն տեղ, ինչ տեղ որ մեկ ձի, մեկ կով, մեկ ոչխար, մեկ շուն չկար, էս օր է՛նքան են շատացել, որ մեկ ասեղ՝ որ տաս, երկու ձի կառնես, մեկ նալի փոխ՝ վեց ձի, մեկ մանեթով քսան ձի։ Բաղի վախտ ճրագվի ու կաշու համար վաթսուն, ութսուն հազար տավար՝ բիրաղի են կոտորում, միսը դեն քցում։ Մեկ քանի կտոր բամբակի ճոթ որ տաս, էնպես ֆորսկանք կան, որ մեկ քանի շաբթումը՝ հազարավոր եզն ու կով քեզ համար չվանով կբռնեն, կբերեն։ էնպես մարդ կա, որ հարյուր, հինգ հարյուր, հազար հատ եզն ու կով ունի։ Մեշեք, սար ու ձոր հո՝ լիքն են, էնպես շուտով առատացել, շատացել են։ էնքան ոսկին ու ջավահիրը թողանք, տարին մենակ վաթսուն, մինչև հարյուր հազար միլիոնի հենց շոկոլադ է դուս գալիս միջիցը, ղայֆի, շաքարի, ռոմի, մյուս ապրանքի հեսաբը չեմ ասում։ Թամբաքուն ու կարտոֆել՝ սկիզբը էստեղ գտան ու ուրիշ աշխարհներ տարան։ Հազարավոր եվրոպացիք՝ որ իրանց աշխարհումը հաց չէին ճարում, որ ուտեն, էս տեղ էկան, հարստացան, շենացան ու էս օր է՛ն կարգադրությունքը, էն տերությունքը կան, որ Եվրոպիա էլ չկա։ Բայց ա՛խ՝ էն էլ չի՛ պետք է մոռանանք, որ ո՛չինչ աշխարք էն սև օրը, էն տարաբախտությունն ու թշվառությունը չի՛ տեսել մարդի ձեռից, ինչպես Ամերիկա եվրոպացոց ձեռիցը։ Միլիոնավոր ազգեր, որ առաջ էն տեղ կենում, իրանց կյանքը հանգիստ վայելում էին, էս օր փչացել, հող են դարձել։ էնպես եմ կարծում ուրեմն, որ էսպես բաները՝ մարդ պարապ ժամանակին ուրախությունով լսի ու կարդա։ էստուր համար լավ կըլի, որ գլխիցն սկսենք։ Ով քնի, գլխին ջուր ածենք։

Վեց հազար տարուց ավելի էր անց կացել, որ աշխարքս ստեղծվել, ազգեր շատացել, թագավորությունք՝ որը կործանվել, ոչնչացել, որը նորեն ծաղկել, զորացել, էնքան իմաստուն, խելոք մարդ էկել, գնացել էին, բայց Ամերիկու անունը ո՛չ մեկի անկաջն էր ընկել, ո՛չ մեկի միտքը։ Հին ազգերը՝ ինչպես եգիպտացիք, փյունիկեցիք, հույնք ու հռովմայեցիք՝ շատ էլ գլխըներին զոռ տվին, շատ էլ միտք արին, որ իմանան՝ թե մեր երկրի վերջը ի՞նչ տեղ ա, ի՞նչ ձև ունի, էնքան միայն կարացին դուս բերիլ, որ մեր երկիրը մեկ մեծ տարածություն է, չորս կողմը ջրով պատած, որ ո՛չ տուտ ունի, ո՛չ տակ։ էստով բավականացան մարդիք ու էլ ավելի միտք չարին, թե ուրիշ աշխարք էլ կա։ Նավաշինությունը դեռ էնպես չէր ծաղկել, աստղաբաշխությունը դեռ էնպես չէ՛ր հայտնի, որ մարդիք էս խավար մոլորությունիցը դուս գային։ Բայց Ամենաբարի Արարիչը մարդիս՝ է՛ն հոգին չէր տվել, որ քնած մնա, ժամանակը դեռ չէր էկել, որ մարդ իր մտքի հրաշ-

քը ցույց տա ու իմանա, թե ո՛րքան հնար, ո՛րքան զորություն կա իր միջումը։

Փորթուգալ<ագ>ոց էր մնացել, որ մեկ փոքր ազգ են Եվրոպիա, որ էս մութը փարդեն պատռեն ու աշխարքին մեկ նոր լույս տան։

Հռովմայեցոց տերությունը, որ 476 թվին Քրիստոսից եդը կործանվեց, Գերմանիուցը զանազան ազգեր դուս էկան ու Հռովմայեցոց ձեռի էլած աշխարները բաժանեցին ու նոր նոր թագավորությունք հաստատեցին։ էս թագավորությանց մեկն էլ Գոթացոցն էր, որ առաջ Հռովմ ավերեցին, անցկացան Ֆրանցիա ու հետո էկան՝ Սպանիա ու Փորթուգալի տիրեցին ու իրանց տերություն շինեցին։ 711 թվին սկսեցին արաբացիք զորանալ, ու Ասիո ու Աֆրիկու շատ փայլը առնելուցը եդը՝ գնացին հասան մինչև Ֆրանցիա։ Բայց Մահմեդի թուրը էստեղ կոտրվեց։ Կարլ Մարտել անուն ֆռանկաց թագավորի մեկը նրանց ջարդեց ու արաբացիք էլ եդ դառան, ու Սպանիա ու Փորթուգալ իրանց ձեռի տակին պահեցին, քաղաքներ շինեցին, ու էնպես լուսավորություն քցեցին էն տեղ՝ որ եվրոպացիքը նրանցից սկսեցին քիչ քիչ ուսումն առնիլ, լուսավորվիլ։ Առ հասարակ Եվրոպիո լուսավորության աղբյուրը Ասիա է։

էս ժամանակին Գոթացիք՝ էլ չկարացին դիմանալ, փախան, Սպանիո հյուսիսային սարերը մտան, որ իրանց գլուխը պահեն։ Քիչ քիչ նրանք շունչ առան էստեղ, էլի սիրտ սրտի տվին ու էն մեկ բուռը սարե սար ընկած մարդիքը՝ որ իրանց աշխարքի սերը դեռ չէին մոռացել, հավաքվեցին ու իրանց թշնամի արաբացոց իշխանությունը քիչ քիչ ոչնչացրին, նրանց հետ ածեցին ու 1035 թվին՝ երկու նոր՝ Գոթացոց թագավորություն հաստատեցին, մեկի անունը Արագոնիա, մյուսինը՝ Քաստիլիա: Փորթուգալ՝ էս ժամանակին Քաստիլիո մեկ նահանգն (սանջախն) էր, որ 1100 թվին էլի քիչ քիչ զորացավ, նոր աշխարներ առավ ու իր համար ինքնիշխան թագավորություն դառավ։ Երբ որ սրանք մեկ ոտները հաստատեցին ու իրանց հավատի թշնամի արաբացոցը դուս արին իրանց աշխարքիցը, էլ չդինջացան, ուզեցան որ Աֆրիկա՝ էլ նրանց հախիցը վեր գան, նրանց ոչնչացնեն։ Սրանց կռիվը անդադար պատահում էր ու վերջապես Հովհաննես թագավորը 1411-իցը մինչև 1433 էնքան արեց, որ Միջերկրական ծովն անցկացավ ու էկավ Աֆրիկա, Գիբրալդար ասած նեղուցի էն կողմը՝ Գենտա ասած նավահանգիստը առավ ու է՛ս էլավ պատճառը, որ սկսեցին նոր նոր աշխարներ լիս քցիլ։

էս թագավորի երրորդ որդին՝ անունը Հենրիխ՝ հոր օրինակին հետևելով, իր թագավորական գործը որ պրծնում էր, սկսում էր գիտությանց հետ պարապիլ, մանավանդ աշխարհագրության ու աստղաբաշխության հետ։ էս

սերը նրա սրտումն էնպես էր վառվել, որ վերջ ամենայնի իր թախտը թողաց ու էկավ Ալգարվ ասած գավառը, որ ծովիցը մոտ ա, ու սկսեց Լագոս քաղաքումը կենալ, որ Աֆրիկուցը մոտիկ ըլի ու վախտ վախտ կարողանա իմանալ, թե ծովի էն կողմը ինչ ազգեր են բնակում։ Նրա աղնիվ միտքն էն չէ՛ր, որ իր համար խաղինա ու հարստություն ճարի, չէ՛։ էն ժամանակը բոլոր Եվրոպացիք միտք էին անում, որ ծովով մեկ ճանապարհ բանան Հնդստան գնալու համար, սա էլ է՛ն էր մտածում, թե Աֆրիկու չորս կողմը պտտելով՝ բալքի թե էս ճամփեն գտնի, որ հարավային-արևելյան Ասիա հասնի։ Շատ մարդիք էնպես էին կարծում, թե Աֆրիկա ո՛չ տուտ ունի, ո՛չ տակ. բայց էս կարծիք էր միայն ու կարծյաց հավատալ ու բանը մաքով չփորձիլ, կնշանակի իր ձեռով իր աչքը կալնիլ։ Գնացող չէ՛ր էլել, էկող չէր էլել։ Հին ժամանակից էղպես մեկ պառավի մասալ ա մնացել, թե Աֆրիկա պտտիլ չի՛ կարելի ու լողն էլ տաղ էր անում, բերանը սրբում։ Որն ասում էր, թե հենց մի քիչ առաջ գնա մարդ, գլխին կրակ կթափի, կերի, որն ասում էր՝ վիշապ ու տասը գլխանի գազաններ՝ մարդի սաղ սաղ կուլ են տալիս, որը՝ թե դժոխքը բերանը բաց, հաղար վերստ տեղից նավերը քաշում, փորն է ածում, որն էլ՝ թե չամաղն էնպես ա բռնած, որ ղուշն իր թևավը չի կարող վրովը թռչիլ։ Էսպես դեռ չգնացած, չտեսած, ամեն մեկը իր տանը նստած՝ մեկ երազ էր տեսնում։ Ի՞նչ ասես՝ որ մարդիս չոր գոգրիցը դուս չի գա, բայց վա՜յ նրան՝ որ էսպես ափուռ չփուռ խոսքերին կհավատա ու իր Աստծո տված խելքը ջուր կանի, հետը կխմի։ Մեկ էսպես բան էլ՝ մեր երկրումն անց կացավ ու մինչև էս օր էլ շատ մարդ գլխապատառ, դովթալաբ չանա է տալիս, թե չէ՛ կարելի, ցուրտն ու ձյունը մարդի կուտեն։ Բայց ո՛չ ցուրտը արջ ա, ո՛չ ձյունը վիշապ՝ առաջ փորձի՛ր, խանիխարաբ, հետո նստի՛ր տանդ պարապ։

Էսպես մասալեքը լսելով, մեկն էլ ա սիրտ չէ՛ր անում, որ մեկ փորձի։ Ղորդ ա, 1300 թվին կողմնացույցն (կոմպաս) էլ գտել էին, որ միշտ հարավ ու հյուսիս է ցույց տալիս, ու ծովի վրա շատ հարկավոր է։ Ղորդ ա, բաղի վախտ Աֆրիկու ղրաղներին մի քիչ քսվել էին նավավարքը, ամա էլի սիրտ չէին արել, որ դուս գնան արձակ ծովի երեսը, ու ամեն մարդ գլուխը քորելով՝ էլի եդ տուն էր վաղել։

Հենրիխ՝ էս վեհանձն թագավորի որդին՝ ինչ վաճառական, ինչ նավչի գալիս էր, խաբար էր հարցնում, թե Աֆրիկու արևմտյան ղրաղն ինչպես էր։ Էսպես խաբարները որ իմացավ, մտքումը հաստատեց, որ գնալ կարելի է ու սկսեց իր խարջովը նավեր սարքիլ ու ճամփա քցիլ։ Բայց առաջի նավավարները էն մասալեքը մտածելով, վախեցան, սիրտ չարին ծովի երեսը դուս գնան, ու մեկ բան չարած, էլի եդ դառան։ Վերջապես երկու քաջ տղա-

մարդ խոսք տվին Թագավորին, որ ընչանք մեկ բան չգտնին, ետ չդառնան։ Սրանց մեկի անունը Գոնցալեց ԳարՖա էր, մյուսինը՝ Տրիստան Վազ։ Աստված տվեց՝ որ նրանց բախտը էնպես բանեց, որ քամին ու ֆրթնեն նրանց տարան ու 1418 թվին Փորտո Սանտո ասած կղզին գտան։ Հեյնրիխ մարդիք ուղարկեց, որ էն տեղ կենան, ցանք անեն, բնակութլուն քցեն, խաղող ու զանազան ծառ տնկեն, զանազան անասուն հետները տանին, որ շուտով էնպես տաք երկրումը շատացան։ Մեկ հատ հղի սպիտակ նապաստակ, որ տարել էին, մեկ քանի տարումը էնպես շատացավ, որ վախեցան, թե բոլոր կղզու բույսքը կուտեն, կոչնչացնեն։

Փորտո Սանտոյիցը բաղի պարզ օր տեսնում էին, որ հորիզոնումը (երկնքի դրաղին) մեկ տեղ նուրբ ամպեր են կիտված, ու Գոնցալեց մրտքումը դրեց, որ էն տեղ գնա։ Էս գնալովը 1420 թվին Մադերա կղզին գտավ, ու միջումը էնպես մեկ թանձր մեշա կար, որ մարդի ոտ դեռ չէր մտել, ու հարյուր քառասուն վերստ երկենութլուն ուներ, երեսուն վերստ լենութլուն։ Մեշեն կրակ տվին ու նրա կրակը՝ էնպես են ասում՝ որ յոթը տարի քաշել ա։ Հեյնրիխ հրամայեց, որ էստեղ էլ մարդիք գնան, կենան, սերմորենք տանին ցանեն, խաղող ու շաքարի ղամիշ տնկեն, որ շատ լավ բհամ էկան, չունքի գետինը մոխրի հետ խառնվել էր ու տեղն էլ էնպես լավ հավա ուներ։ Էս օր էլ՝ էստեղանց շաքարը շատ պատվական ա, ու Մադերի գինին ո՞ւմ չէ հայտնի, որ Թիֆլիզ էլ են բերում ծախում, ու տարենը երեսուն հազար բոչկա դուս ա գալիս։

Էս կղզիքը գտնելով՝ Հեյնրիխ շատ սիրտ առավ, թեև նավավարները դեռ վախում էին։ Նրանք էկան քիչ քիչ ու Կանարիո կղզիքը գտան՝ որ հին ազգերին էլ էր հայտնի ու նրանց բախտավոր կղզիք էին ասում, չունքի ծովի դրաղիցը հեռու չէին։ Նրանցից շատը հրաբուղխ են, այսինքն էնպես սարեր ունին, որ միշտ բոց ու կրակ են վեր ածում. մանավանդ Տեներիֆա, որ իր Պիկ ասած սարիցը միշտ կրակ է քցում, ու ծուխ հանում։ Էսպես բաները դհա շատ ահ քցեցին տեսնողների սիրտը ու էնպես էին կարծում՝ որ էն կրակն սկսել ա, որ մարդի էրում փոթոթում էր։ Էլի սրան մտիկ չարին ու սկսեցին դհա առաջ գնալ ծովի երեսին ու 1432 թվին Ացորու կղզիքը գտան, որ Ամերիկու ու Փորթուգալի միջին՝ հազար չորս հարյուր վերստ Փորթուգալիցը հեռու է։ Էս կղզյաց միջին ամենևին մարդ չկար։ 1449 թվին Ֆլանդացիք էկան էս տեղ շեն քցեցին, ու էս օր էլ էնքան հաց ու գինի ունին, որ երբ որ Սպանիո կամ Փորթուգալի նավերը Ամերիկա են գնում, էս տեղ են ուտելիք, խմելիք հետները վերցնում։

Բայց էլի դեռ Կանարիո կղզյաց դենը չէին անց կացել։ Էնտեղ մեկ

սարի քիթ կար, որ արևմտյան կողմն էր ձգվել ու էնպես էին կարծում թե աշխարքի վերջն էս պետք է ըլի, ու սրա անունը Նոն սարաքիթ էին ասում, այսինքն ո՛չինչ։ Ծովն էստեղ էնպես ա պտտվում, ղայնամիշ ըլում, որ էն շատ քաջ նավավարն էլ կվախենար։ Գիլիանեց անուն մեկ սրտոտ նավապետ՝ շատ անգամ ուզեցավ՝ որ անց կենա, չկարաց։ Բայց վերջապես էն փոքր սիրտը չուներ, որ էս դրաղիցը հեռանա, էս բաց թողեց ու արձակ ծովի մեջն ընկավ. 1433 թվին էս Նոն ասած սարաքիթն անց կացավ, անունը փոխեց՝ Բոյյադոր դրեց՝ որ սպանիերեն կնշանակի անց կացած սարաՖիր։ Հեյնրիխ, որ լսեց էս խաբարը, էլ խելքն իրանը չէր, էնքան ուրախ էր ու շատ մարդի աչքը մնաց սառած։ Բայց գտած երկրները բոլոր չոլ էին ու անմարդաբնակ։ Ջրի շան մորթուցն ավելի ո՛չինչ չկար։

Ուր որ էս քրիստոնյա նավավարները մահմեդական էին ռաստ բերում, հենց իմանում էին՝ քրիստոնէից թշնամիք են, թալանում, սպանում, էրում ու շատին էլ եսիր էին անում։ Սրանից դուս էկավ որ վերջ ժամանակի, սկսեցին եվրոպացիք աֆրիկացի Նեգեր ազգերին (այսինքն սև ազգերին) բռնիլ, ծախիլ, ինչպես անասունը, որ մարդ լսելիս, միսը հալչում ա վրեն։ 1442 թվին սֆթա տեսավ Լիսաբոն, Փորթուգալի մայրաքաղաքը էնպես մարդիք, երեսները սև, մազըները խուճուճ, պռոշները՝ հաստ ու դուս պրծած, որ Ոսկեգետի մոտ՝ Աֆրիկա էին եսիր արել։ Էս ողորմելիքը՝ երբ որ իրանց բռնեցին, ոսկու թոզ բերին, որ իրանց գլուխն ազատեն։ Հենց էս անպիտան թոզը տեսան եվրոպացիք թե չէ, գժվեցին։ Նրանք էլ է՛ն էին ուզում։ Ամենն էլ սկսեցին նոր նոր աշխարներիման գալ։ Ոսկու հասրաթը ամենի սիրտն էլ վառեց, ամենն ոտները բարձրացրին, նավ մտան, որ առաջ գնան։ Գենվա ու Վենետիկ քաղաքիցը, որ էն ժամանակ շատ զորեղ էին, էլ վաճառական չմնաց, որ նավ չի սարքի, որ գնա նոր աշխարք գտնի։ Ամենն էլ ուզում էին էնպես աշխար գտնիլ, որ ոսկու գետ ունենար։ Բայց չունքի էսպես երկըրներ չգտան, ընկան ողորմելի նեգեր ազգի վրա, ու որտեղ որ գտնում էին, հայվարի պես կամ սպանում էին, կամ առաջ անում, տանում ծախում։ Մարդի սիրտ կրակ է ընկնում՝ ինչ ժամանակ լսում ա, թե էս լուսավոր եվրոպացիքը ի՞նչ են բերել էն խեղճ ազգերի գլխին, որդին հորիցը խլել, աղջիկը մորիցը, մորը՝ զավակներիցը, որ տանին իրանց փողի ծառավը կշտացնեն։ Էս էլ քո լուսավոր եվրոպացին։

1450 թվին փորթուգալացիք մտան Աֆրիկա ու մինչև Սենեգալ գետը հասան։ Բոլոր բնակիչքը մահմեդական էին ու կռապաշտ։ Սենեգալ գետի բերնի մոտ մեկ սարաքիթ կա, անունը Կանաչ սարաՖիր, սրա առաջին էլ տասը կղզիք կան, որ բոլորին էլ մեկ անունով՝ Կանաչ սարաքթի կղզիք են ասում։ 1456 թվին հասան էստեղ։ Էս կղզիքը շատ սարոտ են, բայց

լավ հավա ունին ու միջըներումը գեղեցիկ մեշեք կան, բայց չունքի ջուր քիչ ունի, կենող չկա։ Էստեղանց լավ մատտահը ծովի աղն է։ Ինգլիզները՝ Գվինեա գնալիս են էս տեղանց պաշար վերցնում, հոլլանդացիք և փորթուգալացիք՝ Ամերիկա գնալիս։

1462 թվին Գվինեա գտան, որ Աֆրիկու արևմտյան կողմն ա։ Էս անգամ հավասարագծին, այսինքն էն տաք տեղին մոտեցե՛լ էին, որ ասում էին, թե մարդի էրում, փոթոթում ա։ Բայց էրիլ, մերիլ չկար ու շատ ոսկի, սադաֆ, մեղրամոմ ու ակնեղեն կային, էնպես՝ որ մյուս տարին նավի տուտն էլ չէր պակասում։ Էսքան երկրները՝ Փորտո Սանտոյիցն սկսած մինչև Գվինեա՝ որ իրեք հազար հինգ հարյուր վերստ կանի, բոլոր Հեյնրիխ թագավորի որդուն ենք պարտական։ Ասենք՝ թե ինքը չգնաց, ամա բոլոր ճանապարհը նրա խորհրդովն էլավ ու ի՞նչ ուրախություն պետք է նրա համար էլած ըլի, երբ որ տեսավ՝ թե իր կամքը էսպես հաջողեցավ։ Նրանով Փորթուգալ էնպես մեծացավ ու մեկ ժամանակ՝ ինչ Եվրոպիցը դուս տեղեր կային, բոլոր փորթուգալացոց ձեռին էր։ Էս մեծերախտ թագավորը 1463 թվին մեռավ ու ամեն ազգ նրա անունը ուրախությունով ու շնորհակալությունով կհիշի։

Սա որ մեռավ, նոր աշխարհներ գտնելու սերն էլ հովացավ։ Ոսկի էին ուզում, էն էլ Գվինեա կար, էլ ո՞ւմ բանն էր կտրվել, որ առաջ գնա։ Էս միջոցումը մեկ քանի կղզի էլ պատահմամբ գտան, ինչպես Իշխանի կղզին, Սուրբ Թովմասի ու Անաբոնի կղզին՝ բոլորը շոք գծի տակին ու Աֆրիկու արևմտյան կողմը։ 1481 թվին Հովհան Բ–ը նստեց Փորթուգալ թագավոր, որ Հեյնրիխ թագավորի պես վառվել էր, որ էլի նոր աշխարհներ գտնի։ Գվինեա շինություն քցիլ տվեց, ու էն տեղից նավեր ղրկեց, որ դհա առաջ գնան։ Էս նավավարքը երկու հազար տասը վերստ հավասարագծիցը՝ էլ դենը անցկացան ու ի՛նչքան ուրախացան, որ իմացան՝ թե Աֆրիկա էնպես անտուտ չի, ու քանի կենում ա, էնքան նրա հարավային կողմը բարականում, սրանում է։ Էս որ լսեցին, ամեն մարդ էլ հաստատ հույս դրեց, որ թե էսպես ա Աֆրիկու հարավային ծերը կարելի ա տալ, ու ծովով Հնդստան գնալ։ 1486-ին Բարդողոմեոս Դիաց Գերմանացին էկավ, էս հարավային ծերը հասավ, բայց չկարաց տեսնիլ, չունքի ծովիցը հեռու էր։ Նրա ձեռքի տակի մարդիքը էլ չուզեցան, որ առաջ գնան ու գլուխները փորձանքի տակ քցեն, չունքի շատ մեծ քամի ու ֆրթնա էր ծովի վրա, որ էս օր էլ ա ըլում։ Ծարը կտրվեցավ էլ եդ էկավ Լիսաբոն քաղաքը, ու էս սարաքթի անունը՝ Անի դողի սարաքիթ դրեց։ Բայց Հովհան թագավորը հենց էս ուրախ խաբարն իմացավ թե չէ, մեծ ումուդով ձեն տվեց։ «Չէ՛, չէ՛, բարի հուսո սարաքիթ պետք է ասած։ Էստուց դենը Հնդստանու ծովի ճամփեն լիս ըն-

կավ»։ Ու շատ ճշմարիտ անուն դրեց թագավորը, չունքի նրա հույսը էնպես լի ու լի կատարվեցավ։

Մեկ խելիմ ժամանակ էլ անց կացավ, Հովհան թագավորը մեռավ, տեղը Էմանուել թագավորը նստեց, ու սրա ժամանակին էր, որ չորս նավ հազրեցին, որ գնան Աֆրիկու չորս կողմովը պտտին։ Էս անգամ նավերի մեծը Վասքո դե Գամա Գենվացին էր։ Ինքը խելոք, սիրտը պինդ, անահ, աներկյուղ հոգու տեր։ Հարյուր մարդից ավելի չուներ վրեն, էն էլ սիրտները թուլ, վախկոտ։ Հենց իմանում էին, թե մահի առաջն են գնում, ու ուզում էին՝ որ պաս պահելով, աղոթք անելով Աստծո բարկությունը դինջացնեն։ Հուլիսի 18-ին 1497-ին նավ մտան։ Վասքո դե Գամա՝ շատ փիս վախտի հասավ Աֆրիկու ծերը։

Էս որ տեսավ, մնաց ահում, դողում, չունքի ծովն էնպես կատաղել, էնֆրթնեն էր վեր կացել, որ ամեն րոպեի քիչ էր մնացել, որ նավերը կուլ տար, յա կտոր կտոր աներ։ Դհա սարսափելի, դհա սոսկալի էր նրա մարդքերանց հուսահատությունը, որ կարծելով՝ թե նա իրանց ուզում ա սաղ, սաղ կորցնի, շատ անգամ միտք արին, որ նրան ծովը քցեն, խեղդեն։ Բայց Գամայի սիրտը ապառաժ էր, հենց իմանում էր, քամի ա փչում ականջի տակովը ու բոլոր փորձանքը ոտի տակ տալով, սկսեց ով նրանց միջին խռովարարն ու բանսարկուն էր, բռնիլ, զնջ<լ>ով կապիլ ու ինքը նավի գլխին նստիլ։ Էսպես՝ 20-ին նոյեմբերի էս վտանգավոր ծերն անց կացան։ Բայց Գամա էլի սիրտ չարեց, որ արձակ ծովի մեջը գնա, Աֆրիկու արևելյան կողմովը քսվելով՝ գնաց, որ թե կարելի է Հնդստանից մեկ խաբար իմանա։ Քանի որ էս ղրաղի մոտովն անց էր կենում, էնքան տեսնում էր, որ խալխը շատ հարուստ են ու Հնդստանու հետ գնալ գալ ունին։ Մոզամբիք ասած նավահանգստումը տեսավ, որ նավեր էլ կային կանգնած, բայց մեկումն էլ ա մեկ մեխ չկար։ Տախտակները քոքոս ասած՝ ծառի կլեպովն էին իրար կպցրած ու արանքները նրանով լցրած։ Ելքեանները (առագաստ) պալմ ասած՝ ծառի տերևներից էին։ Բաղի նավ էնպես ճղթեր էլ ուներ, որ վրեն երկրները քաշած էին, ու կողմնացույց էլ ունեին։ Սրանից ղայրու՝ չէ թե մենակ Հնդստանու ապրանք տեսան էստեղ. ինչպես ապրշում, մարգարիտ, հիլ, դարչին, միխակ. Մահմեդականք էլ կային, որ էկել էին՝ էս ապրանքը Արաբիա տանին։ Այժմ հաստատ կարծեցին, որ իրանց ուզած տեղը շուտով կհասնին։ Գամա հասավ մինչև Մելինդա ասած կղզին, որ հավասարագծի մոտոն ա, նրան լավ պատիվ տվին էս տեղ ու հետը լավ հմուտ նավչիք էլ դրին, որ շատ անգամ էին գնացել Հնդստան։ Գամա իրեք հազար հինգ հարյուր վերստ էլ՝ օվկիանոսիցը դենը անցկացավ ու 1499 թվին, մայիսի 19-ին մտավ Կալկաթա քաղաքի նավահանգիստը։

էսպես անչափ մի անչափ իրանց մուրազին հասան։ Քաչ մարդքերանց սիրտը տեղն ընկավ, էն գոված, զարմանալի Հնդստանը գտան։ Բայց փորթուգալացիք շուտով տեսան, որ էսպես երկիր չեն կարող առնիլ։ Հետընները վերցրած իրեք նավերի մեկը փչացել էր ու էն տարած ուլունք մուլունքովը, բոժոժովը ու խուրդա մուրդա բաներովը, որ աչքի խաբելու զատեր էին, ոչինչ առուտուր էլ չէին կարող անիլ։ Ջունքի հնդստանցիք էնպես սոպո խալխ չէին, ինչպես նեգերք, լավ ապրուստ, լավ նստիլ վեր կենալ ունեին, քաղաքները շեն, պայծառ, ֆաբրիկա, առուտուր, երկրագործություն ամեն տեղ ու նրանց թագավորը շատ հիանալի փառքի միջում։ Ալժիրացի մեկ վաճառական գտան էս տեղ, շատ ուրախացան, որ եվրոպացի տեսան, որ ամենևին չէին մտածիլ։ Գամա էս վաճառականի ձեռովը Կալկաթայի թագավորին, որ Գամորին էին կանչում, մոտ գնաց ու շատ հաստատ հույս ուներ, որ սրանց ու Փորթուգալացոց մեջը մեկ կապակցություն կքցեն, որ էստուց դենը առուտուրը բացվի, բայց էն տեղի էլող մահմեդականքը, որ վախեցան, թե էս իրանց առուտուրին վնաս կբերի, նախանձու էս միաբանությունը քանդեցին ու թագավորի սիրտը ահ քցեցին, թե սրանք էկել են, որ իրանց երկիրն առնեն, էնպես, որ Գամա շատ ուրախ էր, որ գլուխը պրծացրեց ու իր նավերովն էնտեղից փախավ։ Շուտով էկավ Մելինդա, Աֆրիկու ծերովը տվեց ու էկավ էլ եդ Եվրոպա։ Սեպտեմբերի 14-ին 1499-ին մտավ Տայեօ գետը, որ Լիսաբոնի միջովն է անց կենում։ Սրանից առաջ՝ քանի նավը գտնվել ա, մեկն էլ ա էսպես ծանր, դժար ճամփա չի քաշել ծովով։

ԱՄԵՐԻԿՈՒ ԳՏՆՎԻԼԸ ԿՈԼՈՒՄԲՈՍԻ ՁԵՌՈՎԸ

Դեռ Հնդստանու՝ ծովի ճամփեն փորթոգալացիք չէին գտել, որ յոթանասուն տարի քաշեց, որ մեկ փորձված, սրտոտ մարդի սրտումը էն միտքը ծագեցավ, որ Հնդստան գնալու համար՝ դհա կարճ, դհա ուղիղ ճամփա պետք է ըլի ծովով։ Ասենք՝ թե էս ճամփեն կարճ չէր, բայց սրա օգուտն է՛ն էլավ, որ նոր նոր աշխարհներ լիս քցեցին։

Էս անվանի, էս անմահ մարդը՝ **Խրիստոֆ Կոլումբոսն** էր։ Նա իր ծնունդը Գենվա քաղաքումն էր առել, որ Իտալիա է, բայց Փորթուգալ՝ Պերեստերլո նավապետի աղջկա հետ պսակվել, որ էն արևմտյան Աֆրիկու զրաղին ծովով ման գալիս՝ շատ էր գտնվել ու շատ բաներ իմացել։ Կոլումբոս երեխա ժամանակիցն սկսած՝ նավավարության համար հոգին տալիս էր, բայց չէր ուզում, որ հասարակ նավչի դառնա։ Էստուր համար շատ աշխատում էր, ամեն երկրի անունը, որպիսությունը սովորի ու շատ հավեսով ընկել էր աշխարհագրության ու աստղաբաշխության ետևիցը ու

երկրաչափություն ու պատկերահանություն էլ էր սովորում։ Տասնըչորս տարեկան էր, ինչ ծով, ինչ նավահանգիստ ասես, որ Միջերկրական ծովի վրա կա, մտել դուս էր էկել ու ինգլիզների հետ մինչև Իսլանդ ասած՝ կըղզին էլ էր հասել, որ ձուկը որսան։ Կոլումբոս[1] սկսեց իր անոր թղթերը լավ քննությամբ կարդալ, միտք անիլ, ինչ որ նա էս ծովերի վրա գրել էր։ Հետո ինքն էլ գնաց Մադերա, Կանարիո և Ազորի կղզիքը՝ որ նոր գտել էին։ Էսպես միտք անելով, ման գալով, մտքումը ծագեցավ, թե որ մարդ Եվրոպիուցը հենց թուշ արևմտյան կողմի վրա ծովով գնա, պետք է որ էլի Հնդստան դուս գա։ Ջունքի էն ժամանակն էլ՝ քիչ թե շատ՝ իմանում էին՝ որ մեր երկիրը բոլորակ ձև ունի։ Էս բոլորակ երկրի վրա, ինչպես որ առաջվան ճանապարհորդքը գրել էին Հնդստանն արևելյան կողմն էր ու շատ մեծ աշխարհ, բայց մեկ մարդ էլ ա դեռ չէր իմացել, թե նրա արևելյան կողմումն ի՞նչ կա։ Ո՞վ գիտի, էսպես էր միտք անում Կոլումբոս, բալքի թե Հնդստանի արևելյան կողմը Եվրոպիո արևմտյան կողմիցը հեռու չի, բալքի թե հենց կպած էլ են իրար։ Դիցուք՝ թե կպած էլ չըլին, ասում էր, էլի որ մարդ արևմտյան կողմի վրա գնա Եվրոպիուցը, պետք է որ Հնդստան հասնի ծովով։ Էս միտքը դհա ավելի նրա միջումը հաստատվեց, երբ որ խաբար բերին, թե Փորթուգալցի նավչիքը ծովի երեսին, Ազորի կղզու մոտ, էնպես փետ են գտել, որ տեսնված չի, շատ ճարտար շինած է, ղամիշ էին գտել. մեկ անգամ էլ երկու մեռելի լաշ էին ջրիցը հանել, որ ամենևին ուրիշ տեսակ պատկեր, մարմին ունեին, ու արևմտյան կողմիցն էին ջրի երեսին գալիս։ Կոլումբոս իր կարծիքը ուրիշ խելոք մարդքերանց էլ հայտնեց ու նրանք էլ հավանություն տվին։

Էս պատճառավ ավալի սֆթա իր քաղաքին իմաց արեց, որ իրան մեկ քանի նավ տան, որ գնա, էս նոր ճամփեն գտնի, բայց իր ազգն ու իր քաղաքացիքը վրեն ծիծաղեցին ու ասեցին՝ որ խելքը տանիլ ա տվել։ Միշտ էսպես ա աշխարքի բանը, մարդ իր երկրի ու ազգի միջումը պատիվ չունի։ Էս որ իմացավ, իր միտքը՝ Հովհան Բ. փորթուգալացոց թագավորին հայտնեց։ Սրանք էլ խորհուրդ արին, ու խորամանկությունով հենց որ նրա միտքն իմացան, իրենք սկսեցին թաքուն մարդ ուղարկիլ նավով, որ գնա՛ էն ճամփեն գտնի։ Սրանք էլ գնացին, ման էկան, ու եդ էկան, ասեցին՝ թե ամենևին երկրի նշան չկա։ Կոլումբոս էս ղալբությունը որ իմացավ, շատ նեղացավ, ու էնպես վիրավոր սրտով գնաց Սպանիա 1484 թվին։ Էս ժամանակին Սպանիա՝ մեկ թագավոր Արագոնիա ասած՝ նահանգումն էր նստած՝ անունը **Ֆերդինանդ**. մեկ թագուհի՝ Կաստիլիա՝

[1] Բնագրում՝ փորթուգալ։

անունը Իզաբելլա։ Կոլումբոսի ասածի վրա սկսեցին երկար միտք անել։ Բայց Սպանիա էն ժամանակին ո՛չ նավեր ուներ, ո՛չ նավավարություն էին հասկանում, ո՛չ աշխարհագրություն, ու Արաբների հետ էնքան կռիվ ունեին, որ իրանց էլ էր փող հարկավոր։ Հինգ տարի ողորմելի Կոլումբոսը Սպանիա էսպես քաշ էկավ, տեսավ որ ձեռը ո՛չինչ չի ընկնում, միտք արեց՝ որ գնա Անգլիա։ Էսպես հուսահատած որ չեկավ մեկ օր մեկ վանք, էն վանքի վանահայրը՝ որ Կոլումբոսի շատ բարեկամն էր ու Իզաբելլա թագուհու աչքին սիրելի, նրան սիրտ տվեց՝ որ մնա ու խոստացավ որ նրա բանը շինի։ Իրեք տարի էլ էսպես անցկացավ ու վերջապես նրա մուրազը կատարվեցավ։ Արաբներին հաղթել էին։ Էլի փողի պակասություն կար, ամա Իզաբելլա իր բոլոր ակնեղենը գրավ դրեց ու Արագոնիա խաղինադարիցը՝ անունը Սանտանգելո փող փոխ առավ։ Սանտանգելո իր բոլոր խաղինեն, որ կաներ տասնը յոթը հազար ոսկի, տվեց թագուհուն։ Ապրիլի 17-ին, 1492-ին Կոլումբոսի հետ մեկ կապակցության թուղթ շինեցին։ Թե երկիր գտներ, բոլոր նավերի գլխավորը ու էն երկրների վրա՝ թագավորի փոխանորդը Կոլումբոս պետք է ըլեր։ Ինչ գյալուր ըլեր, տասից մեկ փայն իրանն ըլեր։ Ու էս իշխանությունն ու արդյունքը որդոց որդիս նա պետք <է> ունենար։

Օգոստոսի 3-ին 1492-ին Կոլումբոս Սպանիուցը դուս էկավ։ Հետը իրեք փոքր նավ ուներ ու իննսուն մարդ։ Քանի դեռ ծանոթ տեղ էին, սիրտները, քեֆըները տեղն էր։ Հենց մի քիչ հեռացան ցամաքիցը, մեկ թի կոտրվեց. էս որ տեսան նրա մարդիքը, սիրտները ահ ընկավ, ասեցին՝ որ էս լավ նշան չի՛։ Բայց ինչ ժամանակ սեպտեմբերի 6-ին Կանարիա կղզյացիցը հեռացան, ու արևմտյան վրա՝ էն ահագին ծովի երեսն ընկան։ Հենց բոլոր ցամաքը կորավ ու առաջներին էն անհուն ծովը, վերևը՝ էն բաց երկինքը տեսան։ Հենց մեկ քանի օր, մեկ սաղ շաբաթ՝ ծովի երեսին գնում ու ցամաք չէին տեսնում, թեև քամին հաջողակ էր, էն քա՛ջ մարդի սիրտն էլ՝ փորն ընկավ, մահն աչքի առաջն էկավ, խելքները գլխներիցը թռավ, դժոխքը աչքների առաջին բաց էլավ։ Ամենն էլ էնպես էին կարծում, որ իրանց մահն ա, ու իրանց գլխավորին հարբա էին գալիս, հաթաթա տալիս, թե եդ չդառնա, ծովը քցեն նրան։ Կոլումբոսի սիրտը ասլանի սիրտ էր։ Ո՛չ ծովը, ո՛չ ահը, ո՛չ մահը, ո՛չ էլ իր մարդքերանց էնպես կատաղությունը նրան բնավ չի՛ վախացրին։ Դինջ, անսաս իր բանն էր մտածում։ Ուրախ պատկերով, անուշ խոսքերով սկսեց որին մեծություն խոստանալ, որին նշան, որի քաջությունը գովեց, որի բարի սիրտը ու ասեց՝ որ ամեն դժվարությունը անց է կացել, շուտով իրանց մուրադին կհասնին, էն ժամանակը կիմանան, թե իրանց անունը ո՞ւր կհասնի, ի՞նչ պատիվ

կստանան։ Էսպիսով քիչ քիչ սիրտներն առավ, բայց մեկ բան նրանցից թաքցրեց, որ չվախենան։ Նրանց չասեց՝ թե հինգ հազար, իրեք հարյուր վերստ իրանց աշխարքիցը հեռացել էին։

Վերջապես նրանք էլ՝ տեսան՝ որ բոլորը փուչ խոսքեր են, ուզեցան որ նրան սպանեն, բայց էլի միտք արին, որ իրանց եդ տանող չի ըլի։ Էս որ միտք արին, լավ օսալ դինջացան, բայց ի՞նչպես համբերի մարդ, երբ անդունդը առաջին բաց տեսնի։ Շատ որ նեղացրին Կոլումբոսին, իրեք օր էլ՝ ժամանակ ուզեց, թե էլ ցամաք չտեսնին, ասեց, անպատճառ եդ պետք է դառնար։ Էստուր հավանեցին ու դինջացան։ Մյուս օրը երկաթը որ ծովը քցեցին, գետնին հասավ։ Փոքր էլ որ գնացին, առաջները ղամիշ էկավ ու մեկ ծառի ճուխկ, որ վրեն կարմիր պտուղ ուներ։ Նավի դիրագի վրա ցամաքի ղշեր տեսան նստած։ Ծովի ղշերը շատ հեռու կարող են թռչիլ։ Սրանցից Կոլումբոս ջատ էր տեսել ու խաբվել։ Արեգակը մեր մտավ, խավարը ծովի երեսը բռնեց, բայց էլի ո՛չինչ չկար։ Իրեք ամիս էր, ծովի երեսին պտտում էին, վերջը ի՞նչ կըլեր, ո՛չ ոք չգիտեր։ Էս գիշեր էլ՝ Կոլումբոս հրամայեց՝ որ ելքյանները հավաքեն փաթաթեն, որ գիշերը քարի, յա ապառաժի չդիպչին։ Էլի որ մարդիքը սկսեցին հուսահատիլ, Կոլումբոս՝ նրանց մի քիչ սիրտ տալու խաթեր՝ ասեց որ ով որ աֆթա ցամաք տեսնի, տասը հազար ռուբլի պանսիոն ու մեկ մախմուրի քուրք պարգև ստանա։ Էսպես մթնագիշերը չորս դեհըները կոխած, մահըները առաջներին, գնում էին, որ Կոլումբոս ավալի աֆթա ձեն տվեց։ Կրա՜կ, ցամա՜ք — ինչպես մեկ ձեն երկնքիցը գա, էնպես ազդեց էս ձենն ամենին։ Բոլորն էլ վեր թռան ու միևնույն խոսքն ասեցին։ Էլ ո՞ւմ լեզուն կզորի՝ նրանց հալը պատմի։ Դժոխքիցը որ մարդ արքայության ձենը լսի, բաս չի՞ ուրախանալ։ Աչք էր, որ լալիս էր ուրախությունիցը. սա նրա ճտովն էր ընկնում, նա սրա դոշին կպչում ու Կոլումբոսի ոտները հո՝ մասունքի պես համբուրում, թողություն էին խնդրում։ Խելիմ վախտ էսպես որ իրանց սրտին հետևեցին, սկսեցին մեկ երգ ասիլ ձենով։ Լիսը բացվեց թե չէ, հոկտեմբերի 12-ին էր, տեսան առաջներին մեկ կանաչ կղզի բաց էլած։ Էլ ո՞վ չէր իր սիրտը էն սհաթին Աստծուն տալ։ Էլ ո՞ւմ աչքին չէր էն կղզին դրախտի նման երևիլ։ Բոլորն էլ էն րոպեին հրեշտակի պես ուզում էին իրար հոգի տան։ Ախ, փորձանքումն ա մարդ իմանում բախտի, իր ընկերի ղադրը։ Լեն օրն ա, որ էսպես մեզ մեկըմեկի աչքից քցում, մեկըմեկից հեռացնում, սիրտներս հովացնում է։

Էն ի՞նչ առավոտ էր, որ նրանց համար բաց էլավ, էն ի՞նչ լիս, որ նրանց աչքը տեսավ։ Հենց արեգակը թևը բաց արեց, նրանք էլ իրանց ելքյանն ու սիրտը բաց արին ու սաղ ածելով, խաղ ասելով, մտան ցամա-

քը, ընկան գետնի վրա ու երեսները հողումը կորցրին, էնքան համբուրեցին, արտասունքները գետի պես առու էր էլել, գնում։ Ո՞վ էս սհաթին Կոլումբոսի սրտումն ըլեր, կիմանար, թե աշխարքի բոլոր թագավորությունը նա էս օրվան բախտի հետ չէր փոխիլ։ Ո՞վ համբերությունով, խելքով էնպես փառքին հասնի, ու իր գինը չիմանա։ Երկար ժամանակ, որ կղզուն, ծովին մտիկ արին ու սիրտները մի քիչ դինջացավ, Կոլումբոս սկսեց էն կղզին Սպանիո թագավորի անունովը վերցնիլ։ Կռապաշտներին չի սազ գալ, ասում էին, որ երկիր ունենան իրանց ձեռին։ Քրիստոնեայք միայն իրավունք ունին։ Սրանք որ էկան, էն տեղի բնակիչքն էլ ճղղալով, գոռալով, հավաքվեցին նրանց գլխին, ու էնպես բռի, սոպռ էին, որ հենց իմանում էին, թե Սպանիացիք մարդ չեն։ Մոտանում, ձեռն էին տալիս ու էլ եդ փախչում, հեռու տեղ կանգնում մտիկ տալիս։ Բոլորն էլ, մարդ կնիկ, մեծ ու պստիկ՝ չիփ չիփլախ էին, լաշըները կարմիր պղնձի գույն ունեն, ու խոսելիս էլ՝ էնպես կապ ու կտուր էին բառը բերններիցը հանում, որ ամենևին խոսքի նման չէր։ Հավեն էնպես լավ էր, գետինն էնպես պտղաբեր, որ ինչ ուզում էին, կար։ Կերածները բոլոր պտուղ էր, մեկ բանի էլ ա ձեռը չէին տալիս, չէին աշխատում, վար ու ցանք չէին գիտում, տավար պահիլ, ձուկը բռնիլ, ղուշ, անասուն որսալ՝ բնավ ադաթ չէր։ Էնպես մեծ, զորեղ գազաններ էլ՝ չկային էն տեղ, որ մարդ կարողանար որսի համար բանացնիլ։ Էս պատճառով մեկն էլ ա՝ իր աթիլ մեկ բան չուներ, ում ձեռն ինչ ընկնում էր, էն էր ուտում, երբ սովում-էր. ինչ տեղ հասնում էր, էն տեղ էր քնում, ծառի տակին, ջրի ղրաղին։ Սիրտները ուրախ, իրանք ժիր, ղվրախ, ջանըները սաղ։

Կոլումբոս նրանց էն կոշտ լեզվի գյորա էս կղզու անունը Գվանահանի դրեց, էս օր էլ՝ էս անունն ունի։ Կոլումբոս տեսավ, որ էս տեղ Հնդստանու ակն ու մարգարիտ, խա զինա չկար։ Էս պատճառով էլ եդ ծով մտավ ու հարավային կողմի վրա գնաց։ Ջունքի որ էս կղզացիքը տեսան, որ Սպանիացիք ոսկու են ման գալիս ու իրանց անկաջի ու քթի վրա ինչ որ կար, ուզում էին, որ զոռով պոկեն, նրանց ցույց տվին, որ էն տեղ գնան, ինչ տեղ էս ոսկին կար։ Սրանք էլ գնալով, գնալով Կուբա կղզին հասան, որ Կոլումբոս հենց իմացավ թե էն ա Հնդստանի աշխարհն է։ Մեկ ղրաղից մյուս ղրաղն ընկավ, պտիտ էկավ ու ամեն տեղ տեսավ, որ շատ պտղալից հող ունի, ամա էլի վար ու ցանքի նշան չկար։ Վայրենի ազգերը նախրի պես թափ էլած՝ էս կողմից էն կողմն էին վազում, խաղում, խնդում, ձեն տալիս, ծղռտում, ոտըներիցը մինչև գլխըները չիփ չիփլախ։ Ինչ ժամանակ սրանց էլ ոսկի դեմ արին, ձեռով իմաց արին, որ արևելյան կողմը գնան։ Բաղի տեղից էլ քարն էնպես էին քցում, ինչպես կարկուտ։ Կոլում-

բոս սրանց էլ թողեց ու էն կողմի վրա գնաց։ Հիսպանիոլա ասած կղզին էլ՝ էս անգամ գտավ որ հիմիկ անունը Սանկտ Դոմինգո են դրել։ Էս տեղ էլ՝ էլի էնպես՝ երկիրը պտղատու, հողը, ջուրը լավ, բայց մարդիքը տկլոր ու վայրենի, անշոր, անբան։ Բայց սրանք իրանց միջումը ցեղ ցեղ էին բաժանված, ամեն ցեղն իր գլխավորն ուներ, որ Քացիք էին կանչում։ Էս գլխավորների մեկը հրամայեց՝ որ իրան մեկ տախտակի վրա վրա դրած՝ Կոլումբոսի մոտ տանին՝ էլի էնպէս տկլոր, ոտ ու գլուխը բաց։ Ձեռով, բանով իմաց արեց, որ բաղի վախտ էն մոտիկ տեղերիցը թշնամի վայրենիքը ծառի քոքում նստած՝ գալիս են իրանց վրա են տալիս ու իր մարդքերանցը տանում, որ ուտեն։ Կոլումբոս էլ նշանով իմաց արեց, որ նա ուզում ա մեկ բերդ շինի էն տեղ, ու իրանցից մեկ մարդ թողա, որ նրանց պահեն։ Վայրենիքը էս որ իմացան, գոռացին, ձեն տվին ուրախությունիցը ու փետ, քար, իսկույն ամեն տեղից սկսեցին հավաքիլ։ Ինչ որ վրըները ոսկի ունեին, ուրախ, ուրախ եդ էին անում, նրանց տալիս, տեղը ուլունք, բոժոժ, ասեղ, տիկըն ու էս տեսակ բաներ առնում։ Երբ հարցրին՝ թե ոսկին ի՞նչ տեղից են ստանում, հարավային կողմը ցույց տվին։ Էս բանելու ժամանակին՝ մեկ Սպանիացի հանաքը վեր մեկ թվանք քցեց։ Մեկ րոպեի միջում բոլորն էլ գյում էլան։ Նի էլան պախրի պես սարերի գլուխն ու էն տեղից ծղլուրդ էին անում։ Վերջը էլի քիչ քիչ մոտ էկան, տեսան՝ որ էն թվանքը մարդակեր չի։

Կոլումբոս տեսավ՝ որ էլ առաջ չի կարող գնալ, չունքի մեկ նավը ջարդվել, մյուսն էլ՝ իր մարդքերանց մեկը՝ Պինցոն անուն՝ առել, թաքուն փախել էր, որ գնա ոսկու աշխարը գտնի։ Նրան մեկ նավ էր մնացել, էն էլ ամենիցը փոքրը։ Էս նավովը ուզեցավ՝ որ եդ դառնա Սպանիա, որ խաբար անի։ Էն նոր շինած բերդումը երեսուն ութ մարդ թողեց. ինչպես որ կարգն էր, խրատ տվեց նրանց որ էն վայրենի խալխի հետ լավ, սիրով կառավարվին ու հունվարի 4-ին 1493-ին ընկավ ճամփա՝ որ գա Եվրոպա։

Վրա իրեք օրը՝ էս տեղից որ դուրս էկավ, էն իր անհավատարիմ Պինցոն անուն մարդին ռաստ եկավ, որ ո՛չինչ չէր գտել ու հիմիկ էլ ուզում էր, որ գնա Եվրոպա ու ավալի սֆթա ինքը տանի՝ նոր գտած աշխարհների խաբարը։ Կոլումբոսին որ տեսավ, թողություն խնդրեց ու սա էլ՝ մեծահոգությամբ ներեց նրան։ Հենց էս ահագին օվկիանոսի մեջ տեղը՝ էնպես մեկ քամի, էնպես մեկ ֆրթնա վեր կացավ, էն ալեկոծությունն էր, որ Աստված ո՛չ նշանց տա։ Մահը հազար անգամ էկավ աչքըների առաջը, ու էլ եդ հեռացավ։ Ամեն րոպեի սպասում էին, թե որտեղ որ ա, իրանց մաշված նավերը խոր կերթան, տակով կըլին։ Կոլումբոս՝ որ էս սարսափելի

միջոցին էլ՝ իր միտքը չի՛ կորցրեց, սկսեց իր գտած երկրների պատմությունը մագաղաթի վրա կարճ գրել, մեկ բնի մեջ դրեց, չորս կողմը ղալիմ զմռեց, շինեց, որ ջուր չի մտնի ու ծովը քցե՛ց, որ թե ինքը խեղդվի էլ, բալքի թե էս թուղթը ծովը տանի, ղրաղ քցի ու կարողանան մարդիք իմանալ՝ թե ի՞նչ աշխարհներ կան։ Բայց Աստծո աչքը նրա վրա քաղցր էր, երկինքը քիչ քիչ պարզեց ու հունվար 15-ին հասան Ացոր ասած՝ կղզյաց մոտը։ Վեց շաբաթ էստեղ կացան, որ իրանց խարաբ էլած նավերը շինել տան։ Էս տեղից էլ որ դուրս էկավ, էլի մեկ ֆրթնա վեր կացավ ու նրան տարավ Տագո ասած գետի բերանը քշեց։ 14-ին մարտի հասան Լիսաբոն քաղաքը, որ իրանք ամենևին չէին ուզում։ Հովհան Բ. թագավորն փորթուգալացոց հրամայեց, որ Կոլումբոսին իր մոտ կանչեն, հետը խոսաց, ու շատ ցավեցավ՝ որ էնպես սրտապինդ նավապետի խոսքին՝ տասը տարուց առաջ անկաջ չարեց։

Հանդես է՛ն օրն էր, որ Կոլումբոս Սպանիո Պալոս ասած ափն էկավ, որ մարտի 15-ին էր։ Աշխարհ ամենայն դուս թափեց ծովի ափը։ Հազար հազար բերան նրա անունը տալիս, գովում, երգում, ցնծում էին։ Զանգակները սկսեցին քաշիլ, թոփ, թվանք քցիլ, ու հենց բոնիր՝ քիչ էր մնացել՝ նրան ոտի տակ տային, երբ նավիցը դուրս էկավ ու մեկ մոտիկ վանք կար, էնտեղ մտավ, որ Աստծուն փառաբանություն անի։ Թագավորը էն ժամանակը Բարցելոնա գավառումն էր, որ Սպանիո արևելյան կողմն ա։ Էս պատճառավ Կոլումբոս Սպանիո միջովը պետք է անցկենար, որտեղ ասես՝ կամար էին շինել, գավիթ կանգնացրել, զորք, մեծ, փոքր, ամեն քաղաքից էլ առաջ էին դուս գալիս, ու երգելով, հանդիսով, զանգակ ածելով էին ներս տանում։ Թագավորն ու թագուհին հո՝ էլ չէին իմանում, թե ի՞նչ պատիվ, ի՛նչ պսակ, ի՛նչ մեծություն տան նրան։ Սաղ Սպանիա իրարոցով դիպավ, որ նոր գտած աշխարհների խաբարն իմացան։ Թագուհին՝ որ նրան ներս բերին, իր բոլոր թագավորական զարդը հաքին, թախտի վրա նստած՝ էնպես նրան ընկալավ։ Մոտին մեկ աթոռ կար դրած, որ նրան նստացրին ու քանի նա իր պատմությունն անում էր, էնքան թագուհու ու իր մեծամեծաց խելքը հետը գնում էր։ Սրանից դենը Կոլումբոս էլ թագուհուցը չհեռացավ, միշտ հետն էր ման գալիս։

Փոքր միջոցում հազար հինգ հարյուր մարդ հավաքվեցան, որ Կոլումբոսի հետ գնան նոր աշխարհները։ Կարծում էին՝ թե էս անգամ ոսկու աշխարը պետք է գնան։ Ա՜խ՝ ոսկին ո՞ւմ գլուխը չի՛ ծռել։ Թագավորը տասնյոթը նավ պատրաստիլ տվեց, փեշաքարներ, մաղանչիք հազիր արեց։ Կոլումբոս էլ սերմորենք, բույսք, անասունք ժողովեց, որ հետը տանի, ու հույս ուներ, որ էն պտղատու երկրներում շատ լավ բհամ կգան։ Էս մի-

ջոցումը փափին էլ չմոռացան, էնպես քոռը քոռ հավատում էին էն ժամանակը, թե աշխարքիս երեսին Աստուծո տեղապահը նա է, խնդրեցին նրանից, որ ինչ երկիր, որ գտել են ու պետք է նոր էլ գտնին, իրանց բաշխի՝ ինչպես Աստուծո փոխանորդ։ Փորթուգալցիք էլ էին էսպես արել, երբ սկսեցին երկրներ լիս քցիլ։ Փորթուգալցիք որ իմացան էս բանը, սկսեցին փափի մոտ Սպանիո հակառակը խոսիլ, ու փափն էլ բանն էսպես վճռեց, որ ինչ որ Ացորի կղզյացը դենը արևմտյան կողմը՝ հազար ութ հարյուր քառասուն վերստ հեռու՝ երկիր գտնեն, փորթուգալացոցն ըլի, նրանից դենը՝ սպանիացոց։ Էս պատճառավ մնաց Բրազիլիա ասած ահագին տերությունը, որ Հարավային Ամերիկա է Փորթուգալցոց ձեռին։

Սեպտեմբերի 23-ին 1493-ին Կոլումբոս էլ եդ ճամփա ընկավ ու էս անգամ մի քիչ հարավային կողմի վրա գնաց։ Նոյեմբերի 2-ին մեկ քանի նոր կղզի էլ հիմիկ գտավ։ Ինչպես Քարայբա կղզիքը, Դոմինիգ, Գվադալուփ, Փորտորիկո ու էլ ուրիշները։ Բոլորի բնակիչքն էլ՝ շատ գազանաբարո ազգեր էին, իրանց թշնամուն սպանում, միսն ուտում էին։ Շատ անգամ ուզեցան՝ որ քարով, փետով նրանց նավը ջարդեն, իրանց բռնեն, միսըներն ուտեն, բայց թոփի ու թվանքի գյուլլեն չթողաց։ Կոլումբոսի մտքիցը՝ էն իր Հիսպանիոլա թողած մարդիքը չէին գնացել, շուտով նավը քշեց էն տեղ, որ մեկ խաբար իմանա։ Նոյեմբերի 22-ին էկավ, տեղ հասավ։ Բայց խելքը գլխիցը թռավ, ինչ ժամանակ տեսավ՝ որ ո՛չ մարդ կա, ո՛չ բերդ։ Սպանիացիք ուզեցել էին, որ զոռով նրանցից ոսկի ստանան, սրանք էլ՝ ճարըները կտրվել էր, վրա էին թափել, նրանց սպանել, բերդը քանդել, իրանք էլ կղզու մեջի կողմը փախել։ Կոլումբոս էլի նորեն մեկ հարմար տեղ ջոկեց, բերդ շինիլ տվեց, մարդ դրեց մեջը, ու էս տեղի անունը Իզաբելլա դրեց իր թագուհու պատվի խաթեր։ Էս որ տեսան հետի էկած սպանիացիքը, խիստ շատ նեղացան։ Նրանք էնպես էին կարծել, թե ոսկին հողի պես ցրված ա էստեղ, ի՞նչ միտք կանեին, թե պետք է տուն շինեն, վար ու ցանք անեն, ու ջանըներին ջաֆա տան։ Մեկ փոքր ոսկու թոզ Սպանիոլա գտան, ամա ի՞նչ պետք է ըլեր։ Ֆերդինանդ թագավորի աչքն էլ ճամփին էր, որ էս անգամ ոսկին նավերով պետք է գար, բայց դու ո՛չ մեռնիս, էս պատճառավ ողորմելի Կոլումբոս էլ ճարը կտրվեց, սկսեց էն վայրենի ազգերին զոռ անիլ, որ ոսկի հավաքեն իրանց միջումն ու խարջ տան։ Նրանք չէին ուզում տալ, բայց մեկ քանի թոփի գյուլլի ձեն որ չիմացան, լեղիքը պատռեց։ Էս հերիք չէր, կատաղած մեծ մեծ շները որ բաց չթողին ու նրանց վրա քիս տվին, իրանք տկլոր, ձեռըներին ո՛չինչ չունեին, էնպես էին կտրատում, ինչպես գելը գառին։ Էստով վախեցան ու սկսեցին գլխըները քարեքար տալ, որ ուզածները ձեռք բերեն։ Ա՜խ, ո՞վ

էսպես բանն իմանա ու էնպես անողորմ, ագահ մարդկերանց գլխին նզովք չկարդա։ Բայց նրանց ի՞նչ։ Ոչ միսն էր իրանցը, ոչ արինը, ու էն խեղճ, դինջ խալխը, որ մինչև էս օր թագավորի պես էին ապրել, սկսեցին արին թափիլ ու իրանց սև օրը լալ։

Կոլումբոս սրանց թողեց ու էն կողմը գնաց, որ ցույց էին տալիս, թե ոսկի կա, այսինքն հարավ, ու **Յամայկա** կղզին գտավ։ Էս ճանապարհին հիվանդացավ, վրի մարդիքը ուտելիք չունեին. էս պատճառով՝ որ էլի Հիսպանիոլա եդ էկավ, տեսավ՝ որ աշխարքն իրարոցով ա դիպել։ Նրա մարդիքն սկսել էին առաջվան պես խեղճ խալխին արշարիլ, սրանք էլ նրանց էին միս ու արին արել, ու շատն էլ խռոված, նեղացած, էլ եդ Սպանիա էր գնացել։ Շատ վախտ չքաշեց, Սպանիուցը մեկ մեծավոր էկավ ու ինչ գանգատ որ Կոլումբոսի վրա արին, գրեց ու թագավորի դուռը ուղարկեց։ Կոլումբոս անմեղ էր, կարող էն մեծավորին սպանիլ էլ տալ, բայց էլի նրա մեծահոգությունը չթողաց, էն հուսովը, որ ճշմարտությունը չի՛ կորչիլ։ Կոլումբոս էս բանիս վրա՝ իշխանությունը տվեց իր Բարդուղիմեոս ախպորը ու ինքը թայթի գնաց էլ եդ Սպանիա։

Սպանիա որ իմացան նրա գալու պատճառը, շատ նեղացան։ Թագավոր ու թագուհին էլ շատ ամաչեցին, որ նրա արած լավությունը էսպես ոտի տակ էին տվել, բայց ինքն էլ տեսավ, որ չար լեզուն իր յաղուն էնպես էր թափել, որ շուտով չէր կարելի նրանց սիրտը սաղացնիլ։ Երկու տարի էսպես նրան էստեղ քաշ տվին, բանն էս օր էգուց քցելով, ու վերջ ամենայնի երկու անպիտան նավ ու մեկ քանի չար ավազակ, թողից փախած մարդիք էլ՝ հետը դրին, որ գնա, էլի նոր աշխար գտնի։

Էս անգամ 1496-ին սկսեց էլի ավելի հարավ կողմի վրա գնալ։ Շատ կարելի էր որ Բրազիլիա գտներ, բայց քամին էնպես հանդարտ էր ու շոքը էնպես սաստիկ, որ բոլոր գինու, ջրի բոչկեքը տրաքեցին, ուտելիքները ոչնչացավ ու նա էլ ճարը կտրվեց, արևմտի վրա գնաց, ու էկավ **Տրինիդադ** ասած կղզին հասավ, ուր որ **Օրինոկո** ասած գետը ծովն ա մտնում։ Նավը, որ էս գետի առաջը չեկավ, էնպես վեր կալավ, շպրտեց, որ կտոր կտոր կըլեր, եթե քարափի էր դիպել։ Էս գետի ջրի շատությունը որ տեսավ Կոլումբոս, ասեց՝ որ էսպես մեծ գետ փոքր կղզում չի՛ ըլիլ ու սկսեց ծովի ղրաղովը պտտիլ։ Էստով իմացավ, որ ցամաք երկիրը գտել ա։ Բայց չունքի կարծեց՝ որ էս իր ուզած Հնդստանը չի ըլիլ, հենց իմացավ՝ թե բալքի մեկ անց կենալու տեղ գտնի։ Էլի հիվանդությունը ջանն առավ. մարդիքը սկըսեցին տրտնջալ, նա էլ՝ որ չարեն կտրվեց, էլ եդ Հիսպանիոլա գնաց։ Հենց որ հասավ, էլ ուրախության պատճառ չէր մնացել էնտեղ։ Ախպերը քաշվել էր **Ս. Դոմինիգո**, որ մեկ նոր քաղաք շինի։ Մեկ Սպանիացի էլ մյուս-

ների սիրտը խռովություն էր քցել, որ երկու Կոլումբոսիցն էլ ձեռք վերցնեն։ «Էս Գենվացիքը (այսինքն Կոլումբոսք) էն են ուզում,— ասում էին,— որ վայրենի ազգին խնայեն, մեզ սպանիացոցս եսիր շինեն, էստուր համար չեն թողում, որ սրանց ձեռը տանք»։ Իրեք նավ, պաշարով լիքը՝ պահեցին իրանց մոտ ու Կոլումբոսի ախպերը կղզու մյուս կողմումը սովու մեռնում էր։

Էսպես գտավ Կոլումբոս բանի ղորությունը։ Շատ նեղություն քաշեց, մինչև նրանց դինջացրեց։ Իրան էլ՝ էին ուզում դավաճանությունով սպանեն, ինչ որ անց էր կացել, մի առ մի թագավորին գրեց։ Թշնամիքն էլ գրեցին։ Աշխարքի բանն էսպես ա, որ լավ մարդին՝ քիչ լավ ուզող կըլի։ Թագավորի սիրտը մեկ անգամ ծովել էր։ Կոլումբոսին էլ չէր հավատում, ինչ որ ասացին լսեց։ Մեկ սպանիացի ազնվական՝ անունը **Ֆրանց դե Բովադիլլա** ուղարկեցին, որ քննություն անի։ Թե որ տեսնի՝ թե Կոլումբոսը հանցավոր է, իշխանությունից հանի, ինքը տեղը նստի։

Հենց Բովադիլլա Հիսպանիոլա հասավ թե չէ, առանց քննության Կոլումբոսի տունն ու մուլքը խլեց, հրամայեց ամեն մարդի, որ իրան կուսակալ ճանաչեն, Կոլումբոսին մեկ թուղթ ուղարկեց, որ իշխանությունից ընկած է։ Էս թուղթը ինքն էր առաջուց շինել։ Էս որ պրծավ, հետո դատաստան նստեց, ում ասես, մոտը բերիլ տվեց, որ նրա վրա գանգատ անեն, բայց Կոլումբոս՝ ինչպես ամեն ժամանակ, էն դժար փորձանքների միջին էլ, իր հանդարտությունը չէր կորցնում ու իր մարդկերանցը էստով էր ազատում մահի ձեռիցը, էսպես էլ հիմիկ մեկ խոսք, մեկ ծանր ջուղաբ էլ ա նրա բերնիցը դուս չեկավ ու խնդրեց համեստությամբ՝ որ իրան էլ խոսացնեն։ Բայց Բովադիլլա առանց մեկ խոսք հարցնելու, առանց նրա երեսը տեսնելու, հրամայեց՝ որ նրան էլ, նրա երկու ախպորն էլ բխովը դնեն ու ամեն մեկը ջոկ ջոկ նավերով Եվրոպա տանին։ Է՛ս էր նրա վերջի պարգևը, է՛ս էր էն երևելի մարդի արած գործքի վարձը։ Աշխարհն էսպես ա լավությունն իմանում։ Իմացողն՝ էլ ի՞նչ սրտով լավություն անի էս երկրի երեսին։ Բայց չէ՛. լավությունը մարդին, աշխարհին չենք անում։ Մե՛զ ենք անում, մեր սիրտը պետք է ուրախանա, աշխարհն իմանա, չիմանա, մեծահոգի անձը էդ չի՛ պետք է հարցնի։

Ով որ արդար սպանիացի էր, սիրտը չէր տանում, որ նրան էս հալին տեսնի ու իր միջումը շատ նեղանում էր։ Հենց նավերը մի քիչ երկրիցը հեռացան, սկսեց նավապետը Կոլումբոսին՝ շատ խոնարհությունով մոտենալ, ու ուզում էր, որ բխովը ոտներիցը վերցնի։ Կոլումբոս չթողեց ու ասեց, թող մնա, որ բոլոր Սպանիա տեսնի, թե իրանց թագավորը՝ նոր աշխարհ գտնողին ի՛նչ վարձ ա տվել։ Էսպես էլ էլավ։ Սաղ Սպանիա իրարոցով

դիպավ, որ լսեց նրա էսպես գալը։ Թագավորն ու թագուհին ամոթու իսկույն բխովը հանել տվին ու փող ուղարկեցին՝ որ էլի իր պատվովը զարդարվի, ու իրանց մոտ գնա։ Կոլումբոս, որ էկավ, ամնի աչքի լսին ցավ էր տալիս՝ նրան տեսնելիս։ Լուռ, ամա սիրտը արինը կոխած, էնպես մոտեցավ, ու ընկավ թագավորի թախտի տակը։ Երկար ժամանակ ո՛չ գլուխն էր բարձրացնում, ո՛չ ձենը հանում։ Թագուհին էլ, մինչև՝ չկարաց արտասունքը բռնի։ Գեջդանգեջ թագուհին որ գլուխը վեր քաշեց, Կոլումբոս իր էն բնական հանդարտ սրտովը՝ սկսեց էնպես խոսքեր ասիլ. էնպես իր անմեղությունը ցույց տալ, որ լսողի գլխին կրակ էր վառվում։ Թագավորն էլ, թագուհին էլ իմացան, որ խաբվել են, թողություն խնդրեցին, էն անիրավ Բովադիլլին իշխանությունից քցեցին, նորեն էլ պատիվ տվին Կոլումբոսին, բայց էն առաջվան կապակցությունը, որ նրա հետ արել էին, մեկն էլ ա միտքը չէր բերում ու նրան Սպանիա թողին ու 1500 թվին մեկ ուրիշ կուսակալ ուղարկեցին նոր գտած աշխարհը՝ անունը Օվանդո։ Սիրտը նեղացած՝ Կոլումբոս թագավորի դռնիցը հեռացավ ու իր բխովը, ուր որ գնում էր հետն էր տանում ու էնպես կարգադրեց, որ մեռնելիս՝ հետը գերեզմանը դնեն։

Էրկու տարի քիմի էսպես պարապ ման էկավ։ Սրանից հետո էլի էն հին հավեսը Կոլումբոսի սրտումը զարթեցավ, որ էն նոր գտած աշխարքի միջով մեկ ճամփա գտնի Հնդստան գնալու համար։ Կրկին էկավ թագավորի դուռը։ Ֆերդինանդի աչքը չէր վերցնում, որ փորթուգալացիք էն ժամանակին Հնդստան էնքան նոր նոր աշխարհներ էին գտնում, անում ճարում, չորս միջակ նավ տվեց նրան, ու մայիսի 9-ին 1502-ին Կոլումբոս էլ եդ ծովը մտավ։ Նավերի մեկը հենց առաջին շաբթին խախտվեցավ, էս պատճառավ էլի Հիսպանիոլա գնաց, որ ամենևին չէր ուզում։ Բայց չկամ կուսակալն Օվանդո չթողեց, որ ցամաքը դուս գա։ Կոլումբոսի ճարը որ կտրվեց, ընկավ ծովի երեսը, որ էն առաջին տեսած ցամաք աշխարհը գտնի։ Գրացիաս Օ Դիոս ասած սարաքթի կողմովը տվեց ու արևմտյան կողմի վրա ճամփեն բռնեց, բայց ո՛չինչ չգտավ։ Միտքն էն էր, որ էս սիրուն երկրումը շենություն քցի, բայց նրա աչքածակ սպանիացիքը, որ հենց փողի, ոսկու էին ման գալիս, անկաջ չարին։ Ճարակտուր էս կողմն էլ շուտով թողեց, ու հազար փորձանքով էկավ հունիսի 14-ին 1503-ին Ցամայկա կղզին հասավ։ Նավերի մեկը իսպառ ոչնչացել էր, մյուսներն էլ էնպես էին ձեռից ընկել, որ էլ շինելու հույս չկար։ Եթե Աստված մեկ օտար նավ չէր ուղարկել էս կողմերը, պետք է որ էն անվանի, էն բազմերախտ աշխարհի գտնողը՝ էս տեղ՝ էնպես գազան ազգերի միջումը իր մահը գտներ

էստուր մեկ ճար անելու խաթեր, նրա մարդքերանցից երկուսը, մեկն սպանիացի, անունը Մենդեց, մյուսն իտալացի՝ անունը Ֆրիեսխի, երկուսն <էլ> քաջ պատվական մարդիք, մտքըներումը դրին, որ իրանց գլուխը մահու տան Կոլումբոսի խաթեր։ Մեկ փուչ ծառի քոքի միջում ընկան էն անհուն ծովի երեսը, որ գնան Հիսպանիոլա, մեկ օգնություն ճարեն։ Հարյուր տասը վերստ հեռու էր, տասն օր մնացին ծովի երեսին, դալղի ձեռին, բայց հրաշքն էս էր, որ վերջ ամենայնի էսքան փորձանքին համբերեցին ու տեղ հասան։ Կոլումբոս հենց իմացավ՝ թե խեղդվեցին, կորան, չունքի կես տարուց ավելի էր անց կացել, որ մեկ խաբար չկար։ Ո՛չինչ ժամանակի Կոլումբոս էն դառն օրերը չի քաշել, ինչպես էս կես տարին։ Նրա մարդիքը էլ չէին ուզում նրան հնազանդին, ինչքան խրատ էլ որ տալիս էր, էն ողորմելի վայրենի ազգերին չնեղացնեն, մեկի անկաջն էլ չէր մտնում։ Մեկ դասթա սպանիացիք նրան թողին, ընկան կղզու մեջը, որ խալխին չարչարեն, թալանեն։ Վայրենիքն էլ՝ էս պատճառավ քաշվեցին իրանց սարերը ու էլ ուտելիք չբերին։ Կոլումբոսի խելոքությունն ու իմաստությունը նրան ու իր մարդքերանցը սովամահի ձեռիցը ազատեցին։

Նա հեսաբ էր արել՝ որ էս օրերումը լուսինը պետք է խավարեր, նրանց էնպես հասկացրեց, թե Աստված նրանց գլխին բարկացել, ուզում ա բոլորին էլ ոչնչացնի, որ նրանց հետ էնպես խիստ շարժում են, ու էն իրիկունը ասեց, որ լուսնի երեսի վրա կտեսնին, ինչ խաբար որ ա։ Հենց որ տեսան՝ թե լուսնի կեսը խավարեց, սուք շիվանն ընկավ մեջըները, գլխին, դոշին ծեծելով ընկան Կոլումբոսի ոտները, աղաչեցին, որ Աստծո սիրտն առնի, ինչ կուզի, իրանցից ստանա։ Խավարը՝ հայտնի բան է, որ ինքն իրան գնաց, բայց էստով իրանց գլուխը պրծացրին։ Բայց էն փախած դասթեն իր ավազակությունն էր անում, թալանում, սպանում, էնպես որ ամեն սհաթի ահ կար, որ էն բարեսիրտ վայրենիքը սկսեն իրանց ջիգրը հանիլ։ Էս պատճառավ Կոլումբոս իր հետի մնացած հավատարիմ ընկերները վերցրեց, ընկավ ավազակների քամակիցը, շատին սպանեց ու մյուսներն էլ ճարակտուր էկան նրա ձեռի տակը։ Վերջապես ութը դառն ամսից եդը՝ Մենդեց ու Ֆ<ր>իեսխի եդ էկան հետըները մեկ մեծ նավ բերին, որ շատ չարչարանքներով, մուննաթով՝ էն դառնասիրտ Օվանդոյիցը առել էին։ Լղար, շունչը բերանը հասած, որը հիվանդությունիցը, որը կսկծու, էկավ Կոլումբոս, Հիսպանիոլա հասավ ու առաջի նավի հետ էկավ Սպանիա 1504 թվին։

Առաջին խաբարն էլ, որ էստեղ իմացավ, նրա սիրտը իսպառ կոտրեց։ Իզաբելլա թագուհին՝ որ նրան էնպես սիրում, պատիվ էր տալիս, մեռել էր։ Կոլումբոսի մեծ ումուդը նա էր, նա էլ պակսել էր, էլ ի՞նչ պետք է

աներ։ Ինչ արեց, կամ ասեց, լսող չելավ։ Իր կապակցության թղթի համար խնդիր տվեց թագավորին, բայց էս թագավորը էն մարդը չէր, որ խոսքը պահի, ճշմարտությունը չկորցնի ու էնպես երևելի մարդին իրան լայաղին պատիվ տա։ Սրանից գյուման ամեն մարդ հմիկ բերան էր բաց արել, մեծ մեծ բռբռում, թե ով ասես նրա գտած աշխարհները կարող էր գտնիլ, էն մեկ ո՛չինչ հունար չէր։

Էսպէս խելոք ընկերների հետ մեկ օր էլ Կոլումբոս հաց էր ուտում։ Էլի սկսեցին նրա վրա խոսիլ։ Հենց էն սհաթին խաշած ձու բերին սեղանը։ Կոլումբոսի սրտին հասել էր, ուզեցավ նրանց ամաչացնի, մեկ ձու վեր առավ ու հարցրեց, թե ո՞վ ա կարող էն ձուն ամանի միջումը ծերի վրա կանգնացնիլ։ Ամենն էլ փորձեցին, չկարացին։ Կոլումբոսի ձուն վերցրեց, ծերը ջարդեց, ձուն կանգնեցավ, «փա՜հ, էդպես հո մենք էլ կանեինք» ձեն տվին ամենն էլ։ Բայց Կոլումբոս ժպտալով պատասխանեց. «Շատ բարի, պա՛տվելի Աղեք, գիտեմ, որ դուք էլ էս կարող էիք, բայց միմիայն զանազանությունն էս ա, որ առաջ ես արի»։ Հայտնի բան է, որ մեկ բան ուրըշին անելիս՝ որ տեսնինք, մենք էլ կարենք անիլ, ամա էս ո՛չինչ հունար չի, ով առաջ անի, նա է գովելին։ Մայիսի 20-ին 1506-ին Կոլումբոս իր անգին հոգին Աստծուն տվեց, որ աշխարքումս էսպես նեղացել էր։ Հիսուն ինը տարեկան էր, որ մեռավ Վալլադոլիդ ասած քաղաքումը, որ Սպանիա է։ Ախպերը նրա մարմինը տարավ Ս. Դոմինգո քաղաքը, Հիսպանիոլա, եկեղեցումը թաղիլ տվեց ու բխովն էլ հետը, հողը դրեց։ Կոլումբոսի որդին՝ Դիեգո անուն՝ վերջապես էն նոր գտած աշխարհների կուսակալությունը ստացավ։ Բայց չէ թե հոր գերեզմանի ու աշխատության խաթեր. քա՛վ լիցի. էնդուր համար, որ մեկ մեծ տեղից աղջիկ էր առել։

Էս նոր գտած աշխարհների լիակատար պատմությունը՝ վերջը մեկ փլորենտացի (իտալացի) ազնվական գրեց Եվրոպա բերեց, անունը Վեսփուցիոս Ամերիկուս, որ 1497 թվին շատ անգամ գնաց էնտեղ ու էկավ։ Ջունքի եվրոպացիք նրա գրածիցն իմացան էս աշխարհների որպիսությունը, էս պատճառավ քիչ քիչ սովորություն ընկավ նրանց մեջը, որ նրանց անունը Ամերիկու աշխար էին կանչում կամ Ամերիկա, էս էր, որ մնաց ու մնաց։ Բայց թե իրավունքով խոսինք, պետք էր Կոլումբիա կանչել։ Բայց առաջ չէին մտածում, որ մեկ ջոկ անուն տան, չունքի էնպես կարծում էին, ինչպես Կոլումբոս, թե էս աշխարհները Հնդստանի մասն են։ Էս պատճառավ էն էս օր էլ՝ էն Հարավային ու Հյուսիսային Ամերիկու միջի էլած կղզիներին Արևմտյան Հնդստան են ասում, չունքի Հնդստան ման գալովը գտան։ Բայց իսկ Հնդստանը՝ որ Ասիո միջումն ա ու հարավային կողմն, անունները չխառնելու խաթեր, Արևելյան Հնդստան կամ Օստինդիա են կանչում։

ԱՄԵՐԻԿԱ ԷԼԻ ՆՈՐ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐ ԵՆ ԼԻՍ ՔՑՈՒՄ

Առաջին ճանապարհը աշխարհի չորս կողմովը

Էստուց դենը՝ հենց բռնի՛ր, թե ամեն տարի Ամերիկա՝ նոր նոր աշխարներ էին լիս քցում։ Դեռ Կոլումբոս կենդանի էր, որ 1500 թվին՝ Էմանուել թագավորն Փորթուգալի, նավեր պատրաստել տվեց, որ էս նոր գտած ճամփովը գնան Հնդստան, ու իր նավապետ Պեդրո Ալվարեց Քաբրալին հրաման արեց, որ որքան կարելին է Բարի հուսո սարաքիթը, որ անց կենա, ջանք անի, արևմտյան կողմի վրա գնա։ Նա էլ էսպէս արեց ու Բրազիլիա գտավ, որ Հարավային Ամերիկու մեծ թագավորության մեկն ա։ Փորթուգալցիք էս ահագին տերությունը բանի տեղ չքցեցին սկիզբը։ Գետինը՝ ղորդ ա, պտղատու էր շատ, բայց ոսկի, արծաթ ու ուրիշ թանկագին բաներ չկային, էս պատճառավ սկիզբը էնպես գող, ավազակ մարդիք ուղարկեցին էն տեղ, որ շենություն գցեն։ Բայց երբ որ քշած ջհուդները շաքարի ղամիշ տնկեցին ու էնպես լավ գոյացավ, հետո տերության աչքը բաց էլավ, ու սկսեցին բանագետ մարդիկ ուղարկել, որ քննեն։ Սրանից էլ հետո նոր քաղաքներ շինեցին ու երկրի բարեսիրտ ազգի սիրտը փեշքաշով, բանով գրավեցին, որ մշակություն անեն, ու էսպեսությունով՝ ինչ որ էս տեղ ցանում, կամ տնկում էին, մեկին տասը, քսան օգուտ էին տեսնում։ Դհա ավելի բարձրացավ էս երկրի անունը, երբ որ 1695 թվին ոսկի, ու 1730 թվին ալմազ էլ գտան էս տեղ, էն ալմազը, որ աշխարքի երեսին մեկ տեղ էլ ա չկա։ Բացի սրանից՝ Բրազիլիա, էնպես թանկագին ներկի փետ, խոտ է տալիս, որ տարենը քսան, երեսուն միլիոնի՝ հենց սրանցից է ծախվում։ Էնպես, որ փորթուգալցիք էսպես ճոխ աշխարհ չունին ու 1808-իցն սկսած, նրանց թագավորները էստեղ էին կենում, բայց հիմիկ իրան համար ջոկ տերություն ա դարձել։

Բայց Սպանիացիք որովհետև իրանց ուզած ոսկու աշխարհը դեռ չէին գտել, անողորմաբար չարչարում, տանջում էին էն ողորմելի, անմեղ ազգերին, որ իրանց համար մշակություն անեն, վարեն, ցանեն, որ սրանից էլ ա օգուտ ստանան։ Ամենից ավելի շաքարի ղամիշն էին էստեղ տարածել, որ էս օր էլ էնտեղանց հարստության աղբյուրը սա է։ Բայց խեղճ ամերիկացիքը էն զորությունը ու սովորությունը չունեին, որ էս ջաֆին դիմանան ու սաղ սաղ մաշվում, մեռնում էին չարչարանքի ձեռիցը։ Էնպես որ Հիսպանիոլա միայն, որ մեկ միլիոն բնակիչ ուներ, մեր քանի տարուցը եղը կեսը չմնաց, բոլորը ջարդվեցին։ Ով որ էլ սպանիացոցը չէր ուզում հնազանդի, Աստված հեռու տանի, ինչ որ նրա գլխին էին բերում։

Շները կատաղացնում, նրանց տկլոր ջանի վրա էին անում, որին թրով էին աղցան անում, որին թվանքով ու նրանց անճար թագավորներին հո՛ կենդանի կրակն էին դնում, կամաց կամաց էրում, խորովում, որ մյուսներին խրատ ըլի։ Ու էսպես անօրեն գործքերը փափի հոգևորականքն էին անում, որ նրանց հավատ բերեն, էն Քրիստոսի սուրբ հավատի վարդապետք ու քահանեքը, որ մեզ խրատում է մարդասիրություն, թշնամասիրություն։ Ո՜վ՝ ի՞նչ չեն արել սրանք Եվրոպա, թե Ասիա, թե Ամերիկա, որ ինչ ա, իրանց իշխանությունը զորանա, մեծանա։

Բայց ամենն էսպես չէին։ Շատը իր գեղեցիկ պաշտոնի, իր սուրբ կարգի զորությունը էսպէս ոտի տակ չէր քցում։ Մանավանդ սրանցից մեկը՝ անունը **Լաս Քազաս**՝ էլ չկարաց էս անօրենությանը համբերիլ, սկսեց ընդդիմանալ։ Ինչքան գերի ուներ ինքը, բոլորին էլ ազատեց, բայց չունքի Ամերիկա նրա խոսքին անկաջ չարին, շատ անգամ էկավ Սպանիա, ու ջանք արեց, որ թագավորի ու իր մեծամեծաց սիրտը շարժի։ Թե փոքր ժամանակ նրա խոսքին լսում էին, էլ եդ սկսում էին էն շահասեր, ոսկու գերի սպանիացիքը՝ թագավորի դռան մարդկանցը կաշառք տալ ու իրանց ուզածն անիլ։ Նրանց գազանությունը չէր թողնում, որ սրա էս ազնիվ խորհուրդը առաջ գնա։ Էս վախտերն էր, որ սովորություն ընկավ Աֆրիկուցը էն սև նեգրներին եսիր անիլ, բերիլ Ամերիկա, որ նրանց համար բանին։ Չունքի սրանք ավելի ջանով էին։ Էս աղետուրը, որ Եվրոպացոց համար հավիտյանս հավիտենից ամոթ կմնա, էնպես շահավետ էլավ, որ տարենը ութսուն հազար հոգի էսպես ոչխարի պես Աֆրիկուցը բռնում, բերում էս տեղ, ծախում էին։ Ասում են՝ թե էս խորհուրդը Լաս Քազաս տվեց, բայց սուտ է։ Նրանից առաջ էլ էս բանը կար, ու էն ազնիվ մարդը՝ էս անօրեն գործքումը ամենևին անմեղ է։

Բալբոա անուն մեկ կտրիճ, խելոք, բայց գազանաբարո մարդ՝ սկսեց ավալի սֆթա էս տեղ մեկ քաղաք քցիլ, անուն դրեց **Ս. Մարիա**: Էս տեղից սկսեց էն ոսկու աշխարը գնալ, որ վայրենիքը ցույց էին տալիս։ Հարյուր ինիսուն գլխըներիցը ձեռ վեր առած մարդիք էլ ընկան սրա ետևիցը։ Լեզուն չի կարող պատմիլ սրանց ճանապարհի դժվարությունն ու չարչարանքը։ Որտեղ գնում էին, շատ տեղ ջմջմեն ծովի պես էր կանգնած, մեշեքը էնպես էին թանձր, որ անց կենալ չէր ըլում, բարձր սարեր, անհուն ձորեր, անթիվ օձ ու թունավոր ջանավար միջըները լիքը, ինչ գազան ասես, որ էս տեղ չկար։ Օձի շատը տասը, քսան գազ երկենություն ուներ։ Էս սարսափելի ճամփեն անց կացան ու վերջ ամենայնի էնպես մեկ բարձր սարի գլուխ հասան, ու որ մտիկ չարին, առաջներին տեսան՝ որ մեկ անհուն ծով բաց էլավ, Ամերիկուցը արևմտի կողմը։ Էս էլ մեկ նոր գյուտ էր։ Կոլումբոս էլ էր կարծում, որ էս Հնդստան չի, ու մեկ ճամփա պետք է ըլի, որ նրանից Հնդստան մոտիկ պետք է ըլեր։ Բալբոա սարիցը վեր էկավ, թուրն ու ղալխանը ձեռին մտավ ծովը ու էնքան գնաց, որ ջուրը դոշին հասավ, հետո էս ծովն էլ Սպանիո թագավորի անունովը վեր առավ 1513 թվին։ Նմանապես շատ ոսկի ու մարգարիտ գտավ էն տեղ ու էստով քիչ քիչ հաստատվում էր, որ հարավի վրա ոսկու աշխար պետք է ըլի։ Էս քաջ մարդին էլ էնպէս չվարձատրեցին ինչպես հարկն էր։ Մեկ վախլուկ մարդ կուսակալ ուղարկեցին ու Բալբոա՝ զորդ ա, խոնարհեց էլ նրան, բայց էլի գլուխը կտրիլ տվեց անօրենը, ու էն քաջությամբ բաց արած ճամփեն էլ գնացող չելավ։

Էս միջոցումը մեկ քանի նավ էլ հյուսիսի կողմը գնացին Կուբա ասած կղզուցը, 1519 թվին։ Սրանց գլխավորն էր անվանին, հսկայասիրտ **Ֆերդինանդ Քորտեց**: Նա գնաց հասավ **Մեքսիկո** ասած տերությունը, տեսավ՝ որ շատ բնակիչք կային ու մեծ լուսավորություն էլ ունեին։ Նա հետը վեց հարյուր մարդ ուներ, տասնիրեք թվանք, տասնըվեց ձի, ու տասնըչորս մանր թոփեր, տեսած երկրումը՝ իրեք միլիոնից ավելի խալխ կային, էն էլ կտրիճ, կրթած, լուսավորված։ Մեկ տեղից էլա նրան օգնություն չէր հասնելու, չունքի **Կուբի** կուսակալը, որ անունը **Վելասքեց** էր, ուզում էր, որ էն տված իշխանությունն էլ ձեռիցն առնի, չունքի տեսավ, որ շատ խելք ունի, ինքը չէ՛ր կարծում էս, ու նախանձոտ մարդի աչքին խելոքը միշտ կասկածավոր կըլի։ **Քորտեցի** բանը մնաց իր վրա, ինքը պետք է իր չարեն տեսներ։ Առաջ հըա զոնչունին ասեց, որ իրան զորապետ ջոկեն։ Սրանից եդը հրամայեց զոնչունին, որ բոլոր նավերը ջախըփուրթ անեն, որ էլ եդ դառնալու ճար չունենան, յա՛ մեռնին, յա էն երկիրն առնին։ Էս որ պրծավ, սկսեց մտնիլ էն աշխարը ու քաղաքի վրա գնալ։ Քանի աշխարն ստեղծվել ա, կարելի է՝ թե էսպես բան տեսնված, լսված չի։ Մրջմի պես, ջանավարի պես ամեն տեղից սկսեցին վայրենիքը կատաղած վրա թափիլ, բայց անհաղթելին հանճարեղն Քորտեց էնպես բան արեց, էնպես ահ քցեց նրանց սիրտը, էն հնարքները բանացրեց, որ Մեքսիկացիք չէին գիտում, մա՞րդ են տեսնում, թե Աստված։ Հենց իմանում էին, երկնքիցն են վեր էկել։ Նրանց թագավորը որ առաջը չի դուս էկավ, ձիանը ղաթարով կանգնացրեց, մուզիկեն փչիլ տվեց, մեկ քանի էլ թոփ քցիլ տվեց ու սկսեց առաջ խաղալ։ Մեքսիկացոց լեղին ջուր կտրեց։ Ձիանը որ չէին փռնչացնում, խրխնջում, ոտները գետնին տալիս, հենց իմացան՝ թե սրանք էլ մեկ ուրիշ գոյացություն են։ Ահ ու դողը ջանըներն ընկած՝ աղաչեցին՝ թե ընչի՞ համար են էնպես բարկացել էս նոր աստվածքը (այսինքն ձիանքը), անիրավ սպանիացիք պատասխանեցին, թե բավական ակն ու մարգարիտ, ոսկի,

արծաթ չեն բերել, էնդուր համար։ Էս որ լսեցին, ջվալները լիքը ոսկի, ջավահրեղեն բերին, առաջները ածեցին։

Էսպիսությունով է՛ն ահը քցեց նրանց սիրտը, որ էլ չէին կարում ձեն հանիլ։ Թագավո<ր>ը շատ կամեցավ Քորտեցի սիրտը մեծամեծ փեշքաշներով առնի, բայց չեղավ։ Զորքը քաշեց Քորտեց ու քաղաքի վրա գնաց։ Թագավորը դեռ չէր իմանում, թշնամու պես ընդունի նրան, թե բարեկամի։ Թագավորին իրան էլ եսիր արեց, էլի ձեն տվող չելավ։ Էն ա բոլոր տերությունը պետք է զավթեր, որ բիրադի խաբար էկավ, թե Վելասքեց կուսակալը ղոնշուն ա ուղարկել, որ Քորտեցին բռնեն, տանեն իր մոտ։ Էլ ի՞նչ սրտի կըլեր ողորմելին։ Շատ էլ մարդ ուղարկեց, ապսպրեց, որ չանեն, սպանիացին սպանիացու արին չթափի, էն վայրենի ազգերը որ իմանան, մեծ վնաս դուս կգա, էլ նրանց չէին հավատալ, բայց խոսքին անկաջ չարին։ Էն ղոնշունի մեծավորը ուզում էր, որ ինքը փառքի ու իշխանության տիրանա։ Բայց Քորտեց ճարպկտուր՝ հենց դուս չեկավ զորաց առաջը, մյուս ղոնշունի շատն էլ փախան էկան նրա ձեռի տակը։ Սրանց էլ վեր առավ ու էլի քաղաքի վրա գնաց, բայց ի՞նչ, սաղ քաղաքը ծովի պես ծփում էր, էնպես դառնացել, չարացել էին մեքսիկացիք, չունքի մեկ սպանիացի աֆիցեր հետընները լավ չէր յոլա գնացել. նեղացրել էր խալխին։ Ինչ հնարք էլ, որ բանացրեց Քորտեց, նրանց թագավորին՝ որ գերի էր արել, հրամայեց՝ որ խնդրի, խալխը դինջանա, չելավ, իրանց թագավորն էլ՝ հենց միջըները մտավ թե չէ, քարն ու նետը կարկտի պես էին գլխին ածում, չունքի իրանց թողել՝ էնպես անիրավի էր իր գլուխը տվել։ Քարը դիպավ ողորմելու գլխին ու մեկ քանի օրից հետո մեռավ։ Քորտեց շատ մարդ էլ կոտորիլ տվեց ու էնպես քաղաքիցը դուս էկավ։ Փախչելիս կարելի է՝ թե բոլորին էլ ջախըփուրթ անեին, ամա Քորտեցի աժդահա սիրտն էր՝ որ նրանց ազատեց։ Էն սաստիկ կռվի միջումը, մահն աչքի տակն առավ, վրա թռավ, նրանց բայրաղը խլեց։ Հազար մարդ ավելի էս դհից, էն դհից ուզում էին, որ սաղ սաղ ուտեն նրան, ամա նա ասլանի պես մեջըները ճոթռեց ու բայրաղը փախցրեց։ Մեքսիկացիք էնպես էին հավատում, թե իրանց բայրաղը որ կորչի, իրանց վերջն ա, իրանց թագավորությունն էլ չի կարող կանգնիլ։ Էս պատճառավ, գլխըներն առան, կորան, սպանիացիք էսպես էին կարծում, թե երկնքիցն ա հրեշտակ վեր էկել, նրանց հալածում, չունքի մեկ քանի հոգի էին մնացել, բայց Քորտեցի սիրտը սար էր, էլի որ մի քիչ դինջացան, էլի քաղաքի վրա երիլ գնաց։ Մեկ քանի յարալու մարդով, խելիմ ժամանակ էլ կռիվ տվեց ու 1521-ին, օգոստոսի 13-ին քաղաքն առավ։ Կրակի, բոցի ծերը երկինքն էր հասել։ Խալխի էն վայրենի գոռոցն ու հարայ հրոցը՝ քարեր, սարեր

լացացնում էին։ Մեկ քանի ջահել իշխանի որդիք նի էին էլել մեկ բուրջ ու քարով, նետով, դեռ էլի չէին թողում, որ սպանիացիք դինջանան։ Քորտեց թուրը հանեց, վերև գնաց։ Հենց գլուխը հասավ բրջի, նրանցի<ց> իրեքը՝ էնպես գլխըները կախ՝ էկան, որ սաքի թե ոտներն են ուզում ընկնեն։ Հենց մոտացան թե չէ՛ բիրդանբիր նրան խտտեցին, ու ուզում էին՝ որ հետըները վեր քցեն։ Բայց Քորտեց էս րոպեին էլ միտքը, ուշքը չի՛ կորցրեց, ոտները մեկ պատի դեմ տվեց, ու նրանց քացով, թվանքով իրանից դեն քցեց։ Էնպես, որ գլխըների վրա պտտվելով, ներքև էին ընկնում, Քորտեց զարմացած՝ վերևիցը ձեն տվեց, «քանի որ աշխարքս աշխարք ա դառել, էսպես տղամարդիք դեռ քիչ կըլին էլած, ու չեն էլ ըլիլ»։

Էս էր նրանց վերջի ապավենը, Քորտեց էս էլ առավ։ Սպանիացիք հենց իմանում էին, թե նրանց տներումը ոսկին կիտուկ կիտուկ կըլի, հենց որ տեսան, զատ չի՛ երևում, կրակն էին դրել ողորմելի խալխին, էրում էին որ իրանց խազինի տեղն ասեն, դաղում, չամփրում, թիքա, թիքա էին անում նրանց էստուր համար։ Նրանց նոր թագավորին էլ ակլորացրին, ոտ ու ձեռը կապեցին, ու իրան մեկ բարեկամի հետ՝ թեժ անձողի կրակի վրա կանգնացրին։ Ոչինչ ասելու բան չուներ ողորմելին, ու անսաս կանգնել, էրվում էր։ Նրա խեղճ ընկերը լալիս, գոռում էր։ «Սիրելի, ինչ ես էդքան մրմնչում,— ասեց թագավորը,— լալով, գոռալով ոչի՛նչ չենք ստանալ, լավն էն ա, համբերենք։ Աստված բալքի էսպես էր կամեցել, ես հո վարդի վրա չեմ կանգնած։ Բաս ես միս ու արին չե՞մ, ինչի՞ չեմ ձեն հանում»։ Քորտեց՝ որ շատ խիստ սիրտ էլ ուներ, որ վրա հասավ ու խեղճերի հալը տեսավ, աչքի լսին ցավ տվեց, որ թագավորին էն օրն էին քցել ու հրամայեց իսկույն, որ նրանց ազատեն։ Քորտեցին իր առած երկրների վրա կուսակալ կարգեցին, չափիցը դուրս թունդ էր ու խիստ շատ նեղություն էր տալիս խալխին, որ հնազանդ մնան։ Բայց նա էլ՝ ինչքան օգուտ Սպանիո բերեց, էնպես նրա ղադրն էլ չիմացան։ Վերջը, իր բոլոր առած երկրները ձեռիցը խլեցին, իրան էլ դուս արին։ Տխուր, սիրտը ցավով լիքը՝ քաշվեց հյուսիսի կողմը ու Կալիֆոռնիա ասած՝ կիսակղզին գտավ։ Վաթսուն երկու տարեկան դարդու, կսկծու մեռավ 1547 թվին դեկտ. 2-ին, որ իր թագավորը Կարլ Ե. նրան էնպես անիրավաբար զրկեց։

Մեքսիկու առնելու ժամանակը՝ էն ճանապարհը՝ որ ուզում էին գտնին, գնան Հնդստան, վերջ ամենայնի գտան։ Ֆերդինանդ Մագելան անունով՝ մեկ փորթուգալացի լիս քցեց ու իր անունը հավիտյանս հավիտենից թողեց անմահ։ Օգոստոսի 20-ին 1519-ին Սպանիո Սեվիլյա քաղաքիցը դուս էկավ հասավ Հարավային Ամերիկու ղրաղը ու ինչ տեղ որ ծովի քունջ կար, բոլորը ման էկավ։ Հունվարի 12-ին 1520-ին էկավ, հասավ Լափլա-

տա ասած գետի բերանը, որ էնքան լեն ա, որ նրան գետ չէին համարում, կարծում էին՝ թե ծովանեղուց է, ու նրա միջովը հենց իմանում էին՝ թե կարելի էր Հնդստան գնալ։ Էս տեղից սկսած՝ առաջը էնպես քարափներ էկան, էնպես վատ հավա էր անում, որ գիշեր ցերեկ մահը հազար անգամ առաջն էր գալիս, գնում։ Ջունքի հավասարագծիցը (այսինքն երկրի կիսիցը) դենը՝ է՛ն ժամանակն ա ձմեռն սկսում, երբ մեր կողմը վերջանում ա։ Ու էն կողմը ձմեռը ավելի սաստիկ ա, քամին ավելի դառն ա, քանց հյուսիսային կողմը, ու ամառն էլ շատ կարճ ա։ Մագելան տեսավ, որ ճար չկա, մնաց Ամերիկա, որ ձմեռն անցկենա ու հինգ ամիս մնաց էն տեղ։ Նրանք, որ մնացին էս տեղ էնպես մեկ տեսակ խալխ էկավ առաջները, որ ամեն մեկը մեկ սաժեն (իրեք գազ) բոյ ուներ, ու դհա ավելի։ Երեսները կարմրացրած ունեին, աչքների ղրաղը՝ դեղին խազ քաշած, ամեն մեկ թշի վրա մեկ սրտի նման խալ ունեին կտրած։ Շորըները մորթի էր, նետ ու աղեղ բանացնիլը խիստ լավ գիտեին։ Էնպես որ մեծ էին, էնպես էլ շատ էին ուտում։ Մագելան նրանցից էրկուսը բռնել, կամենում էր հետը Եվրոպա բերի տեսնելու խաթեր։ Սրանցից ամեն մեկը օրը մեկ մեծ քթոց լիքը բաքսմաթ (սուխարի) էր ուտում, մեկ թունգի ջուրը՝ մեկ շնչով էր խմում։ Մուկը սաղ սաղ, հում էին ուտում, կաշին էլ չէին քաշում։ Ինչ ընկնում էր ձեռըները, սաղ սաղ էին կուլ տալիս։ Մագելան՝ էս ազգի անունը՝ **Փատագոնիf** դրեց, այսինքն մեծահասակ, որ էս օր էլ՝ էս անունը ունին։

Ինչպես Կոլումբոս ու Գամա, էնպես էլ Մագելան շատ նեղություն քաշեց իր մարդքերանց ձեռիցը։ Պատագոնիա խոսքը մին էին արել, որ նրան սպանեն, որ իրանց ավազակի պես էնպես քարի, ծովի մեջն էր քցել, իրանց աշխարքիցը հեռացրել, որ սովի ու ցրտի ձեռիցը մեռնեին։ Էս խորհուրդը լիս ընկավ, ու Մագելան երկուսին սպանիլ տվեց։ Վերջապես հոկտեմբերի 21-ին հասան մեկ ծովանեղուց, չորս կողմը բարձր սարերով բռնած, գլխըները ձնումը թաղված, ու ջուրն էլ շատ խոր։ Բոլորն էլ կարծում էին, որ էստեղից էլ դուս գալու ճար չի ըլիլ։ Բայց քաջասիրտն Մագելան նավը քշեց մեջը. երեսուն օր դես ու դեն պտտեց միջին, վերջը մեկ մեծ ծով դուս էկավ առաջը։ Նրա ուրախությունը էլ ասիլ չի ըլիլ։ Բոլորն էլ լաց էլան, էս որ տեսան. ու էն ծովանեղուցի ծերի անունը՝ **Մուրազատու** դրին, ծովանեղուցի անունը՝ **Պատագոնիո** ծովանեղուց ասեցին։ Բայց վերջը գտնողի անունը դրին ու էս օր էլ **Մագելանի** ծովանեղուց են կանչում։

Հինգ նավիցը, որ Մագելանը հետը վերցրել էր մեկը փչացել էր, մարդիքը պրծել էին։ Մեկն էլ խայինությունով ետ էր դարձել, որ Սպանիա

գա, ճամփին կորել էր։ Էն իրեքիցն էլ՝ մեկն էկավ Եվրոպա։ Նոյեմբերի 28-ին էն ծովանեղուցիցը դուս էկան, ու ընկան էն ահագին ծովի երեսը ու հենց իմանում էին, թե շուտով Հնդստան կհասնին։ Բայց ի՜նչպես էին խաբվել։ Իրեք ամիս ու քսան օր մնացին բաց ծովի երեսին պտտելով, հավեն շատ լավ էր, բայց ո՛չինչ տեղ ցամաքի նշան չկար. էրկու կղզի ռաստ էկան, էն էլ անմարդաբնակ։ Հետըները պաշար չունեին։ Էն սուխարին էլ, որ ուտում էին, հաց չէր, մոխիր էր, էն էլ ճիճուն մեջը լիքը, հոտած, փթած։ Ջուրը փթել, գարշելի հոտ էր տալիս, բայց էն էլ՝ էնքան չին ստանում, որ աչքները մի բան տեսնի։ Ամեն մեկին օրը իրեք, չորս մսխալ ջուր ու հաց անջախ էր ընկնում։ Կամենալով, որ սովի ձեռիցը չմեռնին, ինչքան որ նավերի վրա կաշվի կտորտանք կային, վեր էին բերում, ուտում։ Մագելանի ընկերի մեկը, անունը **Պիգաֆետտա** էսպես ա պատմում, թե էն կաշվի կտորտանքն էլ՝ էնպես էին արեգակիցը, քամուցը չորացել, որ չորս, հինգ օր ծովն էինք դնում, որ կակղին, հետո հանում, կրակի <վրա> խորովում, էնպես էինք ուտում, էն էլ՝ ամենքիս չէր հասնում։ Շատ անգամ, փետ էինք տաշում, ու տաշեղները շաքարի պես ուտում։ Մուկը, ճիճուն կամ ուրիշ կենդանիքը հո անմահական ուտելիք էին մեզ համար, թե որ ձեռ էինք քցել։ Մեկ մկան գինը՝ մեկ ոսկի էր, բայց ո՞վ կտար։ Բոլորս էր հիվանդացանք, հետին շունչն ընկանք։ Տասն ինը մարդ սովու մեռան։ Քիչ էր մնացել՝ որ սրանց մարմինն ուտեինք։ Չե՛մ կարծում, թե մեզանից եդը՝ մեկն էլ ա էս ճամփովը կերթա։ Իրավ, որ վաթսուն տարի անց կացավ, մեկն էլ ա սիրտ չարեց։ Վերջ ամենայնի մեկ ինգլիզ՝ անունը **Դրաքե**, էս ճամփովն անցկացավ։

Էս ծովի անունը՝ **Հանդարտ** դրին, չունքի ինչքան ժամանակ, որ նրա վրա էին, մեկ քամի, մեկ ֆրթնա չէր պատահել։ Բայց ուրիշ նավապետներին էնպես չի՛ պատահեցավ, նրանք շատ անգամ վտանգի, փորձանքի մեջ են ընկել էս ծովի վրա, էստուր համար էս անունը փոխել, այժմ **Մեծ Օվկիանոս** են կանչում, չունքի մեկ ծով էլ ա էնքան բաց տեղ չունի, որ ցամաք չըլի, ինչպես սա։ Վերջապես մարտի 6-ին 1521-ին մեկ տեղ շատ կղզիք տեսան իրար մոտ։ Ո՞վ նրանց ուրախությունը կարող է պատմել, Գերեզմանիցը, մարդ որ էլի նոր աշխար դուս գա, սիրտը ի՞նչ հալի կըլի, էն հանքին էր նրանց սիրտը։ Բայց էս ուրախությունն էլ երկար չմնաց, չունքի բնակիչքը էնպես գող, ավազակ է՛ին, որ նավերի մեխերն էլ՝ ցերեկը լիսով, նրանց աչքի առաջին, ատամով էին ուզում հանեն ու երբ որ վրա էին հասնում, թե բռնեն, ձկան պես թռչում, ջուրն էին ընկնում, ծովի տակովն ըլում, ու հեռու տեղ դուս գալիս, վրըներն է՛լ ծիծաղում էին։ Շատ անգամ շորերի կոճակները, գլխըների գդակը ագռավի պես վրա էին

թռչում, որ պոկեն, փախչին։ Մեկիցը պրծնում էին, մյուսն էր գալիս։ Էսպես ո՛չ գիշերն էին հանգստություն տալիս, ո՛չ ցերեկը։ Էս պատճառով էս կղզյաց անունը՝ Գողի կղզի դրին (Լադրոնէ)։ 15-ին մարտի մեկ ուրիշ կղզի գնացին, որ բնակիչքը հանդարտ էին ու դուս էկան ցամաքը։ Պարզ ջուրը, ալվան ալվան պտըղները, մանավանդ քոքոս ասած պտուղը, ու սիրուն, ուրախ հավեն՝ շատ շուտով առողջացրին հիվանդներին։ Մագելան էստեղից Ֆիլիպյան ասած կղզիքը գնաց, որ ինքը դրեց էս անունը՝ իրանց թագավորի անունովը։ Բայց է՛ս տեղ պետք էր էնպես քաջասիրտ, անվանի մարդը, որ ահագին ծովեր, քարափներ, սով ու մահ ոտի տակ էր տվել, իր մահը գտնիլ։ Կռիվ պատահեց նրանց ու էն վայրենի խալխի մեջը, տվին նրան, սպանեցին ապրիլի 27-ին 1521-ին։ Մնացած քիչ մարդիքն էլ սկըսեցին էստեղից դուս գալ, ճամփա ընկնիլ ու երկու նավով, նոյեմբեր<ի> 8-ին էկան հասան Բոռնեո ասած՝ մեծ կղզին, էս տեղից էլ Թիդոր կղզին գնացին, որ Հնդստանից հեռու չեն ու լավ հիլ, դարչին, մեխակ՝ էստեղանց է դուս գալիս։ Ծաղկի թագավորն՝ ասում են՝ էս տեղ ա։ Ամեն մեկ տերևը գազ ու կես լենություն ու էնքան էլ երկենություն ունի, այսինքն ծաղկի տերևը, լավ աչք պտի, որ էսպես հիանալի ծաղիկը տեսնի։ Էս կղզյաց միջին տեսան, որ ուրիշ փորթուգալցիք էլ կան։ Ո՞րքան կըրամանային սրանք, որ տեսան՝ թե արևելյան կողմիցն են գալիս։ Բայց փոխանակ ուրախանալու, իրար պահպանելու, սկսեցին իրար հետ թշնամություն քցիլ։ Հայ ըլեր, ե՞րբ կաներ։ Ի՞նչքան ազնիվ է Հայոց հոգին, որ ղարիբ տեղը իրար ջան չեն թասխր անիլ։ Մեկ նավի մարդիքը, որ խարաբ էր էլել, անճարացած՝ գլխըները <տվին> նրանց ձեռը։ Մյուս նավը, որ դեռ քիչ լավ էր մնացել, չէր սախադվել, հետը մեխակ, դարչին վերցրեց ու շուտով եդ դառավ Եվրոպա ու Սեպտեմբերի 7-ին 1522-ին էկավ Սպանիա։ Առաջին ճանապարհորդությունը աշխարհիս չորս կողմովը էս էր։ Կարդացողը լավ կիմանա, թե ի՞նչ ուրախություն էր եվրոպացոց համար՝ երբ էս խաբարն իմացան։ Երկու հարյուր երեսուն յոթը մարդիցը, որ Մագելան հետը վերցրել էր, տասնյոթը էկան Պիգաֆետտի հետ, սրանց շատն էլ խիստ հիվանդ էր։

Վերջապես 1529-ին սպանիացիք էն իրանց ուզած ոսկու աշխարքը ձեռք բերին, որ է Փերու։ Էն կտրիչ, խստասիրտ մարդը, որ թե ջրով, թե ցամաքով հազար տեսակ չարչարանք քաշեց ու էնտեղ հասավ, Ֆրանց Փիցարռ էր, որ երեխա ժամանակը խոզարած էր ու Ամերիկա գնաց, որ բալքի մեկ բան ճարի։ Էս Փերու ասած երկրումը՝ հիրավի անչափ ոսկի գտան։ Նրանց եսիր արած թագավորը՝ անունը Ինկա, խոստացավ, որ թե իրան բաց թողան, մեկ մեծ օթախ, ոսկով լիքը նրանց բաշխի։ Նա իր

ասածը կատարեց, ու ինչ ժամանակ փողը բաժանեցին, ամեն մեկ սալդաթի քսան հազար մանեթ ընկավ, ամեն մեկ ձիավորի քառասուն հազար մանեթ։ Աֆիցերների փայը հո՝ անչափ էր ու էլի Սպանիո թագավորին մեկ միլիոն մանեթ ուղարկեցին։ Էս որ լսեցին, ով ասես, գնաց Փերու։ Սպանիացիքը լցվեցին էնտեղ, ոսկին դառել էր նրանց համար խաղալիք, ու խեղճ ազգին հայվանի պես էին չարչարում։ Մեկ քաղաք շինեցին, անունը Լիմա դրին։ Էստեղից շատ չարչարանքով, տանջանքով հասան մինչև Քվիտո ասած կողմը ու Կորդիլեր ասած սարն անց կացան, որ շատ բարձր է։

Փերու ու բոլոր նոր գտած երկրներումը սպանիացիքը շատ անկարգություն էին անում։ Ավազակությունը, մարդասպանությունը փակել էին նրանց սիրտը ու քարացրել։ Թշնամի, թե բարեկամ դաղանի պես էին վրա տալիս, թալանում, սպանում։ Էս որ լսեց Սպանիո թագավորը, սկսեց երկիրը կարգ քցիլ, օրենք հաստատիլ, գլխավորներին արգիլիլ, որ իրանցը գլխու էնպես անօրինություն չգործեին, ու ինչպես մարդասերն Լաս Կազաս առաջարկել էր, ամերիկացոցը ազատություն տալ։ Առաջին մարդը, որ էս բանի վրա կարգեցին, լավ ուզում էր, որ էսպես չարությունները վերջացնի, ամա շատ շուտ շտապեց ու նրան բռնեցին, գլխատեցին։ Էս որ իմացան, մեկ ուրիշ մարդ ղրկեցին, որ շատ խելոք էր, անունը Պետրո դե Գասկա։ Սա հոգևորական էր, շատ ուշիմ, արդար ու չափիցը դուս անթամահ։ Նրա հոգևորական կարգը, նրա պատվելի դեմքը, ու հաստատ, ազնիվ վարքը շուտով ամենի սիրտը գրավեցին ու սկսեցին նրան շատ պատիվ տալ։ Բոլոր սալդաթ ու աֆիցեր խոստմունքով ու քաղցրությունով իր կողմը քցեց։ Ինչ օր որ կռիվը պետք է բաց ըլեր, սալդաթների շատը թաքուն, թաքուն փախան, նրա կողմն էկան, ու կռիվը առանց արին թափելու վերջացավ։ Պիցարռ, նրանց գլխավորը եսիր ընկավ ու գլո՛ւխը կտրեցին։

Քիչ քիչ ու զգուշությունով սկսեց իմաստունն Գասքա հողը ճոթ անիլ, չունքի շատ աֆիցեր ու սալդաթ բոլորը զավթել էին, իրանցը շինել։ Ծորտությունն էլ վերցրեց, որ փերուացոցը էնպես տանջում էր։ Սալդաթները սկիզբը տրտնջում էին, բայց նա շատին ուղարկեց, որ աշխարներ գտնին, շատին տեղ բաշխեց ու էս կերպով սիրտըներն առավ։ Էսպես մեկ մարդի խելոքությունովն ու բարեսրտությունովը՝ մեկ սաղ երկիր կարգ ընկավ, գաղանի ու անօրենի ձեռիցը պրծավ։ Ինչքան խարջ ու փեշքաշ էլ որ արեց Գասքա, էլի վեց միլիոն մանեթ հետը թագավորին փեշքաշ բերեց։ Ինչ ժամանակ էս գործը պրծավ, ուզում էր, որ ղրաղ քաշվի ու իր համար առանձին կենա, ու էն հարուստ երկրիցը էնպես աղքատ դուս էկավ, ինչպես որ մտել էր, միլիոններ էր ձեռովն անցկացել, մեկ փող իր ջեբը չէր դրել, էս պատճառավ աշխարքի բերանը մնացել էր բաց, ու սրբի տեղ

պաշտում էին նրան, որ էսպես խելոք ու արդար մարդ էր։ Էնպես մարդին ո՞վ չի պաշտիլ։ Թագավորը մեկ թեմի եպիսկոպոսությունը նրան տվեց, ուր որ մինչև մեռնիլը կացավ ու իր պատվական կյանքը վերջացրեց։

Բայց ինչ երկրներ՝ որ Սպանիա Ամերիկումն ունի, մինչև էս օր քանի գնացին, խարաբ էլան։ Ջունքի որ հենց ոսկու էին ման գալիս, վար ու ցանքի էլ մտիկ չարին, երկիրն անգործ թողին ու ու էսպես քիչ քիչ խարաբ արին։ Բացի սրանից, սաստիկ ղաղաղա էր, որ ֆաբրիկա, քյարխանա չունենան, առուտուր չանեն, որ ամերիկացիք, ինչ որ իրանց պետքն էր, Սպանիուցը առնեին, ուրիշ տեղից բերիլ չտային։ Սրանից ղայրու աշխարք պարապ հոգևորական<ներ>ով/<էր>լցվել, որ իրանց փորի դարդն էին միայն քաշում։ Մենակ Լիմա քաղաքը՝ որ վաթսուն հազար հոգի կենող ունի, քառասուն վանք կար միջումը, էսր դյորա էլ վանքական ու հաց ուտող կըլեր միջըներումը։ Դինջություն, իրար պահպանիլ, էհտիբար ամենևին չկա, չունքի Սպանիա հեռու, էնտեղ ուղարկած մեծավորների կամքն ինչ ա, էն են անում, ամեն հնարքը բանացնում, որ իրանց ջեբը լցնեն, չունքի գիտեն, որ երկար չեն մնալու, ու տերությունն էլ մեկ գլխավոր երկար չի թողնում մնա, չունքի վախում է, թե խռովություն կընկնի ու իրանից կապստամբվին, նոր տերություն կհաստատեն։ Բայց անիրավությունը ի՞նչ տեղ կմնա անպատիժ։ Քանի՞ տարի է, որ Ամերիկու շատ փայը, տեսնելով՝ թե ինչպես են հետընները կառավարվում սպանիացիքը, խռովքը մին արին, գլխըները թափեցին ու իրանց համար այժմ ջոկ ջոկ թագավորություն ունին ու օրըստօրե ծաղկում, զորանում, մեծանում են, այժմ սպանիացոցը չեն էլ ասում թե աստված ա ստեղծել։

ՀՆԴՍՏԱՆ ԿԱՄ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդստան Ասիո գեղեցիկ, հարուստ, պտղաբեր աշխարհների մեկն ա ու շատ գետեր, սարեր ունի։ Գետերի երեսը նավերով լիքն ա։ Ինչ աշխարքից ասես, կարող ես՝ էս նավերումը մարդ գտնիլ, որ գալիս են կամ վաճառականության կամ տեսնելու խաթեր։ Էս տեսակ գնալը՝ համ հանգիստ է, համ էժան, համ էլ էնդուր համար ա լավ, որ ճամփին առյուծ, ղափլան կամ ուրիշ գազաններ քեզ վնաս չեն կարող տալ, որ էս տեղ լիքն են։ Ցամաքով գնացողներն էլ՝ մեկ տեսակ ճոճի պես բան ունին, որ մարդիկ են ուսըներին տանում, բայց հետընները պետք է շատ ձիավոր ունենան ասպաբավորված, որ անվնաս գնան, ու բոլոր ուտելիք, պաշար հետընները վերցնեն, չունքի որ էստեղ ղոնաղխանա, դուքան չկա։ Հնդկաստան վեց ամիս թաց, գեջ հավա ունի, վեց ամիս չոր։ Առաջնի պատճառը Մուսոն ասած քամին ա, որ թացության հետ տաքություն էլ ա բերում, ու առողջությանը շատ վնաս տալիս։

Հնդկաստան կարելի էր ասել, թե հրաշք կըլեր, թե էնպես չոք չէր էլել՝ որ երկինքը է ն պ է ս ա վառում, բորբոքում, բոլոր սար ու ձոր չորացնում, խորովում ու էնպես սով առաջ բերում բազի անգամ, որ շատ մեր՝ մեկ բուռը ալրի խաթեր որդիքը ծախում ա, որ մյուսներին պահի։

Էս տարաբախտությունը հերիք չի՛, շատ անգամ է՛նպես սաստիկ բորյազ ա վեր կենում, է՛նպես կոշտ կարկուտ ա գալիս, որ մալ, ապրանք, հանդ ու սարու՝ ջարդում, փչացնում ա։ Բայց վախտ անձրևը էնպես սաստիկ ա ըլում, որ գետերը մեծանում, ինչ կա, չկա; տակով են անում։ Էս դեռ քիչ ա։ Մորեխը ամպի պես շատ վախտ երկինքը բռնում, օդը մթացնում ու դաշտերը, արտերը ոչնչացնում ա։ Զգույշ պետք է ման էկած, չէ թե խոտերի տակին, հանդերումը, տներումն էլ են օձերը թախ կենում։ Պատճառն էն ա, որ հնդկացիք օձին շատ պատիվ են տալիս, չեն սպանում, ու ում էլ որ կծեն, Աստծո պատիժ են համարում ու շատ մեղավոր ա, ում օձը դիպչի։

Տե՛ր Աստված՝ գլուխդ մի բարձրացրու, տե՛ս, ի՞նչ խաբար է։ Խեղդված մարդիքը Գանգ գետի երեսին գնում են։ Ընչի՞, էս ողորմելիքը էնպես են կարծում, թե էս գետը սուրբ ա, ու իրանց իրանց մեջն են ընկնում, խեղդվում, որ իրանց հոգուն փրկություն ըլի, ու իրանց Աստուծո աչքին դհա ավելի դուր գան, որ մարդի արնով են կշտանում։ Մեկ տեսակ խալխ էլ կան էստեղ՝ որ փարի են ասվում։ Ինչպես մեր բոշեքը, էնպես էլ սրանք ո՛չինչ տեղ պատիվ չունին, ու ով ասես՝ նրանցից քաշվում ա։ Սրանք էլ՝ չունքի կարողություն չունին, որ փեդ առնին ու իրանց մեռելների մարմինն էրեն, բերում են, էս ջուրը քցում։

Տեսնո՞ւմ ես, էս աչքակապն ի՞նչ ա անում։ Թուր, դանակ՝ էնպէս ա կուլ տալիս, ինչպես ջուր։ Մտիկ արա՛, բայց չի՛ վախենաս, հենց էս ա, աչքիդ առաջին օձը վեր ա քցում, ինքը սազն ածում, օձը շվացնում, ծվլում, պար ա գալիս։ Նա ձեռն ա առնում, ծոցը դնում, բերանն առնում, էլի հանում ու մեկ վնաս էլ ա չի՛ պատահում, պատճառը, որ ատամները հանել ա։

Քանի մտածում ենք, էնքան աչքըներս նոր նոր բաներ ա տեսնում։ Է՞ս ի՞նչ ջանավար է, որ ծառընդուս ցցվել, ձգվել, փետացել ա, ձեռները քոռ մղդսու պես դոշին կպցրել, աչքերը պելացրել, երկինքը քցել, ո՛չ ձեն ա լսում, ո՛չ մարդ տեսնում, բաս ի՞նչ ա անում, Աստված ո՛չ գիտի իր գլուխը, աշխարքի վերջն ա մտածում, կամ իր չոր գլուխը լաց ըլում։ Սրանց ֆակիր են ասում էս տեղ, որ դարվշի նման մի զատ են։ Էքուց,

էլ օր, մեկ շաբաթից եղը, մեկ ամիս, մեկ տարի, չէ՛ մեկ քանի տարի՝ էս ջրատարը պետք է էս կերպով, էս միևնույն տեղումը կանգնած մնա, արևի անձրևի, կարկտի տակին, էնպես քնի, էնպես աչքը բաց անի։ Ո՛չ նստի, ո՛չ շարժի, թեկուզ երեսին թուր էլ խփես, ուրիշ մարդիք են գալիս, նրա բերանը հաց դնում, շորերը փոխում։ Էս բոլոր չարչարանքը էնդուր համար ա քաշում, որ իրանց հեթանոսական դրախտի փառքին արժանանա, ուր որ ինչ ղուշ ասես, ինչ անուշահոտ ծաղիկ, յուղ, աղբյուր, շաղրվան ասես, որ վարդի ջուր ա դուս քցում, մեջը լիքն ա։ Հլա մեկ էլ ե՛կ նայիր, էս էլ մեկ ուրիշ ֆակիր ա, որ մեռածի պես ընկած ա՝ սպանես էլ, տեղիցը չի՛ շարժիլ։ Մեկն էլ հրես մեզանից ողորմություն ա խնդրում։ Ո՛ղորմելի, էս ո՞վ ա նրա քիթն ու անկաջները կտրել, երեսը կտրատել, ի՛նքը, ինքը, որ գնա դրախտը վայելի։ Է՛ս ինչ փեդ ա, կամ պոզ, որ էս մարդի ուսին դուս ա էկել, կամ ջանիցը կախ ընկած մնացել։ Էլ ի՞նչ կըլի,—ֆակիրի ձեռն ա, կամ ոտը, որ էնքան նա ցից բռնել, կանգնել ա, որ տեղն ու տեղը չորացել ա։ Բաս տեղը չի՞, որ մեր խանումները լսելիս՝ ասեն հո՛ղեմ ձեր գլուխը, հա՛։ Բայց մենք ցավինք՝ սի՛րելի՝ որ էս ողորմելիքը դեռ սուրբ ավետարանի լիսը չե՛ն ստացել, որ իրանց էսպես չսպանեն։

Հանդիսավոր օր որ գալիս ա, Աստված հեռու տանի։ Մենք գինի ենք խմում, քեֆ անում, որ էլի մեկ բանի նման է, էս հայվան ֆակիրները՝ իրանց կռքի պատկերը մեկ մե՛ծ սելի վրա բազմացնում, գոռալով, հարա տալով քուչա քուչա են ընկնում ու շատը սելի ակի տակին ջնջխվում, էն էլ ուրախությունով, որ մեկ ա՞խ էլ քաշեն, ո՞վ դարդ կանի։ Էնպես են անում, որ խալխի աչքը կապեն ու իրանց շատ պատիվ տան։ Էս սելը, որ ասեցինք, չիմանաս՝ թե մեր վրացու արաբեն ա,, որ խի՞մո, խի՞, կամ հո՞-հո՞ անելով քշում են։ Մեկ ահագին տաճարի չափ տուն ա, ակների վրա դրած։ Ամեն մեկ ակը՝ մեկ տան դդար կա։ Սրա վրա բազմացնում են նրանց մոգքը իրանց կուռքը, որ Բրամին են ասում, ու խալխիցը տուրք հավաքում։ Հազարավոր մարդիք ետևիցը գնում են, ու ինչ ասես, փեշքաշ անում, շատն էլ՝ ինչպես ասեցինք, իրանց սպանում։

Էս ի՞նչ կճճներ են՝ որ հազարներով Գանգ գետի ղրաղին դրած են։ Կարելի ա մա՛ծուն են ծախում, կամ շիլափլավ ուտում։ Դու ո՛չ մեռնիս։ Ամեն մեկ կճճում մեկ բեռը անվլա մեղք կա, որ հենց ջուրը քցեցին, բերանդ սրբի՛ր, եդ կանգնի՛ր։ Հնդկացին ինչ մեղք արել ա, գնաց, ջրի հետ կորավ։ Մեկ էսպես գետ էլ որ մենք ունենայինք, ի՞նչ լավ կըլեր։ Էլ ո՛չ քաշալ կմնար, ո՛չ քոռ, մեկ կճուճի գինն էլ հո մալում ա, ցավն էս ա, որ մեղքը մածուն չի՛, որ մեջն ածես, Հնդկացիք ի՞նչպես են անում, Աստված գիտե, ով ուզում ա ինքը գնա հարցնի՛։

Էս ի՞նչ սուք, շիվան է, որ մարդի սիրտ էրում, փոթոթում ա։ Աստված ո՛չ շհանց տա։ Մեկ ծեր մարդ սաղ սաղ բերել, գետի ղրաղն են քցել, որ ընկնի մեջը, խեղդվի։ Բերողն ո՞վ է՝ իր որդիքը, իր ազգականքը, չունքի մարդ որ ծերացավ, էլ չեն թողում, որ երկար ապրի։ Աստված ո՛չ անի, թե էլ եդ տուն գնա։ Իրայնիքը կտան կսպանեն նրան։ Որքան զարմանալու ա, չունքի հնդկացոց պես դինչ. խոնարհ, գառը խալխ չիկա աշխարքիս երեսին, ամա սնահավատությունն ա նրանց էս տեղը քցել։ Որ սպանես նրան ձեն չի՛ հանիլ, բայց վա՜յ՝ որ հավատի վրա խոսացիր, գառը ասլան կդառնա։

Ջրից անելով մեր ճամփեն գնա՛նք. ես քեզ Հնդկաց հավատը պատմեմ։ Նրանց Արարիչ Աստծո անունը՝ Պարաբրամա է։ Մյուս չաստվածները նրանից են դուս էկել։ Էս չաստվածների անունավը ահագին տաճարներ ունեն շինած, որ Պաղոդ են ասում։ Արի՛ գնա՛նք մեկ պաղոդ, ամա բերանդ կա՛լ, որ չծիծաղիս։ Էս ի՞նչ չաստվածներ ա, որ էս տեղ քաշել են։ Ոզան պատկեր ասես, իծի, լիքն ա, որը հինգ վեց գլուխ ունի ու էնքան էլ ոտն ու ձեռը, որի դեմքը էնպես ա, որ մարդ չի՛ ուզիլ, մտիկ տա։ Բոլորն էլ այլանդակ են ու զարհուրելի։ Նրանց ժամակարգությունն էլ՝ հենց էս չաստվածների լայաղ է։ Շատ հանդիսավոր օր էնպես անկարգ բաներ են բռնում էս տեղ, որ ասիլ չի՛ ըլի։ Մոյդեքը ժողովում, պար էկող կնանիքը հավաքում, իրանց հոգևորականների հետ՝ տաճարումը ինչ ասես, անում են։ Էնպես են ասում, թե Հնդկացիք իրեք հարյուր երեսուն միլիոն չաստված ունին ու չորս դրախտ, որտեղ որ իրանց չաստվածները կենում են։ Լավ ուշ ու միտք պետք է ունենան, որ էսքան չաստվածների անվանքը պահեն։ Բայց մի՛ զարմանաք։ Հնդկացիք էնպես մտքով պահելու չաստված քիչ ունին։ Ոզն ու կովը՝ նրանց բուսոց չաստվածն ա։ Ագռավը՝ նրանց մարդիս մտքի չաստվածն ա։ Սիպտակ փիլը՝ նրանց բազավոր չաստվածն ա։ Ջոկ ամարաթ ունեին նրա համար շինած, ոսկե ամաններով էին նրան կերակուր տալիս, որ ծառեքը բերում, առաջն էին դնում։ Հիմիկ Փլի բանը խարաբ է, չունքի էլ չեն պաշտում։

Տեսնում եմ, որ զարմանում եք։ Չի՛ հարկավոր. լսեցե՛ք պատճառը։ Հնդկացիք՝ քրիստոնեից նման չեն հավատում, թե մարդիս հոգին մեռնելուց եդը երկինքն ա գնում, ու իր բարի կամ չար գործքի փոխարենն առնում. չէ, նրանք էնպես են կարծում, թե հոգին մեկ ուրիշ մարմնի մեջ ա մտնում, էն էլ մարդիս գործքի գյորա։ Էսպես՝ բարի մարդի հոգին՝ էլի մեկ բարի մարդի մեջ ա մտնում, կամ մեկ ղվաթով չորքոտանու։ Վատ մարդինը՝ կամ ճիճվի, խլեզի, օձի մեջ ա գնում, կամ մեկ ուրիշ գեշ կենդանու։ Էս ա պատճառը՝ որ հնդկացիք՝ մեկ կենդանի էլ ա չեն սպանիլ,

միս բնավ չեն ուտիլ, ու պտղով են իրանց օրն անց կացնում։ Միմիայն էն փարի խալխը՝ որ ասեցինք, որ սրանց կարգիցը դուս են, նրանք են միս ուտում ու էս պատճառավ դհա ավելի ատելի են։ Հնդկացիք էնպես են քաշվում, որ թե կենդանու մորթուն էլ ձեռըները դիպչի, կղողան, կսարսափին։

Հնդկացիք բոլոր չորս կարգ են բաժանված, ու է՛նպես սուրբ, հաստատ է նրանց միջին էս կարգի բաժանությունը, որ մարդ՝ ինչ բան էլ որ սիրտն ուզենա, էն կարգում պետք է ապրի ու մեռնի, որումը, որ ծնվել է։ Ո՛չինչ ժամանակի ո՛չ ոք իր կարգը չի՛ կարող փոխիլ։

Էս կ՛արգաբաժանությունը նրանց միջի՛ն է՛նպես հաստատ է, որ թե մեկ մարդի ասես, թե նա մեկ կարգի հեսաբում էլ ա չի, կուզենա քեզ սպանի ու հավիտյան չի՛ մոռանալ։ Թե կուզեք իմանալ, էս կարգերի անունն ու զորությունը, խնդրեմ անկաչ արե՛ք, ասեմ։

Առաջին ու գլխավոր կարգը նրանց հոգևորականներինն է, որ Բրամին են ասվում։ Միս սրանց բերանը բնավ չի՛ պետք է մտնի։ Կերածները պտուղ ա։ Մենակ սրանք ունին իրավունք, որ իրանց սուրբ գիրքը կարդան, անունը Էսուր-Վեդամ, ինչպես մեր Աստվածաշունչը։ Թե մեկ ուրիշ մարդ համարձակի՝ էն գրքի հենց ցանկին նայի, գլուխը կդառնա երկու, ինչպես բրամինքը ասում են, ուրեմն լավ ա, որ մենք էլ՝ պատահելիս՝ չկարդանք, թե չէ երկու գլուխ որ ունեցանք, էլ դավի դառաքի ձեռիցը չենք կարող քնիլ։

Երկրորդ կարգը զորականացն ա, որ երեխությունից պետք է սովորին։ Նրանց Ռաջի են ասում ու Հնդկաց ազնվականքն են։ Որքան հաստ ըլի մեկ ռաջի (կնյազ), էնքան ավելի պատիվ ունի, էստուր խաթեր սրանք էլ՝ ինչքան ձեռըներիցը գալիս ա, իրանց փորի դարդն են քաշում, սրանց էլ ա միս ուտիլը ղադաղա. բաս ընչո՞վ են հաստանում. մի հարցնող ըլի։ Ա՛յ տնաշեն, հալբաթ մեկ դուռը գտել են, ի՞նչ դավի ունիս։ Ա՜յ կուզեին հաստափոր մարդիքը էն տեղ ըլեին, հա, իսկույն ազնվություն կճարեին, ափսոս՝ որ Հնդըստան հեռու է։ Ի՞նչ կա որ, գնալը դժար չի։

Երրորդ կարգը՝ Վեսիասն են կամ հողագործքն ու վաճառականքը։ Չորրորդ կարգը՝ Սուդրասն են կամ փեշաքարքը, մշակքը և այլն։

Սրանից ղայրու՝ մեկ կարգ մարդիք էլ կան էստեղ, որ կարելի է անբախտների կարգը անվանիլ։ Ասածս փարիան են, որ վերևն էլ հիշեցի։ Էնպես են կարծում հնդկացիք, թե սրանք մարդի հեսաբում չեն։ Մեշեքումն են կենում նրանք ու կերածները վայրենի պտուղ ա։ Սրսռալով, սարսելով են էնպես տեղերին մոտենում, որտեղ, որ մարդիք կան։ Տեսնո՞ւմ էք էս մարդը, որ էնպես վայրենի գազանի պես ծառերի տակովն անց ա կենում։ Սա մեկ փարի է։ Եվրոպացիքը նրանց բռնում, նոքարի տեղ բանացնում են, չունքի սրանք միս կարող են ուտիլ։ Էստուր համար եվրոպացիք էլ նրանց աչքին փարի նման մեկ զադ են։ Քաղաքներումը բուխարիքն են սրբում ու ծածուկ տեղերը։ Տաճարը բնավ չեն կարող մտնիլ։ Մտիկ արա՛. հրես մեկ բրամին գալիս, փարին հանկարծ դիպավ նրան։ Էս ի՞նչ կատաղություն ա գալիս նրա երեսը, ի՞նչ արհամարհումն. ի՞նչ անբարտավան ձեն։ Ուզում ա, թե փարիին սաղ սաղ ուտի, սպանի։ Փառք Աստծո, փարին փախչում, պրծնում է։ Ամեն մարդ իրավունք ունի, որ փարիին սպանի, թե որ նա բրամինին դիպավ։

Դհա ողորմելի, դհա աչքից ընկած են էս տեղ բոշեքը։ Գիշերը, սատղերը որ դուս են գալիս, ինչ զարմանալի ձեով ասես, իրանց իրանց շարժում ու պար են գալիս։ Ցերեկն էլ՝ էնպես անտուն, անտեղ թափառում են։ Գիշերը ծառերի վրա են քնում, ու որ իրանց բուն ունին շինած։ Հնդկացիք նրանց վայրենի գազանի կարգումն են համարում ու ով հասնի, կարող է նրանց սպանիլ, որ մեկ շինության մոտենան։

Ո՞ւր է վազում էս խալխը։ Մեյդանի միջին մեկ մեծ փեղի կիտուկ կա, գիդո՞ւմ եք, ո՞ւմ պետք է էրեն. մեկ ջահել, սիրուն կնկա։ Հրես նա էլ <ա> գալիս, բայց կանգնողներին ընչի՞ է փեշքաշ ցրվում, ընչի՞ նրա<ն>ց խտիտն առնում ու հավիտյան բարով մնա ասում։ Ի՞նչ հանդիսավոր կերպարանք ունի, ի՜նչպես ուռած գալիս ա։ Նա ինքն ա կրակի վրա վազում, մեջն ընկնում ու բոցը նրան ուտում։ Սա որբեւրի կին ա, մարդը մեռավ, էրեցին, ինքն էլ սաղ սաղ պետք է էն կրակումն էրվի։ Թե վախենա կամ իր կյանքը խնայի, իր որդիքը կանիծեն, կամ կսպանեն նրան։ Թե ծածկվի էլ, կամ երեսը կալնի, խալխը գլխին էն թուք ու մուրը կածի, որ Աստված հեռու տանի։ Փառք Աստծո՝ որ ինգլիզները էսպես վատ սովորությունքը՝ քիչ քիչ, վերջացնում են։ Իրանք հնդկացիքն էլ են իմանում, որ էս լավ բան չի՛։

Շատ լավ է, էն տեղ գտնվիլ, երբ երեխեն ծնվում է։ Բրամինը ձեռները նրա գլխին դրած, աչքերը երկինքն ա կթում, ու աստղերին մտիկ անելով ասում է, թե նրա վերջը ի՞նչ կըլի։ Բայց ինքն ի՞նչ գիտի, էս թոխմախ գլուխը։ Որ հավատում են, ո՞վ ինչ անի, մեզանում բոշեքանցը չե՛ն հավատում։ Բայց թե որ բոշեն բան գիտենա, ընչի՞ չի՛ իր թանն ի՛ր գլուխը քսում, ու սոված, ծարավ զկռտում ա։

Ինչպես խալխն է կարգ կարգ բաժանած, էնպես էլ մարդ ու կնկա կենցաղավարությունը ու պարտավորությունը։ Կնիկարմատը հնդկացու աչքին հայվանի նման մի զադ է, ու շատ անքաղաքավարություն ա, թե որ նրան հարցնես, կնիկդ ի՞նչպես ա։ Եվրոպայումը շան քեֆն էլ կարելի ա հարցնիլ։ Կնիկը մարդի անունը չի՛ կարող տալ, միշտ աղա, թագավոր

պետք է ձեն տա։ Խոստովանություն մնա, մեր միջումն էլ էսպես է, ամա ուրըշին չասես։ Ինչ որ մարդն անի, կնիկն էլ՝ է՛ն պետք է անի, նա ծիծաղելիս, կնիկն էլ պտի ծիծաղի. թե լաց ըլի, նա էլ հետը պտի լա, թե ծեծի նրան, պետք է ձեռը համբուրի ու առաջին չոքած թողություն խնդրի։

Հնդկաց տները քյոլգի նման ա ու բամբուկ ծառիցն ա շինած, ղամշով ու խուրմի տերևով ծածկած։ Նրանց կերակուրը բրինձն ա, սիմինդրը ու պտուղ։

Նրանց Ռաջեքը կամ իշխանքը էնպես ամարաթներում են կենում, որ ոսկով զարդարած, հայելիներով ու աբրշումե ճոթերով լիքն ա. գետինը խալիչեքն են ծածկում, որ շատ թանկագին են։ Հազարավոր թութ ու ծառ, միշտ կանաչ, միշտ ծաղկած՝ զարդարում են նրանց բնակարանքը։ Ինչ անուշահոտ բան ասես, նրանց տներումն են ծխում, շադրվանները քչքչալով ջուրը քցում ու անձրևի պես վեր թափում։ Հազարավոր նոքար, բեքար՝ ոտների վրա կանգնած՝ իրանց իրանց են իմանում, թե էս մահկանացու աստվածքը ի՞նչ են ուզում ու էնը գյորա հով են տալիս նրանց ու ղուլուղ անում։ Մոյղեքը պար գալով ու աչք ու երես ծռմռելով նրանց սիրտը բաց են անում։ Ու էսքան հրաշալի տեղերի տերը, էն դեղին ու լղար երեսովը, մարգարտով ու ջավահրով ծածկված՝ նեղանում ա էսքան ուրախության միջին։ Հենց փոքր նեղանում են թե չէ, ական թոթափել՝ մեկ քանի ծառա վրա են թափում, բարձրացնում նրան, ու պալանկինի կամ քեջավի մեջը դնում, որ տան պես շինած ա, զառ ճոթերով կախ արած, ու մարդիք են քաշում, տանում։ Էսպես տեղը փոխում են՝ առանց իմանալու՝ թե ինչպես շարժեցան, առանց ոտը փոխելու։

Հնդստանու շատ փայը ինգլիզների ձեռին ա։ Ամեն տեղ իրանց դատաստանատունն ունին ու Հնդկաց մեծամեծք հենց անուն ունին միայն։ Շատի իշխանությունը մտքով ա, բայց ձեռներին ո՛չինչ չկա։ Զորօրինակ Մեծ Մոգոլըն, որ Հնդկաց մեծ թագավորն ա ու Դելի քաղաքումն ա կենում ու աներևույթ է, աչքի չի՛ երևում, էնդով է միայն բավականանում, որ նրա անունը, ինչ որ ինգլիզներն անում են, նրանց ցուցակումն ըլի, որ էս երկրի տերը այժմ նրանք են, ու որը խորամանկությունով, որը թրի զոռով՝ իրանց ձեռի տակն են բերել։ Նրանց ղոնշունը Հնդկացի են ու սիպա են ասվում, նրանցով էն ինգլիզները իրանց բերդերը պահում, ու որքան զարմանք է, որ մեկ քանի վաճառական էկած էս տեղ, որ իրանց առըտուրն անեն, էնքան հնարք բանացրին, որ էս օր՝ էս ահագին տերությունը, որ հարյուր քսան միլիոն ավելի կենող ունի, իրանց իշխանության տակը բերին։ Ինչ տեղ որ խելք ու միաբանություն կա, ի՞նչը կարող է նրան դիմանալ։

Տ ե ղ ա գ ր ո ւ թ յ ո ւ ն

ՀՆԴԿԱՍՏԱՆ ԿԱՄ ԳԱՆԳ ԳԵՏԻ ԷՍ ԿՈՂՄԸ

Արևմտյաց ափները

Սուրաթ, շատ մեծ, հարուստ ու վաճառականաց քաղաք ա։ Գնա՛նք սրանց ճոթի ու աբրշումի ֆաբրիկեքը։ Մեկ քանի կտոր բան առնենք։ Ի՞նչպես գեղեցիկ ա սրանց շինած ճոթը, ոսղաֆի ու սև փետի բաները։ Սուրաթիցը մոտ, Ներբուդա գետի դրաղին էնպես մեկ ծառ ա դուս գալիս, որի հատը արարած աշխարքումը չկա։ Էս ծառի անունը Նուբիրբուր է, ու սուրբ ծառ են համարում. նրա քոքի հաստությունը մենակ՝ Երկու հարյուր ութսուն ու հինգ սաժեն ա։ Ո՞վ կհավատա, թե էնպէս հրաշքը տեսած չըլի։ Էս ծառի տերևի տակին էր կենում Պուտնա թագավորը, իր բոլոր պալատական մեծամեծներովը ու յոթը հազար մարդով, որ նրա պահապանն էին։ Թո՛ղ սրանով իմանա կարդացողը՝ թե մեկ ծառ ո՛րքան մեծ պտի ըլի, որ էսքան մարդ՝ տակին կարողացել ա կենալ։ Էս ծառին շատ պատիվ են տալիս Հնդկացիք։

Էս ի՞նչքան նավեր կան Բոմբայի նավահանգստումը, ու ի՞նչ շարժմունք ա քաղաքումն էլ։ Գնա՛նք՝ Գերրաց կամ հին պարսից տաճարը, տեսնենք, որ երկու միլիոն ռուբլի ա նստել շինելը։ Ի՞նչ օր որ շինությունը վերջացրին ու ուզում էին, որ օրհնեն, բյուրք բյուրոց բազմություն կար էս տեղ։

Սերենգապատնամ քաղաքը որ մտնիս, հենց կիմանաս, թե աշխարքի փառքն ու մեծությունը էս տեղ ա, էնքան հարուստ ու ճոխ էր էս տեղանց թագավորությունը։ Էս թագավորությունը շատ շուտով մեծացավ ու ամենիցը անց կկենար, եթե ինգլիզները չէին փչացրել։ Գոյ քաղաքումն էր, որ փորթուգալցիք էնքան փառք ու մեծություն ունեին։ Էս տեղ գրեց Քամոյենս բանաստեղծն իր անմահ գիրքը, ուր որ փորթուգալացոց արածը գովում ա։

Արևելյան ափները

Ինգլիզները իրանց հնարագիտությունովը բոլոր էս կողմերին տիրել են։ Էս տեղ ա Մադրաս քաղաքը, ուր որ Մադրասու էն սիրուն ադլխները գործում են ու մեկ քանի տուն էլ Հայք կան, էն հայերիցը՝ որ իրանց հոգին ու մարմինը իրենց ազգի համար եդ են դրած։ Պաղոդք, մեջիդք, եկեղեցիք, տներ, էնպես են իրար հետ խառնված, որ տեսնողը կզարմանա։ Միջըներիցը ծառերն էլ որ չեն գլխըները բարձրացնում, մարդի խելք ա գնում։

Գոլկոնդ քաղաքի ոսկու ու ալմազի մաղանն ա շատ գոված։ Հրես էկանք, Կալկաթա հասանք, որ ինգլիզների մայրաքաղաքն է։ Էս ահագին քաղաքը մեկ միլիոն ավելի բնակիչ ունի ու ինչ ազգ ասես՝ ասիացի, թե եվրոպացի, հայ, հնդկացի, արաբ, պարսիկ էս տեղ տեսնիլ կարելի է։ Նրա վաճառականությունը ամեն տեղ գնում հասնում է։ Դուքան, բազար ոսկով, ջավահրով, զառ ճոթերով հազար ռանկի են տալիս։ Գիշերը մանավանդ էն պայծառ երկնքի տակին կառեթները քուչեքը լիքը, որ չեն գնա ու գեն շրջում, աչք պետք է ըլի, որ թամաշ անի։ Կալկաթա է ինգլիզ գլխավորի ամարաթը, որ ինգլիզի թագավորն է ղրկում իրեք տարի ժամանակով։ Էս տեղ են նմանապես կենում էն ազնվական, հայրենասեր հայերը, որ մինչև էս օր ինչ միջոց ասես՝ տվել են, որ մեր ազգին օգնություն անեն։ Դեռ շատ ժամանակ չի անց կացել, որ մեկ էսպես ազգասեր իշխան կամենում էր իր բոլոր կարողությունը առնի, բերի Հայաստան ու էն տեղ վարժատներ, հիվանդանոցներ ու ապարան սարքի, բայց բանը ուրիշ տեսակ էկավ։ Ափսոս՝ որ անունն էլ ա չգիտեմ, էնպես պաշտելի իշխանի, որ էս տեղ գրեի ու ամեն մարդ իմանար, մտքումը պահեր։

Հյուսիս

Բենարիս քաղաքը Հնդստանու գիտուն մարդկանց տեղն ու սուրբ քաղաքն է, ինչպես թուրքերի Մեքքա։ Հազարավոր պաղոդ (կռքատուն) ցիր և ցան շինած կան էս տեղ։ Ամեն տարի միլիոնավոր խալխ է գալիս էս տեղ ուխտ։ Գնանք, Բեգեխուրի տաճարը տեսնինք, որ ցխով լիքն ա։ Ով էնտեղից դուս գա, պետք է սրայով զանգակը խփի, որ օջոռքիցը կախ արած կա։ Վեց քուչ<ա> կա, վեցն էլ էնպես մեծ հաղթական կամարով վերջը շինած, որ մեզ հանում, տանում են Ագրի քաղաքի մեյդանը։ Ագրի Մոգոլ թագավորաց մայրաքաղաքն էր, ու բոլոր աշխարքումը հատը չուներ։ Հմիկ Դելի քաղաքն ա նրա տեղը բռնել։ Ինչ որ մարդիս միտքը կարող էր հնարել, որ ո՛չ խելք կհասնի, ո՛չ միտք՝ էս թագավորի ամարաթումը կար։ Մարմառ, ոսկի, յախութ, ճավահիր, ալմազ՝ պատ ու օջոռք բռնած էին, ու ինքը թագավորը՝ ինչպես արեգակը՝ չալմեն գլխին, շոր, գոտի, հաքին, յաբաղը կապած՝ բոլորը ակն ու մարգարիտ, ջավահիր, էսպես աթոռի վրա բազմած է։ Ոսկե խուրմի ծառերը՝ գլխին շվաք են անում, պտղները բրլիանդ են, տերևները՝ զմռութ։ Լահոր քաղաքումն էլ մեկ հիանալի ամարաթ կա։ Քաշամիրի շալն ու աղլխները հայտնի են ամենին, թե ինչպես նուրբ ու գեղեցիկ են։ Բոլորը իծի մազից են գործում, որ էս տեղ բասլամիշ են անում։

Կղզիք (Ադա)

Ցեյլան կղզու չորս կողմը անեմոնով է բռնած։ Հլի ու դարչնի մեշեքը՝ էն անոշ հոտն են ամեն տեղ տարածում, որ մարդի խելք գնում ա։ Էստեղ էլ՝ են ծովի տակիցը մարգարիտ հանում, հազար տեսակ անուշահոտ ծաղիկ ու պտուղ լիքն ա էս տեղ։ Գնա՛նք Աբամ սարի գլուխը, որ էս կղզումը ամենիցը բարձր ա։ Բուդայի պաշտող հնդկացիք՝ ամեն տեղից ուխտ են գալիս էս տեղ։ Նայեցե՛ք, թե ի՞նչպես են նրանք ջերմեռանդ սարը վեր ըլում, որ իրանց, Բուդա չաստվածի ոտնատեղը համբուրեն, էն ոտնատեղը, որ նա երկինքը գնալիս թողել ա էս տեղ։ Մալդիվա կղզումը մեկ տեսակ խեցի (օրուջ) են հանում, որ Հնդկաստան փողի տեղ բանացնում են։

Արևելյան Հնդկաստան

Էս աշխարը, որ Չինիմաչնի ու մյուս Հնդստանի մեջն ա, զանազան սարերով կտրատված է։ Անթիվ գետեր կա միջումը, որ ղարնանը մեծանում, դուս են թափում ու երկրին շատ պտղաբերություն են տալիս։ Խուրմի ծառը, աբանոսի ծառը, զանազան տեսակ վարդն ու ուրիշ պտղները մեշի պես են էս տեղ կանգնած։ Ավա քաղաքը, որ Բիրմանու թագավորության թախտն է, շատ մեծ ա ու գեղեցիկ։ Սիամն էլ մեծ քաղաք ա։ Անթիվ տաճարք, պիրամիդք, ամարաթք, ու շինվածք կան միջումը։ Կնանիքը էս տեղ՝ ղարավաշիցն էլ վատ են, մարդը հաց ուտելիս, նրանք պետք է ծառայություն անեն՝ ու չեն կարող հաց ուտիլ, մինչև մարդիքը դուս չի՛ գնան։

Բոլոր խալխը գետերի ղրաղին հավաքվում մեջըները բրինձ ու պտուղ են ածում։ Էս ի՞նչ առատություն ա։ Տեսե՛ք՝ թե ի՞նչքան բաներ են ծովի երեսին լողում. հենց գիշերն էկավ թե չէ, արեգակի տեղակ՝ ֆանառներ են կախ անում ամեն տեղ։ Սիամացիք էս օր իրանց Նոր տարին են տոնում, որ դեկտեմբերի մեկին է ըլում։ Բախտավոր էն մարդն է, որ էս օր մեկ սիպտակ փիլ թագավորի առաջը կբերի։ Առաջ որ գլխին ոսկի թագ են դնում, վրա երկրորդ՝ էնքան երկիր են տալիս նրան, ինչքան էս փլի ձենը կհասնի։

Ի՞նչ զարմանալի դրություն ունի Մալաքա կղզու ափները։ Նրա դաշտերը միշտ ծաղկներով լիքն են ու նրա լայնատարած մեշեքը է՛ն հոտն են սփռում ամեն տեղ, որ մարդ խելքից գնում ա։ Ջրերը ինչպես հայլի փայլում են։ Կարելի է, թե արեգակի շողքն ա էս գույնը նրանց տալիս։ Հենց իմանաս ոսկի ըլի փռած ջրերի երեսին։ Էս պատճառավ էր, որ հին ազ-

գերը՝ էս աշխարը ոսկու աշխար էին կանչում։ Մալաֆա մեկ քանի թագավոր կան, որ ինգլիզների հետ դաշնակից են։ Թանձր մեշեք բանան ծառի, ապելսինի, լիմոնի, Կոխինխինացոց տների չորս կողմը բռնած են։ Էս տեղ ա դուս գալիս՝ Քամմա ասած անուշահոտ ծառը, որ չինացիք ոսկու հետ քաշում, առնում են։ Տեղիս բնակիչը՝ բոլոր ասիացոց միջին ամենից հանդարտ են ու խոնարհ։ Բայց շուտով են իրենց բնությունը փոխում ու շատ նեղասիրտ են։

<ՎԵՐԵԼՔ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԸ>

1829 թվականին իր ընկերների հետ էջմիածին ժամանեց պարոն պրոֆեսոր Պարրոտը։ Ես այն ժամանակ հայոց հայրապետի մոտ թարգման էի։ Գիտնական ճանապարհորդները մեր հոգևորականության կողմից ընդունվեցին ամենայն պատշաճ հարգանքով, և ինձ կարգադրվեց՝ գտնվել նրանց մոտ և բավարարել նրանց բոլոր պահանջները։ Լսելով նրանցից, որ մտադիր են հասնել Արարատի գագաթը, ես ցանկություն հայտնեցի ուղեկցել նրանց։ Պարոն Պարրոտի թախանձագին խնդրանքների շնորհիվ ես դրա համար ստացա էջմիածնի Սինոդի հաճությունը։

Չեմ կարող պատմել, թե ինչպես ես ուրախացա այդպիսի գիտելիքներ ունեցող մարդկանց շրջանում գտնվելուս և նրանց ձեռնարկումներին մասնակից լինելուս առթիվ։

Սեպտեմբերի 9-ին մենք դուրս եկանք էջմիածնից և ուղղեցինք մեր ճանապարհն ուղիղ դեպի Արարատ։ Մենք գիշերեցինք Սև-ջրի ափին։ Նա հոսում է Արարատի ստորոտից և այդպես է կոչվում իր սև գույնի պատճառով (հայերեն՝ Սև-ջուր, իսկ թուրքերեն՝ Կարա-սու)։ Նրա շամբուտների մեջ մենք տեսանք վայրի խոզերի բազմություն։ Այս տեղերում շատ կան նաև թուրքերեն ղրմզի կոչվող որդեր (գրասենյակային սերմ)։

Մյուս օրը մենք վեր կացանք առավոտյան վաղ. պարոն Պարրոտը պարոն Բեհագելի հետ սկսեց նկարել լեռը, նրանց մյուս ընկերներն էլ ձեռնարկեցին հավաքել ծաղիկներ, բույսեր և զանազան միջատներ։ Սակայն շուտով մենք այդտեղից բարձրացանք Ակոռի գյուղը։ Բնակիչները, լինելով հայեր, մեզ ընդունեցին մեծագույն հարգանքով։ Այնուհետև մենք այցելեցինք սուրբ Գրիգորի մենաստանը։ Այստեղ էլ ապրում է արդեն ծերացած Կարապետ վարդապետը։ Մի քանի տարի առաջ քաշվելով այս անապատը նա բոլորովին մոռացել է աշխարհը և սիրում է իր մենությունը։ Նա վաղուց փորել է իր գերեզմանը և հանապազօրյա նայելով նրան զբաղվում է մահ-

վան վերաբերյալ փրկարար մտքերով։ Այստեղից ոչ հեռու ընկած է նաև հայոց հայրապետ սուրբ Հակոբի փոքրիկ մենաստանը։ Այստեղ է գտնվում այն աղբյուրը, որի զորության մասին մեծ հավատ ունեն անդրկովկասյան բոլոր բնակիչները, ինչ դավանության էլ պատկանեն։ Երբ մորեխը ամայացնում է նրանց արտերը, նրանք վազում են այս աղբյուրը, <ջուր վերցնում և> սրբազան հանդիսավորությամբ շաղ տալիս այն վայրում, որի վրա հարձակվել է մորեխը. շուտով երևում են սարյակներին նմանվող յուրատեսակ թռչուններ,— հայերեն կոչվում են տար,— որոնք ոչնչացնում են այս վնասակար միջատները։ Սեպտեմբեր ամսին հայերը մեծ բազմությամբ հավաքվում են այստեղ և մատաղ անում։ Մինչև մեր ձեռնարկման ավարտը մենք մնացինք այս մենաստանում։ Նրա առանձնացած և հրաշալի դիրքը մեծապես նպաստում էր գիտնական ճանապարհորդների զբաղմունքներին։

Մեր այստեղ ժամանելու հենց հաջորդ օրը պարոն Պարրոտը պարոն Շիմանի հետ կատարեց Արարատ բարձրանալու իր առաջին փորձը։ Նրանք փորձեցին բարձրանալ արևելյան կողմից, սակայն արևելյան լանջի սեպությունը համոզեց նրանց այդ կողմից իրենց նպատակին հասնելու անհնարինությունը, և նրանք ետ վերադարձան։ Այն տեղը, ուր նրանք հասել էին, ըստ իրենց դիտումների, ծովի մակերևույթից բարձր էր 13,000 ոտնաչափ։

Այս բանը հարկադրեց պարոն Պարրոտին որոնել ուրիշ ելք։ Ակոռիի տանուտեր հայազգի Ստեփան Մելիքի խորհրդով սեպտեմբերի 18-ին պարոն պրոֆեսորն սկսեց բարձրանալ արևմտյան կողմից։ Նրա հետ էին պարոնայք Բեհագելն ու Շիմանը, երեք զինվոր և հինգ շինական։ Չնայած պարոն Պարրոտը, խնայելով իմ երիտասարդությունը, խորհուրդ տվեց ինձ ձեռք չզարկել մի այդպիսի վտանգավոր ճամփորդության, սակայն հաստատ վճռած լինելով նրանց բոլոր օգտակար հետազոտություններում լինել նրանց հավատարիմ ուղեկիցը, ես հայտնեցի նրան իմ անհողդողդ մտադրությունը՝ ոչ մի քայլ ետ չմնալ իրենցից։ Մենք բարձրացանք ամենաանպետք և անհարմար ճանապարհով, իսկ մութն իջնելու ժամանակ կանգ առանք ձյան սահմանի մոտ, Քեր-գյոլ կոչվող կիրճի վերևում։ Ցրտի և տեղի,— ուր պառկել էինք,— անհարմարության պատճառով մենք անցկացրինք ամենաանհանգիստ գիշերը։ Մյուս օրը, արևածագից առաջ, թողնելով տեղում մեր ողջ մթերքներն ու բեռները, շարունակեցինք մեր ճանապարհորդությունը և սկսեցինք բարձրանալ ձյունի գոտով։ Խաղաղ եղանակը, ինչպես նաև նոր իջած ձյունը միանգամայն օժանդակում էին մեզ, բայց հանկարծ եղանակը փոխվեց, և թանձր մառախուղը՝ ծածկելով Արարատի հյուսիսային գագաթը, հարկադրեց մեզ վերադառնալ, քանի որ արևն էլ արդեն թեքվել էր

դեպի մայրամուտ։ Մինչ կսկսեինք վայրէջքը, այն վայրում, մինչև որտեղ հասել էինք մենք այդ օրը, պարոն Պարրոտը կանգնեցրեց խաչ, որի մասին հիշատակվում է Տփխիսյան տեղեկագրերի <«Тифлисские ведомости»> 1829 թվականի № 39-ում։ Այդ խաչը մենք վերցրել էինք մեզ հետ, և Կարապետ վարդապետն օծել էր սուրբ մեռոնով։

Այս երկու փորձերը կարող կլինեին սասանելու ո՛չ պարոն Պարրոտի նման այնքան ամուր և այնքան կրքով գիտության հետ կապված մարդկանց։ Ես ի վիճակի չեմ արտահայտելու, թե նա մինչև որ աստիճան զգում էր գիտական աշխարհի հանդեպ իր վրա վերցրած պարտականության ողջ կարևորությունը։ Այս առաջին փորձերից հետո պարոն Պարրոտն սկսեց իր նպատակին հասնելու ուղիները ավելի ճշգրիտ հաշվի առնել և տասն օրվա ընթացքում, սպասելով լավ եղանակի, առանձնության մեջ, համբերությամբ շարունակել իր պարապմունքները։ Այս ողջ ժամանակամիջոցում թանձր ամպերով ծածկված Արարատի գագաթը թաքնվել էր մեր հայացքից։ Վերջապես վեհափառ Մասիսը բացեց իր ալեհեր գլուխը և բարեհաճությամբ ողջունելով գիտնական ճանապարհորդներին, հրավիրեց նրանց ընդունելու իրենց կրած անչափ նեղությունների ու վտանգների ժամանակ ցույց տված կայունության համար արժանի պարգևը։ Սեպտեմբերի 26-ին, հազիվ լուսացած, մենք կրկին ճամփա ընկանք։ Նախորդ փորձերի ժամանակ մեզ հետ եղած մարդիկ, իրենց տեսած դժվարություններից ու վտանգներից ահաբեկված, հրաժարվեցին այս անգամ մեզ ուղեկցել։ Մենք վարձեցինք ուրիշ վեց գյուղացի, վերցրինք նրանց ու երկու զինվոր և ճանապարհ ընկանք։ Այս անգամ գիշերելու տեղ ընտրեցինք այն վայրից վերև, ուր կանգ էինք առել մեր երկրորդ վերելքի ժամանակ։ Մենք տեղավորվեցինք լեռան արևմտյան սահմանագծի վրա ընկած մի ո՛չ մեծ բլրակի վրա, ձյան շրջանում։

Այդ գիշեր նույնպես ցուրտը, ինչպես հարկն է, ներգործեց մեզ վրա։ Հաջորդ օրը, արևածագի հետ, մենք սկսեցինք ճանապարհ ընկնել։ Բայց այն դանդաղկոտությունը, որով մեր ճանապարհը մաքրող ծույլ գյուղացիները ջարդում էին սառույցը, ստիպեց մեզ կանգ առնել երկար։ Նրանցից երեքը մինչև իսկ հրաժարվեցին այլևս առաջ շարժվել այն տեղից, ուր կանգնեցված էր խաչը։ Տասը ժամ հետո մենք հասանք լեռան գագաթը։ Չպիտի նկարագրեմ այն բերկրանքը, որ ճաշակեցինք մենք, երբ մեր ոտքերը դրինք խրոխտ Արարատի գագաթին։ Ես ուրախությունից դողում էի, և մինչդեռ պարոն պրոֆեսորը զբաղված էր ծանրաչափական դիտողություններով, ես մանկան նման հրճվանքով վազվզում էի լեռան գագաթով այս ու այն կողմ և ագահությամբ որոնում մի որևէ առարկա, որը կարողանայի վերցնել

ի հիշատակ, բայց խորին տխրությամբ պիտի ասեմ, որ ոչինչ չգտա։ Պետք էր բավարարվել ձյան մի փոքրիկ կտորով և նրա հալոցից գոյացած ջրով, որն ես Էջմիածին գալուս պես բաժանեցի ծանոթ վարդապետների միջև։ Արարատի գագաթին՝ նրա հյուսիսային կողմում, ես իմ սեփական ձեռքերով կանգնեցրի մի փայտե խաչ։ Մենք իջանք մեր գիշերատեղին արեգակի մայրամուտի ժամանակ։

Ըստ պարոն Պարրոտի դիտողությունների, Արարատը գտնվում է Սև ծովի մակերևույթից 15,200 ոտնաչափ, այն է՝ 2470 ռուսական գազ կամ 5 վերստ և այն մակերևույթից, որի վրա ընկած է Էջմիածինը, 2060 գազ կամ ավելի քան չորս վերստ բարձր։ Ներքևից դիտողի աչքը խաբում է իրեն, թվում է, թե տեսնում է այդ բարձրության վրա երեք առանձին բարձունքներ կամ գագաթներ։ Այդպիսիք միայն երկուսն են՝ արևմտյան և արևելյան։ Արևմտյանը, որի վրա մենք եղանք, փոքր ինչ բարձր է արևելյանից։ Վերելքի ժամանակ լեռան վրա մենք նկատեցինք երկու խորը բացվածք, բայց ժամանակի սղությունը թույլ չտվեց մեզ չափելու դրանք։ Մենք այստեղ չհանդիպեցինք ո՛չ հանքային ջրերի, ո՛չ աղբյուրների, ինչպես լինում է ուրիշ տեղերում։ Ակոռիի բնակիչներն օգտվում են ձյան ջրերից, որոնք ահավոր աղմուկով թափվում են բոլոր կողմերից և հոսում են դեռ հոկտեմբեր ամսին էլ։ Այնուամենայնիվ, այս գյուղի մոտակայքում է գտնվում նաև մի փոքրիկ աղբյուր։ Այդ տեղը, ուր գտնվում է գյուղը, ողջ Երևանյան նահանգում ամենահաճելին և ամենաառողջարարն է։ Օդն այդտեղ թարմ է, և կանաչը ամենից փարթամ։ Այս պատճառով էլ Երևանի նախկին սարդարը Ակոռին ընտրել էր ամառանոց, և այն շինությունները, որոնց մեջ բնակվում էր նա իր կանանց և ընտանիքի հետ, դեռ մնում էին։ Լեռան ստորոտում կան սառցի շեղջեր, որոնք կոչվում են **Սառցատուն**։ Ամառ ժամանակ լեռան հյուսիսային կողմում պատահում են ձյան մեծ հյուսքեր, որոնք ցած են իջնում ուժեղ ճաքճքոցով և աղմուկով։ Արարատի փեշերի ստորին մասերը ծածկված են սև, փխրուն քարերով, որոնք անընդհատ թափվում են ներքև և այստեղ կոչվում են **Քարեղ**, այն է՝ քարե փլատակներ։ Այստեղ մենք ամենևին չպատահեցինք վայրի գազանների, թեպետ բնակիչները հավատացնում են, որ այստեղ կան անհամար վայրի այծեր, արջեր, հովազներ և այլն։

Բայազետի կողմից, որն ընկած է դեպի հարավ, լեռ բարձրանալը թվում է, որ հեշտ է, բայց մենք չփորձեցինք բարձրանալ այնտեղից։

Ճանապարհորդները չափազանց ցանկանում էին դիտել բոլոր հին հուշարձանները, քարայրերն ու մյուս հիշարժան տեղերը, որոնք գտնվում են

այս վայրերում, բայց մերձակայքում սփռված քրդական գիշատիչ թափառախմբերը թույլ չտվին, որ նրանց այդ մտադրությունը կատարվեր։

Մենք եղանք նաև Փոքր Մասսի վրա, որը գտնվում է Մեծից դեպի արևելք, սակայն այս ճանապարհորդությունը մենք ձեռնարկեցինք խիստ ուշ և ամենացուրտ ժամանակ, այն է՝ հոկտեմբերի 28-ին։

Մենք գիշերեցինք բավական խիտ, փոքրիկ անտառում, ուր, սակայն, հույժ սակավ են պտղատու ծառերը։ Այս տեղերում նկատելի է նաև ջրի պակաս, մենք հարկադրված էինք այս ճամփորդության ժամանակ մեզ հետ ջուր վերցնել։ Թեպետ Փոքր Մասիսը Մեծից ավելի ցածր է, բայց անհամեմատ ավելի սեպ։ Չորս ժամում մենք հազիվ հասանք այս լեռան գագաթը, և այն էլ մեծագույն դժվարությամբ։ Վատ եղանակն այս վերելքի ժամանակ էլ մեզ շատ խանգարեց։ Այս լեռան գագաթը կազմված է վեց ոչ մեծ բլրակներից։ Նա գտնվում է Սև ծովի մակերևույթից 1865 գազ և այն վայրի մակերևույթից, ուր ընկած է էջմիածինը, 1445 գազ բարձր։ Այս լեռան վրա և նրա շրջապատում կան անհամար ավերակներ, ապացույց նրա, որ այս վայրերը հին ժամանակներն եղել են լավ բնակեցված։ Դրանք այժմ ամբողջովին լքված են։ Մենք այստեղ գտանք պարսկերեն արձանագրություններով երկու քար և սկզբում կարծեցինք, որ դրանք ուշադրության արժանի ինչ-որ հուշարձաններ են. հետո իմացանք, որ Երևանի նախկին սարդար Հուսեին-խանը տեսնելով, որ եվրոպացի որոշ ճանապարհորդներ, հրապուրված այս վայրերի ավերակներն այցելելու գովելի հետաքրքրությունից, զբաղվում են <նաև> հին հուշարձաններն ուսումնասիրելով, խելքին փչեց կատակել նրանց հետ իր ձևով։ Հրամայեց երկու քարի վրա խըզբըզել մի քանի պարսկերեն անորոշ արձանագրություններ և տանել այնտեղ, ուր մենք դրանք տեսանք։ Այս բանն ինձ պատմեց ակոռեցի մի շինական, որն ինքը սարդարի հրամանով այս քարերը թաքուն տարել էր այնտեղ։

ՆՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԴՈՐՊԱՏԻ ՊՐՈՖԵՍՈՐ ՊԱՐՈՆ ՖՈՆ ՊԱՐՐՈՏԻ՝ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԸ ԻՍԿԱՊԵՍ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Եթե իմ հայրենակիցները սնահավատությունից կամ նախապաշարումից դրդված չեն կամենում հավատալ, որ պարոն պետական խորհրդական Պարրոտը բարձրացել է Արարատի ամենաբարձր գագաթը, ապա ես այդ բանը վերագրում եմ նրանց պարզամիտ հասկացողությանը մի այդպիսի ձեռնարկության հնարավորության նկատմամբ և նրանց սրտում խորը նստած

այն ավանդությանը, որը նրանք պատմում են սուրբ Հակոբ հայրապետի մասին։ Հայտնի է այն ավանդությունը, թե ինչպես այդ սուրբը չնայած իր ամբողջ ձգտումներին և սրբազան խանդավառությանը, տեսնելու Նոյի տապանը, ուրիշ ոչինչ ձեռք չբերեց, բացի տապանի մի տախտակից և որ աստծուց առաքված հրեշտակը որոշակիորեն նրան հայտնել է, որ Տերն արգելել է որևէ մահկանացուի ոտք դնել այդ սուրբ վայրը, այլապես նա կենթարկվի նրա աստվածային զայրույթին*։ Որ իմ հայրենակիցները այդքան ակնածանք են տածում դեպի իրենց վեհ լեռը, որի վրա աստված երբեմն հրաշքով փրկել է մարդկային ցեղը և այն սրբություն են համարում ու պաշտում, ես սրտանց համամիտ եմ նրանց։ Նրանք պետք է և պարտավոր են հպարտ լինել նրանով, որի նմանը ո՛չ մի երկիր չունի, և նրանք պետք է հանգիստ լինեն, որ մենք մեր ոտքերով բնավ չենք շոշափել այն հողը, որի վրա կանգնած էր եղել տապանը, այլ հարկավ այն 100 ոտնաչափ ձյան շերտը, որը ծածկում էր այդ սրբազան հողը։

Բայց որ մի կրթված եվրոպացի էլ է կասկածում այդ վերելքի ճշտության վրա, դա ինձ համար չափազանց անհասկանալի է։ Դժբախտաբար պարզվում է, որ լուսավորված Եվրոպայում նույնպես կարող են գոյություն ունենալ նման մարդիկ, որոնք ինձ առավել ևս սնահավատ, նախապաշարված և սահմանափակ են երևում, քան բնության այդ պարզ զավակները։ Որովհետև այս վերջինների մեջ էլ կային մարդիկ, որոնք մեզ երջանիկ էին համարում, որ հասել էինք անհասանելիին և նման պատվի արժանացել։ Որպես օրինակ կբերեմ սուրբ Հակոբի զառամյալ, բայց բարեպաշտ վարդապետին՝ Կարապետ անունով, որը ո՛չ իր գիտելիքներով, և ո՛չ էլ իր արտակարգ փորձառությամբ, այլ միմիայն իր ազնվամտությամբ և խոնարհ վարք ու բարքով այնքան ցանկալի էր մեզ բոլորիս համար։ Մեր եվրոպացի ճանապարհորդների անաղմուկ, վերին աստիճանի խաղաղ կյանքը, նրանց մարդավայել վերաբերմունքը բոլորի հանդեպ և նրանց գիտական ձգտումներն այնքան կշիռ էին ունեցել նրա մտայնության համար, որ նախապես նա ինձ մի քանի անգամ գաղտնի ասել էր. «Ո՛չ, նրանց ոչինչ չի կարող դիմագրավ լինել, նրանք իսկական հրեշտակներ են. այդպիսի աստվածավախ մարդկանց բարին միշտ էլ կհաջողի», և այդ նույն բանն էլ առանց քաշվելու (unvèrhohlen) կրկնում էր, երբ մենք արդեն բարձ-

* Տախտակի կտորը՝ շղթայով ամրացրած այդ սրբի մատին, ինչպես և նրա ամբողջ բազուկը՝ արմունկից կտրված և ոսկեզօծ, դեռ այսօր էլ կարելի է տեսնել էջմիածնի կաթողիկոսական վանքում, որպես ամենասրբազան մասունք։

բացել էինք սարը։ Նմանապես դրանից հետո, երբ լեռան գագաթից մի սառույցի կտոր վերցրի, որովհետև այնտեղ ուրիշ ոչինչ չգտա, և հալված վիճակում՝ շշով էջմիածնի վանքը տարա, հասկացող և բարեպաշտ եպիսկոպոսներից ու վարդապետներից ոմանք վերցրին այն և ցողեցին իրենց դեմքերը, ոմանք էլ պահեցին այն որպես սրբություն։ Ես էլ իմ կողմից, թեև ծնվել էի այդ երկրում և նման ձեռնարկությունների մասին գաղափար չունեի, այնուամենայնիվ ոչ մի կասկած չէր տածում այդ ոգևորիչ ձեռնարկության կատարման հանդեպ, քանի դեռ ճանապարհորդները գտնըվում էին մեր վանքում և բախտավոր էի զգում ինձ, որ մասնակից եմ եղել այդ գործին։ Առանց իմանալու, թե ինչ արժեք կտա կրթված Եվրոպան այդ բանին, ես ինձ համարում էի ամենաերջանիկ մարդը Ասիայի սրտում, որ եղել եմ իմ նախնիների սրբազան վայրում։

Իսկ եթե ես պատմելու լինեի, թե ինչ վիրավորանքներ եմ կրել իմ այդ իրավացի պնդումների հետևանքով ո՛չ միայն հայերի, այլ և օտարների կողմից, ապա ոչ ոք չէր զարմանա, որ իմ երկրի մարդիկ Կովկասից էլ հեռու թշնամացել էին ինձ հետ և սպառնալիքներ էին կարդում. և այն երկու հայ գյուղացիները, որո՛նք մեզ հետ վերևում էին, դեռ Արարատի ստորոտում գտնված ժամանակ իրենց հարևանների և գյուղական ավագների կողմից տանջվել և ծաղր ու ծանակի առարկա էին դարձել, այնպես որ նրանք հաճախ են ինձ մոտ եկել և անկեղծորեն խոստովանել, որ եթե մեր կողմից նրանք պաշտպանություն չգտնեն, ապա ստիպված կլինեն պարզապես ճշմարտությունը ժխտել, որպեսզի հանգստություն և ապահովություն ձեռք բերեն իրենց համար։ Սրանից կարելի է պարզ կերպով համոզվել, թե ինչու այդ երկու մարդիկ խաբվել են և կեղծ վկայություն տվել, այն էլ նրանք, որոնց մեծ ջանքով՝ մասամբ խնդրելով, մասամբ սպառնալիքներով այնպիսի վիճակի մեջ դրի, որ մեզ հետ վեր բարձրացան, որովհետև նրանք նախ և առաջ չէին կամենում նեղություններ կրել և, ապա, երկյուղից մեզ հետևել։

Ուրեմն ես խոսում եմ այստեղ, Պետերբուրգում, ճշմարտության անաչառ զգացումով, այո՛, պնդում եմ այդ բանը ամբողջ Եվրոպայի առաջ, որ ես պետական խորհրդական պարոն Պարրոտի հետ երրորդ փորձի ժամանակ **բարձրացել եմ Արարատի գագաթը**, որ ես իմ ձեռքով մի փայտե խաչ եմ տնկել գագաթի եզրին՝ հյուսիսային կողմից և այն ամրացրել սառած ձյան մեջ։ Իսկ որ այդ գագաթը բարձրագույնն էր, կարող եմ ապացուցել այսպես. հեռվից լեռանը նայելով, ես շարունակ մտածում էի, որ այն պետք է երկու բարձունք ունենա։ Սակայն վերելքի ժամանակ, երբ

մենք ժամերով անցնում էինք ձյան վրայով և վերջապես մի ընդարձակ բարձունք տեսանք մեր առջև, բնականաբար մենք այն համարեցինք բարձրագույն գագաթը։ Բայց մեր քաջարի ջանքերը, մեր ուրախությունը այդ տեսարանի առաջ կարծես ի չիք դարձան, երբ նրանից վեր, նրա հետևում մի երկրորդ, ավելի բարձր գագաթ նկատեցինք։ Էլ չեմ խոսում այն մասին, թե որքան վատ էր մեր գյուղացիների և զինվորների տրամադրությունը։ Պարոն պետական խորհրդական Պարրոտը ցույց տվեց այդտեղ արտակարգ տոկունության և հոգեկան անվեհերության մի իսկական օրինակ. նրա օրինակով քաջալերված, թեպետ ոչ պակաս հուսահատ, մենք ուղղեցինք մեր քայլերը դեպի այդ երկրորդ լյառը։

Այստեղ պիտի անկեղծորեն խոստովանեմ, որ ես այժմ այլևս չեմ հիշում, թե մենք երկու թե երեք անգամ ստիպված եղանք հաղթահարելու այն դժվարությունը, մինչև գագաթին հասնելը, որից հետո բոլոր մյուս գագաթները, որոնք աջից ու ձախից արևմուտքից-արևելք էին ձգվում, գտնվում էին մեզանից ավելի ցած։

Որպեսզի մենք ավելի համոզվեինք մեր ձեռնարկության հաջողության մեջ, մինչ պարոն պետական խորհրդական Պարրոտը զբաղված էր իր օդերևութաբանական դիտողություններով, ես իջա գագաթից սուրբ Հակոբի վանքի ուղղությամբ, որը մեր իջևանն էր, որովհետև նա ուղիղ այն գծի վրա է գտնվում, ինչպես և այն ուղղաձիգ, լերկ և սև զառիվայրը (Abhang), որից մինչև իսկ կարելի էր տեսնել բարձր գագաթը։

Ես կատարեցի իմ ցանկությունը, տեսա վանքն ու նրա շրջակայքը և նույնիսկ լեռան երկու կողմերը, որոնք պարփակում էին հովիտը՝ վանքի և ձորակի հետ միասին։ Հենց այդտեղ էլ տնկեցի խաչը։ Դա մի այնպիսի ձեռնարկություն էր, որ մինչև այժմ էլ ամբողջ մարմնովս սարսուռ է անցնում, որովհետև ամենաչնչին սխալ քայլը ձյան մակերևույթի վրա, և այն էլ թեք կողմից՝ կյանքիս գնով պիտի վճարեի։ Օրը հրաշալի էր, բայց իրիկնամուտի կողմն էր։ Երևանը, Արաքսը, Բայազետը, Եփրատը, Սևանա լիճը, փոքր Մասիսը, Արագածը և բոլոր մյուս ձյունածածկ կամ լերկ լեռները, իրենց մառախլապատ հովիտներով, որոնց մենք ուրիշ ոչ մի կետից այսպես միասին չէինք տեսել, այդ հոյակապ կտավի կախարդական պատկերներն էին։ Մեր վերադարձին հրաշալի նպաստում էր նորածագ լուսնյակը։

Որ ես էլ Հայաստանում չկարողացա այն երկու ռուս զինվորների նման այս ճշմարիտ իրողությունը երդումով հաստատել, դա նրանից էր, որ այդ ժամանակ ես գտնվում էի Դորպատում, երբ պարոն պետական խորհրդա-

կան Պարրոտը պահանջեց, որ այդ զինվորները և հայ գյուղացիները երդվեն։ Իսկ ես երդվեցի Դորպատի դատարանում (Landgericht)։ Եվ ցույց տալու համար պարոն պետական խորհրդական Պարրոտի ազնվամտությունը, պետք է պատմեմ հետևյալը։ Այդ բանը տեղի ունեցավ ժանդամահի ժամանակ, երբ Դորպատի պատվավոր բնակիչները փոխնեփոխ առաջնապոստերումն էին կանգնում, ճանապարհորդներին ցուցմունքներ էին տալիս, թե որ կողմով պետք է անցնեին։ Մի անգամ, երբ ես այցելության գնացի, որտեղ կանգնած էին պարոնայք պրոֆեսորներ Պարրոտը և Ստրուվեն, հանդիպեցի նրանց շախմատ խաղալիս։ Տուն վերադառնալիս, պարոն պետական խորհրդական Պարրոտն ինձ ասաց, որ ես վերջապես պետք է հարցաքննվեմ և երդում տամ Արարատ բարձրանալու առթիվ։ Ես մտածեցի, որ դժվար թե կարողանամ այնպես ճշտությամբ հիշել վերելքի ամսաթիվը և այդ պատճառով հարցրի նրանից իսկական ամսաթիվը։ Այդտեղ նրա պատասխանն եղավ այն, որ նա ինձ ոչինչ չի ասի, և ես պետք է վկայեի միայն այն, ինչ գիտեի, բայց ոչ այն, թե նա ինչ կասեր ինձ։ Սակայն բարեբախտաբար սուրբ Հակոբ ժամանելուց հետո ես նշել էի այն բոլորը, ինչ տեսել էի վերելքի ժամանակ։ Հենց այդտեղ էլ գտա ամսաթիվը։

Թե ինչու պարոն պետական խորհրդական Պարրոտը չի հիշատակում իմ երդումը իր ճանապարհորդությունը նկարագրելիս, կարող եմ վերագրել միայն այն բանին, որ նա նկատի է առել թերևս իմ հարաբերությունները իմ ժողովրդի հետ, որովհետև ես պիտի կրկին վերադառնայի նրա մոտ, որպեսզի այնտեղ սերմանեի օգտակար գիտելիքներ և նրա <պահանջներին> համապատասխան <բաներ>՝ եվրոպական կուլտուրայից։ Իսկ այժմ, երբ ճշմարտության համար պահանջվում է տալ հրապարակային վկայություն, ես ոչնչից չեմ վախենա, Աստված կաջակցի ինձ իմ բարեբեր մտադրության մեջ, եթե ես նույնիսկ ավելի մեծ դժվարությունների հանդիպեի։ Ես կարող էի իմ պնդումները հաստատելու համար Արարատը բարձրանալու վերաբերյալ և ուրիշ պարագաներ մեջ բերել, բայց ի՞նչ օգուտ դրանից։ Պարոն պետական խորհրդական Պարրոտը արդեն մանրամասնորեն նկարագրել է իր ճանապարհորդությունը, և իմ ճշմարիտ վկայությունը պիտի հերքի այն մարդկանց կասկածը, որոնք մասամբ բանավոր, մասամբ էլ գրավոր արտահայտվել են որպես ճշմարտության հակառակորդներ։

Երկար չի տևի, և երևի շուտով կայցելի իմ հայրենիքը մի կրթված եվրոպացի՝ հայրենյացս վեհապանծ սարերով և հովիտներով, որոնց նմանը չկա աշխարհում, հիանալու և հինավուրց այն մարդկային հրաշակերտ կոթողներով սքանչանալու համար, այդ ջանասեր և ազնիվ մարդուց կխնդ-

րեի, այո՛, կաղաչեի, դժվարություններից չխուսափել, բարձրանալ մեր սրբազան լյառը և այնտեղից դիտել իմ սքանչելի հայրենիքը։ Նա բավականաչափ վարձատրված կլինի և ճշմարտությանը կհատուցի իր վկայությամբ։

Հայ եկեղեցու դպիր
Խաչատուր Աբովյան

Ստ. Պետերբուրգ
7 փետրվարի 1835 թ.

ՆՈՐ ՎԵՐԵԼՔ ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ

Անցյալ տարվա աշնանը, արևելքում կատարած իր հեռավոր ճանապարհորդությունից հետո, Երևան ժամանեց անգլիացի Հանրի Դենբի Սիմուրը։ Պատահմամբ ծանոթանալով նրա հետ, ես տեղեկացա նրա դիտավորությանը՝ այցելել Էջմիածնում ամենայն հայոց հայրապետին և լինել Արարատի շրջակայքում, անձամբ տեսնելու համար այն ավերածության հետքերը, որոնք պահպանվել էին 1840 թվի հունիսի 20-ին տեղի ունեցած հեղակարծ փլվածքից հետո։ Նա հրավիրեց ինձ ևս ուղեկցելու իրեն գոնե մինչև այնտեղ, ուր գտնվում էր նախկինում Ակոռին։ Կարծելով, որ մեր գնալ-գալը երեք օրից ավելի չի տևի, իսկ այդ երեք օրը, տոնի պատճառով, ես ազատ էի իմ ծառայության զբաղմունքներից, ես հաճույքով ընդունեցի ազնիվ անգլիացու առաջարկությունը։

Մեր պատրաստությունները երկար չտևեցին։ Սեպտեմբերի 1<4>-ին մենք Սիմուրի և ենթասպա Ի.-ի հետ արդեն Էջմիածնում էինք, արժանացանք հայրապետի օրհնությանը և, նորին սրբազնության սիրալիր ընդունելությունից հետո, նրա ցուցմունքներով առաջնորդվելով, մյուս օրը Արաքս գետի մերկացած հովտով դիմեցինք դեպի Արարատ, չպատահելով և ոչ մի աչքի ընկնող բանի։

Արարատն այդ ամբողջ ժամանակ կանգնած էր իր համակ պայծառության և վեհության մեջ, միայն երբեմն ծածկվելով վերահաս ամպերով։ Իմ ուղեկիցները, հափշտակված սրբազան լեռան գեղեցիկ տեսքով, հիացմունքով խոսում էին այն մասին, թե ինչպես երջանիկ կլինեին, եթե իրենք լինեին նրա գագաթին, բայց ինձնից թաքցնում էին իրենց բուն դիտավորությունը՝ անպայման բարձրանալ Արարատի գագաթը։ Նրանց այդպիսի ցանկությունը ինձ ավելի քան տարօրինակ էր թվում, քանի որ այդ պա-

րոնները դեռ չգիտեին, թե ինչպիսի դժվարություններ, նախապատրաստություններ, ջանք ու անձնազոհություն է պահանջել գիտնական մարդկանցից այդ վերելքը՝ նամանավանդ պարոնայք Պարրոտից և Աբիխից։ Բանը սակայն շուտով պարզվեց։ Սեպտեմբերի 15-ին մենք արդեն գտնվում էինք Արալըխ պահակատեղի մոտ, Երևանից 50 և Ակոռու փլվածքից 15 վերստ հեռու։ Պարոն Սիմուրի վճռական մտադրությունը՝ լինել Արարատի գագաթը, ինձ վհատության մեջ գցեց։ Իմ երկարատև բացակայությունը տարվա այդ ուշ ժամանակին, կենսամթերքի, տաք զգեստների, գործիքների և մարդկանց միանգամայն պակասությունը, ինձ հայտնի վտանգներն ու դժվարությունները, կապված այդ տեսակ ձեռնարկության հետ,— այդ բոլորը ծանր ազդեցություն արին իմ երևակայության վրա։ Ես փորձեցի մի քանի անգամ համոզել անգլիացուն՝ ետ կենալու այդ ձեռնարկություններից, բայց զուր անցավ։ Ես էլ կամա-ակամա պիտի հետևեի նրանց։ Մեզ առաջնորդելու համար մենք վերցրինք Նոր-Ակոռի գյուղից Սիմեոն Սարգսյանին, որը անցյալ տարի ուղեկցել էր պարոն Աբիխին։ Թուրքերին սպասելը, որոնց հետևից մի կազակ էր ուղարկված մերձավոր գյուղը և որոնք պիտի գային ձիերով երեկոյից ոչ շուտ, առիթ տվեցին ինձ օգտվելու այդ պատեհությունից, որպեսզի ետ դառնամ, երբ հանկարծ անսպասելի ստացվեց կորդոնի պետի՝ եսաուլ Կ.-ի առաջարկությունը՝ ուղեկցել մեզ դեպի լյառը, որ և վերացրեց իմ երկբայությունները և մեր կանխատեսած բոլոր անհարմարությունները։ Եվ մենք նրան ենք պարտական այդ ձեռնարկության ողջ հաջողությունը։

Վերցնելով կազակներից այն ամենը, ինչ միայն կարելի էր գտնել նրանց մոտ և մնաս բարև ասելով պարոն Ի.-ին, որ տառապում էր ջերմով, ժամը 2-ի մոտ, ճաշից հետո, պարոն եսաուլ Կ.-ի, չորս կազակների ու երեք հայերի ուղեկցությամբ ճանապարհ ընկանք դեպի Հին-Ակոռի. երեկոյան արդեն հասանք մի փոքրիկ պարտեզի, որ անվնաս էր մնացել փլվածքից և գտնվում էր Ակոռուց ոչ հեռու։ Վշտալի է, երբ մարդ նայում է երբեմնի ծաղկյալ բնակավայրից մնացած այդ տխուր հետքերին, նամանավանդ ինձ՝ նրա նախկին բարեկեցությունը հիշողիս և այդ տեղերը հանգուցյալ Պարրոտի, չորս տարի սրանից առաջ պարոն Վագների և 1844-ին՝ պարոն Աբիխի հետ հաճախակի այցելողիս համար։ Ոչ ավելի քան վեց տարի առաջ այստեղ դեռ գոյություն ուներ գեղեցիկ գյուղը, ինչպես իր տեղով ու դիրքով և կլիմայով, այնպես էլ իր հարստությամբ ու հնությամբ, բայց Արարատի մի ճակատագրական ժայթքումը մի քանի րոպեի մեջ միայն ամայություն սփռեց և ճակատագրական գերեզմանով ծածկեց 5000 բնակիչ՝ իրենց բոլոր տներով, այգիներով և դաշտերով՝ վեց վերստ

լայնություն և 15-ից մինչև 20 վերստ երկարություն ունեցող տարածության վրա։ Մի քանի ծառ այստեղ-այնտեղ բոլորովին չորացած ու մի քանի տեղ էլ դեռ տխրադեմ կանաչ մնացած, մի քանի տապանաքար սուրբ Հակոբի հովտից աջ, խոտերի մեջ խրված, նախկին գերեզմանոցի մնացորդները, ու մի քանի փոս էլ՝ զոհված մարդկանց տների վրա բան գտնելու հույսով գիշատիչ քրդերի ձեռքով փորված, թախծալիորեն հիշեցնում էին անցյալ կյանքի հետքերի մասին։ Այստեղ մենք անցկացրինք առաջին գիշերը։

Առավոտյան վաղ մենք հասանք Փոքր Մասիս հյուսիսային ստորոտում գտնվող փոքրիկ անտառի մոտ։ Այստեղ, ի զարմանս մեր, շատ կետերում հանդիպեցինք ձյան հյուսերից գոյացած ջրի, որ այսքան ուշ ժամանակ ընդհանրապես չէր կարելի սպասել։ Իսկ այսպես կոչված Սարդարի աղբյուրը մինչև իսկ առատաջուր էր դարձել, ինչպես ամառ ժամանակ։ Այստեղից, այսպես ասած, քայլ առ քայլ գնացինք պարոն Աբիխի հետքերով և մոտավորապես ժամը 2-ին, ճաշից հետո, հասանք նրա նախկին գիշերած տեղը՝ անկարգ զանգվածներով առատորեն թափված ահագին ձյան հյուսերի և բլրակների մեջ։ Այստեղ է գտնվում բոլոր այս տեղերի մեջ միակ ապաստարանը՝ հանգստանալու համար։ Պետք է թողնեինք ձիերը և ամեն մեկս հավաքելով ուժերս, ոչ թե գնայինք, այլ մագլցեինք վեր։ Չորս կողմը լռությունն էր, երկինքը պարզ էր, և Արարատը չէր մռայլվում ոչ մի կտոր ամպով։ Մենք պատրաստ էինք շարունակելու ճանապարհը, բայց մեր առաջնորդներին հանգստություն էր հարկավոր և լավ էլ էր, որ այդպես եղավ, ապա թե ոչ մենք հարկադրված պիտի լինեինք երկու գիշեր անցկացնել ամենացուրտ բարձունքներում։ Շուտով Արարատի հսկա ստվերը պարուրեց մեզ ամայի աղջամուղջով. այնինչ Արաքսի ամբողջ հովիտը և նրան շրջապատող լեռնաշղթաները դեռ փայլփլում էին ծիրանի ցոլքով։ Երեկոյան դեմ լեռնային հեղեղատների խոխոջյունը սկսեց սակավ առ սակավ կենդանացնել գերեզմանային լռությունը։ Այդ բարեհաջողությունը նշան էր, որ Արարատի հեռավոր բարձունքների վրա ևս դեռ կար բավականաչափ ջերմություն։

Սեպտեմբերի 17-ը մեզանից շատերի համար առեղծվածային էր։ Արարատը կատարելապես պարզ ու պայծառ նկարվում էր մեր առաջ, ինչպես հայելու մեջ։ Պետք էր օգուտ քաղել հրաշալի եղանակից։ Մենք շտապեցինք վերցնել մեզ հետ այն բոլորը, ինչ անհրաժեշտ էր նման ճանապարհի համար՝ տաք զգեստներ, ածուխ ու փայտ, հաց ու գինի։ Շալակն առնելով բեռը, յուրաքանչյուրը զինվեց կազակական տեգով, և, այսպիսով, մեր ամբողջ քարավանը, բաղկացած բացի ինձանից, պարոն Սիմուրից և

եսավուլ Կ.-ից ևս երեք հայերից ու մի կազակից, ասածս օգնությամբ առաջ շարժվեց նախ Մեծ Մասիսից ուղիղ դեպի արևելք և Փոքր Մասիսի ուղղությամբ ձգվող ձորով, ապա առաջին և երկրորդ ձորերի մեջ գտնվող ժայռոտ լեռնակողով և, վերջապես, դեպի հյուսիս-արևմուտք՝ մի փոքր պտույտ տալուց հետո՝ բավական զառիթափ և ժայռոտ տարածության վրայով, որ նույն ուղղության վրա է և սև շերտի ձևով համարյա հասնում է մինչև Արարատի բուն գագաթը։ Այդ տարածությունից կամ շերտից դեպի աջ բարձրանում և այդ տեղերում միակ բարձր կետը՝ Քիլիսատաշը (այսինքն եկեղեցու քար), որ այդպես է կոչված հայկական եկեղեցիների գմբեթին նմանվելու պատճառով։ Այստեղից մինչև բուն գագաթը ձգվում է հավերժական ձյունով ու սառույցով ծածկված լեռնային մի զառիվայր, իսկ դրան կից ընկած է այն նվիրական շերտը, որ երկարատև ու վտանգավոր որոնումներից հետո հայտնագործել էր պարոն պրոֆեսոր Աբիխը։ Դա կարծես մի բնական սանդուխք լինի՝ հենց բնության կողմից այդ նպատակով ստեղծված, և մի այլ ավելի հարմարավոր ուղի չկա այստեղ վերելքի համար։ Աստիճան առ աստիճան բարձրանալով նրանով ավելի ու ավելի վեր, մենք բոլորովին ապահովված պիտի համարեինք մեզ այն բոլոր վտանգներից, որոնք սպառնում են զառիվայրերը բարձրանալիս. ամենահուսալի հենարանն էր մեծամեծ քարերի բազմությունը՝ թափված ամբողջ ճանապարհի վրա, և դժվարություն էր առաջ գալիս միայն այնտեղ, ուր հանդիպում էին երբեմն հեշտությամբ ոտքի տակից սահող մանր քարեր, ավազ և կավ։ Այդ ճանապարհին, տարվա այդքան ուշ ժամանակ, երբեմն տեսնում էինք քարերի մեջ կանաչ խոտեր ու ծաղիկներ և մի երկու-երեք տեսակ երգող թռչնիկներ։ Շուտով գոհությամբ նկատեցինք, որ, չնայած աշնանային օրվա կարճությանը, մենք բավականաչափ վաղ անցել ենք այն վտանգավոր տեղերը, որտեղ սրանից մի երկու տարի առաջ մեր կատարած կրկնակի փորձերից հետո, պարոն Աբիխի հետ միասին հազիվ կարողացանք փրկել մեր կյանքը, այդ տեղերն իսկական դժոխք դարձնող ահռելի բքից, մրրկից, փոթորկից և ամպրոպից։ Մենք այժմ արդեն անցել-հեռացել էինք և այն տեղից, ուր պարոն Աբիխը, անցյալ տարի Արարատի գագաթից վերադառնալու ճանապարհին գիշերել էր։

Զարմանալի թեթևությամբ ժայռից ժայռ ցատկող մեր անխոնջ առաջնորդ Սիմեոն Սարգսյանը վերջապես ցանկացավ գիշերելու համար կանգ առնել. այդտեղ թեև մենք հակառակն էինք կարծում, որ ինչքան շատ առաջ գնանք այդպիսի խաղաղ ու գեղեցիկ եղանակին, այնքան առավել լավ կլիներ։ Բայց շուտով մեր բոլոր ուղեկիցներն էլ համաձայնեցին այդտեղ ապաստանելու։ Մոտավորապես ժամը 5-ն էր, և այդ բարձունքների վրա

ավելի հարմար տեղ անհնար էր գտնել։ Մեր ընտրած ոչ մեծ, ընդարձակ և հարթ հրապարակը համարյա երեք կողմից ժայռերն ու քարափները պաշտպանում էին քամու ազդեցությունից։ Այստեղ բարձրությունը հավասար էր Փոքր Մասիսի բարձրությանը։ Մեր առաջին գործը եղավ կրակ անել և տաքանալ թեյով։ Մութն էլ արդեն կամաց-կամաց կոխում էր բովանդակ շրջակայքը։ Դժվար է պատկերել գիշերվա վեհ տեսարանը լեռնային բարձունքի վրա, ուր քար լռությունը, մերկ ու մռայլ ժայռերը և մթին անդունդները երկնային լուսատուների դժգույն ցոլքի մեջ ներգործում են հափշտակված ուղևորի վրա։ Դեռ նոր էինք սկսել մեր աչքերը փակել, երբ մի անակնկալ երևույթ գրավեց մեր ուշադրությունը։ Ներքևում, Փոքր Մասիսի ստորոտում, այստեղ ու այնտեղ հանկարծ բոցավառվեցին խարույկներ։ Արդյոք դա մաքսանենգների, գիշատիչ քրդերի թափառախո՞ւմբ էր, թե մի ինչ որ քարավան, դժվար էր գուշակել։ Դրանից ոչ պակաս զբաղեցրեց մեզ ներքևում թողած մեր մարդկանց վառած փոքրիկ կրակը։ Թվում էր, որ Արարատը երբեք ավելի բարեհաճ չէր եղել ձեռներեց ուղևորների համար։

Գիշերը բարեհաջող անցավ մեզ համար, և բացվեց ուրախ առավոտը։ Գիշերը ցուրտ աննշան էր, և մենք կատարելապես կարող էինք բախտավոր համարել մեզ, եթե միայն մեր ընկերներից մի քանիսին անհանգիստարած չլիներ գլխացավը, որն ինչքան որ Երևանի թունդ գինու գործածությունից էր,— ի դեպ, պետք է ասեմ՝ ամենևին չպետք է գինի գործածել լեռնային ուղևորությունների ժամանակ,— այնքան էլ նոսրացած օդից և շատ բարձր տեղեր ելնելուն անընտել լինելուց։ Թևավորված շուտով մեր թափառումների ցանկալի նպատակին՝ այստեղից արդեն մոտիկ, Հին կտակարանի լեռանը հասնելու հույսով, մենք վերստին առաջ ընկանք՝ արեգակի պայծառ ճառագայթների լույսով։ Այժմ արդեն պարոն Սիմոնը, որ առաջ ետ էր ընկնում, սկսեց ուրիշներից առաջ անցնել։ Ճանապարհն անցնում էր նույն ուղղությամբ սև շերտի վրայով, և ահա մենք հասանք 1844 թվին պարոն Աբիխի բարեպաշտ սպասավոր Կարլ Ցեպկի կանգնեցրած փայտե խաչի մոտ։ Բարի գերմանացին ինչպիսի՜ եռանդով և համբերությամբ էր բերել այդ խաչը՝ այն միակ ցանկությամբ, որ կանգնեցնի Նոյան լեռան գագաթին, բայց այն ժամանակ մեզ պատահած բուքը, փոթորիկը և կարկուտը հարկադրել էին նրան հենց այստեղ բաժանվելու իր խաչից, ինչպես և մեզ՝ լեռան գագաթը հաջողությամբ ոտք կոխելու մասին ազդանշան տալու համար վերցրած հրթիռներից և այլ բաներից։ Այստեղ հարյուր քայլի վրա վերելքն ավելի զառիթափ է դառնում, ձյունից մերկացած շերտն սկսում է սեղմվել, այնուհետև նրա ետևում բացվում է Արարատի լայն և համարյա հարթ-հավասար գագաթով ավարտվող ձյունածածկ

թեքվածքը։ Պետք էր դարձյալ մի քանի զորեղ քայլ առաջ անել բավական թեք լանջի վրայով, որպեսզի հասնեինք լեռան գագաթը։ Այս անգամ բախտը կամեցավ ինձ շնորհել մարդկային ցեղի նախահոր սրբազան բնակավայրին առաջինը երկրպագելու երջանկությունը։ Լեռան բուն գագաթը մի տափարակ, փոքր ինչ կարծրացած ձյունից խորդուբորդ հարթություն է, որի վրա հարմար է ման գալ ոտքով։ Լեռան հեռվից դժվարամատույց թվացող թեքությունը ոչ այլ ինչ է, բայց եթե տեսության խաբուսիկ երևույթ, որ ավելի ևս զորանում է նրանից, որ Արարատի դեպի Երևան նայող երեսը, իրոք որ, համարյա ուղղաձիգ է և այդ կողմից դեպի գագաթը տանող ուղին մատչելի է միայն երկնային թռչուններին։ Իսկ Արարատի մյուս երեսներն էլ առաջ ոչ ոքի կողմից հետազոտած չի եղել։

Ուրախության առաջին զեղումներից հետո մենք պետք է մտածեինք դարձի, երկար ու դժվարին ճանապարհի մասին։ Կեսօրից արդեն անցել էր։ Ամբողջ մոտակա շրջակայքը կորչում էր թանձր մառախուղի մեջ, միայն գյուղերն ու քաղաքներն էին հազիվ սևին տալիս դժվար նշմարելի կետերի նման։ Մեզանից դեպի արևմուտք, մոտիկ տարածության վրա, իր ձմեռային արծաթյա զգեստների մեջ բարձրանում էր ինձ համար հուշերով թանկ լեռան գագաթը, ուր առաջին անգամ, սրանից 17 տարի առաջ[11] իմ բարերար և դաստիարակ պրոֆեսոր Պարրոտի հետ ես երկրպագեցի այդ նվիրական սրբությանը և այնտեղ փոքրիկ փայտե խաչ կանգնեցրի... Թափանցող քամու և ցածրում թողած տաք զգեստների պակասության պատճառով բարձունքին այլևս մնալը անկարելի էր, ուստի, հենց որ պարոն Սիմուրն ավարտեց իր նամակները Արարատի գագաթից՝ մեկը Կովկասի փոխարքային, իսկ մյուսները՝ Անգլիա, իր բարեկամներին, մենք երկյուղածությամբ մնաս բարև ասացինք սրբազան գագաթին և վերադարձի ճանապարհ բռնեցինք։

Եթե մեկին վիճակվի այս կողմից բարձրանալ Արարատ, խորհուրդ չեմ տա վերադառնալ նույն ճանապարհով, որը քարքարոտ լինելու պատճառով ավելի դժվարին է, քան լեռը բարձրանալիս։ Ավելի հարմար ու հեշտ կլինի սողալ փխրուն ձյան վրայով՝ կանգնած կամ նստած և կանգ առնել ուզածդ տեղը սրածայր ցցի միջոցով՝ վազքի ժամանակ խրելով այն փափուկ ձյան մեջ։ Սկզբից ոչ ոք չէր խիզախում այդպես սողալ, բայց համարձակ կազակներից մեկն առաջին օրինակը տվեց, իսկ նրա փորձը խրախուսեց ամենքին, և այսպիսով մենք կիսով չափ կարճեցինք մեր ուղին, օգտավետը միացնելով հաճելիի հետ։ Գիշերելու տեղից մենք սլացանք տարբեր կողմեր, ով ինչպես ուզում էր։ Խիզախ կազակը առաջինը լուր տվեց ցածրում մնացած մեր մարդկանց. Նրա ետևից ես և եսավուլ Կ.-ն

հաջողությամբ վերադարձանք մեր հավաքատեղին։ Պարոն Սիմուրը կարողացավ ժամանել այդտեղ միայն գիշերը՝ հրաշքով միայն փրկված լինելով վտանգից, որովհետև մի փոքրիկ սխալ մթության մեջ, և նա կարող էր սայթաքել ու զոհվել։ Արարատը նույն այդ գեշերը հագավ յուր անդրջրհեղեղյան քղամիդը, որ ավելի ու ավելի անթափանցիկ էր դառնում, իսկ երեկոյան դեմ անգամ ներքևում արձագանք տվող կայծակն ու որոտն ակներև ցույց էին տալիս մեզ, թե ինչպիսի կատաղի մրրիկ էր պար գալիս նոր միայն թողած լեռան գագաթին։ Հաջորդ առավոտյան մեզ համար պարզվեց Արարատի վրա գիշերելու տեղից մեր նկատած կրակների երևալու անհասկանալի պատճառը։ Դա կեր որոնելու նպատակով Արարատի ստորոտն անցած թշնամական քրդերի կայանն էր եղել։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Յուրաքանչյուր տանտեր այստեղ առնվազն երեքից չորս սենյակ ունի։ Դրանց մի մասը հարմարեցված է իրենց բնակության համար, մի մասն իրենց մթերքների, մի մասն էլ իրենց անասունների համար։ Ամբողջ շենքը կամ շրջափակված է բակի պարսպով, կամ էլ առանց պարսպի է։ Նրանց աչքի ընկնող բնակելի սենյակը կգտնենք, եթե դարբասից բակի միջով ուղղակի գնանք։ Բնակելի սենյակն աչքի է ընկնում նաև նրանով, որ դա սովորաբար ավելի բարձր և ավելի մեծ է, քան բոլոր մնացյալները։ Դա քառանկյունի, ընդարձակ և սովորականից բարձր մի տուն է, որ կանգնած է բոլոր մնացածների մեջտեղը։ Ներս ենք մտնում մի միակ դռնից, և քանի դեռ ներսում չենք, հնարավոր չէ կարգին պատկերացում ունենալ դրա մեծության, ընդարձակության և սարքավորման մասին, որովհետև օժանդակ շենքերն իրենց անմիջական կցվածությամբ բոլոր այս տարբերիչ նշանները ծածկում են։ Կավային, մեծ մասամբ հարթ գետնից բարձրանում են շուրջ երկուսից մինչև երկու և կես սաժեն բարձրությամբ պատեր, որոնց բոլոր չորս կողմերն էլ հավասար բարձրության են և, չնչին բացառությամբ, քառակուսի կառուցվածք ունեն։ Պատերի հաստությունն արդեն կզգանք, երբ ներս մտնենք մեծ մասամբ մարդաբոյ և բավականին լայն բացվող դռնից։ Այս դուռն ամենուրեք տեղադրված է սենյակի մի անկյունում։ Այնտեղ, ուր առաջամասի և մի կողմի պատի երկու ծայրերն իրար են հանդիպում, առաջինը վերին մասում մինչև տան գետինը մի փոքր ավելի խորն է փորված և այն երկարությամբ, որ մենք տեսանք։ Դա ավելի երկարավուն է, քան քառակուսի, ընդ որում առաջնապատի հատած ծայրն

աջ ու ձախ կողմերից կարելի է միանգամայն պարզ տեսնել և դրանից որոշել նրա ու մյուս բոլոր պատերի հաստությունը։ Վերջինս մոտավորապես մի ոտնաչափ է։ Պարիսպը կառուցում են առանց հիմքի, այսինքն՝ առանց հողը խորը փորելու, ուղղակի հենց գետնի վրա։ Դրա շաղախը պատրաստում են գետաքարից, որն այստեղ ամենուրեք առատ է, և սովորական կավահողից։ Պարիսպն առանց վարպետի չեն կառուցում։ Հակառակ քարերի անհամաչափության, շարում են բավական հավասար և կանոնավոր, դրա համար օգտագործելով՝ ուղղալար, մի չափ, ինչպես նաև երկաթյա մի գործիք, որով սվաղում են ցեխը և լցնում անցքերը։ Այս գործիքի բոլոր առանձնահատկությունները նշել չեմ կարող, որովհետև դա շատ երկարապատում կլիներ։ Գործածում են նաև փայտյա և երկաթյա բահեր։ Պարսպի երկու կողմերը շարում են մեծ քարերով, իսկ արանքը լցնում են ցեխից և մանր քարերից մի շաղախ։ Շատ գյուղերում, որտեղ քար չկա, տներն ամբողջովին շարում են չթրծած աղյուսներով։ Այս պարիսպները դրսից և ներսից սվաղում են նույն շաղախով և միանգամայն հավասար։ Շաղախը բարակ մաղված սպիտակավուն կավահողի և շատ բարակ ծղոտի մի խառնուրդ է. դրանք ջրով խառնում են իրար, մի քանի օր այդպես թողնում և ապա գործադրում են։ Շաղախն սկզբում բավական սպիտակ է, այնուհետև կորցնում է այդ գույնը, դառնում է գորշ և մեծ մասամբ սև։ Ծղոտը շատ լավ ամրացնում է ցեխը։ Մեծ մասամբ սենյակի միայն կենտրոնն է լուսավորված։ Անկյուններն այնքան մութ են, որ հազիվ կարելի է իմանալ, թե այնտեղ կարող են մարդիկ լինել։ Դրա պատճառն այն է, որ լուսամուտ ամենևին չկա, կան միայն երկու շատ նեղ, մի ոտնաչափ երկարությամբ և մի քիչ էլ լայնությամբ անցքեր, որոնք բացվում են սենյակի վերին մասին շատ մոտիկ և օդ քիչ են մատակարարում։ Բուն լույսն ընկնում է տան կտուրից։ Այնտեղ ներսից քառակուսի մեկ կամ երկու բացվածքներ են արված, որոնք շրջափակված են տախտակներով, և դրանց շուրջ վերին մասը ավելի շատ ուռուցիկ է երևում քան հարթ։ Դրանցից մեկը, այն էլ առավել մեծը, անցնում է տան կենտրոնով, իսկ փոքրը՝ մի քիչ մեկուսի։ Դրանց կողքերից կարելի է եզրակացնել կտուրի հաստությունը, որը հանգչում է երկար ու հաստ, մեծ մասամբ ողորկ ու հավասար ռանդած գերանների վրա։ Վերջիններիս ծայրերը՝ միմյանց զուգահեռ, մի պատից մտնում են հակառակ պատը։ Երկու ամենից ավելի մեծ գերաններ, որպես մյուսների հենարան՝ դրանց խաչաձև և իրար զուգահեռ, հարմարեցված են մյուս հանդիպակաց պատերին։ Դրանցից ամեն մեկը հանգչում է փայտյա երկու սյուների վրա, որոնք, գտնվելով միմյանցից որոշ հեռավորության վրա՝ կազմում են մի քառանկյունի, որի բոլոր կողքի անցքերը բաց են։ Ո՛չ

այն անցքերը և ո՛չ էլ այս բացվածքները լուսամուտ կամ կափարիչ չունեն. միայն ձմեռը, այն էլ գիշերները, դրանք ծածկում են խոտով կամ հին փալասներով, իսկ ցերեկը մնում են բաց, և ողջ ձյունը, անձրևն ու արևի ճառագայթները դրանց միջով անարգել ներս են թափանցում, մինչդեռ տնեցիք այնտեղ նստած ականատես են լինում այս բոլորին։

Միմյանց զուգահեռ այն մեծ գերանների և ոչ երկու ավելի հաստերի վրա, մեկուկեսից երկու ոտնաչափ երկարությամբ և մի քանի բթաչափ լայնությամբ հավասարաչափ կտրված ու ռանդած փայտի փոքր կտորներն այնպես են կողք-կողքի խիտ շարված, որ միջանկյալ շատ քիչ տարածություն մնա։ Ավելի չքավորների մոտ դրանք ռանդած չեն և միմյանցից էլ բավական հեռու են։ Դրա վրա եղեգնից խսիրներ են փռում։ Կավահողի մի բարակ շերտի հետ ջուր խառնելով, թանձր շաղախ են պատրաստում, դրանով մի քանի գծաչափ քսում գերաններին. այսպիսով, կանխվում է նաև չորացած հողի ներքև թափվելը, որը այնուհետև կես ոտնաչափ հաստությամբ լցնում են դրա վրա։ Կավահողից և բարակ ծղոտից պատրաստված շաղախն օգտագործվում է այստեղ ևս։ Դրանով բավական հաստ սվաղում են ամբողջ կտուրը, այն էլ այնպես, որ սկսած մեջտեղից, որտեղ նրդիկն է, քիչ-քիչ բոլոր կողմերից բարձրանալով, թեթևակի թեքությամբ ձգվում են պատի դեպի արտաքին ծայրերը։ Այս պատերն էլ բոլոր կողմերից դեպի կենտրոնը քիչ ավելի բարձր ու բավականաչափ թեք են։ Մեկ կամ երկու տեղ պատրաստված են փայտե կամ քարե բավականին երկար ջրորդաններ, որոնք երբեմն դեպի դաշտ կամ երբեմն էլ դեպի բակ են հոսում։ Բոլոր այս հարմարանքներն, ինչպես տեսնում ենք, այն բանի համար են, որպեսզի անձրևի դեպքում ջուրն իսկույն հեշտությամբ դեպի ջրորդանը ճանապարհ գտնի և արագ հոսի, մի բան, որ կատարվում է շատ հեշտ, թեև հողն էլ անշուշտ ջրի մի նշանակալից մասը ներծծում է, սակայն մեծ և տևական անձրևների ժամանակ նա անարգել հոսում է։ Կտուրի հողե ծածկը մի քանի տարին մեկ վերանորոգում և տունը թե՛ դրսից, և թե՛ ներսից կրկին սվաղում են։ Պատերի մեջ կարելի է տեսնել մի քանի մեծ խորշեր, որոնց մեջ իրեր են դնում. դրանք մի տեսակ պահարաններ են։

Մի ուրիշ հարևան շենք, որ կառուցված է նախորդին անմիջականորեն կից, հյուրասենյակն է, որի դուռը սովորաբար բակից է բացվում և բնակելի սենյակի հետ, բացի մի լուսամուտից, այլ հաղորդակցություն չունի, այնպես որ, ինչ որ այնտեղ խոսվում ու կատարվում է, այստեղ չի կարող լսվել, և հակառակը։ Հյուրասենյակն երկու բավական մեծ լուսամուտ ունի, որ պատում են փայտյա շրջանակներով և թղթով, քանի որ ապակին մեզ մոտ թանկարժեք ապրանք է։ Թղթին քսում են հալած յուղ, որը և մեծ չա-

փով նպաստում է լույսի ավելանալուն։ Հյուրասենյակն երկարավուն ձև ունի և բավական լայն է. պատերին կան քառանկյունի կամ երկարավուն շատ խորշեր, որոնք որպես պահարան են ծառայում։ Հանդիպակաց պատին պատրաստված է բուխարի, այնպես որ մեկը հենց որ ներս մտնի, այն կգտնի իր դիմաց։ Հյուրասենյակը մեծ ճաշակով է կահավորված։ Առաջնակողմում մի կրակարան, որը լայն է և գետնից բավական բարձր։ Սենյակի պատերը միաժամանակ կրակարանի պատերն են, սակայն խորքում եղած ուղղաձիգ բացվածքը զանազանել է տալիս նրանց սահմանները։ Մի քանի ոտնաչափ բարձր մի կամար է շինված, որը կամ դուրս է ցցված և կամ պատերին հավասար է կանգնած. առաջին ձևը շատ ավելի լավ է, որովհետև դա ծուխը բաց չի թողնում։ Այս բուխարիները, ինչպես նաև ամբողջ սենյակը, գաջով ներսից մաքուր սվաղված են. առաջինների շուրջը կան գեղեցիկ նախշեր, ուղիղ քաշված գծեր, որոնք աչքի համար խիստ հաճելի են։ Պատերը, վերևի մասը, ինչպես և կտուրը նույն չափի են, ինչ նախկինները։ Դա կառուցված է նույնպես շատ բարձր և ընդարձակ։

Այսպիսի հյուրասենյակ միայն հարուստներն ունեն. ավելի չքավորներն օգտագործում են դրա նման մի փոքր սենյակ՝ նույն ոճով։ Բուխարին, երկարավուն ձևով, այստեղ ևս կարելի է տեսնել։ Ընդհանրապես, քանի որ ամբողջ երկրում փայտեղենը խիստ պակաս է, հյուրերին ընդունում են այս սենյակում։ Նրանք քիչ անասուն ունեն և գոմերը մաքուր են պահում, այնպես որ անհարմարությունն այնքան էլ մեծ չի լինում։ Միայն ձմռանն են նրանց այստեղ թողնում. տարվա մյուս եղանակներին նրանք բաց օդի մեջ են։ Պարսից մեծամեծներին նրանք սովորաբար այստեղ են ընդունում, քան մի այլ տեղ. այդ, իհարկե, ձմռանը. ամառը նրանք մնում են այգիներում՝ բաց երկնքի տակ։ Գոմն էլ շատ նպատակահարմար է կառուցված և միևնույն շաղախով։ Առանձին անասունների տեղերն անջատված են փայտյա սյուներով. պատերի մեջ մեծ անցքեր են արված՝ վերևում սրածայր, ներքևում անհամեմատ լայն։ Մի մեծ, երկար գերան ծառայում է որպես հենարան և միաժամանակ պաշտպանական պատ, որի վրայով անասունն երկարացնում է գլուխը և հետզհետե խժռում կերը։ Եթե անասունները շատ են, ապա երկու շարքով են կապում. նրանց գավակը երկու կողմից ուղղում են դեպի կենտրոն, ուր բավականաչափ միջանկյալ տարածություն կա, որտեղից կարելի է ազատ անցնել։ Դրանից ոչ հեռու, կամ միևնույն շենքում մի շատ ընդարձակ սենյակ կա, որտեղ խոտն ու հարդն է պահվում։ Կերը յուրաքանչյուր առավոտ, կեսօրին (երբ անասուններին նաև ջրելու են տանում) և երեկոյան բերում են մեծ կողովներով։ Նրանք կապված են և իրար չեն խանգարում։ Անասուններին խնամում են մեծ հոգատարությամբ,

որ ես այստեղ շարադրել չեմ կարող. նրանք երեքից-չորս ամիս այսպես են մնում ու կերակրվում։ Կան նաև ուրիշ շատ սենյակներ, որ չեմ նկարագրում. դրանք սահմանված են ամեն կարգի բաներ պահելու համար, իսկ հաճախ էլ բոլորովին դատարկ են։ Դրանց կառուցվածքն ևս նույնն է, սակայն ոչ մեկը բնակելի մեծ սենյակից մուտք չունի։ Այնտեղ կարելի է մյուս սենյակներից մտնել։ Դրանք իրար մեջ այնպես են հարմարեցված, որ կարելի է մի սենյակից մյուսն անցնել. դրանց մի պատը միշտ հարում է բնակելի մեծ սենյակին։

Շատ ավելի կարևոր և հետաքրքիր է մի այսպիսի գյուղացու մառանը կամ մրգերի պահեստը։ Այստեղ է գտնվում նրա ամբողջ գանձը, որ ձեռք է բերել իր դառը քրտինքով։ Դա մի երկար սենյակ է, ունի մի մուտք, երկու փոքրիկ լուսամուտ և բնակելի շենքից բոլորովին առանձնացված է։ Բացի ամառվանից, տարվա մյուս եղանակներին այստեղից բուրում է մի անուշահոտություն, որ անկարելի է նկարագրել։ Երբ ներս ես մտնում, թվում է, թե գտնվում ես այնպիսի վայրում, ուր պատերը, առաստաղը, բացի հատակից, պտղավորված են։ Մարդաբոյից մի փոքր բարձր շատ խիտ շարքերով ձմռան համար թարմ մրգեր են կախված, և դրանք ոչ թե հատ-հատ, այլ 15—20—30 հատ՝ միևնույն շարի վրա, երկու երկար, բարակ ճիպոտների վրա, որոնց նկարագրությունն ես մի այլ տեղ տվել եմ։ Այստեղ գերանները դիտավորյալ կերպով իրար մոտ ու զուգահեռ են և այն էլ տեղադրված սենյակի լայնությամբ, որը սովորաբար շատ երկար է, և ամեն մեկի վրա ուղիղ գծով ամրացված են մեխերի խիտ շարքեր։ Հենց դրանց վրա էլ շարքով սենյակի մի ծայրից մյուսը կախված են այդ շարերը։ Դրանք խաղող են, մեծ, գեղեցիկ տանձեր, խնձոր, ծիրան, սիրուն սալորներ. բոլորն էլ մեծ քանակությամբ և խառը, սակայն ամեն մի տեսակն առանձին շարով։ Դրանք կարելի է ձեռքով պոկել. ամիսներով մրգերը մնում են այդպես, և տանեցիք աստիճանաբար վայելում են։ Մինչև իսկ անծանոթ հյուրերը, հենց որ արժանանան տանտիրոջ բարեհաճությանը, հյուրընկալվում են այստեղ, կարող են այստեղ քնել և ազատ կերպով վայելել, ինչքան կամենան, եթե մինչև իսկ մարդ չլինի այնտեղ։ Ընտանիքի բոլոր անդամները դիտավորյալ չեն երևում այնտեղ, որպեսզի ուտելու ժամանակ նրան չխանգարեն։ Տանտերը գիտե, որ դա բոլորովին այլ գրավչություն ունի, քան այն, եթե ինքը մի ափսեով հյուրասենյակում այն նրա առաջ դնի։ Դա նույնպես մի ընդարձակ սենյակ է, ինչպես մյուսները և իր կառուցվածքով ոչ մի տարբերություն չունի։ Մի կողմում մի կույտ տանձ, մի այլ կողմում՝ խնձոր, մի ուրիշ տեղ՝ մեծ քանակությամբ չորացրած մրգեր, կողք-կողքի։ Հենց մուտքի մոտից շարված են գինով լի 10—15—20 կավե մեծ կարասներ, որոնցից ամեն մեկն առնը-

վաղն 20 լիտր (=12 ֆունտ) գինի է պարունակում, և այս բոլորն ամբողջ ընտանիքի տրամադրության տակ է։ Ինչ որ ծախելու են, նրանք կատարում են այգում՝ ծառերի տակ, իսկ սա ամբողջովին սեփական օգտագործման համար է։ Ես մի այլ տեղ մանրամասն գրել եմ այն մասին, թե ինչպես նրանք այդ բոլորը անհավատալի չափավորությամբ են գործածում, ոչ թե որևէ օգուտի, այլ միայն նրա համար, որ այս առաքինությունը մեզ մոտ ավելի շատ է գնահատվում, քան շատ ուրիշները։ Յուրաքանչյուր ոք ներս է մտնում, վերցնում է ինչ կամենում է. մինչև իսկ երեխաներն էլ ամենայն ազատությամբ մտնում են այնտեղ։ Ես ո՛չ մեր ընտանիքում և ո՛չ էլ ուրիշների մոտ երբեք չեմ տեսել մի գյուղացու հարբած։

Սա միաժամանակ երիտասարդ ամուսինների ննջասենյակն է, անտարակույս ավելի շատ հրապուրիչ, քան մի գեղեցիկ պալատ, թեև այնտեղ, բացի իրենց անկողնուց և թերևս մի փոքր հայելուց, ոչ մի այլ կահկարասի և զարդարանք չկա։ Տան լավ զգեստներն ու արժեքավոր իրերն ևս սնդուկների մեջ պահվում են այստեղ։ Երջանիկ սիրահարների քնքուշ գրկախառնության ինչպիսի՜ տեսարան, որոնք շատ բան իրենք են պատրաստել և բերել։ Ինչպիսի՜ բուրմունք է քաղցրացնում իրենց շնչով աճող արբեցումը, որն առանց այն էլ մի ամբողջ դրախտ է իր բոլոր երանություններով։ Միայն վարդն է պակասում այստեղ, որպեսզի ամեն ինչ գեղեցիկ ներդաշնակություն կազմի. այն էլ կա, բայց չորացած, այս ու այն կողմ՝ ամանների մեջ։ Անկարելի է նկարագրել, թե մարդ ինչպիսի հաճույք կարող է ստանալ այստեղ։ Իմ հայրն այստեղ ընդունեց իր տան ամենալավ հյուրին, իմ ջերմորեն սիրած բարերար, պարոն պետական խորհրդական Պարրոտին իր բոլոր ուղեկիցներով, թեպետ մենք վերևում նկարագրված սենյակների մեծ մասն ունեինք, բայց դրանց մի մասը պատերազմի ժամանակ ամբողջովին ավերվել էր։ Առանց նրա հետ խոսել կարողանալու, ինձ, որ այժմ նրանց միջև թարգմանի դեր էի կատարում, նա ասաց, երբ հարգարժան հյուրը նրան մխիթարական խոսքեր ուղղեց, թե նա պետք է ուրախ լինի, որ լավ որդի ունի. «Իմ որդին, իմ տունը քոնն են. քո ոտքը բախտավորեց իմ շեմքը։ Ես ձեր բոլորի ծառան եմ, մենք երբեք օտար ազգից այսպիսի հյուրեր չենք տեսել» և այլն։ Եվ ինչպե՜ս հատուցեց այս չնչին բանն այն հարգարժան մարդը, որն ստիպված էր նստել, ուտել և քնել իր սովորություններին բոլորովին հակառակ։ Մի գիշերվա փոխարեն հինգ տարի շարունակ, որպես ուսուցիչ, որպես դաստիարակ նա խնամել և ուսուցանել է ինձ, իմ բիրտ կողմերն ուղղել, ինձ մարդկանց մեջ մտցրել, որոնք, քիչ բացառությամբ, իմ կրթության և իմ վերափոխության հայելին են եղել, ինձ հոգևոր վերածնունդ է տվել. հայրական ձեռքերով սրբել է իմ արցունքները, որոնց պատճառը հարազատներիցս բաժանվելն էր։ Միայն նա կարող էր իմ կյանքի տերը լինել, որովհետև նա, հակառակ իր լուրջ բնավորության, ամենաչընչին իսկ չափով չի վիրավորել իմ զգացումներն ու իմ սիրտը, ինչպես իմ ընկերներից ոմանք, բայց ոչ բոլորը։ Նա արժանի է իմ է՛լ առավել երախտագիտությանը, քան ես կկարողանայի այստեղ արտահայտել և իմ նկատմամբ ցուցաբերած նրա վերաբերմունքը թվարկել։ Ես նրան և նրա հարգարժան սիրասուն ընտանիքը սիրել եմ ինչպես մի երեխա և միևնույն հավատարմությունն ինձ հետ կտանեմ մինչև գերեզման։

ԿԵՆՑԱՂ

Մենք որոշ չափով ծանոթացանք իմ հայրենակիցների բնակարաններին, որոնք զուրկ են այն հարմարություններից, որ կան Եվրոպայում։ Այժմ տեսնենք, թե ինչպես են նրանք ապրում այդ բնակարաններում։ Մենք տեսանք, որ թեև դրանք կարգին պալատներ չեն, այնուամենայնիվ, բոլորովին էլ խղճուկ խրճիթներ չեն, որպիսիք կարելի է հանդիպել մինչև իսկ Եվրոպայի գյուղացիների մոտ, ամենուրեք, ուր ես եղել եմ։ Ընդարձակությունը, առանձին սենյակների անջատվածությունը նվազ պատիվ չի բերում նրանց ճաշակին, թեև նրանք դեռևս կուլտուրա չեն ճանաչում, առանձնապես ոչինչ չեն տեսել, քանի որ իրենց քաղաքներն էլ ավելի լավ չեն կառուցված։ Իսկ ինչպիսի տեսք կունենան այդպիսիք, երբ նրանք այնքան առաջադիմեն, որ դրան ևս հաղորդակից դառնան։

Ինչ որ ես բնավ չպիտի ցանկանայի, այն է, որ նրանք իրենց բնակարանների գեղեցկացման հետ չվատթարացնեին իրենց բարքերը. որովհետև շուտով կտեսնենք, թե ինչպիսի առաքինություններ են տիրում այնտեղ՝ այդ անբարեհամբույր տներում։ Ես մաքուր խղճով խոսք եմ տալիս՝ չհորինել ոչինչ, ինչ որ ճիշտ չէ։ Համայնականն ու ընդհանուրը, մասնավորապես այն, ինչ վերաբերում է նրանց կրոնասիրությանը, արտաքին հարաբերություններին ու բարքերին, ես հետագայում մանրամասն կնկարագրեմ։ Այստեղ կխոսվի այն մասին, թե ինչպիսին է նրանց ընտանեկան կյանքը, որը մի օտարական բնավ չի կարող իմանալ և չի իմանա, որովհետև իզուր չեն կառուցված այդ սենյակները։ Տղամարդը կարող է մի կին միայն ունենալ՝ ըստ քրիստոնեական օրենքների։ Եթե նրանցից մեկնումեկը մեռնում է, ապա կենդանի մնացածն առնում է մի ուրիշի։ Քանի երեխա էլ ունենան, միայն աղջիկներն են հեռանում տնից, տղաները, դրան հակառակ, մնում են այնտեղ։ Առաջինների բաժանվելը հաջորդում է նրանց հարսանիքին, որը

կնկարագրեմ հետագայում։ Տղաներն եթե տասն էլ լինեն, մի բան որ հազվադեպ չէ,— ինչպես նաև դեռևս չամուսնացած աղջիկները, պարտավոր են ծնողներից ամեն մեկին անպայմանորեն հնազանդվել։ Նա <ծնողը> կարող է իր ցանկացածի պես վարվել նրանց հետ. նրանք մինչև իսկ խոսքով չպետք է վիրավորեն նրա իրավունքը։ Նա կարող է այդպիսի ըմբոստին տանից դուրս անել, և եթե նմանին մինչև իսկ ազգականն էլ ապաստարան տա, այդպիսին տան թշնամի կհամարվի։ Ազգականն ավելի շուտ պետք է աշխատի հաշտեցնել նրանց, ինչ որ և հաճախ կատարվում է։ Նա բոլոր հարևանների ծիծաղի առարկան է դառնում և պետք է թաքնվի, եթե փոքր ինչ ամոթի զգացում ունի։ Մինչև քսան տարեկան հասակը ամեն մի արու զավակ պետք է կին ունենա։ Նրանք ծնում են երեխաներ և հաճախ շատ։ Քանի դեռ մեծերից մեկն ապրում է, բոլորը իրենց երեխաներով և կանանցով հանդերձ նրա հպատակներն են։ Լինի այրը թե կինը։ Հարսները, քանի դեռ շատ երեխաների մայր չեն դարձել և տարիքով էլ բավականին չեն հառաջացել, իրենց ամուսնու ծնողների հետ երբեք բառերով չեն խոսում, այլ՝ ժեստերով, որի մեջ նրանք արտակարգ վարպետ են։ Մեծերն էլ այս լեզուն շատ լավ են հասկանում։ Առավել տարեց եղբայրների կանայք էլ այս իրավունքը պահանջում են ավելի ջահելներից, մի բան, որ կատարվում է առանց բռնության, քանի որ դա մեկընդմիշտ սովորույթ է։ Եթե նրանք հասել են դրան և ապրել այդ ժամանակը, ապա նվերներով և խոստումներով քանդվում է խոսկապը, ինչ որ շատ երկար է տևում, և նրանք ոչ թե անմիջապես մեծերի, այլ ընտանիքի մյուս անդամների ներկայությամբ ժամանակ առ ժամանակ լսելի են դարձնում իրենց ձայնը։ Այս ազատության համար նրանք մեծ անձնվիրությամբ և երախտագիտությամբ համբուրում են մեծերի ձեռքը և երջանիկ են, որ տանն արդեն որպես հասուն կանայք են դիտվում։ Ծերունիները հաճախ թանկարժեք նվերներ են անում նրանց, իրենց ձեռքով իջեցնում են այն շորը, որ մինչև այդ ծածկած էր պահում նրանց բերանները։ Այդ մասին ես կխոսեմ հետագայում. դա հանդիսանում է նրանց ազատության նշանը։ Ծերունիները համբուրում են նրանց ճակատը և հորդորում՝ այդ ազատությունը ո՛չ իրենց և ո՛չ էլ ուրիշների հանդեպ չչարաշահել, մի բան, որ նրանք արտասուքն աչքերին խոստանում են։ Նման դեպքում նրանք սովորաբար գլխով են անում, որ նշանակում է, թե կկատարեն այն բոլորը, ինչ իրենց պարտականությունն է։ Կարող եք երևակայել նրանց երջանկությունն այդ պահին։ Նրանք միայն այժմ են գիտակցում իրենց հասունությունը, եթե մինչև իսկ արդեն 30—40 տարեկան էլ լինեն։ Մինչև այս ծիսակատարությունը ծերունիները պետք է զգույշ լինեն և երբ, ասենք, դրսում կամ որևէ այլ վայրում նրանց խոսելիս

լսեն և կամ նրանց ձայնն իրենց ականջը հասնի, և ամենափոքր չափով իսկ նկատել չտան այդ, որովհետև դա հարսների համար կործանարար է, և այնուհետև ամոթի զգացումից նրանք չեն երևա նրանց աչքին։ Դրա համար էլ նման դեպքերում ծերունիները սովորաբար հանդարտ և աննկատ հեռանում են, կամ էլ մեկին տուն են ուղարկում հայտնելու, իբր իրենք հեռու տեղից են գալիս։ Երեխան, որ այս լուրը բերում է, շատ խիստ կպատժվի, եթե այդ մասին որևէ բան հասկացնի։ Այս արարողությունից հետո, կամ ավելի ուշ, նրանք սովորաբար կատակի ձևով հիշեցնում են և այդ և զվարճանում, մինչդեռ սրանք՝ ազդված, շառագունած և վարանոտ տեսք են ընդունում։ Ծնողները հարսներին աղջիկ են անվանում, քանի նրանք դեռ ջահել են, իսկ տոհմի անունով, երբ տարեց են, այն էլ հետևյալ կերպ. «Այս ինչի թոռ», բայց ոչ երբեք նրանց մկրտության անունով։ Հարսներին տանից երբեք դուրս չեն անում, քանի որ, ինչպես տեսանք, նրանք չեն կարող կամ չեն ուզում որևէ բան անել, ինչ կարող է իրենց նկատմամբ ծերունիների բարկությունը շարժել։ Միայն թե որդիները այնպիսի խիստ հսկողության տակ են, որ հազվադեպ կարող են իրար հետ ընդհարվել։ Նման դեպքերում անշուշտ ընտանիքի մյուս անդամներն օգնության են հասնում, որի մասին ծերունիներն այնքան ժամանակ ոչինչ չպետք է իմանան, մինչև որ որդին իսկապես նրանց ոտքը չընկնի և ներողություն չխնդրի. ընդ որում նրանց երկուսին միմյանց մոտ են բերում և արտասվելով, թե նման բան այլևս բնավ չեն կատարի, համբուրում են ծերունիների ձեռքը։ Խոսքն ամբողջովին որդուն ուղղելով, նա կրկին ու կրկին ասում է. «Մի՞թե իզուր եմ քեզ մինչև այս հասակը հասցրել, որ դու մեր ծերությունը դառնացնես։ Իզո՞ւր ենք քեզ դարձրել այսպիսի հրեշտակ աղջկա ամուսին, այսքան երեխաների հայր։ Մի՞թե սա է քո երախտագիտությունը. չգիտե՞ս, որ ամեն րոպե կարող եմ քեզ հետ ուզածիս պես վարվել։ Ո՛րդի,— ասում են նրանք արցունքներով,— այդ բոլորը մեզ համար չէ, այլ քեզ համար. մեր մի ոտն արդեն գերեզմանում է, ինչ դու մեզ անես, նույնը քո երեխաներից վշտով կստանաս» և այլն։

Ես կարող էի հենց միայն նրանց այս գեղեցիկ, վսեմ խոսքերով, որ անկեղծ սրտի ապացույցներ են, բազմաթիվ թերթեր լցնել։ Նրանց հայրական զգացումները նման պահերին գրգռված են։ Նրանք այնքան տխուր են, այնպես վատ տրամադրված, որ ոչ ոք չի կարող նրանց խոսեցնել, եթե ոչ՝ մի օտար մարդ։ Եթե վերջինս ծանոթ է, ապա նրանք իրենց գաղտնիքները չեն թաքցնում և անկեղծ կերպով ասում են իրենց վշտի պատճառը. «Աստված իր օրհնությունն իմ տանից վերցրել է, մխիթարության փոխարեն ցավ ու վիշտ տվել։ Նվա՞ծ բան է, որ որդին իր հոր հանդեպ անհնազանդ լինի.

իմ տան վրա անեծք կա» և այլն,— ասում են նրանք մի այնպիսի հոգեկան պոռթկումով, որ ուշադրության է հասցնում։ Բարի ծանոթը հաճախ ինքն է միջնորդում, և այն ժամանակ, երբ նա նրան հանդստացնում է, մեղավորին կանչում են նախ՝ դռան առաջ և ապա՝ տուն։ Վերջինս առանց մի բառ արտասանելու ծունկի է գալիս։ Ծանոթը չի հեռանում տանից այնքան ժամանակ, մինչև որ նա որդուն խիստ չհանդիմանի, ծանոթի ներկայությամբ նրա բոլոր հանցանքները չասի, որին միջնորդը նույնպես հավանություն է տալիս և ասում, որ ինքն էլ երեխա, ջահել է եղել, բայց ծնողների հանդեպ երբեք նման հանցանքներ չի գործել։ Գործը վերջանում է մի բաժակ գինով, մրգերով կամ այլ ուտելիքներով։ Բայց ի՞նչ հանցանքներ են դրանք։

Կամ այն է, որ որդին վիճել է նրա հետ, կամ՝ կնոջ հետ, ինչպես հարկն է, չի վարվել և կամ թե՝ տան անդամներից մեկին ծեծել ու խիստ վիրավորել է։ Դրան հակառակ, նրանք հերոսներ են, երբ բռնավորին, գողին հոգին են հանձնում, որի մասին արդեն ես որոշ բան գրել եմ։

Երբ ութ տարեկան երեխա էի, մի անգամ ծեծեցի իմ փոքր եղբայրներից մեկին. հայրս իմացավ այդ, և մինչ ես պարտեզում կանգնած էի, նա բոլորովին հանգիստ շարժվեց դեպի ինձ, ու ես նրա ձեռքին քարեր տեսա։ Նա ինձ իր մոտ կանչեց, սակայն սիրագորով մայրս, որ այլևս չէր համարձակվում նրան խնդրել, ձեռքերով և գլխով նշաններ էր անում, որոնք միայն սարսափ էին արտահայտում և հարկադրում ինձ փախչել։ Ես այդ արի անմիջապես, այն սարսափելի քարերը մի անգամից թռան իմ ետևից, և նա, չնայած իր ծերությանն, ինձ վաղուց բռնած կլիներ, եթե կրկին ու կրկին չկռանար ու ինձ վրա շպրտելու համար քարեր չվերցներ։ Ամբողջ գիշերն ես դրսում մնացի և նրա երեսը չտեսա այնքան ժամանակ, մինչև որ ուրիշները նրան չհանգստացրին, և ինքը դուրս չեկավ ինձ փնտրելու, խնայելով իմ անչափահասությունը և վախենալով, որ կարող եմ ավազակների ձեռքն ընկնել։ Ես երբեք չեմ մոռանա մանկական այն գրկախառնումը, երբ նա իմ վիզն ընկած, արտասուքների մեջ և սրտի բաբախումով այս խոսքերն էր միայն կրկնում. «Ջավակս, քո պատճառով որդեսպան պիտի լինեի. խոստացի՛ր, որ այսուհետև իմ զայրույթը երբեք չես շարժի» և այլն։ Երբեմն այդ անշուշտ շատ անցանկալի հետևանքներ է ունենում։

Տանը ոչ մի բան բաժանված չէ. ամեն ինչ ընդհանուր է։ Ապրուստ, տուն. ամեն բան, որ ձեռք է բերվում ու ծախսվում, գտնվում է ծերունիների ձեռքում։ Նրանք անում են ամեն ինչ. հագուստներ են գնում և մյուս պետքերը հոգում. հյուրեր ընդունելու և ճանապարհ դնելու իրավունքը

նրանցն է. իսկ եթե մենք ուզենանք այդ անել, ապա նախ պետք է հարցնենք նրանց, ինչ որ և հազվադեպ է մերժվում։

Տան առավել տարեց անդամները և նրանց հետ ավելի երիտասարդներն՝ իրենց ջահել կանանցով, նստում են մի կողմում, դեմքերը մեծ մասամբ հակառակ կողմը դարձրած, որտեղ նստում են ծերունիները։ Տատը մեծ մասամբ կանգնում է ծերունու դիմաց, որպեսզի վերջինս չտեսնի, թե ինչպես են ուտում մյուսները, չնայած մեզ մոտ մեկընդմիշտ կանոն է, որ երիտասարդ կանայք և աղջիկներն ուտելու ժամանակ մի ձեռքը միշտ պահում են բերաններին, անկախ այն բանից՝ այնտեղ է նա, թե ոչ։ Նրանց խոսակցությունն այնքան ցածր է, այնպես գաղտնի, որ մինչև իսկ այդ տարածության վրա ոչինչ չի կարելի լսել, բացի փսփսոցից, որի ժամանակ նրանք մեծ մասամբ իրենց ականջներն են օգտագործում, անընդհատ մեկը մյուսին դառնում և այս ձևով էլ պատասխանում։ Բնական է, որ երեխաներն այս բոլորից բացառություն են կազմում. նրանք մերթ այստեղ են, մերթ այնտեղ, որտեղ իրենց ամենից ավելի հաճելի է։ Նրանք հաճախ տատի ու պապի ծնկներին են. վերջիններս իրենց ձեռքով են կերակրում նրանց. նրանք այդպիսով չեն ուզում տան ուրախությունը կտրել, այլ ամեն ինչ աշխատում են չափավոր պահել, որովհետև նրանք հաճախ խաղում են մեզ հետ։ Ծերունիների մահը բոլոր տանեցիների համար սուգ է։ Տղաներն ու թոռները սգում են անմխիթար, մինչև իսկ այդ ծիսակատարությունից հետո։ Սրտառուչ է, թե ինչպես հասակն առած որդիներն, արդեն 50—60 տարեկան, բազմաթիվ երեխաների հայր, բյուր արցունքներով անպաճույճ, բայց երախտագետ խոսքեր են արտասանում. «Մեր տան սյուները քանդվեցին, ո՞վ է մեզ կառավարելու և սանձահարելու, թանկագին ծնողներ։ Այժմ մենք նման ենք մի տակառի, որի կափարիչը չկա և, հետևապես, ամեն կեղտոտություն անարգել ներս է լցվում»։ Մեկը նրա երեսն է համբուրում, մյուսը նրա ոտքը։ Ա՜խ, ես բառեր չեմ գտնում արտահայտելու համար այն ամենը, ինչ տեղի է ունենում, երբ դիակը դուրս են բերում։ Նրանք թավալում են գետնին, ոմանք դագաղը կրկին ետ են քաշում, ինչ որ անշուշտ մի օտարի համար տհաճ կհնչի, սակայն այս բոլորը նրանց թելադրում է այն նվիրվածությունը, որով նրանք դաստիարակվել են։ Ամենևին էլ հազվադեպ չէ, որ նրանք հարյուր տարուց ավելի են ապրում։ Շատերը ոչ միայն թոռների տեր լինելուց հետո էլ դեռ երկար ապրում են, այլև նույնիսկ նրանց ամուսնությունն են տեսնում, նրանց հարսանիքի օրերին ամեն բանի մասնակցում, տեսնում են մինչև իսկ նրանց երեխաներին և այնպես ամրակազմ են և ուժեղ, որ դժվար է պատկերացնել։ Ջի են նստում և ուրիշ շատ բաներ անում, որ միայն երիտասարդ հասակում է հնարավոր։

Ես կարող էի այդ կարգի բազմաթիվ օրինակներ բերել, նրանց անուններն ու տեղն էլ հիշատակել, եթե միայն այստեղ տեղը լիներ այդ որոշ չափով նկարագրելու համար։

Որբացածները, բացի այդ սգից, այլևս ուրիշ հոգսեր չունեն։ Խոսք իսկ անգամ չի լինում այն մասին, թե ի՞նչ պետք է անել։ Ավագ եղբայրը միևնույն պատվով, միևնույն անսահման իշխանությամբ բռնում է նրա տեղը, բայց միայն անձամբ՝ ինքը։ Իր եղբայրների բոլոր երեխաները նրան հայր են անվանում, իսկ իրենց սեփական հայրերին այլ անունով են կոչում։ Եղբայրները նրան միայն մկրտության անունով են կոչում, իսկ ինքը նրանց՝ իրենց անուններով։ Նրա կնոջը կոչում են **Մեծ Նան** և բացի տնտեսությունից, որը նա է վարում, ուրիշ իրավունքներ չունի։ Իրենց իսկական մորն անվանում են **Փոքր Նան**, և նրանց բոլոր երեխաներն, առանց տարբերության, քույր ու եղբայր են։ Ավագ որդին միևնույն իշխանությունն ունի, ինչ որ իր նախորդը և երբ այստեղ բաժանում տեղի ունենա, ապա դա մեծ մասամբ կվերաբերի բնակարանը փոխելուն և միայն հազվադեպ իրենց հարաբերություններին։ Իսկական բաժանումը տեղի է ունենում առավել երիտասարդ եղբայրների հեղինակության բարձրացման ժամանակ, ընդ որում ունեցվածքն ևս բաժանվում է միմյանց միջև, բայց հաճախ միշտ միասին են։ Ես ստիպված եմ շատ բան բաց թողնել և վախենում եմ, որ այդ կարող է իմ ընթերցողներին անհավանական թվալ, թեպետ մեր օրերում նրանց գտնում ենք այնպես, ինչպես նկարագրեցինք. անշուշտ հենց միայն նրանց թիվը հաճախ 10—40—50 <հոգու> է հասնում։ Իմ հայրը միայն մի եղբայր ունի և երկուսն էլ շատ երեխաներ են թաղել, սակայն չնայած դրան մեր ընտանիքը տասներկու հոգի է և ջահելներն էլ՝ թվով հինգ, դեռ չեն ամուսնացած։ Գոնե ես այդպես թողի նրանց։

Որ նման համակեցությունը եվրոպական ճաշակին նույնպես խորթ չէ, ես այդ, ի մեծ հաճույս ինձ, կարդացել եմ Ժոբեր անունով մի ֆրանսիացի դեսպանի մոտ, որը 1805 թվականին, որպես գործերի հավատարմատար Պարսկաստան է մեկնել։ Նա բախտ է ունեցել Բայազետում մի հայ ընտանիքի հետ շփվելու, թեև միայն մի գիշեր։ Իսկ ի՞նչ է տեսել նա, որի մասին խոսում է այդքան սրտառուչ։ Ոչի՛նչ, կասեի ես։ Ես հնարավորություն չունեմ նրա սեփական խոսքերն այստեղ մեջ բերել, որովհետև տառացիորեն թղթի վրա տեղ չունեմ։ Այս կենցաղը տարածված է մեզ շրջակա բոլոր գավառներում. մինչև իսկ քաղաքներում դա այդպես է։

Ամառը տունը բոլորովին բաց է. իրերը և տան եղած-չեղածը այդպես մնում են. ոչ տան դուռը և ոչ էլ դարբասները բանալի չունեն, բայց ամենքն էլ ապահով են. որ հարևանները մենակ էլ ներս մտնեն՝ ոչ մի բանի ձեռք

չեն տա։ Եթե նրանց որևէ բան անհրաժեշտ լինի՝ վերցնում են և հետո էլ ետ բերում ու հայտնում, թե երբ են վերցրել։ Տարվա այս եղանակին ընտանիքները ցերեկն այգում են լինում, տղամարդիկ էլ իրենց աշխատանքին գնացած, և միայն գիշերներն են գալիս տուն և քնում կտուրներին։

Թե ինչպես են առանձին ընտանիքներն ապրում, այդ կարելի է դիտել միայն ձմռանը։ Այն թոնիրը, որ մենք որպես փուռ նկարագրեցինք, կարելի է տեսնել միայն այն սենյակում, որ մեզ հայտնի դարձավ նաև **հացատուն** անունով։ Թոնիրը դոնվում է դռնից ոչ հեռու և պաշտպանված է մի սաժենից ոչ ավելի երկար ու բարձր կիսապատով, առաջնապատից դեպի տան պատի մեջտեղը, որպեսզի ցուրտն անմիջականորեն ներս չմտնի։ Ամեն օր վաղ առավոտյան վառում են այն փայտով կամ աթարով, որը մեզ մոտ գյուղերում ամենուրեք կարևոր ծառայություն է մատուցում և առանց դրան հնարավոր չէ հաց թխել։ Այստեղ ծխի մեջ կարելի է խեղդվել։ Բոլոր կերակուրները, որ անհրաժեշտ են այդ օրվա համար, եփում են նրա վրա։ Դրա համար գոյություն ունի երկաթե մի ձող, բավականին հաստ և այնքան երկար, որ թոնրի մի ծայրից մյուսն է հասնում. միաժամանակ նաև մի փոքր կողմնակի ձող, որը կարելի է ցանկացած չափով աջ ու ձախ շարժել։ Ցերեկվա կերակուրները եփում են լրիվ, երեկոյանը՝ կիսով չափ, և ամանների վրա կափարիչ դնելով՝ թոնիր են իջեցնում, ժամանակ առ ժամանակ ջուր ավելացնում. երեկոյան դուրս են հանում և ուտում։ Երբ կրակը նստում է, տունն ավլում են, այն էլ գրեթե ամեն օր։ Թոնիրն էլ կափարիչ ունի, միևնույն կավից պատրաստված և նրա բացվածքի շրջագծի մեծությամբ։ Կափարիչը վերևից ունկեր ունի, որոնցով կարելի է այն ետ ու առաջ քաշել։ Դրանով կիսով չափ կամ ամբողջովին ծածկում են թոնիրը և նրա վրա փայտյա մի բան դնում, որը պատրաստված է սեղանի ձևով։ Դա քառակուսի ձև ունի, որի կողերը մի քանի՝ 3—4—5 ոտնաչափ երկարություն ունեն. բարձրությունը դժվար թե մի ոտնաչափի հասնի։ Սա էլ երկու-երեք գորգերով ծածկում են այնպես, որ դրանց ծայրերը հատակի վրա երկար ձգվեն, որպեսզի տաքությունը ներսը մնա։ Թոնրի շուրջ փոքր խսիրների վրա գորգեր են գցված. խսիրները շատ բարակ են և չոր։ Դրանք պատրաստում են եղեգնից, որ մեզ մոտ աճում է ճահճային վայրերում, մասնավորապես Արարատից ոչ հեռու։ Դրանք մոտ մի սաժեն երկարություն և 2—3 ոտնաչափ լայնություն ունեն։ Մի քանիսը սակայն շատ երկար և, միաժամանակ, սովորականից ավելի նեղ են լինում։ Այդպիսիք ընդհանրապես ամբողջ երկրում, մինչև իսկ քաղաքում, կարևոր ծառայություն են մատուցում։ Այն բոլոր տներում, որտեղ հատակը տախտակապատ չէ, օգտագործում են դրանք և նրանց վրա գորգեր փռում։

Ընտանիքի բոլոր անդամները նստում են այս սեղանի շուրջը, որ կոչվում է ֆուրսի. ոտքերը, հաճախ նաև ձեռքերը, երկարում են ներս և այս ձևով տաքանում։ Ընտանիքի հայրն իր հատուկ տեղն ունի, որ հաճախ դատարկ է մնում և կամ, եթե մեկը նստած է, պետք է վեր կենա, հենց որ նա երևա։ Ընդհանրապես բոլորն էլ իրենց որոշակի տեղերն ունեն։ Միայն երեխաներն են իրենց տեղերը փոխում։ Առավոտ և երեկո ճաշում են այս սեղանման բանի վրա։ Վերջինիս վրա փռում են մի մաքուր սփռոց, հացն ու բոլոր ուտելիքները դնում նրա վրա, և տանտիկինը դրանցից բաժանում է բոլորին։ Հազվադեպ չէ, երբ հայր ու որդի, մայր ու աղջիկ կամ քույր ու եղբայրներ միասին, մեկ կամ միևնույն ամանից են ուտում, մեծ մասամբ ձեռքերով, ընդ որում ոտքերը պատում են միևնույն դիրքում, իսկ շատերը իրար են խփում կամ մեկը մյուսի վրա դնում, երեխաները ծածուկ միմյանց հետ քիչ կատակներ չեն անում։ Նրանք հաճախ անզգուշությունից խփում են իրենց ծնողների ոտքերին և ամոթահար կրկին ետ քաշում։ Միայն ազգականներն ու ծանոթ հյուրերն են ընդունվում այս սենյակում։

Ընդունված չէ, որ եթե այդպիսի մեկը ներս մտնի, որևէ մեկը վեր կենա. մինչև իսկ երեխաներն այդ չեն անում։ Եկողը ողջունում է՝ գլխարկը գլխին, իսկ նրանք փոխադարձ ողջույնով պատասխանում են, երկու կողմն էլ բառերով և ոչ որևէ այլ նշանով։ Նա նստում է նրանց կողքին և տեղավորվում ճիշտ այնպես, ինչպես այդ արել են տանեցիները։ Այդպիսի ժամանակ ամեն ինչի մասին խոսում են, ծիծաղում և ուտում։ Նման հյուրը շատ ավելի բախտավոր է ձմռան երեկոներին, որովհետև այդ ժամանակ, բացի սովորական կերակուրներից, ուտում են նաև շատ մրգեր և խմում գինի։ Նրանց բարքերի մանրամասնությունների մասին, սակայն, մի այլ տեղ։

Օտարն այս տունը պետք է բոլորովին պատահաբար մտնի, և նրան երկար էլ չեն թողնում այդտեղ. նրան տեղավորում են հիշատակված հյուրասենյակում։ Հիմա պետք է հիշատակենք տան կահկարասիներն էլ, որ միայն այստեղ կարելի է տեսնել և ուրիշ ոչ մի տեղ։ Հենց դռան մոտ, կամ դրանից մի փոքր հեռու, տեսնում ենք մի մեծ, երկարավուն քար և նրա վրա կավից շինած երկու-երեք կուլա՝ ջրով լցված։ Դրանք ավելի շուտ կանոնավոր ձև ունեն, քան այդ պատկերում է իմ գծագիրը և մի կողմի վրա մի բռնակ (a) ունեն։ Դրանց կողքին մի փոքր շիշ (b) կա՝ համեմատաբար ավելի փոքր, քան երկու գծագրերը և շատ մաքուր պատրաստած։ Դրանով մեծից ջուր են առնում և խմում։ Քարի վրա կուլաների համար կլոր և բավական խոր տեղեր են փորված, որտեղ դրվում են դրանք։ Սենյակի մի անկյունում կարելի է տեսնել դիզած ցորեն, որ նրանց տարեկան պաշարն է։ Սենյակի

մյուս կողմերն էլ դրանով լիքը շատ պարկեր են դարսված։ Այստեղ կարելի է նաև ընկույզի կույտեր տեսնել, բայց ոչ միշտ։ Ջորս սյուներից մեկի և կողքի պատի միջև, սովորաբար աջ կողմը, որտեղ և նստում են, դրված են տախտակներ, որոնց վրա դարսված է մի քանի ձեռք անկողին։ Դրանք գիշերն օգտագործում են, իսկ առավոտ շատ վաղ կրկին այնտեղ դնում ու ամբողջ օրն էլ մնում են այդտեղ։ Սյուներից ու պատերից կախված են մաղեր, հրացաններ, դանակներ, գերանդիներ ու տնային այլ գործիքներ։ Այս ու այն կողմ էլ՝ ամաններ, որոնցում խմոր են պատրաստում և հունցում. այդտեղ է նաև գրդնակը։ Ընդհանրապես ուրիշ բան չի լինում այնտեղ, ուր ուտելիք, մանավանդ, հեղուկ բան կա։ Մեծ տախտակները տան հատակից մի փոքր ավելի բարձր են դրված, որտեղ շերտ-շերտ իրար վրա դարսված են բարակ հացերը և չեն երևում, որովհետև ծածկված են։ Անկողինները նույնպես ծածկված են մի մեծ շորով։ Այդտեղ մի ճախարակ էլ կա, որ առանց գծագրի նկարագրելն անօգուտ է։ Այստեղ միայն մեծերն են քնում՝ իրենց մեծ ու փոքր երեխաների ու նրանց կանանց հետ, թվով հաճախ 10—15 մարդ, կամ ավելի շատ։

Ես հետագայում կխոսեմ, թե որքան է այդ պատշաճ։ Նրանք անկողինները գցում են կողք-կողքի, հավասար շարքով, թոնրի վրա եղած սեղանի շուրջը, որը գիշերն էլ թողնում են։ Խսիրներն ու գորգերը մնում են այնպես, ինչպես ցերեկն էին։ Դոշակը երկարավուն, շատ խիտ լցված ու կարված բամբակյա մի պարկ է։ Տեղ-տեղ այն լցնում են նաև բրդով, բայց ձևը նույնն է, թեև շատ ավելի լայն ու երկար և գույնզգույն, հաճախ նաև մետաքսյա կտորով երեսապատված։ Վերմակի երեսը ներքնակից տարբերվում է նրանով, որ առաջինը բազմագույն է և ծաղիկներով նախշած, ինչպես այդպիսիք պատրաստի վիճակում Եվրոպայում ես գործածում են։ Ներքնակը հասարակ է, բայց միշտ գունավոր, այն էլ մեծ մասամբ կարմիր։ Բարձն ընդհանրապես շատ մեծ է և լցված՝ բրդով, բամբակով կամ փետուրով։ Անկողիններն, ինչպես ասացինք, փռում են, երբ երեկոն արդեն վաղուց անցել է (ճշգրիտ ժամանակը չեմ կարող նշել, մոտավորապես գիշերվա տասը), շարքով, կողք-կողքի։ Բոլորի ոտքերն ամեն կողմից ուղղվում են դեպի քուրսին և հաճախ նրա տակ. գլուխները՝ տան բոլոր կողմերը։ Այստեղ գիշերում են մեկ, երկու, երեք, երբեմն էլ ավելի՝ միայն ամուսիններ։ Յուրաքանչյուր զույգ ունի մեկ և միևնույն անկողինն ու բարձը։ Մոր աջ կողմը գտնվում է անչափահաս երեխայի օրորոցը. վերջինս մոտ երկու ոտնաչափ բարձրությամբ և կես ոտնաչափ լայնությամբ մի արկղ է, որի տակը դատարկ է, չորս կողմը ծածկված է և ընդհուպ մինչև հատակը չի հասնում։ Երկու աղեղնաձև փայտեր ծառայում են որպես ոտք, մեկը գլխի, իսկ մյուսը՝ ոտքերի

կողմը։ Այդ փայտերը օրորոցն այնպես են ընդգրկում, որ փափուկ, կոբացրած մասը հասնում է հատակին, և այսպիսով շարժելը մեծ չափով հեշտանում է։ Հարթ արկղի վրա լինում է երեխայի փոքրիկ անկողինը, որ բաղկացած է բազմաթիվ կտորներից։ Ինչպես գլխի, այնպես էլ ոտքերի կողմը փայտյա երկու կտորներ կան՝ մի քանի մատ լայնությամբ և իսկական աղեղի նման բավական նուրբ ու հարթ կորացրած և հենց արկղին ամրացված։ Դրանք միևնույն կորությունն ու հաստությունն ունեն։ Երկուսը միմյանց հետ միացած են մի փոքր լծակով, որն անցնում է նրա մեջտեղով և բոլորովին հորիզոնական, մոտ մեկ ոտնաչափ բարձր հանգչում է նրա վրա։ Այս ամբողջը շինված է բավականին նպատակահարմար ձևով, մեծ մասամբ մաքուր ու շատ նախշերով։ Անկողնի ողջ սարքը, բացի վերմակից, կլոր ծակված է, և մի քանի գծաչափ տրամագծով փայտյա մի խողովակ է անցնում, որի նպատակը, առանց իմ ասելու կարիքը լինելու, ամեն մեկի համար պարզ է։ Երեխային շորերի և այլ բաների մեջ փաթաթելով, պառկեցնում են, և այն էլ այնպես, որ ձեռքերը մարմնին զուգահեռ լինեն։ Արկղի մի կողմում կարված են երկու բավականին լայն կտորներ։ Հենց որ փոքրիկին արդեն ծածկում են, դրանք քաշում են նրա մարմնին, շատ ամուր փաթաթում և այն կողմից, որտեղ մայրն է սովորաբար նստում, արկղի տակով տալիս են հակառակ կողմը և երեխայի վրայով շեղակի բերում ու ամուր կապում են ձողին։ Սա այնպիսի մի գործողություն է, որ երեխայի քնքուշ մարմնի համար պետք է որ շատ վնասակար լինի, մանավանդ, եթե նկատի առնենք, որ այդ վիճակն այսպես շարունակվում է առնվազն երկու տարի։ Ձողի վրա կախված են շատ խաղալիքներ, որոնցով սիրուն փոքրիկը մինչև իսկ իր անհանդարտ դրության մեջ շատ հանգստանում է, հետո երեխայի ձեռքերն արձակում են, և նա սկսում է խաղալ, հաճախ նաև այն ժամանակ, երբ մայրը մոտը չէ։ Երեխային խնամելը, մինչև իսկ հարուստ ընտանիքներում, բացառապես մոր պարտականությունն է, եթե միայն ֆիզիկական որևէ թուլություն այդ չի արգելում։ Մայրն ավելի քան երկու տարի կերակրում է երեխային միայն իր կրծքով։ Երեխային սովորաբար բավական ուշ են սկսում ուտելիքների վարժեցնել։ Մայրերը միայն իրենց ուժեղ մարմնական կազմին են պարտական, որ կարողանում են այդքան երկար ժամանակ դիմանալ այդ ծանրության։ Թե ինչպիսի բարերար ազդեցություն է գործում դա ծծկեր մանկան վրա, ինչպիսի սեր է նա տածում այդպես հավատարիմ խնամողի հանդեպ, ոչ ոք գուցե չի կարող պատկերացնել, ով այս կերպ չի խնամվել։ Երեխան ոչ միայն այն դեպքում, երբ մեկն իրեն վշտացնում է, դիմում է միայն մոր օգնության, այլև այն ժամանակ, երբ այդ անողը հենց ինքը՝ մայրն է։ Շատերը կարող են պնդել,

որ իրենք էլ հարգում ու գնահատում են մայրական սերը, սակայն իմ անձնական փորձը մեկից ավելի անգամ ինձ ցույց է տվել տարբերությունը, որ այն սերը, այն քնքշությունն ու նվիրվածությունը, որ ես մայրերի հանդեպ ցուցաբերել եմ, մի շարք սառնարյուն մարդկանց մոտ ոչ միայն համակրանք չի գտել, այլև որպես դյուրազգացություն՝ ծաղրվել է։ Հիրավի սխալանք բնության օրենքի դեմ։ Օրորոցի երգերը, հավատարիմ քնքուշ մոր զողտրիկ ձայնը, որի ներքո անմեղ արարածը մոր գրկում ցերեկը քաղցր ննջում է և որը նրան քնի մեջ էլ հետևում է ու նրան հանդարտեցնում, նրա մաքուր սրտին այնպիսի զգացումներ է շշնչում, որոնք ես երկրային ամեն ինչից բարձր եմ գնահատում ու հարգում ամենայն անգամ, երբ նրա հեղինակն, ինչպես մի պահապան հրեշտակ, երևում է ինձ։ Իսկ լինո՞ւմ է պահ, որ այդ տեղի չունենա։ Երկրագնդի ամենադժբախտ արարածը կլինեի, եթե դա այդպես լիներ։

Այդ թանկագին օրորոցը, որ ինձ այսքան հեռու տարավ, բոլորին կարելի է հանձնարարել, եթե միայն արկղն այնպես պատրաստվի, որ երեխան նրա մեջ ապահով լինի և վայր չընկնի։ Այնուհետև կարելի է նաև օրորոցի ձողի վրա մի բարակ շոր փռել, որը մանկիկին չխանգարի ազատ շնչել, բայց և պաշտպանի նրան ամեն տեսակ միջատներից և այլ դեպքերից, ինչպես ես հաճախ իմացել եմ։ Իսկ ինչ վերաբերում է խաղալիքներին, դրանք երեխային զվարճացնող միջոցներ են, որոնց հետ նա ժամերով խաղում է առանց լացի ու այլ պատճառներով մորը խանգարելու։ Վերջիններն ի միջի այլոց միայն այն ժամանակ են առաջ գալիս, երբ երեխան քաղցած է։ Բոլոր մայրերին խորհուրդ կտամ անել այդ. դրա շնորհիվ նա մեծ թեթևացում կզգա մանավանդ այն դեպքում, երբ ի վիճակի չէ տնային ծառայող պահել։ Այս փորձը կարելի է կատարել մինչև իսկ այն սովորական օրորոցների վրա, որ ես տեսել եմ Եվրոպայում։ Դրա համար անհրաժեշտ են միայն արդեն հիշատակված երկու աղեղները և ձողը։ Մեզ մոտ, որ մայրը հաճախ երկար ժամանակ լինում է տանից դուրս, ծծկեր երեխային բոլորովին իր բախտին է թողնում և վստահ է, որ երեխային ոչ մի վնաս չի հասնի։

Քանի դեռ երեխաներն անչափահաս են, մայրերը, դուրս գնալիս, նրանց մերթ իրենց գրկում, մերթ էլ մեջքին են կրում։

Բոլորովին այլ կերպ են օրորում երեխաներին ամառը՝ այգում։ Երկու ծառից մի մեծ պարան են կապում, ծայրերը միացնում իրար. այսպիսով ստացվում է երկու կողմ, որոնք մեկը մյուսին զուգահեռ են և մոտ մի ոտնաչափ հեռու։ Պարանի երկու կողմերից անց են կացնում մի բավականին ամուր և մեծ շոր, որը պարանի ներքևում հարթ մնում է. շորի ծայրերը ամեն տեղ հավասար հագցնում են պարանի վրա։ Սակայն որովհետև երկու

ծայրերը չեն պահվում, դրա համար էլ մեր սիրելի մայրերը միանգամայն խելացի և հասարակ ձևով գլխի են ընկել և դրանք ամրացրել են հետևյալ կերպ,— երկու բավական հաստ, հավասար երկարությամբ փայտի կտորներ են դնում ինչպես գլխի, այնպես էլ ոտքերի կողմը. Նրանք պարանի մի կողմից մյուս են հասնում, շորը և նրա հետ ամբողջ ճոճքը պահում են ամուր և իրար զուգահեռ։ Այնուհետև բոլոր շորերն ու անկողինը, բնականաբար նաև երեխային, մեջն են դնում։ Որպեսզի երեխան ապահով լինի ու վայր չընկնի, նրան մի երկար շորով շատ թեթև կապում են ճոճքից։ Ձեռքերով մի քանի անգամ ճոճելուց հետո, ճոճքն ինքն իրեն սկսում է բազմաթիվ անգամ օրորվել։ Վերջինն ևս հեշտացնելու և ավելորդ հոգսից ազատվելու համար ճոճքից կապում են ցանկացած չափի երկարության մի պարան, նստում որոշ հեռավորության վրա և առանց իրենց աշխատանքն ամենափոքր իսկ չափով ընդհատելու, ժամանակ առ ժամանակ, մինչև իսկ ոտքով, շարժում են այն։ Այս թեթև տարուբերումը՝ առանց որևէ հարվածի, այս մեղմ շարժումը՝ առանց աղմուկի, մեկ երկու րոպեում փակում է մեղմորեն ննջողի աչքերը։ Սաղարթախիտ ծառերի ստվերի տակ, անուշահոտությամբ և քաղցր զգվանքով շրջապատված՝ արթնանում են նրա հրապուրյալ մտքերն ու զգացումները։ Նրա խաղալիքներն այստեղ գլխավերևում կախված տերևներն են, որոնց նա ժպտում է, հիանում նրանցով, մանկական իր թոթովանքներով զրուցում նրանց հետ, մատներով և ձեռքերով փորձում է հասնել և բռնել դրանց։ Հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես նա, առանց մի ձայն հանելու, ժամերով տարվում է այս զբաղմունքով։ Իսկ նրա շրջապատի առողջարար օդը, թարմ բնությունը, ջրի կարկաչը, քամու մեղմ շունչը, մոր քաղցրահնչուն ու թախծոտ ձայնը, որ հեռվից էլ քաղցրացնում է իր ղավակի անուշ քունը,— արդարև, ով այս բոլորը լրիվ պատկերացնի, կամաչի, որ հեգնել է ինձ, որ ես մի բնական, փափուկ սիրտ ունեմ, որն իրեն բոլորովին օտար է, ինչպես ես, դժբախտաբար, հաճախ այս տխուր ապրումն ունեցել եմ։ Այս նրբազգացության հետ միասին Հայը առնականությամբ լի մի սիրտ ունի, կրակով լի, որ միայն նա կարող է զգալ, ով ծնկուզ մի մատով շոշափի։ Դա կանացի փափկասրտություն, զգայնություն, կամ հիմարի թույլ կառուցվածքից բխող ցնորք չէ, այլ նրա մանկական օրերի ներդաշնակ հնչյունը, որով նա ամեն ինչ համեմատում է և ընկալում այն, ինչ գեղեցիկ է, ճշմարիտ ու հրապուրիչ։ Նա երևակայություն ունի, այդտեղից էլ բնության պատկերներ. բայց նրան չի տրված և ոչ էլ կարող է տրվել ո՛չ մարդկային ձայն, ո՛չ էլ արվեստ։ Նա ևս տեսել է, թե ինչպես ամենափոքր վիրավորանքը կարող է դաշույնի ծայրով հատուցվել. մի բան, որ ինքը նույնպես հաճախ արել է։ Դրա համար էլ ես

ամենևին չպետք է հաճոյախոսեմ նրան, ով վիրավորել է իմ այդ զգացումը, այլ բարիքը շնորհակալությամբ ընդունեմ, բայց նրան արժանի հարգանքը պարտապանի իմաստով միշտ սրտումս չկրեմ և երբեք չմոռանամ այն պահը, որն ինձնից այլ կարգի արցունքներ է քամել։ Բայց նրանց, ովքեր ինձ խնայելով, փոխադարձ սիրո խոսքերով երբեմն տիրել են իմ սիրտը, սակայն անձամբ ինձ միանգամայն օտար են մնացել, այդպիսիներին ես, անկախ իրենց սեռից ու աստիճանից, պետք է այնպես գնահատեմ, այնպես սիրեմ, ինչպես իմ իսկ հոգին։ Եվ քանի քանիսը չե՞ն այնպիսինները, որոնց փափկանկատ, մեղմ վերաբերմունքն ավելի այս նկատառումով է եղել, քան իմ կրթության նկատմամբ <ցուցաբերած հետաքրքրությունից. դրանք> մինչև իսկ կյանքս շատ չնչին են գնահատում և կգնահատեն։ Իմ բարեկամներն իրենք կարող են զգալ, թե ո՞ւմ է վերաբերում հարգանքը և ում՝ գանգատը։ Ես սուտ կլինեի, եթե բոլորի նկատմամբ միևնույն նախապատվությունը, միևնույն երախտագիտությունը ցուցաբերեի։ Հոգու և կրթության միջև այնքան տարածություն կա, որքան երկրի և երկնքի միջև, և միայն հիմարը կարող է հավասարության նշան դնել դրանց միջև։

Ինձ կներեք, որ ես իմ զրույցն ընդհատում եմ այս կերպ, երբեմն այնպիսի բաներ մեջ բերում, որոնք ոչ թե իմ ազգին են վերաբերում, այլ իմ իսկ անձին։ Այս հարազատ օրորոցի նկատմամբ, որտեղ ինքս մեծացել, շատ բան զգացել, բայց դեռ բնավ էլ լրիվ չեմ արտահայտվել, երախտագիտություն կլիներ, եթե իմ ընթերցողները, գիտակցելով նրա նպատակահարմարությունը, իրենց երեխաների համար էլ, որքան հանգամանքները թույլ են տալիս, նման ձևի հարմարանք պատրաստեին։ Ես ի վիճակի չեմ բոլոր հարմարությունները և բոլոր հրապույրներն այնպես մանրամասն նկարագրել, ինչ որ դա ընձեռում է թե ծնողներին և թե երեխաներին։ Ես տեսել եմ արդեն մեծացած մարդիկ, որոնք երեխայի նման դրա մեջ իրենց օրորել էին տալիս։ Ինքս էլ եմ արել այդ։ Դրա համար վերցնում են մի հաստ պարան, մի ամուր շոր և փորձում են անշուշտ ոչ թե տանը, այլ մի այնպիսի վայրում, որ ես նկարագրել եմ։ Մինչև իսկ 10—12 տարեկան հիվանդներին մեզ մոտ որոշ տեղեր հաճախ խնամում են այս օրորոցում, որպեսզի ծանր մարմնի համար հանգիստ շարժում և բաղձալի քուն ապահովեն։

Այն կարելի է պատրաստել հենց տանը, անշուշտ երեխաների համար. պարանը պետք է մի պատից մինչև մյուս պատն այնպես ձգել, ինչպես արդեն նկարագրել եմ, ինչ որ մեզ մոտ ամառը հաճախ տներում անում են, և այն կարող է մինչև իսկ մի երեխա կառավարել։ Դա միաժամանակ երեխաների համար ճոճաթոռ է և այն հաճույքն էլ ունի, որ երեխան նրա մեջ պառկած՝ խաղալով ննջում է, իսկ ծնողները մյուս սենյակից կարող են

այն շարժել։ Բոլորը գիտեն, թե երեխաներն ինչքան են սիրում խնամքի այս եղանակը։

Երբ երեխան արդեն մի քանի տարեկան է, ծնողները պառկեցնում են նրան իրենց միջտեղը. նա մերթ մեկի, մերթ մյուսի հետ խաղալով ու ծիծաղելով ննջում է։ 10—12 տարեկան հասակի երեխաները քնում են հաճախ միայնակ, երկուսով՝ ծնողների կողքին։ Դա նրա համար է արվում, որպեսզի երեխայի բացվելու դեպքում, որի համար ծնողները շատ են հոգում, ծածկեն նրան։ Եվ քանի-քանի անգամ նրանք անում են այդ, հատկապես դրա համար վեր կենալով։ Ծնողներից ամեն մեկը խիստ հանդիմանում է ինքն իրեն, հենց որ երեխան մի փոքր մրսում է կամ գլուխը ցավում է։ Մինչև իսկ հարուստներն ու երևելի մարդիկ այս կանոնից բացառություն չեն կազմում։ 15—20 տարեկանները մեծ մասամբ քնում են երկուսով, երեքով միասին՝ երկսեռ, թե ձմեռը և թե ամառը, կտուրի վրա և տան մութ անկյուններում։ Դրանք ոչ միայն քույր ու եղբայր, այլև հորեղբոր, մորաքրոջ, եղբոր ու քրոջ զավակներ են։ Թող ես անարժան մարդ լինեմ, ստախոս, եթե այս համակեցությունից որևէ չարաշահում լսած լինեմ և հասարակությունից թաքցնեմ։ Բացի այն անհարմարությունից, որ մեկի շարժումը մյուսին կզարթնեցնի և նրա քունը կխանգարի, ես չգիտեմ ո՛չ մի, ո՛չ մի այլ քուն, որ այնքան քաղցր ու բարերար լինի, որքան այս։ Նրանք միշտ ամուր փաթաթվում են միմյանց և դեմքերը ճառագայթում են ամենամեծ անմեղությունից։ Նրանք իրենց դժբախտ են զգում, երբ անջատվում են միմյանցից. բայց բարի ծնողներն այդ երբեք չեն անում, որպեսզի դրանով վատ հակումների առիթ չտան։ Այս տեսակետից ես բոլորի մեջ ամենադժբախտն էի, որովհետև տասը տարեկան հասակում ինձ բաժանեցին իմ ընտանիքից և վանք բերեցին. այդ պատճառով էլ հայրական տանից հեռանալիս ինձ համար ոչ մի բան այնքան ցավալի չէր, որքան այս անջատումը, որովհետև այժմ ես միայնակ էի քնելու։ Եվ որքան երջանիկ էի ես, երբ տարին մեկ-երկու անգամ տուն էի գալիս և ամսով մնում այնտեղ։ Ես քույր չեմ ունեցել, սակայն մենք մեր հորեղբոր և մորաքրոջ աղջիկներին այդ անունով ենք կոչում։ Բացի նրանցից, որոնք մեր տանն են ապրում, որովհետև իմ հորեղբայրը երեք դուստր ունի, որոնցից երկուսն այժմ արդեն ամուսնացած են, ես ունեի նաև չորս հորաքույր, որոնցից երկուսը մեր գյուղում էին ապրում և միայն մեկը հասած աղջիկներ ուներ։ Գյուղում եղածս ամբողջ ժամանակ նրանք իրար մեջ որոշում էին, թե ո՛վ որ գիշերը քնելու էր ինձ հետ։ Նրանք հաճախ կռվում էին և երկուսով, երեքով գալիս ինձ մոտ, մինչ մայրս ոչ մի պայմանով ինձ իր գրկից բաց չէր թողնում։ Այն ժամանակ նրանք լուռ մնում էին իմ մյուս կողքին, մինչև մայրս քներ

և ես տեղի տալով նրանց աղերսանքներին՝ ստիպված էի փոքր ինչ մի կողմ շարժվել, որպեսզի մի ուրիշը կարողանար գրավել ազատված տեղը։ Եվ ահա նրանք սեղմում էին ինձ այնպիսի քնքշությամբ, որ միայն մի անմեղ հոգի կարող է ունենալ։ Նրանց դեմքերն երկու կողմից գտնվում էին իմ դեմքի վրա, ձեռքերը՝ վզիս և կրծքիս, իսկ իմ ձեռքերը կրում էին երկու այդպիսի քնքուշ գլուխների ծանրությունը։ Մենք համբուրում էինք միմյանց, խաղում, կատակում, կմթում և հաճախ անախորժությունների առիթ տալիս մեզ բոլորիս համար, որ մայրս վախեցած վեր թռչելով և տեսնելով մեր խորամանկությունը, բոլորին նորից մի կողմ էր հրում և ինձ երկու ձեռքերով կրկին իր հարազատ կրծքին սեղմում։ Ես երդվում եմ Աստուծո առաջ, որ բացի ամենաքաղցր զգացումներից, բացի բերկրանքից, որ ես ի վիճակի չեմ նկարագրելու,— ես այդ ժամանակ այլ բան չէի զգում։ Մանկությունից մի այսպիսի հակում ունեի դեպի երեխաներն ու գեղեցիկ սեռը, որի համար մեկից ավելի անգամներ իմ մեծավորներից խիստ պատժվել եմ, որովհետև ես ամեն ինչ զոհաբերում էի, որպեսզի նրանց մոտ լինեի. բոլոր փողերս ծախսում էի նրանց համար քաղցրավենիներ գնելու վրա։ Բայց ես այլ ցանկություն չեմ ունեցել, բացի այն, որ նրանց հետ խոսեմ, նրանց տեսնեմ և նրանց տեսքով հիանամ։ Բնա՛վ, բնա՛վ երբեք օտարոտի որևէ միտք ո՛չ ինձ, ո՛չ էլ նրանց այդ բանում չի խանգարել։ Դա մի գրկախառնում է, որին դեռևս ո՛չ մի ազգ ծանոթ չէ[1]։ Բայց, ավա՜ղ, ինչպիսի՜ ցավալի միտք է մռայլում այս պահին իմ հոգին, երբ մտածում եմ, որ ես ընտանեկան այլ հարաբերություններ և այլ կյանք ևս ճանաչեցի, որոնք խլելով ինձնից երկնային այն անդորրը, եղբայրական այն հավատարմությունը, ինչու չէ նաև՝ երջանկությունը, ինձ չեն կարող ոչ իբրև եղբայր, ոչ էլ որպես հայր երջանիկ դարձնել։ Ընդհակառակը, ես ամենադժբախտ մարդը կլինեմ, եթե չկարողանամ այնպես գործել ու մտածել, ինչպես մի գեղջուկ։ Դրա համար էլ ես վաղուց եմ իր սրտում աշխարհին վերջին մնաս բարեն ասել, որ ես, հակառակ իմ կրքոտ բնավորության, երբեք չեմ ուզենա նրանց այլ կերպ վայելել, քան որպես ընտանիքի հայր, եթե ես իմ հայրենակիցների մեջ ապրեմ։ Իսկ ուրիշ ո՞ւր պետք է ես ապրեմ։ Կան նաև այլ պատճառներ, որ ստիպում են ինձ այդ անել, սակայն հիմնականը սա է. իսկ մեզ մոտ ընտանիք պահելը մեծ բան չէ։ Պիտի հարգեմ, պաշտեմ ես գեղեցիկ սեռը, նրանց համար իմ արյունը չպիտի խնայեմ, բայց բնավ չպիտի ձգտեմ տիրանալ նրանց, որովհետև իմ հոգին այլ արատներ է ընդունել, որոնք այն գեղջուկ տղաներին միանգամայն օտար են։ Արդեն իմ հայրենիքում շատ

1 [Մինչև իսկ այն տարիներին, երբ ես ստիպված էի նրանց թողնել]։

այլ մարդկանց հետ շփվելու միջոցով, այնուհետև վանքում, Թիֆլիսում ինձ շանթի հարվածներ հասել են, սակայն ընտանեկան կյանքի վերաբերյալ ես այլ բան չգիտեի, բացի այն երջանիկ հարաբերությունը, որովհետև երբ ես իմ ծննդավայրը թողի, ապրում էի վանքում։ Այն տարիներին, երբ ես թողնելու էի հայրենիքս, մի ամսի չափ մնացի իմ ծնողների մոտ, և այդ միևնույն անմեղ արարածներն՝ արդեն 15—17 տարեկան, սովորականի պես ցուցաբերեցին ինձ իրենց նվիրվածությունը և առավել քան իրենց տարեց եղբայրներն ու եղբորորդիները, սեղմվեցին իմ կողքին ճիշտ այնպես, ինչպես առաջ, մայրս էլ իմ կողքին, ես էլ նրա կրծքին։ Նրանք նույնն էին մնացել, բայց ես՝ ո՛չ։ Մինչև իսկ հորեղբոր աղաները քնում են իրենց հորեղբորորդիների կանանց հետ, բոլորովին այլ տոհմից։ Ես էլ մեկնելուց քիչ առաջ հորեղբորս տղայի կնոջ հետ քնել եմ միևնույն անկողնում, և եթե իմ զգացումները մաքուր չլինեին, ապա խիղճս ինձ համար մի խիստ դատավոր էր, որպեսզի մի այդպիսի անմեղ վստահություն չարաշահեի։ Մինչև իսկ հարսանիքի օրը, որի մասին հետագայում կպատմեմ, երբ բոլորը հրճվանքի ու ցնծության մեջ են, բնության այս հարազատ, չապականված զավակները լալիս են, իսկ այդ վշտի պատճառը, ինչպես բազմիցս լսել եմ, այն է, որ, ինչպես իրենք են ասում, օտարի հետ, այնպես քնել չեն կարողանալու, ինչպես իրենց հարազատների հետ։ Ո՛չ մի եղբայր, ո՛չ մի հորեղբորորդի չի գրկի նրանց այնպես քնքուշ։ Նրանք երջանիկ են, երբ այնուհետև կրկին ոտք են դնում իրենց ծնողական տունը։ Այժմ նրանք իրենց կարոտն առաջվա նման կարող են առնել։ Բայց բավական է այս մասին։ Զարգացած ազգերը թող մտածեն, ինչպես կուզեն։ Այդ ճշմարտությունն այնքան ստույգ է, ինչպես ինքս վստահ եմ, որ ես միևնույն մարդը չեմ մնացել. և եթե այժմ կրկին վերադառնամ, նրանց վստահությունը վերստին կգտնեմ, նրանց հետ նորից կքնեմ։ Այդ մասին ես բնավ չեմ տարակուսում, որովհետև քանի դեռ մարդ ամուսնացած չէ, այդ իրավունքի տերն է։ Ես մի ուրիշ տեղ մի դեպք եմ պատմել, որը սարսափելի է և իմ հայրենակիցների մեջ մարդասպանություն առաջ բերեց. դա այն էր, որ մի ջահել տղա մի երիտասարդ այրի կնոջ, հակառակ վերջինիս կամքի, համբուրել էր միայն։ Ո՛չ մի աղջիկ չի կարող հույս ունենալ, թե կարող է երջանիկ կին լինել, եթե ինքը, գուցե ավելի պարզամտությունից, քան թե թուլությունից, մի սխալ քայլ է կատարել. դրանից թաքնվելու նա ոչ մի միջոց չունի։ Եվ չէ՞ որ սրանք հասարակ գեղջկուհիներ են։

Հաճույքներով է՛լ ավելի լի կյանք են պարգևում մեզ տարվա այն գեղեցիկ ժամանակները, երբ մրգերն սկսում են հասնել։ Այդ ժամանակ հասակավորներից մեկը մնում է տանը։ Առավոտյան վաղ տանը ձուկ կամ

ուրիշ կերակուրներ են եփում ու հետները տանում այգի, կամ էլ վերցնելով ամեն ինչ, կաթսաների ու ափսեների հետ միասին, հենց այգում են պատրաստում։ Ընտանիքի այն անդամներն ու երեխաները, որոնք դաշտային աշխատանքներին չեն մասնակցում, ամենաեռանդուն գործունեություն են ցուցաբերում այստեղ, այգում։ Մրգերը հավաքելն ու չորացնելը, բանջարանոցը խնամելը նրանց գործն է։ Առանց գետնին շոր կամ գորգ փռելու, նրանք պառկում են կանաչ մարգագետնի վրա, իսկ ստվերոտ ծառերը նրանց պաշտպան պատնեշներ են կիզիչ արևի դեմ։ Այժմ ավելի հաճախ են լողացնում փոքր երեխաներին. մեծերն էլ են լողանում գեղեցիկ, բյուրեղի պես վճիտ ջրում, որ շատ այգիների միջով մշտապես հոսում է։ Մանկական տարիներին մենք ավելի լավ հաճույք չունեինք, քան այստեղ՝ բոլորովին մերկ, ջրի հետ խաղալը և միմյանց թրջելը։ Անկարելի է նկարագրել, թե ինչպիսի հաճույք էր պատճառում մեզ, ինչպիսի բարերար ազդեցություն էր գործում մեզ վրա ջրի մեղմ կարկաչյունը։ Այնտեղ մենք խնձորներից անիվներ էինք պատրաստում, որոնց վրա շրջանաձև ամրացնում էինք փայտե մանր կտորներ՝ ճիշտ թիակների նման, երկու տախտակների վրա դնում հոսող ջրի առաջ և օրերով խաղում դրանց հետ։ Ծառերի կեղևներից էլ պատրաստում էինք փոքրիկ նավեր, դնում ջրի վրա. դրանք ևս արագահոս ջրի մեջ նվազ զվարճալի չէին։ Ես զանց եմ առնում այստեղ շատ խաղեր. դրանք պետք է մանրամասն նկարագրել, եթե ուզում ես ծանոթացնել։

Մայրն ու մյուս կանայք մանում են, հյուսում կամ տնային այլ գործերով են զբաղվում։ Բայց թե ինչքան հաճախ այս անդորրությունը խանգարվում է գողերի և ավազակների հարձակումով, այդ մասին ես հիշատակեցի մի այլ տեղ։ Ամեն մի ծառ մեր խաղավայրը լինելուց բացի նաև մեր քնելու տեղն էր։ Առանց ծածկոցի մենք պառկում էինք և ծառերի ու խոտերի հետ խաղալով քաղցր քուն մտնում. հաճախ մեզ արթնացնում էին ծառից ցած ընկնող մրգերը։ Հարևանները և նրանց երեխաները, առանց որևէ խտրության, օրերով մեզ հետ էին, ուտում էին մեզ հետ և անում այն ամենը, ինչ մենք։ Այգիներն ընդհանրապես շատ մեծ են և լի խոշոր ու գեղեցիկ պտղատու ծառերով, որոնք ամեն մեկի տրամադրության տակ են, ով իբրև հյուր ներս է մտնում։

Ամենահաճելի վայելքներից մեկն այստեղ ճոճվելն է, որին մասնակցում են երկու սեռի բոլոր մարդիկ։ Տարեցները դրան հակառակ, կողք-կողքի նստած զվարճանում են դրա վրա։ Երբ այգում մի բան են ուտում, կամ օրինակ, թթից սահուկ (դոշաբ) եփում կամ էլ օղի քաշում, ապա ամեն ոք ոչ թե սոսկ դրանց համն է տեսնում, այլ առատորեն վայելում է. հաճախ կանգնած։ Եթե հայրերն այդտեղ են, ապա խնդրում ենք նրանց պատմել

մեզ համար հեքիաթներ, իրենց կյանքից արկածներ, ինչ որ նրանք շատ հաճախ կատարում են։ Այդ բոլորի մասին սակայն ես շատ մանրամասն գրել եմ։ Հենց որ անծանոթ մի տղամարդ է երևում, նամանավանդ մեծամեծներից, կանայք թաքնվում են և հենց որ նա հեռանում է՝ կրկին հայտնվում։ Այն մրգերը, որ ուզում են թարմ ուտել, վայելում են հենց ծառի վրա. այդ բանում մինչև իսկ կանայք արտակարգ ճարպկություն ունեն։ Պատահում է, որ մի տղա կամ աղջիկ քնում է հենց ծառի վրա. դա հարազատներին մեծ սարսափ է պատճառում։ Նրանք շատ զգույշ ծառն են բարձրանում և արթնացնում նրան։ Հաճախ խումբ-խումբ շարժվում են դեպի Ջանգու գետի այն սիրելի ձորը, որի շրջակայքը մեզ արդեն վաղուց ծանոթ է, և այնտեղ ձուկ են որսում ու լողանում՝ նրա արագ հոսանքում։

Երեխաները հաճախ պայմանավորվում են իշապանների հետ,— փայտ բերելու համար այս կենդանիներին մեծ խմբով սարերն են քշում,— և որովհետև ավանակներն իրենցը չեն, ապա նրանք չնչին վարձով դրանց մի քանի ժամով զիջում են։ Երեխաներն ավանակներին նստած այգու շուրջը բազմաթիվ պտույտներ են գործում։ Այս կենդանիների հանդարտ քայլելը նրանց համար ամեն բանից ավելի հաճելի է։ Սակայն ոչինչ այնքան հրապուրիչ չէ, որքան ա՛յն տեղը, որ մեզ մոտ պատրաստում են պտղատու ծառերի վրա։ Ընտրում են մի ծառ, որն իրարից մի քանի ոտնաչափ հեռու գտնվող երկու զուգահեռ տարածված հաստ ճյուղեր ունի։ Այս ծառը պետք է այնպիսի դիրք ունենա, որտեղից հնարավոր լինի ընդգրկել այգու սահմանների ամենամեծ մասը, որպեսզի այդտեղից կարողանան հսկել այն։ Ճյուղերի վրա ամրացնում են հաստ տախտակներ, ապա վերջինները խոտով և ծառի կանաչ ոստերով հավասար ծածկում են ու բարձրանում վերև։ Երեխաներին բարձրացնում են իրենց մեջքերի վրա։ Բոլոր կողմերից կախ են ընկած ծառի գեղեցիկ մրգերը։ Ծառն ընտրելու ժամանակ վերջին հանգամանքն ևս հաշվի են առնում, որպեսզի վայելքը օր-ավուր ավելի մեծ լինի։ Կանաչ տերևներն արևի դեմ լավագույն հովանիներն են։ Իսկ ինչպիսի՜ հրաշալի տեսարան է փռվում մարդու ամբողջ տեսադաշտում։ Քամուց այս ու այն կողմ տարուբերվող այս տեղից նրանց ընդգրկում են ոչ միայն այգին, այլև վերստերով հեռու ընկած առարկաներ։ Սրա հենց տարուբերումները, հենց միայն տերևների ուրախ սոսափյունը հրապույրներ են, որ մանկական հոգին զվարթ ու առույգ են դարձնում։ Այստեղ խաղում են, ուտում՝ ողջ շրջապատի գեղեցիկ ներդաշնակության մեջ։

Մայրերը հախաճ ծծկերներին կամ երեք-չորս տարեկան մանկանը թողնում են մենակ այնտեղ պառկած և գնում գործի։ Երեխաները ժամերով մնում են այգու հաճելի օրորոցի մեջ, կամ քնում մի ծառի տակ և կամ

հենց խոտերի մեջ, այս ու այն կողմ՝ միանգամայն բաց երկնքի պաշտպանությանը թողնված։ Մայրերն երբեմն ժամերով փնտրում են նրանց բոլոր անկյուններում։ Նրանց գտնում են բնության այս գեղեցիկ բներում՝ մտերիմ գրկախառնումով քնած, ձեռքին կամ բերանին մի միրգ, ծաղիկ կամ մի խոտ։ Թունավոր օձերն իսկ, որ հաճախ պտույտներ են գործում այստեղ, բնավ չեն խանգարում նրանց։ Հաճախ կարելի է երկուսին կողք-կողքի տեսնել. այդ դեպքում, քանի դեռ նրանք պառկած են, պետք է հանգիստ թողնել, մինչև որ հարևանն՝ ինքը քաշվի գնա. և նա անում է այդ, հենց որ լսում է մոտեցող ոտնաձայներ։ Որ այս չար արարածն իսկապես ոչ ոքի վրա չի հարձակվում, քանի դեռ մեկը չի կոխել նրա վրա կամ այլ վնաս չի հասցրել,— այս ես տեսել եմ մեկից ավելի անգամներ։ Երբ նրանք հեռվից ոտնաձայն են լսում, ապա այնպես զիլ սուլում են, որ մարդու ամբողջ մարմնով սարսուռ է անցնում։ Մարդուն նրանք հետապնդում են միայն այն դեպքում, երբ նկատում են, որ նա իրենց կյանքի հանդեպ չարամիտ դիտավորություն ունի։ Եթե ներքևում մարդ կա, նրանք հաճախ ծառից ցած են կախվում և ի նշան աղերսանքի լեզուն անընդհատ դուրս են հանում։ Նրանց չեն սպանում այն պատճառով, որ հավատում են, թե նրանք մայր կամ ընկեր ունեն,— և վա՜յ նրան, եթե նման դեպքում մեկը նրան սատկեցնի։ Փորձը շատ անգամ ցույց է տվել, որ նրանց ընկերները, մանավանդ երբ արուներից կամ էգերից մեկն սպանված է, այդ չարագործությունը չեն մոռանա այնքան ժամանակ, մինչև իրենք չսատկեն կամ սպանողի ընտանիքի անդամներից մեկին նույն վիշտը չպատճառեն։ Նրանք հաճախ երևում են զույգերով՝ իրար փաթաթված. դա նրանց ոչնչացնելու ամենալավ ժամանակն է։ Տներում նրանք հանդիպում են երկուսով. այդ դեպքում նրանց չեն վնասում կամ խանգարում, որովհետև հավատում են, թե օձերը տան պահապաններ են, և իսկապես, նրանցից ոչ ոք վնաս չի տեսել։ Նրանք հաճախ իրենց երկարությամբ ձգվում են ճանապարհների վրա կամ ամայի տեղերում, տեսնելով այդ, մարդ կկարծի, թե մահամերձ են և մեռնում են. ոչ մի դիմադրություն ցույց չեն տալիս, եթե հենց այդ դիտավորությամբ էլ վարվես նրանց հետ։ Մարդիկ հաճախ դուրս են գալիս թփերից, հենց ուղղակի կոխում նրանց պոչերին. մոտեցող մարդուն տեսնելով, նրանք դեռ որոշ ժամանակ մնում են նույն դիրքում և ապա քաշվում։ Նրանց մի տեսակը, որ մեծ մասամբ գորշ տեսք ունի, դեղնավուն փոր և մեկուկես ոտնաչափից ավելի երկարություն, այնքան ընտանի է, այնքան հանդարտ, որ երեխաները պոչից բռնում և իրենց խաղընկերների՝ քույրերի և եղբայրների հետ խաղում են, նրանով միմյանց խփում. իսկ խեղճ կենդանին աղերսանքի ո՛չ մի ձայն չի արձակում, ո՛չ մի այլ նշան ցույց չի տալիս, բացի

լեզուն շարժելուց։ Եթե երեխաներն այդ չարաճճիությունը կատարում են ծնողների ներկայությամբ, ապա վերջինները պատժում են նրանց։ Շատերը նրանց իրենց կողքն են դնում, կերակրում կաթով, քնում են նրանց հետ, և չնայած որ նրանց հաճախ են այդպես անգութ կերպով չարչարում, չի եղել դեպք, որ նրանք մեկին թունավորած լինեն։ Իրենց խաղաղ բնության պատճառով նրանք քրիստոնյաների սիրելին են, իսկ թունավոր օձերը, որոնք կարմիր, դույնզգույն կամ սև տեսք ունեն, նրանց աչքում մահմեդականներ են։

Հաճախ, այո՛, ամբողջ ժամանակամիջոցում, միս կամ յուղալի կերակուր հազվադեպ են ուտում, այն էլ բոլորը ձավարով պատրաստված։ Առանց տարիքի խտրության շրջանաձև պառկում են այնտեղ, ծնողներն իրենց երեխաներով և ամբողջ տնով։ Պահոց օրերին, որոնք տարվա ընթացքում հաճախակի են պատահում, օրվա աշխատանքից հոգնած՝ մածունը, աղած կամ եփած ձուկը, բրնձապուրը և կամ չոր հացի մեջ փաթաթված կանաչեղենը նրանց շատ ավելի է դուր գալիս, քան հազարավոր համադամ կերակուրներ։ Ցերեկվա ժամի մոտ տասն է։ Մայրը բաց է անում հասարակ սափրան (մի շոր, որի մեջ հաց կա), որտեղ գտնվում է ջրով փափկացրած բարակ հաց. մայրը դրանցից ամեն մեկի առջև դնում է երկու երեք հատ, ափսեների մեջ լցնում կերակուրը, և հենց որ ամեն մեկն ստանում է իր բաժինը, վերցնում է եղած չեղածը և ուտում, կանգնած կամ նստած, այն ծառի տակ, որ ինքն է խնամել։ Հաճախ պատահում է, որ մեկն ավելի է ստանում, քան մյուսը. Նման դեպքերում նա չի ազատվի, մինչև որ այդ ավելին էլ մյուսների հետ չբաժանի։ Նրանք ժամերով վազում են շատ ստացողի ետևից և խլում ավելին։ Հաճախ դա մի փոքր պատառ է, որ բոլորին չի բավականացնում։ Մայրն այդ տալիս է իր ամուսնուն կամ ամենից ավելի սիրածին։ Առաջինը մաս-մաս անելով հայրաբար բաժանում է այն բոլորին. մյուսը՝ օգտվելով իր առավելությունից, չի ուզում այդ անել. սակայն մյուսները չեն թողնում, որ դա նրա բերանը մտնի։ Ճաշի ժամանակ քիչ չեն պատահում տաք վեճեր։ Եթե հայրը ներկա է, գործը մի բառով վերջանում է. նա է միայն կարողանում միանգամայն խելացի ձևով բոլորին բավարարել. հակառակ դեպքում իրավունքն ուժեղինն է։ Մյուսները, հակառակ մոր պաղատանքների ու սպառնալիքների, ժամերով լալիս են։ Նույնը կատարվում է նաև ընթրիքի ժամանակ, որ երբեմն այգում, երբեմն էլ տանն են անում։ Հասակավոր տղամարդիկ, եթե հատուկ բան չի պատրաստված, իրենց օրապարենը գըրպանից կամ գոտու միջից հանելով՝ ուտում են իրենց աշխատանքի վայրում. որ այդտեղով անցնող ամեն մեկը գոնե մի պատառ, մի բաժակ գինի պետք է վայելի, ինքնին հասկանալի է։

Բացառությամբ տան կանանց, աղջիկների և ծերերի, որոնք պետք է վայելուչ հագնվեն, բնության այս հարազատ զավակները, հաճախ բացի բամբակյա կամ մետաքսյա կարմիր կամ սպիտակ մի շապկից, հագին ուրիշ բան չունեն. մարմնի մյուս մասերը հաճախ ծածկված չեն։ Նրանք վազվզում են ոտաբոբիկ, գլուխն ու վիզը բաց, և երկինքը ամենահոգածու կերպով պաշտպանում է նրանց։ Ամենից ավելի ուրախ ու երջանիկ են նրանք, որոնք մի այծ, ոչխար, կամ մի գառ ունեն։ Նրանք ծաղիկներով զարդարում են այդ կենդանիներին, վզին բոժոժներ կախում և օրերով վազվզում ու խաղում են նրանց հետ։ Պետք է միայն տեսնել, թե մկանների ինչպիսի ուժ, ինչպիսի թարմություն, առողջություն է արտահայտում նրանց արտաքինը։ Անձրևի ժամանակ նրանք լինում են այգու տնակում <հնձանում> կամ դիտավորյալ կանգնում են անձրևի տակ, որպեսզի լավ թրջվեն, քանի որ անձրևը ո՛չ իրենց մարմնին է վնասում, ո՛չ էլ շորերին։ Աշխարհի բոլոր մոլորություններից հեռու, նրանք երկրային իրենց դրախտում ամենաերջանիկ արարածներն են՝ շրջապատված բնության անուշահոտ բուրմունքով ու բոլոր հրապույրներով։ Նրանց հոգին երբեք այլ հրճվանք չի զգում, բացի իրենց շրջապատից։ Նրանք իրենց հարազատ ծնողներից, քույրերից, եղբայրներից բացի ուրիշ մարդ չեն ճանաչում։ Մահմեդականների հետապնդումն ստիպում է նրանց այս աշխարհից մի քայլ իսկ այն կողմ չանցնել։ Հաճախ 10—15 տարեկան հասակում իսկ շատերը չեն ճանաչում իրենց մայրաքաղաքը, և եթե լինում են այնտեղ, ապա միայն մի բան վաճառելու կամ գնելու համար և իսկույն էլ վերադառնում։ Արդ, ինչպե՞ս կարող են նրանք արատներ ընդօրինակել, երբ այդպիսիք ո՛չ տեսնում և ո՛չ էլ դրանց մասին լսում են. բացի այն տուրուդմփոցից, վիրավորանքներից և սպանություններից, որ պատահում են ավազակների և իրենց ծնողների միջև, նրանք այլ բան չեն տեսնում, որ կարողանա նրանց պարզ հոգին ապականել։ Իսկ թե ի՞նչ տպավորություն են թողնում այս տեսարանները երիտասարդ հոգու վրա, այդ կարող է յուրաքանչյուր ոք պատկերացնել՝ հիշելով իր պատանեկան շրջանը։ Հասարակ երգերը, որ մարդ այստեղ ամառն ամենուրեք լսում է, նրանց զգացումների դրոշմը, լեզուն են։

Ցերեկն այսպես անցկացնելուց հետո, մեծերն իրենց հայրերի հետ այգում պահակ են մնում։ Խավար գիշերվա մեջ նրանք շրջում են և զինված հսկում, որ չլինի թե մեկը բռնությամբ ներս մտնի և մի բան հափշտակի։ Նրանց մի մասը նստում է կրակի շուրջ կամ հանգստանում է ծառի թալվարի վրա. հայրը կամ որդին իրենց զգայարանների ամբողջ սրությունը լարելով այս ու այն կողմ են սողոսկում, կրկին գալիս են և ուղարկում մյուսներին և այսպես հաջորդաբար ողջ գիշերը։ Հարևաններով հավաքվում են և զրուցում

կրակի շուրջը և կամ պարիսպների վրա, կամ էլ սուլոցով միմյանց փոխադարձ նշաններ տալիս։ Այս արկածների մասին բավական պատմել եմ, այնպես որ նորից կրկնելու կարիք չկա։

Հենց որ երեկոյան մթնշաղն իջնում է, փոքր տղաներն ու աղջիկներն իրենց մայրերի հետ խաղալով ու երգելով շարժվում են դեպի տուն, տղամարդկանց ընթրիք են տալիս կամ նրանց բաժինն ուղարկում։ Հասակավորների, ինչպես նաև երեխաների համար մեծ հաճույք է ամեն երեկո այգուց որևէ բան՝ փայտ, ամանեղեն կամ մրգով լի կողովներ իրենց հետ վերցնելը, որ կանայք գլխի վրա, տղաները մեջքի վրա են տանում։ Շատ փոքր երեխաներին մայրերը կամ քույրերը տանում են գրկած կամ իրենց մեջքին, կամ էլ նստեցնում են ձիու, ավանակի բեռան մեջտեղը և ձեռքերով ամուր պահում։ Թվում է, թե ողջ գյուղը ժամացույցի միևնույն զարկով տուն է կանչվում, որովհետև կարելի է տեսնել, թե ինչպես նրանք խումբ-խումբ և միշտ միևնույն ձևով, ամեն կողմից շարժվում են։ Կանայք երբեք մենակ չեն գնում, այլ միշտ բազմաթիվ հարևանուհիների և երեխաների հետ։ Այդ ժամանակ նրանց զրույցն այնպիսի բնույթ է կրում, որ կարծես ամբողջ օրը միմյանց ո՛չ տեսել և ո՛չ էլ իրար հետ խոսել են։ Դանդաղ քայլերով նրանք բարձրանում են դիք բլուրները, որտեղ իրենց բնակարաններն են։ Ճանապարհին հանգստանալու և զրուցելու համար երկար կանգ են առնում։ Մինչև իսկ ծանր բեռը նրանց ետ չի պահում դրանից. նրանք բեռը ցած են դնում կամ պահում են նույն դիրքում և բոլորովին հանգիստ շարունակում սկսված խոսակցությունը։ Հաճախ մի փոքր նստում են քարերին, որից հետո ավելի աշխույժ են դառնում, քան երբևէ։ Բաժանվելու ժամանակ նրանց սովորական արտահայտությունը մեկ ընդմիշտ նույնն է. որոնց ճանապարհն ավելի կարճ է, միաբերան ասում են մյուսներին, առանց անվան կամ կոչման. «Գնաք բարո՜վ», որին մյուսները պատասխանում են. «Մնա՜ք բարով»։ Ես խորհուրդ կտամ ամեն մեկին, ով բախտ կունենա այդ վայրը տեսնելու, երեկոյան կանգնել որևէ ճանապարհի վրա և սպասել նրանց։ Ուրիշ ոչ մի տեղ չի կարելի նրանց այնպես հանդարտ, այնպես անհոգ, այնպես անվախ և, միաժամանակ, այնպես գրավիչ տեսնել, ինչպես այստեղ — օրվա ընթացքում թարմ օդը վայելած և ահա իրենց բեռան տակ կարմրատակած, դեմքի թարմ գույնով, ավելացրած դրան երեկոյան մթնշաղը։ Այդպիսի մեկն իր դերը լավագույն կերպով կատարած և շահած կլինի, եթե այնպես աննկատ մոտենա, քանի դեռ նրանք չեն հասցրել իրենց գլուխը, մեջքը, գիրկը ազատել իրենց բեռից, մի բան, որ նրանք անում են, երբ մի այդպիսի զննող աչք նշմարեն։ Սպիտակ և կարմիր քողերը հեռվից մատնում են նրանց. աղջիկները գնում են երեսները բաց, բայց նման դեպքում ծածկում

են այն ձեռքերով։ Նրանք մինչև իսկ սիրով ժպտում ու հաճույքով դիտում են, երբ օտարականն անցնելիս թեթևակի նայում է իրենց։ Նրանք օտարականին արժանացնում են հարևանցի հայացքի, բայց շատ մեծ զգուշությամբ։ Այլապես նրանք շատ ամաչկոտ են, ինչպես այդ կարելի է դիտել տանը։

Երբ տուն են հասնում, կովերն արդեն հանդից վերադարձած են լինում. կթում են նրանց ու ապա կեր տալիս։ Այնուհետև սկսում են ընթրիք պատրաստել։ Միշտ չէ, որ եփում են։ Հաջորդ օրվա համար մածուն են մերում։ Վերջինս անում են հետևյալ կերպ. թարմ կաթը եռացնում են, ապա թողնում այնքան, մինչև գոլանա, որից հետո նրա մեջ մի լիքը գդալ հին մածուն են լցնում։ Երեք-չորս ժամվա ընթացքում դա վերածվում է մի բավական թանձր զանգվածի, որպիսին Եվրոպայում բնավ կերած չեք լինի։ Սա շատ ավելի համեղ ու սննդարար է, որովհետև ջրային մաս քիչ է մնում։ Ես չեմ խոսում պանրի կամ դրա նման զանգվածի մասին, այլ իսկական մածնի։ Դա նաև այն առավելությունն ունի, որ ամբողջ տարին կարելի է պատրաստել, ընդ որում ձմռանը շատ ավելի համեղ է, քան ամռանը, քանի որ ջրային մաս քիչ է պարունակում։ Այն դեպքում, երբ դրսում մութ է, կամ էլ անձրև է գալիս, նրանք լույսի տակ, բոլորը միասին, թեթև ընթրում են և քնում ծածկի տակ։ Եթե եղանակը պայծառ է, ինչ որ մեզ մոտ ամռանը համարյա միշտ լինում է, նրանք այդ նույնը կատարում են լուսնի կամ աստղերի շողերի տակ, տան կտուրի վրա, որ այնքան ավելի հրապուրիչ ու քաղցրահամ է, որքան զով քամին ավելի է փչում։ Կտուրից կարելի է տեսնել ամենահեռավոր գետերը, կրակի մի շողք, գետերի սպիտակ ընթացքը։ Այդտեղից նրանք ժամերով խոսում են հարևանների հետ, և ով լավ ձայն ունի, գրավում է բոլորի, մասնավորապես, ջահել աղջիկների ականջը։ Նրանք անկողիններում պառկած լսում են մինչև կես գիշեր՝ հառաչանքներով և հոգեկան հուզումով, քանի որ այդ երգերը իսկապես որ ռոմանտիկ և միևնույն ժամանակ թախծոտ են։ Դրանք նկարագրում են, թե ինչպես երկու հոգիներ մոխրի են վերածվում և միայն այն ժամանակ են միանում, երբ նրանցից երկու վարդ է ծաղկում. սակայն նրանք երբեք չեն կարող միմյանց հետ կրկին գրկախառնվել, որովհետև սիրահարները միևնույն դավանանքին չեն պատկանում։ Տատասկի մի թուփ, որն աճում է նրանց միջև, բաժանում է նրանց միմյանցից։ Դա մի վհուկ է, որը նրանց կենդանության ժամանակ խանգարում էր ի կատար ածելու իրենց իղձը։ Կամ՝ երգիչն օտարություն է գնում և իր սիրածին հավիտենական հավատարմության երդում տալիս. վերջինս էլ միևնույն բառերով իր հավատարմությունն է խոստանում։ Կամ, ասենք, մի հերոս կակ եղբայր մեծ վտանգի մեջ է և օգնության է կանչում յուրայիններին, մասնավորապես քրոջը։ Այդ մասին սակայն հետագայում։

Ծերերը, որոնք ամենօրյա եկեղեցական արարողություններն երբեք բաց չեն թողնում, ահա վերադառնում են տուն, ասելով. «Ողորմի աստված»։ Դրան բոլորը պատասխանում են. «Աստված քո հոգուն էլ փրկություն տա»։ Կանայք զբաղվում են կարագ պատրաստելով, որ ցերեկը չեն կարող անել. այդ տեղի է ունենում շաբաթը մեկ անգամ, երբեմն նաև ավելի ուշ։ Կանայք օրեր շարունակ հավաքում են մնացած մածունը և երբ արդեն բավական հավաքվում է, սկսում են մշակել։ Դրա համար նրանք երեք-չորս ոտնաչափ երկարությամբ և կես ոտնաչափ տրամագծով փայտյա մի մեծ գլան՝ <խնոցի> ունեն։ Սրա երկու կողմերը փակ են, իսկ մեջտեղը մի անցք կա։ Մածունն այս անցքով լցնում են ներս, վրայից էլ տաք ջուր. այնուհետև փակում են այն, խնոցին կախում են սենյակի առաստաղի հեծանից երկու պարանով, որոնք իրարից այնքան են հեռու, որքան խնոցին է, այսինքն ըստ երկարության, իսկ խնոցին այնպես են հագցնում պարանի մեջ, որ մի պարանը նրա մի ծայրը, մյուսը երկրորդ ծայրը գետնից բարձր պահի։ Խնոցու երկու ծայրերին խոռոչներ են փորված, կամ ծայրերը մի բարակ փայտով շատ ամուր օղակված են. դրա նպատակն այն է, որ պարանը նրանից դուրս չպրծնի։ Հասկանալի է, որ անցքը վերևի կողմն է մնում։

Մեկ կամ երկու հոգի կանգնում են երկու ծայրերին և խնոցին հորիզոնական դիրքով այնքան այս ու այն կողմ տարուբերում, մինչև որ զանգվածը լուծվի։ Ժամանակ առ ժամանակ խնոցին շրջում են այնպես, որ անցքը մի կողմի վրա գա և նայում են։ Գդալով զանգվածից մի փոքր վերցնում են և ստուգում, թե որքան է այն լուծվել։ Վերջինս կրկնում են այնքան ժամանակ, մինչև որ ամբողջովին պատրաստ լինի։ Կարագը պահում են կավե մի ամանի մեջ. մնացորդից մի թեթև ապուր են պատրաստում, որ կանաչեղենով եփած, բավականին համեղ է։ Ես ներողություն եմ խնդրում, որ ճակատագրական այս խնոցիով շատ տարվեցի. իմ նպատակն էր ընթերցողին գյուղական վայելքներն այնպես ներկայացնել, ինչպես դրանք կան և ինչպիսի հրապույր ունեն։ Քանի որ դրա գործածությունը շատ տարածված է, հետևաբար և ես չուզեցի այն մոռանալ։

Մեր բարեկամներն այժմ միմյանց պատմում են օրվա իրենց ապրումները։ Տան պառավ տնպահը պատմելու և լսելու ամենաշատ բաներն ունի։ Նրանք այս զրույցների ժամանակ ննջում են, շատերը միևնույն վերմակի տակ։ Այս վայրը, որն ամբողջովին իմ կողմից արդեն նկարագրված ձմռան գիշերների բնույթն ունի,— այս ճանապարհն ես աշխարհում ոչնչի հետ չեմ համեմատի, ոչ մի բանի հետ չեմ փոխի, որովհետև քանի-քանի անգամ եմ ես դիտել իր ամբողջ ուժով արևմտյան հորիզոնում ինձ դեմ հանդիման կանգնած մայր մտնող շառագունած արեգակը և մանկական հայացքով

ժպտացել։ Ես հաճախ եմ հիշատակել Քանաքեռի հրապույրների մասին. ոչ մի բնակավայր այնքան գեղեցիկ, այնպես երկնային չէ, ինչպես այս բարձրադիր վայրը՝ հարավային երկնքի տակ, երեկոյան մթնշաղին, երբ ահն ու հրճվանքը, սարսափն ու հույսը, երբ օրվա պատկերները հիշողությանդ մեջ դեռ թարմ են՝ խաղերն ու բնությունը և այս թեք դիրքը, երբ քաղաքը, գյուղի այգիները, հսկա Արարատն ու Ալագյազը վրա հասնող գիշերվա մեջ հետզհետե անհետանում են աչքերից,— թե այս բոլորը ինչպիսի՜ տպավորություն են թողել ինձ վրա, ես չեմ փոխի և ո՛չ մի բանի հետ, որ տեսել եմ հետագայում։ Ծառերի այն խշշոցը, որ առաջանում է գրեթե ամեն երեկո այստեղ բարձրացող ուժեղ քամուց, գետերի կարկաչը և գիշերային լույսի տակ նրանց արծաթե փայլը, ուրախ սիրտխփոցը,— այս բոլորը դրդում են ինձ, որքան կարելի է շուտ տուն վերադառնալ, որպեսզի մերոնց գրկում բաղձալի հանգիստ գտնեմ։ Ա՜խ, սրանք պատկերներ են, որ թերևս ոչ մի նկարչի աչք չի տեսել, ոչ մի այլ սիրտ չի զգացել։ Անգամ երբ ես վանքից վերադառնում էի, և տանն իմ գալու մասին արդեն գիտեին, որովհետև այնտեղից մեկին իմ հետևից էին ուղարկում,— ես տեսնում էի, թե ինչպես ցերեկը մայրս և եղբայրներս ինձ մի վերստաչափ ընդառաջ էին եկել։ Փոքրերը մեկնվում էին այգու պատերին։ Երեկոյան, այս ճանապարհի վրա, մթության մեջ ես հազիվ կարող էի կռահել, թե այնտեղ քարերին նստած՝ մարդ կարող է լինել, երբ հանկարծ լսում էի նրանց միաբերան կանչը. «Սրտիս հատոր զավակս, թանկագին եղբայրս»։ Նրանց գրկախառնումից, համբույրներից, որոնցով ինձ մինչև տուն էին ուղեկցում, արդարև պետք է բնությունից լքված, անսիրտ մարդ լինես, որպեսզի չհուզվես։ Դռան առաջ կանգնած էր լինում հայրս կամ հորեղբայրս, որին ես հոր նման հարգում եմ, և սրտագին կրծքին սեղմելով ասում էին. «Սրտիս հատոր, մեր աչքի լույս։ Այն օրից, ինչ բաժանվել ենք քեզանից մենք ապրում ենք երջանիկ, միայն քո բացակայությունն ենք զգում, միայն կարոտդ ենք քաշում»։ Ես արդեն պատմեցի իմ քույրերի ու եղբայրների անկեղծ վերաբերմունքի մասին, թե ինչպես նրանք իրենց բոլոր փայփայանքներով չբավականանալով, ուզում էին իմ քունն էլ քաղցրացնել։ Այժմ ես ուզում եմ հետևյալն էլ ավելացնել.— աստղազարդ երկինքը, գիշերվա թարմ, զով օդը, նրանց սրտի, ինչպես նաև շնչառության ջերմությունը։ Ես երբեք այնպես քաղցր չեմ ննջել, այնպես քաղցր զարթնել և թերևս դա ինձ այլևս երբեք չի վիճակվի։ Արևը մեզ քուն էր տալիս, արևն այն նորից վերցնում՝ կրկին պարգևելու համար։

Այգում ժամանակ առ ժամանակ կատարվող բոլոր հաճելի զբաղմունքներից ուզում եմ միայն երկուսի վրա փոքր ինչ հանգամանորեն կանգ առ-

նել։ Մեկով միաժամանակ սկսվում է այգու կյանքը, մյուսով՝ ավարտվում։ Առաջինը թութ թափ տալն է, երկրորդը՝ այգեկութը։ Ո՛չ մի միրգ ավելի վաղ չի հասնում, քան թութը և ոչ մեկն ամենից ուշ չեն հավաքում, քան խաղողը։

Նախքան թթի հասնելը յուրաքանչյուր տանտեր, եթե կարողություն ունի, բրդյա կամ բամբակյա բազմաթիվ կտորներից մի մեծ սփռոց է կարում։ Դա լինում է կամ քառակուսի, կամ էլ երկարավուն։ Եթե քառակուսի է, ապա ամեն կողմը հավասար է մոտ երեք-չորս սաժենի. իսկ եթե երկարավուն, ապա՝ ավելի մեծ։ Մի քիչ առաջ ես ասացի, որ թութը շատ քնքուշ է և միևնույն ժամանակ այնպիսի հատկություն ունի, որ քամուց մեծ քանակությամբ վայր է թափվում և անմիջապես ցրիվ գալիս, ընդ որում հյութը մեծ մասամբ դուրս է գալիս և դժվարացնում ձեռքերով հավաքելը, մի բան, որ գյուղացիներն ամեն օր անում են, եթե չեն ուզում, որ մեծ մասը կորչի։ Մրգի քանակն էլ անասելի շատ է. եթե մեկը 10—20 ծառ ունի, այն էլ մեծ ծառեր, ապա հնարավորությունից վեր է՝ բոլորը հավաքել։ Ոմանք, սակայն, հարյուրից ավելի ծառեր ունեն. դրա համար էլ պատրաստում են հիշյալ նպատակահարմար հարմարանքը, բայց, չնայած դրան, այն օգտագործելու համար միշտ հինգ մարդ է հարկավոր։ Մի տղամարդ (երբեմն էլ կին), ձեռքին մի կացին, բարձրանում է ծառը, երբ արդեն մինչ այդ մի քանի անգամ խաչակնքել է և աստծուն ապավինել։ Այս աղոթքը կատարվում է միայն առաջին ծառը բարձրանալիս, և սկսելով ամենաստորին ճյուղերից, շարունակում է գործը։ Ներքևից դիտում են, թե նա ո՛ր ճյուղն է ուզում ամենից առաջ թակել։ Չորս հոգի ամեն կողմից բռնում են սփռոցը և կանգնում ծառի տակ։ Կացնի հակառակ կողմով նա նախ խփում է փոքր ճյուղերին՝ շատ թույլ կերպով, մեծ և հաստ ճյուղերին՝ ավելի ուժեղ և մի քանի անգամ։ Շատ հաճելի տեսարան է, թե ինչպես միանգամից քնքուշ պտուղները հարյուրներով ամեն մի ճյուղից անձրևի նման սփռոցի մեջ են թափվում, իսկ այն պահողը, ով էլ լինի, ցանկացածի չափ կարող է ուտել։ Նա ինչքան վերև է բարձրանում, հետզհետե անտեսանելի է դառնում, հետևապես պետք է մի թեթև հարվածով ցույց տա իր տեղը և ճյուղը, որից հետո ներքևում կանգնածները փոխում են իրենց դիրքը։ Աշխատությունն այժմ ավելի է մեծանում, որովհետև մրգերը պետք է շատ ճյուղերի և տերևների վրայով թափվեն. այդ ժամանակ դրանք աղմուկ են հանում և անձրևի տարափի նման թափվում։ Թթի մի մասը հանդիպելով հաստ ճյուղերին հենց վերևում ճխլվում է կամ ջարդվում։ Դա ներքևում կանգնողներին այնպես է թվում, որ անձրևի պատրանքն ավելի զգալի կլիներ, եթե մրգերն աչքի առաջ չլինեին։ Բնական է, որ թթի կեսը կորչում է, որովհետև ճյու-

ղերից շատերն ուղիղ են, և ծառի բունը խանգարում է սփռոցը մոտեցնելուն, բայց, առանց այդ էլ, հնարավոր չէ բոլորը հավաքել, որովհետև ճյուղերը շատ մեծ են ու տարածված, և միրգը բոլոր ծայրերից այս ու այն կողմ է շպրտվում։ Դրա մի մասը մեծ չարչարանքով հետո հավաքում են։ Բացի այդ, սփռոցը պետք է շուտ-շուտ դատարկել, այլապես հյութը մեկ երկու րոպեում սփռոցից կհոսի, մի բան որ իսկապես միշտ էլ պատահում է։ Դրանից արդեն կարելի է եզրակացնել, թե այս պտուղը որքան հյութեղ և քնքուշ պետք է լինի։

Եվ այսպես, անցնում են մեկ ծառից մյուսը՝ միշտ միևնույն ձևով։ Տարեկան կարելի է հինգից-վեց անգամ առատորեն թափ տալ։ Սակայն այս վերջինն էլ քիչ է։ Դրանից հետո էլ մի մեծ բաժին զոհ է դառնում անկոչ հյուրերին։ Պտուղն օգտագործում են չորս կերպ. այն չորացնում և ուտում են որպես քաղցավենիք, որ շատ համեղ է։ Նրանից պատրաստում են քացախ, դոշաբ և օղի։ Վերջինների պատրաստման եղանակները մի այլ տեղ շարադրված են։

Այգեկութը կատարվում է հետևյալ ձևով. ով շատ և միևնույն ժամանակ մեծ այգիներ ունի, իսկ գյուղում միայն քչերը չունեն, առավոտ վաղ իր մոտ է հրավիրում ազգականների ու հարևանների մեծ մասին, նաև բոլորովին անծանոթների, որ պատահաբար գյուղում են լինում։ Նա կարիք չունի ասելու, թե ինչու է կանչել, որովհետև հենց տարվա ժամանակն ինքն արդեն նրանց հասկանալ է տալիս այդ։ Դրանք հասուն կանայք են իրենց երեխաներով, տղա կամ աղջիկ. տղամարդ՝ հազվադեպ։ Տան տերերը հատկապես այս նպատակի համար պահում են մի այծ, ոչխար կամ մի գառ, որ մորթում են և հենց այգում խորոված պատրաստում, ապուր կամ այլ կերակուրներ եփում, որոնք բոլորն էլ յուրատեսակ են. կամ գնում են միս, բրինձ ու դրանցով զանազան կերակուրներ պատրաստում։

Հյուրերն առավոտյան վաղ հայտնվում են կողովներով ու դանակներով և տանտիրոջը գտնում այնտեղ՝ զանազան նախապատրաստություններով զբաղված։ Մեկը մաքրում է այն տեղն, ուր խաղողն են հավաքելու, մեկ ուրիշը պատրաստում է մեծ կողովներ, երրորդը կերակուրներն է եփում։ Մի թեթև նախաճաշից հետո գործի են անցնում։ Խաղողի այգիները բաժանված են մեծ թմբերի, որոնք բավականին երկար, բայց անհամեմատ լայն և այնքան բարձր են, որ հասակով մեկ կանգնած մարդը հազիվ է նկատվում դրանց միջև։ Տարեցներն երկու երեք հոգով զբաղվում են այդ թմբերից մեկով, ողկույզները կտրում են և դնում կողովի մեջ, որ տղաները՝ գլխներին դրած, պահում են նրանց առաջ։ Հենց որ կողովները լցվում են, շուռ են տալիս ավելի մեծերի մեջ, իսկ տղամարդիկ այն տանում են հնձանը, թա-

փում այնտեղ և կրկին ետ բերում՝ նորից նույնն անելու համար։ Բոլորի ձեռքերը զբաղված են ամենաեռանդուն կերպով, բայց լեզուներն ավելի։ Կատակը, ձեռ առնելը և ծիծաղը վերջ չունեն։ Հենց որ կշտանում են, ինչ որ շատ շուտ է լինում, մեկը հաճախ մոռանում է իր աշխատանքը և ուզում է հարևանուհուն գետին գցել. մի ուրիշը պտուղներ է շպրտում մյուսի վրա, առանց այդ նկատել տալու, որովհետև իսկույն խաղողը պահում է ձեռքում։ Նրանց միջից մի երգչուհի մեղմ երգում է, որին ձայնակցում է մեծ մասը, բայց այնքան ցածր, որ ձայնը մոտ տարածության վրա հազիվ է լսվում։ Մի ուրիշը պատմություններ և արկածներ է պատմում, որը նրանց շատերի ծիծաղն արցունքի է փոխում։ Ամենից շատ զբաղվածը տանտիրուհին է. նա աշխատում է բոլորին զբաղեցնել, այնպիսի բաներ է ցույց տալիս ու պատմում, որոնք կարող են նրանց զվարճացնել։ Այդ ժամանակ ամբողջ երկրում շրջում են շատ զվարճախոսներ, աճպարարներ ու գուսաններ։ Ամեն մի չնչին գործի համար նրանց դիտավորյալ վարձում են այդ օրը։ Երբ նրանք արդեն կուշտ կերել են, սկսում են իրենց աճպարարությունները, որ վերջ չունեն։ Այս զվարճությունների տակ նրանք աշխատում են մինչև կեսօր։ Ժամը տասին բոլորը հավաքվում են և ճաշում, ապա մի փոքր հանգըստանում ու կրկին գործի անցնում։ Այս բոլորը տեղի է ունենում սովորաբար կանաչ մարգագետնի վրա կամ մեկուսի ընկած ծառերի տակ, որտեղ տղամարդ չկա։ Ով այդ օրերին այստեղ երևա, իր մասնակցության բաժինն ունի։ Այդպիսին կարող է նրանց հետ աշխատել, եթե ցանկություն ունի։ Նրանք, սակայն, մեծ մասամբ մի բան անում են, քանի դեռ ախորժակները չեն հագեցրել։ Հենց որ դա կատարվում է, ավելի լավ է նրանց ճանապարհ դնել, որովհետև նրանք կխանգարեն ուրիշներին էլ, որոնց նպատակը գործը, որքան կարելի է, շուտ վերջացնելն է։ Երեկոյան երբ տուն են վերադառնում, բոլորն, առանց բացառության, տանում են իրենց հետ բերած խաղողով լի կողովը։ Թփերին մնացած խաղողը հավաքում են տանեցիները. սակայն դրանից հետո էլ դեռ բավականաչափ մնում է, մասամբ չնկատելուց, մասամբ էլ թողնում են դիտավորյալ, որպեսզի միշտ թարմ խաղող լինի։ Դրանից հետո ամեն ոք, այսինքն օտարականները, կարող են այգի գնալ և ճռաքաղ անել, որի ժամանակ մեծ մասամբ լավ հաջողություն են ունենում։

Ընդհանրապես, երբ որևէ ծառ քաղված է, ամեն մարդ կարող է իր համար ուզածին չափ որոնել, մի բան, որ պատահում է մասնավորապես ընկույզի ծառերի հետ։ Ճարպիկ տղաներն ամեն տարի այդ ճանապարհով հազարներով ընկույզ են հավաքում։ Ծառերից շատերի ընկույզը մի անգամ թափ տալով չի վերջանում։ Ընկույզ թափ տալը կատարվում է մի ձողով.

որը մեկը ձեռքն առած վերևից խփում է. հարվածի արդյունքը հաճախ շատ զգալի է լինում, եթե մոտ ես կանգնած. այդ պատճառով էլ գետնից ոչ մի հատ չեն վերցնում, մինչև ամբողջ ծառը թափ չտան։

Դրանից հետո ամեն ինչ հետզհետե սկսում է ամայանալ։ Արդեն աշուն է։ Այժմ այստեղ մեծ մասամբ երեխաներն են խաղում կամ անասուններին են արածացնում։ Չգիտեմ, ինչպիսի՞ զգացումներով կհամակվի մարդ, երբ տեսնի, որ այն վայրը, այն ծառը, որին այնքան սիրում, այնպես խնամում էր, ծածկվել է նախ կարմրախառն դեղին, որ գունավորված տերևներից է, իսկ հետո բոլորովին սպիտակ զգեստով։ Ամեն շարժում ու աշխուժություն տեղի է տալիս մի անդորրի, ուր միայն տրտմություն կա և սուգ։ Սիրահարներն այստեղ արցունքով նայում են՝ այժմ տերևաթափ ու անկենդան թփուտներին, մարգագետիններին, իրենց մանկական խաղերի մտերիմ վկաներին։ Մայրերը, որոնք իրենց ծծկերներին այնպես քնքուշ խնամել են, երեխաները, որոնց քունն ու խաղն այնպես քաղցր էր ընթացել,— ամեն մեկը տուն է շտապում՝ հառաչանքով ու դողդողացող սրտով։ Ամենաթույլ ձայնն իսկ այժմ վերստերի վրա հնչում է բոլորովին բարձր, և նրա արձագանքը ջինջ օդի միջով ետ է գալիս ձորերից, այգիների պարիսպներից ու հնձաններից ու թափանցում մարդկային հոգու խորքը։

Մի տեղ կարելի է տեսնել մինչև երկինք հասնող մի ծխասյուն, որ բազմազան ձևերով և գալարումներով վեր է բարձրանում, մի ուրիշ տեղ մի բոց է կայծկլտում, մերթ վառ, մերթ թույլ, և մարդ կարծում է, թե դրանք ոգիներ են, որոնք գիշերվա խավարի մեջ դուրս են սողում կրակից։ Սակայն դրանք այլ արարածներ չեն, քան հովիվներ կամ ճամփորդներ, որոնք այս լքված վայրում գիշերային ապաստան են որոնում, կամ դրանք ուրախ զինվորներ և կամ էլ, ինչո՞ւ չէ, ավազակներ են, որոնք ցերեկը թաքնվում են և հազվադեպ չէ, որ հարձակվում են մարդկանց վրա։ Այդ պատճառով էլ տարվա այս միջոցին ոչ ոք գիշերն այգում չի մնում. ցերեկն այս տեղերով անցնում են միմիայն զինված և խմբերով։ Նազելի գարունը սակայն ամոքող ձեռքով կրկին վերադարձնում է բոլորը և մոռացնել տալիս ամեն վիշտ։ Երգերը նորից կենդանանում են. մարդիկ գարնան հրապույրներն այնպե՞ս ագահորեն են ընկալում, կարծես տարիներ շարունակ նման բան ո՛չ տեսել և ո՛չ էլ վայելել են։ Ամեն ինչ հուժկու ուժով դուրս է թափանցում հողից. շուրջդ ամեն ինչ կանաչ է դառնում, ծաղկում բազմազան ձևով ու գույնով։

ա, Իբրև ծանոթություն— Հայերը հավատում են, որ արձագանքը կամ էխոն ոգիների ձայնն է, որի հեղինակը բոլորովին անտեսանելի թաքնվում է շրջակայքում՝ քարայրների մեջ։ Այդ պատճառով էլ արձագանքը նրանց սարսուռ է ազդում։

Թռչունների դայլայլը, աղբյուրների խոխոջը և վերազարթնած բնության ձայնն ամենահաճելի ներդաշնակությամբ հնչում են սարերի ու ձորերի միջով. ամեն ինչ շնչում է խոր հոգով, տարածում է բուրմունք։ Սրատուտներն ու սոխակները երջանկացած գեղջուկ մանուկների համար ուրախ ավետաբերներ են, որոնց ցնծությունն ու մեղեդիները անցորդների ականջներն են թափանցում առավել քաղցր, առավել հրապուրիչ, քանի որ դրանք բխում են մաքուր, պարզ սրտից։ Շրջելով արտերը նրանք նորից որոնում են մանուշակներ, որպեսզի իրենց մայրերի և քույրերի համար փնջեր կազմեն ու բերեն։ Տատրակները՝ անխարդախ հավատարմության խորհրդանիշները , դես ու դեն են թռչկոտում, խոտից խոտ, ծառից ծառ փախչում միշտ անբաժան, զույգ-զույգ, և ամեն անկյունում հնչում է նրանց միապաղաղ ձայնը։

Քանաքե՛ռ, իմ սիրագորով ծննդավայր, քո անունը, քո հրապույրներն ավելի վսեմ են, առավել երջանկացնող, քան ես երախտագիտությամբ ու երկյուղածությամբ կարող եմ դրանք թվել և պաշտել։ Դո՛ւ պարգևեցիր ինձ գոյություն, երիտասարդություն, որոնք քո սանեղծագործ ուժին դեռևս շատ ու շատ հեռու են արժանի լինելուց։ Համբուրելու եմ քո հողը, հենց որ ոտքս դնեմ նրա վրա, մինչև իսկ իմ գերեզմանը, իմ աճյունը հավատարմությամբ կուղեկցեն քեզ, որով իմ սիրտն այնքան կենդանի հրճվում է։

Իմ հայրենակիցների ձմեռային կյանքը մեզ արդեն ծանոթ է։ Մի քանի բնորոշ գծերի, որոնք արդյունք են նրանց աշխատասիրության, ես ժամանակին դիտավորյալ չանդրադարձա, որպեսզի հիմա, այստեղ շարադրեմ։ Այժմ նրանց հանգստի ու վայելքի ժամանակն է՝ իրենց ընտանիքի և բարեկամների շրջապատում։ Բացի այն դեպքերից, երբ նրանք ժամանակ առ ժամանակ ստիպված են դրսում լինել, մեծ մասամբ նրանք գյուղում են մնում և աշխատում են այս հանգիստ ժամանակն ամենահնարավոր չափով միմյանց փոխադարձաբար հաճելի դարձնել։ Առաջին դեպքում նրանք դուրս են գալիս, որպեսզի բերեն սննդամթերքներ, ցորեն, ձուկ, աղ, փայտ, յուղ և այլն։ Նրանք պարսից կառավարության համար ևս բռնադատվում էին կատարելու այլ, մեծ մասամբ ծանր աշխատանքներ. մերթ այստեղ՝ իրենց բնակավայրում, երբեմն էլ դրանից դուրս, սակայն այդ ամենը նրանց ուրախ և

բ, Մեզ մոտ գոյություն ունի այն հավատը, թե այս թռչունները, որոնց միշտ զույգ ենք հանդիպում, որոնք այլևս կանաչ ծառի կամ խոտի վրա չեն նստի, հենց որ նրանցից մեկը մեռնի։ Այդպիսի դեպքերում նրանք նստում են դաշտի քարերի կամ բոլորովին չորացած մի ծառի վրա և այնպիսի թախծոտ ձայն արձակում, որի հնչյունն իսկապես որ շատ տխուր է։ Ինչ էլ լինի, ջահել սիրահարները մեզ մոտ սովորաբար միմյանց համակում են նույն երազանքով։ Նրա անունը հայերեն այնքան քաղցր է հնչում, որ մենք սակավ մի ուրիշ բառ այնպիսի բերկրանքով ենք ընկալում, ինչպես այդ։

խաղաղասեր բնավորությունը քիչ էր մռայլում։ Մինչև իսկ ամենահեռավոր բարեկամներն ու ազգականներն այժմ այցի են գալիս նրանց, կամ իրենք են վերջիններին այցելում։ Գյուղի ինչպես մեծերը, այնպես էլ կանայք ու երիտասարդները տարբեր խմբեր են կազմում։ Նրանք մեկ այստեղ են, մեկ այնտեղ. մերթ ձորում, մերթ իրենց այգում, տներում, կտուրների վրա և քիչ, աննշան ուտելիքներով՝ մեծ մասամբ միրգ ու գինի, հաճելի ժամանակ են անցկացնում։ Միայն առաջինները, որպես ընտանիքի հայրեր, իրավունք ունեն այդ բոլորը հրապարակորեն և հնարավորին չափ հանդիսավոր ձևով կատարել, որին այնուհետև մասնակցում են նաև տան մյուս անդամները՝ առանց տարիքի և սեռի խտրության։ Նրանք երգերով ու զվարճություններով և մի փոքր ճաշով հաճախ ամբողջ գիշերներ են անցկացնում։ Նրանց ամենագլխավոր կերակուրներն են՝ փլավ, խորոված, կաղամբով կամ այլ բանջարեղենով եփած միս, տապակած ճուտ, ձվից, մրգերից պատրաստված ուտելիքներ և աղած ձուկ, որը միշտ պետք է լինի, որովհետև դա նպաստում է գինու վայելքին։ Այս համեղ խմիչքի գործածության մեջ ամեն մեկն աշխատում է հաղթել մյուսներին, բայց սակավ է հաղթանակը տանում, որովհետև չափավորությունը և ծիծաղելի չդառնալու ամոթի զգացումը նրանց որոշ սահմանների մեջ են պահում, որպիսի սահմանը ոչ մի օտարազգի չի կարող պատկերացնել, եթե մտածի, որ դրանք գյուղացիներ են և չափազանց անգետ։ Կանայք իրենց խնջույքներն անում են մրգի մառաններում, հաճախ հենց գինու կարասի մոտ։ Դրանց մեծ մասամբ ներկա են լինում նաև իրենց երեխաները։ Մի քանի բառ փոխանակելուց հետո, երբ արդեն միմյանց առողջություն ու երջանկություն են ցանկացել, դատարկում են բաժակը, ընդորում երեսները շրջում են, կամ էլ ձեռքով ծածկում ի նշան ամոթխածության, որ նրանք մինչև իսկ իրենց սեռի նկատմամբ պահպանում են։ Ջահել կանայք ու աղջիկներն երկար և ձիգ տարիներ կամավոր կերպով, ինչպես նախապես հիշատակել եմ, զսպում են իրենց գինու գործածությունից[35]։ Նրանց համար մեծագույն երջանկություն է, երբ իրենց ջահել ամուսիններն ամուսնական առագաստում իրենց բերանից գինու հոտ չեն առնում. այլապես նրանց մոտ կկորցնեն իրենց վստահությունը, թե այլ արատներից էլ զերծ չեն։ Անհավատալի է, թե ինչպես նրանք իրենց վարմունքով առաջին հերթին աշխատում են իրենց ամուսինների բարեհաճությունն ու սերը գրավել և պահպանել։ Այդ ժամանակ էլ նրանք համարյա միշտ զբաղվում են իրենց գործերով՝ կարում են, հյուսում, գործում, ոստայնակում՝ իրենց և տան մյուս անդամների համար հագուստ են կարում, մաքրում են տունն ու բակը, այցելում են հարևաններին և այլն։ Նրանց ջուլհակային դազգահը յուրօրինակ է, որ դժբախտաբար գծագրել չեմ կարող, որովհետև ես այդ

չգիտեմ։ Հաճախ բոլորը՝ մարդ ու կին և երեխաներ, նստում են քուրսու շուրջ կամ հյուրասենյակի բուխարու մոտ և զրուցում ամբողջ օրը։

Նրանք ամենից ավելի շատ զբաղված և ուրախ են լինում տոն օրերին, մասնավորապես կիրակի օրերը, Նոր տարուն, Ծննդին և Զատկին։ Այդ ժամանակ նրանց մառանները էլ ամենից ավելի են լիքը։ Ամեն շաբաթ օր, համարյա բոլորն, անգամ երեխաները, գնում են եկեղեցի՝ երեկոյան ժամերգության, որ ընդհանրապես հայկական եկեղեցիներում կատարվում է շատ հանդիսավոր։ Կիրակի օրերը, առավոտյան վաղ, ժամի 5—6-ին, նրանք ներկա են լինում առավոտյան արարողությանը։ Պատարագից, որ տեղի է ունենում գրեթե ամեն կիրակի կեսօրին և շատ հանդիսավոր է կատարվում, քչերն են բացակայում։ Ամուսնացած կանայք գնում են սպիտակ քողով, որ ծածկում է նրանց ամբողջ մարմինը՝ գլխից մինչև ոտքերը, և նրանց ոչ ոք չի կարող տեսնել։ Նրանց երեսը բաց է։ Եկեղեցում նրանք այդպես էլ մնում են, և քողը միայն այն ժամանակ են վերցնում, երբ արդեն տանն են։ Եկեղեցուց հեռանալիս համբուրում են պատերը, քահանայի ձեռքը և սուրբ ավետարանը, որ նրանք պաշտում են որպես սրբություն։ Աղջիկները կրում են փոքր, նուրբ, թափանցիկ մի շղարշ, որի մասին ես արդեն գրել եմ։ Մնացյալ եկեղեցի հաճախորդների մասին հետո։ Դեռ պատանեկությունից ինձ համար շատ հաճելի զգացում էր, երբ տեսնում էի բարեպաշտ մարդկանց եկեղեցուց գալիս։ Ամենից վերջը, երբ այս պաշտամունքի վայրը թողնում են, նրանք բոլորն, առանց բացառության, համբուրում են եկեղեցու դուռը. նույնն անում են նաև ամեն անգամ ներս մտնելիս։ Երբ փողոցում մեկին պատահեն, ապա մեծ ջերմեռանդությամբ ասում են. «Ողորմի Աստված», իսկ մյուսը պատասխանում է. «Քո հոգուն էլ փրկություն տա» և նրան մի փոքր կտոր են տալիս նշխարից, որ միշտ բաժանվում է եկեղեցում, արարողությունից հետո։ Սա պետք է տարբերել իսկական հաղորդությունից. առաջինն ստանում են բոլորը։ Ընդունողը միայն այն ժամանակ է վերցնում, երբ դեռ ծոմ է։ Եթե որևէ բան է կերել, ապա այդ մասին ցավելով, անկեղծորեն ասում է, թե այդպիսի պարգևի արժանի չէ։ Եթե ծոմ է, ապա վերցնում է գոհ սրտով, հանում է գդակը, խաչակնքում, հոտոտում մի քանի անգամ և դնում բերանը, բայց այնպիսի մեծ երկյուղածությամբ, որ կուլ է տալիս առանց ծամելու, որպեսզի ատամները չսեղմեն սրբազան հացը։ Այս զսպվածությունը հանդես են բերում նույնիսկ փոքր երեխաներն իսկապես որ հաճույքով։ Վա՜յ նրան, ով մինչև ժամերգության ավարտվելը, թեկուզ ծածուկ, մի բան կերած լինի։ Այդպիսին ոչինչ չի կարող ընդունել։ Ինչպիսի ուրախությամբ եմ ես այդ արել՝ և զսպվածության իմ գիտակցությամբ երեխա ժամանակս եկեղեցուց եկողներին ընդառաջ վազել, բերանս

բացել ու աղաղակել. «Մա՛յրիկ, նախ ինձ՝ սրբազան հացը, ես բերանս ոչինչ չեմ դրել»։ Եվ որքա՜ն երջանիկ էի, երբ ընդունում էի այն և միշտ էլ լսում տվողի խոսքերը. «Չծամել, չծամել. ատամներին իրար չսեղմել»։ Բայց ես հաճախ շեղվում եմ իմ պատմությունից։

Տոներին, մանավանդ Զատկին, նրանք իրենց երեխաներին տալիս են նվերներ՝ գաթա, հագուստեղեն և կարմիր ձու։ Այցելում են միմյանց. բոլոր տներում քաղցրավենիքի, ուտելիքի և խմիչքի առատություն է. ամեն մարդ, ով մտնում է, վայելում է դրանք։ Մի այնպիսի տրամադրություն է տիրում, որ ուրախացնում է բոլորին, և որքա՜ն բնական, որքա՜ն մանկական է դա։ Երբ մեկը հիվանդանում է, ապա նրա համար գառ, ոչխար են մատաղ անում։ Եթե առողջանում է, ապա միսը հավասար բաժանում են բոլոր բնակիչներին։ Մատաղն ընդունելիս ամեն մեկն ասում է. «Աստված ցանկությունդ կատարի»։ Մատաղատերն ասում է միայն. «Աստծո մատաղն է»։ Եթե մահանա, ապա հոգեհաց են տալիս։ Եթե մեկի մոտ հյուր է գալիս մի բարեկամ կամ ծանոթ՝ ապա ուրիշ շատերն էլ առանց հրավերի գալիս են այդ տունը, զվարճանում և հյուրին հերթով իրենց տներն են տանում՝ ճաշի հրավիրելով նաև մնացած բոլորին. մի օր մեկի, մի ուրիշ օր մյուսի մոտ։ Այսպիսին է նրանց հյուրընկալության եղանակը։ Այդ մասին հետո։

Բացի սովորական Նոր տարուց, հայերն իրենց սեփական Նոր տարին ևս ունեն, որ ընկնում է ուշ աշնանը. ամիսը մոռացել եմ։ Դա հայերեն կոչվում է Կաղանդ: Դրա ժամանակ, բացի սովորական ծեսերից և ուրախությունից, նրանք այլ սովորույթներ ևս ունեն, որ չեմ ուզում առանց հիշատակության թողնել։

Դրան նախորդող երեկոյան տան մեծահասակ անդամները հավաքվում են հացատան սեղանի շուրջը, որ ծածկված է լինում մրգերով և անուշեղեններով լցված շատ ափսեներով։ Նրանք անհամբեր սպասում են միանգամայն տարօրինակ մի այցելուի։ Այդ դերը կատարում են պատանիներն ու երիտասարդները։ Վերջիններս 5—6 հոգով մի խումբ կազմած՝ մտնում են բոլոր տները, այն էլ ոչ թե դռնից, այլ երդիկից։ Վերջինս հանկարծակի բացվում է, և պարանով կապված մի պարկ է իջնում ցած. առանց որևէ բառ ասելու էլ դա նշանակում է, որ պարկը պետք է լցնել եղած քաղցրավենիներով։ Սրտանց պատրաստ են այդ անելու, սակայն ուզում են մի փոքր կատակել։ Պարկը ներքև են քաշում, պինդ պահում և դրսում եղածներին ձայն տալիս, որ իրենց և իրենց սիրածների անունները տան։ Դրսում եղողները ծիծաղում են, փսփսում, գլուխներն ու ոտքերը մի փոքր ներս կախում և անմիջապես կրկին ետ քաշում՝ առանց որևէ բառ արտասանելու։ Երևութական բարկությունից պարկի մեջ քար, ավազ, փայտ և նման բաներ են լցնում և

թողնում, որ վերև քաշեն։ Բոլոր այս բաները դեն են գցում և պարկը կրկին իջեցնում ցած։ Կարճ ասած, ուզածի չափ կրկնում են այս վեր ու վար անելն՝ առանց մի բան ասելու։ Ինչո՞ւ չէ, պարկի մեջ հաճախ նույնիսկ ջուր են լցնում. մի բան, որ երկու կողմին էլ շատ է զվարճացնում։ Վերջապես նրանք իրենց ուզածն ստանում են և հեռանալիս արձակում ճիչ։ Եվ այսպես ամբողջ գիշերը։ Հաջորդ օրը նրանք պատմում են, թե ովքեր են եղել։ Տանեցիք էլ ուշ են պառկում և հավաքված ուտում են մրգերը և բրնձից կամ ձավարից պատրաստած մի կերակուր, որի նկարագրությունը զանց եմ առնում։ Դա շատ համեղ է և շատ լավ պատրաստված։ Նույնը եփում են նաև ուրիշ ժամանակ, բայց այս օրերին առանձնապես։

Այդ օրը բոլորի սրտերը բերկրանքով է լցնում։ Նախ՝ ընտանիքի անդամները մեծ երկյուղածությամբ ու ջերմեռանդությամբ գրկախառնվում են և միմյանց քաղցրավենիներ նվիրում։ Ապա՝ գալիս է քահանան և օրհնում է տունը։ Այնուհետև՝ ծերունիները խմբով վերցնում են քահանային և լինում են մերթ այս, մերթ այն տանը։ Ամբողջ օրը նրանց ուրախությանը վերջ չկա։ Կանայք ևս հավաքույթներ են կազմակերպում։ «Շնորհավոր Նոր տարի և բարի Կաղանդ»,— աղաղակում են մեծ ու փոքր։ Ջահել աղջիկներն ևս այսօր փորձում են իրենց բախտը։ Այն կերակրի առաջին գդալը նրանց ապագա փեսացուի գուշակն է։ Մեծ զգուշությամբ նրանք վերցնում են դա, դնում մի բաց տեղ և ժամերով ծածուկ սպասում, որ մի թռչուն տանի այն։ Ինչպե՜ս են նրանք մանկան պես ուրախանում, երբ դա կատարվում է. մի ճընճղուկ կամ մի ուրիշ թռչուն վերցնում է այն։ Այն կողմից, դեպի ուր նրանք թռչում են, գալու է իր ապագա սիրածը և տանելու է իրեն։ Նրանց կարոտն ուղղվում է դեպի այն կողմ։ Արցունքն աչքերին նրանք հաճախ կանգնում են այդտեղ և մանկական անմեղությամբ սպասում իրենց պսակին։ Հաջորդ տարին, սակայն, նրանց երազները խորտակվում են, որովհետև ավետաբերն այս անգամ այլ ուղղություն է վերցնում։

Տարվա այս ժամանակ նրանք կատարում են նաև իրենց հարսանիքները, ուխտագնացությունները, երաժշտական հավաքույթները և այլ խրախճանքներ։ Դրանք, ինչպես եկեղեցական ծեսերը, բոլոր հայերի մոտ նույնն են. այդ պատճառով էլ ուզում եմ դրանք առանձին նկարագրել։

Այստեղ է, որ ապագա ամուսիններն առաջին անգամ գտնում են իրենց կյանքի երջանկությունը։ Խաղընկերությունից հետզհետե առաջանում է նրանց սրտերի միությունը։ Առանց բառերով արտահայտելու այն, ինչ մտածում են, նրանք իրենց մեջ արթնացած հոգեվիճակը մատնում են մի վարդ փոխանակելով՝ իբրև փոխադարձ համակրանքի նշան. իսկ եթե սակավ են տեսնում միմյանց, կամ հաճախակի չեն կարող հանդիպել, ապա վարդն

ուղարկում են երեխաների միջոցով, որոնք ոչինչ չեն հասկանում դրանից, ծանոթների, որոնք նպաստում են դրան, մեծ մասամբ, սակայն, իրենց մայրերի միջոցով, նախքան գործը հորը կհասնի, որովհետև դա նրանց փոխադարձ համակրանքի արտահայտությունն է։ Նրանք սպասում են միմյանց ջուրը, ինչպես լուսինն արևի։ Հաճախ մի ծառի տակ մի բան է դրված լինում, որ իրենց տանից չէ։ Եթե աղջիկը մենակ է գտնում, ապա վեհերոտ վերցնում է այն, հազարավոր համբույրներով սեղմում կրծքին և այդ մասին, բացի մորից, ուրիշ ոչ ոքի չի հայտնում։ Աղջիկը ժամերով կանգնում է այդ նույն տեղում, հազում, ինքն իրեն մեղմ մրմնջում, որպեսզի սիրածը երևա։ Եվ երբ վերջինս թփից կամ խաղողի թմբից բարձրացնում է գլուխը, ինչպիսի՜ անակնկալ, ինչպիսի՜ հանդիպում, ինչպիսի՜ գրկախառնում։ Եվ այդ տեղի է ունենում խաղողի վազերի, ծիրանի կամ սալորի սքանչելի ծառերի տակ։ Նրանք ժամերով խաղում են այնտեղ, իսկ հոգածու մայրը բերում է նրանց քաղցր պատառներ, որ կտրել է իր իսկ երեխաների բերանից։ Այս դրությունը, այսպիսի գրկախառնությունը խանգարվում է, եթե այնտեղ են մայրը կամ մյուս երեխաները։ Ինչքան հաճախ եմ ես տեսել ու զայրույթով միջամտել, իմ հորեղբոր աղջկա հետ վատ վարվել, որովհետև ինձ թվում էր, թե նրա հետ խաղալու կամ նրան համբուրելու իրավունք միայն ես ունեմ։ Եվ կամ երեխա ժամանակ մորս հարցրել եմ, թե ինչ են ուզում անել նրան և այն պատասխանն եմ ստացել, թե այդ օտարն էլ ուզում է մեր եղբայրը դառնալ։ Դրանից հետո նրան գրկել ու համբուրել եմ. նա ինձ բոլորից ավելի շատ է սիրել և օգնել։

Իսկ եթե դրա գտնողը մեկ ուրիշն է, ապա ցնորած վազում է յուրայինների մոտ և բոլորին բարձրաձայն ծանուցում իր երջանկության մասին։ Եթե այդ մեկը հասուն երիտասարդ է և գիտե բանի էությունը, ապա վա՜յ խեղճ քրոջը։ Նա ամենաանխիղճ կերպով ձեռ է առնում քրոջը, լացացնում, որ նա մի ուրիշին է սիրել և ոչ թե իրեն։ Շիկնելը, ամաչկոտությունը, ամոթխածությունը, մորն ուղղած պաղատանքները, որի կրծքին նա սեղմում է իր գլուխը և դեմքը չի բարձրացնում այնքան ժամանակ, քանի դեռ բարկացած եղբայրը չի հեռացել,— մի՞թե այս բոլորն այլ բան են ցույց տալիս, քան նրանց անաղարտությունը և անմեղությունը։ Վերջապես, եթե հայրն է գտնում, ապա գործը վերջացած է, որովհետև նա լավ գիտե դրա նշանակությունը. ինքն էլ է արել այդ, սակայն, չնայած դրան, նա սիրալիր և զգուշությամբ գրկելով ու շոյելով աղջկան, ասում է. «Դու գտել ես քո գանձը, իմ աչքի լույս (մի արտահայտություն, որ մեր սիրասուն ծնողները մեր նկատմամբ գործածում են)։ Ո՞վ է նա. ինչո՞ւ ինձ ոչինչ չես ասել, մոռացել ես քո հորը։ Նա շա՞տ է սիրում քեզ, քանի՞ անգամ եք հանդիպել, ի՞նչ

եք արել իրար հետ. իհարկե, համբուրվելուց և խաղալուց բացի ուրիշ ոչինչ։ Ա՜խ, չար մայրդ. նա ուզում է իմ աղջկան ինձնից հեռացնել, ես նրան ցույց կտամ. դու մեղք չունես, ես ինչպես հարկն է նրան կպատժեմ, որ այդ բանն ինձնից թաքցրել է»,— և այլն։ Ինչպե՞ս կարող եմ ես նկարագրել արցունքների հեղեղը, նրա ընկճվածությունն ու այդ պահի ապրումները։ Եթե մայրը ներկա է, ապա նա հազարավոր սպառնալիքների է ենթարկվում ու ծանր խոսքեր լսում, որոնք արվում են միմիայն աղջկան հանգստացնելու և մխիթարելու համար։

Որքա՜ն հուզիչ, որքա՜ն հանդիսավոր է երջանիկ սիրահարի երևալը։ Եթե նա գյուղում է ապրում, պետք է գա ցերեկը։ Նա մտնում է մի այնպիսի երկյուղածությամբ, որը դրսևորում է նրա մանկական էությունը, եթե մինչև իսկ քսան և ավելի տարեկան լինի։ Խոնարհած գլխով, ամոթխածությունից շառագունած այտերով նա մեկնում է ձեռքերը, որպեսզի բռնի իր ապագա աներոջ ձեռքը, համբուրի այն առանց ծպտուն հանելու։ Վերջինս ծանրակշիռ կերպով ետ է պահում իր ձեռքը։ Սա հանդիմանության նշան է, որ արտահայտում է նրա դժկամությունն այն մասին, թե ինչպես է նա առանց իր կամքն հարցնելու համարձակվել տեր դառնալու այն գոհարին, որին նա իր գրկում է խնամել։ Նա թվում է իր աղջկա առավելությունները և հորդորում, թե ինչպես պետք է վարվել նրա հետ և գնահատել նրան։ Նա երդվում է, որ աղջկան ամեն րոպե ետ կվերցնի, եթե ինքը քնքուշ ամուսին չլինի, մի բան, որ մեզ մոտ հաճախ անում են։ Բայց դա տեղի է ունենում մասնավորապես հարսանիքին նախորդող օրը։ Այնուհետև նա երկու ձեռքերով գրկում է իր ապագա փեսայի գլուխը, համբուրում ճակատը, մեկնում է ձեռքը, որ նա համբուրի և հանդիսավոր կերպով տալիս է իր հավանությունը, որ նա այդ պահից մուտք ունի իր տունն իբրև որդի, ինչպես նրան այնուհետև միշտ անվանում է։ Երջանիկ հարսնացուն այս բոլորը լսում է դռան ետևից, եթե տանն է կատարվում դա, կամ մի ծառի ետևից, եթե այդ խոսակցությունը տեղի է ունենում այգում։ Ամենահուզիչն այն է, երբ նա նրանց օրհնում է։ Շփոթված, ամոթխածությունից շառագունած, միևնույն զգացմունքով համակված նրանք երկուսով կանգնում են նրա առաջ։ Այժմ արդեն փեսացուն տան անդամներից ամենաթանկագինն է։ Երեխաները բարձիթողի են արվում՝ ի սեր ապագա փեսացուի։ Մայրն ամեն տեսակի ամենալավ բաները պահում է նրա համար, այդ պատճառով էլ երեխաները մորը ձեռ են առնում. մինչև իսկ, երբ մի բան, որ նրանք ուզում են և տանը չի գտնվում, կարծում են, թե իրենցից թաքցնում են նրան տալու համար։ Փեսացուն այս բոլորը հատուցում է յուրատեսակ եղանակով. ինչքան նա այդ ժամանակամիջոցում տուն գա, իր հետ միշտ մի բան է բերում, որով և գրավում

է նրանց սիրտը։ Ամեն անգամ, երբ նա գալիս է, բոլորը նրան ընդառաջ են վազում, ստուգում նրա գրպանները, որտեղ նա դիտավորյալ թաքցնում է բերածը և հրճվում, երբ մի բան են գտնում։ Տանեցիների նկատմամբ նրա փայփայանքը շատ երկար է տևում նաև հարսանիքից հետո, այնպես որ մեզ մոտ միշտ սպասում են, թե երբ կգա նա, և ինչքան շատ փեսաներ, այնքան ավելի երջանիկ են երեխաները, մինչև իսկ մեծերը, որովհետև հաճախ նրանց համար ևս նվերներ են բերում. այնպես որ այդ բոլորից ելնելով մեզ մոտ երկու մտերիմների մասին ստեղծվել է մի ասած. ասում են, նրանք փեսաների պես են ապրում։ Իհարկե, ամենալավ բանը նրանք պահում են իրենց սիրածի համար, որն իր հերթին դրանից բոլոր տանեցիներին բաժին է հանում։ Այդ ժամանակից սկսած մինչև նշանդրեքն ու հարսանիքը, որ հաճախ տեղի է ունենում շատ տարիներ հետո, նա մնում է իր կնոջ ծնողների հանդեպ ամենից հնազանդը և հավատարիմը։ Նա ծառայում է նրանց, ամեն ինչ անում՝ նրանց հաճույք պատճառելու համար. խոսքը նրանց բերանից հազիվ դուրս եկած, նա է, որ առանց նրանց իմաց տալու, կատարում է։ Հաճախ նա այնպիսի ծառայություններով է նրանց անակընկալի բերում, որ երբեք չէին սպասում։ Նա համարյա մոռանում է իր տունը և յուրայիններին, որի համար նրանից ոչ ոք չի նեղանում, քանի որ բոլորն էլ ժամանակին այդպես են արել. ընդհակառակը, նրան ստիպում են այդ անել։ Ամիսներ շարունակ, ամեն անգամ, երբ նա երևում է նրանց մոտ և աները տանն է, ապա ձեռքերը կրծքին խաչած կանգնում է նրա առջև՝ սպասելով թույլատվության, որ նստի։ Նա սպասարկում է, գինի ածում, երբ աները ճաշում է և այս ամբողջ ժամանակ բնավ չպետք է խոսի նրա հետ, մինչև որ ձևական մի արարողություն չկատարվի։ Վերջինս այն է, որ աները մի կտոր շաքար կամ մի ուրիշ բան, բայց միշտ քաղցր, նրա բերանն է դնում։ Սա նշան է, որ նա այժմ կարող է ազատ խոսել, բայց դրանից շատ հետո էլ նա աներոջ հետ միշտ պատկառանքով է վարվում։ Նա պետք է նրան տեղի տա, եթե մինչև իսկ ինքն իրավացի լինի։ Աները կարող է նրա հետ ուզածի պես վարվել, կարող է նրան խփել։ Ի դեպ, փեսաներն այս վերաբերմունքը պահպանում են միշտ, երբ նույնիսկ արդեն ծերացել են։ Մինչև իսկ իրենց կնոջ եղբայրների նկատմամբ նրանք միշտ զիջող են և սակավ է պատահում, որ նրանց հետ առանց հարգանքի վարվեն։ Ես միշտ տեսել եմ, թե ինչպես էին վարվում հորս և հենց մեզ հետ իմ չորս հորաքույրերի ամուսինները, որոնք մեծ մասամբ աչքի ընկնող մարդիկ էին և նրանցից երկուսը քաղաքում հարուստ վաճառականներ։ Ոչ ոք մեզ այնչափ ուրախություն չի պատճառել, որքան նրանք։ Մինչև իսկ, երբ նրանց կինը մեռնում է, նրանք իսկապես որ միևնույն նվիրվածությամբ ու հավատարմու-

թյամբ կապված են մնում տան հետ. իսկ հանգուցյալին փոխարինողն իր վերաբերմունքով նվազագույն չափով իսկ ետ չի մնում իր նախորդից. ընդհակառակը, նա գիտե, որ իր ամուսնուն չափազանց կվշտացնի, եթե նրանց նկատմամբ օտարոտի վարմունք ցույց տա. հետևաբար սրանք ձգտում են առավել պատրաստակամ լինել և նրանց սիրտը շահել, որպեսզի հարազատների վիշտը ավելի չմեծացնեն։ Այդպիսի մի խորթ հորաքույր ես ունեի Երևանում։ Չեմ կարող նկարագրել, թե ինչպես էին նա և նրա երեխաներն ինձ հետ վարվում։ Ես նրանց շատ վշտացրած կլինեի, եթե առանց նրանց հանդիպելու տուն գնայի։ Պետք է շաբաթներով նրանց մոտ մնայի և միշտ գտնում էի ամենասիրալիր վերաբերմունք։ Նա անում էր ամեն հնարավոր բան, որպեսզի ուրախություն և հաճույք պատճառեր ինձ։ Եվ ինչքան էլ որ նա օտար էր թե տոհմով, թե արյունով, առանց ամենափոքր իսկ կասկածի ինձ, մինչև իսկ իմ հասուն տարիքում, պատկերացրել է իր և իր միակ զավակի՝ տասնութամյա աղջկա միջև։ Նա գիտեր, որ այլ կերպ վարվելով, մեզ ո՛չ միայն վիրավորած կլիներ, այլև մեր մեջ կասկած կհարուցեր, որ ինքն օտար է։ Մեր սիրելի փեսան քնում էր մյուս կողմը, հաճախ նաև մի այլ անկողնում։ Ինչքան նա իր նախկին կնոջ մասին խոսեր, չէր կարողանում մինչև իսկ իր երկրորդ կնոջ ներկայությամբ զսպել արցունքները։ Նրա դստեր փեսացուն էլ ամենաչնչին չափով չէր մտահոգվում. նա երևում էր միայն ցերեկը, և չնայած միևնույն տանն էր ապրում, բայց այդ ժամանակ նա մեծ մասամբ մնում էր իր սենյակում, որպեսզի մեզ չխանգարեր, քանի որ եթե նա տանը լիներ, ապա պետք է իր հարսնացուի հետ քներ։ Սա իբրև ապացույց այն մասին, որ ընտանեկան նույն երջանիկ հարաբերությունները տիրում են նաև քաղաքում։ Ես դեռ կցանկանայի ավելացնել՝ երջանիկ է նա, ով իբրև ազգական այսպիսի սիրտ ունի, նմանապես և նա, ով գիտե այդ գնահատել։ Այդ պատճառով էլ մեզ մոտ ամենադժբախտն այն կինն է, որ աղջիկ չունի։ Այս գանգատը ես շատ հաճախ լսել եմ իմ մորից, երբ մենք նրան որևէ բանով նեղացնում էինք։ Նա ակամայից հաճախ ասում էր, թե ինքը շատ ավելի երջանիկ կլիներ, եթե երեք որդու փոխարեն մի փեսա ունենար։

Նրանք մի իրավունք ևս ունեն, որին թերևս ոչ մի այլ փեսացու չի արժանացել։ Ամառը, այգիներում, իրենց ապագա հարսնացուի բոլոր տանեցիների մտերիմ շրջանում, նրանք կարող են անել այն ամենը, ինչ հաճելի է իրենց։ Նրանք կարող են պատժել երեխաներին, երբ վերջիններս իրենց անկարգ են պահում. նրանցն են ամենալավ տեղերը, ուր կարող են իրենց սիրածների հետ ամենից ավելի անարգել խաղալ։ Տանը, ուր ամեն մի անկյուն, ամեն տեղ նրանց տրամադրության տակ է, նրանք հաճախ թաքնվում

են և երբ մեկը, չիմանալով որ նրանք այդտեղ են, ուզում է նստել և մի բան անել, ապա նրանք անակնկալի են բերում այդպիսիներին։ Իսկ նա, ով չի մոռացել այն մութ հացատունը, կարող է հեշտությամբ պատկերացնել, թե ինչպիսի ծառայություններ կարող է մատուցել նրանց այդ վայրը։ Դա պատահում է մասնավորապես ձմռան երեկոներին։ Նրանք երջանիկ են, երբ ընտանիքի հայրը տանը չէ, իսկ նա սակավ է լինում այնտեղ. այդ դեպքում նրանց չարությունները տեղի են ունենում բոլորի աչքի առաջ։ Առանց ամենափոքր իսկ չափով քաշվելու, ընթրիքից հետո, որ բոլորը միասին վայելում են, նրանք իրենց ընտրյալի հետ նստում են կողք-կողքի և հաճախ լուռ, կանանց ու երեխաների աչքերի առաջ փաղաքշում են իրար ու գրկախառնվում, առ այդ փեսացուն ամենագործոնն է և իր սիրածի բոլոր շարժումները ճարպիկ ձեռքով խանգարում և կասեցնում է։ Նրանց միջև երբեմն դժգոհություններ են առաջանում, որոնք հանգում են այն բանին, որ փոխադարձաբար միմյանց բնավորությանը, միմյանց նկատմամբ ունեցած սիրո առավելությունն ապացուցել կարողանան։ Նրանք երբեմն ժամերով մնում են դրսում կամ մի այլ սենյակում և իրենց չարությունների անում, մինչև որ, երբեք իրարից չկշտացած, միմյանցից բաժանվեն՝ հետևյալ օրն ավելի երկար օգտագործել կարողանալու համար։ Ամեն մեկը մյուսի համար է պահում իր ստացած ամենալավ բանը. իսկ այս շրջանը, ամենագեղեցիկն իրենց ողջ կյանքում, գուցե ոչ ոք սրտի այնպիսի բերկրանքով, մանկական այնպիսի անմեղությամբ չի վայելում, ինչպես մի հայ փեսացու։ Եվ նա արժանի է այն ազատության, որը նա՝ առանց բռնության, առանց մյուսների անվստահության, կարող է այնպես օգտագործել, որ դրանից ոչ մի չարաշահություն չի ծագի, քանի որ պետք է մտածել, որ այդ շրջանը նրա առաջին երիտասարդությունից է որոշվում։ Նրանց հաճախ նշանում են, երբ երկուսն էլ դեռ իրենց մոր արգանդում են. հաճախ էլ, երբ ծծկերներ են, և հենց որ նրանց միտքն ու զգացումները որոշ չափով արթնանում են, ապա նրանք ամեն օր միասին են, բոլորովին առանձին, իսկ իրենց հասուն տարիքում, ամուսնությունից առաջ, ամբողջ գիշերներ նրանք միասին են քնում այնտեղ, ուր հարսնացուի մայրը մյուս կողմում վկա է նրանց բոլոր անմեղ սիրո զեղումներին։ Նա տեսնում է, որոշ բաներում էլ ինքն է ավելի լավ վայելքի համար նպաստում։ Սակայն մահ է սպառնում նրանց երկուսին էլ, եթե նախքան հարսանիքը մի անթույլատրելի քայլ կատարեն։ Այսքան սուրբ է այս անգետ, բայց բարեխիղճ բնության զավակների արենակցությունը։

ԱԿՆԱՐԿ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՀԱՏԿԱՊԵՍ ՆՐԱՆՑ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ով տասը տարի սրանից առաջ Թիֆլիսը տեսել է, հազիվ թե իր աչքերին հավատա, որ մի քաղաք, որը ոչ այլ ինչ էր, քան մի աղբակույտ, կարճ ժամանակի ընթացքում կարողանար այդպես արագորեն փոխվել։ Փառք այն բարեմիտ, իմաստուն կառավարությանը, որն իսկական հայրական խնամքով ստանձնել է երկրի ճակատագիրը, հովանավորել է այն իր պաշտպանող աջով և անընդհատ բարգավաճելու հնարավորություն է ստեղծում հօգուտ այդ երկրի։

Թիֆլիսը, որ գրեթե ավազակային որջ է հանդիսացել լեզգիների և այլ հարևան, մինչև այսօր էլ անկուլտուրական ժողովուրդների համար, որոնք տնօրինում էին նրա բախտն ըստ իրենց քմահաճույքի, կարող է իր տեսքով շատ եվրոպական քաղաքների շարքը դասվել։ Լեռնագագաթները և բարձունքները հարթվում են, այգիներն ու հովիտները վերացվում և նրանց տեղ հանդես են գալիս կանոնավոր փողոցներ, գեղեցիկ, եվրոպական շինարարական ճաշակով կառուցված փառահեղ շենքեր, որոնք իրենց արտաքին շքեղությամբ և ներքին հարմարություններով գրեթե ետ չեն մնում եվրոպական տներից։ Այդ շենքերից քչերն են պատկանում պետությանը, մեծ մասը մասնավոր մարդկանց սեփականություն են, գլխավորապես վաճառականների, որոնք գիտեն ջանասեր ձեռքերով ու ճարպկությամբ միացնել Ասիայի և Եվրոպայի գանձերը։ Խուսափելու համար այն զարհուրելի ցեխից, որը հաճախ ճահճանման գոյանում է անձրևային օրերին կավահողի պատճառով, այս տարի գլխավոր փողոցների երկու կողմը մայթեր են սարքել։ Փողոցների մեծ մասը նույնպես բավական լավ սալարկված է։ Կրպակները լի են բազմազան ապրանքներով։ Այստեղ եղած հինգ քարվանսարաները,— որոնցից մեկը պատկանում է հայ գնդապետ Արծրունուն *և որը լավագույնն է,— բոլորն էլ լեփ լեցուն են ապրանքներով և ամեն ազգի վաճառականներով։ Մեծ հյուրանոցներ էլ կան, որոնցից ամենից շատ հաճախորդ ունեցողը և ամենամեծը պատկանում է հրեա* Սոլոմոնին *և որտեղ մտնողի քսակը պետք է լիքը լինի։*

Տեղ-տեղ կարելի է տեսնել բիլիարդի և գարեջրի տներ, որոնց տերերը բացառապես գերմանացիներ են, ոմանք՝ տեղիս կոլոնիստներից, ոմանք էլ՝ եկվոր գերմանացիներից, որոնք, ըստ երևույթին, լինելով հասարակության անպետք անդամ իրենց հայրենիքում, այստեղ են եկել բախտ փորձելու, որը, սակայն, հաճախ դավաճանում է նրանց, որովհետև նրանք դժբախտաբար չափազանց անզգույշ կերպով են նվիրվում Կախեթի գինու վայելքին։

լավագույն դեր է կատարել հիշյալ գործերում մի ոմն Զայցման, *Վյուրտեմբերգցի կոլոնիստ, որն այժմ որպես հմուտ, գործունյա մարդ, լավ ապրում է և պատիվ է վայելում ընդհանրապես իր ազնվությամբ և ճարպկությամբ։ Ոչ պակաս հաջողությամբ իրենց արհեստով են զբաղվում այստեղ նաև ատաղձագործները, դերձակները, վարսավիրները, դարբինները, ժամագործները,— մեծ մասամբ գերմանացիներ, որոնք դժբախտաբար շատ շուտ սովորել են իրենց ապրանքները չափազանց թանկ գնով վաճառել։ Կա նաև ազնվականների* ակումբ, *որի մուտքը ազատ է յուրաքանչյուրի համար, տարեկան ո՛չ մեծ անդամավճարով (15 արծաթ ռուբլի), բայց որտեղ առանձին դեպքերում նույնիսկ անդամը պետք է վճարի մուտքի համար մեկ ռուբլի արծաթ. այդտեղ կարելի է զանազան լեզուներով լրագրեր կարդալ և ցանկության դեպքում (որից, իհարկե, չի կարելի խուսափել քաղաքավարությունից դրդված) կարելի է ամեն տեսակ համադամ կերակուրներ ստանալ, որոնց յուրաքանչյուր բաժինն արժե 80 կոպեկ պղինձ կամ մեկ աբասի, որից հետո կարելի է կուշտ փորով, սակայն դատարկ քսակով այնտեղից վերադառնալ։* Nota Bene. *Պետք է նշեմ, որ այդ ակումբը ներկայումս տեղավորված է հայոց հռչակավոր դպրոցում, որի հիմնադիրը՝ արժանապատիվ* Ներսես *արքեպիսկոպոսն ուներ միանգամայն այլ նպատակներ, որոնց նկատմամբ հայոց այժմյան Կարապետ եպիսկոպոսը՝ թվում է, թե կարծես միանգամայն անտարբեր է։ Այդ հրաշալի շենքը, որը իր հիմնադրի գովելի ջանքերի կենդանի հուշարձանն է հանդիսանում, հազիվ հարյուր աշակերտ ունի, որոնք նույնիսկ ամենատարրական գիտելիքներից զուրկ են։*

Տների մեջտեղից տարբեր ձևերով դուրս են ցցվում եկեղեցիների բարձր գմբեթներ, եկեղեցիներ, որոնցից 6—7-ը ռուս-վրացական են, 8-ը հայկական, մեկը կաթոլիկական, մեկը մահմեդական, և որոնք կարծես մրցության մեջ են մտել առաջնություն ձեռք բերելու համար։ Մի ռուսական էկզարխ, մի հայ եպիսկոպոս, մի կաթոլիկ առաջնորդ, մի մահմեդական ախունդ կառավարում են իրենց համայնքները ըստ աստուծո պատվիրանի,— որոնցից, սակայն, միայն ռուսականն է ամենից շատ հոգ տանում իրեն հանձնված հոտի կրթության մասին, իսկ մյուսները դեռևս սպասում են ավելի լավ ապագայի։

Այստեղ չի նկատվում նաև դպրոցների պակասություն։ Հիրավի, գիմնազիայի շենքը մի կենդանի վկա է մեր բարեմիտ կառավարության մարդասիրական այն սուրբ ջանքերի, որոնց նպատակն է իր հպատակներին երջանկացնել։ Դա Թիֆլիսի ամենափառահեղ շենքն է, գեղեցիկ թե՛ դրսից, թե՛ ներսից, որտեղ 14 ուսուցիչ և գրեթե 300 աշակերտ զբաղված են բոլոր լուրջ գիտություններով, այսինքն՝ ռուսերենով, գերմաներենով, ֆրան-

սերենով, հայերենով, վրացերենով, թուրքերենով, պարսկերենով, կրոնով, պատմությամբ, աշխարհագրությամբ, մաթեմատիկայով, վիճակագրությամբ, ռուսական և ընդհանուր օրենքներով։ Գիմնազիային կից կա նաև ազնվականների որդոց համար մի պանսիոն, որտեղ տարեկան 60 գիշերօթիկ կերակրվում և կրթվում են պետության հաշվին։ Սրանց հետ միասին կա գավառական դպրոց, որտեղ 6 ուսուցիչ և 200-ից ավելի աշակերտ զբաղվում են վերոհիշյալ լեզուներով և այլ տարրական գիտություններով։ Գիմնազիան բաժանված է 7, իսկ գավառական դպրոցը 3 դասարանների։ Գոյություն ունի նաև ազնվական աղջիկների մի պանսիոն, որը այս տարվա սկզբին պիտի մեծանա և որի մեջ 80 գիշերօթիկներ կրթվում են պետության հաշվին։ Բացի սրանցից, այստեղ կան նաև ռուսական և հայկական հոգևոր սեմինարիաներ։ Առաջինում ավանդում են, բացի ռուսերենից և վրացերենից, նաև թուրքերեն, լատիներեն, օսերեն ու հունարեն լեզուներ և երիտասարդ հոգևորականներ են պատրաստում ինչպես քահանայական դասի համար, այնպես էլ իբրև միսիոներներ՝ լեռնական ժողովուրդների համար։ Երկրորդում, այսինքն՝ հայկականում, դժբախտաբար ոչինչ չեն սովորում, բացի փոքր ինչ ռուսերենից, հայերենից, և որոշ աղքատիկ գիտելիքներ ստանում՝ պատմությունից, աշխարհագրությունից և թվաբանությունից, որ սակայն հանձնված են այնպիսի ուսուցիչների, որոնք իրենք էլ կարիք ունեն սկզբնական կրթության։ Ավանդում են նաև սխոլաստիկ ուսմունքներ՝ տրամաբանություն և ճարտասանություն, որով անչափ հպարտ է հայ հոգևորականությունը, առանց այդ բառերի իմաստը հասկանալու, և ավանդում են այնպիսի աշակերտների, որոնք հազիվ են կարողանում կանոնավոր կարդալ։ Հոգևորականները, մանավանդ հայ հոգևորականները, պահում են նաև որոշ քանակով փոքրիկ ծխական դպրոցներ. սակայն նրանք նվազագույն գաղափար իսկ չունեն մանկավարժության մասին և ավելի շատ ճանապարհից շեղում են երիտասարդությանը, քան թե նրանց կանգնեցնում ճշմարտության և լուսավորության ճանապարհի վրա։ Ուղղակի անհավատալի են այստեղի ժողովուրդների, մանավանդ հայերի, ուսման ձգտումը և սովորող երիտասարդության ընդունակությունները։

Թիֆլիսն ունի ընդհանուր առմամբ 3000 տուն և 40 000 բնակիչ, որոնց մեծ մասը հայեր են։ Այստեղ վաճառվող ապրանքների մեծ մասը Ռուսաստանից են բերվում։ Կան նաև շատ պարսկական ապրանքներ։ Ընդհակառակը, հարուստ վաճառականները արտասահմանից բերել են տալիս ապրանքներ և Տրապիզոնի վրայով ուղարկում Պարսկաստան՝ ծախելու համար։ Այստեղ չեն կարող ծախել դրանք՝ բարձր մաքսի պատճառով։ Շաքարի և մետաքսի երկու գործարանները, մեծ հույս կա, որ ներքին ապ-

րանքային շրջանառությանը զարկ տան, թեպետ մետաքսի գործարանը արդեն մոտ է անկման, իսկ շաքարի գործարանը դեռևս գոյություն ունի։ Իսկ թե որքան ժամանակ կպահպանվեն այս գործարանները, հանգամանքներից է կախված, որովհետև այստեղի բնակիչները կարծես թե դեռ պատրաստ չեն նման ձեռնարկությունների համար, բանվորները թանկ են, մասնագետներն ու վարպետները՝ սակավ, իսկ ծախքերը՝ շատ բարձր։ Գոյություն ունի այստեղ նաև մի տնտեսական ընկերություն, որի գործունեության արդյունքները, սակայն, ժամանակը ցույց կտա։

Մի եվրոպացու, որն առաջին անգամ է տեսնում Թիֆլիսը, շատ զարմանալի և տարօրինակ պիտի թվա (որովհետև ես որպես տեղացի այդ չեմ զգում), միանգամից տեսնել այնքան տարբեր հագուստներ, դիմագծեր, լեզուներ այսպիսի մի փոքր կետում և այսպիսի հակադրություններով համախմբված։ Նա կպատկերացնի իրեն մի ոտքով Ասիայում, իսկ մյուսով՝ Եվրոպայում։

Ո՛չ միայն եվրոպացիք, այլև շատ տեղացի պաշտոնյաներ, այս երկրում ծնված մարդիկ, վաճառականներ, փոխարինել են իրենց ազգային հագուստը եվրոպականով։ Գեղեցիկ սեռն էլ տարվում է օրեցօր այդ կրքով և փոխում իր նախկին կերպարանքը։ Վնաս չունի՜, որովհետև մարդն իր բնավորությամբ սիրում է փոփոխություններ։ Իսկ ի՞նչ կասեք, եթե տեսնեք մի մարդու, որը կիսով չափ եվրոպացու և կիսով չափ էլ ասիացու պես է զգեստավորված։ Հիրավի, ծիծաղելի պիտի թվա մի օտարերկրացու, եթե ֆրանսիական թասակի տակ տեսնի իսկական վրացական հագուստ, կամ թե մյուսին տեսնի զբոսնելիս վրացական գլխարկով և եվրոպական վերարկուով, կամ թե մի տղամարդու պատահի՝ գլխարկը պարսկական, փողկապը եվրոպական, իսկ մյուս զգեստները՝ տեղական տարազով, և այդ բոլորը իրենից կներկայացնի խայտաբղետ հակադրություն։

Ինչպես հագուստը, այնպես էլ բոլոր հասարակական զվարճություններն ու տնային կահույքը, նույն բնորոշ գծերն ունեն։ Մտեք մի վաճառականի տուն։ Հազիվ թե չզարմանաք, եթե սեղանները, կամոդները, հայելիները, պատկերները և դրանց նման բաներն իրենց տեղում գտնեք։ Նայեցեք հատակին, ծածկված է գորգերով, իսկ բնակարաններում երկար մութաքայի կողքին կգտնեք մի բազմոց, որի վրա փռված են գորգեր և մահճակալի պարագաներ և որը, ինչպես ցերեկը, այնպես էլ գիշերը ծառայում է ընտանիքի հանգստի համար և որի վրա գեղեցիկ սեռը հաճախ ամբողջ օրը նվիրվում է անվրդով անդորրության՝ վայելելով իր անգործությունը։

Նմանապես կարելի է որևէ պարահանդեսի կամ հասարակական խրախճանքի ժամանակ լսել զինվորական երաժշտություն, կամ երգեհոնիկն՝ իր

կանոնավոր հնչյուններով, աններդաշնակորեն խառնված տեղական երաժշտության աղմկոտ, ականջ ծակող ոռնոցի հետ, կամ թե լսել մազուրկայի կամ ֆրանսիական կադրիլի և լեզգինկայի զարհուրելի մոլեգին աղմուկը։ Եթե ձեզ հյուր են կանչել, ապա դուք կարող եք առանց առանձին ձևականությունների և առանց այլևայլության ընդունվել սիրալիր տանտիրոջ բնակարանում։ Հարկավոր է միայն ձեռքը սեղմել և մի սիրալիր հայացք գցել, առանց ճոռոմ խոսքերի, առանց երկար ու բարակ ճառերի և հաճոյախոսությունների, որոնք, ցավոք սրտի, անհրաժեշտություն են դարձել քաղաքակիրթ երկրներում և որոնք հաճախ պարզ, անկեղծ և պերճախոսությունից զուրկ մարդուն կարող են բավականության փոխարեն տհաճություն պատճառել և շփոթեցնել։ Այդ անկեղծ ընդունելությունը բավական է, որ դուք մի քանի րոպեում, անծանոթ մարդկանց շրջանում ծանոթ դառնաք և, միևնույն ժամանակ, ձեզ համարձակ զգաք։ Ձեզ հարկավոր չեն ֆրակ, թանկարժեք զգեստներ, բավական է, որ ձեր հագին լինի մի վայելուչ բաճկոն։

Եթե փոքր ինչ ուշացել եք, ապա կնկատեք, որ հասարակությունը խմբերով նստած է այս կամ այն կողմ, խաղասեղանների, նարդու՝ այստեղի վաճառականների սիրած խաղի շուրջ, որը մի քիչ նմանվում է շախմատին, շրջահայաց մեկուսության մեջ՝ զբաղված միմիայն խաղով։ Տանտերը տանում է ձեզ մյուս հյուրերի մոտ, և եթե ցանկաք, կարող եք փորձել ձեր բախտը, որովհետև խաղը բավական բարձր է։ Օդի մեջ պեսպես ձևերով շրջում է սիգարների և բալենու ծխամորճների ծուխը։ Դուք որպես եվրոպացի իզուր կաշխատեք լարված վիճակում դռան շեմքից ներս նայել՝ սիրուն տանտիկնոջ ձեռքը համբուրելու համար։ Այդ երջանկությունը օտարներին, հասարակության մեջ, ընդմիշտ արգելված է։ Ընկերական շրջանում կարող եք այդ բավականությունն ստանալ։ Կերակուրներ պատրաստելու գործին պարտավոր են անխտիր մասնակցել թե՛ տանտիկինը, թե՛ դուստրերը և թե՛ հարսները, իսկ եթե հյուրերը շատ են՝ նաև ազգական կանայք, թեկուզ և տասը խոհարար և նույնքան էլ սպասավորներ տրամադրության տակ ունենան։

Սեղանը եվրոպական ձևով կամ պատրաստ է լինում, կամ պատրաստվում է, երբ բոլոր հյուրերն արդեն հավաքվել են։ Զուտ ազգային զվարճությունների ժամանակ մի անկյունում նստում են երաժիշտները և հնչեցնում են իրենց ինչպես գործիքային երաժշտությունը, այնպես էլ երգերը, սկզբում երկայնաձգելով, ապա հետզհետե ուժգին, ճչուն և ականջ ծակող բղավոցով, որի ժամանակ այնպիսի ձայներ են հանում, որ մի շնորհալի երաժշտի կոկորդը կպատռվեր, եթե ցանկություն ունենար այդ ձայ-

ներն ընդօրինակել։ Օդի ահռելի ցնցումից համարյա ամեն ինչ խլանում է, և մարդ ստիպված է լինում սովորականից ավելի բարձր խոսել, որ լսնի։ Բայց այդ բոլորը առանձին նշանակություն չունեն, որովհետև շատ անձնավորություններ, որոնք ընդունակ չեն հասարակությանը այլ ձևով զբաղեցնելու, որն անշուշտ շատ յուրատեսակ է և դժվար, ապա նրանց նման աղմուկը դուրեկան է թվում, և նրանք փոխանակ գլուխները կորցնելու, լուռ ու հանգիստ նստում են, կամ այս ու այն կողմն են գնում առանց տհաճություն պատճառելու այն հասարակությանը, որը հիացած լսում է երաժշտությունը։ Բայց այս մասին ավելի երկար կխոսենք հետո։

Նախաճաշիկը, որ բաղկացած է գլխավորապես պանրից, սպիտակ ֆրանսիական հացից, որի հատը արժե 20—40 կոպեկ արծաթ, և խավիարից,— սկզբից ևեթ պատրաստ դրված է լինում սեղանի վրա, կտրտված հացի և գինու հետ միասին։ Եթե հասել է ճաշի ժամանակը, որ սովորաբար 2—3-ի միջև է սկսվում, ապա հյուրերին հրավիրում են նախաճաշի, կամ այն տանում են հյուրերի մոտ։

Այժմ կարող են մոտենալ սեղանին և գրավել ցանկացած տեղերը։ Սեղանի վրա դրված են, բացի ափսեներից, պատառաքաղներից, դանակներից, գդալներից և անձեռոցիկներից, նմանապես մեծ քանակությամբ սկուտեղներ՝ մեջը պանիր, խավիար և տեղացիների սիրած կանաչին՝ բաղկացած բողկից, մանրաբողկից, ազատքեղից (մաղադանոսից) և այլ կանաչեղեններից։ Առանց այս վերջինների ճաշ չեն ուտում։ Եվ որքան էլ օտարոտի թվա այս ամենը, մարդ շուտով ընտելանում է այդ կանաչեղենի համին։ Թո՛ղ ներեն ինձ, թերևս ես մտածում եմ որպես տեղացի, բայց նույնն են պնդում օտարերկրացիներ էլ (որոնք երկար ժամանակ արդեն ապրում են այստեղ)։ Անձեռոցիկի տակ յուրաքանչյուր անգամ կարելի է գտնել, բացի մի կտոր իսկական գերմանական հացից նաև երկու-երեք կտոր լավաշ (թիթեղանման հաց), որը թխվում է հատուկ թոնիրներում։

Այժմ մատուցում են կերակուրները։ Սկզբում դնում են մի տեսակ աղած ձուկ, որ **դոշ** է կոչվում, ստացվում է Կասպից ծովից, որի նպատակն է գինու ծարավ առաջ բերել, բայց որից պատառաքաղները և դանակները այնպիսի գարշելի համ են ստանում, որ այնուհետև բոլոր կերակուրներն ուտելիս զզվանք ես զգում։ Որովհետև այստեղ շատ են սիրում գինի, և Կախեթի գինու լի շշերն իրենց կարմիր և նարնջի գույներով չափազանց գրավիչ են, ուստի այդ անդուրեկան համը հաշվի էլ չես առնում։ Այդ ձուկը վայելում են մանանեխով և քացախով։ Երկրորդ կերակուրը մի տեսակ թանձր ճաշ է, անունը **չիխրթմա**, պատրաստվում է քացախից, ձվից և հավի մսից, հետը խառնած շատ համեմունք։ Երրորդ կերակուրը կամ թարմ ձուկ

է, Թիֆլիսի Քուռ գետից բռնած և առանց հավելումների ջրում խաշած, որը տաք-տաք էլ մատուցվում է,— կամ թե ջրում խաշած խոճկորի միս, որը ուտում են սառը, մանանեխով և քացախով։ Չորրորդը հանդիսանում է մի չոր, յուղով պատրաստած կերակուր՝ բաղկացած սերկևիլից, նշից և քիշմիշից։ Հինգերորդ կերակուրը աշխարհահռչակ ասիական փիլավն է, որը իրականում փլավ է կոչվում և այնքան ճանաչված է, որ կարիք չկա նկարագրելու։ Վեցերորդը՝ տապակած սագ կամ հնդկահավ, մատուցում են սառը և ուտում են աղ դրած վարունգով կամ այլ թթվի հետ։ Յոթերորդը և, միաժամանակ, վերջինը՝ մրգերն են, կամ թխվածքները, որպիսիք գնում են հրուշակագործներից, որոնք իմ հայրենակիցների և նրանց քսակի բախտից՝ շատ լավ առևտուր են անում և այնքան էլ սակավաթիվ չեն։ Երբեմն-երբեմն հյուրընկալն ավելի առատաձեռն է լինում և ուրիշ կերակուրներ էլ է տալիս, բայց այն հաջորդականությամբ, որ նկարագրեցինք և այդ հերթականությունը կարելի է տեսնել միշտ, ամեն տարի, ինչպես իշխանների, այնպես էլ քաղաքացիների մոտ։ Այդ ամբողջ ժամանակի ընթացքում, որը հաճախ 3 ժամ է տևում, ավելի շատ աղմկում են, բղավում, քան խոսում։ Կախեթի գինին, որ ուշագրավ է, այլ կերպ չեն խմում, քան թեյի կամ գարեջրի բաժակներով, բայց ո՛չ ողորմելի փոքր բաժակով, որն այստեղ ծաղրելով կոչում են ծտի աչք և որը միայն կոկորդը կարող է թրջել։ <Կախեթի գինին> շատ շուտ տաքացնում է ասիացու առանց այն էլ տաք արյունը։ Պակաս չեն նպաստում դրան նաև երաժիշտներն իրենց խլացնող ոռնոցով։ Մի քանի բաժակ դատարկելուց հետո հասարակության միջից մեկին ընտրում են տոլուբաշի (մի թուրքական բառ, որը նույն նշանակությունն ունի, ինչ գերմաներեն ցեխմայստերը — քեֆապետը, բայց բառացի նշանակում է բաժակի վարպետ)։ Նրա պարտականությունները կայանում են նրանում, որ նա պարտավոր է սրախոսել և հյուրերին, որքան հնարավոր է, շատ զվարճացնել։ Նրա ընտրությունը կատարվում է ընդհանուրի համաձայնությամբ։ Միանգամից բարձրացնում են բոլոր բաժակները և միաբերան կանչում. «Սրա կամ Նրա կենացը»,— և դրանից անմիջապես հետո բոլորն էլ բարձրաձայն բացականչում են. «Բարով կառավարես» (այս դեպքում արդեն նրա անունն են տալիս), իսկ նա, չնայած իր առարկություններին և հրաժարումին, պետք է հարգի բոլորի միաձայն ընտրությունը և համաձայնի։ Շնորհակալություն հայտնելով անցնում է նա այժմ իր պատվավոր պաշտոնին և սպառնում է նրանց, որոնք չե՛ն հնազանդվում իրեն։ Տուգանքը կայանում է նրանում, որ մեղավորը հաճախ երկրորդ անգամ ստիպված է լինում իր բաժակը դատարկել։ Այժմ սկսում է բոլոր ներկա հյուրերի կենացը խմել, և բոլորն էլ պարտավոր են նրան հետևել։ Իր կո-

չին.— Սրա կամ Նրա կենացը,— բոլորն էլ բարձրաձայն բացականչում են,— ուռա՜,— և ապա ողջունում նրան, որի պատվին արվում է այդ և դատարկում են իրենց բաժակները։ Եվ այդպես, հերթով հասնում են մինչև վերջին մարդը։ Հաճախ խմում են նույնիսկ հեռավորների և հանգուցյալների հիշատակին։ Վերջում բոլորն էլ խմում են տոլուբաշու կենացը և շնորհակալություն հայտնում լավ կառավարելու համար։ Եթե խմում են մեկի կենացը, և ներկա եղողներից որևէ մեկը ցանկանում էր իր հատուկ հարգանքը մատուցել նրան, ապա պարտավոր է ամեն անգամ բաժակը լրիվ դատարկել։ Հաճախ դատարկելուց հետո բաժակը շրջում են բութ մատի եղունգի վրա, մի քանի անգամ թափահարում, և եթե բարեբախտաբար ոչ մի կաթիլ չի ընկնում եղունգի վրա, ապա հիացած բացականչում են.— Այդպես էլ թող անշունչ ընկնեն քո բոլոր թշնամիներն ու չար կամեցողները,— և հարգանքի արժանացած անձնավորությունից, իբրև վարձատրություն, ստանում սիրալիր ողջույն կամ ժպիտ։ Դրանից հետո յուրաքանչյուրը բացականչում է.— Նրա կենացը, որին ամենից շատ են սիրում։ Այն հյուրերը, որոնք արդեն հայտնի են որպես կենսուրախ մարդիկ, պարտավոր են իբրև տուգանք երկրորդ անգամ խմել, եթե պատահի, որ կես բաժակ խմեն որևէ մեկի կենացը։ Այս ամենամեծ հանցանք է։ Որովհետև տուգանվում են այն մարդիկ, որոնք հաճախ դիտավորյալ կերպով հակառակում են տոլուբաշուն և այդ նրա համար, որ ավելի ևս զվարճացնեն հասարակությանը, կամ գուցե անուշադիր են գտնվել որևէ մեկի կենացը խմելիս։ Այս ամենի համար տուգանում են և ամեն անգամ բուժիչ միջոցը մի նոր բաժակ գինին է։ Եթե սեղանը շատ մեծ է, ապա հաճախ երկու տոլուբաշի է ընտրվում, և այդ դեպքում շատ հետաքրքիր է դիտել, թե ինչպես այդ երկու հակառակորդները ամեն տեսակ կանխամտածված միջոցներ են գործ դնում, միմյանց շփոթության մեջ գցելու և դրանով հասարակությանն ավելի քան զվարճացնելու համար։ Ցավալին այն է, որ ի դժբախտություն ազգի, հաճախ քահանաներն են ընտրվում տոլուբաշու այդ պատվարժան պաշտոնում։ Այդ ապացույց է, թե որչափ հոգևոր դասը անվայել արարքներով կորցրել է իր արժանիքը ժողովրդի աչքում։ Բարեբախտաբար եվրոպացիները և բոլոր հերետիկոսները, այսինքն՝ քաղաքակրթված տեղացիները, ազատ են այդ հարկադրանքից։ Առաջ, ինչպես այսօր, Կախեթիայում՝ Վրաստանի գինու շտեմարանում, ընդունված է, որ խմեն 6—7 բաժակ պարունակող մեծ ամաններից, իսկ ով հակառակի՝ ամբողջ ամանը գլխին են լցնում։ Ո՞վ է մեղավոր այդ բանում, եթե ո՛չ երկիրը։ Գինին արտահանել չեն կարող, չեն կարող նաև դեն շպրտել, բնավորությամբ էլ ծույլ են, ի՞նչ պիտի անեն։ Սակայն փա՜ռք իմաստուն կառավա-

րությանը, որ այժմ գինու համար **ափցիս** է սահմանել, այսինքն **թունգին** (5 շիշ) <....> կոպեկ։ Դրանով գինու գործածությունը փոքր ինչ նվազել է։ Ճաշից հետո թույլատրվում է յուրաքանչյուրին ծխել երկար ծխամորճերով, եթե ցանկություն ունենան։

Իմ ընթերցողներն այժմ սխալ կարծեն, որ հյուրերը այսպիսի մի սեղանից ելնելուց հետո աչքակապուկ կխաղան։ Ամենևին։ Սովորությունը օժտել է տեղացիներին ոգելից խմիչքները տանելու մի անըմբռնելի ուժով։ Նրանք սեղանից ելնում են այնքան խոհեմ, այնքան զվարթ, որ կարծես ոչինչ խմած չլինեն։ Միայն նրանց այտերի վրա խաղում է գինու կարմրությունը։

Եվրոպացիները թերևս ծիծաղեն այդ բանի վրա, բայց ինչպիսի հաճույքով շատ-շատերը հենց նրա համար կցանկանային Վրաստան փախչել, որ կարողանային լիովին հագեցնել իրենց գինու ծարավը։ Վրացին կամ հայը, եթե ոչինչ չունի, ապա չի խմում, կամ եթե խմի էլ, նա **հարբած** չէ, այլ զվարթ ու կայտառ։ Երբեք չեք տեսնի այստեղ, նույնիսկ հասարակ մարդկանց մեջ, որ փողոցում պառկած լինեն, բայց, ընդհակառակը, որքան հաճախակի կպատահեք քաղաքակիրթ երկրներում այնպիսի մարդկանց, որոնք չգիտեն նույնիսկ, թե որտեղ է իրենց գլուխը և որտեղ՝ իրենց կոշիկները։ Ես այս ասում եմ ի զգուշություն այն հիրավի անփորձ եվրոպացիների, որոնք անխղճորեն հարձակվում են իմ հայրենակիցների վրա, առանց նախապես մտածելու այն մասին, թե ինչ է կատարվում իրենց հայրենիքում։ Նրանք իրենց պատկերացնում են արարածներ, որոնք իջել են երկնքից միայն նրա համար, որպեսզի ուրիշների թերությունները քննադատեն, իսկ եթե արդեն մի քանի տարի, կամ հաճախ մի քանի ամիս են այստեղ ապրել, ապա հազար անգամ ավելի վատ են։ Հարկավոր է մարդկանց այնպես ընդունել, ինչպես որ կան և հետո, եթե կամենում ես իսկապես մարդկայնորեն մոտենալ նրանց բարեփոխելու համար, ապա այդ պետք է անել խնայելով և զիջողաբար, բայց ոչ դառնությամբ և արհամարհանքով։

Գովելի և ուշագրավ է նման հանգամանքներում, ինչպես նաև առհասարակ, որ ազնվականներն ու իշխանները, որոնց թիվն այստեղ բավական մեծ է և շատերը նշանավոր ծագումի տեր են, քաղաքացիների և վաճառականների հետ վարվում են ինչպես իրենց հավասարի, այո՛, նույնիսկ ավելի քաղաքավարի և սիրալիր, և ոչ մի տարբերություն չեն դնում ո՛չ ամուսնության և ո՛չ էլ ընտանեկան կյանքի այլ պարագաների մեջ։ Բնավորության նման առավելությունները, իհարկե, կարող էին լավագույն կրթված մարդուն էլ պատիվ բերել։ Հասարակական զվարճանքներ սակավ են տեղի ունենում։ Երբեմն-երբեմն այստեղ հասարակության առաջ ցուցադրում են իրենց արվեստը եվրոպական ձեռնածուներն ու լարախաղացները, ինչպես և այս տարի ոմն **Բամբերգերի** և **Յաուպաուեի** խումբը, որոնք, սակայն, շատ քիչ են շահում։

Ամենից ավելի այցելվող զվարճավայրերն են տաք հանքային բաղանիքները, որտեղ երկու սեռերն առանձին բաժանմունքներում մի քանի ժամ շարունակ լավ քրտնում ու զվարճանում են, իսկ հաճախ, հատկապես գեղեցիկ սեռը վայելում է իր ճաշը։ Կան նաև մի քանի տոներ՝ նվիրված որոշ սրբերի, որոնք Թիֆլիսի շրջակայքում ունեն իրենց եկեղեցիները. այդ դեպքում գեղեցիկ սեռը զբաղվում է բարեպաշտ ապաշխարանքով, իսկ երիտասարդները ուրախանում են ձիարշավով։ Դրանցից են սուրբ **Դավրի** և սուրբ **Գեորգի** տոները։

Թո՛ղ ներվի ինձ, որ ես իմ իսկական նյութից,— որով կամենում էի ցույց տալ, թե ինչպես մեզ մոտ այժմ ամեն ինչ եվրոպա-ասիական է դարձել,— այնքան շեղվեցի։ Այդ նկարագրությամբ ևս ես կամենում էի ցույց տալ միայն, որ այստեղի ճաշկերույթներն էլ նույն որակն ունեն, ինչ հագուստները, կահկարասիքը և այլն (այսինքն, որ նրանք հանդիսատեսին ներկայացնում են երկու աշխարհամասերի տեսարաններ)։ Այժմ վերադառնանք բուն հարցին։

Թիֆլիսի բնակչության աճը անհավատալի մեծ է։ Կովկասի համարյա բոլոր վայրերից ամեն օր մարդիկ են հոսում այստեղ, իրենց բախտը փորձելու համար։ Բայց որոշ միջոցներ հայթայթելուց հետո այլևս չեն թողնում Թիֆլիսը, բնակություն են հաստատում այստեղ, տներ են կառուցում, և այսպիսով՝ պարսիկներն այստեղ խառնվում են հայերի, թուրքերի, հույների, հրեաների, թաթարների, լեզգիների ու եվրոպացիների հետ, որոնք նման թելերով կապվում են տեղացիներին և կազմում մի հոյակապ ամբողջություն, որը ժամանակի ընթացքում Թիֆլիսը կդարձնի լայնածավալ Ռուսաստանի ամենամեծ և կարևորագույն քաղաքներից մեկը, որտեղից գիտությունն ու լուսավորությունը կսփռվեն ամբողջ Արևելքում։

Այժմ ես անցնում եմ իմ իսկական նյութին. ծանոթացնելու եմ իմ ընթերցողներին հայրենակիցներիս **հարսանեկան սովորույթների** հետ, որոնք թեև այնքան էլ փայլուն չեն, բայց որպես ազգային երևույթ միանգամայն ինքնատիպ են։ Ամուսնական միության հիմքը՝ անվանեցե՛ք այդ բնազդ, ինչպես լինում է վայրենի ժողովուրդների մոտ, կամ թե խնամակցություն, որ հարուցվում է այն հոգեկան առավելությունների և շնորհալիությունների միջոցով, որոնք կրթված ազգերից պահանջում են զգացումներ, մնում է երկու սեռերի փոխադարձ հակումը, որը լոկ եկեղեցական սովորություններով կարող է ազնվացվել և սրբագործվել։

Բոլորովին հակառակն է տեղի ունենում ասիական ժողովուրդների մեծամասնության մոտ։ Շատ բացառիկ դեպքերում կհանդգնի որևէ երիտասարդ իր սրտի ուզածին ընտրել, իսկ աղջիկը՝ երբեք։ Դա ծնողների և տան մեծերի գործն է, իսկ եթե նրանք չկան, ապա միջնորդների, կամ պարզ ասած, խնամախոսների գործը։ Մեզ մոտ, որտեղ շատ բան դեռ այսօր էլ հիշեցնում է հին ժողովուրդների նահապետական սովորությունները, յուրաքանչյուր ընտանիքի հայր ներքին հիացումով տենչում է այն օրվան, երբ կկարողանա երջանկացնել իր զավակներին՝ ամուսնության միջոցով։ Ոմանք կնքում են իրենց խնամիական դաշինքը տակավին այն պահին, երբ երեխաները դեռ իրենց մայրերի արգանդներում են, այսինքն՝ երկու հայրերն իրար խոսք են տալիս, որ եթե մեկին աղջիկ ծնվի, իսկ մյուսին՝ տղա, ապա նրանք պարտավոր են հետագայում այդ երկուսին ամուսնացնել։ Իսկ եթե հակառակն եղավ, ապա դա համարվում է երկնքի մի առանձին տնօրինություն, որին հաճելի չի եղել այդ տներն իրար միացնել։ Բայց եթե երկինքն այնքան բարյացակամ է, որ այդ ցանկությունը կարողանա կատարվել, ապա երկու ջահելները մեծանում են որպես խաղընկերներ, իսկ հետո, երբ լրանում է նրանց տասնհինգ տարին՝ նրանք արդեն բախտավոր ամուսիններ են։ Կամ՝ եթե հայրերից մեկը ծանոթացել է մի այլ տեղ մի ուրիշ ընտանիքի հետ, որը նրան շատ դուր է եկել և եթե ինքը մի որդի ունի, ապա նա բուռն կերպով տենչում է, որ մյուսին աղջիկ ծնվի, որպեսզի կարելի լինի մշտապես կապվել, կամ՝ հակառակը։ Երիտասարդներն անխտիր պարտավոր են մինչև քսան տարեկան դառնալը, իսկ աղջիկները տասնհինգ տարեկան դառնալը՝ ամուսնական կապ հաստատել։ Ինքնատիպ են այն բարեմաղթությունները, որ անում են հարսանիքի օրը մի հոր կամ որդու,— որոնք հրավիրված են եղել և այդ օրը պսակված զույգին երջանկություն և լավ կյանք են ցանկացել,— ահա այսպիսի ճարտար պատկերավոր լեզվով՝ իբրև փոխադարձ բարեմաղթություններ։— Չէի ցանկանա էս մաշված ոսկորներս հողի տակ դնել, մինչև որ հարսանիքիդ օրը չպարեմ,— ասում է մի պառավ՝ երանելի երջանկությամբ։— Եթե աստված տա, տղայիդ հարսանիքին մատռվակ կլինեմ,— ասում է աշխույժ մարդկանցից մեկը հյուրին, իսկ նրա տղան կարմրում է։— Հը, տղա՛, ե՞րբ պիտի քեզ լծենք կամին, գիժ մոզու պես դես ու դեն ես ընկնում,— ասում են մի երիտասարդի, որ ամոթից կարմրած աչքերը գետին է ուղղում։— Թո՛ղ մենք էլ կարմիր թելը (բացատրությունը հետո) վիզդ կապենք և թագը գլխիդ դնենք,— այս էլ ցանկանում են մի երրորդ երիտասարդի։

Այս բոլորից պարզ երևում է, թե ինչ արժեք ունի ամուսնական կյանքը բնության այս կիսակիրթ զավակների համար և որքան այն կարևոր

է։ Իսկ պապ կամ տատ լինելը մի աննկարագրելի երանություն է։ Որովհետև հենց այդտեղից են սկսում զարգանալ իսկական նահապետական սովորությունները, երբ տան մեծը շրջապատված երեխաներով ու թոռներով, որոնք, եթե նույնիսկ թվով քանից ավելի լինեն, չեն կարող երբեք բաժանվել իրարից, և նրանք պատկառելի ուշադրությամբ, հնազանդությամբ և ճշտությամբ հետևում են ծեր պապի ամեն մի նշանին. Թոռնիկները թաչկոտում են նրա գրկում, համեստ հարսներից մեկը նրա ոտքերն է լվանում, մյուսը օգնում է նրան՝ շորերն հագնելիս և հանելիս, իսկ երրորդը ամռան շոգ օրերին, երբ քնում է, ճանճերին է քշում, մի լաթի կտոր շարժում նրա երեսին այս ու այն կողմ՝ զովացնելու համար, որպեսզի <պապը> կարողանա քաղցր ննջել, իսկ եթե նա հիվանդ է, ապա հոգատար խնամք են ցույց տալիս, գլուխն են լվանում և երբեք չեն համարձակվում նրա երեսին նայել, և երբեք <բարձր> չեն խոսում նրա հետ, այլ միայն շարժումներով, և գլխով նշան անելով գուշակում են նրա մտքերն ու իրենց մտքերն էլ նույն ձևով հայտնում։ Բավական է պապի մի խոսքը, նշանը կամ հայացքը, որ ընտանիքի մեջ եղած ամեն տեսակ գժտություն ու վեճ վայրկենապես դադարի։ Անշուշտ, բնավորության ընտիր մի գիծ է այս։

Ուրեմն, երբ երիտասարդները ամուսնության համար հասունանում են, նրանք պետք չունեն դրա մասին ակնարկներ անելու։ Հայրն ու մայրն արդեն վաղուց այդ նյութի մասին գաղտնի խոսել են և շատ ազգականի ու լավ բարեկամի խորհրդի հրավիրել։ Եթե երկուսն էլ նույն վայրում են ապրում, ապա այդ գործը այնքան էլ դժվար չէ, իսկ եթե իրարից հեռու են, ապա հայրը այցելում է աղջկա բնակավայրը, տեսնում է նրան ներս ու դուրս անելիս, կամ ջուր կրելիս, որովհետև մեզ մոտ մեծ մասամբ աղջիկներն են գետից ջուր կրում՝ ուսերի վրա, բավական խոշոր կավե կժերով։ Կամ թե ծանոթանում է աղջկա ծնողների հետ մի այլ պատրվակով, այցելություններ է կատարում և դրա հետ միասին չափազանց ուշադիր աչքերով դիտում ամեն, ոչինչ չկռահող արարածի շարժումներն ու քայլերը, որովհետև մեր աղջիկներն իրենց մանկական հասակում բավական ազատ են։ Թեպետ ամենաչքավոր գեղջկուհին անգամ երբեք իրեն թույլ չի տա խոսակցության բռնվել որևէ տղամարդու հետ, բայց չնայած դրան, նրանք միանգամայն ազատ կարող են երևալ թե՛ տանը, թե՛ փողոցում։ Բայց հենց որ քողն երեսին են առնում, որպես հարսնացու կամ ամուսին, ապա այդ ազատությունից մշտապես զրկվում են։

Այս ձևով ընտրություն անելուց հետո, իսկույն ևեթ բանակցությունների մեջ են մտնում, որը դարձյալ կատարվում է հատուկ այր կամ կին

խնամախոսի միջոցով, որը երիտասարդի ծնողների ցանկությունը հաղորդում է աղջկա ծնողներին և զինված ամեն տեսակ պերճախոսություններով՝ աշխատում է իր պաշտոնը բարեբախտ հաջողությամբ ի կատար ածել։ Բարեկեցությունը և ազնվազարմ ծագումը ամենաէական, կարևորագույն պայմաններն են փեսացուի կողմից։ Բանն այն է, որ երիտասարդի ծնողները պետք է լավ օժիտ տան՝ փողով, հագուստեղենով, նույնիսկ տնային անասուններով և հարսանիքի ծախսերը հոգան։ Այդ պատճառով հակառակ կողմը դժկամություն է ցույց տալիս և մերժում ամեն տեսակ առաջարկություններ և խելամիտ պատճառաբանություններ, մինչև կստանա իր պահանջածը։— Իմ աղջիկը կայսեր և թագավորի է արժանի, գեղեցիկ է՝ արևի նման, անմեղ՝ ինչպես աղավնի, ջանասեր է և կարող է տասը մարդու գործ անել։ Կույր չէ, աչքեր ունի՝ ամեն մեկը լուսնի նման. փառք աստուծո, շիլ չէ, կաղ չէ, ի՞նչն է պակաս։ Հաց շատ ունենք նրան կերակրելու համար, հայտնի օջախից է. չէ՛, չէ՛, էդպես էժան չեմ ծախի։ Նա մեր տան աչքն է (այսինքն՝ ուրախությունը), մեր տան սյունն ու լույսը*։ Նա հողից չի բուսել, որ էդպես հեշտ ու հանգիստ տնից դուրս գցեմ։ Աչքերս մազ են բուսել (այսինքն՝ շատ խնամք եմ տարել), մինչև էդ հասակին եմ հասցրել։ Հոգիս կտամ, եթե մի օր նրան չտեսնեմ։ Բոլորս էլ կմեռնենք, եթե մի րոպե նա մեր առաջին չլինի։ Չէ՛, չէ՛, ասա նրան (երիտասարդին), թո՛ղ տեղը ծանր նստի (այսինքն՝ թո՛ղ թեթևամիտ չլինի)։ Ձենը տակը, քարը վրան (այսինքն՝ այդ բանը չհրապարակի և լռի)։ Աղջիկս չեմ ուզում պսակել։ Եթե նա երկինք էլ բարձրանա (այսինքն՝ ցանկացածն անի), ես իմ ուզածը կանեմ։ Չի՛ ուզում, ուզածս չի՛ տալիս, թո՛ղ նա իր ճամփեն գնա, ես էլ՝ իմ։ Հո զոռի բան չէ։ Մի ուրիշին կտամ։ Աշխարհը մեծ է, մենք էլ նրա մեջտեղը։ Հո միայն աղջիկս չի մնացել այս աշխարհում։ Թո՛ղ իմ աղջիկը չլինի, ուրիշինը թող ընտրի, ինչո՞ւ օձիքս բաց չի թողնում։ Ի՞նչ է ինձ տվել, որ չի կարողանում ետ վերցնել։ Չե՛մ տալիս ու չե՛մ տալիս։ Էլի ի՞նչ ունի ասելու։ Էս ի՞նչ սուգ ու շիվանի մեջ ենք ընկել, նրա աչքը հենց ի՞նձ է տեսել աշխարհում։ Նա հո իմ գլխի տերը չէ։ Ասում եմ՝ եկածդ ճամփով ետ գնա։ Ով ատամներիդ խարջ է, նրան կծիր, մենք ատամներիդ խարջ չենք (այսինքն՝ դու չես կարող մեզ խաբել)։ Աչքերդ մի լավ բաց արա՛ ու մեզ կարգին տակ ու վրա արա, թե մենք ով ենք։ Մենք հացի տեղ խոտ չենք կերել, մեր գլխումն էլ խելք կա։ Մենք մեր հաշիվը լա՛վ գիտենք, ինչ խելքդ կկտրի (այսինքն՝ հասկանում ես) այն էլ արա և ձեռք քաշի մեզանից։ Աշխարհիս երեսին մի լավ անուն ունեինք, էն էլ ուզում ես գետնովը տալ։ Ես քեզ ասում եմ՝ հանգիստ ու համեստ եղեք, թե չէ հուր ու կրակ կթափեմ գլխներիդ,— և այլն։

Հազարավոր այսպիսի դարձվածքներ է փոխանակում աղջկա հայրը, որին իր ասելիքն է ավելացնում նաև բարի տանտիկինը՝ ոչ պակաս կծու լեզվով։— Աչքս լո՞ւյս (այսինքն՝ ինձ համար բախտավորություն է), էս ի՞նչ նորություն է։ Մարդ իր համար քնի, ուրիշների համա՞ր երազ տեսնի։ Ձեր բան ու գործը պրծել է, հիմի մեզ վրա՞ եք աչքներդ տնկել։ Հիմա նո՞ր են մեզ ճանաչում և ուզում են մոտենա՞լ, առաջ բարև էլ չէին տալիս։ Մեր աղջիկը դեռ փոքր է, չենք էլ ուզում պսակել։ Նա մեր քցախին ավելի ղաբուլ է, քան ուրիշի տան փլավին: Եթե մենք քաղցած ենք, նա էլ քաղցած կմնա, թե ծարավ՝ նա էլ ծարավ կմնա։ Մեր տանն էլ շատ բան ունի անելու, ի՞նչ գործ ունի օտարի տանը։ Ի՞նչ եք էստեղ կորցրել։ Որ թագավորն էլ գալու լինի, աղջկանս չեմ տա։ Երեկ մեկ, էսօր երկու, չեն էլ իմանում, թե ո՞ւմ հետ են ոտները մեկնում (այսինքն՝ նոր են ունևոր մարդ դարձել և կամենում են մեզ հետ հավասարվել)։ Ի սեր աստուծո, մի սրա (այսինքն՝ փեսացուի) երեսին նայեցեք, կարծես բերանը կապած անասուն լինի։ Երկու իշի գարի չի կարող բաժանել, դեռ պսակվել էլ է ուզում։ Երեկ դեռ թան էր ուտում, էսօր ոտք է բարձրացրել։ Հազար էդպես հիմարի աղջկաս հետ չեմ փոխի։ Աղջկաս մի մազը, զավակիս մի եղունգը չեմ փոխի հարյուրավոր էդ տեսակ անպետքների հետ։ Աղջիկս աշխարհում մի հատ է. երկրորդը չկա։ Թե աստված կսիրես, գլուխս մի տանի (այսինքն՝ ինձ հանգիստ թող)։ Էդ տեսակ տղայի աղջիկ տալը մեկ է, ինչ աչքերը պինդ կապես ու ջուրը գցես, կամ գերի ուղարկես։ Աչքիս լույսը հատել է, հոգիս բերանս է հասել, մինչև նրան հասցրել եմ էս հասակի։ Ո՛չ գիշերն եմ քնել, ո՛չ ցերեկն հանգստացել։ Բերանիս հացը կտրել, նրան եմ տվել։ Գոնե որ լակոտը մարդու նման լիներ, ո՞վ դարդ կաներ։ Մեծացրել եմ համարյա աչքիս լույսի պես, սրտումս, հիմա էլ մի ախմախի փեշքեշ անե՞մ։ Ով նրա (այսինքն՝ փեսացուի) ճլորված մոր ատամները տեսնի, սիրտը կպատռվի, ախորժակը կկորչի, մսերը կսարսռան։ Եթե տեսնես եկեղեցում կանգնած, կարծես առաջդ կանգնած լինի Սաղայելը (ավագ սատանան) ու հոգիդ ուզենա հանել մարմնիցդ։ Ով նրան մի անգամ տեսնի, էլ ո՛չ մի գործ չի հաջողվի ողջ օրը։ Երբ նա բերանը բաց է անում, դժոխքի հոտ է փչում։ Ով նրա աչքերը տեսնի, կարծես իր հոգեառ հրեշտակին տեսնի, հիմա էլ աղջիկս պիտի ջո՞ւր լցնի նրա ձեռքերին, նրա նազը քաշի։ Նրա հետ շունն էլ չի կարող ապրել, ուր թե մարդը... Աղջիկս թուրքի կտամ, հերձվածողի, բայց նրան չեմ տա։ Ինչ ուզում են՝ թո՛ղ անեն։ Ով նեղանա՝

* Յուրաքանչյուր իսկական ասիացու տան մեջ կտեսնենք ամենաքիչը չորս սյուն սենյակի մեջտեղը, որոնց վրա հանգչում է կտուրը։

թող սառը ջուր խմի։ Առաջնորդը ես եմ, բակլեն խաշած եմ ցանում, ո՞վ կարող է ձեռքս բռնել։ Ախոռի մեջ կապած էշը ավելի հարմար կլինի նրան, քան իմ աղջիկը։ Որ հազար կով էլ ունենամ, մեկն էլ չեմ թողնի, որ արածացնի, ուր թե իմ հարազատին, իմ աչքի լույսին, որին ամբողջ աշխարհի հետ չեմ փոխի։ Մկները քաղցած սատկում են նրանց տան պաճախներում, իսկ նա ամուսնանալ է ուզում։ Եթե նրանք ոտքերս ջուր անեն ու խմեն, եթե իմանամ, որ նրանց տան պատերը ոսկի են դարձել, նրանց տան մեջ արծաթ է հոսում, էլի նրան չեմ տա աղջիկս, որ ամբողջ աշխարհի աչքն է։ Նրան մի անգամ տեսնելը ավելի արժե, քան ամբողջ աշխարհը։ Երբ առավոտը տնից դուրս է գալիս, կարծես արև է ծագում։ Ամբողջ աշխարհը բերանը բացած, հիացած նրան է նայում, բերանների ջուրն էլ գնում է։ Նա այնքան համեստ է, որ նրա ձայնը դեռ չենք լսել։ Գիշեր ցերեկ նրա շուրջն ենք պտտվում, որ չար աչք չկպչի։ Այնպես զգույշ է տան գալիս, որ նրա ոտքերի ձայնը ոչ ոք չի լսում։ Որ աշխարհն էլ հեղեղը բռնի, տեղից չի շարժվի։ Մինչև էսօր մի թթու խոսք չենք լսել նրանից։ Որ նրան խեղդեն էլ, ձեն, ծպտուն չի հանի։ Որ եղունգի ծայրով թշին ձեռ տաս, արյուն կկաթի, էնքան թարմ է նա։ Որ բոյը տեսնես, կարծես ապակուց ձուլված լինի։ Նրա հոնքերը կարծես ղալամով քաշած լինեն։ Նրա աչքերը երկնքի առավոտյան աստղերի են նման, ատամները կարծես փղոսկրից լինեն շինված, սև-սև ծամերը մինչև ոտքերն են հասնում ու կարծես ոսկուց հյուսված լինեն։ Շրթունքներն այնքան նուրբ են, որ կարծես վարդի թերթեր լինեն։ Նրա մատների ծայրերն այնպիսի բաներ են շինում, որ Ֆրանգստանում էլ չեն կարող պատրաստել։ Որ մի շաբաթ էլ քաղցած պահես՝ մեռնի, որ հինգ օր ու գիշեր կանգնած մնա՝ սպասի, աչքերը դուրս գան, էլի ձեն ու ծպտուն չի հանի։ Աչքովդ պիտի տեսնես, որ համոզվես։ Նրա ո՞ր արժանիքները խոսքով պատմես։ Որ հազար գիրք էլ լցնեն և գրեն, էլի իմ հրեշտակի լավ հատկությունները չեն կարող պատմել։ Որ նրան տարիներով չոր հացով ու ջրով պահեն, էլի շնորհակալ կլինի։ 15 տարեկան է, դեռ էլի սև ու սպիտակը չի ջոկում (այսինքն՝ անմեղ է)։ Չէ՛, սրա նման անմեղ գառին մարդու տալը կնշանակի գայլի ու վագրի բաժին դարձնել։ Ի՞նչից են մազերս սպիտակել,— էդ տեսակ բաներից, ուրիշ ոչինչ։ Ում խաբել եք, գնացե՛ք, էլի խաբեք։ Եթե այդ տղան Հնդկաստանի գանձերով բեռնված հազար ուղտ դռանս առաջ կանգնեցնի, եթե նրա եղունգներից լույս թափվի (այսինքն՝ շատ էլ խելոք լինի), եթե նա երկնքից էլ աստղեր իջեցնի ու գետնի տակ թաղած գանձերի թալիսմանի տեր էլ լինի, որ ձեռքերիցն էլ ոսկի հոսի, էլի իմ աղջիկը նրան չե՛մ տա ու չե՛մ տա։ Հո խուլ չե՞ս։ Ախր որ քարին էլ էսքան խոսքեր ասեն, նա էլ կճաքի։ Օձն էլ որ

էդ խոսքերը լսի՝ թույնը կթափի ու իր բունը կմտնի։ Իսկ քո երեսի մորթը կարծես ավելի հաստ է, քան գոմշի կաշին։ Անխելք եմ։ Աղջկաս ճակատին ինչ գրված է, էն էլ կլինի, թեկուզ երկինք ու երկիր էլ կործանվեն։ Լսեցի՞ր, գնա, էս խոսքերը տար նրան։ Թե մեր ուզածը կտա, լավ, թե չէ հազար տարի էլ բերանը բաց ու խուփ անի (այսինքն՝ պաղատի), գետնի վրա սողա և բերանով երկնքից թռչուններ որսա (այսինքն՝ որ այդքան զորություն ունենա) ու երկինքն էլ ձայն տա, ես նրան աղջիկ չե՛մ տա ու չե՛մ տա։ Հո ձեռքերս չե՞ք կարող կապել։ Որտեղից եկել ես, այնտեղ էլ գնա. գլխիս տզրուկ էս դարձել, կպել ես ու պոկ չես գալիս։ Ի՞նչ օգուտ դրանից, որ էդքան մեր երեսի ջուրն առնում ես (այսինքն՝ այդքան անամոթ ես)։ Հո մեր ականջները քեզ համար չենք առել։ Դատարկ խոսքերից գլուխս տրաքվում է, իսկ քեզ համար խաղ ու պար է։ Տե՛ր աստված, տե՛ր աստված, էս ի՞նչ կրակն ենք ընկել։ Եթե ուզում ես՝ քո քաշած նեղության համար, քո գնալ գալու, քո ճառերի համար փող կտանք։ Էլ ի՞նչ ես ուզում։ Աշխարհքը մի մարդով ոչ կշինվի, ոչ էլ կկործանվի։ Աղջիկն իմը չէ՞, չե՛մ տալիս, էլ ի՞նչ եք ուզում։ Հո կանխիկ փողով մեզ չեք գնել։ Է՞հ, թե շալ չկարողացա հագնել, ոչ էլ մետաքս՝ քաթան հո կհագնեմ։ Եթե գինի չկարողացա խմել՝ ջուր գործ կածեմ։ Եթե կոշիկ չունեցա՝ ոտաբոբիկ ման կգամ։ Կերակուր չունեցա՝ դոնեդուռ ողորմություն կանեմ, բայց ձեզանից բան չեմ ուզի։ Եթե աղջիկս եք ուզում, պետք է նրա գինն իմանաք, թե չէ՝ դուք ձեզ համար, մենք էլ մեզ համար (այսինքն՝ դուք ձեր ուզածն արեք, մենք էլ մերը)։

Այս գրեթե ճապաղ արտահայտություններից, որ ես որպես օրինակ մեջ բերի՝ ընթերցողներս որոշ չափով կտեսնեն, որ մեզ մոտ ճարտասանական արվեստը միանգամայն այլ ուղղություն է ստացել, և որ մարդիկ մեզ մոտ բավական սուր լեզու և վառ երևակայություն ունեն, և եթե ես այստեղ իսկապես մեջ բերեի միջնորդի այն բոլոր կամթոցները և խորամանկ հակաճառությունները, որոնցով նա աշխատում է ցրել այդ պատճառաբանությունները անսպասելի ճարպկությամբ, որ պատիվ կբերեր ամեն մի դիվանագետի, և այնուամենայնիվ, վերջ ի վերջո պնդում է իր իրավունքի վրա՝ ապա ես դրանով կլցնեի մի քանի թերթ, որ թերևս անտեղի լիներ։ Այսպիսի որոտն ու կայծակը նրան ծանոթ բաներ են։ Անհավատալի սառնասրտությամբ ամեն ինչ ընդունում է, ամեն բանի համաձայնում, խոստովանում է անգամ հակառակ կողմի թերությունները և նրանց առավելությունները՝ որոնց մոտ նա առաքված է, և համբերությամբ սպասում, մինչև որ սրտի այդ բոլոր զեղումները, բանակռվի բուք ու բորանն անցնեն, և հետո սկսում է, մանր անձրևի նման, այնպես քնքուշ,

կեղծավորելով դեռ մի րոպե առաջ որոտացող հակառակորդի սիրտը շահել, որ ստիպված ես աֆֆարիմ և կեցցես կանչել ու ծափահարել նրան՝ այդ լավ խաղացած դերի համար։ Հաճախ մի անգամից չի հաջողվում այդ։ Այդպիսի ժամանակ նա մեծ քաղաքավարությամբ հանգիստ է թողնում նրանց և մի քանի օրից հետո նորից գալիս, առանց ցույց տալու, թե ինչ նպատակով է եկել և նույնիսկ զգում է իրեն վիրավորված, երբ հիշեցնում են անցյալ խոսակցությունները։ Հետո փորձում է կողմնակի խոսակցություններով նրանց մտադրությանը հետամուտ լինել և երբ նկատում է, որ նախկին պոռթկումը հանգել է, նորից սկսում է էլ ավելի վճռականությամբ ճարտասանությունը ղլել, մինչ որ ունկնդիրներին իր կողմը կգրավի։ Այդպիսի միջնորդների դեր կատարում են կամ քահանաները, կամ պառավ կանայք, կամ էլ տղամարդիկ։ Այս ամենից կարելի է տեսնել, որ մեզ մոտ աղջիկները մեծ արժեք ունեն։ Այս բոլոր խոսակցությունների ընթացքում մեր գեղեցկուհին կանգնած է լինում թերևս որևէ դռան կամ պատուհանի հետև և սրտի տրոփյունով սպասում է այդ գործի վախճանին, ծնողների քարասրտության հետևանքով սրտնեղությունից ատամները կրճտացնելով։ Չէ՞ որ շատ անգամ տիկնիկ խաղալիս երազել է, որ իրեն էլ գոնե մի անգամ բախտ կվիճակվի փեսացու ունենալու, թո՛ղ ինչպիսին ուզում է նա լինի։ Մի անասելի կարոտ համակում է նրա սիրտը, ն նա աշխատում է բոլոր արահետներում՝ ջուր բերելիս գոնե մի անգամ տեսնել իր սրտի սիրածին։ Երբեմն էլ նրան գիշերով առևանգում են, եթե ծնողները կտրականապես չեն տալիս։ Դրանից հետո երկու կողմերն էլ համաձայնության են գալիս։ Ընծաներն ու միջնորդությունները հաշտեցնում են զայրացած աներոջն իր անհավատարիմ փեսայի հետ, և քահանան սրբագործում է նրանց կապը։

Իսկ երկու կողմերի համաձայնվելուց հետո անները կարող է արդեն իր պահանջած իրերն ստանալ։ Հետո անցնում են նշանդրեքին, որի ժամանակ, բացի զգեստներից, հարսնացուին նվիրում են մատանիներ և այլ զարդեր, նմանապես մի գլուխ շաքար և կոնֆետներ։ Դրանից հետո մեջտեղ է գալիս քահանան և օրհնում է (այսինքն՝ առանց նշանվածների ներկայության) զգեստները, նշանվածների ծնողների ներկայությամբ, որի առթիվ կարդացվում են հատուկ աղոթքներ, սաղմոսներ, ավետարան, և քահանան հարսնացուի տանը վարում է իր պաշտոնը շքեղ զգեստավորված։

Շնորհավորական ճառերը, որոնք արտասանվում են թե՛ այժմ և թե՛ հարսանիքի օրը, նույնն են և չափազանց յուրահատուկ։ Ամենից առաջ քահանան վերցնում է մի բաժակ գինի, ձեռքում պահում և բացականչում. «Աղա (այսինքն՝ պարոն այսինչ), աչքդ լույս (այսինքն՝ շնորհավորում

եմ)։ Թո՛ղ աստված այս օրը անպակաս անի տանդ միջից։ Թո՛ղ ջահելները մի բարձի ծերանան։ Աստված տա չփոշմանեն։ Թո՛ղ տեսնես քեզ քո զավակներով և թոռներով զարդարված։ Թո՛ղ խնկի ծառի պես ջահելներն աճեն, բազմանան, ծաղկեն ու հազարավոր պտուղներ տան։ Թո՛ղ աստված չանի, որ նրանց արածը թշնամու սրտով լինի (այսինքն՝ այնպիսի բան չանեն, որ թշնամին ուրախանա)։ Թո՛ղ նրանք հասնեն Սրմեոն ծերունու հասակին։ Թո՛ղ նրանց մեկը հազար դառնա (այսինքն՝ նրանց բռնած գործերը հաջողությամբ վերջանան)։ Թո՛ղ թշնամու աչքը տրաքի, իսկ բարեկամինը՝ խնդա։ Նրանց բռնած քարը ոսկի դառնա։ Թո՛ղ փուշ չբուսնի նրանց ճանապարհին։ Թո՛ղ նրանց ոտքերի տակ միայն ծաղիկ ու կանաչ բուսնեն։ Թո՛ղ նրանց աչքը դառն օր չտեսնի։ Թո՛ղ հաճախ այսպիսի տոներ կատարենք ձեր տանը։ Թո՛ղ աստված նրանց անարժան մարդու ձեռք չգցի։ Տնաշեն (այսինքն՝ մարդու զավակ), թե բանն էստեղ պիտի հասներ, էլ ի՞նչ էիր պոչդ թափ տալիս, քեզ չանգռոտում (այս խոսքերը վերաբերում են այն դժվարություններին, որ նա հարուցել էր հարսնախոսության ժամանակ)։ Էլ ի՞նչու կամդ պոկեցիր ու սար ու ձոր ընկար[1]։ Ոտդ դեմ էիր տվել քարին և չէիր ուզում բաժանվել։ Տեսա՞ր, ինչպես քեզ ճիշտ ճանապարհի բերինք։ Աշխարհը էսպես եկել է, էսպես էլ կգնա։ Մենակ դու չես աշխարհումս, դու ուզում էիր տեղդ ծանրացնել (այսինքն՝ դու ուզում էիր անհողդողդ մնալ)։ Մենք էնպիսի մի սեպ դրինք տակդ, որ էլ չկարողացար տեղդ մնալ։ Դու ուզում էիր ալյուրդ թանկ ծախել, բայց ի՞նչ փոշի լցրինք աչքերդ։ Հիմա ինչքան ուզում ես փոշի բարձրացրու, օգուտն ի՞նչ, մենք մեր ուզածն արինք, հիմա ո՞ւր ուզում ես գնա։ Դու մեզ այլևս պետք չես։ Եթե չես ուզում, մենք էլի մերը կանենք։ Ուզում ես աղջիկդ հետ վերցրու, մենք էլ մեր տղային կվերցնենք։ Ով էսպես փեսայի տեր դառնա, ուրախությունից պետք է հազար անգամ պար գա, իր ամենալավ եզները մատաղ անի, յոթ անգամ Երուսաղեմ ուխտ գնա ու գա, տաս լիտր (9 ֆունտ) խունկ և մի էդքան էլ մոմ վառի եկեղեցում, խաչ ու ավետարանը ջուր անի ու խմի[2]։

---

[1] Մեզ մոտ հացահատիկը ծեծում են, ինչպես հնում։ Կամին լծում են մի զույգ եզ և այնքան շրջանաձև քշում, մինչև որ հատիկները դուրս են գալիս և ծղոտը կտոր-կտոր է լինում։ Այդ տախտակներին ամրացրած են մանր քարեր ու երկաթի կտորներ՝ ծղոտը կտրատելու համար։ Ջահել եզները խրտնում են այդ գործից, պոկում են կամը մարդու հետ միասին և փախչում։ Այս բառախաղը դրան է վերաբերում։

[2] Այս բառախաղը հիմնված է հայոց այն սովորության վրա, ըստ որի նրանք խաչը, ավետարանը, մասունքները ջրի մեջ են սուզում, և այդ ջուրը գործ են ածում որպես լավագույն բուժամիջոց, ինչպես հոգեկան, այնպես էլ մարմնական այլևայլ հիվանդությունների ժամանակ։ Հիանալի՜ բուժամիջոց։

7 տարի պաս պահի, հազար անգամ ծունկ չոքի։ Չէ՛, չէ, էլ մենք ձեզ ձեռքից բաց չենք թողնի։ Քոքդ կկտրենք, գերեզմանդ կավերենք (այսինքն՝ մի լավ քեֆ կանենք)։ Դե, կարասներդ բաց արա, շալ եղներդ պատրաստիր մորթելու, քասկդ գատապկիր։ Դու դեռ Նոյի ժամանակներից փող կունենաս։ Ի՞նչիդ են պետք դրանք, հո գերեզմանդ չե՞ս տանելու։ Աշխարհի մալը էլի աշխարհումն է մնալու։ Վա՜յ նրան, ով չի՛ ուտում և չի՛ խմում։ Մի կտոր կտավ է մեր բաժինը։ Կմեռնես, գերեզմանիդ վրա «Աստված հոգին լուսավորի» ասող էլ չի լինի։ Փափախդ ճակատիցդ հեռացրու և կոտրիր ականջիդ վրա (ինչպես լոթիներն են անում)։ Ժանդդ (այսինքն՝ փողը) մի տրորիր մատներիդ մեջ, փողը չէ մյուս օրը շներն ու գելերի բաժին կդառնան այդ բոլորը։ Քանի կենդանի ենք, պետք է ուրախ լինենք։ Ով իր փողը խնայի, սատանայի համար ավար կպատրաստի։ Որ հազար անգամ էլ ձեռքերդ ու գլուխդ թափ տաս, երկինք ելնես, մենք դարձյալ քեզ դուրս կհանենք գետնի տակից ու կպլոկենք»։

Այս բոլոր սրախոսությունները պետք է համբերությամբ լսի հարսնացուի խեղճ հայրը, բայց նրա պատասխաններն էլ հաճախ շատ դիպուկ են։ Սովորաբար ասում է. «Բարեկամներ, ինչպես երևում է ձեր փորը (այսինքն՝ ստամոքսը) տաս օր է հացի համ չի առել։ Տնաքանդնե՛ր, եկել եք իմ մաղը կախելու, է՛, ես էլ լավ կհյուրասիրեմ։ Ձեր բաժինն է մի կտոր հազար տարվա չոր հաց, մի դդալ շիլա, մի կտոր աղած պանիր. ուզում եք՝ կերե՛ք, չեք ուզում՝ բարձերից տակ դրե՛ք։ Մեր գետի ջուրը շատ է, կարող եք այնքան խմել, որ պայթեք»։

Այդպիսի խոսակցություններով են ամբողջ ժամանակն անցկացնում, և ամեն մեկն աշխատում է սրախոսություններ անել. և ամեն անգամ բաժակները դատարկելիս ասվում են նույն բարեմաղթությունները ու շնորհավորանքները և միշտ կրկնվում.— Ողջ լինեք և ուրախ, թող էս օրը ձեզ էլ հասնի։ Թորոխս աչքերը լույս։ Թող աստուծո օրհնությունը անպակաս լինի։

Այդ ժամանակից սկսած, հարսնացուն քող է կրում և բոլորովին անհետանում։ Իզուր է մորմոքում օր ու գիշեր խեղճ փեսացուն ճանապարհներին ու արահետներին, կտուրների վրա ու տան շուրջը, որտեղ շնչում է իր անձկալին,— արդվհետև իրավունք չունի երևալու իր զայրացկոտ աներոջը. դրա համար մի առանձին արարողություն է պահանջվում. երբ փեսային հրավիրում են, ընծաներ տալիս, նրանից հետո նույնիսկ չի կարող աներոջ դեմ դուրս գալ բաց աչքով։ Նա պարտավոր է նրա առաջ կանգնել

¹ [Այնքան սուր, որ քիչ է մնում ծիծաղից տրաքես]։

հանցավորի նման, գլուխը կախ։ Իր մտքերն արտահայտում է մնջախաղությամբ։ Նա պարտավոր է ամեն անգամ ներս ու դուրս անելիս աներոջ ձեռքը համբուրել, նրա հետ չճաշել, չծխել, չծիծաղել, կյանքի նշան ցույց չտալ։ Մեկ էլ տեսար աները ըստ սովորության սկսեց.

— Դե՛հ, տղաս, բախտը քեզ ժպտաց։ Աստղդ սկսեց շողշողալ։ Եթե ամբողջ աշխարհը ման գայիր, երկինք ու երկիր իրար խառնեիր ու ճրագը ձեռքիդ ծովի տակը փնտրեիր ու հազար կտոր լինեիր, էլի այդպիսի գանձ չէր ընկնի ձեռքդ։ Աղջիկս ղալամով է քաշած, նրա նմանը չկա ոչ մի տեղ աշխարհիս երեսին։ Լավ մտածիր, թե ինչպես պիտի վարվես նրա հետ։ Դու նրան պիտի աչքիդ լույսի պես պահես։ Ձեռքերիդ վրա պիտի ման ածես, նրա ձեռքը դեռ փուշու չի կպել։ Բավական է քո մի ծուռ հայացքը, որ պատասխանը (այսինքն՝ հատուցումը) ստանաս։ Սրանից հետո մեջքիդ կանգնած եմ (այսինքն՝ ես քեզ կօգնեմ)։ Եթե մեկը համարձակվի քեզ թթու խոսք ասել, ապա ես նրա 32 ատամը միանգամից փորը կլցնեմ։ Դու դեռ ինձ չես ճանաչում, ասածս ասած է, գրածս՝ գրած, ջնջածս՝ ջնջած (այսինքն՝ ասածս խոսքը կատարում եմ)։ Թագավորի առաջ էլ երես չե՛մ թեքի։ Աստված մի՛ արասցե սատանաները գլուխս գան (այսինքն՝ եթե ես ղայրանամ), էլ ո՛չ սևի կնայեմ, ո՛չ սպիտակի (այսինքն՝ ես ոչ մի բանի վրա ուշադրություն չեմ դարձնի)։ Որ իշխան էլ լինի, աչքերը կհանեմ։ Եթե աշխարհում չտեսա նրան՝ երկնքում կփնտրեմ և դժոխքի բաժին կդարձնեմ։ Ես պիտի մեռած լինեմ, մոխիր դարձած, որ քո մի մազը ծուռ բռնի։ Հոգեառ հրեշտակի պես թշնամուդ միսն իր ատամներով ծամել կտամ։ Աչքի լույսը կհանգցնեմ, հոգին կհանեմ, որ իմանա, թե ես ով եմ։ Լավ եղիր, ջանասեր եղիր, էնպես արա, որ քարից էլ ոսկի հանես, որ քեզ տեսնողը կարողանա ասել. մաշալլա՜, աֆֆարի՜մ, կեցցե՜ս: Երանի է՛ն աչքին, որ էսպիսի փեսա ունի, երկնքումն էինք փնտրում նրան, երկրումը գտանք։ Սրա պեսին մոմով պիտի փնտրել, սրա մայրը երկրորդը չի ծնել։ Երանի՜ էն տանը, էն մորը, որ էսպիսի ղավակ ունի։ Երանի՜ նրան, որ սրան օրոր է ասել։ Թո՛ղ հալալ լինի սրան էն կաթը, որ նա ծծել է։ Տղա հո չէ, գառ է։ Ականջից բռնի, տար ծախելու, ծպտուն չի հանի։ Անիծվի բախտը։ Մարդ պիտի հազար տարի ապրի, էսպիսի փեսա ճարելու համար։ Աստված միայն մեր գլխից է կտրել էդ բանը։ Աստված սարերին նայում, էն համեմատ էլ ձյուն է դնում. աղջիկը լավ, փեսացուն լավ, էլ ի՞նչ է պետք (այսինքն՝ փակ աչքերով կույրի նման ոսկու ծովն ընկնել)։ Մարդ աչքի լույսն է մաշում, կյանքն ու արևը խավարեցնում, հոգին բերանը հասցնում, մինչև երեխային մեծացնում է, հետո էլ էն տեսակ մի շան է տալիս, որ ուտի. միսն ուտում է, իսկ արյունը խմում։ Մի այսինչի աղջկան նայիր, կարծես

չոփ է դառել, ոսկորները երևում են, երեսի միսը հալվել է, կաշին չորացել։ Հացի տեղ թույն է ուտում։ Շատ լաց լինելուց աչքերն էլ են կուրացել։ Նրան տեսնելիս քարերն էլ են լալիս։ Սար ու ձոր նրա բախտն են ողբում։ Քոռանա մահու աչքերը, որ նրան շուտ չի տանում։ Ավելի լավ է <աղջիկը> շան բաժին լինի, թուրքերի մոտ գերի տարած լինի, դժոխքի կրակում, քան թե էդպես մարդու ձեռքին։

— Այսպես, ուրեմն, սիրելի որդիս, դու մեր երեսը պետք է պարզ անես աշխարհումս (այսինքն՝ մեզ ամոթահար չանես), որպեսզի թշնամու աչքը չծիծաղի մեզ վրա, որպեսզի նրա աչքը տրաքի։ Արի՛ ձեռքս համբուրիր ու ղուշաղ կա՛ց, չե՛մ թողնի, որ ճակատդ մռայլի. այն պիտի միշտ բաց պահես ու փափախդ էլ կոտրած դնես գլխիդ[1]։ Սրանից հետո թագավորն անգամ չի կարող մոտովդ անցնել։ Հողի տակից էլ ձեզ համար հաց կհանեմ։ Քանի կենդանի եմ, թռչուն էլ չի կարող ձեր գլխի վրայով անցնել։ Ձեռքս բարձրացնեմ թե չէ, հազարավոր մարդկանց հոգին փորումը ջուր կդառնա։ Սրանից հետո իմ դուռը բաց է քեզ համար, իսկ հարսնացուդ իրավունք չունես տեսնելու, թե չէ աչքերդ կհանեմ, աղջկանս էլ ընդմիշտ կխլեմ քեզանից, ասածներս մտքումդ պահի՛ր։ Ես ձեզ իրար մոտ կտանեմ։ Իմ օրհնությունը ստանալուց հետո կարող եք անել, ինչ կամենաք։ Հիմա մեկդ մյուսի ձայնը չպիտի լսի։ Լսո՞ւմ ես, տղաս, խորամանկ աչքեր ունես, իսկ ես հազար էդ տեսակ աչքեր ունեմ։ Որ երազումդ էլ մի բան մտքովդ անցնի, ես դարձյալ գլխի կընկնեմ։ Սատանան էլ չի կարող իմ աչքերից թաքնվել, թռչունն էլ չի կարող իմ ձեռքից թռչել, եթե դու գետնի տակն էլ մտնես, ես քեզ կգտնեմ,— և այլն։

Այս բոլորը վերջանում է նրանով, որ աները մի լավ հարված է իջեցնում <նրա> ականջին կամ ծոծրակին, կամ հաճախ էլ համբուրում ճակատը, քաշում ականջը կամ քիթը, կամ սիրուց երկու ձեռքով բռնում է ամոթից կաս-կարմիր եղած փեսայի գլուխը, ամուր սեղմում կրծքին ու գգվում։ Հիանալի՜ գգվանք։

Բայց այդպես չի մտածում և վարվում բարի մայրիկը, որը մի քանի օր առաջ որոտում էր։ Իր բոլոր համեղ կերակուրները, սրտի զեղումները պահում է նա սիրելի փեսայի համար։ Նա երազում է միայն նրա մասին։ Հայրը միշտ տանը չի լինում. սպասում են և ամեն մի հարմար բոպեից օգուտ քաղում. մեկ, երկու, երեք և ահա սիրելի զավակն այնտեղ է։ Հաճախ փեսան ականջ է դնում գոմում, երդիկի վրա և խնձոր կամ ծաղիկներ

[1] Ասիացիները սիրում են իրենց փափախի առջևի ծայրը փոքր ինչ ներս ծալել, դա ազնիվ վարքի և նրբաբարոյության նշան է։

գցում իր երկչոտ սիրուհուն, իսկ սա ետ չի նայում։ Կարճ կտրենք՝ օր չի լինում, որ փեսացուին չհյուրասիրեն փլավով, ձվածեղով կամ այլ համեղ կերակուրներով։ Հաճախ մայրիկն այդ բոլորն ինքն իր ձեռքով նրա բերանն էր դնում, հետևյալ շողոքորթ արտահայտություններով.— Աչքիս լույս, սրտիս սյուն, մեռնեմ աչքերիդ, գլխիդ, հոգուդ, երեսիդ, մեռնեմ քո բոյբուսաթին։ Սիրտս ուզում է քեզ սաղ-սաղ ուտել։ Երբ քեզ տեսնում եմ՝ արևն է ծագում առաջս։ Ուզում եմ գլխովդ պտույտ գալ։ Ցավդ տանեմ։ Երեսս ոտքիդ տակը։ Թո՛ղ աստված հոգիս ու մարմինս առնի, քեզ տա։ Հոգիս հոգուդ բնակարան է դարձել։ Որ կյանքս էլ ուզես՝ կտամ։ Ամեն անգամ, երբ ոտքդ իմ շեմն ես դնում, կարծես թե երկինք է երևում իմ տանը։ Մեռնեմ անունիդ։ Եթե կարողանայի սիրտս բաց անել, կտեսնեիր, որ արյունս քո սիրուց եռ է գալիս, երբ ինձանից հեռանում ես, թվում է, որ տան պատերը դևեր են դարձել ու ինձ ուտել են ուզում։ Մի օր քեզ չտեսնելիս, կարծես աշխարհը տակ ու վրա է լինում։ Դու հոգուս լույսն ես, սրտիս ճրագը։ Եթե աշխարհն աշխարհով էլ դիպչի, ո՞վ կտա ինձ էն համն ու հոտը (այսինքն՝ դու անչափ սիրելի ես)։ Աչքս ջուր է դառնում, երբ ուշանում ես։ Երբ ձայնդ ականջս է ընկնում, խելք ու միտքս չքանում է։ Դու իմ թագն ու պարծանքն ես։ Քուն թե արթուն, քեզ եմ միայն տեսնում։ Պատկերդ այնպես է տպավորվել իմ սրտում, որ եթե քեզ մի ժամ չտեսնեմ, հոգիս կտամ։ Ինչ ունեմ՝ քոնն է. տունս, ունեցած-չունեցածս, կյանքս, բոլորս մատաղ լինենք ոտքերիդ տակ։ Մեռնեմ էն ձեռքին, որ քեզ պահել ու մեծացրել է։ Իսկ եթե փեսացուն ցույց է տալիս, որ իրեն լավ չի զգում, ապա մայրիկը հազար անգամ համբուրում է նրան և իր ցավակցությունը հայտնում հետևյալ խոսքերով.— Թո՛ղ աչքս քոռանա, ա՜խ, քար ընկնի գլխիս, հոգիս առնեն, ո՞ր դժոխքը գնամ, ո՞ր ջուրն ընկնեմ։ Հոգիս բերանս չի, որ քեզ մատաղ անեմ։ Թո՛ղ աստված ինձ տա քո ցավերը, հոգիս առնի,— և այլն։ Եվ այս բոլորը կատարվում է քնքուշ գրկախառնություններով և ջերմ համբույրներով, որի ժամանակ ներկա է լինում նաև հարսնացուն։

Այդ լավ վերաբերմունքը տևում է երբեմն մի քանի օր, երբեմն էլ՝ մի քանի ամիս, նույնիսկ՝ տարիներ, որի ընթացքում փեսացուն պարտավոր է նվերներ տալ մեծ տոներին, օրինակ՝ զատկին, ծննդին, որոնք լինում են մեծ մասամբ պտուղներ և ուտելիքներ։

Վերջապես երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշվում է հարսանիքի օրը։ Դրա համար նախապատրաստություններ են տեսնում, ինչպես ամենուրեք ընդունված է, հրավիրում են առնվազն բոլոր ազգականներին և մեծ մասամբ ականավոր անձնավորությունների, իսկ խրախճանքն

էլ կատարվում է այլ վայրում, Թիֆլիսից դուրս, երեք օր։ Տոնախմբությունները սկսվում են սովորաբար գիշերները, ուրբաթ երեկոյան, երկու կողմից՝ ինչպես հարսնացուի, այնպես էլ փեսացուի տանը։ Եթե առանձնահատուկ հյուրեր և տոնախմբություն է լինում, ազդանշանը տալիս են երաժշտությամբ, որը նվագում են կամ դռան առաջ, կամ տանիքի վրա։ Հետաքրքրությունից այստեղ են հավաքվում բոլոր անկյուններից ու փողոցներից մեծ ու պատիկ, և հաճախ օտարների թիվը ավելի շատ է լինում, քան հյուրերինը։ Նրանց վռնդել չեն կարող, ընդունված չէ, և դրանք այնքան ուտելիք և խմելիք են ստանում, ինչքան իրենք՝ հյուրերը։

Հարսնացուի տանը հավաքվում են մի խումբ կանայք։ Դրանք շրջապատում են սիրուն հարսնացուին, նրա աչքերը ներկում են սև, իսկ եղունգներն ու մատները՝ կարմիր ներկով, որ ճինա է կոչվում, զուգում են նրան և ամեն տեսակ երգեր ու սրախոսություններ փսփսում ականջին, իսկ նա անշարժ նստած, դառնորեն լալիս է, որովհետև, հավանաբար, դժվար է թվում հայրական տունը թողնելը։ Տղամարդիկ զվարճանում են նվագով, երգով և պարերով մի մեծ սենյակում, որի պատերը հաճախ զարդարված են խմորից պատրաստած պատկերներով։ Նրանք խաչաձև, ծալապատիկ նստում են պատերի չորս կողմը և մեջտեղը։ Կերակուրները պատրաստվում են հաճախ սենյակի կենտրոնում, և նրանց բուրմունքը գրգռում է հյուրերի ախորժակը։ Եվ այդպես, ամբողջ գիշերը, մինչև հետևյալ առավոտ, քեֆ են անում սարսափելի աղմուկով ու գոռգոռոցով։

Պակաս շքեղությամբ չի կատարվում այդ բոլորը փեսացուի տանը։ Նույն երաժշտությունը, հյուրերի նույն դասավորությունը, միայն այն տարբերությամբ, որ ներկա է կենտրոնական անձնավորությունը՝ փեսացուն, տոնականորեն պճնված, պատին կիպ նստած, հանդիսավոր ու լուրջ իր խաչեղբոր[1] հետ, մի գեղեցիկ գորգի վրա, որտեղ դրված են բարձեր ու ներքնակներ։ Նա ֆրանտի տեսք ունի, սափրվել է, սանրվել (որ թերևս ամիսը մի անգամ է կատարվում)։ Պարանոցի շուրջ կախված են թաշկինակներ, երեսը բոլորովին մուգ կարմիր է դարձել՝ մասամբ ամոթխածությունից, մասամբ էլ նրանից, որ նախընթաց երեկոյան բաղնիքում է եղել և մաքրել այն կեղտը, որ տարիներ շարունակ եղել է նրա վրա։ Բաղնիք գնալը ամենակարևոր ծեսերից մեկն է, և եթե նրա ապրած վայրում բաղնիք չկա, ապա պետք է գնալ այնպիսի տեղ, որտեղ հնարավոր կլինի գտնել այն

[1] Խաչեղբայրը կարևոր անձնավորություն է հայկական հարսանիքների ժամանակ։ Նա իր վրա է վերցնում բոլոր եկեղեցական ծախքերը, զբաղեցնում է հյուրերին և այնուհետև համարվում է տան արյունակից ազգականը։

Դրանից հետո գնում է նա բաղնիք՝ հասակակից ջահելներով շրջապատված և երաժշտության ուղեկցությամբ, որտեղ նրանք անց են կացնում երեկոն քեֆով և կատակներով, և հետո փեսային տուն տանում։ Այժմ ամեն ինչ տեղն է։ Սակայն նա իրավունք չունի ծիծաղել, որևէ բան ուտել, որովհետև հետևյալ օրը պիտի հաղորդություն ընդունի և դրա հետևանքով խուսափում է ամեն տեսակ զվարճություններից։ Ծայրահեղ դեպքում կարող է նստել իր տակ դրված բարձերի վրա։ Դրան հակառակ՝ չափազանց զվարթ և ուրախ է խաչեղբայրը, սրախոսություններ է անում, պարում, տրամադրությունը շատ լավ է։ Հյուրերը զվարճանում են պարերով, երգեցողությամբ, ամեն տեսակ կատակներով, դատարկում են իրենց բաժակները նորապսակների կենացը։ Հանկարծ լսվում է ջահել տղաներից մեկի ձայնը.— Թագավորի[1] զինակիցներ, ո՞ւմ քրոջը համբուրենք։— Խաչեղբոր,— հնչում է հարյուրավոր կոկորդներից պատասխանը։ Այդ բերկրալի կոչը շատ հաճախ է լսվում, և իբրև գրկախառնության առարկա տալիս են և մյուս մոտ ազգականների՝ քույրերի կամ աղջիկների անունները։ Երբեմն էլ կանչողին պատասխանում են.— Քո քրոջը,— կամ՝— Նրա քրոջը, ով ձայն տվեց,— որից հետո բոլորը ձեռքերով հավանության նշան են անում և բարձր ձայնով գոչում.— Այ շաբա՞շ, այ շաբաշ. (այսինքն՝ կեցցես)։

Շատ բնորոշ են այդ երիտասարդների սրախոսություններն ու հանաքները փեսացուի հետ։ Մեկն աղաղակում է.— Հե՜յ, թագավոր, թախտիդ հաստատ մնաս, թող սուրդ լինի սուր և կտրուկ։ Լսվում է մի ուրիշի ձայնը.— Է՜յ, ինչո՞ւ ես աչքերդ ծածկել գլխարկիդ տակ. գլխարկդ աչքերիցդ դե՛ն տար։ Աչքերդ ու հոնքերդ բա՛ց պահիր. ի՞նչ ես կատվի նման տաք արել, էդ ինչ կնճիռներ են ճակատիդ։ Մրրկաբեր ամպի նման մռայլվել ես։ Աչքերիցդ ժանգ է կաթում։ Տնաշե՜ն, հո քեզանից աշխարհի պարտքը չե՛ն պահանջում։ Մի՛ վախենա, նշանածիդ չեն փախցնի։ Երրորդն է միջամտում.— Կա, չկա, նա կարծում է, որ նշանածը մի գուցե կույր է, միայն մի՛ աչք ունի, լեզու չունի, կաղ է, կուզ ունի,— հավատա՛, էդպես չէ՛, նրա աչքերը թասի պես են, մազերը հասնում են մինչև ոտները, նրա բոյը չինարի պես ուղիղ է ու բարակ, էլ ի՞նչ ես ուզում, կողքին նստի ու խնդա։ Չորրորդը մոմը ձեռքին մոտենում է խեղճ մեղադրյալի ուղիղ աչքերին և կանչում.— Մի մոտ եկե՛ք, լավ նայե՛նք նրան մոմի լույսով, կարելի է փոխս է ընկել։ Մի տեսնենք ատամներ ունի՞՝ թե չէ, կծել կարո՞ղ է՝ թե չէ։ Կարելի է էս գիշեր լեզուն կտրել կամ գողացել են, որ էսպես լուռ

[1] Ամբողջ հարսանեկան հանդեսի ընթացքում՝ փեսացուին անվանում են «թագավոր», իսկ հարսնացուին՝ «թագուհի»։

նստել է ու ձեն-ձուն չի հանում։ Սիրտդ դողդողում է, այնպես չէ՞։ Թեկուզ բերանդ չորացել է, բայց նազելիդ էլ ձեռքդ չի ընկնի։ Դեռ երկար ժամանակ ծոմ կպահես։ Հանաք բան չէ կին ունենալը։ Կամ թե չէ՝ մտածում է, թե ինչպես պիտի համբուրի ու գրկի նրան, կամ թե՝ վախենում է, որ նա իր ձեռքից չփախչի։ Հիմա ինքն իրեն կասի, թե ի՞նչ մեղքեր է գործել, թե ինչպե՞ս է գլուխը քարին տվել։ Հանգիստ թողեք սրան, կարծես լաց է լինում։ Քարացել է։ Կարծես քիչ դարդ ունի, դուք էլ ուզում եք ավելացնե՞ք, ինչ ուզում է թող անի, մենք որ պիտի զվարճանանք։ Թող էնքան կանգնի, մինչև որ հոգին տա։ Մենք եկել ենք զվարճանալու. ով չի ուզում մեզ հետ ուրախանալ, թո՛ղ դժոխքը գնա։ Նա իր բաժինն էնտեղ կստանա, մենք էլ մերն՝ էստեղ։ Հազիվ է աչքը լույս տեսել, հիմա էլ վախենում է, որ իրենից չխլեն։ Ով չի ուզում ուրախանալ, կարող է հեռանալ, բողկ ուտել, մենք պիտի շարունակենք մեր քեֆը և այլն։

Եթե փեսացուն հայր ունի, ապա նա պիտի հյուրասիրի հյուրերին, մայրը տնտեսության մասին հոգա, որովհետև բաղձալի օրը վերջապես եկել է, որի մասին նա հաճախ թախիծով երազում էր և որդուն տեսնելիս բացականչում.— Ե՞րբ կգա այն օրը, երբ ես թևերս վեր քաշած քո հարսանիքի պատրաստությունը տեսնեմ։ Էնքան չմեռնեմ, մինչև կարմիրդ չկապեմ։ <Այժմ> նա որդուն չի մոտենում, շատ է զբաղված խոհանոցով։ Հաճախ պարտավոր է լցնել ջահելների ամանները, երբ դրանք նրա մոտ են վազում դատարկ ամաններով և խնդրում, որ իրենց էլ բաժին հանի, որովհետև իրավունք չունեն հասա՞կավորների հետ նստելու։ Ոչ մի կին իրավունք չունի սենյակում երևալու։— Աչքդ լույս, խնամի,— բացականչում են բոլոր ծանոթները,— թո՛ղ բարի ժամ լինի (այսինքն՝ թող բախտավորության նշան լինի), թո՛ղ աստված նորափեսի մի օրը հազար, բյուր դարձնի։ Թո՛ղ օջախիդ ծուխը չդադարի։ Շատ տարիներ տեսնես էս օրը։— Աչքի լույսով մնաս,— սիրալիր պատասխանում է տիկինը,— թո՛ղ երկնից արքայությունը քեզ բաժին լինի, թո՛ղ երկար ապրեն տղաներդ, թո՛ղ աստված ձեզ էլ արժանացնի էս բախտավորությանը և տղայիդ կարմիրն էլ կապենք։ Ինչքան ձեր սիրտը ուրախանում է ինձ համար, թո՛ղ էդքան էլ աստված ուրախություն տա ձեզ. իմ տունը, իմ տեղը, իմ երեխաները թո՛ղ փեշքեշ (այսինքն՝ ընծա) լինեն քեզ. թո՛ղ ձեր ոտքը օրհնություն բերի իմ տունը։ Թո՛ղ աստված ձեր ցանկությունն էլ բարով կատարի։

Այդպես ամբողջ գիշերը մինչև լույս ուտում են, խմում և աղմկում։ Հյուրերից շատերը հենց այստեղ էլ քնում են։ Մյուս օրը, վաղ առավոտյան, նորից հնչում է երաժշտությունը։ Փեսացուին պիտի տանեն հարսնացուի տունը։ Այդ բանը կատարվում է մոտավորապես առավոտյան ժամը

10-ին։ Նրան քայլ առ քայլ ուղեկցում է ամեն հասակի մարդկանց խուռն բազմությունը։ Ծնողներն ու տարեց հյուրերը մնում են տանը։ Վերջապես երևում է թագավորն իր սիրածի տան առաջ, բայց կանգ է առնում հարսնյաց դռան առաջ և չի մտնում ներս։ Ինչո՞ւ է կանգ առել, չէ՞ որ պետք է աշխատի, որքան կարելի է, շուտ հասնել նպատակին,— կմտածի մի օտար մարդ. բայց դա իր պատճառն ունի։ Հենց որ ոտքը շեմին է դնում, աները պարտավոր է բարի գալուստ ցանկանալ որևէ նվերով։ Խոսքն առնում է խաչեղբայրը, նա սպառնում է տունը ավերել, եթե նրա թագավորը վատ ընդունելություն գտնի։

— Մատաղ լինի սպիտակ շաղ եզս,— բացականչում է վերջապես աները։ Թագավորը մնում է կանգնած և տեղից չի շարժվում։— Եզ ունես, արտդ վարի՛ր, կապի՛ր նրան գոմում, որ ավելի չաղանա,— պատասխանում է զայրացած խաչեղբայրը։— Մի եզով է կամենում փեսային ընդունել,— ծաղրում են բոլոր ներկա եղողները։— Թագավո՛ր, հո տեսնում ես՝ ինչ պատիվ են քեզ տալիս, արի ետ դառնանք,— որոտում է խաչեղբայրը։— Համբերենք մի քիչ, կարելի է սիրտը տեղը գա,— աղաղակում են ներկա եղողները։— Դեհ, քեռի, քսակդ թափ տո՛ւր, ժլատությունը լավ բան չէ՛, փեսային չի կարելի այդպիսի պատիվ տալ, թե չէ հարսնացուին զոռով դուրս կբերենք ու հետներս կտանենք, առանց քո շեմին ոտք դնելու,— աղմկում են թագավորի զինակիրները։ Վերջապես բացականչում է դժկամությամբ բարի մարդը.— Իմ սպիտակ ձին, կամ հինգ տակառ գինին, կամ թե՝ պարտեզի մի մասը ձեզ փեշքեշ։ Դրանից հետո բոլորն էլ մի քանի անգամ բացականչում են հիացած։— Ո՜ղջ լինես, ո՜ղջ լինես,— և ճամփան բաց է անում։ Թագավորը ներս է մտնում՝ առջևից խաչեղբայրը։ Բակում երևում է հարսնամայրը՝ կոնֆետներով, մի կտոր շաքար է դնում փեսացուի բերանը կամ մի այլ բան, երկու մետաքսե կտոր խաչաձև կապում է նրա վզին, երկուսն էլ խաչեղբոր վզին, գրկում ու համբուրում է նրանց, շաքարաջուր է տալիս խմելու և սկսում է պարել. պարը վերջացնելուց հետո նորից համբուրում է նրանց և մի կողմ քաշվում։ Նրան հետևում է աները. եթե 90 տարեկան էլ լինի, ոտքերը լա՛վ թափ է տալիս, նրան հետևում են մյուս ազգականները, և ամբողջ այդ ուրախությունը տևում է մոտավորապես կես ժամ, որի ընթացքում բոլորն էլ լիաբերան հրճվում և աղմկում են։ Դրանից հետո ավելի են մտնում տան ներսը, որտեղ նորից պարում են, և երաժշտությունը դադարելուց հետո լսվում են բացականչություններ.— Աստվա՜ծ օրհնի։

Թագավորին տանում են նրա համար առաջուց պատրաստած տեղը։ Այժմ մեջտեղ է գալիս քահանան՝ խաչով ու ավետարանով, օրհնում է

հարսնացուի զգեստները, որը գտնվում է հարևան մի այլ սենյակում, կանանց մոտ։ Դրանից հետո հագցնում են նրան, խաչեղբայրը ներս է մտնում նրա մոտ և կատակներ ու սրախոսություններ անելով՝ կապում է նրա գոտին, որ բացի իրենից ոչ ոքի չի թույլատրվում անել։— Սիրտդ պինդ պահի՛ր, քեֆդ՝ քո՛ք, մենք քեզ մահվան չե՛նք տանում, այլ՝ պսակադրության՝ էնպիսի փեսացու գտար, որի նմանը չկա՛ աշխարհում,— և այլն։ Այժմ դուրս են բերում նրան. մայրը հեկեկում է մի անկյունում, հետո փեսացուի մոտ են տանում, որպես բոլորովին կույրի, որովհետև նրա դեմքի հետքն իսկ չկա, նա ամբողջապես ծածկված է սպիտակ կտորով՝ մումիայի նման, գլխի չորս կողմը փաթթված է մի բաց կարմիր կտոր։ Ոչ թե նրա շապիկը, ո՛չ, այլ մի երկար կտոր, որ **կրաֆաշի** է կոչվում, տալիս են նրա ձեռքը, որի մի ծայրը ինքն է բռնում, մյուսը՝ փեսացուն և նրան՝ ինչպես կույրի, տանում է հետը։ Այդ պահին երևում է հայրը և լաց ու արցունքով տալիս է իր օրհնությունը.— Գնացե՛ք, զավակներս, թո՛ղ ձեզ վրա լինի **Աբրահամի, Իսահակի** և Հակոբի օրհնությունը, ձեզ վրա լինի ողջ մարգարեների, առաքյալների և սրբերի օրհնությունը։ Թո՛ղ օրհնի ձեզ Գաբրիելի բերանը։ Թո՛ղ աստուծո աչքը միշտ քաղցր լինի ձեզ վրա։ Թո՛ղ ձեր ցանած փուշը ոսկի դառնա։ Սրանից հետո խավարեց իմ օրը։ Ո՛չ աչքս է լույս տեսնելու, ո՛չ բերանս՝ համ առնելու։ Սրտիս բերկրանքը, տանս լույսը դո՛ւ էիր։ Քանի տեսնեմ քո ման եկած տեղերն, աչքումս փուշ կբուսնի, կերածս կերած չի լինի, խմածս՝ խմած։ Գնացե՛ք, աստված ձեզ հետ, որ մեռնելու լինեմ, գոնե մի բուռ հող լցրեք երեսիս։ Սրա նման հազարավոր այլ բաներ է խոսում հայրը՝ անկեղծ զգացված, որովհետև դեռ երկար ժամանակ չի տեսնելու իր աղջկան՝ թեև նա նույն տեղում է ապրելու։

Այժմ բոլորն էլ դիմում են եկեղեցի, որովհետև ժամը 12-ն է։ Հարսնացուի խեղճ ծնողները և նրա բոլոր մերձավորները նստած են սգով համակված։ Բարձրաձայն հեկեկանքով ճանապարհ են դնում շեմքից իրենց աղջկան և այնուհետև՝ ցտեսություն. չեն կարող նրա հետ նույնիսկ մինչև եկեղեցի գնալ. այն կինն է միայն նրան թևից բռնած ուղեկցում, որը նրա եղունգներին հինա է դրել, և մյուս կողմից՝ հարսի եղբայրը։ Նրաժիշտները առջևից են գնում, նրանց հետևում են պինակիցները, սրանց մեջտեղը՝ թագավորն իր խաչեղբոր հետ և երկու քայլ հեռու՝ խեղճ հարսնացուն։ Բայց նա ոչինչ չի տեսնում, երկար կտորը նրան ցույց է տալիս, թե ուր է գնում իր սիրելին, իսկ վտանգավոր տեղերում նրան բարձրացնում են հիշյալ կինը և իր եղբայրը։ Գնում են քայլ առ քայլ։ Ջահելները զվարճանում են կրակելով, աղմկելով և գլուխկոնձի տալով, մյուսները մրցում են նժույգներով՝ ջիրիդ խաղալով, և վերջ ի վերջո մայր եկեղեցին

պիտի իր գիրկը բանա՝ նրանց հավիտյան պսակելու համար, բայց այստեղ էլ նրանց դեմ է գալիս սատանան՝ համառ ձեռքով, և չնայած խիստ ցրտին՝ փակում եկեղեցու դուռը։ Այսինքն, բանն այն է, որ հարկավոր է պետք եղած ձևով վարձատրել նաև եկեղեցու սպասավորներին, էջմիածնի աթոռին, անգամ՝ եկեղեցուն։ Մի տուրք կա՝ մոմ, խունկ և այլք գնելու համար, մեկը՝ էջմիածնի, մյուսը՝ քահանայի, իսկ չորրորդը՝ եկեղեցու ծառաների համար,— և այդ բոլոր ծախսերը պիտի կատարի խաչեղբայրը։ Սակարկությունը ժամեր է տևում։ Բավական կլինի 15—20 արծաթ ռուբլի։ Կարեկցությունից դրդված, խաչեղբայրը վերջ է տալիս այդ բանին և.— Բաց մեզ քո ողորմության դռները և արժանացրու մեզ քո սրբերի լուսաճաճանչ բնակարաններին,— և այլ երգելով՝ ներս են մտնում երջանիկները սուրբ տաճար, որը դժբախտաբար դարձրել են առևտրի կրպակ։

Մոմեր են վառվում սեղանի վրա, որը զարդարված է խաչերով և ավետարաններով։ Նորապսակներին բաժանում են միմյանցից, և նրանք պարտավոր են խոստովանվել։ Դրանից հետո նրանց տանում են սեղանի առաջ, և զգեստավորված քահանան բռնելով հարսնացուի ձեռքը տալիս է փեսացուին, կարդալով աստվածաշնչից հետևյալ արտահայտությունը.

— Եվ աստված բռնեց **Եվայի** ձեռքը, տվեց **Ադամին** և ասաց.— Սա ոսկոր է քո ոսկորից, մարմին՝ քո մարմնից, սա կկոչվի քո կինը, որովհետև տղամարդուց է ստեղծվել։ Որովհետև նրանք որոշել են մարդ ու կին լինել, քահանան հարց է տալիս, թե արդյոք նրանք միմյանց կսիրե՞ն և հավատարիմ կմնա՞ն։ Այս հարցը կրկնվում է երեք անգամ և երեք անգամ էլ փեսացուն պարտավոր է «այո՛» ասել, իսկ հարսնացուն՝ գլխով հավանության նշան անել, որը «այո» պիտի նշանակի։ Հետո սկսում է թվել այն բոլոր հիվանդություններն ու դժբախտ դեպքերը, որոնք լինում են կյանքում և որոնց նկատմամբ նրանք պետք է երդվեն, որ այդ բոլորը միասին կտանեն և երբեք իրարից չեն բաժանվի։ Այդ ժամանակ ոլորում են կարմիր թելը, որից հետո քահանան վերցնում է այն և կապում մեկը փեսացուի վզին, իսկ մյուսը՝ հարսնացուի, որպես անմեղության նշան, մեղրամոմով ամրացնում, իսկ այնուհետև այդ կապը քանդել կարող է միմիայն քահանան և ուրիշ ո՛չ ոք, այդ էլ երբեմն նույն օրը, երբեմն երեք օրից հետո, իսկ առանց կապը քանդելու նորապսակներն իրավունք չունեն իրար մերձենալու։ Այնուհետև նրանց տանում են հենց սեղանի առաջ, գլուխ գլխի տված իրար դեմ կանգնեցնում, խաչեղբայրը նրանց գլխի վրա պահում է իր մերկացրած սուրը, իսկ եկեղեցու սպասավորները և քահանան կատարում են իրենց պաշտոնը՝ կարդալով սաղմոսներից, աղոթքներից, Աստվածաշնչից այն հատվածները, որոնք վերաբերում են պսակադրու-

թյանը, որի ընթացքում քահանան փոխանակում է նրանց մատանիները և ի վերջո նորապսակներին տալիս են մի բաժակ գինի, որից առաջին հերթին պիտի խմի փեսացուն, իսկ հետո՝ հարսնացուն։ Դրանից հետո ամբողջ պատմությունը վերջանում է հանդիսականների բարձրաձայն «Աստված օրհնե»-ներով։

Ազդանշանն արդեն տրված է. եկեղեցու առաջ հնչում է երաժշտությունը, և բոլորը դիմում են նույն կարգով և թափորով դեպի փեսացուի տունը։ Բոլոր տանիքների վրա խմբերով հանդիսատեսներ են կանգնած։ Հաճախ ձեռնածուները ցույց են տալիս իրենց արվեստը, ոմանք պարում են, այն էլ ավելի շուտ ցատկոտում են, քան պարում, որովհետև գնալիս, ցատկելով են առաջ անցնում, նորապսակների ճանապարհին ոմանք ոչխար կամ հորթ են մորթում և միսը ուղարկում փեսացուի տունը։

Տան առաջ դիմավորում է երիտասարդ նորապսակներին փեսացուի մայրը, պարում, գրկում և համբուրում է իր հարսին և նրան տանում իր տեղը։ Ապա սկսվում է իսկական կեր ու խումը և աղմուկը։ Բայց ինչպես ասացինք, ոչ մի կին չի խառնվում այդ գործին։ Տղամարդիկ են անում ամեն ինչ, պարում են կամ մենակ, կամ խմբով։ Այդ կլոր պարը հիրավի մի ծեծի պար է. 15—20 մարդ շրջան են կազմում ձեռք ձեռքի տված, միայն առաջինն է ազատ մնում, որ վարպետն է։ Ձեռքերը բարձրացրած և բավական ճիշտ տակտով առաջ է տանում վարպետն իր պարողներին։ Նրանք ամբողջ մարմնով նախ աջ, հետո ձախ օրորվելով, մի ահռելի ոստյուն են կատարում։ Գլխավոր պարողը պպզում է, վեր ելնում, զանազան խեղկատակություններ անում ոտքերով և իր ձեռքին եղած մեծ փայտով աշխատում է իր հարևանին ինչպես հարկն է ծեծել, իր հետ քաշել, սա էլ զգուշանալով, մյուսներին է առաջ հրում, ծեծից խուսափելու համար, բայց երբեմն էլ կարգին ծեծվում է։ Ոմանցից փող են հավաքում նվագողների համար։ Այդ երեկոն էլ անց են կացնում նույն տեսակի սրախոսություններով, ինչպես նկարագրել եմ։

Հետևյալ օրը, ճաշից հետո, մոտավորապես ժամը 3-ին բազմությունը հավաքվում է տան կտուրի վրա, և երաժշտության ու ցնծության հնչյունների ներքո հավեր են մորթում այս ձևով. կանգնում են տան երդիկի[1] չորս կողմը, խաչեղբայրը մերկացրած սուրը պահում է նրա վրա։ Հետո բռնում են հավերի ոտքերն ու թևերը, վիզը խփում սրի ծայրին և գլուխն ու մարմինը միասին երդիկից ներս դցում, իսկ երեկոյան մեծ ախորժակով ուտում

[1] Մեզ մոտ տները կտուրի վրա, ուղիղ մեջտեղը ունեն մի ծակ (երդիկ), որի միջով լույսը ներս է թափանցում, բնականաբար՝ անձրևն ու ձյունը նույնպես։

են այդ բոլորը։ Ոմանք նվերներ են հավաքել տալիս այդ երեկոյան երիտասարդ նորապսակների համար։ Այս դեպքում քիչ թե շատ քաղաքավարի ամեն հյուր պարտավոր է մասնակցել դրան։ Ամենաթանկ նվերը տալիս է խաչեղբայրը՝ դա կարող է լինել մատանի, մետաքսե զգեստ և այլն։ Ինչպես տեսնում եք, խաչեղբոր պաշտոնը բավական դառը մի պաշտոն է։ Սպասիր, համբերություն ունեցիր, այդ բոլորի փոխարեն նրան կանխիկ են վճարում։ Որովհետև, որոշ ժամանակից հետո, փեսացուն նրա տուն պետք է ուղարկի մի թանկարժեք նվեր։

Այդ երեկոյան կարմիր թելը արձակում են և բոլորը ցրվում։ Միայն երեք-չորս ամսից հետո երիտասարդ կինը կարող է այցելել իր ծնողներին և երեք-չորս շաբաթ նրանց մոտ մնալով մի քիչ ուրախանալ։ Սկեսուրն ու կեսրարն էլ պարտավոր են նրան ընծաներ տալ, այդ բանը անհրաժեշտ է, առանց դրան չի կարելի աղջկան դարձի՝ ծնողների մոտ տեսության, ուղարկել. այդ դարձը մեզ մոտ կոչվում է Երեսբացուկ (այսինքն՝ երեսը տեսնել)։

Ընթերցողներս ակամայից կզարմանան, որ ես միանգամից Թիֆլիսից հեռացա և մեկնեցի այլ տեղեր, որտեղից ես միայն այժմ եմ վերադառնում։ Իմ ցանկությունն էր, ուրեմն, գաղափար տալ այն մասին, թե ինչպես էին և ինչպես են դեռ այսօր էլ այդ սովորությունները Ասիայի այլ վայրերում։ Դրանով կամենում էի ընդգծել դրանց՝ և Թիֆլիսի հարսանեկան սովորությունների տարբերությունը և միևնույն ժամանակ ապացուցել, թե ինչպիսի արագությամբ այս քաղաքը եվրոպականանում է. դրա հետ միասին ես խճճվեցի մի շարք այնպիսի բաների նկարագրության մեջ, որոնք հետաքրքիր կարող են լինել թերևս այն տեսակետից, որ նոր են և ազգային։ Ուրեմն, նորից դառնանք Թիֆլիս՝ մեր ելակետը. և որքան ցանկալի կլինի եվրոպացուն տեսնել, թե այստեղ որչափ արագ տարածվում են նրա արտադրանքներն և թե ապագայում ինչ հույսեր կշողշողան մեզ։

Մի քանի տասնամյակ առաջ Թիֆլիսում էլ կանացի սեռն ուներ իր բախտավոր վիճակը և իր իսկական արժեքը։ Այստեղ էլ տենչում էին երեխաներին, որքան հնարավոր է, շուտ ամուսնացնել, որպեսզի գեղեցիկ երիտասարդական տարիները անցկացնեին տանը, իրենց շրջապատված տեսնեին երեխաներով ու թոռներով, իսկ նման ձգտում կարող է լինել միայն այնտեղ, որտեղ մարդիկ դեռևս փչացած չեն, բարքերն ապականված չեն, պահանջները համեստ են, գոհ են այն բոլորով, ինչ որ տալիս է երկինքը, հետևում են լոկ իրենց սրտի ցանկություններին և մտահոգված չեն, թե ինչ է լինելու ապագայում։

Իսկ այժմ որքա՜ն փոխվել է ամեն ինչ։ Ի՞նչ է պատահել հարևանի տանը, կարծես լաց ու կոծի, անեծքների, աստծուն հայհոյելու ձայներ են լսվում։ Կարծես մեռելատուն լինի։ Բայց մարդ չի մեռել։ Վեճ ու կռիվ էլ չի կարող լինել, որովհետև այստեղի կանայք իրավունք չունեն այդպես բարձր ձայնով իրենց մարդկանց հետ խոսելու։— Թող սատանի բաժին դառնա։ Քիչ ցավ ունեինք, հիմա էլ նորն է գալիս։ Երբ աստված մարդուն պատժել է ուզում, սրանից մեծ պատիժ չի կարող լինել։ Ա՜խ, երանի թե մեռներ, իսկույն ևեթ հողի տակը դնեինք,— այս խոսքերն են լսվում։ Մի տուն մտիր բարեկամի պես, բոլորի դեմքերի վրա նկատվում է մի հուսահատական սարսափ։— Ի՞նչ է պատահել,— հարցնում ես կարեկցելով։— Էլ ուրիշ ի՞նչ պիտի պատահի, բոլորս էլ ջուրը պիտի թափվենք։ Սև լիներ էսօրը մեզ համար, աղջիկ է ծնվել: Ո՛չ սպանել կարող ես, ո՛չ էլ՝ ջուրը գցել։

Սարսափից կարելի է դողալ, այնպես չէ՞, իսկ այսպիսի ժողովրդին կամ արհամարհել, կամ կարեկցել. բայց այս բոլորը շատ հեշտ է պարզել։ 200—1000—7000—10000 արծաթ ռուբլի և մի այդքան էլ ակնեղեն պատրաստ պահել աղջիկը մարդու տալու համար,— իհարկե, հանաք բան չէ, մանավանդ Թիֆլիսի համար, որտեղ ամեն ինչ եռապատիկ թանկ է, քան ուրիշ տեղ, որտեղ շատ քիչ բախտավոր մարդիկ կան, որոնք առևտրով, կապալով կամ թե ապօրինի ճանապարհով կարողանան այնքան կարողություն ձեռք բերել, որ հնարավոր լինի ընտանիք պահել, երեխաներ կրթել, որի օգուտը այժմ յուրաքանչյուր մարդ լավ տեսնում է և ամեն կերպ ձգտում է նրանց լավ կրթություն տալ, աղջիկներին ամուսնացնել, և եթե հնարավոր է, որն իհարկե ամեն խելահաս մարդ կաներ, որևէ բան ետ գցել սև օրվա համար։ Մի երկրում, որտեղ արդյունաբերությունը, կուլտուրան, հողագործությունը, անգամ առևտուրը այնքան ցածր աստիճանի վրա են կանգնած, որտեղ ոչ մի տեղական բն չի արտադրվում, բացի հացահատիկից, գինուց և այլ կենսամթերքներից, որտեղից ոչինչ չի արտահանվում և, ընդհակառակը, դրամն ավելի շատ հալվում է Նովգորոդի, Լայպցիգի տոնավաճառներում, Համբուրգում և Լոնդոնում։ Որտեղ ժողովուրդը հնարավորություն չունի ինքնուրույնաբար արտադրելու այն բոլորը, ինչ հարկավոր է ընտանիքին հագցնելու, նրան կերակրելու համար, ստիպված է անգամ ամենաչնչին բանը կանխիկ դրամով հայթայթել։ Եվ որտեղ, վերջապես, անգամ ամենահասարակ մարդը ձգտում է վոհել իր ունեցած-չունեցածը և պաշտոնյա դառնալ, շքանշան ստանալ և, հետևաբար, կամենում է լավ ապրել, պահանջները մեծացնել և, բնականաբար, մի տանտիկին ունենալ, որի դրամագլուխը կարողանա տոկոսով տալ. դրանով ապրելու

և դրանով սնվելու համար։ Այո՛, Թիֆլիսն այդ տեսակետից այնպիսի հռչակ է ստացել, որ շատ անպետքներ, որոնք ուրիշ տեղերում շնորհք չունեն կոպեկ աշխատելու, հատկապես այստեղ են գալիս ձեռնտու ամուսնության համար։ Եվ շատ սրիկաներ, ամուսնության միջոցով ձեռք բերած իրենց կարողությունը վատնելուց և այլանդակ կյանք վարելուց հետո այնտեղ են հասնում, որ այլևս չեն կարողանում իրենց գոյությունը պահպանել, թողնում են կնոջն ու երեխաներին թշվառության ու պարտքի մեջ և ուրով գլխով անհետանում, կամ, առավել ևս խայտառակություն, երբ արդեն փողն իր գրպանումն է, ամենուրեք կապվելով հարբեցողների, թուղթ խաղացողների և ամեն տեսակ սինլքորների հետ, վատնում են իրենց կյանքը այնպիսի վայրերում, որտեղ դժոխային դևեր են բույն դրել, և կնոջն ու երեխաներին, հաճախ, այո, նույնիսկ միշտ, թողնում են առանց կտոր հացի, և թերևս կես գիշերին, կամ նույնիսկ ավելի ուշ, սատանայի նման երևում են իրենց ընտանիքում այնպիսի աղմուկով, որ քիչ է մնում պատերն ու հատակը դողդողան։

Թիֆլիսը, նորից կրկնում եմ, որտեղ բարոյականությունն այնքան ընկել է, սերն ու համերաշխությունը միանգամայն չքացել, որտեղ գերիշխում են անազնվությունը, խարդախությունը այն աստիճան, որ հարազատ եղբայրներն անգամ միմյանց ոչնչացնել են աշխատում, հայրերն ու որդիները միմյանց կործանել ուզում, և որտեղ ոչ մի երկնային ձայն, ոչ մի կրոնական կամ խղճի ձայն չեն ներգործում մարդկային խղճուկ սրտի վրա։ Որտեղ քրիստոնեական, աստվածային ուսմունքը կորցրել է իր արժեքը՝ շնորհիվ ընդհանուր բարքերի և որը մեզ հրամցնում և քարոզում են մեքենայորեն, երբ եկեղեցում ավելի շուտ ծիծաղում են, հայհոյում, հորանջում, և ավելի շատ խոսում այնպիսի ստոր բաների մասին, ինչպես՝ ամուսնությունը, առևտրական գործարքները և ամեն տեսակ կեղտոտություններ, և ավելի քիչ աղոթում,— հնարավո՞ր է արդյոք այդտեղից մի լավ բան սպասել։ Մի խոսեցե՛ք այս թշվառ մարդու հետ, որի մելամաղձոտ տրամադրությունը և ողորմելի տեսքը ձեր գութն են շարժում։ Հարցրեցեք նրան իր վհատության պատճառը։— Ո՞ր ջուրն ընկնեմ, դժոխքի ո՞ր անկյունը գնամ։ Մի այս մարդուն նայեցեք, ի սեր աստուծո, ինձանից փոխ է առել 1000, 5000, 10000 արծաթ ռուբլի։ Մուրհակը գրպանումս է, շատ տարիներ են անցել, հիմա ես նրանից պահանջում եմ դրամագլխիս տասներորդ մասը, իսկ նա դեռ ծաղրում է ինձ, հիմարի տեղ է դնում։ Ինձ նման տասն ուրիշ մարդու էլ է խաբել, կեղծ սնանկացել, իր փողերն ուրիշներին տվել։ Կառք և ձիեր է պահում, թագավորի նման ապրում, իսկ ես իմ ամբողջ կարողությունից զրկված, պետք է սովամահ լինեմ, իմ սարսափելի օրերը

լամ։ Բա էս բանն աստծուն դուր կգա՞։ Իսկ ինչո՞ւ է լալիս այն կինը՝ թուղթը ձեռքին բռնած։ Օգնություն է խնդրում, որովհետև ռուսերեն չգիտի, այրի է, մարդը վաղուց մեռել է, կալվածքներ ու կարողություններ է թողել, այդ բոլորն ընկել է խնամակալի ձեռքը. սա կեղծ թղթեր է սարքել, նրա կարողությունը սեփականել, իսկ հիմա էլ դուրս է շպրտում իր սեփական տնից։ Երեխաները քաղցած են, արդեն շատ տարիներ այս ու այն կողմ է ընկել, բան դուրս չի գալիս։ Իսկ այդ ի՞նչ վայնասուն ու վեճ է հարևանի մոտ։ Ներս մտեք. այնտեղ մի դիակ է դրված։ Բոլորը գլխի մազերն են պոկում, բայց եկեղեցական տուրքը դեռ չեն վճարել, ինչպես որ պետք է, որպեսզի հանգուցյալի հոգին դժոխքից փրկեն, և ննջեցյալը այնքան կմնա այնտեղ, մինչև եկեղեցական սրիկաների ընչաքաղցությունը չհագեցվի։ Մի լավ նայեցեք, ի սեր աստծո, այս քահանային, թե որքան անվայել է վարվում իր համայնքի անդամներից մեկի հետ։ Նրանք միմյանց հայհոյում են ու անիծում։ Մոտեցեք և կտեսնեք, որ այդ մարդն ամուսնանալ է ուզում և պսակադրության համար կամենում է հինգ չերվոնեց տալ, իսկ քահանան կրկնակի է պահանջում։

Թո՛ւ, բոլորն էլ փողի ծարավ են զգում, փողի համար էլ ամուսնանում։ Դե, թող բանաստեղծներն իրենց գլուխը պայթեցնեն, թե ամենագեղեցիկն աշխարհիս երեսին ընտանեկան երջանկությունն է, որ կույսի հայացքը երկնային է, որ սերը մի աստվածային կայծ է մարդու սրտում. բոլորովին ո՛չ։ Մեր բանաստեղծները, որ մենք, փառք աստծո, չունենք, պարտավոր են երգել. փողն է ամենամեծ սրբությունը աշխարհիս երեսին, երկնային ամենամեծ բախտավորությունը, լավագույն բուժամիջոցը և, ինչպես մեզ մոտ շատ ճիշտ ասում են՝ դրախտ ու դժոխք գնելու, ամբողջ աշխարհը տակ ու վրա անելու, կործանելու և նորից վերաշինելու միակ միջոցը։

Դեռ էլի փառք ու պատիվ մեր այստեղի վաճառականներին, որոնք այդպիսի, իսկապես զարհուրելի պայմաններում դեռ այնքան վեհանձնություն և մարդկայնություն ունեն, որ կարող են որևէ դժբախտի օգնության ձեռք մեկնել, իրենց միշտ այնպես են պահում, որ բարեհաջող պայմաններում կարելի է շատ լավ բաներ սպասել նրանցից։ Մինչդեռ մի անարժան արարած ոտքի տակ է տալիս իր լեզուն, իր ազգությունը, վաճառականն անհողդողդ կանգնած է իր երեխաներին մայրենի լեզվով դաստիարակելու որոշման վրա, հաճախ գնում է առանց հրավերի մի թշվառ այրու տուն, կնության է առնում նրա աղջիկը և անձամբ պահում նրա ամբողջ ընտանիքը։ Սակայն վեհանձնության այսպիսի օրինակներ չափազանց հազվադեպ են. բայց և այնպես պարտավոր են ամուսնանալ, որովհետև տեղացին, նույնիսկ ամենաաղքատը, ավելի շուտ կհամաձայնի, որ իր աղ-

ջիկը գերության մեջ մնա, նրան կենդանի թաղել տա, սպանի, քան ծառա ուղարկի մի օտար տան մեջ։ Այլևս տանը պահել չի կարող աղջկան 14-րդ տարին լրանալուց հետո։ Որովհետև նա ոչինչ չի սովորել, որ կարողանա զբաղվել ընթերցանությամբ, նաև չափազանց անտեղյակ է ձեռագործից։ Դաստիարակություն չի ստացել, որպեսզի իմանա, թե ինչ է հաջողականությունը, բարքերի մաքրությունը և բարեպաշտությունը։ Նա հասունացել է բռնության և կոպիտ աղդեցությունների տակ։ Հարավային կլիման և իր հարևանների և ծնողների ամենօրյա շաղակրատությունները դեռ շատ շուտ զարթնեցնում են նրա կրքերը։ Հայրը պարտավոր է վաղ առավոտից մինչ ուշ գիշեր կրպակում նստել մի քանի կոպեկ հայթայթելու համար։ Նրա երիտասարդ, ուրախ եղբայրները գիշեր ցերեկ այս ու այն կողմն են ընկնում, էլ ի՞նչն է ավելի բնական, քան ճաշակել այն խնձորը, որի համը դեռևս մեր առաջին նախամոր մոտ մեծ ցանկություն առաջ բերեց։

Ուրեմն, բոլորն էլ կարոտալից սպասում են իմանալու, թե ո՞րտեղ կա մի երիտասարդ, ով ուզում է լինի, մի կտոր հաց ունենա՝ թե ոչ, սրիկա լինի՝ թե հրեշտակ, մի խոսքով բոլորը մեկ է, միայն թե ազատվեն իրենց ողորմելի բեռից։ Չէ՞ որ Աստվածաշունչն ասում է, որ մարդը պարտավոր է դրա մասին մտածել, հայր ու մայր թողնել և իր կնոջ հետևից գնալ։ Ազնվականներն ու հարուստները փնտրում են իրենց նմաններին, հատկապես պաշտոնյաների և աստիճանավորների, որի համար և պարտավոր են լավ վճարել, որովհետև այդպիսի երիտասարդը առաջին հերթին հարցնում է, թե ի՞նչ պիտի տան, և եթե պատասխանն անբավարար է, ապա անբարտավանորեն ասում է, որ առայժմ չի կամենում ամուսնանալ. արժե՞ ուրեմն այսպիսի մի ավանակի հետ գործ բռնել։ Թող ծնողներն աղջկատները իրենց աչքերը կոխեն։

Եթե քիչ թե շատ կարգին հագնված մի մարդ է մտնում եկեղեցի, կամ պատահմամբ անցնում փողոցով, կամ թե հրավիրված է դժբախտաբար որևէ մի ճաշկերույթի, ապա նրա երջանկության հրեշտակը պտտվում է շուրջը՝ գիշեր ցերեկ, որի մասին նա չէր էլ երազում։ Իսկ եթե ինքն էլ մտադիր է ամուսնանալ, ապա բավական է, որ նա եկեղեցի գնա մի քանի անգամ և կանգնի ուղիղ կանանց առջև, որոնց հատկացվում է մեզ մոտ եկեղեցու արևմտյան մասը։ Եթե բախտի բերմամբ ասեղնագործված օձիք էլ ունենա, այն ժամանակ նա իր ամբողջ հասակով գտնվում է այնտեղ ներկա եղող կանանց սրտերի դրախտում։ Էլեկտրական հոսանքի նման անցնում է առաջին հիացմունքը բոլոր բարեպաշտ քույրերի միջով, որոնք մեծ մասամբ նրա համար են հաճախում աստծո տունը, որպեսզի միմյանց հաղորդեն օրվա նորությունները և հատկապես իրենց ամուսնա-

կան երջանկության մասին, որովհետև նրանք, բարեբախտաբար, ոչ մի գաղափար չունեն և ոչ էլ հասկանում են որևէ բառ այն բոլորից, ինչ կատարվում է եկեղեցում։ Միմիայն որոշ ծիսակատարությունների ժամանակ, որ նրանք լավ են ընկալել, առանց մտածելու ծունկ են չոքում, խաչակնքում և հետևյալ արտասովոր բացականչություններն անում.— Մեղա՜ քեզ, տեր Թագավորություն տուր իմ մեղքերին։ Ոտքերիդ փոշին եմ ես, ինձ ետ մի վանիր։ Երեսս ոտքերիդ տակ լինի։ Ողորմությանդ մեռնեմ, տե՛ր։ Ոտքերիդ տակի շունն եմ, կերակուրս մի կարի։ Արժանացրու ինձ քո երկնային թագավորությանը և քո տեսքին։ Դու ես ինձ ստեղծել, դրա համար էլ մի ոչնչացրու ինձ և այլն։ Դրա հետ միասին այնպես ուժեղ ծեծում են կրծքերը, այնպիսի հայացքով են նայում վեր, որ տեսնողը կկարծի, որ հենց իրենք են երանությունը։ Բայց այդ կատարվում է այն դեպքում, երբ Ավետարանն են կարդում, կամ հանդերձախորանն է ցույց տրվում, կամ պատարագ կատարող քահանան անցնում է եկեղեցու միջով՝ որի ժամանակ ամբողջ ժողովուրդը համբուրում է նրա ձեռքը և մի քանի կոպեկ գցում նրա հետևից տարվող գանձանակը, որի փոխարեն քահանան պարտավոր է հիշել նրանց մահացածների հոգիները։ Դրա համար էլ ամեն մեկը նրա աջը համբուրելուց հետո իսկույն ևեթ ավելացնում է. «Հիշեա զմեզ յառաջի անմահ գառին Աստուծոյ»,— որին քահանան ամեն անգամ պատասխանում է. «Հիշեալ եղիցիք առաջի անմահ որդւոյն աստուծոյ»։ Բայց այս բոլորը անգիր արած, երեխայական հասակից սովորած արտահայտություններ են, որոնց իմաստը ո՛չ քահանան է հասկանում և ո՛չ էլ համայնքը։

Վերջապես արդեն տաղտկալի քահանան գտնվում է վարագույրի հետևը, որը բոլոր հայ եկեղեցիներում, սեղանի վրա, հանդերձախորանի առաջ երբեմն-երբեմն քաշվելով՝ բացվում կամ փակվում է։ Այժմ եկեղեցու սպասավորները և քահանաները սաղմոսներ, մարգարեներից հատվածներ, կամ աղոթքներ են կարդում կամ երգում։ Բայց այդ բոլորը ձանձրալի են։ Տղամարդիկ ծալապատիկ նստած զրուցում են, պառավ կանայք հորանջում, ննջում կամ անմիտ կերպով այս ու այն կողմ են նայում, իսկ առավել սիրող, հոգատար մայրերն էլ ջանքեր են թափում տնտղելու այն ասպետին, որը թեպետ դեռ աչքի չի ընկել որևէ ռոմանտիկ արկածով, բայց, այնուամենայնիվ, իր քոսոտ համազգեստով շլացրել է բոլորի աչքերը։

— Էդ ո՞վ կարող է լինել,— հիացած փսփսում է կանանցից մեկը՝ աշխատելով թաքցնել իր ուրախությունը,— առաջին անգամ եմ դրան տեսնում։ Փառք աստուծո։ Ամեն տեսակ նոր (օտար) մարդիկ գալիս են մեր երկիրը։ Էստեղացու նման չէ։ Աստրախանցու է նման, բայց չէ՛, կարծես

Քռի ջուր խմած լինի, չե՞ս տեսնում ինչ բոյ ունի, ինչպիսի սև աչքեր, ինչպիսի փոքր բերան։ Կարծես մեղրամոմից շինած պատկեր լինի։ Թե ինձ սիրում ես, մի լավ նայիր նրան։ Կարծես հրեշտակ լինի առաջդ կանգնած, այնքան դուր է գալիս աչքերիս։ Չէ՛, դա էստեղացի չէ, ինձ թվում է, որ նոր է եկել Շուշուց: Մի ապալետներին (էպոլետներին) նայիր։ Տունդ չքանդվի, խաչ էլ ունի։ Դոշը լիքն է։ Դա երևի կամ գերագույն հրամանատարի մոտ է ծառայում, կամ գնդապետ է։ Եթե քաղաքացիական ծառայող է՝ կամ Ֆառուղար կլինի, կամ խորհրդական։ Ինչ սազում է նրան համազգեստը։ Կարծես մեջը ձուլված լինի։ Ի սեր աստուծո, սիրուն տղամարդ չի՞։ Թվում է, թե իշխան է։ Ով ուզում է լինի, խաչապաշտ (քրիստոնյա) է. թո՛ղ աստված նրան էլ ավելի մեծ պատիվների արժանացնի։ Մեզ ի՞նչ վնաս դրանից։ Թո՛ղ աստված ամեն մարդու մի կտոր հաց տա։ Թո՛ղ աստված ողորմի բոլոր հայ քրիստոնյաներին, մեզ էլ նրանց հետ։ Թո՛ղ աստված բաշխի նրան իր հորն ու մորը։ Երանի էն աչքին, որ էսպիսի որդի ունի։ Դրան մի անգամ տեսնելն ամբողջ աշխարհ արժի։ Ավելի լավ է մի տղա ունենաս, է՛ն էլ լավը։ Մեր երկրի ջահելները հո ջահելներ չեն։ Ինչ ճամփով որ եկել է, թող աստված էլի էն ճամփով ետ տանի։ Կերպարանքն այնպես դուր եկավ ինձ, կարծես ամբողջ աշխարհն ինձ բաշխեցին. երանի իմանամ, թե ով է և այլն։

— Դրա աչքն էլ արաքի։ Քիչ բան ունեմ անելու՝ դեռ էդպես մարդու մասին էլ մտածեմ,— վրա է բերում մի ուրիշը, կամենալով իր անտարբերությամբ դիմացինին համոզել, որ այդ մարդն իրեն բոլորովին չի հետաքրքրում, մինչդեռ ներքուստ կկամենար իր հակառակորդին կտոր-կտոր անել։— Որ դժոխքից էլ որ եկել է, թող էլի էնտեղ գնա։ Իմ ինչ գործն է, թե դա ով է։ Մի սալդաթի կտոր, ոստիկանության ծառայող, սուրն էլ հետևից կախել է, որ տեսնողներին զարմացնի։ Ա՜յ, հողեմ գլուխը։ Հողս գլխիդ։ Կրեմ գլուխդ։ Ոեխը էնպես է վեր ցցել, կարծես թե ինչ լինի։ Աչք չունե՞ս, երեսից աղբ է վազում։ Կարծես առաջդ կանգնած լինի մի սոված, լղար յաբու։ Ինչի՞ս է պետք դրա խաչը, շքանշանի ժապավենը, գրպանը պետք է լիքը լինի, գրպանը. դրա նման մարդիկ զկռտալով թրև են գալիս։ Թող ինչ ուզում է ունենա, համազգեստից երևում է այդ։ Էշն էլ ավելի սիրուն կերևա, եթե լավ թամք ունենա։ Դրա նմանները թրև են գալիս սոված շան պես։ Ամեն մարդ պիտի տաշտումը ալյուր ունենա, գրպանում էլ՝ փող։ Ապալետն ու խաչը հաց չեն դառնա։ Դրանց հետևից ընկնողը երկու ձեռք մի գլուխ կանի (այսինքն՝ երկու ձեռքով գլուխը կծեծի). էսօրվա օրը շներն էլ չինովնիկներ են դարձել, որտեղ թքես, դրանց վրա կընկնի։ Հողս նրանց գլխին։ Վա՜յ էն մարդուն, որ էսպեսիներին կհավատա։ Դա՛,

պա՛, պա՛, պա՛... Թող աստված էն օրն ինձ մահ տա, որ դրանց հուսով չմնամ։ Ինչի՞ են դրանք նման՝ պոչը կտրած ագռավի։ Ուռած, փքված գալիս են ու էդտեղ կանգնում։ Կարծում են, թե աշխարհն իրենցն է, իսկի չեն հետաքրքրվում, որ իմ կապած շանը ավելի եմ գնահատում, քան նրանց։ Թշնամիս չընկնի դրանց ձեռքը։ Երեսի մազերը թրաշում են, հետո էլ մեյմունի են նմանվում։ Ո՛չ երեսներին աբուռ ունեն, ո՛չ սրտերում՝ խիղճ։ Էդտեղ կանգնում են, մի ոտի վրա տնկվում, կարծես շահզադա լինեն, կարծես գետնի վրա չեն ման գալիս, կարծես թե ոտքերի տակ ձվեր են շարել։

Եկեղեցի ենք եկել աղոթելու համար, լեզուդ քեզ քաշի։ Ով ուզում է լինի. լավ մարդ է, թող աստված իրեն բարին տա, իսկ թե չար է՝ չարը տա։ Հո նրա դարդը մեզ չեն տվել։ Թող ամեն մարդ իր գլուխը լա։ Ի՞նչ գործ ունենք օտարների հետ։ Թող նրանք իրենց համար ապրեն, մենք էլ մեզ համար։ Նա ո՛չ իմ որդին է, ո՛չ փեսան և ո՛չ էլ եղբայրը, որ վրան ուրախանամ։ Ումը որ է, թող նրա աչքը լուս լինի։ Ուրիշը որ հաց ունենա, մեր փորը չի կշտացնի։ Ուրիշի թթխմորը տևական չի լինի մեր հացի համար։ Ամեն մարդ իր մի կոպեկը ավելի պիտի գնահատի, քան ուրիշի հազար թումանը։ Եթե ուրիշի տունը հեղեղ էլ կտրի, մի կաթիլ էլ ինձ բաժին չի հասնի։ Էդ տեսակ շաղատաններ շատ են եկել ու գնացել։ Ամպի նման գալիս են, անձրևի նման գնում։ Ես նրանց ոչ խերն եմ ուզում, ոչ շառը։ Դրանք աշնան արև են, մեկ երևում են, մեկ էլ հանկարծ չքանում։ Ա՜յ տունդ չքանդվի, Ավետարան են կարդում, կամ պատարագը վերջացավ,— ասելով վեր է թռչում։— Ո՞րտեղից եկավ էդ սատանան, աչքը քոռանար, ոտքը կոտրվեր, որ էսօր չգար։ Իբր թե էսօր ժամ եկանք։ Պատարագից ի՞նչ հասկացանք. կարդացին պրծան։ Գրողը տանի, որտեղի՞ց եկավ էդ ուրվականը։ Թո՛ղ գոնե մի քանի անգամ ծունկ չոքեմ, խաչակնքեմ,— Տեր, մեղա քեզ,— ասեմ։ Էսօր մեր ժամը, մեր աղոթքը սատանայի բաժին եղավ։ Էսօր մեր աղոթքն էլ, մեր պատարագն էլ հարամ եղավ։ Է՛, թող աստված մեր մեղքերից չհարցնի։ Աղոթելու տեղ, դատարկ բաներ խոսեցինք էսօր։ Հը՞, ի՞նչ կասես։ Լավ է, որ տերտերը չտեսավ, թե չէ խոստովանելիս մի ավելի մեծ ապաշխարանք էլ վզերիս կկապեր։ Բայց չէ՛, իմ տերտերը լավ մարդ է, ինչ էլ որ ասելու լինեմ, նա պատասխանում է. «Աստուած թողութիւն շնորհեսցէ»։ Մեր տերտերը հո տերտեր չէ, այլ իսկական գառ։ Ինչ ուզում ես ասա, ձեռքը գլխիդ է դնում և բոլոր մեղքերդ ներում։ Նա էլ մարդ է, անմեղը միայն աստված է։ Քա (քույրիկ), ճի՞շտ է, որ այսինչն ու այնինչը իրար խոսք են տվել։ Քա, էդ ի՞նչ նորություն է։ Լսած կլինես։ Ճիշտ է, ժամը դուրս եկավ, բայց եկող կիրակի կարող

ենք պակասը լրացնել. էս օրը կորավ մեզ համար։ Ո՞րտեղ են իրար գտել։ Անիծվի՛ քոռ բախտը, մեկին թողնում է, մյուսին գտնում։ Ինչ ուզում ես արա, եթե ճակատիդ գրված չէ, զուր բան է։ Ո՞րտեղից որտեղ։ Բախտ է, էլի, որ եկավ, ի՞նչ կարող ես անել։ Ամեն ինչ պատահական է։ Աչքիդ լույսը հանիր, տուր թող ուրիշներն օգտվեն (այսինքն՝ ինչ ուզում ես արա), գլուխդ քարե քար տուր, երկինք բարձրացիր, մատներդ ջուր արա, տուր թող խմեն, հոգիդ դուրս հանի՝ ուրիշին բաշխի, որ բախտը չի տալիս, չի տալիս, էլի։ Ինչպես աղջկերք եմ մեծացրել, հարսնացու դարձրել, որ դրանց նմանը Ցանգստանում էլ չես գտնի։ Եղունգներից ոսկի է թափվում, էնպիսի բոյ ունեն, որ նկարիչն էլ չի կարող նմանը դուրս բերել, բաժինքը պատրաստ է, բերաններից ենք կտրել, նրա համար ամեն ինչ պատրաստել. 2000 արծաթ ռուբլի տանը կապած — դրած է նրա համար, արծաթեղենն էլ հետը։ Այսինչն ու այնինչն էլ միջնորդ ուղարկեցին մեզ մոտ, էդ տեսակ մարդու չենք ուզում տալ, բայց ուզես, չուզես, պիտի պսակվի։ Միայն ապարանջանն արժի 600 արծաթ ռուբլի։ Մեզ լայեղ չի համարակ մարդու տալ, խեղճ աղջիկն էլ տանը նստել մնացել է։ Եթե մի հարմար փեսա գտնես, գիտես էլի, թե ինչ կստանաս։ Բացի դրանից, մարդս էլ քարտուղար է այսինչ տեղը, կամ խորհրդական. քո բոլոր դատական գործերն էլ մի անգամից կվերջանան։ Մի աչքդ դես ու դեն արա, գիտեմ, ձեռքիցդ շատ բան կգա։ Մի լեզու ունես, որ օձը բնից կհանի, արի՛, էդ բանում մեզ օգնիր։ Մենք տնով տեղով քո ծառան կդառնանք։ Ինչպես կարծիր, իբր թե մարդը ճրագին ձեթ ես ուզում ավելացնել։ Դու հո գիտես, թե հասած աղջիկը տանը պահելն ինչ ցավ է։ Ասում են, թե այս կամ այն տունը մի ունևոր մարդ է ապրում, տարեկան հազար ռուբլի ռոճիկ է ստանում, կարգին մարդ է, իր չոր գլխից դուրս ոչինչ չունի, չի խմում, չի խաղում, եթե նրան ձեռք գցես մեզ համար, երեք թանկագին շալ ու էնքան էլ փող կստանաս։ Թե շնորհք ունես, հիմա պիտի ցույց տաս։ Էլ ո՞ր օրվա համար է բարեկամը։ Հո գիտես, թե մեր տունը ի՞նչ տուն է։ Աշխարհն իր բերանով միայն մեր մասին է խոսում, մենք հո չենք կարող ուրիշի մոտ գնալ, խայտառակություն է։ Ինչ ձեռքիցդ կգա, արա. կտեսնես, որ քո լավության տակից դուրս կգանք։ Թող մեր մեջ մնա այս, վերևն աստված, ներքևը դու։ Թող ո՛չ ոք չիմանա։ Վնասը քեզ էլ կհասնի, եթե մեր անունը կոտրվի (այսինքն՝ եթե մենք անվանարկվենք)։ Ջեռս փեշդ եմ քցել (այսինքն՝ դու ես իմ հույսը), դու գիտես, թե ինչ կարող ես անել։ Ասում եմ, էնքան ու էնքան բաժինք պատրաստ է։ Ե՞րբ լուր կբերես։ Դու հո գիտես, խեղճ մարդու աչքն էնքան թող կփչեն, մի էնպիսի գազան կկապեն գլխին,

որ եթե չուտի, չխմի, էլի հերիք է նրա համար. բայց որ աղջկաս տեսնի, ամեն անգամ կկարծի, թե հրեշտակ է առաջը կանգնած։ Բայց սատանի ականջը խուլ, ժամը դուրս եկավ։ Գնանք, Ավետարանը համբուրենք, մնացածը հետո կխոսենք։ Սա էլ լավ գործ է, եթե մարդ օր առաջ էդ ցավը (աղջկան) գլխից ռադ անի, որովհետև զոռով չես կարող նրան տանը պահել։ Բախտավոր օր լինի։ Գնաս բարև, քեզ կսպասեմ»։

Ով տեսել է «Ռոբերտ սատանայի» մեջ գերեզմանատունը, երբ մեռելները քողարկված վեր են կենում և աննպատակ ու անկարգ այս ու այն կողմ ընկնում, նա կարող է որոշ չափով գաղափար կազմել, թե ինչ է կատարվում մեզ մոտ, երբ ժամն արձակվում է (այսինքն՝ պատարագի արարողությունը վերջանում է)։ Տղամարդիկ դեռ դրանից առաջ հեռանում են, մի քանի անգամ առանց մտածելու խաչակնքելով, ծունկ չոքելով, կամ կիսով չափ գետնին խոնարհած՝ աջ ձեռքով մի քանի անգամ, որքան կարելի է արագ, այնպես են շոշափում գետինը և իրենց բերանը, կարծես թե հունիսին մորի հավաքելիս լինեն ու շտապ-շտապ ուտեն։ Մի մասը հրելով, խփելով, խփվելով ներս է խուժում այնտեղ, ուր քահանան նշխար է բաժանում. դա չպիտի շփոթել հաղորդության հետ, որը տեղի է ունենում միայն տոն օրերին (այսինքն՝ զատկին և ջրօրհնեքին) կամ մահվան ժամանակ։ Նշխարը կտորներով բաժանում են ամեն կիրակի։ Այնուհետև համբուրում են Ավետարանը և հեռանում։

Բայց այդպես անաստված չեն մեր բարեպաշտ տիկնայք, որոնք ամբողջ ժամանակ շաղակրատում էին։ Հանդարտ քայլերով դուրս են գալիս եկեղեցու այն մասից, որը մահաջարով բաժանված է այն մասից, որտեղ տղամարդիկ են կանգնած, դեռ էլի մոմեր են վառում սրբերի պատկերների առաջ, որոնցից, ի բախտավորություն հայ ազգի՝ շատ կան հայ եկեղեցիներում, բայց այնպես կոպիտ նկարված, մոմերից այնպես այլանդակված և այրված, որ մեկի քիթն է պակաս, մյուսի ձեռքը, երրորդի աչքը. հետո էլ նրանք հազարավոր, բյուր անգամ ջերմեռանդ համբուրում, դեմքով շոշափում են բոլոր անկյուններն ու ծայրերը, սեղաններն ու ջահերը, խաչերն ու ավետարանները և այլն։ Այս բոլորի պատճառն այն դանդաղաքայլ, գերեզմանոցային շարժումն է և սպիտակ սավանը, որով մեր սիրելի կանայք աշխատում են ծածկել իրենց սիրուն դեմքերն ու ամբողջ մարմինը ամբարտավան մարդկանցից, և միևնույն ժամանակ ջերմեռանդորեն խոնարհվել նրանց տեսքի առաջ. և այդ բոլորը չափազանց դուրեկան, հաճելի կերպով ամբողջացնում է ողջ տեսարանը։

Սակայն մեր վեպի հերոսը չպետք է ամենևին մտահոգվի, կարծելով, որ իրեն չեն նկատել։ Նա պարտավոր է ավելի ևս լուրջ ու վայելուչ պահել

իրեն. այսինքն՝ ուսերը վեր բարձրացնել, ուրիշների հետ շատ չխոսել և արձանի նման այնտեղ կանգնած մնալ, հետո գլխով անելով մի քանի անգամ խաչակնքել, Ավետարանը համբուրել և ապա, դուրս գնալու ժամանակ, մի շեղակի հայացք գցել գեղեցիկ արարածների վրա։ Հրեշտականման փեսացուն երևաց։ Նույնիսկ գիտեն, թե ո՞ւմ հետ է նա խոսել, ինչպես է դուրս գնացել։ Քայլվածքն էլ հո յուղ է ածել ճրագին։ Բոլորը փնտրում են, թե ո՞վ է դա, և եթե ժամկոչը չգիտի դրա ով լինելը, ապա անկասկած գիտեն պառավ կանայք, իսկ եթե վերջիններն էլ անտեղյակ են, ապա անշուշտ քահանան կիմանա։ Խոստում խոստման ետևից է կատարվում, միմյանց այցելում են, և այդ բոլորից հետո, եթե այս անգամ դրա ով լինելը չի պարզվում, ապա մյուս անգամ մանրամասն գիտեն արդեն նրա կյանքի պատմությունը։ Այժմ ժողովուրդը ցրվում է։ Եկեղեցու դռներն ավելի շուտ լիզում են, քան համբուրում։ Շքեղ և հանդիսավոր է դրանց ելքը եկեղեցուց։ Տղամարդիկ շտապ գնում են իրենց գործերին, իսկ կանայք, ընդհակառակը, չեն գնում, այլ քայլ առ քայլ խմբերով ճեմում են դեպի տուն։ Կանգ են առնում, նկատողություններ են անում, հաճախ մատները դնում բերանին, գլուխները թափահարում, ամեն տեսակ դիրք ընդունում և շարժումներով խոսում, այնպես որ մի թիզ ճանապարհն անցնում են մի ժամում կամ ավելի։ Որովհետև ամբողջ մի շաբաթ այլևս միմյանց չեն տեսնելու, և ամենօրյա ժամագնացությունը վայել է միայն պառավ կանանց և ալևոր ծերունիներին։ Այսպիսի ազնվազարմ կանայք կարիք չունեն ամբողջ շաբաթ աղոթելու, դրա համար սահմանված է միայն կիրակին, երբ նրանք կարող են իրենց **աղոթքներն** *ու* **այցելությունները** *կիրակին...*

Եկեղեցուց դուրս գալուց հետո, սովորական ողջույնն ամեն տեղ և ամեն բերանում նույնն է։— Աստված ողորմի,— ասում է եկեղեցուց դուրս եկողը իրեն հանդիպողներին։— Ողորմի ծնողացդ,— պատասխանում են ամեն անգամ։— Որտեղի՞ց ես գալի,— հարցնում ես դու։— Եկեղեցուց. էսօր վերջապես արժանացա սուրբ պատարագի, թո՛ղ քո մուրազն էլ կատարվի։ Ի՜նչ արարողություն, ի՜նչ երգեցողություն, այս կամ այն քահանան կամ սարկավագը կատաղել էր, որոտում էր (այսինքն՝ լիաձայն, հիանալի էր երգում)։— Որովհետև մեր հայրենակիցներին դուր է գալիս ավելի շուտ հազոգոռոցը, քան ներդաշնակ երգեցողությունը, որը կատվի մլավոց են համարում, որովհետև մեղմ է հնչում։— Ո՞վ արեց էսօր պատարագը։— **Տեր** *(այսինքն՝ քահանա) այսինչը։ Նա որ պատարագ է անում, կարծես լույս է իջնում երկնքից ինձ վրա, կարծես ոսկով գլխով երկնից արքայություն*

եմ ընկել։ Հրեշտակներն էլ չեն կարող նրա նման **բարձր** կարդալ ու սիրտ բռնել։ Հոնքերը կարծես ոսկով քաշած լինեն, մորուքը մինչև ծնկներն է հասնում, դեմքը կարծես սրբի պատկեր լինի։ Մազերը կարծես մետաքսից լինեն։ Կարծես թե պատարագը Քրիստոսն է կատարում, կարծես աչքերից լույս է իջնում, բերանից կրակ։ Աստված վկա, կարծես նոր եմ ծնվել, մեղքերս բաշխել են ու հոգիս սավառնում է դեպի երկնից արքայությունը։— Դու ի՞նչ ես տեսել. մի տեսնես, թե մեր տերտերն ինչ պատարագ է անում, էն ժամանակ կասես՝ հա, ա՛յ, էդպես կանեն պատարագը։ Մատաղ լինեն բոլոր տերտերները նրա մի մազին, նրանք նրա ոտքերի հողն էլ չարժեն։ Նրա ոտի մատներից մինն ավելի շատ բան գիտի, քան էդ տխմարները։ Ջրուցի մեջ վարպետ է. թե ուզում ես ուրախանալ, էնքան ծիծաղելի բաներ կասի, որ ծիծաղից կտրաքես։ Երբ նա **տոլուբաշի** (թամադա) է, էնքան է մարդկանց ծիծաղեցնում, որ ամոթ չլինի ասել, վարտիկները թրջում են, ուշագնաց գետին ընկնում, աչքերից արտասուք է վազում։ Որ հինգ թունգի (ընդամենը 25 շիշ) գինի էլ խմի, կարծես իսկի բերանը բան չի լցրել։ **Ֆրանգստանում** էլ չկա էդպես հանաքչի, օյինբազ, էդ տեսակ ծաղրածու և այլն։ Իսկ ժամում, կարծես գառ լինի։ Երբ նրա ձայնն է հնչում, կարծես հազարավոր զանգեր են զարկում, ու դեմքն էլ էնպես հանգիստ է, մանավանդ, երբ գլուխը տաք է. էդ ժամանակ քիչ է մնում, որ ժամը փուլ գա։ Սիրտս հալչում է փորումս, երբ բերանը բաց է անում, պատերը դողում են, և կարծես թե ոտքերս կտրվում են գետնից։ Հրեշտակներն էլ էդ տեսակ ձեն չունեն։ Ափսոս, որ շատ զոռ է տալիս գինուն։ Ասում են, որ գինին փչացնում է ձենը։ Ինչ ուզում է լինի, դա մեր տերտերն է, նա մեր սիրտն է շարժում, մենք էլ նրանը։ Խոստովանության ժամանակ էլ հո մի թթու խոսք չի ասի։ Մյուս տերտերներին մի տես, ո՛չ երեսներին ամոթ կա, ո՛չ էլ սրտերում պատվի զգացում։ Շների նման չափչփում են դռնե դուռ, հենց որ մի տեղ հոտ առան, իսկույն կվազեն, դուռը որ փակես, լուսամուտից ներս կթռչեն։ Ամեն մեկը յոթ մարդու չափ է ուտում, դրուստ է, որ ասում են՝ սար ու ձոր, տերտերի փոր (հիանալի՜ բնութագիր)։ Շների չափ շատացել են ու քիչ է մնում մարդ ուտեն։ Թո՛ղ դրանց ձեռնադրողի աչքը չորանա։ Երեկ գինի էին ծախում, փինաչիներ էին, փողոց էին ավլում, էսօր տերտեր են դարձել։ Վա՜յ ինձ, մեղք գործեցի. թո՛ղ աստված չնեղանա, թո՛ղ սատանան քամին տանի, սատանի ականջը խուլ, աջը համբուրելիս սիրտս խառնվում է։ Մեր արքեպիսկոպոսն էլ հո հոգու փրկիչ չէ, իսկական իշի գլուխ է։ Փողերը դիզում է խալիչաների տակ, փոնչիներին էլ տերտեր է շինում։ Դրա աչքը չքոռանա, ինչի՞ն է պետք էդքան փողը. ո՛չ երեխա ունի, որ լաց լինի, ո՛չ էլ աղջիկ, որ մարդու տա։ Լավ ուտում է, լավ խմում ու

էնքան է չաղացել, որ յոթ եզ էլ նրա չափ միս չեն ունենա։ Երբ խեղճ աղքատները երևում են նրա դռանը, փետով ու ուշունցով ետ է քշում։ Դրանց ի՞նչն է պակաս, որ մեր ուղնուծուծը ծծում, մեր միսն են ուտում։ Ծակ տակառի պես, որ տաս տարի էլ լցնես, էլի կասեն՝ «Բերե՛ք, տվե՛ք», ու դարձյալ չեն լցվի։ Ի՞նչ են տվել մեզ, որ չեն կարողանում ետ վերցնել։ Տարեկան մի անգամ պատարագ է անում, ունեցած-չունեցածդ պիտի իրեն տաս. հանգուցյալի հոգեհանգիստը կատարելիս հո չի գնա, մինչև 10—20 թուման չստանա։ Ջրնգալեն գրպանն է դնում, հաճախ մի քանի անգամ դողդողալով հաշվում, ու հետո միայն կոշիկները հագնում։ Ասա, թե աստված կսիրես, մեկ չէ, պատարագը տերտե՞րն անի, թե արքեպիսկոպոսը։ Երեկ էլ մի չորացած պառավ էր մեռել. մեկ, երկու, երեք և արքեպիսկոպոսը վրա հասավ։ Գավազանը ձեռքին, վեղարը գլխին՝ մինչև աչքերը քաշած, կամաց-կամաց ներս մտավ։ Երբ աչքերը դարձնում է, քիչ է մնում վախից հալվեմ։ Հողեմ գլուխը՝ դեռ «սրբազան հայր» էլ ասում են, կարծես երկնքից եկած լինի։ Թող դրանք իրենց սրբությունով իրենց գլուխը լվանան։ Աշխարհը նրանցով է շինվել, նրանցով էլ պիտի քանդվի։ Երբ սևագլխի (հոգևորականի) չեմ տեսնում, կարծես սատանայի եմ տեսնում։ Դրանց բերանից լույս է թափվում, իսկ սրտերում օձեր են բույն դրել։ Վա՜յ նրան, ով էդ սևագլուխների ձեռքը կընկնի։ Որ հոգին էլ ծախելու լինի, էլի դրանց ձեռքից չի պրծնի։ Դրանց ձեռքին է և՛ դժոխքի, և՛ արքայության բանալին։ Ուզենան կկողպեն, ուզենան կբացեն,— ո՞վ նրանց ձեռքը կբռնի։

Մի **Ներսես** ունեինք, նրան էլ աստված տարավ մեզ պատժելու համար։ Մի ժամանակ մեր եպիսկոպոսարանը թագավորական պալատ էր։ Մեկը գնում էր, տասը՝ գալիս, տասը գնում էր, քսանն էր գալիս։ Բոլոր մեծամեծները նրա ոտքն էին գալիս։ Երբ մի հայի գլուխ ցավեր, հազար տեղ ներս ու դուրս կաներ։ Ունեցածը ուրիշներին էր բաշխում։ Հիմա ամեն ինչ ամայի է դարձել, մեր վանքն էլ հետը։ Մկները սովից ծվծվում են, և փորերը ցավում է։ Արագիլները իրենց բներն են դնում էնտեղ։ Երբ մարդ ժամ է մտնում, արտասուքը հոսում է աչքերից։ Աստված բարկացել է մեր ժողովրդի վրա, ի՞նչ անես։ Եթե աստված մեզ սիրեր, **Ներսեսը** էստեղ կլիներ։ Երբ նա քարոզ էր կարդում, կարծես Քրիստոսը մեր դիմաց կանգնած լիներ։ Ավելի լավ կլիներ աստված մեզ մահ տար, քան թե նրան մեր միջից տաներ։

Հիմա, որ քար գցես, միջից տերտեր դուրս կգա, էնքան շատ են դրանք։ Ո՛չ հավատ է մնացել, ո՛չ սեր, ո՛չ էլ հույս։ Մարդու կոպեկով են ծախում։ Իհարկե, որ կարդացողներն էդպես անեն, էլ անգետը ի՞նչ անի։ Երեխան հորը չի ճանաչում։ Կովը բարձրացնում են, որ տեսնեն՝ տակին հորթ կա՞

(այսինքն՝ շահագրգռված են)։ Սատկած ձիու նալի են ման գալիս, որ քաշեն։ Շորդ որ տվիր, շապիկդ էլ հետը կուզեն։ Թիֆլիսն էլ մի ժամանակ կկործանվի Սոդոմ-Գոմորի նման, տեսնենք, երբ է լինելու։ Կար ժամանակ, երբ մի կտոր հացով հազար մարդու սիրտ կշահեիր, իսկ հիմա, որ հոգիդ էլ հանես նրանց տաս, ավելին կպահանջեն։ Էսօր աղ ու հացդ կուտի, էգուց տունդ կքանդի։ Ո՞վ է լսել, որ մի թունգի գինին կես կամ մի ռուբլի արծաթ արժենա, մի կոտ (3 փութ) ալյուրը՝ 2 արծաթ ռուբլի։ Առաջ թունգին արժեր ամենաշատը 10 կոպեկ, ալյուրը՝ 2—3 աբասի (80 կոպեկ պղինձ), դրա համար էլ աստված մեզ վրա բարկացել է։ Որ էսպես գնա, վա՜յ մեր օրին, մեր վերջին շապիկն էլ կծախենք, մեր երեխաներին էլ գրավ կդնենք։ Թո՛ղ աստված չոչնչացնի իր ստեղծածներին։ Մի արծաթ ռուբլի բազար ես ուղարկում, ու էնքան բան չես առնում, որ մի կուշտ ուտես։ Աչքդ ոչինչ չի տեսնում։ Սրանից դուրս տանդ էլ կա հաց, գինի, կարագ, աղ։ Ի՞նչ անեն մեր խեղճ մարդիկ. դրա համար էլ պիտի ցրվեն աշխարհով մեկ, հոգիները դուրս գա, քարե քար ընկնեն, որ մեզ պահեն։ Երեք տարի է խեղճ մարդուս չեմ տեսել, չգիտեմ ինչ տեսք ունի. նա պետք է իր երեխաներին էստեղ թողնի, օտար երկրներում թափառի, հաճախ գուցե քաղցած, անձրևի ու բուքի տակ։ Աչքս դուրս գա։ Ձեռքս չի հասնում, որ նրան մի քիչ օգնեմ։ Կարելի է հիվանդ է, ջուր տվող չունի, երեսի ճանճերը քշող չկա։ Սպիտակեղենը լվացող չունի։ Թևեր չունեմ, որ թռչեմ, իմ ձենը չի լսի։ Արևածագին լինի, թե իրիկնադեմին, աչքերս ջուր են դառնում։ Ախ ու վախ քաշելով հոգիս մաշվեց։ Երանի էն օրերին, երբ մենք մի կտոր հացով ու մի աման լոբով անց էինք կացնում միասին մեր կյանքը։ Հիմա էլ, թե մի ծակ կարկատես՝ նորն է բացվում, մի վերք բուժես՝ ուրիշն է բացվում. գիտես, թե վերքերն էլ փոր ու ախորժակ ունեն ուտելու համար։ Մարդ ո՞ր ջուրն ընկնի. ինչ անեմ մետաքսե շորերը, երբ սիրտս ուրախ չէ։ Ի՞նչ անեմ մեծ տունը, երբ տանտերը անձրևի տակ է քնում։ Տեսնո՞ւմ ես, էն մետաքսե տիկնիկը ինչպես փքված է գնում, քիչ է մնում կտոր-կտոր լինի։ Կարծես թագավորի աղջիկ լինի, մի վերարկուին նայիր, գլխի զարդարանքին, նրա քայլվածքին, շալերին, ով գիտե տանը ուտելու բան չունեն, էդպես են խաբում մարդու աչքը. կարելի է էդ հագուստները պարտքով է ձեռք բերել։ Հողե՛մ գլուխդ։ Էգուց, մյուս օրը հորդ տունը կավերես, մի մարդ ձեռք գցելու համար։ Ավելի լավ է աստված ժանտախտ տա, քան աղջիկ։ Հիմա, հիմա, պա՛, պա՛, պա՛, պա՛։ Ավելի լավ է ջուրը ընկնես խեղդվես, քան թե աղջիկ մարդու տաս։ Ամեն մի սրիկա փող է ուզում։ Փառք աստուծո, մենք գլուխներս այդ ցավից ազատեցինք։ 3000, 4000 արծաթ ռուբլի, էնքան էլ արծաթեղեն, 2 կրպակ և այլն հետը

դրինք։ Թող բոլորը վերցնի ու աչքը կոխի։ Երեխաներին մեծացնում ենք, որ ուրախանանք, դրա տեղը դարդ ունենք։ Դեռ երկուսն էլ տանն են։ Աստված տա մեռնեն։ Խեղճ մարդս էլի հեռացել է։ Դրանց էլ պետք է շուտով ճանապարհ դնել։ Աղջիկը վարունգի նման բան է, շուտ է հասնում, որ շուտ չկերար, համը կորչում, դեղնում է, պիտի դեն գցես։ Գլուխդ ցավեցրի, զահլեդ տարա, էնքան խոսեցի։ Ի սեր աստուծո, չբարկանաս, թե քեզ մեր դարդը չպատմենք, էլ ո՞ւմ պատմենք։ Կենդանություն (այսինքն՝ մնաս բարով)»։—«Ծառայություն (այսինքն՝ ծառա եմ), ապրեն երեխեքդ, աստված քեզ կյանք տա» և այլն։

Այժմ ինձ կասեն՝ ինչ կարիք կար այդքան երկար բարակ պատմել, թե կանայք ինչ են շաղակրատում, բայց ուրիշ ի՞նչ կերպ իմանանք նրանց մտածելակերպը։ Որովհետև մեզ մոտ վեպեր չեն գրում, իսկ եթե ուզում ես մի ինքնատիպ բան ունենալ, ապա պիտի ասել այն, ինչ որ կա, բայց ոչ հնարել։ Ճիշտ չէ՞, որ մեր սիրելի կանանց փիլիսոփայությունը բոլորովին այլ է և, չնայած որ նրանք հաճախ օգտվում են գռեհիկ դարձվածքներից, այնուամենայնիվ չի կարելի ժխտել նրանց մեջ բնական խելքը և առողջ բանականությունը։ Ո՞վ է մեղավոր, որ նրանք դպրոցում չեն եղել, անշուշտ ո՛չ իրենք։

Ճշգրիտ գաղափար տալու համար, թե ինչպես են Թիֆլիսում խնամախոսում ոչ թե աղջկա, այլ փեսացուի համար, կբերեմ դեպքեր, որ հենց ինձ հետ են տեղի ունեցել։ Հազիվ մի քանի շաբաթ էր անցել իմ Թիֆլիս գալուց հետո, երբ անսպասելի ինձ այցելության եկան պառավ կանայք, իսկ երկու անգամ էլ՝ քահանաներ։ Ես շատ լավ տեսնում էի, թե ինչ էին նշանակում այդ բոլորը, և դրա համար էլ համառ կերպով մերժեցի նրանց հորդորանքները, պատճառաբանելով, որ ես հաստատապես վճռել եմ չամուսնանալ, եթե ինձ տալու լինեն անգամ իշխանուհիներ և տաս հազար արծաթ ռուբլի էլ հետը։ Բայց մի անգամ քիչ մնաց իմ համառությունն ու պատճառաբանություններն իզուր անցնեին, որովհետև իմ հակառակորդն ուներ մի աներևակայելի ամբարտավան լեզու։ Մանավանդ, որ ես ծանոթ էի այդ ընտանիքին, ձրի պարապում էի նրանց մի որդու հետ և այդ պատճառով էլ ենթադրում էի, որ դրա համար են ինձ հաճախ իրենց մոտ հրավիրում. չէի զգում, թե ինչ է նշանակում այդ հյուրընկալությունը, որ ինձ այս անգամ բավական թանկ նստեց։ Իհարկե, ամեն տեսակ գովասանքներ և կեղծավորություններ էին անում ինձ, ամեն տեսակ համեղ բաներ պահում ինձ համար, բայց ես դեռ էլի մտածում էի, թե այդ բոլորը իմ ջանքերի վարձատրությունը պիտի լինի, բայց չարաչար սխալվել էի։ Այն սովորական դարձվածքները՝ թե ես նրանց տան լույսն եմ, նրանց աչքերի

զույսը, նրանց պարծանքը, որ իմ մազը, ամբողջ աշխարհի հետ չեն փոխի, որ երբ ես նրանց երևում եմ, արևն է ծագում, որ ոչ ոք այն հոտն ու համը չունի, ինչ ես, որ օրհնյալ է այն մարմինը, այն ձեռքերը, որ ինձ գրկել են և այլն, այս բոլորը առատորեն բաշխում էին ինձ։ Երբեմն էլ ինձ թվում էր նույնիսկ, որ գեղեցկուհին հիացած դիտում էր դռան ճեղքից կամ վարագույրների հետևից իմ բավական մելամաղձոտ, ավելի վանող, քան գրավիչ դեմքը և կարճ հասակը. <երբեմն> ինձ ցույց էին տալիս զանազան ձեռագործներ, բանվածքներ և ամեն տեսակ, ինձ համար անհետաքրքիր բաներ, սակայն, չնայած այդ բոլորին, ես շարունակ մնում էի սառնասիրտ և հաճախ, հավանական է, որ իմ կտրուկ, բայց բավական նպաստավոր կարծիքը՝ անշուշտ մեծ տհաճություն էր պատճառում լռելյայն։ Դժբախտաբար շուտով մահացավ այդ ընտանիքի հայրը։ Անգամ իմ մխիթարանքները, որպես ընտանիքի բարեկամի, ընդունվեցին նրանց կողմից կանխիկ դրամի տեղ։ Ես ավելի ևս աշխատում էի խեղճ որբերին իմ կողմը գրավել, և դրանից առաջ եկավ այն դժբախտ ընդհարումը, որի մասին կամենում եմ պատմել։

Այդ՝ ինձ համար որոշված աղջկա մայրն ու տատը առաջ էլ այցելում էին ինձ՝ իմ մյուս աշակերտների մայրերի նման։ Դա ամենևին ուշադրություն չէր գրավում։ Մի օր երեկոյան փսփսոց եմ լսում դռան առաջ։ Բաց եմ անում դուռը և, ի զարմանս իմ, տեսնում եմ այնտեղ կանգնած երկու կին՝ սավաններով փաթաթված։ Ծառայի ձեռքին լապտեր կար։ Այդպես ուշ երեկոյան ամուրի մարդուն այցելելը ամենուր խիստ անվայել է համարվում, սակայն ես մտածեցի, որ թերևս որևէ կարիք նրանց բերել է ինձ մոտ, և խնդրեցի ներս մտնել։ Նրանք չէին հավատում նույնիսկ իմ խոսքին, որ ինձ մոտ ոչ ոք չկա և երկչոտ հայացքով զննում էին սենյակիս անկյունները։— Փառք աստուծո, որ ձեզ տեսանք,— ասացին նրանք, թեպետ հենց նույն այդ օրը նրանք տեսել էին ինձ։— Ո՞ր լավից հարցնենք (այսինքն՝ ինչպես եք)։ Աչքի լույս, երբ Ձեզ մի օր չենք տեսնում, թվում է, թե աշխարհքն էլ մերը չի։ Ինչ պիտի անենք, որ մեր սիրտը մի քիչ սառի ձեզանից։ Բախտավոր կլինեինք, եթե մեր աչքերը Ձեզ բոլորովին տեսած չլինեին։ Գլուխդ ցավեցնում ենք (այսինքն՝ մենք ձեզ նեղություն ենք տալիս), բայց դուք պետք է ավել-պակասը ներեք։ Բոլոր սրբերի օգնությունը Ձեզ վրա լինի։ Քրիստոսի բերանը օրհնի Ձեզ։ Մեզ մոռացել եք։ Դուք Ձեզ հեռու եք պահում մեզանից, բայց մենք Ձեզ ձեռքից բաց չենք թողնի։ Ուր գնալու լինեք, մենք էլ Ձեզ հետ կգանք։ Աչքի լույս, հիմա կասես, ինչո՞ւ են այս տիկիններն, այս հիմար կանայք ինձ մոտ եկել, կարելի է խանգարում ենք Ձեզ։ Գուցե մի ուրիշ անգամ գանք։ Վերևն ասված, ներքեր դու, փեշդ ենք ընկել։ Քեզ մի բան պիտի ասենք, համա չգիտենք՝ ասենք, թե ոչ։ Թող խոստովանանք լինի։ Մենակ քեզ պիտի ասենք, բայց ո՛չ, ուրիշներին կասես։ Հիմա հարազատ որդուդ էլ չպիտի հավատաս, բայց դու որդուց էլ լավ ես։ Չէ՛, չէ՛, կարելի է քեզ համար անդուրեկան լինի։ Լավ կլիներ, իսկի եկած չլինեինք։ Հողը գլխներիս։ Աշխարհը կարծես քոռացել է մեզ համար, ամեն մեկն իր կողմն է քաշում, ամեն մեկը իր տակն է լուսավորում, էլ չեն ուզում ուրիշի աչքերումն էլ լույս տեսնել (այսինքն՝ յուրաքանչյուրը իր մասին է հոգ տանում, ուրիշների մասին լսել չի ուզում)։ Բան եմ ուզում ասել, բայց վախենում եմ քեզ համար անդուրեկան լինի։ Դու գիտես, որ քեզանից դուրս ուրիշ ոչ ոք չունենք։ Էս քաղաքը պիտի քանդվեր, որ էս օրը չընկնեինք։ Փռշտացիր թե չէ, ամբողջ քաղաքը գիտի։ Հազացիր թե չէ, բոլորը կլսեն։ Կարծես պատերն էլ աչք ու ականջ ունենան։ Կամքիդ հակառակ ոչինչ չենք ուզում անել։ Թող քո ցավը տանեն մեր երեխաներն էլ, մեր ողջ տունն էլ։ Քո ոտքի փոշին ամեն ինչից թանկ է։ Որ մեր հոգին էլ ուզես, կհանենք, քեզ մատաղ կանենք։ Աչքի լույս, ասա, հիմա դու ինքդ քեզ կասես, էս ինչ աներես մարդիկ են։ Վեր կաց գնանք (ասում են միմյանց), տեսնում եմ, որ քեզ համար հաճելի չէ։ Մենք եկել ենք քեզ այցելելու, չես ուզում, կերթանք։ Չենք ուզում գլուխդ ցավեցնել։ Թող աստված մեր հոգին առնի, միայն թե քո մի մազը չծռվի։ Քնել ես ուզում։ Պարզ է, մենք քեզ համար բեռ ենք դարձել։ Թե աստված կսիրես, մի բարկանա մեր ասածների վրա։

ԹԻՖԼԻԶՈՒ ՀԱՅՈՑ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԸ

Չգիտեմ՝ բարիկենդանի ետի շաբթի ո՞ր օրն էր, որ սիրելի երեխեքս հավաքվեցան քիչ քիչ, ու ես էլ գնացի կլասը՝ որ նրանց հետ սեր վայելեմ, նրանց դաս տամ։ Փոքր խոսալուց ետո, տեսնիմ որ իմ գառնուկ Խատիսյանը փոքր տխուր ա էն օրը։— Ի՞նչ ա պատահել քեզ աչքի լիս ջան,— հարցրի սիրելուս։— Ա՜խ՝ պարոն Ապովյան,— պատասխանեց անմեղ մանուկը, ա՜խ՝ թէ գիտենաս՝ էսօր ով ա մեռել...— Մեռե՞լ... էդ ի՞նչ ասացիր, նշանած աղջի՞կ, Առաջնորդը ժամարա՞ր... շատ բարեկամ ունի՞... ախր ո՞վ պետք է ըլի, չիմացա՞ր...,— հարցրի երեխին,— բայց չգիտեր։ Գետինն էլ՝ ղորթ ա՝ ցեխ էր, բայց օրը տաք, հավեն կակող, չունքի գարնան շունչը մոտացել էր։ Ո՛չինչ որ, ո՛չինչ գործի խաթեր ես կլաս չէի ու չեմ թողալ, ամա էս օր չունքի բարիկենդան էր, երեխեքանցս արձակեցի, որ գնամ տեսնիմ, թէ ժամը կանգնել ա, գան շուտով, ինձ իմաց անեն։

— Տե՛ր իմ և Արարիչ,— մտքումս ասում էի ու աչքս քցել ճամփի,— Էս ի՞նչ օր ա մեր օրը, էս ի՞նչ փուչ մեր կյանքը, մարդ դեռ աչքը չի՛ բաց անում, որ լիս տեսնի, որ Քո սիրուն աշխարքի համն առնի, սերը վայելի, մահը չար գազանի պես թուրը սրած՝ գալիս, մարդի գլխին տալիս ա, հեր, մեր, ազգական արյան ծովի մեջը քցում, ու նրանց սիրելին տանում, սառը, մութը հողին մատաղ անում։ Ախր էլ ո՞ւր ես ստեղծում մեզ՝ այ Քո ոտից տակին մեռնիմ։ Օր չի ըլում, որ իմ դռնովս մեռել չի անց կացնեն, ախր բաս նրանց տերերն ի՞նչ են անում, նրանց սիրտը ի՞նչպես ես մխիթարում։ Ընչի՞ ես ստեղծում, ընչի ձեռներիցը շուտով խլում, տանում, միթե երկընքումդ հոգիք, հրեշտակք չի կա՞ն՝ որ մարդի երեսին ես կարոտել։ Թող մեկ քանի տարի էլա օր քաշեն, իրանց սրտի մուրազն առնեն, որ ո՛չ մեռնողի սրտումն էնքան զարդ մնա, ո՛չ եդի մնացողի։— Էսպես մտքիս հետ ընկած տանջվում, էրվում էի իմ միջումը, ընչանք երեխեքս կգային ու ինձ խաբար կբերեին։ Ոտիս տակին կրակ էր վառվել, սիրտս, խելքս էլ իմը չէ՛ր։ Հենց գիտես՝ պարոն Դ. Խերեդինովի նորածաղիկ դուստրը, որ աղնիվ հերը աչքի լսի պես մեծացրել, կյանքը խավարեցրել, ուսումն էր տվել, ու մեկ սհաթվան միջի իր բոլոր փառքն ու օրն էլ հետը տարավ, ու հողին պահ տվեց, ու էս օր էլ անունը տալիս, յա գերեզմանը տեսնելիս՝ աչքի լիսը թռչում, աշխարքը գլխին խավարում ա։ Հենց գիտես պարոն Ն. Խատիսովի, Միրզոևի, Շահբաթովի, Սուրգունովի՝ էն եթիմ երեխեքը, էն դարդավարամ մարդիկը, հեր, մեր, ազգականք՝ առաջիս գլխըներին տալիս, ու նրանց էն լուսաթաթախ, հրեշտակ սիրելի ջահել հարսները՝ որ մէկ տարվան միջում մեկըմեկու հետ հենց բռնես, բաս բռնեցին ու գնացին, աչքիս առաջին հողն ըլին գնում, ու որի հերն ըլի գլխին, դոշին ծեծում, որի նշանածը հողն առնում, առաջ իր երեսին ածում, ետո ազիզ սիրելու երեսին քցում ու հետը թուլանում, գետնին դիպչում, ինչպես պարոն Միրզոևին մեկ քանի օր՝ սրանից առաջ տեսել ու դեռ իմ միջումս էրվում, փոթոթվում էի։ Էս ջրատար լուսահոգի հանգուցելոց մեկին էլա էնքան չէի ճանաչիլ, որքան Խերեդ<ինովի> դստերը, Խատ<իսովի> հարսին, ու Շահր<աթովի> աղջկանը՝ քանի նրանց էն երկնային պատկերը, էն հրեշտականման սիրուն հոգին, որ տեսնելիս մարդ հենց իմանում էր, թե հրեշտակ ա առաջին կանգնած, միտքս չէի բերում, աչքիս լիսը թռչում, հոգիս էն դինեն էր գնում, ետ գալիս։ Էսպես սիրտս լցված տանը ման էի գալիս, որ երեխեքս էկան՝ թէ ժամը կանգնել ա։

Ինչ սրտով ժամը մտա, ես եմ իմանում։ Պատարագը կանգնել էր. ժամարարը Սրբազան Մինաս Արքեպիսկոպոսն էր։ Մողնու եկեղեցումը՝ ասեղ քցեիր, գետինը չէր հասնիլ, շատերի աչքերի թացությունն ու երեսի տխրությունն ինձ կենդանի ցույց տվին, որ լուսահոգի մեռնողի դարդը շատ մարդի սիրտ էր էրում, կրակում։ Ես որ դեռ որդի չէի թաղել, չէի լուսահոգուն ճանաչել, ղարիբ էի, էրվում էի, բաս էն կանգնողներն ի՞նչ անեին, որ շատը նրա ազգականը պետք է ըլեր, շատը հինգ, վեց որդու տեր։ Վայ ինձ՝ Աստված էլ միտքս չէ՛ր գալիս, որ հեռըվանց դագաղին մտիկ չարի, ու մոտիս կանգնողներիցն իմացա, թե ազիզ հանգուցյալը պարոն Տատոյենց աղջիկն էր ու իմ դասաընկեր սիրելի ազգակից պարոն Վաղո Տեր Շմավոնովի նշանածն ա, ղորդ ա՝ իրան չէի տեսել, չէի ճանաչել, ամա որ դագաղի միջին էն աննման՝ լիս դառած պատկերը չտեսա ու իմ խեղճ ընկերի հալը՝ էն սհաթին միտք չարի, եկեղեցին գլխիս պտիտ էկավ, աչքս սևացավ։ Հենց պետք է մարդ ճանաչ ըլի, որ սիրտը ցավի՞. ախր էն լուսահոգին՝ իմ ազգը, իմ արինը չէ՛ր, որ էնպես ջահել, ազիզ հասակին՝ թառամել, դեղնել, անլեզու, անշունչ՝ վերջին պատարագի երեսն՝ էս մեկ անգամն էլ՝ անաչք, անանկաչ՝ ուզում էի, տեսնի ու լսի, որ գնա երկնային պատարագին արժանանա։ Ախր նրա դագաղի ետևին էնպես էրվող, փոթոթվողները, էնպես մեռածի պես շլինքը ծուռը, ջանից ձեռք վեր առած կանգնող սգացողները՝ իմ ազգի իշխանքը, իմ ազգի որդի՞քը չէին, որ նրանց էնպես տեսել էի, ու փետի պես կանգնել, մտիկ արել։ Ուզում էի վազեմ, իմ ընկոր տեղ՝ դագաղի վրա ընկնեմ, ու գլուխս ծեծելով՝ ասեմ.— Ախր որ դու գնում ես՝ ազիզ ջան՝ իմ բարեկամին ո՞ւմ ապով ես թողնում։ Ո՞վ նրան խաբարը տանի. հոգիդ երկինքն ա գնում, մարմինդ հողը, բաս նա որ մեկ հետդ էլա չի՛ խոսացել, մեկ ձենդ էլա չի լսել, մեկ բարով էլա էն վերջին, սարսափելի սհաթին իրար չե՛ք տվել, մեկ քաղցր, կամ տխուր աչքով էլա իրար չե՛ք ասել «մնաս բարով. գնաս բարով, երկընքումը դու իմ աղոթքն ու աղաչանքը լսի, երկրումը ես քո հոգին հիշեմ, քո գերեզմանն օրհնեմ, ի՞նչպես սիրտ արիր՝ սիրելիդ կրակում թողալ, հերն ու մեր, ախպեր, քիր, բոցի մեջ քցիլ, ու էդ հեռու, անտես ճամփեն՝ էդպես դինջ, հանգիստ գնալ՝ ի՞նչպես սիրտ արիր՝ ա՛յ անմեղ օրիորդ, ա՛յ ջիվան կույս՝ որ էդ լուսեղեն երեսդ հողը դնես, էն ջահել փեսեն հավիտյան էրես, էս ծանոթ աշխարքը աչքից քցես, ու անծանոթ աշխար գնաս, ուր ո՛չ ազգական ունիս, ո՛չ սիրելի։ Հերնըմերդ, ա՜խ՝ էն քո խեղճ ծեր հերը՝ որ մազը ձնի պես սպիտակել ա, ընչանք քեզ էդ տեղն ա հասցրել, էն քո ջիգյարն էրված մերը՝ որ իրան սպանում, ուզում ա, հետդ հողը մտնի, չե՛ն թողում, էն քո ջիվան ախպերը, որ հազար անգամ արևովդ օրթում կըլի կերած, որ գլուխդ ցավելիս, հոգին հետդ տա, մատդ փուշ ըլելիս, գլուխը քո ուղուրին դնի, ջանը քեզ տա ղուրբան։ Բաս էն ազիզ ազգականները, որ չորս կողմդ բռնած՝ աչքըներիցը կրակ է վեր թափում, բաս նրանց

մեկի ձենն էլի անկաջդ չի՛ ընկնում, որ էդպես նրանց չէրես, չփոթոթե՞ս, Ա՜խ՝ երաբ որ քո խեղճ, վատաբախտ նշանածը էս խաբարը լսի, ի՞նչ պետք է անի, ո՞ր ջուրն ընկնի, որ քեզ մեկ կաթ սառը ջուր էլա քո վերջին օրը չի՛ տվել։ Ղուշ դառնա, թռչի, գա, գերեզմանդ պետք է տեսնի, հողն էլ բաց անի, մտնի մեջը, ո՛չ ձենդ կլսի, ո՛չ շունչդ կառնի, բաս ի՞նչ անի ողորմելին՝ ա՛գիզ, անարատ կույս ջան՝ էդ լի՛ս դառած երեսիդ մեռնիմ»։

Էսպես իմ միջումս էրվում, մորմոքվում էի ու արտասունքս կուլ տալիս՝ որ մարդ չտեսնի, որ պատարագը վերջացավ, Առաջնորդ, քահանայք՝ մաշտոց, խաչ ձեռըներին էկան՝ որ լուսահոգուն լսի բաժին անեն ու հորնըմոր, ազգական, բարեկամի լերդ ու թոքն էրեն, խորովեն, իրանց ազիզ սիրելին, իրանց աչքի լիսը ձեռըներիցը խլեն, տանին, հողին տան։ Հողին տան՝ հողին՝ որ ո՛չ աչք ունի, որ լաց ու արտասունք տեսնի, կսկծա, ո՛չ ականջ կամ սիրտ ունի, որ սուգ ու շիվան տեսնելիս ցավի, ու էնպես ցիվան ջանը իր անկուշտ փորին մատաղ չանի։

— Ո՞վ քահանայք և ժողովուրդք,— որ չասեցին, հենց իմանաս, եկեղեցու պատերն էլ ձեն առան՝ որ գոռան, շունչ առան, որ տրաքին, սիրտ առան՝ որ լուսահոգու անբախտ հորնըմորն, ցիվան ախպորն ասեն՝ «թէ մենք էլ ենք ձեր ձենը լսում, էս սրբերն էլ ձեր սուգը տեսնում, քանի՞ լաք, քանի՞. մենք ենք ձեր որդին պահել, էլի մենք ենք ձեր ձեռիցն առնում ու իր Արարչի մոտ տանում, որ ինչպես անմեղ մտավ աշխար, անմեղ էլ դուս գա, ի՞նչ եք ձեզ սպանում, հո նոր չե՛ք տեսնում էդ բանը, մենք դրան էնքան կպահենք սիրով, որ դուք էլ՝ մէկ օր որ գաք, որ ձեր վախտն էլ թամամ ըլի, էլ ետ գաք, ձեր աչքի լիսը տեսնեք, ու նրա սերը հավիտյան վայելեք։ Մողնու հայաթն սպիտակ օրը սևացել էր, էնքան ազգական, սիրելի կնանիք սգի շոր էին հաքել։ Որ նրանք վա՜յ չէ՛ին ասում ու գլխըներին տալիս, որ տղամարդիքը գլխաբաց՝ դագաղիցը չէին ճոլոլակ ըլում, որ եդ քաշեն իրանց սրտի ազիզ սիրեկանը, որ սև կառեթը չի՛ դրին ու անբան ձիանքը երըմիշ չէլան կամաց կամաց ու հոգևորականք իրանց տխուր շարականը չսկսեցին ու շուրջառը քցած՝ առաջ չընկան՝ տեր իմ և Աստված՝ էն ի՞նչ աչք պետք է ըլեր, որ էս սհաթին չուզեր, որ փակվի, էս նաշը չտեսնի, էն ի՞նչ անկաջ պետք է ըլեր, որ չուզեր, խլանա, որ էն խեղճ, էրված, փոթոթված հորնըմոր սգի ձենը չլսի, ու ինքն էլ չէրվի, չկսկծա։ Երաբ մերն էր, թե քիրը, որ էնպես գլուխը ծեծում, երես ու դոշ կտրատում էր, չիմացա, չհարցրի, սիրտ չունեի, բայց տեսնելիս՝ ուզում էի տեղն ու տեղս կրակ դառնամ, էրվիմ, յա գնամ, ոտներն ընկնիմ ասեմ.— Կաթդ հալալ արա, սիրելի մայր՝ որդիդ գնում ա, էլ եդ չի՛ գալ, օրհնությունդ տուր, նա լեզու չունի, որ խնդրի, նրա հոգին քո

ձենին ա կարոտ, ինչ ես էդպես էրվում, նրա աչքը ճամփու թողնում։ Բալքի թե էքուց ո՛չ, էլ օր, մենք էլ գնանք դրա մոտ, էլ ո՞ւր ենք լալիս, նրա սիրտը վիրավորում։ Հինգ, տասը տարին երկար վախտ չի, երազի պես անցկըկենա, մեզ էլ մեկ օր էսպես նաշը կդնեն սիրելի բարեկամք ու կտանեն մեր հավիտենական տունը, ինչ եք դարդ անում։

— Էսպես միտք անելով, տրորվելով, որ տուն չէկա, կամքս էն էր, որ մեկ դրոշկա բռնեմ ու իմ սիրելի երեխեքանց մեկին, իմ աչքի լիս **Ակիմյանին**՝ հետս վերցնեմ, որ գնանք հանգստարանը, մեկ բուռ հող էլ մենք ածենք լուսահոգու երեսին, ու եդո իմ գառնուկ աշակերտին դաս տալիս ասեմ. **էն օրը միտքդ բե՛ր՝ սիրելի ու բարի սիրտ ունեցիր, Աստուծո ճամփիցը մի ճեռանար**, որ տուն չմտա ու տանըցիք աչքիս սուգը տեսան ու սրտիս դարդն իմացան, նշանածս գերմանացի զոլով՝ իսկույն վեր թռավ, երեխեն դրաղ դրեց ու լալով խնդրեց, որ իրան էլ տանիմ, մեկ հայի թաղում, մեկ հայի մեռել տեսնի։ Բալքի թե նա էլ իր մտքումըն էն ըլեր ասում. «թե հալբաթ մեկ օր յա դու ինձ կթաղես, յա ես քեզ. դու մեր կարգը տեսել ես, ես ձերը չե՛մ տեսել։ Գնա՛նք՝ տեսնի՛նք, որ քեզ թաղելիս իմանամ թե ինչպես պետք է իմ սև օրս լաց ըլիմ, երեխեդ էլ բերեմ վրեդ, թե չբերեմ, քարով գլխիս ծեծեմ, թե հողը գլխիս ածեմ»։

Ընչանք տանըցիք շոր կհաքնեին ու երեխին ծիծ կտային, թամբակվի ծուխը տունը լցվեց, չունքի սիրտս չէ՛ր համբերում, վախում էի, թե էն լուսահոգու երեսին էլ չհասնիմ։ Խալխի շատը ետ էր դարձել, որ դրոշկա նստեցինք։ Զաստավի մոտին որ դագաղն աչքովս չընկավ՝ երեսս շուռ տվի, որ չտեսնիմ, ու դրոշկապանին թայթի տվի։ Հանգստարանի դուզը որ չհասանք, մեկ ձիավոր ձախու կողմիցը դուս էկավ բարով տվեց՝ առաջըներովս անցկացավ, մեկ հետևակ աջու կողմիցը՝ դրոշկեն ներքևը թողել՝ մեր առաջը կտրեց, հանգստարանը մտավ։ Երկուսին էլ էնքան չէի ճանաչիլ, որքան սրտով կսիրեի, հոգով կպաշտեի, չէ թե հարուստ, անվանի իշխանք են, էնդուր համար, չէ՛. Աստուծո հայտնի ա ես նրանց հարստությանը չեմ կարոտ, բայց հազար անգամ իմ աչքովս տեսել էի, որ սաղ քաղաքն ա նրանց սիրում, նրանց գովում, նրանց անունովը օրթում ուտում։ Ես հարուստ չեմ, որ նրանց ղոնաղ անեմ, մեծ մարդ չեմ, որ նրանց քոմակ անեմ, սերն էլ հո փողով չի, ինչի՞ չի պետք է՝ իմ ազգի իշխանի բարի համբավը լսելիս, բախտավորությունը տեսնելիս, նրան չպաշտեմ, սիրտս նրան մատաղ չտամ։ Ձիավորը պարոն **Մովսես Տեր-Գրիգորովն** էր, հետևակը՝ պարոն **Դավիթ Խերեդինովը**, լսողը թող իմանա, սիրելի անձինք են, թե չէ։

Ընչանք դագաղը հանգստարանը կհասներ, երկուսն էլ մեզ մեջ առած, տարան գերեզմանատան մեջտեղը։ Պարոն Խերեդինովն իր ջիվան դստեր մատուռումն էր կանգնած, պարոն Մ<ովսես> Տ<եր> Գրիգորովը ձիու վրա նստած։ Հանգստարանի գեղեցկության վրա զարմացած, էն սիրուն տնկած ընկուզի ծառերը որ չէի տեսնում ու մտքումս ասում. «Լիս դառնա քո բունյաթ քցողը, կանաչի էն ձեռը՝ որ ձեզ տնկիլ ա տալիս, այ սուրբ գերեզմանատուն, այ ջիվան ծառեր, կըլի, որ դուք դեռ պտուղ չի տված, իմ պտուղս խավարի ու գամ ձեր շվաքի տակին քնիմ։ Ա՜խ՝ որ գամ, ինձ էլ պահեցե՛ք, իմ երեսիս վրա էլ շվաք արե՛ք»։ Էնպես, որ սիրտս ու աչքս միքը չէ՞ր հոգոց քաշում, ու էն պատվական հանգստարանի բարի պատճառ դառնողին օրհնում, գովում, որ իրանք դեռ կենդանի, էնպես անմահ հիշատակ էին քցիլ աշխարքի երեսին, էնպես սուրբ ողորմատեղի, ու երկու ազնիվ իշխանքն էլ՝ էնպես տաք տաք, էնպես պարզ սրտով չէին պատմում՝ թե ժամի տեղը ո՞րը պետք է ըլի, պարիսպն ինչպես պետք է գա, ո՞րտեղ պետք է պտղատու ծառեր տնկվին, ո՞րտեղ պետք է ման գալու տեղ, ո՞րտեղ ժամատուն, ու հենց գիտես՝ թե էն սհաթին սիրտըներն իմանում ըլի ու ասում, որ հավիտյանս հավիտենից իրանց պարոն Ջավրովի, պարոն Դ<ավիթ> Թամամշովի, պարոն Հով<հաննես> Միրիմանովի, ու էն իշխանաց, որ նրանց քոմակ են անում հոգին, քանի աշխարքս կա, ու էն հանգստարանը կմնա, հազար բերան՝ նրանց պետք է ողորմի տա, հազար բերան նրանց լիս դառած հոգին օրհնի, հազար աչքի աղի արտասունք նրանց անմահ գերեզմանի վրա կաթի, ու քանի հայի սուրբ հավատն ու եկեղեցին կա, նրանց հոգին, նրանց մեռել, կենդանին պետք է հիշվեն, ու խունկ նրանց վրա ծխվի, մոմ նրանց վրա վառվի, բաժակ նրանց հոգու համար կամ սկում ածվի, կամ ձեռի բռնվի, ու ամեն մեռելատեր առաջ նրանց անունը տա, նրանց ողորմի ասի, հետո իրան ննջեցելուն, հենց գիտես՝ էս ընտիր իշխանաց, էս պատվելի Հայկատոհմից երեսը՝ հենց էն սհաթը լուսավորվում ըլի։ Հենց էն սհաթը երկնային հրեշտակը, թագը ձեռին բռնած՝ երկնքիցը ձեն ըլի տալիս, ու ասում։— Էս թագը ձեզ համար եմ հազիր արել՝ ո՜վ ընտիր իշխանք, թո՛ղ ամեն մարդ աչքը բաց անի, իմանա, որ մեկ մազաչափ լավություն էլ ով աշխարքումն անի, ու մարդ չիմանա, երկնքումը ոսկեղեն գրով գրած՝ աթոռ աստվածության առաջին միշտ անմահ կա։

Դագաղն էկավ. շարականն սկսեցին. խալխը հավաքվեցավ. սևաշոր սալդաթները իրանց մատաղը բերին, քրտնած մշակները իրանց թիանքն ու բահը եդ քաշեցին, անկուշտ հողը իր բերանը բաց արեց, սիրուն արեգակը իր աչքը ամպի տակին խփեց. հոգևորականք մեկ կողմից ձեն տվին,

մարմնավորականք մյուս տեղից գոռացին, երկինքը ծոցը բաց արավ, անմեղ կուսանք երկնքից ձեն տվին, լուսեղեն հրեշտակք թևին արին ծափ տվին, վատարախտ ազգականք հողը բուռն առին՝ առաջ իրանց էրեսին խփեցին, ու ջիվան ախպերը, հալևոր, մաշված կեսառը պարոն Նոնի Տեր Շմավոնովը, ընկան լուսահոգի ննջեցելու վրա ու էն սուրբ երեսը, էն լուսանման ձեռները, էն աղիզ քիրն ու հարսը՝ մեկ էլ կպցրին իրանց կարոտ երեսին, մեկ էլ գլխըները դագաղի վրա, ծնկները հողումը շաղախված՝ չոքեցին ձեն տվին, գոռացին, վա՜յ տվին, կրակ ուզեցին երկնքիցը, որ իրանց էլ նրա հետ էրի, փոթոթի, չեկավ. հողն ուզեցան ընկնիլ, չթողին, նաշն ուզեցան ետ տանիլ, ինչ պետք է անեին, փետացած մարմինը ի՞նչ զորություն ունի, որ ի՞նչ զորություն տա, ի՞նչ կիմանա, թե իրան համար էրվում են, կրակվում, որ ինքն էլ մեկ ախ քաշի, մեկ ախ քաշի, որ իմացողի սիրտը հովանա, չկրակվի։ Ա՜խ, սիրելի կարդացող թե սիրտ ունիս հավատա քանի պարոն Գ. Շադինովի էն վերջին ախն ու վախը միտս ա ընկնում, որ գերեզմանի գլխին կանգնած՝ ընչանք կարգը կկատարեին, հենց գիտես՝ թե ազնիվ երիտասարդի սիրտն ուզում էր, որ տրաքի, էնքան բերնին ու աչքին հուփ էր տվել (չունքի լուսահոգին նրա մորաքվոր աղջիկն էր). քանի նրա էն վերջին գլխին տալը, էն աննման աչքն ու ունքը էնպես արտասվակոլոլ տեսնիլը, որ միտքս չի ընկնում, քանի էն ջիվան ախպոր ու ծերունի կեսարի կսկծալն ու մղկտալը աչքիս առաջը չի՛ գալիս, ինչպես էն սհաթին, էս սհաթին էլ աչքս սևանում ա, սիրտս արին ա կաթում, օրս ու ումբրս հող դառնում։ Չէ՞ ախր մեկ օր էլ ինձ վրա պտի էս սուգն անեն, չէ ախր մեկ օր էլ ինձ պտի էն հողը դնեն, ախր ի՞նչ արի էս աշխարքումը, որ ինձ էլ ողորմի տան, ախր ի՞նչ հիշատակ եդ քցեցի, որ ինձ էլ հիշեն։ Հարուստ չեմ, որ գերեզման քցեն վրես, իշխան չեմ, որ ինչ ունիմ, չունիմ, տամ, մեկ ողորմատեղի էլ ես շինեմ։ Գրի եմ հետևել, գիրը ո՛չ թուր ա, որ կտրի, ո՛չ արծաթ ա, որ մարդի մուրազը տեղ հասցնի։ Ա՜խ, երբ մեկ աստվածասեր իշխան էլ ինձ կհարցնի, թե մուրազդ ի՞նչ ա։ Ո՛չինչ՝ երեսիդ մեռնիմ, քեզ մատաղ գնամ՝ ա՜յ իմ ազգի պարծանք, իմ ազգի ճրագ իշխան, ո՛չինչ։

Էս ա տասնը հինգ տարի ա, որ տանից, տեղից, սիրելուց, բարեկամից, պատվից, փառքից ձեռք եմ վերցրել, հեռացել, աշխարքե աշխար ընկել, գլուխս քարե քար տվել, որ իմ ազգին պետքը գամ, մեկ հարիր աղքատ երեխայի ձեռից բռնեմ, ինչ գիտեմ, նրանց սովորցնեմ, նրանց սիրտն ու հոգին բանամ, իմ սրտիս դարդերը բոլոր մեջն ածեմ, ազգին ինչ դեղ ա հարկավոր, նրանց տամ, գեղեր, քաղաքներ ուղարկեմ, որ գնան, իրանց բարի սերմը մեր բարի ազգի բարի երեխեքանցը սրտումը ցանեն, նրանց

էրված սիրտը հովացնեն, բերանները լեզու դնեն, սրտներումը ղվաթ, որ հասնողը նրանց գլխին չտա, ինչպես մինչև էս օր տվել են, ու հետո, ախ՝ հետո գերեզմանը մտնիմ, հետո աչքս խփեմ, հոգիս հովանա, մարմինս դինջանա։

Էս ա իմ մուրազը՝ երեսիդ մեռնիմ՝ ա՜յ Հայազգի իշխանք։ Ժամ եմ գնում, է՛ս եմ խնդրում, քուն եմ մտնում, է՛ս եմ Աստվածանից աղաչում, քնից եմ վեր կենում, էս եմ լալով ասում։ Երեխա էի, է՛ստուր ցանկացա, գերեզմանը մտնիմ՝ էս կդառնա իմ մարմնի ցեցը, իմ հոգու դժոխքն ու տանջանքն։ Տասնըհինգ տարի բերանս փակել եմ, սիրտս կրակվում ա, մեկ տասնըհինգ տարի էլ անց կենա, յա ծերությունն աչքս կքոռացնի, ձեռս ու ջանս դող կքցի, յա մահն բկիս կչոքի, ինձ էլ իր թրին մատաղ կանի։ Պապանձվի բերանս թե լեզուս ըլի խոսում, ու սիրտս չիմանում։ Թագավորություն, մեծություն աչքս չի՛ գալիս. Նրանք անցավոր են, մեկ ծաղկով գարունք չի՛ ըլիլ։ Էս օր էլ որ միտք եմ անում, թե ես հացս ուտելիս, տաք տեղը նստելիս, հազարավոր հայ ո՛չ հաց ունին, որ ուտեն, ո՛չ շոր ունին, որ տաքանան, սիրտս պատռում ա, օրս խավարում։

Ի՛մ ազգի իշխանք, ի՛մ թագ ու պարծանք, որ ամեն մեկիդ սրբի տեղ սրտումս պաշտում եմ, էս դարդը դեռ շատ ժամանակ սրտումս կպահեի, չէի ասիլ, ես միայն կերվեի, կմեռնեի, թե ձեր շինած պատվական հանգըստարանը չէի տեսել, ձեր մեծահոգությունը չէի զգացել։ Ձեր բարեպաշտության պտուղը իմ աչքս չէ՛ր բաց արել։ Մեռելներին հանգստացրիք ձեր արևին մատաղ, երեսս ձեր ոտի տակը, կենդանյացն էլ մեկ ճար արե՛ք։ Ինձանից խրատ ձեզ չի հասնիլ. ձեր որդին եմ, էնդուր համար եմ համարձակվում ու սրտիս դարդը ձեզ ասում։ Ինձ մի՛ նախատեք, մի՛ կարծեք թե ասածս քամի ա, կրակ ա, ինձ էրում ա, ձեր հոգուն ղուրբան, էնպես բան անենք, որ կենդանիքն էլ մեզ օրհնեն, մեզ ումբր ու արև խնդրեն, իրանց արևի ձենն ածեն։ Դու էլ՝ անմե՛ղ կույս, անարատ հարսը, դու էլ իմ աղոթքը՝ Աստուծո մոտ տա՛ր, որ ինձ յա օր առաջ մահ տա, յա ինչ որ ասում, աղաչում եմ, գլուխ գա։ Ինչ օր կըլի, որ գամ գերեզմանիդ վրա կանգնեմ ու ասեմ.— Աստված հոգիդ լուսավորի, դատաստանդ քաղցր անի, ես իմ մուրազն առա, դու էլար պատճառը։ Թո՛ղ քեզ ու քո մոտ քնած լուսահոգի ննջեցելոցն ողորմի տան, ո՞վ իմանա թե Հայոց իշխանքը իրանց ննջեցելոց խաթեր, մեկ ողորմատեղի էլ իրանց կենդանեաց համար ետ քցեցին։ Էս խաբարն էլ տարեք երկինքը, որ նրանց անմահ անունը էնտեղ գրվի, թե էս աշխարքը չիմանա։

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՆԻԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

(Ճամփորդական խորհրդածություններ)

Հատված 1

Խոսել Անիի մասին, նշանակում է շոշափել Հայաստանի պատմության ամենանրբին տեղը։ Այդ քաղաքի անունն անգամ բորբոքում է նույն զգացմունքները, ինչպիսիք յուրաքանչյուր մարդու հոգում արթնացնում են Պալմիրը, Բաբելոնը, Կարթագենը և, վերջապես, Հռոմը, ուր ժողովրդի վեհությունը արյունով է ջերմացած, ուր մարդկային մտքի և արվեստի ստեղծածը թաղված է ժամանակի ճակատագրական հարվածի ծանրության ներքո՝ քայքայման փոշու տակ։

Թո՛ղ արևելյան պատմիչների պատմածն այդ քաղաքի բազմամարդության, եռուզեռի և հարստության մասին կասկածամիտ մեր դարին թվա առասպելական. թո՛ղ այնտեղ բարձրացած հազար ու մեկ եկեղեցին համարվեն լոկ միայն Ասիայի որդիների վառ, աշխույժ և գունագեղ երևակայության արդյունք. թո՛ղ, վերջապես, իր վաստակով՝ իր հաշվին եկեղեցի կառուցող և պահող հովվի ավանդությունը և կախարդական Գեղար-Գյալմազի կամ Անիի խորհրդավոր ամրությունների տակ ծածկված լաբյուրինթոսի լեգենդը համարվեն դրանց մասին պատմող արևելյան երկրների և ժողովուրդների պերճախոս լեզվի չափազանցություն. սակայն, այդ բոլորով հանդերձ, քաղաքի այժմյան ծավալն իսկ, նրա ընդարձակությունը, նրա անհամար մնացորդները և ավերակները՝ հարուստ, հսկայական եկեղեցիների, ամրոցների, աշտարակների և քարվանսարաների, որոնք կառուցված են եղել մաքուր, սրբատաշ քարից, այն զարմանալի ինքնատիպությամբ, հանճարեղությամբ ու փարթամությամբ, որոնցով միայն Հնդկաստանը,— այդ կախարդական աշխարհը՝ իր մեհյաններով ու տաճարներով, իր հարստությամբ ու թանկարժեք զարդերով, ի վիճակի է, թերևս ամբողջ Արևելքում ներկայացնելու <...........> հավերժորեն պերճախոս հուշարձան <այն ժողովրդի>, որը զրկված փառքից և հուշակից անգամ, դարեր<ով... հալածված> ճակատագրից, որպես անպաշտպան որբ, <ցրված> ամբողջ երկրագնդով մեկ, հայտնի է այժմ լոկ միայն, <.......> չնայած հույժ օգտակար <......> այդ ազգի մասին այժմ գոյություն ունեցող կարծիքով <......> վարկաբեկիչ անունով։

Այսպես է հայ ժողովրդի ճակատագիրը։ Այնուամենայնիվ, իսկական հայի համար, կարո՞ղ է լինել ավելի սիրելի, ավելի սրբազան բան, քան

կյանքում, թեկուզ մեկ անգամ, երկրպագել իր արժանավորագույն նախնիների այդ սրբություններին և ջերմեռանդ արցունքներ թափել իր հոգուն և սրտին այնքան թանկ շիրիմների և բնակարանների վրա։

Մի՞թե այստեղ, դեռևս բավական թարմությամբ չե՞ն պահպանվում արքաների գոռոզության <հետքերը>, արքաների, որոնք միջին դարերում, բարբարոսության, իսլամիզմի և մասնատված քրիստոնեության փոթորկալից ժամանակներում, արյան և կրակի գնով ձեռք բերեցին փառքի, հզորության պսակը, որոնք դղրդացրին ամբողջ հետամնաց արևմտյան Արևելքը։ Աշոտ Ողորմածի, Սմբատ Աշխարհակալի, Գագիկ Մեծահոգու և Բագրատունյան տոհմի բազմաթիվ ուրիշ քաջ թագավորների, իշխանների և զորավարների ու սրանց անմահ գործակիցների անուններով կարող է պարծենալ և ո՛չ միայն հայոց պատմությունը. նրանց անուններով, որ հնադարյան Ախուրյան գետի, այժմյան Արփա-չայի (Գարու գետ) ներկայիս տխուր, անկենդան ափերը դարձրին ծաղկուն հովիտներ ու ձորեր, և այժմ իսկ, մեծ մասամբ դեռևս կուսական, հավետ գեղեցիկ Լոռին, Ծաղկաձորը և արդի Ռուսական Հայաստանի մեծ մասը դարձրին աստծո տաճար, խաղաղության և բարօրության օթևան, և վերջապես՝ զորեղ պատվար՝ Կովկասի, Մոնղոլիայի և Թուրքեստանի վայրենի, անսանձ տիրակալների արշավանքների ընդդեմ։ Հենց դրա համար էլ, մի կողմից պարսիկները և մոնղոլա-թաթարները, մյուս կողմից՝ թուրքերը, հույները և նույնիսկ, քրիստոնյա վրացիները, առանց որևէ խղճի խայթի և մարդասիրության, առանց հաշվի առնելու հավատի սրբությունն ու օրենքները, ո՛չ էլ մարդկային ձեռքի և բանականության հրաշալի ստեղծագործությունները, ո՛չ էլ նույնիսկ իրենց երդումը՝ ժողովրդի բարօրությունը պահպանելու և պաշտպանելու մասին, սոսկ միայն նրա համար, որպեսզի ազատվեն մեկ կամ մյուս հարևանի կախվածությունից՝ դավաճանաբար նախ մեկը մյուսին հանձնեցին և ի վերջո ընդմիշտ կործանումի մատնեցին այդ հսկա քաղաքը, որի անունով է նշանավորվում ամբողջ ասիական Արևմուտքը միջին դարերում։

Եվ զարմանալի՞ է, միթե, որ այդքան թշնամական-բարբարոսական ուժերի հարձակումների ու թոհուբոհի ժամանակ, այդ սրբավայրերի շուրջն ընկած այնքան անմեղ զոհերի թափած արյան գետերից հետո, երբ Անիի և ընդհանրապես ամբողջ Հայաստանի զավակները՝ Թիֆլիսում, Հաշտարխանում, Կալկաթայում և Կոստանդնուպոլսում, մռայլ Դոնի կամ սրբազան Գանգեսի ափերին և նույնիսկ Գալիցիայի, Լեհաստանի և Հունգարիայի հեռավոր քաղաքներում,— չխոսելով արդեն Պարսկաստանի և Փոքր Ասիայի մասին, ուր հազարներով տարագրված և վերաբնակեցված են նրանց եղ-

բայրները,— չօգտվելով այն ժամանակ նրանց համար այնքան հատկանշական զինվորական ծառայության ո՛չ իրավունքներից, ո՛չ արտոնություններից,— մի բան, որ կարող են վկայել միայն այս քարերը — մի խոսքով, դրանից հետո, իրենց առջև ո՛չ մի ասպարեզ չտեսնելով, իրենց նախկին վեհության և փարթամության զգացումներով, ստիպված՝ հնչուն դրամով միայն հագեցնելու իրենց հալածիչների և դահիճների ագահությունը, հանուն իրենց կյանքն ու սուրբ հավատը փրկելու, նրանք, ի վերջո, որոշեցին ընտրել այնպիսի մի կենսաձև, ինչպիսին այնքան բնական է նրանց համար, ովքեր զրկված են պաշտպանությունից և իրենց հարազատ, իսկական, նախկին վիճակին համապատասխանող օթևանից։

Միթե՞ դարեր են հարկավոր փոխելու համար ժողովրդի ոգին և ինքնատիպ գծերը։ Թող պատասխանեն նրանք, ովքեր այնպես անողորմաբար վիրավորում են պատիվն ու անունը մի ժողովրդի, որը այժմյան բարենպաստ հանգամանքներում ընդունակ է ո՛չ միայն վերակենդանացնելու, այլև նույնիսկ բազմապատկելու իր նախկին առաքինությունները։ Պատմությունն ավելի լա՞վ է դաս տալիս բոլորին էլ։

Բայց նախքան կրկին մեր ուղևորության նկարագրությանն անցնելը՝ ի՞նչպես վճռել Անիի աղետալի ճակատագրի ամենակարևոր խնդիրը, որի մասին ժողովուրդը մինչև այժմ էլ իր գրույցն է պնդում, և այնուամենայնիվ, ամեն մի բարեպաշտ հայ չի կարողանում մի օր էլ մնալ այստեղ, որպես թե նա կործանվել է ո՛չ թե բարբարոսության ուժով, ո՛չ թե երկրաշարժից, այլ անեցիների այնքան փարթամ և չափազանց մեծաշուք կյանքի նկատմամբ արգահատանք տածող ինչ-որ մի կուսակրոնի սրբազան շուրթերի անեծքով։ Միթե՞ դա ժողովրդի՝ կրոնին նվիրված լինելու ամենակենդանի, ամենապերճախոս ապացույցը չէ՞, կրոնի, որ արդեն դարերով գինաթափ է արել նրան և բռնադատության բոլոր միջոցներով ստրկացրել՝ երկրային բարիքների և տառապանքների փոխարեն խոստանալով ամբողջ երկինքը, կրոնի, որ չի արգելում իր թշնամիներին անգամ օրհնաբանել և վերջին շապիկը զիջել ցանկացողին, կրոնի, որը ի վերջո մնացել է ժողովրդի միակ սփոփանքը այս ունայն աշխարհում։

Հայը տառապանք է կրել հանուն կրոնի և բանականության, որպեսզի այժմ ավելի սերտորեն կապվի ա՛յն ժողովրդի հետ, որ բարի նախախնամությունից կոչված է քրիստոնեական երկրներն ազատելու նրանց վիրավորողների անմաքուր ոտներից։ Երանավետ Ռուսաստանի համար բազմացեղ և բազմարնույթ այս երկրում հարկավոր էր ճկուն, ո՛չ պակաս ամուր, կրոնով, հավատարմությամբ, երախտագիտությամբ և փորձառու, սուր, թափանցող ու հարուստ մտքով օժտված մի զանգված. և հայերն, ահա,

հիշելով իրանց դառն ճակատագրի ամբողջ ծանրությունը, ամբողջ կարևորությունը իրենց թագավորների ժամանակվա հնադարյան բարօրության, որը այժմ նրանց է վերադարձրել իր անունով միայն ամբողջ աշխարհը սասանեցնող ժողովուրդը՝ հայերը ամենից ավելի հավատարիմ կերպով կարող են ծառայել ամբողջ Ասիայի համար <Ռուսաստանի> գծած բոլոր բարի ծրագրերի կենսագործմանը...

Հատված 2

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Այս բոլորն իմանալով, կրկնում եմ դարձյալ, հայ մարդը, այսպիսի բարենպաստ հանգամանքներում, երկրամասի այնքան հոգատար, ժողովրդի բարօրությանը նպաստող և հնությունները սիրող այնպիսի կառավարչապետի, ինչպիսին պարոն Բ<լավատսկին> է,— հրավերը լսելով՝ կարո՞ղ էր հապաղել և չշտապել երկրպագելու իր սրբություններին։

Այն օրվանից, երբ Ռուսաստանը նվաճել է Հայաստանը, բախտն ինձ ժպտացել և մեկից ավելի անգամ ամենալուրջ առիթներ է ներկայացրել շրջելու իմ հայրենիքի բոլոր տեսարժան վայրերը, սակայն երբեք այնպիսի վսեմ տպավորություններով, այնքան հաճելի զգացմունքներով հուզված չեմ եղել, որքան այս ուղևորության ժամանակ, որից տպավորված հիշողություններն իմ հոգում և մտքում կմնան հավե՛տ անմոռաց, հավե՛տ անջնջելի։

Աշնանային հրապուրիչ եղանակը, որպիսին հազվադեպ կարելի է տեսնել տարվա այդ ժամանակ իմ խստաշունչ հայրենիքում, կլիմաների, զգեստների, վայրերի և առարկաների բազմազանությունը, որ մեզ հանդիպում էր 300 վերստից ոչ ավելի մեր կարճ ճանապարհին, կենսամիջոցների առատությունը, որ ինքնաբերաբար ամենուրեք տրվում էր մեզ, և, որ ամենակարևորն է յուրաքանչյուր ուղևորի համար, մեր բոլորի միասիրտ ձգտումը դեպի միևնույն նպատակը, այս ամենը, որ տևեց 8 օրից ոչ ավելի, շատ բանով կարող էր մրցել ամենաառաջնակարգ այն հաճույքների հետ, որ քաղաքակիրթ երկրում տալիս են խճուղին կամ երկաթուղին, որոնք թևավորում են ուղևորին, բայց և, այդուհանդերձ, նրանից խլում և՛ միտք, և՛ զգացմունք։ Էջմիածինը, Արաքսն ու Արփաչայը և այդ գետերի երկու ափերին ցանուցիր բերդերի, եկեղեցիների, քաղաքների և քարվանսարաների բազում ավերակները. Սարդարաբադն իր լուռ անապատով և հսկայական ջրանցքով. Արարատն ու Ալագյազը իրենց պատկառելի, սպիտակահեր գագաթներով և բազմաթիվ ճյուղավորումներով, և վերջապես հնադարյան Անին՝ այդ երկրորդ Թեբեն Հայաստանում, և Ալեքսանդրապոլը, այդ ամենանոր և ո՛չ պակաս գեղեցիկ քաղաքն ամբողջ Ռուսաստանում, և թագավորական ճանապարհը, որ այս վերջին քաղաքից ձեզ կրկին տանում է տուն՝ Երևան. իրոք, այս վայրերից ամեն մեկը կարող էր իր վրա հրավիրել ամենահեռավոր, ամենահետաքրքրասեր պատմաբանի, աշխարհագետի և բնագետի հայացքը։

Երբ, ցանկանալով ցրել վիշտն ու ձանձրույթն իմ խնամքին հանձնըված ուսումնարանի մանուկների անմեղ խաղերով, պտտվում էի նրանց շուրջը՝ ոչ պակաս զվարճանալով նրանց մանկական չարաճճիություններով, Ն<իկիֆոր> Բ<լավատսկին>, Երևանի գավառապետը, անսպասելի հայտնըվեց ինձ մոտ՝ դեպի Անի ուղևորվելու բարի լուրը հայտնելու, որ մեր վաղուցվա, մոտ երկամյա, ցանկությունն էր։ Սիրտս ուրախությունից թռավ՝ լսելով այդ թանկագին անունը. ես նման էի այն մանկանը, որը երկարատև, ապարդյուն ջանքերից և աղերսանքներից հյուծված, վերջապես ստանում է հեռավոր երկրներից դեպի հայրենական հարկը՝ սիրելիների մոտ թռչելու՝ իր համար այնքան հրապուրիչ թույլտվությունը։ Այդ րոպեից ես ամբողջովին ընկա վշտոտ, տրտում, բայց ոչ պակաս վառ երևակայության այնքան հազվադեպ այցելող երազանքների մեջ։ Դրանից հետո այն երեք օրը, որ ես անցկացրի տանը, ինձ թվացին դարեր՝ ամենածանրագույն, ամենաանտանելի դարեր։

Մտքով, օր ու գիշեր, ես արդեն փորփրում էի հարազատ քաղաքի սրբազան հնությունների ականծելի մնացորդները, քաղաքի, որին առաջին անգամ այցելել եմ 1837 թվականին պարոն բարոն և սենատոր Հանի և նրա տիկնոջ՝ ամեն մի հնության, սրբության ու վեհ բան ջերմորեն երկրպագողի, գիտությունների և արվեստի այդ Միներվայի ուղեկցությամբ, տիկնոջ, որի նմանը հազիվ թե երբևէ տեսած լինի մեր երկիրը, չնայած վերջինս այցելել են եվրոպացի բազմաթիվ ճանապարհորդներ, սակայն, ո՛չ գիտական կանայք։ Բայց այն ժամանակ, կարանտինի կանոնների պատճառով, մենք Անին տեսանք հեռվից, գարնանը, լուսաբացին, երբ նա պարուրված էր կախարդական մշուշով, որպես խորհրդական մի ուրվական։

Դեռ ես շատ հստակ հիշում էի հաճախակի ծորող ականածանքի այն արցունքները, ծանր, անբռնազբոսիկ այն հառաչանքները, որ բխում էին գիտությամբ, լուսավորությամբ, բայց ավելի ևս սիրալիրությամբ և առաքինություններով մեծապես օժտված այդ հազվադյուտ կնոջ հուզված կրծ-

քից և աչքերից, երբ նա դիտում էր Լոռու բերդը, Անի քաղաքը և Արմավիրի ավերակները, ուր նա ձգտում էր թղթին հանձնել Արարատի և նրա, այսպես ասած, զարդը կազմող բոլոր տեսարժան վայրերի ուրվագծերը։

— Միթե՞ ժամանակի և բարբարոսության ավար միայն պետք է դառնային Վաղարշակի, Տրդատի և անմահ Բագրատունիների այդ մեծ ստեղծագործությունները։ Եվ նրանք իրենց լուռ վեհությամբ մեզ միայն հիշեցնում են աշխարհային փառքի ունայնության, չնչինության մասին։ Բազմաթիվ կայսրուհիներ, իմ սեռի և իմ կոչման հազարավոր կանայք հավիտյան կարող են նախանձել իմ բախտին, որ ես, վերջապես, արժանացա աշխարհի ստեղծողին վերաառաքելու իմ երախտագիտական աղոթքը այն սրբավայրից, ուր սուրբ Գրիգորը և Տրդատը, ուր ընտրյալ հոգևոր հովիվների բազմություններ,— ավելի մաքուր և հեզ հոգով, քան ես, մեղավորս,— նրան են վերառաքել իրենց աղոթքը,— ասում էր անմոռանալի կինը, կարճատև աղոթքից հետո, էջմիածնի տաճարը մտնելիս։

Վերջապես, ինչպե՞ս մոռանալ թե՛ նրա և թե՛ նրա ամուսնու՝ քաղաքակիրթ աշխարհին այնքան հայտնի մարդու՝ իմաստալից, հիշատակության արժանի, նշանակալից ու պատմական խոսքերը, որ ասացին նրանք նախ Սինոդում, ապա այն 5 օրվա ընթացքում, որ մենք անցկացրինք նախաթոռ էջմիածնի վանքի՝ հայ ազգի այդ «պալլադիումի» մեջ, ինչպես այն անվանել է միանգամայն արդարացի կերպով Նոյան սրբազան տապանի երջանկահիշատակ այցելու Պարրոտը։ Եվ, հիրավի, ամբողջ երկրագնդում միայն փարթամ և աշխարհակալ Հռոմը,— ինչպես հոգևոր, նույնպես և աշխարհիկ առումով, իր փառքով, հզորությամբ և կարևորությամբ,— կարող էր մրցել համեստ, դարերով հալածված, դարերով ամայացված, դարերով դարձյալ,— հակառակ Հռոմի — իր սեփական տերերի փայփայանքից, իշխանությունից և փարթամությունից զրկված, արյան, հրի ու սրի մատնված, 1500 փոթորկալից, դաժան տարիների ընթացքում իր հիմքերի վրա դեռևս հաստատորեն կանգուն սևավեմ էջմիածնի հետ։

Իմ ընթերցողները, որոնք թե՛ հայ, թե՛ օտարերկրյա գրողների նկարագրություններից արդեն վաղուց գիտեն այդ վանքի պատմությունը, հիշարժան բոլոր վայրերը, հազվագյուտ արժեքներն ու հնությունները, որոնք, բացի այդ, ոչ-նպաստավոր կողմից գիտեն նաև այդ վանքի խաղաղ բնակիչներին,— թո՛ղ չզայրանան, որ նրանց սիրալիր ուշադրությունը հանկարծ շեղեցինք ուղիղ ճանապարհից դեպի անցյալի խոսքերը և իմ նկարագրած վայրի անճոռնի, մութ և նույնիսկ կեղտոտ խցերը համեմատեցինք արդի եվրոպացիների արվեստի, օրենքների և լուսավորության աղբյուրի և օրրանի հետ։

Ե՛վ Հռոմը, և՛ էջմիածինը հոգևոր իշխանության կրողները, քրիստոնեական հավատի պահպանողներն ու պաշտպանողներն են եղել բոլոր ժամանակներում և դարերում, առաջինը՝ Արևմուտքում, երկրորդը՝ Արևելքում, այն տարբերությամբ միայն, որ առաջինին էր ենթարկվում ամբողջ Արևմտյան Եվրոպան, կապված լինելով հենց միայն կրոնով, հետևապես և՝ մի ընդհանուր շահով և ոգով. այնտեղ պապի՝ Քրիստոսի և նրա առաջին առաքյալների փոխանորդի՝ լոկ ամենափոքր ակնարկը ստիպում էր դողալ Եվրոպայի և՛ թագավորներին, և՛ կայսրերին. երկու դար շարունակ ամբողջ Եվրոպան նետեց մահմեդական Ասիայի վրա, ինչպես այդ տեղի ունեցավ խաչակիրաց արշավանքների ժամանակ. այնտեղ՝ ինկվիզիցիան, այդ դիվական իշխանությունը, որ այժմ էլ սարսեցնում է Եվրոպայի շատ երկրներ, հավատաքննությունը (ֆեյմ-գերիխտ), ասպետականությունը և աբեղայական անթիվ միաբանությունները, ոչ-պակաս նաև կոնդակները և թողության թղթերը (աբլաս-բրիֆ) կամ սուրբ գրքի ընթերցման արգելքը և իրենց տեսակի մեջ հսկայական այլ միջոցառումներ, պահում էին ամենափրկչական, ամենասուրբ համակաթոլիկական հավատի ամենակործան հերարխիան։ Այստեղ, ընդհակառակը, նման ոչ մի բան չի եղել, այլ միայն քրիստոնեական հավատը, միայն հայ հոգևորականության անձնազոհությունը ու նվիրվածությունը. հոգևորականության, որ աստծու կամեցողությամբ, անզոր, անպաշտպան, բոլորից, նույնիսկ քրիստոնյաներից, իր եղբայրներից, ինչպիսիք են՝ հույներն ու վրացիները, և հենց պապերից ու նրանց միսիոներներից մինչև այսօր էլ հալածված ու հետապնդված՝ դիմադրում էր և պաշտպանում բաց ճակատով, արյամբ և իր ամբողջ ուժով, զորեղ կամքով, անօրինակ մի հերոսությամբ, որպիսին հազվադեպ է քրիստոնեական եկեղեցու ամբողջ պատմության մեջ, և այն էլ հայկական թագավորության և հայ ազգի ինքնուրույնության կործանման օրից՝ մեր թվականության 5-րդ դարից սկսած,— դիմադրում էր ու պաշտպանում՝ չնչին, քաղաքականության մեջ թույլ, բայց և ամուր, անբաժանելի, ո՛չ փառքի փայլով գայթակղվող, ո՛չ էլ մարտիրոսական տանջանքներով կոտրվող՝ աշխարհե աշխարհ թափառական իր հոտը՝ ընդդեմ այնքան զորեղ բարբարոսների, Հիսուս Քրիստոսի աստվածային կրոնի թշնամիների և կործանարարների։ Հայ կաթողիկոսներից, աբեղաներից և քահանաներից շատերը՝ իրենց բարեպաշտությամբ, հավատի և ժողովրդի նկատմամբ ունեցած սիրով, ազգի մեջ քրիստոնեական սուրբ կրոնը տարածելով և եկեղեցին ու ազգը պահպանելու համար գործած իրենց հերոսական սխրագործություններով կարող են օրինակ ծառայել քրիստոնյա մյուս ժողովուրդներին՝ իրենց եղբայրակիցներին։ Միայն անմոռաց դարերը՝ մեծն Վարդան

նահատակի, քաջարի Վահանի՝ Հայաստանի տարեգրություններում այդ երկրորդ Մակաբայեցիների սխրագործությունները. միայն Հովսեփ կաթողիկոսի, Ղևոնդյան և Սուքիասյան քահանաների անօրինակ անվեհերությունն ու արիությունը հինգերորդ և վեցերորդ դարերում, երբ ամբողջ Պարսկաստանը նետվել էր դժբախտ Հայաստանի վրա, որպեսզի կրակապաշտական հավատի հրով ու սրով ոչնչացնի քրիստոնեությունն իր տաճարներով,— միայն դրանք վերը մեր նշած ճշմարտության ամենաանվիճելի փաստերն են, ամենահավաստի ապացույցները։

Էջմիածինը, չնայած իր այժմյան՝ թե՛ մտավոր, և թե՛ բարոյական տեսակետից՝ ողորմելի, իրոք դժբախտ վիճակին, չնայած այն մահանման քնին, որ համակել է նրա բոլոր միաբաններին, շատ վայրերում՝ նաև ամբողջ ազգին, չնայած, վերջապես, այն բանին, որ այնտեղ դեռևս ավելի պարսկական, քան քրիստոնեական ոգին է իշխում, երբեք չի հնարել ո՛չ պապական կոնդակներ, ո՛չ ինկվիզիցիա, ո՛չ մեղքերի վաճառք, ո՛չ սուրբ գրքի արգելք. իր գիտնականությամբ նա չի խրոխտացել, որպեսզի դրանով ավելի հեշտ և ավելի ճարպկորեն որսա և սարկացնի ժողովրդին, ինչպես անում էր և նույնիսկ այժմ էլ անում է ճիզվիթների միաբանությունը՝ որտեղ որ միայն այդ հնարավոր է լինում. ընդհակառակը, նա կրթություն է տարածել այնտեղ, ուր հանգամանքները և միջոցները թույլ են տվել. ո՛չ թե հրով ու սրով է մկրտել և պահպանել իր իշխանությունը, ինչպես այդ տեղի է ունեցել կաթոլիկ երկրներում՝ քրիստոնեության հենց սկզբից մինչև Ռեֆորմացիան և սրանից դեռ շատ հետո, հատկապես դժբախտ Ամերիկայում, որ իր միլիոնավոր որդիներին զոհ է տվել մոլեռանդության զոհասեղանին. Էջմիածինը, վերջապես, փրկեց հայ ազգի անունն ու եկեղեցին, մեր ազգի, որ հայտնի է աշխարհի ստեղծագործությունից մինչև մեր ժամանակները. դա ամբողջ աշխարհի համար հրաշքի պես մի բան էր. մինչդեռ Հռոմը, հենց միայն իշխանասիրության, սուտ հնարանքների և ամբարտավանության պատճառով իր հավատարիմ որդիներին միլիոններով կորցրեց. շատերը լքեցին նրան՝ դեպի Քրիստոսի հավատը և մարդկային առաքինություններն ունեցած սիրուց. իր հետևորդներից շատերին նա այժմ էլ հեռացնում է՝ նրանց զարգացած մտքի և սրտի համար, և, վերջապես, միայն այժմյան Պիոս V պապին է նախախնամությունից վերապահված, փառքի և քրիստոնեական առաքինությունների դարում, հարություն տալ կաթոլիկ աշխարհին և այն մաքրել բարբարոսությունից և հոգեկան թմրությունից, որ ներարկել և պահպանում էին նրա մոլեռանդ նախորդները՝ քրիստոնեության բոլոր դարերում։ Անմահ Մոնտեսքյոյի և անմահ Էժեն Սյուի, «Քրիստոնեության ոգու» և «Թափառական հրեայի»

ընթերցողները, անմահ, բայց խիստ, ճշմարտասեր և ո՛չ նվազ մարդասեր Պարրոտի՝ Էջմիածնի հայկական միաբանության ծառայությունների և այժմյան վիճակի վերաբերյալ՝ համեստ, նույնքան արդարացի, նույնքան ճշմարտացի նկարագրությունների և նկատողությունների ընթերցողները, իմ թույլ դատողությունները Հռոմի և Էջմիածնի մասին որևէ չափով չեն համարի լոկ միայն միակողմանի, հանդուգն և կեղծ կանխակալություն, եսական — մոլեռանդ հայրենասիրություն, որ անթույլատրելի է այն բոլոր դեպքերում, երբ ամեն ինչի համար ճշմարտությունն ու խիղճը պիտի պատասխան տան։

Ես տեսել եմ և հիշում եմ Էջմիածնի վիճակը դեռևս քսան տարի սրանից առաջ, երբ ո՛չ միայն Երևանի սարդարը, այլև նրա բազմաթիվ չնչին խաներն ու բեգերը հենց որ ցանկանային՝ վանքի հաշվին քեֆ էին անում և գրպանները լցնում։ Յուրաքանչյուր անգամ նրանց ընդունելը, հյուրասիրելը և ուղեկցելը աղմկալի, հանդիսավոր և բազմամարդ էր լինում։ Նրանց դիմավորում էին քրիստոնեական դրոշակներով, խաչերով և սրբապատկերներով, զանգահարությամբ, եկեղեցական երգերով և հարուստ նվերներով, այնուամենայնիվ, շատ անգամ էր պատահում, որ այդ դևերի ներկայությամբ արցունք ու արյուն էր թափվում։ Էլ ի՞նչ խոսք կարող է լինել մյուս վանքերի և եկեղեցիների մասին. էլ ո՞րտեղից կարող էին մտածել իրենց և ժողովրդի կրթության մասին։ Սակայն, չնայած այդ բոլորին, պարսկական շահերը և թուրքական սուլթանները միշտ մեծ հարգանք ունեին Էջմիածնի վանքի և կաթողիկոսների նկատմամբ։ Այժմ էլ շատ պարզ հիշում եմ, երբ 12 տարեկան մանուկ էի, տեսել եմ, թե ինչպես Աբաս-Միրզան, 1821 թվականին, թուրքերի դեմ կատարած արշավանքների ժամանակ, Էջմիածնի վանքի բեմի առաջ, սուրը հանելով և կաթողիկոսի առջև դնելով, ասաց հետևյալ, հույժ հիշարժան, խոսքերը. «Սրբերի զորությունը և աստծու սպասավորների խաղաղ աղոթքներն իմ ձեռնարկությանն ավելի շատ բախտ ու հաղթանակ կարող են բերել, քան սրի և հրի ուժը». ուստի և կաթողիկոսին խնդրում է օրհնել իր սուրն ու զորքը։

Ո՛չ միայն կաթողիկոսները, այլև թեմական արքեպիսկոպոսները և եպիսկոպոսները, նույնիսկ վանքի վանահայրերը, որպես ժողովրդի ներկայացուցիչներ, միշտ մեծ հարգանք էին վայելում։ Ազգը հենց նրանց էլ պարտական է թե՛ հավատի, թե՛ գրականության ու լեզվի, թե՛ ազգության պահպանմամբ, ինչպես և կրթության որոշ աստիճանով, ինչ վիճակում էլ որ դրանք այժմ տեսնենք։

Դարավոր վերքերը շատ խորն են լինում, և հեշտությամբ ու արագ չեն բուժվում, այլ դարձյալ դարերով. բայց դիպչել այդ վերքերին անզգույշ, անողորմ, էլ չեմ ասում՝ դաժանաբար, առանց կարեկցանքի, առանց սրտացավության, ինչպես շատերն են վարվում էջմիածնի և ընդհանրապես հայ հոգևորականության այժմյան վիճակը նկարագրելիս և դատողություններ անելիս, խոստովանենք, որ դրանով ավելի և ավելի է մեծանում ցավն ու հառաչանքը։ Իսկ հենց միայն վիրավորված ինքնասիրությունը չէ՞, որ հաճախ մղում է մարդու ամեն տեսակ քմահաճույքների և անկոտրում համառության։ Մեզ օրինակ վերցնենք մեր Փրկչին՝ նրա վեհ, աստվածային կոչումը. օրինակ վերցնենք և՛ հասկացողությամբ, և՛ հոգով պարզ առաքյալներին, նմանվենք նրանց ո՛չ թե բարձր գիտությամբ, որ դեռևս անօգտակար է հասակով մանուկ մեր ազգի համար, տանք նրան զուտ քրիստոնեական, զուտ մարդկային կանոններ և ուղղություն, և մենք կմոտենանք երկնային արքայությանը։ Մի՞թե այդպես չեն անում միսիոներական ընկերությունները, մի՞թե այդպես չեն արել Սոկրատն ու Կոնֆուցիոսը, մի՞թե մեծ Մխիթար Սեբաստացին՝ հայ աբեղան, այդպես չի՞ դրել ամբողջ գիտական աշխարհում հայտնի Վենետիկի՝ այժմ հսկայական հայ-կաթոլիկական միաբանության հիմքը։

— Մի համեստ հոգևոր դպրոց՝ հագեցած քրիստոնեական ոգով, որ հիմք ունենա Աստվածաշունչը և ոչ թե տրամաբանությունն ու դատարկ ճարտասանությունը, կենդանացած այլևայլ հանրօգուտ գիտություններով, ինչպիսիք են՝ աշխարհագրությունը, պատմությունը, քիմիան, ֆիզիկան, բնապատմությունը և հին լեզուները՝ ահա՛ թե ինչ է պետք և անհրաժեշտ հայ հոգևորականությանը,— ասում էր մարդկության բարեկամ Պարրոտը։

Բայց այդ շնորհաբեր միտքը ամենից ավելի լուրջ և հանդիսավոր կերպով արտահայտել է պարոն սենատոր Հանը՝ առաջին անգամ էջմիածնի Սինոդին ներկայանալիս, իմ նկարագրած ճանապարհորդության ժամանակ։ Ահա՛ նրա խոսքերը, որ սովորական ողջույններից և ձևականություններից հետո որպես ճառ՝ արտասանեց Սինոդի բոլոր անդամների, և իրեն՝ կաթողիկոսի ներկայությամբ.— Ի՞նչով կարող եմ,— ի միջի այլոց ասաց նա,— նշանավորել իմ երկյուղած մուտքը՝ այնքան մեծ, այնքան հարգելի, բայց և նույնքան դժբախտ մի ազգի սրբավայրը, եթե ոչ իմ նկատմամբ ցուցաբերված կայսերական բարեհաճությանն արժանի, ինձ տրված իշխանությանը պատշաճ և աշխարհի բոլոր ժողովուրդներից հարգվող այս վայրի համար փրկարար մի սխրագործությամբ։ Միջնորդե՞լ ձեզ համար կայսեր ողորմածությունը,— սակայն այն վաղուց հովանավորում և պաշտպանում է ձեզ և ձեր հոտը՝ ձեր ազատագրման օրից։ Գտնե՞լ ձեզ համար հարստության և գանձերի աղբյուր,— հայ ազգը ձեզ համար հարուստ գանձարան է։ Վերջապես, ձեզ համար խնդրել իրավունք և արտոնությո՞ւն, որ կարևոր և օգտակար են աշխարհական մարդու համար,— ձեր աստիճանը և բարձր կոչումը ձեզ ավելի շատ ուժ և արժանիք են տալիս, քան արտաքին նշանները։ Մի բանով միայն ես կարող եմ օգտակար լինել ձեզ, որ դուք, թերևս, ինձնից բնավ չէիք սպասում՝ բարի խորհրդով: Մինչև այժմ ձեր առջև անհայտնի կանգնած է եղել ձեր բացահայտ թշնամին՝ ձեր հավատի թշնամին, որից և՛ դուք, ինքներդ էիք պաշտպանվում, և՛ հավատով ու կրոնով ձեզ նվիրված ազգը. ազգը միայն դրանով էլ և՛ գոհ էր, և՛ երջանիկ՝ չպահանջելով և չսպասելով ձեզանից ուրիշ օգնություն, ուրիշ ծառայություններ. բայց այդ թշնամին այժմ հավիտյանս ոչնչացված է, սակայն դուք ունեք դարձյալ մի թշնամի՝ անհամեմատ վտանգավոր, անհամեմատ ուժեղ, բայց թաքուն թշնամի։ Դա կրթությո՜ւնն է: Նա հսկայական քայլերով է մոտենում։ Ձեր ժողովուրդը, նույնիսկ Թուրքիայում, գրկաբաց է ընդունում նրան։ Դուք ետ եք մնում, իսկ ժողովուրդը ինքնիրեն առաջ է գնում։ Վա՜յ ձեզ, եթե նա ձեզանից առաջ անցնի թե՛ խելքով և թե՛ կրթությամբ։ Վա՜յ ձեզ, եթե նա ձեզանից չի ստանալու իր հոգևոր սնունդը։ Դուք չեք կարող պաշտպանվել ժամանակի բարբարոսությամբ. ժողովուրդը կկորցնի իր հարգանքը ձեր և նույնիսկ ձեր քարոզած կրոնի նկատմամբ, և ձեր աստիճանն ու արժանիքը ձեզ համար բեռ կդառնան, իսկ ժողովրդի համար՝ արհամարհանքի առարկա, կամ միայն արտաքին պիտակ։ Մտածեցեք ինքներդ և ջանացեք պահպանել ձեր բարձր կոչումը՝ ո՛չ միայն ինքներդ ձեզ, այլև ժողովրդին դաստիարակելու միջոցով։ Ահա՛ ձեր փրկությունը, ահա՛ ձեր դերը, որի վրա ամբողջ հոգով, արժանավայել ձևով ցանկանում եմ հրավիրել ձեր բարեհաճ ուշադրությունը և մխիթարել ինքս ինձ։

Բայց թե դրան հետո ինչ պատասխանեց հանգուցյալ Հովհաննես <կաթողիկոսը>, դա հոգու խոստովանություն է, որը, թերևս, նրա մահից հետո կարող է հայտնի դառնալ։ Այժմ կարելի է համարձակ կերպով ասել միայն այն, որ թե՛ Պարրոտը, թե՛ սենատոր Հանը և շատ ուրիշներ, իզուր չէր, որ ինձ արժանացրին իրենց այնքան հոգատար, հայրական ուշադրությանը, որին ես ոչնչով չէի արժանացել։ Իզուր չէր, որ այս անգամ ես իրենց հետ ինձ բերել էին էջմիածին, սակայն նախախնամության ուղիներն անքննին են, ուրեմն կրկին դառնանք մեր ուղևորությանը։

Հատված 3

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀՈՒՇԵՐ

Օ՜, այդ ուղևորությունը, որը ես դեռ չեմ կարող նկարագրել, հատկապես ինձ համար ունի ոչ-նվազ կարևոր հետաքրքրականություն։ Ո՞ւմ հաճելի չէ, առնական հասակում, արդեն հասուն զգացմունքներով, փորձառու, սառն, բայց դեռևս երազուն աչքով ու մտքով տեսնել այն վայրերն ու առարկաները, քայլել այն ճանապարհով, որը նա՝ հույսերով լի, վառվռուն, բայց անուրախ պատանեկության օրերին ցողել է դառն արտասուքով։ Էջմիածնում չէ՞ր, միթե, որ ես իմ կյանքում առաջին անգամ ճանաչեցի աշխարհը, մի աշխարհ, որ չնայած էությամբ միապաղաղ, բայց լի էր բազմազան տեսարաններով, զգայություններով, և՛ սրտակեղեք, և՛ հոգեպարար, և՛ սարսափելի, և՛ հաճելի իրադարձություններով, որ ես ապրել եմ իմ 9 տարեկան հասակից սկսած։

Հայկական բոլոր եկեղեցիներին, բայց ամենից ավելի Էջմիածնի տաճարին բնորոշ վեհությունը, կախարդական մթությունը, անհամար սրբապատկերները, ջահերը, կանթեղները, որ վառվում էին տոն օրերին, թանկարժեք շուրջառները, եկեղեցական կահույքը, որ այն ժամանակ անհամեմատ ավելի շքեղ էր, քան այժմ. Նրա համեստ վանականների խաղաղ, բայց ոչ-նվազ շվայտ կյանքը, համարյա ամիսը մեկ անգամ աշխարհի ամենահեռավոր երկրներից եկող ուխտավորների՝ խայտաբղետ տարազով, այլազգի և այլակենցաղ խուռն բազմությունը. Նրանց պատվին տեղի ունեցող հարուստ հանդեսները, ինչ որ Էջմիածինը վաղուց է չի տեսնում և այլևս չի տեսնի. եպիսկոպոսների կամ աբեղաների ձեռնադրության, կամ մեռոնօրհնության, կամ կաթողիկոսի անվանակոչության առթիվ, սուրբ Գրիգորի կամ վանքի հիմնադրման պատվին <տեղի ունեցող> թափորները, որոնց մասնակցում էր ջերմեռանդությամբ ոգեշնչված անհամար բազմությունը, բազմաթիվ զանգերի և բազմաձայն, բարձր, բայց վհատ երգերի հնչյունների՛ ուղեկցությամբ. Թափորներ, որպիսիք, ինչպես հավաստիացնում էր բարոնուհի Համը, ինքը Հռոմում էլ չի տեսել, նկատի ունենալով ո՛չ այնքան նրանց փայլն ու հարստությունը, որքան բնույթը և տեսարանների ու այցելուների բազմազանությունը, քանի որ այն ժամանակ էլ, բարեբախտաբար, կատարում էին մեռոնօրհնություն, մի բան, որ միշտ չի լինում, և որը յուրաքանչյուր ոք հիշում է, ով անցյալ տարի տեսել է Ներսես կաթողիկոսի օծումը։ Բազմամարդ, մեծահանդես, բայց միստիկական ճաշկերույթը, երբ հաճախ վանքի երիտասարդ միաբանների

վրա շաղ էր տրվում մանրադրամ. Երբ հնչում էր երաժշտությունն ու երգը, արտասանվում էին ճառեր, և երբ, հատկապես բարեկենդանին, տեղի էին ունենում նույնիսկ ձիարշավներ, հրաձգություններ, գամեշների և ուղտերի կռիվներ. Վերջապես, մեծ պասից առաջ մի ամբողջ շաբաթ տևող ծաղրաթափորը (կարնավալ), երբ հռոմեական սատուրնալիայի օրինակով կաթողիկոսն էլ բացառություն չէր կազմում և նույնիսկ չէր խուսափում երիտասարդ դպրի նշանակած պատիժներից, դպրի, որն այդ օրերին ունենում էր իր ընտրյալ տիրակալ թագավորը, և որը ի վիճակի էր վանքի ամենաառաջին աստիճանավորին էլ ֆալախկայի ենթարկել և խփել դարշապարներին, մինչև որ նրա հրամանը ճշտությամբ կատարվեր. Այդ բոլորը, բոլորը, որ այն տարիներին, բարբարոսների ժամանակ, կազմում էին վանքի կյանքն ու հրապույրը, և որ այժմ, քրիստոնեական դայխոնի հովանու տակ, այս երջանիկ օրերին լռել են, կարող էին առանձնահատուկ, դյութիչ և անջնջելի տպավորություն գործել յուրաքանչյուրի, և, հատկապես, խաղաղ գյուղից վանք բերված, կրակոտ, կենսաթրթիռ մանկան և տղա՝ պատանու երևակայության և հոգու վրա։ Իսկ թագավորների, կաթողիկոսների և վանքի բարձրաստիճան հոգևորականների մեծ սխրագործությունների, գործերի և առաքինությունների մասին ժողովրդի մեջ, հաճախ նրանց գերեզմանների վրա պատմվող զրույցները. Նույն արժեքը, բայց ո՛չ նույն բնույթն ունեցող անձերի վատ հատկությունների կշտամբանքն ու պարսավանքը. Թեմերի առաջնորդությունը, բարձր պաշտոնները գրավելու, վանքի համար կամավոր տուրք և նվիրատվություններ հավաքելու նպատակով այն ժամանակները աշխարհի ամենահեռավոր երկրները ուղարկվող արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների և նույնիսկ վանականների հազարավոր առասպելախառն, բայց իրական բանավոր պատմությունները, իրենց այցելած քաղաքներում, պետություններում տեսած հրաշալիքների, տարօրինակությունների և հիշարժան վայրերի մասին. Հեռավոր և երկարատև թափառումներից բարեհաջող վերադառնալու դեպքում նրանց բերած նվերները՝ թե՛ դրամով, թե՛ իրերով, ինչպես և ամբողջ միաբանության հյուրասիրությունը. Չեմ սխալվի, եթե համարձակվեմ այդ վանքի այն ժամանակվա կյանքը համեմատել եգիպտական և հնդկական քրմերի գաղտնիքների հետ՝ բառիս լիակատար իմաստով։ Դա միանգամայն առանձնակի, բազմաբնույթ, միաժամանակ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր մի աշխարհ էր, միակն իր տեսակի մեջ, որպիսին, դժբախտաբար, հայերն այլևս երբեք չեն տեսնի։ Փորձառու և խելացի սենատորի մարգարեությունն այժմ, մեծ մասամբ կատարվել է. Թե ի՛նչ կլինի հետո, այդ աստված միայն գիտե։

Հենց այստեղ էլ ես կազմեցի իմ առաջին ըմբռնումները կյանքի, աշ-

խարհի մասին։ Հայերի մեջ մինչև այժմ էլ սուրբ համարվող բարեպաշտ կաթողիկոս Եփրեմը մանկության տարիներին ինձ «իր գառնուկն» էր անվանում, իսկ պատանեկության շրջանում, ներեցեք անհամեստ խոստովանության համար, ինձ համարում էր «իր Ռափայելը» (Տոբիթի որդին, որ հրեշտակի խորհրդով և միջոցով բուժեց հոր աչքերը). «իր գառնուկն» էր անվանում՝ ինձ հետ ունեցած ազգակցության և իմ կարմրաթուշ, լիքը և թարմ տեսքի համար, իսկ «իր Ռափայելը»՝ նրա՛ համար, որ 1829 թ. Սարդարաբադից, ուր այդ ժամանակ կատաղի ժանտախտի հետևանքով սարսափելի մահացություն էր տիրում, ժանտախտ, որ ոչնչացնում էր ամբողջ գյուղեր, և բովանդակ գավառում ո՛չ մի տեղ այնքան սպառնալից չէր, ինչպես այդ բերդում,— ես նրան աչքի հիվանդության դեղ բերի, հիվանդություն, որով հանգուցյալը, մինչև իր կյանքի վերջը շատ էր տառապում, և որտեղ ես էլ վարակվեցի այդ թունավոր հիվանդությամբ և մեկ ամիս տառապելուց հետո փրկվեցի աստծու հատուկ ողորմածությամբ։

Վանքում չորս տարի ուսանելուց հետո, 1821 թ. նույնպես իմ հեռավոր ազգականի՝ ո՛չ գիտնական, բայց ուսումնասեր, խստաբարո, արդարադատ, ամբողջ վանքում հարգված Անտոն արքեպիսկոպոսի շնորհիվ տեղափոխվեցի Թիֆլիս, հայկական ուսումնարանը՝ կրթությունս ավարտելու և ռուսերեն սովորելու համար, ուր և մնացի չորս տարի։ Երևանն ազատագրվեց։ Ես թռա էջմիածին և նշանակվեցի Սինոդի և կաթողիկոսի քարտուղար ու թարգման միաժամանակ։ Ավելի շատ բանավոր զրույցներից, քան աշխարհագրությունից, որպիսին, ինչպես նաև այժմ մանուկներին իսկ ծանոթ ուրիշ գիտություններ մեզ չէին սովորեցնում, ես գիտեի Եվրոպա, Մոսկվա և Վենետիկ անունները, որոնցից երկուսը հատկապես նրա՛ համար, որ այնտեղ էին գտնվում ամենալավ հայկական ուսումնական հաստատությունները։ Դեպի նրա՛նց, դեպի նրա՛նց էր ձգտում հոգիս դյութական ուժով։ 15 տարեկան հասակից հենց նրա՛նք են եղել իմ անմոռաց երազանքները։ Միջոցներ չունեի, և շատերին արած իմ խնդրանքը՝ ինձ այնտեղ ուղարկելու մասին՝ մնաց առանց որևէ ուշադրության, առանց հետևանքի՝ իմ օգտին։ Ես ցանկանում էի ավելի շատ կրթություն ձեռք բերել, որպեսզի հետագայում հոգևորական կոչումը չկրեմ առանց գիտելիքների և արժանիքների։ Իմ հավատի և իմ ազգի սրբությունները, որոնց առջև, իմ այդ նպատակին հասնելու համար, ես այնքան հաճախ, գաղտնաբար, և այնքան հոգեբուխ արցունք եմ թափել՝ ամե՛ն ինչում, ամե՛ն ինչում իմ վկաներն են։ Այո՛, պատանեկան երևակայությունս և սիրտս դեռևս բռնված են երազանքներով։ Պետրոս Ամենացու գործունեության

մասին չիմանալով դեռևս ոչ մի խոսք, ես հույս ունեի այն ժամանակ դժբախտ իմ հայրենիքն ազատել բարբարոսների լծից, եթե ինձ բախտ վիճակվեր ընկնել Եվրոպայի միապետների ոտները և խնդրել նրանց օգնությունը։

Ե՛վ ուրախ, և՛ տխուր երազանքները 8 տարուց ավելի հաջորդում էին մեկը մյուսին, և ահա, հրաշագո՛րծ նախախնամություն, խորտակված, բայց երախտագիտությամբ լի սրտով երկրպագում եմ քո անքննին էությանն առաջ։ Հայտնվեց Պարրոտը՝ իմ փրկարար հրեշտակը։ Տեսնելով բարությամբ լի նրա առաջին հայացքը, հոգիս զգաց իր բարեկամ հովանավորին։ Գիտական արշավը դեպի Արարատի ստորոտներն ու գագաթը, որ տևեց ընդամենը երեք ամիս, ավարտվեց։ Եվ նույն սրբազան լեռան կատարին, սուրբ խաչի հետ միասին, բարձրացավ և՛ իմ ուխտն ու աղոթքը. բայց դեռևս հեռու էր այն վայրը, որտեղից ես պիտի դեպի Արարատը վերադառնայի՝ կանաչ ճյուղը ձեռքիս։ Պարրոտը մեկնեց, դեմքի սառը արտահայտությամբ և սառը եղանակով, ասելով. «Ջանամ, բայց ոչ մի հաստատ բան ձեզ խոստանալ չեմ կարող»։ Ինձ միայն հարկավոր էր, որ նա, իր երկաթյա կամքով, միջնորդեր ո՛չ թե հոգևոր կոչումից, այլ մի քանի տարով ինձ իմ ծառայությունից ազատելու մասին։

Արյունոտված սրտով ես կրկին հանդիպեցի էջմիածնի սև պատերին, որոնք ինձ երբեք այնքան սարսափելի չէին թվացել, ինչպես այդ ժամանակ։ Ինձ համար աններևակայելի տանջանքներով անցավ ամբողջ շաբաթ։ Համարյա ամեն օր ես կանչվում էի այն ժամանակ դեռևս հզոր և ամբողջ եկեղեցու և նույնիսկ ազգի վրա անսահմանափակ իշխանություն ունեցող Սինոդի սարսափելի դատաստանին։ Մեկի հանդիմանությունները, սպառնալիքները, հրահանգները, մյուսի խոստումները՝ այդ օրվանից հինգ տարի անց եպիսկոպոսական աստիճան և տեղ տալու վերաբերյալ՝ ոչի՛նչ, ոչի՛նչ չէր սարսափեցնում, չէր հրապուրում ինձ։

Հանգուցյալ արքեպիսկոպոս Հովսեփ Տեր-Մարուքյանը՝ այն ժամանակ Սինոդի կարևորագույն մի անդամը, մի անգամ, մինչև կես գիշեր, ջանք գործ դրեց ամեն կերպ գայթակղեցնելու ինձ իմ ապագա կարիերայով՝ Վրաստանում կամ Ռուսաստանում թեմական եպիսկոպոսի պաշտոնի խոստումով, հիմնվելով ռուս և հայ լեզուների իմացությանս վրա, ինչ որ այժմ էլ վանքում հազվադեպ բան է։ Եվ նա ճիշտ էր ասում, բայց պատանեկան իմ սրտին այդ բոլորը թվում էր բանդագուշանք։ Վերջապես սիրտ արին խոստանալու ինձ, գարնանը, իրենց հաշվին, ուղարկել Մոսկվա, պարոնայք Լազարյանների ճեմարանը, միայն թե թողնեի իմ մտադրությունը հետևելու այդ լյութերականներին, որոնք չեն ճանաչում ո՛չ պահք, ո՛չ սրբե-

րին և ո՛չ էլ, նույնիսկ, աստծուն։ Ես հանդարտվեցի, բայց այդ հույսի անհիմն լինելը, հույսի, որով սուրբ հայրերը ջանում էին ինձ պահել և ետ կանգնեցնել Պարրոտին հետևելու մտադրությունից, ինձ համար պարզվեց հանգուցյալ Հովհաննեսի՝ իմ նկատմամբ ունեցած հատուկ բարյացակամության շնորհիվ, որ այն ժամանակ դեռևս կաթողիկոս չէր, այլ Սինոդի ավագ անդամ։ Սարսափելի հուսահատությունը դժոխային ուժով համակեց ինձ։ Ես ներկայացա Սինոդին արդեն հոգևոր կոչումը թողնելու հաստատ վճռականությամբ, եթե նրանք չթողնեն ինձ մեկնելու։

Սինոդը միաբանության ցուցակից ջնջելով իմ անունը, ինձ նզովք կարդաց, օրհնության փոխարեն։ Խլեցին իմ բոլոր իրերը՝ մինչև վերջին թելը, թողնելով միայն վրայիս հագուստը։ Վա՜յ նրան, ով դրանից հետո համարձակվեր ինձ նույնիսկ ողջունել։ Մութ գիշերին, առանց մի կոպեկի, դուրս եկա վանքից, և գիշերն անցկացրի փեսայիս տանը, որն այժմ էլ ապրում է Վաղարշապատում (էջմիածնի գյուղում)։ Ընկերս՝ այժմ Բեսարաբիայում ուսումնական քահանա Մսուրը, գաղտնաբար իր փոքրիկ մուշտակն ինձ ուղարկեց։ Իմ բարեկամը և ուսուցիչը, գիտնական Հովհաննես Դրիմեցին՝ Սպահանի այժմյան եպիսկոպոսը, կաթողիկոսի հրամանով <ուղարկեց ինձ> 10 ռ. արծաթ դրամ, կաթողիկոսի, որ կուրացել և վատառողջության հետևանքով անգործունյա էր դարձել, և որը կատարվածի մասին շատ ուշ իմացավ՝ նույն Հովհաննեսի՝ իր քարտուղարի միջոցով։ Միայն նրա առաքինի հոգին ցավակցեց ինձ, միայն նրա հրեշտակային սիրտը օրհնությամբ բացվեց ինձ համար։ Նա ինձ իր մոտ կանչեց կես գիշերին, երբ վանքում ամենքը քնել էին խոր քնով։ Բուն նահապետական ժամանակների Աբրահամներին նմանվող այդ աստվածային ծերունու արտասուքն ու ձայնը տասնութ տարուց հետո, այսօր էլ թափանցում են մինչև սրտիս խորքը։ «Մոտեցի՛ր ինձ, իմ Ռափայել,— ասաց նա ինձ արդար Իսահակի ձայնով, մի այնպիսի ձայնով, որ այժմ էլ ցնցում է իմ ամբողջ էությունը,— մոտեցի՛ր ինձ, բարեպաշտ Աբովի սիրասուն զարմ. բարի է քո նպատակը և արգասավոր քո ուղին. բայց խոստացիր ինձ չմոռանալ հայրենիքդ և հայրենի եկեղեցիդ. ահա՛ իմ ողջագուրանքը, ահա՛ իմ օրհնությունը, ահա՛ և քո արձակման գիրը, որ հանում է քեզ ո՛չ թե քո եղբայրակիցների շարքից, ո՛չ թե իմ սրտից, այլ միայն ծառայությունից։ Եվ թո՛ղ ամենաբարձյալը օրհնի քո ուղին»,— արտասանեց ծերունին, դողդոջուն ձեռներով և հայրական սիրով գրկեց ինձ, համբուրեց, իր բարերար աջը տվեց համբուրելու, տվեց նաև արձակման թուղթը, և ես վեր կացա, հեռացա նրանից, որպեսզի նրա սո՛ւրբ, երանե՛լի հիշատակը հավիտյանս օրհնեմ։ Բայց, արդյոք, մոռացա՞ իմ ազգն ու եկեղեցին, թող ասի դարձյալ ազգը,

որը ճանաչում է ինձ արդեն 11 տարուց ի վեր՝ Եվրոպայից վերադառնալուցս հետո։

1829 թվականի դեկտեմբերի 5-ին, իմ անօգուտ կյանքի այդ հիշարժան տարվա դաժան ձմռանը, մառախուղի և ձյան տակ, բեկված հոգով, թողի և իմ հայրենիքը, և իմ ծնողներին, որոնք մինչև այժմ էլ ապրում են էջմիածնից 20 վերստ հեռու, և որոնց ես չէի կարող ո՛չ տեսնել, ո՛չ հրաժեշտ տալ, որպեսզի ականատես չլինեի նրանց մորմոքին ու արցունքին, թերևս նաև այն պատճառով, որ չլինի թե նրանց նկատմամբ տածած որդիական սիրուց, որ այսօր էլ այնպես ուժգին եռում է սրտիս մեջ, հետ կանգնեի մի անգամ արդեն իմ ընտրած ուղուց։ Արարատն ու Ալագյազը, մեր նախահայրերի այդ սրբությունները, այն ժամանակվա իմ արցունքների ու հառաչանքների և այժմյան՝ դեպի նրանք ունեցած իմ ակնածանքի ու նվիրվածության վկաներն են. բայց կան նաև այդ տեսարանների և ինձ հետ պատահած դեպքերի կենդանի վկաներ և՛ էջմիածնում, և՛ Թիֆլիսում. այստեղ իր գիտնականությամբ հայտնի արքեպիսկոպոս Հովհաննես Շահխաթունին, այնտեղ՝ գիմնազիայի հայոց լեզվի ուսուցիչ պարոն Արարատյանը. առաջինը՝ իմ պատանեկության տարիների բարեկամն ու ընկերը՝ Սարդարաբադից 8 վերստ հեռավորության վրա գտնվող Շահրիար գյուղից,— ուր այն ժամանակ ապրում էր նա իր ծնողների մոտ,— ջանք էր գործ դնում սրբելու իմ արտասուքը և հայրական հորդորներով հանգստացնելու ինձ. մյուսը՝ Թիֆլիսում, վախենալով կրոնավորներից, որոնց դպրոցում այն ժամանակ նա ուսուցիչ էր, ինձ մխիթարում և շատ անգամ կերակրում էր, երբ ես չորս անհույս, տանջալից ամիսների ընթացքում, հաճախ կարոտ էի հանապազօրյա հացի փշրանքի, որպեսզի հագեցնեմ քաղցս և տաքացնեմ ցրտից փայտացած մարմինս, մինչև որ Պարրոտի ավետաբեր նամակով բացվեր իմ կյանքի դրախտային առավոտը։ Ամբո՜ղջ աշխարհի հետ ես չեմ փոխի այդ նամակը։

Ճանապարհն անցնում էր Սարդարաբադի և Ալեքսանդրապոլի վրայով, և խստաշունչ ձմեռը թե՛ հոգեկան և թե՛ ֆիզիկական սարսափ էր ազդում, ձմեռ, որ այդ քաղաքում և մեր լեռներում վատթար ու ավելի դաժան է, քան Ռուսաստանում։ Իմ ուղեկիցն էր մի շտաբային բժիշկ Տ<ենեկով>, որին դրանից առաջ էլ ոչ պակաս ցույց եմ տվել բարեկամական օգնություն՝ նրա հետ իմ երեքամյա ծանոթության ընթացքում՝ թե՛ էջմիածնում, թե՛ Երևանում և թե՛ Քանաքեռում՝ իմ հայրենի գյուղում, ուր այժմ էլ ամառը փոխադրվում է Երևանի զինվորական հիվանդանոցը։ Այդ նույն մարդը, որի մոտ ժանտախտով բռնված Սարդարաբադում քնեցի և ժանտախտով վարակված, դեղը վերցնելով, դուրս եկա, միայն թե իմ բա-

թերար ծերունուն փրկեմ դաժան աչքացավից, այդ մարդն ահա՛ տանջեց, կողոպտեց ինձ, հայհոյեց և անարգեց բոլոր սրբությունները Հայաստանի, որից նա հավիտյան բաժանվում էր, և որտեղ եղած ամբողջ ժամանակամիջոցում տեսել էր միայն բարիք, միայն բարեկամություն, և որտեղից վռնդվել էր իր վատ վարքի և բնավորության համար։ Միայն կաթողիկոսը և էջմիածնի վանականները իմ՝ իրենց միակ թարգմանի ներկայությամբ, նրան նվիրեցին մի քանի թանկագին մատանիներ, ծխատուփեր, թաշկինակներ և դիպակ։ Եվ այդ մարդը, որ նվերներն ստանալիս, կաթողիկոսի և վանականների առջև արտասուք էր թափում, իմ ներկայությամբ հայհոյեց իմ հայրենիքը։ Եվ այդ մարդը կողոպտեց ինձ, հափշտակելով խեղճ, անփորձ պատանուց,— ինչպիսին էի այն ժամանակ,— 10 ռուբլի արծաթ դրամը, որ, իր քարտուղարի միջոցով, իբրև ողորմության պես մի բան, տվել էր ինձ կաթողիկոսը, և որի մասին ես արդեն ասել եմ. հափշտակեց և մուշտակս՝ ամենաթանկագին հիշատակն այն սարսափելի օրերի։ Էլ ի՞նչ ասեմ 74 օրվա կարանտինի մասին, որի մեջ մեզ պահեցին այն ժամանակվա քանդված դաժան Գյումրում՝ այժմյան կենդանացած Ալեքսանդրապոլում, ուր թուրքական և պարսկական պատերազմների ժամանակներից մնացած 10 տարվա զինվորական պաքսիմաթն էլ երկնային բարիք էինք համարում, և որտեղ բոլորս էլ կարող էինք սովի և սառնամանիքի զոհ դառնալ, եթե մեծ պաշարով, տաք հագուստով և բարի ու կարեկից սրտով չհայտնվեր Թուրքիայի հայերից մի վաճառական։ Եվ այդ մարդը, որ <1 անընթ.> հայի միջոցով փրկվեց դարձյալ՝ անիծում էր Հայաստանը. Էլ ի՞նչ կարելի է սպասել ուրիշներից, ինչո՞ւ վիրավորվենք մի քանի անփորձ մարդկանց գրախոսություններից, որոնք հայերին ներկայացնում էին և ներկայացնում են այնպիսի ձևով, ինչպիսին աշխարհիս երեսին ո՛չ մի ազգ ո՛չ տեսել, ո՛չ էլ լսել է։

Վերջապես, խնդրում եմ մեծահոգի ներողամտությունն իմ ընթերցողների, որոնց ուզում էի ծանոթացնել ո՛չ թե իմ աննշան կյանքի, այլ անցյալի կարևոր հիշողությունների հետ։ Այդ ճանապարհը դարձյալ ինձ վիճակվեց անցնել երկրամասի բարի բարեկամի և կառավարչի հետ, տարվա ամենալավ եղանակին, 20 տարի անց այն օրվանից, երբ ես արցունքով էի թրջում ամեն մի քարը, ամեն մի անկյունը, որպեսզի հասնեմ իմ անմահ բարերար, բարեկամ և դաստիարակ Պարրոտին, որին գտա Դորպատում 6 ամսվա տառապանքներից և 2 ամսվա ճանապարհորդությունից հետո։ Պարրոտը, որպես լյութերադավան, ինձ, արդեն 24-ամյա կիսավանականիս եթե ոչ ուղղափառ, ապա ուղղահավատ քրիստոնյայիս՝ աստծու, թագավորի, ժողովրդի և կրոնի նկատմամբ ներշնչեց ամենամա-

քուր, ամենաազնիվ սեր, և ես նրան աստծու դատաստանի առաջ էլ կանվանեմ սո՛ւրբ, հա՛յր և հրեշտա՛կ, որի նման և ո՛չ մեկին, ո՛չ մեկին չեմ հանդիպել երկրիս երեսին՝ եթե նույնիսկ դրա համար եկեղեցին նզովի և ամբողջ աշխարհը դատապարտի ինձ որպես ոճրագործի։

Հատված 4

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻՋՈՎ ԴԵՊԻ ՍԱՐԴԱՐԱԲԱԴԻ ՋՐԱՆՑՔԸ

Այսպիսի, ինձ համար այնքա՜ն արտասովոր, այնքա՜ն հրապուրիչ հետաքրքրականություն ունեցող զգացմունքներով և հիշողություններով ալեկոծված, ես սրտի մորմոքով արդեն սպասում էի փոստակառքի ավետաբեր զանգակին, երբ հանկարծ այս ուղևորության սկզբնապատճառը՝ Ն<իկիֆոր> Բ<լավատսկին>, արևածագին, իր գրասենյակի երկու ուրիշ երիտասարդ պաշտոնյաների հետ միասին մոտեցավ ուսումնարանի շենքին։ Իմ սեղանի վրա առավոտից հարմոնիկը նվագում էր արդեն, և օտարերկրացի հյուրս՝ մի գերմանացի բժիշկ, որ ծառայում էր Թուրքիայում՝ Բայազետի փաշայի մոտ,— վաղուց արդեն զրկված իրեն սիրելի, եվրոպական հարմարություններից,— ցնծությամբ և օրհնությամբ մեզ բարի երթ մաղթեց և ճանապարհ դրեց՝ նախանձելով մինչև իսկ Երևանի՝ ոչ-նվազ համեստ ու միօրինակ մեր կյանքին։

Հոկտեմբերի 21-ին, առավոտյան ժամը 8-ին կառքը շարժվեց. և զանգակը՝ Վալդայի պարգևը, իր վհատ ձայնով, երկնային ներդաշնակությամբ ղողանջում էր խաղաղ եղանակին, էջմիածնի հարթություններում։ Երկու ժամ ուղևորությունից հետո մենք արդեն կանգ առանք օրվա այդ ժամին միանգամայն անկյանք վանքի դարբասների առաջ։ Թե յուրաքանչյուր անգամ իմ երևալն էջմիածնում ի՛նչ զգացմունքներ է առաջացնում իմ նախկին ընկերների բարի սրտերում,— այն էլ միշտ նրանց վրա ծանրացող հյուրերի հետ,— իմ ընկերների, որոնցից մի քանիսն արդեն եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ են,— կարելի է դատել այն փաստից, որ մի անգամ, գեներալ Նեյդգարտի ժամանակ, Սինոդը վերջինիս պաշտոնական բողոք ներկայացրեց իմ դեմ, խնդրելով՝ ինձ Երևանից մի այլ վայր փոխադրել, որպեսզի իրենք ազատվեն օտարերկրացիների անընդհատ այցելություններից, որոնք իմ միջոցով թափանցում էին նրանց գաղտնիքների մեջ և ապա անվանարկում՝ իմ կողմից լքված ազգի և վանքի անունն ու պատիվը։ Իբր ես, «ապրելով փոստային ճանապարհի խաչմերուկի վրա, հատուկ սուր-

հանդակներ եմ պահում այն նպատակով, որպեսզի որսամ յուրաքանչյուր օտարերկրացու. մինչև անգամ Նոյան տապանը հանդիստ չմնաց իմ հանդուգն ոտնձգություններից, իրենք, այսքան մոտիկ լինելով, էլ ի՞նչպես կարող են հանգիստ ունենալ»։ Ահա թե ի՛նչ էր գրված այն թղթում, որը, իհարկե, ինձ համար մնաց առանց հետևանքների, որովհետև նման հանձնարարությունները ես կատարում էի վերադաս իշխանության հատուկ կարգադրությամբ։ Չնայած դրան, այնուամենայնիվ, էջմիածնի գյուղացիները անցյալ տարի գողացան իմ նոր և ոչ շատ էժան շինելը՝ նույն այդ տարին դեպի Արարատի ստորոտները կազմակերպած արշավի ժամանակ մեր վերցրած ձիերի համար չվճարած փողի դիմաց, որ պայմանավորվել էր վճարել պատվարժան միլիոնատեր պարոն Սեմուրը։ Ահա՛ և իմ՝ ո՛չ-այնքան նվազ կարևոր աշխատանքների ամբողջ պարգևը։ Իսկ թե այդ այցելությունների շնորհիվ ի՞նչ են շահում թե՛ ազգը, թե՛ եկեղեցին, այդ մասին դատել կարող է նա, ով կարդում է արտասահմանի թերթերը։ Իսկ իմ զգացումների և հիշողությունների մասին ես վերևում արդեն ասացի։

Սուրբ հայրերի օրհնությամբ զոտեպնդված, հրավիրելով վերոհիշյալ արքեպիսկոպոս Հ<ովհաննես> Շահխաթունուն ուղեկցելու մեզ, մենք եկանք Սարդարաբադի գավառամասի պետի տունը, որտեղ և ճաշեցինք, և որտեղ ես հաճությամբ լսեցի այն հանրօգուտ խորհուրդներն ու հրահանգները, որ գավառի հոգատար կառավարիչը տալիս էր իր գալստյան առթիվ հավաքված ստորադրյալներին և հպատակ բնակիչներին։

Եվրոպացին, հատկապես կիրթ միջավայրում ծնված և դաստիարակված եվրոպացին, կա՛մ նորից պետք է ուսումնասիրի ասիական ժողովուրդների բարքերն ու մտածելակերպը՝ հաջողությամբ նրանց կառավարելու համար, կամ՝ ավելի կփչացնի նրանց, կվնասի իրեն և երկրի շահերին, եթե նա սկսի ըստ իրեն և ըստ եվրոպացիների ընդհանուր ըմբռնումների դատել և վարվել Ասիայում, հատկապես՝ Անդրկովկասյան երկրամասում, ուր յուրաքանչյուր գավառ և, նույնիսկ, յուրաքանչյուր գավառամաս ունի իր խիստ առանձնահատուկ բնույթը, թե՛ ըստ կլիմայի, թե՛ ըստ ազգաբնակության, մի բան, որ Եվրոպայում և, նույնիսկ, Ասիայի շատ վայրերում հազվադեպ է, ուր օրենքները, կրոնը և քաղաքացիական կարգը միևնույն ժողովրդի ձեռքին են գտնվում։ Հակառակ դրան, մեր Անդրկովկասը, որպես աշխարհի սկզբից մինչև մեր ժամանակները եղած և այժմ էլ գոյություն ունեցող բոլոր ժողովուրդների հավաքատեղի, որը մինչև ռուսական տիրապետությունը չուներ ո՛չ ընդհանուր կրոն, ո՛չ ընդհանուր քաղաքականություն, հետևաբար և՝ ո՛չ ընդհանուր շահ, դեռ ևս երկար ժամանակ կմնա իբրև ամենադժվար, ամենախորամիտ առեղծվածը՝ նույնիսկ ամենախե-

լացի և ամենափորձառու քաղաքագետի համար։ Սակայն, այդուհանդերձ, փորձով ապացուցված է, որ Անդրկովկասի բնակիչը՝ քրիստոնյա լինի, թե մահմեդական, ընտելացած լինելով, կամ, այսպես ասած՝ դուրս եկած լինելով մահակի կամ բռնության լծի տակից, դեռևս ոչ մի՛ կերպ ի վիճակի չէ ըմբռնելու և զգալու փաղաքշանքները և սոսկ մեղմ միջոցառումները, որ հասկանալի են միայն բարձր զգացմունքներ և գաղափարներ ունեցող մարդուն։ Թակի՛ր ասխացուն՝ արյունլվա անելու աստիճան, բայց շոյի՛ր-փաղաքշի՛ր՝ իր հարևանների և համաքաղաքացիների աչքի առաջ, դրանով դու պատվով ու խղճի մտոք՝ կերջանկացնես նրան։ Իր թույլ տված հանցանքի համար նույն վայրկյանին կախի՛ր, բայց մի՛ չարչարի նրան քո երկարատև դատավարությամբ, հարցուփորձերով և օրենքները փաստարկելով։ Զգա՛լ տուր, որ նրա կյանքն ու մահը քեզանից է կախված. որ նա հոգով ու մարմնով քոնն է, քո ստրուկը. որպես մանկան կամ դպրոցականի՝ ճիպոտահարի՛ր նրան, խփի՛ր գարշապարին, միայն թե նրան մի՛ ասի՝ «վատը»։ Այդպիսին է երկիրը, այդպիսի՛ն է ժողովուրդը, ի՞նչ արած։ Մահմեդականների մզկիթներում կարգիր փորձված, բարեխիղճ ռուս ուսուցիչներ՝ պատանի սերնդին ներշնչելու այլ զգացմունքներ, այլ մտքեր, և ահա դրանով գտնված է առաջիկայում նրանց լավագույն և երջանիկ կերպով կառավարելու թալիսմանը։

Քանի դեռ մոլլաներն ու տերտերները կիշխեն աճող սերնդի մտքին ու սրտին, մենք դեռևս և միշտ կունենանք մեր ուժեղ և անդրդվելի հակոտնյաները։ Այս մասին այսքան համարձակ և անկեղծորեն եմ ասում, որովհետև ինքս ասիացի եմ։ Բարերար Ռուսաստանը, սակայն, ժողովուրդների ցանկության և սովորություններին հակառակ ոչ մի բան չի կամենում ձեռնարկել։ Միապետություն, խաղաղություն, և կրոնի ու ազգային,— թեև հնացած, քարացած,— սովորությունների և ապրելակերպի ազատություն, ահա՛ Ռուսաստանի հայրական միջոցառումներն ու որոշումները։ Կազանի և Ղրիմի թաթարները՝ Ռուսաստանի այդ դաժան ավերիչները, այժմ էլ հագնում են իրենց մոնղոլական բաճկոնները, այժմ էլ խոսում են իրենց մոնղոլա-թաթարական աղճատված բարբառներով. բայց նրանք սյուննիներ են, հետևաբար այնքան մոլեռանդ չեն, ինչպես շիաները, և ապրում են կայսրության ներսում, իսկ մեր մահմեդականները մեծ մասամբ Ալիի աղանդին են պատկանում և ապրում են Պարսկաստանին մոտ՝ մշտապես կապված լինելով վերջինիս հետ. ահա թե ինչո՛ւմն է բանը։ Թողնենք, սակայն, մեր քաղաքագիտությունը։

Ճանաչելով պ. Բ<լավատսկու> խիստ բնավորությունը, ես զարմա-

նում էի, թե նա իր վստահությունը վայելող ստորադրյալների հետ խոսելիս, ինչքա՜ն սիրալիր, փաղաքշական և աշխույժ է։ Երեկոյան, հողմի և անձրևի տակ հասանք պարոն Հովհան-Սուլթանի՝ վերոհիշյալ արքեպիսկոպոս Շահխաթունու եղբոր տունը, նրա, որ իր մի դիմումի մեջ իզուր չէր իրեն անվանել «Մարգարաբաղի կալվածատեր»։ Նա ապրում էր իր հայրենի Շահրիար գյուղում՝ Ջեյվայից 12 վերստ հեռավորության վրա, ուր բնակվում էր գավառամասի պետը։

Ընթերցողները թո՛ղ պատկերացնեն, թե ի՜նչպիսի ակնածանքով էի ես պատրաստվում մտնել ինձ համար նվիրական այն հարկի տակ, ուր վերը հիշված երեկոյան, խելացի ու խրատատու հայրը և եկեղեցու պաշտոնյան իր օրհնությամբ սրբեց և չորացրեց հարազատներից զրկված և անսփոփ պատանու արցունքները։ Տանտերը տանը չէր, և նրա եղբայր արքեպիսկոպոսը ճանապարհին պետք է միանար մեզ։ Տունն այժմ բոլորովին այլ տեսք ուներ, քան այն ժամանակ, 18 տարի առաջ։ Դեռ բակը չմտած մեզ դիմավորեցին տանտիրոջ մարդիկ. ընդունելությունը, պատրաստակամությունը, տնտեսության կազմակերպվածությունը, ամեն ինչում մաքրությունը, կարգ ու կանոնը, տան կահավորության ճաշակավորությունը և նույնիսկ շքեղությունը, հատկապես սրտաբաց հյուրընկալությունը, և այդ բոլորը՝ ամբողջ քաղաքակիրթ աշխարհից հեռու, բարբարոսական լծի տակից դեռ նոր ազատված գյուղական բնակչի կենցաղում՝ թերևս առաջին երևույթն է ամբողջ Անդրկովկասյան երկրամասում։ Ես եղել եմ նաև Վրաստանի գյուղերում, ուր տիրակալում են պարոնայք կալվածատերերը, իշխաններն ու ազնվականները, և հանդիմանելու համար չէ, եթե ասեմ, որ բացի գինուց և օղուց, չոր հացից և,— այս արդեն շատ հազվագյուտ բան է,— չորացած ձկներից և կապլուններից (աքաղաղ),— եվրոպական կյանքի այլ հարմարությունների մասին չի էլ կարող խոսք լինել,— նրանց մոտ հազիվ թե գտնվի մի այլ բան, որի կարիքը միայն եվրոպացին չէ՛, որ զգում է։ Բացառություններ, իհարկե, ամեն տեղ էլ կան, այդ պարոններից շատերն էլ իրենց կյանքի մեծ մասն անց են կացրել եվրոպական միջավայրում,— ուր մեր տան տերը լինելու առիթ քիչ է ունեցել,— բայց թեկուզ կես գիշերին արի նրա տունը և այն էլ 20—30 ուղեկիցներով՝ նրա մոտ դու կգտնես այն ամենը, ինչ սիրտդ ուզի, նույնիսկ շամպայն ու պորտեր, առևտրի առարկա դարձած այդ թույնը՝ եվրոպական մեքենաների և արվեստագործության, որոնք (վերջինները) չնայած ամենուրեք առատ են, բայց Ասիայի դաշտերում մեծ մասամբ բացակայում են՝ բնակիչների հետամնացության պատճառով։ Այգեգործությունը, անասնապահությունը, հողագործությունը պատվարժան Հովհան-Սուլթանի փորձառու և հոգատար

ձեռքի տակ շատ լավ ծաղկում են։ Նրա ձիերը ընտիր ցեղից են, Երևանի այգիների խաղողից իր, տանտիրոջ պատրաստած գինին, նրա հյութը, թերևս, ամենաթունդը և ամենաքաղցրն է ամբողջ Անդրկովկասյան երկրամասում և այժմ էլ գլխապտույտ և գլխացավ է առաջացնում, և, ըստ եվրոպացիների նուրբ, ընտիր, երբեմն նաև կեղծ ճաշակի՝ ամենալավն է, ամենագերազանցը թե՛ համով և թե՛ հոտով։ Հովհան-Սուլթանը հիանալի տնտեսվար է և սրտաբաց ու ազնվահոգի մարդ՝ բառի իսկական իմաստով։ Ո՛չ միայն երկրամասի կառավարիչը, ո՛չ միայն ես, նրա հայրենակիցը, այլև ամեն ոք, ով նրա մոտ եղել է,— իսկ նրա մոտ եղել են և լինում են շատ շատերը,— այդ բանը կվկայեն։ Հայն էլ կարող է ապրել և հյուրասիրել առանց որևէ ակնկալության, և մեզանում միայն նա՝ Հովհան-Սուլթանը չէ, որ կարող է հպարտանալ այդ առաքինությամբ։ Գյուղական տանուտերերից շատերի մոտ դուք արդեն կարող եք գտնել թե՛ ինքնաեռ, թե՛ մահճակալ, և դա, այսքան կարճ ժամանակամիջոցի համար, շատ բան է նշանակում, իսկ Դավալուի Մինաս-Սուլթանին, կարծեմ, Պետերբուրգում էլ գիտեն։

Ի դեպ, մի քանի խոսք նաև Երևանի գինու մասին։ Ինչ բան որ հեռվից է ստացվում, թանկ է և դժվարությամբ է ձեռք բերվում, դա և՛ լավ է, և՛ հաճելի յուրաքանչյուրին, հատկապես,— խնդրում եմ ներեք ինձ անկեղծությանս համար,— բարի եվրոպացուն։ Հանգուցյալ Սումբատովը, որ առաջներում Երևանի գավառապետն էր, իմ Թիֆլիսում եղած ժամանակ, բերեց մի քանի շիշ Երևանի գինի՝ պատրաստված ամենահասարակ և սովորական եղանակով, և երկրամասի ամենաառաջնակարգ աստիճանավորները, որոնց համտեսի համար նվիրեց,— չէին ցանկանում հավատալ, որ դա բոլորից՝ թույնի նման առողջության համար՝ վատահամբավված Երևանի արտադրությունն է։ Բարոն Ռոզենը, նույն քաղաքում եղած ժամանակ, հյուրասիրվելով այդ բարիքով,— բայց արդեն պատրաստված հմուտ եվրոպացու՝ հիվանդանոցի նախկին վերատեսուչ պարոն Ն.-ի ձեռքով որպես շամպայն, չէր կարող համոզվել,— ինչպես ականատեսներն են ասում,— թե այդ հրաշքը Երևանի ծնունդ է։ Կազակական մայոր Կ<իլն>[?] էլ անցյալ տարի, ամբողջ երկրամասում, բոլորի առջև դրանով այնպես էր պարծենում, որ շատերը նույնիսկ վիրավորվեցին հատկապես այն բանի համար, որ նրանց քիչ էր նվիրել կամ բոլորովին բաժին չէր հանել իր գինեգործության արդյունքից, որը բնավ էլ վատ չէ՝ Դոնի, բոլորի ճաշակին դուր եկող, լավագույն գինուց։ Ես որ իմ ծնված օրից չգիտեմ և չեմ տեսել գինեգործության մի այլ ձև, քան գինի ստանալու մեր պապենական, ասիական ձևը,— ոչ-պակաս հաջողությամբ այնպիսի գինի ստացա, որ 1843 թ. Թիֆ-

լիսից ինձ մոտ հյուր եկած հույժ կրթված երկու եվրոպացիների՝ պարոնայք Ռ<ոզենին> և Բ<ոդենշտեդին> զարմանք պատճառեց։

«Գործի հախից գործավորը կգա». վա՛րկ տուր արդյունաբերությանը, սովորեցրու երիտասարդներին և ոչ թե հին ասուպապերի սովորություններին մեջ քարացած մարդկանց. մի՛ արհամարհի այն ամենը, ինչ որ ձեռքիդ ունես և էժան է. ցո՛ւյց տուր լավ օրինակ, և գործը հաջող կընթանա։ Եթե պարոն Բ<լավատսկին> ունենար այդ նպատակի համար հիմնված պալատի միջոցների և հնարավորությունների տասներորդ և քսաներորդ մասը, հրաշքներ կգործեր իրեն վստահված գավառում, որն այնքան լիուլի օժտված է բնությունից երկրային բոլոր բարիքներով։ Այժմ էլ, իր ունեցած սահմանափակ միջոցներով, նա արդեն շատերին ներշնչել է բրնձի, բամբակի ամերիկյան տեսակի արտադրանքով զբաղվելու միտքը... Հենց նրա միջնորդությամբ շուտով արդեն երեք հոգի կուղարկվեն Նուխու մետաքսամանական ընկերության դպրոցը՝ ուսումնասիրելու, և արդյունաբերության այդ, թերևս, ամենակարևոր ճյուղը ժամանակին Երևանի գավառում ևս տարածելու համար, որը ոչ նվազ հայտնի է, նաև,— ճիշտ է, միայն առտնին կարիքների համար՝ տեղի կանանց պատրաստած,— մետաքսով։ Վերցնենք միայն հիշյալ Հովհան-Սուլթանին և Խալիլ-բեգին, որոնք, <Բլավատսկու> շնորհիվ հասել են նրա առաջադրած հանրօգուտ նպատակին և զբաղվում են զանազան մթերքների արտադրությամբ, իրենց տնտեսության կատարելագործմամբ. տե՛ս թե ինչպես է նա փայփայում նրանց, խրախուսում և պաշտպանում. նրան միա՛յն ճանապարհ տուր, և նա այդպիսի հազարավոր ձեռքեր կգտնի։ Արդեն մի քանիսը թթենիների այգիներ ունեն, և նրանց շարքում իշխանության հատուկ ուշադրությանն է արժանացել պ. Տիգրանովը՝ ավագ եղբայրը Թիֆլիսի քաղաքային հիվանդանոցի բժիշկ Հովհաննիսյանի, որը գավառում ոչ պակաս հայտնի է նաև որպես շատ լավ տնտեսավար։ Հենց նա էր, որ գտավ երկու երիտասարդի՝ իր ազգականներից՝ վերոհիշյալ հաստատությունն ուղարկելու նպատակով, մի բան , որ, իբրև օրինակ ուրիշների համար, արժանի է խրախուսանքի։

Ռուսաստանի շատ նահանգներում, ամենօրյա հացի կարիքն ունենալով, այժմ էլ համառորեն չեն զբաղվում ներկա դարում այնքան բարեբեր կարտոֆիլի մշակությամբ։ Նույնիսկ քաղաքակրթված Ֆրանսիայում, կարտոֆիլի մշակումն ու տարածումն իր ժամանակին, մի՞թե մեծամեծ ծախսեր ու ջանքեր չի խլել, իսկ մեզ մոտ, շատ վայրերում նույնպես կարտոֆիլի մշակությամբ զբաղվում են, սակայն առանց այդքան ծախսերի ու ջանքերի, միայն հասկանալի է, թե ինչո՛ւ քիչ. փա՛ռք աստծու, այլ մնդա-

մթերքների ու մի կարիք չունենք։ Եթե մեզանում լիներ երկրագործական դպրոց և փորձված լանդ-վիրտ*, այն ժամանակ ֆրանսիական ոսկիները նույնպիսի առատությամբ կհոսեին մեր մթերքների դիմաց, ինչպիսի առատությամբ այժմ դրանք հոսում են մեր ազգականների համար։

Հատված 5

ՍԱՐԴԱՐԱԲԱԴԻ ՋՐԱՆՑՔԸ

Հետևյալ առավոտյան մեր առաջին մտահոգությունը եղավ եղանակը, որ մեզանում, աշնանը, այնքան փոփոխական է. տեղ-տեղ մասնակիորեն մռայլվող երկինքը համեստորեն կանխագուշակում էր այն տեսարանը, որին շատերը, իրենց ամբողջ կյանքում, դեռ չէին հանդիպել։ «Кавказ» թերթի ընթերցողները, կարծում եմ, շատ լավ են հիշում, որ մեզանում՝ Երևանի գավառում, արդեն անցյալ տարվանից, Կովկասի պարոն փոխարքայի թույլտվությամբ և Երևանի գավառապետի միջնորդությամբ անց են կացվում և կարգավորվում են հին առուներն ու ջրանցքները, որոնք ամբողջ Անդրկովկասյան երկրամասում և ոչ մի տեղ այնքան անհրաժեշտ չեն, որքան այդ գավառում։ Շատերը, թերևս, դատելով այդ կարգի գործերի ընդհանուր ընթացքից, այժմ էլ տարակուսանքի մեջ են, թե այդ, իր տեսակում հսկայական ձեռնարկության նախաձեռնողներն ո՞ւմ շահն են նկատի ունեցել՝ բնակիչների՞, թե արտադրողների։ Անկեղծորեն ասած՝ ես էլ ապրելով այդքան մոտ՝ Երևանում, թե՛ բնակիչներից, թե՛ այդ գործի մասնակիցներից բազմիցս լսելով ջրանցքների մասին, այնուամենայնիվ, բնավ չէի հավատում, թե այստեղ օգուտը ոչ այնքան ընդհանուր է, որքան մասնավոր։ Խոստովանում եմ, որ ինձ համար նույնիսկ շատ տհաճ էր, երբ պարոն Բ<լավատսկին>, հեռանալով գլխավոր, իսկ ինձ համար այնքան նվիրական ուղիղ ճանապարհից, հարևանցիորեն ակնարկեց «այս ուղևորության ժամանակ նաև Սարդարաբադի ջրանցքը տեսնելու» մտադրության մասին, ջրանցքը, որն այդ ժամանակ մաքրում էին, իսկ տեղ-տեղ էլ նոր էին փորում։ Այդ աշխատանքները հանձնարարված են Երևանի անտառապետական կորպուսի անտառապետ, շտաբի կապիտան պարոն Զ<երնյավսկուն>, մի մարդու, որը ինչպես մասնագիտական գիտելիքներով և փորձառությամբ, այնպես էլ նման աշխատանքների ընթացքում ցույց տված բարեխղճությամբ, հաշվենկատությամբ և գործնականությամբ մեզանում արդեն վաղուց է հայտնի, հենց նույն այդ ջրանցքը անցկացնելու ժամանակ, աշխա-

* Landwirt, գերմաներեն՝ գյուղական տնտեսության տեր։

տանքները հեշտացնելու համար նրան օգնական էր տրված նաև Հովհան-Սուլթանը։ Այդ հսկայական, բայց նույնիսկ Երևանում էլ քիչ ծանոթ, աշխատանքը կատարվում էր մեր գիշերային օթևանից 12 վերստ հեռավորության վրա։

Ինչպես ամբողջ Արաքսի հովտում, այնպես էլ այստեղ, ճանապարհն անցնում էր դաշտերի և ամայի վայրերի միջով. Էջմիածնից և Սարդարաբադի բերդից սկսած մինչև Ալեքսանդրապոլ և Արագած լեռան շրջակայքը, ներառյալ նաև Արփաչայի երկու ափերը, 10.000 քառակուսի վերստից ոչ պակաս տարածություն բռնող տափաստանները հոգնեցնում են ոչնչով չուրախացող, ոչնչով չհրապուրվող ուղևորի քնաթաթախ աչքերը։ Տեղ-տեղ, մերթ սևին են տալիս, մերթ ծխում են քրդական վրանները, որոնք սարսափ են ազդում թե՛ տեսքով, թե՛ կենցաղով վայրենի իրենց բնակիչներով, որ գիշեր-ցերեկ ընկած են միայն մի բանի՝ ավարի հետևից։ Ձեզ սպառնում են միայն բարձրաբերձ լեռները, որոնք ձգվում են հեռվում՝ Ռուսաստանի և Թուրքիայի սահմանի վրա և Երևանի ավազանում, որպես երկնահաս պարիսպներ և որոնց շատերի գագաթները պսակված են հավերժական ձյունով։ Հին-հին դարերից եկող վեհապանծ Արաքսը, որ Սատանի կիրճում (այսպես է կոչվում, որովհետև նրան շրջապատող լեռները սև ու մութ տեսք ունեն), Օրդուբադից ցած մոլեգնում է, դժոխային քրքիջ արձակում, իսկ այստեղ, Երևանի ամբողջ գավառում, նույնիսկ վարարելիս, սողում է համարյա անմրմունջ, մեռած, և անհամբերությունից սիրտը թունդ ելած հնությունների սիրահարը կանգնելով գետի ափին, հազիվ է իր աչքերին հավատում, որ այդ գետը վկա է եղել այնքան հինավուրց, այնքան կարևոր քաղաքական հեղաշրջումների և իրադարձությունների, և որը, աշխարհի սկզբից մինչև մեր ժամանակները, հազարավոր դարերի ընթացքում ներկվել է ժողովուրդների արյունով։

Միայն Կարա-Կալան (սև բերդ), հին Երվանդակերտը (Երվանդաբուրգ), որը կառուցված է հայ թագավոր Երվանդ <II>-ի ձեռքով <I> դարում Ք. հ., և որը պարսիկների տիրապետության ժամանակ դարձել էր ավազակաբույն՝ շնորհիվ բազմաթիվ խոր ու ընդարձակ քարանձավների, անթիվ կիրճերի և անմատչելի լեռների, որ շրջապատում էին նրան անծայր անապատի մեջ, ուր գալիս էին այդտեղից 16 վերստ հեռավորության վրա գտնվող Կողբի աղահանքերից միմիայն աղ տանելու,— միայն այդ Կարա-Կալան իր մռայլ ու գեղեցիկ աշտարակներով ու պարիսպներով ստիպում է ձեզ մտքով խորասուզվել հին ու հեռավոր ժամանակների մեջ և ապա հետզհետե մտովին տեղափոխվել Արաքսի վերին հովիտը, Արաքսի, որ այստեղից կրկին ընդունում է իր ուրույն տեսքը՝ հսկայական ափերի

մեջ, որոնք կազմված են սև-գորշ բազալտից ու կարմրավուն, ծակոտկեն փրփրաքարից, և որոնք կազմում են, այսպես ասած, մի այլ Սատանի կիրճ, որ տարածվում է մինչև հեռավոր Կաղզվանի լեռները՝ Կարսի փաշայության մեջ, ուր նա սկիզբ է առնում։

Բավական է մի փորձառու հայացք այդ դարավոր լեռների և կառուցումների բնական, ինչպես և արվեստական բնույթի վրա, որպեսզի բավարար հասկացողություն կազմվի հայ թագավորների ապրած ժամանակի ոգու մասին, որ տարբերվում և նշանավորվում է ո՛չ այնքան նվաճումներով և իրենց սահմանների ընդարձակումով, որքան իրենց ունեցածն ամրացնելով, և խելացի կերպով կառավարելով։ Հայաստանի բոլոր քաղաքները, բացառությամբ Վաղարշապատի և Դվինի, կառուցված են բարեբեր դաշտերով շրջապատված ռոմանտիկական ժայռերի վրա և գետերի ափերին։ Ով տեսել է Լոռին, Անին, Բաշ-Գառնին, Երվանդակերտը, Երվանդաշատը՝ երկար ժամանակ մնում է անորոշության մեջ՝ հիանա՞լ նրանց դիրքով, թե՞ նրանց զարդարող կառուցումների վեհությամբ և գեղարվեստական կատարելությամբ։ Նրանցից շատերը գոյություն ունեն արդեն հեթանոսության ժամանակներից և, այնուամենայնիվ, կարող են դասվել նորագույն ճարտարապետության լավագույն գործերի շարքը։ Նույն բնույթն են կրում նաև այդ ժողովրդի վանքերը։

Խոսելով Երվանդակերտի մասին, որը մեր այժմյան ուղևորության մերձավորագույն նպատակակետն է, Մովսես Խորենացին՝ հայ պատմագիրների հայրը, իր «Պատմության» II գրքի 39-րդ հատվածում այն անվանում է «չքնաղ մայրաքաղաք» և կամենալով առավել ճշգրիտ ու կենդանի բնութագրել՝ ըստ դիրքի ու բարեկարգության նմանեցնում է նրան մարդկային դեմքի, «Լուսաւոր որպես ական բիբ: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ վբբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ, իբր զարտևանաց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ։ Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն։ Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիւն նշանակէ շրթունս»: Այդ քաղաքը, որ հետագայում կոչվեց Մար-Մետ, նվաճվեց պարսիկների կողմից և ապա կրկին անցավ հայ թագավորների ձեռքը։ Այդ քաղաքից 10 վերստ հեռավորության վրա, Արաքսի աջ ափին և Արփաչայի գետաբերանի դեմ ու դեմը գտնվում են ավերակները առավել հնագույն Երվանդաշատ քաղաքի. որ կառուցել է նույն թագավորը որպես իր աթոռանիստը և որը, ըստ պատմիչ Բյուզանդի (դպր. IV, հատվ. 55), ունեցել է մոտ 100,000 բնակիչ։ Երվան-

դը շրջապատեց քաղաքը հսկայական պարիսպներով, որոնց ներսը գտնըվում էր միջնաբերդը՝ երկաթյա դարբասներով և նույնպիսի, արտակարգ մեծության, կրկնակի եղպաններով։ Քաղաքի ներքին մասում փորված էր մի վիթխարի ավազան, որի մեջ պաշարման ժամանակ Արաքսից ջուր էին բաց թողնում։

Կարա-Կալան կամ Երվանդակերտը Երևանի Հուսեին-խան սարդարի ժամանակներից հայտնի է նաև նրանով, որ հենց այստեղ է ապրել իր խիղախությամբ և քաջությամբ հայտնի Զաման-խանը, որը մի անգամ, սարդարի մոտ զրույցի ընթացքում գյուղացիների վերաբերյալ ծագած վեճի ժամանակ, արիությամբ և հերոսական սխրագործություններով ո՛չ պակաս հայտնի քուրդ ցեղապետ Սուլեյման-աղայի՝ իր հարևանին, անվանել էր «էշ-քուրդ, որ միայն զռալ գիտե»։—«Քո կնոջ վարտիքը թող իմ գլխին ապարոշ լինի, եթե ես ներեմ այդ վիրավորանքը»,— պատասխանել էր կատաղած քուրդը՝ գործածելով այդ արտահայտությունը, ամենավիրավորականը, որով իրեն կարող է անպատվել միայն ասիացին։ Մի շաբաթ հետո իր բոլոր քրդերի հետ միասին նա անցավ Թուրքիա, և չնայած սարդարի հնարավոր բոլոր նախազգուշացումներին,— սարդարի, որ նրան գազազած արջ էր անվանել,— մի անգամ լուսաբացին հարձակվեց իրեն վիրավորանք հասցնողի վրա, ջարդեց ու ցրիվ տվեց նրա զորքը, և իր քրդերից մեկի ձեռքով կտրված նրա գլուխը շուռումուռ տալով, երկար կրկնում էր. «էշ քրդի ձայնը ա՛յ թե ինչպես կարող է շշմեցնել իր անհամեստ ունկնդիրներին»։

Դեպի այստեղ, դեպի պատմականորեն նշանավոր, տեսքով վայրի այս հովիտը, որտեղից սկիզբն է առնում Սարդարաբադի ջրանցքը, դեպի արյունածարավ գիշատիչների ու գիշերային վրիժառուների բույնն էր տանում մեզ ճանապարհը՝ խաղաղ և մի փոքր ամպամած եղանակին, երբ երկինքն ու երկիրը կատարելապես լուռ էին. ջրանցքը, որ կտրում էր 60 վերստից ավելի տարածություն, հսկայական մի հողամաս, որ սարդարի ժամանակ միայն Սարդարաբադին՝ սարդարի կառուցած և սիրած բերդին և 700-ից ավելի ընտանիքներին տալիս էր կյանք, առատություն ու ամենայն բարիք, իսկ իրեն, սարդարի համար հանդիսանում էր ամբողջ գավառում կենսամթերքների ամենահարուստ մթերանոցը — մի մթերանոց, որն ի վերջո, ռուսների կողմից Երևանը գրավելու օրվանից կամաց-կամաց սպառվեց. ռուսների, որոնք, կրկնում եմ, ջանք են գործ դնում Անդրկովկասի վայրի և ամայի կիրճերը դարձնելու ծաղկավետ դաշտավայրեր, և որոնք Ասիայի այդ անշնորհակալ անկյունը ձեռք են բերել և պահպանել են իրենց միլիոնավոր թանկագին զավակների արյունով, նաև իրենց գանձարանի միլիոններով, որ կարող էր հիմնովին երջանկացնել իրենց հեռա-

վոր քաղաքների և նահանգների աղքատ և կարիքավոր միլիոնավոր ընտանիքներ։ Միայն նա, ով հիշում է բերդի շուրջը շինված սարդարի այգին, այդ երկրային դրախտը իր ամբողջ փարթամությամբ, մեծությամբ և արևելյան վսեմ ճաշակով. միայն նա, ով տեսել է բերդի ներսը, ամբողջ երկարությամբ զարդարող ծառուղին. միայն նա, ով վկա է եղել Կարսի և Բայազետի փաշայություններից, նույն սարդարի ձեռքով, սրով և արյամբ պոկած, և ցնցումներից ու աղքատության որջերից դրախտային վիճակի մեջ փոխադրած Սարդարաբադի բնակիչների նախկին բարեկեցությանը, ունևորությանը և այժմյան քայքայմանն ու աղքատությանը, միայն նա,— եթե երկրի հավատարիմ որդին է,— առանց ափսոսանքի, առանց ներքին ցավակցության, և նույնիսկ առանց արտասուքների չի կարող նայել այժմ անապատ և գերեզմանոց դարձած վայրերին, որոնք զրկված են իրենց բոլոր նախկին բարիքներից, իրենց բոլոր գեղեցկություններից. վերացված են երկրի հարստությունն ու նրա բնակիչների գործունեությունն ապացուցող հետքերը, և, վերջապես, նույնիսկ գոյություն պահպանելու բոլոր հնարավորությունները. միայն նա՛, ով,— ինչպես ես,— ականատես է եղել երկրի և՛ նախկին բարեկարգությանը, և՛ այժմյան կատարյալ ամայությանը, որից ստիպված խեղճ և աշխատասեր սարդարաբադցիները թողնում են իրենց նախնիների շիրիմներով սրբագործված և նրանց ազնիվ քրտինքով ծաղկած երկիրը,— նա առանց վրդովմունքի չի կարող հիշել մեր ժամանակներում Երևանի նախկին կառավարիչների անհոգությունն ու անշրջահայեցությունը, և,— ո՛չ թե կեղծավորությունից, այլ ճշմարիտ հիացմունքից ոգևորվել Երևանի այժմյան գավառապետի անխոնջ հոգատարությամբ, մի մարդու, որ իր մարդասեր սրտի բարի դրդումներով և իրեն օտար երկրի օգտի նկատմամբ ունեցած մաքուր սիրով՝ անապատներից ու ամենակործան ժամանակի ճիրաններից մի քանի հազար ընտանիքների համար պոկել է բարօրության ու հարստության այդ շեղջը՝ ինչպես Սարդարաբադի ջրանցքն է։

Այդ աշխատանքի վրա այժմ ծախսված գումարի չափը, ինչպես նաև այժմ նորոգված և նոր կառուցված հսկայական պատերը, երբ համեմատում ես մի քանի տարի սրանից առաջ այդ ջրանցքը կարգավորելու համար նշանակված հատուկ հանձնաժողովի նախագծից հետո արվածի հետ, ապա տեսնում ես, որ այժմ տասնապատիկ ավելի աշխատանք է կատարված, և միաժամանակ, ծախսված է այնչափ քիչ գումար՝ հակառակ նախկին նախագծի, ըստ որի պահանջվում էր 30.000 ռուբլուց ավելի, մինչդեռ այժմ ծախսված է միայն 3000 ռուբլի. նույն այդ նախագծի համաձայն հինգ տեղ պետք էր կառուցել միայն պատերը, այժմ դրա դիմաց՝ կառուցված

են տասը վայրում. ջրանցքի սկզբում կառուցված այդ պատերի միայն գլխավոր թևը ունի 16 սաժեն երկարություն, հիմքն է 1 սաժեն, հաստությունը՝ $1^1/_2$ սաժեն, միայն այս հարաբերությունը կարող է գոհացուցիչ գաղափար տալ այդ աշխատանքը կատարողների բարեխղճության և գիտելիքների մասին։ Շա՜տ ճիշտ է, որ միայն անդորրության մեջ է փթթում առաքինությունը։

Ի՜նչպիսի դիմավորումը կարող էր ավելի պատշաճ ձևով նշանավորել սիրված գավառապետի մուտքը մոտ 600 բանվորների և վարպետների հանրօգուտ գործունեության այդ կենտրոնը, բարերարության և հավիտենական երանության այդ սրբավայրը, եթե ոչ նույնիսկ անզգա, վայրենի քրդի դատարկ կրծքից դուրս թռած համերաշխ, խնդալից ռուսական «ուռա՜ն». դարեր ի վեր, դժոխային ոգիներով բնակված այդ կիրճը երբեք չէր ենթարկվել այդքան ղմայլելի, ոգեվառ ցնցումի։ Եվ վառոդն ու երկաթը՝ նորագույն ժամանակների կործանարար այդ տարրերը ո՞րտեղ կարող էին արժանավայել կերպով մինչև երկինք որոտալ ռուսական տերության բարեհաճ հոգատարության, նրա հավատարիմ որդիների և աստիճանավորների անխոնջ հոգատարության մասին, որտե՞ղ, եթե ոչ մռայլ, արյունաներկ ափերում Արաքսի, որ շատ անգամ է կլանել՝ մերթ նվաճողի արյուն, մերթ վայրենաբարո ավազակների գնդակներին զոհ դարձած դժբախտների հարյուրավոր դիակները, Արաքսի, որ ահեղ ուղեկիցն ու վկան է եղել Կյուրոսի և Տիգրանի, Ալեքսանդրի և Վահեի, Աննիբալի և Արտաշեսի, Պոմպեոսի և Տիգրան Մեծի, Տրդատի և Գրիգոր Մեծի <Լուսավորչի>, գեբրերի և Վարդանանց, հոների և մոնղոլների, պարսիկների և թուրքերի, և վերջապես՝ ռուսների և դարձյալ պարսիկների, Պասկևիչի և Աբաս-Միրզայի։ Այդ դղրդյունը, ամպրոպային այդ որոտներն ու պայթյունները, որ դուրս էին ժայթքում գետնից, լեռների և կիրճերի կարծր կրծքից՝ ներծծված ֆաուստյան համեմունքների խորհրդավոր ուժով, ու իմ նկարագրած Սատանայի կիրճն ամբողջովին մի ակնթարթում վերածեցին դժոխային տեսարանի՝ երախտագիտության սրտահույզ զգացմունքներ վերառաքեցին առ արարիչը, պարգևողը բոլոր բարիքների՝ Ռուսաստանի և նրա բոլոր հավատարիմ որդիների հզորությունն ու փառքը պահպանելու մասին։ Իսկ համեստ արձանագրությունը, որ հոգնած ուղևորին ցույց է տալիս Անդրկովկասի և ամբողջ Կովկասի կառավարչի անունը և կառավարման թվականը, բարիքի այս աղբյուրի՝ <Սարդարաբադի ջրանցքի>, վերանորոգման թվականն ու վերանորոգողի անունը, Կովկասի և Հայաստանի որդիների դարեր առաջ կորցրած երջանկությունը և բարօրությունը վերականգնողի՝ Կովկասի պարոն փոխարքայի անունը, փրկչի սրբազան դրոշով պարուրված, հաս-

տատուն, ամուր, դարերով անսասան սյունին գամված մարմարյա տախտակի վրա փորագրված նրա անունը,— երբ այդ կենսատու հեղուկը հոսի Սարդարաբադի ջրանցքով,— Արաքսի հետ միասին, դարերով նա պիտի պատմի և՛ Կասպիական ծովի ափերին, և՛ ամենահեռավոր սերունդներին՝ Հայաստանի — Արարատյան երկրի — Թորգոմյան — Ասքանազյան տան — այժմյան երջանիկ Հայաստանի — դարերով որբացած, բայց և հավետ փրկված որդիների ապրած երանելի ժամանակների մասին։

Տեսնելով այդ ջրանցքը, դարձյալ կրկնում եմ, այս ձեռնարկության էության վերաբերյալ մինչև այժմ կասկած ունեցողներից ամենից ավելի ես, որպես առաջին ականատես և որպես երկրի ոչ-պակաս երախտագետ որդի, հոգեզմայլության մեջ ինքս ինձ մոռացա, և իմ ալեկոծված սրտի խորքից և հույսերով լի աչքերից ակամա դուրս ցայտած արցունքները անկեղծ երախտագիտություն և ներքին ակնածանք էին արտահայտում նրա՛ նկատմամբ, ով առանց հետագայում հատուցումն ստանալու կամ որևէ այլ ակնկալության, նպատակ դրեց՝ իմ թանկագին հայրենիքի՝ դարերով ամայացված բոլոր վայրերում բերելու նոր, ավելի հաստատուն արդյունաբերական կյանք և բարեկեցություն։ Վաղուց արդեն համեստ ռազմանավակը սուրում է Կապուտան ծովի (Գոգչա լճի) ալիքների վրա։ Նոր-Բայազետին սպասում է ամենաերջանիկ մի ապագա, որ շատերին դեռևս անհայտ է, բայց որ շատերի համար նախանձելի կարող է լինել։ Իսկ Ալագյազը՝ արծաթագլուխ Նոյան լեռան այդ նախանձոտ մրցակիցը, որ վեր է խոյանում նրան դեմ ու դեմ,— առայժմ մրափում է, չմտածելով իր վրայից դեն նետել վշտի քողը, որպեսզի կրկին կենդանանա իր շրջակայքի հրաշալիքներով և լանջերով, քրիստոնյա տիրակալների ժամանակ ծաղկած բերքառատ այգիներով և դաշտերով զարդարված հսկայական քաղաքներով, ավաններով, վանքերով, որոնք ծածկում էին նրա հարավային ստորոտն ամբողջությամբ,— որ բռնում է ավելի քան 8000 քառ. վերստ տարածություն՝ Աշտարակ գյուղից սկսած մինչև Մաստարա։ Ժողովրդական դարավոր ավանդությունն ասում է, թե իբր այդ լեռան կատարին սուրբ Գրիգորն աղոթել է, և երկնքից կախված վառ կանթեղը հավետ անշիջանելի, բայց մեզ, մեղավոր մարդկանցս անտեսանելի իր լույսով մի օր իր բարերար շողերը սփռելու է նաև մեր դաշտերի վրա։ Ալագյազը դեռևս բոլորովին չի պատկերացնում, որ իր ստորերկրյա ամենակուլ վիհերից հափշտակվող հեղեղատներն ու լճերը, որոնք այնքան առատորեն բարեբեր ջուր են տալիս Կարա-սու գետին, շատ ժամանակ չանցած, պետք է ջրվեժի նման շառաչեն հրաբխային ժայռերի միջով՝ դաշտերը ոռոգելու և արգասավորելու, իմ վերը հիշած ամբողջ տարածությանը խոնավություն և կյանք տալու համար։ Եվ

Արփաչայը՝ սարսափելի, գերեզմանների նմանվող իր ափերի խորքում դեռ մոլեգնում և փրփրում է, չերևակայելով այն բարերար հափշտակումը, որ նախաձեռնվում է ինչպես իր մոլեգնությունը մեղմելու, այնպես էլ հնում ծաղկած Հայաստանի այժմյան անապատ դարձած դաշտերը, հովիտները և լեռները ոռոգելու համար։ Իսկ Արարատը, նախահայրը բոլոր լեռների, որ բացի Ղորղան, Ակոռի և Դիլիջան գյուղերից, որ նորագույն ժամանակներում էլ հայտնի են,— պահպանում է երեք հսկայական քաղաքների ավերակները՝ իրենց՝ ջրամբարներով և ավազաններով, որոնք կենդանություն էին ստանում մե՛րթ նրա հավերժական ձյուներից, մե՛րթ նրա ստորոտներում դուրս բխող, նույնպես Կարա-սու կոչվող հսկայական հեղեղատից. մի՞թե նա իզուր ապաստան տվեց հին Ակոռիից ոչ հեռու Նոր-Ակոռիին, ուր այնքան թանկագին կորստից հետո, վշտերից և հառաչանքներից, սովից և աղքատությունից փրկված, Արարատի ծաղկած լանջերն ու արտերը մշակողներից՝ դժբախտ ակոռեցիներից ողջ մնացածները երջանիկ են իրենց բարի կառավարչի պաշտպանության և հովանավորության տակ, որը ջանք չխնայեց օգնելու նաև դառն ճակատագրի դաժան հարվածներով խոցված և 1840 թ. երկրաշարժից ու ավերումից 5 տարի հետո էլ ծայրահեղ վիճակում դեգերող այդ խեղճ տառապյալներին, իզուր չէ, որ անցյալ տարի կազակական գնդի շտաբը ևս փոխադրվել է Փոքր և Մեծ Մասիսների միջև՝ երեք տերությունների սահմանագծում։ Եվ թո՛ղ վեր ելնեն Բագրատունիները, թո՛ղ հառնեն Տիգրանները ու Հայկյան հսկաները՝ արժանավայել կերպով օրհնելու տոթ, կիզիչ հարավը բարեկարգող հյուսիսի որդիների առաքինի գործերը։ Եվ թո՛ղ Հայաստանի ամայացած, բայց կրկին կենդանացած տաճարներում վերառաքվի միայն մի աղերս, մի աղոթք. «Աստված, պահի՛ր թագավորին, և հզոր ու բարերար սրբազան Ռուսիան»։

Հատված 6

ՆՐԵԿՈՆ ԱՐԱՔՍԻ ՀՈՎՏՈՒՄ. ԱՐՓԱՉԱՅԻ ԱՓԵՐԸ

Ինձ համար հանդիսավոր այդ օրվան երեկոն որտե՞ղ կարող էի ավելի լավ անցկացնել, եթե ոչ միայնության մեջ, որպեսզի ազատորեն վայելեի իմ ստացած բոլոր տպավորությունների հաճույքը, և իմ պատանեկության տարիների ընկերոջ, այստեղից 16 վերստի վրա գտնվող Կողբի աղահանքի այն ժամանակվա կառավարիչ պարոն Ա.-ի համեստ հարկի տակ. նրան, իմ լավագույն եղբայրակիցներից մեկին հաղորդելու իմ խոհերը՝ մեր հայ-

րենիքի ներկա և ապագա երջանկության մասին։ Չնայած նա հիվանդ էր, ես հրավիրեցի, որ հետևյալ օրը նա էլ տեսնի այն բոլորը, ինչ ես էի տեսել, սակայն, այդ ուղևորությունը ինձ զրկեց ներկա գտնվելու այն վեհ, հիասքանչ տեսարանին, որպիսին, թերևս, երբեք չի եղել այս վայրերում և որը պատրաստել էին ջրանցքը կառուցողները գավառապետի գալստյան առթիվ։ Բայց նախքան այդ տեսարանի նկարագրությանն անցնելը, թող թույլ տրվի ինձ մի քանի խոսք ասել Կողբի մասին։ Կողբը հարուստ է աղով, որ կյանքի ամենակարևոր պետքերից մեկն է. Կողբի աղի մաքրությունը և համը, ինչպես նաև մշակումը հայտնի է ամենքին։ Իմ գործը չէ նաև խոսել այն եկամուտի մասին, որ այդ «ոսկյա դեզից» ստացվում է, և որը սարդարի ժամանակ կրկնակի ավել էր, չնայած այդ շրջանում աղի փոխադրավարձը և նրա պահանջը նույնպես կրկնակի քիչ էր։ Եթե չեմ սխալվում, Կողբի աղահանքերը մեր կառավարության օրով երբեք այնքան եկամուտ չեն տվել, ինչքան անցյալ տարի, պարոն Ա.-ի կառավարման ժամանակ, այդ խելացի, փորձված, գործունյա և վերին աստիճանի բարեխիղճ և ազնիվ մարդու, որի այդ հատկությունների վրա պետք է ավելացնել նաև այն, որ նա գիտե տեղական լեզուներն ու բարքերը։ Թերևս ոչ ոք չգիտե, որ Կողբի հայ հասարակությունը դարերով իրեն տրված իրավունքներով և արտոնություններով բոլորովին տարբերվում է ամբողջ Անդրկովկասի և Հայաստանի մյուս գավառների բնակչությունից։ Դրանք, կողբեցիները, բոլոր հայերից ամենաասանձարձակն են, ամենակտրուկը, ամենաազատը և կյանքի վայելքներին ամենից ավելի նվիրվածները։ Եթե նրանք, հարստության այդ աղբյուրի հետ մեկտեղ, որից ուղղակի ոսկի ու արծաթ են բխում, չունենային խիստ, արդարադատ և գործունյա, ազնվաբարո և շիտակ այնպիսի մի կառավարիչ, ինչպիսին պարոն Ա.-ն է, ապա դժվար, շատ դժվար կլիներ ցանկալի հաջողությամբ վարձահատույց լինել թե՛ կառավարության ծախսերի, թե՛ բնության բարիքների և թե՛ մարդկային աշխատանքի համար։

Կողբում է գտնվում նաև հայ նշանավորագույն գրող, Մովսես Խորենացու և Աստվածաշնչի հայերեն թարգմանիչների աշխատակից ու ընկերակից Եզնիկ Կողբացու գերեզմանը։ Գյուղի հետևը, արևմտյան կողմում գտնվող փոքր, կիսակործան մի մատուռ պահպանում է նրա թանկագին նշխարները, ժողովուրդը գնում է դեպի այդ մատուռը, որպես սրբի երկրպագելու և իր հարգանքն արտահայտելու մեծ հանճարին։ Կողբի շրջակայքը ոչ պակաս նպաստում է նաև անասնապահությանը, այգեգործությանը և նույնիսկ երկրագործությանը, սակայն, բնակիչները, տարվելով առավելապես աղահանման և աղամշակման աշխատանքներով, վերոհիշյալ զբաղ-

մունքներով քիչ են պարապում։ Կողբի կլիման և ջուրը առողջարար են։ Կողբից դեպի արևմուտք գտնվող լեռները շատ հարուստ են փարթամ արոտավայրերով, բազմաթիվ աղբյուրներով, պղնձով, մարմարով, շիբով և նույնիսկ քարածուխներով։

Վերը իմ հիշած տեսարանը՝ երեկոյան հրավառությունն էր, որ տեղի էր ունենում իմ նկարագրած կիրճերում, գիշերային մթության, ժայռերում և հովիտներում տիրող գերեզմանային լռության մեջ, Արաքսի խորհրդավոր մրմունջների տակ, և բնույթով տարբեր հինգ ազգերի՝ հույների, հայերի, թաթարների, քրդերի և նույնիսկ Դոնի զինվորների պարերի, նվագի ու երգի ուղեկցությամբ։ Իրոք, սա մի սյուժե է, որ ոչ-պակաս արժանի է «Ահեղ դատաստանի» և «Երուսաղեմի ազատագրության» անմահ ստեղծագործողների կենարար վրձինին և քնարին։

Հրաժեշտ տալով իմ սրտին այնքան սիրելի այդ վայրին, օրհնելով բարի գյուղացիների և նրանց կառավարիչների աշխատանքը, մենք ուղևորվեցինք դեպի Արփաչայի ափերը, որ Թուրքիայի հողերը բաժանում է մեր սահմաններից։ Մեր արշավախմբին ավելացան պարոն Զ<երնյավսկին>, որ բացառիկ մի մարդ էր ոչ միայն կրթությամբ, այլև արտասովոր հումորով և կենսուրախությամբ, և իր աշխատակից Հովհան-Սուլթանը, որոնց երկուսին գավառապետը իր հետ էր վերցրել, առաջինին՝ տեղանքը չափելու, իսկ երկրորդին՝ ցույց տալու համար այն վայրը, որտեղից Երևանի սարդարը մտադիր է եղել Արփաչայի ջուրը տանել դեպի իր կալվածները։ Ճանապարհին մեզ հասավ նաև արքեպիսկոպոս Շ<ահխաթունին>։ Յուրաքանչյուրն ուներ իր մարդիկը և ուղեկցողները. միայն ես, խղճուկս, ճանապարհորդում էի ուրիշի հաշվին և ուրիշի ձիով, որ ինձ զիջել էր գավառամասի պետ պարոն ֆոն Վ.-ն։

Այստեղ, ի դեպ, պետք է նշել, որ գիտական աշխարհը ինձնից բազմիցս զանազան տեղեկություններ է պահանջել՝ ինչպես պատմական, այնպես էլ, հատկապես, վիճակագրական, բուսաբանական, ժողովրդական լեգենդներ, հեքիաթներ և այլն։ Չնայելով իմ դպրոցական պարապմունքներին, որոնք ինձանից խլում են համարյա ամբողջ ցերեկը, այնուամենայնիվ, ես հաճույքով և շնորհակալությամբ կցանկանայի,— ըստ իմ ուժերի և գիտելիքների,— բավարարել ինձ համար այնքան հրապուրիչ և հաճելի նրանց պահանջները։ Բայց երգեր, լեգենդներ և բույսեր ու սերմեր հավաքելու, պատմական ավանդություններն ու փաստերը ստուգելու, ժողովրդի ամբողջ կենցաղը ճշմարտացի կերպով իմանալու համար պետք է ո՛չ թե մեկ օր, այլ շաբաթներով, հաճախ նաև ամիսներով, ճամփորդել և ապրել այն վայրերում, որտեղից կարելի է քաղել տեղեկություններ, բայց մի՞թե կա-

րելի է այդ բոլորն անել և, որ ոչ պակաս կարևոր է, ընտանիք կերակրել 372 ռուբլի իմ աշխատավարձով։ Տվեք ազատություն և միջոցներ, այն ժամանակ այդ բոլորը հեշտ և հարմար կլինի ձեռնարկել։ Յոթ տարի սրանից առաջ ես մի փոքրիկ հոդված գրեցի Ս. Պետերբուրգի ակադեմիային մեր գուսանների մասին, որոնք միայն ամբոխին են հայտնի, և խնդրեցի ուշադրություն դարձնել այդ հարցին, որով ամենից ավելի կարելի էր իմանալ ժողովրդի թե՛ կենցաղը, թե՛ բնավորությունը և նրա մտավոր ու բարոյական բոլոր ըմբռնումները, բայց գործը, չգիտեմ ինչո՛ւ, մնաց առանց որևէ հետևանքի։ Նախանցյալ տարի պարոն կոմս Բ<ենկենդորֆի> ցանկության համաձայն, ծառայությունից ազատ ժամանակս, հենց Քրիստոսի ծննդյան տոներին, ամենադաժան ձմռանը, իմ հաշվին ես ուղևորություն ձեռնարկեցի դեպի քրդերն ու եզդիները՝ պատմության այդ ֆենոմենները, երկու շաբաթ ապրեցի նրանց մեջ, ծերերին և կանանց թանկարժեք նվերներ բաժանեցի, որպեսզի գրավեմ նրանց վստահությունը. և այդպիսով, նրանց հրապուրելով, ավելի հարմար և հաստատ կերպով, ամեն ինչի մեջ կասկածամիտ այդ վայրենիներից իմանամ բոլոր արժեքավոր տեղեկությունները նրանց բարքերի, սովորությունների, հավատալիքների, բնավորության և նույնիսկ պոեզիայի մասին. երկու ամսից ավելի, գիշերներն ամբողջ աշխատում էի,— քանի որ ցերեկներն աշխատելու ժամանակ չունեի,— գրեցի մի, ոչ-պակաս հետաքրքրական և բավականաչափ մեծ հոդված, որի մասին էջմիածնում անձամբ ինձ դրվատական կարծիք հայտնեց գիտնական գեղագետ և պարոն փոխարքայի ադյուտանտ պ. Մ<ուրավյովը>։ Հոդվածը գրել եմ գերմաներեն. շատ գովասանքներ եմ լսել նրա մասին. ոչ պակաս ծախսի տակ ընկա. ըստ հնարավորին շատ աշխատեցի, կազմեցի և արտագրեցի ինքս մենակ, իսկ այժմ, աստված գիտե, որտեղ՝ Գերմանիայում կամ Թիֆլիսում, փտում է այն։

Ի հարկե, իմ մասին խոսելն անհամեստություն է, բայց առիթն և անհրաժեշտությունն ստիպում են ինձ դիմել այդ ծայրահեղությանը։ Մի՞թե այդ բախտին չեն արժանացել նաև ութ տարի սրանից առաջ, հայազգի պատանիների և նույնիսկ ժողովրդի միջին դասի օգտագործման համար գրած մանկավարժական իմ բոլոր աշխատությունները, որ նախաձեռնած եմ եղել ինձ համար ավելի ծանր մի ժամանակաշրջանում, քան այժմ է, երբ ես մենակ ղեկավարում էի և՛ Թիֆլիսի գավառական դպրոցը, և՛ իմ մասնավոր պանսիոնը, որի մասին ամբողջ Թիֆլիսը,— ի՞նչ եմ ասում՝ ամբողջ գիտական աշխարհը գիտե, թե ինչպես բարգավաճեց և ի՞նչ վախճան ունեցավ։ Այդ գրքերը թվով երեքն են՝ Ընթերցարան ժողովրդական ուսումնարանների համար, որ կազմված է նորագույն ժամանակների ամե-

նալավ մանկավարժների մեթոդով՝ և որը նույնիսկ տպագրված է, բայց ասար տարի է ինչ, առանց գործածելու, անօգուտ ընկած է, և ինձ համար էլ քիչ գումար չարժե. անօգուտ ընկած է հենց միայն նրա՛ համար, որ Թիֆլիսի գիմնազիայի խորհուրդը, որ մեր մերձավորագույն իշխանությունն է, չիմանալով ո՛չ հայոց լեզուն և ո՛չ էլ ժողովուրդը, հենվելով իրենց գիտնական համարող հայերից ոմանց կարծիքների վրա, մարդիկ, որոնք,— նրանց կշտամբելու համար չէ, որ ասում եմ,— նոր մանկավարժությունը գիտեն չինացուց ոչ լավ, ոչ էլ վատ, գիրքը բաց չեն թողնում հենց միայն նրա համար, որ դա գրված է հասարակ ժողովրդին՝ ընդհանուրին հասկանալի լեզվով. իսկ գրաբարը,— որով այժմ էլ խեղճ մանուկներին տանջում են, և ոչ թե ուսուցանում, որով ժողովրդից ոչ ոք ո՛չ գրում է, ո՛չ էլ խոսում, բացի հոգևորականներից, որոնք շատ աշխարհականներից վատ են հասկանում այդ լեզուն,— աշխարհաբարից այնպես է տարբերվում ինչպես նոր հունարենը հնից, իտալերենը՝ լատիներենից և այլն։ Մյուսը քերականություն էր, ծավալով ոչ-մեծ, որ ցույց էր տալիս երկու լեզուների՝ <գրաբարի և աշխարհաբարի> ամենակարևոր և ամենաանհրաժեշտ առանձնահատկություններն ու բնույթը։ Երրորդը, գիտնական մանկավարժ Տապպեի անմահ ստեղծագործությունն էր, որը, նման երկերով ամենահարուստ երկրում՝ Գերմանիայում արժանացել է արդեն չորս հրատարակության։ Դա նրա ընդարձակածավալ ռուս-գերմաներեն քերականությունն է, որը նույն նպատակով վերակազմել և վերամշակել եմ հայերի համար։ Հանգուցյալ ֆլիգել-ադյուտանտ կոմս Բենկենդորֆը և ժողովրդական լուսավորության մինիստր պարոն կոմս Ուվարովը այդ աշխատանքների համար ինձ քաջալերեցին, Ս. Պետերբուրգի ակադեմիան ավելի քան լավ գնահատելով հավանություն տվեց, բայց, այնուամենայնիվ, նույն (Թիֆլիսի) գիմնազիայի խորհուրդը չբարեհաճեց գործադրության թույլատրել միայն նրա՛ համար, որ դրանք իմ աշխատություններն էին։

Այո, խորհրդի անդամներից մեկը, ավագ ուսուցիչ Ֆ<իլադելֆինը> դեռ համարձակվեց արտահայտվել ահա թե ինչպես. «Կառավարությունը ցանկանում է ոչնչացնել տեղական լեզուները, իսկ դուք ուզո՞ւմ եք դրանց կրկին կենդանացնել և ամրապնդել»։ Մինչդեռ կառավարությունը, չբավականանալով նրանով, որ թույլատրել է և օրենքով որոշել տեղական լեզուները դասավանդել Անդրկովկասի բոլոր ուսումնարաններում, նաև երկու տեղ՝ Ս. Պետերբուրգի և Կազանի համալսարաններում բաց է արել արևելյան լեզուների ամբիոններ՝ ընդունակ և պիտանի թարգմանիչներ պատրաստելու համար, իսկ ո՞րտեղ կարելի է այդպիսիք ավելի լավ և ավելի հեշտ պատրաստել, եթե ոչ հայրենի երկրում, ուր թե՛ լեզուն է կենդանի և

թե՛ ժողովուրդը, և պատանուն կարող են ավելի շուտ սովորեցնել, քան թե օտար երկրում պրոֆեսորների մեկ կամ մեկ ու կես ժամ տևող դասախոսությունները։ Եվ ուսումնական մարզում 11 տարվա իմ ծառայության ընթացքում ինչքան ցանկացել և կարողացել եմ՝ աշխատել եմ հօգուտ Անդրկովկասի այն ժողովուրդների, որոնք, վրացերենից բացի, հիմնական ուսուցման համար չունեն ոչ մի ձեռնարկ։ Այդ գրքերը փտում են փոշու մեջ, ինչպես և իմ բոլոր իղձերը, ցանկությունները և թույլ գիտելիքները՝ սառած սրտումս, որը չի ցանկանում և չի սպասում պարգևների, բայց և չի ցանկանում ենթարկվել ճնշումների։ Սակայն ես շատ հեռացա ուղիղ ճանապարհից։ Նախախնամությունն ամեն ինչ կպարգևի իր ժամանակին. ես հույսս նրա վրա եմ դրել, և լռում եմ։ Մեր ուսումնարանների մասին խոսելու և դատելու ժամանակը չէ հիմա։

Մեր քարավանը, որ այժմ բաղկացած էր ավելի քան քսան հոգուց, զվարթ շարժվում էր դեպի Արփաչայի ափերը։ Անապատը և ցերեկվա տապը ոչնչով չէին ընդմիջվում, ավելի քան մի ամբողջ շաբաթ միայն կախարդական երազանքներից և անքնությունից հուզված և անհանգստացած, մայր բնությունը, վերջապես, պահանջեց այնքան բնական, յուրաքանչյուր մահկանացուի համար այնքան քաղցր տուրքը, և ես, չնայած պաստոր, ինչպես և դոկտոր պատվավոր կոչումներին, որ ձրի, առանց տանջալից քննության, պարգևել էին ինձ իմ բարի ընկերները, չնայած Տրդատի, Հայկի և Գագիկի պանծալի անուններին, որոնցով նրանք ջանք էին գործ դնում իմ մեջ ներարկելու որոշ չափով եռանդ, առույգություն և կյանք, մինչ այն ժամանակ չէի կարողանում ազատվել Մորփեոսի հրապուրանքից, անքնության և քնի կախարդական աշխարհից, քանի դեռ աչքերս չէին բորբոքվել վերոհիշյալ գետի ափերին բացվող հիասքանչ պատկերներով, գետի, որ մոլեգնում և կայտառում էր հսկայական ժայռերի և լավաների միջով, որոնք նույն բնույթն ու հատկանիշը ունեն, ինչ որ Արաքսի մերձակայքում, սակայն, որոնք իրենց մեծությամբ և վայրի տեսքով տասնապատիկ ավելի սարսափելի և ավելի ազդու են նրանցից։ Թե որ գերեզմանիս մեջն էլ լսեի «Բագարան» անունը, կհառնեի դամբարանից, որպեսզի երկրպագեի հայրենի սրբություններին ու հնություններին, այն ինչ իմ աչքերի առջև կանգնած էր նա, քաջ և բարեպաշտ Բագրատունիների առաջին սրբազան աթոռանիստը, երկար ժամանակ նաև նրանց արքայական դամբարանը. ընկած էր նա մեզանից հեռու, թուրքական սահմանի վրա, ավերակների կույտերի, լավաների և անմատչելի ժայռերի մեջ, որոնք հեռադիտակի օգնությունն էին պահանջում, որպեսզի կարելի լիներ ավելի ագահաբար, ավելի անհագուրդ կերպով ներսուզվելու նրանց խորհրդի, վեհության, բարբարոսներից

և ժամանակից խոցված նրանց սրբության մեջ. սրբություններ ու հնություններ, որ հավաքել է վերոհիշյալ երկու քաղաքների հիմնադիր Երվանդ II-ը, և որ այստեղ գոյություն ունեն այն ժամանակներից, երբ Հայաստանում տիրում էր հեթանոսությունը։ Այդ քաղաքի մասին ահա՛ թե ինչ է գրում Մովսես Խորենացին իր «Պատմության» II գրքի 37-րդ հատվածում. «Նա (այսինքն՝ Երվանդը) Ախուրյան գետի (Արփա-չայ) վրա կառուցեց տեսքով Երվանդաշատին նմանվող մի քաղաք, բայց որը առաջինի համեմատությամբ ավելի քիչ տաճարներ և մեհյաններ ուներ. Արմավիրից (Վաղարշակի հնագույն մայրաքաղաքից) այնտեղ տեղափոխեց ազգային բոլոր կուռքերը, հենց միայն այն պատճառով, որ վախենում էր նրանց թողնել իր մայրաքաղաքում՝ Երվանդաշատում, որպեսզի վերջինս վտանգի չենթարկվեր, երբ ժողովուրդը խուռն բազմությամբ գար կուռքերին երկրպագելու։ Եվ քանի որ այնտեղ հավաքված կուռքերը շատ էին, քաղաքն անվանեց **Բագարան**, հայերեն բագին, այսինքն՝ կուռք բառից, **արան**՝ տեղ, վայր ցույց տվող վերջավորությամբ, ինչպես՝ **զենարան** (զոհաբերության սեղան), **վարժարան** (դպրոց) և այլն։ Եվ այսպիսով, բագարան, ռուսերեն թարգմանությամբ նշանակում է идолище կամ капище, չնայած, ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ բառը ռուսերենում չունեն այն նշանակությունն ու իմաստը, ինչ որ բագարանը, որովհետև идолище բառը ցույց է տալիս առարկայի վիթխարի լինելը, իսկ капище — միայն շենքը (կռատուն), այնինչ Բագարանը թե՛ կռատուն էր և թե՛, հետագայում, ահագին մի քաղաք, որ ուներ մեծ ամրոց և ապրում էր բուռն ու հրապուրիչ կյանքով։

Բագարանը Բագրատունի թագավորների մայրաքաղաքն ու դամբարանն էր՝ մինչև մայրաքաղաքը Անի փոխադրելը. Թագավորների մարմինները հետագայում ամփոփում էին Ղոշա-վանքում, որ գտնվում է Անիից դեպի հյուսիս, 12 վերստ հեռավորության վրա։ Այդ քաղաքից ոչ հեռու, դեպի հարավ, գտնվում էին մյուս հիշարժան վայրերը նույն Երվանդի տնկած հսկայական անտառի հետ միասին՝ Երվանդավանը, որ նշանակում է Երվանդի պարտության վայր, և Ծննդոցը։ Առաջինի անունը Մովսես Խորենացին իր «Պատմության» II գրքի 43-րդ հատվածում բացատրում է Արտաշես 2-րդի կողմից՝ Երվանդի կրած պարտությամբ, որը և Երվանդի անվանեց Մարաց Մարդ, այսինքն՝ մարերի ճամբար, որովհետև նա (Արտաշեսը) մարաց զորքերով ելավ նրա (Երվանդի) դեմ։ Երկրորդի (Ծննդոց անտառի) մասին Խորենացին II գրքի 38-րդ հատվածում ավելացնում է նաև, որ Երվանդը հատկապես որսորդության համար էր տնկել այդ անտառը, որը հետագայում լցվեց զանազան վայրի գազաններով։ Սրա-

նից դատելով, կարելի է եզրակացնել, որ նախկինում, առանց անտառապատման կորպուսի համապատասխանության, ավելի շատ էին հոգ տանում այդ կարևոր խնդրի մասին, որը ոչ մի տեղ այնքան անհրաժեշտ չէ, և մշակման համար էլ ո՛չ մի տեղ այնքան հեշտ և հարմար չէ, որքան Հայաստանում։ Երևանի գավառում ինչքա՜ն ճահիճներ և ճահճոտ վայրեր, առուներ և «սևջրեր» կան, որոնք ո՛չ միայն ոչ մի օգուտ չեն տալիս, այլև մեծ վնասներ են հասցնում երկրամասին։ Եթե միայն յուրաքանչյուր գյուղացու պարտավորեցնեն տարեկան 10 ծառ տնկել առուների եզերքին և իրենց գյուղերի շրջակայքում. եթե միայն այդ նույն պարտականությունը դրվի բարի կազակների վրա, որոնք պարապությամբ և միայն թղթախաղով են սպանում իրենց երեքամյա ծառայության ժամանակը այս երկրամասում, և հեռանալիս իրենց պահականոցների շուրջը գտնվող սափաստաններն ու անապատները թողնում են նույն վիճակում, ինչպես որ դրանց տեսել էին սկզբում։ Դրանով առուներն ու ջրանցքները առմիշտ կամրանային և չէին պահանջի այնքան հաճախ նորոգումներ և ծախսեր, կլիման անհամեմատ կլավանար ներկայիս համեմատությամբ, շինափայտն ու վառելափայտը այնքան թանկ չէին լինի, ինչպես այժմ, երբ մի խորանարդ սաժենին ստիպված ես վճարելու 16 կամ 20 ռուբլի, և երկիրը կփոխակերպվեր իսկական դրախտի։ Սարդար Հուսեին-խանն, ասում են, այդ նկատի է ունեցել. և ի՞նչ կա դրանից ավելի հեշտ և օգտակար։ Էջմիածնում Հովհան-Սուլթանն էլ արդեն սկսել է դրանով զբաղվել. տա՛ աստված, որ շատերը հետևեն նրա գովելի օրինակին։ Լորին և կեչին բռնում են նույնիսկ Երևանի այգիներում, ես ինքս այդ փորձել եմ, էլ ի՞նչ է հարկավոր։

Այս վայրերի մերձակայքում է եղել թե՛ հռոմեական, թե՛ հունական պատմիչների հիշատակած Արտագերս ամրոցը, որ, ըստ պատմիչ Բյուզանդի (դպր. IV, հատվ. 19) կառուցել է հայ թագավոր Արշակ II-ը <IV> դարում Ք. ծ. <հետո>։ Արտագերս ամրոցի անունը օտարազգի պատմիչները, սխալ արտասանության հետևանքով, աղավաղել են հետևյալ կերպ. Ստրաբոնը՝ **Արտաիրա** (գլ. 11, 529), Պտղոմեոսը՝ **Արտանիզարդա** (5,13), Շիկոսը՝ **Արտագի**, Վելլեյուսը՝ **Արտագգերա** և **Արտոդգերասս** (գիրք II, 102), Ամիանը (գիրք 27, գլ. 12) և Ցլորը (գիրք 4, գլ. 12) նույնիսկ՝ **Արտակսադա**, որ Հայաստանի հնագույն մայրաքաղաքներից մեկն է՝ այժմյան Խոր-Վիրապ վանքի մոտ. Արշակը, տեղի անմատչելիության պատճառով զորքի մթերանոցն այստեղ էր պահում։ Այս ամրոցի տակ են խոցել և սպանել Կայոս Կեսարին, որ ուղարկված էր Օգոստոս կայսեր կողմից՝ հայերին հնազանդեցնելու համար, ինչպես այդ մասին վկայում են վերոհիշյալ գրողները։ Պարսկաստանի շահ Շապուհը բնակիչների դավաճանությամբ ամրոցը

գրավեց և հրի ու սրի մատնեց։ Կապույտ բերդը ևս ոչ նվազ կարևոր էր թե՛ իր դիրքով, և թե՛ նրա շուրջը տեղի ունեցած պատմական իրադարձություններով։ Արդյոք դա այժմյան Մաղաս բերդը չէ՞, որի մասին հետո։ Իսկ Բագրատունիների տիրապետության շրջանում, ինչպես նրանց, այնպես էլ ժամանակի բոլոր իշխանների և հարուստների կառուցած վանքերի մասին խոսելն ավելորդ է։

Հատված 7

ԱՐՓԱՉԱՅԸ ԵՎ ԵՐԵԿՈՆ ՆՐԱ ՀՈՎՏՈՒՄ

Ինչպես առաջ էլ հիշեցրել եմ, անցյալի այդ բոլոր վսեմ մնացորդները, որոնք տարածված են հատկապես Արփաչայի աջ ափին, պետք է տեղում տեսնել և համոզվել. պետք է տեսնել այդ սեպաձև քարաժայռերը, որոնք հավիտենական պարիսպների նման կանգնած էին վերաղանցապես արևելքի դեմ հանդիման, որտեղից էին բարձրանում քաղաքական փոթորիկները բոլոր ժամանակներում. վերջապես, դիտող, փորձառու հայացքով պետք է ընդգրկել անծայրածիր ու անսահման այդ ամբողջ հարթավայրը, որ կազմում է այժմյան Ալեքսանդրապոլի գավառն ամբողջությամբ, ռուսական Հայաստանի մի մասը և Կարսի փաշայությունը, որ գտնվում է գետի աջ ափին, և որը ամբողջ Ասիայում հայտնի է իր բարեբերությամբ, առողջ կլիմայով և փարթամ ու հարուստ արոտավայրերով. այդ ժամանակ միայն, թերևս, կարելի կլինի լիովին հասկանալ հայ թագավորների և ժողովրդի հերոսական, միաժամանակ նաև գործունյա ոգին, արևմտյան Ասիայի այդ փյունիկեցիների, որոնք խաղաղության օրերին աշխատասեր են և հեզ, թշնամիների սրերի դեմ՝ արիասիրտ և համբերատար, մտքի և բարոյական ուժերի զարգացման մեջ՝ ճոխ և քնքուշ, ազգային սրբությունների անձեռնմխելիությունը պահպանելիս՝ հպարտ և անընկճելի, և որոնք, վերջապես, կովախնձոր են եղել բոլոր ժողովուրդների միջև՝ բոլոր դարերում։

Պատմությունը լռում է այն ժամանակների մասին, երբ այդ ժողովուրդն էլ թափառական կյանք է վարել, ինչպես դա տեղի է ունեցել հին և նոր աշխարհի բոլոր, նույնիսկ ամենաքաղաքակիրթ ժողովուրդների կյանքում։ Նրանց լեզուն, կրթությունը և քաղաքացիական կազմակերպությունը գալիս են նախապատմական ժամանակներից, և Քսենոֆոնը 400 տարի Քրիստոսի ծննդից առաջ նույնիսկ նրանց գտել է այն վիճա-

կում, ինչ վիճակում որ մենք նրանց տեսնում ենք այժմ։ Ուր որ հասել է այս ժողովրդի ձեռքը՝ մեղուների պարսի նման՝ ընտրել է իր պաշտպանության համար բնական ամրություններ, իր գործունեության համար՝ նպաստող և բարեբեր վայրեր։ Մի ոտով կառչելով իր հայրենի ժայռերի և լեռների ամրություններին, նա իր հարևաններից շատերի նման չի սպասել հարմար առիթի և րոպեի՝ գիշատիչ գազանի նման օգտվելու ուրիշի բարիքից, այլ մեղվի նման կայտառ և ժրաջան, եռանդով և սիրով թողել է թե՛ հեռուները, թե՛ ծաղկալից, փարթամ իր դաշտերը՝ կյանքի հյութը հավաքելու. նա ոչ-նվազ չափով աչքի է ընկել անվեհերությամբ, համարձակությամբ և մոլեգնությամբ՝ թշնամուն ետ մղելիս, երբ վերջինս, առանձին-առանձին հարձակվելով, փորձել է դիպչել նրա փեթակներին. վերջապես, իր ամբողջ գործունեությունը փոխադրել է օտար երկրներ, ուր նա ցրիվ է եկել՝ իր հայրենիքը, մասամբ, նույնիսկ հզորագույն պետությունները տակն ու վրա անող բազմացեղ բարբարոսների անթիվ հորդաներին միահամուռ դիմադրելիս։

Քրիստոնեությունը, երկրի ֆիզիկական դիրքը և Հայկի զավակների բնածին հակումը նստակեցության, աշխատասիրության, բարգավաճման,— այլ ոչ միայն սոսկ արդյունաբերելու, որով այժմ նրանք աչքի են ընկնում և որի համար նրանց այնքան դաժանաբարո և անարդար կերպով մեղադրում են,— բոլոր բարբարոսներին և ոչ բարբարոսներին գրգռեցին և հրապուրեցին ո՛չ միայն բաժան-բաժան անելու նրանց հողերն ու գանձերը, այլև կլանելու հենց ժողովրդին, ամենաթանկագին այդ գանձը՝ իրենց երկրները և պետությունները մշակելու և հարստացնելու համար։ Շահ-Աբբաս մեծը Հայաստանն ամայացրեց հենց միայն նրա համար, որպեսզի Պարսկաստանը ծաղկեցնի։ Նա Սպահանում հայերի համար տաճարներ և պալատներ կառուցեց, որ նրանց ստիպի մոռանալ իրենց հայրենի տաճարներն ու պալատները, որ նրանք, այդպիսով, սիրով ապրեն ու աշխատեն օտար երկրում։ Իսկ այժմ այդ ապարանքները մնացել են ամայի, անշուք, որովհետև մեծ նվաճողի և քաղաքագետի հետնորդները այնպես չհասկացան և նույնիսկ հիմա այնպես չեն հասկանում պետության իսկական շահը։ Թուրքերի և պարսիկների մեջ այժմ էլ յուրաքանչյուր ուղղափառ մահմեդականի վրա անհրաժեշտ պարտականություն է դրվում՝ գեթ զգեստով պատսպարել բաց դաշտում քնած Արամի զավակին։ Խելացի թագավորներն ու օրենսդիրները մտածում և դատում էին այսպես, իսկ ամբոխն այլ կերպ վարվեց։ Ռուսաստանի և եվրոպական այլ պետությունների՝ հայերին տված հրովարտակներն ու արտոնությունները պարզ կերպով ապացուցում են նրա կարևորությունը քաղաքական կյանքում։ Թուրքիան և Պարսկաստանը եր-

քեք չեն մոռանա այն վերքերը, որ նրանց հասցրին այդ երկրներից հեռացող և Անդրկովկասի զանազան մասերը վերաբնակված հայ գաղթականները՝ 1826—1829 թթ. Ռուսաստանի՝ հիշյալ պետությունների հետ վարած պատերազմից հետո։ Ոչ պակաս ճշմարիտ է և այն, որ այդ ժողովրդից խլում են նրա մարտական ոգին։

Դարավոր ստրկությունը, իհարկե, զինաթափ է արել հայերին և նրանց վրա թողել է անվճռականության կնիքը, և շատերի մեջ առաջացրել զզվանք դեպի զենք կրելը, մի բան, որ հատկապես նկատելի է թուրքահայերի, մասամբ նաև պարսկահայերի մեջ. սակայն, մի՞թե Ղարաբաղի հայերը դրանց եղբայրները և դավանակիցները չեն, որոնք համարյա մինչև մեր դարի սկիզբը, շրջապատված տեղի բեգերով և խաներով, ունեին և պաշտպանում էին իրենց ինքնուրույնությունը։ Ղարաբաղի մելիքները իրենց հարևաններից ոչ պակաս աչքի են ընկել մարտական գործերով և ոգով։ Մի՞թե նույն այդ ոգով և կյանքով չե՞ն ապրում Չերքեզահայերը՝ նույն այդ լեռնցիների նման։ Մի՞թե հայեր չեն եղել քրդական շատ ցեղերի և համայնքների նախնիները, որոնք բռնությամբ են ընդունել թե՛ մահմեդական կրոնը, թե՛ ապրելակերպը, և թե՛ այդ վայրենիների բնավորությունը։ Հայեր չե՞ն, միթե, Խոսրով և Մանուչար խաները,— Թիֆլիսի գերիները,— որոնք մեր օրերում դղրդացրին ողջ Պարսկաստանը։ Կովկասի տարեգրություններում դեռ ինչքա՜ն հռչակավոր հայերի անուններ կան՝ նրա՝ հյուսիսի արծվի պաշտպանության տակ մտնելու ժամանակներից։ Բավական է միայն նրանց առաջ մղել, այն ժամանակ նրանք կլինեն բոլորովին նույնը, ինչ որ էին առաջ՝ կգործեն և՛ մտքով, և՛ զենքով։ «Հայերին մեծ ապագա է սպասում»,— հաճախ ասում էր ինձ սենատոր Հ<անը>, որ ինձ սիրով էր վերաբերվում։ Տա՛ աստված. մենք դրան էլ սպասում ենք, և ցույց կտանք, որ Հայկի և Ռյուրիկի արժանի զավակներն ենք։

Ժամանակին միլիոնավոր ժողովրդի եռուզեռով լցված վայրի ժայռերի մեջ, ցրտաշունչ, ջինջ, աշնանային այդ գիշերը, փրփրաբաշ Արփաչայի մռնչյունի տակ, գզգզված, ծակծկված քրդական վրաններում, որտեղ ամեն կողմից փչում է քամին,— այդ անհանգիստ, անհաշտ ժողովրդի կեղտոտ, ծխացող գետնափոր ձմեռանոցների մոտ մեր անցկացրած երեկոյից ավելի ուրախը՝ հավիտյան մոլեգին, հավիտյան հառաչող այդ գետը տեսել էր միայն Բագարանի և մեզանից 30 վերստից ոչ ավելի հեռավորության վրա գտնվող Անիի ծաղկման օրերին։ Ռուսական ինքնաեռի խլթխլթոցը, անգլիական պորտերի փրփրալը, շամպայնի և Նոյան այգիների բարեբար հյութի շվոցով ցայտալը, մեր բոլոր ընկերների, նույնիսկ՝ խեղդող-նեղլիկ խցերից դուրս պրծած էջմիածնի վանքի խաղաղ բնակչի բարեկամական,

սրտալի տրամադրությունը,— այս բոլորի հանդեպ խիստ հակադրություն էին կազմում՝ սև, կիսամերկ, լայնաթիկունք, հաստափոր և ընդհանրապես չաղլիկ, բայց ուրախ քրդուհիները իրենց խայտաբղետ զգեստներով, քրդուհիներ, որ այդ վայրի, տխուր վայրերում իրենցից ներկայացնում էին կենդանի ֆուրիաներ, որոնց համար այդ րոպեին ո՛չ մեծ Մողոլը, ո՛չ չինական կայսրը՝ իրենց ամբողջ փայլով ու հարստությամբ չէին թվա ո՛չ այնքան շքեղ, ո՛չ էլ այնքան սարսափելի, որքան մեր համեստ քարավանը. նրանց սահմանափակ երևակայության մեջ այդ անապատում, մեր քարավանի նման ոչ մի բան երբեք չի խախտել նրանց մշտական հիացմունքը դեպի իրենց արծվաքիթ, սարսափելի ամուսինները, խայտաբղետ բաճկոններով, մերթ կողքի թեքված, մերթ գլխներին բրգաձև ցցված կարմիր քոլոզներով, լայն, քաթանե սպիտակ շալվարներով, զինված՝ կեռ թրերով, ատրճանակով, վահանով և եղեգնյա նիզակով՝ ծայրը ցցունքով զարդարված. ամուսիններ, որոնք իրենց կանանց չեն տարբերում իրենց իսկ փոքրիկ, նիհար, բայց ամրակազմ, կրակոտ և դիմացկուն ձիերից։ Այդ վայրենիների ըմբռնումով, միայն ստրկությունը, տանջանքը, ահը և անսահման իշխանությունը ի վիճակի են ինչպես ձիերին, այնպես էլ կանանց սանձահարելու, զսպելու և սովորեցնելու՝ լուռ ու մունջ հնազանդվել իրենց գազանաբարո տերերի կամքին, քմահաճույքներին և կրքերին։

Հատված 8

ԱՆԻԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մեր հեծելախումբը, որ, ի միջի այլոց, կազմված էր նաև ֆանտաստիկ կերպով հագնված բազմաթիվ քուրդ ցեղապետներից, որոնք, ասես շքախումբ կազմած, փոխնիփոխ ուղեկցում էին իրենց բարի իշխանավորին, ճանապարհ ընկավ վաղ առավոտյան, թարմ եղանակին, ընթանալով սկզբում կիրճի միջով, գետի ձախ ափով, ապա կրկին հարթավայրով, ուղիղ դեպի հյուսիս, ուր գտնվում էր մեր ուղևորության գլխավոր նպատակակետը։ Այստեղ էլ ես իմացա, թե ինչ առիթով էին մեզ ուղեկցում երկու երիտասարդ պաշտոնյաները. պարոն Բ<լավատսկին> իր գրասենյակի պաշտոնյաներից երկուսին վերցրել էր իր հետ, որպեսզի նրանց առիթ տա զվարճանալու և հետզհետե զարգանալու։ Լավ, հոգատար իշխանավորի հրաշալի՜ հատկություն։ Յուրաքանչյուրի դեմքն անհամբերություն էր արտահայտում։ Մեզանից յուրաքանչյուրի լեզվի վրա պտտվում էր մի ինչ

որ բան, որ կորչում էր խոր, պերճախոս լռության մեջ։ Եկեղեցիների, քարվանսարաների, աշտարակների ավերակները, որոնք տրտում տեսքով դուրս էին ցցվել այդ գետի (Արփաչայի) երկու ափերին, և վերածվել էին քրդերի ձմեռանոցների,— ամենուրեք իրար էին հաջորդում։ Այդ ավերակների բնակիչների ամենուրեք մեզ ցույց տված սիրալիր ընդունելությունը, Աբրահամի ժամանակների նահապետական կենցաղավարությունը, նրանց ձիարշավներն ու ձիամարզումները, նրանց թուխ, խիստ դիմագծերով դեմքը և Հոմերյան հերոսների այրական, ասպետական կեցվածքը և երկրամասի կառավարչապետի խիստ, բայց ոչ պակաս նաև բարեկամական վարվեցողությունը նրանց հետ. Նրանց վարքի և կենցաղավարության նկատմամբ այն խրատները, որ երկրամասի կառավարչապետը տալիս էր նրանց, երբ այժմ, առաջին անգամ լինելով Երևանի գավառում, նա մտնում էր նրանց մենավոր վրանները. Նրա առատաձեռնությունը, բնակիչների՝ նրան մատուցած ամենափոքր ծառայության համար. կառավարչապետի անօրինակ անշահասիրությունը, երբ նրան մատուցում էին զանազան, ոչ-պակաս թանկարժեք ընծաներ, ինչպես՝ ձիեր, կովեր, և այլն, մի բան, որ ասիացիների մեջ համարվում է հյուրասիրական ամենասուրբ պարտականությունը, հատկապես այն դեպքում, երբ հյուրը կարևոր անձնավորություն է, էլ չեմ ասում՝ եթե նա երկրի կառավարիչն է, որի համար Պարսկաստանում այժմ էլ ճանապարհի մեջտեղը կամ տան շեմքին ոչխար կամ գոմեշ են մորթում և գորգերով ու թանկագին կերպասով ծածկում նրա ճանապարհը. հյուրը տանտիրոջ տանից դուրս գալիս, նրան ընծա են բերում գեղեցիկ զարդարված ձիեր. այդ պարգևները, որ կամավոր են, հյուրի կողմից մերժվելու դեպքում՝ վիրավորանք է տանտիրոջ համար. կառավարչապետի փաղաքշական վերաբերմունքն ու հարգանքը ծերերի և բարեբարո մարդկանց նկատմամբ. խիստ հանդիմանություններն ու սպառնալիքները՝ անուղղելիների և իրենց վատ պահողների հանդեպ. այս ամենը, ամենը կարող էին հարուստ և հիանալի մտավոր սնունդ տալ նույնիսկ դիտողականությունից զուրկ մարդուն, բայց մենք Անի՛ն ենք մոտենում։ Մեր բոլոր զգացմունքները, մեր ամբողջ ուշադրությունը բռնկված էր միայն մի ցանկությամբ, միմիայն մի ուխտով, սրբազան, սքանչելի, ոգևոր, սրտամորմոք մի ուխտով, և այդ պահին մեր գլխով սրաթռիչ և խորապես խոյացող այն միտքն էր անցնում, թե որքան մեծ են ու պանծալի, անցողական և ունայն աշխարհիս բոլոր բարիքները և ստրկորեն դրանց հետամտող ժողովուրդները։

Դեռևս հեռվից, 20 վերստից ավելի տարածության վրա, կողք-կողքի վրա գտնվող ոչ-մեծ բլուրներից մեկի գագաթին, մեր առջև, աղոտ կեր-

պով, ուրվականի նման երևաց գունատ, դեղնա-կարմրավուն, և աշնանային արևի պայծառ շողերի մեջ սպիտակին տվող մի աշտարակ։— Անին է այդ աշտարակի հետևը,— ասում էին հաճախ մեզ ուղեկցող քրդերն ու հայերը՝ իրենց պարզմտությամբ գովելով Անիի մե՛րթ եկեղեցիները, մե՛րթ բերդը և սրանց գեղեցկությունները, և հատկապես նրա գետնուղին, որ, ինչպես ավանդությունն ասում է և պատմագիրները հավաստում են, արևելյան ժողովուրդների համար հանդիսանում է որպես երկրորդ եգիպտական լաբյուրինթոս, որը, սակայն, իր մեծությամբ և շքեղությամբ անհամեմատ գերազանց է նրանից, ուր մտնողը, առանձնահատուկ դյութանքի ենթարկվելով, իր առջև տեսնում է՝ շքեղությամբ ու գանձերով շշմեցուցիչ բոլորովին նոր մի աշխարհ։ Խանութների մի ամբողջ շարք։ մի հսկայական շուկա՝ լցված ընտիր կտորներով. թանկագին քարերով, ոսկով և արծաթով՝ յուրաքանչյուր քայլափոխին հիացմունք են պատճառում ապշած եկվորին։ Խանութներից յուրաքանչյուրի մեջ, ամենալուրջ դիրքով, շքեղ հագնված նստած է խանութի տերը, որ, համարյա կենդանի, խոսուն դիմագծերով, հրապուրում է սարսափից և զարմանքից քար կտրած ուղևորին։ Վերջինս ամենուրեք կյանք է տեսնում, բայց անշարժ, անձայն, ասես դյութանքով ընդարմացած կյանք։ Ուղևորի հետաքրքրությունը բորբոքվում է, աչքերից փախչում է քունը. այդ բարիքները թեկուզ ամենափոքր չափով վայելելու ցանկությունից թրթռացող սիրտը այլևս ի վիճակի չէ զերծ մնալ գայթակղությունից. ձեռքն ակամայից ձգվում է դեպի ոսկու կույտը՝ շոշափելու այն, և մի ակնթարթում թե՛ տերը, թե՛ նրա գանձերը փոշի են դառնում և չար ոգիների խարդավանքով այստեղ ընկած դժբախտը կենդանի թաղվում է առհավետ՝ հազարավոր անցքերի, սենյակների և փողոցների ոլորապտույտներում, որը ոչինչ չնշանակող հունական լաբյուրինթոսը չէ՛, այլ թուրքական, շատ հաջող բնութագրող՝ Գեղար-գյալմազը, որ բառ առ բառ նշանակում է հետևյալը. «Կգնա՝ չի դառնա»։

«Հազար ու մեկ գիշերներում» Շեհերազադայի հեքիաթների ընթերցողները այս դեպքում շատ լավ կարող են բացատրել Անիի հազար ու մեկ հայկական եկեղեցիների այլաբանությունը, համեմատելով այն արաբական հեքիաթների թվի հետ, և որոշել, թե ո՛րտեղից է վերցրած ստեղծագործական երևակայությամբ միայն գունազարդված այդ «Գեղար-գյալմազի» առասպելների սյուժեն։ Ոչ պակաս տարօրինակ է նաև այն, որ մեր արևելցի հեքիաթ ասացողները այդ բոլորը պատմում են այնքան կենդանի, ճշմարտանման և նույնիսկ բնականորեն, հիշատակելով թե՛ տարին, թե՛ այնտեղ կորածների թիվը, որ նման խորամիտ, բայց իրենց տեսակի մեջ գեղարվեստական-հրաշապատում, մտացածին բաներին չհավատացողն էլ,

ակամայից, սարսուռ է զգում՝ լոկ միայն հետաքրքրությունից իրեն նման փորձության ենթարկելու մտքից։

Միջին դարերում, բոլոր ժողովուրդների մեջ,— նույնիսկ քրիստոնյա,— որոնք այդ ժամանակ զորեղ էին և Բագրատունի հայ թագավորական դինաստիայի հետ հարաբերություններ էին պահպանում, միայն արաբները, այդ ազնիվ, անզուգական, զարգացած և մեծահոգի ժողովուրդը և նրա՝ ո՛չ նախանձից, ո՛չ ընչաքաղցությունից և ո՛չ էլ չարությունից չկուրացած, բայց բոլոր մեծ, բոլոր գեղեցիկ գործերով ոգեշնչված խալիֆները թե՛ Բաղդադում, թե՛ Կորդուբում՝ Հարուն-ալ-Ռաշիդը, Ալ-Մանսուրը, Մաքսամը, Խարաշա-Ամիրը, որոնց անուններով պարծենում է նաև քրիստոնյա ժողովուրդների պատմությունը. միայն խալիֆներն՝ Մեքքայի մարգարեի համեստ հետևորդները գիտեին և ըմբռնել էին, դեռևս Քրիստոսի ծննդից հետո, 5-րդ դարում հանգած, և կոպիտ ու վայրենի հարևան բոլոր ժողովուրդների մեջ այնքան ուժեղ, այնքան օգտակար Մեծ Հայաստանի հզոր թագավորության վերականգնման ամբողջ կարևորությունը, և ձգտում էին ամեն կերպ սատարել, ուժեղացնել և զարգացնել նրան՝ համոթ և ի նախատինս մեր քրիստոնյա եղբայրակիցների։ Խոսքս վերաբերում է ոչ այլ ոքի, քան հույներին և նույնիսկ վրացիներին, որոնք, օգտվելով մերթ հոնների և մոնղոլների արշավանքներից, մերթ պարսիկների և թաթարների կատարած ավերածություններից, քաղցած անգղների նման պատրաստ կանգնած, հարմար ժամանակ և առիթ որսալով, իրենց կիրճերից և ծակուծուկերից նետվում էին պատառոտված, արդեն պատրաստի որսի վրա, իրենց ստոր կրքերին՝ ընչաքաղցությանը և կրոնական անհանդուրժողականությանը հագուրդ տալու համար։ Բայց նրանց, ինչպես և նրանց արարքների մոլի դրվատողներին, Թիֆլիսի երիտասարդությանը, կպատմի պատմությունն ու քննադատությունը. դրա համար էլ դիմենք վերջիններիս. դեռևս վիճելու ժամանակը չէ։

Աշոտ III Ողորմածը և առաջին օծյալ Բագրատունի թագավորը, որ Անին իր արքայանիստը դարձրեց <961> թվին, առաջինը Բաղդադի խալիֆ Մաքսամից ստացավ թագ և արքայական բոլոր նշանները։ Նրա որդին՝ Սմբատը, որին Աշխարհակալ են կոչել, նույն թագն ու արքայական նշաններն ստացավ երկու անգամ, բայց Գագիկը, այդ թագավորական տան վերջին զարմը, դավաճանորեն հրավիրվելով Կոստանդնուպոլիս, մեռավ տարագրության մեջ, որպես աքսորական...

Այսպիսով, արաբները, որոնց թուլացումով թուլացավ նաև Բագրատունիների թագավորությունը, իրենց ամբողջ ճանապարհին՝ Արաբիայից մինչև Հայաստան, տեսնելով միայն տափաստաններ և կավե քաղաքներ,

ինչպիսին են, այժմ էլ, մեծ մասամբ Ասիայի քաղաքները, այնքան սերտ հարաբերության մեջ լինելով հայ թագավորների հետ,— նրանք իրենց տոթակեզ, ամայի անապատներում, օժտված լինելով վառ, գունագեղ երևակայությամբ, հասարակ հովիվների՝ իրենց եղբայրակիցների մոտ այլ կերպ չէին կարող մեծարել Անին՝ ծաղկավառ դաշտերի և քաղաքների, շքեղ պալատների և արքայական պերճանքի մեջ, ասես հանճարով ոգեշնչված, սքանչելի Անին, քան նման չափազանցություններով, մտացածին բաներով, տարածելով առասպելներ Գեդար-գյալմազի կամ այդ քաղաքի տակ եղած լաբյուրինթոսի մասին, որ, նույնիսկ պատմաբանների նկարագրության համաձայն, անցնում է ո՛չ միայն քաղաքի ամբողջ ներքին մասի երկայնքով, այլև, կազմելով երկրորդ գետնուղին, ոլորվում է Արփաչայի մոտով, մինչև նրա արևելյան ափերը։ Սառն բանականության տեր մարդու համար, իհարկե, այդ մասին մտածելն անգամ ծիծաղելի է, բայց այստեղ կրկին ցայտուն կերպով աչքի է զարկում պատմական այն կարևորագույն փաստը, թե այդքան կարճ ժամանակի մեջ փառքի, հզորության և մեծության ի՞նչ աստիճանի էր հասել հայ ժողովուրդն իր գործունեությամբ, ուժով, ճաշակով և արվեստով, որոնց մեջ, չնայած իր դժբախտ ճակատագրին, այդ ժողովուրդը միակն է։

Այսպիսի մտքերով և զրույցներով աշխուժացած, ճանապարհի հեռավորությունից և քարավանի դանդաղ ընթացքից դառնացած, հետզհետե մոտենում էինք հեռվից մեզ երևացող բղձալի ուրվականին այն աշտարակի, որ Անիի՝ վերը մեր նկարագրած ծաղկած օրերին հանդիսանում էր ամբողջ շրջակայքի վրա իշխող առաջին դիտանոցը, որ գտնվում է այժմյան կազակային պահակակետում, այդ քաղաքից երեք վերստ հեռավորության վրա՝ ուղիղ դեմ-դիմացը այն սարսափելի բերդի, որ այժմ էլ մահմեդականների լեզվով կոչվում է Մաղասբերդ: Այս հանգամանքը ես հիշատակում եմ հենց նրա՛ համար, որ վայրի թաթարները, գրագետ չլինելով, աղճատել կամ խառնափնթորել են հայկական բոլոր աշխարհագրական անունները այն աստիճան, որ այժմ ոչինչ չես հասկանա, սակայն Մաղաս բերդը,— չնայած որ դրա տերերը արդեն 800 տարի սրանից առաջ եղել են թուրքեր կամ քրդեր,— իր անունը անաղարտ պահպանել է, կոչվելով իր կառուցողի՝ Քրիստոսի թվականության 10-րդ դարում ապրող հայ իշխանի անունով, որ նշանակում է Մաղասի բերդ։ Այդ անունը լսելով իմ երևակայությունը բոցավառվեց հարյուր անգամ ավելի։ Դեռ մանկությանս տարիներին ես ինքս երգում էի և նույնիսկ այժմ էլ հիշում եմ մի քանի հատված այդ երգից, որ հյուսել էին հայ գուսանները հիշյալ բերդի վերջին տիրակալի ողբալի մահվան առթիվ։ Դա մեր ամբողջ երկրամասում

սարսափ տարածած ինքնակոչ — ավազակ Ջոր-Կարա-Գյոզն էր, այսինքն՝ Հզոր-սևաչյա, որին, ի վերջո, բռնեց և գլխատեց Էրզրումի զորագլուխ Քոսա-փաշան, հենց նա՛, որն Ախալցխայի տակ գերի ընկավ և մի առ ժամանակ ապրեց Թիֆլիսում։ Այդ եղերերգությունը, բառացի թարգմանությամբ, սկսվում է այսպես.

Որ իմանայի՝ չէի նստի արագավազ ձին,
Երդում կուտեի՝ չէի մտնի Մաղաս-բերդ՝
Գլուխս չէի զարկի Ուշտուգլի — վեզիրին.
Հե՜յ-վա՜խ, վեզիր, խի՜ղճ արա ինձ, Ջոր-Կարա-Գյոզիս...

Դեպի Էրզրում էր գնում իմ քարավանը՝
Արյուն-արցունքի ծովում խեղդվեց իմ ընտանիքը,
Սար ու ձոր հառաչում, ողբում են ինձ հետ
Հե՜յ-վա՜խ, վեզիր, <խի՜ղճ արա ինձ, Ջոր-Կարա-Գյոզիս>։

Այժմ հասկանալի դարձավ ինձ այդ կորիճի թե՛ քաջությունը, թե՛ ինքնավստահությունը, թե՛ սրընթաց, անզուսպ նրա ասպատակությունները դեպի շրջակա և հեռավոր վայրերը, և այն սարսուռը, որ զգում էր ամեն ոք՝ ասպետական ժամանակների այդ ստահակ հերոսի անունը լսելիս։ Այդ բերդը շրջապատող հովիտը կազմում է մի սարսափելի կիրճ, որպիսին հազվադեպ կարելի է տեսնել ամբողջ Անդրկովկասյան երկրամասում։ Բոլոր կողմերից բերդը պաշտպանող քարաժայռերը հազիվ մատչելի են հետիոտին, և այն էլ՝ միայն մի կողմից։ Սրբատաշ քարերից գեղեցիկ կառուցված բերդը, որպես անողոք պահակ, կանգնած է առանձնակի՝ սեպաձև բուրգի նման վեր ցցված ժայռի տակ, որի մոտով անցնում է, այստեղից սկըսած՝ անձայն, ոչ պակաս խոր և մութ Արփաչայը, որը թերևս հենց դրա համար է ստացել Գարու-գետ անունը։ Միայն նա, ով տեսել է «Ռոբերտ Սատանայի» մեջ պատկերված տեսարանը՝ գերեզմանատունը և մեռելների հարություն առնելը, թերևս նա կարող է պատկերացնել կարմրա-պղնձագույն, գորշ, տեղ-տեղ սև, ատամնավոր, սրածայր, բրգաձև՝ լույս ցերեկով անգամ սարսափ ազդող այդ ժայռերը, որոնք իրենցից ներկայացնում են, այսպես ասած, դիվային մի զբոսավայր, որտեղ սատանայապետ Սադայելն իսկ իր վիզը կկոտրեր, եթե ցանկանար, իր դիցուհիների հետ խրախճանք սարքել...

Հատված Թ

ՄՈՒՏՔԸ ԱՆԻ ԵՎ ԱՅՆՏԵՂ ԳՏՆՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Աշնանային արևն արդեն թեքվել էր զենիթից, և մենք ստիպված եղանք կանգ առնել երեք բլրաձև ժայռերի սահմանագծին՝ մեր նպատակակետը հանդիսացող Անիի հարավային նախադռներին։ Անհամբերությունից սիրտս թրթռում էր, աչքերս ագահորեն փնտրում էին սիրելի քաղաքը, հարթավայրն ավելի ու ավելի ընդլայնվում էր, հորիզոնը հալվում էր ջինջ, անամպ օդային օվկիանոսի գեղեցիկ կապույտի մեջ, և հանկարծ,— սիրելի՛ ընթերցող, ների՛ր, լեզուս չի համարձակվում բառերով արտահայտել և՛ վեհ, և՛ հուզիչ, և՛ սրտառուչ, և՛ ցավատանջ ու վշտագին իմ բոլոր զգացմունքներն ու տպավորությունները,— և հանկարծ, օ՜ հրաշք, մեզ երևաց խորհրդավոր քաղաքի վիթխարի զանգվածն իր բազմաթիվ գմբեթներով ու զմայլելի ու արտասովոր վիթխարի պարիսպներով։

Անին առաջին անգամ ես տեսել եմ ոչ այդ կողմից։ Եվ ո՛չ մի կողմը չի կարող այնպես ուժեղացնել տպավորությունը կամ այնպես ապշեցնել հետաքրքիր այցելուին,— հատկապես մայրամուտի պահին,— ինչպես այդ կողմը, որ երկար, շա՜տ երկար սպասումով կեղեքում է ուշադիր ուղևորի խանդավառված հոգին, և, մի վերստից ոչ ավելի հեռավորության վրա, ինչպես ափի մեջ, բաց է անում տենչալի, խորհրդավոր քաղաքի բոլոր հմայքները։ Մյուս կողմերը բաց են և կորչում են հսկայական հարթությունների հետ միասին անծայրածիր կապույտի մեջ, որը շրջափակում են՝ Ալեքսանդրապոլի գավառից այն կողմը վեր խոյացող՝ Կարսի, Չըլդրի, Փամբակի և Ալագյազի լեռները։ Թերևս, արդեն, չափից ավելի շատ խոսեցի՝ այդ սրբազան հնության հետ կապված հիշողությունների առթիվ հոգիս ալեկոծող զգացմունքների մասին. բայց նկատի ունեցեք նաև, որ նա, Անին, քրիստոնեության արգասիքն է, բոլորից հալածված՝ և՛ վերջին, և՛ նորագույն դարերում, բոլորից հետապնդվող. աստվածային հավատի աղանդի պատվարը. որ դա ստեղծագործությունն է մի ժողովրդի, որ չի եղել հռոմեացիների նման՝ նվաճող. մոնղոլների և պարսիկների նման՝ բազմաքանակ, հնդիկների, չինացիների և հույների նման՝ առատաձեռն բնությունից և հազարամյա հանգստավետ կյանքով փայփայված. ու երկրի հարստությամբ ողողված, և ո՛չ էլ ուրիշների արյամբ և գանձերով է հարըստություն ձեռք բերել. դա ստեղծագործությունն է՝ իր սեփական ջանքով ու աշխատանքով փառքի ու մեծության այդ աստիճանին հասած, խաղաղ, գործունյա, բայց դաժան բախտի բերումով մեծ ու անթիվ բոլոր նվաճող-

ների խաչուղիների վրա ընկած մի ժողովրդի,— ի նկատի ունեցեք այս բոլորը, և դուք կարող եք ինձ հետ լիովին բաժանել իմ՝ և՛ օրինական խանդավառությունը, և՛ արդարացի վիշտը, որպիսի զգացմունքներ իսկական քրիստոնեական, իսկական մարդկային հոգում չեն կարող առաջ բերել ո՛չ Հռոմը, ո՛չ Բյուզանդիոնը, ո՛չ Եգիպտոսը և ո՛չ էլ Բաբելոնը։

Անին տեսնելուց անմիջապես հետո, մենք արդեն կանգնած էինք կազակների պահակակետում, որ գտնվում էր գետի այս ափին՝ Անիի ուղիղ դիմացը։ Պետք չէր ժամանակ կորցնել։ Մենք ոտքով իջանք դաշտը, որպեսզի, որքան հնարավոր է շուտ՝ հասնենք քաղաք։ Մի քանի շիրիմներ, և մեզանից ձախ, արևմտյան կողմում, բավականին հեռու, թեք ժայռի վրա կառուցված մեծ եկեղեցին մեզ հանդիպած առաջին առարկաներն էին, որոնք հիմք էին տալիս եզրակացնելու, թե հնում քաղաքի այդ մասն էլ բնակավայր է եղել։ Վայրէջքը բավականին նեղ էր ու ոլորապտույտ, և Արփաչայը, իր հոսանքի ամբողջ ընթացքում ոչ մի տեղ այդքան դիք, բարձր ափերի մեջ չի սեղմված, ինչպես այս մասում։ Մենք ուշադիր դիտում էինք հանդիպակաց աշտարակներն ու եկեղեցիները, երբ հանկարծ, ավելի կարևորագույն մի առարկայով դյութված, ակամա շտապեցինք այնտեղ, դեպի այդ առարկան։ Դա եռաշերտ կամուրջն էր, որ քաղաքը միացնում էր մեր սահմաններին։ Եթե այնպիսի մի գիտակ-ճարտարապետի, ինչպես պ. Զ«երնյավսկին» է, այդ ամբողջ աշխատանքը թվաց մի հրաշալի գործ, ապա ինձ ասելիք չի մնում։ Կամուրջի նախագծի, մտահղացման և կառուցման հստակությունը, ճշգրտությունը և գեղեցկությունն աննման են, իսկ գետի վրայով ձգված կամարը՝ մեծությամբ և նրբակերտությամբ արվեստի մի հրաշալիք է։ Կարող էիր կարծել, թե արվեստագետը հենց նոր միայն թողել է աշխատանքը՝ եթե ներքևում, այս ու այն կողմ ընկած մի քանի բեկորները քեզ դուրս չբերեին այդ հաճելի խաբկանքից։ Նույն բնույթն ունեն նաև քաղաքի բոլոր շինությունները։ Կամուրջը, որ ամբողջական վիճակում ունեցել է ավելի քան 12 սաժեն (այժմ՝ 10 սաժենից ոչ ավել) բարձրություն և 8 սաժեն երկարություն, բաժանված է երեք հարկի՝ երեք կարգի անցորդների համար, այն է՝ հետիոտն գնացողների, թեթև հեծյալների և բեռնված ձիերի։ Դատելով կամուրջի դիրքից և կառուցվածքից, նրա վրայով կառքով անցնել հնարավոր չի եղել։ Արփաչայը, տարվա այդ եղանակին էլ, երբ ջուրը շատ պակասած է լինում, շատ քիչ անցանելի է նույնիսկ հեծյալ ուղևորի համար։ Դաշտավայրը և նրա ամբողջ շրջակայքը, դատելով խոտերից և ծաղիկների չորացած ցողուններից, գարնանը պետք է որ սքանչելի լինի։ Այդ նվիրական դաշտից իմ վերցրած մի

քանի սերմերը՝ այդ օրվա և այդ վայրի թանկագին հիշատակներ կմնան։

Ձիով դժվարությամբ անցնելով գետի մյուս կողմը, մենք այժմ բարձրանում էինք նույն այն ճանապարհով, որով 800 տարի սրանից առաջ անցել էին թագավորներն ու իշխանները։ Մի փոքր ձիավարելով քաղաքի հարավային մասով աղեղի նման ձգված պարիսպով, որ ընդհատվում էր անթիվ քարանձավների և փոսերի սև բացվածքներով, որոնք դուրս էին հանել իրենց երախները՝ կուլ տալու այդ նվիրական սրբություններն իրենց հետաքրքրությամբ վիրավորող հանդուգն հողածիններին, մենք արդեն կանգնած էինք լուռ գերեզմանային Անիի կենտրոնում։ Այստեղ, Հայկի որբացած զավակը կամ հյուսիսի ազնիվ որդին,— որ ոչ նվազ ակնածանքով երկրպագում է իր թագավորի գայիսոնով փրկված և բարեբարված բոլոր ժողովուրդների թանկագին սրբություններին,— թո՛ղ կոչեն երկնային հրեշտակներին, առ ամենաբարձյալի գահը,— ուր գտնվում են այս տաճարների կառուցողները՝ երանության մեջ՝ հավիտենական լուսապսակով պսակված,— որպեսզի Արամյան տունը պահպանվի դառն ու անողորմ ճակատագրի հետագա ավերածությունից։ Ահա այս առաջին ալեկոծ զգացմունքը, որ ճմլում է մարդու և սիրտը, և աչքերը, որոնց խիստ կսկիծ են պատճառում թե՛ այս սրբավայրը, թե՛ թախծալի, բայց դեռևս փառահեղ հուշարձաններն ու նրանց հետ կապված հիշողությունները։ Բայց ինչո՞ւ բաց անել այն մուտքը և այն վայրը, որտեղ բարձրացել և որտեղ խրախճանել են միլիոնավոր անմահ հոգիներ. ահա՛, դարձյալ, նրանց ստեղծագործությունները, որ ավելի կենդանի, քան լեզուն ու գրիչը, խոսում են այն ամենի մասին, ինչ որ եղել ու անցել է,— և անցել է առհավե՜տ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աբովյանի գեղարվեստական երկերը իր կենդանության օրերին չեն հրատարակվել ո՛չ մամուլում, ո՛չ էլ առանձին գրքերով։ Միակ փորձը, որ ձեռնարկել էր հեղինակը, «Նախաշավիղ կրթության» դասագիրքն էր (հայոց լեզվի այբբենարան և ընթերցարան), բայց այն մնաց կիսակատար։ 1839 թվականին Արզանյանցների տպարանում (Տփղիսում) սկսվեց գրքի տպագրությունը, բայց հազիվ 72-րդ էջին հասած՝ ընդհատվեց։ Ժամանակ անց, արդեն այլ տպարանում, Աբովյանը կարողացավ պատրաստել տալ ևս 24 էջ, որոնցով սակայն գիրքը չէր վերջանում։ Հետագա էջերի ճակատագիրն անհայտ է։ «Նախաշավիղ կրթության» դասագրքից առ այսօր հայտնաբերված է միայն երկու օրինակ։ Մեկը խիստ պակասավոր (պարունակում է 9—72 էջերը), պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, մյուսը՝ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի տպագիրների բաժնում (պարունակում է 1—96 էջերը, սակայն չունի անվանաթերթ և նյութերի ցանկ)։

Գիրքը թեև պաշտոնապես լույս չի տեսել, սակայն նրանով Աբովյանը հայոց լեզու է ավանդել իր մասնավոր դպրոցի աշակերտներին։ «Նախաշավղում» ամփոփված նյութերը (մանրապատումներ, բանաստեղծություններ, առակներ, աղոթքներ և այլն) մեծ մասամբ փոխադրված են գերմաներեն համապատասխան գրքերից, կամ էլ ժողովրդական առակների ու զրույցների վերամշակումներ են և իրենց բուն նպատակին ծառայելով հանդերձ՝ գեղարվեստական-գաղափարական առումով կատարյալ հորինվածքներ չեն։

Դրան հակառակ՝ Աբովյանը որոշակի մասնակցություն է ունեցել ժամանակի ռուսերեն և գերմաներեն պարբերականներին («Տիֆլիսկիե վեդոմոստի», «Դյորպտշե ցայտունգ», «Դորպատսկո յահրբյուխեռ», «Սանկտ-Պետերբուրգիշե ցայտունգ», «Զրորնիկ գազետ Կավկազ», «Կավկազ»), հրատարակելով վերջինների մեջ, 1831 թվականից սկսած, ուղեգրական մի քանի երկ («Վերելք Արարատի գագաթը», «Նոր վկայություն», «Նոր վերելք Արարատի գագաթը»), ազգագրական ակնարկներ («Քրդեր», «Եզիդիներ»), հոդվածներ և նկատողություններ (Հայոց կաթողիկոսի նամակը պրոֆ. Կլապրոտին, Հ. Ալամդարյանի մահվան առթիվ, ծանոթություններ Է. Հերմանի՝ Ռուսական Հայաստանի մասին գրած աշխատության)։ 1843—45 թթ. Աբովյանի բանահյուսական մի շարք նյութեր, աշուղական խաղեր և ռոմանսներ է տրամադրում (հանդերձ տողացի թարգմանություններով ու մեկնաբանություններով) գերմանացի բանաստեղծ Ֆ. Բոդենշտեդին, բնախույզ-գիտնական Մ. Վագներին և տնտեսագետ Ա. Հաքստհաուզենին՝ հրատարակելու համար։ Դրանք լույս տեսան նրա մահվանից հետո միայն, 1849—56 թթ. ընթացքում, Գերմանիայում։

Աբովյանի հայերեն երկերի հրատարակությունն սկսվում է 1850 թվականից. սկզբնաբում՝ պատահական առիթներով («Աշխարհիկ բարբառ Երևանցի հայոց» ակնարկը «Արշալույս Արարատյան» լրագրի 1850 թ. № 360-ում, «Աղասիի երգը» Գամառ Քաթիպայի Երգարանում— 1856 և Պոլսի «Մեղվում»— 1857, № 21), իսկ 1858-ից՝ լայն ծավալով։ Այդ առումով՝ լուրջ ու շնորհակալ գործ են կատարել «Մեղու Հայաստանի» լրագրի և «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի հրատարակիչները և մշակութային նշանավոր գործիչ Հ. Փոնդոյանը՝ խորհրդականներ ունենալով Աբովյանի սիրելի աշակերտներ Գ. Խատիսյանին ու Գ. Աքիմյանին, մտերիմ բարեկամ Մ. Տեր-Ազարյանցին։ 1858-ին Տփղիսում լույս տեսավ «Վերք Հայաստանին», 1860-ին՝ «Զանգին», 1862-ին՝ «Նախաշավիղ կրթության» դասագրքի վերամշակված տարբերակի առաջին մասը, 1864-ին՝ «Պարապ վախտի խաղալիքը» և «Հազարփեշեն» պոեմը, զանազան պատմվածքներ, բանաստեղծություններ ու նամակներ. 80—90-ական թթ. Աբովյանից նոր երկեր ու նամակներ են հրատարակել Ն. Տեր-Կարապետյանը և Ա. Երիցյանը։ Մի քանի նոր երկեր տպագրվեցին նաև ներկա դարասկզբին՝ «Թուրքի աղջիկը», «Բարեկամի մոտ» («Անտիպ երկեր» գրքույկի կազմում, 1904), «Հազարփեշեն» (տարբերակ, 1912), վերատպվեց «Վերք Հայաստանին» (1897, 1908) և այլն։ Եվ այնուհանդերձ՝ Աբովյանի գրական ժառանգության ճնշող մեծամասնությունը մնում էր անտիպ ու անհայտ։ Միայն երջանիկ պատահարի շնորհիվ, 1920 թ. թոհուբոհի ժամանակ, նրա ձեռագրերը փրկվեցին ոչնչացումից։ Դրանք գուրգուրանքով պահում էր Աբովյանի թոռը՝ քիմիկոս և բանասեր Կոստանդին Աբովյանը, և 1938-ի ապրիլին հանճարեղ գրողի ժառանգների կողմից նվիրաբերվեցին Սովետական Հայաստանի Գրական թանգարանին։

Աբովյանի երկերի հրատարակությունն ու գիտական մեկնաբանումը, ըստ էության, դրանից հետո միայն սկսվեց, թեպետ հներն էլ, իրենց ծանոթ ու մատչելի երկերի սահմաններում, առել են ծանրակշիռ խոսք, մասնավորապես՝ Մ. Նալբանդյանը, Ստ. Ոսկանը, Պ. Պռոշյանը, Հովհ. Թումանյանը, Ստ. Շահումյանը։

Սովետական տարիներին Աբովյանի նորահայտ երկերի հրատարակման ու մեկնաբանման բնագավառում որոշակի վաստակ ունեն Ե. Շահազիզը, Ռ. Զարյանը, Հ. Մուրադյանը, Ա. Ասատրյանը։ Եղել են Աբովյանի ստեղծագործությունների համախմբման փորձեր ևս։ Դեռ 1897-ին մի հատորով հրատարակվեց Աբովյանի՝ մինչ այդ ծանոթ կարևոր երկերի ժողովածուն («Խաչատուր Աբովյանի երկերը»), իսկ ավելի քան քառասուն տարի անց, 1939—40 թթ.՝ Խ. Աբովյանի ընտիր երկերի եռհատորյա ժողովածուի առաջին երկու գրքերը։ Վերջապես՝ 1947—61 թթ. ընթացքում, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը իրականացրեց Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի գիտական հրատարակությունը՝ բաղկացած տասը ստվար հատորներից (ծրագրված էր ութ հատոր)։ Տակավին մնում են անտիպ ու չհավաքված մի շարք երկեր ու գրություններ, որոնք կարող են կազմել մի քանի հատոր։

Ցավոք, բացառությամբ «Վերք Հայաստանի» վեպի և «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի, Աբովյանի մյուս երկերը երկար տարիներ է արդեն, որ չեն վերահրատարակվում, թեպետ Աբովյանի անմահ ստեղծագործություններն այսօր էլ իրենց մասնակցությունն են բերում մեր գրական ու հանրային կյանքին, նպաստում նոր սերնդի հայրենասիրական ու ինտերնացիոնալ դաստիարակությանը, սովետական ժողովուրդների հավերժ միաձուլմանն ու եղբայրական կապերի ամրապնդմանը։

Ներկա հատընտիր ժողովածվում ի մի են հավաքված Աբովյանի այն երկերը (հարկավ,

խիստ ընտրությամբ), որոնք հատկանշում են նրա գրական նախասիրությունները (թեմաներ, կերպարներ) և գաղափարական-գեղարվեստական որոնումները։ Բնագրերը տպագրության են պատրաստված ըստ Աբովյանի երկերի ակադեմիական լիակատար ժողովածուի I, II, IV, V, VII, VIII և X հատորների։ Միայն «Վերք Հայաստանի» վեպը լույս է տեսնում ըստ Պ. Հակոբյանի պատրաստած բնագրի, որ տպագրել է Երևանի համալսարանի հրատարակչությունը («Ուսանողի գրադարան» մատենաշար, 1981)։

Ժողովածուի սահմանափակ ծավալը հնարավորություն չտվեց ներառնելու հատկանշական էջեր Աբովյանի Դորպատյան օրագրերից, նամակներից, ուսումնական ձեռնարկներից և պաշտոնական գրություններից, թարգմանություններից։ Հետաքրքրասեր ընթերցողներն այդ ամենը կարող են կարդալ Աբովյանի երկերի 10-հատորյակի համապատասխան գրքերում և «Դիվան Խաչատուր Աբովյանի» երկհատորյակում, որը լույս է տեսել Ծ. Շահաղեքի աշխատասիրությամբ։

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՈՂԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ» (էջ 3)

Պահպանվել են սևագիր ու մաքրագիր ինքնագրերը և նախնական տարբերակի («Աղասու խաղը») մի մասի ձեռագիրը (ավելի քան 7000 տող)։ Առաջին անգամ հրատարակվել է 1858 թվականին (գրաքննական թույլտվությունը՝ 16 օգոստոսի 1857), բազմաթիվ գրաքննական և խմբագրական կրճատումներով։ Հետագայում (առանձին գրքերով և հեղինակի երկերի ժողովածուներում) ունեցել է ևս տասը հրատարակություն՝ 1897, 1908, 1931, 1939 (երկու անգամ), 1948, 1954, 1955, 1959, 1981 թվականներին, որոնցից երկուսը՝ սփյուռքում (Պոլիս, 1931 և Բեյրութ, 1954), իսկ մյուսները Մոսկվայում (1897), Տփղիսում (1908) և Երևանում։ Բացի այդ, երկու անգամ լույս է տեսել վեպի համառոտած տարբերակը՝ Ստ. Զորյանի և Հ. Քոչարի աշխատասիրությամբ (1948, 1975)։ Ծանոթ են «Վերքի» առանձին դրվագներից ու հատվածներից կազմված գրքույկներ («Սիրելի հերոս»— 1905, «Վերք Հայաստանի գրքի գոհարներից»— 1912), Ս. Քամալյանի աշխատասիրությամբ, մի գրական կոմպոզիցիա (Ս. Քոչարյանի, տպագրված 1957, 1963 և 1978) և նրա թեմաներով գրված երկու դրամատիկ երկ՝ Պ. Պռոշյանի «Աղասի» ազգային ողբերգությունը («Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում, 1863 թ. և առանձին գրքույկով), դերասան Ա. Սարդարյանի «Ասլան Բալասի կամ Երևանի առումն» պատմական դրաման (4 գործողությամբ). մանավորապես վերջինը բեմադրվել է հայկական համարյա բոլոր բնակավայրերում, ներկայացվել նաև վրացական բեմերում (պիեսի է վերածվել 1895 թ., չի տպագրվել)։

Անցյալներում «Վերք Հայաստանին» հատվածաբար թարգմանվել ու տպագրվել է միայն ռուսերեն, իսկ մեր օրերում, ամբողջական և կրճատված տարբերակներով՝ ռուսերեն (7 անգամ), էստոներեն, լատիշերեն, լիտվաներեն (2 անգամ), ուկրաիներեն, վրացերեն։

Սույն հատորում արտատպվում է «Վերք Հայաստանիի» 1981 թ. հրատարակության բնագիրը։

«Վերք Հայաստանիի» մտահղացումն սկիզբ է առնում 20-ական թվականներից, Արևելյան Հայաստանի ազատագրության համար մղված կռիվների թարմ տպավորության տակ։ 1830 թ. ամառը, Դորպատ ուղևորվելու ճանապարհին, մի քանի օր կանգ առնելով Նոր Նախիջևանում և հաճախակի հանդիպումներ ունենալով Գաբրիել Պատկանյանի հետ, Աբովյանը պատմել է վերջինիս, թե «մեկ բան կա մտքիս մեջ՝ շարադրելու «Աղասի» անունով, որո մեջ պիտի ստորագրեմ մեր ազգի մեցենաթներու որպիսությունը, թե ինչպես են պաշտպանություն

անում ազգային հառաջադիմության և գրականության» («Հյուսիս», 1863, № 14, էջ 109)։ Նշանակում է՝ կենտրոնական հերոսի հարցը մասամբ լուծված էր դեռ այն ժամանակ, միայն թե գրելիք երկի բովանդակությունը շատ կողմերով տարբեր էր հետագա վեպից. այնտեղ ավելի շատ տեղ պիտի գտներին արդիականության հարցերը։ Դորպատյան առաջին տարիներին Աբովյանը հակվում է ժողովրդի պատմական կյանքը և օտար լծից նրա ազատագրության ու վերածնման հարցերն արծարծել անձնական կյանքի ու կենսագրության դրվագներին զուգահեռ, գրելով իր կյանքի պատմությունը գերմաներեն լեզվով, որից նույնպես շատ-շատով հրաժարվում է։ Պահպանվել է վերջինիս ծրագրային նմուշների մի մասը, որից երևում է, որ գործողությունները ծավալվելու էին Աբովյանի հայրենի տան, էջմիածնի վանքում տեսածի ու լսածի և սեփական քրոջը սարդարի հարեմ քշելու համար Աղասու ցույց տված ըմբոստության՝ փարաշներին սպանելու և այնուհետև հայրենիքից հեռանալու շուրջ։ Այդ երկում հատուկ տեղ էր հատկացվելու նաև Անիի և Երևանի բերդի նկարագրություններին։

Դորպատյան վերջին տարիներին Աբովյանը գրում է Աղասու և նրա կնոջ՝ Նազլուի մասին բանաստեղծություններ, որոնցից դժվար չէ կռահել, որ ապագա հորինվելիք երկը պետք է լիներ արևելյան դյուցազներգություն և գրվելու էր աշխարհաբար լեզվով։

Աստիճանաբար Աբովյանի համար հստակվում են երկի արտացոլած ժամանակաշրջանի անցքերն ու հերոսները, նրա ուշադրությունը կենտրոնանում է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու տասնամյակների ազատագրական կռիվների ու ժողովրդական վրիժառուների կերպարների վրա, ուսումնասիրում է գործողությունների ծավալման աշխարհագրական միջավայրը և գլխավոր հերոսի նախատիպերի կյանքն ու գործը ընդհանրապես՝ հայ ժողովրդի վերջին հարյուրամյակի ներքին կյանքը, հոգեբանությունը, տանջանքներն ու երազանքները։ Աղասու կերպարն ստեղծելիս՝ Աբովյանն աչքի առաջ է ունեցել տակավին 1804/5 թթ. Թավրիզում տանջամահ արված հայրենասեր հերոս ու բանաստեղծ Ռոստոմ Աբովյանի, ղարաբաղցի քաջարի բանագնաց Սարի բեկ Բահաթրյանցի, քանաքեռցի հարյուրապետ Սիմեոն Մկրտումյան Խոջա-Հովհաննիսյանցի, Երևանցի Գրիգոր Փիլիպոսյանի սխրանքները, նաև իր բնավորության որոշ գծեր ու հայացքներ վերագրել այդ իդեալ հերոսին։ Ռազմական անցքերի նկարագրության համար Աբովյանը ձեռքի տակ է ունեցել ռուսական պաշտոնական վավերագրեր, ականատեսների հուշեր, Անանունի պատմական երգը, որոնք սակայն խմբագրել է ըստ ժողովրդական վեպի ոճական հնարանքների ու պատումի բնույթի։

Եվ այնուհանդերձ՝ այդ երկի կերտվածքը, կերպարներն ու գաղափարները շատ կողմերով դեռ մնում էին մշուշի մեջ։ Դժվարությամբ էր լուծվում նաև լեզվի հարցը (գրաբա՞ր, թե՞ աշխարհաբար)։

Վեպի գրությանն արագացնում են Աբովյանի անձնական անհաջողությունները դպրոցական ու գրական բնագավառներում, ազգային լուսավորության և վերածնության նպատակով կազմած նրա ձեռնարկումների հանդեպ ցարական պաշտոնեության և հայ հետադեմ ուժերի հարուցած խոչընդոտներն ու արգելքները՝ «Նախաշավղի» գործածության արգելումը, Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնի ղեկավարությունն ստանձնելու համար իր ներկայացրած աշխատություններին կայսերական ակադեմիայի տված անհարգալից կարծիքը, մասնավոր դպրոցի գործունեությանը խանգարող զանազան կարգադրություններ, վերջապես՝ Հայկական մարզի վերացումը, որոնք լուրջ խորհրդածությունների և հետևությունների ազդակ են հանդիսանում։

Ապագա «Վերք Հայաստանի» վեպի նախնական տարբերակը, որ պայմանականորեն կոչել է «Աղասու պատմություն» («Աղասու խաղ»), Աբովյանն սկսեց գրել 1841 թ. փետրվարին։ Պահպանվել են հանգավոր տողերով գրված մասերը (ո՛չ լրիվ)։ Այդ էջերը ջերմ ըն-

գունեցություն գտան առաջին ընթերցողների՝ Աբովյանի աշակերտների, ընկերոջ՝ Աղաթոն Սմբատյանի (որին կոչում է մանկական սիրելի բարեկամ) և Հայկական մարզի նախկին կառավարիչ, գնդապետ Գևորգ Սմբատյանի կողմից, որը սեղմելով Աբովյանին իր կրծքին՝ ոգևորված ասել է. «Մեր հայ Լոմոնոսովը ծնվել է», դրանով իսկ առաջիկայում նրա խաղալիք դերը հայ կյանքում խիստ բարձր գնահատելով։ Երկի այդ տարբերակը ստեղծվել է ինքնամոռաց ոգևորությամբ ու կարճ ժամանակում։ Արձակ առաջին, սևագիր շարադրանքն էլ 1841 թ. իրողություն է, իսկ վերջնական խմբագրությունը կամ մեզ հասած մաքրագիր տարբերակը գրվել ու վերամշակվել է 1842—45 թթ. ընթացքում։ Սևագիր տարբերակը չուներ Հառաջաբան, վիպական գործողությունների ավարտվում էին Երևանի բերդի գրավմամբ։ Մաքրագիր տարբերակի ստեղծման ընթացքում են գրվում՝ ընծայականը, համաձայն որի՝ «Վերք Հայաստանին» ձոնված է Գևորգ Սմբատյանի անվանը. Հառաջաբանը, Ազատասիրության ու Թաղման դրվագները, «Ջանգի» այլաբանական խորհրդածության սյուժետային մասը, բազմաթիվ մեծ ու փոքր քնարական շեղումներ, որոնցով վիպական գործողությունների ստանում են ավարտուն տեսք և գաղափարական նոր իմաստավորում։ Հայ ժողովուրդը կարող է վերականգնել իր հին փառքն ու պետականությունը, ազգովին համախմբվել ու ինքնաճանաչման գալ ռուս տերության հովանավորության տակ և խաղաղության պայմաններում, միմյանց հետ սիրո ու դաշնության մեջ ապրելու դեպքում, հայրենիքի ու ազգի շահերը միշտ բարձր դասելով, անձնվեր գործունեությամբ հայրենիքին ծառայելով։

«Վերք Հայաստանիի» ստեղծման պատմությանը նվիրված է հատուկ մենագրություն, իսկ բնագրի դժվարահասկանալի բառերի ու արտահայտությունների, պատմական դեպքերի ու դեմքերի, նախատիպերի և գաղափարական աղբյուրների մասին անհրաժեշտ տեղեկություններ ու մեկնաբանումներ կարելի է գտնել վեպի 1981 թ. հրատարակությանը կցված ներածական ակնարկի, ծանոթագրության և բառարանի մեջ (տե՛ս Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը, Երևան, 1955։— Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի, պատմական վեպ, բնագիրը լրացումներով և հավելվածներով հրատարակության պատրաստեց, ծանոթագրեց և խմբագրեց պրոֆ. Պ. Հ. Հակոբյանը, Երևան, Համալսարանի հրատ., 1981)։

«ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ» (ԷՋ 254)

Պահպանվել է սևագիր ինքնագիրը, որից երևում է, որ երկի վերամշակման աշխատանքները հեղինակը չի հասցրել ավարտել։ Թվագրված չէ։ Համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրված է Երևանում ապրած տարիներին, 1844—47 թթ. ընթացքում։ Պատմվածքն ունի մի երկրորդ վերնագիր ևս՝ «Սաղկեվանք»։ Նյութ առնելով գեղջուկների ամենամյա ուխտագնացությունները դեպի Արայի լեռան լանջերին թառած հնօրյա վանքը, հեղինակը զուգահեռաբար ներկայացնում է ժողովրդի կենցաղն ու բարոյագիտական ըմբռնումները։ Աբովյանը նպատակ է ունեցել երկը լրացնել նոր դրվագներով՝ տալ Սաղկեվանքի ու նրա հետ կապված տոնի պատմա-ազգագրական տեսությունը, որը չի հասցրել իրականացնել։

Պատմվածքի հերոսի ու հերոսուհու (Վանի ու Փարիխանի), նրանց ծնողների բնութագրման համար օգտագործված կերպավորման հնարանքները սերտ աղերսներ ունեն «Վերք Հայաստանիի» գեղջուկ բնավորությունների հետ։ Բնագրում բերված բայաթիների մեջ կրկնվում են նույնանուն քառյակների առանձին տողեր ու տներ։

Առաջին անգամ հրատարակվել է 1917 թ., «Գեղարվեստ» հանդեսի VI գրքում։ Արտատպվում է «Երկերի լիակատար ժողովածվի» IV հատորից։

«ԹՈՒՐՔԻ ԱՂՋԻԿԸ» (ԷՋ 273)

Պահպանվել է սևագիր ինքնագիրը, որի տարբեր էջերում կան հետագա հավելումներ ու սրբագրություններ։ Ինչպես երևում է՝ գրված է մեկ շնչով։ Ունի նաև ենթավերնագիր՝ «Զորություն կրոնի», որից հետևում է, որ տվյալ երկում հեղինակին զբաղեցնողը մարդկության պատմության մեջ կրոնների խաղացած բացասական դերի քննադատությունն է և մարդուն վերացնող, նրա հոգում վառված դժոխքը դրախտի վերափոխող նոր կրոնի՝ սիրո կրոնի բնութագիրը ու փառաբանումը։ Երկը թարգմանված չէ։ Նախնական էջերում նկարագրվող անցքերն, անտարակույս, կատարվել են Տփղիսում, Աբովյանի մանկավարժական գործունեության առաջին տարիներին (1837—1838 թթ.), եթե միայն հետագայում դրանց արթնացրած հուշերը գրական հնարանք չեն կամ բանաստեղծական երևակայության ծնունդ։ Դատելով գրչությունից և Աբովյանի անձնական կենսագրության փաստերից՝ հարազատ մոր ու եղբոր մահը 1847 թ. ամառը, մտերմությունը իր աշակերտի (Մամադ Շաֆի բեկ Մուսրալի բեկ օղլի) մոր հետ, որն ազգությամբ պարսկուհի էր, ուրեմն և՝ մահմեդական, ակնարկներն այն մասին, թե իբր «Պետերբուրգ, Մոսկով, Թիֆլիզ ինձանից զանգատով լցվել են, իմ բարեկամքը ինձանից ձեռք վերցրել, իմ թշնամիքը ինձ մատնել...»,— գալիս ենք այն համոզման, որ պատմվածքը գրված է Երևանում, 1847 թվականի աշնանը։

Երկի մեջ արտահայտված վախի զգացումը, թե իրեն «պետք է տանեն, սաղ-սաղ թաղեն կամ կախ տան», ռոմանտիկ հերոսի հոգեբանության վերարտադրման և ինքնավերլուծման կաղապար է, որի օգնությանն էին դիմում գրողները՝ ցուցադրելու համար զգայացունց և մենավոր հերոսի բարոյական ըմբռնումներն ու կատարելության բուռն ձգտումը։ Դաժան ինքնախարազանման, մանրախնդիր ինքնավերլուծման միջոցով այդօրինակ հերոսներն իրենց անցած կյանքի ու գործունեության մեջ հանցանքներ էին նշմարում և չափազանցված գույներով վերարտադրում անգամ այն դեպքում, երբ այդպիսիք իսպառ բացակայում էին, մանավանդ որ Աբովյանի քնարական հերոսի վերհիշած հանցանքներն էլ, ինքնին վերցրած, բնավ ենթադրել չեն տալիս լուրջ հետևանքներ ու ծանր պատիժներ. «Ո՞ւմ մեկ ծանր խոսք էի ասել, ով ինձ մեկ խեղ աչքով նայել էր. ինչ բարեկամից թուղթ էի ստացել, պատասխանը չի գրել. ինչ մտքում դրել էի ու չէի կատարել. աշակերտի էի նեղացրել, ծառայի էի մեկ թթու ջուղաբ տվել, ծառայությունս չէի օրինավոր կատարել յա մեկ գործ էսօր-վաղը բցել...»։ Կարճ՝ «Թուրքի աղջիկը» պատմվածքի հոգեբանական շեշտերի պարզունակ ընկալումը և ո՛չ ճիշտ մեկնաբանումը, որ երբեմն տեղ է գտել առանձին շարադրություններում, իրական հող չունի և չի բխում տվյալ երկի գաղափարական բովանդակությունից։

Առաջին անգամ հրատարակվել է 1904 թվականին, Աբովյանի «Անտիպ երկեր» մատենաշարի առաջին և միակ գրքույկում։ Հետագայում ունեցել է ևս երեք տպագրություն (1939, 1941 և 1947)։ Թարգմանվել ու հրատարակվել է նաև ադրբեջաներեն («Բանաստեղծություններ և պատմվածքներ», Բաքու, 1948)։ Արտատպվում է «Երկերի լիակատար ժողովածվի» IV հատորից (Ե., 1947, էջ 19—33)։

«ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՂԱԼԻՔ» (ԷՋ 290)

Պահպանվել է ինքնագիրը՝ ինը կամ տասը թերթի կորուստով։ Մեզ հասած ձեռագրի մեջ բացակայում են Անվանաթերթը, Հառաջաբանը, բովանդակությունը կամ «Ցանկ գրոցս»-ը, «Մոլլա Մասրաղնի ճաշը» առակի 47—137 տողերը պարունակող զույգ թերթերը, «Իմ բարեկամ Աղաչան Վարդանյանի պատկերի առաջին» բանաստեղծության շարունակությունը

(ավելի քան 80 տող) և «Տխուր գանգատ բարեկամի մոտ» եղերերգության սկիզբը (7 տող), որի հետևանքով վերջին երկու ոտանավորները մեքենայորեն միացվել են իրար, դիտվել մի ստեղծագործություն և հրատարակվել առաջինի («Իմ բարեկամ...») խորագրով։

Հառաջաբանը թվագրված է՝ «1841 թվին, Թիֆլիզ», իսկ «Իմ բարեկամ Աղաչան Վարդանյանի պատկերի պռաջին ոտանավորը՝ «1841 թվին, սեպտեմբերի 5-ին», որոնցից պիտի եզրակացնել, որ ժողովածուն կազմվել է «Վերք Հայաստանիի» սևագիր տարբերակի վրա աշխատանքներն ավարտելուց հետո, նույն 1841 թ. աշնանը, սեպտեմբեր, ամենաուշը, հոկտեմբեր ամիսներին։ Աբովյանն այս գիրքը պատրաստել էր տպագրելու համար։ Հառաջաբանի մեջ, իր գրած աշխարհաբար երկերը թվարկելուց անմիջապես հետո, նրա ավելացրած ծանուցումը, թե «Ես չկարացի բոլորը ի միասին գրել, չունքի խարջ շատ կըլեր», «Ո՞վ գիտի, բալքի թե մեկ աստվածասեր մարդ իր հոգու խաթեր տպել տա»,— այն եզրակացության են բերում, որ գիրքը պետք է հրատարակվեր շատ-շուտով, և նրա տպագրությունը հետաձգվել է հեղինակի կամքով կամ ցարդ չբացահայտված մեկ այլ պատճառով։

Առաջին անգամ տպագրվել է 1864 թվականին (գրաքննական թույլտվությունը՝ 25 փետրվարի 1863 թ.), Հ. Փոնդոյանի աշխատասիրությամբ ու միջոցներով։ Գրքի հրատարակությունը զուգահեռ, առանձին նյութեր լույս են տեսել նաև «Մեղու Հայաստանի» լրագրի 1864 թ. համարներում («Անցվորականքն ու Շունը» և «Ջաղրի չունը և Ֆիլը» թարգմանական առակները № 36-ում, «էս գրքի ճամփի խրատը»՝ № 39-ում, թվով տասը բայաթիներ՝ № 38-ում)։ «Պարապ վախտի խաղալիքն» այնուհետև ունեցել է ևս 4 հրատարակություն. Աբովյանի երկերի ժողովածուների մեջ (1897, 1940) և առանձին գրքերով (1932, 1955)։ Առանձին առակներ տեղ են գտել զանազան ժողովածուներում ու դասագրքերում, համապատասխան վերամշակումով (տե՛ս Ղ. Աղայան, Ուսումն մայրենի լեզվի, գիրք III, Գ տիպ, Տփղիս, 1890։— Գ. Վանցյան, Հայ հեղինակներ, Բ տիպ, Տփղիս, 1906։— Լ. Մանվելյան, Գրական նմուշներ, Տփղիս, 1912։— Կ. Կուսիկյան և Ա. Մառուբյան, Հատիկներ, Մոսկվա, 1915 և այլն)։

«Պարապ վախտի խաղալիքն» ամփոփում է 1838—41 թթ. ընթացքում Աբովյանի մշակած ու թարգմանած առակները և զանազան եղերերգական էջեր, բոլորն էլ չափածո և աշխարհաբար։ Առակները դասակարգելիս՝ հեղինակը ղեկավարվել է ազգային մատենագրության մեջ հարատևող ավանդներով, որոնք գալիս էին տակավին Մխիթար Գոշից և տեսական հիմնավորում ստացել Ազոնց Ստեփանոսի «Ճարտասանության» մեջ։ Այն առակները, որոնց նյութն առնված է մարդկանց կյանքից, Աբովյանն անվանել է «Ասացվածք բեռնակրաց» կամ «Իմաստախառն հորինվածք», իսկ նրանք, որոնց հերոսները կենդանիներն են ու բույսերը, կոչված են «Առասպելք» (ըստ Մխիթար Գոշի բաժանման՝ «Առակք ստեղծականք» և «Առակք առասպելականք և բարոյականք»)։ Ժողովածվում վերոհիշյալ վերնագրերով նախ՝ տեղ են գտել Աբովյանի ինքնուրույն ստեղծագործությունները, իսկ ապա, դարձյալ բաժինների վերնագրերը կրկնելով՝ թարգմանած ու փոխադրած առակները։ Մոլլա Մասրադնի մասին առակները Աբովյանը մշակել է ըստ հայկական տարբերակների։ Դրանք ինքնուրույն երկեր են։

Գրքի երկրորդ մասի «Ասացվածք» խորագրով բաժնի 5 առակներից երկուսը թարգմանված են Ի. Կռիլովից («Սյարբեքը», «Ճղնավորն ու Արջը»), երկուսը՝ Ի. Խեմնիցերից («Խանը», «Քոռերը»), իսկ վերջին 5-րդի սկզբնաղբյուրը, որն, անտարակույս, ռուսերեն է, տակավին չի պարզված։ Նույն, երկրորդ մասի «Առասպելք» բաժնի տասը առակներից հինգը թարգմանված են Ի. Կռիլովից («Անցվորականքն ու Շունը», «Ալապաստրակը ֆորս անելիս», «Ջաղրի չունը ու Ֆիլը», «Գելն ու Գառը», «Առյուծն ու Մոծակը»), երկուսը՝ Ի. Խեմ-

նիցերից («Անքաղաքավարի էշը», «Ծառը»), մեկը՝ Ի. Դմիտրիևից («Արտուտը իր ձագերովը ու Երկրագործը»), մյուս երկուսի սկզբնաղբյուրը պարզված չէ։

Ժողովածվի հանգավոր առաջաբանի՝ «էս գրքի ճամփի խրատը» առակի պատմողական մասի համար Աբովյանն, անտարակույս, նկատի է ունեցել ինչպես հայկական տարբերակները, այնպես էլ Ժան դը Լաֆոնտենի (1621—1695) «Ջրաղացպանն, իր որդին և էշը» առակը, որին նա կարող էր ծանոթանալ Մ. Լոմոնոսովի ռուսերեն թարգմանությամբ։

Գրքի խորագիրն ընտրելիս՝ Աբովյանն առաջնորդվել է ինչպես լուսավորիչների, այնպես էլ ռոմանտիկ բանաստեղծների ստեղծագործական փորձով, նկատի ունենալով մասնավորապես Ջորջ Գորդոն Բայրոնի «Պարապության ժամեր» ժողովածուն, ուր ռոմանտիկ քերթվածների կողքին տեղ են գտել նաև երգիծական գրվածքներ։

Ներկա ժողովածուում տպագրվում են «Պարապ վախտի խաղալիքի» միայն առակները։

Բնագրերն արտատպվում են «Երկերի լիակատար ժողովածվի» II հատորից (Ե., 1948, էջ 187—278)։

«ԶՎԱՐՃԱԼԻ ՈՒ ԿԱՐՃ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՔ» (ԷՋ 369)

Պահպանվել է մաքրագիր ինքնագիրը։ Դատելով «Պարապ վախտի խաղալիքի» Հառաջաբանում առկա վկայությունից՝ «շատ զվարճալի պատմություններ, աշխարհաբար, գրած՝ մատիս հազիր ունիմ», պիտի ենթադրել, որ մանրապատումների սույն ժողովածուն 1841 թ. աշնանն արդեն պատրաստ էր հրատարակության համար։ Նյութերը մեծ մասամբ թարգմանված ու փոխադրված են օտար լեզուներով նույնատիպ գրքերից ու ժողովածուներից։ Աբովյանի ձեռագրերի մեջ պահպանվել են նաև գրաբար թարգմանված նույնաբնույթ նյութեր, որոնցից մի քանիսը, նաև ուրիշներ, արդեն աշխարհաբար փոխադրությամբ, տեղ են գտել «Նախաշավղի» առաջին, տպագիր տարբերակում։ Նշանակում է՝ զվարճալի և կարճառոտ պատմությունների կամ մանրապատումների ժողովածուի նյութերը հավաքվել են 1837 թվականից սկսած, «Նախաշավղի» պատրաստմանը զուգընթաց, սկզբներում՝ գրաբար շարադրանքով, իսկ հետագայում արդեն՝ աշխարհաբար վերամշակմամբ։

Ժողովածուն պետք է ունենար նաև հայկական մաս. Աբովյանը հասցրել է գրել ընդհանուր Նախաբանը, երկու դրվագ՝ Տիգրան Մեծի և Դավիթ Ղորղանյան կաթողիկոսի կյանքից։ Պատրա՞ստ էին մնացած նյութերը և հետագայում ո՞ւր կորան, մնում է հանելուկ։

Զվարճալի ու կարճ պատմությունները, համարյա ամբողջությամբ, առաջին անգամ տպագրվել են 1941 թվականին, «Աբովյանի գրադարան» մատենաշարի «Ընթերցարան» գրքույկում և Ս. Ղանալանյանի «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը» աշխատության հավելվածներում։

Բնագիրն արտատպվում է «Երկերի լիակատար ժողովածվի» IV հատորից (Ե., 1947, էջ 55—100)։

«ԿԱՐՃԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՔ» (ԷՋ 423)

Պահպանվել է մաքրագիր ինքնագիրը, որն ամփոփված է «Լինդա» խորագրով թարգմանական պատմվածքի հետ միևնույն տետրակում։ Առաջին անգամ տպագրվել է 1939 թ., հեղինակի Ընտիր երկերի I հատորում։ «Կարլոս Մեծի ջահելության սերը» պատմվածքը, հավանաբար, փոխադրություն է վերածնության դարաշրջանի իտալական նովելիստ Անտո-

Ֆրանչեսկո Դոնիի (XVI դ.) նույնանուն երկից, իսկ Պետրարկայի խորհրդավոր երազների մասին զրույցները՝ տակավին չպարզված աղբյուրից։

Բնագիրն արտատպվում է «Երկերի լիակատար ժողովածուի» IV հատորից (Ե., 1947, էջ 106—110)։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԷՋ 428)

Աբովյանի քնարական էջերի ու չափածո ստեղծագործությունների մեծ մասի ինքնագրերը, հաճախ, սևագրեր ու մաքրագրեր տարբերակները միաժամանակ, իսկ երբեմն էլ՝ հեղինակի հսկողությամբ կատարված արտագրությունները, պահպանվել և հասել են մեզ։ Ներկայումս այդ ձեռագրերը համախմբված են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող՝ հեղինակի թղթերում, մասնավորապես № 17 ա, 56, 57, 58, 63, 64, 67 և այլ տետրակներում. շատ ոտանավորներ էլ գրի են առնված առանձին թերթերի կամ թերթիկների վրա և դարձյալ պահվում են նույն հավաքածոյի մեջ, այլևայլ համարների տակ։ Առ այսօր չի հայտնաբերված «Հախվերմաղի գովքը» երգիծական ոտանավորի ինքնագիրը և մի քանի այլ բանաստեղծությունների տարբերակների համառոտ հրատարակությունների ձեռագրերը։

Հեղինակի կենդանության օրոք, ինչպես նշել ենք, նրա չափածո ստեղծագործություններից ո՛չ մեկը չի տպագրվել։ Առաջին հրատարակված ոտանավորը «Ծաղիկ Արամեան դաշտաց խնկածին...» սկսվածքով եղերերգությունն է, լույս տեսած՝ «Մեղու Հայաստանի» լրագրի 1858 թ. հունվարի 25-ի համարում (հետագայում ևս երկու անգամ), որին հաջորդում է «Երգ յելսն ի Մասիս» քնարական խորհրդածությունը, որը «Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ» քերթվածի նախնական տարբերակն է («Ճռաքաղ», հ. III, 1861/62 թ., էջ 52—58), ապա՝ «Հաղարփեշեն» պոեմի առաջին տարբերակը («Մեղու Հայաստանի», 1864), «Հախվերմաղի գովքը» (նույն տեղում, №11)։ Աբովյանի անտիպ բանաստեղծություններից բազմաթիվ մեջբերումներ կան Ն. Տեր-Կարապետյանի «Խաչատուր Աբովյան» ճեմարանական դիսերտացիայում։ Հայտնի է նաև Աբովյանի ոտանավորը յուրացնելու մի փորձ «Մեղու Հայաստանիի» էջերում («էջմիածին» ներբողը, որի հեղինակային իրավունքը սեփականացրել է Ռոստոմ բեկ Երզնկյանցը)։ Վերջապես՝ առանձին բանաստեղծություններ էլ ընդգրկված լինելով «Նախաշավիղ կրթության» դասագրքերի մեջ, երկիցս հրատարակվել են նրանց կազմում։ Նախախորհրդային տարիներին Աբովյանի չափածո ժառանգությունից միայն վերոհիշյալներն էին հայտնի, որի հետևանքով և ստեղծվել է սխալ պատկերացում և ըստ արժանվույն չի գնահատվել նրա քերթողական արվեստը, որը նոր շրջափուլ է հայ քնարերգության պատմության մեջ։

Աբովյանի բանաստեղծությունների ժողովրդականացումն սկսվեց նրա արխիվը ձեռք բերելուց հետո, փաստորեն 1939-ից, սկզբում գրական մամուլի միջոցով, ապա՝ անտիպ ոտանավորները տեղ գտան «Ընտիր երկերի» II հատորում (1940), «Բայաթիներ» (1939, 1941), «Բանաստեղծություններ» (1941), «Մանկական բանաստեղծություններ և առակներ» (1941) գրքույկներում։ Աբովյանի բանաստեղծությունների առ այսօր լույս տեսած ամենաամբողջական ժողովածուն «Երկերի լիակատար ժողովածուի» I հատորն է (1948), ուր տեղ են գտել նաև հեղինակի անավարտ ու սևագիր էջերը և թարգմանությունները՝ Գյոթեից, Շիլլերից, Կարամզինից և XVIII—XIX դդ. գերմանական այլ բանաստեղծներից։ Թանգարանում պահվող ձեռագրերի մեջ մնացել են նաև անտիպ ու չվերծանված չափածո երկեր։

«Կարօտութիւն նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց» (էջ 428)— Գրել է 1824 թվականի ամառը, Երևանում։ Պահպանվել են՝ մաքրագիր ինքնագիրը (№ 58), մի հնօրյա արտագրություն (№ 57) և պատառիկներ նախնական տարբերակից (№ 74)։ Մի քանի տուն առաջին անգամ տպագրվել են Ն. Տեր-Կարապետյանի աշխատության մեջ (1896/97 թթ)։ Արտատպվում է «Երկերի լիակատար ժողովածուի» I հատորից (այսուհետև՝ Ե), էջ 15—17։

«Խնդամիտ զգացմունք Երախտագէտ հայկազին յազատութիւն հայրենեաց իւրոց» (էջ 431)— Պահպանվել են նախնական տարբերակները (№ 81, № 84 ա, № 84 բ), մի հնօրյա արտագրություն (№ 57) և վերջնական տարբերակի ինքնագիրը (մաքրագիր, № 58)։ Բանաստեղծությունը ձոնված է Ի. Ֆ. Պասկևիչին և վերարտադրում է պատանի Աբովյանի առաջին տպավորություններն ու խորհրդածությունները՝ ստացած ու բխած 1828 թ. գարնանը, երկարամյա դեգերումներից հետո ազատագրված հայրենիք վերադառնալուց հետո։ Թեպետև հեղինակն իր երկը թվագրել է՝ «առաջեալ [illegible], 1826-ին», բայց ճիշտ չէ։ Բանաստեղծության բովանդակությունն ևս հուշում է, որ առաջին տարբերակը հորինված է 1828 թ. մայիսից ո՛չ առաջ, իսկ վերջնականը՝ Արարատյան վերելքից հետո, 1830-ին, վերանայվել է 1844-ին։ Արտատպվում է՝ Ե I, էջ 21—23։

«Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ» (էջ 434)— Պահպանվել են՝ առաջին տարբերակի ինքնագիրը (№ 17 ա), 1835 թ. սկզբներին վերամշակված տարբերակի ինքնագիրը, որն ուղարկվել է Բեռլին, հայագետ Հ. Պետերմանին՝ թարգմանելու և հրատարակելու Գերմանիայում, մի հնօրյա արտագրություն (№ 57) և վերջնական տարբերակի ինքնագիրը (մաքրագիր, № 58)։ Առաջին տարբերակը, որ խորագրված է «Դիպված, այլաբանաբար խորհրդածութիւն ի վերայ ճանապարհորդութեան Արարատ լերին», տպագրվել է «Ճռաքաղում» «Երգ յելսն ի Մասիս» խմբագրական վերնագրով։ Պետերմանին ուղարկված տարբերակի մի մասը՝ ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագրում, Ե. Շահազիզի ձեռքով (№ 3, 1928), ամբողջությամբ՝ «Դիվան Խաչատուր Աբովյանի», գ. I, էջ 229—234։

Ըստ հեղինակի վկայության՝ գրված է Արարատյան վերելքից (իմա՛ 1829 թ. սեպտ. 27) մեկ ամիս հետո, Երևանում։ Որովհետև Աբովյանն Երևանում է եղել միայն նոյեմբեր ամսի սկզբներին, ուրեմն՝ բանաստեղծությունն էլ գրված պետք է լինի նույն այդ ժամանակ։

Արտատպվում է՝ Ե I, էջ 47—51։

«Զգացմունք ցաւալից սրտիս ընդ տեսանել իմ յօտարութեան զսիրելի աշխարհակիցն իմ Զաճրադ Բաղալով» (էջ 439)— Պահպանվել են՝ նախնական տարբերակի մեծ մասի ձեռագիրը (№ 79 և 95), առաջին տարբերակի մաքրագիր ինքնագիրը (№ 64), վերջնական տարբերակը (մաքրագիր, № 58) և մի անտիպ հատված (№ 76)։ Առաջին անգամ, շուրջ 30 տող, մեջ է բերված Ն. Տեր-Կարապետյանի աշխատության մեջ (էջ 63—64)։ Բանաստեղծությունը հորինվել է տուն առ տուն, 1832 թ. մարտ ամսի սկզբներին (ո՛չ վաղ, քան 4-ը)։ Վերջնական խմբագրման է ենթարկվել 1844 թ. վերջերին, Երևանում ու այդ ժամանակ էլ գրվել է արձակ վերջաբանը կամ բացատրականը։

Արտատպվում է՝ Ե I, էջ 66—71։

«Տաղ ի գոյն «Не шей ты мне, матушка...» (էջ 445)— Պահպանվել է ինքնագիրը՝ հետագա ուղղումներով (№ 63)։ Գրված է 1835 թ. հետո, վերանայվել է 1836—37 թթ.,

Տփղիսում։ Առաջին անգամ տպագրվել է 1948-ին (Ե, I)։ Բանաստեղծության մտահղացումը կապված է ռուսական ժողովրդական «Մի՛ կարիր ինձ համար, մայրիկ...» հարսանեկան երգի հետ, որն Աբովյանը կարող էր լսած լինել Պետերբուրգում կամ Մոսկվայում, 1835—36 թթ.։

Արտատպվում է՝ ԵI, էջ 108։

«Սէր առ Հայրենիս» (էջ 446)— Պահպանվել է սևագիր ինքնագիրը (№ 17 ա)՝ բազմաթիվ ջնջումներով։ Գրել է 1831 թվականի գարնանը՝ վերարտադրելով իր անհագ կարոտը և հայրենիքից մնացած պայծառ հուշերը, հետևանք Հովսեփ վարդապետ Տեր-Մարուքյանից կրած հալածանքների։ Երբ 1829 թ. դեկտեմբերին Աբովյանը պատրաստվում էր ճանապարհ ընկնել դեպի Թիֆլիս՝ պրոֆ. Պարրոտին հասնելու և նրա հետ Դորպատ մեկնելու, Հովսեփ վարդապետը հարձակվում է նրա վրա և հափշտակում շորերն ու ճանապարհի պաշարը։

Արտատպվում է՝ ԵI, էջ 120։

«Սուգ հարազատ և ծնողասէր որդւոյ ի վերայ հանգուցեալ մօրն» (էջ 447)—Պահպանվել է մաքրագիր ինքնագիրը (№ 63)։ Գրել է Տփղիսում, 1837 թ. փետրվարին։ Հեղինակի լավագույն աշխարհաբար բանաստեղծություններից է։ Վերարտադրում է սեփական կարոտը հարազատ մոր նկատմամբ, որը թեպետ կենդանի էր, բայց հեռավոր Քանաքեռում, և Աբովյանը ծանր էր ապրում բաժանման վիշտը։

Արտատպվում է՝ ԵI, էջ 142—143։

«Ո՞ւմ ասեմ սրտիս դարդերն ես, ա՜խ, ո՞ւմ...» (էջ 449)— Պահպանվել է ինքնագիրը (№ 60), որը համապատասխան տետրակում հաջորդում է «Էշն ու Բլբուլը» առակի սկզբնական, սևագիր տարբերակին՝ գրված 1839 կամ, ամենաուշը, 1840 թ. առաջին ամիսներին, Տփղիսում։ Հետևաբար, այս ոտանավորն ևս գրված է նույն ժամանակ՝ ազդակ ունենալով միևնույն դեպքերը, որոնք կապվում են «Նախաշավղի» դեմ հայ եռադեմ խավերի՝ Ն. Մարգանյանի, Ա. Արարատյանի և այլոց հարուցած արգելքների հետ։ Առաջին անգամ տպագրվել է 1939 թ. («Գրական թերթ», № 5), ապա ևս մի քանի անգամ («Ընտիր երկեր», հ. II, 1940, «Բանաստեղծություններ», 1941 և այլն)։

Արտատպվում է՝ ԵI, էջ 154։

«Հազարփեշեն» (էջ 450)— Նախնական տարբերակի ձեռագիրը մեզ չի հասել։ Այն տպագրվել է «Մեղու Հայաստանի» լրագրի 1864 թ. մայիսի 2 և 9-ի համարներում, իսկ հետագայում մոռացվել։ Վերջնական տարբերակի մաքրագիր ինքնագիրը պահվում է Գրականության և արվեստի թանգարանում (Աբովյանի թղթեր № 61), և առաջին անգամ հրատարակվել է 1912 թ., առանձին գրքույկով, ապա՝ ևս երկու անգամ, «Ընտիր երկերի» II հատորում (1940) և առանձին գրքույկով (1941)։ Վերջին անգամ՝ Աբովյանի երկերի գիտական հրատարակության I հատորում, որտեղից և արտատպվում է սույն ժողովածուում։ Երկու տարբերակներն էլ թվագրված չեն։ Նախնականը հորինված պետք է լինի 1840—41 թթ. միջև, Տփղիսում, իսկ վերջնական վերամշակումն ու արտագրությունը կատարված են Երևանում, 1845—47 թթ. միջև, ուր և գրվել է պոեմի բացատրական-առաջաբանը։

«Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» (էջ 461)— «Պարապ վախտի խաղալիքի» մեջ ընդգրկված բանաստեղծություններից է։ Պահպանվել է մաքրագիր ինքնագիրը (№ 56)։ Ժամանակին տարածվել է արտագրություններով, որոնց մեջ «Ազգասեր մարդը» դիտվել է Աբովյանի անվան հոմանիշ, իսկ ոտանավորը ամբողջությամբ՝ Աբովյանի կտակը։ Գրված է

1841 թ. աշնանը, ո՛չ ուշ քան նոյեմբեր ամիսը։ Առաջին անգամ տպագրվել է 1864 թ., «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուում, ապա նույն գրքի 1897 և 1932 թ. հրատարակություններում, «Լումա» ամսագրում (1897, գիրք Ա), Աբովյանի երկերի ու բանաստեղծությունների ժողովածուներում (1940, 1941)։

Արտատպվում է՝ ԵI, էջ 197—198։

«Խաղ բաժանվելու վրա» (էջ 462)— Պահպանվել է մաքրագիր ինքնագիրը (№ 101), որ գրված է 1842 թ. օգոստոսի 4-ին, Երևանում և նվիրված է Աղամալյաններին, որոնց տանը հյուր էր այդ ամառ։ Հայտնաբերվել ու հրատարակվել է 1935 թ., Խ. Սարգսյանի աշխատասիրությամբ («Գրական թերթ», 1935, № 16)։ Այնուհետև տեղ է գտել «Ընտիր երկերի» II հատորում (Ե., 1940, էջ 32—33)։

Արտատպվում է՝ ԵI, 202—203։

«Ո՞ւմ սիրտը, որ տխուր ըլի...» (էջ 464)—Պահպանվել է ինքնագիրը՝ վերջին էջի կորուստով, որի պատճառով առմիշտ կորել են եզրափակիչ տողերը կամ տները։ Գրված է 1842 թ. օգոստոսի 3-ին, Երևանում և նվիրված է Աղամալյաններին։ Առաջին անգամ, նախորդի հետ, տպագրվել է «Գրական թերթում», 1935 թ., № 16, ապա՝ «Ընտիր երկերի» II հատորում։ Բանաստեղծության մեջ հիշված անուններից Պետրեն Աբովյանի աշակերտ Պետրոս Շարոյանն է, մյուսները՝ նրա (Աբովյանի) հեռավոր ազգականները՝ Աղամալյան տոհմից։

Արտատպվում է՝ ԵI, էջ 204—207։

«Զարթնուք ի միտս իմ...» (էջ 467)— Պահպանվել է սևագիր ինքնագիրը (№ 68)։ Գրված է 1837 թ. ապրիլից ո՛չ առաջ, այդ կամ հետագա ամիսներին։ Բանաստեղծության մեջ վերարտադրված են Աբովյանի ապրումները՝ տառապանքներն ու կարոտները, Դորպատից հայրենիք վերադառնալուց հետո, անցյալներում չի հրատարակվել։

Արտատպվում է՝ ԵI, էջ 208։

«Մուտ ի Հայրենիս» (էջ 468)— Պահպանվել է մաքրագիր ինքնագիրը (№ 58)։ Գրված է 1844 թ., ամենայն հավանականությամբ՝ մայիսի սկզբներին, երբ Տփղիսից, պրոֆ. Աբիխի հետ գալով Հայաստան, սկսեց իր շրջագայությունները՝ առաջին օրերը կանգ առնելով Քանաքեռի հայրենական տանը։ Ոտանավորն հղացել է թերևս այն պահերին, երբ Հ. Աբիխի համար թարգմանում էր իր ազգական ծերունիների ներշնչված պատմությունները Հայաստանի ճարտարապետական կոթողների մասին, որոնք խոր ազդեցություն են թողնում գերմանացի գիտնականի վրա։ Մի շարք հատվածներ առաջին անգամ մեջ են բերված Ն. Տեր-Կարապետյանի աշխատության մեջ (Տփղիս, 1897, էջ 5 և 97—98)։

Արտատպվում է՝ ԵI, էջ 242—244։

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՐԿԵՐ (ԷՋ 472)

Այս բաժնում ի մի են հավաքված Աբովյանի տեսական-մանկավարժական աշխատություններից երկուսը, ժողովրդական ընթերցանության համար կազմած՝ «Ամերիկա լիս ըցիլը» վավերական պատումը, երեք նմուշ՝ ուղեգրական երկերից, ազգագրական կարևոր աշխատություններից երկուսը և, վերջապես, Տփղիսի հայոց նոր գերեզմանոցի հիմնադրման առթիվ խորհրդածությունը, որոնք խիստ կարևոր են նրա հասարակագիտական հայեցողությունների

ուսումնասիրության համար։ Դրանց մեջ հայ մեծ լուսավորիչն երևում է իր աշխարհայացքի ուժեղ և թույլ կողմերով, իր հետևողական դեմոկրատիզմով ու հումանիզմով, հայկական կյանքի վերածնման ուղիների որոնումներով և ազգափրկիչ ծրագրերով, նոր դպրոցի ստեղծման հոգսերով։ Աբովյանի վերոհիշյալ և նմանօրինակ մյուս աշխատությունները, որոնցից շատերի բնագրերը գերմաներեն կամ ռուսերեն են ու մասամբ էլ հրատարակվել են տակավին նրա կենդանության օրոք, ներկայումս համախմբված են Երկերի ակադեմիական լիակատար ժողովածուի IV, V, VII, VIII և X հատորներում, ուր բնագրերին զուգահեռ ո՛չ միայն տրված են նրանց հայերեն թարգմանությունները, այլև համապատասխան ծանոթագրություններ ու մեկնաբանություններ։ Սույն հատորից դուրս են մնում մասնավորապես՝ «Պատմություն Տիգրանի» մանկավարժական վեպը, որը լուսավորության դարաշրջանի մտածողների ու մեծ մանկավարժների ավանդների ստեղծագործական յուրացման ուշագրավ օրինակ է՝ փոխադրված, հավանաբար, գերմանական աղբյուրներից. քրդերի ու եզդիների մասին գրած ազգագրական ուսումնասիրությունները, որոնք նոր էջ էին բաց անում հայրենական արևելագիտության պատմության մեջ. հայոց պատմության ու ազգագրության մասնավոր հարցերին նվիրված մեծ ու փոքր հոդվածներ, զանազան ճառեր ու հրապարակային ելույթներ, հայերեն և ռուսերեն ուղեգրություններ, հայոց հոգևոր երաժշտությանն ու աշուղական արվեստին նվիրված ուսումնասիրությունը և այլն։ Հետաքրքրասերներին հանձնարարում ենք՝ **Խ. Աբովյան**, *Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, Ե., 1947, հ. V, Ե., 1950, հ. VII, Ե., 1956, հ. VIII, Ե., 1958 և հ. X, Ե., 1961 (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն)*։

«Դիտողություններ նոր հայերեն լեզվի տարրական գրքի նպատակների մասին» *(էջ 472)*— Պահպանվել է գերմաներեն բնագիրը, արտագրված՝ Աբովյանի կնոջ (Էմիլիե Լոոզե) ձեռքով։ Գրված է 1839 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում, դեկտեմբերին ուղարկվել է Պետերբուրգ, կայսերական ակադեմիային, որպես բացատրագիր Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար իր ներկայացրած «Նախաշավիղ» դասագրքի։ Հաջորդ տարվա մայիսին հանգամանալից քննության է ենթարկվել ակադեմիայի կոնֆերենցիայում (զեկուցող՝ ակադեմիկոս Մ. Բրոսսե)։ Աբովյանի առաջարկությունը՝ պետական դպրոցներում հայերենի ուսումն ավանդել աշխարհաբար լեզվով, հավանության չի արժանացել։ Առաջին անգամ, հայերեն թարգմանությամբ, տպագրվել է 1940 թվականին, «Նախաշավղի» լուսատիպ հրատարակությանը Ռ. Զարյանի կցած հավելվածներում (էջ XXXIX—XLIX), ապա՝ այլ ժողովածուներում (թարգմ. Հակոբ Հարությունյանի)։ Գերմաներեն բնագիրն ու զուգահեռ հայերեն թարգմանությունը տե՛ս Ե V, 39—44 և 45—50։ Արտատպվում է այս վերջինից։

«Ընդհանուր դիտողություններ» *(էջ 478)*— Պահպանվել է ռուսերեն սևագիր ինքնագիրը։ Այն մասն է կազմում Երևանի գավառական դպրոցի 1843 թ. տարեկան հաշվետվության և վերջինից անջատված է շատ վաղուց, Աբովյանի՞, թե՞ ուրիշի ձեռքով, պարզված չէ։ Ելնելով տարեկան հաշվետվությունները ներկայացնելու կարգից՝ «Ընդհանուր դիտողությունները» շարադրված են 1843 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, և նրանց մաքրագիր օրինակը 1844 թ. հունվարի սկզբներին ուղարկվել է Տփղիս, Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությանը։ Այս վերջինը Աբովյանի գործնական առաջարկությունները՝ երկրամասում ուսումնական գործը կարգավորելու վերաբերյալ, մատնել է անուշադրության։ Համենայն դեպս՝ Աբովյանին գրած կամ ուղարկած պաշտոնական որևէ պատասխան առ այսօր չի՛

հայտնաբերված։ Առաջին անգամ բնագիրը և հայերեն թարգմանությունը տպագրվել են 1950 թվականին, Աբովյանի Երկերի ակադեմիական հրատարակության V հատորում, էջ 165—182 և 183—201 (թարգմ. Ա. Ինճիկյանի)։ Արտատպվում է այս վերջինից։

«Ամերիկու կես բցիլը» *(էջ 500)*— Աշխարհագրական մեծ գյուտերի պատմությանը նվիրված սույն վավերագրական ակնարկը անավարտ է։ Հավանաբար, երկի սևագիրը, որ մեզ չի հասել, ավելի ամբողջական էր, բայց Աբովյանը հասցրել է վերամշակել ու արտագրել միայն մի մասը (պահվում է Գրականության և արվեստի թանգարանում), իսկ մնացածի ձեռագիրը կորել է։ Հղացումն, ամենայն հավանականությամբ, գալիս է դորպատյան տարիներից, գուցե այնտեղ էլ «Ամերիկու կես բցիլը» փոխադրված է գերմանական աղբյուրներից, բայց վերամշակվել է երևանյան տարիներին, 1844—47 թթ. միջև։ Առաջին անգամ հրատարակվել է 1940 թ. («Ընտիր երկերի» II հատորում), իսկ ապա՝ տեղ է գտել Երկերի ակադեմիական հրատարակության V հատորում, որտեղից և արտատպվում է։

«<Վերելք Արարատի գագաթը>» *(էջ 540)*— Սույնը Աբովյանի «Ճանապարհորդություն պարոն պրոֆեսոր Պարրոտի և խաչատուր դպիր Աբովեանցի» ուղեգրության ռուսերեն համառոտ վերապատումն է, միաժամանակ և առաջին տպագիր երկը։ Աբովյանն այն 1830 թ. հաղորդել է «Տիֆլիսկիե վեդոմոստի» շաբաթաթերթի խմբագիր Պ. Սանկովսկուն, իսկ վերջինս ճշտորեն գրի առել։ Բնագիրը չի պահպանվել։ Շարժառիթը Պարրոտի դեմ սփռված զրպարտչական հարձակումներին վերջ դնելու ցանկությունն էր։ Առաջին անգամ տպագրվել է նույն շաբաթաթերթի 1831 թ. ապրիլյան № 21—23-ում (միացյալ), առանց խորագրի։ Հայտնաբերվել ու վերահրատարակվել է վերջին տասնամյակներին («Коммунист», 1955, № 239 և «Տեղեկագիր», 1956, № 8, ակադ. Մ. Ներսիսյանի հրապարակումը)։ Բնագիրը ու հայ. թարգմանությունը տեղ են գտել Աբովյանի Երկերի ակադեմիական հրատարակության X հատորում, էջ 11—18, որտեղից և արտատպվում է (թարգմ. Պ. Հակոբյան)։

«Նոր վկայություն Դորպատի պրոֆեսոր պարոն ֆոն Պարրոտի՝ Արարատի գագաթը իսկապես բարձրանալու մասին» *(էջ 544)*— Պահպանվել է գերմաներեն ինքնագիրը, որ խորագրված է «Վկայություն Արարատից»։ Ձեռագրի տարբեր մասերում կան ոճական շտկման հետքեր, որոնք պատկանում են արևելագետ Ֆ. Ադելունգին։ Թվագրված է՝ «Ս. Պետերբուրգ, 7 փետրվարի 1835»։ Ազդակ է ծառայել «Գյոտինգենի ուսումնական ծանուցումներ» հեղինակավոր հանդեսի գրախոսականը Պարրոտի «Ճանապարհորդություն դեպի Արարատ» գրքի մասին (1834 թ. հունվարի 8 և 10-ի համարներ)։ Մատենախոսի կարծիքով՝ Արարատի առաջին վերելքի մասին ճշմարտությունը իմանալու համար լավագույնը կլինեին Աբովյանի ցուցմունքները, որոնք տակավին հրապարակում չկային։ Աբովյանը ընդառաջում է։ Բնագիրն առաջին անգամ տպագրվել է «Սանկտ-Պետերբուրգիշե ցայտունգ» լրագրի 1835 թ. փետրվարի 9-ի № 34-ում, հայերեն թարգմանությունը՝ «Արարատ», 1893, № 4 (թարգմ. Մ. Տեր-Մովսիսյանի), նաև այլուր։ Բնագիրը և նոր թարգմանությունը (Կ. Աբովյանի) տեղ են գտել Ե VII, էջ 25—31 և 32—35։ Արտատպվում է վերջինից։

«Գյուղական տների կառուցվածքը» *(էջ 555)*— Խորագիրը պայմանական է, որովհետև պահպանված ինքնագիրը (գերմաներեն) պարունակում է հայոց ներքին կյանքի ու սովորույթների որոշ դրվագներ և հեղինակի մանկական հուշերի մի մասը միայն։ Աշխատության առանձին գլուխներ (հատկապես հուշերը) Աբովյանը 1843 թ. օգոստոսի վերջին, Երև-

վանում, հանձնել է պրուսացի ճանապարհորդ Ա. Հաքստհաուզենին, որը դրանց մի մասը բառացի կամ վերապատմած ձևով մեջ է բերել իր «Անդրկովկաս» աշխատության մեջ։ Վերջինս հրատարակվել է նախ՝ անգլերեն թարգմանությամբ (1854), ապա՝ բնագրով (1856)։ Թարգմանվել է նաև ռուսերեն ու հայերեն։ Աբովյանի հուշերի հատվածները տեղ են գտել այդ բոլոր հրատարակություններում։ Այս ուսումնասիրությունը, որն առաջին ազգագրական երկն է մեզանում, պատրաստված է Դորպատում, 1834—35 թթ. ընթացքում, պրոֆ. Կ. Բլումի ղեկավարությամբ։ Բնագրի պահպանված մասը և թարգմանությունը (Գ. Անդրեասյանի) առաջին անգամ տպագրվել են՝ ԵX, 21—58 և 59—96։ Արտատպվում է վերջինից։

«Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» *(էջ 600)— Պահպանվել է գերմաներեն ինքնագիրը։ Երկը անավարտ է։ Աբովյանը ծրագրել էր նույն նյութը մշակել գրաբար լեզվով, բայց մի քանի տող գրելուց հետո ընդհատում է և անցնում գերմաներենի։ Գրված է 1840 թվականին, Տփղիսում, մասամբ և 1841-ի սկզբներին։ Կարևոր սկզբնաղբյուր է քաղաքաբնակ հայության բարքերն ուսումնասիրելու համար։ Բնագիրը և հայ. թարգմանությունը (Կ. Աբովյանի) առաջին անգամ ամբողջությամբ տպագրվել են՝ Ե VIII, էջ 107—153 և 154—190։ Արտատպվում է վերջինից։*

«Թիֆլիզու հայոց հանգստարանը» *(էջ 645)— Պահպանվել է վերջնական տարբերակի մաքրագիր ինքնագիրը։ Նկարագրվող դեպքերը կատարվել են 1841 թ. փետրվարի առաջին տասնօրյակին։ Նախնական տարբերակը գրվել է 1841 թ. փետրվար-հունիս ամիսների միջև, գրաբար լեզվով և տեղավորված էր «Նախաշավիղի» նյութերի շարքում։ Այդ ձեռագրերը մեզ չեն հասել։ Սույն ակնարկում հատակորեն շարադրված են Աբովյանի ծրագրերն ու ըմբռնումները հայ ժողովրդի լուսավորության ուղիների մասին, որոնց գլխավոր նպատակն էր բարձրացնել ժողովրդի, հատկապես անգրագետ գյուղացիության դիմադրողական ոգին ընդդեմ սոցիալական ճնշման և տգիտության չարիքների։ Նոր, աշխարհաբար խմբագրությունը կատարվել է Երևանում, 1844—47 թթ. միջև։ Վերջինս առաջին անգամ տպագրվել է՝ «Տարազ», 1914, № 1 (հրատարակության են հանձնել ժառանգները), ապա՝ Ե IV, էջ 40—46։ Արտատպվում է վերջինից։*

Սույն ակնարկում խոսքը Թիֆլիսի Վերա թաղամասի հայոց գերեզմանոցի մասին է, հիմնված 1830-ական թթ. վերջերին, որն այժմ գոյություն չունի։

«Ուղևորություն դեպի Անիի ավերակները» *(էջ 653)— Պահպանվել է սևագիր ինքնագիրը (ռուսերեն)։ Ձեռագրի տարբեր մասերում կան բաց թողած տեղեր՝ հետագայում լրացնելու համար, որ չի հասցրել։ Աբովյանի և իր ուղեկիցների ճամփորդությունը դեպի Անի կատարվել է 1847 թ. հոկտեմբերի վերջին տասնօրյակին (21—28-ը), իսկ սույն խորհրդածությունները գրի են առնված նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում։*

Աբովյանը մտադիր էր սույն երկը հրատարակել «Кавказ» լրագրի էջերում, որին խանգարեց նրա խորհրդավոր անհայտացումը և մահը։ Շատ հնարավոր է, որ 1848-ի հունվարին լինելով Տփղիսում, Աբովյանն այն հանձնել է Գ. Ախվերդյանին՝ կարդալու և իր կարծիքն հայտնելու։ Վերջինիս մոտ էլ հետո մնացել է Ուղեգրության ձեռագիրը։ Երկը անփոխարինելի աղբյուր է Աբովյանի կյանքի ու աշխարհհայացքի ուսումնասիրության համար։

Հայտնաբերվել է շուրջ 40 տարի առաջ։ Ընդարձակ քաղվածքներ մեջ են բերվել Ռ. Զարյանի «Նոր մանրամասներ Աբովյանի կյանքից» հոդվածում (1948)։ Ռուսերեն բնագիրը և հայերեն թարգմանությունը (Ս. Ինճիկյանի) առաջին անգամ հրատարակվել են (երեք փոքրիկ կրճատումներով) Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի VII հատորում (էջ 119—165 և 166—208), որտեղից և արտատպվում է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աբովյանի անձն ու ստեղծագործությունը, Պ. Հակոբյան III
Վերք Հայաստանի 8
Պատմվածքներ
Առաջին սերը 254
Թուրքի աղջիկը 273
Պարապ վախտի խաղալիք 290
Զվարճալի ու կարճ պատմություն 369
Կարճառոտ պատմություն 423

Բանաստեղծություններ
Կարօտութիւն նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց 428
Խնդամիտ զգացմունք Երախտագէտ հայկազին յաղթութիւն հայրենեաց իւրոց 431
Երեւակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ . . 434
Զգացմունք ցավալից սրտիս ընդ տեսանել իմ յօտարութեան զախրելի աշխարհակիցն իմ Յահրադ Բաղալով 439
Տաղ ի գոյն 445
Սէր առ Հայրենիս 446
Սուգ հարազատ եւ ծնողասէր որդւոց ի վերայ հանգուցեալ մօրն . . . 447
Ո՞ւմ ասեմ սրտիս դարդերն... 449
Հայարփեշեն 450
Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը 461
Խաղ բաժանվելու վրա 462
Ում սիրտը, որ տխուր ըլի... 464
Զարթնուք ի միտս իմ... 467
Մուտ ի Հայրենիս 468
Հոդվածներ, ուսումնասիրություններ, մանկավարժական երկեր
Դիտողություններ նոր հայերեն լեզվի տարրական գրքի նպատակների մասին . 472
Ընդհանուր դիտողություններ 478
Ամերիկու լիս բցիլը 500
<Վերելք Արարատի գագաթը> 540
Նոր վկայություն Դորպատի պրոֆեսոր պարոն ֆոն Պարրոտի՝ Արարատի գագաթը իսկապես բարձրանալու մասին 544
Գյուղական տների կառուցվածքը 555
Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին 600
Թիֆլիզու հայոց հանգստարանը 645
Ուղևորություն դեպի Անիի ավերակները 653
Ծանոթագրություններ 704

Խաչատուր Աբովյան
ԵՐԿԵՐ

Хачатур Абовян
СОЧИНЕНИЯ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1984

Խմբագիր՝ Բ. Հ. Անանիկյան
Հրատ. խմբագիր՝ Ս. Գ. Սանակյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճաննապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Վ. Դ. Ազատյան

ИБ 4532

Հանձնված է շարվածքի 7.05.84 թ.։ Ստորագրված է տպագրության 1.11.84 թ.։ Ֆորմատ՝ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 41,85 պայմ. տպ. մամ., 42,29 պայմ. ներկ. թերթ., 41,4 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51000, I գործ՝ (1—20 000)։ Պատվեր՝ 1110։ Գինը՝ 3 ռ. 80 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. Акопа Меганарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван-9, ул. Теряна, 91.